

ARMENIAN LIBRARY OF THE CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՅՆԱԿԱՐ ԳԱԼՈՒՅՑ ԿԻՒ.ՊԵՆԿԵԱՆ ՀՐԱՅԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

Լ.Գ.ԽԱՉԵՐԵԱՆ

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԴՈԿՏՈՐ, ՓՐՈՖԵՍՍՐ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ



ԼԻԳՊՈՆ

2002 Թ.

L.G. KHACHERIAN

Doctor in Philosophy

Professor

ARMENOLOGICAL STUDIES

And

PUBLICATIONS

IN TWO PARTS



LISBON

2002

7
July 28

Լ. Գ. ԽԱՉԵՐԻԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԴՈԿՏՈՐ, ՓՐՈՖԵՍՐ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

3262

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ



ԼԻՉՊՈՆ

2002 Թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

358


Հ Ա Տ Ո Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Editor
Zaven YEGAVIAN

Printed
Gráfica de Coimbra, Ltd.
Palheira - Assafarge - 3040 COIMBRA
Tel. 239 802450, Fax 239 802459
PORTUGAL



© Fundação Calouste GULBENKIAN

Depósito Legal n.º 185706/02
ISBN 972-8767-12-9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԱԴՐՈՒՄՆԵՐ
ԵՒ
ՊԱՏՍԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՀԵՏԱԶՕՏՈՒՄՆԵՐ

ԳԱԼՈՒՄՍ ԿԻՒՆՊԵՆԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

ՓՐՈՖ. Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆԻ ԵՐԿՀԱՏՈՐ ՍՈՅՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԼՈՅՍ Է ԸՆԾԱՅՈՒՄ ՄԵԾԱՍՔԱՆՉ ՍՈՒՐԲ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԾՆԴԵԱՆ 1640-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ

Խմբագիր՝ ԴՈԿՏ. ՉԱԼԷՆ ԵԿԱԻԵԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Սոյն Երկհատոր ժողովածուն ամփոփում ու մէկտեղում է հեղինակիս շուրջ յիսունամեայ աղբիւրագիտական ու ձեռագրագիտական հետազոտութիւնների ընթացքում հայագիտական հանդէսներում (որպիսիք են՝ «Պատմա-բանասիրական հանդէս», «Տեղեկագիր» եւ «Լրաբեր» ԳԱ հասարակագիտական բաժանմունքի, «Բանբեր Մատենադարանի», «Բանբեր համալսարանի», «Հանդէս ամսօրեայ», նաեւ «Հասկ», «Հռոմկլա» եւ «Արմաշ» տարեգրքեր), եւ հայրենական ու սփիւոքեան մամուլում լոյս ընծայած պատմա-մշակութային բնոյթի ուսումնասիրութիւնները, հայագիտական ու բնագրագիտական մատենախօսութիւնները եւ ազգային ու քաղաքական բնոյթի հրապարակագրութիւնները, ինչպէս եւ առաջին անգամ գիտական հասարակայնութեանը տրամադրուող արխիւային՝ «փակ գրքոցներից» հանուած երկասիրութիւնները, համապատասխանաբար:

Հարկ է նշել, որ արժարժուած թեմաները *հայ միջնադարագիտութեանը* յուզող տեսական հարցադրումներն են, մեծաւ մասամբ, նաեւ բնագրագիտական եւ աղբիւրագիտական կնճռոտ խնդիրների բննարկումները հայ մատենագրութեան կարեւորագոյն յուշարձանների, գիտա-քննական բնագրերի պատրաստման սկզբունքների ու մեթոդների տեսական վերլուծութեամբ ու առաջադրմամբ:

Ընթերցողին առաջարկուող հայագիտական բազմաբնոյթ Սոյն ժողովածուն մատուցում է հետեւեալ գլխակարգային հինգ բաժիններում.

ա. Հայ Միջնադարագիտութեան Տեսական հարցադրումներ եւ Պատմա-մշակութային խնդիրների հետազոտումներ.

բ. Աղբիւրագիտական ու բնագրագիտական քննարկումներ եւ ճշգրտումներ.

գ. Հայագիտական աշխատութիւններ եւ մատենախօսութիւններ.

դ. Ազգային-քաղաքական հարցադրումների արծարծումներ.

ե. Գնահատականներ, բնութագրումներ:

Երկհատոր ժողովածուն օժտուած է նաեւ մատենագիտական ցանկերով Յատուկ անունների, Մատենագիտական աղբիւրների եւ ուսումնասիրութիւնների:

Առաջադրուող նիւթերի մշակումները կատարուել են, գերակշիռ մասով, Մաշտոցի անուան Գիտա-Հետազօտական Ինստիտուտ - Մատենադարանում, յընթացս իմ բազմամեայ աշխատակցութեանը՝ 1950 - 1981 թուականների ժամանակամիջոցում՝ անընդմիջաբար:

Իրականում, բազմաբնոյթ հետազօտութիւնների համատեղմամբ Երկհատոր մէկ գրքում՝ ամբողջանում է իմ գիտական վաստակը, ըստ էութեան:

Սոյն ժողովածուի յոյսընծայման առթիւ շնորհապարտ զգացումն ունեմ Մաշտոցի անուան Չեռագրապահոցի վարիչ եւ Ազգային Գրապալատի երբեմնի տնօրէն պատմաբան-բանասէր Գեորգ Տէր-Վարդանեանին, որ ազնուութիւնը ունեցաւ լրացուցիչ հրապարակուած աշխատասիրութիւններս յայտնաբերելու հայաստանեան հայագիտական մամուլում եւ պատճենները ինձ ուղարկելու ներդրիւնը կրելու համար:

Նաեւ խորին շնորհակալութիւնս եմ յայտնում հայ մշակոյթի եւ դպրութեան Երախտաւոր, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հայկական բաժանմունքի Տնօրէն, հայագիտութեան Դոկտ. Զաւէն Եկաւեանին, որ հոգածաբար հովանաւորեց, միաժամանակ սիրայօժար ստանձնեց խմբագրութիւնը եւ յաջողապէս իրականացրեց իմ այս կարեւոր հրատարակութիւնը եւս:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

Կլէնտէյ, 25ր Հոկտեմբերի, 2000թ.:

ԱՐՈՒԵՍՏԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՄԲ

(V - VII դդ.)

«Արուեստի» ըմբռումը Միջնադարի հայ տեսական մտածողութեան առանցքային հարցադրումներից մէկն է եղել, որով հիմնաւորում, որոշում եւ դասակարգում էին արհեստները (ռուս. ремисла, անգլ. crafts), գեղագիտական ուղղութիւնները եւ գիտակարգերը: Իսկ «արուեստի» ըմբռնման նման համապարփակութիւնը պայմանաւորուած էր նրանով, որ մեր տեսաբանները փորձել են բացայայտել նշուած բոլոր բնագաւառների ամենաընդհանուր եւ ամենաէական առանձնա-յատկութիւնները հէնց «արուեստի» տեսութեամբ: Այդ պատճառով էլ «արուեստ» եզրը ընդհանրական կիրառութիւն է ունեցել մատենագրութեան մէջ՝ տեսականօրէն ճիշդ ըմբռնուած տարաբնոյթ հասկացութիւնների համար¹. ընդամին՝ «արուեստի» տեսութիւնը հաւասար հետաքրքրութիւն է ներկայացնում հայ Միջնադարի ինչպէս արհեստագործութիւնների տեսական հայեցողութեան, այնպէս եւ գեղագիտութիւնների ու գիտակարգերի բնորոշման դասակարգման ու գնահատումների վերհան-ման առումներով:

Դասական շրջանի հայ մատենագրական երկերը հետազօտելիս «արուեստ» տերմինի հետեւեալ կիրառութիւնների ենք հանդիպել. բացի «եքաշք», «գեքքնական երեւոյթ» հասկացութիւնն արտայայտելուց, դասական հայերէնում «արուեստ» տերմինը գործածուել է՝

1. «Ուսմունք», «վարդապետութիւն» իմաստով. «Իսկ երանելոյն վաղվաղակի գաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն...» (Կորին, Վարք Մաշտոցի, 1941, էջ 38):

2. «Մասնագիտութիւն» իմաստով. (Մաշտոցի) ցանկալի եղեալ *գինուորական արուեստիւն* իւրոց գօրականացն...» (նոյն տեղում, էջ 36):

Ուշագրաւ է այն իրողութիւնը, որ Խորենացին «սեւագործ բանուոր» հասկացութեան համար կիրառել է «անարուեստ», իսկ մասնագիտութիւն ունեցող վարպետի համար՝ «արուեստաւոր» եզրերը. «... հրաման տայ չորից քիւրոց եւ երկուց հազարաց արանց *անարուեստաց* գործաւորաց յԱտրեստանեայց եւ յայլոց իշխեցելոց եւ վեց հազար իւրոց ընտրելով յամենայն *արուեստաւոր* գործաւորաց փայտի եւ քարի, պղնձոյ եւ երկաթոյ, որք ամենեւին կատարեալք իցեն յարուեստգիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին» (Խոր. 1, ԺԶ): Յատկանշական

¹ Յետագայ ժամանակներում «արուեստ» եզրը, ձգտելով մենիմաստութեան, սկսեց կիրառուել միայն գեղագիտական ուղղութիւնների ու մասնագիտութիւնների բնորոշման համար. իսկ գործնական մասնագիտութիւնների համար ստեղծուեց «արհեստ» եզրը, գիտակարգերի կամ ուսումնակարգերի համար՝ «գիտութիւն» յղացքը՝ փոխարինելով «մակացութիւն» եզրին: Ի դէպ՝ նշենք, որ «գիտութիւն» յղացքը թէեւ կար մեր դասական մատենագրութեան մէջ, սակայն այն կիրառուած էր գերազանցապէս «ճանաչողութեան» իմաստով:

է եւ այն, որ գործնական մասնագիտութիւնները բնորոշելու համար Խորենացին սոյն քաղաւածքում կիրառել է «արուեստագիտութիւն» եզրը: Սակայն այս նոյն եզրը վաղ շրջանի մեր մատենագրութեան մէջ շրջանառութիւն է գտել նաեւ վերացարկուած գիտութիւնները անուանելու համար: Այսպէս, Եզնիկ Կողբացին, արուեստի բնոյթը բացայայտելիս, հետեւեալ տեսական ընդհանրացումն է տալիս նրա էութեան. «Արուեստն ոչ էթ յընթերակայէ ինչ իմեթ... առնու *գարուեստագիտութիւնն*» (Եզնիկ, Եղծ աղանդոց, 1826, էջ 26) կամ՝ «Չամենայն ճարտարութիւն արուեստագիտութեան ունէր յինքեան» (ն.ա. էջ 237):

3. «Երաժշտութեան գործիք» իմաստով. «... եւ առհասարակ բնկահարք եւ սրնգահարք, քնարահարք եւ փողահարք, իրաքանչիւր *արուեստօր* պէսպէս ձայնիւք բարբառեցան» (Փաստոս Բուզանդ, V, ԼԲ):

Նկատենք, որ «արուեստ» եզրի իմաստային այս բոլոր ընկալումները տեսական մեկնաբանութիւններում արտացոլում են գտել հիմունքային կամ նախադրեալային նշանակութեամբ: «Արուեստի» տեսութեան ամբողջական ըմբռնման մասին է խօսում եւ այն կարեւոր իրողութիւնը, որ հէնց այս տերմինը մեր մատենագրութեան մէջ կիրառութիւն է գտել բազմազան ու հարուստ բառաճիղղադրումներով:

«Արուեստի» ըմբռնման բերդիական ամբողջական մշակումը, սակայն, հայ տեսական մտածողութեան մէջ արժարժուել է ինչպէս ժամանակաշրջանի փիլիսոփայութեան, այնպէս եւ քերականագիտութեան բնագաւառում, ըստ որում դրանցից իրաքանչիւրում «արուեստի» բովանդակութեան տարբեր կողմերի բացայայտումով:

Արդ՝ առաջին հերթին անհրաժեշտ է պարզաբանել երկէտային այն հարցադրումը, թէ հասկացութեան ինչ ծաւալ էր ներդրում «արուեստ» եզրի կիրառման մէջ, ըստ Միջնադարի տեսական մտածողութեան:

«Արուեստի» ծաւալային ըմբռնումը պարզաբանում է V-VI դդ. նշանաւոր իմաստասէր եւ քերական Դաւիթ Անյաղթը, երբ երկու մեծ բաժանմամբ է ներկայացնում այն. ըստ նրա՝ լինում են «բանական» եւ «անբան» արուեստներ: Սակայն Դաւիթ Անյաղթը իր «Սահմանք իմաստասիրութեան» տեսական մեծարժէք աշխատութեան մէջ սահմանափակում է միայն «անբան» արուեստների մասին բացատրութիւն տալով, որից եւ, այնուամենայնիւ, հեշտութեամբ կարելի է մակարեթել, թէ ինչ է ըմբռնում «բանական արուեստ» հասկացութեամբ. «... Անբանք կոչին՝ *վասն զի կարողք գոն որք ուսանին՝ ոչինչ բարբառել եւ ուսանիլ, քանզի կարող գոյ հիւսն առանց բարբառելոյ արոտ բացակատարել*»¹: Բերումը քաղուածքից ինքնին հետեւում է, որ «անբան արուեստ» ասելով հեղինակը պարզապէս նկատի է ունեցել բոլոր արհեստները, որոնց իւրացման եւ տիրապետման պրոցէսը տեղի է ունենում, հիմնականում, *հայեցողութեամբ*՝ առանց տեսական բացատրութիւնների ու մեկնաբանումների. այստեղից եւ՝ «անբան (իմա՝ «առանց խօսքի») արուեստը» բնորոշումը: Իսկ «բանական արուեստ» հասկացութեամբ հեղինակը ըմբռնել է բոլոր գեղագիտական ուղղութիւններն ու գիտակարգերը, որոնց իւրացումն ու տիրապետումը հնարար է միայն շնորհիւ *տեսական-իմացական ընկալումների ու մեկնաբանման*, այստեղից եւ՝ «բանական արուեստը» բնորոշումը: Նման հարցադրման կարեւորութիւնը ընդգծում է նրանով, որ դեռեւս վաղ միջնադարում հայ տեսական

մտածողութիւնը արդէն հասել էր «բանական» եւ «անբան» արուեստների յստակ տարբերակմանը: Տեսական այս հարցադրման ըմբռնման համար, բնականաբար, հիմք է ծառայել յունական անտիկ դպրութիւնը: Դեռեւս Դիոնիսիոս Թրակացին գրել է. «Արուեստներն երկու տեսակ են՝ բանական բնոյթի եւ պրակտիկ բնոյթի: Բանական արուեստներն են՝ քերականութիւնը, ճարտասանութիւնը, իմաստասիրութիւնը: Պրակտիկ արուեստներն են՝ հիւսնութիւնը, դարբնութիւնը եւ նմանները»¹: Բայց այս հարցադրումը առաւել խորացում եւ տեսական ընդհանրացմամբ ու մեկնաբանմամբ քննում է վաղ միջնադարի հայ քերականների աշխատութիւններում:

Այսպէս, նոյն Դաւիթ Անյաղթը իր քերականական Մեկնութեան մէջ էլ անելի զարգացնում եւ ամբողջական է դարձնում «բանական» եւ «անբան» արուեստների տեսութիւնը, որն ամբողջ Միջնադարում տիրապետող էր մեր դպրութեան մէջ: Սոյն աշխատութեան մէջ Դաւիթը առաջ է քաշում այն հիմնադրոյթը, որ մարդու էութիւնը օժտուած է երկակիութեամբ. այն է՝ մարդը մարմնականի եւ հոգեկանի միասնութիւն է կազմում. «Յերկուց իմն պատճառաց մարդոյս գոյացեալ հաստատեցաւ բնութիւն՝ յոգոյ եւ ի մարմնոյ»²: Այս հաւաստումից յետոյ Դաւիթը դիտել է տալիս, որ հոգեկանով եւ մարմնականով համապատասխանաբար առանձին «արուեստներ» են ստեղծուել, որոնք, սակայն, հաւասարապէս աղերսակցութեան մէջ են իրար հետ: Այստեղից էլ հետեւութիւն է արւում՝ հոգեկան արուեստները բանական բնոյթ ունեն, իսկ մարմնական արուեստները՝ գործնական: Ընդամին՝ եթէ հոգեկանին վերաբերող արուեստները ուսուցում են բանականութեամբ, կամ՝ որ նոյնն է՝ տեսական քննութեամբ, ապա մարմնականին վերաբերող արուեստները՝ պրակտիկայով եւ հմտութեամբ. «Եւ սոցա արուեստ որոշել առանձին ըստ ինքեանց, ոգոյն՝ *բանականն, եւ մարմնոյն՝ գործնականն, բայց հաւասարութեամբ առ միմեանս կապակցեալք, մինն՝ մտածարէն առաջնորդելով, եւ միսն՝ զոնյն գործովք կատարելովք*»³:

Կարեւոր է նշել, որ Դաւիթը քերականութիւնը «բանական արուեստ» համարելիս բացայայտում է միաժամանակ «բանական արուեստի» հինգ պահանջները, որոնցով պարզում են նաեւ Միջնադարի տեսական ըմբռնումները «բանական արուեստի» մասին ընդհանրապէս: Մեր տեսարանը գրում է. այս առթիւ. «Արդ *հարկատրարար բանական արհեստիս առաջարկութիւն հնգիւքս այստիւք կատարի՝ ղիտատրութեամբ, վերագրան, վարդապետան եւ ըստ մասին բաժանման, յորումն եւ աւզտակարն*»⁴: Այսինքն՝ քերականութիւնը, ինչպէս եւ ամէն մի գիտութիւն, իր էութեամբ պէտք է մտովի կառուցուող երեսոյթ լինի՝ յար եւ նման ճարտարապետական այն կառոյցին, որպիսին է տնաշինութիւնը եւ կամ կանխատես խոհականութիւնը. «*Դիտատրութեամբ՝ մտածարէն իմն ըստ տնաշինութեան առակի եւ միանգամայն առաջատես խոհականութեան*»⁵: Գիտակարգի կամ ուսմունքի նման պատկերացումը, պէտք է ասել, ուղղակի հոյակապ է: Իրօք, իրաքանչիւր գիտակարգ կամ ուսմունք իր էութեամբ նոյնպէս ճարտարապետական ամբողջա-

¹ Ն. Արոնց, Արուեստ Դիոնիսիոսի քերականի եւ հայ մեկնութիւնը նորին, Պետրոգրադ, 1915, էջ 42:

² Գ. Չահուկեան, Դաւիթ քերականական աշխատութեան նորայայտ ամբողջական ձեռագիր տեքստը, «Բանբեր Մատենադարանի», 1956, Թ. 3, էջ 244:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 245:

⁵ Նոյն տեղում:

¹ Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան. Համահարք բնական բնագիրը, քարգծմունքիւնը գրաբարից ռուսերէն, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ս.Ս.Արեւշատեանի, Երեւան, 1960, էջ 96:

կան կառոյց է, բայց մտատր բնոյթի, ըստ որում հիմնամասերի, ենթամասերի, անցումների, յեռակների, նախադրեալների, հարցադրումների ու մեկնաբանումների ներդաշնակ համադրումով: Սա առաջին առանձնայատկութեան բացայայտումն է «բանական արուեստի»: Իսկ քերականութիւնը հենց այդպիսի՝ գիտակարգ է:

Երկրորդ առանձնայատկութիւնը, որ պահանջում է իրաքանչիւր գիտակարգից կամ ուսմունքից, այն է, որ նա լինի միասեռ՝ իր քննարկած հարցադրումներով, եւ ո՛չ թէ վայրկիւրոյ ու խառնիճաղանջ խնդիրներ արծարծի: Այստեղից եւ՝ «հարազատութեան» պահանջը շօշափուած հարցերի նկատմամբ: Սա նոյնպէս խիստ կարեւոր պայման է, որպէսզի այս կամ այն գիտակարգը «բանական արուեստ» նկատուի. «Իսկ հարազատութիւն ոչ աւտարս ինչ եւ այլեւայլս բան թէ համբոյրս (իմա՝ «ներդաշնակ», «նոյնաբնոյթ» - Լ.Խ.) եւ հարազատս զասացուածսն առնեթ»¹: Այս առումով եւս քերականութիւնը լրացնում է «բանական արուեստի» պահանջը:

Այնուհետեւ. «բանական արուեստ» համարուելու համար իրաքանչիւր գիտակարգի երրորդ պահանջն այն է, որ սոսկ իր անուանմամբ կամ վերտառութեամբ արտացոլի գրքի բովանդակութիւնը, որով եւ ընկալելի լինի ընթերցողին առաջին իսկ հայեացքից. դիցուք՝ «քերականութիւն» անուանումը առարկայի՝ իսկոյն եւեթ ընկալելի է դարձնում այդ գիտակարգը ներկայացնող գրքի բովանդակութիւնը. մեր պատկերացումը այդ դասընթացի մասին անմիջական է եւ ակնբարբային, որովհետեւ այն ինքնանուանողական է. «Այլ վերնագիրն զի բաւական իցէ միով նկարագրին զամենայն գրոյն զիտել զմիտս, որպէս ի Քերականութենէն կամ ի Գործոց առաքելոցն ի յայտ»²:

«Բանական արուեստ» դիտուելու համար չորրորդ պահանջը գիտակարգի նկատմամբ այն է, որ նա իր արծարծած հարցադրումներով քննարկի տուեալ առարկայի (եւ ո՛չ՝ տարբեր առարկայի կամ առարկաների) իրողութիւնները, նախ՝ իբրեւ բարձր կարգի վերացութիւններ՝ «սեռեր» կամ կատեգորիաներ, այնուհետեւ իբրեւ «տեսակներ» եւ ապա իջնի աստիճանաբար մինչեւ «անհատը»՝ անբաժանելին, անտրոհելին, եւ այստեղից էլ՝ դարձեալ բարձրանալով հասնի մինչեւ «սեռերը»՝ բարձրագոյն վերացութիւնները: Սա ընդգրկումների աստիճանադրման պահանջն է ըստ բաժանման հետազօտական այն մեթոդի, որ ընդունուած էր Միջնադարի մեր դպրութեան մէջ: Ի դէպ՝ պատահական չէ, որ այդ մեթոդը բնութագրուած է իբրեւ «ուսմունքային» (հին տերմինով՝ «վարդապետական») մօտեցում. «Բայց վարդապետականն՝ յերկուս իմն ունի ձեւ, որ է կատարելոց գործ կամ զգոյացութենէ բոտն հարկանել եւ իջանել ընդ արարածս արիմակ իմն ընդ աշտիճան յանհատ տեսական, եւ կամ աստի դարձեալ անդրէն ելանել»³:

Քերականութիւնը, իբրեւ գիտակարգ եւ բանական արուեստ, նոյնպէս լրացնում է այս պահանջը:

Հինգերորդ եւ վերջին պահանջը իրաքանչիւր գիտակարգի «բանական արուեստ» դիտուելու համար այն է, որ նրա ամբողջը՝ հանրագումարը մասերից բաղկացած լինելով հանդերձ ուսուցման ժամանակ պէտք է մատուցուի ունկնդիրներին ծանօթից անծանօթը մեկնելով՝ աստիճանական զարգացումով: Այս պահանջը

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

չը անշուշտ սերտօրէն աղերսում է չորրորդ պահանջին. «Մոյնգունակ եւ ըստ մասին կատարումն՝ թէպէտ ի քերականութենէ սկիզբն առնով առաջնորդէ մինչեւ ի վերջին մասնն եւ կամ ի վերջէ մասնէ մինչեւ ի գլխատրագոյն սկիզբն, յորում ըստ առանել քաջայայտութեան եւ ծանօթ կացուցանելոյ զառաջարկեալսն յատղաց ընտանեաց եւ աւգտակարացն»⁴:

Այնուհետեւ. դաւքեան այս տեսութեան համաձայն, բանական արուեստները ներկայացնում են չորս հիմնական գիտակարգեր. «Արդ, գիտելի է եւ այն, զի բաժանի բանական արուեստս ի չորս՝ յիմաստ(ասիր)ութիւն, ի բանական բժշկութիւն, ի քերդողութիւն եւ ի ճարտասանութիւն»²: Ընդամին՝ կարեւոր պնդում է արւում եւ այն մասին, որ նշուած չորս հիմնական «արուեստները», այնուամենայնիւ, մեկուսացած թագաւորութիւններ չեն, այլ գտնուում են մէկը միսի հետ որոշ աղերսակցութեան մէջ. նրանցից զոյգերի ընդհանրութիւնը որոշում է նրանով, որ եթէ իմաստաւոր ուսումնասիրում է երկնքի եւ երկրի բնութիւնը, ապա բժիշկը՝ մարդու բնութիւնը: Միս կոմից՝ քերականութեան եւ ճարտասանութեան ընդհանրութիւնը պայմանաւորում է նրանով, որ երկուսն էլ հետազօտութեան նոյն օբիեկտներն ունեն՝ պատմավէպերն ու խրատական ճառախօսութիւնները: Բացի այդ, քերականութիւնը, իբրեւ գիտակարգ օգտակար է ճարտասանական արուեստի պերճախօսութեան համար, զինելով նրան լեզուի կանոնների իմացութեամբ: Իսկ ճարտասանութիւնը մասնաւորապէս իր ուշադրութիւնը բեւեռում է նշուած երկերի կէտադրութեան, առոգանութեան եւ յարակից այլ հարցերի վրայ. «Եւ իրաքանչիւր որ ի սոցանէ յանգութիւն (իմա՝ «ընդհանրութիւն» - Լ.Խ.) ունի առ իրեարս՝ իմաստասէրն եւ բանական բժիշկն, ոմն քննէ գերկնի եւ գերկրի բնութիւն եւ ոմն զմարդոյն, իսկ քերականութիւն եւ ճարտասանութիւն, զի քերդութեան արուեստն պիտոյանայ ճարտասանականին պայծառ բանից, որք եւ հաւասարապէս վարին առասպելաւք եւ խրատուք, իսկ ճարտասանականն՝ ի նմանէ կիտից եւ ոլորակաց եւ այլոց ի նոսա գիտից»³:

Միս կոմից՝ բանական եւ գործնական արուեստները, իրենց հերթին, նոյնպէս բաժանման են ենթարկուած աստիճանային հիմունքով, այսինքն՝ նայած կենցաղի կամ հասարակութեան համար նրանց ունեցած օգտակարութեան ու անհրաժեշտութեան չափանիշի՝ արուեստները բնութագրուած են իբրեւ «բարի», «չար» եւ «միջակ» բանական եւ գործնական արուեստներ. «Եւ ձեւք երկոցումն ըստ երից որոշմանց՝ բարոյ եւ չարի եւ միջակի»⁴, - գրում է Դաւիթ Անյաղթը: Հէնց այս պլանով էլ դասակարգուած են բոլոր արուեստները. բանական արուեստների դասին պատկանողները ստորաբաժանուած են՝ «բարի», «չար» եւ «միջակ» տեսակների. գործնական արուեստների դասին պատկանողները նոյնպէս «բարի», «չար» եւ «միջակ» տեսակների: Ըստ այդմ՝ բանական արուեստների դասից՝ «բարի» կամ «օգտակար» են համարուած գրքերը կամ հոգեւոր երգերը, «չար» կամ անպէտք արուեստներ են դիտուած բովորութիւններն ու կախարդանքները, իսկ «միջակ» (այն է՝ ոչ շատ օգտակար, ոչ էլ շատ անպէտք) արուեստներ են ճանաչուած «մրմունջները» եւ դրանց նմանները: Այստեղ ուշագրաւ է դիտել, որ մեր դպրութիւնը շէնքից մերժում է

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում, էջ 246: Իսկ Դիոնիսիոս Թրակացու մօտ, ինչպէս վերը տեսանք, «բանական արուեստ» են համարուած միայն երեքը՝ իմաստասիրութիւնը, քերականութիւնը եւ ճարտասանութիւնը (տե՛ս Լ. Աղոնց, նշուած աշխատ., էջ 42):

³ «Բանքեր Մատենադարանի», Թ. 3, էջ 246:

⁴ Նոյն տեղում, էջ 244:

Գործնականին վերաբերող արուեստներից «բարի» կամ «օգտակար» են համարում հիսունութինը, դարբնութիւնը եւ դրանց նմանները. «չար» կամ անպէտք՝ վնասակար արուեստներ են դիտում մահաբեր դեղերի պատրաստման հմտութիւնը կամ մահ պատճառող գործիքների կիրառումը. իսկ «միջակ» արուեստներ են ճանաչում ճարտար նետածգութեան կարողութիւնն ու գեղեցիկ պարելու շնորհքը: Տեսական այս հարցադրումը, որը տիրապետող էր ամբողջ միջնադարում, Դաւթի մօտ ձեւակերպուած է այսպէս. «Եւ ձեռք երկոցունց ըստ երկից որոշմանց՝ բարոյ եւ չարի եւ միջակի: Բանականին, որ է բարի՝ զիրք ինչ եւ կամ երգք հոգեւորք, չարին՝ բովչութիւնք եւ կախարդութիւնք, միջակին՝ մրմունջք եւ նմանք նոցին: Իսկ գործնականին աւգտակարք յարեեստիցն հիսունութին եւ դարբնութիւն եւ նմանք սոցին. եւ չարին՝ դեղ մահաբերք եւ գործիք, իսկ միջակին՝ աղեղնաւորութիւնք եւ գեղապարելն»¹:

Քերականութիւնը, ի դէպ, Դաւիթը տեղադրում է «բարի» կամ օգտակար բանական արուեստների շարքում. նա գրում է. «Եւ թողով արուեստաւորիս զչարին եւ զմիջակին խնդիր՝ վերաբերել զբարոյն»²:

Սակայն ասուածով ամենեւին չի սպառում արուեստի տեսութիւնը: Արւում է պնդում նաեւ այն մասին, որ արուեստները միմեանց նկատմամբ յատկանշական են երկու առանձնապատկաններով եւս. արուեստների մի մասը կայուն է եւ յարատեւ, մի մասն էլ անկայուն եւ անցողիկ՝ ըստ օրիէկտի բնոյթի եւ նրա յարաբերութեան ժամանակի նկատմամբ: Բացի այդ, արուեստների մի մասը ընդհանրական բնոյթ ունի, մի մասը՝ մասնակի, ըստ այդմ՝ բանական արուեստի կայուն եւ ընդհանրական դասին է պատկանում զիրքը, անցողական եւ մասնակի բանական արուեստների շարքին՝ մրմունջքները եւ ինքնամփոփ մտածողութիւնը. իսկ գործնական կամ «անբան» արուեստների կայուն եւ ընդհանրական շարքին են պատկանում բերդերը, ջրհորները. մինչդեռ անցողական եւ մասնակի բոլոր աննկատ կամ պրոցեսային աշխատանքները, որոնք հետք չեն թողնում բանձրացական ձեւով. «Եւ քանզի արուեստիցն ոմն է կայուն եւ ոմն անցական, ոմն հասարակաց եւ ոմն առանձինն, բանականիս կայուն եւ հասարակաց՝ զիրք, եւ անցական՝ մրմունջք եւ իւր մտածութիւնք, իսկ գործնականին հասարակաց եւ կայուն՝ բերդք եւ հանեալ ջուրք. անցական եւ առանձին դուզնաբեայ գործք»³:

Փիլիսոփայական երկերում, իսկ դրանց հետեւողութեամբ նաեւ քերականական մեկնութիւններում, արւում է նաեւ «արուեստի» ըմբռնումը իբրեւ «երեւակայութեամբ զուգորդուող իրողութիւններ կերպատրելու կարողութիւն»: Այս առնչութեամբ Դաւիթ Անյաղքը իր «Մահմանք իմաստասիրութեան» մէջ գրում է. «... արուեստ է տնակութիւն ճանապարհորդեալ հանդերձ երեւակայութեամբ»⁴: Նշանակում է՝ արուեստի հիմնական տարրը համարում է «երեւակայութիւնը», առանց որի մասնագիտական, գեղագիտական եւ կամ գիտակարգային ո՛չ մի բնագաւառ կամ ուղղութիւն հնարաւոր չէ ենթադրել: Նման ձեւակերպումը իրօք բացայայտում է նշուած բնագաւառների բովանդակութեան ամենաընդհանուր բնորոշիչ առանձնապատկանները: Սակայն «արուեստը երեւակայութեան զուգորդմամբ իրողութիւններ առաջացնելու ունակութիւն» լինելով հանդերձ նաեւ «գիտութիւն» է՝ համապատասխան ձեւով կերպատրելով մասնագէտի կամ արուեստագէտի մտայնացում-

յատկութիւնը: Սակայն «արուեստը երեւակայութեան զուգորդմամբ իրողութիւններ առաջացնելու ունակութիւն» լինելով հանդերձ նաեւ «գիտութիւն» է՝ համապատասխան ձեւով կերպատրելով մասնագէտի կամ արուեստագէտի մտայնացումները. «Քանզի արուեստ ունակութիւն ոմն է եւ գիտութիւն, շարունակում է զարգացնել իր միտքը վաղ միջնադարի հայ ներեւուն այս տեսաբանը, այլ եւ ճանապարհորդէ. այսինքն զամենեսեան ինչ ըստ կարգի առնէ»¹:

VII դարի հեղինակ Մովսէս Քերթոզը բնութագրելով արուեստն առհասարակ, նշում է, որ եւ՛ր բանական, եւ՛ գործնական արուեստները, վերջին հաշուով, զարգանում են մտածողութեան ուժով. ընդամին՝ նաեւ կարեւոր պնդում է անում այն մասին, որ արուեստների (եւ՛ «բանական», եւ՛ «անբան») առաջացման աղբիւրը Միտքն է: Աւելին. նա ճիշդ կերպով հաւաստում է, որ արուեստները, իրենց հերքին, մտաւոր զարգացման ազդակ են հանդիսանում: Այս ուշագրաւ ընդհանրացումը ձեւակերպուած է հետեւեալ սեղմ ու պատկերաւոր բնութագրումով. «Աղբեր արուեստից միտք են, խորհուրդ հանճարեղ՝ արարիչ արուեստից, եւ արուեստ՝ անեցուցիչ մտաց»²:

Քննարկուող հարցադրման առնչութեամբ Դաւիթը, սակայն, շեշտը դնում է ոչ ամէն մի մտածողութեան, այլ տեսական մտածողութեան՝ իմաստասիրութեան վրայ, գտնելով, որ իմաստասիրութիւնը, իբրեւ ընդհանրացնող եւ երեւոյթների էութիւնը բացայայտող գիտական ճանաչողութիւն, «սկզբունքներով» օժտում է եւ՛ բանական, եւ՛ «անբան» արուեստները: Իսկ նման հաւաստումը էական՝ առանցքային նշանակութիւն ունի, որովհետեւ դրանով ակնարկում եւ ընդգծում է միաժամանակ արուեստների տեսական բնոյթը: Այս առթիւ Դաւիթ մօտ կարդում ենք. «Եւ պարտ է գիտել, եթէ ոչ միայն բանական արուեստից եւ մակացութեանց տայ զսկզբունս իմաստասիրութիւն, այլեւ անբանից, որպէս զլարն՝ հիւսան եւ զհուրն՝ դարբնութեան»³:

Աւելին. իմաստասիրութիւնը, բացի այն, որ տալիս է բոլոր գիտութիւնների ու մասնագիտութիւնների (եւ՛ բանական, եւ՛ «անբան») ամենափնմնական սկզբունքներն ու դրոյթները, այլեւ ուղղում է դրանցում թոյլ տրուած տեսական շեղումներն ու սխալները: Դաւիթը հէնց այդպէս էլ գրում է. «Եւ դարձեալ պարտ է գիտել, թէ ոչ միայն սկզբունս կարող գոյ տալ իմաստասիրութիւն ամենայն արուեստից եւ մակացութեանց, այլեւ վերստին ուղղել զսխալեալսն ի նոսա»⁴:

Ստեղծագործական բնոյթի տեսակէտից Դաւիթը «արուեստի» եւ բնութեան միջեւ տեսնում է, մի կողմից՝ ընդհանրութիւն, միւս կողմից՝ սկզբունքային տարբերութիւն, որով եւ բացայայտում է «արուեստի» իր ըմբռնման դիտակէտը: Արուեստի՝ բնութեան հետ ունեցած ընդհանրութիւնն այն է, որ բնութիւնը եւս օժտուած է գոյացութիւնների (շնչաւոր թէ անշնչ) ստեղծման կամ առաջացման ընդունակութեամբ, ըստ որում՝ նոյնպէս ձեւաւորելով դրանք համապատասխան կերպատրումներով: Սակայն սկզբունքային տարբերութիւնն այն է, որ եթէ բնութիւնը ստեղծագործական իր ունակութեամբ կաշկանդուած է («նախապէս սահմանուած», ստուգապէս՝ օրիէկտիս) օրինաչափութիւնների ուղղութեամբ, ապա արուեստը, շնորհիւ երեւակայութեան թոյլչքի, նման կաշկանդումներ չի ճանաչում. «Իսկ հանդերձ

¹ Նոյն տեղում, էջ 245:
² Նոյն տեղում:
³ Նոյն տեղում:
⁴ «Մահմանք իմաստասիրութեան», էջ 102:

¹ Նոյն տեղում:
² Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 160:
³ «Մահմանք իմաստասիրութեան», էջ 96:
⁴ Նոյն տեղում:

երեակայութեամբ ասացաւ վասն բնութեան,- փաստարկում է Դաիթը,- *քանզի եւ բնութիւն ունակութիւն է, քանզի ունի զգոյն յայնոսիկ, որք ունին զնա, այսինքն ի մարդում եւ ի քարում եւ յայլսն, եւ ըստ կարգի յառաջագայի, բայց ոչ ըստ երեակայութեան, որպէս եւ արուեստ»¹:*

Աւելին. «արուեստի» եւ բնութեան սկզբունքային տարբերութիւնը ակնբախօրէն դրսեւորում է նաեւ նրանում, ասում է Դաիթը, որ եթէ արուեստագետը որեւէ ստեղծագործութիւն իրագործելիս նախապէս այն իր մէջ մտապատկերում է, յետոյ նոր մարմնատրում իր մտայնացման համաձայն, ապա *բնութիւնը իր ստեղծագործութիւնները իրագործելիս իր մէջ նախապէս երբեք չի անդրապատկերում դրանք*: Սա իրօք տեսական այնպիսի ճիշդ դիտարկում է, որ դժուար է այն նոյնիսկ գերազնահատել: Այդ առթիւ Դաիթը գրում է. «Քանզի արուեստաւորն պիտանանալով բանի, յորժամ կամի ինչ առնել, այսինքն պատճառին, նախ եւ առաջին տպատրէ յինքնեան եւ այնպէս բացակատարէ գրանն: Իսկ բնութիւն ոչ երբէք յառաջագոյն տպատրէ յինքնեան»²:

Ի դէպ՝ Եզնիկ Կողբացին արուեստի էութեան բացայայտման կապակցութեամբ նոյնպէս արժէքատր ընդհանրացում է կատարում: Այսպէս, ապացուցելու համար այն դրոյթը, որ մարդու վարմունքը բնատուր՝ ի վերուստ պարզեւում բան չէ, Եզնիկը անում է մի հոյակապ համեմատութիւն՝ ճարտարապետութեան, իբրեւ արուեստի, մի կողմից, միւս կողմից՝ նրա արգասիքը հանդիսացած կառոյցների՝ քաղաքների ու տաճարների միջեւ: Յայտնի է, որ շինարարները քաղաքներից չէ որ նոր քաղաքներ են ստեղծում, ասում է նա, ոչ էլ տաճարներից նոր տաճարներ: Բայց, միւս կողմից, նրանք անկարող են նաեւ ոչնչից ստեղծել դրանք, որովհետեւ մնաւ կառուցումների համար հարկաւոր են երկու պայման՝ շինանիւթ եւ արուեստի հմտութիւն, ըստ որում արուեստի հմտութեան շնորհիւ էլ ձեւափոխում են այլազան կերպատրումներ է ստանում շինանիւթը. «...քարինքն՝ գոր ի շինածսն յօրինեն՝ ոչ եւս քարինք կոչին,- գրում է Եզնիկը,- այլ կամ քաղաքք, կամ տաճարք, զի ոչ եթէ բնութեան գործ է քաղաքս կամ տաճարս, այլ արուեստին է՝ որ ի բնութեանն»³:

Այնուհետեւ. հարկ է նշել, որ «արուեստի» տեսութիւնը հայ քերականները զարգացնում են Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատութեան դրոյթների ու ասոյթների մեկնաբանման առնչութեամբ: Նշանաւոր յոյն այս քերականը, որի աշխատութեան թարգմանութիւնը դեռեւս V դարի վերջերին հիմք ու նախադրեալ ծառայեց հայ քերականագիտական մտքի զարգացման համար, «արուեստի» մասին իր սահմանմամբ այն միտքն է յայտնում, որ արուեստը գիտելիքների համադրութիւն («բաղկացութիւն») է՝ տունալ բնագաւառում սերունդների կողմից նախապէս բողոքում փորձառական ժառանգութեան իւրացումով, որպիսին կենցաղում օգտակարութիւն ու անհրաժեշտութիւն ունի: Այս առթիւ նա տուն է հետեւեալ բնութագրական ձեւակերպումը. «Արուեստ է բաղկացութիւն ի բողմանէ նախակրթեալ առ ի պիտանացու ինչ իրս որ ի կենցաղում»⁴:

Այս սահմանումը, ասում է Դաիթը իր Մեկնութեան մէջ, լիովին վերաբերում է քերականութեանը իբրեւ գիտութիւն: Ինչո՞ւ. որովհետեւ իրօք քերականութիւնը *համադրական* բնոյթ ունեցող գիտութիւն է,- հիմնաւորում է նա իր պնդումը՝ ընդգծե-

լինելից, որք, ի դէպ՝ ոչ թէ մի մարդու միանգամեայ ստեղծագործութիւն է, այլ *անցած ժամանակների հաւարական նուաճումների արդիւնք է*: Հետեւաբար, իբրեւ գիտութիւն՝ քերականութիւնը համապատասխան ըմբռնումների համադրութիւն է (սխտմ), այն ձեռք է բերում «նախակրթութեամբ» եւ փոխանցում յաջորդ սերունդներին որպէս գիտական ժառանգութիւն, ուստի եւ զարգացում է: Բացի այդ, քերականութիւնը, իբրեւ ուսմունք, օգտակար է, որովհետեւ գիտութեամբ առաջացած իւրաքանչիւր արուեստ հասարակական կեանքի համար ունի իր որոշակի արժէքն ու նշանակութիւնը, հետեւաբար եւ՝ իր կարեւոր տեղը: Սա հիանալի հիմնաւորումն է քերականութեան, իբրեւ ուսմունքի անհրաժեշտութեան եւ կարեւորութեան՝ դարեան համոզիչ փաստարկներով ու տեսական հիմնաւորութեամբ: Բերենք նրա խօսքերը. «Բաղկացութիւն՝ իբր թէ ի բազմաց միացեալ ըստ առակի ոստայնանգութեան վասն զի ոմն ասի գտող բայի եւ ոմն անուան, միւս այլում մասին ուստի բաղկացաւ արուեստն: Իսկ ի բողմանէ նախակրթեալ որպիսի ինչ, զի գոր ինչ եգիտ որ կրթելով եւ յայլմէն եւս մնացելով զկնի իր երող սպագայիցն: Իսկ պիտանացում՝ զի բոլոր ինչ ի կենցաղումս արուեստի առաջացեալ ունի գտելի»⁵:


Անշուշտ տեսական կարեւոր հարց է եւ այն, թէ ինչպէ՞ս է արուեստում ձեռք բերում գիտելիքների համադրական ամբողջութիւնը: Ըստ Եզնիկի՝ *հանդիպած երեսոյքների ճանաչումից եւ փորձի հմտութիւնից*: Բանն այն է, ասում է նա, որ որեւէ «անձնատր» իրողութիւն չէ արուեստը, հետեւաբար եւ այն չի կարող դասուել անձնատր էութիւնների շարքը. այլ կերպ ասած՝ «արուեստը՝ կամային յատկութեամբ օժտուած ոյժ չի ներկայացնում իրենից, այլ նա *արդիւնք է հանգամանքների ու դէպքերի դիտարկման եւ ընդհանրացման, փորձի եւ բնութեան, դրանցից ձեռք բերուած հմտութեան*, այդ իսկ պատճառով դարբնութեան վերաբերեալ գիտելիքների ամբողջական իւրացմամբ է առաջանում դարբին մասնագետը, հիւսնութիւնից՝ հիւսն արհեստաւորը, եւ այսպէս բոլոր միւս արուեստները. «Քանզի ոչ եթէ անձնատր ինչ յանձնատրաց զարուեստն կարէ ցուցանել,- գրում է Եզնիկը,- այլ ի դիպացն որք դիպինն. որպէս ի դարբնութենէ դարբինն, եւ ի հիւսնութենէ հիւսն»⁶:

Այստեղից Եզնիկը բխեցնում է մի այլ ուշագրաւ հետեւութիւն եւս. *փորձի ու գիտելիքների կուտակումը արուեստում կատարում է մարդը*. Եթէ չլինէր նախապէս մարդը, ասում է նա, ապա չէր լինի եւ արուեստը. քանի որ մարդն է արուեստի կրողը, որն իր փորձառութեամբ եւ հանգամանքների ու պրոցեսների դիտարկումով մարմնատրում է արուեստը: Նշանակում է՝ արուեստը աճանցային է: Հետեւաբար՝ մարդը ոչ թէ նիւթական որեւէ նախադրեալից, այլ *միայն դէպքերի ու պրոցեսների դիտարկումից ձեռք բերած իր հմտութեամբ է յօրինում կամ «պատշաճեցնում» արուեստը*: Իսկ սա «արուեստների» առաջացման գիտական (եւ ոչ թէ միտալի ու աստուածաբանական) բացատրութիւն է, որ պատիւ է բերում անշուշտ հեղինակին: Այս կապակցութեամբ նրա մօտ կարդում ենք. «Ձի մարդ եւ յառաջագոյն քան

3262

¹ Նոյն տեղում, էջ 102:
² Նոյն տեղում:
³ Եզնիկայ Կողբացայ Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 26:
⁴ Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 42:

⁵ «Բանբեր Մատենադարանի», Թ. 3, էջ 245:
Ի դէպ՝ հայ քերական մեկնիչների երկերում նկատելի է որոշակի միտում՝ քերականութեան վերաբերմամբ Թրակացու գործածած ΤΕΧΝΗ («արուեստ») եզրը միայն իբրեւ «գիտութիւն» ընկալելու ու մեկնելու: Ուստի եւ անյարիք մեկնաբանութիւն է տալիս պրոֆ. Արշակ Արամեանը, երբ Միջնադարի քերականների երկերում հանդիպող «արուեստ» եզրը եւ նրանով արուած բնորոշումները ընկալում է իբրեւ искусство. տե՛ս նրա "Эстетические воззрения средневековой Армении" աշխատութիւնը, Երեւան, 1955 թ.:
⁶ Եզնիկ Կողբացի, նշուած աշխատ., էջ 26-27:



զարուեստն է. բայց արուեստն չէ՝ եթէ ոչ նախ մարդն իցէ, ուստի զարուեստն յոչընչէ ի մարդ պատշաճեալ հարկ է ասել»¹:

«Արուեստ»ի գիտական ըմբռնման համար, բնականաբար, չափազանց կարեւոր նշանակութիւն ունի այն հարցը եւս, թէ ինչպիսի՞ մօտեցում է ունեցել մեր դպրութիւնը՝ արուեստում տեսութեան եւ պրակտիկայի յարաբերակցութեան որոշման առնչութեամբ: Այս առթիւ ասենք, որ դեռեւս Եզնիկը զարմանալի պայծառ հայեացք է զարգացնում՝ նշելով, որ տեսութիւնն ու պրակտիկան հաւասար կարեւորութիւն ունեն ճանաչողութեան բոլոր այլատեսակներում: Նա ընդգծում է այն ուշագրաւ միտքը, որ սոսկ տեսութիւնը իմանալը ոչ մի արժէք ու նշանակութիւն ունենալ չի կարող, եթէ նրան չի զուգորդում նաեւ պրակտիկայի իմացութիւնը՝ այս կամ այն արուեստի կամ գիտակարգի կիրառական եղանակների կամ հնարների գործադրումը: Այդպէս էլ նա գրում է. «Որպէս որ եթէ ճարտարութիւն իրաց գիտիցէ, եթէ զնուագածութեան եւ եթէ զբժշկութեան, եթէ զհիւսնութեան, եւ արդեամբք զճարտարութիւնն չցուցանիցէ, իզոր ունի զհանգամանս ճարտարութեանն՝ ուստի ոչ ինքն վայելեցէ, եւ ոչ այլոց զգիտութիւն արուեստին ցուցանիցէ»²: Նման հարցադրումը իրօք վկայում է վաղ միջնադարի հայ տեսական մտքի խորութիւնն ու վեհութիւնը:

Տեսական առաւել բարդ եւ նրբին հարցերից է եւ այն, թէ ինչպիսի՞ փոխաբարբերութեան մէջ է «արուեստը» մեխանիկական փորձի («հմտութիւն»), փորձառական հմտութեան (ներհմտութիւն», արհեստ), գիտութեան եւ իմաստասիրութեան նկատմամբ, որով եւ արուեստի ըմբռնման բովանդակութիւնը վաղ միջնադարում առաւել բացայայտ ու որոշակի է դարձում:

Այս առթիւ Դաւիթը առաջ է քաշում այն ճիշդ նախադրոյթը, որ նշուած բոլոր իմացութեան բնագաւառները, վերջին հաշուով «գիտութիւն» են (լայն իմաստով՝ ճանաչողութիւն), իսկ դրանց մէջ գերադաս է իմաստասիրութիւնը, որը համարում է «գիտութիւնների գիտութիւն եւ արուեստների արուեստ» («մակացութիւն մակացութեանց եւ արուեստ արուեստից»):

Ի դէպ, վաղ միջնադարի հայ տեսական մտածողութեան ըմբռնմամբ՝ իմաստասիրութիւնը (փիլիսոփայութիւնը ամենալայն առումով) «մայր գիտութիւն» էր դիտւում այն պատճառով, որ նա բացայայտում էր երեւոյթների ամենարեղիստիկ օրինաչափութիւնները, ուստի եւ սկզբունքներ էր տրամադրում բոլոր արուեստների ու գիտակարգերին. «... Իմաստասիրութիւն մայր է իմաստից եւ արուեստից եւ ընդհանուր մակացութեանց,- խորաբնին հաւաստմամբ հետեւութիւն է բխեցնում Դաւիթը,- քանզի ի նմանէ առնուն առաջս եւ սկզբունս ամենայն արուեստք եւ մակացութիւնք»³: Ի հիմնադրումն իր այս ելակէտային դրոյթի, Դաւիթը ապացուցման փաստարկներ է առաջ բերում՝ ասելով, որ եթէ երկրաչափը կիրառում է ինչ-որ երկրաչափական գծապատկեր, ապա նա իրեն պարտաւոր չի համարում ըմբռնելու գծապատկերի էութիւնը որպէս այդպիսին, որովհետեւ դա բնաւ կարելու չէ երկրաչափական գործողութիւնների համար: Մինչդեռ գծապատկերի էութեան առանձնապատկերների տեսական բացատրութիւնը կարող է տալ միայն բնափիլիսոփան: Բժիշկը նոյնպէս սոսկ միայն ի հաւաստումն («խոստովանաբար») գիտի, որ մարմինը բաղկացած է «չորս տարրերից», սակայն դրա պատճառական

իմացութիւնը յայտնի է դարձեալ բացառապէս բնափիլիսոփային: Եւ կամ քերականը նոյնպէս միայն իբրեւ տուեալ կամ հաւաստում գիտի, որ է-ն եւ ո-ն բնութեամբ երկար ձայնատրոնք են, իսկ դրանց պատճառական իմացութիւնը կարող է յայտնի լինել միայն երաժիշտ փիլիսոփային⁴: Այստեղից տեսական հետեւութիւն է արւում այն մասին, որ գիտական ճանաչողութիւնը առհասարակ իր բնոյթով երկակի է. ա) ի հաւաստումն ընդունուած (իմա՝ ապրիորի) գիտական ճանաչողութիւն («ներստորադրական մակացութիւն»), որի ելակէտը «ապացուցման» կարիք ունի եւ սակայն տուեալ բնագաւառի մասնագէտը անգիտանում է դրա պատճառական ճանաչումը՝ անմիջական խիստ անհրաժեշտութիւն չհամարելով այն, եւ բ) բացարձակ գիտական ճանաչողութիւն («աններստորադրական մակացութիւն»), որի ելակէտը ընդհանուր կամ բացարձակ ճշմարտութիւնն է՝ առանց ապացուցման պահանջի. դիցուք՝ «Աստուած բարի է» պնդումը՝ ըստ քրիստոնէական աշխարհայեացքի⁵: Այստեղից բխեցում է մի հետեւութիւն եւս՝ գիտակարգերի դասակարգման հիմունքի առաջադրմամբ, որն աներկբայօրէն ընդգծում է հայ տեսական մտածողութեան զարգացման բարձր մակարդակը. *գիտակարգերը լինում են կամ ընդհանրական բնոյթի, կամ մասնական, որ եւ նոյնն է՝ պատճառական կամ անպատճառական (ապրիորի):* Այս առնչութեամբ Դաւիթը գրում է. «Արդ, պարտ է գիտել, եթէ գիտութիւն կամ ընդհանուր է, կամ մասնական, կամ հանդերձ պատճառաւ, կամ առանց պատճառի»⁶: Ըստ այսմ՝ ճանաչողութեան տեսակները բնութագրւում են.

Ճանաչողութեան *առաջին* տեսակը՝ փորձը (իմա՝ «հմտութիւն») *մասնակի երեւոյթների անպատճառական (ապրիորի) իմացութիւն է*. դիցուք՝ երբ մէկը իմանալով մի դեղ, կիրառում է այն, առանց սակայն նրա բուժիչ յատկութիւնների պատճառը հասկանալու, թէ ինչո՞ւ անհրաժեշտ է օգտագործել այն տուեալ հիւանդութեան համար⁷: Նման ճանաչողութիւնը չափազանց մակերեսային է՝ հիմնուած լինելով եզակի փաստի իմացութեան փորձի վրայ:

Ճանաչողութեան *երկրորդ* տեսակը՝ *փորձառական հմտութիւնը* («ներհմտութիւն») *ընդհանուր անպատճառական իմացութիւն է*, քանի որ այն յենում է մարդկային յիշողութեան վրայ՝ համանման երեւոյթների բազմակրկնութեամբ ձեռք բերուած վարժողական ճանաչողութիւն որպէս, առանց, սակայն, պատճառական կապերի ըմբռնման. «Քանզի ներհմտական բժիշկն, յիշելով եւ պահելով բազում անգամ գնոյնաբար երեւալսն ի դեղոցն՝ պիտանանայ անոցիկ»⁸:

Ճանաչողութեան *երրորդ* տեսակը արուեստն է, որ առաւել հետաքրքրում է մեզ տուեալ դէպքում: Ըստ Դաւիթ Անյաղթի՝ «արուեստ է ընդհանուր գիտութիւն հանդերձ պատճառաւ»⁹: Իսկ այս նշանակում է, որ իր ճանաչողութեամբ ընդգրկում է *բոլոր համասեռ երեւոյթները՝ պատճառական ըմբռնմամբ հանդերձ*, որով եւ սկզբունքօրէն տարբերում է հմտութիւնից:

Իսկ ճանաչողութեան *չորրորդ* եւ վերջին տեսակը գիտական իմացութիւնն է («մակացութիւն»), որը սահմանում է Դաւիթ կողմից իբրեւ «ընդհանուր անսխալ եւ

¹ Նոյն տեղում, էջ 27:
² Նոյն տեղում, էջ 236-237:
³ «Սահմանք իմաստասիրութեան», էջ 50:

⁴ Նոյն տեղում, էջ 50-52:
⁵ Նոյն տեղում, էջ 100-102:
⁶ Նոյն տեղում, էջ 102:
⁷ Նոյն տեղում:
⁸ Նոյն տեղում:
⁹ Նոյն տեղում, էջ 104:

անփութիւնի գիտութիւն»։ Բանն այն է, բացատրում է նա, որ գիտական ճանաչողութիւնը իր կիզակետում գտնուող երեւոյթներն ու իրողութիւնները ճանաչում է ոչ թէ մակերեսօրէն կամ արտաքինապէս, այլ դրանց էութեամբ, այդ պատճառով էլ նա օժտուած է «անսխալականութեամբ»։ Այս շատ կարեւոր եւ խորաքննիչ ըմբռնում է գիտական ճանաչողութեան, որն իր ուժը պահպանում է նաեւ բոլոր ժամանակների համար. «Մակացութիւն է գիտութիւն անսխալ իւրոց ենթակայից իրողութեանց, ըստ որում ունի զընթացիւն, քանզի որպէս ունին զընթացիւն իրողութեանց իրք, այնպէս գիտէ»¹։

Բայց ինչո՞վ է տարբերում արուեստը գիտական ճանաչողութիւնից։ Այս մասին ծառայել են հնում երկար վէճեր ու տարածայնութիւններ։ Ոմանք այն տեսակէտն են յայտնել, որ գիտական ճանաչողութիւնը եթէ «անսխալական» է երեւոյթների էութեան բացայայտման իր ներգործութեամբ, ապա արուեստը իր ճանաչողութեամբ «սխալական» է։ Դաւիթը մերժում է նման հարցադրումը՝ գտնելով, որ օրինակաւ իրականութեան ճիշդ արտացոլման տեսակէտից ճանաչողութեան այս երկու տեսակներն էլ համարժէք են՝ «անսխալական» են, միայն այն վերապահութեամբ, որ եթէ արուեստը իր բնոյթով կամ էութեամբ «անսխալական» է, ապա իր օրինակաւ ոչ նոյնարժէքութեան պատճառով *բում է* «սխալական», խաբուսիկ. «... եւ արուեստ ըստ իրում բանին անսխալ է,- գրում է Դաւիթը,- իսկ վասն ենթակային անապականութեան թուի սխալական գոյ»²։ Այլ կերպ ասած՝ արուեստի եւ գիտութեան ճանաչողութեան սկզբունքային տարբերութիւնն այն է, որ առաջինը իր էութեամբ (գիտելիքների հանրագումարով, որպէս օրինակաւ իրողութիւնների ու հմտութիւնների արտացոլում) «անսխալական» է, քանի որ վերջինս «հոսանուտ» է եւ «ասպականուող»՝ այլափոխման ենթարկուող. դիցուք՝ «հիսունութիւնը» իբրեւ «արուեստ», իր էութեամբ օրինակաւ ճշմարտութիւններից առաջացած իմացութիւնների հանրագումար է, բայց նրա ենթական (իմա՝ առարկան)՝ փայտը, արոտ շինելիս կարող է անակնկալօրէն ջարդուել եւ «սխալեցուցանել զարուեսան», քանի որ այն «հոսանուտ» բնոյթի է։ Մինչդեռ գիտական ճանաչողութիւնը այդպէս չէ։ Նա եւ իր էութեամբ, իբրեւ օրինակաւ իրականութեան հարազատ արտացոլում, եւ իր ենթակայով՝ իբրեւ օրինակաւ իրականութեան յարաբերականօրէն կայուն եւ անփոփոխ, «անսխալական» է։ Դիցուք, ասում Դաւիթը, երկրաչափութիւնը եւ իր ենթական՝ երկիրը, աստղագիտութիւնը եւ իր ենթական՝ աստղերը. «քանզի եւ աստղագիտութիւն անսխալ է, եւ ենթակայն նորին, այսինքն աստեղը»³։

Հիմնականում սրանք են, ահա, արուեստի ըմբռնումները վաղ միջնադարի տեսական մտածողութեան։

Հարկ է նշել, սակայն, որ արուեստի տեսութիւնը սոսկ մտահայեցողութիւն չէր հայ դպրութեան ներկայացուցիչների համար. այն նաեւ *ծրագրային նշանակութիւն ունեցաւ հայ դպրութեան մէջ գիտակարգերի առաջացման ու զարգացման համար*⁴՝ ինչպէս քարզմանական, այնպէս եւ հեղինակային բնոյթի։ Ասումս ի հաստատումն է այն, որ հէնց Ե. դարից արմատաորոտեցին հայ դպրութեան մէջ *փիլիսոփայութիւնը, տրամաբանութիւնը, քերականագիտութիւնը, ճարտասանութիւնը, բժշկագիտութիւնը, երաժշտագիտութիւնը եւ այլ գիտակարգերի համա-*

¹ Նոյն տեղում։

² Նոյն տեղում։

³ Նոյն տեղում։

պատասխանաբար քարզմանական, հեղինակային ու մեկնողական հարուստ եւ քազմարովանդակ երկերի ստեղծմամբ։

Ինչպէս արծարծուած հարցադրումների համառօտ այս բնութիւնը ցոյց է տալիս, «արուեստի» տեսութիւնը դեռեւս վաղ միջնադարում, բաւական հարուստ եւ արժէքատուր նախադրոյթների առաջադրմամբ ու մշակմամբ, թերիական մեծ նշանակութիւն է ունեցել մեր դպրութեան գիտակարգերի տեսական հիմունքները հետագօտելու եւ զարգացնելու առումով։ Իբրեւ պատմական անցեալի տեսական ժառանգութիւն այն, անշուշտ, գիտական առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ մեր ժամանակների համար՝ իր վաղեմութեամբ ու տեսական մտքի լայնահուն խորութեամբ։

«Մովետական Արուեստ», 1971, Թ. 2, Հայկական ՄՍՀ Կուլտուրայի եւ Հայկական կինեմատօգրաֆիայի Պետական կամիտէի ամսագիր»։

ՀԱՅ ԾԱՐԱՀԻՒՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԱՂ ԸՐՁԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Շարահիսական հարցերի բնութիւնն ու մշակումը հայ քերականագիտութեան պատմութեան մէջ, ձեւաբանութեան ուսումնասիրութեան յարաբերութեամբ, համեմատաբար ուշ է սկսում։ Այդ հանգամանքը հիմնականում բացատրում է նրանով, որ հանրահոշակ յոյն քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արուեստ» (Τέχνη γραμματικῆ) աշխատութիւնը գերազանցապէս վերաբերել է ձեւաբանութեան հարցերին, իսկ հայ քերականագիտութիւնը, ինչպէս յայտնի է, սկիզբ է առնում Թրակացու հէնց այդ աշխատութեան քարզմանութեամբ, որը օրինակ եւ հիմք է ծառայել հայ քերականագիտական ուսման փոխառման եւ զարգացման համար։ Այդ առթիւ Ն. Աղոնցը «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնը նորին» աշխատութեան մէջ գրում է. «Ինչպէս յոյների, այնպէս էլ հայերի մօտ, քերականական գրականութեան առանցքը հանդիսացաւ Դիոնիսիոսը. նրանից էին ելնում եւ նրան վերադառնում յաջորդող դարերի բոլոր հեղինակները»¹։

Շարահիսութեան հարցերը յոյների մօտ քերականական յատուկ բնութեան առարկայ դարձան Թրակացուց երկու դար յետոյ միայն՝ յանձին Ապոլոնիոս Դիսկոլի, որը գրել է չորս հատորից բաղկացած մի աշխատութիւն՝ «Շարահիսութեան մասին» («Περὶ συντάξεως») վերնագրով, թէւ ոչ այն մանրամասնութեամբ ու խորութեամբ, ինչ տարողութեամբ ու մանրակրկիտութեամբ մշակուել էր

¹ Ն. Աղոնց, նշուած աշխատ., էջ 11։

ձեռքարձակումը¹: Սակայն սոյն աշխատությունը վաղ շրջանի հայ քերականագիտական մտքի վրայ ազդեցություն չի բողբ²:

Սովորաբար մեր քերականագետներն ու լեզուաբանները հայերենի շարահիստության պատմության մասին խօսելիս սկսում են միայն XVII կամ անելի շուտ XVIII դարից (Միմեոն Ջուդայեցուց կամ Գալանոսից), իսկ մինչ այդ մեկնողական բնույթի քերականական մեր հարուստ գրականությունից երբեմն կանգ են առնում միայն Վարդան Արեւելցու «Վասն մասանց» փոքրիկ աշխատության վրայ եւ ընդհանրապես յայտարարում, որ շարահիստագիտությունը երկար դարեր եղել է «terra incognita»³: Այս պնդումը, անշուշտ, ճիշդ է ընդհանուր առմամբ: Սակայն շարահիստագիտական մտքի պատմության ուսումնասիրությունը չի կարելի պատկերացնել, առանց հետազոտելու միաժամանակ նրա սերտ աղերսակցությունն ու առնչությունը փիլիսոփայության եւ տրամաբանության հետ, առանց յենուելու շարահիստագիտական այն հարուստ դիտողությունների վրայ, որոնք տեղ են գտել փիլիսոփայական եւ տրամաբանական երկերում: Պատահական չէ, որ շարահիստագիտական շատ տերմիններ ու հասկացություններ (նախադասություն, ենթակայ, ստորոգեալ, որոշիչ եւ այլն) առաջին անգամ եւ յաճախուած ձեւով օգտագործուել են փիլիսոփայական եւ տրամաբանական բնույթի աշխատություններում: Այդ իսկ տեսակետից, շարահիստագիտության նախապատմությունը պետք է որոնել ոչ միայն զուտ քերականական բնույթի աշխատություններում, այլեւ, առաջին հերթին, փիլիսոփայական ու տրամաբանական բնույթի երկերում: Եւ դա բնական է ու հասկանալի. լեզուաբանության պատմությունից զիտենք, որ յոյն քերականագիտությունը, որը լատիներենի եւ ընդհանրապես եւրոպական լեզուների քերականական ուսմունքի ստեղծման համար նմոյշ է ծառայել, իր ծագմամբ պարտական է յոյն փիլիսոփայությանը: Ընդդիմ այն հանգամանքի, որ լեզուն մտածողության իրական դրսեւորումն է, լեզուն եւ մտածողությունը պայմանաորոշում են միմեանցով, հետեւաբար լեզուի եւ մտածողության փոխյարաբերության պորբլեմը փիլիսոփայության առանցքային խնդիրներից մէկն է եղել անցեալում, ուստի եւ լեզուն քննարկում եւ ուսումնասիրում է առաջին հերթին փիլիսոփաների կողմից: Այդ պատճառով էլ լեզուի տեսական հարցերը մշակում են փիլիսոփայության մէջ, եւ իրաւամբ յունական լեզուաբանության այդ շրջանը համարում է նրա «փիլիսոփայական» շրջանը, ի տարբերութիւն լեզուի ուսումնասիրության արեւմտաեւրոպական դպրոցի, երբ լեզուաբանությունը անջատուելով փիլիսոփայությունից (իբրեւ առարկայից) ձեւաորոշեց որպէս ինքնուրոյն գիտական բնագաւառ⁴: Մտքի բոլոր ձեւերն ու օրէնքները (հասկացութեան, դատողութեան, մտայնագման, նոյնութեան, հակասութեան, երրորդի բացառման եւ բաւարար հիմունքի) դրսեւորում եւ մարմնաւորում են լեզուի միջոցով: Այդ նշանակում է, որ յոյն փիլիսոփաները, մտքի ձեւերն ու օրէնքները վերլուծելիս, այսպէս թէ այնպէս պետք է վերլուծելին նաեւ լեզուն, ստեղծելին համապատասխան տերմիններ, որոնցով քննելին լեզուական յարաբերությունները ինչպէս տարբեր բնույթի նախադասությունների, այնպէս էլ միեւնոյն նախադասութեան տարբեր անդամների միջեւ: Դրանով միայն կարելի է բացատրել այն, որ քերականական տերմինների հիմնական եւ ամենակարեւոր

մասը գիտական շրջանառութեան մէջ էին դրել ոչ թէ քերականները, այլ փիլիսոփաներն ու տրամաբանները: Այդ հարցում մեծ երախտիք ունեն Պլատոնը, Արիստոտէլը, ստոիկեանները եւ ուրիշներ, իսկ հայ փիլիսոփաներից՝ առանձնապէս Դաւիթ Անյաղքը: Այս բոլորից հետեւում է, որ հայ շարահիստագիտական մտքի նախապատմությունը շարադրելիս սոյն յօդուածում քննութեան ենք առնելու ինչպէս փիլիսոփայական եւ տրամաբանական երկերը վաղ շրջանի, այնպէս էլ քերականական-մեկնողական բնույթի աշխատությունները:

Դաւիթ Անյաղքը «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության մէջ քննում է, մի կողմից՝ «Բան», «Անուն», «Սահմանում» եզրերը, միւս կողմից՝ այն բառերը, որոնք ծառայում են նախադասութեան մէջ իբրեւ «յայտնիչ բնութեան ենթակայ իրի», քերականական արդի տերմինով՝ լրացումները (որոշիչ, յատկացուցիչ, բացայայտիչ): Նրա ըմբռնմամբ՝ «անունը» իբրեւով նշուող առարկայի հասկացությունն է՝ «անուն սահմանէ զբնութիւն ենթակայ իրին, որզոն, մարդ»¹: Այստեղ նկատենք, որ Դաւիթը բառով արտայայտուած «անուն» եւ նրա նշած հասկացութեան յարաբերությունը չի դիտում իբրեւ բնական կապ կամ իբրեւ արդիւնք առարկայի յատկանիշների պայմանաորոշութեան: Ինչպէս յայտնի է, յոյն փիլիսոփաների մօտ անուն եւ նրանով արտայայտուած հասկացութեան փոխյարաբերութեան հարցը երկար ժամանակ փիլիսոփայական առանցքային հարցադրումներից մէկն է եղել. այդ առիթով փիլիսոփաների շրջանակում բուռն եւ կրքոտ վէճեր են զննացել փիլիսոփաներից ոմանք գտնում էին, որ անուն եւ նրա նշած բովանդակութեան՝ հասկացութեան միջեւ եղած կապը բնական է, որ բառաստեղծութիւնը արդիւնք է առարկայի առանձնայատկութիւնների, այլ կերպ ասած՝ անունը համապատասխանում է իբրեւով արտայայտուած առարկայի յատկանիշներին. այդ կարգի փիլիսոփաները անուանում էին $\phi\upsilon\sigma\epsilon\tau\iota$ -ի («բնութեան») կողմնակիցներ: Փիլիսոփաներից ոմանք էլ, խիստ առարկելով առաջիններին եւ հերքելով նրանց տեսութիւնը, ճիշդ կերպով պնդում էին, որ անուն եւ նրանով դրսեւորուող առարկայի փոխյարաբերութիւնը բնական կապի արդիւնք չէ. որ եթէ անուն եւ հասկացութեան միջեւ լինէր բնական պայմանաորոշութիւն (բացառութեամբ միայն լեզուի բառապաշարի մէջ չնչին տոկոս կազմող միջարկութեան բառերի), ապա բոլոր լեզուներում էլ միեւնոյն առարկայի բառանունումը բացարձակ կերպով նոյնը պիտի լինէր, հետեւաբար աշխարհի բոլոր լեզուների բառապաշարը պիտի լինէր միասնական ամբողջութիւն՝ իր համանման արտաբերմամբ: Սովորույթի, օրէնքի եւ պայմանականութեան տեսակետի կողմնակից էր նաեւ Դաւիթ Անյաղքը:

Դաւիթ մօտ հարցադրումը այլ բնույթի է նաեւ այն տեսակետից, որ թէն նա ասում է՝ «Անուն սահմանէ զբնութիւն ենթակայ իրի», բայց դրանով ոչ թէ ակնարկում է անուն եւ նրա նշած առարկայի էութեան («բնութեան») համապատասխանությունը կամ նոյնութիւնը, այլ՝ անուն եւ նրանով արտայայտուած հասկացութեան համապատասխանությունն ու նոյնութիւնը, այլ կերպ ասած՝ ընդգծում է անուն (= բառի) նշանակողական դերակատարումը, մատնանշելով ոչ

¹ В. А. Звегинцев, Христоматия по истории языкознания XIX веков, М., 1956, էջ 13-14:

² Գ. Ջահուկեան, Քերականական եւ ուղղագրական աշխատությունները ինչ եւ միջնադարեան Հայաստանում, 1954, Երեւան, էջ 29:

³ Նոյնի՝ նշում աշխատ., էջ 29:

⁴ Վ. Չվիգինցու, նշում աշխատ., էջ 9:

¹ «Դաւիթ Անյաղք, Սահմանք իմաստասիրութեան, էջ 28:

թէ առարկայի յատկանիշները, այլ անուան բուն էութիւնը՝ նրա հասկացութիւն ցոյց տալու հանգամանքը:

Միս կողմից՝ նա հակադրում է «Անուն» եւ «Մահմանում» եզրերը. եթէ Անունը մի բառով է արտայայտուած, ապա Մահմանումը՝ բազմաբիւ բառերով. «Եւ գոր սահման ի ձեռն բազմաց բառից առնէ,- գրում է նա,- զայն անուն ի ձեռն միոյ բառի»¹: Ելնելով այս բնորոշումից, հեղինակը անունը համարում է «կարճատու սահման», իսկ սահմանումը՝ «անուն ծառայեալ»: Վերջին դէպքում, երբ առհասարակ ամէն մի երեւոյթի կամ անուան սահմանումն է տրուած, ապա դա հնարաւոր է լինում միայն նախադասութեամբ եւ նախադասութեան միջոցով, որը հեղինակը անուանում է Բան:

Բնորոշ է, որ բառերի եւ նախադասութիւնների նշանակողական եւ հաղորդակցական (կոմունիկատիւ) գործառնութիւնները հաշուի առնելիս, հեղինակը դրանք բաժանում է երկու մեծ խմբերի. ա) մի դէպքում բառերն ու նախադասութիւնները հասկացութիւններ են միտք են արտայայտում եւ այդ չափով «անուն»ն ու «բան»ը ընդհանրութիւն ունեն. «... Արդարեւ զի գոր ինչ առնէ անուն, առնէ եւ բան, բանզի եւ անուն եւ բան զբնութիւն ենթակայ իրին յայտնեն»², ըստ որում այդ տիպի նախադասութեան անդամները (իր տերմինով՝ «բաղկացուցիչ մասերը») առարկան բնորոշող կամ սահմանող բնոյթ ունեն, ինչպէս՝ «Մարդ (է) կենդանի բանաւոր մահկանացու մտաց եւ մակացութեան ընդունակ»³: Երկրորդ տիպի նախադասութիւնները համարում են «յայտնիչ բնութեան ենթակայ իրի», կամ՝ «վասն ուսանելով բացագանչմանց» բնոյթն ունեն: Սրա տակ հեղինակը հասկանում է երկու կարգի նախադասութիւններ. առաջին տիպի նախադասութիւնները նրանք են, որոնց բաղկացուցիչ անդամները ոչ թէ իրի կամ առարկայի էութիւնն են բացայայտում, այլ՝ նրա էութեան պարագաները, որոնք «պատահական» բնոյթ են կրում. օրինակ՝ «... Մարդ է ուղղագնաց, ծիծաղական, լայնեղունգն, բանզի այտոքիլ զպարագայս բնութեան յայտնեն եւ ոչ զբնութիւն»⁴: Երկրորդ տիպի նախադասութիւնները այնպիսիք են, որոնց բաղկացուցիչ անդամները ոչ առարկայի էութիւնն են բացայայտում, ոչ էլ նրա պարագաները, այլ խօսողի կամքը, թելադրանքը կամ ցանկութիւնն են արտայայտում, ինչպէս՝ «Ծանի՛ր զբեզ»:

Փիլիսոփաները *Սահմանումի* էութիւնը ըմբռնելու համար կարիք են ունեցել վերլուծելու նրա բաղադրիչ տարրերը՝ յանգելով այն հետետեութեան եւ ընդհանրացման, որ իւրաքանչիւր սահմանում ունենում է մէկ կամ երկու եզր՝ «ենթակայ» եւ «կատարումն» (արդի տերմինով՝ գործողութիւն) առանձին-առանձին եւ կամ՝ միասնաբար. «Եւ պարտ է զիտել,- գրում է Դաւիթը,- եթէ սահմանը կամ յենթակայէ առնուն, եւ կամ ի կատարմանէ, եւ կամ յերկոցունց. այսինքն՝ յենթակայէ եւ ի կատարմանէ»⁴: Բարբողիմիոս Բոլոնիացին գտնում է, որ *եզր* ասելով պէտք է հասկանալ համառօտ նախադասութեան (իր տերմինով՝ «առաջարկութեան») վերածումը իր բաղադրիչ մասերի. «Իսկ եզրն սահմանի այսպէս. եզր է այն յորս լուծանի առաջարկութիւնն, որպէս ենթակայն եւ ստորոգեալ»⁵: Շարահիսագիտութիւնը վերցնելով փիլիսոփայական գիտութիւնից «ենթակայ» եւ «ստորոգեալ»

տերմինները՝ նրանց բովանդակութեանը փոքր ինչ այլ երանգ հաղորդեց, պահպանելով հանդերձ նրանց արտայայտած հասկացութեան ընդհանուր եւ էական գծերը:

«Ենթակայ» տերմինի փիլիսոփայական-տրամաբանական սահմանումը հետետեալ կերպ է ձեւակերպուած Դաւիթի մօտ. «Ենթակայ է, ըստ որում լինի եւ ըստ որում ազդէ, եթէ արհեստ եւ եթէ մակացութիւն»¹: Այս բնորոշումից ակնհայտ է դառնում, որ ամէն մի առարկայի՝ լինի կոնկրետ մասնագիտութեան («արհեստ»ի՝ հիւսնութիւն, դարբնութիւն, ոսկերչութիւն եւլն.) կամ վերացական գիտութեան («մակացութեան»՝ աստղաբաշխութիւն, փիլիսոփայութիւն եւլն.) «պատճառ»ը ենթակայ է կոչում, այլ կերպ ասած՝ *իրաքանչիւր կոնկրետ մասնագիտութեան առաջացման գլխաւոր միջոցը* կամ *առարկան ենթակայ* է համարում. այսպէս՝ հիւսնութեան ենթական փայտն է, որի միջոցով կամ շնորհիւ ընդհանրապէս գոյութիւն ունի հիւսնութիւնը. դարբնութեան ենթական՝ երկաթը, որով պայմանաւորուած է դարբնութեան, իբրեւ «արհեստի», առաջացումը. ոսկերչութեան ենթական՝ ոսկին, որի շնորհիւ առաջացել է ոսկերչութիւնը: Շարահիսագիտութիւնը, սակայն, վերցրեց փիլիսոփայութիւնից «ենթակայի» միայն ընդհանուր գաղափարը, այն, որ նա ցոյց է տալիս մի բան անող կամ լինող առարկայ, եւ նրան քերականական իմաստ վերագրեց: Իսկ դա նշանակում է, որ ենթակայի շարահիսագիտական ըմբռնումը նոյնիսկ երբեմն կարող է հակադրուել տրամաբանական (փիլիսոփայական) ըմբռնմանը. օրինակ՝ կրատորական կառուցուածք ունեցող նախադասութիւններում քերականական ենթական եւ տրամաբանական ենթական բոլորովին ներհակ հասկացութիւններ են արտայայտում. «Որդի սիրի ի հօրէ իւրոյ» նախադասութեան քերականական ենթական որդին է, որը սակայն տրամաբանութեան տեսակէտից գործողութիւն կրող օրինակն է, մինչդեռ տրամաբանական ենթական, ընդհակառակն, բացառական հորովով դրուած «ի հօրէ» բառածին է, որովհետեւ իրականում տուեալ նախադասութեան մէջ հայրն է սիրում իր որդուն եւ ոչ՝ հակառակը: Միս կողմից՝ քերականական տեսակէտից «ի հօրէ» բառածինը ներգործող խնդիր է, եւ ոչ՝ ենթակայ: Այստեղից բնականաբար հետետում է, որ եթէ ենթակայի ըմբռնման մէջ տրամաբանութեանը (փիլիսոփայութեանը) հետաքրքրում է նախադասութեամբ արտայայտուած տուեալ գործողութեան *իրական* տէրը, ապա շարահիսագիտութեան (քերականութեան) համար՝ նախադասութեամբ արտայայտուած գործողութեան *ձեւական* տէրը, որը քերականական որոշակի յարաբերութիւնների մէջ է մտնում այլ խօսքի մասերի (յատկապէս ստորոգեալի) հետ:

Դաւիթը «կատարում»ը համարում է իբրեւ ենթակայի փոփոխուող յատկանիշ. նա գրում է. «Իսկ կատարումն, ըստ որում նկատել եւ կերպարանի, եւ ըստ որում զամենայն ինչ առնէ, որզոն՝ հիւսնութեան ենթակայ է փայտ, զի վասն փայտի գոյանայ հիւսնութիւն. իսկ կատարումն ունի աքոռ առնել եւ տաճար շինել: Եւ դարձեալ՝ աստղաբաշխութիւն ենթակայ ունի զերկնային մարմինն, իսկ կատարումն ոչ եթէ զառնելն նման նմա, այլ զիտել զշարժումն նորա. նմանապէս եւ իմաստասիրութիւն ունի ենթակայ, ունի եւ կատարումն: Ենթակայ զամենայն գոյսս, իսկ կատարումն՝ զգիտութիւն նոցին, այսինքն՝ զիտել զնոսս եւ նորումք նմանիլ աստուծոյ»²:

¹ Սահմանք իմաստասիրութեան, էջ 28:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 38:

⁵ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2382, ք. 247բ:

¹ Սահմանք իմաստասիրութեան, էջ 38:

² Նոյն տեղում, էջ 38-40:

Ինչպէս տեսնում ենք արուած մէջբերումից, տրամաբանութեան մէջ «կատարման» (= գործողութեան) յատկանիշը վերագրում է չափազանց ընդհանուր երեւոյթներին (հիւսնութեան, աստղաբաշխութեան, փիլիսոփայութեան եւ այլնիւ), մինչդեռ շարահիւսագիտութիւնը կատարման (= գործողութեան) յատկանիշը դիտում է ամէն մի նախադասութեան մէջ, իւրաքանչիւր նախադասութեան կառուցման համար անհրաժեշտ համարելով փոփոխուող յատկանիշի՝ գործողութեան առկայութիւնը, որ ենթակային է վերագրում:

Դաւիթը դնում է նաեւ ենթակայի եւ «կատարման» փոխարարութեան հարցը, եւ գտնում, որ ենթական առաջնային է, որովհետեւ նախապէս նա՝ է գոյանում եւ յետոյ նոր առաջանում է, իբրեւ ենթակայի յատկանիշը, «կատարում»ը, հետեւաբար «կատարում»ը ամանցային՝ երկրորդական է. նման հարցադրումը նոյնպէս ընդունում է շարահիւսագիտութեան մէջ եւ իր յետագայ գարգացումն ու ամբողջական մշակումը ստանում՝ քերականական առումով, միանգամայն նորովի իմաստաւորմամբ. «Իսկ որ յենթակայէ սահմանը են,- գրում է Դաւիթը,- առաջինը են քան զայնս որ ի կատարմանն. վան զի նախ ենթակայ գոյանայ եւ ապա կատարումն, զի եթէ ոչ ենթակայի հիւսնութեան նախ փայտն, ոչ կարէ առնել աթոռ, որ է կատարումն»¹:

Դաւիթը կողմնակից է երեւոյթների վերլուծութեան ինչպէս արտածական՝ դեղուկտի, այնպէս էլ ներածական՝ ինդուկտի մեթոդներին. դրանց կիրառութիւնը որքան կարեւոր է երեւոյթների բուն էութիւնը ճիշդ բացայայտելու եւ փիլիսոփայական ընդհանրացումներ կատարելու տեսակէտից, նոյնքան անհրաժեշտ եւ օգտակար է գրատոր խօսքի տարբեր միաւորների միջեւ եղած փոխարարութիւնը պարզելու եւ ըմբռնելու առումով: Ծանաչողական չափազանց արժեքաւոր նրա յիշեալ դրոյթը բերում ենք մի քիչ ատելի հանգամանօրէն. «... ի ձեռն բաժանման՝ ստուգաբար զմասունս նորս իմանամք. իսկ ի ձեռն մասանն՝ ըստուգաբար զբոլորն զիտեմք: Եւ դարձեալ, զիտելով ստուգաբար զմասունս նորս, կարող լինիմք ստուգաբար դիտել թէ որպիսի՞ շարադրութիւնը իմաստասիրութեան յորպիսի՞ մասունս վերաբերին, զի մի՞ որք ի տեսականն վերաբերին, առ տգիտութեան կարծեսցուք ի գործականն վերաբերիլ, եւ որք ի գործականն՝ ի տեսականն»²: Շարահիւսագիտական վերլուծման համար դեղուկտի եւ ինդուկտի մեթոդների զուգադրումն ու նրանց հմուտ կիրառումը նոյնպէս արգասաբեր նշանակութիւն ունեցաւ տարբեր նախադասութիւնների, նրանց անդամների բնոյթն ու կառուցուածքը ճիշդ վերլուծելու եւ բացայայտելու տեսակէտից, որն այժմ էլ յաջող կերպով կիրառում է շարահիւսագիտական աշխատութիւններում (եւ ոչ միայն շարահիւսագիտական, այլեւ գիտութեան բոլոր բնագաւառներում):

Կարեւոր է նկատել, որ Անանուն մեկնիչը Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» աշխատութիւնը վերլուծելիս *իսկական* խօսքի մասեր է համարում միայն անունն ու բայը, իսկ նախադասութեան մէջ հանդէս եկող միս բառերը՝ լրացումներ են կամ անուան (ի դէպ՝ այս պարագայում անունն ու ենթական միասնաբար են ըմբռնում՝ հեղինակի կողմից), կամ բայի (տուեալ դէպքում՝ բայ ասելով միաժամանակ Անանուն մեկնիչը հասկանում է ստորոգեալ). «... միայն իսկապէս մասունք բանի՝ անուն եւ բայ,- գրում է նա,- իսկ այլքն՝ որք սովորեցան առ ման-

կագոյնսն ասիլ, *մասնը են որ ընդ անուամբ*, իսկ այլք ընդ բայի անկանին»¹: Նման մօտեցումը ելակէտային նշանակութիւն ունեցաւ շարահիւսագիտութեան յետագայ զարգացման համար՝ առանձին ճշգրտումներ եւ ուղղումներ մտցնելով նրա ձեւակերպման մէջ: Խօսքի մասերի սահմանափակումը միայն անուամբ եւ բայով՝ անշուշտ, եղում է տրամաբանական գիտութեան տեսակէտից, եւ ոչ՝ քերականական: Քերականական տեսակէտից խօսքի մասեր հասկացութեան մէջ մտնում են ոչ միայն անունն ու բայը, այլեւ բոլոր այն բառերը, որոնք օժտուած են խօսքի մասային իմաստով, իւրայատուկ ձեւատրումով եւ կիրառութեամբ. այդ նշանակում է, որ հայերէնում խօսքի մասեր են՝ գոյականը, ածականը, բուականը, դերանունը, բայը, մակբայը, կապը, եղանակաւորող բառերը, շաղկապը եւ ձայնարկութիւնը: Սակայն շարահիւսագիտութեան զարգացման մէջ կարեւոր ներդրում էր փիլիսոփաների կողմից լուծուած այն հարցը, որ նախադասութեան մէջ զլխատր անդամներ են անունը (իբրեւ ենթակայ) եւ բայը (իբրեւ ստորոգեալ), իսկ մնացած բառերը մէկի կամ միւսի լրացումներն են հիմնականում: Այս գաղափարը միանգամից լոյս է սփռում նախադասութեան կառուցուածքը վերլուծելու եւ նրա զլխատր ու երկրորդական անդամների վերաբերեալ ամբողջական ուսմունք ստեղծելու տեսակէտից, որը իսկ եւ իսկ շարահիւսագիտութեան բովանդակութիւնն է կազմում. «Ընդ անուամբ (անկանին)՝ իբր թէ դերանունութիւն,- շարունակում է Անանուն մեկնիչը,- եւ կամ մակբայ, որպէս խնդրեալ որ գուցէ զիրաքանչիւրս սոցա: Իսկ ընդունելութիւն ընդ բայի. իսկ այլքն՝ ամենեցունց՝ այլ իմն պիտոյից սակս առեալ լինին»²: Հեղինակի պատկերացմամբ՝ յիշեալ խօսքի մասերից ոչ մէկը, առանձին վերցրած, չի կարող նախադասութիւն կազմել. եւ նա իր այդ պնդումը հաստատելու համար դիմում է մի գեղեցիկ համեմատութեան. «Որպէս ի նաւի առ այլ իմն պէտս առնանին առ ի մածուցանել՝ իբրեւ սինձն եւ վուշ, եւ առ ի զօղսն պնդել բեւեռք, եւ կամ առ ի գեղեցկութիւն՝ կարմրաղեղն, եւ ոչ մի որ ի սոցանէ մասն ոչ ասի նաւին»³ (ընդգծումը իմն է՝ Լ.Խ.):

Արիստոտելը քննելով անուն եւ բայ տերմինները, դրանց հակադրող յատկանիշը համարում է ժամանակի կատեգորիան. «Անուն է ձայն նշանակաւ ըստ շարադրութեան առանց ամանակի»...⁴:

Անանուն հեղինակը մեկնելով Արիստոտելի այս սահմանումները, հայերէնից վերցրած նորանոր փաստերով ու մանրամասներով հաստատում եւ ամրապնդում է դրանք: Նա ճշգրտելով Արիստոտելի այն պնդումը, որ անունը բառ է առանց ժամանակի ընդգրկման, գտնում է, որ դա չպէտք է այնպէս հասկանալ, թէ իբր առհասարակ անունը չի կարող ժամանակ նշանակել կամ հնարաւոր չէ ժամանակի տարբեր միաւորներ իրենով կոչել: Ամենեւին՝ ոչ. ժամանակի տարբեր հատուածների միաւորները այլ կերպ չեն կարող արտայայտուել լեզուով, քան բուն իսկ անուան կատեգորիայով. «... քանզի *սերկ* որ է ամանակ, նշանակէ անուն, կամ *վաղի* կամ *տարի*, եւ կամ թէ այլ ինչ յայտպիտեացն՝ որոց անուն կայցէ ամանակի»⁵: Մինչդեռ Արիստոտելի հարցադրումը այլ բնոյթ է կրում, ասում է Անանուն մեկնիչը. անուան եւ բայի էութիւնն ու հիմնական գծերը բացայայտելիս նկատում

¹ Նոյն տեղում, էջ 58:

² Նոյն տեղում:

¹ Կորին վարդապետի, Մամբրէի Վերծանողի, Դաւիթ Անյաղթի մատենագրութիւնը, Վենետիկ, 1833, էջ 489:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 495:

⁵ Նոյն տեղում, էջ 499:

ենք, որ երկուսն էլ օժտուած են նշանակողական գործառնությով՝ բառիմաստով, բայց խօսքի մասային նրանց տարբեր պատկանելությունը պայմանաւորուած է ժամանակի կատեգորիայով, որպէս այդպիսին, որով եւ հակադրում են անունն ու բայը. «Այլ վասն զի բայն հանդերձ զիրն նշանակելով եւ ամանակ իմն նշանակէ, գրում է նա, - քանզի կամ գնեթկայն՝ կամ զանցեալն, կամ զապառնին: Իսկ անունս՝ եւ ոչինչ յայսպիսեաց աստի. յաղագս այսորիկ ասաց՝ եթէ առանց ամանակի»¹:

Այնուհետեւ Անանուն մեկնիչը կանգ է առնում անուան եւ բայի միւս առանձնայատկութիւնների վրայ. նա ճիշդ կերպով պնդում է, որ ոչ բոլոր արտաբերուող ձայները անուն (այս անգամ նրա ամենալայն իմաստով)՝ բառ կարող են լինել եւ գրի առնուել. բառի հիմնական յատկանիշներից է նրա մի բան նշանակելը, նշանակողական գործառնոյ ունենալը. ըստ որում որոշակի իմաստով օժտուած արտաբերուող ձայները բառ կազմելու դէպքում կարող են նաեւ իրար միանալով ածանցաւոր եւ բարդ բառեր կերտել: «... Ոչ ամենայն ձայն անուն է, - գրում է նա, - յանբան կենդանեացն, ասելով՝ թէ նշանակեն իմն անգիր թնդմունք զազանացն, այլ վասն զի ոչ պատկանաւորութիւն ի սոսա գտանի եւ ոչ յարմարութիւն մասնկացն առ միմեանս, յաղագս այսորիկ եւ ոչ գրով նշանակին, ապա եւ ոչ անուն եղանին: Քանզի հարկ է զերկուսին ի միասին ընթանալ առ անուանն բաղկացութիւն եւ նշանակելն գոլ՝ եւ զընդ գրով անգանել, որպէս զի պատկանաւոր եղիցի ձայն եւ անուն ասացի»²: Այստեղ, ինչպէս տեսնում ենք, Անանուն մեկնիչը ուշադրութիւն է դարձնում ոչ միայն մի հիմնական ձեւայնությով կազմուած պարզ բառերի, այլեւ երկրորդական եւ հիմնական ձեւայնությով կազմուած ածանցաւոր եւ բարդ բառերի վրայ: Այդ պատճառով բառի համար երկու պայման է դնում՝ նրա նշանակողական գործառնոյն եւ գրի առնուելու հանգամանքը. իբրեւ վառ ապացոյց իր փաստարկման՝ բերում է *յակինդափոս* անիմաստ հնչիւնապատկերը. «քանզի ձայն է (սա) եւ ընդ գրով անկեալ, այլ վասն զի ոչ եւս նշանակ է ուրումն, յաղագս այսորիկ եւ ոչ անուն ասի. իսկ յորժամ մակագրեսցի եւ նշանակեսցէ ինչ իրս այսպիսի ձայնս, եւ անուն եղիցի»³:

Միւս կողմից՝ «ձայնը» «հնչումից» եւ «թնդումից» տարբերակելու համար հեղինակը պահանջում է, որ բառիմաստ ունենայ, նշանակողական դերով օժտուած լինի. հնչումն ու թնդումը նա համարում է ոչ թէ ձայնաւոր գործիքների միջոցով ստացուած ձայն, այլ պատահական՝ ամէն մի օղի բախումից առաջացած ձայն: Բայց նկատենք, որ հեղինակը «ձայն» տերմինը օգտագործում է բառի հնչիւնակազմի առումով: Այս պարզաբանումը տալուց յետոյ հեղինակը «ձայնը» սահմանում է այսպէս. «Իսկ որ մի անգամ ի ձեռն ձայնաւոր գործեսց շնչոյն արտաբերութեան զօղս բախեալ՝ բացակատար է իմն հնչումն, այսպիսիս իսկապէս ձայն ասի»⁴:

Դաւիթը խօսում է նաեւ անուան, իբրեւ գոյականի, մի այլ կարեւոր առանձնայատկութեան մասին. անուանը յատուկ է նաեւ *հորովի* կարգը, ըստ որում գոյականի ուղիղ ձեւը անուանում է ուղղական, որին վերագրում է նաեւ ենթակայի

պաշտօնը. «քանզի ուղղականն՝ մի ոմն նշանակէ ենթակայ. եւ զայս յատկապէս»¹: Իսկ թեք հղովմերից առանձնապէս խօսում է հայցականի եւ սեռականի մասին:

Բնորոշ է, որ Անանուն մեկնիչը բայի մասին անդրադառնալիս, նրան նույնպէս վերագրում է թեքման յատկանիշ եւ այդ երեւոյթի համար «տապալում» բառն է օգտագործում. «... կենդանի հետեւակ երկտամնի բան իմն է, այլ ոչ եւս ճշմարիտ կամ սուտ, եթէ ոչ եւս է-ն առադրեսցի, որ է բայ, կամ եղիցի»²:

Ուշագրաւ է այս կապակցութեամբ Դաւիթ Անյաղքի բացատրութիւնը. բայը միաժամանակ ստորոգեալ է անուանում նա եւ գտնում, որ առանց բայի (= ստորոգեալի) չի կարելի նախադասութիւն կազմել առհասարակ. «... բայց առանց բայի, - գրում է նա, - եւ ոչ մի ստորաստութիւն կամ բացասութիւն: Քանզի է կամ եղիցի, կամ էր կամ լինի, եւ կամ որքանք այլք այսպիսիք բայք արտակայցն է, քանզի առնշանակէ ամանակ»³:

Յովհան Ռոտունցին այս հարցը քննում է մի քիչ ատելի հանգամանօքէն եւ միանգամայն ճիշդ է դիրքորոշում, երբ պնդում է, որ խօսքի տարբեր մասերի (գոյականը գոյականի հետ, բայը՝ բայի, ածականը՝ ածականի, ինչպէս եւ գոյականը՝ ածականի) յարակցումը շարահիսակաւ համաձայնութեամբ՝ չեն կարող միտք արտայայտել, քանի որ ստորոգման համար նրանց պակասում է բայ-ստորոգեալը: Աւելի յստակ ձեւակերպելով իր այս միտքը, նշում է, որ բառերի համաձայնութեան (իր տերմինով՝ «շարադրութեան») ձեւերը թէւ բազմազան են, սակայն «միայն անուան եւ բայի շարադրութիւնն՝ յայտնէ զճշմարիտն եւ գտնուն: Չի թւալտ շարադրի անուն առ անուն, որպէս՝ *եղջերուաքաղ, ձիակապիկ*, ոչ յայտնէ ճիշդ կամ սուտ: Եւ թէ շարադրի բայ առ բայ, որպէս՝ *սրբասնունդ, մեղսամակարդ*. ոչ յայտնէ գտնուն եւ զճշմարիտն: Եւ թէ շարադրի երկու գոյական անուանք, որպէս՝ *մարդ կենդանի, քար անշունչ* - եւ ոչ սոքա յայտնեն զճշմարիտն եւ գտնուն: Այլեւ թէ շարադրի երկու պատահական անուանք, որպէս՝ սեւագոյն, սպիտակագոյն - եւ ոչ սոքա յայտնեն ճիշդ եւ սուտ: Այլեւ թէ գոյացական եւ պատահական անուանք շարադրին, որպէս՝ մարդ սպիտակ, - եւ ոչ սոքա յայտնեն ճիշդ կամ սուտ: Բայց թէ շարադրի ի սոսա բայ ինչ, որպէս է կամ ոչ է. յայնժամ ստեն կամ ճշդեն»⁴:

Շարահիսակաւորութեան համար բայով արտայայտուած ստորոգեալի նախադասութեան մէջ կատարած վճռական դերի եւ բնոյթի մատնանշումը միանգամայն ընդունելի էր, եւ դա կարեւոր նշանակութիւն ունեցաւ շարահիսակաւորութեան ձեւաւորման եւ զարգացման տեսակետից. սակայն անհրաժեշտ է կատարել մի վերապահութիւն. տրամաբանները միշտ չէ, որ նախադասութեան մէջ բայն են համարում ստորոգեալ. եթէ ստորոգեալը բաղադրեալ բնոյթ ունի, այսինքն՝ յատկանիշի վերագրումը ենթակային կատարում է ածականով կամ ածականաբար գործածուած այլ խօսքի մասով եւ օժանդակ բայով, ապա ստորոգեալ է համարում ոչ թէ օժանդակ բայը իր ստորոգելիական վերադիրով, այլ հէնց ստորոգելիական վերադիրը՝ իբրեւ ածական գործածուած բառը օժանդակ բայի զուգորդմամբ. ինչպէս՝ «Տունը գեղեցիկ է» նախադասութեան մէջ՝ *գեղեցիկ* բառը:

¹ Նոյն տեղում, էջ 496:

² Նոյն տեղում, էջ 499:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 496:

¹ Նոյն տեղում, էջ 500:

² Նոյն տեղում, էջ 509:

³ Նոյն տեղում, էջ 473:

⁴ Մատենադարան, ձեռ. 5331, ք. 57բ:

Այս կապակցութեամբ Դաւիթը «Մեկնութիւն չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի «Լերլուծականն» աշխատութեան մէջ քննում է հետեւեալ նախադասութիւնները՝ «Ոչ որ մարդ քար (է), եւ ոչ որ քար մարդ (է)», որոնցից հետեւցնում է. «Որակն նոյն մնաց, քանզի երկոքին բացասականք. իսկ կարգ սահմանացն փոխեցաւ միայն, քանզի ստորագիցեալն ենթակայ եղել, եւ ենթակայն ստորագիցեալ: Քանզի յորժամ ասեմք՝ ոչ որ մարդ քար (է), մարդն ենթակայ է, իսկ քարն ստորագեալ. իսկ յորժամ ասեմք, եթէ ոչ որ քար մարդ, քարն ենթակայ է, իսկ մարդն ստորագեալ»¹: Շարահիսագիտութիւնը վերցնելով «ստորագեալ»ի գաղափարը փիլիսոփայութիւնից, նրան հաղորդեց քերականական բովանդակութիւն՝ ճշգրտելով եւ սահմանագատելով ստորագեալի եւ ստորագելիական վերադիրի դերն ու նշանակութիւնը նախադասութեան մէջ:

Քացայայտելուց յետոյ ենթակայի, ստորագալի եւ կատարման (= գործողութեան) յարաբերութիւնները, այժմ անցնենք Նախադասութեան մասնունքի քննութեանը փիլիսոփայական եւ տրամաբանական երկերում:

Նախադասութեան եւ մտածութեան փոխյարաբերութեան հարցը հետաքրքրել է առաջին հերթին փիլիսոփաներին. այդ հարցի առնչութեամբ Դաւիթ Անյաղթի եւ Անանուն մեկնիչի արտայայտած մտքերը դեռ այժմ էլ իրենց ուժն ու բարձրութիւնը պահում են. Դաւիթ Անյաղթը ճիշդ կերպով գտնում է, որ *ինչ մտածութիւն էլ առաջանայ մարդու գլխում իր բաղադրիչ մասերով՝ հասկացութիւններով ու նրանց միջեւ անվերջ հաստատուող յարաբերութիւններով հանդերձ, նոյն համապատասխանութեամբ նախադասութիւն է կազմում՝ համարժէք խօսքի մասերի կատարած շարահիսական պաշտօնների շարադրանքով, որով դրսեւորում է տուեալ մտածութիւնը*. ինչպէս, օրինակ՝ եթէ այս կամ այն մտածութիւնը իր հասկացութիւնների եւ նրանց միջեւ առկայ յարաբերութիւնների ծաւալով հաստատական եւ կամ ժխտական բնոյթ ունի, ապա նրա արտայայտման խօսքի միաւորը՝ նախադասութիւնը նոյնպիսի կառուցուածք է ընդունում. «... եթէ ըն խորհրդումն բան կամեցեալ իւր ցուցանել, գրում է Դաւիթը, յորժամ՝ որպէս ըն ձայնի ստորասութիւնն ըն խորհրդումն ինչ լինիցի առ ի վկայութիւն տալ, յայնժամ շարադրեալ գմասունս բանին այնորիկ՝ առնեմք զշարադրութիւնն, յորմէ ճշմարիտն կամ սուտն հարկաւորապէս եղիցի, իսկ որպէս ըն ձայնի բացասութիւն, այսպէս ըն խորհրդումն արոհութիւն: Քանզի յորաստ ելով գոլ գայս ինչ՝ գատուցանէ զշարադրութեան ընդ միմեանս կարծիս, որ է տրոհութիւն, եւ դարձեալ կամ ճշմարիտ կամ սուտ»²: Անանուն մեկնիչը, անշուշտ, նախադասութիւնը, իբրեւ խօսքի միաւոր, արտայայտչական գլխատր միջոց, չի նոյնացնում նրանով դրսեւորուող բովանդակութեան հետ, այլ՝ շեշտելով նախադասութեան իբրեւ հաղորդակցական ձեւ լինելը, միաժամանակ ընդգծում է, որ նախադասութեան արտայայտած բովանդակութիւնը կարող է լինել միայն այն, ինչ մտածել եւ ուզեցել է հաղորդել խնդրոյ առարկայ անձնաւորութիւնը. եթէ անելի պարզ արտայայտուենք՝ երբեք հակասութեան մէջ չի կարող գտնուել նախադասութիւնը այն բովանդակութեան հետ, որն հաղորդելու է կոչուած ինքը: Դրանով առաւել եւս բացայայտ է դառնում նախադասութեան սոսկ *հաղորդակցական միջոց* լինելու հանգամանքը: Այս միտքը անելի յստակ ձեւակերպուած է Անանուն մեկնիչի հետեւեալ տողերում. «Արդ որպէս ի ձայնի ստորասութիւնն կամ բացասութիւն՝ զճշմարիտն եւ գտուտն հարկաւորապէս

յայտնեն, այսպէս եւ նիմացման շարադրութիւն կամ տրոհութիւն՝ զճշմարիտն կամ գտուտն հարկաւորապէս յայտնեցեն»¹:

Մտքի եւ նրա դրսեւորման լեզուական միջոցի՝ նախադասութեան փոխյարաբերութեան հարցի քննութիւնը Անանուն մեկնիչին յանգեցնում է այն բանին, որ մտածութիւնը երբեմն լինում է պարզ, երբեմն էլ բաղադրեալ, կապակցուած, շղթայաւորուած (իր տերմինով՝ «շարամանեալ»), ուստի եւ նրանց լեզուական արտայայտութիւնն էլ լինում է կամ պարզ, կամ շարակցուած, միաձույլ մի ամբողջութիւն. «Եթէ որպէս իմացմունքն երբեմն պարզք եւ երբեմն շարամանեալք են, գրում է նա, որպէս եւ ձայնքն զնոյն ընդունին ձեւ, քանզի եւ սոքա երբեմն պարզք եւ երբեմն շարամանեալք եղանին»²: Այստեղ կարեւոր է նկատել նաեւ, որ արտաբերուող նախադասութիւնը ձեւ է համարում. սա նոյնպէս արժէքատր դիտարկում է հեղինակի կողմից: Սակայն «պարզ իմացմունք» ասելով հեղինակը հասկանում է սոսկ հասկացութիւնը, որով ոչ կարելի է մի բան հաստատել եւ ոչ էլ՝ հերքել. դրան իբրեւ լեզուական միաւոր համապատասխանում է բառը, իսկ Անանուն մեկնիչի մօտ անելի մասնաւորուած՝ անունը կամ բայը: Ինքնին հասկանալի է, որ սոսկ անուամբ կամ բայով չի կարելի ամփոփ միտք արտայայտել, կամ մի երեւոյթ հաստատել կամ ժխտել: Միս կողմից՝ «շարամանեալ իմացմունք» բառակապակցութեամբ հեղինակը ըմբռնում է մի բանի հասկացութիւններից բաղկացած մի ամփոփ միտք կամ մտածութիւն, անելի ճշգրիտ՝ դատողութիւն: Սակայն դատողութիւնը, իր հերթին, չի կարելի դրսեւորել այլ կերպ, քան նախադասութեան միջոցով, որում համապատասխան բառերի եւ քերականական յարաբերութիւնների միջոցով մի բան հաւաստում կամ ժխտում է. «Պարզք են իմացմունքն, գրում է նա, յորժամ մասնկունք իմացմանն ոչ ճշմարիտ իցեն եւ ոչ ստիցեն, թէպէտ եւ առնշանակիցեն ինչ իրս: Իսկ շարամանեալք, յորժամ հարկաւորապէս զմինն ի նոցանէ ունիցին: Սոյնպէս եւ ըն ձայնի, յորժամ անուան եւ բայի գատ ի միմեանց արտաբերելոց, որ են եւ սոքա մասնկունք արտաբերութեան բանի, ոչ ճշմարիտ եւ ոչ սուտ ի սոսա երեւի: Իսկ առ միմեանս սոցա շարամանութիւն՝ յորոց բանն բաղկանայ, հարկ է կամ ճշմարիտն, եւ կամ սուտն որոշիլ»³:

Հարցի նման լուծումը գիտական է, հիմնաւորուած, եւ խարսխուած է երեւոյթների համակողմանի ու խորաբափանց քննութեան վրայ: Դա տեսական մեծ նշանակութիւն է ունեցել նաեւ լեզուաբանութեան համար, որով որոշում եւ բնութագրում է լեզուի բուն իսկ էութիւնը՝ առանձնայատկութիւնը հասարակական այլ երեւոյթների համեմատութեամբ, հանդիսանալով մտքերի փոխանակման եւ հաղորդակցման սոսկ միջոց ու գլխատր գործիք այս կամ այն լեզուական խմբաւորման կամ հասարակութեան անդամների միջեւ: Նոյնիսկ XIX եւ XX դարերում լեզուաբանական տարբեր ուղղութիւնների առաջացումը մեծ մասամբ պայմանաւորուած էր հէնց այս ելակէտային հարցի որոշումով, այդ հարցի ըմբռնման եւ լուսարանման մէջ նրանց ցուցաբերած տարբեր մօտեցումներով: Այդ տեսակէտից կարեւոր է ընդգծել, որ դեռեւ VI-VII դարերում, հայերը յունարան հայերէնով թարգմանելով անտիկ աշխարհի նշանաւոր փիլիսոփաների եւ նրանց մեկնիչների աշխատութիւնները, մեծ ծառայութիւն մատուցեցին հայ փիլիսոփայական մտքի ձեւաւորմանն ու զարգացմանը, նպաստելով նաեւ հայ լեզուաբանական մտքի զարգացմանն ու հարստացմանը:

¹ Նոյն տեղում, էջ 590-591:

² Նոյն տեղում, էջ 492

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում, էջ 491:

³ Նոյն տեղում:

Ինչպես նկատում է արուած մէջբերումներից, փիլիսոփաներին կամ անելի ստոյգ՝ տրամաբաններին հետաքրքրել են շարահիսաագիտական հարցերը՝ նախադասութեան տարբեր տիպերի եւ նրանց անդամների բնոյթը այն չափով, որչափով տրամաբանական կատեգորիաները՝ հասկացութիւններն ու օրէնքները, դատումների տեսակներն ու եղանակները դրսեւորում են այնպիսի նախադասութիւնների բնութեամբ, որոնցով հասկացութեան եւ դատողութեան այս կամ այն տեսակն է արտայայտում: Այդ նշանակում է, որ տրամաբանին առաջին հերթին եւ հիմնականում յուզում է ոչ թէ հասկացութեան կամ նախադասութեան, իբրեւ լեզուաբերականական միատրի ձեւը, տիպը կամ կառուցուածքը, որպէս այդպիսին, այլ՝ նրանով բացայայտուած բովանդակութիւնը, այն էլ ոչ թէ ամէն մի հասկացութեան, ոչ էլ ամէն մի նախադասութեան, այլ՝ իրենից դատողութիւն ներկայացնող նախադասութեան բովանդակութիւնը. հետեւաբար նրանց մօտեցման մէջ գերիշխում է տրամաբանական տեսակէտը: Եւ դա, անշուշտ, հասկանալի է եւ անխուսափելի:

Սակայն նախադասութիւնը, դիցուք, իբրեւ լեզուական-բերականական ամենակարեւոր միատր, որով հնարաւոր է դառնում լեզուական հաղորդակցութիւնը այս կամ այն հասարակութեան անդամների միջեւ, շատ անելի լայն ընդգրկում եւ ծաւալ ունի, քան տրամաբանների պատկերացումը նախադասութեան մասին որպէս սոսկ դատողութիւն պարունակողի:

Ճիշդ է, դատողութիւնը, լինելով մտածողութեան ձեւերից մէկը, *համամարդկային* բնոյթ է կրում, եւ այն կարող է դրսեւորուել միայն նախադասութեան միջոցով: *Սակայն դատողութեան այդ համամարդկային բնոյթը զանազան լեզուներում եւ նոյնիսկ միեւնոյն լեզուի տարբեր փոյլերում ստանում է լեզուական-բերականական ամենաբազմազան ձեւաւորում, եւ որի բնութիւնն ու ուսումնասիրութիւնը շարահիսաագիտութեան բուն իսկ առարկան է:* Բացի դրանից, նախադասութիւնը լինելով բերականական ամենակարեւոր միատրը խօսքային հաղորդակցութեան գործընթացում, իր դրսեւորումներով արտայայտում է ո՛չ միայն դատողութիւն, այլեւ յուզական-էմօցիոնալ՝ կամային, հարցական եւ այլ բնոյթի իմաստներ:

Բայց ի պատիւ անտիկ աշխարհի համապարփակ մտածող Արիստոտէլի, բացառութեան կարգով պէտք է ասել, որ նա ճիշդ էր ըմբռնել նախադասութեան էութիւնը նաեւ որպէս խօսքի հիմնական միատր՝ իր ամենալայն իմաստով: Այդ մասին հաստատում է Անանուն մեկնիչը, համերաշխելով նրա տեսակէտին. ըստ բնոյթի եւ եղանակի (մոդալութեան), Արիստոտէլը նախադասութիւնները բաժանել է հինգ ենթախմբերի՝ ա) ըզձական, բ) հարցական, գ) հրամայական, դ) բացականչական («հռչակական») եւ ե) պատմողական («բացերեական») տիպի նախադասութիւնների: Ըստ որում, ինչպէս յիշեցնում է մեզ Անանուն մեկնիչը, առաջին չորս ենթախմբերի մասին Արիստոտէլը անդրադարձել է կամ քերականութեան (իր տերմինով՝ «քերքողական») եւ կամ ճարտասանութեան մէջ: Իսկ պատմական բնոյթի նախադասութիւններից յատկապէս դատողութիւն արտայայտող տիպերը (իր տերմինով՝ «բացերեական») նա ընդգրկում է տրամաբանական հետազօտութեան ոլորտի մէջ: Եւ դա, անտարակոյս, շատ համոզիչ է հենց այն պատճառով, որ տրամաբանական գիտութեան հետ ոչ մի առնչութիւն չունեն յիշեալ չորս տիպերը, որոնք առաւելապէս արտայայտում են էմօցիոնալ ապրումներ՝ կամային, հարցական եւ այլ բնոյթի իմաստներ, եւ ո՛չ թէ՝ դատողութիւններ. «... ըստ հինգ յեղանակ քանի ասացելոց, - մեկնում է Անանուն հեղինակը, - քանզի ոմանք են ըզձականք, իսկ ոմանք հարցականք, եւ ոմանք հռչակականք, եւ ոմանք հրամանեանք, եւ այլք

բացերեականք: Թողեալ զայսն զամենեսեան՝ բացերեական քանիս խնդիր առնէ. քանզի յաղագս այլոցն ամենեցուն՝ զոմանս յիշեցել՝ յորժամ յաղագս քերքողութեանն ասէ. իսկ զոմանս ըն ճարտասանականսն հարցափորձեցէ արուեստ: Իսկ յաղագս *բացերեական քանի նայսմ իրողութեան գորշմունսն առնէ, քանզի առ տրամաբանական կրթութիւնն, եւ կամ իսկապէս ասել՝ առ նոյն ինքն իմաստասիրութիւն յոյժ պիտանացու է, քանզի միայն յայտնէ զճշմարիտն եւ զսուտն, զորոյ իմաստասէրս ունի տարփանս*»¹:

Նախադասութեան մասին այս ամբողջական պատկերացումը ընդունուեց նաեւ շարահիսաագիտութեան կողմից՝ միայն այն տարբերութեամբ, որ *եթէ տրամաբանութիւնը զբաղուած է միայն դատողական բնոյթի նախադասութիւններով, ապա շարահիսաագիտութիւնը՝ բոլոր այն նախադասութիւններով, որոնցում պատմական այս կամ այն փոյլում լեզուն դրսեւորում է իր իրական գոյք:* Նախադասութիւնների ըստ տարբեր եղանակների (մոդալների) բաժանումն ու անուանումը, որ առաջին անգամ տուել է Արիստոտէլը, առանց էական փոփոխութեան, դեռ ասօր էլ շարահիսաագիտական ըմբռումների ոլորտի մէջ են մնում: Սակայն պէտք է նկատել, որ դրանց իրացումը շարահիսաագիտութեան կողմից միայն շատ յետագայում է կատարում:

Նախադասութեան առանձնայատկութիւնները բննելիս Արիստոտէլը համեմատութիւն է անցկացնում, մի կողմից՝ նախադասութեան, միւս կողմից՝ անուան եւ բայի միջեւ, որպէսզի առաւել որոշակի եւ յստակ կերպով բացայայտի նախադասութեան բուն իսկ էութիւնը, նրանց հակադրութեամբ միանգամայն պարզ եւ ցցուն դարձնի նախադասութեան հաղորդակցական գործառոյթը, դերը: Այդ պատճառով նա գտնում է, որ «անուն»ն ու «բայ»ը, առանձին վերցրած, առանց քերականական յարաբերութեան մէջ մտնելու եւ նախադասութիւն կազմելու, «ասութիւն» են, որոնք ո՛չ հաստատում եւ ո՛չ էլ հերքում են մի բան, շարահիսաագիտական արտայայտութեամբ՝ չեն ստորոգում, յատկանիշը չեն վերագրում ենթակային. «Արդ անուն կամ բայ, - գրում է նա, - ասութիւն եղիցի միայն, վասն զի ոչ է ասել այնպէս յայտնել ինչ ծայնիւ, մինչ զի բացերեացել, կամ հարցեալ ուրուք, կամ ոչ, այլ իր յառաջագոյն կամեցելոյ...»²: Իսկ դատողութիւն պարունակող նախադասութիւնը կոչում է «բացերեական», որով ամփոփ միտք է արտայայտում, եւ որն օժտուած է ստորոգման յատկանիշով: Միւս կողմից, «բացերեական» նախադասութիւնը Արիստոտէլը բաժանում է երկու ենթատեսակի՝ ա) «ստորասութիւնը հաստատական բնոյթի է, բ) «բացասութիւնը», երբ նախադասութիւնը ժխտական բնոյթի է. «Եւ է պարզ բացերեութիւն ձայն նշանական, յաղագս զոյ ինչ կամ ոչ զոյ, - գրում է Արիստոտէլը, - որպէս ամանակքն բաժանեալք. եւ ստորասութիւն է՝ բացերեութիւն ուրումն զումեմնէ, իսկ բացասութիւն՝ բացերեութիւն ուրումն ապումեքէ: Եւ վասն զի է՝ եւ զիքն երեւեցուցանել իբրեւ զիք, եւ զչիքն իբրեւ զչիք. եւ զիքն իբրեւ զչիք, եւ զչիքը իբր զիք, եւ շուրջ զարտաքոյսն այժմու ամանակին, սոյնպէս զամենայն ինչ ընկալցի, զորս ստորասացեացն որ ապասոցել, եւ զոր ապուսեացն որ ստորասոցել»³: Բացի դրանից, իրաքանչիւր հաստատական բնոյթի նախադասութիւն միաժամանակ կարող է վերածուել ժխտական բնոյթի նախադասութեան եւ

¹ Նոյն տեղում, էջ 508:

² Նոյն տեղում, էջ 509:

³ Նոյն տեղում, էջ 466:

հակառակն. «... ապա ուրեմն յայտնի է, զի ամենում ստորասութան՝ է բացասութիւն հակակայ, եւ ամենում բացասութեան՝ ստորասութիւն»¹:

Որոտնեցին, արձագանքելով Արիստոտելի արտայայտած գաղափարներին, իր կողմից անելի որոշակի պարզութեամբ նշում է, որ նախադասութիւնը առհասարակ, իբրեւ խօսքի միատր իր ընդգրկմամբ ու ծաւալով անելի մեծ հասկացութիւն է, քան դատողական բնոյթի նախադասութիւնը (իր տերմինով՝ «բացերեւական»ը), իսկ վերջինս էլ, իր հերթին, անելի մեծ հասկացութիւն է, քան հաստատական բնոյթի նախադասութիւնը («բացասութիւն»ը): «Նախ է բանն, եւ ապա բացերեւութիւն եւ ապա ստորասութիւնն եւ բացասութիւնն»², - գրում է նա:

Արիստոտելը խորամուխ է լինում նաեւ նախադասութեան բուն իսկ կառուցումի մէջ, որի մասին արտայայտած իր դատողութիւնները, ինչպէս մասամբ տեսանք վերեւում, յոյժ կարեւոր նշանակութիւն են ունեցել շարահիւսագիտական մտքի զարգացման եւ հարստացման համար: Ի դէպ՝ նրա հայ թարգմանիչը «առաջարկութիւն» եզրն է օգտագործում նաեւ «նախադասութեան» փոխարէն, իբրեւ նրա համանիշը, ըստ որում Արիստոտելը գտնում է, որ իւրաքանչիւր նախադասութիւն առնուազն բաղկացած է երկու գլխատր անդամներից՝ ենթակայից, որը մի բան է անում կամ լինում, ստորոգեալից, որը ենթակային վերագրում է նրա այս կամ այն յատկանիշը. «... սահման կոչեմ,- գրում է նա,- յոր վերլուծանի նախադասութիւն ստորոգեալ ի ենթակայն, եթէ ոմն է՝ յաղագս որոյ է բանն, իսկ ոմն՝ յաղագս նորա ասացեալ, որք տիրապէս մասունքն գոն առաջարկութեան»³: Սոյն հարցի կապակցութեամբ Դաւիթը միանգամայն պարզ եւ աներկբայօրէն պնդում է, որ առանց ենթակայի եւ ստորոգեալի չի կարելի նախադասութիւն կառուցել: Նա նոյնիսկ նախադասութեան «արմատ» եւ «հիմն» է համարում ենթական եւ ստորոգեալը. «... այտքիկ երկոքեան արմատ եւ հիմն են բանականին, այսինքն՝ ստորոգեալն եւ ենթակայն...»⁴:

Այսպիսով, նախադասութեան եւ նրա կառուցումի մասին փիլիսոփայութեան եւ տրամաբանութեան մէջ վաղ շրջանում արտայայտուած տեսակետները կարեւորագոյն նշանակութիւն ունեն շարահիւսագիտական մտքի ձեւաւորման եւ զարգացման համար⁵:

Յունաբան հայերէնով թարգմանուած փիլիսոփայական աշխատութիւնները, միաժամանակ ծանօթացնելով հայ դպրութեան մշակներին անտիկ աշխարհի լուսագոյն մտածողների երկերը, կուլտուրական մեծ նշանակութիւն ունեցան հայ Միջնադարի մտաւոր գործունէութեան բողոքման համար. նրանք խոշորագոյն ազդակներ հանդիսացան գիտութեան շատ բնագաւառների առաջացման եւ ձեւաւոր-

ման առումով: Յատկապէս իմաստասիրական երկերի մեկնիչներն ու թարգմանիչները, ձգտելով ստեղծել փիլիսոփայական գրականութեան համար անհրաժեշտ տերմինաբանութիւն ու հասկացութիւններ, միաժամանակ արհեստական միտում ցուցաբերեցին լեզուաշինարարութեան մէջ՝ որոշակի շրջադարձ կատարելով մետափան հայերէնի գրական լեզուից. եթէ յունարան հայերէնի ներկայացուցիչները կարողացան բազմաթիւ նախածանցներով ու վերջածանցներով հարստացնել հայերէնը եւ լայն չափով ընդարձակել նրա բառակազմական ներքին հնարարութիւնները՝ իմացական-խոհական ամենաբարդ ու ամենամուրթ մտքեր, հասկացութիւններ արտայայտելու տեսակետից, ապա լեզուի ներքին կառուցումի՝ յատկապէս շարահիւսութեան կողմից կատարեցին հայերէնի ոգուն խորք յունաբան նորամուծութիւններ: Յունաբան հայերէնով թարգմանուած փիլիսոփայական երկերը, միւս կողմից, պակաս նշանակութիւն չունեցան նաեւ հայ թերականական մտքի ձեւաւորման ու զարգացման համար ընդհանրապէս, իսկ շարահիւսագիտութեան ձեւաւորման ու զարգացման համար՝ մասնաւորապէս:

Այժմ անցնենք քերականական-մեկնողական բնոյթի աշխատութիւններում տեղ գտած շարահիւսագիտական մտքերի վերլուծմանը:

Թրակացին վերոյիշեալ իր աշխատութեան մէջ տալիս է միայն նախադասութեան սահմանումը եւ թուրքում խօսքի մասերը, որոնցով առհասարակ կազմում է նախադասութիւնը. ի դէպ՝ «բան» տերմինն է օգտագործում ինչպէս նախադասութեան, այնպէս էլ խօսքի առումով, առանց դրանց յստակ տարբերակման, այդ պատճառով էլ «բանի ուսմունք» բառակապակցութեամբ նա խօսքի մասերն է հասկանում, եւ ո՛չ՝ նախադասութեան անդամները: Նրա այս ըմբռումը մի քանի դար շարունակ գերիշխել է ինչպէս մեր քերական մեկնիչների, այնպէս էլ ինքնուրոյն հեղինակային բնոյթի աշխատութիւններում, մինչեւ որ շարահիւսագիտութիւնը անջատոււմ է ձեւաբանութիւնից եւ ձեւաւորում իբրեւ քերականագիտութեան ինքնուրոյն բնագաւառ՝ իր ուսումնասիրութեան որոշակի ոլորտով ու հարցադրումներով: Իսկ խօսքի մասերի եւ նախադասութեան անդամների որոշման տարբեր սկզբունքները զիտականօրէն մշակուեցին պրոֆ. Գ. Սեւակի կողմից, որոնք եւ յետագայում ընդունուեցին ու դրուեցին արդի արեւելահայ գրական լեզուի քերականագիտական աշխատութիւնների հիմքում: Թրակացին նախադասութիւնը սահմանելիս ընդգծում է այն միտքը, որ լեզուական միեւնոյն հանրութեան պատկանող մարդու բառապաշարում տարբեր դասաւորման (խօսքի մասերի) վերաբերող բառերը շարադրուելով (իրար մօտ գալով) կազմում են «բան» (= նախադասութիւն). այլ կերպ ասած՝ նախադասութիւնը արդիւնք է մարդու զիտակցութեան մէջ գտնուող «ցիւր ու ցան» բառերի շարադրման, որով «ինքնակատար կերպով» արտայայտուում է միտքը. «Բան է հետեւակ բառի շարադրութիւն գտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով: Եւ բանի մասունք են ութ. անուն, բայ, ընդունելութիւն, յաղ, դերանուն, նախադրութիւն, մակրայ, շաղկապ: Քանզի է առաստիւնդ իբրեւ տեսակ ընդ անումս ենթարկեալ»¹: Ըարահիւսագիտական այս միակ դիտողութիւնն է, որով սահմանափակուում է Թրակացին իր ամբողջ աշխատութեան մէջ:

Դաւիթ Քերականը իր «Մեկնութիւն քերականին» աշխատութեան մէջ յայտնում է այն տեսակետը, որ մտքի բովանդակութիւնը բացայայտում է տրոհմամբ՝

¹ Նոյն տեղում:

² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 5331, ք. 53բ:

³ Կորիւն վարդապետի, Մամբրէի «Լեռնանոյի...», էջ 576:

⁴ Նոյն տեղում, 305:

⁵ Պետք է նշել, որ եթէ մենք յատկապէս կանգ առանք Արիստոտելի աշխատութիւնների եւ Դաւիթ Անյաղքի փիլիսոփայական եւ տրամաբանական բնոյթի մեկնողական երկերի վրայ, ապա այդ այն պատճառով, որ շարահիւսագիտութեանը առնչուող հարցերի ուսումնասիրութիւնն ու արժարժումը հայ փիլիսոփայական մտքի պատմութեան մէջ վաղ շրջանում առաջին անգամ կատարում է Դաւիթ Անյաղքի կողմից, իսկ նրանից յետոյ հանդէս եկող փիլիսոփաները մեկնաբանական բնոյթի իրենց երկերում, ըստ էութեան, նոր բան չեն անելացնում մեր շօշափած խնդիրներին:

հասկացութիւնների միջոցով, ինչպէս եւ նախադասութիւնը հաղորդում է տրոհմամբ՝ բառերի միջոցով. «... Ի տրոհութենէն զպարունակ միտան տեսանենք,- գրում է նա,- այսինքն՝ յորշելոյ գրանսն եւ գատանելոյ»¹: Իր այս պնդման ճշդութիւնն ու բացառիկ կարեւորութիւնը ընդգծելու եւ հիմնադրելու համար դիպուկ եւ պատկերաւոր համեմատութիւն է անցկացնում, մի կողմից՝ մտքի եւ նախադասութեան տրոհման, միւս կողմից՝ խոհարարի՝ միսը համաչափ մասերի անդամաւեատելու միջեւ. նա գտնում է, որ եթէ միտքը տրամաբանական ճշդութեամբ չտրոհուի հասկացութիւնների, իսկ նախադասութիւնը՝ քերականական ճշդութեամբ բառերի, ապա անհասկանալի եւ անհիմաստ կը դառնայ նրանց բովանդակութիւնը. «Ժսկ ոչ ուղիղ տրոհելն ըստ չար խոհակերի զանդամսն ոչ ուղիղ յաշել,- գրում է նա,- որ է զմիտան ի մտաց եւ զբան ի բանն ոչ գատուցանել, եւ պարունակեալն ի նմա անյայտացաւ միտք, զի ի յտողէն զանխրագոյց եւ ինքն անարուեստ ցուցաւ»²: Այնուհետեւ նա փորձում է մեկնել նաեւ Թրակացու «բան»ի մասին, սակայն առանձին նորութիւն չի յայտնում այդ առթիւ:

Անանուն մեկնիչը աւելի յստակ եւ որոշակի է ըմբռնում Թրակացու սահմանումը նախադասութեան մասին, հայերէնի լեզուական օրինակով գործնականօրէն ցուցադրում նրա էութիւնն ու բաղադրիչ մասերը. «... յորժամ շարադրէ որ *Գ-աւիթն, զշարադրեացն եւ զպատերազմն եւ զմարացն եւ զհայոցն*, - գրում է նա,- եւ ասիցէ յարապէս եթէ «*Գ-աւիթ շարադրեաց զպատերազմն մարաց եւ հայոց*», որ է բան: Արդ *Գ-աւիթն* առանձին բառ է, եւ *պատերազմն* առանձին բառ է եւ այլն, *իսկ շարադրութիւնն նոցա բան լսի*, որ կատարէ զշարադրութիւն յինքենէ»³: Անանունի այս մեկնարանութիւնը ընդունում եւ տարածում է նաեւ յետագայ մեր քերական-մեկնիչների կողմից, որոնք հիմնականում մէջբերելով հանդերձ նրա խօսքերը, այս կամ այն դիտողութիւններով ու նրբերանգներով լրացնում են այն:

«Գրչութեան արուեստի» հիմնադիրները՝ Արիստակէս Գրիչն ու Գեորգ Սկեւոնացին իրենց աշխատութիւններում ուղղագրական կանոններ սահմանելիս ամբողջովին ելնում էին այս կամ այն տիպի բառերի ոչ միայն ձեւաբանական յատկանիշներից, այլեւ առաջին հերթին նախադասութեան մէջ նրանց կատարած պաշտօնից, այլ կերպ ասած՝ շարահիսազիտական բնոյթ կրելով հանդերձ, յիշեալ հեղինակները շօշափում են հիմնականում հայերէնի ուղղագրութեան ինչպէս տեսական, այնպէս էլ գործնական հարցերը, ուստի եւ բնական է, որ չի կարելի սպասել նրանցից շարահիսազական կատեգորիաների վերաբերեալ տեսական հարցերի արծարծում: Այսպէս, օրինակ, Արիստակէս Գրիչը նշում է, որ եթէ ստորոգեալով արտայայտուած գործողութիւնը մեկնում կամ ուղղում է նախադասութեան ենթակայից դէպի այլ առարկաներ, ապա իբրեւ օրինակ ծառայող անունները ա-ով վերջաւորուելիս երբեք լ չեն ստանում, չհիմնադրելու համար իր այս դրոյթը իբրեւ ցուցադրական օրինակ բերում է այնպիսի նախադասութիւններ, որոնցում ա-ով վերջաւորուող բաղաբանների եւ գիղերի անունները մի դէպքում հանդէս են գալիս իրրեւ տեղի պարագայ՝ ուղեւորման հայցականով.

«... երբան ի Կիլիկիա, յԱնարգարա, ի Մամեստիա ... եւ կամ թէ ընդ այլ որ ասես թէ՛ «Գնա դու ի Կիլիկիա, յԱնարգարա, ի Մամեստիա...»:

Իբրեւ տեղի պարագայ՝ ներգոյականի իմաստով.

¹ Նոյն տեղում, էջ 88:
² Նոյն տեղում:
³ Նոյն տեղում, էջ 138:

«... յայս կերպս է Մելեկա, Միւրիա, Մերաստիա», այս ինչ դիրագին է յՈւռհա, յԵթովպիա, ի Բիւքրանիա...»:

Միս դէպքում իբրեւ նախադասութեան գլխատր անդամի՝ ենթակայի պաշտօնով. «... շէն է կամ ատեր Ամասիա, Անկիւտիա, Ասիա»¹ ելն.:

Գեորգ Սկեւոնացին բառի ուղիղ եւ թէք ձեւերի հակադրութիւնը ըմբռնելի դարձնելու համար նկատի է ունենում նրա շարահիսազական գործառոյթը նախադասութեան մէջ. եթէ խօսքի մէջ տուեալ գոյականը ենթակայի դերում է, ապա այն ուղղական հոլովով է հանդէս գալիս, իսկ եթէ շարահիսազական այլ գործառոյթներ է դրսեւորում, ապա այն հոլովուած է եւ կիրառում է թէք հոլովով. «Եւ զգայտսիկ զանուանս,- գրում է նա,- որ առանց յիտ են՝ (թէ) մարդկան սրբոց կամ անսրբոց եւ թէ տեղեաց գեղից կամ քաղաքաց, երբ ի քէն սկսեալ դէպ ի նա գնա(յ)՝ չպիտի յի. յորժամ ասես՝ Երեմիա զայս ասաց, կամ Բառնաբա զայս գործեաց: Նմանապէս եւ յորժամ ասես՝ ի Գալելիա գնաց, կամ՝ յԱտանա գնամ,- ի քէն սկսեալ բանն եւ առ նա է ի գնալ...»²:

Վարդան Արեւելցոյ մեզ հասել են քերականական երկու աշխատութիւն՝ «Քերականի մեկնութիւն» եւ «Վասն բանին մասանց» գործերը. վերջինս առաջաբանով եւ ծանօթագրութիւններով լոյս է ընծայուել պատմաբան-բանասէր Լ.Խաչիկեանի կողմից՝ «Տեղեկագիր» 1943 թուականի 2րդ համարում, որտեղ Վարդան Արեւելցու յիշեալ աշխատութիւնների վերաբերեալ հետեւեալ ուշագրաւ գնահատականն է տրուած.

«Վարդան Արեւելցու «Քերականի մեկնութիւն»ը, ինչպէս եւ մեր կողմից հրատարակուող «Վասն բանին մասանց» փոքրիկ աշխատութիւնը, առանձնայատուկ տեղ են գրաւում հայ քերականական գրականութեան մէջ: Նրանք միակն են, որ գրուած են բոլորին հասկանալի ու պարզ մի լեզուով, որի հիմքում ընկած է Կիլիկեան բարբառը: Ոչ միայն լեզուն, այլ աշխատութիւնների ողջ կառուցուածքը պարզ է, շարադրանքը սահուն եւ ազատ արհեստական գիտականութիւնից, ոճը՝ ճոխ, ժողովրդական դարձուածներով ու կեանքից վերցրած օրինակներով հարուստ»³: Մասնատրեւելով իր խօսքը «Վասն բանին մասանց» աշխատութեան մասին, Լ.Խաչիկեանը շարունակում է. «... նրա (Վարդան Արեւելցու - Լ.Խ.) «Վասն բանին մասանց»ը, վերոյիշեալ դրական կողմերից գատ, հայ հին քերականութիւններից միակն է, որ ազատուելով ճարտասանական ու փիլիսոփայական գիտութիւնների խառնուրդից, հանդէս է գալիս որպէս զուտ քերականական գիտութիւն, գիտութիւն՝ խօսքի մասերի մասին (Μορφολογία)»⁴: Մեր շօշափած հարցի կապակցութեամբ մեզ առանձնապէս հետաքրքրում է Վարդան Արեւելցու հէնց այս երկրորդ փոքրիկ աշխատութիւնը, որը թէւ ծաւալով ընդամենը 4-5 էջ է կազմում, բայց հայ շարահիսազիտութեան պատմութեան տեսակէտից կարելի է նշանակութիւն ունի: Պրոֆ. Գ. Ջահուկեանը սոյն աշխատութիւնը իրաւամբ համարում է «հայոց լեզուի շարահիսութեան նախատիպ»⁵, որովհետեւ այն հայոց

¹ Մաշտոցի անուն Մատենադարան, ձեռ. 2882, ք. 145ա-բ:
² Մաշտոցի անուն Մատենադարան, ձեռ. 2281, ք. 362բ - 363ա:
³ «Տեղեկագիր», ՄՍՈՄի Հայկական ֆիլիալ, 1943, Թ. 2, էջ 84:
⁴ Նոյն տեղում, էջ 84-85:
⁵ Գ. Ջահուկեան, նշուած աշխատ., էջ 253:

լեզուի շարահիսութեան սկզբունքների նկարագրութեան առաջին ինքնուրոյն փորձն է»¹:

Վարդան Արեւելցին, ի տարբերութիւն Թրակացու քերականութեան հայ մեկնիչների, խօսքի մասերը սահմանելիս ելնում է ոչ թէ նրանց ձեւաբանական առանձնայատկութիւններից, այլ շարահիսական դերից ու պաշտօնից, նրանց կիրառական ֆունկցիայից: Ի դէպ՝ պէտք է նկատել, որ այս աշխատութեան մէջ նա արդէն Թրակացու քերականութեան մեկնիչը չէ, այլ ինքնուրոյն հեղինակ՝ շարադրելով իր հայեացքները խօսքի մասերի վերաբերեալ:

Հեղինակը «բան» ասելով հասկանում է խօսքի նուագագոյն միատր նախադասութիւնը, որն, իր ըմբռնմամբ, բաղկացած է լինում երեք անդամներից՝ «անուն», «բայ» եւ «նախադրութիւն» բառերից, ըստ որում «նախադրութիւն» տերմինի տակ ըմբռնում է ենթակայի լրացումները՝ դրանցից յատկապէս որոշիչը:

«Բան կոչի կատարումն խորհրդոյ,- գրում է նա,- երբ ասես, թէ *հոգեւոր տէրն հրամայեաց եկեղեցի շինել*՝ կատարեալ բան է. *հոգեւորն* նախադրութիւն է եւ *տէրն* անուն եւ *հրամայեացն* բայ եւ *եկեղեցի շինելն* խորհուրդ կատարեալ»²:

«Վեցերորդ մասն բանին նախադրութիւնն է, որ է ճոխաբանութիւն, յորժամ հեզ ինչ ղնես յառաջք բանին՝ *բարի* թագաւոր, իմ *ապաւեն* պարոն, *քրիստոսապահ* Թորոս»³:

Նկատելի է, որ Արեւելցին մակբայի մասին տուած սահմանմամբ հասկանում է ստորոգեալի լրացումները՝ խնդիր եւ պարագայ անդամները. «Եւթներորդն՝ մակբայ է, որ է վերնաբայ եւ կամ կրկնաբայ: Թէ երկու մարդոյ իրք կամիս տալ, ասես ճորտուն՝ երկաքանչիւրոցն տուր, եւ թէ ամենոյ կամիս, ասես՝ իւրաքանչիւրոցն, կամ երկուց, երից, չորից»⁴:

Սահմանափակուելով քերուած մէջբերումներով, տեսնում ենք, որ Արեւելցին խօսքի բոլոր մասերն էլ մեկնաբանում եւ նկարագրում է շարահիսագիտութեան տեսանկիւնից: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ եթէ խօսքի մասերի բնորոշման մէջ շփոթուել են ձեւաբանական եւ շարահիսական սկզբունքները, եւ ձեւաբանական կատեգորիաները որոշուել են շարահիսական կատեգորիաներով, ապա շարահիսագիտութեան ներթափանցումը քերականութեան մէջ, վերջին հաշուով, ինքնին նշանակալի երեսոյթ է հայ քերականագիտութեան զարգացման գործում, նպաստելով քերականութեան բաղկացուցիչ մասերի, իրրեւ գիտական առանձին ճիւղերի, ձեւատրման խնդրին:

Եսայի Նչեցին, մեկնաբանելով Թրակացու տուած սահմանումը նախադասութեան մասին, կրկնում է նաեւ Անանունի բացատրութիւնը նախադասութեան կառուցումի վերաբերեալ՝ կատարելով միաժամանակ որոշ լրացումներ: Նա գտնում է, որ «շարադրութիւն»ը կապակցուած խօսք է՝ այս առթիւ օգտագործելով «բան» տերմինը իր ամենապայն իմաստով, որով դրսեւորում է մտածողութիւնը ինքնաբերաբար. «Իսկ շարադրութիւն, այսինքն բան լսի, որ կատարէ զմտածու-

քիւնն յինքնէ»¹: Նա պարզաբանում է, որ Թրակացու ձեւակերպման մէջ «բան» տերմինի առթիւ կիրառուած «հետեւակ» բառը պէտք է հասկանալ այն իմաստով, որ դա ոչ թէ չափածոյ, այլ արձակ խօսքին է վերաբերում, երբ «ցան ու ցիր» գտնուող բառերը, առանց տաղաչափութեան կանոնների հաշուառման, «միայար» շարադրում եւ «բան» են կազմում. «Իսկ հետեւակ ասաց,- գրում է նա,- գոչն ներչափական յորժամ ոչ բացորոշեալ տեղիս ցուցանէ տղից եւ երկարացն հեզեմայից. այլ հետեւանայ ընդ բառս ցան եւ ցիր, որ շարադրէ առ միմեանս զաւտարսն ածել յենթադատութիւն միմեանց եւ առնել բան ըստ շարադրութեան, այսինքն՝ ըստ միայարութեան որպէս ասացան, զի բան ի շարադրութենէ բառիցն լինի, որպէս եւ բառն ի փաղառութեանց եւ ի վտանգից»²:

Նչեցին առաւել եւս ճշգրտում է նախադասութեան՝ «բան»ի էութիւնը եւ ընդգծում նրա ֆունկցիոնալ՝ հաղորդակցական կողմը: Նա ճիշդ կերպով պնդում է, որ նախադասութեան միջոցով դրսեւորում է հաղորդուող եւ ասարտուն մտածութիւնը, ինչպէս նաեւ զրատը խօսքում արտայայտուող մտածութիւնների՝ նախադասութիւնների միջեւ սահմանները որոշում են ստորակէտով, միջակէտով եւ «աւարտեալ» կէտով՝ վերջակէտով. «... բան ասէ զյայտնեալ եւ զկատարեալ խորհուրդն որ զարամախորհութիւնն յինքն ցուցանէ,- գրում է Նչեցին,- այսինքն՝ զաւարտումն խորհրդոյն, որ ստորակիտովն եւ միջակիտան եւ ասարտելովն յայտնի եւ դադարէ խորհուրդն»³: Բացառիկ կարեւորութիւն ունի հեղինակի այն միտքը, որ որքան էլ բառեր կողք կողքի դրուեն, առանց նրանց միջեւ պահանջուող անհրաժեշտ եւ պարտադիր քերականական յարաբերութիւնների, նախադասութիւն չի կարելի կազմել. նշանակութիւն չունի նաեւ վանկերի քանակը նախադասութեան կառուցման համար իբրեւ պարտադիր նորմա. «... ոչ եթէ բազմութիւնք անուանն ոչ միայն եզավանկքն, ոչ են եւ ոչ ասին բանք, որպէս՝ *մարդն, հացն* եւ *ջուրն*, այլ եւ ոչ երկավանկք, եռավանկք եւ որք մի ըստ միտջէքն»⁴: Բացի դրանից, ուշագրաւ է նաեւ Նչեցու այն արտայայտութիւնը, ըստ որի զանազան կառուցուածք ունեցող նախադասութիւնների առաջացումը պայմանաւորուած է մտածողութեան յարափոփոխ ընթացքով՝ ու բնոյթով: Նրա այս միտքը շատ արժեքատու է նաեւ այն առումով, որ քերականական-մեկնողական բնոյթի երկերում առաջին անգամ ճիշդ է բնորոշում տարբեր տիպի նախադասութիւնների առաջացման հիմքը, որպիսի բացատրութիւնը ընդունելի է շարահիսագիտութեան տեսութեան համար. «Բայց ասի տրամախտութիւնը եւ փոխադրութիւն,- գրում է նա,- *քանզի արդ եւ ինչ փոփոխի խորհուրդ մտացն յայլեայլս եւ այնպէս ծնանի զբանս զանազանս միմեանց այլեայլ բառիւքն»*⁵:

Երզնկացու շարահիսագիտական հայեացքները լիովին նման են Եսայի Նչեցու տեսակէտներին, ուստի եւ կանգ չենք առնում դրանց վրայ:

Առաքել Միւնեցին բացատրում է բառի, նախադասութեան եւ խօսքի միմեանց նկատմամբ ունեցած յարաբերութիւնները՝ տալով դրանցից իւրաքանչիւրի քերականական ըմբռնումը. «Ձի՞նչ է շաղաշարութիւն,- հարցնում է նա եւ ապա պատասխանում.- նախ՝ որ բազում վանգ շաղաշարի եւ մի բան կազմի, եւ բազում բառ

¹ Նոյն տեղում:

² «Տեղեկագիրք» ՄՄՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալ, 1943, Թ. 2, էջ 86:

³ Նոյն տեղում, էջ 87-88:

⁴ Նոյն տեղում, էջ 88:

¹ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 6897, ք. 38բ:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում, ք. 39ա:

⁴ Նոյն տեղում:

⁵ Նոյն տեղում, ք. 38բ - 39ա

շաղաշարի եւ մի բան կազմի, եւ բազում վանգ եւ բառ եւ բան շաղաշարին եւ խասք եւ գրոյց առնեն»¹: Արուած մէջբերումից ակնյայտ է դառնում, որ, հեղինակի համոզմամբ, «լսօսքը եւ գրոյցը» անլի մեծ ծառայի հասկացութիւններ են, բան նախադասութիւնը: Անշուշտ, նրա այդ պնդումը վեր է ամեն կասկածից: Միս կողմից նշենք նաեւ, որ նման հարցադրումը շատ կարեւոր է շարահիսազիտութեան համար, որով առաւել եւս ընդարձակում է նրա հետազօտութեան ոլորտը: Դրան անելացնենք նաեւ, որ «լսօսքի» եւ «գրոյցի» սահմանումը առաջին անգամ մեր քերականական-մեկնողական բնոյթի աշխատութիւններում հանդիպում ենք յիշեալ հեղինակի մօտ: Առաքել Միսնեցին «շաղաշարե» տերմինը օգտագործում է արդի «համաձայնութիւն» շարահիսազիտական տերմինի իմաստով. «Դարձեալ անուն ընդ բառսն շաղաշարի եւ բան ցուցանէ, որպէս ասել՝ *Պետրոս գրեաց, գործեաց*: Արդ շաղաշարելն երկու բան ցուցանէ, այսինքն՝ որպէս շաղախել գրագում բանս ընդ իրար, այսինքն՝ զի բազում վանգ ի մի շաղախին եւ ապա մի բառ կազմի, որպէս ասել *խաղաղութիւն*, այս մին բառ որ ի չորս վանգից շաղախմանէ կազմեաց, սոյնպէս անուն եւ բայ շաղախին եւ խասք եւ գրոյց կազմեն: Երկրորդ շաղաշարել, այսինքն շաղախել եւ շարել, այսինքն՝ բազում վանգ շաղախել եւ մի բառ կազմել եւ բազում բառ շարել եւ բան եւ խասք կազմել»²: Իսկ նախադասութեան վերաբերեալ Թրակացու տուած սահմանման մասին իր նախորդների ասոյթները իբրեւ արդէն իսկ ձեռք բերուած նուաճում, ընդունում է հեղինակը եւ իր բառերով վերահաստատում դրանք:

Ահա սրանք են, հիմնականում, ինչպէս փիլիսոփաների, այնպէս էլ քերական-մեկնիչների ընդհանուր գիտելիքներն ու գաղափարները, նրանց կատարած ծառայութեան հակիրճ նկարագրութիւնը շարահիսազիտութեան բնագաւառում:

Իբրեւ ամփոփում վերն ասածների, յանգում ենք հետեւեալ եզրակացութիւնների.

1. Փիլիսոփաներն ու տրամաբանները իրենց երկերում շատ արժէքաւոր եւ հարուստ դիտողութիւններ են բողել շարահիսազիտութեան վերաբերեալ, որոնք յետագայում ընկալում եւ իւրացում են վերջինիս կողմից: Աւելին. մեր վերլուծութիւնը աներկմիտ պարզութեամբ ցոյց է տալիս, թէ որքան մեծ է փիլիսոփայութեան եւ յատկապէս տրամաբանութեան նպաստը շարահիսազիտութեան ձեւաւորման եւ նրա զարգացման նախադրեալների՝ շարահիսազիտութեան կարեւորագոյն ըմբռնումների ու տերմինների ստեղծման տեսակէտից: Այդ ուղղութեամբ կատարուած հետազօտութիւնը յանգեցնում է մեզ այն հետեւութեան, որ շարահիսազիտութեան նախապատմութիւնը իր հիմնական եւ լական գծերով, հարցադրումների ծանրակշիռ բովանդակութեամբ ու մեկնաբանմամբ, առաջին անգամ տրուած են փիլիսոփայական եւ տրամաբանական աշխատութիւններում:

2. Քերականական-մեկնողական բնոյթի աշխատութիւններում շարահիսազիտական ըմբռնումները հարցադրումների շատ անլի նեղ շրջանակ են ընդգրկում, բան փիլիսոփայական-տրամաբանական երկերում արժարժուած շարահիսազիտութեան տեսութեանը առնչուող խնդիրներն ու հասկացութիւնները: Բացի դրանից, քերականական-մեկնողական բնոյթի երկերում արժարժուած շարահիսազիտական ըմբռնումները սահմանափակում են սոսկ նախադասութեան ուսմունքի շուրջ արտայայտուած գաղափարներով: Դա, անշուշտ, ինքնին հասկանալի է,

¹ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 530, p. 88ա:

² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2380, p. 414բ - 415ա:

որովհետեւ քերականական յիշեալ աշխատութիւնները մեկնողական բնոյթ կրելու պատճառով հարկադրուած էին լուսաբանելու եւ պարզաբանելու միայն քերականական այն դրոյթներն ու տեսակէտները, որոնք ձեւակերպուած էին Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականին» երկում: Իսկ Դիոնիսիոս Թրակացին, ինչպէս ասուեց վերեւում, շարահիսազիտական հարցերից անդրադարձել է միայն նախադասութեան մասին՝ սեղմ եւ ամփոփ մի սահմանմամբ: Սակայն քերական-մեկնիչները ձգտել են, իրենց ժամանակ քերականազիտութեան ձեռք բերած նուաճումների եւ մակարդակի համաձայն, նախադասութեան եւ նրան յարակից հարցերի շուրջ, որքան հնարաւոր է, ամբողջական պատկերացում ստեղծել, արտայայտելով այդ առթիւ արժէքաւոր եւ հետաքրքրական տեսակէտներ:

3. Այս շրջանում, անշուշտ, չի նկատուած փիլիսոփայական եւ տրամաբանական երկերում արժարժուած շարահիսազիտութեանը առնչուող բազմաթիւ հարուստ եւ նուրբ դիտողութիւնների լայն եւ համակողմանի ներքափանցում քերականազիտական աշխատութիւններում: Դրա պատճառը արդէն ասուեց, որ յիշեալ երկերի մեկնողական զրականութեան պատկանելն էր, որը կաշկանդում էր հեղինակներին ծառայելու եւ մշակուած ինքնուրոյն տեսակէտներ արտայայտելու ձեւաբանութեանն ու շարահիսազիտութեանը վերաբերող բազմաթիւ երևոյթների ու հարցերի մասին: Բայց արդէն այն, ինչ իբրեւ շարահիսազիտական հայեացքների ամբողջութիւն մշակուել էր փիլիսոփայական-տրամաբանական, ինչպէս եւ մեկնողական քերականական բնոյթի երկերում, լուրջ եւ կարեւոր նախադրեալներ հանդիսացան շարահիսազիտական մտքի յետագայ անկաշկանդ զարգացման համար՝ քերականական ինքնուրոյն եւ ինքնատիպ աշխատութիւններում:

«Բանքեր Մատենադարանի»,
Տարեգիրք, Թ. 6, 1962:

ԼԵՁՈՒԻ ԵՒ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵ- ՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԱԴՐՈՒՄԸ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Միջնադարի հայ ուսումնականների՝ լեզուի եւ քերականութեան հարցադրումների վերաբերեալ ունեցած ըմբռնումների մասին թերի եւ միակողմանի պատկերացում կ'ունենայինք, եթէ սահմանափակուէինք միայն քերականական Մեկնութիւններում արժարժուած լեզուա-քերականական ըմբռնումների քննութեամբ: Միջնադարի հայ դպրութեան ուսումնասիրութիւնը յանգեցնում է մեզ այն խորին համոզմանը, որ հին յունական մտածողների փիլիսոփայական եւ տրամաբանական երկերը, ինչպէս եւ դրանց շուրջ *հայ իմաստասէրների գրած մեկնութիւններն ու ինքնուրոյն աշխատութիւնները միաժամանակ ուսումնական կարեւորագոյն ձեւաբանական-դասագրքեր են եղել Ուսումնազիտական կենտրոններում՝ քերականական Մեկնութիւնների հետ միասին*: Հետեւաբար՝ եթէ ուզում ենք պարզել, թէ լեզուաբանական եւ քերականական գիտելիքների ինչպիսի՞ հանրագումար էին ձեռք բերում Միջնադարի հայ ուսումնականները, ապա պէտք է նկատի ունենանք

ոչ միայն քերականական Մեկնութիւնները, այլև փիլիսոփայական եւ տրամաբանական աշխատութիւնները, որոնցում արծարծուած են նաեւ լեզուի ու քերականական կարգերի տեսական հարցադրումները: Լեզուի եւ մտածողութեան փոխարարեութեան հարցադրումը բննելիս այստեղ մենք անդրադառնալու ենք միայն փիլիսոփայական ու տրամաբանական երկերում, ինչպէս եւ քերականական Մեկնութիւններում արծարծուած տեսական մշակումներին ու ընդհանրացումներին, ըստ որում սահմանափակուելով բացառապէս Ե.-Զ. դարերում ստեղծուած քարգմանական ու հեղինակային երկերով եւ կը բննարկենք երեք հիմնական հարց.

1. Լեզուի բնույթի որոշումը.

2. Օրինելու առարկայի, հասկացութեան, անուան եւ գրութեան փոխարարեութիւնների ըմբռնումը.

3. Մի կողմից՝ լեզուի ու մտածողութեան, միւս կողմից՝ օրինելու իրողութիւնների փոխարարեութեան լուսաբանումը:

1. *Լեզուի բնույթի որոշումը.*՝ Տեսական կարեւոր նշանակութիւն ունի, անշուշտ, այն հարցադրումը, թէ լեզուն ինքնին «գործի՞ք» է, թէ՞ սոսկ նշանակողական միատորների պայմանական համադրութիւն («ըստ շարադրութեան»): Հայ դպրութեան մէջ լեզուի բնույթի որոշման տեսական հիմնադրումը, ինչպէս եւ օրինելու առարկայի, հասկացութեան, անուան եւ գրութեան փոխարարեութիւնների ըմբռնումը, լեզուի եւ մտածողութեան՝ մի կողմից, միւս կողմից՝ օրինելու իրողութիւնների փոխարարեութեան լուսաբանումը գտնուած ենք, հիմնականում, «Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի» եւ «Մեկնութիւն Պերիարմենիաս գրոցն» մեծարժէք երկերում, Թրակացու աշխատութիւնում եւ հայ քերականների Մեկնութիւններում:

Ի դէպ՝ առաջին երկու տեսական աշխատութիւնները մեր մատենագրութեան մէջ աւանդարար վերագրուած են եղել Դաւիթ Անյաղթին: Ֆր. Կոնիքերի¹ եւ ակադեմիկոս Յ. Մանանդեանի² բանասիրական-աղբիւրագիտական խորագնիւն հետազոտութեամբ հայագիտութեան համար միանգամայն ընդունելի համարուեց նրանց այն հիմնական եզրակացութիւնը, որ նորալատոնական Դաւիթ Անյաղթը չէր կարող բացայայտ արիստոտելեան ուղղութեան պատկանող սոյն երկերի հեղինակը լինել: Սակայն այս հարցի մեկնաբանման առթիւ ակադ. Յ. Մանանդեանը, յենուելով գերմանացի գիտնական Ադոլֆ Բրոսսէի հետազոտութիւնների վրայ, իր կրահումներով ու ենթադրութիւններով որոշակի միտում է ցուցաբերում օտարելու հայ դպրութեան անկապտելի հարստութիւնը ներկայացնող այս յուշարձանները՝ այն դէպքում, երբ հէնց իր իսկ հաւաստումով, այդ աշխատութիւնների *նոյնիսկ մերձագոյն տարբերակներ չկան հին աշխարհի այլ ժողովուրդների մատենագրութիւններում*³: Այս հարցում ճիշդ դիրքորոշում ունեն Ֆր. Կոնիքերն⁴ ու ՀՄՍՀ ԳԱ Թղթակից-անդամ Վ. Չալոյեանը⁵, որոնք իրաւացիօրէն գտնում են, որ այդ

¹ Տե՛ս Ֆր. Կոնիքեր, Զննութիւնք գրոց Դաւիթ Անյաղթի կամ քարգմանութիւնք Արիստոտելի, Վիեննա, 1893:

² Տե՛ս Յ. Մանանդեան, Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ, Վաղարշապատ, 1904, Երկրի՝ «Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928:

³ Տե՛ս Յ. Մանանդեան, Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները, էջ 20:

⁴ Ֆր. Կոնիքեր, նշում աշխատ., էջ 35-36:

⁵ В. Чалоян, Анонимное толкование "Категорий" Аристотеля, Спб., 1961, էջ XII-XIII:

աշխատութիւնները *հայ մտքի արգասիք* են. բայց դեռ դժուար է պնդել, թէ յատկապէս ո՞ւմ գրչին են պատկանում: Միւս կողմից՝ այս երկու տեսական աշխատութիւնների միեւնոյն գրչին պատկանելը, նրանց լեզուա-ոճական առանձնայատկութիւնների ընդգծուած ընդհանրութեան պատճառով, ո՛չ մի տարակոյս չի յարուցել հայագիտութեան մէջ: Բայց այն հարցում՝ քարգմանական են եղել դրանք, թէ՞ ուղղակի հայերէն հեղինակային շարադրանք՝ տարամիտում կայ անշուշտ հայագետների միջեւ: Ոմանց կարծիքով՝ դրանք հեղինակուել են անմիջապէս հայերէն, ուրիշների պնդմամբ՝ Աթենքի գիտական միջավայրում մեծ հռչակ վայելած հայ իմաստասերի (շատ հաւանաբար՝ Պրոյերեսիոսի կամ մի ուրիշի) կողմից նախ գրուել են յունարէն, ապա քարգմանուել հայերէն: Սակայն պիտի ասել, որ նշում երկերի լեզուա-ոճական առանձնայատկութիւնների բնութիւնը երաշխաւորում է երկրորդ տեսակետի ճշդութիւնը:

Այսպէս, ուրեմն, Անանուն իմաստասեր հայ մեկնիչը, տեսականօրէն բննելով մի կողմից՝ Պլատոնի, միւս կողմից՝ անտիկ աշխարհի համապարփակ մտածող Արիստոտելի տեսակետները լեզուի բնորոշման վերաբերեալ, նորանոր փաստարկներով ու հիմնադրումներով պաշտպանում ու զարգացնում է արիստոտելեան մատերիալիստական հայեցակէտը: Պլատոնը լեզուն համարում է «բանականութեան օրգան», գործիք՝ ճիշդ այնպէս, ինչպէս, դիցուք՝ աչքը տեսողութեան օրգանն է. հետեւաբար եւ լեզուն դիտում է իբրեւ այնպիսի երեւոյթ, որն «ըստ բնութեան» է: Իսկ Արիստոտելը, հակադրուելով Պլատոնին, լեզուն սահմանում է որպէս նշանակողական միատորների պայմանական համադրութիւն, որը դրսեւորում է «ըստ դրութեան կամ շարադրութեան»: Արիստոտելի այս հայեցակէտի հայերէն ձեւակերպումն է՝ «*Եւ է՛ր բան ամենայն նշանական, ոչ իբրեւ գործի, այլ որպէս ասացեալ է՛ ըստ շարադրութեան*»¹:

Հայ տեսաբանը, հերքելով պլատոնական հայեցակէտը իբրեւ «սուտ», պաշտպանում է արիստոտելեան ըմբռնումը լեզուի ծագումնաբանական եւ ֆունկցիոնալ բնույթի մասին. «Առ Պլատոն (որպէս ինձ թոյլ),- գրում է նա,- ի տեղոջս կոխ (իմա՛ հակասութիւն է առկայ - Լ.Խ.), բանգի որպէս նա կամի, *բնութեամբ բան ի մեզ է, վասն զի գործի է բանական գործութեան, որպէս ակն՝ տեսութեան գործի, եւ այլ ինչ զգայարան իւրաքանչիւրոցն. բայց սո՛ւտ ասացեալք*»²:

Տեսակետների այս հակադրութիւնը, պէտք է ասել, ցայտուն արձագանքն է Հին Յունաստանում իմաստասերների միջեւ ծաւալուած այն սուր պայքարի, որ «ըստ բնութեան» եւ «ըստ դրութեան» տեսական բանավէճի անունն է կրել: Այդ առթիւ բուն եւ կրքոտ վեճեր էին ծաւալուել իմաստասերների միջեւ՝ այն մասին, թէ ինչպէ՞ս է յարաբերակցում անունը իր նշան իրին. արդեօք ըստ իրի՞ք բնութեան, թէ՞ ըստ պայմանականութեան՝ օրէնքի կամ սովորոյթի համաձայն («ըստ դրութեան»): Հայ դպրութիւնը լեզուի բնույթի որոշման բոլոր հարցերում կանգնած է եղել «ըստ դրութեան» տեսակետի վրայ, եւ ո՛չ՝ «ըստ բնութեան»:

Պլատոնի դրոյթի սխալն այն է, պատճառաբանում է իմաստասեր մեկնիչը, որ բնական ներգործութիւն ունեցող երեւոյթները նա հաւասարեցնում է ձեռքբերովի՝ ստացական կարողութիւն (իր բառով՝ «գործութիւն») հանդիսացող երեւոյթների հետ:

¹ «Այկզբն եւ նախադրութիւն գրոցն, որ ասի ըստ Յունացն Պերիարմենիաս եւ հայերէն Յաղագս Մեկնութեան, արտագրեալ ի մեծ իմաստոյն Արիստոտելէ, քարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթ», 1794, էջ 27:

² Երկ տեղում, էջ 28:

Մինչդեռ դրանք հիմնովին տարբեր բաներ են: Դիցուք՝ խօսելու կարողությունը մարդու մէջ իբրև բնական ներգործութիւն ի սկզբանէ անտի չի եղել, այլ՝ յետագայում է մարդն այն նուաճել: Այստեղից արուս է միանգամայն ճիշդ հետեւութիւն լեզուն տրուած չի եղել մարդուն իբրև բնական երեւոյթ:

Սա շատ արժէքատու է գիտական լուրջ ընդհանրացում է, որը ճշմարտապէս է լուծում լեզուի բնոյթը իբրև ձեռքբերովի՝ «ստացական կարողութիւն»: Ի հակադրութիւն լեզուի «քնատուր» լինելու բնագանգական տեսութեան, կամ պաշտօնական եկեղեցու այն վարկածի, ըստ որի լեզուն, իբր, «ստուածային պարգեւ» է՝ մարդուն շնորհուած ի սկզբանէ անտի...: Իմաստասէր մեկնիչը հիմնաւորում է առաջ քաշուած արիստոտելեան դրոյթը՝ քննադատելով Պլատոնին. «Քանզի (Պլատոն) առնու ներգործութեամբ եւ գորութեամբ իբրև զնոյն. քանզի բանական գորութիւն ի մեզ ոչ ներգործութեամբ ըն լինելութեան, այլ գորութեամբ, յաղագս այսորիկ՝ եւ ոչ բան՝ բնութեամբ ի մեզ վայրապար եւ այս...»:

Մարդկային կարողութիւնների զարգացման հարցում նա յանգել է կարելու ընդհանրացումների. մարդկային առանձին օրգաններ, բնութեամբ ստեղծուելով, երբեք չեն սահմանափակուել միայն բնական գործողութիւններ կատարելով. նրանց գործողութիւնները ի սկզբանէ անտի եւ մշտապէս նոյնը ու միատեսակ չեն եղել, այլ շարունակ ու անվերջ բազմապատկուել են, որով եւ ձեռք են բերուել նորանոր կարողութիւններ ու գործունէութեան ամենատարբեր բնագաւառներ: Այդ իսկ պատճառով մարդկային օրգանների գործողութիւնները բնութագրում են երկակի կերպով. ա) բնական գործողութիւններ, բ) ոչ-բնական՝ ձեռքբերովի ու ստացական գործողութիւններ, որոնք կոչուում են «ըստ պատահման». «... Եւ նոյն ինքն՝ յորոց սակս գործին բնութեամբ՝ ինքն եւ այս. քանզի ոչ որոյ գործին բնութեամբ՝ ահա եւ ինքն ըստ բնութեան. քանզի հնարատու է զայն գործի՝ ունենն ըստ բնութեան գոյ, եւ ունենն ըստ պատահման»¹:

Դիցուք՝ «ձեռքը» մարդու բնական օրգանն է, որն սկզբում բնական ֆունկցիա է կատարել (առնելու եւ տալու գործողութիւնները): Սակայն մարդը, երբ սկսեց մատներով *հաշուել* կամ *գրել*, ապա ձեռքի այս գործողութիւնները արդէն «ըստ բնութեան» գործողութիւններ չէին, այլ՝ «ըստ պատահման», որ եւ նոյնն է՝ *ըստ կարողութեան*...: Այդպէս եւ *օղջ*, որով շնչում են մարդիկ եւ առանց որի ապրել չեն կարող, իր այս կողմով «բնական» գործառոյթ ունի, իսկ երբ օղջ ծառայեցում է նաեւ խօսքի արտաբերմանը՝ ապա դա միայն յետագայում է իրականութեան փաստ դառնում, ուստի օղի այս գործառոյթը ոչ թէ «ըստ բնութեան» է, այլ՝ «ըստ պատահման». «... Որպէս ձեռք մարդոյ՝ ըստ բնութեան կազմեցան առ տուրեւառն,- գրում է Իմաստասէր մեկնիչը,- իսկ *քելն* եւ կամ *գրել*, ոչ ըստ բնութեան. իսկ օղն՝ անընդհատ գլեւնդանութիւն պահելով ի մեզ, առ ի գովացուցանել զընդարոյս ջերմութիւն, ըստ այսմիկ բնականը են. իսկ առ ի բանին առնել սպասարարութիւն յետոյ պատահեաց գոյ»²:

Կարողութիւնների զարգացման այս տեսութիւնը միաժամանակ հենց մարդու իսկ զարգացման եւ առաջընթացի տեսութիւնն է. նա բնութիւնից ժառանգած օրգաններին զարգացման աննախընթաց թափ է հաղորդել՝ կատարելագործելով դրանք ամենաբարդ եւ բազմաաղբուստ գործողութիւններ դրսեւորելու շնորհիւ,

¹ Նոյն տեղում:
² Նոյն տեղում:
³ Նոյն տեղում, էջ 28-29:

որոնցից կարելուրագոյնը խօսողութեան եւ ընդհանրապէս լեզուի ձեռքբերումն է անշուշտ:

Ըստ Գիտնիսիոս Թրակացու՝ խօսքը բաների յարադրութիւնն է, որով մտածութիւնը դրսեւորում է լիակատար կերպով. նրա տուած սահմանումը բառացի ճշգրտութեամբ ներկայացրել է հայ բարգմանիչը այսպէս. «Բան է հետեւակ բառի շարադրութիւն՝ գորամախտութիւն ինքնակատար յայտնելով»¹: Հետեւաբար, Թրակացու այս ըմբռնմամբ՝ *խօսքը կամ լեզուն ոչ թէ բաների սոսկական յարադրութիւնն է, այլ՝ այնպիսի յարադրութիւն, որով մտածութիւնն է դրսեւորում լիակատար՝ անարգել եւ ազատ կերպով*:

Դաւիթ Անյաղթը, որը գրել է քերականական առաջին Մեկնութիւնը հայ դպրութեան մէջ, Թրակացու այս սահմանման առնչութեամբ ճիշդ կերպով դիտում է, որ մտքի իրողութիւնները լեզուականօրէն դրսեւորելիս բաները ոչ թէ վայրիվերոյ եւ պատահական դասատրմամբ են յարադրում, այլ *որոշակի կարգաւորումով*. ըստ որում՝ բաների կապակցուած յարադրութեամբ դրսեւորուող մտածութիւնները, ի տարբերութիւն վանկի կամ նոյնիսկ առանձին վերցրած բառի տարածօրէն արտայայտած թերի ըմբռնումների, ամբողջական են եւ լիարժէք այն խոկումներին, որ մարդը վերապրել է. «Որով եւ ինքնակատար երեւի եւ զհանգամանս մտաց եւ զփոփոխմունս...,- գրում է Դաւիթը,- ըստ տրամախտութեան բաւականաբար յայտնիցի եւ ոչ ընդ տարակոտութեամբ գարէն վանցին եւ կամ նոյն ինքն բառիս ինքնըստինքեան յանգեալ...»²: Այս մեկնաբանումը ուշագրաւ է մի շարք առումներով. նախ՝ ենթատեքստից հետեւում է, որ Դաւիթ Անյաղթը ճիշդ է ըմբռնել լեզուի բնոյթը՝ նրա հաղորդակցական միջոց, ընդ որում ամենակատարեալ հաղորդակցական միջոց լինելու իրողութիւնը, որով մարդկային մտածողութիւնը ամենաանկաշկանդ ձեւով եւ երանգաւորումների բազմազանութեամբ է դրսեւորում. երկրորդ՝ նա յստակ ըմբռնել է *լեզուի եւ մտքի իրողութիւնների ոչ-նոյնական լինելու ճշմարտութիւնը*:

Անանուն քերական մեկնիչը առաւել մասնաւորում է խօսք-նախադասութեան սահմանումը՝ լեզուական կոնկրետ բնութեամբ պարզաբանելով նրա բնոյթը. «Իսկ բան շարադրութիւն է բառի, յորժամ շարադրէ որ գԴաւիթն զշարադրեացն եւ զպատերազմն եւ զմարացն եւ զհայոց, որ է բան: Արդ, Դաւիթն առանձինն բառ է, եւ պատերազմն առանձինն բառ է եւ այլն. իսկ *շարադրութիւն սոցա բան լսի, որ կատարէ զշարադրութիւն յինքնէն*»³:

Անանուն քերական մեկնիչը, Դաւիթի հետեւութեամբ, նոյնպէս գտնում է, որ խօսքը ոչ թէ յարադրուող բաների սոսկական գումար է, այլ՝ քերականական համաձայնեցումութեամբ կիրառուող բաների յարադրում. «Իսկ ասելն բան է հետեւակ բառի շարադրութիւն, այսինքն՝ եթէ բան հետեւանայ ընդ բառն ցան եւ ցիր եւ շարադրէ առ միմեանս գաւտարսն եւ լինի բան»⁴:

Մովսէս Քերթոզը խօսք-նախադասութեան սահմանումը, ի տարբերութիւն իր նախորդների, փիլիսոփայական ընդհանրացմամբ է մեկնաբանում: Նա գտնում է, որ խօսքը («բան») առաւել մեծ վերացարկում է լեզուական բոլոր կարգերի յարաբե-

¹ Ն. Ադոնց, նշում աշխատ., էջ 12:
² Նոյն տեղում, էջ 101-102:
³ Նոյն տեղում, էջ 138:
⁴ Նոյն տեղում:

րութեամբ. այդ պատճառով էլ այն դիտում է որպէս «սեռականագոյն սեռ», պարփակելով իր մէջ լեզուական միս բոլոր կարգերը: Ընդ որում, խօսք-նախադասութիւնը այնպիսի վերացարկում է, ասում է VI դարի այս հեղինակը, որ իր համար ընդգրկման օրինակ է դարձնում ինչպէս սկիզբ ունեցող եւ անսկիզբ երեւոյթները, այնպէս էլ առարկայական աշխարհն ու հոգեկան-իմացական բարդ ոլորտները: Իրօք, լեզուի ընդգրկման համապարփակութեան բնոյթը բացայայտելով, Մովսէս Բերթոլդը յանգել է այնպիսի խորը ընդհանրացման, որ տեսական լեզուաբանութեան առումով դժուար է գերազնահատել տուեալ ժամանակաշրջանի համար. «Բան սեռականագոյն սեռ կոչի,- գրում է նա,- գիտնորս յինքն պարտնակեալ, ենթակայէ, զի սկզբունս եւ զանսկզբունս, զգալիս եւ զիմանալիս...»¹:

Ինչպէս երեւում է, վերոյիշեալ հեղինակները միանգամայն ճիշդ են որոշում լեզուի բնոյթը՝ բացայայտելով նրա կարեւոր առանձնայատկութիւնները:

2. *Օրինակաւ առարկայի, հասկացութեան, անուան եւ գրութեան փոխարարեութիւնների ըմբռնումը.*- Անտարակոյս, տեսական առանձնակի հետաքրքրութիւն ունի օրինակաւ իրողութեան («իրի»), հասկացութեան («իմացման»), անուանման («ձայնի») եւ գրութեան փոխարարեութեան պրոբլեմի լուսաբանումը հայ դպրութեան ամենավաղ շրջանում: Այս առթիւ առաջին հարցադրումն է՝ սրանցից ո՞րը բնական արտացոլք է, հետեւաբար եւ՝ առաջնային, եւ ո՞րը յետագայում ձեւաւորուող, ուստի եւ՝ ամանցական:

Իմաստաւէր մեկնիչի մօտ իրի «նշանակիչ» համարում է հասկացութիւնը, հասկացութեան նշանակիչը՝ բառանուանումը, իսկ վերջինիս նշանակիչը՝ գիրը. ըստ որում՝ հասկացութիւնը, իր հերթին, դիտում է իբրեւ հոգեբանական երեւոյթ՝ վիճակ (իր բառով՝ «ախտ»): «... իբր իմացմունքն զորս ախտ անուանեաց՝ նշանակք են իրաց. իսկ ձայնքն՝ իմացմանն նշանակք, այլեւ գրեցեալքն՝ ձայնիցն նշանակք»²: Իսկ այն հարցադրման լուծումը, թէ սրանցից ո՞րն է բնական եւ առաջնային, եւ ո՞րը՝ յետագայում ձեւաւորուող, տրուում է հետեւեալ փաստարկումներով. իրաւացիօրէն երկէտային դրոյթ է համարում այն, որ բնութեամբ առաջացածը ընդհանրական է, ուստի եւ վերաբերում է յարանման բոլոր երեւոյթներին՝ առանց բացառութեան: Այսպէս, օրինակաւ իրողութիւնները եւ մտածողութեան մէջ նրանց արտացոլքը հանդիսացող հասկացութիւնները բոլոր ժողովուրդների եւ ազգերի մէջ ընդհանրական են եւ բացարձակապէս նոյնը: Այլ կերպ ասած՝ օրինակաւ իրականութեան ըմբռնումը ոչ թէ ազգային է, այլ՝ համամարդկային. «... Արդեօք ամենեքեան բնութեամբ այսոքիկ իցեն՝ եթէ ոչ ցուցանէ՝ զի իրքն, եւ իմացմունք, ոչ որք նանձինն, այլ որք նիւսն իմացմունք են՝ երկրորեանն սոքա բնութեամբ. Իսկ ձեռնարկութիւն աստուստ՝ ամենայն որ բնութեամբ է, առ ամենեսեան նոյն է. եւ որ առ ամենեսեան նոյն է, բնութեամբ է, որպէս իրքն եւ իմացմունք իրացն»³: Այս դրոյթի հիմնաւորման փաստարկումներից է նաեւ «նշանակների» մեկնութիւնը. վերը ցոյց տրուեց, որ իրերի նշանակիչները հասկացութիւններն են, վերջիններիս նշանակիչները՝ բառանուանումները եւն.: Տուեալ դէպքում՝ իրերի նշանակիչ հասկացութիւնները ընդհանրական բնոյթ ունեն բոլոր նրանց համար, ովքեր օժտուած են այդ ընդունակութեամբ՝ անկախ ցեղից, ազգից, լեզուների պատկանելութիւնից եւ այլն. միեւնոյն «իրը» (ամենալայն առումով՝ իբրեւ առարկայ) միեւնոյն

¹ Նոյն տեղում, էջ 169:

² Նոյն տեղում, էջ 6:

³ Նոյն տեղում:

հոգեկան անդրադարձումն է ունենում ճանաչողական իմաստով՝ բոլոր ժողովուրդների եւ ազգերի ներկայացուցիչների մէջ. *ամէն մարդ նոյն ընդհանուր եւ հիմնական իմաստն է ընկալում տուեալ օրինակից.*

Նոյնքան ճիշդ է նաեւ սրա հակադարձութիւնը. եթէ հոգեբանական անդրադարձումները, յանձինս հասկացութիւնների, նոյնն են բոլոր մարդկանց մէջ՝ մեզնից անկախ համապատասխան օրինակների ներգործման շնորհիւ, ապա նոյնը պէտք է լինեն հէնց այդ հիմքերը (բնագրային՝ «գաղափարք») իրենց ներգործման կամ արտացոլման բնոյթով. «Անդրէն հակադարձեալ զբանդ, եւ որ միանգամ զնոյն տիպս ունելով եւ իմացմունս, նոյնք են գաղափարք առ ամենեսեան, որ են իրք»⁴: Այս բոլորից հետեւում է, որ օրինակաւ առարկաները եւ նրանց հասկացութիւնները, բոլորի կողմից նոյն համարժեքութեամբ ընկալուելու պատճառով, ճանաչում են որպէս «ըստ բնութեան երեւոյթներ, այն է՝ ընդհանրական են եւ համամարդկային. «Ապա իմացմունքն, եւ իրքն՝ որ կարեն գոյ նոյն առ ամենեսեան բնութեամբ այսոքիկ ասասցին»⁵:

Հասկացութիւնների նշանակիչները բառանուանումներն են («ձայնք»), իսկ վերջիններիս նշանակիչները գրերն են (գրաւոր հաղորդակցման ժամանակ): Ինչպիսի՞ն է այս երկու տարբեր նշանակիչների բնոյթը եւ ինչո՞վ են սրանք հակադրում նախորդներին: Այս հարցադրումների լուծման համար ելակէտ է առաջադրում հետեւեալ հակադարձական դրոյթը. եթէ այս կամ այն երեւոյթը ընդհանրական դրսեւորում չունի բոլոր մարդկանց գիտակցութեան մէջ, ապա նա չի կարող «ըստ բնութեան» լինել, այլ, իբրեւ կանոն, պէտք է պայմանականութեամբ օժտուած լինի. «Իսկ որք ոչ առ ամենեսեան նոյն ինքն են, յայտ է եթէ ոչ բնութեամբ, այլ՝ ըստ շարադրութեան»: Այս դրոյթի հիմնաւորման համար բերում են ընդհանուր լեզուաբանութեանն առնչուող ապացոյցներ. ճիշդ կերպով դիտում է, որ բառանուանումները, ինչպէս եւ նրանց գրաւոր արտայայտութիւնները, *բոլոր լեզուներում նոյնական երբեք չեն կարող լինել, եւ չեն:* Հետեւաբար՝ բառանուանումներն ու նրանց գրաւոր պատկերացումները ոչ թէ ըստ բնութեան են, այլ՝ պայմանական, ուստի եւ *յետագայ վերագրումների արդիւնք.* «... Իսկ ձայնքն եւ գրեցեալքն՝ անկար է, անկար առ ամենեսին գոյ նոյնք, յաղագս այսոքիկ եղանիլ յետոյ»⁶: Այս պնդման հաւաստիութիւնը ամրապնդում է յունարէն եւ լատիներէն լեզուների համապատասխան իրողութիւնների մատնանշմամբ. «...քանզի ոչ նոյն գիր՝ առ հեղինացիս եւ հռովմայեցիս, եւ ոչ ձայնքն նոյնք, ապա եւ ոչ բնութեամբ ասասցի»⁷:

Բնականաբար, հասկացութեան եւ մտածութեան մէջ ու լեզուում նրա դրսեւորման գոյածեւի երկակի բնոյթի բնութիւնը նոյնպէս կարեւորագոյն հարցերից է ինչպէս տրամաբանական ուսմունքի, այնպէս էլ լեզուի տեսութեան համար: Դրա լուսաբանումը դարձեալ տուել են տրամաբան-իմաստասէրները. վերջիններս գտնում են, որ հասկացութիւնը իր գոյաւորմամբ երկակի է. ա) այլ գոյածեւ ունի մտածութեան մէջ եւ բ) բոլորովին տարբեր՝ լեզուում, արտաբերութեան ժամանակ. ըստ որում արտաբերմամբ իր գոյածեւը հասկացութիւնը իրացնում է նշանակիչ ձայնի միջոցով, այսինքն՝ հանդէս է գալիս իբրեւ բառածեւ, իսկ մտածութեան մէջ՝

¹ Նոյն տեղում, էջ 7:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 6:

մտածողութեան կողմից ճանաչուած իրերի ըմբռնման կամ պատկերի ձեւով: «Իբր զի բանին կրկին տեսակ է. է՛ որ ըն խորհրդում եւ է՛ որ ըն արտաբերութեան: Նարտաբերութեան է ձայնի նշանական, իսկ ըն խորհրդումն իմացումն եւ պատկեր իրացն գիտելի»¹:

Լեզուի տեսութեան համար կարեւոր հարցադրում է եւ այն, թէ ինչ յարաբերութիւններ են առկայ բառերի եւ նրանցում պարփակուած հասկացութիւնների միջեւ: Ըստ Իմաստասէր մեկնիչի, հասկացութիւններն ու նրանց ենչիւնային արտաբերումները (իմա՝ բառերը) միշտ չէ, որ համապատասխանում են միմեանց՝ տրամաբանական վերլուծութեան տեսակէտից. «... ոչ յամենայն ժամ ձայնքն եւ իմացմունք հետեւանան իրերաց»²: «Չայնի» եւ հասկացութեան յարաբերութիւնները, այս տեսութեան համաձայն, լինում են չորս կարգի:

Առաջին յարաբերութեամբ արտաբերուած բառը «պարզ» (ոչ կազմութեան առումով, այլ՝ իբրեւ առանձին բառական միատր՝ առանց բառերի զուգորդումների), իսկ նրանով արտայայտուած հասկացութիւնը բարդ է. «... Այլ երբեմն զի զձայնսն պատահէ գոյ պարզս, իսկ զիմացմունսն բաղադրեալս, որպէս ընթանամ եւ կամ վերծանեն»³: Այստեղ ընթանամ կամ վերծանեն բառերի «պարզ» լինելը ըմբռնում է այն իմաստով, որ դրանցից խրաքանչիւրը առանձնաբար է վերցուած եւ ոչ թէ փոխադարձ կապակցութեան կամ այլ բառերի յարադրութեան մէջ: Հետեւաբար «պարզ»ը, Իմաստասէր մեկնիչի հաւաստմամբ, հրմանիչ է բառաանուանման եզակիութեանը: Միւս կողմից՝ նշուած «պարզ» բառերից իւրաքանչիւրի պարփակուած հասկացութիւնները «բարդ» են. «իմացմունք»ի բաղադրեալ լինելը, տրամաբանական տեսութեան համաձայն, ընդգծում է նրանով, որ նշուած «ընթանամ» կամ «վերծանեն» բառերում արտայայտուած է ոչ միայն բառիմաստը (վազել, կարդալ), այլեւ գործողութիւն կատարողը՝ եւ ընթանամ, եւ վերծանեն. եզակի առաջին դէմքի դերանունը արտայայտուած է նշուած բայածերի մը դիմային ցուցիչում. «Քանզի է պարզ ձայն ընթանամ, իսկ իմացումն բաղադրեալ. քանզի պարտոց է յինքեան եւ զդերանունն իբր թէ ես: Քանզի ոչինչ զանազանէ ասել ընթանամ կամ ես ընթանան»⁴: Նոյնն է պարագան, դիցուք, «երաժիշտ» պարզ բառի եւ նրանում պարփակուած «բաղադրեալ» հասկացութիւնների միջեւ. իբրեւ իմաստաւորուած ենչիւնական շրթայ բառական մէկ միատր է՝ եզակի, ուստի եւ «պարզ», բայց բովանդակային կողմով «բաղադրեալ» է, որովհետեւ այդ բառով ընկալում է՝ մարդ + հմուտ երաժշտագիտութեան. հետեւաբար ոչ թէ մէկ, այլ երկու հասկացութիւնների գումարից է կազմուած «երաժիշտ» բառի բովանդակութիւնը. «Սոյնպէս եթ որ կարծիցէ զերաժիշտն մի ինչ նշանակել պարզելոյ ձայնին, այլ ոչ ճշմարտապէս մի ինչ նշանակէ: Քանզի եթ զինչ երաժիշտն խնդրեսցէ երկուս, այլ ոչ մի գտցէ. քանզի երաժիշտն մարդ՝ նուազաւոր ձայնից արուեստաւոր է: Ապա ուրեմն ի մարդոյն եւ ի յարուեստէն երաժիշտն բաղկացաւ, յայտ է, թէ երկուց, այլ ոչ մի ինչ երաժիշտն»⁵:

Երկրորդ յարաբերութիւնը բառի եւ նրանում պարփակուած հասկացութեան միջեւ, մեր դպրութեան ամենավաղ շրջանի ըմբռնմամբ՝ հետեւեալն է. երբ

արտաբերուած բառերը «բարդ» են, այլ կերպ ասած՝ երբ մի շարք բառերի զուգորդմամբ արտայայտուած է միայն մէկ ընդհանուր հասկացութիւն. իսկ այս հասկացութիւնը տրամաբանական յարաբերութիւնների առումով լինում է պարզ. այդպիսիք են մեծ մասամբ սահմանումները. «Եւ է՛ զի ձայնքն բաղադրեալս, իսկ իմացմունքն պարզս. որզան՝ իբր թէ որ ասացէ զմարդ՝ կենդանի, բանաւոր, մահկանացու»¹: Այստեղ «մարդ» բառի սահմանման համար կիրառուած են «կենդանի», «բանաւոր» եւ «մահկանացու»՝ միջնադարի մեր դպրութեան ըմբռնմամբ՝ մարդու էական յատկանիշներն արտայայտող երեք բառ, ուստի եւ այն, տրամաբանական ուսմունքի առումով՝ կոչուած է «բարդ» լեզուական արտայայտութիւն, իսկ դրանց բոլորի հաւասարաբժէք հասկացութիւնը կը լինի «մարդ» ըմբռնումը, ուստի եւ այն կոչուած է «պարզ» հասկացութիւն:

Երրորդ յարաբերութիւնը այնպիսին է, երբ թէ՛ հասկացութիւնը եւ թէ՛ ենչիւնականօրէն արտայայտուող բարդ բառը հաւասարապէս «պարզ» են. «Եւ է՛ զի ձայնքն պարզս եւ իմացմունքն. որպէս Սոկրատէս կամ Հոմերոս»²: Այստեղ համապատասխանութիւնը հասկացութեան եւ ենչիւնական բառի միջեւ, տրամաբանական ուսմունքի տեսակէտից, բացարձակ է:

Չորրորդ յարաբերութիւնն այն է, երբ թէ՛ հասկացութիւնը եւ թէ՛ նրա ենչիւնական արտայայտութիւնը «բարդ» են, այսինքն՝ երբ բառերի զուգորդումը միաժամանակ համարժէք է հասկացութիւնների զուգորդմանը. «Եւ զի ձայնքն բաղադրեալս եւ իմացմունք. որզան՝ Սոկրատէս իմաստասիրէ, Հոմերոս քերթողաբանէ»³:

Այս յարաբերութիւնների խորաքննիչ ըմբռնումից հետեւում է, որ մտածութիւնը եւ նրա լեզուական դրսեւորումը նոյնական չեն, որքան էլ վերջինս ծառայում է մտքերի ձեւաւորմանն ու դրսեւորմանը: Մտածութիւնը, որ շարժում է հասկացութիւնների միջոցով եւ օրիելկտի իրականութեան յարաբերութիւնների արտացոլմամբ, ունի իր ուրոյն առանձնայատկութիւններն ու օրինաչափութիւնները, որոնք լեզուի միջոցով արտայայտուելիս պահանջում են խօսքի տարրեր միատրներ ու ծառայային մեծութիւններ: Հետեւաբար, տրամաբանական ուսմունքի հետագօտման առարկան սահմանազատում եւ առանձնանում է իբրեւ լեզուի միջոցով արտայայտուող իմաստային բովանդակութիւն իր բոլոր յարաբերութիւններով: Սա չափազանց կարեւոր հարցադրման գիտական լուսաբանութիւն է լեզուի եւ մտածողութեան փոխյարաբերութեան պրոբլեմի վերաբերեալ, որի տեսական նախադրեալներին ու հետեւութիւններին հաղորդակից էին դառնում դեռեւս միջնադարի հայ ուսումնականները:

3. Լեզուի ու մտածողութեան եւ օրիելկտի իրողութիւնների փոխյարաբերութեան լուսաբանումը.- Մեր դպրութեան մէջ լեզուի հաղորդակցական բնոյթի վերաբերեալ բաւական ուշագրաւ պատկերացում է եղել. «... որպէս ունիմք զիմացմունսն՝ այսպիսի հարկաւոր է եւ զձայնս գոյ», - հաւաստում է Իմաստասէր մեկնիչը: Արտաբերուող խօսքը պարզապէս հաղորդում է («զուշակէ») այն, ինչ մտածութիւնն ինքն է՝ միաժամանակ ցոյց տալով, թէ ինչպիսի՛ բնոյթ ունի տուեալ պնդումը. ըստ որում միայն արտաբերուող խօսքի միջոցով են մտածութիւնները («խորհուրդը») յայտնի դառնում ստուգապէս՝ պարզելով մեզ համար, թէ դրանք

¹ «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի», Երեւան, 1961, էջ 4-6:
² Նոյն տեղում, էջ 6:
³ Նոյն տեղում:
⁴ Նոյն տեղում, էջ 18:
⁵ Նոյն տեղում, էջ 18-19:

¹ Նոյն տեղում, էջ 6:
² Նոյն տեղում:
³ Նոյն տեղում:

ճիշդ, թե սխալ պնդումներ են այս կամ այն օրինակի իրողության վերաբերեալ. «... Ապա յիրախ ուրեմն՝ նշանակ այսպիսի ձայնքս իմացմանն ասացան. քանզի գուշակէ արտաբերական բանս զայն, որ ըն խորհրդումն է, եւ յանդիմանէ՝ եթէ որպիսի ինչ ունի յինքեանս թուելոթիւնս. քանզի ի ձեռն այսպիսոյ բանի՝ խորհուրդն ճանաչին՝ եթէ ստոյգ, եւ եթէ սուտ՝ յաղագս ուրուք ունիցի կարծիս»¹:

Արտաբերուող խօսքը ուրիշ բան չէ, եթէ ոչ հէնց մտածութեան նշանակը, նրա արտայայտիչը. հետեւաբար՝ խօսքի բաղկացուցիչ մասերը միաժամանակ եւ մտածութեան բաղկացուցիչ մասերի արտայայտութիւնն են՝ ձեռք. «... որպէս նարաբերութեանս բան՝ նշանակ է բանին այնորիկ, սոյնպէս եւ մասնկունքն բանիս այսորիկ, մասնկանցն՝ որ ըն խորհրդումն են»²:

Լեզուն իր միաւորների՝ նախադասութիւնների միջոցով արձանագրում է օրինակի իրողութիւնները ակնթարթային կերպով միայն, - հաւաստում է մեր դպրութիւնը: Մինչդեռ օրինակի իրողութիւնները կամ երեւոյթները, յաւերժօրէն փոփոխման մէջ լինելով, կարող են համապատասխանել լեզուական հաղորդումներին իրենց միայն մէկ վիճակով, ընդսմին՝ հէնց այն վիճակով, որն արտացոլուել է տուեալ նախադասութեամբ: Ըստ այդ հարցադրման՝ գոյացութիւնները կամ իրողութիւններն այնպիսին են, որ յարափոփոխ վիճակներ են ընդունում ժամանակի եւ տարածութեան մէջ. սակայն այդ գոյացութիւնների կամ իրողութիւնների վրայ մտաւոր եւ լեզուական արտացոլումը նրանց այս կամ այն վիճակային արձանագրութիւններն են միայն: Դիցուք, ասում է՝ «նա նստում է», այն դէպքում երբ ենթական արդէն իր վիճակը փոխել եւ կանգնել է. «նա նստում է» հաղորդումը, հետեւաբար, ենթակայի փոփոխումով վիճակի յարաբերութեամբ ճիշդ լինել չի կարող, բայց նրա նախկին վիճակի նկատմամբ՝ միանգամայն ճիշդ է: Նոյնը եւ «կարծիք» կամ պնդումը մի իրողութեան մասին ասուած է լինում նրա որոշակի մի մտմանի յարաբերութեամբ, բայց նրա փոփոխումով վիճակի յարաբերութեամբ այն արդէն չի համապատասխանում իրականութեանը: Այս կապակցութեամբ Իմաստասէր մեկնիչի մօտ կարդում ենք. «Բայց եթէ որ վիճեցի՝ զբանն եւ զկարծիսն ասելով յայսպիսեացն զոյ, քանզի նոյն բան եւ՝ ճշմարիտ, եւ՝ սուտ թուի զոյ. հիզան՝ եթէ ճշմարիտ իսկ բանն նստելն ումեք, յարուցելոյ նորա, սոյն սա սուտ եղիցի: Նոյնպէս եւ կարծիքն, քանզի եթէ ճշմարտապէս կարծեսցէ նստելն զումեք, յարուցելոյ նորա ստաբար կարծիքն եղիցին յաղագս նորա»³:

Հարց է ծագում՝ գոյացութեան կամ օրինակի իրողութեան իրաւատկութիւնն է արդեօք ներհակ վիճակների յարափոփոխութիւն ընդունելը, թէ՞ մտածութեանը եւ լեզուին իւրայատուկ են մոլորութիւնը, անհամապատասխանութիւնը իրականութեան հետ: Այս հարցադրմանը տրուում է հետեւեալ պատասխանը. գոյացութիւնների կամ օրինակի իրողութիւնների իւրայատկութիւնն է յարափոփոխ եւ ներհակ վիճակներ ընդունելը, ինչպէս եղանակի իւրայատկութիւնն է՝ ջերմութիւնից ցրտի փոխաւելը, գոյնի իւրայատկութիւնը՝ սպիտակից սեւի փոխաւելը, հոգու իւրայատկութիւնն է՝ վատթարից առաքինի մարդու փոխաւելը եւ այլն: Իւրայատկութիւնների այս փոփոխումը բնորոշ է գոյացութիւններին եւ իրողութիւններին:

Սակայն խօսքը կամ կարծիքը այս կամ այն իրավիճակի յարաբերութեամբ, որի արտացոլումը կամ արձանագրումն են իրենք, մի անգամ հաղորդուելուց յետոյ՝ իրենց բնոյթով «անշարժ» եւ «անփոփոխ» են այլեւս, այլ կերպ ասած՝ անտարբեր են փոփոխումով իրողութիւնների նկատմամբ եւ չեն կարող առաջընթաց նշանակութիւն ունենալ փոփոխումով իրավիճակների նկատմամբ. նրանք անգօր են այդ բանում եւ իրենց բնութեանը խորք է այդպիսի առանձնայատկութիւնը. «Իսկ բանն եւ կարծիքն, ինքեանք անշարժք եւ անխաղացք, ամենայն իրաւք ամենեւին կան, մնան, իսկ իրին շարժելոյ ներհակսն յինքեանս լինին, քանզի բանն կայ, մնայ նոյն՝ նստելն ումեքն, իսկ իրին շարժեցելոյ, է զի ճշմարիտ, եւ է զի սուտ լինի: Սոյնպէս եւ մակակարծեացն: Ապա ուրեմն յեղանակաւ ուրոյն է գոյացութեանն՝ ըստ իւրոյ փոփոխմանն ընդունական ներհակացն զոյ...»⁴, ասում է Արիստոտէլը:

Այս բոլորից հետեւում է, որ ով պնդում է, թէ խօսքը եւ կարծիքը նոյնպէս օժտուած են միեւնոյն հաղորդմամբ միաժամանակ հակասական բնոյթի ասոյթներ հաւաստելու, սխալում է: Եւ եթէ խօսքի կամ կարծիքի մէջ ներհակական պնդումներ են արւում, ապա դա ոչ թէ խօսքի կամ կարծիքի իւրայատկութիւնից է բխում, այլ հէնց գոյացութիւնների կամ օրինակի իրողութիւնների փոփոխումով վիճակից, որի արտացոլումն են ներհակական այդ պնդումները. «... Բանն եւ կարծիքն ոչ վասն իրեանց ընդունական ներհակացն զոյ՝ ընդունակք ասին, որպէս թէ ընդունել ինչ, այլ վասն յայտն կիրքն եղանիլ»: Հետեւաբար իրողութեան առկայութիւնը կամ բացակայութիւնը հէնց պայմանաւորում է ասոյթի ճշդութիւնը կամ ստոյթիւնը, այլ կերպ ասած՝ նախադասութեան հաստատական կամ միտական բնոյթի կազմութիւնը. «Բանզի իրին զոյն կամ չզոյն՝ այսուիկ եւ բանն ճշմարիտ կամ սուտ ասի, - շարունակում է իր միտքը Արիստոտէլը, - այլ ոչ վասն իւր ընդունական զոյ ներհակացն»⁵: Իրականում հաղորդման ակտից յետոյ ոչինչ չի կարող ներագոյնել ոչ խօսքի եւ ոչ էլ կարծիքի վրայ. նրանց պայմանաւորութեանը առնչում է միայն ու միայն իրողութիւններին, որ իրենք արտացոլում են. «Բայց միանգամայն պարզաբար, ոչ յումեք՝ ոչ բանն շարժի, եւ ոչ կարծիքն»⁶: Արիստոտէլեան այս դրոյթները հիմնաւոր փաստարկներով բացատրում է Իմաստասէր մեկնիչը:

Նշումով դրոյթների քննարկումն ու մեկնաբանումը մեր դպրութեան մէջ անշուշտ տեսական բարձր մտածողութեան անհերքելի ապացոյցն են: Միանգամայն ճիշդ կերպով պնդում է արւում, որ լեզուն պարզապէս հաղորդակցական-նշանակիչ գործառոյթ (ֆունկցիա) է կատարում՝ արձանագրելով միայն համապատասխան իրողութիւնները. «Յուցանէ այսպէս, թէ ինքն գոյացութիւնն յեղումն կրելով ընդունական զոյ ներհակացն ասի, - փաստարկում է Իմաստասէր մեկնիչը: - Իսկ բանն եւ թուելոթիւնն ոչ ինքեանք յեղումն կրելով, այլ նշանակացելոյն ի նոցանէ փոփոխումն ընդունելով, երբեմն ճշմարիտ եւ երբեմն սուտ թուի զոյ»⁷:

Այսպիսով, Միջնադարի հայ ուսումնականները լեզուի գոյի եւ նրա բնոյթի մասին գիտական պատկերացում ունեին: Այդ պատկերացումը նրանք կազմում էին ոչ թէ սուկ իրենց հրամցումով ընդհանուր դրոյթների ձեւով, այլ դրանց հանգամանակից վերլուծութեամբ ու քննարկմամբ:

¹ «Սկիզբն եւ նախադրութիւն Գրոցն, որ ասէ ըստ Յունացն՝ Պերիարմենիաս եւ հայերէն Յաղագս մեկնութեան, արտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ, քարզմանեալ եւ մեկնեալ ի Դարէ, Կոստանդնուպոլիս, 1794, էջ 8:

² Նոյն տեղում, էջ 10:

³ «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի, էջ 66:

⁴ Նոյն տեղում:

⁵ Նոյն տեղում, էջ 67-68:

⁶ Նոյն տեղում, էջ 66:

⁷ Նոյն տեղում, էջ 70:

Իմաստասեր մեկնիչը, տեսական քննութեան առնելով Արիստոտելի դրոյթը, գիտականօրէն պատասխանում եւ մեկնաբանում է «ներհակութեան» հարցադրումը ընդհանրապէս եւ ապա ցոյց տալիս դրա անհամատեղելիութիւնը լեզուի գոյի հետ. «Յետ այտորիկ ցուցանէ, թէ *ամենեւին ոչ ընդունակք են ներհակացն ոչ բանն եւ ոչ կարծիքն*»¹, - եզրակացնում է նա: Ինչո՞ւ. որովհետեւ ներհակութիւններ կարող է ընդունել միայն այն երեւոյթը, որն առակ է այլափոխութեան՝ ըստ իր ներքին շարժման դէպի ինչ-որ մի այլ բանի վերածուելով, եւ երբեմն էլ ինքը փոխելով մի այլ բան իր բնոյթին համաձայն, որով, եւ ինքն էլ փոփոխութեան է ենթարկում, ինչպէս, օրինակ, եղանակը շոգից փոխում է ցրտի, գոյնը սպիտակից փոխում է սեւի եւ այլն, ինչպէս եւ հակառակն էլ է տեղի ունենում, ուստի եւ նման երեւոյթներին յատուկ է «ներհակութիւնը»²:

Սակայն, ի տարբերութիւն այս կարգի երեւոյթների, լեզուական հաղորդումները, արտաբերման ակտից յետոյ, «անյեղ» եւ «անփոփոխ» են: Դիցուք՝ ներհակ բնոյթի երկու առանձին նախադասութիւններ են հաղորդում՝ մէկը հաստատական, միւսը՝ ժխտական. *Սոկրատը նստում է, Սոկրատը չի նստում*: Այս փաստից, իհարկէ, չի կարելի հետեւեցնել, թէ լեզուին յատուկ է ներհակակումութիւնը. ընդհակառակն՝ լեզուին խորք է իրենով արտացոլում սուբիեկտի իրողութիւններից անկախ միաժամանակ ինքնին թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական կարգի նախադասութիւններ արտաբերելը: Վերը բերուած օրինակները (*Սոկրատը նստում է, Սոկրատը չի նստում*) միայն հաստատում են, որ դրանք ոչ թէ միեւնոյն նախադասութեան այլակներն են, այլ պարզապէս տարբեր նախադասութիւններ են՝ իրենց ուրոյն արժէքով եւ ուրոյն բնոյթով, որովհետեւ առաջին նախադասութիւնը հաստատական բնոյթի է, որը տրամաբանական տերմինով ասում է «ստորաստութիւն», իսկ երկրորդը՝ ժխտական, որ տրամաբանական տերմինով ասում է «բացասութիւն». իսկ քանակի տեսակէտից սրանք ոչ թէ եզակի դրսեւորումներ են, այլ երկու առանձին եւ անկախ միատրոներ. «Իսկ բանն եւ կարծիքն անյեղ եւ անփոփոխ գոյով իբր ասացին ընդունականք գոյ ներհակացն՝ Սոկրատէս նստի, եթէ ընկալցի յեղումն՝ ասացի Սոկրատէս ոչ նստի: *Իսկ եթէ այսպէս եւ ոչ մի եւ նոյն բան եղիցի, այլ բազումք, ոչ միայն թուով ոչ մի, այլ եւ տեսակաւ, քանզի ոմն ստորաստութիւն եւ ոմն բացասութիւն: Նոյն արիմակ եւ թուելութիւնքն: Եթէ յեղումն ընկալցին ոչ մի, այլ բազումք եղիցին, սպա ուրեմն ոչ է ոչ բանն եւ ոչ կարծիքն ներհակացն ընդունականք*»³:

Բնականաբար հարց է ծագում՝ որտեղի՞ց է այն պատրանքը, որ ստեղծում է լեզուի նկատմամբ՝ վերագրելով նրան «ներհակակումութեան իւրայատկութիւնը»: Դրա պատասխանը տրուում է շատ դիպուկ կերպով. *հենց իր արտայայտած բովանդակութիւնը առիթ է տալիս նման պատրանքի*: Իսկ իմաստային բովանդակութիւնը, որ իրողութիւնների արտացոլումն է, ինչպէս յայտնի է, տարբեր է նրա արտայայտչական ձեւից՝ լեզուից: Բանն այն է, որ խօսքը կամ նախադասութիւնը *ինքնին* չի կարող ոչ սուտ լինել, ոչ ճշմարիտ. նա պարզապէս անտարբեր է դրանց նկատմամբ: Իսկ ճշմարիտ կամ սուտ լինելը իւրայատուկ է միայն գոյացութեան եւ օբիեկտի իրողութիւնների առկայութեանը կամ բացակայութեանը. «Իսկ եթէ ուստի՞ արդեօք պատրանքս, ինքն ասէ, եթէ իրին շարժեցելոյ, որ է Սոկրատայ յեղումն կրեցելոյ, որ է երբեմն զնստելն եւ երբեմն զոչ նստելն, *այսուիկ բանն եւ*

¹ Նոյն տեղում:
² Տե՛ս նոյն տեղում:
³ Նոյն տեղում, էջ 71-72:

*կարծիքն ճշմարիտ եւ սուտ թուին գոյ, այլ ոչ եթէ ինքեանք ճշմարիտ կամ սուտ, ոչ միայն գոյացութեան յարմարի»*⁴:

Իմաստասեր մեկնիչը կշտամբում է նրանց, ովքեր ի վիճակի չեն քննական հայեացքով երեւոյթները գննելու եւ ճիշդ եզրակացութիւններ բխեցնելու, այդ պատճառով էլ չեն կարողանում պատրանքը իրականութիւնից զատորոշել. «Իսկ մակ այլոցն կարծելի է եւ յաւէտ առ այնոսիկ, որք ոչ կարեն ստուգապէս հայել իրս՝ ճշմարտութիւն ի սոսա (ի բանս եւ ի կարծիս - Լ.Խ.) *ոչ գտանի»*⁵:

Բայց այստեղ առաջադրում է մի փաստարկ եւս, որը որքան տրամաբանական ուսմունքի համար կարեւորութիւն ունի, նոյնքան եւ՝ գուցէ առաւել եւս՝ լեզուի տեսութեան համար: Միեւնոյն խօսքի «ներհակակում» բնոյթ չունենալը Իմաստասեր մեկնիչը լուծում է նաեւ այլ կերպ՝ պնդելով, որ արտաբերուած խօսքը թոչում է, չի մնում տեղում. այստեղից հետեւութիւն՝ իսկ այն, ինչ չի մնում, չի կարող փոփոխութիւններ կրել. «*Քանզի նստեցեայն բան ոչ եւս մնայ, իսկ ոչ մնացեայն յոչ ինչ ամենեւինք լուծանի»*⁶: Մա կարեւոր ընդհանրացնող դրոյթ է: Եթէ խօսքը թոչում է եւ ոչինչ շօշափելի չի մնում նրանից, ապա անհնարին է երեւակայել անգամ, որ ոչինչ շօշափելի չմնացող երեւոյթը կարող է ինքը ներհակակում փոփոխութիւնների ենթարկուել. բանն այն է, որ ներհակակում փոփոխութիւններ կրելու համար պէտք է երեւոյթը լինի «ենթակայ», այլ կերպ ասած՝ ստորոգութիւն կամ յատկանիշներ ընդունող լինի, որպէսզի նրանում երկփեղկում առաջանայ՝ ներհակակում բնոյթի փոփոխութիւններով. «Իսկ ոչն ինչ, որոյ եւ էութիւն ոչ է, իբրեւ արդեւք ընկալցի զներհական, եւ կամ նշանակեցէ զճշմարտութիւն կամ զստութիւն, քանզի հարկ է գոյ ենթակայ իմն, իսկ յենթակայում զներհական եղանի»⁷: Այս բոլորից հետեւում է, որ խօսքը «ներհակակումութեան» առանձնայատկութիւնից զուրկ է. «Արդ, իբրեւ բանն ոչ մնայ եւ ոչ ենթակայ եղիցի, *իսկ ենթակայի ոչ երոյ եւ ոչ ներհակացն եղիցի ընդունական, այնպէս եւ կարծիսն՝ խնդրեալ որ գտցէ, զի ոչ ներհակացն ընդունական»*⁸:

Տեսական մտածողութիւնը մեր դպրութեան դեռեւս ամենավաղ ժամանակաշրջանում՝ Ե.-Չ. դդ. գտնուել է պատշաճ բարձրութեան վրայ, կարողացել է ոչ միայն անտիկ մտածողների դրոյթներն ու հարցադրումները իւրացնել, այլեւ քննական հայեացքով մեկնաբանել դրանք՝ ձգտելով տեսական ընդհանրացումների: Այս իրողութիւնը պէտք է բացատրել նրանով, որ գիտական մտածողութիւնը Հայաստանում ամենեւին էլ չսկզբնաւորուեց հէնց մաշտոցեան գրերի գիտով: Նախքան այդ՝ հարիւրամեակների զարգացում է ունեցել այն. հայ գիտնականները Արեւքում եւ Աղէքսանդրիայում ձեռք բերելով տեսական պատրաստութիւն, հանրաճանաչ ուսումնականների համբաւ էին վայելում հէնց այդ երկրներում: Ահա թէ ինչո՞ւ հայեցի դպրութիւնը այդքան արտակարգ փայլատակումով ճառագեց մեսրոպատառ մատենագրութեան բուն սկզբնաւորման շրջանում անգամ:

«Բանքեր Երեւանի Համալսարանի»,
 1971, Թ. 1:

⁴ Նոյն տեղում, էջ 72:
⁵ Նոյն տեղում:
⁶ Նոյն տեղում:
⁷ Նոյն տեղում:
⁸ Նոյն տեղում:

**ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՐԻ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒ-
ԹԵԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅՈՒ**

Լրացաւ Միջնադարի հայ մատենագրութեան առաւել ականաւոր ներկայացուցիչներից մէկի՝ Վարդան Արեւելցու մահուան 700ամեակը. նշանաւոր պատմիչ, մատենագիր, աստուածաբան լինելով հանդերձ՝ նա եղել է նաեւ դպրութեան տեսարան եւ քերական մեկնիչ:

Ծնունդ է ԺԳ. դարի առաջին տասնամեակում. Չեռագրական աղբիւրներում յիշատակում է նաեւ իբրեւ Աղուանից Վարդան¹, Վարդան Գանձակեցի, Մեծ Վարդան եւ Վարդան պատմիչ անուններով: Պէտք է ենթադրել, որ Վարդան Աղուանից եւ Վարդան Գանձակեցի անուանումները յուշում են նրա ծննդավայրը. նա բնիկ Գանձակից կամ, որ եւ նոյնն է առաւել լայն տարածքի ընդգրկմամբ՝ Աղուանական աշխարհից պէտք է լինի, մանաւանդ, որ «Արեւելցի» անուանակրումը եւս նոյնն է հաւաստում: Հայագիտական գրականութեան մէջ, սկսած Մ. Չամչեանից², յաճախ է շփոթուել Վարդան Արեւելցին Վարդան Բարձրբերդցու հետ, որոնք, սակայն, պատմական երկու տարբեր անձնատուրքիւններ են: Մատենագրութիւնից յայտնի է, որ Վարդան Բարձրբերդցին հանդէս է եկել աւելի ուշ եւ ապրել է աւելի երկար, քան Վարդան Արեւելցին: Բարձրբերդցին աշակերտել է Կիլիկիայում Յովհաննէս Արքատեօօրը, մինչդեռ Վարդան Արեւելցին գործել է, հիմնականում, Արեւելեան Հայաստանում եւ իր ուսումնառութիւնը անց է կացրել «առ ոտս» ուսուցչապետ Վանականի³: Այն ժամանակամիջոցում, երբ Վանականի դպրոցը գերեզմարտում է մոնղոլների կողմից, Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցու եւ միւս ուսումնակիցների հետ միասին, ճաշակում է ասպատակողների պատճառած անլուր դառնութիւնները:

Բարձրագոյն կրթութեան աստիճան («Վարդապետական») ստանալուց յետոյ Վարդան Արեւելցին ծաւալում է ուսումնագիտական բեղմնաւոր գործունէութիւն եւ կարճ ժամանակում լայն ճանաչում է գտնում: 1241 թ. ուխտագնացութեան է ուղևորում դէպի Երուսաղէմ եւ վերադարձին անցնում է Կիլիկիա, որտեղ շեղմ ըն-

¹ Տե՛ս Յ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մոսկիայեանց ի Վիեննա, 1895, էջ 769, Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 1784, ք. 266ա, ձեռ. 2189, ք. 292բ եւ այլուր:

² Տե՛ս Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1781, էջ 237, «Մեծին Վարդանայ Բարձրբերդցայ Պատմութիւն Տիեզերական, ի յոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861», Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 638 եւ ուրիշներ:

³ Վարդան Բարձրբերդցին ձեռագրական աղբիւրներում յիշում է մինչեւ 1286 թուականը՝ այն դէպքում, երբ 1271 թուականին Վարդան Արեւելցին արդէն վախճանուել էր:

դունելութիւն է գտնում Հեթում Ա. քազաւորի եւ կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու կողմից¹: Այստեղ նա մնում է շուրջ հինգ տարի (1242-1246 թթ.) եւ ծաւալում մանկավարժական բուռն գործունէութիւն. Վարդան Արեւելցուն են աշակերտում մինչեւ անգամ Հեթում Ա. քազաւորը եւ նրա կին Ջապէլ քազուհին: Վերջիններիս ուսումնառութեան համար Արեւելցին հանրամատչելի ու պարզունակ լեզուով գրում է «Ժղլանք» ուսումնագիտական ձեռնարկը, որը հասարակագիտական եւ բնագիտական բազմաթիւ հարցերի մեկնաբանմանը նուիրուած «հանրագիտարանային» բնոյթի արժէքաւոր աշխատութիւն է:

Կիլիկիայում առաջին անգամ գտնուած ժամանակամիջոցում, դարձեալ Հեթում Ա քազաւորի խնդրանքով, Վարդան Արեւելցին գրում է «Մեկնութիւն քերականի»² երկը, որի վերնագրում յիշատակում է նաեւ պատուիրատուն՝ «... ի խնդրոյ քազաւորին հայոց Հեթմոյ», որն իրագործում է, ամենայն հաւանականութեամբ, 1244-1246 թուականներին:

Արեւելցին Կիլիկիայում է քարգմանում Միխայիլ Ասորու Ընդհանուր պատմութիւնը՝ ասորի Իշոյի ուսումնականի օժանդակութեամբ:

Վարդան Արեւելցին վճռական մասնակցութիւն է ունեցել բոլոր այն գործառնութիւններում, որ Կիլիկիայի կաթողիկոսութիւնը ունեցել է, մի կողմից՝ Հռոմի պապի, միւս կողմից՝ Արեւելեան Հայաստանի քեմերի ու «երկրների» հետ: Նա մինչեւ անգամ կաթողիկոսի անուամբ Հռոմի պապին յղուած պաշտօնական փաստաթղթերի հարցադրումներն ու ձեւակերպումներն է պատրաստել, որոնցում շօշափուած են դաւանաբանական-քաղաքական կնճռոտ հարցեր: Վարդան Արեւելցին նոյնիսկ մոնղոլ տիրակալների հետ վարուող բանակցութիւններին է մասնակցել եւ իր հեղինակութեամբ նպաստել քաղաքական-տնտեսական որոշ հարցերի կարգաւորմանը:

Նրա գրչին է պատկանում «Պատմութիւն Տիեզերական» երկը, որը կարեւորագոյն սկզբնաղբիւր է մոնղոլների ու նրանց ռազմա-տնտեսական քաղաքականութեան վերաբերեալ՝ Կովկասն ու Հայաստանը մոնղոլական տիրապետութեան տակ գտնուած ժամանակաշրջանում:

Վարդան Արեւելցուն է վերագրում նաեւ «Աշխարհացոյց»ը իր Ընդարձակ եւ Համառօտ խմբագրութիւններով³, որոնք տեղագրական շատ արժէքաւոր աղբիւր են պատմական Հայաստանի քաղաքների, գիւղերի եւ մշակութային հոգեւոր կենտրոնների վերաբերեալ:

Վախճանում է 1271 թուականին եւ քաղում Խորվիրապում:

Վարդան Արեւելցու հայեացքները լեզուի ծագման ու զարգացման, դպրութեան տեսութեան եւ մատենագրութեան սոցիալական դերի ու նշանակութեան վերաբերեալ՝ իրենց արտացոլումն են գտել մասամբ նրա «Պատմութիւն Տիեզերական» երկում, իսկ համեմատաբար աւելի ընդարձակ արծարծուել են ինչպէս

¹ Տե՛ս «Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց», աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 294:

² Իբրեւ քննական բնագիր, 17 ձեռագրերի համեմատութեամբ, առաջին անգամ այն լոյս տեսաւ մեր աշխատասիրութեամբ. տե՛ս «Վարդան Արեւելցի. Մեկնութիւն քերականի», Երեւան, 1972:

³ Տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպլեանի», Փարիզ, 1960:

«Նորին Վարդանայ վարդապետի ասացեալ բան գովեստի պատմագրաբար վասն սրբոյն Մահակայ եւ Մարտպայ եւ այլոց թարգմանչաց»¹ ներքողականում, այնպէս եւ «Մեկնութիւն սուրբ գրոց» աշխատութիւնում, որը բանասիրութեան մէջ յայտնի է նաեւ «Ժղանք» կամ «Վարդանագիրք» անուններով: Սոյն յօդուածում քննութեան ենթ առնելու երեք հիմնական հարցեր Արեւելցու մշակած դրոյթներում:

1. Լեզուների առաջացման եւ բնապատմական զարգացման ըմբռնումը.
2. Գրի եւ դպրութեան առաջացման տեսութիւնը, եւ
3. Մատենագրութեան սոցիալական եւ մշակութային դերն ու նշանակութիւնը:

Վարդան Արեւելցին այլեայլ առիթներով անդրադառնում է աշխարհի տարբեր լեզուների առաջացման տեսական կարեւոր խնդրին: Նա լեզուների առաջացման հարցը քննելիս ընդհանրապէս ելնում է դարաշրջանի տիրող աշխարհայեացքից, Միջնադարում ձեռք բերուած լեզուաբանական աղքատիկ սեղեկութիւններից ու պատկերացումներից, որոնք, մեծ մասամբ, հեռու են գիտական ապացուցումներ լինելուց:

Արեւելցին գտնում է, որ միասնական ընդհանուր լեզուի կորստեանը յաջորդել է անլեզուայնութեան (լեզուի բացակայութեան կամ անխօսութեան՝ «անբանութեան») մի ժամանակաշրջան, որի ընթացքում մարդկային միասնական ցեղը աստիճանաբար սկսում է բաժանուել առանձին հասարակական խմբատրումների՝ «ազգերի»², որոնցից իւրաքանչիւրն իր համար ստեղծել է սեփական լեզու: Նա իր «Ժղանք» գիտա-ուսումնական երկում՝ «Լեզուքն որպէ՞ս բաժանեցան աշտարակաշինութեամբն» իր հարցադրմանը այդպէս էլ պատասխանում է. «Յառաջ կորեալ եւ ի վայր անկալ լեզուն գոր ունէին, եւ ամէնն որպէս անբան եղեալ առանձնացան իրեանց ազգան, եւ ապա սկսան խօսել ամէն ազգ առանձինն»³: Ընդամին՝ կարեւոր է դիտել, որ իւրաքանչիւր ժողովրդի յատուկ լեզուն Արեւելցին բնութագրում է եւ իր կառուցուածքով, եւ իրողութիւնների համակարգով ոչ թէ որպէս «դիպուածային» կամ «խառնակ» ու «շփոթ» անկայուն վիճակ, այլ իբրեւ կանոնաւոր եւ օրինաչափ կայունութեամբ զործող իրողութիւն: Արեւելցին յայտնում է այն միտքը, որ տարածքային սահմաններով միմեանցից պատմականօրէն անջատուած ժողովուրդների լեզուների համակարգային հակադրութիւններ լինելը պիտի գնահատել որպէս «սքանչելիք». «...եւ այն են սքանչելիք,- գրում է նա,- *գի ոչ խառնակ եւ շփոթ ըստ դիպուածոյ խասէին, այլ իրեանք շինաւորն եւ իրեանց ճորտերն եւ այն ազգ(ք)ն, որք յաշխարհն իրեանց էին, ամէնն առանձին յատուկ առին խաւսս, եւ միմեանց չկարէին լսել ազգերն*»⁴:

Ստեփանոս Սիւնեցու ըմբռնմամբ՝ մարդկութեան միասնական ընդհանուր լեզուն «աշտարակաշինութիւնից» յետոյ ճիւղատրուել է տարբեր լեզուների, որոնք, հակառակ Վարդան Արեւելցու պնդման, մայր լեզուի յարաբերութեամբ «խաբարուած» ու «աղճատուած» վիճակ են ներկայացնում՝ առաջացած նոր լեզուների

«անհնուտ» կիրառման հետեւանքով. «Վասն զի յանհնտութենէ խաւսից թիւրեալ են անուանք եւ բայք ամենից ազգաց, բայ ի սակաւուց...»¹:

Լեզուների առաջացման վարդանեան ըմբռնումը, սակայն, արժէքատր է մի այլ կողմով եւս. Արեւելցին, ինչպէս ճիշդ նկատել է պրոֆ. Գ. Ջահուկեանը², իր մի այլ աշխատութեան մէջ լեզուների առաջացումը աշտարակաշինութիւնից յետոյ ընկած ժամանակաշրջանում ոչ թէ «աստուածային աղէտ» եւ դժբախտութիւն է համարում՝ ի տրիտուր մարդկութեան թոյլ տուած զանցանքների ու «մեղքերի», այլ՝ իբրեւ «շատ ինչ բարի», «գեղեցկութիւն» եւ «գունագեղութիւն»: Հետեւաբար՝ Արեւելցին, լեզուների բազմազանութեան իր անվերապահ հիացքով, փաստօրէն է *բնապատմականութեան ջատագով հանդիսացող գիտնականի տղջախոտութիւնն է հաւաստում*: Նա «Պատմութիւն Տիեզերական» աշխատութեան մէջ «Ի տանն Ներքովբայ» գրոյցներից առաջ է բերում հետաքրքրական մի պատում, որն աղերսում է լեզուների առաջացման խնդրին: Ըստ այդ պատումի, բարեբնեան աշտարակաշինութեան ժամանակ որպէս թէ մի հրեշտակ ներկայանում է իշխան Ներքովբին, որը որսորդութեամբ ուտելիք հայթայթելիս է եղել շինարարներին, եւ Աստծու անունից յորդորում նրան, որ մարդիկ հրաժարուեն աշտարակաշինութիւնից, որովհետեւ, մէկ է՝ անկարող են Աստծուն հասնել այդ միջոցով...: Բայց Ներքովբը եւ շինարարները հաւատ չեն ընծայում հրեշտակին: Այդ ժամանակ հրեշտակը իր նմանակիցներին ասում է. «Եկայք՝ մեք իջցուք եւ բաժանեսցուք զլեզուս նոցա»: Եւ ահա, խառնակութեան ժամանակ, աշտարակաշինարարները զարհուրած սկսում են փախչել եւ ապաստան փնտրել: Ի տես դրան՝ Աստուած աշտարակի հանդիպակաց դրախտի բուրմունքով արբեցնում է մարդկանց..., որոնք եւ մոռանում են իրենց սկզբնական լեզուն. «Եւ այսպէս մխիթարեալք զմայմամբ յանճառելի բուրմանէ հոտոյն՝ *մոռացան զառաջին լեզուն*»³:

Յատկանշական է, որ մարդկութեան առաջին լեզուն Արեւելցին բնութագրում է որպէս «չյղկուած եւ անզարգացած, կոպտածեւ», որին յաջորդած ժամանակաշրջանում, սակայն, առաջանում են նորաստեղծ ժողովուրդների իմաստութեամբ ծանրախոս եւ գեղեցկութեամբ օժտուած լեզուները: Իսկ այս նշանակում է, որ նա լեզուների զարգացման եւ կատարելագործման՝ գեղեցկացման *բնապատմական տեսութեան անվերապահ ջատագով է*. «... Եւ շատ ինչ բարի եղել,- գրում է Արեւելցին,- մի՞ զի ծանեան մարդիկ զիւրեանց տկարութիւն, եւ դարձեալ՝ *գի պատճառք իմաստից եւ գեղեցկութեան ի խոշոր լեզունէ առաջնոյ եւ ի կոպտածեւ՝ փափկագոյն հելլենացոց եւ սաստկագոյն հոռովմայեցոց, հոնն՝ սպառնական, ասորին՝ աղաչական, պարսիկն՝ պերճական, եւ ալանն՝ գեղեցկածեւ, զուրն՝ ծաղրական, եզիպտացին՝ խարափածայն, եւ հնդիկն՝ ճճուող, եւ հայն՝ եւս ամենագարդ եւ համեղական*»⁴: Կարեւոր է դիտել, որ այս տողերում Արեւելցին ոչ միայն

¹ Ն. Աղոնց, Արուեստ Դիոնիսեայ եւ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին, Պետրոզքաղ, 1915, էջ 87:

Իդէալ, հակազիտական այս տեսակէտը իր այլ փոփոխակներով յարատեւեց հայ լեզուաբանական եւ քերականական երկերում ընդհուպ մինչեւ XX դ. վերջերը. «ուկեարեան», «արծաթ դարեան», «երկաթ դարեան», նոյնիսկ «ցեխադարեան» հայերէնի պարբերաբաժանումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ստեփանոս Սիւնեցու հայեացքի առաւել ցայտուն արձագանքը:

² Տե՛ս Գ. Ջահուկեան, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1954, էջ 250:

³ Տե՛ս «Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ, Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Սլրտիչ Էմին», 1861, էջ 18:

⁴ Նոյն տեղում, էջ 18-19: Ի դէպ, քաղաքակիրթ հին աշխարհի լեզուների բնութագրմանը վերաբերող այս հատուածը վերը մեր բերած յարակից հարցադրումներով մասամբ ամկայ է նաեւ Արեւելցու

¹ Այս երկի հեղինակային պատկանելիւնը միայն վերջերս բանասիրական քննութեամբ ապացուցեց Փ. Անբաբեանը՝ Մատենադարանի 8775 գրչագրի միջոցով, որտեղ անփոփոխած է սոյն ներքոյը վերը նշուած խորագրով: Այստեղ աներկնտօրէն ակնարկում է նաեւ հեղինակի անունը:

² Ի դէպ, Վարդան Արեւելցու (ինչպէս եւ ընդհանրապէս Միջնադարի մեր մատենագիրների) մօտ «ազգ» բառ-հասկացութիւնը ըմբռնուել է «ժողովուրդ, ցեղ, էրնոս» առումներով:

³ Մատենադարան, ձեռ. 2544, ք. 167ա (այս եւ յետագայ շեղագրումները իմն են - Լ.Խ.):

⁴ Նոյն տեղում, ք. 167ա:

լեզուների բնապատմական զարգացման տեսակետն է պաշտպանում, որով մի գլխով բարձր է կանգնում Միջնադարի մեր բոլոր քերական մեկնիչներից, այլև միաժամանակ տարբեր ժողովուրդների լեզուներն է բնութագրում դիպուկ մակդիրներով:

Վարդան Արեւելցին պնդում է, որ եթէ գոյների խայտաբղետութիւնը գեղեցկութիւն է ծնում, ապա լեզուների բազմազանութիւնը նոյնպէս գեղեցկութիւն է ինքնին. «Եւ որպէս ազգի ազգի գոյնը գեղեցկութիւն առնեն եւ զանազանութիւնը հասարակաց, այսպէս եւ լեզուաց զանազանութիւնը»¹:

Վարդան Արեւելցին զանազան առիթներով խօսում է նաեւ գրի ու դպրութեան առաջացման պատմութեան մասին ընդհանրապէս, իսկ հայկական գրի ու դպրութեան վերաբերեալ՝ մասնատրապէս: Բայց մենք այստեղ կը սահմանափակուենք գրի ու դպրութեան առաջացման ընդհանուր հարցադրման բնութեամբ միայն:

Ընդհանրապէս գրի ու դպրութեան ծագումը մեկնաբանելիս Արեւելցին իր ելակետային դրոյթներում մնում է, հիմնականում, Միջնադարում ընդունուած տեսակետների ու պնդումների շրջագծում, որոնք, բնականաբար, բխում են աստուածաշնչային ընդհանուր նախադրեալներից ու ձեւակերպումներից: Բայց այստեղ եւս նա զարգացնում է նոր հայեացքներ ու հետեւութիւններ:

Գրի եւ դպրութեան պատմական անհրաժեշտութիւնը Արեւելցին բացատրում է մարդկային հասարակութեան առաջընթացի համար նախադրեալ հանդիսացող դարաւոր փորձի արձանագրման հրատապ անհրաժեշտութեամբ. «Նախ ... արար գիրս վասն այնր պատճառի, - գրում է նա, - գի մի՛ մոռացիցն աստուածային շնորհքն եւ իմաստքն, զոր ետ առաջին մարդոյն, որով կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս եւ եղ անունս ամենայն կենդանեաց: Եւ գի առաջինքն երկարակեցութեամբ ռուսցանէին զմիմեանս, իսկ կարճակեաց լինելն մարդկան ոչ կարէին վարժել եւ կրթել, վասն որոյ հնարեցան գրով թողուլ յիշատակ անցելոյ իրաց եւ զուսմունս բանից...»²:

Արեւելցին, ելնելով աստուածաշնչային աւանդոյթից, պնդում է նաեւ, որ դեռեւս «առաջին լեզուի» համար ստեղծուել է գիր, ըստ որում դրա հեղինակը որպէս թէ եղել է Ադամի որդի Սէթ նահապետի անդրանիկ գաւակը՝ Ենովսը, որի ստեղծած նշանագրերը յետայում փոխ են առել քաղղէացիները. «Գիր կար քաղղէացի՝ ի նշանագրացն Ենովսայ շինած առաջին լեզուան»³, - գրում է նա: Օգտուելով մատենագրական այն աղբիւրներից, որոնք վերաբարտադրում են մեր թուագրութեան առաջին դարի հրեայ նշանատր պատմիչ Յովսէպոսի աշխատութիւններում Ենովսի մասին արուած տեղեկութիւնները, Արեւելցին գրի եւ դպրութեան առաջացման տեսութիւնը լրացնում է դրանցով. ըստ որում՝ որպէս թէ Ենովսը (որի մասին, ի դէպ, Յովսէպոսը յայտնում է, որ միւս եղբայրների հետ միասին նա եւս եղել է

հեղինակութեամբ մեզ հասած «Հաւաքումն մեկնութեան սրբոց արանց Եղիշէի, Յովհաննոս» աշխատութեան մէջ: Տե՛ս Մատենադարան, ձեռ. 1267, 47բ-48ա:

¹ Պատմութիւն Տիեզերական, էջ 19:
² Նոյն տեղում, էջ 395: Ի դէպ, գրի եւ դպրութեան՝ հասարակական անհրաժեշտութեան արդիւնք լինելու առաջարկող դրոյթի արժարժուանը Արեւելցու կողմից, ինչ խօսք, խիստ արժեքատր է, քան նոյն ներքոգում համարեա համանման հարցի շուրջ նրա տուած գուտ աստուածաբանական՝ միտիկ բացատրութիւնը (տե՛ս էջ 395-396):
³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2544, ք. 167բ:

«նշանատր աստղաբաշխ»¹), կանխագուշակելով աշխարհի կործանումը տարերային երկակի ուժերի՝ ջրհեղեղի եւ հրի միջոցով, կանգնեցնում է երկու սիւն՝ մէկը պղնձից, միւսը կաւից, եւ դրանց վրայ փորագրում աշխարհի բոլոր արարածների եւ երեսոյթների անունները, որ ... տուել է Ադամը:

Բնականաբար, հարց է ծագում. ինչո՞ւ Ենովսը ընտրել է յատկապէս պղինձ եւ կաւ սիւները: Եւ ահա այս աւանդոյթի իմաստը բացայայտում է նրան տրուած պատասխանում, որ վերաբերում է գրի միջոցով յատերժութեան ձգտելու մարդու մտահոգութեանը. անկախ նրանից, որ աշխարհը կը կործանուի հրի², թէ՞ ջրի միջոցով՝ գրաւման շնորհիւ անցեալի եղելութիւնները պէտք է լուր վկաները լինեն մարդկութեան արարած նախընթաց դարաշրջանների, որոնք, իրենց հերթին, նրա կենսափորձի ու աշխարհաճանաչութեան վիթխարի ընդարձակման համար հիմք եւ նախադրեալ պէտք է հանդիսանան: Իր այս հետեւութիւնը նա հիմնադրում է այսպէս. աշխարհը հրով կործանուելու դէպքում եթէ պղինձը հարում է, ապա կարը հրակայուն լինելով դիմակայում է, հետեւաբար եւ փրկում է երեսոյթների անուանակոչումը. իսկ ջրհեղեղով կործանուելու դէպքում եթէ կարը քայքայում է, ապա պղինձը անեղծ է մնում եւ պահպանում յատերժապէս արարածների անուանակոչումը որպէս մեծագոյն առհաստէայ մարդկային առաջին լեզուի երբեմնի գոյութեան...: Ահա այս նկատառումներից ելնելով էլ, ասում է Արեւելցին, Ենովսը կանգնեցնում է պղնձ եւ կաւ երկու սիւներ. «Ասէ, թէ ջրով անցնի (աշխարհս - Լ.Խ.), մնայ պղինձս, եւ թէ հրով՝ հալի պղինձս եւ մնա(յ) թրծեալ կաս...»²:

Ենովսեան այս նշանագրերը, սակայն, առեղծուածային են դառնում յետագայում՝ այսպէս կոչուած «լեզուների խառնակման հետեւանքով, որով մոռացութեան է դատապարտում «առաջին լեզուն». միակ բացառութիւնը կազմել է Սէմի գերդաստանից Եբեր իշխանը, որը պահպանել է «առաջին լեզուն»՝ այն էլ դիպուածի բերումով: Ըստ այսմ՝ բարեխոնեան աշտարակի ինչպէս շինութեան, այնպէս եւ կործանման ժամանակ նա բացակայելիս է եղել: Եւ ահա, երբ «լեզուների խառնակման» պատճառով մարդիկ չեն կարողանում կարդալ եւ հասկանալ «առաջին լեզուով» եղած գրութիւնները, դիմում են Եբերին, որը եւ յաջողութեամբ ընթերցում ու բացատրում է դրանց իմաստը: Հէնց այս անձնատրութեան անուամբ էլ հրեաները *եբրայեցիք* են կոչուած: Բայց երբ Եբերն էլ վախճանում է, նրա հետ էլ անյայտութեան մշուշում սուզում է առաջին լեզուի իմացութիւնը, ռուտի եւ հրեաները այնուհետեւ պահպանել կարողանում են միայն նշանագրերը իրենց երբեմնի «առաջին լեզուի»³: Ուշագրաւ է, որ մատենագրական այս ամբողջ աւանդոյթը վերհանելուց յետոյ, Արեւելցին, նկատի ունենալով պատումի խիստ վաղեմութիւնն ու վարկածային բնոյթը՝ տարակուսանք է յայտնում. «Թէ իրա՞ւ է՝ չգիտեն...»⁴: Բայց չհակադրուելով ընդհանուր ճանաչում գտած այս աւանդոյթին, նա, այնուամենայնիւ, հակում է մասամբ ճշմարտանման համարելու այն՝ յենուելով մի սաղմոսատան վկայութեան վրայ. «Եւ այս որ գրեցաք, - ասում է Արեւելցին, - սաղմոսատուն մի կայ վկայ, որ ասէ ընկոյց տէր եւ

¹ Տե՛ս Հ. Մաշտոս վ. Մաղաթ-Թեոփիլեանց, Կենսագրութիւն երեւելի արանց, Վենետիկ, 1839, հ. Բ, էջ 437:
² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2544, էջ 131ա-բ:
³ Նոյն տեղում, ք. 168ա:
⁴ Նոյն տեղում, ք. 167բ:

բաժանեաց զլեզուս նոցա, այսինքն՝ բէ յառաջ ընկոյց, որ է կորոյս, խորասոյզ արար գառաջին լեզուն, եւ ապա տուաւ բաժանարար»¹:

Յետագայում, սակայն, գրաստեղծման պատմութիւնը կանգ չի առնում, ասում է Արեւելցին. Մարաստանի աշխարհակալ Արփաքսաթ թագաւորը զիր է ստեղծում քաղղէացիների համար՝ ենովսեան գրերի օգնութեամբ կամ նրանց նմանութեամբ, իսկ քաղղէացիներից էլ վաղնջական ժամանակների քաղաքակիրթ ժողովուրդները փոխ են առնում իրենց գիրը. «Եւ յետ ջրհեղին Արփաքսաթ անտի գիր արար քաղղէացոցն եւ անտի այլը...»²:

Սակայն այս ժողովուրդներից միայն վեցի մասին է Արեւելցին իր Ներբողում նշում, որ *սեփական* եւ *ինքնատիպ* գիր են ստեղծել, ըստ որում դրանցից մէկն էլ համարում է մետրայեան այբուբենը. իսկ դպրութիւն ունեցող միւս ժողովուրդների գրի եւ մատենագրութեան մասին նա որոշակի բան չի ասում. բայց նրա զարգացրած տեսութիւնից ինքնըստիներեան հետեւում է, որ այդ ժողովուրդների գրերն ու դպրութիւնները պարզապէս փոխառութիւններ են:

Իբրեւ հնագոյն ինքնատիպ վեց գրատեսակներ Արեւելցին համարում է՝ Ենովսի ստեղծածը, բարելոնեան աշտարակի մօտ գտնուած քրծուած աղիւսների վրայ դրոշմուած կաւային փորագրութիւնները, քաղղէացիներինը, հռոմեացիներինը, մովսիսականը եւ, վերջապէս, հայկականը. «Գիր *նախագոյն* գտեալ Ենովքայ, որ եօթներորդ էր յԱդամայ, փոխեցելոյն ի փառս անպատումս ամենահրաշ փառօք, գրում է Արեւելցին, - *երկրորդ*՝ գտեալ առ աշտարակին, ի կաւեղէն քրծեալ աղիւսի տառատպեալ, *երրորդ*՝ քաղղէացիք արարին իւրեանց գիրս սովորաբար, *չորրորդ*՝ լատինացիք զնոյն հոգս յանձին կալեալ արարին իւրեանս գիրս վասն կրթութեան, *հինգերորդ*՝ Սովսեան, որով գրեաց զօրէնս աստուածագիրս եւ ետ ազգին իւրոյ առ վարժումն, *վեցերորդ*՝ Հայոց պարզեւեալ գիր ի ձեռն սրբոյն Սահակայն, աղօթիք մեծին Մեսրոպայ...»³:

Բնութագրական է եւ այն, որ դպրութեան վարդանեան տեսութեան մէջ կարեւոր տեղ ունեն նաեւ մատենագրութեան *սոցիալական* ու *մշակութային* նշանակութիւնների վերահանումները:

Ի պատիւ Արեւելցու, նշենք, որ նա ըմբռնել է գրի ու մատենագրութեան սոցիալական ու մշակութային նշանակութիւնները, որոնք իրենց հարցադրումներով ու մեկնաբանումներով եզակի են Միջնադարի մեր ամբողջ մատենագրութեան մէջ:

Գրի սոցիալական նշանակութիւնը ընդգծելիս, Վարդան Արեւելցին այն ուշագրաւ միտքն է յայտնում, որ զիրը *հասարակական անփոխարինելի ուժ* է եւ իբրեւ մտքերի հաղորդման միջոց այն իր էութեամբ համընդհանուր բնոյթ ունի: Այդ պատճառով էլ զիրը, ըստ Արեւելցու, «երկիւղ» չունի մեծատուններից ու իշխաններից, հակահասարակական «պիղծ» ու այլասերուած տարրերից, մինչեւ անգամ՝ «արբերից»: Ընդամին՝ նրա վերդասակարգային բնոյթը յուշում է Արեւելցու նաեւ այն պնդումը, որ զիրը «չի զարհուրում» հզօրներից, բայց եւ «չի խղճում» աղքատներին, չի խնայում ո՛չ մերձաւոր ծանօթին, ոչ էլ հեռաւոր քընանուն. մի խօսքով՝ նա այն

ոյժն է, որ բացարձակ անաչառութեամբ է իրեն դրսեւորում բոլոր երեսոյքների նկատմամբ առհասարակ. «Եւ արդ, զի՞նչ գրեզ կոչեցից, ո՞ր գիր...: *Մեծատանց ակն ոչ առնուս եւ իշխանաց ոչ երկնչիս, ի սրբոց ոչ պատկառես եւ ի պղծոց ոչ խորշիս, ի ծանօթից ոչ ակն ածես եւ ի մերձակայից ոչ ամաչես, ի հզօրաց ոչ զարհուրիս, եւ ակարաց ոչ տորմիս, ի հզօրաց ոչ վեհերիս եւ աղքատաց ոչ խղճաս*»¹:

Աւելին. եթէ Վարդան Արեւելցին, մի կողմից՝ այն տեսակետին է, որ զիրը, լայն առումով՝ իր սոցիալական կոչումով առհասարակ կրատրական է հասարակական տարրեր խաւերի նկատմամբ, ապա իր *սոցիալական կոնկրետ դերով* ու *նպատակադրումով*՝ հասարակական ներգործուն ոյժ է, որի նշանակութիւնը դժուար է գերազնահատել: Իրականում՝ զիրը, ըստ նրա, այնպիսի *համապարփակ* ընդգրկում ունեցող մտքերի հաղորդիչ է, որ մինչեւ անգամ բանաւոր չաստուղ ու ասել անհնարին թուացող իրականութիւնները «ի լոյս» է ածում. Արեւելցու ընդհանրացմամբ՝ զիրը որքան թաքուն իրողութիւնները բացայայտող է, նոյնքան եւ պախարակելի՝ հակահասարակական երեսոյքները ամենայն անողորութեամբ ձաղկող է, եւ որ կարեւորն է՝ եթէ խտելի արարքները հրապարակային պարսաւանքի ենթարկող ու «աշխարհալուր համբաւող» է զիրը, բայց եւ միաժամանակ հասարակական վիրաբոյժի իւրահատկութեամբ է օժտուած, որովհետեւ դաստիարակում է մարդկանց եւ ուղղում՝ վերացնում է հասարակական խախտումները հասարակական պախարակման իր գերհզօր ներգործութեամբ. «*Առ երեսս յանդիմանես եւ դէմընդդէմ նախատես*, - գրում է նա՝ դիմառնաբար խօսքն ուղղելով գրին. - *յայտնապէս խայտատակես եւ ի հրապարակս պարսաւես, ի բազմաց միջի ձաղկոծես եւ աշխարհալուր համբաւես, զձածուկսն յայտնես եւ զխորհուրդս սրտից յայտնապէս ասես, զբարունսն պատմես եւ զանձառելիսն ի լոյս ածես, հրապարակագոյժ զասելիսն առնես եւ առաջի բազմած ամաչեցուցանես, երկեցուցանես, զարհուրեցուցանես, ի զղջումն ածես, յողորթիւն կոչես, յուսադրես, համոզես, հաստատես, փրկես, կանգնես, փարատես...»²: Բացի այս հարցադրումից, Արեւելցին գրի՝ հայ իրականութեան նկատմամբ ունեցած կոնկրետ նշանակութեամբ բացայայտում է նրա մի շատ կարեւոր առանձնայատկութիւնը եւս. զիրը նպաստել է հայ ժողովրդի՝ *իբրեւ հասարակական ընդհանրութիւն՝ շաղախմանը* (կոնսոլիդացմանը), *նրա սոցիալական տարրեր շերտերի համար հոգեկան կերտուածքի առաւել ընդհանուր աղերսակցութիւն ստեղծելու իր կատարած պատմական դերով*:*

Որքան էլ անհատատալի թուայ տուեալ ժամանակաշրջանի համար, բայց փաստ է, որ Վարդան Արեւելցին հիանալի է ըմբռնել գրերի գիտի միջոցով առաջացած մատենագրութեան ու դպրութեան հասարակական կարեւոր գործօն լինելը հայ հասարակութեան անդամների միջեւ հոգեկան կապերի ներամրապնդման խնդրում. տեսաբանի խորաքափանցութեամբ նա այն ճիշդ միտքն է յայտնում, որ զիրն ու մատենագրութիւնը ստեղծում են հոգեկան կերտուածքի ընդհանրութիւն տուեալ լեզուով խօսող մարդկային հասարակութեան անդամների միջեւ եւ արտացոլում միաժամանակ այդ ընդհանրութիւնը: Խորաքնին դիտարկումից բխած այս ընդհանրացումը, անշուշտ, վկայութիւնն է հեղինակի անտարակուսելի լայնախոհութեան, որը բարձրացնում է նրան իր ժամանակակիցներից մի ամբողջ զվառ: Բացայայտելով գրերի գիտի ունեցած անդրադարձ նշանակութիւնը, նա գրում է. «Այժմ ոչ կարօտասցի որ թարգմանութեան եւ ոչ ընթացի որ առ որ բէ՝ ծանո՛ ինձ գայս, այլ՝ *միատրեալ միարանութեամբ վերինը եւ ներքինը, ներսինը եւ*

¹ Նոյն տեղում, ք.131ա-բ:

² Ի դէպ, Արփաքսաթը, ըստ Հերոդոտի վկայութեան, բազմաթիւ երկրներ է նուաճել, այդ բում եւ Պարսկաստանը ու պատերազմներ մղել Ասորեստանի դէմ:

³ «Բանբեր Մատենադարանի», Թ. 7, էջ 395:

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում, էջ 395:

արտաքինը, վեճը եւ ռամկեր, հեռաբնակը եւ մերձակայք, մեծամեծը եւ փոքունը ամենեքեան ծանիցեն զճշմարտութիւն եւ իմասցին զարդարութիւն, յաժարեսցին ի յաւութիւն եւ գործեսցեն զբարութիւնն...»¹: Ընդգծուած տողերից հետեւում է եւ այն, որ հայ ժողովրդի առանձին հատուածները ինչպիսի՛ պայմաններում եւ ինչպիսի՛ հեռաւորութիւններում էլ գտնուելիս լինեն անագորոյն ճակատագրի բերումով՝ նրանց իրար միացնողն ու հոգեպէս զօղողը եղել է եւ մնում է հայեցի դպրութիւնն ու մատենագրութիւնը: Վարդան Արեւելցու այս մեծ ընդհանրացումը Միջ-նադարի հայ հասարակական մտքի գնահատման առումով՝ նոյնպէս անգերա-գանց է մեր մատենագրութեան մէջ:

Իր մշակութային դերի մասին խօսելիս Վարդան Արեւելցին կանգ է առնում, հիմնականում, երեք հարցերի վրայ. ա) գիրը իբրեւ լեզուի զարգացման միջոց կամ խթան. բ) գիրը իբրեւ ժողովրդի հոգեւոր զանձերի բացայայտման միջոց ու դրանց յուսալի պահապան. գ) գրի միջոցով ստեղծուած հայ մատենագրութեան գիտա-կան-մշակութային նշանակութիւնը՝ համաշխարհային քաղաքակրթութեան համար:

Վարդան Արեւելցին իրաւացիօրէն նշում է, որ մաշտոցեան գրերի գիտով երբ ստեղծում են դպրութիւն եւ մատենագրութիւն, հայոց լեզուն աննախադէպ զարգացում է ապրում: Եթէ մինչ այդ հայոց լեզուն դակկանում եւ հեղձում էր «քանձրալեզու» («խաղտախաղտ») ասորական եւ «ծուռուծու սեքեւեքութեամբ» («ծերածուռ ծեքեւեքելն») արտաբերուող յունական մատենագրութիւնների տիրա-պետութեան պատճառով, ասում է նա, ապա այժմ արդէն ձեռքագատուում է այդ կապանքներից. տեղի է ունենում «հրաշքանման» մի երեւոյթ՝ «կաղացող» հայոց լեզուն միանգամից ... «սլանում» է՝ զեղեցկանալով ու առնականանալով, եւ որ կարելոյն է՝ սկսում է ճախրել գիտութեան բարձունքներում. «Արդ երագեսցէ կաղութիւն լեզուի մերոյ, որ ոչ կարեր զխաղտախաղտ ասորոցն բարբառել կամ գյունարէն ձերածուռն ձեքեւեքելն,- գրում է նա:- Այժմ պարզեսցին լեզուք ծանրա-խօսք, եւ գորասցի տկարութիւն գիտութեան մերոյ...»²: Փարատում է հայ ժողովրդի համար տգիտութեան քանձրամած խաւարը եւ բացում գիտութեան արեւածագը տրամագծական այնպիսի՛ բեւեռմամբ, ինչպիսի բեւեռմամբ իրար են հակադրում Արեւելցին ու Արեւմուտքը. «... զի որչափ հեռի են Արեւելք յԱրեւմտից, այնչափ հեռի արար ի մենջ տէր զխաւար տգիտութեան մերոյ»³: Ի դէպ, Վարդան Արեւելցին նորաստեղծ գրի նշանակութիւնը հայոց լեզուի զարգացման համար տեսնում է նրանում, որ այն, իբրեւ հօօր միջոց, բարձրացնում է հայոց լեզուն գիտութեան ու մատենագրութեան լեզուի մակարդակին: Նա միանգամայն ճիշդ է նկատել, որ խօսակցական լեզուի զարգացումը, իր հերթին, պայմանաւորուած է մատնագրա-կան լեզուի դառնալու հանգամանքով: Հէնց դա էլ նկատի ունենալով Արեւելցին ծանրախօսի հանդիսաւորութեամբ յայտարարում է. «Լուծա՛ր կապ բերանոյ, փա-րատեցա՛ր նսեմութիւն խաւարի, տարածեցա՛ր լոյսն, ծաւալեցա՛ր ճառագայթն»⁴: Մատենագրութեան ստեղծման նման գնահատումներով ընդգծում է, անշուշտ, գրի ունեցած մշակութային յեղափոխիչ նշանակութիւնը, որ այնպէս խորապէս ըմբռնել է Արեւելցին:

Արդարացիօրէն գնահատելով այն իրողութիւնը, որ գիրը ժողովրդի հոգեւոր զանձերի բացայայտման միջոց է եւ դրանց յուսալի պահապանը. Արեւելցին այն բնութագրում է որպէս հայ ժողովրդի «սխրալի սանդուխթ ելից»՝ ո՛չ միայն ազգովին «փրկուելու» իմաստով, այլեւ մանաւանդ քաղաքակրթական իր մակարդակը բարձրացնելու առումով: Նշենք, որ այս առթիւ նա ընդգծում է նաեւ գրի վիթխարի դերը մարդու ճանաչողական պրոցեսում. «Ո՛վ գերապանձ գիր զարմանալի, ո՛վ հիանքաշ տիպ գերագարդեալ, ո՛վ սխրալի սանդուխթ մեր ելից,- բացականշում է նա,- անձանօք՝ եւ ծանուցեալ, հեռաւոր՝ եւ մօտակաց, անբարբառ՝ եւ ճարտա-սան...»¹:

Բայց Արեւելցին բացայայտում է գրի այլ առանձնայատկութիւնները եւս. գիրը նուագաստեղծ («երգաբան») եթերայնութեամբ օժտուած լինելով հանդերձ՝ միաժա-մանակ մնջախօս («յամրախօս») է, բնութագրում է նա, անթեւ թոչունի նման սրընթաց լրատու լինելով հանդերձ՝ միաժամանակ նաեւ յետագայ դարերի համար «անշարժ կայան» է տարեզոռութեան. «Ո՛վ գերապանձ գիր զարմանալի..., երգա-բան եւ յամրախօս, սուրհանդակ եւ տեղապահ, անթեւ թոչուն եւ անշարժ կա-յան...»²: Աւելին. բաւարար չհամարելով այս բնութագրումները, Արեւելցին դիպուկ ձեւակերպումներով տալիս է նաեւ գրի էութիւնը բացայայտող սպառնիչ նշանակու-թիւնները. ըստ նրա՝ գիրը քանձրացականօրէն մնայուն լինելով հանդերձ՝ յաւեր-ժօրէն գնայուն է, թոչող լինելով հանդերձ՝ միաժամանակ մնայուն է. գիրը ե՛ւ տեղում է մնում, ե՛ւ եթերանում է, ե՛ւ քանձրացական է, ե՛ւ անէական՝ իմաստային հաղորդիչ լինելու իր բացառիկ հանգամանքով. «... Ո՛վ գերապանձ գիր... կայիք ընթացեալ եւ թոչմամբ մնացեալ, երագընթաց ու յամրաշարժ, ի տեղի եւ անտեղի, ի մարմին եւ յանմարմին...»³:

Արեւելցին նկատում է նաեւ, որ գրով պարփակուած մատենագրութիւնը իր տարողութեամբ անսահման է եւ օվկիանոսային անհունութիւն ունի. այդ պատ-ճառով էլ ուսումնականները որքան էլ փութեռանդութեամբ տարում են ընթերցում-ներով՝ դարձեալ զգում են, որ սպառել այն չեն կարող...:

Վարդան Արեւելցին, իբրեւ եզրափակիչ հարցադրում, դեռ այն ժամանակ ըմբռնում եւ գնահատում էր գրի միջոցով ստեղծուած հայեցի մատենագրութեան գիտական-մշակութային նշանակութիւնը՝ համաշխարհային քաղաքակրթութեան համար: Նա ըստ արժանույն է գնահատում հայ դպրութեան ու մատենագրութեան առաջին երախտատուներ՝ Եզնիկին, Եղիշէին, Մովսէս Խորենացուն, Մամբրէ Վերձանողին, Յովսէփ Դարանաղցուն, Գալիթ Անյաղթին եւ միասնեթին: Սրանք, Արեւելցու խորին համոզմամբ, մտքի եւ հոգու տիտաններ են եղել, որոնց յուզել են ժամանակի գիտական բոլոր հետաքրքրութիւնները. «Հարցասէրք եւ քննափափագք լինէին ուսանելով, կրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստ ունելով զանձինս ի յերկս օգտակարս եւ ի գործս շահաւետս»⁴,- եզրակացնում է նա: Ըստ որում՝ յանուն դպրութեան ստեղծման նրանք զոհաբերութիւններով ու տառապանքներով լի հեռաւոր ճանապարհորդութիւններ են կատարել դէպի ժամանակի քաղաքակիրք աշխարհի փառաբանուած մայրաքաղաքներ. «Ընդ ծովու կուէին, ընդ ալիսն մարտնչէին, հողմոց ընդդիմանային, նեղութեանց համբերէին, օտարութեան տա-

¹ Նոյն տեղում, էջ 380:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում:

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում, էջ 394:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում, էջ 382:

նէին, նախատանաց ժուժկալէին, միայն ուսման ուշ ունէին եւ արդիւնաւոր շահից»¹:

Վարդան Արեւելցին բարձր գնահատելով հայ մատենագրութեան ու դրպրութեան հիմնադիրների մտաւոր ու հոգեկան բարեմասնութիւնները, միաժամանակ բացայայտում է այդ մատենագրութեան ստեղծման նրանց հոյակապ Ծրագիրը. մտքի այս հսկաները, ասում է նա, որոնք օժտուած էին անսպառ եռանդով ու անխոնջ նուիրումով, ծրագրային վիթխարի աշխատանք էին տանում մայրենի դպրութեան ստեղծման համար. նրանցից ոմանք մատենագրական երկերի ընտրութեամբ էին զբաղուած, միւսները՝ դրանց թարգմանումով ու արտագրումով. ընդսմին՝ ո՛չ ամէն ինչ անխտիր՝ պատահած երկի վրայ ձեռք դնելով, այլ միայն՝ «շահաւէտ ծաղիկներն» (իմա՝ երկերն) էին մեր դպրութեան համար նախատեսում՝ «ժիր» ու «գործունեայ», բայց «խմաստուն մեղուի» նման, իսկ իրենց տեսակէտով «խտտան» դիտուածները՝ բաց թողնում. «Ոմանք եւ ի գծագրութիւն տառից շահաւորեալ եւ ոմանք ի նիւթոցն պատրաստութիւն, բայց ՅԻՄԱՍՏՈՒԹԻՒՆՆ ամենեքեան դեգերէին, հաւարելով յինքեանց գեղյալ իմաստիցն իրր գիմաստուն մեղու ժիր եւ գործունեայ՝ գանձօրագոյն եւ զշահաւէտ ծաղիկ հաւարէին եւ զխտտանսն ի բաց ընկենուին»²:

Կարեւոր է նշել նաեւ, որ Արեւելցին գիտականօրէն արժէքաւորում է հայ մատենագրութեան հիմնադիրների գրական ժառանգութեան ամբողջ վաստակը: Մատենագրական երկերի ընտրութիւնը, միանգամայն ճիշդ պատկերացմամբ, նա կատարում էր իմաստասիրութեան երկու գլխաւոր բաղկացուցիչ մասերը հանդիսացող «տեսական» եւ «գործնական» գիտութիւնների դասակարգման համաձայն: Ընդսմին՝ «տեսական» գիտութիւններ ասելով հասկացում էին գիտութեան այն ճիւղերը, որոնք ներկայացնում են մաթեմատիկայի («ուսումնականն»), բնագիտութեան («բնաբանականն»), երկրաչափութեան, երաժշտութեան, քերականութեան եւ պոէզիայի («քերդողականն»), ճարտասանութեան բնագաւառները, այլ կերպ ասած՝ ամբողջ Միջնադարում ընդունուած այսպէս կոչուած «Եօթ ազատ արուեստները» («Septem Artes Liberales»):

Իսկ «գործնական» գիտութիւններ համարում են՝ «բարոյագիտութիւն»ը, «քաղաքագիտութիւն»ը (քաղաքի ու քաղաքային կենցաղին վերաբերող հասարակական ըմբռնումների ամբողջութիւնը), եւ «տնտեսագիտութիւն»ը (տան եւ ընտանիքի կեցութեան վերաբերող ըմբռնումների ամբողջութիւնը). «Եւ ըստ այսմ սարասի (իմա՝ «այս եղանակով», «այս կերպ» - Լ.Խ.) բարդեցին յինքեանս զուսումնականն, զբնաբանականն, զերկրաչափականն, զհամարողականն, զերաժշտականն, զքերականն եւ զքերդողականն եւ զայլսն ամենայն, որք են Ժ (10) քրով, մասունք իմաստասիրութեան՝ *բաժանեալք ի տեսականէն եւ ի գործնականէն*»³:

Ուշագրան այն է, որ Վարդան Արեւելցին մատենագէտի հմտութեամբ թուարկում է մեր առաջին մատենագիրների երկերը՝ արժէքաւորելով դրանք գիտական բնութագրմամբ ու տեսակաւորմամբ: Ստեղծագործական մտքի նրանց արգասիքները «տեսական» եւ «գործնական» իմաստասիրութեան երկու մեծ բաժանումներով ներկայացնելուց յետոյ, նա գրում է. «... խորոցն աստուծոյ արտայայտողքն (իմա՝ մեր առաջին մատենագիրները - Լ. Խ.) ունելով ընդ ինքեանս բեռինս շահա-

խոհականն, զատենականն, զկացրդականն (իմա՝ ճարտասանութեան երեք տեսակները - Լ.Խ.), զաստուածաբանական...»⁴:

Արեւելցին միաժամանակ ընդգծում է այն կարեւոր հանգամանքը, որ հայ առաջին մատենագիրները ոչ թէ ապաշնորհ հետետրոյներ («էպիգոններ») են եղել յունական դպրութեան, այլ սեփական հանճարի՝ յունական «վեհագոյն» դպրութեան հետ ունեցած արդիւնաւէտ բեղմնատրմամբ «զհայի» իմաստութիւնն են «զարդարեք»: Իրենց հեղինակած երկերով, ասում է Արեւելցին, նրանք *աշխարհի ժողովուրդներին ներկայացրին հայ ժողովրդի համապարփակ գիտութիւնը*, որը ազգային հպարտութեան արդարացի զգացումով է տոգորում մեր ուսումնականներին: Նման հարցադրումը, անտարակոյս, մեծապէս բարձրացնում է այս պայծառ մտածողութեան տէր հեղինակին իբրեւ հայ մշակոյթի ներքուն իմաստաւորողի եւ հայրենասէր գիտնականի: Ծարունակելով զարգացնել իր միտքը, նա գրում է. մեր մատենագրութեան հիմնադիրները «... *զարդարելով զհայի իմաստութեամբ եւ վեհագունի յունաց պանծալիս ցուցանելով զգիտութիւնս մեր ազգաց բազմաց զհասարակ զգայութիւն, զերեւակայութիւնս, զտրամախոտութիւն, զկարծիս եւ զմիտս առ սոքօք զարեեստ եւ զմակացութիւն* (իմա՝ գիտութիւնը - Լ.Խ.) *եւ զայլսն ամենայն՝ զգովելիսն եւ զպանծալիսն պատուականաց, զմեկնեալսն եւ զղատեցեալսն յանպիտանեացն*»⁵: Բացայայտելով հայ մատենագրութեան հիմնադիրների նպատակադրումը, Արեւելցին նշում է, որ նրանց յուզող մտահոգութիւնը եղել է ոչ թէ նեղ՝ անձնակենտրոն փառասիրութիւնը, այլ «համազգային օգուտ» տալու առաջատար ու հիմնական մտասուեւումը. «... *Զանգի մեծաւ հոգաբարձութեամբ փոյթ յանձին կալեալ երանելեացն զնշանն եւ զօգտութիւն բազմաց տնօրինելը*»⁶, - եզրակացնում է նա:

Ահա սրանք են, հիմնականում Վարդան Արեւելցու հայեացքներն ու ըմբռնումները լեզուների առաջացման, գրերի գիտի, դպրութեան եւ մատենագրութեան նպատակադրումների ու նշանակութիւնների վերաբերեալ, հայեացքներ, որոնք, անտարակոյս, մղեցին նրան անխուսափելիօրէն ձեռնամուխ լինելու նաեւ մի այլ մատենագրական յուշարձանի՝ քերականութեան դասագիրք հեղինակելուն: «Նրա Մեկնութիւն Քերականի» երկը Միջնադարի հայ ուսումնագիտական կենտրոններում, իբրեւ դասընթացք, լայն կիրառութիւն ունեցել՝ մտաւորականների բազմաթիւ սերունդներին սովորեցնելով հայերէնագիտութիւնը⁴:

«Լրաբեր» Գիտութիւնների Ակադեմիայի
Հասարակական Բաժանմունքի, 1972, Թ. 4:

¹ Նոյն տեղում, էջ 382-383:

² Նոյն տեղում, էջ 383:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում:

⁵ Նոյն տեղում, էջ 384:

⁶ Նոյն տեղում:

⁴ Այն 17 ձեռագրերի համեմատութեամբ 1972 թուականին իմ աշխատասիրութեամբ լոյս ընծայեցի, ակադեմիական Հրատարակչութեան մակնիշով, իբրեւ գիտա-քննական Բնագիր՝ Առաջաբան-Ուսումնասիրութեամբ եւ Պատմա-մշակութային-բանասիրական Ծանօթագրութիւններով հանդերձ:

ՎԱՐՂԱՆ ԱՐԵՒԵԼՅԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԲԱՆ

Վարդան Արեւելցի XIII դարի մեր այն ականաւոր տեսաբաններից է, որին խորապէս յուզել են հայերէն գրահամակարգի առաջացման եւ դպրութեան ձեւաւորման խնդիրները: Նրա ըմբռնումները հայերէն գրերի եւ դպրութեան առաջացման ու բնոյթի վերաբերեալ չափազանց ուշագրաւ են իրենց հարցադրումներով: Պատահական չէ, որ հայագիտական գրականութեան մէջ մաշտոցեան գրերի գիտի տեսական քննութեան առթիւ Վարդան Արեւելցու հայեացքները առ այսօր սեւեռուն ուշադրութիւն են բերուել իրենց վրայ՝ հայագետների թեր ու դէմ մեկնաբանումներով:

Գրերի գիտին անմիջապէս նախորդող ժամանակաշրջանում Հայաստանի եւ հայ ժողովրդի տխուր վիճակը պատկերելիս Վարդան Արեւելցին հաւասարապէս ձաղկում ու մերկացնում է ինչպէս Պարսկաստանի, այնպէս էլ Բիզանդիայի հեղձուցիչ քաղաքականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ եւ նրանց տիրապետութեան կործանարար հետեւանքները Հայաստանի համար. «... զի գրաւեցաք ընդ պարսից եւ ընդ յունաց տէրութեանց եւ յերկուց միջի տատանէաք, որք կեղեքէին զկեանս մեր զանազան վշտօք, վասն որոյ եղկելի գտաք քան զամենայն ազգս...»¹: Բաղաբական այս դժնդակ իրավիճակը Վարդան Արեւելցին գնահատում է որպէս հայ ժողովրդի լինելիութեանը սպառնացող օրհասական ու մղձաւանջային գոյավիճակ, մանաւանդ «յերկուց միջի տատանէաք» արտայայտութեամբ աւելի քան պարզ ու մեկին ակնարկում է հայ ժողովրդի՝ եւ Պարսկաստանին, եւ Բիզանդիային ձուլուելով կու գնալու անխուսափելի վտանգը, եւ հէնց այդ պատճառով էլ հայ ժողովրդի դրութիւնը ամենաողբերգականն է համարում միւս բոլոր հպատակ եւ ստրկացուած ժողովուրդների համեմատութեամբ («եղկելի գտաք քան զամենայն ազգս...»):

Նման եզրակացութեան է յանգում Վարդան Արեւելցին ոչ այն պատճառով, որ միւս հպատակ եւ ստրկացուած ժողովուրդները առաւել բարւոք վիճակում էին գտնուում, քան հայ ժողովուրդը, այլ մանաւանդ այն նկատառումով, որ հայ ժողովուրդը, լինելով հազարամեակների հարուստ եւ ինքնատիպ մշակոյթ ու քաղաքակրթութիւն ունեցող ազգ, չպէտք է հեռանար պատմութեան քառերաբեմից, հէնց դրա համար էլ նրա անհետացման վտանգը այնքան ողբերգական ահագնութեամբ էր վերապրում մեծամուն գիտնականը:

Վարդան Արեւելցու քաղաքական հասունութիւնն ու հեռատեսութիւնն է վկայում եւ այն իրողութիւնը, որ նա հաւաստում է խելամիտ շեշտադրումով. քաղաքական կողմնորոշման համար թէեւ նշանակութիւն ունի տուեալ ժողովրդի համար նախատեսուող հնարաւոր դաշնակցի աշխարհայեացքային-կրօնական ընդհան-

րութիւնը, բայց ոչ պակաս նշանակութիւն ունի այդ դաշնակցի նաեւ աշխարհագրական դիրքը՝ բարեկամի մերձակայութիւնը: Հէնց այս երկու գործօնների (աշխարհագրական դիրքի մերձակայութիւնը եւ օգնութեան հասնող դաշնակցի աշխարհայեացքային-կրօնական հարազատութիւնը) առկայութեան դէպքում միայն հնարաւոր կը լինի հայ ժողովրդի բարգաւաճումը խաղաղութեան ու անվտանգութեան պայմաններում: Վարդան Արեւելցու քաղաքական այս իմաստուն եւ խորաբանական ընդհանրացումը, որ, անկասկած, բխում է հայ ժողովրդի հազարամեակների պատմութեան դառը փորձից, ձեւակերպուած է լակոնիկ սեղմութեամբ ու խորը ճշմարտացիութեամբ.

«Որ հուպն էին՝ այլանդակ գոլով եւ քշնամի ճշմարտութեան, ընդ որոց ոչ լինէր սիրոյ միաբանութիւն, իսկ որք մերձաւորք եւ ընդանիր էին հաւատոյ՝ հեռագոյն գոլով ոչ ժամանէին ի թիկունս օգնականութեան ըստ արժանւոյն...»¹:

Ինչպէս հետեւում է այս քաղաւածքի ենթատեքստից, հայ ժողովրդի բոլոր դժբախտութիւններն ու տարապայման փորձութիւնները, վերջին հաշուով, հետեւանք են մերձաւոր քշնամուն դիմակայելու համար դէպի հեռաւոր «բարեկամ»ը ամէն անգամ կողմնորոշուելու հարկադրական, բայց սին պատրանքների...:

Բացի նշուածից, բերուած քաղաւածքի ենթատեքստի մի այլ ընթերցումն էլ այն է, որ եթէ այսպէս կոչուած «բարեկամները» իրենց աշխարհագրական դիրքով հեռու գտնուելու պատճառով չէին կարողանում ամէն անգամ օգնութեան հասնել հայ ժողովրդին՝ բոլորովին անօգնական թողնելով նրան արեւախորհի պահին, ապա հայ ժողովրդին ուրիշ բան չէր մնում, քան միայն ապաւինել սեփական ուժերին: Ընդամին՝ ինչպէս ֆիզիքականի դիմադրողական կարողութեան բարձրացմանը, այնպէս եւ մանաւանդ հոգեւորի անկասելի սխրանքին: Բնականաբար՝ պատմական նշուած ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը ծուռատում եւ արինաքամ էր լինում երկու գիշատիչ բռնապետութիւնների ճիրաններում, ֆիզիքական անհասար ուժերի առկայութեան դէպքում անխուսափելիօրէն պէտք էր ազատութիւն տալ հայ ժողովրդի հոգեւոր ուժերի խոյանքին, որ այս դէպքում արտայայտուեց նրա յարատեւման համար փրկարար նշանակութիւն ունեցող սեփական գրի եւ մատենագրութեան ստեղծման հիասքանչ սխրանքի իրականացմամբ, որը եւ փայլուն կերպով իրագործեց հայ ժողովրդի հանճարեղ գաւակ Մեսրոպ Մաշտոցը՝ իր մեծ զինակցի՝ Մահակի, պետական հեռատես գործիչ Վամշապուհի եւ տաղանդաշատ աշակերտների համաստեղութեան գործակցութեամբ: *Մեկական դպրութեան զարգացումը այն միակ երաշխիքն էր ստեղծուած պայմաններում, որով պահպանուելու էր հայ ժողովրդի ինքնուրոյնութիւնը՝ հակադրուելով, մի կողմից, պարսկական, միւս կողմից՝ բիզանդական մշակոյթի ու քաղաքակրթութեան հետ համաձուլուելուն:* Ընդգծելով վերջինիս՝ բիզանդական մշակոյթի առաւել վտանգաւորութիւնը իր կրօնական ընդհանրութեան պատճառով, Վարդան Արեւելցին միանգամայն ճիշդ է բացայայտում Մաշտոցի նուազնային մտահոգութիւնը՝ *փրկելի հայ ժողովրդին յունական լեզուի ազդեցութիւնից («փստածաղկից»):* Այդ առթիւ նա գրում է. «Ընդ այն ժամանակս... սուրբն Մեսրոպ ... բազում ջանս յանձին կալեալ վասն գիտի գրիս մերոյ, զի ազատեցէ զազգս հայոց ի յունական լեզւածայր փստածաղկի ծենքեմայիցն ...»²:

¹ Նոյն տեղում, էջ 377-378:

² Նոյն տեղում, էջ 378:

¹ «Նորին Վարդանայ վարդապետի քան ասացեալ գովեստի պատմագրաբար...», տես «Բանբեր Մատենադարանի», Թ. 7, 1964, էջ 377:

Բացի այդ, օտարալեզու՝ յունարեն կամ ասորերեն դպրութեամբ ու մատենագրութեամբ հոգեւոր սնունդ ջանքերը հայ ժողովրդին չէր ապահովում ինչպէս հարկն է, քանի որ Մեսրոպից եւ Մահակից բացի, այդ լեզուն հասկացողներ գրեթէ չկային. հետեւաբար քարգմանաբար արտող հաղորդակցութիւնը իր արդիւնքով չափազանց աննշան էր: Մինչդեռ հայ ժողովրդի լուսատւութիւնը, նրա քաղաքակրթական մակարդակի բարձրացումը՝ գիտութեան եւ ուսման ձեռքբերումը անհրաժեշտ էր ապահովել միայն սեփական դպրութեան ստեղծումով ու զարգացմամբ: Ահա այս հիմնական գաղափարն է ընդգծում Վարդան Արեւելցին գրերի գիտի շարժառիթները պարզաբանելիս. «... մանաւանդ զի յորով լինէր վրիպումն շահից հոգեւոր գանձուց վասն այլալեզու հեզենայիցն ի տառատպութիւն օտարասեռ սիդորայից. վասն զի ուր ոչ լինէր մերձ սուրբն Մահակ կամ Մեծն Մեսրոպ, ոչ կարէին իմանալ զվերժանութիւն գրոց եւ զրկեալ լինէին ի լուսատր պատուիրանացն աստուծոյ, ունայն լինէր ունկնդրութիւն խողացն եւ գուր աշխատութիւն ընթերցողացն»¹:

Եթէ Վարդան Արեւելցին հայ գրերի գիտին «աստուածապարզութիւն» է վերագրում, ապա դրանով ոչ թէ Աստուծոյ «քարեմասնութիւնն» ու երախտիքն է մատնանշում, առաջին հերթին, այլ գրերի գիտի բացառիկ կարեւորութիւնն է ընդգծում՝ ելնելով հայ ժողովրդի համար նրա ունեցած բախտորոշ նշանակութիւնից. ըստ նրա՝ հենց գրերի գիտով պայմանատրուած հայեցի դպրութեան առաջացմամբ ու զարգացմամբ շողախտեց ու կայունացաւ հայ ժողովրդի սոցիալական տարբեր շերտերի հոգեկան կերտումների ներքին միասնութիւնը՝ իբրեւ հասարակական ընդհանրութիւն², որով եւ նա դիմագրաւեց պատմութեան խորշակաբեր փորձութիւններին ու արեւտիքներին եւ այդ դպրութեան շնորհիւ հայ ժողովրդի միտքը ճառագեց արտակարգ փայլատակմամբ նրա ամբողջ գոյատեւման ընթացքում: Պատահական չէ, որ Վարդան Արեւելցին, ի տարբերութիւն միւս ժողովուրդների «հնարիք» ձեռք բերած այբուբենների, բացառութիւն է համարում միայն մովսիսական եւ մաշտոցեան գրերը: Նման համեմատութիւնը, որքան էլ ազգային սնապարծութեան երեսութեանութիւնն ունենայ իր հիմքում, իրականում բխում է հասարակական այն դերից ու նշանակութիւնից, որ ունեցել է, ըստ Աստուածաշնչի՝ մովսիսական գիրը, հրէական ժողովրդի, եւ մաշտոցեան գիրը՝ հայ ժողովրդի համար. «Եւ քանզի սովոր է աստուած ի ձեռն միջնորդի զբարիս պարզելի ազգի մարդկան յամենայն ժամ,- գրում է Վարդան Արեւելցին,- եւ որպէս ի հինն ի ձեռն նախամարգարէին Մովսէսի եւ Աստուած հնոյն Իսրայելի գաստուածագիծ տախտակսն, որովք հաստատեցան եւ գիտութիւն ճշմարտութեան, նոյնպէս եւ մեզ ի ձեռն սրբոյն Մահակայ եւ երանելոյն Մեսրոպայ շնորհեաց Աստուած զգիրս, որով գերծար ի խաւարէ սոցիտութեան եւ ծանեաք զոյս ճշմարիտ աստուածգիտութեան»³: Կամ՝ նոյն միտքը իմաստային տարբեր երանգով Վարդան Արեւելցին ձեռակերպել է այսպէս. «Եւ արդ, որպէս ասացաւ, թէ ամենայն ազգ հնարիք արարին գիրս իրեանց լեզւին, բայց միայն Իսրայէլ եւ Հայք, որ յԱստուծոյ ընկալան, եւ այս՝ ոչ փորրագոյն պատիւ ազգիս մերում, զի որպէս ի հինն Իսրայէլ

¹ Նոյն տեղում:

² Այս մասին առաւել մանրամասն տե՛ս մեր մի այլ ուսումնասիրութիւնը՝ «Լեզուների առաջացման եւ գրի ու մատենագրութեան սոցիալական դերի ու նշանակութեան տեսութիւնը ըստ Վարդան Արեւելցու» վերնագրով, որը տպագրուել է «Լրաբեր»-ի (ՀՄՄՀ ԳԱ հասարակական բաժանմունքի), 1971 թ. 12րդ համարում, որը եւ ընդգրկել ենք ներկայ Հատորում. տե՛ս էջ 54-93:

³ «Նորին Վարդանայ վարդապետի բան ասացեալ...», «Բանբեր Մատենադարանի», Թ. 7, էջ 396:

միայն պատեցաւ աստուածագիծ տախտակօքն, ի նորս Հայք միայն ընկալան յԱստուծոյ աստուածատուր պարզել՝ զգիրս զգիս մերոյ»⁴:

Ի դէպ, գրերի գիտի «աստուածապարզութեան» վարդանեան վերագրման մեր այս բացատրութիւնը հիմնադրում է նաեւ ուշագրաւ այն փաստով, որ Վարդան Արեւելցին յանրժամացման ներուճակութեամբ է օժտում մեսրոպեան գրերը՝ բնութագրելով դրանք որպէս «Կենաց գիր կանաչացեալ». «... Վասն որոյ փառք, պատիւ եւ գոռութիւն ի տեսնոն անողին ամեզ,- գրում է նա,- եւ պայծառութիւն յիշատակի անուան նորա ի գիրն կենաց Մեսրոպայ որ է կանաչացեալ...»⁵: Ինչ խօսք, նման բնութագրումը վկայութիւնն է հեղինակի՝ մեր դպրութեան նկատմամբ տաժամ անպարագիծ սիրոյ ու նուիրումի բնութագրում, որն անգերազանցելի է մնում իր իմաստատրմամբ մեր ամբողջ մատենագրութեան մէջ:

Ինչ վերաբերում է Մաշտոցի՝ հայերն գրերի յօրինման ուղղութեամբ կատարած կոնկրետ աշխատանքներին, ապա այդ առթիւ Վարդան Արեւելցին, յեմուելով Կորինի տուեալների վրայ, մասամբ նոր մեկնաբանութիւն է տալիս, մասամբ էլ հնագոյն հայերէն գրերի առկայութեան վարկածը, որ հերքել է Կորինը, նորից առաջ է բաշում:

Այսպէս, Վարդան Արեւելցու պնդմամբ՝ հնագոյն ժամանակներում ասորիները, որոնք ունեցել են 22 տառից բաղկացած իրենց այբուբենը, հայ թագաւորների ենթակայութեան տակ միառժամանակ գանուելու ընթացքում հայերի համար նոյնպէս փորձ են արել ստեղծելու գրեր իրենց այբուբենի օգնութեամբ, որպիսիք, սակայն, հայոց լեզուի հնչիւնական հասկարգն արտայայտելու տեսակէտից անբարարար քանակութեամբ են եղել: Այս նախնականքը, բնականաբար, խանգարել է, որ հայերը գործադրութեան մէջ դնէին այդ գրերը իրենց լեզուի համար. «Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ,- գրում է Վարդան Արեւելցին,- զի ասորիք ընդ մեր թագաւորաւքն էին, եւ նոցայն ԻԲ(22) գիր է: Ի նոցանէ ջանացան առնել մեզ գիր: Եւ լեալ էր հայերէն նշանագիր ի ինն ժամանակսն սակաւս եւ զի չկարէին բանալ նորաւք, թողին եւ մոռացուաւ»⁶: Իսկ ստոյգ՝ պատմական ո՞ր ժամանակաշրջանին է վերաբերում այս ասորատիպ այբուբենի փոխառութիւնը հայ թագաւորների կողմից՝ որոշակի ոչինչ չի յայտնում Վարդան Արեւելցին: Բայց կասկածից վեր է, որ արուած պնդումը սոսկ հայեցողական բնոյթի է՝ առանց պատմական իրական փաստի: Յամենայն դէպս՝ ինքնատիկնեան հասկանալի է, որ նման ծանրակշիռ յայտարարութեան համար Վարդան Արեւելցին թէւ չի յիշատակում, թէ մատենագրական ինչ աղբիւրի վրայ է յենում, սակայն ակնյայտ է, որ նրա համար տուեալ դէպքում հիմք է ծառայում Կորինի աշխատութիւնը:

Դանիելեան գրերի հայերէն հնագոյն տառեր լինելու ենթադրութիւնը, որ անում է Վոանշապուի թագաւորը, քննութեան չի դիմանում դեռեւս Մաշտոցի կողմից կատարուած գիտական-լեզուաբանական նախախուզումների առաջ, ինչպէս համոզիչ կերպով ցոյց է տալիս Կորինը: Չնայած Մաշտոցը երկու տարուայ ժամանակամիջոցում կիրառական փորձեր է կատարում դանիելեան գրերով, սակայն ոչ մի արդիւնքի չի հասնում այն հիմնական պատճառով, որ այդ գրերը չէին համապատասխանում հայերէնի հնչոյթային նախակարգին, հետեւաբար եւ՝ հայերէն հնչական արտասանութեամբ արտաբերելու բառերը հնարատր չի եղել դրանցով

⁴ Նոյն տեղում, էջ 395:

⁵ Վարդան Արեւելցի, Պատմութիւն Տիեզերական, էջ 71:

⁶ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2544, էջ 165ա:

քանձրացականի վերածել, այլ կերպ ասած՝ գրառել: Մակայն կարեւոր է նկատել, որ դեռես այն ժամանակ Մաշտոցը յանգում է միանգամայն ճիշդ եզրակացութեան. դանիելեան գրեքը ո՛չ թէ հայկական հնագոյն գրեր են եղել, այլ՝ պարզապէս վաղնջական ժամանակներում «ուրիշ դպրութիւններից թողնուած, յետոյ նորից յարութիւն ստացած» (իւարկէ՝ *Դանիէլի կողմից*) գրեր են եղել, հետեւաբար անօգուտ համարելով դրանցով այլեւս զբաղուելը, յուսախար տրամադրութեամբ հրաժարուելով դրանցից, էլ չի անդրադառնում Մաշտոցը դրանց, ուստի եւ նորից շարունակում է, ուժերի մեծ լարումով, հետամուտ լինել հայերէն գրերի ստեղծման բարդ եւ պատասխանատու գործին. «Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղաբայս զկապս հայերէն լեզույն, - ասում է Կորիւնը, - մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ յայտոց դպրութեանց թողեալք՝ եւ յարուցեալք ղիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, ի մինն ելս խնդրէին ամանակ ինք»¹: Կորիւնի այս ճիշդ հաւաստումներից, սակայն, տարամիտում է Վարդան Արեւելցին եւ, չըմբռնելով նրան ինչպէս հարկն է, սխալ մեկնաբանութիւն է տալիս դանիելեան գրերի ծագման ու բնոյթի մասին: Նա, պարզապէս խորամուխ չլինելով Կորիւնի՝ «եւ նշանագիրքն իսկ յայտոց դպրութեանց թողեալք եւ յարուցեալք ղիպեցան» արտայայտութեան մէջ, քիւրիմացաբար կարծել է, որ խօսքը ոչ թէ «յայտոց դպրութեանց», այլ, իբր, հայերի իսկ կողմից այդ գրերը մոռացութեան տրուելուն է վերաբերում: Իր պնդման հակասականութիւնը, լեզուաբանական առումով, բացայայտում է նաեւ այն յայտարարութեամբ, թէ հայերը «չկարէին բանել նոքար», այն է՝ հնագոյն հայերէն գրեր համարում զանիելեան նշանագրերով: Հարց է ծագում. եթէ դանիելեան գրերը հայ իրականութեան դեռ վաղ անցեալում՝ հէնց նախամտերուցեան շրջանում կիրառութեան մէջ չեն մտել, էլ ի՞նչ հայկական գրեր լինելու մասին խօսք կարող լինել՝ կապում զանիելեան «նշանագրերի» վարկածի հետ: Անվիճելի իրողութիւն է, որ հայկական գրեր լինելու առաջին նախապայմանը դրանց (եւ առհասարակ ամէն մի այբուբենի) *կիրառում* լինելու փաստի հաւաստումն է. եւ եթէ ժխտում է այն, ուրեմն եւ ժխտում է կարծեցեալ գրերի հայկական լինելը:

Ի դէպ, այս հարցում Վարդան Արեւելցին «նոր տեսակետի» առաջադրողը չէ բնաւ. նա ունի իր նախորդները հայ պատմագրութեան մէջ յանձնինս Ղազար Փարպեցու եւ Ասողիկի: Եւ որքան էլ տարօրինակ է՝ այդ «տեսակետն» առաջացել է ոչ թէ իբրեւ նոր փաստերի բնութիւնից բխեցուած մակարեութիւն, այլ սոսկ արդէն իսկ հաւաստում անգամ միեւնոյն իրողութիւնների վերաշարադրման ժամանակ դրանց մասնակի նկատառման հետեւանքով թերի ձեւակերպում որպէս: Այսպէս, չնայած այն ինքնախոստովանութեանը, որ Ղազար Փարպեցին գրերի գիտի կապակցութեամբ անում է՝ ուղղակի ակնարկելով, թէ իր սկզբնաղբիւրը միայն Կորիւնն է, այնուամենայնիւ, չգիտես ինչու, զանց առնելով Կորիւնի բոլոր կարեւոր հաւաստումներն ու զնահատականները դանիելեան գրերի բնոյթի ու ճակատագրի մասին, քմահաճ կերպով առաջ է քաշում անձնապատասխան իր այն «տեսակետը», որ իբր դանիելեան գրերը հէնց հայերէն գրերն են եղել: Նախ՝ իր

սկզբնաղբիւրի մասին Փարպեցին գրում է. «Եւ զայս թէ կամիցի որ զիտել հաւաստեալ՝ ի պատմութենէ գրոց ասն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկացի զվարս կենաց նորա եւ զիւր հայերէն նշանագրացն, թէ երբ, կամ ո՛ր եւ կամ յո՛յր ուրուք ձեռն գտանէ, քազաւորին Հայոց Վառնշապուհ ջերմեռանդն խնդրելով, զոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջադրեաց այրն հոգեւոր Կորիւն, ուստի եւ մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեալ»²: Մէջբերումից հետեւում է, որ եթէ Ղազար Փարպեցու իմացութիւնը գրերի գիտի մասին բխում է միայն Կորիւնի հաղորդումներից, ապա դրանից ինքնըստինքեան հետեւում է, որ գիտի հարցում հաւաստի հեղինակութիւն պիտի համարել Կորիւնին, եւ ո՛չ թէ՝ Փարպեցուն, որն իր տեղեկութիւնները փութկոտօրէն քաղել է սկզբնաղբիւր Կորիւնից: Հէնց այս ելակետից էլ մեկնելու դէպքում ակնհայտ է դառնում Փարպեցու Կորիւնից տարամիտող «տեսակետի» կամայական եւ հիմնազուրկ լինելը: Այս առումով էլ գիտականօրէն ոչ մի արժէք չունի Ղ. Փարպեցու այն սխալ կարծիքը, երբ նա, չբաւարարուելով դանիելեան գրերը հայերէն գրեր համարելով, էլ աւելի առաջ է զնում եւ մինչեւ անգամ ակամայից պատկազերծելով Մաշտոցի ամբողջ յայտնագործութիւնը, միայն Դանիէլին է վերագրում հայերէն գրերի հեղինակային պատկանելութիւնը: Նա այդպէս էլ գրում է. «Իսկ արքային Հայոց սուրբ կաթողիկոսան Սահակաւ եւ երանելեան Մաշտոցի ընկալեալ զնշանագիրքսն (իմա՝ Դանիէլի - Լ.Խ.) ի Հաբէլէ՝ ուրախ լինէին: Եւ այսպէս ղիպեալ գիտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց...»³: Գիտի ասել, սակայն, որ այս աղաղակող հակապատմականութիւնն ու խեղափոխումը ոչ թէ միտումնաւորութեան արդիւնք է, այլ արդէն իսկ պատմական յայտնի փաստերի վերաշարադրման առթիւ Փարպեցու ցուցաբերած անճշգրտութեան, որը հետեւանք է անշուշտ իր անփութութեան:

Իսկ Ասողիկը նոյնպէս կրկնում է Փարպեցու քիւր կարծիքը դանիելեան գրերի «հայերէն» լինելու վերաբերեալ՝ այն տարբերութեամբ միայն, որ նրանց բանակը «ընդունում» է ոչ թէ 22, այլ՝ 29. եւ հակառակ Կորիւնի, պնդում միաժամանակ, որ դանիելեան բոլոր գրերը դրուել են հայերէն այբուբենի հիմքում որպէս զերակշռող մաս, իսկ Մաշտոցը, իբր, աւելացրել է միայն 7 գիր. «... Եր սուրբ հայրապետն Հայոց Սահակ, - գրում է նա, - յորոյ ատուքս դպրութիւն հայոց լեզուի ԻԹ (29) գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ Աստուց կարգեցաւ, իսկ զեօթն գրոցն պակասութիւնն Մարովր երանելի տարօնեցի խնդրուածովք յԱստուծոյ առնու»⁴:

Վարդան Արեւելցու մօտ, սակայն, նկատելի է երկուքիւն արծարծուող հարցում, որն արտայայտում է երեք տեսակետների (այն է՝ կորիւնեան, փարպեցիական եւ ասողիկեան) համադրութեամբ: Այսպէս, մի դէպքում Վարդան Արեւելցին որդեգրելով հանդերձ Ղազար Փարպեցու անհիմն կարծիքը դանիելեան գրերը հայերէն լինելու մասին, բայց եւ տարամիտում է նրանից՝ Կորիւնի հետեւողութեամբ հաւաստելով, որ դրանք անկարող են եղել արտայայտելու հայերէնի հնչոյթային համակարգը..., մի այլ դէպքում էլ՝ համերաշխ լինելով Ասողիկի պնդման հետ, նոյնպէս գտնում է, որ դանիելեան գրերը դրուել են հայերէնի այբուբենի հիմքում, իսկ Մաշտոցը պարզապէս աւելացրել է պակասող գրերը «աստուածապարզեւ» տառերի յօրինմամբ...:

¹ Առաւել ստոյգ այս բառածելը, որ առաջարկել են Գ. Այվազեանն ու Միսրանը, բնագրագիտական միանգամայն ճիշդ ընթերցում է՝ ի տարբերութիւն տպագրուածի «քաղեալք» բառածելի: Բանն այն է, որ «նշանագրերը» ո՛չ թէ «քաղում են» դպրութիւնների կողմից, այլ՝ «թողնում» կամ լքում են՝ նոր նշանագրերի անցման պատճառով, ինչպէս իրաւամբ դիտել է տալիս Հր. Աճառեանը (տե՛ս «Հայոց գրերը», Վիեննա, 1928, էջ 67, ծանօթ.): Ո > Ա բաղադրութիւնը միանգամայն հնարաւոր է, ինչպէս ասպացուցում է հնագրագիտութեան ընձեռած բազմաթիւ փաստերով:
² Կորիւն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941, էջ 46:

¹ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 23:
² Նոյն տեղում, էջ 31:
³ Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 139-140:

Նշումը հեղինակներից Կորիւնն է միայն ճիշդ բացատրում դանիելեան գրերի ոչ հայկական լինելու բնույթը: Երկու տարուայ ապարդիւն փորձերից յետոյ, երբ մեր առաջին խոշոր հայկաբանները՝ Մաշտոցն ու Սահակը խորապէս համոզուած են, որ դանիելեան գրերը չեն արտացոլում հայերէնի արտասանական բազան իրենց հնչոյթային արժէքներով, հրաժարուած են դրանցից եւ նորից հայերէն գրեր ստեղծելու միեւնոյն մտահոգութեանը անձնատուր լինում. «Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, գրում է Կորիւնը,՝ թէ չեն բաւական՝ նշանագիրքն ողջ ածել զսիւրորայս զկապս հայերէն լեզույն, մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ յայտոց դպրութեանց թողեալք եւ յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային. եւ նմին եյս խնդրէին ժամանակս ինչ»²: Բերումը քաղուածքում նկատառման է արժանի Կորիւնի եւ այն հաւաստումը, որով հիմնականում արդէն իսկ բնութագրուած է դանիելեան գրերի ոչ հայեցի, առաւել ստոյգ՝ սեմական լեզուների այբուբենների սկզբունքով ստեղծուած գրային համակարգ լինելը. նա այդ մասին պարզ ու մեկին ասում է՝ «դանիելեան գրերը ի վիճակի չեն հայերէն լեզուի վանկերն ու հնչիւնակապակցութիւնները լիովին արտայայտել»: Հետեւաբար առաջնային պահանջը եղել է այն, որ հայերէնի համար ընդունելի այբուբենը լինի վանկակազմիչ եւ հնչիւնակապակցող գրային համակարգ: Իսկ հնագոյն ժողովուրդների գրասիստեմներից առանձնապէս սեմական գրահամակարգերը, ինչպէս յայտնի է, այդ բնույթի չեն. նրանցում վանկարար եւ հնչիւնակապակցող գրերը իսպառ բացակայում են: Նշանակում է՝ սեմական գրասիստեմները բաղաձայնական գրահամակարգեր են, որոնք եւ Կորիւնի ու նրա մեծ ուսուցչապետների միանգամայն ճիշդ հայեցակէտով ընդունելի չէին հայերէնի համար: Հայերէնը, մաշտոցեան ըմբռնմամբ, պէտք է որդեգրէր այնպիսի գրահամակարգ, որն իր բնույթով եւ վանկարար ու հնչիւնակապակցող գրեր ունենար (ձայնատրներ, երկրարբաններ եւ եռարբաններ), եւ բաղաձայնական գրանիշեր: Իսկ եթէ դանիելեան գրերը գուրկ չէին էական ու հիմնական այս առանձնայատկութիւններից, հետեւաբար եւ նրանք կիրառելի չէին հայերէնի համար: Պէտք է ենթադրել, որ դանիելեան գրերը պատկանում էին սեմական գրասիստեմներից հաւանաբար ասորերէն այբուբենին³:

¹ Կորիւնեան «չեն բաւական» բառակապակցութիւնը, որը դասական գրարարի քայմաստային նշանակութեամբ արտայայտել է՝ «անկարող են», «ի վիճակի չեն» հասկացութիւնը, յետագայ շրջանի մատենագիրների կողմից, պատմական իմաստափոխութեան պատճառով, ընկալուել է յարակից, բայց եւ տարբեր իմաստատրմամբ, այն է՝ «չեն հերքում» որպէս...: Այստեղից եւ՝ դանիելեան գրերի հայերէն, բայց «պակասատր» լինելու վարկածը, որի վրայ էլ, ահա, խաբսխուած է, մեր կարծիքով, այն հակապատմական տեսութիւնը, ըստ որի, իբր, Մաշտոցը ոչ թէ հայերէն գրերի գիտարարն ու ստեղծողն է՝ ամբողջութեամբ վերցրած, այլ՝ պարզապէս արդէն իսկ իրենցից առաջ առկայ գրերի ամբողջացնողն ու համարողը, այլ կերպ ասած՝ Մաշտոցը դուրս է բերում որպէս հայերէն այբուբենի «բարեմտողիչ» միայն...: Մինչդեռ «անկարող լինել» կամ «ի վիճակի չլինել» եւ «չհերքել» հասկացութիւնները բոլորովին այլ բաներ են: Առաջին դէպքում՝ դանիելեան գրերը կարող էին իրենց բանակով համապատասխան լինել հայերէնի հնչոյթներին, բայց եւ այնպէս «անկարող լինել» կամ «ի վիճակի չլինել» արտայայտելու հայերէնի յատուկ հնչոյթային ամբողջ համակարգը, իսկ երկրորդ դէպքում՝ կարող էին համապատասխան լինել հայերէնի հնչոյթների համարժէքներին, բայց քանակով՝ պակասատր կամ թերի լինել...: Այնինչ Կորիւնի մօտ նշումը բառական կապակցութիւնը կիրառուել է առաջին իմաստով: Նոյն այս վրիպումը, տարբարախտաբար, առկայ է նաեւ արեղեանական բարգմանութեան մէջ (տես Կորիւն, Վարք Մաշտոցի, էջ 46):

² Կորիւն, նշումը աշխատ., էջ 46:
³ Արուած պնդումը ամրապնդում է նաեւ նրանով, որ Միջնադարի մեր մատենագիրներից ոճանք, այդ բուն եւ Վարդան Արեւելցի, հայերէն գրահամակարգի բացառապէս բոլոր ձայնատրների միակ հեղինակն են համարում Մաշտոցին՝ դրանով իսկ լեզւային հաստատելով, որ դանիելեան գրերը սուկ բաղաձայնական համակարգին պատկանող սեմական գրասիստեմ են եղել: Դա իսկապէս

Ուշագրաւ է եւ այն, որ պատմահայր Խորենացին, որը դանիելեան գրերի ոչ-հայեցի բնույթի հարցում լիովին համերաշխ է Կորիւնի հետ, նշում է միաժամանակ դանիելեան գրերի անգորութիւնը հայերէն բառերի վանկերն ու վանկային փոփոխութիւնները ստուգապէս արտայայտելու խնդրում: Աւելին. Խորենացին մինչեւ անգամ «մուրացածոյ» է համարում դանիելեան գրերը՝ հայոց լեզուի համար իրենց անյարիր ու խորք բնույթի պատճառով. «Որոց (իմա՝ Սահակայ եւ Մեսրոպայ - Լ.Խ.) ուսեալ, եւ թեւածելով ընդ նոսա տղայոց զանս սակաս, տեղեկացեալ զիտացին՝ ո՛չ լինել բաւական այնու նշանագրոք ստոյգ հոլովել զհեզեանայ բառից հայկականաց հազներգարար, մուրացածոյին այնուիկ զժաղութեամբ»¹:

Հետաքրքրական է արձանագրել նաեւ, որ Վարդան Արեւելցին մի այլ առիթով «բացատրութիւն» է տալիս, թէ ինչո՞ւ դանիելեան գրերը «չկարելին բանել» հին հայերէնով, որով ո՛չ միայն չի հիմնաւորում դանիելեան գրերի հին հայկական գրեր լինելու նրա պնդումը, այլեւ, որքան էլ տարօրինակ է, ինքնաժխտմամբ իսպառ հերքում է: Այսպէս, նա իր «Պատմութիւն Տիեզերական» աշխատութեան մէջ դանիելեան գրերի մասին ասում է, որ եթէ այդ գրերը դեռեւս նախնիների աչքում արժէք չեն ներկայացրել («անհոգացեալ եղել»), ապա պատճառը հէնց դանիելեան գրերի էական մի թերութիւնն էր, որն արտայայտուել է, ոչ աւել ոչ պակաս՝ հայոց լեզուի հնչոյթային «ընդարձակութիւնը» պարփակելու եւ «պարզելու» իրենց անկարողութեամբ, ուստի եւ նախնիները ստիպուած բարարարուել են («շատացեալք») յունական, ասորական եւ պարսկական գրերի գործածութեամբ, սակայն Մեսրոպը դրանցով եւս չի կարողանում Աստուածաշունչը հայերէնի փոխադրել. «... Սուրբն Մեսրոպ յորինէ հայերէն դպրութիւն՝ քսան եւ երկու գիր առ Դանիելի ասորոյ զտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս անհոգացեալ եղել յառաջնոցն՝ յոյն եւ ասորի եւ պարսիկ գրով շատացեալք: Եւ Մեսրոպ ոչ կարէր նորօք փոխել զԱստուածաշունչ մատեանս ի հայ բարբառ»²:

Նման հարցադրումը տեղիք է տալիս մի շարք լուրջ առարկութիւնների, որոնք ըստ էութեան խարխուլում են վարդանեան այս նոր տեսութիւնը, որը բխել է, յամենայն դէպս, Կորիւնի, Բուզանդի, Փարպեցու եւ Խորենացու վկայութիւններից: Այստեղ, բնականաբար, լեզուաբանական բնույթի ծանրակշիռ հարց է ծագում, որին Արեւելցու տուած պատասխանով հիմնովին հերքում է այդ պնդումի հաւանականութեան նշոյլն անգամ. էլ ի՞նչ հայկական գրերի մասին կարող է խօսք լինել, եթէ դրանք չեն արտացոլել հայերէնի հնչոյթային համակարգը...: Ինչպէս տեսնում ենք՝ ինքնաժխտումը ակնյայտ է:

Բացի դրանից, ինքնըստինքեան ծառանում է, լեզուաբանական առումով, մի առարկութիւն եւս. եթէ նոյնիսկ մի պահ ընդունենք, որ դանիելեան 22 գրերը հին հայկական գրերն են, ապա դարձեալ դա անյարիր պնդում կը լինէր: Բանն այն է, որ որքան էլ վաղեմութիւն ունենային այդ գրերը, այնուամենայնիւ անհնար է պատկերացնել, որ հին հայերէնի հնչոյթային համակարգն արտացոլող այդ գրերի կիրառութիւնից (թէեւ բացառում է այդ ինչպէս Կորիւնի հաւաստմամբ, այնպէս եւ

ինքնին չափազանց պերճախօս վկայութիւն է՝ յամենայնդէպս ո՛չ յօգուտ այդ մատենագիրների հայեցողաբար պաշտպանած այն թէզիսն, որ իբր դանիելեան գրերը «հին հայկական» գրեր են եղել, եւ Մաշտոցը, որպէս թէ, ընդունելով դրանք՝ պարզապէս յանդուներ է կատարել ամբողջացնելու համար հայերէնի հնչոյթային համակարգը...:

¹ Մովսիսի Խորենացու, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յակոբեան, Տփղիս, 1913, էջ 326:

² Պատմութիւն Տիեզերական, էջ 70:

բուն իսկ պատմական իրողութեամբ) յետոյ մինչև մաշտոցեան ժամանակաշրջանն ընդգրկող հայերէնի հնչոյթային համակարգը կարող էր աճել *14 հնչոյթային միատրոններով*, որպիսին ներկայացնում է մեսրոպեան հայերէնը (36 հնչոյթ): Ընդհանուր լեզուաբանութեան պատմութիւնից յայտնի է, որ հարիւրամեակներ են հարկաւոր այս կամ այն ժողովրդի կենդանի լեզուի արտասանական բազայում *բլկուզե մէկ նոր հնչոյթ* առաջացնելու համար: Հեռու չզնայու համար դարձեալ վերցնենք հայերէնի պարագան. նրանում միայն *Ֆ* հնչոյթի առաջացման համար պահանջուել է, մեր մատենագրութեան սկզբնատրումից հաշուած, շուրջ եօթը հարիւրամեակ...:

Վարդան Արեւելցին, այնուամենայնիւ, ճիգ է քափում դանիելեան գրերը հայկական հնագոյն գրեր ներկայացնելու՝ որոշ մանրամասներում տարբերելով Կորիւնից. այդ մանրամասները, սակայն, պարզապէս շեղումներ են, որոնք սոսկ հայեցողական բնոյթ ունեն: Ըստ Վարդան Արեւելցու, երբ Մաշտոցն ու Մահակը Հաբէլին ուղարկում են Դանիէլի մօտ կարծեցեալ հայկական գրերը բերելու, Դանիէլը նրան ոչ թէ 22 նշանագրեր է յանձնում, ինչպէս Կորիւնն է հաւաստում, այլ՝ 17: Իսկ հինգը պահում է իր մօտ՝ իբրեւ թէ դրանց հնչոյթային արժէքը «անյայտ» է: Նման պնդումից, բնականաբար, այն տպաւորութիւնն է ստացում, որ եթէ Հաբէլի բերած 17 նշանագրերով հնարաւոր չեղաւ Մաշտոցի համար հայերէնի հնչոյթային ամբողջ «հարստութիւնը» ընդգրկել, ապա պատճառը ոչ թէ այդ տառերի այլալեզու գրասխտեմ լինելն էր, այլ՝ պակասաւոր լինելու հանգամանքը: Դրա համար էլ Մաշտոցը այս անգամ անձամբ է լինում Դանիէլի մօտ: Երկուսով զուլս-զլլսի տալով երբ պարզում են հինգ նշանագրերի հնչոյթային արժէքները, ապա դարձեալ նկատում են, որ դրանք չեն համապատասխանում հայերէնին. «Եւ ե(ր)բ դարձեալ ի խնդիր եղեն,- գրում է Վարդան Արեւելցին,- գտաւ առ Դանիէլ անուն ասորի եպիսկոպոսի եւ Մահակ եւ Մեսրոբ առաքեցին զԱբել անուն երեց ասորի. եւ երբ. եւ զի չբերեր լիով զհարստութիւն լեզուիս, զնաց դարձեալ Մեսրոբ առ նոյն եպիսկոպոսն Դանիէլ եւ սակաւ ինչ աշխատեալ են եւ չկարացին ինչ աւելի շահիլ, զի առաջինն ի նոցանէ առած ԺԷ (17) զիր, զի զԵ (5) զիրն թողեալ էր եւ չէր քարզմանեալ: Ե(ր)բ ջան արին, թե քարզմանենք ըստ մեր լեզուիս՝ չգայր ի բան այն Ե զիրն»¹:

Այս քաղուածքից հետեւցում է երկու պնդում. Վարդան Արեւելցու առաջ քաշած վարկածի համաձայն՝ ա) դանիելեան նշանագրերից միայն 17ն են լիովին համապատասխանում հայերէնի հնչոյթային ամբողջ «հարստութեանը» պակասաւոր լինելու պատճառով, ընդամին՝ հէնց դրանք էլ դիտում են որպէս ... «հին հայկական» գրեր, որոնք եւ, իբր, ընդունում են Մաշտոցի կողմից որպէս առձեռն՝ պատրաստի տառեր: Բ) Դանիելեան գրերից միայն հինգը չեն համապատասխանում հայերէնի հնչոյթային միատրոնների («չգայր ի բան այն Ե (5) զիրն»):

Այսպէս, ուրեմն, Վարդան Արեւելցու կարծիքով՝ մաշտոցեան 36 գրերից 17ը ներկայացնում են դանիելեան գրերը: Իսկ որո՞նք են դրանք: Այդ մասին Վարդան Արեւելցին որոշակի ոչինչ չի ասում, բայց յաջորդաբար քարկում է «աստուածապարզեւ» այն 19 գրերը, որոնք, իբր, Մաշտոցի միջնորդութեամբ են տրուել. «Ո՞ր են գրերն զոր պարզեւեաց աստուած» հարցին Վարդան Արեւելցին անմիջապէս յարում է. «Պատասխանի. այս են. Ջ (6) զիր ձայնաւոր եւ ԺԳ (13) զիր անձայն: Եւ ձայնաւորք են այս՝ ա, ե, ո, ի, ը, յ. եւ անձայնք են այս՝ ք, գ, ժ, ծ, ձ, շ, ջ,

վ, ց, շ, ճ, յ, փ. ընդամենն ԺԹ (19)»¹: Մրանք, ըստ Վարդան Արեւելցու վարկածի, Մաշտոցի ստեղծած գրերն են: Եթէ զիտենք ամբողջի գումարը (հայերէնի 36) գրերը առանձին միատրոններով ու արժէքներով եւ նրա գումարից տրուած է միայն մի մասի քանակային մեծութիւնը իր առանձին միատրոնների թուարկումով, ապա հեշտութեամբ պարզել հնարաւոր է բաղկացուցիչ անյայտ մասի քանակային մեծութիւնը իր առանձին միատրոններով. հայերէնի հնչոյթային համակարգն են ներկայացնում՝ ա, ք, գ, դ, ե, զ, է, ը, ք, ժ, ի, ւ, յ, ծ, կ, հ, ձ, դ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, ր, ց, լ, փ, ք՝ 36 գրերը: Մաշտոցի ստեղծածներն են (ըստ Վարդան Արեւելցու)՝ ա, ք, դ, ե, ը, ժ, ի, ծ, ձ, շ, ջ, վ, ց, լ, փ գրերը: Հետեւաբար եւ կարծեցեալ դանիելեան գրերն են՝ 36 գրերից համաձայնաբար կոչուած մաշտոցեան 19 գրերը՝ համապատասխան արժէքային միատրոններով. դրանք են՝ դ, գ, է, ք, ւ, յ, կ, հ, դ, մ, ն, պ, ո, ս, տ, ր, ք գրերը,- դանիելեան հէնց այն 17 տառերը, որոնց քանակի մասին խօսել էր Վարդան Արեւելցին²:

Այսպէս, ուրեմն, Վարդան Արեւելցին Մաշտոցին դիտում է ոչ թէ որպէս հայերէն այբուբենի զիտարար՝ ամբողջութեամբ վերցրած, այլ՝ պարզապէս «բարեփոխիչ» եւ միայն առանձին գրերի ստեղծող...:

Բացի Ասողիկից, որի մասին ասուեց վերը, Մաշտոցին «բարենորոգչի» յանիւրաւի դեր է յատկացնում իր Ներքողականում նաեւ Վարդան Արեւելցու ժամանակակից Կարապետ Մասնեցին՝ մինեւոյն անձնապատասխան հայեցողութիւնից մեկնելով: Նկատենք, որ նրա Ներքողականը մտքի փայլատակումների եւ դպրութեան տեսութեանն առնչուող իր հարցադրումների ընդգրկման տեսակետից շատ բանով է զիջում Վարդան Արեւելցու Ներքողականին: Բայց մեզ հետաքրքրող հարցում Կարապետ Մասնեցին տարբերում է Վարդան Արեւելցուց միայն հայերէնի գրասխտեմի հիմքում դրամ զանիելեան եւ մեսրոպատեղծ գրերի վերաբերեալ վարկածի քանակային յարաբերութիւնը ներկայացնելիս: Մասնեցու համաձայն՝ հայերէնի գրասխտեմում Մաշտոցը, իբր, անառարկելիօրէն ընդունել է դանիելեան 22 գրերն էլ հաւասարապէս, իսկ մնացած 14 գրերը, որոնցով եւ ամբողջացում է հայերէնի հնչոյթային համակարգը, ստեղծում է ինքը. «... Առեալ ընդ իւր զիմաստունն Դանիէլ՝ եւ ժամանէ առ կոչողն իւր՝ թարգմանելով զվաղուց արարեալ նշանսն՝ զկրկին տասն եւ զերկու տասն (22), որք ոչ բաւականանային բայից մերոց ... ծնանէր ... զՏէրն հրեշտակաց՝ մարգարտական աչաւք՝ որ զրէր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառ»³:

Ուշ Միջնադարում շրջանառութեան մէջ դրուած այս կեղծ ու ժամանակավրէպ «տեսութիւնը» Մաշտոցին սոսկ իբրեւ «բարենորոգիչ» ներկայացնելու վերաբերեալ իր կողմնակիցներն ունեցաւ մինչև անգամ XX դարի հայագիտական ու պատ-

¹ Մաշտոցի անուն Մատենադարան, ձեռ. 2544, ք. 165բ:

¹ Նոյն տեղում, ք. 165ա:

² Ի դէպ, Փ. Անթրաքեանը ճիշդ չպատկերացնելով դանիելեան-մաշտոցեան գրերի փոխարարութեան վարդանեան հարցադրումը՝ վրիպել է. նրան թուացել է, թէ Վարդան Արեւելցին 19 գրերի մասին խօսելիս, իբր, նկատի է ունեցել ասորերէնը: Մինչդեռ, իրականում, Վարդան Արեւելցին այդ գրերի կապակցութեամբ նկատի է ունեցել *հայերէնի հնչոյթային համակարգը* եւ *նրանում համապատասխանող հնչոյթային միատրոնները* միայն, որոնք եւ, իբր, Մաշտոցն է ստեղծել: Հետեւաբար՝ հարցի հետ ոչ մի առնչութիւն չունեն Փ. Անթրաքեանի փորձերը կիլիկեան հայերէնի արտասանական օգնութեանը դիմելով «հիմնատրելու» 19 նշանագրերի կարծեցեալ աղերսակցութիւնը ասորերէնում նոյնանման հնչոյթների հետ (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Թ. 8, 1967, էջ 175):

³ *Կարապետ եպ. Մասնեցի*, Ներքողեան, Յաղագս վարուց եւ մահուան ս. Վարդապետին Մեսրոբայ, Վարդաշապատ, 1897, էջ 41, 43-44:

մագիտական գրականության մեջ՝ յանձինս Բ. Պատկանեանի, Ղ. Ինճիճեանի, Մ. Էմինի, Իս. Յարութիւնեանի, Իոզ. Մարկուարտի, Մ. Բրոստի, Վ. Լանգլուայի, եւ մեր օրերում՝ Մ. Ջանաշիայի, Ա. Գ. Աբրահամեանի եւ այլոց:

Պատմական ճշմարտութիւնն այն է, սակայն, որ դանիելեան գրերի դերն ու նշանակութիւնը մերոպեան գրահամակարգի ստեղծման գործում կայանում է հետեւեալում. դանիելեան գրերը պարզապէս մասամբ նպաստել են հայերէնի հնչոյթային համակարգի բացայայտմանը՝ դրանց երկամեայ կիրառական եւ փորձառական շրջանում: Այս իմաստով միանգամայն արդարացի է պրոֆ. Ա. Ա. Աբրահամեանը, երբ գրում է. «Անհրաժեշտ էր որեւէ կերպ արձանագրել հնչիւնները, գրի առնել հայերէնից խօսքի նմուշներ: Այս ուղղութեամբ Մերոպ Մաշտոցը որոշ փորձ ունէր դանիելեան նշանագրերի գործադրման ժամանակից, որը, թէև դրական արդիւնք չէր տուել հայերէնի հնչիւնական համակարգը լրիւ չափով արտայայտելու առումով, սակայն կարեւոր նշանակութիւն էր ունեցել լեզուի հնչիւնական կողմի ճանաչման համար: Այլ կերպ ասած՝ դանիելեան նշանագրերի անբարարարութեան պարզումն էլ զգալի քայլ էր հայոց լեզուի հնչիւնական դրութեան պատկերացման համար»¹:

Հարկ է նշել, որ գիտական ճշմարտութիւնը Կորինի կողմն է, ըստ որի Մաշտոցը առաջին հայ լեզուաբանն է, որը գիտական մեծագոյն ճշգրտութեամբ պարզում է իր ժամանակի հայերէնի հնչոյթային բարդ համակարգը նաեւ օտար գրերի օգնութեամբ եւ ստեղծում է *հայերէնի հնչոյթային համակարգը լրիւն արտացոլող հայերէն գրերը, ըստ որում հանճարեղօրէն կատարելագործուած ինքնատիպ մի գրասխտեան՝ գրաստակերային միասնական սկզբունքով*: Սա՛ է Մաշտոցի խոշոր ծառայութիւնը մեր մշակութիւն՝ իբրեւ հայ դպրութեան ու մատենագրութեան հիմնադիր...:

Բոլոր այն հայագէտները, որոնք բռնածիճ կերպով ճիգ են քափել այս կամ այն մերոպատա գիրը բխեցնել յունարէնից կամ հնագոյն այլ լեզուներից՝ չարաչար սխալում են: Որքան էլ տարօրինակ է, չնայած այն բանին, որ իրենց փաստարկումներում այդ հայագէտները ամենեւին չեն պնդում, որ մերոպեան գրասխտեանի այս կամ այն գրաստակերը ուղղակի նման է այլալեզու գրասխտեաններից *կոնկրետաբար* այսինչին կամ այնինչին (այդ ասել չեն կարող, որովհետեւ մերոպեան գրասխտեանը ոչ մի հիմք չի տալիս դրա համար), բայց եւ այնպէս են մեկնաբանում, որ Մաշտոցը, վերցնելով, դիցուք, յունարէնից այս կամ այն տառը, դրա հիման վրայ «ձեւել» է, իբր, համապատասխան հայերէն գիրը՝ միայն թէ գծերի տարբեր դիրքադրումներ տալով դրան: Նման բացատրութիւնը գիտական չէ եւ հակասում է նոյնիսկ այդ փաստարկման ելակետին: Ըստ որում իրենց կանխակալ պնդումը համոզական դարձնելու համար հայերէնի այբուբենի նկատմամբ թոյլ են տալիս այնպիսի ազատ ձեւափոխումներով «հիմնադրել» իրենց տեսակետը, որ անթոյլատրելի է. ընդամին՝ նրանք չեն անդրադառնում, որ իրենց առաջարկած «ձեւափոխումների» հետեւանքով ակամայից մինչեւ իսկ խախտում են մերոպեան այբուբենի կառուցուածքային բոլոր սկզբունքները՝ չթողնելով նրա կերպարանքի նշոյն անգամ: Որքան էլ զարմանալի է, բայց եւ աղաղակող փաստ է միաժամանակ, որ ուրիշ ոչ մի այբուբենի նկատմամբ նման «ազատ ձեւափոխումներ» ԵՐԲԵԶ չեն առաջադրում՝ նրա ծագումնաբանութիւնը

¹ Ա. Ա. Աբրահամեան, Մերոպ Մաշտոցը եւ հայ գրերի ստեղծման հանգամանքներն ու սկզբունքները, տեւս «Սովետական մանկավարժ» ամսագիրը, 1962, № 5, էջ 33-34:

կամ ընդհանրութիւնը անպայմանօրէն մի ուրիշից բխեցնելու սեւեռուն դիտարութեանը յազուրդ տալու համար: Ի դէպ, արտաքին հեռատոր նմանութիւններ տարբեր այբուբենների առանձին տառերի միջեւ միշտ էլ կարելի է մատնանշել, քանի որ դրանք ընդհանրապէս անխտասափելի են այբուբենների համակարգերում: Սակայն դա երբեք ելակետ եւ հիմք չի կարող ծառայել այբուբենների ծագումնաբանական աղերսակցութիւնը որոշելու: Իրականում՝ գրահամակարգերի բնոյթն ու ծագումնաբանական աղերսակցութիւնը գիտականօրէն ճիշդ որոշելու համար պարտադիր անհրաժեշտութիւն է ելակետ եւ հիմք ընդունել դրանց *յօրինման սկզբունքների եւ արտայայտչա-ռճական առանձնայատկութիւնների ընդհանրութիւնը կամ տարբերութիւնը, որով աղերսում կամ հակադրում են գրասխտեանները*:

Բայց Վարդան Արեւելցին առաջադրած իր տեսութեան մէջ հետեւողական չէ, որովհետեւ դրան հակասող երկու վարկած եւս է առաջ քաշում, որոնք նոյնպէս խոցելի են առաջին իսկ բնական մօտեցման դէպքում: Իսկ այդ նշանակում է, որ Վարդան Արեւելցին չի ունեցել որոշակի եւ կայուն տեսակետ մաշտոցեան գրերի առաջացման վերաբերեալ. նա անընդհատ երկութիւն է ունեցել՝ մերթ այս, մերթ այն տեսակետն արտայայտելով ու պաշտպանելով:

Այսպէս, հակասելով վերը մեր քննած իր այն պնդմանը, ըստ որի Մաշտոցի ստեղծած գրերը, իբր, 19-ն են (ա, ե, ո, ի, ը, շ, զ, ժ, ճ, ձ, ն, շ, վ, ց, ջ, շ, յ, փ), իր նոյն աշխատութեան մի այլ էջում, մոռանալով իր նախորդ կարծիքը, գտնում է, որ դրանք 22-ն են. «Ապա յաղաթս ապաւինեալ տեսանէր մարգարէական աչաւք ձեռին աջոյ, որ գրեր ի վերայ վիմի եւ ամենայն հանգամանքն եւ որպիսութիւնքն տպաւորեցաւ ի սիրտն եւ վաղվաղակի ստեղծանէր ԺԵ (15) գիր եւ այն որ է (7) ասեն...»¹: Այս դէպքում, սակայն, հայերէնի գրասխտեանը ամբողջացնելու համար մնում է 14 գիր, որոնց հեղինակումը դարձեալ վերագրում է Մաշտոցին՝ գրի փառաբանմանը նուիրում իր Ներբողականում եւ պատմագրական աշխատութեան մէջ. «Եւ Մերոպ ոչ կարացեալ նոքօք (իմա՝ դանիելեան գրերով - Լ.Խ.) փոխել զԱստուածաշունչ մատնանս ի հայ բարբառ, վասն որոյ առօրից տուեալն զանձն՝ գործակցութեամբ սրբոյն Սահակայն, տայ նաեւ Աստուած չորեքտասան գիրս (14) աջովն իւրով դրոշմեալ առաջի նորա...»²: Ինչի՞ հիման վրայ եւ ի՞նչը նկատի ունենալով արում են նման անյարիր ու հակասական պնդումներ՝ դժուար չէ ասել: Վարդան Արեւելցին, իրականում, չուրի յստակ եւ որոշակի հայեցակետ, որից էլ բխում են նման ընկրկումներն ու հակասութիւնները: Եթէ նրա այս ամբողջ «տեսութիւնը» խարսխտած լինէր պատմական իրողութիւնների փաստաբանական վերլուծութեան վրայ (քանի որ ինքը յետնագոյն շրջանի պատմիչ է, եւ ո՛չ թէ ժամանակակից կամ դրան մերձագոյն հեղինակ) եւ ո՛չ՝ հայեցողական ենթադրութիւնների, ապա եւ նման հակասութիւններ, բնականաբար, թոյլ չէին տրուի: Բացի այդ, թում է, թէ Վարդան Արեւելցու (եւ ո՛չ միայն Վարդան Արեւելցու) վրայ ճնշել է, ամենայն հաւանականութեամբ, հրէական դպրութեան հիմնադիր համարուող Եզրասի կերպարը, որին եւ ամէն կերպ աշխատել է «նմանեցնել» հայկական գրի եւ դպրութեան հիմնադիր Մաշտոցին՝ անշուշտ բարեմիտ դիտարողութիւնից դրդուած: Ուղղագիծ այս նմանեցումը, բնականաբար, ակամայից հարկադրել էր Վարդան Արեւելցուն անտեսել մասամբ պատմական այն կարեւորագոյն եւ էական փաստերն ու առանձնայատկութիւնները, որոնք տարբեր էին հրէական գրի ու

¹ Մաշտոցի անուն Մատենադարան, ձեռ. 2544, ք. 166ա:
² «Պատմութիւն Տիեզերական», էջ 70: Տե՛ս նաեւ «Նորին Վարդանայ վարդապետի բան ասացեալ գովեստի պատմագրաբար...», «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 395-396:

դպրութեան ստեղծման հանգամանքներից եւ իւրայատուկ էին միայն հայկական իրականութեանը: Բայց եւ նմանողութեան հրապուրանքը եւ երեւոյթների նկատմամբ քննական հայեացքի բացակայութիւնը Միջնադարի ուսումնականների մօտ այնքան ուժեղ է եղել, որ ամէն մի կարծիք «գիտական» համոզականութեան կամ «փաստարկի» պատրանք է ստեղծել այդ դարաշրջանում:

Հնագոյն այս երկու ժողովուրդների դպրութեան հիմնադիրների նմանեցման վարդանեան հարցադրմանը հանդիպում ենք նրա պատմագրական երկում՝ Կիլիկիայում յայտնաբերուած ախպէս կոչուած հեթանոս հայ թագաւորների անունը կրող դրամների առնչութեամբ:

Իրօք, շատ տարակուսելի պնդում է Վարդան Արեւելցու հաւաստումն այն մասին, որ Կիլիկիայում հայերէն գրերով դրոշմուած դրամ է գտնուել Հայոց հեթանոս թագաւորների անունների մակագրութեամբ, իսկ Մաշտոցը, որպէս թէ ամբողջացրել է այդ մակագրութիւնը դրոշմող *հին հայկական նշանագրերը իր նոր հնարած տառերով*, որոնցով եւ սկիզբ են առել մաշտոցեան դպրութիւնն ու մատնագրութիւնը: Վարդան Արեւելցին Մաշտոցին, նրա կատարած պատմական ԵԶԱԿԻ ծառայութեան համար, համեմատում է հրեական վերջին մարգարէի՝ Եզրասի հետ, համարելով Մաշտոցին իբրեւ «Նոր Եզրաս»: Ըստ հնագոյն մատենագրական տուեալների՝ Եզրասը համարում է հրեական դպրութեան մեծագոյն նորարարը. քաղղէացիները, երբ գրաւում են Երուսաղէմը, այրում են նաեւ մովսիսական նշանագրերով գրուած աստուածաշունչ գրքերը: Մակայն Եզրասը կարողանում է մովսիսական տառերի փոխարէն կիրառել քաղղէական նշանագրերը եւ մէկ հատորում ամփոփել Աստուածաշունչը, որը եւ գործածութեան մէջ է գտնուում հրեաների մօտ առ այսօր՝: «Եւ զի լեալ է հայերէն գիր ի հնոյն, վկայեցաւ ի ժամանակա Լեւոնի արքայի,- գրում է Վարդան Արեւելցին,- զի գտաւ դրամ ի Կիլիկիա հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն հայկազանց, զորոյ գրերութիւն ելից նորս մեր Եզրաս աստուածախառն շնորհաւք ցեալ-նորոզիչ նորոյս Իսրայելի եւ կարգաւորիչ...»: Այս քաղղէացից ակնյայտ է դառնում, որ Մաշտոցին բնութագրելով որպէս հայ դպրութեան «Նոր Եզրաս», Վարդան Արեւելցին գնահատում է նրան իբրեւ հայ մատենագրութեան սկզբնաւորողի. նման հաւաստումը, իհարկէ, ընդունելի է իր ճշմարտացիութեամբ: Բայց եւ այդ բնութագրումով միաժամանակ Վարդան Արեւելցին պաշտպանում է իր ոչ ճիշդ տեսակէտն այն մասին, որ, իբր, Մաշտոցը փոխ է առել հին հայկական նշանագրերը եւ աւելացնելով «պակասող» նշանագրերը, պարզապէս ամբողջացրել է հայկական այբուբենը: Այս դէպքում եթէ չի ասում, որ դրամի վրայ դրոշմուած նշանագրերը հենց դանիելեան նշանագրերն են, ապա պէտք է կռահել այն: Նման պնդումով, անշուշտ, ակամայից եւ օրինելիօրէն նսեմացում է Մաշտոցի գրաստեղծական հանճարեղ սխրանքը եւ հայերէն գրերի գիտարարի անուրանալի պատիւը. մի փաստ, որ աներկբայօրէն հաւաստում է դեռեւս հինգերորդ դարի աղբիւրներով: Ըստ պատմագիտական տուեալների, Մաշտոցը խորաքնին հետազօտութեան ենթարկելով *իր ժամանակի՝ Ե. դարի խօսակցական հայերէնի արտասանական առանձնայատկութիւնները, հնչոյթային վերլուծութեամբ գիտականօրէն պարզում է հայերէնի հնչոյթային համակարգը եւ իւրաքանչիւր հնչոյթի համար ստեղծում մէկ գիր՝ դառնալով հայեցի դպրութեան հանճարեղ գիտարարը եւ մատենագրութեան հիմնադիրը միաժամանակ:*

¹ Տե՛ս Մատթոս վ. Մաղաք-Թեոփիլեանց, Կենսագրութիւն երեւելի արանց, Վենետիկ, 1809, հ. Ա, էջ 217-218: Մ. Բժշկեան, Համաոսոս նկարագիր վարուց երեւելի արանց, Վենետիկ, 850, էջ 278:

Ի բարեբախտութիւն հայ դպրութեան, պատմական արժանահաւատ աղբիւրներում ոչ միայն պարզապէս հաւաստում է հայ գրերի հեղինակի ինքնութիւնը, այլեւ, որ կարելի է, հանգամանօրէն տրուում են այդ հեղինակի կատարած մեծ գիտին վերաբերող ամենաարժէքաւոր մանրամասները:

Առաջին. ամենահաւաստի աղբիւրի՝ Կորիւնի վկայմամբ Եղեսիայում է իրագործում Մաշտոցը գիտական իր հոյակապ մտայղացումը՝ արարելով հայերէն լեզուի բոլոր հնչոյթների տառային ձեւաւորումը իբրեւ ինքնուրոյն եւ ինքնատիպ հայկական գրահամակարգ. «Հայրական չափուն ծնեալ ծնունդ նորոզ եւ սքանչելի սուրբ աջովն իւրով նշանագիրս հայերէն լեզուին»¹, - հանդիսատրապէս յայտարարում է Կորիւնը: Մինչ այդ՝ Մաշտոցը, իբրեւ խորագէտ լեզուաբան, պարզել էր հայերէնի հնչոյթային համակարգը իր բարդ եւ հարուստ բոլոր առանձնյատկութիւնների բացայայտմամբ: Այս առթիւ հարկ է նշել, որ թէկուզ եւ միայն հայերէնի հնչոյթային արժէքների որոշումը հնչիւնական ամենաբազմազան ու բազմաթիւ տարբերակների յարաբերութեամբ՝ գիտական վիթխարի յայտնագործութիւն էր հեղինակի կողմից: Նա հնչոյթային առումով արժէքաւորել է («նշանակեալ») իր ստեղծած գրերը,- հաւաստում է Կորիւնը, եւ պէտք է ասել, որ միայն այդքանը Մաշտոցին կը յաւերժացնէր մեր մշակոյթի պատմութեան մէջ՝ հայոց լեզուի գրասիւստեմի ստեղծման ամենաբարդ խնդրի հանգուցալուծման գործում վերապահելով նրան առաջին եւ ամենամեծ պատիւը: Վերջին հաշուով՝ գրասիւստեմի բնոյթը, լեզուաբանական առումով, ստորադաս նշանակութիւն ունի բուն իսկ որեւէ լեզուի հնչոյթային համակարգի բացայայտման յարաբերութեամբ: Այս հանգամանքը դեռեւս դիտել է տուել հայագէտ Ի.Ռ. Մարկուարտը՝ երբ վերջինս իրաւացիօրէն նշում է. «Մաշտոցի այբուբենը բաղաձայնների կուտակումներով հարուստ հայկական ինքնատիպ հնչիւնական համակարգի այնպիսի մի զարմանալի ծանօթութիւն է բացայայտում իր հեղինակի մօտ, որ մենք չենք կարող մեր զարմանքը չյայտնել այդ հեղինակին՝ եթէ նոյնիսկ նա սահմանափակուած լինէր միայն մի օտար այբուբեն հայերէնին յարմարեցնելով եւ այն մի շարք նշաններով հարստացնելով»²: Բանն այն է, որ ամէն մի գրասիւստեմ սոսկ պայմանական նշանների համակարգ է, որը եւ կարող է փոխառուել կամ համադրական կարգով ամբողջացուել մի շարք գրասիւստեմներից: Աւելին. ժողովուրդների գրաւոր մշակոյթի պատմութիւնից յայտնի է, որ միեւնոյն գրասիւստեմը այլ լեզուների համար կիրառելիս նրա գրասիւստեմային միատրոնները կարող են արտայայտել բոլորովին տարբեր հնչոյթային արժէքներ: Այդպիսիք են Մաշտոցի ստեղծած հայերէն, աղուաներէն եւ հին վրացերէն գրասիւստեմները, որոնք հնչոյթային տարբեր արժէքներ են ներկայացրել համապատասխան լեզուների գրութիւններում³: Բայց եթէ այս կամ այն նորաստեղծ գրասիւստեմը կատարելագործուած բնոյթ ունի, որպիսին մաշտոցեան գրահամակարգն է, ապա դա միասնական կուռ ոճով եւ սկզբունքների ճշգրտութեամբ չափազանց բարդ խնդիր է ներկայացնում, որի յաջող իրագործումը, բնականաբար, գիտական հանճարեղ մտայղացման արդիւնք կարող է լինել միայն:

¹ Կորիւն, Վարք Մաշտոցի, էջ 48:

² Ի. Մարկուարտ, Հայոց այբուբենի ծագումը եւ Մ. Մաշտոցի կենսագրութիւնը, տե՛ս «Մեսրոպ Մաշտոց», յօդուածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 127:

³ Տե՛ս Գուրգէն Մեալ, Մեսրոպ Մաշտոց, հայկական գրերի ու մատենագրութեան սկզբնաւորումը, էջ 39-40, համեմատիւր մասն 45-48 էջերում զետեղուած գրանմուշները:

Մաշտոցը, սակայն, ոչ միայն հնչոյթաբանական վերլուծութեան շնորհիւ գիտական սպառնիչ ճշգրտութեամբ պարզեց հայերէնի հնչոյթները, այլև ստեղծեց դրանք դրսևտրող գրապատկերների մի ինքնատիպ համակարգ, որի ռճական առանձնայատկութիւնները ընդգծուած ցայտունութեամբ տարբերում են կիրառութեան մէջ եղած ժամանակի բոլոր այբուբեններից: Այս առթիւ հարկ է նշել, որ Մաշտոցը իբրև իր գրահամակարգի պատկերման արտայայտած ընդունել է ոչ թէ նոյնականութեան սկզբունքը, այսինքն օտար այբուբենների նմանողութեամբ նոյնաձեւ կամ նմանաձեւ գրերի ստեղծումը հայերէնի գրահամակարգի համար, այլ պայմանականութեան սկզբունքը, որն իր հիմքում ունի տարբերակման ու հակադրման օրէնքը, այսինքն՝ իւրաքանչիւր գրապատկեր մաշտոցեան համակարգում պէտք է տարբերուէր եւ հակադրուէր այլ գրահամակարգերի գրաձեւերին եւ պայմանականօրէն այլաձեւ բնոյթ ստանար: Այսպիսով, Մաշտոցը, իրականում, ստեղծեց բոլորովին նոր եւ ինքնատիպ՝ իր սեփական գրաճաշակին բարարարութիւն տալով պայմանական գրապատկերների համակարգ՝ ռճական միասնական սկզբունքների ցայտուն դրսևտրմամբ: Ըստ որում հայերէնի հնչոյթային համակարգի ամբողջական արտացոլման համար Մաշտոցը առաջնորդուել է իւրաքանչիւր նոյնաբնոյթ գրախմբի իւրաքանչիւր գրապատկերը միտից բխեցնելու ռճական իր սկզբունքը հետեւողականօրէն կիրառելու օրէնքով՝:

Երկրորդ. Մաշտոցը անուանում եւ դասատրում է իր ստեղծած գրերը իրենց յաջորդականութեամբ, այսինքն՝ գրահամակարգ է ստեղծում: Այս մասին նոյնպէս հաւաստի վկայութիւն ունենք Կորիւնից. «Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ»², - գրում է նա որոշակիօրէն: Ընդսմին՝ հարկ է նշել նաեւ, որ նորաստեղծ այբուբենի հերթականութիւնը որոշելիս Մաշտոցը աչքի առաջ է ունեցել, հիմնականում, յունարէնը, քանի որ այս երկու լեզուների այբուբենների բնույթի համեմատութիւնն իսկ ցոյց է տալիս, որ, չհաշուած հայերէնի գրահամակարգում հնչոյթային առումով տարարժէք այն գրերը, որոնք բացակայում են յունարէնում ընդհանրապէս, մնացածներն ունեն նոյն հերթականութիւնը դասատրութեան տեսակէտից, ինչ յունարէն 24 տառերից բաղկացած գրասխտեմը: Աւելացնենք նաեւ այն, որ Մաշտոցը հայերէն գրութեան ուղղութիւնը ձախից աջ որոշելիս եւ միմեանցից անջատ յարաբերակցութեամբ կիրառելու կանոնը դրանց համար պարտադիր պահանջ ընդունելիս նոյնպէս ղեկավարուել է յունարէնի գրութեան նպատակայարմարութեան հաշուառումով: Իսկ հայերէն տառերի գրաձեւի ուղղութիւնը իր բազմազանութեամբ որոշելիս Մաշտոցը չափազանց ուրոյն մօտեցում է ունեցել. նրանց մի մասի երեսային թեքումը որոշել է աջահայեաց դիրքով, մի մասինը՝ միջին, միւս մասինը՝ ձախահայեաց: Այս կարեւոր առանձնայատկութեան շնորհիւ Մաշտոցը հակադրութիւն ու տարբերակում է մտցրել յունարէնի գրասխտեմի նկատմամբ: Ինչպէս յայտնի է, յունարէն գրերը չունեն «ձախակողմեան ոչ մէկ տառ»³: Բացի այդ, Մաշտոցը իր գրահամակարգն ստեղծելիս նկատի է ունեցել ժամանակի կատարելագործուած համարուող յունարէն եւ լատիներէն գրահամակարգերի մի շարք էական թերութիւնները՝ ձգտելով խուսափել դրանցից իր նորակերտ այբուբենում: Այսպէս, նշուած երկու լեզուների գրահամակարգերում էլ առանձին գրանշեր տարբեր դիրքերում ու պայմաններում հնչիւնական տարբեր

արժեքներ են դրսևտրում¹: Մաշտոցը վերացրեց այդ թերութիւնը իր գրահամակարգերում: Աւելին. մի շարք հնագոյն լեզուների, մասնատրապէս յունարէնի գրահամակարգում, իբրև օժանդակ միջոց, օգտագործում էին նաեւ պայմանական նշաններ, որոնք դրում էին տառերի տակը կամ եւ վրան: «Մեսրոպն իբրև սկզբունք ընդունեց չունենալ այդպիսի նշաններ,- ինչպէս արդարացիօրէն նշում է պրոֆ. Է. Աղայեանը,- եւ իր յօրինած գրի մէջ ոչ մի այդպիսի նշան չենք գտնում: Իսկ սա նշանակում է, թէ մեսրոպեան այբուբենը ինքնին արդէն լիովին արտայայտում էր հայերէնի բոլոր արտասանական առանձնայատկութիւններն առանց լրացուցիչ նշանների»²:

Երրորդ. Մաշտոցը սահմանում է մինչեւ անգամ կանոններ՝ իր հեղինակած գրերով հայերէնի վանկերն ու հնչիւնակապակցութիւնները կազմելու վերաբերեալ, որով եւ միաժամանակ ստեղծում է հայերէն առաջին այբբենարան-ձեւնարկը³: Այս առնչութեամբ Կորիւնը գրում է. «... յօրինէր սիղոբայիք եւ կապօբ...»⁴:

Այս բոլոր հարցերը Մաշտոցը լուծում է Եղեհայում գտնուած ժամանակամիջոցում, որոնք եւ հանդիսանում են գրաստեղծման բարդ աշխատանքների բաղկացուցիչ եւ իրար համալրող հանգամանքները:

Բայց գրերի գիտը ինքնանպատակ չէր բնաւ: Մաշտոցին յուզող հիմնական եւ վերջնական խնդիրը հայեցի մատենագրութեան ստեղծումն էր. Իսկ մայրենի մատենագրութեան շուտափոյթ ստեղծման ու ծաղկման համար ինչի՞ց պէտք էր սկսել: Գրահամակարգը արդէն իսկ յղացուած եւ որոշուած էր. արդէօք սեփական երկերի հեղինակումի՞ց, թէ՞ թարգմանութիւնից պէտք էր սկսել: Անշուշտ՝ թարգմանութիւնից: Նախ եւ առաջ անհրաժեշտ էին աշխարհայեացքային բնոյթի հիմնական այնպիսի աշխատութիւններ, որոնք ընդհանրական նշանակութիւն ունեցային եւ ապահովէին քրիստոնէական աշխարհայեացքի պրոպագանդումը հայ ժողովրդի մէջ որպէս ձուլումից պատճէշող հիմնական ազդակի: Երկրորդ՝ հենց թարգմանական գրականութեան միջոցով էր հնարարութեամբ բացայայտել հայոց լեզուի ներքին հարստութիւնը իր բոլոր նրբերանգներով եւ յղկել չափազանց կարճ ժամանակամիջոցում: Երրորդ՝ հենց տեսականօրէն մշակուած եւ համընդհանուր ճանաչում գտած աստուածաբանական, փիլիսոփայական, տրամաբանական, ճարտասանական, քերականական եւ այլ գիտակարգերի թարգմանութեամբ արագօրէն կարելի էր ստեղծել հայեցի դպրութիւն: Չորրորդ՝ թարգմանական գրականութեան շնորհիւ հնարարութեամբ էր սեփական բեղմնատուր գրականութիւն հեղինակել:

Մատենագրութեան ստեղծման ուղիների որոշման հարցում եւս, ինչպէս տեսնում ենք, Մաշտոցը խորագիտակ ու հեռատես է եղել: Եւ ահա հայեցի մատենագրութիւն ստեղծելու գործը թարգմանական գրականութիւնից սկսելիս՝ Մաշտոցը եւ իր համախոհները առաջին հերթին դիմում են յունական հարուստ ու բազմաբովանդակ գրականութեանը եւ դրա փորձառական հիմքի վրայ բարձ-

¹ Տե՛ս Գ. Մեակ, նշում աշխատ., էջ 30-42:
² Կորիւն, Վարք Մաշտոցի, էջ 48:
³ Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց գրերը, էջ 173-174, Գ. Մեակ, նշում աշխատ., էջ 42-44:

¹ Տե՛ս Է. Աղայեան, Մեսրոպեան այբուբենը եւ ուղղագրութիւնը, «Մեսրոպ Մաշտոց», յօդուածների ժողովածու, Երևան, 1963, էջ 63-64:
² Նոյն տեղում, էջ 65:
³ Տե՛ս Մ. Աբեղեան, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականութեան սկիզբը, տե՛ս «Սովետական գրականութիւն», ամսագիր, 1941, թ. 2, էջ 42:
⁴ Կորիւն, Վարք Մաշտոցի, էջ 48:

բացում սեփական մատենագրութիւնը: Հետեւաբար Մաշտոցի հայեցողութեամբ՝ գրերի գիտի առնչութեամբ արուածը դեռեւս բաւարար չէր բուն իսկ հայ մատենագրութեան սկզբնադրմանը ձեռնամուխ լինելու համար: Այդ իսկ պատճառով Մաշտոցը Եղեւսիայից մեկնում է Սամոսատ (Ռոտիա) եւ խորհրդակցում այնտեղ յոյն քերական Հոռոփանոսի հետ. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հոռոփանոս անուն գտեալ, վկայում է Կորիւնը, որով գամենայն ընտրութիւնս նշանագրացն գորրագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն եւ զերկայնն, գառանձինն եւ զկրկնատրն յօրինեալ եւ յանկուցեալ»¹: Բանն այն է, որ քարգմանութեան ժամանակ հայ քարգմանիչը անխուսափելիօրէն բախտելու էր դժուարութիւնների՝ յունարէնին առանձնայատուկ այնպիսի հնչոյթների արտայայտման առթիւ անձնանուններն ու տեղանունները նոյնութեամբ տառադարձելիս, որոնց համարժէք հնչոյթները չկային հայերէնում, կամ էլ արտայայտում էին առանձին գրերով եւ երբեմն էլ մէկից ատի գրերի համակցութեամբ: Օրինակ՝ մեսրոպեան հայերէնը չի ունեցել միեւնոյն ձայնատր հնչոյթի կարճն ու երկարը, մինչդեռ յունարէնն ունեցել է. կամ յունարէնում մէկ հնչոյթի արժէք ունեցող գիրը (ասենք՝ Ξ) հայերէնում համարժէք է երկու հնչոյթների միակցութեան (քս) եւ արտայայտում է երկու առանձին գրերով եւ այլն: Մեր խորին համոզմամբ՝ գիտական այս կարեւոր հարցի վերջնական լուծումը թելադրուած էր, անտարակոյս, յունարէնից կատարուելիք քարգմանութիւնների իսկ պահանջով ու հարկադրանքով, հէնց այդ պատճառով էլ Մաշտոցը դիմել է գործնական նման քայլի՝ խորհրդակցելով յոյն քերական Հոռոփանոսի հետ:

Ի դէպ, կորիւնեան այս հատուածը, որը չափազանց կարեւոր է գրերի գիտի հետ առնչուած բոլոր հանգամանքների ճիշդ լուսարանման համար, հայագիտական գրականութեան մէջ ամենախճճուած եւ թերըմբռնուած մասերից է, որն առիթ է տուել ամենատարբեր մեկնաբանումների:

Այսպէս, վիճելի այս հատուածը Իս. յարութիւնեանը ընկալել է այն իմաստով, որպէս թէ Մաշտոցը անկարող լինելով իր ստեղծած տառերին ձեւատրում տալ՝ դիմել է յոյն քերականին *զեղազիտական առումով* վերջնական ձեւի բերելու համար իր գրերը. ըստ որում Իս. Յարութիւնեանը Կորիւնի օգտագործած «նրբագոյն», «լայնագոյն», «կարճ», «երկար», «առանձին» եւ «կրկնատր» տերմինները ըմբռնել է ոչ թէ որպէս հնչիւնաբանական հասկացութիւններ արտայայտող քերականական տերմիններ, այլ պարզապէս գրածեւի տարբեր յարաբերակցութիւններ ցոյց տուող անուանումներ², ընդամին Հոռոփանոսին էլ բնութագրող «գրիչ» տերմինը բացատրում է սոսկ իբրեւ *զեղազիր* կամ *գրագիր*, եւ ո՛չ՝ *քերական*, որը լիովին կը համապատասխանէր կորիւնեան ընթերցմանը, ինչպէս ճիշդ կերպով մատնացոյց է արել պրոֆ. Գ. Սեւակը³:

Համարեա նոյն կերպ է ընկալում եւ մեկնաբանում նաեւ պրոֆ. Մ. Արեղեանը՝ մանրամասնելով կոնկրետացնելով եւ առաւել եւս «հիմնաւորելով» Յարութիւնեանի կարծիքը⁴: Ի տարբերութիւն այս հայագետների, պրոֆ. Իւանէ Ջավախիշ-վիլին կորիւնեան այդ հատուածը ընկալել եւ մեկնաբանել է իբրեւ մեծատառերի եւ

փոքրատառերի, ինչպէս եւ փակագրերի հետ առնչուող կորիւնեան ընթերցում: Նման պնդումը, սակայն, ժամանակավրէպ է, ուստի եւ անհամոզիչ:

Մաշտոցեան գրերն առաջին անգամ շրջանառութեան մէջ դրուելիս եւ դրանից հարիւրամեակներ յետոյ էլ հայատառ գրութիւնը ունեցել է *միայն մէկ տառատեսակ՝ մեսրոպեան երկաթագիրը*: Փոքրատառ եւ մեծատառ գրատեսակների կիրառումը մեր մատենագրութեան մէջ, ինչպէս յայտնի է, կապուած է բոլորագրի տարածման հետ՝ սկսած XI դարից:

Պրոֆ. Կ. Ղաֆաղարեանը նոյնպէս կորիւնեան այդ հատուածը մեկնում է իբրեւ տառատեսակների (փակագիր, երկաթագիր, բոլորագիր, մտորագիր) կորիւնեան բացատրութիւն, որպիսի պնդումը նոյնպէս ժամանակավրէպ է:

Երբորդ տեսակէտն առաջին անգամ արտայայտել է, թէ եւ առանց տեսական հիմնաւորման, Իոզ. Մարկուարտը, որը ճիշդ դիտակէտից մեկնելով փորձել է կորիւնեան այս տերմինների միայն մի մասը ընկալել իբրեւ հնչիւնաբանական հասկացութիւններ¹:

Սակայն պրոֆ. Գ. Սեւակը ճիշդ է լուծել կորիւնեան վիճելի հատուածի ընթերցումը՝ նրանում օգտագործուած բոլոր տերմինները մեկնաբանելով բացառապէս իբրեւ քերականական տերմիններ: Նշենք, յամենայն դէպս, որ մենք տարամիտում ենք պրոֆ. Գ. Սեւակի այն մեկնաբանումից, ըստ որի Մաշտոցը, իբր, Հոռոփանոսի օգնութեամբ է գիտական դասակարգման ենթարկում հայերէնի իր գրահամակարգը՝ որոշելու համար դրանում առկայ իւրաքանչիւր գրոյթի հնչոյթային արժէքը: Մինչդեռ Մաշտոցը երակէտային այս հարցը անձամբ արդէն իսկ լուծել էր նախօրօք (եւ սրանումն է նրա առաջին մեծ յայտնագործութիւնը), այլապէս, եթէ գիտական դասակարգման ենթարկած չլինէր իր գրահամակարգը հայերէնի համապատասխան հնչոյթները արտայայտելու համար, նա չէր կարողանայ իր գրահամակարգն ստեղծել առհասարակ: Կորիւնեան վիճելի այս հատուածը ակնարկում է միայն այն, որ Մաշտոցը յունարէնից կատարելիք քարգմանութիւններում տեղանունների եւ անձնանունների տառադարձման համար ստիպուած էր ճշդորոշել յունարէն լեզուի հնչոյթային արժէքներն արտայայտող գրասիւստները իր գրասիւստեմի հետ, որպէսզի *ուղղագրական բնոյթի տեխնիկական կողմը եւս պարզէր*: Բնականաբար այդ հարցով էլ պէտք է դիմէր յոյն քերականի խորհրդին:

Չենք տարակուսում, որ Վարդան Արեւելցու՝ Մաշտոցին «բարեմորոզիչ» ներկայացնելու միտումը բխում է այն բարեմիտ կանխակալ ենթադրութիւնից նաեւ, որ բազմադարեան այնպիսի քաղաքակիրթ ժողովուրդ, որպիսին հայ ժողովուրդն է, չէր կարող չունենալ նախամեսրոպեան հնագոյն գրեր: Նման հարցադրման դէպքում, սակայն, անտեսում է այն իրողութիւնը, որ հայ ժողովրդի (ինչպէս եւ ամէն մի ժողովրդի) բազմադարեան մշակոյթի ու քաղաքակրթութեան ցուցանիշը չի սահմանափակում սոսկ նշանագրեր ունենալու վաղեմութեամբ: Բազմադարեան մշակոյթի նոյնքան լիարժէք վկայութիւններն են տուեալ նաեւ ժողովրդի *նիւթական կուլտուրայի դրսեւորումները*՝ ճարտարապետական կոթողները, արուեստների համակողմանի զարգացումը, ժողովրդական բանահիւսութիւնը, եւ այս բոլորի հիմքը հանդիսացող արտադրողական ուժերի մակարդակը եւ այլն, եւ այլն:

¹ Նոյն տեղում, էջ 48-50:

² Տե՛ս Իս. Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 172, 366-367:

³ Տե՛ս Գ. Սեւակ, Թէ ինչ է արել Մաշտոցը Սամոսատում, Երեւանի պետական համալսարան, Ն.Մատի անուան կարփնետի աշխատութիւններ, Թ. 2, 1947, էջ 153:

⁴ Տե՛ս Մ. Արեղեան, «Սովետական գրականութիւն», ամսագիր, 1941, Թ. 2, էջ 43, 45-46:

¹ Տե՛ս Իոզ. Մարկուարտ, Հայոց այբուբենի ծագումը եւ Մ. Մաշտոցի կենսագրութիւնը, «Մեսրոպ Մաշտոց», յօդուածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 149:

Բանն այն է, որ հայեցողութիւնը դեռ գիտական ճշմարտութիւն չէ. իսկ գիտական ճշմարտութիւնը անպայմանօրէն խաբարտուած պէտք է լինի օրինակի իրականութեան օրինակի փաստերի ու կռուանների վրայ: Ինչպէս վերը նշեցինք, միակ երեսփայտի «փաստը», որ վկայակոչում է Վարդան Արեւելցին, իբր թէ Կիլիկիայում գտնուած հեթանոս հայ թագաւորների անունները կրող դրամն է: Նրա այս հաւաստումը, սակայն, նոյնպէս մեզ քիչ վստահութիւն է ներշնչում:

Նկատենք, որ Վարդան Արեւելցու այս տեսակէտը լուրջ քննադատութեան է ենթարկուել մի շարք հայագէտների կողմից¹: Այսպէս, հայագէտ Պետերմանը գտնում է, որ Կիլիկիայում յայտնաբերուած դրամի գրութիւնը ոչ թէ հնագոյն՝ նախամետաղական հայկական գրերով պէտք է եղած լինէր, այլ՝ պաղատներն գրերով եւ Պարսկաստանի արշակունի թագաւորների անունների դրոշմով, որպիսի հանգամանքը շփոթութեան հիմք է տուել Վարդան Արեւելցուն: Իսկ ֆրանսիացի հայագէտ Լանգլուայի կարծիքով՝ փինիկեան գրերով դրոշմուած դրամ պէտք է եղած լինէր այն՝ աքեմենեան դինաստիայի վասալական ենթակայութեան մէջ գտնուող նախարարներից մէկի անունով: Սակայն, անկախ այս բոլոր հաւանական ենթադրութիւններից էլ, ինչպէս նշում է Հ. Աճառեանը, առուել բանական եւ սպառնիչ պատասխանը վարդանեան հարցադրման հերքման իմաստով՝ ձեւակերպել է Մ. Չամչեանը: Վերջինս գտնում է, որ եթէ իրօք Վարդան Արեւելցին կարդացել է դրամի վրայ եղած տառերը մաշտոցեան գրածների շնորհիւ, ապա դրանք պարզապէս Մետրոպի ստեղծած գրերն են եղել, իսկ եթէ նախամետաղական հեթանոսական շրջանի ինչ-որ հայկական տառերն են եղել, որ Վարդան Արեւելցին կարողացել է վերծանել եւ ընթերցել, ապա այդ դէպքում, ասում է Չամչեանը, ինքնըստինքեան երկակի հարց է ծառայում. առաջին՝ Վարդան Արեւելցին ինչպէ՞ս կարող էր իմանալ եւ վերծանել այսպէս կոչուած հեթանոսական շրջանի հայկական գրասիւստեմը, երբ այն առհասարակ յայտնի չի եղել մինչեւ անգամ իրենից եօթ հարիւրամեակ առաջ ապրած Մետրոպին, Սահակին եւ նրանց ժամանակակիցներին: Երկրորդ՝ ինչպիսի՞ գրասիւստեմ էր այն, որ Վարդան Արեւելցուն է յաջողուել վերծանել եւ կարդալ...: Չամչեանը արդարացիօրէն գրում է. «Եւ արդարեւ՝ եթէ տառք այնքան դրամայ՝ գոր յիշէ Վարդան, հայերէն էին, որպիսի՞ք էին արդեօք, գոր կարացեալ իցեն տքա ընթեռնուլ. եթէ ըստ այժմուս, ուրեմն Մետրոպայ գտեալ տառքն էին նորին՝ ի քրիստոնեայ թագաւորաց դրոշմեալ, եւ ոչ թէ ի կուպաշտից. զի այդ մակարեորութիւն է: Այլ թե ոչ էր նման այժմու տառիցս, զարմանք մեծ են, զի յետինք կարացեալ են զայնուսիկ տառս հեզել եւ ընթեռնուլ. իսկ սուրբն Մետրոպ եւ սուրբն Սահակ չեն կարացեալ առնել. վասն որոյ ի բաց թողեալ զայնպիսիս՝ զհետ մտեալ իցեն զիստի այլոց տառից»²:

¹ Մենք այստեղ չենք անդրադառնում այն հայագէտների գնահատականներին, որոնք առհասարակ քննական հայեացք չունենալով միջնադարի մշակութային գործիչների հայեացքների ու դատողութիւնների նկատմամբ՝ քրմարար ընդունում են այդ գործիչներին իբրեւ «անսխալական սրբութիւններ», իսկ նրանց աստիքները՝ որպէս «բացարձակ ճշմարտութիւններ»: Պէտք է ասել, սակայն, որ նման կուրքիւնը բանձրամած մշուշով է պարուրում մեր անցեալի հարուստ մշակոյթը՝ խանգարելով բացայայտել նրա զարգացման օրինաչափութիւններն ու հեռանկարները՝ մի կողմից, միւս կողմից՝ հետազօտողը դադարում է հետազօտող լինելուց՝ կանգնելով նոյն մակարդակի վրայ, ինչ մակարդակի վրայ կանգնած է եղել իր ուսումնասիրած հեղինակը: Նման մօտեցման դէպքում մոռացութեան է տրուած այն կարեւորագոյն իրողութիւնը, որ Միջնադարի գործիչները նոյնպէս ծնունդն են եղել իրենց ապրած դարաշրջանի, հետեւաբար եւ, նրանց սահմանափակ իմացութիւնը, լուսատու եւ ստուերտու կողմերով, պայմանաւորուած է տուեալ հասարակական յարաբերութիւնների ընձեռած սուղ հնարաւորութիւններով:

² Մ. Չամչեանը, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1784, 760-761:

«Ի հաստատումն» նախամետաղական գրերի առկայութեան վարկածի, Իս. Յարութիւնեանը վկայակոչում է նաեւ մեր թուականութեան II հարիւրամեակի վերջին քառորդին եւ III հարիւրամեակի առաջին կեսին (175-249) ապրած յոյն պատմաբան Փիլոստրատոսի հաղորդումն այն մասին, որ դեռեւս այն ժամանակ, իբր, յայտնի է եղել մի յովազի պարանոցին կապուած ոսկեայ մի մանեակ «ժայերէն գրերի» հետեւեալ մակագրութեամբ՝ «Արշակ թագաւոր՝ աստուծոյն Նիսեայ»¹: Հիւրշմանը իրաւացիօրէն գտնում է, որ Փիլոստրատոսի հաղորդումը չափազանց տարտամ եւ տարակուսելի է, որովհետեւ անյայտ է մնում, թէ խօսքը պատմականօրէն կոնկրետ ո՞ր Արշակին է վերաբերում: Բացի այդ, բացառուած չէ նաեւ, որ նշուած խոր անցեալում, երբ միեւնոյն դինաստիայի շատախոյնները՝ պարթեւները, կառավարում էին Պարսկաստանն ու Հայաստանը, շփոթէր յոյն պատմիչը եւ պաղատներն գրութիւնը (որի կիրառութիւնը պատմական իրողութիւն էր այն ժամանակ) ընդունէր իբրեւ հայերի կիրառած գրութիւնը²:

Այսպէս, ուրեմն, ամփոփելով վարդանեան հարցադրման քննութիւնը Մաշտոցին հայերէն գրերի «բարենորոգիչ» ներկայացնելու վերաբերեալ, եզրափակում ենք այն հայագիտական հարցերում միանգամայն ճիշդ դիրքորոշում ունեցող Հ. Աճառեանի հետեւեալ գնահատականով. «Ասկէ կը հետեւի, թէ Վարդանի ըսածը մակարեորութիւն է միայն, իհարկէ սխալ, եւ ոչ երբէք հաստատուն փաստ»³:

Ինչ վերաբերում է նախամետաղական այլատառ, բայց հայեցի գրականութեան առկայութեան վարդանեան վարկածին, ապա պէտք է ասել հետեւեալը. մեր սկզբնաղբիւրները ոչ մի հիմք չեն տալիս ենթադրելու, թէ մետաղական գրերից առաջ ունեցել ենք յունատառ, ասորատառ կամ պարսկատառ գրականութիւն հայերէն լեզուով, ինչպէս պնդում է Վարդան Արեւելցին՝ գրելով. «Բնան եւ երկու զիր առ Դանիելի ասորոյ գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս անհոգացեալ եղել յառաջնոցն՝ յոյն եւ ասորի եւ պարսիկ գրով շատացեալք...»⁴: Ի դէպ, հարկ է նշել, որ մետաղական գրի եւ դպրութեան մասին սկզբնաղբիւր հանդիսացող մեր պատմիչները բարեբախտաբար սպառնիչ տեղեկութիւններ են հաղորդում նաեւ ինչպէս նախամետաղական՝ շուրջ հարիւրամեայ քրիստոնէական պատմաշրջանի, այնպէս եւ նախաքրիստոնէական՝ հեթանոսական ժամանակաշրջանի Հայաստանում հայեցի գրականութեան. եւ զրի իսպառ բացակայութեան հաւաստումով:

Այսպէս, նախամետաղական քրիստոնէական ժամանակաշրջանի Հայաստանում հայերէն լեզուով գրաւոր խօսքի ամայութիւնը ցաւազին թախիծով է հաւաստում Կորիւնի աշխատութեան ամբողջ ենթատեքստում: Իսկ հէնց որ մաշտոցեան գրերն են ստեղծուած, Կորիւնի վկայութեամբ, անմիջապէս հայ ուսումնականներ են ուղարկուած Եդեսիա եւ «ի կողմանս Յունաց»՝ ասորական եւ յունական դպրութիւններում մասնագիտանալու եւ այդ ժողովուրդների համապատասխան գրականութիւնից հայերէն թարգմանելու հրատապ խնդրով. «Որոց դէպ լինէր եղրարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եղեսացոց, զՅովսեփ, գոր ի վերոյն յիշեցաք, եւ երկրորդն Եզնիկ անուն՝ յԱլլարատ»:

¹ Տե՛ս Իս. Յարութիւնեան, Հայոց գիրը, էջ 251-252:

² Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց գրերը, էջ 67:

³ Նոյն տեղում, էջ 68:

⁴ Պատմութիւն Տիեզերական, էջ 70:

եան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յատրական բարբառոյն զնոցին հարցն սրբոց
աւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն:

«Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, եւ կատարեալ զհրամանսն եւ
առ պատուական հարսն առաքեալ, անցեալ զնային ի կողմանս Յունաց, ուր եւ
ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին»¹:

Նոյն փաստն է արձանագրում նաեւ Խորենացին. «Ձի որ մի անգամ գտցի անդ
զիրք ասացեալ նոցին (իմա՝ ասորոց - Լ.Խ.) սրբոց հարցն առաջնոց՝ *թարգմանեալ
ի մեր լեզուս բերցեն փոքով, զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցին ի նոյն
գործ»*²:

Բնականաբար՝ եթէ ասորատառ եւ յունատառ հայերէն լեզուով գրակա-
նութեան վարկածը ստոյգ լինէր, ապա քրիստոնէական կրօնը պետականօրէն
ճանաչուելուց յետոյ մինչեւ մետրոպէան գրերի ստեղծումը անցած աւելի քան մէկ
հարիւրամեակի ընթացքում արդէն իսկ թարգմանուած պէտք է լինէին քրիստո-
նէական վարդապետութեան հիմնական աշխատութիւնները, ինչպէս իրաւամբ
դիտել է տալիս Հ. Աճառեանը³, իսկ եթէ դրանք էլ հասցրած չլինէին, ապա զոնէ
Աստուածաշունչը կամ Աւետարանը: Այնինչ եթէ այլատառ, բայց հայերէն լեզուով
թարգմանուած լինէին դրանք, ապա եւ կարիք չէր լինի այդ աշխատութիւնների
մետրոպատառ գրերի վերածման համար այդ լեզուներից նորից նոր թարգմանելու
նեղութիւնը կրելու, այլ պարզապէս յունատառ եւ ասորատառ հայերէն գրակա-
նութիւնը հեշտութեամբ կը վերածէին մետրոպատառի: Իսկ դա նոյնպէս անիմաստ
ձեռնարկ կը լինէր, քանի որ դրանք արդէն իսկ պէտք է բաւարարէին հոգեւոր եւ
աշխարհիկ վերնախաւի հիմնական պահանջը՝ քրիստոնէական գաղափարախօ-
սութեան հետ հայ ժողովրդին անմիջականօրէն հաղորդակից դարձնելու մտա-
սեւեռումը: Ընդսմին՝ կ'իմաստագրկուէր նաեւ բուն իսկ մետրոպատառ գրահա-
մակարգի ստեղծման պատմական նախադրեալն ու հասարակական անհրաժեշ-
տութիւնը, քանի որ գրասխտեմն առհասարակ, ըստ էութեան, ուրիշ բան չէ, եթէ ոչ
միջոց՝ հնչոյթներ արտայայտելու համար կամ, այլ կերպ ասած՝ գրահամակարգը
պարզապէս հնչոյթներ նշող գրապատկերների համադրութիւն է, ուստի եւ իր այդ
պայմանական բնոյթի շնորհիւ անտարբեր է իր արտայայտած լեզուի եւ նրա
հնչոյթների նկատմամբ: Ասուածի ճշդութեան համար գրատար լեզուների պատմու-
թիւնը վառ ասպացոյցներ ունի. ինչպէս յայտնի է՝ անցեալում եւ ներկայում միեւնոյն
գրասխտեմնը ամենայն յաջողութեամբ ծառայել է եւ ծառայում է բազմաթիւ ժողո-
վուրդների գրականութիւններին՝ իր բաղկացուցիչ միատրոնէրով, հիմնականում
ամբողջութեամբ արտացոլելով առեալ գրական լեզուի հնչոյթային համակարգը
(այդպիսին է, օրինակ, լատիներէնը՝ եւրոպական ամենատարբեր լեզուների գրա-
կանութիւնների համար, արաբերէնը՝ արաբական աշխարհի ամենաբազմազան
ժողովուրդների ազգային լեզուների գրականութեան համար):

Ղազար Փարպեցին առաւել եւս փակագծերը բացում է՝ ցոյց տալով ետ-
քրիստոնէական աւելի քան հարիւրամեայ ժամանակաշրջանի իրադրութիւնը Հա-
յաստանում՝ լեզուի եւ դպրութեան, ինչպէս եւ լեզուի ու գրականութեան փոխարա-
բերութեան ամենատեղի նկարագրումով: Նա աներկբայելի հաւաստմամբ նշում է,
որ հայ ուսումնականները «հեռագնաց» ճանապարհներ էին կտրում օտար դպրու-

թիւններում այլալեզու գրատար խօսքի հմտութիւն եւ գիտութիւն ձեռք բերելու համար,
որպիսի հարկադրականութիւնը Փարպեցին պատճառաբանում է հիմնականում
այն փաստի արձանագրումով, որ Հայաստանում եկեղեցական ծխակատարու-
թիւններն ու ընթերցումներն առհասարակ կատարում էին ոչ թէ մայրենի լեզուով,
այլ օտար՝ հիմնականում «ասորի ուսմամբ»։ ըստ որում նա համոզիչ անկեղծու-
թեամբ միաժամանակ հաւաստում է, որ պարզապէս իրերի նման դրութեան
հետեւանքով ո'չ հայ ժողովուրդն էր իր լեզուից բան հասկանում, ո'չ էլ եկեղեցու
պաշտօնեաները սիզիֆեան տառապանքից բացի որեւէ արդիւնքի հասնում. «...
Հոգացեալ յարածամ տրումէր երանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն եւ
զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստանի աշխարհիս,- գրում է Փարպեցին,-
որք բազում թռչակօք եւ հեռագնաց ճանապարհօք եւ բազմաժամանակեայ դեզեր-
մամբ մաշէին զաւորս իրեանց ի դպրոցս ասորի գիտութեան: *Ըսանզի պաշտօն
եկեղեցոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս
Հայաստան ժողովրդոցս, յորմէ ո'չ ինչ էին կարող լսել եւ օգտել ժողովուրդըն
այսպիսի մեծ աշխարհի, եւ լինէր պաշտօնէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն
անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորայ...*»¹:

Հայեցի գրականութիւն ստեղծելու հասարակական անհրաժեշտութիւնը հէնց
քրիստոնէական վարդապետութեան պահանջով էր քելադրուած, որի մասին դեռ
այն ժամանակ հաւաստում է նաեւ վերադաս հոգեւորականութիւնը, երբ վերջինս
Վռամշապուհ թագաւորի եւ Սահակ կաթողիկոսի առաջ հայեցի գրականութեան
ստեղծման արդէն իսկ հասունացած խնդիրն է առաջադրում՝ ելնելով Հայաս-
տանում, մի կողմից՝ հայոց լեզուի եւ այլազգի դպրութեան, միւս կողմից՝ մայրենի
լեզուի եւ օտար գրականութեան փաստական փոխարարբերութեան անմխիթար
վիճակից: Նրանք ասում են. «... ասորի մեծաջան եւ անօգուտ ուսմամբքն աշխատ-
եալք յախարս. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք եւ թափուր հրաժարեալք
զնային յեկեղեցոյն, եւ ուսուցիչք հանելով յոգւոց եւ հատաչելով՝ զղջանային զանո-
տի ջանն իրեանց, յորում ոչ գոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալ ի
վարդապետութենէ հոգեւոր խրատուցն, որ է կերակուր եւ պարարտումն իմաստնա-
խնդիր անձանց...»²:

Խորենացին լուսցնելով Փարպեցուն՝ նշում է, որ, բացի ասորերէն գրական
լեզուի կիրառումից, Հայաստանում ստեղծուած քաղաքական իրադրութեան հետե-
ւանքով, լայն տարածում էին գտել նաեւ յունական գրականութիւնը (նաեւ մշա-
կութային ազդեցութեան պատճառով), մասամբ էլ՝ պարսկերէնը, ընդսմին՝ մանա-
ւանդ այս երկուսի միջեւ անողոք պայքար էր զնում բացարձակ տիրապետութեան
հասնելու համար հայկական հողում: Այս տեսակետից չափազանց կարեւոր են
Խորենացու հաւաստումները: Այսպէս, պարսկական կողմնորոշում ունեցող ազգու-
րաց Մերութանի շարագործութիւնները բնութագրելիս, ի շարս այլոց, Խորենացին
ուղղակի հաւաստում է նաեւ այն իրողութիւնը, թէ ինչպէս Մերութանը մինչեւ անգամ
այրում է Հայաստանում յունական գրականութիւնը եւ հրամանով հարկադրում է իր
տիրած սահմաններում հրաժարուել յունական դպրութիւնից ու գրականութիւնից եւ
բաւականանալ միայն պարսկական դպրութեամբ ու գրականութեամբ. Մերութան
«այրէր եւ հրաման տայր մի՛ ուսանել զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ, եւ մի՛ որ
իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել զի յայնժամ զիր դպրութեան հայոց չի եւս

¹ Կորին, Վարդ Մաշտոցի, էջ 74:

² Տե՛ս Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1913, էջ 341:

³ Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց գրերը, էջ 116:

¹ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ
Գ. Տէր-Ալիստեան եւ Ստ. Մալխասեան, Տիփլիս, 1904, էջ 213:

² Նոյն տեղում, էջ 16:

էր լեալ, եւ յունականան վարէին եկեղեցոյ կարգը»¹: Շեղագիր տողերից միանգամայն ակնբախ է դառնում, թէ այլալեզու դպրութիւնների եւ գրականութիւնների միջեւ մղուած պայքարը ինչպիսի կատաղի բնոյթ էր կրել եւ դրամատիկ պոռթկումի յանգել:

Աւելին. պարսկական պետութեան ներկայացուցիչները երբ տեսնում են, որ իրենք անգոր են յունական քաղաքակրթական-մշակութային ազդեցութիւնը ջլատելով պարսկականը պարտադրել հայ ժողովրդին, նախապատուութիւն են տալիս, որպէս չարեաց փոքրագոյնի, ասորական դպրութեան եւ գրականութեան անարգել պրոպագանդանը, քան յունականին: Այս իմաստով չափազանց բազմախաստում է Խորենացու հետեւեալ վկայութիւնը. «... Նախ ի Մեհրութեանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց չտային պարսիկ վերականգնուրն յոյն ուսանել դպրութիւն ումեր յիւրեանց մասինն, այլ միայն ասորի»²:

Պատմական այս ծանրակշիռ վկայութիւններից հետեւում է, որ ոչ այլ ինչ, քան հայեցի գրականութեան իսպառ բացակայութիւնն էր, որ հարկադրեց Մեսրոպին ձեռնամուխ լինելու մայրենի գրականութիւն ստեղծելու համար հայոց լեզուի հնչոյթային համակարգն արտացոլող գրեր գտնելու խնդրին: Այդ պատճառով էլ նա հետախուզական մեծ աշխատանքներ կատարեց՝ աշխարհի հնագոյն այբուբենները ուսումնասիրելու ուղղութեամբ: Եւ եթէ դրանցից, ինչպէս եւ իր ժամանակ կիրառուած այբուբեններից ո՛չ մէկը Մաշտոցը չփոխառեց եւ հարկադրուած եղաւ բոլորովին նորը՝ սեփականը ստեղծել ինքնատիպ կատարելութեամբ, ապա դա, առաջին հերթին, պայմանաւորուած էր նրանով, որ այդ այբուբեններից ոչ մէկը ընդունակ չէր եղել ամբողջութեամբ վերցրած, հայերէնի հնչոյթային հարուստ համակարգը արտացոլել: Հետեւաբար՝ հասարակական կենսական եւ առաջնային անհրաժեշտութիւնը սեփական գրականութիւն ստեղծելն էր, իսկ գրերը՝ միջոց էին այդ հիմնական նպատակի իրագործման համար, որոնց բնոյթը պայմանաւորուելու էր գրականութեան վերածնունդ լեզուի (այսինքն՝ հայերէնի) հնչոյթային համակարգին համապատասխանելու բացարձակ պահանջով. մի հանգամանք, որ հիանալի ըմբռնեց Մաշտոցը եւ իրագործեց չգերազանցուած հմտութեամբ:

Եթէ մեր սկզբնաղբիւրները պատմական հաւաստի տուեալներով հերքում են մեսրոպատառ գրերի ստեղծմանն անմիջականօրէն նախորդող ժամանակաշրջանում հայեցի գրականութեան եւ գրերի առկայութեան հնարաւորութիւնը, ապա գուցէ աւելի վաղ՝ հէնց քրիստոնէութեան սկզբնաւորման եւ տարածման շրջանում են եղել հայեցի գիր եւ գրականութիւն: Դա եւս ժխտում է փաստերի յամառութեամբ: Այս առթիւ Փաստոս Բուզանդը Հայաստանի հէնց ետքքրիստոնէական ժամանակաշրջանի իրադրութեան կապակցութեամբ հաւաստում է այն մասին, որ քրիստոնէութիւնը պարզապէս «հարկադրաբար» եւ ձեւականօրէն էր ընդունուել Հայաստանում՝ իբրեւ «մարդկային մի մոլորութիւն...», բայց ո՛չ ամենեւին՝ «գիտութեամբ» կամ «հաւատով»: Նա գրում է. «Ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա (այսինքն՝ հայք - Լ.Խ.) գանուն քրիստոնէութեանն, լոկ միայն իբրեւ զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց եւ ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ: Ոչ եթէ որպէս պարտն էր գիտու-

թեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլեն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ...»¹:

Աւելին. ցոյց տալով Հայաստանում քրիստոնէական վարդապետութեան տարածման հետ մէկտեղ օտարալեզու դպրութեան եւ գրականութեան բացարձակ անհասկանալիութիւնը հայ ժողովրդի համար, Փաստոս Բուզանդը ընդգծում է այլալեզու դպրութեան անգորութիւնը՝ պատկերաւոր կերպով ասելով, որ եթէ նոյնիսկ «յորդահեղեղ անձրեւների սաստկութեամբ» քրիստոնէութիւնը այլալեզու դպրութեան վարդապետուի, միեւնոյն է, ժողովուրդը ոչ մի խօսք, եւ ոչ էլ կէս խօսք չէր հասկանայ ասածից՝ թէկուզեւ գիշեր-ցերեկ ունկնդիր լինէր վարդապետներին...: Փաստոսը այդպէս էլ հաւաստում է. «... Բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլեն կամ ասորի դպրութեանց որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ: Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին այլ խառնանաղանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն եւ կամ շինականութեանն, եթէ զցայց եւ զցերեկ նստեալ վարդապետցն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ զյորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնս ի վերայ հոսէին, ոչ որ ի նոցանէն եւ ոչ մի բան, եւ ոչ կէս բանի, եւ ոչ դոյզն յիշատակ ինչ, եւ ոչ նշմարանս ինչ լսէին, եւ ոչ կարէին ինչ ունել ի մտի...»²:

Ի դէպ՝ կարելու է դիտել, որ Խորենացին մինչեւ անգամ պատմական կենդանի մարդկանց վկայակոչմամբ պարզաբանում է, թէ ինչպէս օտար դպրութիւնը այլալեզու իր գրականութեամբ թարգմանում եւ բացատրում էր հայ ունկնդիրներին. նա յայտնում է, որ այլալեզու գրականութեան բովանդակութեանը հաղորդակից դարձնելու համար հայ ունկնդիրներին՝ ուսումնական երկու անձնաւորութիւններ էին մասնակցում. մէկը կարդում էր բնագիրը համապատասխան օտար լեզուով (յունարէն կամ ասորերէն), իսկ միւսը թարգմանում էր հայերէնի եւ մեկնաբանում. «Քանզի ինքն էր (իմա՝ Մեսրոպ Մաշտոցը - Լ.Խ.) ընթերցող եւ թարգմանիչ,- գրում է Խորենացին,- եւ եթէ այլ որ ընթերցողը, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխաղ ի ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ»³: Շեղագիր տողերից ինքնըստինքեան հետեւում է, որ շատ հագուադէպ է եղել, երբ ընթերցողն ու թարգմանիչը զուգադիպած լինէին մէկ անձնաւորութեան մէջ, իսկ սովորաբար օտարալեզու ընթերցողը այլ անձնաւորութիւն է եղել, թարգմանիչը հայերէնի՝ այլ: Նման իրավիճակը Խորենացին բացատրում է նրանով, որ հայկական դպրութիւն եւ գրականութիւն իսպառ բացակայում էր քրիստոնէական աշխարհայեացքի տիրապետութեան նախընթաց ամբողջ ժամանակաշրջանում՝ մեսրոպատառ այբուբենից ու գրականութիւնից առաջ. «Չի յայնժամ գիր դպրութեան հայոց չեւ եւս էր լեալ, եւ յունականան վարէին եկեղեցոյ կարգը»⁴:

Իսկ ինչպիսի՞ն էր դրութիւնը Հայաստանի հեթանոսական շրջանում՝ գրի, դպրութեան եւ գրականութեան առումներով:

Յետնագոյն՝ նաեւ նախաքրիստոնէական ժամանակաշրջանում հայեցի դրութեան եւ գրականութեան բացարձակ անգոյութեան մասին հաւաստում է դարձալ Մովսէս Խորենացին՝ մեր այն պատմիչը, որը նախանձախնդիր է եղել հայ ժողովրդի պատմութիւնը գրառելու ամենահնագոյն ժամանակներից, այն է՝ նրա

¹ Մովսէս Խորենացի, նշում աշխատ., էջ 301:
² Նոյն տեղում, էջ 329:

¹ Փաստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, 51:

² Նոյն տեղում:

³ Մովսէս Խորենացի, նոյն տեղում, էջ 317:

⁴ Նոյն տեղում, էջ 301:

պատմական ասպարեզ իջնելու իրողությունից սկսած, ուստի եւ ի՛նքն է առաջին հերթին սուր կերպով կարիք զգացել, ձեռագրական աղբիւրների հիման վրա փաստաքննական հաստի պատմություն գրելու իր մեթոդական ոճին համաձայն, հէնց հայերէն լեզուով գրատր վաղնջական վկայությունների՝ եթէ անշուշտ գոյություն ունեցած լինէին այդպիսիք նաեւ նախաքրիստոնէական ժամանակաշրջանում: Բայց Քերթոզահայրը զանգատում է հէնց գրատր հնագոյն մատենագրութեան բացակայութեան ցուցանելու փաստից եւ դրա համար էլ կշտամբում է հայ թագաւորներին, իշխաններին եւ ցեղապետներին, որոնք չեն հոգացել հայեցի դպրութիւն եւ մատենագրութիւն ստեղծելու մասին՝ իրենց «տգիտութեան» եւ «անիմաստասէր» լինելու պատճառով՝ այն դէպքում, երբ այլ հնագոյն քաղաքակիրթ ժողովուրդների թագաւորներ իրագործել են իրենց դպրութեան ու մատենագրութեան ստեղծման չափազանց կարեւոր խնդիրը:

Հայեցի գրականութեան բացակայութեան պատճառով էլ մեր ժողովրդի պատմական խորագոյն անցեալը ուսումնասիրողի առաջ բնականաբար ծառանում են անյաղթահարելի դժուարություններ ու խոչընդոտներ: Ուստի եւ Խորենացին հայ ժողովրդի պատմութեան վերականգնման համար, իբրեւ խորաքնին գիտնական, հարկադրաբար դիմում է օժանդակ միջոցների՝ օտար մատենագրություններին (յատկապէս յունականին), ինչպէս եւ հայ ժողովրդի բանահիւսութեանը, դիցաբանութեանը, առասպելների ու ասանդոթների բանաւոր պատմմաններին՝ դրանց քննական վերլուծութեամբ շարադրելով հայ ժողովրդի պատմութիւնը ի սկզբանէ անտի: Ընդսմին՝ հեթանոսական ժամանակաշրջանի գրականութեան խսկաւ բացակայութեան փաստը այնքան աներկբայելի ու հանրաճանաչ է եղել մինչեւ անգամ Խորենացուն ժամանակակից ուսումնականների համար, որ վերջիններս հեթանոս հայերին «արդարացնելու» նոյնիսկ պատճառաբանություններ են բերում՝ ասելով, թէ Հայաստանում անընդհատ պատերազմներ են տեղի ունեցել, իսկ խաղաղ ժամանակաշրջան համարեա չի եղել, որպէսզի մեր նախնիները նոյնպէս հնարաւորութիւն ունենային, ուրիշ հնագոյն քաղաքակիրթ ժողովուրդների նման, գիր ու գրականութիւն ստեղծելու: Բայց պատմահայրը հիմնաւորաւոր չի համարում նոյնիսկ նման «արդարացումը»՝ գտնելով, որ հայ ժողովրդի պատմութեան ընթացքում եղել են պատերազմների միջեւ նաեւ դադարներ՝ խաղաղ ժամանակաշրջաններ, հետեւաբար եւ հեթանոս մեր նախնիները նոյնպէս կարող էին գիր ու գրականութիւն ստեղծել: «Այլ ասիցէ որ արդէս վասն ոչ լինելոյ գիր եւ դպրութիւն ի ժամանակին կամ վասն պէտպէս պատերազմացն, որ կուտ զմիմեանց զկնի անհետ ի վերայ գային: Այլ ո՛չ արդարեւ այտօքիկ կարծեցեալ լինի, *քանզի գտանին եւ միջոցք լեալ պատերազմացն...*»¹:

Նշենք նաեւ, որ Խորենացին ոչ մի կերպ արդարացնել չի կարողանում հայ հեթանոս թագաւորների անփութութիւնը մանաւանդ այն պատճառով, որ հայ ժողովուրդը իր անժխտելի բարեմասնութիւններով ու կատարած մեծագործութիւններով գրառման արժանի նոյնիսկ դիցազնապատում սխրանքներ է ունեցել՝ նայած իր համեմատաբար փոքրաթիւութեանը: Հէնց այս առնչութեամբ է, որ ազգային արժանապատուութեամբ համակուրած հայրենասէր պատմիչը «ի խորոց սրտի» կշտամբում է հեթանոս հայ թագաւորներին՝ դպրութեան նկատմամբ ունեցած նրանց անփութութեան համար, եւ այդ առթիւ է, որ նա հայ ժողովրդի հազարամեակների գոյութեան խորհմաստ բնութագիրն է միաժամանակ ձեւակերպում իր թեւաւոր խօսքով. «*Ձի բէպէտ եւ ենք ածու փորք, եւ բուով յոյժ ընդ փորքու*

¹ Նոյն տեղում, էջ 11:

սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յովով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն թագում զործք արութեան գտանին զործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի, գոր եւ ո՛չ մի որ ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրեալ»¹: Մեզ բում է՝ իրաւացի չեն այն հայագէտները, որոնք մեղադրում են Խորենացու նման պատմիչներին յանուն քրիստոնէական աշխարհայեացքի նաեւ դպրութեան ու մատենագրութեան միտումնաւոր ուրացման մէջ նախաքրիստոնէական Հայաստանի վերաբերմամբ՝ միայն նրա համար, որ գրատր այդ մշակոյթը հեթանոսական են համարել նրանք²: Բայց չէ՛ որ հէնց ոչ այլ որ քան Խորենացին հեթանոսական ժամանակաշրջանի մինչեւ անգամ դիցաբանութիւնը, առասպելաբանութիւնը եւ ժողովրդական բանահիւսութիւնն ու երգարուեստը քննական վերլուծութեան է ենթարկում միայն նրա համար, որ *դրանց հիմքում ընկած պատմական նախադրեալները վեր հանի*. չէ՛ որ նա նոյնիսկ *օտար մատենագրութիւնների հէնց հեթանոսական շրջանի աղբիւրներն է հետազօտում*, որպէսզի դրանցում եղած կցկտուր տուեալների հիման վրայ նաեւ ներհիսի հայ ժողովրդի վաղ անցեալի պատմութիւնը: Անկասկած է, որ եթէ հեռաւոր ակնարկ անգամ նկատէր Խորենացին իր հետազօտած հեթանոսական շրջանի օտար քաղաքակիրթ աշխարհի վաղնջական հարուստ մատենագրություններում հայկական դպրութեան, մատենագրութեան ու գրերի կիրառման մասին Հայաստանում, մեծագոյն ցնծութեամբ եւ իրեն բնորոշ ազգային հպարտութեամբ կը հաւաստէր այն ի լուր աշխարհի, եւ ո՛չ թէ յանիրաւի կը կշտամբէր հեթանոս հայ թագաւորներին հէնց այդպիսի քաղաքակրթական հզօրագոյն միջոցի նկատմամբ նրանց անտարբեր լինելու համար...: Եւ բացի այդ բոլորից, եթէ ուղղակի հայկական սկզբնաղբիւրներ լինէին գրատր արտայայտուած՝ թէկուզեւ հեթանոսական աշխարհայեացքով, ապա ո՛չ թէ գիտակցաբար կ'ուրանային ու կը շրջանցէին դրանք մեր պատմիչները, այլ՝ իրենց քրիստոնէական աշխարհայեացքից մեկնելով հանդերձ՝ *քննադատաբար կ'օգտուէին դրանցից*, ինչպէս վարուել են այլալեզու հեթանոսական շրջանի մատենագրությունների նկատմամբ...:

Այսպէս, ուրեմն, սկզբնաղբիւրների մեր քննութիւնը ցոյց տուեց, որ բացառապէս մեսրոպատառ գրերով է սկիզբ դրում հայ մատենագրութեանը, իսկ հեթանոսական եւ ետքքրիստոնէական ժամանակաշրջանում՝ մինչեւ Մաշտոցի հանճարեղ գիտը *չեն եղել ո՛չ հայեցի դպրութիւն, ո՛չ հայեցի գրականութիւն, ո՛չ էլ հայկական գրեր*. Այստեղից եւ Վարդան Արեւելցուց սկիզբ առած նախամեսրոպեան հայկական գրերի եւ գրականութեան առկայութեան վարկածը մնում է վարկած՝ հիմքում չուրեմնալով, բացի հայեցողութիւնից, փաստական ո՛չ մի նախադրեալ: Եւ եթէ միջնադարում բոլորովին պատահականօրէն՝ մշուշոտ պատկերացման հետեւանքով առաջ քաշուեց նախամեսրոպեան հայեցի գրականութեան առկայութեան ենթադրութիւնը, ապա XIX եւ մասնաւորապէս XX դարում առանձին հայագէտների կողմից այն պարզապէս վերածուեց ազգային ինքնասիրութիւնը շոյող սնապարծ տեսութեան...³:

¹ Նոյն տեղում, էջ 10:

² Տե՛ս Իս. Յարութեանց, Հայոց գիրք, էջ 253-260, Ա. 9. Արքայապետն, Նախամեսրոպեան հայկական գրականութեան հարցը, ՀՄՍՀ Ժողովրդագիտութեան կից պետական ձեռագրատուն (Մատենադարան), գիտական նիւթերի ժողովածու, Թ. 1, էջ 43:

³ Չափազանց տարօրինակ է Ս. Այվազեանի նորագոյն «տեսութիւնը», ըստ որի հայերէն դպրութեան եւ այբութեան կիրառութիւնը համարում է սկսած 1785 թուականից, նախքան մեր թագաւորութիւնը, երբ որպէս թէ Հայաստանում ապրած հեկտոսները ստեղծում են ճիշդ այն գրասիւստեմը, ինչ Մաշտոցի հեղինակածն է..., ընդսմին՝ յայտնում եւ վառ երեւակայութեամբ պնդում է արւում այն մասին, որ, իբր,

Բայց Վարդան Արեւելցին ինքը միաժամանակ *հերքում է* իր պնդումը յու-
նատառ, ասորատառ եւ պարսկատառ հայեցի գրականութեան առկայութեան
մասին Հայաստանում, երբ միաժամանակ նոյն մտքի շարունակութեանը յայտնում
է, որ այդ գրասխտեմներով Մաշտոցը չի կարողացել Աստուածաշունչը քարգմանել
հայերէնի. «... Սուրբն Մեսրոպ յօրինէ հայերէն դպրութիւն՝ քսան եւ երկու զիր առ
Գանիէլէ ասորոյ գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն
զընդարձակութիւն լեզուիս անեղացեալ եղեւ յառաջնոյն՝ յոյն եւ ասորի եւ պարսիկ
գրով շատացեալք: Եւ Մեսրոպ ոչ կարէր նորօք փոխել զԱստուածաշունչ մատեանս
ի հայ քարքառ»¹: Այստեղ եթէ Վարդան Արեւելցին ակամայից է փաստօրէն
ժխտում յունատառ, ասորատառ եւ պարսկատառ հայեցի գրականութեան վար-
կածը, ապա այլոր՝ մանաւանդ հայոց գրերին նուիրում իր Ներբողում, բոլորովին
հրաժարուելով այդ տեսութիւնից, ամուր կանգնում է պատմական իրողութիւնների
միանգամայն ճիշդ գնահատումների վրայ՝ աներկբայօրէն գրելով այս անգամ. «Եւ
ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մինչեւ ցգիւս գրոյս մերոյ ամբ ԸԺ (110): Եւ ազգս մեր
զայնչափ ժամանակսն ի յայլ լեզուս էին դեգերեալ ընթերցմամբ աստուածային
գրոց, պաշտամամբ եւ սաղմոսերգութեամբ իրր ի խաւարի եւ անգիտութեան տա-
տանեայք եւ տիրեայք...»²:

Աւելին. հայեցի գրականութեան հիմնադրի պատիւը ամբողջովին վերագրելով
Մաշտոցին, Վարդան Արեւելցին երեւոյթների հակադրման համեմատութիւնների
եղանակով ցայտուն կերպով ընդգծում է միայն այլալեզու գրականութեան առկա-
յութիւնը նախամեսրոպեան ժամանակաշրջանում: Մեսրոպի ստեղծած գրերի
շնորհիւ սկիզբ առած հայեցի գրականութեան յեղաշրջող նշանակութիւնը տարփո-
ղելով, Վարդան Արեւելցին մեծ պաթոսով գրում է. «Այժմ ոչ լիցի ընթերցեալ եւ ոչ
իմացեալ կամ խօսեցեալ եւ ոչ լրեալ, զի որչափ հեռի են Արեւելք յԱրեւմտից,
այնչափ հեռի արար ի մէջ տէր զխաւար տգիտութեան մերոյ: Այժմ ոչ լիցի ասել
խուժ եւ լրսել դուժ, այժմ ոչ լիցի միոյն ընթերցուլ եւ միւսոյն մեկնել, այլեւ ամեն
վերածայնեացի ի ժողովրդենէն ի փառատրութիւն պաշտօնէից: Այժմ ունկնդրութիւն
լիցի վերծանողացն եւ ծանիցէ ոսմիկն զծանրութիւն պատուիրանաց տեառն, եւ
մեծատունք զմեծութիւն շնորհի նորա, եւ զեղջուկքն զովեսցեն զսքանչելարարն
տէրն, եւ առհասարակ արեւեսցեն զանուն նորա: Այժմ ոչ կարօտասցի որ քարգ-
մանութեան, եւ ոչ ընթասցի որ առ որ թէ՛ ծանո՛ ինձ զայս, այլ միւսորեալ
միաբանութեամբ վերինք եւ ներքինք եւ արտաքինք, վեհք եւ ոսմիկք, հեռաբնակք
եւ մերձակայք, մեծամեծք եւ փոքունք, ամենեքեան ծանիցեն զճշմարտութիւն,
իմասցին զարդարութիւն...»³: Նման դէպքերում է, որ, ինչպէս ասում են, մեկնա-
բանումներն աւելորդ են: Տարաբախտաբար՝ Վարդան Արեւելցու ասոյթներով
նախամեսրոպեան հայեցի գրականութեան ու գրի առկայութեան վարկածը «հիմ-
նաւորել» ճզնող հայագէտները վերցնում են նրա պնդումների միայն մի մասը, որը
համապատասխանում է նրանց կանխակալ մտասեւեռումներին: Իսկ եթէ Վարդան

մաշտոցեան գրերը այլ բան չեն, եթէ ոչ հենց հեկտոսեան գրերը, հետեաբար եւ Մաշտոցը
պարզապէս վերստին շրջանառութեան մէջ է դրել արդէն իսկ գոյութիւն ունեցած գրասխտեմը: Այս
առթիւ դիտել տանք նաեւ, որ ապշեցուցիչ է հեղինակի քնահաճ մեկնաբանումները ինչպէս հայ
մատենագրութեան տունակները, այնպէս եւ ընդհանրապէս պատմական փաստերը քննելիս: (Տե՛ս
նրա «Հայկական այբուբենի ծագման հարցի շուրջը» յօդուածը, «Գիտութիւն եւ տեխնիկայ»,
Երեւան, 1968, Թ. 4, էջ 1-10):

¹ Վարդան Արեւելցի, Պատմութիւն Տիեզերական, էջ 70:

² «Նորին Վարդանայ վարդապետի բան ասացեալ զովեստի պատմագրաբար...», տե՛ս «Բանբեր
Մատենադարանի», Թ. 7, էջ 381:

³ Նոյն տեղում, էջ 380:

Արեւելցու ասոյթները ամբողջութեամբ քննէին, ապա կը տեսնէին, որ Վարդան
Արեւելցին ինքն է միաժամանակ հերքում իր այն պնդումները, որոնք զուտ
հայեցողական բնոյթ ունեն եւ հակասում են պատմական փաստերին ու իրողու-
թիւններին...:

Մենք այստեղ կանգ չենք առնի նշանագրերի քննութեան վրայ, որոնք թէւ
կապում են Վարդան Արեւելցու անուան հետ, բայց միայն այն իմաստով, որ
գրչութեան արուեստի արգասիք հանդիսացող համառօտագրութիւնների ու պատ-
կերագրութիւնների այդ համակարգը առաջին անգամ մա է հաւաքել եւ ներկա-
յացրել իր «Ժողանք» աշխատութիւնում¹: Բանն այն է, որ նշանագրերը, որոնք
մատենագրութեան մէջ յայտնի են իբրեւ «Նշանագիրք իմաստնոց», դպրութեան
տեսութեան հետ ուղղակի եւ անմիջական առնչութիւն չունեն, այլ նրանց
նշանակութիւնը զուտ կիրառական է՝ բացառապէս գրչութեան արուեստում եւ
հմայագրերում²:

Ինչպէս քննարկումից հետեւում է, որքան էլ խոցելի կողմեր ունենայ վար-
դանեան տեսութիւնը հայեցի դպրութեան ձեւաւորման ու զարգացման, մաշ-
տոցեան գրերի զիտի եւ մատենագրութեան սկզբնաւորման մասին, այնուա-
մենայնիւ այդ տեսութիւնը շատ կարեւոր դեր է կատարել պատմականօրէն, հայա-
գիտական մտքի զարգացման ու հարստացման առումով: Այն մղիչ ազդակ է
հանդիսացել տեսական բարդ այս պրոբլեմի ամբողջական մշակման ճանապար-
հին՝ նորանոր փաստերի կուտակումով ու դրանց մեկնաբանումով:

Հայկական ՄՍՀ Լուսատրութեան Մինիստրութիւն
Կիրովականի Մանկավարժական Ինստիտուտ
«Գիտական կոնֆերանսի նիւթերի ժողովածու»,
Երեւան, 1974, էջ 105-152:

¹ Միայ կը լինի նշանագրերի համար առանձին հեղինակներ փնտրելը. իրականում՝ նշանագրերը մեր
գրիչների հաւաքական փորձի արդիւնքն են՝ ստեղծուած տեխնիկական նկատառումներով: Նշանա-
գրերի հիմնական մասը ձեւաւորուել է բոլորագրի անցման ժամանակաշրջանում՝ յաճախակի
գործածուող բառերի ծայրայեղ համառօտագրութեամբ առաւելագոյն արագագրութեան հասնելու
համար:

² Տե՛ս Լ. Խաչիկեան, Նախամեսրոպեան գրի հարցը եւ հմայագրերը, «Պատմա-բանասիրական
հանդէս», 1963, Թ. 4, էջ 145-157:

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՂՆՋԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՉԵՌԱԳՐԱԿԱՆ
ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ¹

Մաշտոցի անուան Մատենադարանի կամարների տակ հանգչող հայկական Չեռագիր գանձերը, որոնք ճանապարհորդել են դարերի միջով և հասել են մեզ, ունեն պատկառելի հասակ, շուրջ 1600ամեայ իմաստութեան ամբարտնով: Աւելին. Չեռագիր այս գանձարաններում արտացոլուած մարդկային քաղաքակրթութեան անդրադարձները՝ հնութեամբ պատմական ամբողջ դարաշրջաններով նախորդում են իրենց իսկ ծնունդին:

Հարկ է նշել, որ հայկական Չեռագրերում առկայ են ոչ միայն հեղինակային գործեր գիտութիւնների այն բոլոր բնագաւառների վերաբերեալ, որ մարդկային մասձողութիւնը հետագօտել է դարերի ընթացքում, այլև քարգմանական երկեր, որոնք ներկայացնում են ինչպէս հնագոյն քաղաքակիրթ ժողովուրդների ստեղծագործութիւնները, այնպէս և յետագայ դարերի ընթացքում պատմութեան ասպարէզ իջած նոր ժողովուրդների գրաւոր Յուշարձանները, որոնց հետ հայ ժողովուրդը շփման և յարաբերութեան մէջ է մտել իրերի իսկ բերումով: Այս եռակի իմաստով հայ մատենագրութիւնը բացառիկ արժէք է ներկայացնում ընդհանուր քաղաքակրթութեան պատմութեան համար: Բազմաթիւ հագուագիտ բնագրեր, որ քարգմանուած են հնագոյն ժողովուրդների լեզուներէից և որոնց սկզբնաղբիւրները կորստեան են մատնուել, պահպանուել և համաշխարհային քաղաքակրթութեան համար փրկուել են միայն շնորհիւ հայ մատենագրութեան: Այդ պատճառով էլ ընդունուած է ասել, որ մտաւոր այս հարստութիւնը միաժամանակ նաև աւանդապահ գանձարան է հանդիսանում հնագոյն քաղաքակրթութիւնների: Այստեղից և ընդհանուր հետաքրքրութիւնը բոլոր աշխարհամասերի գիտնականների՝ հայ մատենագրութեան նկատմամբ:

Այս սեղմ տողերում փորձ կ'արուի ընդհանուր ուրուագծով բնութագրել հայ և ֆրանսիացի ժողովուրդների փոխադարձ ճանաչումն ու մշակութային կապերը հնագոյն ժամանակներում՝ ձեռագրական աղբիւրների իսկ վկայութեամբ:

Դեռևս Դ. դարում Կոստանդ կայսրը Գաղիա է հրաւիրում ազգութեամբ հայ, Աբլենքի Համալսարանի ճարտասանութեան արուեստի անգերագանցելի Ուսուցչապետ Պարոյր Հայկազնին, կամ քաղաքակիրթ աշխարհին Պրոյերեսիոս անուամբ առաւել յայտնի անձնաւորութեանը, որին խորապէս պատուում է կայսրը: Այս

¹ Իրրեւ զեկուցում կարդացումս «Սովետա-ֆրանսիական սինյոդիումում», որ կայացաւ քաղաքաւայր Երևանում, 1973 թուականին:

հեղինակութիւնը պատմութեան մէջ յիշուած այն հայազգի հռետորն է, որի պատուին Հռոմում արձան է կանգնեցուել հետեւեալ բազմանշանակալի մակագրութեամբ. «Regina Roma, regi eloquentiae» («Հռոմի քաղաքին՝ ճարտասանութեան քաղաւորին»):

Այնուհետև. մինչև մեր թուականութեան Չ. դարը, գրաւոր աղբիւրները լուում են հայերի Ֆրանսիայում գտնուելու վերաբերեալ: Միայն 591 թուականին ֆրանսիացի պատմիչ և Տուրոն քաղաքի եպիսկոպոս Սէն Գրեգուարը իր աշխատութեան մէջ յիշատակում է Սիմոն անունով մի հայ եպիսկոպոսի, որն այդ թուականին գտնուել է Տուրոնում: Փաստերը յուշում են նաև, որ արաբ պաշտօնական անձանց հետ Ֆրանսիա ժամանածների թում, իբրև դեսպաններ և բանագնացներ, ինչպէս և առետրականներ եղել են հայեր, մանաւանդ Հարուն էլ Ռաշիդի և Կաուլու Մեծի միջև կայացած բարեկամական բանակցութիւնների առթիւ:

Ուշագրաւ է և այն փաստը, որ Ֆրանսիայի Օտուն քաղաքի վանական հաստատութեան գրադարանում գտնուել է Մուրք Ժերոմի նամակներն ամփոփող մի Չեռագիր, որն ընդօրինակուած է Թ. դարի վերջին և ոչ ուշ քան Ժ. դարի սկզբին: Չեռագրի վերջում միեւնոյն գրչի կողմից 90 լատիներէն բառերի բառարան է գրուած՝ համապատասխան հայերէն բառերով, բայց լատինատառ: Այն վերնագրուած է՝ «Verbo seu dictiones Armeniorum» խորագրով: Այս հնագոյն արժէքաւոր փոքրիկ բառարանը առաջին անգամ Փարիզում հրատարակեց Մ. Օմնը իր «Bibliothèque de l'école des Chartes» երկում, 1882 թուականին, իսկ 1896 թուականին անուանի հայագէտ Ա. Կարիերը վերահրատարակում է այն առանձին՝ «Un Ancien Glossaire Latin-Arménien» վերնագրով: Գիտնականի կարծիքով՝ սա հայ-ֆրանսիական մշակութային փոխյարաբերութիւնների հնագոյն գրաւոր վկայութիւնն է: Ա. Կարիերը նշում է նաև, որ հայերէն բառերի արտասանութիւնը արձանագրուել է ոչ թէ գրաւոր ընկալմամբ, այլ՝ բանաւոր կերպով, ուստի և Ֆրանսիա ժամանած հայ մարդու կողմից. «Արդարև մենք գործ ունենք մի Բաղադրի հետ, գրում է նա, որի բառերը քաղուած են մի հայի բերանից»:

Հայ և ֆրանսիացի ժողովուրդների փոխադարձ ճանաչումը ընդարձակուում է յատկապէս Խաչակրաց արշաւանքների ժամանակ՝ ԺԱ.-ԺԳ. դարերի ընթացքում: Կիլիկիայում հաստատուած հայկական քաղաւորութիւնը ամենաեռանդուն աջակցութիւն է ցոյց տուել Եւրոպայի, այդ թում և Ֆրանսիայի, խաչակիրներին: Հայկական քաղաւորութեան կարեւորութիւնը ընդգծում է նրանով, որ *Կիլիկիան յուսաւոր պատուեան էր հանդիսանում՝ Արեւելքի և Ասիայի վրայ բացուած: Եւրոպան կարող էր Արեւելքն ու Ասիան ճանաչել Կիլիկիայի միջոցով, այդ իսկ պատճառով մեծ է հայերի երախտիքը Եւրոպային՝ Արեւելքն ու Ասիան ծանօթացնելու գործում:*

Բացի դրանից. Կիլիկիան, լինելով առաջնեայ առետրական կենտրոն, միջազգային անցուղի (տրանզիտ) էր հանդիսանում ինչպէս Ասիայի և Արեւելքի երկրների, այնպէս և Եւրոպայի արտահանումների համար: Իսկ ժողովուրդների մերձեցման համար առետուրը, ինչպէս յայտնի է, ամենահզօր ուժն էր, որ խորտակում էր աշխարհագրական և ազգային բոլոր պատնէշներն ու արգելակները՝ հանդիսանալով առաջադիմութեան լծակը մարդկային քաղաքակրթութեան զարգացման ընթացքի համար: Կիլիկեան Այաս առաջնեայ նաւահանգստային քաղաքը Միջերկրական և Եւրոպական բոլոր երկրների կողմից հանրաճանաչ էր: Ջենովայի, Վենետիկի և ֆրանսիական քաղաքներ Մոնպելիէի, Նիմի, Մարսէլի սպարանքներով բեռնաւորուած առետրական նաւերը խարխիս էին զգում Այասի

նաառնաճառում՝ սուր պայքար մղելով միմեանց դեմ առետրական գործառնութիւններում: Կիլիկիայի հայկական թագաւորները Երոպական պետութիւնների, այդ թում եւ Ֆրանսիայի, առետրականներին հրովարտակներ էին շնորհում Այասի նաառնաճառից օգտուելու եւ Կիլիկիայում առետրով գրադուելու վերաբերեալ: Իսկ հայերը դեռ հին ժամանակներից ընդհանուր ճանաչում էին գտել որպէս *առետրական միջնորդներ*՝ իրենց ձեռներէցութեամբ եւ հմտութեամբ: Ի դէպ՝ բնութագրական է այն, որ հայ թագաւորների հրովարտակները, իբրեւ կանոն, թարգմանուել են հիմնականում լատիներէն կամ ֆրանսերէն լեզուներով: Լեւոն Գ. թագաւորի՝ Վենետիկի հայ առետրականներին 1271 թուականին շնորհած հրովարտակներից մէկում առկայ է պալատական գրագիր Ժօֆրոյի ֆրանսերէն լեզուով գրած հետեւեալ ծանօթագրութիւնը. «Et je translata et escrit Jofroy l'escrivien, de mot a mot, si cum in es de sons escrit en armenoio, par commandement de roi» («Եւ ես՝ Ժօֆրոյ դպիրս, թարգմանեցի եւ գրեցի բառ առ բառ այնպէս, ինչպէս այն գրուած էր հայերէն, թագաւորի հրամանով»):

Բնական բանասիրութիւնը պարզել է, որ հրովարտակների կազմման ընդհանուր կարգն ու ոճը սերտ մտնութիւն են ունեցել Երոպական դիւանատններում ընդունուած ձեւակերպումների հետ: Թագաւորական այս հրովարտակների գիտական ուսումնասիրութիւնը անշուշտ շատ բան կը պարզի հայ-ֆրանսիական եւ երոպական յարաբերութիւնների պատմութիւնից: Այդ հրովարտակների մեծ մասը, պէտք է ենթադրել, պահպանուած է Երոպայի, այդ թում եւ Ֆրանսիայի դիւանատններում:

Կարելի է փաստել եւ այն իրողութիւնը, որ համեմատական ցուցակներ են կազմուած եղել հայկական եւ ֆրանսիական չափերի եւ կշիռների վերաբերեալ դեռեա 1335 թուականին՝ Կիլիկիայում: Կամպանիա, Փրովանս, Մոնպելիէ, Նիմ եւ Մարսէլ քաղաքների հետ Կիլիկիայի հայ առետրականների գործառնութիւնները, բնականաբար, իրենց հետ Ֆրանսիա բերեցին հայերի, որոնք բնակութիւն հաստատեցին հիւրընկալ ֆրանսիական հողում:

Չեռագրական աղբիւրների քննութիւնը ցոյց է տալիս, որ փոխադարձաբար հայերէն եւ ֆրանսերէն լեզուների իմացութիւնը, տնտեսական-քաղաքական նկատառումներից ելնելով, նոյնպէս հրատապ անհրաժեշտութիւն է եղել Միջնադարում: Հայ ուսումնականները գիտէին ոչ միայն յունարէն, լատիներէն եւ երոպական մի շարք լեզուներ, որոնց հմտացումը պայմանաւորուած էր, անշուշտ, առետրական գործառնութիւններով եւ, ոչ պակաս չափով՝ նաեւ քաղաքական նկատառումներով:

Ի դէպ, Կիլիկիայի ուսումնականներից ոմանք մինչեւ անգամ եթովպերէն են իմացել: Այսպէս, երբ Հեթում պատմիչը պապին յուշում էր «սուրբ» քաղաքը՝ Երուսաղէմը, գրաւելու նպատակով Եթովպիայի թագաւորին «Յորդորական» յղելու միտքը, խորհուրդ էր տալիս նաեւ այդ «Յորդորական» թուրքը նախ ուղարկել Կիլիկիայի Հայոց թագաւորին, որպէսզի վերջինս հայ ուսումնականների միջոցով թարգմանել տայ այն եթովպերէնի: Այս փաստից ինքնըստիմքեան հետեւում է, որ հայ ուսումնականները, գիտնականները իմացել են այնպիսի լեզուներ, որոնք ծանօթ չեն եղել նոյնիսկ Հռոմի կաթոլիկական նութրապետութեան սահմաններում ճանաչում գտած գիտնականների շրջանակին...:

Մատենադարանում են գտնուած հնագոյն եւ լատագոյն Չեռագրերը ԺԱ. դարի պատմիչ Արիստակէս Լաստիւբոցու, ԺԲ. դարի պատմիչ Մատթէոս Ուռհայեցու,

ԺԳ. դարի պատմիչներ Կիրակոս Գանձակեցու եւ Հեթումի երկերը, որոնցում արտացոլուած են խաչակրաց արշաւանքների ժամանակների հայ-ֆրանսիական յարաբերութիւնները:

Երբ ֆրանսիական Ալիմիոն քաղաքը կարճ ժամանակում պապական նստավայր դարձաւ, Ֆրանսիայի եւ Կիլիկիայի յարաբերութիւնները առաւել սերտ բնոյթ ստացան: Ալիմիոնում արեւելեան լեզուների ուսումնասիրման դասընթացքներ էին բացուել, որտեղ 1322 թուականին հայերէն էին ուսուցանում Կիլիկիայի թագաւորների կողմից ուղարկուած հայոց վարդապետները: Իսկ Ֆրանսիան, իր տնտեսական ու քաղաքական շահերից ելնելով, արեւելեան լեզուներին տիրապետած ֆրանսիական միաբանութեան կրօնաւորներ էր ուղարկում Արեւելք՝ այդ երկրամասը ճանաչելու եւ ուսումնասիրելու համար: Նման անհրաժեշտութիւնը առաւել հրատապ էր դարձել նաեւ այն պատճառով, որ Ասիայում եւ Արեւելքում հանդէս էր եկել աշխարհակալ մի նոր պետութիւն՝ յանձինս մոնղոլների իշխանութեան, որոնք նուաճել էին մեծ թումով երկրներ Ասիայում եւ Արեւելեան Երոպայում: Հարկաւոր էր նրանց հետ հաղորդակցութեան մէջ մտնել եւ, եթէ հնարաւոր է, ապահովել նաեւ նրանց դաշինքը: Այս նպատակով Ֆրանսիան բանագնացներ ուղարկեց Կարակում՝ մոնղոլական արքունիքի հետ բանակցութիւններ վարելու համար:

Այս բոլորի լոյսի տակ բոլորովին էլ պատահական չի դիտուած այն, որ ԺԳ. դարի Կիլիկիայից ժամանած հայ պատմիչ Հեթումը Պուատիէում ֆրանսերէն լեզուով հեղինակում է իր պատմագրական նշանաւոր երկը՝ մոնղոլական պետութեան վերաբերեալ: Կոռիկոսի իշխան Հեթում պատմիչը, երբ գալիս է Ֆրանսիա, սիրալիք հիւրընկալում է Ալիմիոնի պապ Կղեմէս Ե.-ի կողմից եւ նրանից ստանում մի կալուած Պուատիէում, որտեղ եւ հաստատուած է: Այստեղ Հեթում պատմիչը իր քարտուղար Նիկողայոս Ֆալկոնին ֆրանսերէն լեզուով թելադրում է մոնղոլների պետութեան առաջացման եւ ծաւալման պատմութիւնը՝ ըստ իր տեղեկութիւնների, տպաւորութիւնների եւ երկարատեւ ուսումնասիրութեան: Այս աշխատութիւնը յայտնի է պատմագիտութեանը «Flos Historiarum Terrae Orientis» («Ծաղիկ Արեւելեան երկրների պատմութեան») վերնագրով, որ հարուստ տուեալներ է պարունակում մոնղոլների ռազմական, քաղաքական ու տնտեսական կարողականութեան եւ նրանց ազգագրական առանձնայատկութիւնների մասին: Կարելի է նշել, որ Հեթում պատմիչի քարտուղար Նիկողայոս Ֆալկոնը ոչ միայն գրի է առնում ֆրանսերէն լեզուով իրեն թելադրուած պատմագիտական այս աղբիւրը, այլեւ թարգմանում է այն լատիներէնի:

Բնականաբար՝ Հեթում պատմիչի այս աշխատութեան անհերքելի արժէքի մասին է վկայում այն մեծ հետաքրքրութիւնը, որ դրա նկատմամբ ժամանակ առ ժամանակ ցուցաբերել է Ֆրանսիայի գիտական հասարակայնութիւնը: Սկսած 1529 թուականից այն ունեցել է բազմաթիւ հրատարակութիւններ՝ լատիներէն եւ ֆրանսերէն: Ուշագրաւ է, թէկուզ, 1529 թուականի հրատարակիչ Ժան Լոնգղիտի խորագրումը այս աշխատութեան՝ հետեւեալ դիպուկ տողերով, որ թարգմանաբար ներկայացնում ենք. «Հիասքանչ պատմութիւնը Մոնղոլիայի մեծ կայսեր, լատիներէն թարգմանութիւն Կոռիկոսի իշխան Հեթումի երկի, (հոգեւոր) եղբայր Լոնգղիտի կողմից, 1529 թ.»: Ֆրանսիացի նշանաւոր հայագէտ եւ հայասեր Ֆրեդերիկ Ֆելդին արժէքաւոր ուսումնասիրութիւն է գրել մատենագրական այս

Յուշարձանի մասին եւ հրատարակել 1938 թուականին, Փարիզում լոյս տեսնող «Անահիտ»-ի էջերում (համար 4-5)¹:

Հայ-ֆրանսիական իմացական-մշակութային փոխյարաբերութեան կարեւոր մտւոյններից է նաեւ ֆրանսերէն լեզուով հեղինակուած իրաւաբանական մի Յուշարձանի թարգմանութիւնը հայերէնի, Ժ.Գ. դարի կէսերին, Կիլիկիայի հայ նշանաւոր իրաւաբան եւ պետական ու ռազմական գործիչ Սմբատ Սպարապետի կողմից: Իրաւաբանական այդ Յուշարձանը կիրառուելիս է եղել Անտիոքի ֆրանսիական տիրոջութեան եւ այդպէս էլ այն անուանում է՝ «Assises d'Antioche»: Միջնադարի իրաւաբանական այս երկում արտացոլուած են աւատատիրական հասարակարգի իրաւաբանական նորմերն ու ըմբռնումները՝ միաժամանակ կենցաղային շատ իրողութիւնների հաւաստմամբ: Հայերէն թարգմանութեան Առաջարկում հայ իրաւաբան-թարգմանիչը խոստովանում է, որ Կիլիկիայի հայկական արքունիքում արդէն իսկ երկար ժամանակ ղեկավարուելիս են եղել այդ Օրէնքներով. «*Վասն զի սովորութեամբ այս Անահիտը կու գնայր ազգս մեր ի դարպասս Հայոց...*», - գրում է նա: Նշանակում է՝ *ֆրանսիական մտքի արգասիքը հանդիսացող իրաւաբանական սոյն երկը կիրառուելիս է եղել հայ իրականութեան մէջ իր սկզբնաղբիւր վիճակով՝ ֆրանսերէն լեզուով:*

Մեր Մատենադարանում է գտնուում մի խիստ արժէքաւոր Չեռագիր (համար՝ 3488, քք. 170բ - 180ա), որը բովանդակում է մի Ուղեգրութիւն Եւրոպայի, այդ թում եւ Ֆրանսիայի վերաբերեալ, շարադրուած հայ ճանապարհորդ Մարտիրոս Երզնկացու կողմից: Ուղեգրութեան հեղինակը եւրոպական մայր ցամաք շրջագայութեան է դուրս գալիս 1489 թուականի հոկտեմբերի 29ին՝ Երզնկայից. նրա երթուղին եղել է՝ Կ. Պոլիս, Վենետիկ, Հռոմ, Գերմանիա, Շվեյցարիա, Ֆլանդրիա, այդտեղից՝ Ֆրանսիա, այնուհետեւ անցնում է Իսպանիա, Պորտուգալիա, յետոյ նորից իսպանական Գալիցիա նահանգը, այստեղից՝ Ֆինեստերէ հրուանդանը, որը մեր ուղեգիրը համարում է «եզր աշխարհի...»: Կարծիք կայ նաեւ այն մասին, որ *Մարտիրոս Երզնկացին մասնակցել է Կոլոմբոսի Ամերիկա կատարած երկրորդ ուղեւորութեանը, 1499 թուականին եւ, Ուղեգրութեան հաւաստմամբ իսկ, Մարտիրոս Երզնկացին ինքն էլ անձամբ ներկայացել է իսպանական թագուհուն գործադրուողների շարքում:*

Այս ամբողջ ճանապարհորդութիւնը, որ տեսել է շուրջ վեց տարի, մեծ մասամբ հետիոտն է կատարել Մարտիրոս Երզնկացին, առանձին ղեկներում՝ նաեւ նաւարկութեամբ:

Յատկանշական է, որ փոքրածաւալ այս Ուղեգրութիւնը, որ վերաբերում է եւրոպական մայր ցամաքին, հեղինակը վերնագրել է իբրեւ «ֆրանկների երկիր», գրելով. «*Այս է պատմութիւն ֆրանկաց երկրին, գոր տեսել է Երզնկացի Մարտիրոս եպիսկոպոսն, եւ գրեաց զքաղաքն, գոր տեսի աշօք իմօք եւ գորպիսութիւն, որ է այսպէս:*՝ Պէտք է ասել, որ Միջնադարում հայերը եւրոպացիներին ճանաչում էին իբրեւ «ֆրանկներ» ընդհանուր անուամբ:

Սոյն Ուղեգրական Յուշարձանը 1826թուականին հայերէնից ֆրանսերէնի է թարգմանել նշանաւոր ֆրանսիացի հայագետ Սէն Մարտէնը իր հիմնադրած «Journal Asiatique» (համար՝ 4-5) ամսագրում:

Հայ-ֆրանսիական մշակութային յարաբերութիւնների մատենագրական վկայութիւններից է նաեւ ֆրանսիական ասպետական մի սիրավէպի թարգմանութիւնը հայերէնով: Դեռեւս 1960-ական թուականներին Ֆրանսիայում ծնունդ է առնում (կատարմանական թարգմանութիւնից) միջնադարեան մի սիրավէպ, որում պատկերում է՝ պարոն Գողեֆրուա դը Լանտոնի կեանքի ու գործունէութեան վերհանման գուզընթաց, նաեւ նրա գեղեցիկ դուստր Վեննայի եւ երիտասարդ Փարէզի սիրոյ պատմութիւնը:

Ֆրանսիական գրականութեան այս Յուշարձանը, իր գրաչականութեամբ, եւրոպական շատ ժողովուրդների ուշադրութիւնն է գրաւել իր վրայ եւ յայտնի է եղել անտարակուսելի ժողովրդականութեամբ: Թէկուզ եւ այն փաստը, որ մինչեւ 1525 թուականը ունեցել է եւրոպական ուր լեզուներով տպագրութիւն, խօսում է նրա նմայքի ու գրաչականութեան մասին: Իսկ հայերէն այն թարգմանում է ազատ փոխադրութեամբ 1597 թուականին՝ Տերգնցու կողմից: Հայերէնից թարգմանուել է նաեւ հայատառ թուրքերէնի եւ այլն:

Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրական աղբիւրներում առկայ է նաեւ 1683 թուականին ֆրանսիական թագաւորանիստ Վերսալ քաղաքն այցելած հայ հասարակական գործիչ Շահնուրատի Յիշատակարանը, որում շատ արժէքաւոր տեղեկութիւններ են հաղորդում Վերսալի եւ պալատական շրջապատի մասին: Ուշագրաւ է Յիշատակարանի վերնագիրը՝ «Պատմութիւն Վերսալիոյ քաղաքի ֆրանկաց»:

Ինչպէս պատմագիտութիւնը պարզել է, Շահնուրատը առաջին անգամը չէ, որ քաղաքական որոշակի առաքելութեամբ է այցելում Ֆրանսիա: 1666 թուականին «յոյն-հայկական միացեալ ասպտամբութեան ծրագրով որպէս դեսպան Փարիզ գնացող» հայ գործիչը եղել է հէնց ինքը՝ Շահնուրատը: Նա, Թուրքիայում ճանաչուած հեղինակութիւն լինելով, կարողացել է ազատել թուրք բռնադատիչների ճիրաններից ֆրանսիացի բազմաթիւ զերիների:

Յայտնի է, որ Վերսալը, իբրեւ թագաւորանիստ քաղաք, հռչակում է 1682 թուականին, երբ Լուդովիկոս Ժ.Գ.-ն պալատական դղեակի հոյակապ կառուցումը քսան տարում աւարտելով, փոխադրում է այնտեղ: Հէնց այս ժամանակ թագաւորի կողմից ընդունում է նաեւ Շահնուրատը արքայական պալատում: Իբրեւ վաղնջական նկարագրութիւն Վերսալի՝ շատ արժէքաւոր է հայ գործիչ տպաւորութիւնների սոյն գրառումը:

Շահնուրատը անձամբ հանդիպել է թագաւորին ու նրա ընտանիքին, ինչպէս եւ նրա նախարարներին. «Ի թիւն հայոց Ռ-ՃԼԲ (1132+551 = 1683), փետրուար ամսոյ Բ. (2) աւուրն, եւ Բաղիշեցի Մահտեսի Շահնուրատս գնացի ի թագաւորանիստ քաղաքն Վերսալիոյ, տեսայ ... զֆրանկսիզու թագաւորն, զկինն, զորդին եւ զեղբայրն, զեղբօր հարսն եւ զվեզիրն»:

Շահնուրատը մինչեւ անգամ ներկայ է եղել թագաւորական ճաշասեղանին, եւ, որ կարեւորն է՝ մինչեւ անգամ նկարագրում է, թէ սեղանի շուրջ ինչպէ՛ս էին նստել թագաւորական ընտանիքը, մերձաւոր ազգականները եւ պալատի բարձրաստիճան ներկայացուցիչները՝ ըստ հեղինակութեան եւ դիրքի:

Այնուհետեւ Շահնուրատը նկարագրում է ճաշացուցակը, որը բաղկացած է եղել «աւելի քան ԾԵ (55) կամ Կ (60) թուրի (իմա՝ «բազմազան», թուրքերէն - Լ.Խ.)» ուտելիքներից:

¹ Տե՛ս մեր Սոյն աշխատութիւնը, էջ 442-444:

Շահմուրատը հիացմունքից՝ ապշած է ի տես Վերսալի պալատական հոյակապ կառույցների: Հաւաստում է, որ մարդկային լեզուն անգոր է նկարագրելու այն, ինչ ինքը աչքով է տեսել. «*Ես առաել զմեր տեսած բանն, միայն թէ մեր տեսածն աչօք, թէ չէ լեզուօք պատմել չի գար. աչօք չտեսնողն չի աւատար»:*

Միջնադարեան ժամանակաշրջանի վերաբերեալ այս փաստերն են, հիմնականում, որ ձեռագրական աղբիւրներով հաւաստում են հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների մշակութային առնչութիւնների մասին: Անշուշտ, մեր Մատենադարանում առաւել մեծ թուով Ձեռագրեր կան յետագայ դարերից, որոնք ամփոփում են ֆրանսիացի հեղինակների երկերի հայերէն բազմաթիւ քարգմանութիւններ: Բայց մենք դրանց վրայ կանգ չենք առնի, նկատի ունենալով, որ դրանք համեմատաբար նոր ժամանակների են վերաբերում:

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ
Սփիւքի կոմիտէի, համար 11 (243),
1970, Մարտի 18: Նաեւ «Ասպարէզ»,
1993, Դեկտեմբերի 1, «Նոր կեանք»:

ԾՈՎՔԻ ԵՒ ՀՈՌՄԿԼԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԸ՝ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՐ

Ա.

Ծանր, անգամ մղձաւանջային ժամանակներ էին, երբ երկար թափառումներից յետոյ կայք հաստատեց Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը Հոռմկլայում՝ գոյատեւելով ու հոգեւոր-մշակութային բազմաթիւ գործունէութիւն ծաւալելով այստեղ շուրջ մէկուկէս հարիւրամեակ անընդմէջ:

Ռազմա-քաղաքական երեւում եւ անստոյգ վիճակ էր տիրում հայ ժողովրդի համար Կիլիկիայում, պատմական յարածիզ ժամանակաշրջանում՝ Կարմիր վանքում (1105-1112 թթ.), Շուրքում (1112-1116 թթ.), Ծովք դղեակում (1116-1140 թթ.) հաստատուած, այնուհետեւ Հոռմկլայում տեղափոխուած (1149-1293 թթ.) Ամենայն Հայոց կաթողիկոսարանի գործունէութեան ամբողջ ընթացքում: Հայոց հոգեւոր կենտրոնի նստավայրի վերջին երեք տասնամեակների թափառումների չուերթը, Վարդան պատմիչի հաւաստմամբ, ճիշդ այդպէս է ուղենշում. «*Յայնմ ժամանակի արտոն Հայոց շրջեալ ի բազում վայրս ի Կարմիր վանքն եւ ի Շուրքն եւ ի Ծովքն՝ զնացեալ դադարէ ի Հոռմ Կլայն կոչեցեալ դղեակս*»¹: Տեղափոխութիւնների այս յաջորդականութիւնը միանգամայն արժանահաւատ է եւ հաստատում ձեռագրական աղբիւրների վկայութիւններով եւ: Մշտական նստավայրի յարափոփոխութիւնը, ըստ պատմագրական երկերում պահպանուած հաղորդումների, պայմանաւորուած էր նաեւ շրջակայքի անապահովութեամբ, հայ իշխանական տների ռազմական ուժի յարաբերական յուսալիութեամբ: Թէկուզեւ սահմանափակ-

ունք այս առնչութեամբ Կիրակոս Գանձակեցու թափանցիկ մի մեկնաբանմամբ. «... Քանզի իբրեւ տարան յոյնք առ իւրեանս զԳագիկ թագաւորն եւ գտէր Պետրոս, այնուհետեւ ոչ եղև յարեւելս արտոն հայրապետական, այլ ընդ իշխանութեամբ յունաց՝ երբեմն ի Սերաստիա, երբեմն ի Ծովքն կոչեցեալ վայր, իսկ սա (իմա՝ Գրիգորիս Գ. կաթողիկոսը - ԼԽ.) փոխեաց ի Կլայն հռոմայական: Եւ եղև պատճառ փոխելոյն այս. նեղեցաւ ի սկիւթականացն եւ ի տաճկաց՝ այսր անդր յածելով...»²:

Միանգամայն իրաւացի է վաստակաշատ հայագէտ Ղ. Ալիշանը, երբ ընդհանրացման ենթարկելով Ամենայն Հայոց կաթողիկոսութեան թափառումների պատմա-քաղաքական պատճառները, գրում է. «Առաջ Հայոց կաթողիկոսն հոն գտուէր՝ ուր որ էր արտոն, իսկ հիմայ արտոն հոն գտուէր՝ ուր էր կաթողիկոսն»³: Նման իրավիճակի հիմնական պատճառը, պատմական տուեալ ժամանակաշրջանում, Կիլիկիայում ռազմա-քաղաքական անկայուն իրադրութեան պայմաններում հայութեան համասփիտ ցրուածութիւնն էր՝ մի կողմից, միւս կողմից՝ նորաձեւումը հայկական իշխանութիւնների տարանջատ առաջացումը, մինչեւ միասնական թագաւորութեան ստեղծումը, Կիլիկիայի տարածքում: Այս իրողութիւնը, բնականաբար մրցակցութիւն էր բորբոքում իշխանական տների միջեւ՝ կաթողիկոսական արտոն իւրաբանչիւրն իր տիրոջում ունենալու յաւակնութեան փայփայմամբ, որը առանձին փայլ եւ հեղինակութիւն կը տար, իհարկէ, այս կամ այն իշխանական տոհմին...:

Կիլիկիան այս ժամանակաշրջանում, իրականում, բազմազգ իշխանութիւնների կոտորակուած երկիր էր՝ հայկական, յունական, լատինական եւ տաճկական մէջընդմէջ սփռուած տիրոջներով, միջաւատական եւ ազգամիջեան ոգորումներով ու հակասութիւններով: Բռնացումներն ու ռսնձգութիւնները միմեանց սահմաններում՝ յարատեւ էր ու անվերջ, գոյամարտի դաժան եւ արիւնալի բախումներով ու ընդհարումներով: Կիլիկիայում ստեղծուած իրադրութեան առնչութեամբ Ներսէս Շնորհալին «Թուրք Ընդհանրական»ի Առաջաբանում, ժամանակակցի վկայութեամբ, արդարացիօրէն նշում էր. «Յաղագս ժամանակիս չարութեան եւ բազմիշխանութեան, քաղաք թագաւորական եւ բազմաժողով՝ ոչ գոյ ազգի մերում»⁴: Բազմանշանակ սեղմ այս քաղաքացից հետեւում է, որ «բազմիշխանութեամբ» կոտորակուած եւ ծուրաւուած Կիլիկիայում տիրում էր «չարութեամբ» յագեցած մի իրադրութիւն՝ խելայեղ ասպատակութիւններով եւ ազգամիջեան զգվտոցներով, երբ, մանաւանդ, չկային «քաղաք թագաւորական» հայկական եւ «բազմաժողով» տարածքներ հայութեամբ բնակեցուած...: Այնարկը թափանցիկ է միանգամայն՝ հայութեան համեմատաբար նօսրութեան եւ դեռեւս տկարութեան հաւաստմամբ: Մի այլ յիշատակագիր ամենայն աներկմտութեամբ նոյն իրողութիւնը վկայում է՝ հաղորդելով, որ Կիլիկեան «աշխարհ ամենայն յայլաստեռից ըմբռնեալ՝ ազգս մեր ի մէջ նոցա ցրուեալք ընդ ոլորտս տիեզերաց: Եւ ոչ գոյր շրջել ի միջի նոցա...»⁴:

Մթնոլորտի այս յագեցմանը զուգորդում էին նաեւ մահմեդական ցեղերի ամայացնող ռազմարշաւները, որոնք ուղղուած էին, առաջին հերթին, առհասարակ բոլոր քրիստոնէայ ազգերի իշխանութիւնների դէմ՝ նրանց բնաջնջման քստմնեցու-

¹ Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 167:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ՝ Կ.Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961, էջ 168:

³ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1893, էջ 41, ծան. 1:

⁴ Ներսէս Շնորհալի, Թուրք Ընդհանրական, Վենետիկ, 1873:

⁵ Գաբ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 437:

ցի ռճրամտութեամբ: Ծովքի եւ այնուհետեւ Հռոմկլայի Ամենայն Հայոց կաթողիկոսութեան գործունէութեանը ժամանակակից յիշատակագիրները ձեռագրական աղբիւրներում սահմնկեցուցիչ տողերով են նկարագրում մահմեդականների գազանութիւնները Կիլիկիայի քրիստոնէայ ազգերի նկատմամբ՝ իրենց նուաճողա-կան խորշակարեր առաջխաղացքում. «Ընդ այն ժամանակս ազգք մահմեդական բոլոր դաւանման բռնացեալ զաւրացան յոյժ յելիցըն յարեաւ մինչեւ ի սահմանս Եփրատայ,- հաւստտում է 1173 թուականին ժամանակագիրը,- իսկ ազգք եւ զաւրութիւն քրիստոնէից ար ըստ օրէ նուազէր, ... եւ փքացեալ գազանաբար յարձակմամբ ջանային միահաղոյն բառնալ (իմա՝ «առհասարակ վերացնել») - Լ.Խ.) ի միջոյ գազգք քրիստոնէից»¹:

Սակայն հայ ժողովրդի համար ճգնաժամային իրադրութեան պատկերումը ժամանակի ամբողջացում է Ներսէս Շնորհալու չափածոյ գլուխգործոց երկի՝ «Ողբ Եղեսիոյ» հետեւեալ հատուածի ընթերցմամբ.

«... Ի բարկութեան ժամանակի,
Յորում նեղիմք յանօրինաց,
Ի յարտաքին չար գազանաց,
Եւ ոչ նըրազ ի դըրժանաց
Ի սուտանուն քրիստոնէաց»²:

Գումարած դրանց՝ գաղափարաբանական սուր եւ անգիջող պայքարի բորբորումը շիկացած բնոյթ ունէր կրօնա-դաւանաբանական նրբահիւս բանակորիւնների քօղարկմամբ Կիլիկիայում եւ նրա սահմաններից դուրս գործող քրիստոնէադաւան ազգային եկեղեցիների միջեւ, որոնք հետամտում էին քաղաքական-ազգային-եկեղեցական գերիշխանութեան հասնելու սեւեռուն նկրտումներ. այդ հաւաստում է դառնակսկիծ՝ հայութեան վերապրած «Եւ ոչ նըրազ ի դըրժանաց (այսինքն՝ «նենգութիւններից», «վնասներից») - Լ.Խ.) Ի սուտանուն քրիստոնէաց» յիշեցումը հեղինակի:

Իրօք, երուպական խաչակիրների քրիստոնէական քարոզչութիւնը եւ, «ազատագրական առաքելութեան» ինքնակոչ նշանաբանի հռչակմամբ հանդերձ, նրանց վարքագծի գործնական արարքների գուգադրման դէպքում, «սուտանուն քրիստոնէաների» կեղծիք ու խաբէութիւն է բնութագրում, դեռեւս Շնորհալուց առաջ, մաւի հայ մատենագիրներից Մատթոս Ուռհայեցին: Բանն այն է, որ նրա պատմագրական արժանահաւատ երկում պսակագերծում են խաչակիրները եւ բնորոշում իբրեւ յափշտակիչների ու աւազակաբարոյ խոշտանգիչների, որոնք իրենց դաժանութեամբ համարեա ոչնչով չէին զիջում մահմեդականներին, մինչեւ իսկ երբեմն գերազանցում էին նրանց որպէս հոգեկիչ բռնատէրեր իրենց դաւանակից ազգութիւնների, այդ թում եւ հայութեան նկատմամբ: Աւելին. մեր այս ժամանակագիրը յայտարարում է, որ նրանք նոյնիսկ լրացնում էին մահմեդականների կատարած չարագործութիւնների պակաս թողածը: Այսպէս, Ուռհայեցին ցուազնօրէն գրում էր. «... Բագումք այն էին (այսինքն՝ «հայերից շատերը նրանք էին») - Լ.Խ.)՝ որոց գաչսն խաւարեցուցեալ էին (իմա՝ «Ֆրանկք») կոչուած երուպացի խաչակիրները - Լ.Խ.), զձեռսն կտրեալ եւ զշունչսն հատեալ. հատանէին գերանսն (իմա՝ «անջա-

¹ Անդ, էջ 427:

² Ներսէս Շնորհալի, «Ողբ Եղեսիոյ», աշխատասիրութիւն Մ. Սկրտչեանի, Երեւան, 1973, էջ 225:

տում էին ազդերը» - Լ.Խ.) եւ ի փայտ հանեալ սպանանէին զտղայսն անմեղսն վասն ծնողացն խրատեալ հրամայէին»¹:

Մարափի, վայրագութիւնների ու քստմնեցուցիչ տեսարանների սփռումը Կիլիկիայով մէկ՝ պատմիչը բացատրում է խաչակիրների «զիշատչական ընչաքաղցութեամբ», զանձերի ու հարստութիւնների կողոպտման նրանց անյազուրդ մարմնաջով. «Եւ այսպիսի գործս անթուելի եւ անպատմելի,- յարում է ժամանակագիրը,- զի հանապազ վասն զանձի առնոյ անիրաւաբար չարչարանօք յաւեր եւ յապականութիւն դարձուցին զերկիր. եւ յամենայն ժամ պարտաւեալ կային եւ այլ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին զչարութիւն, զեփլա (իմա՝ «նենգութիւն»), - Լ.Խ.) եւ զամենայն ճանապարհս չարեաց սիրէին, բարեաց եւ ամենայն երախտեաց մոռացողք»²: Ոչ միայն այս ընդհանրացնող դատաւիտմամբ է բնութագրում դէպքերի ժամանակակից պատմիչը խաչակիրների «երախտամոռ» վարքագիծը ի դէմս Կիլիկեան հայութեան ցուցաբերած ազնիւ ու անվերապահ աջակցութեան, այլեւ նրանց առանձին ներկայացուցիչների յակնել անուանել մատանաշմամբ հաստատում իր մեղադրանքները: Այսպէս, խօսելով Ուռհայի Պաղտին կոմսի ասպատակութիւնների ու բռնացումների մասին, պատմիչը դառնացած ու սրտամորմոք հաղորդում է, որ նա «ի հոգս առեալ զքրիստոնէայսն առաւել քան զքորքն... մի առ մի քակեաց զամենայն իշխանսն Հայոց կարգաւ առաւել քան զառնն Պարսից եւ այսպիսի օրինակաւս հալածականս արար իշխանսն Հայոց, զայն՝ որ մնացեալ էին ի կատաղի ազգէն թուրքաց»³: Դե՛ն աւելին. պարզում է, որ Ուռհայեցին թէւ նախապէս նպատակադրուել էր խաչակիրներին լիովին եւ հանգամանօրէն դիմակազերծել, սակայն յետագայում «զգուշացել» է՝ հիմնաւոր, բայց եւ հասկանալի, հետեւեալ մտավախութեամբ. «Չբագում անիրաւութիւնս նոցա կամէի գրել,- անկեղծաբար խոստովանում է նա,- բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք»⁴:

Բնականաբար, կեանքի անստուգութեան, աւերի ու սրածութիւնների պայմաններում ետին պլանն էին մղում սեփական ժողովրդի աշխարհայեացքային-գաղափարախօսական հարցերը, նրա ուսումնա-դաստիարակչական յարաճուն մտահոգութիւնները՝ քրիստոնէավայել վարքագծի կերտման ու դաստիարակման ճիգերի գործադրման հնարաւորութիւնների նուազմամբ: Ինչպէս դիպուկ է նկատել ժամանակագիրը՝ խոտոր համեմատական են շիկացած ու մղձաւանջային մթնոլորտի մահասփիտ շունչը՝ մի կողմից, միւս կողմից՝ ժողովրդի աշխարհայեացքային-հոգեբանական-դաստիարակչական խնդիրների արժարծումը. որքան կեանքի անստուգութիւն՝ այնքան հետաքրքրութեան բթացում իմացախոսական-մշակութային կեանքի նկատմամբ, յետաձգելով այդ ուղղութեամբ կատարուելիք աշխատանքները ապագային՝ առաւել բարենպաստ պայմանների ստեղծմանը. «Եւ ազգս մեր ցրուեալ ի հեթանոսս եւ իշխանութիւն մեր բարձեալ,- հաւաստում է յիշատակագիրը,- եւ յետին դառնագոյն եւ չար ժամանակի պատահեալք, ցրուացեալ լինէին ամենեքեան առ սէր, եւ ոչ ոք էր, որ խնդրէր յայնպիսոյ աստուածամուխ առնել զճառս իմաստից կամ զմեկնութիւնս խորին խորհրդոց զանխրատեցելոց ի սուրբ կտակարանս առ ի յաւուտ մնալոյ ազգիս մերոյ յիշատակ բարեաց յապագային

¹ Մատթոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 338:

² Անդ:

³ Անդ, էջ 339:

⁴ Անդ:

զկնի եկողացն թողլով»¹: Իսկ նման իրավիճակի տխուր եւ մինչեւ իսկ կործանարար հետեւանքը լինում էր այն, որ մեր ժողովրդի անդամները իմացախոհական «անսպառ աղբիւրից» ցաւագնօրէն ծարաւ էին մնում, ուստի՝ հոգեպէս անմխիթարօրէն աղբաւ։ «Եւ այս աղագաւ ծարաւի մնային յանսպառ աղբիւրէն եւ աղբատը եւ քափուրը՝ յան(ն)հազ ճոխութենէն»²: Ասում է զարմանալի խորիմաստութեամբ ու ընդհանրացմամբ, որ պատիւ է բերում, անտարակոյս, մեր դպրութեանն առհասարակ...:

Պիտի ընդգծել նաեւ այն դրոյթի կարեւորութիւնը, որ ժամանակի մտաւորականութիւնը խորապէս ըմբռնել էր ճշմարտութիւնն այն մասին, որ հայոց քաղաքացիական բացակայութեան պայմաններում հոգեւոր առաջնորդութիւնը զոնէ մասամբ փոխարինում էր նրան եւ, որ յատկանշական է, վառ յոյսեր սնուցում մեր ժողովրդին երբեւէ հայոց քաղաքացիական վերականգնման ու հաստատման տեսլականով: Իսկ քաղաքացիական առկայութեան դէպքում է, որ իրեն ապահով կը զգար, բնականաբար, նաեւ հոգեւոր առաջնորդութեան կենտրոնը իր առաւել անկաշկանդ գործունէութեամբ: Այդ իսկ պատճառով յիշատակագիրը քաղաքական հեռաքափանց հայեացքով ակնարկում է միաժամանակ. «Նայել ոչ գոյր քաղաք քաղաքական ազգի մերում, զի անդ նստելով յաթոտ հայրապետութեան եւ վարդապետութեանն եւ ի տուէ եւ ի գիշերի ուսուցանելով ժողովրդեան մերոյ զաստուածային զպատուիրանս...»³:

Կար նաեւ լուսաւորչական դասանքի եւ ազգային շահերի ներհիսման՝ միաձուլման ըմբռնման հարցը, որը խորապէս յուզում էր (եւ չէր կարող չյուզել) հոգեւոր առաջնորդութեանը, ըստ որի ամէն մի թերացում կամ բացթողում ազգային աշխարհայեացքային-դասանքական քարոզչութեան ոլորտում՝ նաեւ անվերադարձ կորուստ կը նշանակէր ազգային միասնութեան ու ամբողջականութեան առումով, որն, իր հերթին, համագոր էր երբեմն ճակատագրական հետեւանքների, մինչեւ իսկ հայ զանգուածների «անհաւատութեան» մահմեղականութեան երախն ընկնելուն եւ «հայոց գառներին գայլերի կողմից յափշտակուելուն»...: Բերենք այս արժէքատր ընդհանրացումը, մտքի տարողականութեան պատճառով, իր բնագրային ընթերցմամբ. «... զի անդ նստելով յաթոտ հայրապետութեան եւ վարդապետութեանն եւ ի տուէ եւ ի գիշերի ուսուցանելով ժողովրդեան մերոյ զաստուածային զպատուիրանս, եւ զի քաց թողուին եւ լրանելն ի հովուելոյ՝ անհաւատութեան համարէր նշանակ, տեսանելով զգառինս ի գայլոց յափշտակեալ եւ անտես առնելով»⁴:

Ահա այս անձուկ իրադրութեան պայմաններում է, որ յիշատակագրի բնորոշմամբ՝ «մարդադէմ զազաններին» շրջապատում ծուարած Ծովը դղեակի հայոց հայրապետները դիտում էին իբրեւ «ճնճղուկ յորձայթէ որսողաց». «Եւ արդ թէպէտ եւ բնիկ աշխարհէն վտարեալ էին սուրբ հայրապետքն Հայոց, ուր երիցագոյն արքուն էր գառաջինն ի Շիրակեանն Անի: Բայց զայնու ժամանակաւ զետեղեալ ունէին զկայանս բնակութեան տեսան Գրիգորիսի տիեզերալոյս եղբարն Ներսէսի յերկրին Անտիոքայ՝ ի գաւառին Սղոյ, ի փոքր դղեակն Ծով կոչեցեալ, եւ աղաթէին առ Տէր ապրեցուցանել զնոսա ի չարաթոյն այլասեռիցն եւ ի մարդադէմ

¹ Յիշատակարանը ձեռագրաց, էջ 425-426:
² Անդ, էջ 426:
³ Անդ, էջ 437:
⁴ Անդ:

զազանացն, որ եւ փրկեալք լինէին եւ ապրեալք որպէս ճնճղուկ յորձայթէ որսողաց...»¹:

Վտանգներով ու արհաւիրքներով յղի այս ժամանակաշրջանում, երբ Կիլիկիայում հայկական իշխանութիւնների տիրոջները շրջագայելն անգամ կապուած էր ահաւոր փորձութիւնների հետ, Ծովքի հոգեւոր հայրերը իրենց պատասխանատուութեան բարձրութեան վրայ էին գտնում. «... քանզի ... աշխարհ ամենայն յայլատեոյց ըմբռնեալ էին եւ ազգք մեր ի մէջ նոցա ցրուեալք ընդ ոլորտս տիեզերաց: Եւ ոչ գոյր հնար շրջել ի միջի նոցա եւ խրատել զնոսա եւ ուղղել ըստ նմանութեան առաքելոցն սրբոց յաղագս ժամանակին չարութեան եւ անիշխանութեան»²:

Հայ ժողովրդի Գոյամարտի աննկունութեան ու կենսունակութեան վառ ապացոյցներից է անշուշտ Կիլիկեան «Հայաստանի» ստեղծումը տարագրութեան պայմաններում՝ ի զին գերմարդկային ճիգերի, տառապանքների ու արհաւիրքների յաղթահարման: Այդ իսկ պատճառով ժամանակի մտաւորականութիւնը, իր հոգեւոր առաջնորդութեան հետ միասին, դողում ու զուրգուրում էր Կիլիկիայի հայաստեղծ իշխանութեան վրայ սպառնացող ամէն մի վտանգի վնասազերծման վճռականութեամբ. «զի մի՛ ... աւերեսցի տունն, որ արեամբ ստացեալ է», - ինչպէս պատասխանատուութեան գիտակցութեամբ ու հանդիսատր լրջութեամբ արձանագրել է յիշատակագիրը³:

Իսկ Կիլիկեան հայկական պետականութեան ստեղծման ու ամրապնդման հարցում՝ իր մշակութային-լուսաւորական ծառայութիւնների վիթխարի ներդրմամբ, Ծովքի ու Հոռմկլայի Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը, անտարակոյս, չափազանց արժէքատր ու երախտընկալ դեր է կատարել:

Հայոց կաթողիկոսական գահին, Գրիգոր Բ. Վկայասէրի վախճանումից յետոյ, Կարմիր վանքում 1195 թուականին բազմում է, փոխանորդական իրաւունքով եւ կտակի համաձայն, Բարսեղ Անեցիցն, որը, սակայն, գահակալում է ընդամենը ութ տարի (1105-1113 թթ.)՝ զոն գնալով մի շատ յիմար պատահարի: Ըստ Սմբատ պատմիչի հաղորդման՝ «ի սոյն ամի (այն է՝ 1113 թ.) յամսեանն Տրէ (իմա՝ հին հայկական տոմարի չորրորդ ամսում - Լ.Խ.), մեռաւ սուրբ հայրապետն տէր Բարսեղ չար պատահմամբ. քանզի ի գեօղ մի էր, որ կոչէր Վարդերի, մօտ յԱնձանիք, եւ կայր ի տանիս աշակերտօքն յաղօթս, եւ յանկարծակի կործանեցաւ տունն, եւ ոչ ումեք եղել վնաս քայց միայն տէր Բարսղի, զի հարեալ ողնն նորա յորմն՝ ընկաւ, եւ ապրեցաւ ատուքս Գ. (3) եւ ետ տանել զինքն ի Շուղրն, եւ ետ յաթոտ իւր գորդի Ապիրասին ԳԳրիգորիս, եւ ածէր ի կատարումն զաւանդն եւ վախճանեալ թաղեցաւ»⁴: Պարզում է, որ հոգեվարքից առաջ Բարսեղ կաթողիկոսը, Գրիգոր Բ. Վկայասէրի «աւանդի» համաձայն, իրեն յաջորդ է նշանակում դեռեւս տասնհինգամեայ Գրիգորիսին՝ Ապիրատ Պահլաւունու որդուն, որը ճանաչում է հայ եկեղացական պատմութեան մէջ որպէս «Գրիգորիս Գ. կաթողիկոս, Փոքր

¹ Անդ, էջ 428:
² Անդ, էջ 437:
³ Անդ, էջ 446:
⁴ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 141-142:

«Այսպես»։ Ի դեպ, Սմբատ պատմիչից վերոբերեալ վկայութիւնը ամբողջութեամբ առկայ է նաեւ Յայսմատորքում՝ «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիս-եանցն եւ Պետրոսեանցն» գրութեան մէջ¹, յաւելումով այնպիսի տեղեկութիւնների, որոնք անմիջապէս աղերսում են գահակալական յաջորդականութեանն ու կաթողիկոսական հակաթոռ կենտրոնների տարածայնութիւններին ու վեճերին։

Այնուհետեւ Սմբատ պատմիչը հաւաստում է, որ կաթողիկոսական օժման արարողութիւնը հանդիսատարապէս կատարում է Բարսեղ կաթողիկոսի թաղումից անմիջապէս յետոյ. «Իսկ զկնի փոխմանն տէր Բարսեղի, ժողովեցան ի Կարմիր վանքն բազմութիւն եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ հարց, եւ եղին զտէր Գրիգորիս կաթողիկոս Հայոց, ընդ դաստիարակաւ ծերոց, զի տղայ էր տիօք եւ ոչ եւս ունէր մօրում»²։

Սակայն Գրիգորիս Գ. կաթողիկոսի հեղինակութիւնը փխրում էր սկզբնական շրջանում. հրաժարում են ճանաչել նրան մի շարք եպիսկոպոսութիւններ՝ դեռ առի, մանկահասակ լինելու լուրջ պատճառաբանութեամբ։ Այսպէս, յատկապէս զույս է բարձրացնում Աղթամարի թեմական առաջնորդ Դաւիթ Արծրունի արքեպիսկոպոսը եւ, համախմբելով իր շուրջ Տաթևի, Բջնու, Արտազի ու Հաղբատի հոգևոր առաջնորդներին, մանաւանդ յաւակնելով իր մօտ ունենալ, իբրև «կաթողիկոսական իրատուքի» խորհրդանշան, սբ. Գրիգոր Լուսաւորչի Աջը աւանդական լիազօրութեամբ, նոյն թուականին հռչակում է իրեն «փնքնագլուխ» կաթողիկոս. «Եւ յետ մահուն տէր Բարսեղին՝ ապստամբեցաւ Աղթամար, կարդում ենք Յայսմատորքի յիշատակարանում, - եւ տէր Դաւիթ արքեպիսկոպոսն Աղթամարայ նստաւ ինքնագլուխ կաթողիկոս։ Որ ընկալան եւ հնազանդեցան նմա իշխանքն եւ ամենայն արքեպիսկոպոսունքն արեւելից արքեպիսկոպոսն Թաղեոսի առաքելոյն եւ Տաթևուն, Բջնուն եւ Հաղբատուն։ Սորա միաբանեցան տէր Դաւիթն Աղթամարայ, որ էր թագաւորագն ի թոռանցն Գագկայ։ Եւ ունէր առ իւր զԱջն Լուսաւորչին, զքօղն եւ զգաւազանն»³։ Իսկ այս եպիսկոպոսութիւնների համաձայնութիւնը, ինչպէս յայտնի է Հայոց եկեղեցական պատմութիւնից, պարտադիր էր կաթողիկոսական ընտրութիւնների օրինականութեան համար։

Կարճ է տեսնում, սակայն, այս ճգնաժամը եւ ընդամենը մի տարի յետոյ տարածայնութիւնների յաղթահարման համար ծաւալուած համոզական փաստարկումների գործութեամբ՝ Գրիգորիս Գ. կաթողիկոսին եւ իր համախառններին յաջողում է զլատել ու հեռացնել Աղթամարի հակաթոռ կաթողիկոսութեան նեցուկ հանդիսացած արեւելեան թեմերին ու իշխաններին եւ վերստին ապահովել նրանց աջակցութիւնն ու ենթարկումը Կիլիկիայի Կարմիր վանքում բազմած նորընտիր եւ տոհմիկ «Ամենայն Հայոց կաթողիկոսութեանը»։ Գրիգորիս Գ. կաթողիկոսի նախագահութեամբ գումարում էր երեք հարիւր պատգամաւորների խորհրդակցութիւնը, հոգևոր եւ աշխարհիկ ներկայացուցչութեամբ, զրատր բացատրականով դիմում է

Արեւելեան Հայաստանի թեմերին եւ իշխաններին՝ «փարատելով» տարակուսանքներն ու առարկութիւնները նորընտիր կաթողիկոսի տարիքային վաղաժամութեան հարցում՝ մանաւանդ եթէ դրան հակակշռում են, փաստարկում են նրանք, Գրիգորիս Գ. կաթողիկոսի անբասիր նկարագիրը՝ առաքինութիւնն ու տոհմայնութիւնը (Գրիգորիս Բ. Վկայատէրի քերորդու՝ Ապիրատի զաւակը հանդիսանալը), եւ մասնաւորապէս «գիտնական դաստիարակների» հմտութեամբ ձեռք բերած նրա հիմնաւոր կրթութիւնը. «Լասն այսորիկ հնազանդեցան նմա (իմա՝ Դաւիթն - Լ.Խ.) արեւելեանքն տարի մի, մինչ որ ժողովեցան գիտնական ծերքն, որ առ տէր Գրիգորիսն կային։ ԳՃ. (300) անձն կարգաւորաց, եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ փիլիսոփայից։ Եւ զրեցին յարեւելս, թէ զի՞նչ իցեն սխալանք՝ կաթողիկոսի տղայական հասակն, զի սուրբ է անձամբն, ուղղափառ հաւատովն եւ բարի գործով, անարատ մարմնով եւ մաքուր հոգով, աստուածահաճոյ վարութ՝ ընտրեալ ի սուրբ ազգէ, սնեալ եւ վարժեալ ի ձեռն սուրբ եւ գիտնական դաստիարակաց»⁴։ Ի «հիմնաւորումն» կաթողիկոսական գահին նաեւ տղայական տարիքի «պատշաճութեան» հոգևոր գերագոյն այդ պաշտօնի համար՝ վկայակոչում են մինչեւ իսկ բիրիակական «փաստեր», երբ 12 տարեկան հասակում Սողոմոն Իմաստունը թագաւոր է ճանաչուել Իսրայէլի եւ դատաւճիռ կայացրել («իրատուս արար») գողացուած երեխայի համար վիճարկող երկու կանանցից հարազատ մօրը արդարօրէն բացայայտելու խնդրում. նոյն հասակում է Դաւիթը, ըստ անատարկելի այդ հաւաստումների, «մարգարէացեր»։ Իսկ հայոց եկեղեցական պատմութիւնից՝ ոչ այլ որ քան Գրիգոր Լուսաւորչի Վրթանէսի 15ամեա որդուն կաթողիկոս օժեց եւ ուղարկեց Աղուանք, հետեւաբար պարագան տարրեր չէ նաեւ Ապիրատ Պահլաւունու որդու՝ Գրիգորիս Գ. կաթողիկոսինը...²։ Փաստարկման ներգործութիւնը ակնբայս է դառնում իսկոյնեւեթ ու նշորակային սրութեամբ. «Չայնս լուեալ արոնակալն արեւելից, արքեպիսկոպոսունքն եւ իշխանքն հնազանդեցան սուրբ արոնոյն Գրիգորի կաթողիկոսին։ Եւ Աղթամար մնաց յապստամբութեանն իւրեանց»³։ Որոշ ժամանակ անց վերացում է նաեւ «կաթողիկոսական իրատուքի» պատճառաբանութիւնը, երբ ... գողացում են Աղթամարից Լուսաւորչի Աջն ու կաթողիկոսական քօղը գաւազանի հետ միասին եւ բերում Կիլիկիա, նախ Ծովք դղեակ, ապա՝ Հռոմկլայ. «Եւ յետ ամաց՝ զԱջն սուրբ եւ զքօղն գողացան յԱղթամարայ եւ տարան առ կաթողիկոսն տէր Գրիգորիս՝ ի Ծովքն Արդնու։ Եւ ապա յետոյ փոխեցան ի Հռոմկլայն»⁴։

Բնա էլ պատահական չէ, ոչ էլ զարմանալի, որ զինական մաքառումների այս խտովալի ժամանակաշրջանում կաթողիկոսական նստավայրերը, իբրև կանոն, լինում են ռազմակաւորէն պաշտպանուած բերդեր կամ դղեակներ, որպիսիք էին, դիցուք՝ Ծովքը, Հռոմկլան։

Կաթողիկոս օժուելուց ընդամենը երեք տարի յետոյ՝ 1116 թուականին Գրիգորիս Գ. հայրապետը փոխադրում է իր հայրենական կալուածը՝ Ծովք դղեակը, ուր եւ մնում է մինչեւ 1149 թուականը, երբ, դարձեալ ապահովութեան նկատաւումներով, ստիպուած նորից տեղափոխում է, այս անգամ՝ Հռոմկլայ։

¹ Անդ:
² Տե՛ս անդ:
³ Անդ:
⁴ Անդ:

¹ «Իսկ տէր Բարսեղն շրջեալ առ նոքօք ակն տալ Հայոց ժողովողեանս, ուր ցրուեալ էին յօտար յերկիրն յայն, եւ պատահեցաւ գեօղ մը, որ կոչէր Վարդենի, մօտ ի յԱմնանիք։ Եւ կայր ի տանիս մի բահանայից եւ ժողովողօք՝ ի ժամանկ կիրակնոյ մի յերեկոյին։ Եւ ծանրացեալ տանիսն փլաւ, եւ այլ ումեք վնաս ոչ եղեւ, բայց միայն կաթողիկոսին, զի հարեալ ողն ի քար րեկաւ։ Բայց ապրեցաւ Գ. օր։ Եւ ասաց տանել զինքն ի Շուրբ անապատն, ուր եղեալ էր քեռին իւր Գրիգոր Վկայատէրն, եւ ինքն ձեռօք իւրովք էած եւ եղ ի տեղի իւր գորդի Ապիրատին՝ գմանուկն տէր Գրիգորիս, եւ ապա ինքն վախճանեցաւ եւ քաղեցաւ անդէն ի Շուրբն մօտ ի տէր Գրիգորիս» (Գար. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց (Ե. դարից մինչեւ ԺԲ), Անթիլիաս, 1951, էջ 42:
² Սմբատայ Սպարապետի Տաթևիքը, էջ 142:
³ Յիշատակարանք Ձեռագրաց, էջ 421-422:

Ծովը դղեակը, որ աղբիւրներում շատ անգամ յիշատակում է նաեւ իբրեւ «բերդ», գտնում է Տլուք գաւառում, Եփրատից արեւմուտք, Այնթապից հիւսիս-արեւմուտք, Սոֆ գիւղի տեղանքում:

Դեռես կաթողիկոսի կրտսեր եղբայրը՝ Ներսէս Ընորհալին 1151 թուականին իր գրած «Բանք չափաւ» ստեղծագործութեան մէջ «սեփական կալում» լինելու, հետեւաբար եւ՝ ծննդավայր հանդիսանալու մասին ազդարարում է.

«Մեր ի դղեկէն, որ Ծով կոչի,
Որ սեփական մեր էր տեղի...»¹:

Բայց, ըստ երեւոյթին, լատիններին է անցած լինում Ծովը Տլուք գաւառի հետ միասին Ապիրատի չարանենց սպանութիւնից յետոյ, քանի որ Սմբատ պատմիչի հաղորդման համաձայն, Ծովը բերդը, որ բնորոշում է իբրեւ «դղեակ», իր շրջակայ գիւղերով Գրիգորիս Գ. հայրապետը եւ Ներսէս Ընորհալին գնում են 60.000 դահեկանով Անտիոքի լատին Ռընուղ իշխանից. «Չայսու ժամանակաւ սուրբ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս կայր ի փոքրագոյն դղեակն Ծովը, ի սահմանս Տլոյ, գոր ստացեալ էր սուրբ հայրապետն զնոց ի բրինձէն Անտիոքայ եւ ԺԵ (15) զեղ շուրջն ի ԿՌ (60.000) դահեկան, եւ եկեալ անդ բնակէր հանդերձ եղբայրն տէր Ներսիսի, եւ աշակերտօքն, եւ ամենայն կահիւ սրբոյ աթոռոյն. եւ ամենայն ազգայնօքն իրեանց»²:

Սոյն քաղաւածքում ուշագրաւ է այն փաստը, որ տեղափոխուողների հետ են եղել նաեւ «աշակերտները», որոնք յուշում են, իրենց հերթին, նաեւ ուսումնագիտական կենտրոնի՝ կաթողիկոսական դպրեկանքի առկայութիւնն ու գործունէութիւնը Ծովը դղեակում:

Ծովը նաեւ «ամրոց» է յիշատակում մի այլ ժամանակակցի կողմից՝ դեռես 1151 թուականին, երբ Յովհաննէս գրիչը Աւետարան է ընդօրինակում այնտեղ՝ «ընտիր եւ ստոյգ» գրչագրից. նրա Յիշատակարանում կարդում ենք. «Յամի վեցհարիւրերորդի արամեանս տաւմարի (600+551=1151), ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի՝ հայոց հեղինակի եւ եղբար նորա՝ Ներսիսի, եւ ի բունակալութեան Միջերկրեայս Սելիք Մաստտին՝ յիսմայել էւ յիկոնիոն քաղաքէ, գրեցաւ Աւետարանս այս յ(ը)նդիր եւ ի ստոյգ արիւնակէ յամրոցիս՝ որ կոչի Ծով, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս եւ երբոյ նշանիս...»³:

Գրիգոր Երեցը, որ Ուտիայեցու պատմութեան շարունակողն է, իր հերթին հաղորդում է կաթողիկոսական նստավայրի բնոյթի մասին «բերդի» բնորոշմամբ. «Յայսմ ամի (իմա՝ 1161 - Լ.Խ.) տէրն Անտիոքոյ որ Բրինձ կոչի եւ անուն նորա Սիր Ռընաղտ, եկն յաւուրս աշնանային եւ յանոգս եղեալ իջանէր յԱլեքսայ երկիրն, եւ ի բերդն կաթողիկոսի, որ կոչի Ծով, ասպատակս սփռէր ի շուրջկայ երկիրն, ասար առնելով եւ գերելով զբորքմանսն գոր գտանէր ի սահմանս...»⁴: Ըստ տեղագրական ուսումնասիրութիւնների՝ «Ալեքսայ երկիրը» Տլուք կամ Տիւլիք գաւառն է, «եւ այս գաւառը՝ Անտիոքի իշխանութեան ոչ միայն սահմանակից, այլ նաեւ սահմանին

մէջ էր՝ Անտիոքի գորաւոր ժամանակներուն»¹: Իսկ Ծովը բերդի տեղանքի ու դիրքի բնութագրման առնչութեամբ նոյն հեղինակը, իբրեւ եզրակացութիւն, հաւաստում է. «Իսկ դղեակն՝ շինուած է իբրեւ ամուր դիրքի մը եւ ապահով տեղը, պարսպեալ չորից կողմանց պարուրածն լեռներով եւ ջրով պատեալ, ինչպէս էր դիրքն Աղթամարայ իւր բերդով եւ տաճարով, յետոյ երկոցունց ալ ցամաքը կտրուած, դղեակն կործանուած, թէպէտ Աղթամարն մեծաշէն եւ հոյակապ կը կենայ իր տաճարով, եւ անհամեմատ է Ծովն Ծովկիս, ժայռն ժայռիս»²: Իսկ նման դիրքի ընտրութիւնը բերդի կամ դղեակի համար՝ պայմանաւորուած էր անշուշտ բնական պաշտպանութեան նկատառումներով:

Աղբիւրների քննութիւնից պարզում է նաեւ, որ Ծովը ամրոցի վերակառուցումը եւ, մասնաւոր, կաթողիկոսական կացարանի վերածումը ամբողջութեամբ Գրիգորիս Գ. հայրապետի նախաձեռնումն է եղել: Այդ մասին վկայում է ոչ այլ որ քան վերջինիս եղբայրը՝ Ներսէս Ընորհալին իր «Բանք չափաւ» ստեղծագործութիւնում.

«Իսկ հայրապետ հանուրց Հայոց,
Անուն գուարբուն Գրիգորիոս,
.....
Ի Ծով անուն դղեկէն եկեալ
Չոր սեփական ինքեան շինեալ»³:

Իսկ «Ոսկեփորիկ»ում (ԺԴ հատ.) ամփոփուած Ներսէս Ընորհալու Վարքում կաթողիկոսական այս կացարանը բնութագրում է իբրեւ «փոքրագոյն դղեակն Ծով կոչեցեալ»⁴: Մակայն տեղանքի «փոքրագոյն» լինելը, այնուամենայնիւ, հաւաստարանշանակ չէ բնաւ, իր պատմական եւ հոգեւոր-մշակութային արժէքով ու անդրադարձով, ակնարկած իմաստին՝ մեր ժողովրդի տարեգրութեան մէջ...:

Արձանագրենք՝ բանասիրութեան մէջ այս կացարանի տեղանքը, իր շփոթեցուցիչ անուանումով, յաճախ է թիրիմացութիւնների տեղիք տուել, որ, սակայն, հիմնաւորապէս փարատել է բանասէր Բ. Կիլիսեանը վերոյիշեալ իր ուսումնասիրութեան մէջ՝ համապատասխան աղբիւրների վկայակոչումներով ու համադրմամբ:

Այսպէս, «Ծովը» խաբուսիկ անուանումը իսկոյն ենթադրել է տուել առանձին պատմաբանների ու բանասէրների (Չամչեանց, Սրուանձտեանց եւ այլք), որ այն անպայմանօրէն պէտք է առնչուի, ըստ իր յուշած բնոյթի, տեղագրական համապատասխան վայրի՝ ծովի կամ լճի հետ: Եւ դա բնական է ու հասկանալի: Ուստի եւ այն աղերսակցել են մերք Խարբերդի, մերք Արդնիի, մերք էլ Խարբերդի եւ Արդնիի միջեւ գտնուող Կէօլճիքի («Ծովակ», «Լճակ») եւ կամ էլ պատկերացրել են Խարբերդից Տիգրանակերտ ընկնող ճանապարհին հանդիպող «ծովը՝ լեռանց վրայ եւ լեռանց մէջ խնկամանի մը կը նմանի բաժակածն»⁵:

Բ. Կիլիսեանը իրաւամբ հերքում է այս վարկածները. նախ՝ հաստատում է կաթողիկոսական այս դղեակի ծով կամ լիճ չլինելը («Ծով կամ Ծովը ըստածը ոչ թէ լիճ մըն է կամ կէօլճիք մը, այլ բերդի կամ դղեակի անուն. մեր յառաջ բերած պատմական բոլոր վկայութիւններուն մէջ իսկապէս Ծովի = լճի գաղափար տուող

¹ Տե՛ս Ե. Տաշեան, Յուցակ Չեռագրաց Մատենադարանին Մշիքարեանց ի Վիեննա, 1895, էջ 513:
² Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 161:
³ Յիշատակարանք ձեռագրաց, էջ 361:
⁴ Տե՛ս Մատթոս Ուտիայեցի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1869, էջ 544:

¹ Բարզէն Ծ. Վ. Կիլիսեան, Ծովը, Վիեննա, 1904, էջ 9:
² Անդ, էջ 21:
³ Ներսէս Ընորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 224:
⁴ «Ոսկեփորիկ», հ. ԺԴ, Վենետիկ, 1854:
⁵ Գար. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Կ.Պոլիս, 1874, հ. Ա., Յառաջաբան:

բառ մըն ալ չկայ»¹). երկրորդ՝ բերդ է Ծովքը, ընդ որում ոչ այնքան անառիկ. երրորդ՝ ենթադրում է, որ նման անուանակրումը հետեւանք է մօտակայքում լեռների վրայ գոյացած ծովակի կամ լճակի («Տյուք գաւառին փոքրագոյն դղեակը, ըստ ամենայն հաւանութեան, քովը կամ մօտերը գտնուած լճակի մ'անունով կոչուած ըլլայ Ծով»²). չորրորդ՝ «այս բերդը Անտիոքայ իշխանութեան սահմանին մէջ, Տյուք գաւառին մէջ է եւ ոչ ուրիշ տեղ»³:

Նկատենք, սակայն, հարցի լուծման Բ. Կիլիւստրեանի կողմնորոշմանը մեծապէս նպաստել է Ղ. Ալիշանի միանգամայն ճիշդ կռահումը, առաջադրուած՝ «Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր» արժէքատր ուսումնասիրութեան հետեւեալ դիտողութիւնում. «Արդէն այն սակաւ պատմական յիշատակքն, եւ նոյն իսկ Շնորհալին թէ վիպասանութեան մէջ, թէ 30 տարի ետեւ Հաւատոյ բանին յիշատակին մէջ՝ զԾով միշտ դղեակ կ'ըսէ, եւ *մէջ երբէք լրճի նկարագիր կուտայ: Ուրեմն այս տեղս իրենց առջի բնակած տեղէն՝ Մեա լեռանց վանքերէն՝ շատ հեռու չէր. Աթոն քիչ քիչ կամ իբր ռոն առ ռոն կը տեղափոխէր. հաւանօրէն Մարաշու եւ Անթապու միջոց տեղ մ'էր. վասնզի հաստատութեան կ'ըստի որ Անտիոքայ լասին իշխանութեան սահմանն էր, եւ յատուկ գաւառն Տյուք կ'ըսուէր, եւ տաքարին ժօսլէն Փռանկ իշխանին կալուած էր...»⁴: Իբրեւ եզրակացութիւն՝ ամբողջովին ընդունում է Բ. Կիլիւստրեանը Ղ. Ալիշանի տեղագրական այս հաւաստումը, աներկբայօրէն գրելով միաժամանակ. «Ալիշան շատ լաւ կը ճշդէ Ծովքի աշխարհագրական մերձատր դիրքը «հաւանօրէն Մարաշու եւ Անթապու միջոց տեղ մը»⁵:*

Կաթողիկոսական այս արժանիատ կացարանը «շուրջ երեսունչորս տարի եռուն գործունէութիւն է ծաւալել Կիլիկիայի վերաբնակ հայութեան հերոսական մարտունակութեան ժամանակաշրջանում, երբ արեւի տակ տարածութիւն նուաճելու գոյամարտի եւ ամրապնդման իրաւունքը հայութիւնը պէտք է հաստատէր նախ-եւառաջ զինական մարտունակութեամբ, եւ երկրորդ՝ հոգեւոր-մշակութային գործունէութեան կազմակերպմամբ ու ծաւալմամբ: Իսկ կաթողիկոսութեան առաջ ծառայած խնդիրների լուծման առաջադրանքներն ուրիշ բան չէին, բացի դաւանարանական բարոյութեանը Հայոց եկեղեցու դարերի ընթացքում մշակած ուղղափառական ինքնուրոյնութեան եւ անկախութեան կառոյցների ոգի ի բռին պաշտպանութիւնից ու տեսական-բարոյական պայքարի ծաւալումից, ընդ որում մի կողմից՝ ընդդէմ բիզանդական եկեղեցու գերիշխանութեան եւ ծուլողական նկրտումների, միւս կողմից, ի հեճուկս լատինական եկեղեցու գերակայութեան պահանջի պարտադրման, բայց «միարարարական» փորձերի խայծով Հայոց եկեղեցու ինքնուրոյնութեան ու անկախութեան իսպառ վերացման հեռամէտ նպատակների իրականացման: Բացի նշուածից, եւ որ կարեւորն է՝ Ծովքի Ամենայն Հայոց կաթողիկոսարանի անմիջական եւ հրատապ առաջադրանքների ջրումն էին՝ եկեղեցաշինութիւնը, վանքերի եւ ուսումնագիտական կենտրոնների ցանցի ստեղծումն ու տարածումը, հոգեւոր-մշակութային կենցիկի կազմակերպումն ու ամրապնդումը Կիլիկիայի հայկական նորաբնակ ամբողջ տարածքում:

Տարաբախտաբար չի պահպանուած Ծովքի կաթողիկոսարանի (եւ ո՛չ էլ Հռոմկլայի, Անարգարայի, Գրագարկի կամ Սսի) դիւանը ամբողջութեամբ կամ թէկուզեւ մասամբ՝ դարերի ռազմա-քաղաքական յարահողով մրրիկների ընթացքում իրենց խորշակաբեր աներածութիւնների հետեւանքով, որպէսզի հնարատր լինէր արխիւային փաստաթղթերի քննութեամբ ու վերլուծութեամբ վերայառնել Ծովքի (եւ ո՛չ միայն Ծովքի) Ամենայն Հայոց կաթողիկոսութեան գործունէութեան դաւանաբանական-քաղաքական եւ հոգեւոր-դպրական-մատենագրական (իմա՝ մշակութային) ոլորտներն ամբողջութեամբ: Այնուամենայնիւ, պատմագրական աղբիւրներում եւ Յիշատակարանային նիւթերում արտացոլուած թէկուզեւ ցարցոցրի առանձին փաստերի խճանկարային համադրմամբ փորձենք ուրուագծել, նախ Ծովքի Ամենայն Հայոց կաթողիկոսարանի գործունէութիւնը ընդհանուր գծերով՝ նրա հայրապետների, այն է՝ Գրիգորիս Գ. կրտսեր Վկայասէրի եւ Ներսէս Շնորհալու ծովքեան շրջանի համատեղ ղեկավարման ընդմիջից...:

Սկզբիցեւեք նկատենք, որ Գրիգորիս Գ. հայրապետի եւ նրա կրտսեր եղբայր Ներսէս Շնորհալու համատեղ բեղուն գործունէութեան առաջին շրջանը բոլորում է Ծովք դղեակում, իսկ երկրորդ շրջանը, առաւել արգասաբեր՝ Հռոմկլայում:

Եթէ հետեւելու լինենք նրանց ուսումնառութեանը, ապա կը տեսնենք, որ այն, պատմագրական եւ ձեռագրական աղբիւրների հաւաստմամբ, այսպիսի ընթացականութիւն է ունեցել: Շնորհալին իր չափածոյ տոհմագրութեան մէջ հաղորդում է, որ իր աւագ եղբայրը դպրութեան առաջին ծանօթացումը ձեռք է բերել, դեռեւս «խանձարուրից», «համանուն հօր»՝ Գրիգորիս Մեծ Վկայասէրի մօտ.

«Այլ աստանօր վիպասանեալ
Չհարազատէն իմոյ ընտրեալ,
Որ ի ստեճէ գոյով հատեալ՝
Առ համանուն հօրն վարժեալ»¹:

Իսկ Մեծ Վկայասէրի մահուանից յետոյ իր եղբոր կրթական հոգսը ստանձնում է «երկրորդ հայր» ճանաչուած բեռին՝ Բարսեղ Անեցի կաթողիկոսը, որը մտաւոր զարգացմամբ հասցնում է նրան «քահանայական մակարդակին».

«Իբրեւ նորա (իմա՝ Մեծ Վկայասէրի - Լ.Խ.) վախճան առեալ,
Հօրն երկրորդի աւանդ տուեալ,
Չոր սիրաբար յինքն ընկալեալ,
Յիմաստ տառից ներակրթեալ:
Իբրու այնու յառաջացեալ,
Եւ հասակին մարմնոյ աճեալ,
Ի սուրբ կոչումն հրաւիրեալ
Եւ քահանայ գնա օժեալ»²:

«Քաղցրուայց վարդապետութեամբ» Գրիգորիս եղբայրը հմտացել է հայոց մեծահարուստ դպրութեան մէջ Շուղրում գործող դպրեւանքում, որն, իբրեւ ուսումնագիտական կենտրոն, հանրաճանաչ էր ինչպէս ամբողջ Կիլիկիայում, այնպէս եւ բնաշխարհում, ընդ որում նաեւ ժամանակի ականաւոր ուսումնականների հոգաւորութեամբ, յիշատակագրի իսկ վկայմամբ՝ «սնեալ եւ վարժեալ ի ձեռն սուրբ եւ

¹ Բ. Կիլիւստրեան, Ծովք, էջ 12:

² Անդ, էջ 24:

³ Անդ, էջ 13:

⁴ Ղ. Ալիշան, Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, էջ 96:

⁵ Բ. Կիլիւստրեան, նշուած աշխատ., էջ 15:

¹ Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւնը, քննական բնագիրը պատրաստեց, ծանօթագրեց եւ առաջաբանը գրեց՝ Մանիկ Մկրտչեան, Երեւան, 1981, էջ 127:
² Անդ, էջ 134-135:

գիտնական դաստիարակաց»¹: Այդ «գիտնական դաստիարակներից» էր, ինչպես ձեռագրական աղբիւրների քննութեամբ պարզուրում է, Ուսուցչապետի հոչակ ունեցող Ստեփանոս Կարմիրվանեցիին: Վերջինս տաղանդաւոր ուսումնական է եղել դեռեւս պատանի հասակում՝ «Վարդապետի» աստիճանով, ուստիեւ ճանաչուել է նաեւ «Ստեփանոս Մանուկ» անուամբ: Դասասաց Վարդապետի աստիճան ստանալով անմիջապէս Ամենայն Հայոց Բարսեղ կաթողիկոսից, որոշ ժամանակ անց, արդէն վարդապետութեան համար նախատեսուած հասուն տարիքում, Ստեփանոս մանկավարժ-գիտնականը իր ուսումնագիտական դպրոցն է բացում Կարմիր վանքում, ուր ընդգրկուում են «աշակերտք բազումք», այդ թում նաեւ՝ Գրիգորիս եւ Ներսէս Պաւլաւոնի եղբայրները յաջորդաբար. «Իսկ նա (իմա՝ Ստեփանոս ուսումնականը - Լ.Ն.) հասեալ ի հասակ կատարեալ՝ ժողովեցան առ նա աշակերտք բազումք, ոչ վարդապետօրէն ուսուցանէր, այլ առաքելաշնորհ եղեալ՝ փշէր ի նոսա զբանն կենաց: Որ եւ մի էր յաշակերտաց նորա հզար վարդապետս Սարգիս ..., եւ ընկեր սորին Իբնատիոս ..., այլ եւս երկու եղբայրք՝ Գրիգորիս եւ Ներսէս, եղբայրորդիք տէր Վահրամայ կաթողիկոսին Հայոց, որ յետ նորա նստան յաթոռ հայրապետութեանն, յառաջագոյն տէր Գրիգորիս, եւ զկնի նորա՝ տէր Ներսէս եղբայր նորա»²:

Այլուր՝ դարձեալ Շնորհալիւն յարում է, ընդգծելով Բարսեղ հայրապետի ունեցած երախտիքը իր եղբոր ուսումնառութեան նկատմամբ, իբրեւ արժանատրի իրեն յաջորդ համարելով Հայոց հայրապետական գահին.

«... Եւ սուրբ ուսմամբ ներակրթեալ,
Հոգւոյն խրատիւք մանկավարժեալ
Եւ ի վախճան մահուն հասեալ՝
Ի սուրբ աթոռ իր հաստատեալ»³:

Կիրակոս Գանձակեցիին բնութագրում է Գրիգորիսին «գեղեցկատես» հասակով եւ «գիտութեամբ զարդարուն». «... զի էր նա տեսլեամբ եւ գիտութեամբ սուրբ զրոց զարդարեալ»⁴:

Ներսէս Շնորհալու չափածոյ տոհմագրութեան մէջ յուշում է, որ հեղինակի իմացախոհական աշխարհի կազմակերպման, ձեւաւորման ու ընդարձակման վրայ խորը դրոշմ է թողել իր հերթին, նաեւ աւագ եղբայրը՝ Գրիգորիս Գ. հայրապետը, որի հետ համագործակցել է Ներսէս Շնորհալիւն իր ամբողջ գիտակցական կեանքում, միասին պատմական պատասխանատուութիւն ստանձնելով Ամենայն Հայոց կաթողիկոսութեան առաջնորդութիւնը Կիլիկիայում աւելի քան մի ամբողջ յիսունամեակ.

«Իսկ եւ կրտսեր նուաստացեալ՝
Ներսէս անուն վերասացեալ,
Որ եւ նովիմբ յիմաստ կրթեալ
Եւ յերկնայինսն կոչեցեալ»⁵:

Ինչպէս պարզուրում է քաղուածքից, «Ներսէս»ը հոգեւորական կոչումի ժամանակ տրուած վերանունում է, որին ուսումնագիտական արժէտքմամբ կցուել է նաեւ «Շնորհալի» մակդիրը՝ բացառիկ ուշիմութեամբ ու խելամտութեամբ նրա օժտուածութեան համար: Հետեւաբար՝ «Ներսէս» անուանակրումը Գրիգորիս Գ. կաթողիկոսն է տուել նրա քահանայական ձեռնադրման առթիւ, ընդսմին՝ վերանունումը կատարելով Գ. դարի Մեծն Ներսէս կաթողիկոսի պատուին, բայց եւ՝ «Շնորհալի» մակդիրով: Այդ հաստատում է յետագայում Ներսէս Շնորհալու տաղանդաւոր սաներից եւ հայ մշակոյթի երախտաւորներից Ներսէս Լամբրոնացիին, որը «Գովեստ ներքողական բանի ... յաղագս վարուց մեծի հայրապետի տեսող Ներսէսի Կլայեցոյ հայոց կաթողիկոսի» չափածոյ երկնած պոէմում Մեծն Ներսէսի անունով իր Ուսուցչապետի վերակոչումը բացատրում է հոգու շոյալութեամբ՝ մասնատրապէս կարօտեալների հանդէպ ցուցաբերած բարերարութեամբ.

«Ներսէս նախնույն իւր նմանի,
Համանունակ հօրն այն մեծին,
Հանգունատիպ գութըն նրմին,
Յողորմութիւն՝ որք կարօտին»⁶:

Նկատենք նաեւ, որ հէնց այս ժամանակաշրջանում մի շարք գիտնականների «Շնորհալի» յորջորջումը մակդիրային արժէքով՝ թոյլ է տալիս ենթադրելու, որ այն ունեցել է ուսումնագիտական ախտոյսի նշանակութիւն հաւաստելով ենթակայի իմացախոհական մակարդակի կամ որակի գերագոյն եւ ազնուագոյն դրսեւորման բնութագիր, որը տարածում գտաւ բացառապէս Կիլիկիայի ուսումնագիտական կենտրոններում: Չեռագրական փաստեր կան այն մասին, որ Կարմիր վանքի վարդապետարանում իրենց կրթութիւնն ստացած նաեւ այլ հանրաճանաչ մատենագիրներ ու գիտնականներ, որոնք մեծամուն Ուսուցչապետ Ստեփանոս Կարմիրվանեցու մակդիրով՝ իբրեւ «Շնորհալի», ինչպէս՝ Սարգիս Շնորհալի, Բարսեղ Շնորհալի, Իգնատիոս Շնորհալի եւ ուրիշներ: Ինչպէս ճիշդ է դիտուած դեռեւս Ներսէս Շնորհալու ժամանակներում, հէնց իր եւ իր աշակերտակիցների առնչութեամբ Ուսուցչապետ Ստեփանոսի հմտութեան ու մտահարուստ գիտելիքների վերաբերութեամբ՝ *«անցրած սաների մակարդակով ու որակով կարելի է որոշել նաեւ նրանց Ուսուցչապետի իմացախոհական հորիզոնների լայնութիւնն ու խորութիւնը, որովհետեւ «Ծածկեալ գիտութիւն վարդապետի՝ բերան են աշակերտքն, քանզի լուսատրիչք եղեն ազգիս Հայոց ի մերս ժամանակի»*⁷:

Իսկ թէ ծննդեան մկրտութեամբ ի՞նչ անուն է կրել այս Պաւլաւոնի պայագատը՝ անյայտ է մատենագրութեանը, ամենայն հաւանականութեամբ այն պատճառով, որ «Շնորհալի» մականունումը, խոր իմացականութեան ու ազնիւ բնութեան մարմնաւորմամբ, սերտօրէն է կապել Ներսէսի անհատականութեանը եւ, հետեւաբար, բացառապէս միայն որպէս այդպիսին ճանաչուել ինչպէս Կիլիկիայում, այնպէս եւ բնաշխարհում: Ինքնավկայմամբ ճշմարտում է նաեւ, որ Ներսէս Շնորհալիւն քահանայ է ձեռնադրում նոյնպէս դեռատի՝ արբունքի հասակում.

«Թէպէտ իմ ոչ վերաքեւեալ
Եւ ըստ կոչմանն բարձրացեալ,
Այլ ի յերկիր հակամիտեալ,

¹ Յիշատակարանը ձեռագրաց, էջ 422:

² Անդ, էջ 302:

³ Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւնք, էջ 134-135:

⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 116:

⁵ Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւնք, էջ 136:

⁶ Տե՛ս Ներսէս Շնորհալի, Թուրք ընդհանրական, էջնիւթին, էջ 421:

⁷ Յիշատակարանը ձեռագրաց, էջ 302:

Միրով նորա¹ ոչ նուազեալ,
Խնամոց բարեացն առ իս եղեալ,
Յետ ստացողին կրկին ստացեալ,
Ընդ տածողիս հանուրց տածեալ
Մինչեւ յարբունս հասուցեալ
Եւ քահանայ ձեռամբն օծեալ²:

Ի նքնաբնութագրող այս խոստովանանքին («Թէպէտ իմ ոչ վերաքեւեալ... Այլ ի յերկիր հակամիտեալ») հաւատարիմ, որը բնորոշ է եղել Ներսէս Շնորհալու ամբողջ կեանքի համար, նա ամուր կառչած մնաց. չնայած իր հոգեւոր կոչումին, նա եւ ծառայեց *երկրայինին* իր կենսափիլիսոփայութեամբ ու կենսագործունէութեամբ, Կիլիկեան հայաշխարհի ահաւոր հոգսերի փարատմանը ու մաքառումներին Լինելութեան, անմնացորդ նուիրուելով իր հարազատ ժողովրդի բարօրութեան կազմակերպմանն ու նրա վերածննդի տեսլականին:

«Վիպասանք»ի ընթերցումից քաղում ենք որոշ տեղեկութիւններ Ներսէս Շնորհալու *Ուսումնառութեան մասին*, որոնք մասամբ լոյս են սփռում նրա տիտանական մտքի մշակմանն ու լիցքատրմանն զիտակցական ազդակների վրայ:

Ներսէս Շնորհալին իր այս երկն ստեղծել է 1021 թուականին, դեռեւս երիտասարդ հասակում, ուստի եւ համեստաբար յայտարարում է՝ ուսումնագիտական իր պատրաստութեան անբարարարութիւնը վերագրելով տարիքային այդ առանձնաչափութեանը:

«Վասն այսորիկ ոչ յիշեցի
Չանկարութիւնս յամենայնի,
Չտգիտութիւնս յիմաստ բանի
Վասն անկատարս հասակի»³:

Բայց եւ յաջորդող տողերից միանգամայն զգացում է հայ մշակոյթի այս հսկայի համապարփակ ըմբռնումը դպրութեան լայնածիր հորիզոնների ընդգրկման անհրաժեշտութեան մասին, որոնց նուաճման նպատակադրման համար իր աննկուն կամքն ու վճռականութիւնն է արտայայտում միաժամանակ. Ներսէս Շնորհալու, որպէս ուսումնականի, երազանքն է եղել «աքեմական կրթութեան» խորութեանն ու համայնագիտական ընդգրկմանը թափանցել, «Պլատոնի լսարանում» իմաստասիրօրէն կատարելագործուել, Արիստոտէլի տրամաբանական ուսմունքի նրբահիւս կառոյցներում մտքի հզօրութեամբ ճախրել, հոմերական քնարերգութեան յուզաշխարհում համարձակօրէն սաւառնել, ճարտասանական պերճախօսութեան արուեստում ու լեզուի վարպետութեան ոլորտում անմրցելի եւ անգերազանցելի ճանաչուել: Աւելի լաւ է՝ մտորումների ու ձգտումների ինքնաբացայայտման խոստովանութիւնը տանք հէնց իրեն՝ Ներսէս Շնորհալուն:

«Չի հրահանգից վարժարանի
Չեմ տակալին ներկուտ բանի,
Յաքեմական քաղաքի
Չանձն իմաստիւք ոչ կրթեցի,

Որ լսարանն Պղատոնի
Եւ չափ ոտիւք Հոմերոսի.
Որ ստորոգողն Արիստոտէլ,
Տասն բանիւ գրողն էի,
Որ հոյք ամեն հոեւորի,
Ժողովարան ճարտասանի,
Ներհմտութիւն քերականի,
Բայի քերթումն քերթողի
Չորս գիտել նախ պատշաճի
Եւ աստ ապա ձեռնարկելի»⁴:

Առաւել լայն շառաւիղով Ներսէս Շնորհալու կենսագրութեան կրթական գիտելիքների ձեռքբերման փուլը նկատի ունենալով՝ Լամբրոնացին իր վերոյիշեալ «Գովեստ ներքողական...»-ում լրացուցիչ տեղեկութիւններ է հաղորդում իր Ուսուցչապետի մասին, որոնց համադրումից գաղափար ենք կազմում Ներսէս Շնորհալու ամբողջական ու սխտեմատիկ ուսումնառութեան հետեւած լինելու փաստի ուրուագծմամբ:

«Պէս-պէս ընդ կարգ ուսմանց անցեալ,
Յանգ եւ պատշաճ խրատու կրթեալ,
Անջինջ յետ իւր ըզսա թողեալ,
Որ աստ գրով կայ շարադրեալ»⁵:

Բայց առաւել յատկանշական է այն իրողութիւնը, որ Ներսէս Շնորհալին անյազուրդ ընթերցաւէր լինելով մատենագրութեան՝ իր խոկումներով ու մտորումներով «դեզերել» է իմաստութեամբ դարպասներում, պեղելով հոգեւոր անսպառ զանձեր իր մանկավարժական-մատենագրական գործունէութեան ծաւալման համար:

«... Ի յընթերցումըն պարապէր,
Եւ անդ ապա գաչսըն ճրնշէր.
... Խոկայր յիմաստս եւ ոչ յազէր...
Ի գիտութեան դրունս դեզերէր»⁶:

«Պատմութիւն սուրբ Հարանց» ժողովածուում գետեղուած Ներսէս Շնորհալու Վարքում տրուած է նրա առօրեական խոկումների եւ ուսումնասիրութիւնների նկարագրութիւնը՝ խոհուն եւ բազմազբաղ գիտնականի բնութագրմամբ. «Եւ արդ թէպէտեւ ունէր (իմա՝ Ներսէս Շնորհալին - Լ.Խ.) զգիտութիւն ի կրթութեան վարժմանն, բայց առաւել ի հոգոյն սրբոյ ունէր. ուստի եւ յայտ յայսմանէ էր, *զի յարածամ մեկն եւ քարտէս* (իմա՝ «թուղթ») կամ «մագաղաթ» - Լ.Խ.) *պատրաստական լինէր մեծ նմա առ ի գրել, եւ նա անպարասպորդ միշտ մատեան ի ձեռս ունելով՝ ընթեռնոյր...*»⁷: Վարքագիրը կենդանի պատկերմամբ ուրուագծելով Ներսէս Շնորհալու *24-ժամեայ գործունէութիւնը՝ նաեւ նիւջի պահը գնահատում է իբրեւ ... արթմնի ստեղծագործական մտորումների ու խոկումների շարունակութիւն*, երբ ականայից միայն շրթներն են շարժում՝ ի հաւաստումն տեսլականում լուծում ստացած հարցերի պատասխաններ որպէս, որոնք նա անակնկալօրէն՝ կարծես որեւէ մէկի մշտումից արթնացած պահին իսկոյնեւեթ դրոշմում էր թղթի վրայ. «Եթէ

¹ Իճա՝ իր եղբայր Գրիգորիս հայրապետի - Լ.Խ.:

² Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւնք, էջ 136-137:

³ Անդ, էջ 31:

⁴ Անդ, էջ 31-32:

⁵ Թուղթ Ընդհանրական, էջ 464:

⁶ Անդ, էջ 470 եւ 476:

⁷ Յիշատակարանք ձեռագրաց, էջ 426:

պատահեր փոքր մի նստիչի ի բազմոցի եւ սակաւ ինչ ննջմամբ հանգչել, շրթունք նորա իբրեւ ի յարթնութեանն շարժէին եւ խաղային թելադրութեամբ հոգւոյն սրբոյ, որոյ գկնի իբրեւ ի խթանէ ումեքէ զարթնոյր եւ առեալ փութապէս զպատրաստական քարտէսն գրէր արագ արագ, գոր տեսլեանն առեալ լինէր ի հոգւոյն սրբոյ, եւ դարձեալ ննջէր, եւ նոյնպէս լինէր այս առ նմա հանապազ¹։ Ի դէպ, հարկ է շեշտել, հայ դպրութեան ու մատենագրութեան տեսական հարցերն են առաւելապէս յուզել Ներսէս Շնորհալուն, հաղորդում է իրեն մօտիկից ճանաչող վարքագիրը, որոնք արծարծում են Միջնադարի մեր դպրութեան պատմութեան մէջ առաւելապէս իմաստասիրական-աստուածաբանական երկերում. «... Եւ նա (իմա՝ Ներսէս Շնորհալին - Լ.Խ.) անպարապողը միշտ մատենան ի ձեռս ունելով՝ ընթեռնոյր եւ որոնէր եւ քննէր անդադար գիտրին միտս գրոց նուրբ տեսութեամբ եւ կարի երկարագոյն աշխատութեանցն²։

Ամենայն հաւանականութեամբ՝ Ծովք դղեակում Ներսէս Շնորհալին, ընդ-առաջելով կաթողիկոս եղբոր թախանձանքներին, օծուեց եպիսկոպոս դեռեա 30 տարին չբոլորած³, որպէսզի հոգեւորական բարձր կոչումի իսկ թելադրանքով իրեն վերապահուած կաթողիկոսական դիւանի գործառնութիւնները ինչպէս ներ-եկեղեցական, այնպէս էլ յունական, ասորական եւ լատինական այլադաւան եկեղեցի-ների միջեւ՝ գլխատրի եւ իրացնի։ Ամենայն Հայոց Գրիգորիս Գ. կաթողիկոսը, ծառացած բազմակնճիւր յարաբերութիւնների կարգաւորման ու մեղմացման հա-մար, կարիքն ունէր, անշուշտ, բազմաշնորհ լուսամիտ փոխանորդական տեղա-պահի, որի աստուածաբանական հմտութեան ու լայնախոհութեան նկատմամբ առքած պատկառանքը անվիճելի պետք է լինէր։

Եւ ահա, կարծէք, աշխատանքի բաժանում էր կատարուած մեծամուն երկու եղբայրների միջեւ. եթէ Գրիգորիս հայրապետը կոնդակներ ու կարգադրութիւններ ստորագրողն էր առհասարակ, դիւանագիտական ուղղութիւնների եւ ընթացքի նախատեսողն ու որոշողը, ապա կաթողիկոսական տեղապահի հանգամանքով օժտուած Ներսէս Շնորհալին այդ բոլորի ձեռնհաս իրացնողն էր՝ դրանց սկզբունքային եւ ամբողջական գործադրման առումներով։

Կարեւոր է նկատել, որ ժամանակակից մեծամուն օրէնսգէտ, բեմբասաց եւ բանաստեղծ Ներսէս Լամբրոնացին, ընդհանրացնելով հոգեւոր երկու առաջնորդ-ների համատեղ եւ համերաշխ գործունէութեան բեղմնատր արդիւնքները իր «Ներ-բողեան»ում, պատկերատր մտածողութեամբ բնութագրում է նրանց որպէս «Հայոց Թորգոմեան տանը ծագած ու աշտանակների վրայ բարձրացած կերոնների»։

Ահա վերին կամքն հանեցան
Եւ Լուսաւորիչքն գոյացան.
Յեկեղեցի հաստատեցան,
Ծագած ի ծագըս փայլեցան.
Երկու Ընտրեալքս որոշեցան,
Հոգւոյն կոչմամբ առաքեցան.
Բարձրաբարբառ քարոզ ելան

¹ Անդ։

² Անդ։

³ Ալիշանի կտահումով՝ Ներսէս Շնորհալին, «այն առեւնուան սովորութեան» համաձայն, քէն քսան տարին ալ շատ չանցած, եւ գուցէ դեռ ի Ծովք դղեակը չեկած՝ եպիսկոպոսութիւնը ընդունած էր» («Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր», էջ 109)։

Չաւետարանն յազգըս տարան.
Որք յաշտանակ լոյս բարձրացան
Ի Թորգոմեան տուն ծագեցան»։

Ընդ որում հոգեւոր այս առաջնորդները, Լամբրոնացու իսկ հաւաստմամբ, իրենց հեղինակութիւնը հաստատել են եւ ճանաչել տուել «տիեզերական տարած-քով»՝ ինչպէս արեւմուտքում, այնպէս եւ արեւելքում.

«Նախ յարեւմուտս ճոխ ելան
Եւ յարեւելս պայծառ ցուցան»։

Ուշագրան այն է, որ Գրիգորիս հայրապետի եւ Ներսէս Շնորհալու ծովքեան գործունէութեան ընթացքում կիլիկեան հայութեան համար «գարնանային ժամեր» են հասել... ընդ որում խորշակի ու համատարած վայրագութեան մթնոլորտում նրանց գիտա-մշակութային աշխատանքների ծաւալմամբ կարծէք «ամպերից քաղցրիկ ցօղ են հոսեցրել», որի զովացումից ... «ծարաւած հոգիները զմայլեցան» եւ «հայոց ազինքս ծաղկեցան»... Աւելի լաւ է խօսքը տանք Լամբրոնացուն.

«Ապա շնորհաց նըշոյլ փայլման
Ջահատրեալ ձըմեռն էառ վախճան,
Մեղաց ձըմեռն էառ վախճան,
Գարնանային ժամքըն հասան,
Պասրեալ հոգիքն ըզմայլեցան.
Հայոց ազինքս ծաղկեցան»։

Դրուատելով կուլտուր-լուսատրական հոգեպարար նշանակութիւնը մեր ժող-վըրդի կեանքում, ներբողագիրը նկարագրում է այն համարեա իբրեւ «մշակութային յեղափոխութիւն», որին ձեռնամուխ են եղել այնքան ինքնամոռաց նուիրումով ու անխոնջ եռանդով հոգեւոր այս հայրերը.

«Եկեղեցիք փակեալք՝ բացան
Վարդապետաց արոռք եղան,
Ուսանելովն ոչ յազեցան.
Միայնութեանն սիրողք եղան,
Անհրեական վարքս ըստացան.
Ի զանազան պըտուդս աճման
Յորդիասէր հարքըն տեսան»։

Պատմական տուեալ ժամանակաշրջանում տարբեր ազգութիւնների փոխյա-րաբերութիւնները կիլիկիայում բնորոշում էին ոչ միայն ռազմա-քաղաքական փոխտոնձգութիւններով, այլեւ դաւանանքային գաղափարախօսութիւնների սուր հակամարտութիւններով, ընդ որում ուղեկցուած՝ ծիսա-արարողական տարբերու-թիւնների (էական կամ թէկուզեւ չնչին) դրուատմամբ կամ պայխարակմամբ, որոնք վեր էին ածուած ազգային սնապարծութեան կամ նուաստացման դրդապատճառ-ների, ուստիեւ առիթ ու պատճառ դառնում շատ յաճախ ազգային փոխյարաբե-րութիւնների շիկացման ու միջեւ իսկ զինական բախումների... Բացի նշուածից, հայ զանգուածների պարագային հարկ է արձանագրել, որ ամէն մի թերացում, խեղաթիւրում կամ զիջում լուսատրչական առաքելական եկեղեցու դաւանանքի հիմնադրոյթների ու նրա ծիսա-արարողական սրբագործուած աւանդոյթների տե-սական ընթրնողութեան եւ կիրառութեան՝ հաւասարագօր էր դառնում, վերջին հաշ-ուով, ազգովին ուժանալուն եւ ձուլուելուն՝ նրա դէմ մարտնչող յաւակնութիւններով

հանդէս եկող այլազգի դաւանութիւններ ունեցող եկեղեցիների ու նրանցում պաշտամունք կատարող ժողովուրդների հետ: Ազգաջլատման մեծագոյն վտանգը ամբողջ Միջնադարում, հետեւաբար, հանդիսանում էր ազգային եկեղեցու եւ նրա դաւանանքի ու ծիսա-արարողութեան աւանդոյթների թէկուզեւ նուազագոյն զիջումն էր կամ անտեսումը: Բանն այն է, որ ազգային ինքնուրոյնութիւնն ու դիմագիծը, պատմական տուեալ յարածիզ ժամանակաշրջանում, *պայմանաւորում էին, մեծաւ մասամբ, ամէն մի ազգային եկեղեցու դաւանանքի ու ծիսա-արարողութիւնների տարրերիչ առանձնայատկութիւններով*: Ահա թէ ինչու, վիթխարի նշանակութիւն ունէր, ազգապահպանման մաքառումներում հայ Լուսաւորչական Առաքելական Եկեղեցու կառոյցային սկզբունքների եւ դաւանանքի հիմնադրոյթների ու ծիսա-արարողական աւանդոյթների անաղարտութեան եւ ամբողջականութեան համար մղուած անհաշտ ու անզիջում պայքարը, որպէս ազգային ինքնուրոյնութեան եւ դիմագծի պահպանման սրբազան մաքառում: Հէնց այս տեսանկիւնից էլ գնահատում ենք Գրիգորի Գ. հայրապետի եւ, մանաւանդ, Ներսէս Շնորհալու գաղա-փարաբանական սկզբունքային եռանդուն պայքարը հայոց Առաքելական Եկեղեցու ու նրա դաւանանքի եւ ծիսա-արարողութիւնների տեսական պաշտպանութեան դիրքերում, որ վկայում են պաշտօնական թղթագրութիւններով՝ պապական, բիւզանդական եւ ասորական եկեղեցիների գերիշխանութիւնների հետ ու միաժամանակ իրենց ունեցած անձնական հանդիպումներով նրանց հետ:

Որպէսզի ժամանակակից ընթերցողը, որ իր մտորումներով ու յուզող հետաքրքրութիւններով, իբրեւ քսաներորդ դարի մարդ, բոլորովին անհաղորդ լինելով քննարկուող ժամանակաշրջանի մարդու յուզաշխարհին եւ ըմբռնումներին՝ պատկերացում ունենայ, դիցուք, ԺԲ դարի «օրակարգային սուր պորբլեմների» մասին, բարարութենք դրանց ընդհանուր եւ համաօտակի յիշեցումով:

Ա. Հակասութիւններ հայ-ասորական եկեղեցիների դաւանանքային եւ ծիսա-արարողութիւնների գծով:

Վիլիկիայում ասորի համայնքները կազմաւորուել եւ առանձին տիրոյթներով կազմակերպուած կեանք էին վարում, ըստ որում՝ նոյնիսկ աւելի վաղ, քան հայկական համայնքներն ու իշխանութիւնները. «Ասորի հին քրիստոնեայ ազգն, - գրում է Ղ. Ալիշանը, - կը բնակէր այս կողմերը, ուր մեր պատմութեան տեղն է (իմա՝ Վիլիկիայում - Լ.Խ.)» եւ աւելի իրենց բնական էր երկիրն քան մերոց. որով կրնայ ըսուիլ թէ *Հայր եկան մտան ընդ մէջ Յունաց եւ Ասորոց. իսկ Լատինք ընդ մէջ այս ամենեցուն*: Մեր կաթողիկոսական աթոռն որքան որ Գետաղարծի առջի նստած տեղէն հեռանալով՝ դէպ ի հարաւ եւ յԵփրատ մօտեցաւ, այնքան ալ դրակցեցաւ Ասորոց»¹:

Հայկական եւ ասորական եկեղեցիների ընդհանրութիւնների իմաստով, ինչպէս ճիշդ է նկատել Ղ. Ալիշանը, երկու եկեղեցիներն էլ, իբրեւ առաջին առաքեալ եւ քրիստոնէութեան քարոզիչ ռահվիրայ իրենց երկրներում համարել են միեւնոյն անձնաւորութեանը՝ Թաղէս առաքեալին. երկրորդ՝ քրիստոնէութեան ներթափանցումը Հայաստանում, ըստ աւանդապատմների, իրացուել է, սկզբում Միջագետքի կամ Եդեսիոյ ճանապարհով՝ ասորական քարոզիչների ճիգերով, յետագայում՝ Փոքր Ասիայի ուղղութեամբ՝ յունական քարոզչութեան առաւել ներագոյնութեամբ. երրորդ՝ մինչեւ մաշտոցեան դպրութեան «հայեցի յեղափոխութեան» սկզբնաւոր-

րումը Հայաստանում՝ տիրապետում էր առաւելապէս ասորական դպրութիւնը, ընդ որում եւ սա ա՛յն դէպքում, երբ ասորի ազդեցութեան նկատմամբ, ամբողջութեամբ վերցրած, «գրեթէ միշտ ալ Հայք մեծ սիրելութիւն մը չեն ունեցած»¹: Հետեւաբար՝ ասորական դպրութեան հետ առնչութիւնները առաւելապէս «հարկադրական» բնոյթ են ունեցել, քան ինքնարոյխ: Իսկ պատմա-մշակութային եւ քաղաքական նոր իրադրութեան պատճառով յունա-հռոմէական աղերսները Հայաստանի երբ քազմապատկուեցին յընթացս ժամանակի, մանաւանդ հայեցի մատենագրութեան ոսկեդարեան ժայթքումը նախապատրաստող մտաւորական համաստեղութեան հոյլի աթենական, ալեքսանդրեան եւ կոստանդնուպոլսեան փայլուն ուսումնառութիւններով՝ նախասիրութիւնն ու նախապատուութիւնը Հայաստանում տրուեց առաւելապէս յունա-հռոմէական հանճարին, ըստ որում իրարանջիւրի «նրբամտութեան» եւ իմացախտական հզօրութեան երկեակ առանձնայատկութիւնների շնորհիւ, որով զգալապէս նուազեց եւ իր տեղը զիջեց ասորական դպրութեան ու մշակոյթի ազդեցութիւնը²: Բայց եւ այնպէս ասորական մատենագրութիւնը, իբրեւ սնման աղբիւր, երբեք չկորցրեց իր նշանակութիւնը հայ դպրութեան համար՝ վերջինիս սկզբնաւորման եւ զարգացման պատմական մի ամբողջ ժամանակաշրջանում:

Եթէ տեսական հարցերը քիչ էին հետաքրքրում կամ բնաւ չէին յուզում ռամիկ զանգուածներին, ապա նոյնը չէր կարելի ասել եկեղեցիների միջեւ ծիսա-արարողական տարբերութիւնների ու աւանդոյթների մասին, որոնք, բնականաբար, սրբագործուած էին տարազգի դաւանանքների կանոնագրքերում: Այս առումով յատկապէս կանխաւ էին ծիսա-արարողական հակասութիւնները հայոց եւ ասորական եկեղեցիների միջեւ, որոնք առիթ եւ դրոպատառնաւ էին դառնում տուեալ պատմաշրջանում սուր տարակարծութիւնների, վիրատրանքների ու պախարակումների փոխադարձաբար, մինչեւ անգամ՝ բախումների:

Այսպէս, հայերին խորթ էր եւ բացարձակապէս անընդունելի (նաեւ բժշկական տեսակէտից՝ հակաառողջապահական) ասորիների մի սովորոյթը՝ մկնապիղծ սննդամթերք կամ մեռելուտի (սատկած կենդանու միս) ուտելը. իսկ ասորիների համար՝ մերժելի էր հեթանոսական ժամանակներից ժառանգած եւ քրիստոնէաբար վերաիմաստաւորած «մատաղ բաժանելու» հայերի սովորոյթը. այդ իսկ պատճառով ասորիները նոյնիսկ մերժում էին հայերի պատրաստած պանիրը՝ զգուշանալով, որ թերեւս մատաղ եղած գառի խախացից ներածուած լինի պանիրի մէջ...: Հայերը ձեռ էին առնում ասորիներին նաեւ նրա համար, որ վերջիններս նշխարը պատրաստում էին աղով եւ ձէթով...³:

Ասորական աղբիւրներում հաղորդում է միաժամանակ, թէ ինչպէս Գրիգորի Գ. հայրապետը որպէս թէ հակաճառութիւն է գրել ասորական եկեղեցու դէմ՝ նրա մի շարք ծէսերի քննադատութեամբ. դիցուք՝ մէկ մատով ասորիների խաչակնքելը եւ այլն: Քինոտ պատասխանում է հայ եկեղեցու ծէսերի դէմ պարսաւագրով ասորի Յովհաննէս Բար-Անդրէաս վանահայրը եւ այն ներմուծում Գրազարկի մատենադարանը, «ուսկից յերեւան գալով՝ մեծ շփոթութեան պատճառ եղաւ, եւ շատ հակառակութեանց եւ կռուոց Ասորոց եւ Հայոց»⁴: Բայց յետագայ յուզումներն ու

¹ Ղ. Ալիշան, Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 136-137:

¹ Անդ, էջ 137:
² Տե՛ս անդ:
³ Տե՛ս անդ, էջ 144-145:
⁴ Անդ, էջ 139:

բախումները հարեան երկու ազգերի միջև կանխելու նպատակով Գրիգորիս Գ. կաթողիկոսը հրապարակաւ այրում է գծաութիւն յարուցող երկու գրութիւններն էլ եւ «երկու եկեղեցեաց եւ ազգաց մէջ բարեկամութիւնը հաստատեց, երկուքէն ալ զովութիւն ժառանգելով»¹:

Ահա այս «առանցքային» խնդրայարոյց հարցերը նաեւ «ազգային-քաղաքական» ամենատուր եւ «ամենացատտ» յուզող հարցերն էին ժամանակի, որոնց համար՝ այնքան կրքեր են բորբոքուել եւ մինչեւ իսկ ... արիւն թափուել: *Մակայն եւ այնպէս սրանք այն ազգակներն էին եղել միաժամանակ, որոնք պահպանում ու կերտում էին մեր ազգային նկարագիրը, պատկերում ու ծագումից ու համաձուլումից ազգովին...*

Բայց եւ հայոց դաւանանքի տեսական հարցերում եւ ընթացումներում իսկ «հակասութիւններ» ծագել էին քննարկուող պատմաժամանակաշրջանում նաեւ Կիլիկիայի հայկական համայնքներում, որ երբեմն սուր եւ ատելավառ բորբոքման էին հասնում առանձին «խառնափնդորեալ գաւառներում» (Շնորհալու արտայայտութեամբ): Դա հետեւանք էր, ինչպէս Շնորհալին է մատնացոյց անում իր գրութիւններում, շատ յաճախ հայ երէցների «տգիտութեան» եւ «աստուածաբանութեան մէջ իրենց անբարար պատրաստութեան»: Դիցուք՝ միմեանց հետ վեճ յարուցելիս «քննարկման» հարց էր դառնում, թէ Քրիստոս, ներկայացնելով միաժամանակ աստուածայնութիւն եւ մարդկայնութիւն իր էութեամբ ու դրսեւորմամբ՝ խաչուելիս որպէս Աստուած խաչուեց, թէ՞ իբրեւ մարդ: Եւ կամ՝ եկեղեցու հայրերի տեսական գրութիւններից երեսութապէս հակասական կամ կոնտրաստից կտրուած դրոյթներ առաջադրելով «ախալներ», «թերըմբումներ» ու «թիրիմացութիւններ» էին յայտնաբերում, եւ, այդպիսով, կրքերի բորբոքմամբ ասելութիւն սերմանում նոյնիսկ հայ համայնքների ներսում: Իսկ «հասարակական անդորրը» խռովող եւ մինչեւ իսկ գաւառների միջև անհարկի ատելութիւն ու թշնամանք հրահրող «վեճերը», հիմնուած աստուածաբանութեան ու դաւանանքի բարդ եւ միաժամանակ մանուածապատ բանաձեւումների թերըմբումն վրայ՝ շիկացած մթնոլորտ էին ստեղծում փոխյարարութիւններում, հետեւաբար դրանք պէտք է վերջ գտնէին, ընդ որում յստակ դիրքորոշում պարզելով այդ հարցերում միակ ճանաչուած հեղինակութեան՝ կաթողիկոսութեան կողմից:

Պատահական չէ, որ այդ կարգի յուզումներից անհանգստացած այս կամ այն տիրոյթի հայ իշխանը դիմում էր, առաջին հերթին, Հայոց կաթողիկոսարանին, անձամբ Գրիգորիս Գ. հայրապետին, վերջինս էլ իր եղբորը՝ Ներսէս Շնորհալուն՝ այն խնդրանքով, որ համապատասխան «Յորդորական-թղթերով» պարզութիւն մտցնի բանակոխի հիմք ծառայած կասկածայարոյց հարցերում: Այսպէս, մեզ է հասել «Թուղթ Տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, գրեալ եղբոր նորին Ներսիսի եպիսկոպոսի, հրամանաւ նորին, ի Միջագետս Ասորոց կոչեցեալ նահանգին. յարագս որ անդ մերոյ ազգի քահանայից հակառակարանելոյ՝ ասելաբար ընդ միմեանս...»: Ընդամին՝ խնդրայարոյց վեճերը եղել են՝ «յարագս ... ոմանք ասել Աստուածութեան բնութեան չարչարեալ եւ մեռեալ ի խաչին ընդ մարմնոյն. եւ ոմանց զմարդն միայն. եւ ոմանց դարձեալ ընդունելի լինել Մատաղ. եւ յոմանց արհամարհելի. եւ այլք, եթէ դրախտն իմանալի է եւ միայն օրինակաւ ասացեալ, այլ

ոչ ճշմարիտ էութիւն. եւ այլ որ յայսպիսեաց, ի խնդրոյ ուրումն աստուածասիրի Առեծ անուն իշխանի ի Թղկուրանն աւանի»¹:

Ասորիներից էր գալիս այն տեսութիւնը նաեւ, որ աստուածաշնչային «դրախտը» պիտի հասկանաւ ոչ թէ ֆիզիքական առումով, իբրեւ իրական հրաշանման պարտէզ՝ իր ամենաառատ եւ ամենախիթեղ պտղատու ծառերով, այլ՝ երեսակայական ու այլաբանական ընկալումներով, որը հերքում է Շնորհալին իր «Վիսատարկումներում» մանաւանդ այն պատճառով, որ այդ տեսութիւնը յանգեցնում էր մի այլ, առաւել «վտանգաւոր» հետեւութեան, եւ նոյնանուն թոնդրակեան հարցադրման հետ. այն է՝ նաեւ ժխտում եկեղեցու ֆիզիքական առկայութեան անհրաժեշտութեան իր ծիսա-արարողական բոլոր խորհրդանիշներով՝ սպասներով, խաչով, Աւետարանով, Մաշտոցով, մատուռներով եւ այլն, ընդ որում այն «հիմնաւորմամբ», որ «եկեղեցին ինքը մարդն է...»: Մի խօսքով՝ այդ տեսութեան շորշորները պահանջում էին եկեղեցական նուիրապետութեան բացարձակ կազմալուծում փոխարէնը, սակայն, ոչինչ չառաջադրելով, որը համագոր էր հասարակութեան հոգեւոր կեանքի իսպառ կործանման, հետեւաբար նաեւ վերադարձ մարդու վայրենացման դարաշրջանի..., եւ, որ կարեւորն է՝ այդ «տեսութիւնը» զինաթափ էր անում եւ իմաստագրկում պատմականօրէն առաջացած ազգային հաւաքանութիւններին իրենց զոյապայքարի ամենահիմնական եւ ամենակենսական յատկանիշներից...:

Ահա թէ ինչպէս «փոքրիկ» Ծովք դղեակում ծուարած հայոց հոգեւոր առաջնորդները համազգային շահերի պաշտպանութեան մատոյցներում գաղափարաբանական լայնաճակատ մարտավարութիւններ ու գրոհներ էին կազմակերպում սպառնացող վտանգների եւ կազմալուծիչ ուժերի դէմ: Խօսքն ուղղելով ամբոխավարական մտայնութեանը, որը ուզում էր խռովութիւններ ու անկարգութիւններ առաջացնել ամենուրեք՝ իր քանդիչ ու քայքայիչ որոգայթները առաջին հերթին ուղղելով ազգային կառոյցների դէմ: Շնորհալին յորդորում եւ միաժամանակ զգուշացնում էր. «Որում ոչ հասեր մտացոյ բնութեամբ՝ հասցես վաղվադակի հաւատոցոյ քաջութեամբ...»²: Առարկութիւն եւ, առաւել եւս, ընդդիմութիւն չհանդուրժող այս սաստմամբ հասկացնել էր տրուած քայքայիչ տարրերին, որ գծուած է կարմիր գիծ իբրեւ հանդուրժողականութեան թոյլատրելի սահման, որն անցնելու դէպքում կը հանդիպեն այլեւս միայն պատժամիջոցների...:

Բ. Հակասութիւններ հայ-յունական եկեղեցիների դաւանանքային եւ ծիսա-արարողութիւնների գծով: Կարեւոր է նկատել, որ եթէ հայ-ասորական եկեղեցիների շաւանանքային եւ ծիսա-արարողական հակասութիւնները սահմանափակուած էին բացառապէս գաղափարաբանական ոլորտում՝ առանց թեւակոխելու նաեւ ռազմական բախումների ու ընդհանրումների ոլորտը, ապա հայ-յունական հակասութիւնները ընդգրկում էին նաեւ այս երկու ոլորտները միասնաբար, թերեւս վերջինը՝ զինականը, առաւել մեծ չափերով³:

¹ Անդ, էջ 141:

² Անդ, էջ 142:

³ Այս առնչութեամբ չափազանց պերճախօս վկայութիւն տրամադրում է մեզ հենց Ներսէս Շնորհալին դեռեւս 1143 թ. բողոք մի Չեռագրի իր Յիշատակարանում: Ուշագրան այն է, որ Չեռագրի Գրիգորիս Գ. հայրապետը «վերագնել» է բիւզանդական կայսր Յովհաննէս Բ. Կոմնենոսի (որ հայ պատմագրութեան մէջ յայտնի է իբրեւ Պերփիլոսով) Կիլիկիա 1137 եւ 1143 թուականներին կատարած արշաւանքների ժամանակ ձեռք բերած «աւարից»: Յիշատակագիրը յայտնում է, որ բիւզան-

¹ Անդ:

Նման իրավիճակը թելադրում էր անշուշտ Կիլիկիան նուաճելու մրցակցութեամբ, որին յաւակնում էին անգիջում վճռականութեամբ ինչպէս հայերը, այնպէս եւ առաւել վաղեմի բնակութիւն եւ իշխանութիւն հաստատած յոյները: Ինչպէս իրաւացիօրէն նշել է Ղ. Ալիշանը, տուեալ պատմաշրջանը «ամենէն սաստիկ հակառակութեան, վիճմանց, կռուող եւ պատերազմաց յեղանակ մ'է»¹ հայ-յունական յարաբերութիւնների ամբողջ պատմութեան մէջ, որով բնորոշում են դրանք Կիլիկիայում: Դիցուք՝ Լեւոն Առաջինը «ամենուն հետ ալ երբեմն բարեկամ եւ երբեմն բշնամի կ'ըլլար, թերես բացի Յունաց»²:

Հայոց հոգեւոր հայրերը, տարամիտութեամբ բիզանդական հօօր եկեղեցու կազմակերպած եւ Քաղկեդոնական տիեզերական ժողովի ընդունած դաւանանքային դրոյթներից ու տեսական ըմբռումներից, մշակեցին մեր ազգային եկեղեցու հակաքաղկեդոնական ուղղութիւնը, որով պահպանեցին հայ ազգային եկեղեցու ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը, դրանով նաեւ՝ մշակութային-մատենագրական ազգային նկարագիրը, հաստատելով ու ամրապնդելով մեր ազգային ինքնութիւնը պատմութեան քառուղիների գահավժ ոլորտայտոյտներում: Պատմական փաստերի ու իրադարձութիւնների իսկ ըմբռնմամբ՝ հայ քաղաքական միտքը խորապէս համոզուեց, որ Բիզանդիան հարիւրամեակների ընթացքում հետապնդելով եկեղեցա-դաւանաբանական հարցերում «միասնականութիւն» ստեղծելու պատրանք՝ ազգային տարբեր եկեղեցիների միջեւ, իրականում նկրտում էր նաեւ քաղաքական գերիշխանութեան հասնել՝ զինաթափելով այդ եկեղեցիները ներկայացնող քրիստոնեայ ազգութիւններին (այդ թում եւ հայերին) իրենց ինքնուրոյն գաղափարախօսութիւնից, ընդ որում՝ դաւանանքների համահարթման ճանապարհով: Այդ իսկ առումով, բնաւ էլ պատահական չէ, որ հայ մատենագրութիւնը հսկայական տեսական մշակումներ ունի ընդդէմ յունադաւան քաղկեդոնականութեան, որոնք մեծապէս նպաստեցին մեր ազգի դիմադրողական ոգու անընկճելիութեանն ու ազգային նկարագրի պահպանմանը, նաեւ՝ հարստացմանը:

Ինչպէս ակնբայ է, հայ եւ յոյն եկեղեցիների դաւանաբային եւ ծիսարարողական արձանագրութիւնների հակասութիւնները չափազանց խորն են եղել, ուստի եւ բննարկուող պատմաշրջանում առաւել եւս բորբոքում են դրանք, ինչպէս ասուեց, յաճախ գիւնական ընդհարումների բնոյթ կրելով: Ծովքի հոգեւոր հայրերը իրենց բանակցութիւններում եւ հանդիպումներում Բիզանդիայի կայսեր (ինչպէս եւ Հռոմի պապի) հետ, յաջողութեամբ պաշտպանում են հայոց եկեղեցու դաւանաբային հիմունքները աստուածաբանական խորաբնին տեսական հակաճառութիւններով՝ ընդդէմ բիզանդական ուսնձգութիւնների ու յաւակնութիւնների:

Նրանք դիւանագիտական ճկունութիւն են ցուցաբերում դաւանաբանական կնճռոտ ու նրբահիս բանաձեւումների հակասութիւնները մեղմելու ու բորբոքում

դական զօրքերը «փնարար» մինչեւ իսկ արեքել են հայոց «քոյր» եկեղեցիներն ու վանքերը, պղծել ու քաղանել սրբութիւնները, գերեզմանները, շէնքերը: «Յետ յորումց սուացողաց եւ զիս յիշեսչիք ի Քրիստոս, գ'Ներսէս անարժան գոլով եպիսկոպոս եւ եղբայր կաթողիկոսին Հայոց տեսնո գ'բիզոք (ի), որ ստացաւ զս գնիւք յարարէն Յունաց ի վանորէից Հայոց: Յորժամ ել քաղաքըն Հռոմոնց յաշխարհն Կիլիկեցոց եւ առ սա յիշխանէն Լեւոնայ, որ էր հայ ըստ ազգի եւ հաւատոյ: Եւ արեքեաց զբազում վանորայս եւ զեկեղեցիս, եւ զճանս տէրունականս խորտակէին եւ անհնարին հարուածս ազգի մերում հասուցանէին քիմարար, եւ այս եղել ի թուականս ԵՉՁ (1137) եւ երկրորդ գալ նորին արքայի եղել ԵՂԲ (1143), յորում եւ վախճանի ասացի Անարզարոյ եւ քաղաքով կրտսեր որդի նորին Մանուէլ անուն» (Գար. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 355):

¹ Անդ, էջ 148:

² Անդ:

կրքերը՝ լիցքաթափելու հարցում. առանձին դէպքերում շեշտում էին ոչ թէ տարբերութիւնները հայ-յունական եկեղեցիների դաւանաբանական ու ծիսարարողական համակարգերի միջեւ, այլ՝ գերազանցապէս ընդհանրութիւնները: Աւելին. պոթքութիւնների զսպման քաղաքականութիւն վարելիս՝ նրանք երբեմն էլ քաւարարում էին ոչ-սկզբունքային, երկրորդական հարցերում մինչեւ իսկ հակասութիւնների ու անյարիրութիւնների խուսանումամբ կամ շրջանցմամբ: Բանն այն է, որ դաւանաբանական խնդիրների արժարժումն ու դրանց շուրջ ծաւալուած գաղափարաբանական պայքարը միաժամանակ ազգութիւնների ու պետութիւնների քաղաքական պայքարն էր այդ դարաշրջանում, այդ իսկ պատճառով դաւանաբանական զլխատր, սկզբունքային հարցերում ազգային ինքնուրոյն եկեղեցիները անհաշտ ու անգիջող դիրքորոշում ունէին: Ընդ որում դաւանաբանական «միասնութեան» համար ծաւալուած պայքարի նաեւ քաղաքական բնոյթ ունենալը ընդգծում էր նրանով, որ բննարկուող պատմաշրջանում թազաւորներն ու կայսրերը իրենք եւս միջամուխ էին լինում աստուածաբանական վէճերին ու տարակարծութիւններին՝ զինական ուժերով ու ամբողջ ճնշող պետական կառոյցով քիկունք կանգնելով բացառապէս իրենց յունական ազգային եկեղեցու նկրտումներին:

Հայոց ազգային եկեղեցու աստուածաբանական-դաւանաբանական տեսական հարցադրումների մեկնաբանումը տարազգի եկեղեցիների հոգեւոր ու պետական առաջնորդութեան առաջ ստանձնել էր, ինչպէս վերը ասուեց, Ներսէս Ծնորհային:

Սմբատ պատմիչի բնութագրմամբ՝ Ներսէս Ծնորհային «էր այր սուրբ եւ զարդարեալ ամենայն բարեձեւութեամբ ու կարգաւորութեամբ, առաքինութեամբ եւ ամենեւին լցեալ գիտութեամբ եւ շնորհօք Հոգւոյն սրբոյ»¹: Ծնորհայլու հարուստ իմացականութեան համբարը փիլիսոփայական, աստուածաբանական ու դաւանաբանական հարցերում՝ եղել է այնքան անվիճելի, որ իրբեւ տեսարան անգերազանց են համարել, եւ զուգակից ու համեմատելի՝ բիզանդական աշխարհում բացառիկ հեղինակութիւն վայելող միայն Գրիգոր Աստուածաբանի հետ: Ընդսմին՝ Ծնորհայլու խօսքի ուժը այնքան հօօր է եղել հռետորական արուեստի կատարելութեամբ ու մտահարստութեամբ, որ հմայք է առթել ոչ միայն իւրայիններին, այլեւ Բիզանդիայի մայրաքաղաքի գիտուններին. «Եւ որպէս գեա յորդառատ վտակաւ թխէր (իմա՝ Ծնորհայլին արտայայտուելիս - Լ.Ն.),- գրում է պատմիչը,- զի ո՛չ որ յառաջնոց հայրապետացն գտաւ հանգոյն նմա, եւ ո՛չ յետ նորա եղել մինչեւ ի ժամանակս մեր, որ եւ եհաս համբաւ գիտութեան նորա ի Կոստանդնուպոլիս առ քաղաքըն Յունաց Կեռ Մանուիլն...»²: Եւ որպէսզի նաեւ վկայութեամբ հաւաստուի Ծնորհայլու իմացախտակական հռչակի իսկութիւնը, Մանուէլ կայսրը բիզանդական մայրաքաղաքի ճանաչումը գիտնականներից մէկին է ուղարկում Հռոմկլայ՝ Թօրիանէ անուամբ, որը երկարատեւ գրոյց է ունենում («աւուրս բազումս») Ծնորհայլու հետ, ապա համոզում «գանհաս գիտութեմէ սրբոյն»:

Սակայն կայսեր նպա-տակը ոչ այնքան Ծնորհայլու մտաւոր հարստութիւնը «խորաչափելն» էր, որքան դաւանաբանական ընդհանրութեան ու միասնութեան ստեղծմամբ՝ նաեւ ազգային-քաղաքական միաձուլումը հայերի բիզանդական մականի տակ՝ յոյների հետ. իրողութիւն, որ տարաբախտաբար չէր հասկացել ժամա-

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 188:

² Անդ:

նակակից մեր այս պատ-միչը: Այդ իսկ պատճառով երկրորդ անգամ հետա-խուզական նկատառումով կայսր քանագնացներ է ուղարկում Ամենայն Հայոց կաթողիկոսարան՝ իբր «սիրոյ եւ միաբանութեան» պատրուակով (ըստ մեր պատ-մագրի), որը, սակայն չի իրականանում Շնորհալու օրօք, վերջինիս վաղաժամ վախճանման պատճառով. «Ընդ որս բորբոքեալ թագաւորն ի սէր սուրբ հայրա-պետին (sic!) եւ առաքէ միսանգամ յաղագս սիրոյ եւ միաբանութեան երկուց ազգացս բաժանելոց ի միմեանց ազդմամբ չարին, որոյ անկատար մնացեալ այս գործ աստուածային՝ յաղագս փոխելոյ սուրբ հայրապետին Ներսիսի յաստեացս»¹: Պատմիչի միամտութիւնը, անշուշտ, ակնբախ է՝ բիզանդական կայսրութեան քաղաքական դրոյսապատճառները հասկանալու հարցում, մնալով երեւոյթների ըմբռնման մակերեսին...: Բայց Շնորհալին, ինչպէս իր թղթագրութիւններն են վկայում, շատ լաւ էր ըմբռնում, իր կաթողիկոս եղբօր հետ միասին, բիզանդական կայսրութեան եւ հոգեւորականութեան մտադրութիւններն ու նկրտումները, ուստի եւ ըստ այնմ մշակում հայոց եկեղեցու դիրքորոշումը:

Կիրակոս Գանձակեցին, իր հերթին, յայտնում է, որ երկրորդ քանագնացների ղեկավարը հանդիսացել է Մանուէլ կայսեր փեսան՝ «մեծն Ալէքսը», որը Կիլիկիոյ Մամեստիա քաղաքում հանդիպում է ունենում Շնորհալու հետ. նա եւս իմաս-տասիրական ու տեսական՝ «խորին եւ դժուարիմաց» հարցադրումների վերաբեր-եալ սպառնիչ պատասխան ստանալով Շնորհալուց՝ պատկառանքով մեծարում է հռչակաւոր հայ հոգեւորականին. «Կոչեցաւ երբեմն ի մեծն Ալէքսը, որ էր փեսայ ինքնակալ թագաւորին հոռոմոց Մանիլին, եւ եկեալ էր ի Մամեստիա քաղաք Կիլիկեցուց, եւ հարցեալ զնա բանս խորինս եւ դժուարիմացս ի գրոց եւ յամենայնի կատարեալս ետես զնա, եւ մեծարեաց զնա յոյժ»²:

Ըստ երեւոյթին, գրագրութիւնների մի ամբողջ շարք է տեղի ունեցել ամենա-բարձր մակարդակով՝ Բիզանդիայի արքունիքի եւ Ամենայն Հայոց կաթողիկո-սութեան հոգեւոր առաջնորդների միջեւ, որոնցից, տարաբախտաբար, միայն հաս ու կենտ գրութիւններ են պահպանուել: Այս նկատառումով՝ Կիրակոս Գանձակե-ցուն ենք պարտական Շնորհալու մի հակաճանաչութիւն-թուղթը ամբողջական մէջ-բերմամբ իր պտմագրական երկում, որում դաւանաբանական տարածայնութիւն-ների ամբողջ բարդոյթը ներկայացուած է, կէտ առ կէտ, յստակ ու հանգամանակից ձեւակերպումներով, հանգիստ ու ինքնավստահ ոճով, ազգային արժանապատու-ութեան եւ ինքնայարգման (self respect) բարձր գիտակցութեամբ: Այդ որոշակի յայտնում է նաեւ Շնորհալին իր թղթագրութեան աւարտին. «Արդ՝ ըստ խնդրոյ աստուածասիրութեան խոհեմագունիդ անձին, ո՛վ պատուական զլուխ եւ ի մանկական հասակի ունող զիմաստասիրութիւն ծերոց, որպէս զՍողոմովն եւ զԴանիէլ, եղաք առաջի պատուասիրութեան ձերոյ՝ համառօտ բանի, զեկեղեցույ Հայաստանեայց զճշմարիտ դաւանութիւն»³:

Յիշեցնում է Շնորհալին, որ Հայոց կաթողիկոսարանը հարկ չի համարում «թաքցնել» ոչինչ Հայաստանեայց եկեղեցու դաւանանքից՝ ոչ «մարդահաճու-թիւնից», ոչ էլ «երկիւղից» դրոյում. եւ, որ կարելոք է՝ ոչ էլ «ընդունելի» դարձնելու համար հայոց դաւանանքը Բիզանդիային «յաւելագրումների» կամ խմբագրում-ների կարիքն զգում: Դ-ա, Շնորհալու խորին համոզմամբ՝ հաւասարագօր կը լինէր

¹ Անդ, էջ 189:

² Կիրակոս Գանձակեցի, էջ 121:

³ Անդ, էջ 146:

«հաւատուրացութեան» եւ կը նշանակէր պարզապէս հաւասարուել անհաւատներին ու հերձուածողներին Քրիստոսի դատաստանի առաջ. մի բան, որ երբէք չի անի Հայոց եկեղեցին: Բիզանդիայի հետ վարած բանակցութիւններում, Հայաստան-եայց եկեղեցույ հէնց այս դիրքորոշումը, իր սկզբունքային կարեւորութեան պատ-ճառով, մէջ ենք բերում քաղուածաբար. «Եւ եթէ վասն մարդկան հաճոյից, կամ երկիւղի եւ պատկառանաց աղագաւ ծածկեցաք ի մերոց դաւանութեանց, եւ ոչ գրեցաք, կամ թէ աւելի ինչ գրեցաք, գոր ոչ ունինք, որպէսզի ընդունելի լինել առ ի ձէնց, ընդ անհաւատիցն եւ հերձուածողացն ընկայցուք զդատաստան առաջի ատենին»¹: Իսկ հաւատի դաւանման հարցում որեւէ խուսանաւում, քողածակում կամ ուրացում ոչ թէ լոկ անսկզբունքայնութեան կամ պատեհապաշտութեան դրսեւորում է, այլ՝ անհաւատութեան համագօր մի բան, ըստ ենթատեքստի՝ ազգային ինքնութեան դրժում. «Քանզի հաւատ ծածկեալ, կամ կեղծաւորեալ, ո՛չ է հետի յանհաւատութենէ»², - բիրտդացած եզրակացնում է հոգեւոր մեծ առաջնորդը: Աւելի՛ն. եթէ նոյնիսկ որեւէ մէկը, ո՛վ ուզում է լինի, հայոց եկեղեցու դաւանա-բանական համադրոյթին, որ շարադրուեց մեր կողմից սոյն բացատրական-թղթում, արժանահաւատութիւն չընծայելով դարձեալ չարանայ մեր նկատմամբ՝ մեր փոյթը չէ, թող պատասխան տայ միայն Գերագոյնի՝ Քրիստոսի առաջ, համընդհանուր դատաստանի օրը, որպէս «պառակտիչ» համարքիստոնէական եկեղեցու անդամ-ների ... միջեւ, - յայտարարում է Ներսէս Շնորհալին: Սա, անտարակոյս, «մեղադ-րական» լուրջ եւ ծանրակշիռ ամբաստանութիւն է Բիզանդիային հասցեւագրուած՝ ամենամուրթ ձեւով հասկացնել տալով միաժամանակ, որ դաւանանքի ազա-տութիւնը չպէտք է բռնարարուի քաղաքական յետին նպատակներով: Ենթա-տեքստի այս միտքը ակնբեր է Շնորհալու թափանցիկ հետեւեալ դիտարկմամբ. «Որ որ յետ զայսուսիկ լսելոյ ի մէնց զայթակղեսցի դարձեալ ի մեզ՝ ոչ հաւատալով ասացելոցս, ինքն տացէ պատասխանի Քրիստոսի յաւուր դատաստանին նորա, իբրեւ զպառակտող անդամոց նորին: Իսկ այն որ՝ գոր միանգամ լսէ եւ հաւատայ՝ եւ ոչ դատի, որպէս ասաց քննողն սրտից, ընդ ճշմարիտ հաւատացելոց ընկայցի վարձս բարեաց ի Քրիստոս Աստուծոյ մերոյ, որում փառք եւ զօրութիւն յախտ-եանս ամէն»³:

Բայց այս դաւանաբանական-քաղաքական ծանրակշիռ հարցադրումը ա-ռաւել խորութեամբ բացայայտում է «Թուղթ Ընդհանրական»ում:

Գաղափարախօսութեան-դաւանաբանական հարցերում Ծովքի հայոց հայ-րապետները բնաւ չէին ճանաչում զերակայութեան կամ ստորակայութեան յարա-բերութիւններ քրիստոնէական «քոյր» եկեղեցիների միջեւ: Շնորհալին իր իսկ մեծարժէք այս փաստաթղթում քննարկուող մեկնակէտային հարցադրումը լակոնիկ սեղմութեամբ է բանաձեւել Բիզանդիայի կայսր Մանուէլ Կոմնենոսին պատաս-խանելիս. «Մի՛ եղիցի որպէս տեսան առ ծառայս եւ ծառայից առ տեսարս» (էջ 117): Ծովքի Հայոց հոգեւոր առաջնորդների խորին համոզմամբ՝ միայն յարգանքի ու փոխըմբռնման հիման վրայ ենարարու է համարքիստոնէական եղբայրութեան ու միասնականութեան յանգել ժողովուրդների ու ազգային եկեղեցիների միջեւ. հակառակ դէպքում, զերակայութեան նկրտումներ ցուցաբերելիս՝ քրիստոնէական աշխարհը այնպէս կը պառակտուի, որ ոչ միայն արդէն պառակտուածները չեն միանայ, այլեւ միացածները կը պառակտուեն: Բանն այն է, որ բռնացումը, իրենց

¹ Անդ, էջ 146-147:

² Անդ, էջ 147:

³ Անդ:

խօսքերով ասած՝ «ոչ միայն եւ գրածանեայսն ոչ միաորէ, այլեւ զմիատրեայսն պատակտէ ի միմեանց» (115): Ահա թէ քաղաքական ինչպիսի սրութիւն եւ հրատապութիւն ունէր առաջին հայեացքից «բարեմիտ» քուացող եւ սակայն առանցքային դարձած «միասնութեան» քարոզը՝ իր յետին եւ հեռանկալ նպատակներով, որ բացայայտում էին Հայոց հայրապետները միանգամայն ճիշդ եւ սկզբունքային դիրքերից:

Գարձեալ, այս անգամ էլ Կիրակոս Գանձակեցու միամտութեան պիտի վերագրել նրա «ոգևորութիւնն» այն առնչութեամբ, որ Ներսէս Շնորհալու սպառնիչ եւ փայլուն պատասխանը հայ եկեղեցու դաւանաբանական հիմունքների պաշտպանութեան եւ մեկնաբանման հարցերում, իբր, «հիացմունք» է առթել Բիւզանդիայի աստուածաբանութեան տեսաբանների շրջանում, մասնատրապէս հայոց ազգային դաւանանքի նկատմամբ, գրելով. «Չայս իբրեւ ընթերցան, գովեցին (sic!) զհաւատս հայոց ամենայն իմաստունքն յունաց»¹: Դէպքերի ու իրադարձութիւնների զարգացումը, սակայն, իսկելիսկ հակառակն է ապացուցում: Իրերի իսկ տրամաբանութեամբ՝ բիւզանդական եկեղեցին եւ հոգեւորականութիւնը ամենից մարտակաւորէն տրամադրուածն էր ընդդէմ Հայոց ազգային եկեղեցու ու նրա դաւանանքի՝ հոգեւորականութեան հետ մէկտեղ, անհաշտն ու յարձակողականը ըննարկուող դարաշրջանում:

Այժմ սեղմ կէտերով անդրադառնանք դաւանաբանական եւ ծիսա-արարողական այն տարածայնութիւններին, որոնք արտացոլում են Շնորհալու վերայիշեալ Թղթում:

Առաջին. Շնորհալին պարզաբանում է աստուածաբանական այնպիսի «ծանրակշիռ» մի հարց, ինչպիսին է Քրիստոսի «միաբնոյթ» էութիւնը, որ դաւանում է Հայոց եկեղեցին, ի տարբերութիւն բիւզանդականի, որ դաւանում է նրա «երկրնոյթ» էութիւնը: Այսինքն, ըստ «միաբնոյթ» տեսութեան, Քրիստոսի աստուածային եւ մարդկային դրսեւորումը մէկ եւ միեւնոյն էութեան արտայայտութիւնն է. իսկ «երկրնոյթ» էութեան ջատագովները ըմբռնում էին աստուածային ու մարդկային էութիւնը առանձնաբար, աւելի ստոյգ՝ անջատաբար: Աստուածաբանական տեսութեան այս հիմունքի վրայ բաժանում էին եկեղեցիները եւ նրանց դաւանանքները տուեալ դարաշրջանում:

Երկրորդ. Շնորհալին փաստարկում է, որ Հայոց եկեղեցու տօները Քրիստոսի աւետման, ծննդեան եւ մկրտութեան ըստ ամսաթուերի՝ դաշն են առաքելական արանդոյթների եւ հայրաբանական գրականութեան տուեալների հետ. մինչդեռ հաղորդել են «մեծ Ալէքսին», որ «Յունուարի ի հինգ տօնեն վաղիւն աւետեաց, եւ երիկունն ծննդեան, եւ միս վաղիւն՝ որ է վեց յունուարի, մկրտութեան Քրիստոսի»: Եւ յայցանէ է՝ ինչ ուղիղ, եւ է՝ որ արտաքոյ ճշտարտութեան»²:

Յրրորդ. միտմնի պատրաստումը, ի տարբերութիւն բիւզանդական եկեղեցու, որ միայն ձիթեմու պտղից է պատրաստում, հայոց եկեղեցին բուսական աշխարհի ծաղիկներից է քաղում, որովհետեւ Հայաստանում, կլիմայական առանձնայատկութիւնների պատճառով, ձիթենի չի աճում. բայց դա սկզբունքային նշանակութիւն ունենալ չի կարող «խորհուրդի» իմաստատրման առումով, պատճառաբանում է Շնորհալին, ինչպէս Քրիստոսի արիւնը խորհրդանշող գինու գոյնը՝ կարմիր թէ

սպիտակ կամ սեւ, քանի որ պատարագը վերացնում է գունային երանգները՝ «համազօր» դարձնելով Քրիստոսի արեան, ճիշդ այդպէս էլ «քահանայական օրհնութիւնն եւ աղօթքն միացուցանեն ընդ միոք ձիթոյն զաստուածային շնորհն, ոչ ինչ լինի առաւելութիւն կամ պակասութիւն, եթէ ի պտղոյ ծառոց իցէ ձէքն եւ եթէ ի բուսոց...»³:

Չորրորդ. «պատկերապաշտութեան» հարցում եւս թիւր տեղեկութիւն է տրուած եղել բիւզանդական արքունիքին այն մասին, որ, իբր, Հայոց եկեղեցին մերժում է «պատկերապաշտութիւնը» սրբերի, եւ կանգնած է «պատկերամարտութեան» դիրքերում, ի տարբերութիւն յունական եկեղեցու: Այնինչ, թիրիմացութեան փարատման նպատակով լուսաբանում է Շնորհալին, սրբապատկերները արհամարհող կամ «հայեոյթ» տգէտներին եւ գոեհիկներին նզովում ու պատժում է Հայոց եկեղեցին՝ փակելով նրանց բերանները. «զպատկերաց սրբոց զանընդունելութիւն, որ եւ ի մէնջ դսրովին այնպիսիքն, նաեւ նզովս եւս ի վերայ դնեմք, որք յանդգնին հայեոյել: ... Եւ պատուհասեալ ըմբերանեմք զոչ ընդունողսն ի մերոց, զտգէտսն եւ զախմարսն»⁴:

Հինգերորդ. սխալ վերագրում է արուած հայոց եկեղեցուն այն մասին, որ իբր խաչը շինելիս, «միատարր միսից» են կերտում, ինչպէս ոսկեղէն, արծաթեղէն միսքերը կամ այլ «միատարր» միսքերը՝ առանց խաչանման թելերը իրար վրայ դնելով մեխով ամրապնդելու կամ բեւեռելու: Մինչդեռ փայտից պատրաստուածները «հագցնում» են իրար վրայ եւ զամով բեւեռում, որպէսզի հողմից կամ ծանրութիւնից չպոկուեն ու քանդուեն: Հետեւաբար՝ խաչը պիտի լինի «ամուր» եւ «անքակտելի». իսկ եթէ «ի քարեղէն խաչս կամ յերկաթեղէն տեսցէ որ բեւեռս, որ ոչ յերկուց լինի մասանց, այլ միոյ, ծանիցէ, զի այն արարուածք տգիտաց են եւ հակառակապիբաց»⁵: Նման «պատճառաբանութիւնը», իհարկէ, սոսկ խորհրդանշական բնոյթ ունի, որովհետեւ, իրականում, «միածոյ» միսքից պատրաստուած խաչը աւելի «ամուր» է եւ «անքակտելի», քան այլ իրով՝ «մեխով» բեւեռուածը...:

Վեցերորդ. թիրիմացաբար կամ չարանեցաբար յայտնել են Չեզ, ասում է Շնորհալին, որ «սրբասացութիւնների» առնչութեամբ իբր թէ հակասութիւններ կան Հայոց եկեղեցու եւ բիւզանդականի միջեւ. մինչդեռ «մեք զսրբասացութիւնս զայս ի դէմս երրորդութեան երզնաք, որպէս եւ դուք»⁶:

Եօթներորդ. հայերին «ամբաստանել» են, որ, իբր, քառասնօրեայ մեծ պահքին անասունների արտադրած սննդամթերքը («կիթ») կամ հաւկիթն են ուտում, բացի շարաք կամ կիրակի օրերից: Շնորհալին պարզաբանում է եւ այս հարցը, որը կենցաղագիտական կարեւորութիւն ունի տուեալ պատմաշրջանի համար:

Ութերորդ. հայ-բիւզանդական ծիսա-արարողական տարբերութիւններից մէկն էլ այն է, որ հայոց եկեղեցին պատարագ մատուցում է առանց գինու հետ ջուր խառնելու, որ ընդունուած է յունա-հռոմէական ծիսա-արարողութիւններում: Բիւրջական վկայակոչումներով Շնորհալին ապացուցում է, որ հայկական ծիսա-արարողութիւնն է հաւատարիմ մնացել արանդոյթին, եւ ոչ թէ՝ բիւզանդականը կամ հռոմէականը...:

¹ Անդ, էջ 135:

² Անդ:

³ Անդ, էջ 136:

⁴ Անդ:

¹ Անդ:

² Անդ, էջ 130:

Իններորդ. «ծիծաղելի» ծիսա-արարողություն է համարում Շնորհալին բիզանդականը (նաև՝ հռոմեականը), ըստ որի խաչի մկրտությունը եւ օրհնանքը իրարաբանչիւր տարի նորովի կատարում է, երբ, իրականում, մէկ անգամ ընդմիջտ պէտք է կատարել, ինչպէս Հայոց եկեղեցին է վարում: Բայց այս ծիսա-արարողությունը, ի գիտություն Բիզանդիայի հոգեւոր վերադասի յայտնում Շնորհալին, հայերը ընդունել են յունական եկեղեցու նուիրապետութեան հայրերից՝ նրանց աշխատութիւնների թարգմանութեան միջոցով. «... Եւ օրհնութիւն խաչի ոչ ի մէնջ եղեալ է, այլ յառաջին հարցն ձերոց, զոր նախնիքն մեր թարգմանեալ ետուն մեզ, որպէս այժմ գտանենք յարեւելս յունարէն գրով ի հին գիրս. ո՛չ առաւել եւ ո՛չ նուազ քան զմերս...»¹:

Տասներորդ. Շնորհալին պատասխանում է նաեւ հայոց ծոմապահութեան նկատմամբ յոյների քննադատութեանն ու քամահրանքին. «Ասացուք եւ փոքր ինչ եւ վասն առաջատրացն ի մէնջ անուանեալ պահոց, զոր հայեոյէք»²: Շնորհալին յիշեցնում է, որ գրպարտիչները «ստայօդ բանիս» բամբասել են բիզանդական արքունիքին այն մասին, որ հայերի մէջ եղել է, իբր, Սարգիս անունով իշատէր եւ շնատէր մի կախարդ. սրա շուրջ «առասպելներ» են հիստել որպէս «սուրբի» եւ որ, իբր թէ, պաշտուել մինչեւ քննարկուող ժամանակները հայերի կողմից: Այնինչ Սարգիս անունով կախարդի սրբացումը հայերի կողմից բացարձակապէս յերիւրանք է, յայտարարում է Շնորհալին. «Բայց առ մեզ յիշատակ այսպիսում Սարգսի անգոյ է, եւ առաւել քան զեղջերուաբաղն ասացեալ»: Իրականում՝ այն համանուն Սարգիսների գուգադիպմամբ պատահականութեան, հետեւաբար եւ շփոթմունքի արդիւնք է, բացատրում է Շնորհալին. «զի նա թէն ոչ ունի, անուան պատահեցաւ, իսկ Սարգիսս այս ոչ գոյութիւն ունի յազգս մեր եւ ոչ անուն. զոր թէ է՛ ուրեք եւ մեզ անյայտ, նզովէ զնա կաթողիկէ եկեղեցի, եւ զէջ նորա, եւ զսկունդ (իմա՝ շուն) - Լ.Խ.), եւ զդիտողս նորա, եւ զընդունողս, զի անուն նորա չէ՛ որ լուեալ յազգս մեր, քայց ի հռոմոց, զի ասեն՝ զրպարտելով զմեզ»³:

Չնայած դրան, հայերն իրօք ունեն «առաջատր» (իմա՝ սկզբնական, վաղընջական) ծոմապահութիւն՝ կապում Սր. Սարգսի հետ, որի պարզաբանումը հետեւեալն է. երբ Գրիգոր Լուսաւորիչը Խոր Վիրապից ազատում է, իր շուրջը հաւաքում են Տրդատ թագաւորը, որը պատուհասուել էր Աստուծոյ կողմից վարազի կերպարանք ընդունելով, եւ այսահար եղած բոլոր իշխաններն ու զօրականները: Եւ որովհետեւ նրանց փրկում է Գրիգոր Լուսաւորիչը նոր հաւատքի բերելով՝ բոլորը «բժշկում» են եւ վերադառնում իրենց նախկին բնական վիճակին: Ի նշանատրումն այս հրաշանման երեւոյթի՝ Գրիգոր Լուսաւորիչը հինգօրեայ ծոմապահութիւն է սահմանում բոլորին, որն աւանդում է Հայոց եկեղեցուն այդ օրումից, որպէսզի չմոռացուի Աստուծոյ «երախտիքը»: Եւ հայերը պատշաճ են համարում այս ծոմապահութիւնը «խառնել» նիւուէցիների ծոմապահութեան հետ, որ նոյնպէս նշում էր ազգովին կործանումից փրկուելու համար, ընդ որում մինչեւ այժմ էլ ասորի եւ եգիպտացի ազգերը աւանդաբար պահպանում են այն:

Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թէ ինչպէ՞ս է որ այս ծոմապահութիւնը ամբողջովին փոխանցում է Սր. Սարգսի անունը, ապա Շնորհալին մեկնաբանում է այս կերպ. նախ՝ համանունութիւնը կախարդ Սարգսի հետ մեզ չպէտք է

շփոթեցնի, ասում է նա: Իրականում՝ Սր. Սարգիսը նախապէս բարեպաշտօն իշխան է եղել Կապադովկիայում, որն ապրել է մեծն Կոստանդիանոսի օրօք: Իսկ Յուլիանոս կայսեր ժամանակ հալածուելով փախչում է Պարսկաստան՝ Շապուհ արքայի մօտ: Կարճ ժամանակամիջոցում նրան յաջողում է քրիստոնեայ դարձնել Շապուհի զօրքերից շատերին, որի համար պատժում ու նահատակում է իր որդիներով միասին Պարսից նոյն արքայի կողմից: Այդ օրը, լինելով Յունուարի երեսունը, զուգադիպում է Գրիգոր Լուսաւորչի հաստատած հինգօրեայ ծոմապահութեանը, ուստիւ ամբողջովին վերագրում է, ի յաւերժացումն մարտիրոսացուած Սարգիս իշխանի յիշատակի՝ սրբացումով (որպէս «Սուրբ Սարգիս»): Հայոց այս ծոմապահութիւնը, սակայն, հաւաստում է Շնորհալին, նման է յունաց Սր. Թէոդորոսի անունը նուիրում ծոմապահութեանը, որը նշում է ամէն Յունուարի առաջին շաբաթը, երբ «քառասնորդաց պահք» են տօնում բոլոր եկեղեցիները:

Ահա սրանք են եղել բոլոր այն «տարածայնութիւնների շրջանակը», որոնց առիթով սրուել են հայ-յունական եկեղական յարաբերութիւնները, որոնով էլ միաժամանակ բնորոշուել նաեւ այդ ժողովուրդների փոխառնչութիւնները...:

Գ. Հակասութիւններ հայ-լատինական եկեղեցիների դաւանանքային եւ ծիսա-արարողական իրողութիւնների գը-

ծով:- Հայ-լատինական յարաբերութիւնները զարգանում էին մի քիչ այլ ուղղութեամբ: Նախ՝ Ծովքի կաթողիկոսարանը, գտնուելով Անտիոքի լատինական իշխանութեան տարածքում, բնականաբար ձգտում էր առաւել բարեհաճ յարաբերութիւններ մշակել լատին եկեղեցու նուիրապետութեան հետ: Երկրորդ՝ Անտիոքի լատինական եկեղեցու վերադասի միջոցով հնարատր էր մշտական ու մտերմիկ յարաբերութիւններ հաստատել նաեւ Հռոմի պապի՝ որպէս հռոմեական հզօր կայսրութեան առաւել հզօր եկեղեցական նուիրապետութեան գերագոյն առաջնորդի հետ: Ի դէպ, վերջինիս աջակցութիւնն ապահովելը նորաստեղծ հայկական իշխանութեան համար Կիլիկիայում առաջնահերթ անհրաժեշտութիւն էր երկակի նկատառումով. մի կողմից՝ հայ-յունական եկեղեցիների դաւանանքային եւ ծիսա-արարողական հակասութիւնները, իբրեւ միջնորդ դատատր կամ իրաւարար, ներկայացնելու, բիզանդական եկեղեցու նուիրապետութեան յաւակնութիւնները զսպելու, վարուեցողութեան պատշաճ ու բարեկիրք սահմաններում նրան պահելու իմաստով. միւս կողմից՝ պապի խաչակրաց արշաւանքի կազմակերպմամբ Կիլիկիայում հայոց իշխանութեանց օգնութեան հասնելու առումով՝ Իկոնիայի սուլթանութեան նուաճողական նկրտումների դէմ:

Ծովքի հայրապետութեան «միջազգային» հեղինակութիւնը ճանաչում էր գտնում յընթացս ժամանակի. ինչպէս Կիրակոս Գանձակեցիին է հաւաստում Գրիգորիս Գ. կաթողիկոսի մասին. «Եւ էր սիրեցեալ նա յամենայն ազգաց»¹:

1139 թուականին Անտիոքում գումարում է համաժողով՝ ներմուիրապետական խռովայոյզ հարցերը քննարկելու եւ լուծելու նպատակով: Դրան մասնակցելու համար հրաւիրուել են ինչպէս Հռոմի պապի նուիրակը՝ լեկադը, 12 եպիսկոպոսներ ու կաթողիկոսներ, այնպէս եւ Ծովքի կաթողիկոսութիւնը իր հայրապետով ու տեղապահով, որոնց մասին վկայում են թէ՛ հայկական եւ թէ՛ լատինական աղ-

¹ Անդ, էջ 1393-140:

² Անդ, էջ 144:

³ Անդ, էջ 144-145:

¹ Անդ, էջ 117:

բիրները: Համաժողովի օրակարգը յուզառիթ կարեւորութիւն ունեցող գլխաւոր հարց էր Անտիոքի պատրիարքարանի համար: Ի դէպ, այս իրադարձութիւնը զուգահեռաբար է նաեւ Հռոմի պապական նուիրապետութեան մէջ առաջացած շփոթութեանը. դա այնպիսի ժամանակ էր, երբ Հռոմում Իննովկենտիոս Բ. պապին իբրեւ հակաթոռ պապ իրեն հռչակել էր Անակետ Բ.-ն. շփոթ վիճակից օգտուելով՝ ֆրանգ եպիսկոպոս Ռադուֆը, ազնուականների աջակցութեամբ, Անտիոքի պատրիարքական աթոռին է նստում. սակայն առանց վաւերացման, ընդունուած կարգի համաձայն, պապից օրհնուելու. ինքնագլուխ օրհնանքը կատարում է եւ պարանոցին անցկացնում արքեպիսկոպոսական ծայրագոյն պատուի խորհրդանիշը՝ «պալիումը» (կրծքակալը կամ ուսագգեստը):

Ինքնակոչ պատրիարքը, սակայն, մի շարք «անխտենմութիւններ» գործելով՝ շուտով իր դէմ է հանում հոգեւորականութեանը եւ ժողովրդական զանգուածներին, որոնք եւ իրենց դժգոհութիւնն են յայտնում Միգիլիայի քաղաքին: Յետագայ անախորժութիւնների կանխման նպատակով Ռադուֆ պատրիարքը իսկոյն եւ նախօրօք ներկայանում է Հռոմի պապին ու նրա բարեհաճութիւնը ձեռք բերելով՝ պաշտօնապէս ստանում «պալիում»՝ իբրեւ վաւերացում իր պատրիարքական աստիճանի: Սակայն անհնարին է լինում նրա վերադարձը Անտիոք՝ իր դէմ յարուցուած բոլոր ընդդիմութեան պատճառով, ուստի եւ առժամանակ ապաստանում է Սեւ լեռան վանքերում, ապա նորից, կրքերը մասամբ հանդարտուելուց յետոյ, տիրանում Անտիոքի պատրիարքարանի աթոռին: Որպէսզի լիովին փարատի յուզումները, Հռոմի պապը իր նուիրակին է ուղարկում Անտիոք, որը սակայն ճանապարհին վախճանում է «խորհրդաւոր հանգամանքներում»: Այս անգամ պապը Ալպերի կարդինալին է լիազօրում ներկայանալու ու Անտիոքի պատրիարքական համաժողովը գումարելու, որին իրենց մասնակցութիւնն են բերում 12 եպիսկոպոսներ: Սակայն Ռադուֆ պատրիարքը երեք անգամ հրաժարում է համաժողովին ներկայանալու հրաւերից, որի պատճառով բանադրում եւ զահագրկում, մինչեւ անգամ բանտարկում է Անտիոքի իշխանի կողմից: Այնուամենայնիւ նրան յաջողում է նաեւ բանտից փախչել, իսկոյն ճանապարհում է Հռոմի պապի մօտ, ուր եւ կասկածաշարոյց պայմաններում կնքում իր մահկանացուն: Անտիոքի համաժողովը նոր պատրիարք է ընտրում յանձինս Ամարիկի:

Ծովքի հայրապետի (թերեւս նաեւ տեղապահի) Անտիոքի համաժողովին մասնակցած լինելու մասին հաղորդում են Ներսէս Լամբրոնացին, հայ եւ լատին պատմիչները:

«Մեծն յԱնտիոք ժողովն եղեալ.

Խնդրող սոցա արագ ելեալ»,- հաւաստում է Լամբրոնացին:

Կիրակոս Գանձակեցին բացառիկ հանդիսատրութիւն է վերագրում Գրիգորիս հայրապետի ժամանմանը տրուած ընդունելութեանը Անտիոքի պատրիարքական այս համաժողովին. «Իբրեւ եհաս նա ի քաղաքն Անտիոք, ել ամենայն քաղաքն ընդ առաջ նորա ջահիք եւ լապտերօք եւ մեծաւ պատուով տարեալ նստուցին զնա յաթոնն Պետրոսի առաքելոյն»¹: Մեծարման զեղումն այս նկարագրութեան մէջ անշուշտ ակնբախ է, որովհետեւ, ինչպէս ճիշդ է նկատել Ղ. Ալիշանը, «... այս ժողովիս մէջ յիրաւի մեր կաթողիկոսին եւ իրեններուն զանուիլն՝ աւելի պատուասիրաբար համարելու է քան թէ հարկաւորաբար»², հետեւաբար եւ՝ աւելի հաւանական է Հռոմի

նուիրակին վերապահուած լինել, իբրեւ Անտիոքի պատրիարքական ժողովի նախագահի, Սր. Պետրոս առաքելալի եկեղեցու աթոռին բազմելը, քան Հայոց հայրապետի...:

Ուշագրան այն է, սակայն, որ Գրիգորիս հայրապետը իր ելոյթով, ինչպէս Ներսէս Լամբրոնացին է հաւաստում, «նուաճել» է ունկնդիրները Անտիոքի համաժողովում.

«Ուր հանդիսի ի ճահ խօսել.

Ունկըն դնելով նոցա՝ նուաճեալ»:

Այս փոխադարձ ծանօթացումն ու համագործակցումը լատին եւ հայ եկեղեցիների միջեւ՝ բնականաբար դուր էր բացում առաւել ծաւալուն շփումների ու փոխըմբռնումների: Չի բացառուած, որ այստեղ բացատրական լայն աշխատանքներ տարուած լինեն հայոց առաքելական եկեղեցու դաւանաբանական հիմունքներն ու դարերով սրբագործուած ծիսա-արարողական իրաւատկութիւնները ներկայացնելու խնդրում:

Միաժամանակ ենթադրում է, որ լատինական եկեղեցին հենց Անտիոքի համաժողովում սկսել էր յոյսեր փայփայել հայոց եկեղեցու հետ «միաբանութեան» ու «միասնութեան» խայծով իր գերիշխանութիւնը հաստատելու հեռամէտ նպատակը իրագործելու համար նաեւ ուղիներ որոնել: Միանգամայն հիմնաւոր է եւ համոզիչ Ղ. Ալիշանի դիտումն այն մասին, որ Անտիոքում սկսուած փոխասացութիւնն ու բարեկամական հաճոյախօսութիւնները Երուսաղէմում շարունակելու եւ խորացնելու գաղափարը յղացուէր Հռոմի պապի նուիրակի հետ ունեցած բանակցութիւնների ընթացքում: Երուսաղէմում նախատեսուած էր Սր. Միսնի եկեղեցու հիմնարկէքը («նաւակառիք») հանդիսատրապէս նշելու, եւ այս առթիւ եւս առաջարկութիւն է արուած հայոց հայրապետութեանը իր մասնակցութիւնը բերելու, որը եւ սիրով ընդունում է: Այս կապակցութեամբ ուշագրաւ են օրուայ դէպքերի եւ իրադարձութիւնների ժամանակագիր Սամուէլ Երեցի հաւաստումները: Հայոց եկեղեցական պատուիրակութիւնը «պատուեալ փառատրութեամբ, ոչ միայն ի մերոց ազգէս, այլեւ յօտարասեռ քաղաքաց եւ իշխանաց եւ պատիարգացն»:

Հովուապետական առաքելութեան յաջորդական կանգառների առումով հայոց հայրապետը նախ Անտիոք է ճանապարհորդում, ապա Երուսաղէմ: Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եղև նմա (ինա՛ր Գրիգորիս Գ. հայրապետի - Լ.Խ.) զնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, զի երկրպագեսցէ նա սուրբ տեղեացն տնօրինականաց: Իբրեւ եհաս ի քաղաքն Անտիոք...»¹:

Պատմագրական զրականութեան մէջ որոշ անճշտութիւն կայ Երուսաղէմի հանդիպման թուականի շուրջ. հայկական աղբիւրները 1141 թուականն են մատնացոյց անում, իսկ լատինական ժամանակագիրները 1136 թուականը. բայց աւելի արժանահաւատ պէտք է համարել 1140 թուականի ապրիլի 7ը²:

Մնբաւ պատմիչը հաղորդում է, որ Հռոմի պապի նուիրակը խորին ակնածանքով է ներկայացրել հայոց կաթողիկոսին, հաւաստելով միաժամանակ դաւանաբանական հարցերում նրա խորագիտակութեան թողած ճնշող տպաւորութիւնը. «Իսկ ի թուին ՇՂ (590 = 1141) զնաց սուրբ հայրապետն Տէր Գրիգորիս ի սուրբ

¹ Անդ, էջ 117:

² Ղ. Ալիշան, Ներսէս Ընդհալի եւ պարագայ իւր, էջ 154:

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 117

² Տե՛ս Սեբրեթ Ազղեան, էջ 162, ծանօթ. 41:

քաղաքն Երուսաղէմ, եւ եկն առ լիկաքն եւ խօսեցան ընդ միմեանս ի հաւատոյ բնութիւն, եւ գոր ինչ ասաց սուրբ հայրապետն՝ հաւանեցաւ հաւանութեամբ, եւ եցոյց ամենայն ֆոանգաց, եւ ամենեքեան մեծարեցին զնա ի տօն սուրբ Չաակին¹: Սամուէլ Անեցին աւելի մանրամասնելով հանդիպման տպաւորութիւնը՝ կենդանի ու վառ գոյներով է բնութագրում դրա անդրադարձը ֆոանգ ազգի ներկայացուցիչների մօտ. նա ընդգծում է երկու մոմենտ, ինչպէս արտաքինը՝ վայելչակազմ տեսքը իր արեւելեան ազգային հայրապետական զգեստի մէջ, այնպէս եւ ներքինը՝ իմացախոհական ներաշխարհի հարստութիւնը. եւ որ կարեւորն է՝ առիթ ունեցան լատինական եկեղեցու ներկայացուցիչները ի մօտոյ ծանօթանալու անմիջապէս հայոց հայրապետից առաքելական եկեղեցու ինչպէս դաւանանքային հիմնադրոյթներին, այնպէս եւ ծիսա-կանոնական դրուածքին ու բնոյթին. «Անդ ծանուցեալ եւ իմացեալ զառատահոս ծաւալումն աստուածային շնորհին ի վերայ Հայրապետին՝ ազգն հռովմայեցոց՝ իշխողը աշխարհացն, որ Փռանգ կոչին, եւ ըստ վայելչագգեաց եւ պատշաճագեղ տեսիլ մարմնոյն՝ ծանեան եւ զեղօյն զեղեցկութիւն, եւ ի բանս հաւատոյ զճշմարտութիւն՝ ամենեւիմբ. գոր պայծառ եւ կանոնական կարգաւ եւ բանոնով՝ վարդապետական ճոխութեամբ բարբառէր: Ուրախացան հաճելութեամբ, եւ առաւել սէր հաստատեցին ընդ Հայրապետին եւ ընդ ազգս մեր»²:

Իսկ Կիրակոս Գ-անձակեցին նոյն փաստը հաղորդելով հանդերձ նաեւ ընդ-գծում է այն միտքը, որ Գրիգորիս Գ. հայրապետի այցելութիւնը Երուսաղէմ եւ հանդիպումը լատին հոգեւորականութեան վերադասի հետ, իրականում, հայ-լատինական եկեղեցիների յարաբերութիւններում շրջադարձային նշանակութիւն է ունեցել, վերականգնելով, մի կողմից՝ Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատի, միւս կողմից՝ Կոստանդիանոսի եւ Սեդրեստրոսի «հին դաշինքը» ինչպէս հայ-հռոմէական բազա-տրութիւնների պետական, այնպէս եւ եկեղեցական մակարդակներով: Մեր այս պատմիչի մօտ կարդում ենք. «Եւ իբրեւ եհաս նա յԵրուսաղէմ, ազգն ֆոանկաց, որ իշխողը էին քաղաքին, եւ պատրիարք նոցա առաւել սէր հաստատեցին ընդ ազգիս մերում վասն նորա, զի էր նա բարի տեսլեամբ եւ զիտութեամբ սուրբ գրոց զար-դարեալ, զհին դաշինսն Տրդատայ, եւ սրբոյն Գրիգորի եւ Կոստանդիանոսի կայսեր եւ Սեդրեստրոսի հայրապետին վերստին նորոգեցին առ սովա»³:

Լատինական աղբիւրներից, ինչպէս վկայակոչուած է մեր բանասերների աշ-խատութիւններում, ժամանակի յուզող այս հարցերին անդրադարձել է լատին հեղինակաւոր ժամանակագիր եւ Տիրոսի եպիսկոպոս Գուլիէլմոսը, որը 40 տարի յետոյ շարադրելիս այս իրադարձութիւնները, Գրիգորիս Գ. հայրապետին բնու-թագրում է որպէս «ամենամեծ քահանայապետ հայոց», միաժամանակ հաւաս-տելով որ նա Մեծ եւ Փոքր Հայքերի, Պարսկաստանի եւ Մարաստանի բոլոր (հայ) եպիսկոպոսների ընտիր Վարդապետն է, որ ընդհանրապէս ճանաչուած է իբրեւ Կարողիկոս. «Cui Synodo interfuit maximus Armeniorum pontifex, imo omnium episcoporum Cappadociae, Mediae, Persidis et utriusque Armeniae princeps et doctor eximius, qui Catholicus dicitur. Cum hoc etiam de fidei articulis, in quibus a nobis dissentire videtur populus eius, habitus est tractatus; et ex parte eius, promissa est in multis correctio»:

¹ Անդ, էջ 161-162:

² Սամուէլի քահանայի Անեցոյ Հասարմունք ի գրոց պատմագրաց. հրտ. Արշակ Տէր-Միքայէլեանի, Վաղարշապատ, 1893:

³ Կիրակոս Գ-անձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 117-118:

Բանակցութիւնների բովանդակութիւնը սեղմ տողերով հաղորդում են ինչպէս հայկական, այնպէս եւ լատինական սկզբնաղբիւրները: Մմբատ պատմիչը հաւաս-տում է, որ բանակցութիւնները պատուել են «հաւատաբնութեան» շուրջը. «... Խօսեցան ընդ միմեանս ի հաւատոյ բնութիւն»¹: Նոյնը պնդում է նաեւ լատին ժամանակագիր Գուլիէլմոս Տիրացին. «Խօսք բացուեց հաւատքի այն դրոյթների շուրջ, որոնցում ակներեւ է, որ տարբերում է իր (իմա՝ Գրիգորիս հայրապետի - Լ.Խ.) ժողովուրդը մեզանից (իմա՝ լատիններից - Լ.Խ.) եւ խոստում տուեց շատ հարցերում ուղղում մտցնել» («Cum hoc etiam de fidei articulis, in quibus nobis dissentire videtur populus eius promissa est in multis correctio»): Բնական է, բանաւոր «զիջումը» հաւատաբնութեան որոշ հարցերում դեռեւս ամէն ինչ չէ: Դրանց իրա-կանացման համար ապացոյցներ պէտք է տրամադրուէին, ընդ որում երկու կողմե-րի գործողութիւնների պերճախօս վկայութեամբ: Բացառուած չէ այն ենթադ-րութիւնը, որ Գրիգորիս Գ. հայրապետը, հայ-լատինական յարաբերութիւնների զարգացման հեռանկարի թելադրանքով, Հռոմի նուիրակին յանձնած լինէր «քարեկամեցողութեան» Թուրք պապին անձամբ ներկայացնելու ամենայն Հայոց կաթողիկոսութեան անունից²: Առանձին ակնարկներից ու յիշեցումներից ձեռագ-րական աղբիւրներում նաեւ պարզում է, որ Հռոմի պապի հետ Ծովքի հայոց կաթո-ղիկոսարանի թղթագրութիւնները աւելի վաղ անցեալ են ունեցել, քան Երուսաղէմի կամ Անտիոքի հանդիպումը: Բանն այն է, որ Կիլիկիայում հայ-քիզանդական եւ հայ-լատինական եկեղեցիների յարափոփոխ սրացումն ու ճնշման ուժգնացումը յաճախ են հարկադրել Ծովքի (նաեւ Հռոմկլայի) Ամենայն Հայոց կաթողիկո-սութեանը, որ պարբերաբար նուիրակներ ուղարկի Հռոմ պապի մօտ՝ հայրա-պետական թղթեր յանձնելու նրան, որոնցում արժարձուած պէտք է լինէին, անտարակոյս, դաւանաբանական եւ ծիսա-արարողական տարածայնութիւնները: Որոշ արձագանգներ պահպանուել են ձեռագրական աղբիւրներում, որոնք աւելի յետին ժամանակների արձանագրութիւն են, տարաբախտաբար, առանց մանրա-մասնօրէն անդրադառնալու յուզող խնդիրներին: Այսպէս, ԺԴ դարի մատենագիր Մխիթար Ապարանեցին, վկայակոչելով Ստում գրառուած հայոց կաթողիկոսների զուարճանագրութիւնից կատարած իր մի քաղագրութիւնը, մեզ տրամադրում է այսպիսի շատ կարեւոր հաղորդում. «Առ սա (իմա՝ առ Գրիգորիս Գ. կաթողիկոսն - Լ.Խ.) հայրապետն Հռոմայ գրեաց թուրք. եւ խնդրեաց կատարել զտօն Ծննդեան եւ Սկրտութեանն՝ ընդ մեծ եկեղեցին Հռոմայ եւ ամենայն տիեզերք. եւ արկանել ջուր ի սուրբ խորհուրդն: Եւ յետ սորա Իննովկենտիոս Պապն զնոյնս գրեաց եւ եցոյց հարկաւոր»: Ինչպէս յայտնի է, Իննովկենտիոս պապի (1130-1143) նախորդը եղել է Ոնորիոս Բ. պապը, որը քահանայապետել է 1124-1130-ական թուականներին, ուստի եւ քաղուածքից հետեւում է, որ սրա օրօք էլ սկսել են թղթագրութիւններ ունենալ Ծովքի Ամենայն Հայոց առաջնորդները: Իսկ Գլաճորի համալսարանի դպրապետ Եսայի Նչեցին (1260-1338) իր գրութիւններում յիշատակել է Իննով-կենտիոս պապի նամակը, հասցեագրուած Գրիգորիս Գ. հայրապետին եւ Ներսէս Շնորհալուն, ինչպէս եւ վերջիններիս պատասխան թուրքը: Ի դէպ, ուշագրան այն է, որ մեծահամբաւ այս Ուսուցչապետը դեռեւս իր տրամադրութեան տակ ունեցել է այդ փաստաթղթերը, որոնք յետագայում, տարաբախտաբար, սուզուել են անյայ-տութեան մշուշում, ինչպէս շատ եւ շատ դիւանական վաւերաթուղթեր: Նա, ի շարս այլոց, նշել է. «Ունիմք այսօր ի միջի մերում՝ զԽնդիրս (պապին Իննովկենտիոսի - Լ.Խ.) հանդերձ Պատասխանական բանիս»:

¹ Մմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 161-162:

² Տե՛ս Ղ Ալիշան, Ներսէս Շնորհալի եւ պարագայ իր, էջ 158-159:

Պատասխան թղթում հայոց հայրապետները փաստարկուած բացատրութիւն են տուել, ելնելով հայոց Առաքելական եկեղեցու տեսական հիմնադրոյթներից, Քրիստոսի Շննդեան եւ Սկրաութեան տօները մէկ օրում նշելու, Քրիստոսի արեան խորհուրդ որպէս՝ զինու հետ ջուր չխառնելու սրբագործուած արանդոյթի եւ այլ հարցերի շուրջ:

Յաջորդ բանակցութիւնների մասին հաղորդում է Պաիերայի Ֆրիզինկէն քաղաքի Երանելի Օթէ արքեպիսկոպոսը. սա ապրել է 1090-1158 թուականներին, եւ իր արժեքատու ժամանակագրութեան մէջ յիշատակել է Հայոց կաթողիկոսութեան նուիրակների ժամանման մասին 1145 թուականին, Երզնէիս Գ. պապի մօտ՝ Իտալիոյ Վիդերպոյ քաղաքը, որը ժամանակաւորապէս արքունիստ էր դարձել նուիրապետութեան խռովայն իրադարձութիւնների պատճառով: Այս հանդիպմանը ականատես եւ ունկնդիր է եղել նաեւ ինքը՝ Օթէ ժամանակագիր պատմիչը: Նկատենք, որ հայոց նուիրակների Շովքի կաթողիկոսութիւնից բերած Թուրքի բովանդակութեանը անդրադառնալիս այս ժամանակագիրը հաղորդում է համարեա նոյն տեղեկութիւնները, ինչ հայկական սկզբնաղբիւրները. Հռոմի քահանայապետին «իրաւարար» դատաւորի տեղ դնելով՝ քննարկում են հայ-բիւզանդական եկեղեցիների դաւանաբանական եւ ծիսա-արարողական տարբերութիւնները եւ դրանց շուրջ բորբոքուած տարածայնութիւնները, ընդսմին՝ Հայոց առաքելական եկեղեցու տեսական հիմնադրոյթների առաջադրմամբ եւ մեկնաբանմամբ, մանաւանդ դրանց եռանդուն պաշտպանութեամբ: Հայոց եկեղեցու պատուիրակութիւնը ներկայ է գտնուել նաեւ Ս. Պետրոս եկեղեցու հիմնարկէրի հանդիսութեանը՝ նաւակատիքին, ուր պատարագելիս է եղել Երզնէիս Գ. պապը անձամբ: Ի դէպ, Օթէ ժամանակագրի հաւաստմամբ՝ պապի հետ քննարկուել է նաեւ այն հարցը, թէ ինչպէ՞ս պէտք է վարուի հայոց եկեղեցին սահմանակից մի հեթանոս ազգի հետ, որի ժառանգները, իբր, «ծնունդ էին զարշահոտ» եւ միայն մկրտուելով հայոց եկեղեցում՝ ձեռքագատուում այդ ախտից եւ «մարում», բայց եւ այնպէս յընթացս ժամանակի, երբ հասուն մարդ էին դառնում, դարձեալ որդեգրում էին իրենց նախնիների «ծուռ աղանդը» եւ կենցաղավարում համաձայն դրան: Ղ. Ալիշանը ենթադրում է, որ այդ ցեղը, ըստ երեւոյթին, Իկոնիոյ սուլթանութեանը հպատակ թուրքական մի ցեղ է, մանաւանդ որ Շնորհալին, փաստարկում է նա, իր շրջաբերականում՝ Ընդհանրական Թուրքում նման գործառոյթի մասին յիշատակում է, այն է՝ թուրք նորածինների մկրտութիւնը հայոց եկեղեցիներում¹:

Լատին այս ժամանակագրի վկայութեան արձագանգը առկայ է նաեւ հայկական աղբիւրներում: Այսպէս, ԺԴ դարում Մխիթար կաթողիկոսը Ստոյ ժողովում հաղորդել է, որ անխառն զինու եւ տօների միասնակցութեան վերաբերեալ հայ եւ լատին հոգևոր առաջնորդների հարցադրումները «գտցես ի թուղթն Երզնէիսի Պապին Հռովմայ, գոր գրեալ է առ Տէր Գրիգորիս կաթողիկոս եղբայր մեծին Ներսիսի Կլայեցւոյ», եւ որ, սիրաշահելու համար հայոց Գրիգորիս Գ. կաթողիկոսին իբրեւ ընծաներ ուղարկել է Երզնէիս պապը Շովքի կաթողիկոսարան նաեւ «գաւազան եւ քօղ կամ զվսի թագ», որոնք խորհրդանշում են կաթողիկոսական ծայրագոյն պատուի հաւաստիացումներ...:

Թէկուզ կցկտուր վկայութիւնների ըննութեամբ մի բան պարզուում է որոշակիօրէն. Շովքի հայոց հայրապետների նրբամիտ դիւանագիտական պատասխանը Հռոմի պապի հետ վարած թղթագրութիւններում եղել է զգուշատու եւ

խուսափողական, քանի որ *պապական նուիրապետութիւնից ակնկալիքներ ունէր հայ ժողովուրդն ու նորաստեղծ հայոց իշխանութիւնն առհասարակ Կիլիկիայում*: Երբ դժկամակում էին հայոց հայրապետները «խոստումներից» գործնականի անցնելու հարցում՝ սահմանափակուելով լոկ խօսակցութիւններով, իրենց մտադրութիւնը դիւանագիտօրէն քօղարկում էին այսպիսի պատճառաբանութիւններով. Կիլիկիայում եւ բնաշխարհում հայ ժողովրդի կեցութիւնը լինելով չափազանց տարապայման՝ կոտորակուած բազմաթիւ ու բազմազան իշխանութիւնների ներքոյ, հնարատու չէր ո՛չ թղթագրութիւններով, ո՛չ էլ նուիրակութիւնների առաքմամբ մինչեւ իսկ համաժողով գումարել՝ պապի առաջարկութիւնները քննարկելու եւ միահամուռ որոշումների յանգելու համար, ուստի եւ, ներկայ պահին, *փոխանակ համախմբութեան եւ միասնութեան՝ պատակտումների ու ապստամբութիւնների դուռ կարող է միայն բացել դրանց շտապ քննարկումը եւ կամ վաւերացումը*: Հետեւաբար խելամտութիւնը *պահանջում է՝ անորոշ ժամանակով յետաձգել պապական նկրտումների իրականացումը՝ առաւել բարենպաստ իրադրութեան սպասելով*: Սա՛ էր ենթատեքստը բանակցութիւններում Շովքի Ամենայն Հայոց կաթողիկոսութեան զվաար դիրքորոշման, նրա ընդհանուր եւ հիմնական գիծը: Ուշագրան այն է միաժամանակ, որ Շովքի հայրապետների կեցուածքը բանակցութիւնների ժամանակ եղել է ոչ թէ պարտաւորական եւ անձնատուական, այլ, *հայոց Առաքելական եկեղեցու հիմնադրոյթների եռանդուն ջատագովների ու մեկնաբանների իրենց դերով՝ բանակցում էին Հռոմի պապի հետ միայն ու բացառապէս հաւասար դաւանանքների դիրքերից*...:

Բայց ասել նաեւ, որ բոլորովին ապարդիւն են անցել երկուստեք շփումներն ու մտքերի փոխանակութիւնները Շովքի Ամենայն Հայոց կաթողիկոսութեան համար, ճիշդ չէր լինի: Կիրակոս Գանձակեցու բնութագրութեան մէջ Գրիգորիս Գ. հայրապետի առնչութեամբ ասուած է. «... Սքանչելի հայրապետն սուրբն Գրիգորիս, *պայծառացոյց գտորք եկեղեցի զանազան կարգօք եւ օրինադրութեամբ կանոնականօք, ամենայնի ջանայր ըստ օրինակի իւրոց նախնեացն վարիք*»: Ընդգծուած նախադասութիւնից հետեւում է, որ այնուամենայնիւ Հայոց եկեղեցին որոշ բան եթէ ոչ դաւաբանական հարցերում, զոմէ ծիսա-արարողական համակարգում *լրացուցիչ մոմենտներ* ընդունել է կաթողիկական եկեղեցուց՝ ըստ մեր այս պատմիչի հաւաստման: Այդ հաստատում է նաեւ Մխիթար կաթողիկոսը յետագայում՝ շուրջ 1343 թուականին Կղեմէս Զ. պապին յղած թղթագրութեան մէջ յուշելով, որ քահանայի եւ եպիսկոպոսի օծումը իբրեւ ձեռնադրութեան կարգ, ընդունել է հայոց եկեղեցին լատինական եկեղեցուց դեռեւս Գրիգորիս հայրապետի եւ Ներսէս Շնորհալու օրօք, քանի որ մինչ այդ, յունական եկեղեցու նման, հայոց եկեղեցուն անձանօք էր այդ գործառոյթը: Այս փաստը արձանագրելով հանդերձ, Ղ. Ալիշանը ծայրայեղ եզրակացութեան է յանգում, սխալ մեկնակէտից ոգեշնչուած կարծելով, թէ Գրիգորիս Գ. հայրապետն ու Ներսէս Շնորհալին, յենուելով իրենց համազգային հեղինակութեանը, իբր թէ պատրաստական եւ նոյնիսկ տրամադիր էին Հայոց Առաքելական եկեղեցու բոլոր դաւանաբանական եւ ծիսա-արարողական տարբերութիւնները վերացնել՝ ընդունելով լատինականը... քանի որ դա իրենց օրօք անելի «դիրքին» էր իրականացնել, քան յետագայ ժամանակներում. «... Եպիսկոպոսի եւ քահանայի օծումը՝ որ Հայր չունէին՝ յունաց պէս, ընդունեցան ի Լատինաց Ներսիսի Կլայեցւոյ ատեն... եւ այս կարգաց հայերէն յարդարմունքն ալ՝ մասամբ՝ մեր Շնորհալոյ գրչին: Եթէ այնպիսի ձեռքէ մ'անցած չլլար՝ զուցէ այնպէս ընդհա-

¹ Տե՛ս Ղ Ալիշան, Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 181-182:

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 108:

նոր Հայաստանեայց ընդունելի ալ չէին ըլլար այս կարգքս, որք գեղեցկագոյն պատուաստ կամ պտուղ մը կրնան սեպուիլ: Այնպիսի խոհական եւ աստուածարեալ հայրապետաց ջանքով՝ ծխիւ եւ լեզուաւ օտար եկեղեցեաց յարմարութիւնք եւ միաբանութիւնք աւելի դիրաւ կը յաջողէին քան քանի մը դար ետքը...»¹: Աինչդեռ մեր սկզբնաբնութիւնը զնահատում են Գրիգոր Գ. հայրապետին (եւ Ներսէս Շնորհալուն) հէնց նրա համար, որ «ամենայնի ջանայր ըստ օրինակի իւրոց նախնեացն վարիք»²:

Ենթադրում է, որ Գրիգորիս Ամենայն Հայոց կաթողիկոսը Երուսաղէմից անցել է Եգիպտոս, ուր իր տոհմի ներկայացուցիչները պետական ամենաբարձր դիրքեր էին զբաղեցնում, եւ հանդիպում ունենում նրանց հետ: Այստեղից, ամենայն հաւանականութեամբ 1143 թուականին, վերադառնում է արքայապետ իր կենտրոնը՝ Ծովքի դղեակը³:

Գ. Հայ-աղուանական եկեղեցիների փոխյարաբերութիւնների կարգաւորումը եւ զարգացումը: Գրիգորիս հայրապետի յարաճուն ուշադրութեան կենտրոնում էին նաեւ Աղուանից եկեղեցում ծառայող իրադարձութիւնները: Ինչպէս յայտնի է, Աղուանից աշխարհի հոգեւոր իշխանութիւնը, իր կազմակերպման առաջին իսկ օրից, ենթակայ է եղել հայոց կաթողիկոսութեանը ոչ միայն դաւանաբանական, այլեւ ծիսա-արարողական համակարգի միասնութեամբ եւ նոյնութեամբ: Աղուանքի քրիստոնէական եկեղեցու եւ գրի ու գրականութեան հիմնադիրները եղել են Գրիգոր Լուսաւորիչն ու Մեսրոպ Մաշտոցը. Գրիգոր Լուսաւորիչը իր թոռանը՝ Գրիգորիսին իբրեւ հոգեւոր առաջնորդ նշանակեց եւ ուղարկեց Աղուանից աշխարհ. այնուհետեւ նրանց եպիսկոպոսներն ու կաթողիկոսները ձեռնադրում եւ օծում էին Ամենայն Հայոց կաթողիկոսների կողմից: Եկեղեցական արարողութիւնը ընդունուած էր կատարել հայերէնով: Երկու եկեղեցիներն էլ հակաքաղկեդոնական միասնական դաւանանք ունէին, իբրեւ միաբնակներ. հայոց Առաքելական եկեղեցու բոլոր համաժողովներում եւ կաթողիկոսական ընտրութիւններում մասնակցում էին նաեւ Աղուանից աշխարհի կաթողիկոսները: Մաշտոցը, Կորիւնի հաւաստմամբ, հայոց այբուբենը ստեղծելուց յետոյ գրահամակարգեր հեղինակեց նաեւ Աղուանից եւ Վրաց ժողովուրդների համար, համապատասխանաբար հանդիսանալով հիմնադիրը նաեւ նրանց մատենագրութիւնների:

Քննարկուող պատմաշրջանում Աղուանից աշխարհը առաւելապէս ամփոփում էր Ուտի եւ Արցախի հայկական նահանգներով: Գրիգոր Գ. հայրապետի կաթողիկոսութեան առաջին տարիներին Աղուանքի կաթողիկոսն էր Ստեփանոս Կարճակեացը, որը ընդամենը մէկուկէս տարի գահակալելուց յետոյ վախճանուեց «պատանի հասակում»: Այնուհետեւ երկար ժամանակ թափուր էր մնացել Աղուանից հայրապետական արքող:

Աղուանքի հոգեւոր նուիրապետութեան վերադասը յատուկ գրութեամբ դիմում է Գրիգորիս Գ. հայրապետին, որ Աղուանից նոր կաթողիկոս օծելու համար լիա-

զօրուած իր եպիսկոպոսին ուղարկի Աղուանից աշխարհ, միաժամանակ իրենց լրարեքին եպիսկոպոս ձեռնադրի. իբրեւ կաթողիկոսական թեկնածու իրենք ընտրել են Աղուանից հայրապետական շառաւիղից «պատանի Գագիկին», որը վերանունում է օծման ժամանակ իբրեւ «Գրիգորիս», ի պատիւ Ամենայն Հայոց հայրապետի. «Ապա մանուկ մի էր յազգէ կաթողիկոսացն Գագիկ անուն, որդի Գէորգայ, թոն Կարապետին, զոր սնուցին եւ ուսուցին, հաղորդում է Կիրակոս Գանձակեցին. եւ իբրեւ ի չափ հասաւ մանուկն, ապա զրեն թողք մաղթանաց Գրիգոր վարդապետն՝ որդին Թոքակերի, եւ Գաւիթ որդի Ալաւկայ, եւ այլ աշխարհն Աղուանից, առ մեծ հայրապետն հայոց Գրիգորիս, որ ընդ այն ժամանակս էր նա ի կողմանս Արեւմտից»⁴: Այս ժամանակը զուգահեռում է Գրիգորիս Գ. հայրապետի՝ Անտիոքի ժողովին իր մասնակցութեան օրերին: Իսկ նման հարցի յաջող լուծումը երա-տապ կարեւորութիւն ունէր նաեւ հայոց եկեղեցու համար. վերջինս մտահոգուած էր Աղուանից երկիրը տագնապալի այդ ժամանակներում ձեռից բաց չթողնելու համար վերակազմել Աղուանից աշխարհի նուիրապետութիւնը. չի կարելի կաթողիկոսական թափուր գահը երկարատեւ ինքնահոսի մատնել, հարկաւոր էր շտապել: Իսկ Աղուանից աշխարհի կաթողիկոս օծելու «հրաման տուողը» դարեր շարունակ եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսը, ինչպէս եւ ներկայ դէպքում, որ բացայայտում է պատմիչի նաեւ հետեւեալ առողերից. «Եւ այր մի ընդ թրոյն առաքեցին (Աղուանից երկրի հոգեւոր նուիրապետութեան ներկայացուցիչները - Լ.Խ.), զի (Գրիգոր հայրապետն - Լ.Խ.) ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս, առաքեաց եւ ինքն եպիսկոպոս մի յիւրոցն, եւ տացէ հրաման ձեռնադրել զմանուկն Գագիկ յարթոն Աղուանից, զի մի՛ անառաջնորդ կորիցէ աշխարհն»⁵:

Ժամանելով Աղուանից աշխարհ, Կարնոյ Սահակ եպիսկոպոսը, նոր օծուած աղուան եպիսկոպոսի հետ տեղում ձեռնադրում է նաեւ 12 եպիսկոպոսների, որպէսզի կաթողիկոսական օծումը, ըստ Առաքելական եկեղեցու կանոնադրութեան, օրինական ճանաչուի նաեւ Աղուանից աշխարհի համար: Իսկ այդ նշանակում է, որ երկար ժամանակ է ինչ սերնդափոխութիւն չի եղել Աղուանից հոգեւոր նուիրապետութեան մէջ, եւ եպիսկոպոսական տեղերը նոյնպէս թափուր են մնացել. «Ապա եկեալ եպիսկոպոսին Կարնոյ Սահակայ եւ միս եպիսկոպոսն, ձեռնադրեն այլ եւս եպիսկոպոս երկուտասան՝ ըստ հրամանի գրոց, եւ ապա ձեռնադրեցին զԳագիկն կաթողիկոս, եւ անուանեցին Գրիգորիս՝ ըստ անուան կաթողիկոսին Հայոց»⁶:

Ամենայն հաւանականութեամբ՝ Աղուանից աշխարհի կաթողիկոսութեան արքանիստ կենտրոնը գտնուում էր Գանձակ մայրաքաղաքում, որը քիչ ժամանակ անց «ահաւոր» երկրաշարժի է ենթարկուում, եւ «նորընծայ» կաթողիկոսը միայն հրաշքով է ազատուում, բայց եւ բնակչութեան կորուստը, տարաբախտաբար, սարսափելի չափերի է հասնում. «Ընդ ատուրսն ընդ այնուսիկ եղել յանկարծակի մէզ եւ մառախուղ, եւ լցաւ առհասարակ լեռնն ու դաշտ, եւ եղել շարժ ահագին, եւ կործանեցաւ մայրաքաղաքն Գանձակ: Եւ շնորհօքն Աստուծոյ ապրեալ եղել նորընծայ կաթողիկոսն, բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր՝ հանդերձ այլ բազմութեամբ արանց եւ կանանց եւ մանկտոց, որոց ոչ գոյ թիւ, զոր սպանին շինուածքն՝ անկեալ ի վերայ»⁷: Իսկ Վրաց Գեմետրէ թագաւորը մարդկային այս

¹ Ղ. Ալիշան, Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 184:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 108:

³ Տե՛ս Ղ. Ալիշան, նշուած աշխատ., էջ 166:

⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 199-200:

⁵ Ազգ:

⁶ Անդ:

⁷ Անդ:

ողրերգութիւնից օգտուելով, ասում է պատմիչը, թալանում եւ աւարի է մատնում այն, ինչ մնացել էր դեռ երկրաշարժից, ընդ որում իր երկրի սահմանները հասցնելով մինչեւ իսկ Գանձակի դարպասները. «Եւ եկն թագաւորն Վրաց Դմետրէ եւ աւար էառ զամենայն ինչսն. տարաւ եւ զդրունս քաղքին յիւր աշխարհն»¹:

Ամփոփելով՝ նշենք, որ Ծովքի հայրապետական դղեակը պատմական շատ կարեւոր դեր կատարեց հայ ժողովրդի կեանքում: Նրա հոգեւոր առաջնորդները ծովքեան երեսունչորսամեայ եռանդուն ու բեղմնաւոր գործունէութեամբ ոչ միայն համախմբեցին ու պահպանեցին, այլեւ զարգացրին հայ ժողովրդի հոգեկան կերտումածքի միասնականութիւնը, միաձուլութիւնն ու ամբողջականութիւնը՝ ինչպէս բազմաթիւ իշխանութիւնների կոտորակուած Կիլիկիայի տարածքում, այնպէս եւ սելճուք-թուրքական խորշակաբեր ցեղերի սմբակի տակ հեծող բնաշխարհում: Երկրորդ՝ Ծովքի հայրապետական դեկավարման շրջանում հայոց եկեղեցու «միջազգային հեղինակութիւնը» բարձր պահուեց՝ հմտօրէն վանելով բոլոր տեսական գրոհները ասորական, բիզանդական եւ լատինական եկեղեցիների՝ ինչպէս հայ եկեղեցու դաւանանքի տեսական հիմնադրոյթների, այնպէս եւ ծիսաարարողական համակարգի դէմ, ընդ որում հիանալիօրէն ապացուցելով *հայոց Առաքելական եկեղեցու ինքնուրոյնութիւնը եւ անկախութիւնը իր կառոյցային ամրակոտորեանքի եւ անաստանութեանքի: Իսկ այս տազնապալի ժամանակներում Եկեղեցու անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը համանշանակ եւ համագոր էր ազգի լինելութեան, նրա անկախութեան եւ ինքնուրոյնութեան, ազգովին գոյատեւելու եւ չձուլուելու մշտական կարգախօսին*: Տեսական հարցադրում, որ սակայն, չէր ընթանէ, տարաբախտաբար, մեծամուն հայագէտ Գ. Ալիշանը իր ծաւալուն եւ մանրակրկիտ ուսումնասիրութեան մէջ Ներսէս Շնորհալուն նուիրում, թիւր կերպով կարծելով, որ եթէ լիովին զիջումների գնար հայոց եկեղեցին՝ մանաւանդ կաթողիկոսական դաւանանքի ու նրա ծիսա-արարողութիւնների ամբողջական որդեգրումով, այնքան շահեկան կը լինէր իր եւ հայ ժողովրդի համար...:

Մոայլ ամպերը, այնուամենայնիւ, կուտակում էին նաեւ Ծովքի հայրապետական դղեակի վրայ:

Եղեսիան 1144 թուականի դեկտեմբերի 23-ի Մոսուլի Չանգի ամիրան իր հրոսակներով գրաւել ու քարոքանդ էր արել, բնակչութեանը անխնայ սրի քաշել՝ մեծից մինչեւ փոքրին: Քստմնելի այս պատուհասը այնքան խորն էր ազդել Ծովքում ծուարած հայոց կաթողիկոսութեան տեղապահի վրայ, որ ամբողջական պոռմ գրեց՝ «Ողբ Եղեսիոյ» վերնագրով, որը որքան ողբերգութիւն էր քնարական խորագրաց ներշնչանքով եւ ընդհանրացումներով, նոյնքան եւ մարտակոչ՝ հայ ժողովրդի ռազմաշունչ կորովի եւ պայքարի ոգեկոչումներով: Նա կարծես նախապատրաստում է հայ մարտիկներին՝ առաջիկայ պատուհասներն ու յարձակումները, մասնաւորապէս Իկոնիայի սուլտանութեան կողմից նիւթուող՝ հերոսաբար դիմագրաւելու, երբ «Ողբ Եղեսիոյ» պոռմում եղիշէական յիշեցումով յորդորում էր կարծէք նմանուել Կարմիր Վարդանի քաջագուններին՝ չընկրկելով ամենեւին մրրիկների ու վերահաս վտանգների ահագնութիւնից.

«Միշտ առ միմեանս ձայնէին,
աղաղակաւ զայս ասէին.
Մի՛ երկիցուք զանգիտելով,

*եղբարք, ի սրոյ մահկանացուին
Եւ ընդ քաջացն արիւորին
մի՛ խառնեսցուք զերկիւղ վատին.
Անուն բարեաց ժառանգեսցուք,
որ ընթանայ յազգ երկրածին:
... Չի՛ թէ յաղթենք՝ պսակիմք,
ի՛ անուն բարեաց մեզ քարոզին,
Եւ թէ մարմնով յաղթահարիմք,
լուսով հոգիք մեր փայլեսցին»¹:*

Ամենեւին էլ պատահական չէ, որ իր ժողովրդի ազատութեան ու պաշտպանութեան համար զոհուող մարտիկներին Շնորհալին, Վարդանաց նահատակների օրինակով, անմահների յաւերժութեանն է դասում, ինչպէս ցորենահատիկ «մեռնում» է, որ բազմապատկուի ծլելով ... եւ դրանով իսկ ապացուցի իր մշտատեւութիւնը.

«Ի ձմերայնի վաստակեցիք,
յանձնուարերս սերմանեցիք,
Չցորեանն ի հողն թաղեցիք,
յորում նեխեալ անդ լուծանիք:
Եղեմնապատ սառամք լինիք
եւ ձիւնաթաղ ամբողջ պահիք,
Մինչ ի զարուն հողով ծածկիք,
ամենաթացեալ պարարտաչիք,
Յորժամ կենաց ցօղոյն արբջիք,
վաղվաղակի բուսանիցիք.
Որտաւնդոստ վերաբերիք,
յանկարծակի վերերեիք,
Որպէս ծաղիկ բողբոջիցիք,
սաղարթագեղ պաճուճիցիք»²:

Շնորհալու քաղաքական հաւատամքը եղել է, ի տարբերութիւն «չարին չհակառակուելու» հանրայայտ քարոզի, «չարին պատուհասելու» մարտակոչը: Գազոյամարտի երկաթեայ սկզբունքից բխող հակադիր, բայց եւ կենսահաստատ «քաղաքական դաւանանք» էր, այդ իսկ պատճառով Շնորհալին իր բանաստեղծութիւններից մէկում բանաձեւել է «ՉԱՐԻՆ ԵՒ ԱՎԱՍԻՅ ՀԱՐՈՒԱԾԵԼՈՒ» մարտաշունչ հրահանգը.

«Հըգօ՛ր, տո՛ր ինձ լինել ուժգին,
Եւ ի դիմի՛ հարուլ չարին...»³:

Իր ժողովրդի Գոյամարտի այդ ահեղ օրերին երկընարանը դրուած էր երկսայրի սրութեամբ. եթէ հաւատացեալները մատնուել են անհատների դատաստանին, ապա թող իմանան, որ «մահապարտը կամ սուր պէտք է վերցնի, կամ զիմագրաւի չարագործի պատուհասը». երրորդ ուղին բացառուած է.

«Իւրաքանչիւր որ առանձին

¹ Ներսէս Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, աշխ. Մ. Մկրտչեանի, Երեւան, 1973, էջ 58-61:

² Անդ, էջ 121:

³ Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 55:

ակն ունիցի պատուհասին
 Կամ այս կենօքս, որ ի մարմին,
 կամ յանաչառ մեծ ատենին:
 Իսկ որ ի ձեռսն մատնեսցին
 հաւատացեալք անհաւատից,
 Մի՛ յայս տգէտք լինիցին
 աստուածական դատաստանին:
 Քանզի որպէս յերկրաւորիս
 ա՛յս է հրահանգ դատաւորին,
 Չի սո՛ր անկ մահապարտին
 կամ պատուհաս՝ չարագործին...»¹:

Շնորհալին իր ժողովրդի «արիւթեան ու յաղթանակի» ոգեկոչման երգիչն էր, ընդդէմ «հեղզութեան եւ անձնատուութեան»: Նա կոչ էր պնդում միանգամայն անզիջում խրոխտութեամբ՝ «ըզհեղզութեան արմատն այրել, զարիտքի՛նն բորբոքել...»²: Մրանումն էր պարփակուած գաղտնիքը Կիլիկեան հայութեան յետագայ յաղթանակների: Այդ նպատակով էլ «հրահանգում» է Շնորհալին հայոց իշխաններին՝ համարել իրենց զօրախմբերը կորիւնածին խիզախներով եւ, որ կարեւորն է՝ պետականութեան ստեղծման համար մարտնչող եռանդուն նուիրեալներով՝ «ըզմտերիմսնքն տէրութեանց, եւ զհետեւողսն քաջութեանց»³:

Կենսահաստատ իր փիլիսոփայութեամբ Շնորհալին դաւանում էր պատգամում է միաժամանակ «Առողջ հոգին առողջ մարմնի մէջ» հռոմէական դաստիարակչական կարգախօսի փոխարէն մի այլ՝ սեփական, շնորհալիական տարբերակը, որով նա ձգտում էր կոփել ու կրթել Կիլիկիայում վիթխարի մաքսումներով նորաստեղծ հայ հասարակութեան երիտասարդ սերնդին.

«Չի թէ մարմինդ ասասցէ վաշ,
 Հոգիդ հիւանդ լինի եւ հաշ (իմա՝ հաշմանդամ, հիւծուած)»⁴:

Եւ կամ՝

«Ինձ դու յաւէա կաց խընդական,
 Մարմնով առողջ եւ հոգեկան»⁵:

Եւ անհա շուտով մահասարսուտ շրջապատման մէջ ընկաւ Ծովքի հայրապետական դղեակը բուրբական ու մահմեդական քոչուոր ցեղերի կողմից: Մմբատ պատմիչը այս առնչութեամբ գրում է. «... Չայս տեսեալ սուրբ հայրապետն հայոց Տէր Գրիգորիս, զի այնքան տկարացաւ գորութիւն քրիստոնէից, եւ ինքեանք ոչ ունէին ամբողջ ասպաստանի, եւ ի Ծովք բերդն իրեանց երկնչէին դադարել»⁶:

Հայոց հայրապետը սկզբում ծրագրել էր կաթողիկոսարանը տեղափոխել բնաշխարհի՝ Բագրատունեաց երբեմնի Անի մայրաքաղաքը, որը Վրաստանի իշխանութեան տակ էր գտնուում այդ ժամանակ: Ուստի ճանապարհ ընկաւ Գրիգորիս Գ.

¹ Նոյնի՝ Ողբ Եղեւիտյ, էջ 104:

² «Բանք չափա», էջ 273:

³ Անդ, էջ 337-338:

⁴ Անդ, էջ 337:

⁵ Անդ, էջ 305:

⁶ Մմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 168:

Հռոմկլային»¹: Եւ որպէսզի յետագայ թիրիմացութիւններից ու մտափոխութիւններից յաւակնութիւններ չ'առաջանան այրի ճոսիւնի ազգականների մօտ, իրաւարանական ձեւակերպումով փաստաբուրք է ստեղծում գործարքի վերաբերեալ, որը եւ ի պահ է դրում Հռոմկլայի արքունիստ կաթողիկոսարանի «արկը»-ներից մէկում՝ ի յիշատակ դարերի... «Իսկ կոմսն ճօսիւնին եւ Տէր Գրիգորիսի եւ Տէր Ներսիսի զգիր ձեռին իւրոյ՝ զի Հռոմկլայն յափտեան մնասցէ արքոն հայրապետացն հայոց. եւ նորա եղին զնոյն զիր յարկեղ սրբոյ արքոնոյն ի յիշատակ ապագայիցն, զի մի՛ որ եկեալ յազգայնոցն ի խնդիր լինիցի այնմ դղեկին. այլ բարձեալ է զամենայն յիշատակ մարմնեղէն նոյն ձեռնագրաւն, եւ հաստատեալ է զհոգեւոր յիշատակն այնմ տեղոյ, որոյ ողորմեսցի Տէր»²:

1149 թուականից էլ սկսում է Ամենայն Հայոց կաթողիկոսութեան գործունէութեան նոր Հռոմկլայական շրջանը, որին ընթերցողը առիք կ'ունենայ ծանօթանալու սոյն «Տարեգրքի» յաջորդ համարում:

«Հռոմկլա» Հայագիտական Տարեգիրք,
 Գ. Տարի, 1984 թ., Հրատարակութիւն
 Ամերիկահայոց Արեւմտեան թեմի
 Ազգային Առաջնորդարանի:

Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ը Գ Ա Ր Ե Ր Ի Մ Ի Ջ Ո Վ ...

Պատմութեան հազարամեակների ճանապարհորդ հայ ժողովրդի ստեղծած քաղաքակրթութեան վաւերական կոթող-յուշարձանն է այսօր Մաշտոցի անուան Մատենադարանը՝ իբրեւ «քարձրադիտակ» մտքի եւ հոգու խոյանքի, որը տիրականօրէն յառնում է քաղաքամայր Երեսնի հիսիս-արեւելեան սարալանջում՝ իր յաւերժախտ հայեացքի տակ պահելով նրա մշտաբարախ կեանքի ողջ զարկերակը: Իմացական զանձերի այս հոյակերտ պալատը Գրի եւ Դպրութեան, Գիտութեան եւ Լոյսի պաշտամունքի բացառիկ դրսեւորումներից է համաշխարհային քաղաքակրթութեան պատմութեան մէջ հիւլէական մեր դարում, որը ինքնարժանութեամբ նշանակութիւն ունի, անտարակոյս, հայ ժողովրդի համար, երբ իր մեծահարուստ մատենագրութիւնն սկսել է ոչ այլ կերպ քան՝ «ՃԱՆԱՉԵԼ ԻՐ ՄԵԾԱՀԱՐԱՍՏ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԻՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՄ ՀԱՆՃԱՐՈՅ» թեւոր խօսքի որդեգրմամբ որպէս իր Գոյամարտի նշանարան եւ կարգախօս...:

¹ Մմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 169:

² Անդ:

Մակայն Մաշտոցի անուան Մատենադարանը ոչ միայն ձեռագրերի Գանձատուն է, նրանց գիտական պահպանման, խնամքի ու բուժման, երկարակեցութեան արդիական լուսագոյն պայմաններում, այլև ձեռագրերի գիտա-հետազոտական Ինստիտուտ է՝ հմուտ եւ վաստակաշատ հայագետների պատկառելի ներկայացուցչութեամբ, որոնք (նկատի ունեն հաստիքային, բայց եւ Հանրապետութեան յատկապէս արտահաստիքային համագոյն ճանաչում ունեցող հայագետներին) դասական բանասիրութեան ասանդների խորացմամբ ու ընդլայնմամբ, նաեւ արդի համաշխարհային ձեռագրագիտութեան, աղբիւրագիտութեան, բնագրագիտութեան ու արխիւագիտութեան նուաճումների հաշուառումով, զարգացում են հայագիտութիւնը համակողմանիօրէն եւ նոր մակարդակով:

Հարկ է նշել, այնուամենայնիւ, որ Մատենադարանը, իր ձեռագրական ներկայ հարստութեամբ, միանգամից՝ մի տարում, տաս տարում, քէկուզեւ մի հարիւրամեակում չհասաւ իր այսօրուայ փառքին:

Արձանագրենք, հնամենի գրասէր հայ ժողովրդի ժրջան գրիչների բեղմնատաւ վաստակի սոսկ աննշան մասն է հանգրուանել, դիմակայելով ժամանակի աւերիչ ձեռքի, հրոյ ճարակների, արեան ու սրի մաշումների, յափշտակումների ու զերեվարումների, Մաշտոցի անուան Մատենադարանում: Բաւական է յիշատակել այն ողբերգական փաստը, որ դեռեւս 1170 թուականին, թուրք սելջուկների ռումձգութիւններից ապահովելու համար Սիւնիքի Բաղարբերդ անմատչելի ամրոցում քաքցրած տասը հազար ձեռագրեր այնուամենայնիւ բռնագրաւում են եւ, ամենայն հաւանականութեամբ, հրոյ ճարակ դարձում ներխուժող այդ քոչւոր յելուզակների կողմից, ընդ որում համարեա ճիշդ այնքան զրչագրեր ոչնչացնելով, որքան առկայ են այժմ Մաշտոցի անուան Մատենադարանում: Այդ մասին Սիւնեաց պատմիչը դառնակակիժ հաղորդում է՝ խորապէս ավստալով ու մինչեւ իսկ մղկտալով «անհամար եւ աննման սրբութիւնների», այդ թում եւ ձեռագրական գանձերի անվերադարձ կորուստը բարբարոսների կողմից. «... զանհամար եւ զաննման սրբութիւնս եւ սպաս եկեղեցւոյն Տաթեւոյ՝ փարթամ եւ հարուստ աթոռոյն,- հաւաստում է Ստեփանոս Օրբելեանը,- խաչ եւ վկայարանք յոսկոյ եւ արծաթոյ, եւ անգին ակամբք եւ անհուն մարգարտով զարդարեալ, եւ կտակարանք յոլովք, որք թով աւելի քան 40.000, զորս ամբարեալ էին անդ: Ամենայն առհասարակ գերի վարեցան եւ ցան եւ ցիր եղեն ընդ երեսս աշխարհի»¹. պատմութեան դառը հեզմանքով՝ արժանանալով հէնց նոյն ճակատագրին, ինչ զրչագիր մատենաների միակ ու գլխատր սեփականատէր հանդիսացող հայ ժողովրդին է եղել դարեր շարունակ...:

Պատահական չէ, որ զրչագիր մատենաները, իբրեւ ոգեղինացած սրբութիւններ, Օրբելեանից բերուած այս քաղաւածքում եւ այլուր՝ ոչ թէ «յափշտակում» են իբրեւ անշունչ առարկաներ, այլ գերեվարու՛մ են ինչպէս մարդիկ, իբրեւ «շնչատր սրբութիւններ», որպիսի բառագործածութեամբ իրօ՛ք ընդգծում է միաժամանակ հայ ժողովրդի զարմանալի գրապաշտութիւնն ու դպրապաշտութիւնը:

Իրականում, զրչագիր մատենանը առաւել նուիրական ու նախամեծար էր բոլոր արժէքներից, մինչեւ իսկ ... հարազատ որդուց. բանն այն է, որ Սիջմադարի հայ դպրութեան ներկայացուցիչների՝ գրիչների պատկերացմամբ ու տրամաբանութեամբ՝ Չեռագիր մատենանը, ոչ աւել ոչ պակաս, մտքի երկունքով ստեղծուած հոգու անկրկնելի զուակ էր համարում, որը մինչեւ անգամ «արխիւակից» զուակից

յաւերժական էր դիտում, քանի որ զրչագիր մատենանը կարող էր դարեր ապրել եւ սերունդներ լուսաւորել իր մէջ ամբարած իմացական ճաճանչներով, մինչդեռ «արեւակից զուակը», օժտուած լինելով ժամանակատր կեանքով՝ այնուամենայնիւ մահկանացու էր ...:

Բայց եւ այնպէս՝ դարձեալ ինչն՞վ բացատրել զրչագիր մատենաների բազմահազարանոց հարստութիւնը՝ աշխարհով մէկ սփռուած. միայն հայ ժողովրդի գրապաշտութեամբ ու դպրապաշտութեամբ՝ հարցի լուսաբանման սոսկ մի կողմն է յայտնապէս: Իրականում, այն հասկանալի է դառնում նաեւ հայ գրիչների բազմահոծ բանակի դաւանած սկզբունքներով ու, մանաւանդ, հայ դպրութեան զարգացման նախանձախնդրութեամբ եւ իրենց անուան յաւերժացման սրբազան ներշնչանքով:

Խնդիրն այն է, որ գրիչների սերունդների համար սրբագործուած մի աւանդոյք է եղել, որը նրանց ստեղծագործական հրայրքի ժայթքումների ներքին զսպանակն է հանդիսացել դարեր շարունակ. արհամարհելով կեանքի տարապայման դժուարութիւններն ու խոչընդոտները՝ նրանք հաւատացել են մատենագրութեան մէջ իրենց յաւերժացնելու բուն իսկ զաղտնիքին, որն իր սրտառույ յուզականութեամբ չափազանց բնութագրական է հայ դպրութեան պատմութեան համար.

«Չեռս փտի ի հող դառնայ,

Գիրըս մընայ հուր յափտեան...»:

Եթէ ամփոփ արտայայտուենք՝ Մաշտոցի անուան Մատենադարանի առկայ ձեռագրական ֆոնդը կազմում են պատմական Հայաստանի եւ Կիլիկիայի, ինչպէս եւ հայ զաղբաշխարհի ձեռագրական բոլոր զրչատների (scriptoriums) հաւաքածուները նաեւ «փրկուածները» այս կամ այն միջոցով, հարիւրամեակների, նոյնիսկ հազարամեակների թափառումներից յետոյ մէկտեղուել են սկզբում Ս. Էջմիածնի մայր տաճարի գրապահեստում, ապա ի վերջոյ յոգնասպառ հանգրուանել Մաշտոցի անուան Մատենադարանի հոյատեսիլ կամարների տակ: Հետեւաբար՝ ուրուագծել Մատենադարանի ձեռագրական ֆոնդի պատմութիւնը՝ նշանակում է այս կամ այն չափով, ըստ հնարաւորութեան, անդրադառնալ, սկսած հայ մատենագրութեան առաջացումից, տարբեր զրչատներում ստեղծուած ձեռագրերի թափառումների ուղեգծին. մի բան, որ ներկայ յօղուածաշարում¹ միայն շատ ընդհանուր ձեւով կարելի է անել՝ որոշ զաղափար տալու դիտումով:

Այսպէս, մեր մատենագիրների վկայութիւններից, ինչպէս եւ սկզբնաղբիւրների ուսումնասիրումից յայտնի է, որ V դարում հայ գրաւոր մշակոյթի հոգեւոր մեծ զարթոնքը կազմակերպում եւ ուղղութիւն էր ստանում Հայաստանի վարչաքաղաքական կենտրոն հանդիսացած քաղաքամայր Վաղարշապատ-Էջմիածնից՝ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարբեի եռանդուն ղեկավարութեամբ: Բնականաբար՝ այստեղ էլ պէտք է բացուած լինէր հայ դպրութեան առաջին Գրչատունը եւ Գրադարանը, որի գրաբարեան վաղնջական բառածէն է՝ Մատենադարան բարդ անունը, կազմուած մատենան - «գիրք», «տետրակ», եւ դարան՝ «գետեղարան», «պահեստ» բաղադրիչներից, նշանակելով մատենաների պահեստարան կամ գրքերի գետեղարան: Մատենագիրների այն փայլուն համաստեղութիւնը, որ գրական-քարգմանական եւ ստեղծագործական վիթխարի շարժում

¹ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, 1910, էջ 335-336:

¹ Նկատի ունենք առաջին տպագրութիւնը «Նասասարդ» ամսագրի յաջորդական չորս համարների տեւս 1986 թուականի 42, 43, 44 եւ 45 թիւերը:

առաջացրեց պատմական Հայաստանում՝ Մեսրոպ Մաշտոցի և Մահակ Պարթևի առաջ և կրտսեր շնորհաշատ աշակերտներն էին, որոնք քարգմանեցին և երկնեցին աստուածաբանական, հայրաբանական, նուիրագործական, ծիսական, վարքագրական, վկայաբանական, մեկնաբանական, գրական՝ բանաստեղծական և արձակ ստեղծագործություններ, պատմագրական, իմաստասիրական և գիտական ինչպես ինքնուրույն՝ հեղինակային, այնպես և մանաւանդ քրիստոնեական աշխարհում ընդունուած հեղինակային հանրաճանաչ աշխատություններ: Մաշտոցեան սերնդի գլխավոր Գրական Շարժման ռահվիրաները յունարեւից և ասորեւից կատարած փոխադրումներով հիմքը դրեցին նաև մայրենի լեզուով դրարութեան կազմակերպման համար նախատեսուած ուսումնա-կրթական համակարգի, իրաբանչիւր գիտակարգի համար համապատասխան դասագիրք և մեկնաբանական գրականութիւն ստեղծելով, որոնք յայտնի են գիտական գրականութեան մէջ որպէս «Եօք Ազատ Արուեստների» («Septem Artes Liberales») ուսուցման դասընթացքներ. դրանք են՝ Զերականութիւն, Ճարտասանութիւն և Տրամաբանութիւն, որոնք Եռեակ դասընթացքներ («Trivium») են կոչուում. Թուաբանութիւն, Աստղաբաշխութիւն, Երկրաչափութիւն և Երաժշտութիւն, որոնք Քառեակ դասընթացքներ («Quadrivium») են յորջորջուում:

Նկատի ունենալով մատենագրական երկերի ստեղծման այս համապարփակ ծրագիրը և հայ մտքի զարմանալի ստեղծագործական բեղմնաբերութիւնը, պէտք է ենթադրել, որ Վաղարշապատի գրչատուն-մատենադարանը ամենահարուստն էր ամբողջ Հայաստանում, և Հայոց մայրաքաղաքը, ամբողջութեամբ վերցրած, հանդիսանում էր այն ժամանակուայ քաղաքակիրք աշխարհի ամենալուսատեղեակ կենտրոններից մէկը: Բանն այն է, որ ոչ միայն հայ ժողովրդի ազգովին գոյատեւման գաղտնիքը՝ գրերի գիտը մտայղացուեց և հանճարեղօրէն իրագործուեց քաղաքամայր Վաղարշապատում, հայ դպրութեան լուսատու փարոսները՝ ուսումնագիտական կենտրոնները առաջին անգամ ճառագեցին արքայանիստ այս քաղաքում, այլև մատենագրութեան ծաղկումն ու բարգաւաճումը, գրչութեան կենտրոնների ամբողջական ցանցով, դարձեալ լայն թափ ստացաւ ոչ այլուր քան Վաղարշապատ-Էջմիածնում:

Սակայն քաղաքական յետագայ գահավէժ իրադարձութիւնները, բնականաբար, խամրեցնում են Վաղարշապատ-Էջմիածնի արքայական նախկին շքեղութիւնն ու հմայքը: Այդ մասամբ երեւում է թէկուզեւ դարավերջում հայ դասական մատենագրութեան ականաւոր ներկայացուցիչ Ղազար Փարպեցու մի վկայութիւնից, երբ իր ղեմ յարուցուած հալածանքների առնչութեամբ դառնացած գրում է Հայոց սպարապետ Վահան Մամիկոնեանին յղած նշանաւոր «Թուրք»ում հակառակորդների մտաւոր ողբալի անկման մասին. «Ձի անգամ և գիտում գրեանդ ոչ ետուն զկնի իմ, որք կան այդը ընկեցեալ ի կերակուր ցեցոյ, բայց արդեօք կարդացեալ լուսաւորիցի՞ն ի դոցանէ բնակեալքդ ի տեղւոջդ և կամ զայս լուսաւորիցե՞ն»¹: Այստեղ բնականաբար առկայ են անձնական վիրաւորանքն ու մեղադրական նկրտումը՝ ծաւալուած սուր պայքարի ու կրքերի բոբբոքման անդրադարձումով, բայց և միաժամանակ տխուր իրողութեան հաւաստումով: Իհարկէ այս վկայութեան մէջ մասնաւոր մի փաստ է արձանագրուած, այն էլ միայն «հոռոմ»՝ յունարէն գրչագրերի մասին, որ Էջմիածնի վանականները այլևս ընթերցել և հասկանալ կարող չէին: Իսկ հայերէն գրչագրերի մասին, որ

բնականաբար շատ աւելի ստուարաթիւ պէտք է լինէին Էջմիածնի գրապահոցում, Ղազար Փարպեցին, տարաբախտաբար, լռում է:

Պատմական յարածից ժամանակաշրջանում, շուրջ մի ամբողջ հազարամեակ՝ 441 թուականից մինչև 1441 թուականը, Հայաստանում ստեղծուած քաղաքական և պատմական յարափոփոխ ծանր իրադրութիւնների հետևանքով, երբ օտարերկրեայ ներխուժումներն ու ասպատակումները անվերջանալի էին միմեանց յաջորդող իրենց ալիքներով և, մանաւանդ, արհաւիրքներով, Հայոց հայրապետական արքող հարկադրաբար միառժամանակ տեղափոխուում է Դուին, Անի, Հոռուկայ, Սիս և ի վերջոյ դարձեալ Էջմիածին: Այս ընթացքում Էջմիածնի Մատենադարանը բնականաբար կորցնում է իր նախկին հմայքը: Բազմիցս ենթարկուում է կողոպտաի և յափշտակումների, քանի որ թշնամիներն անգամ հասկացել էին «գրչագրերի» սրբութիւն և գանձ լինելը հայերի համար, որոնց և վերավաճառում էին յետագայում առասպելական գներով...: Յայտնի են ձեռագրական բազմաթիւ վկայութիւններ, երբ ազնուագոյն հայորդիներ, ուխտած լինելով ամէն գնով փրկել թշնամու կողմից գերի վերցուած այս կամ այն գրչագիր մատենանը, հազարաւոր մղոններ էին կտրում, այն ժամանակուայ ողորմելի փոխադրական պայմաններում, ամիսներով ճանապարհորդութիւններ էին ցրտին ու սառնամանիքին կամ տօթակէզ արեւի տակ կատարում՝ հսկայական տարածութիւնների ու երկրների միջով, մատնուելով հազար ու մի գրկանքների ու տառապանքների, յափշտակչիցներից «ազատագրում» էին գերեվարութեան մէջ գտնուող գրչագիր մատենանը, որը հայի համար Հաւա՛տք էր, Լո՛ւյս և Գիտութիւն, բայց և մանաւանդ Ազգային Արժանապատուութիւն, Պատիւ և Հպարտութիւն, մի խօսքով՝ իր էութեան անբաժան մասնիկը...: Այդ իսկ պատճառով գրչագիր մատենաների վրայ յաճախ տեսնում ենք արեան հետքեր, հրկիզման ու թրատման վնասուածքներ...: Գրչագրերի վերջում կամ բացառութեամբ գրառուած Յիշատակարաններն ու Յիշատակագրութիւնները բազմաթիւ սրտատուչ ու միաժամանակ փշաքաղող դրուագներ են հազորդում այդ կարգի գերմարդկային զոհաբերութիւնների ու տարապայման փրկագնումների մասին, երբ դրանց ձեռքբերումների համար ոչ միայն նիւթապէս վարձահատոյց են լինում, այլև, որ կարելուք է, գերազանցապէս ֆիզիքական տանջանքով փոխհատուցում այդ ամէնը...:

Լռութիւն են պահպանում Էջմիածնի գրչատան գործունէութեան մասին ձեռագրական Յիշատակարանները, տարաբախտաբար, ընդհուպ XI դարը, երբ յանկարծ հաղորդում են, որ ի շարս Արարատեան գաւառի այլ հոգեւոր կենտրոնների, արար ոստիկանը, «տեսեալ զուխտ եկեղեցեացն պայծառացեալ..., խանդացեալ ընդ իրան և մրմռեալ իրրեւ զգազան վայրենի», թալանի է մատնում նաև «զուրբ կաթողիկէն ի Վաղարշապատ քաղաքին»¹:

Հարկ է արձանագրել այն բացարձակ իրողութիւնը, որ իրաբանչիւր ժողովրդի ազգային եկեղեցին պատմութեան ընթացքում իր կատարած դերի տեսակետից ոչ թէ նոյնական էր, այլ՝ յսիստ տարբեր: Հէնց այս առումով հայոց ազգային եկեղեցին պատմական շատ կարելուք դեր է կատարել մեր ժողովրդի ազգային կենսքում՝ ամենադրական իմաստով, կախում և պատմութեան քառուղիներում հայ ժողովրդի ունեցած տարապայման ճակատագրից: Հէնց այն հանգամանքը, որ հայ եկեղեցին իրաւականօրէն՝ ստատուսով (անգլ. status) գրաւելով առանձնայատուկ տեղ՝ ենթակայ չէր քրիստոնեական եկեղեցիներից և ո՛չ մէկին, ընդ որում իր այդ

¹ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904, էջ 196:

¹ Գար. Յովսէփեան, Յիշատակարանք Չեռագրաց, Անթիլիաս, 1951, հ. Ա, էջ 15:

անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը պահպանել է գերագոյն ճիգերով պատմութեան բոլոր բախիղներում, այդ իսկ պատճառով չափազանց մեծ է եղել նրա պատմական դերի տեսակարար կշիռը մեր ժողովրդի կեանքում: Պատմական յարաձիգ ժամանակաշրջանում որոշ իմաստով հայ եկեղեցու անկախութիւնը համեմատական էր նաեւ մեր երկրի անկախութեանը: Դրանով կարելի է բացատրել պարսիկների՝ մագդեղական կրօնի միջոցով առաջին հերթին հայ եկեղեցին իսպառ ոչնչացնելու համար բազմիցս ձեռնարկած արշաւանքներն ու ասպատակութիւնները Հայաստանի վրայ, կամ բիզանդացիների ու պապականութեան յամառ պայքարը հայ եկեղեցու անկախութեան եւ ինքնուրոյնութեան դէմ: Դրան աւելացնենք նաեւ այն, որ պետական անկախութեան կորստեան պայմաններում հայ եկեղեցու դերն ու նշանակութիւնը պատմական յարաձիգ ժամանակաշրջանում զգալապէս փոխում էր՝ վերցնելով իր վրայ մասամբ նաեւ պետականութիւն յիշեցնող որոշ լիազօրութիւններ, ապա պատկերը առաւել ամբողջական կը լինի: Բանն այն է, որ նոյնիսկ հարիւրամեակների ընթացքում, երբ հայ ժողովուրդը տնքում էր ասպատակողների սմբակների տակ, հայ եկեղեցին միակ կազմակերպութիւնն էր, իր հոգեւոր նուիրապետութեամբ, որը ազգային շահախի դեր կատարելով հայորդիների մէջ՝ վառ էր պահում ազգային գիտակցութիւնն ու միասնութիւնը, միաժամանակ կոփելով ազգովին գոյատեւելու եւ պատմական ճակատագրի արհաւիրքներին դիմագրաւելու ու մաքառելու հայութեան կամքը: Եւ նա իր այդ պատմական դերը կատարում էր ոչ միայն դաւանանքի քարոզչութեամբ, այլեւ, մանաւանդ, դպրութեան, մշակոյթի եւ մատենագրութեան զարգացմամբ:

Հարկ է ընդգծել նաեւ, որ ամբողջ Միջնադարում դպրութեան եւ գիտութեան ներկայացուցիչները հանդիսացել են հայոց Վարդապետները, որոնք մեղուաջանօրէն հարստացնում ու զարգացնում էին հայ մշակոյթը գիտական ու գեղարուեստական համարեա բոլոր այն ուղղութիւններով ու ընդգրկումներով, որ մարդկային քաղաքակրթութիւնը ստեղծել է ինչպէս անտիկ դարաշրջանում, այնպէս եւ, մանաւանդ, Միջնադարում: Իսկ հայ մշակոյթի երախտաշատ նուիրեալներն էին Չեռագրեր արտագրող մեր համեստափայլ գրիչները, որոնք ֆարգարտաշար գեղագրութեամբ ընդօրինակում եւ բազմացնում էին հայոց Վարդապետների ստեղծագործութիւններն ու թարգմանութիւնները գրչատներում, ուր Չեռագիր գրքի յօրինումը արուեստի ու գեղագիտական մակարդակի էր հասցում: Դրա համար «գրչութեան արուեստ» էր կոչում Չեռագրերի ընդօրինակման եւ բազմացման մասնագիտութիւնը, որը գրիչներից, բացի գրարարագիտութիւն եւ բանասիրական-աղբիւրագիտական հմտութիւն ունենալուց, պահանջում էր գեղագրական-մանրանկարչական ձիրք եւ արուեստ:

Քաղաքական եւ պատմական մեծ իրադարձութիւն էր անշուշտ հայութեան կեանքում, երբ ազգի ճակատագրով մտահոգում առաջաւոր հոգեւորականութեան եւ հասարակական գործիչների պահանջով ու կազմակերպմամբ, շուրջ 76 տարի Կիլիկեան պետական հովանաւորութիւնից զրկուած, թշնամական հալածանքների մատնուած եւ բախտի քմահաճոյքին թողնուած Հայրապետական Սրբոքը փոխադրում է դարձեալ Էջմիածին՝ հայութեան սրտում:

1441 թուականին վերահաստատուելով իր ասանդակն սրբավայրում՝ Էջմիածնում, համեմատաբար առաւել ապահով պայմաններ էին առկայ այստեղ նրա անխափան գործունէութեան համար եւ որին, մանաւանդ, առաւել մեծ կարիքն ունէր բնաշխարհի մեր ժողովուրդը՝ մասնաւորապէս ազգային պետականութեան վերականգնման ներշնչանքների ու իղէպների փայփայման առումով: Այդ հասա-

րակական տրամադրութիւնների խտացում արտայայտութիւնն է արտացոլում անշուշտ Գլաձորի համալսարանի նախկին սաներից եւ XIII դարի ականաւոր պատմիչ Ստեփանոս Օրբելեանի «Ողբում», պատմական այդ իրադարձութիւնից դեռեւս 150 տարի առաջ սրտառու կոչ արձակելով ողջ հայութեանը.

«Ո՞ր էք որդիք իմ սրբածին,
Եկա՛յք առ մայրքս ձեր նախկին:
Որպէս օրէն է գաւակին
Տանել խըմամ ձեր ծընողին»¹:

Այս ազգային բաղձանքի իրականացումից յետոյ նորից առկայծում է Էջմիածնի գիտա-մշակութային կեանքը, բեղմնատուր գործունէութիւն ծաւալում գրչատունը, շքեղօրէն գրչագրում ու բազմացում են ձեռագրերը, ոսկեզարդում մագաղաթները, որդան կարմրի ու երփներանգ գոյների հանճարեղ համադրմամբ հիասքանչ մատենաներ են երկնում, եւ այդ բոլորի հետեւանքով ծաղկում է Մատենադարանը: Ասումսի վաւերական վկայութիւնն է այս եւ յետագայ ժամանակներում գաղափարում ձեռագրերի հանգրուանումը Մաշտոցի անուան Չեռագրական պալատում:

Մակայն հայի բախտից, շուտով վրայ են հասնում թուրքական քոչորական ցեղերի՝ պատմագրութեան մէջ յայտնի կարա-կոյունիների (թարգմանաբար՝ «սեւ ոչխարաւորների») եւ աղ-կոյունիների («սպիտակ ոչխարաւորների») իրարայաջորդ աւերիչ ասպատակութիւնները, նաեւ նրանց ցեղամիջեան ամայացնող կոիւնները, որոնց ընթացքում տրորում ու խանձում է հայրենի երկիրը, արինաքամ արում հայ ժողովուրդը. «Եւ սուրբ Աթոն խարխալեալ եւ խրթնացեալ ի բարեպաշտութեան եւ զոմս խաշանց եղեալ. զի եթէ մայրն բազմորդի եւ Աթոն քրիստոսադիր այսպէս կայր, որպէս ասացաք, ո՞րչափ եւս առաւել ծնեալքն ի սմանէ նսեմացեալ կային նստեալ ի սգի, ըստ այնմ, եթէ լոյսդ խաւար է, խաւարն որչա՛փ եւս»²:

Մակայն, ինչպէս բնորոշ է հայ ժողովրդի նկարագրին առհասարակ՝ աւերումներից յաջորդող իրաքանչիւր դաղար կրկնապատկում եռանդով ստեղծագործական վերանորոգչական գործունէութեան է մղում նրան կեանքի բոլոր ասպարէզներում՝ ինչպէս նիւթական, այնպէս եւ, մանաւանդ, հոգեւոր:

Այսպէս, XVII դարի 30ական թուականներից ձեռք բերուած դաղարի առթիւ մի յիշատակագիր հաստատում է, որ նորից բացում են Էջմիածնի մայր Աթոռի դպրատունը, գրչատունը եւ Մատենադարանը. «... Արդ, ի թուին Հայոց մեծաց Ռ-Չ (1631) եւ Յունուարի ԻԸ (28), ի հայրապետութեան Հայոց մեծաց Սրբ. Էջմիածնայ տեառն տէր Մովսէս ընտրեալ եւ սրբասնեալ կաթողիկոսի եւ երկրորդ լուսաւորչի, այլեւ քաջ պետիկոսի, տիեզերալոյս բարունապետի ... արար դպրատունս եւ գրատունս առ ի վարժումն մանկանց որդոց Միոնի»³: Մի այլ յիշատակագիր 1633 թուականին հաղորդում է Մայր Աթոռում նաեւ գրչութեան արուեստի ուսուցման համար դպրոց վերաբացելու մասին. «Ի հայրապետութեան Սրբ. Էջմիածնայ տէր Մովսէս սրբասնեալ ...: Յաւուրս սորա հաստատեցաք դպրոց յարիեստ գրչութեան,

¹ Ստեփանոս Օրբելեան, Ողբ, Կալկաթա, 1846, էջ 19:

² Տե՛ս Վ. Յակոբեան, Մանր ժամանակագրութիւններ, XIII-XVIII դդ. Երեւան, 1956, էջ 357:

³ Նոյնի՝ «ԺԷ դարի հայերէն ձեռագրերի Յիշատակարաններ», Երեւան, 1978, ի. Բ, էջ 409:

պատճառ ինքն լինելով, ետուր գրել մագաղաթ Աստուածաշունչ մի յուկենկար յանկուածով, եւ տարեալ յԵրուսաղէմ, եղ յիշատակ ի դուռն Սրբոյն Յակոբայ»¹:

Հոգեմտաւոր կեանքի բարգաւաճումը եւ Մատենադարանի ձեռագրական ֆոնդի բազմացումը այս եւ յետագայ ամբողջ հարիւրամեակում հաստատում են Մայր Աթոռում ծնունդ առած գրչագրերի յիշատակարանային վկայութիւնները. ստեղծում են «եւ զգրեանց բազմութիւնս զանազան մատենից առ ի լրումն հոգեւոր եւ մարմնաւոր ախորժակաց», - հաղորդում է ժամանակագիրներից մէկը: Յիշատակագիրների հաւաստումներից ակնյայտ է դառնում նաեւ, որ գիտնական վարդապետների մի ամբողջ սերունդ է պատրաստում մայր տաճարում, որոնք մեծ ջանասիրութեամբ յանձնառու են լինում հայ մատենագրական արժէքաւոր երկերի հաւաքման, ուսումնասիրման, ընդօրինակման ու բազմացման երախտընկալ աշխատանքների: Դաւիթ Բաղիշեցին այս առթիւ իր ժամանակագրութեան մէջ հաւաստում է. «Արհնեալ է Աստուած, որ ... յարոյց մեզ եղջիւր փրկութեան զհամանման նախամարգարէին զՄովսէս Տաթեւացին, որ վերստին նորոգեաց գտորբ Էջմիածինն, որպէս յաուրս Լուսաւորչին վերակացութեամբ աշակերտաց իւրոց ճգնաւորաց եւ անյաղք փիլիսոփայից: Տէր Փիլիպպոս սրբազան վարդապետի, որ յետ սորայ նստաւ կաթողիկոս եւ Յակոբ մաքրամիտ վարդապետի, որ յետ Փիլիպպոսի նստաւ կաթողիկոս, Խաչատուր վարդապետ Սպահանցի, միւս Խաչատուր վարդապետ Գողթան գաւառէ, Եսայի Երզնջակոյ, Ջաքարիա վարդապետ Վաղարշապատու, Սիմոն վարդապետ, սորայ ամենեքեան զլիսաւորք եւ անյաղք փիլիսոփայք եւ սիւնք եկեղեցոյ աշակերտք Մովսէսի, որք աշխատեցան ի շինումն սուրբ Էջմիածնին: Եւ ի սոցանէ եղեն բազում հոյք վարդապետաց եւ լցաւ ամենայն երկիր գիտութեամբ տեսնոն»²:

Մանաւանդ Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրօք, XVII դարի 60-80ական թուականներին, ինչպէս վկայում է ականատեսի հաւաստմամբ մի յիշատակագիր, «ի ձեռն սորին յաւելում եւ սպասք յոլովք եւ անօքք բազմութիւնք մեծի տաճարիս, ընդ որս եւ մատենից գումարութիւնք ի մի ոչ սակաւք եւ նոցին խոկացողք եւ ի նոյնս պարապօղք յոգնակաճառք»³: Նաեւ գիտունների ու մատենագիրների նորան սերունդը համալրում է թարմ ուժերով: Այսպէս, Ստեփանոս Լեւիացին 1662 թուականին Դիոնիսիոս Արեւուպագացու երկերի իր թարգմանութեան աւարտին թողած Յիշատակարանում հաւաստում է միաժամանակ. «... Զանգի զայսու ժամանակաւ բազումք էին երեւելիք վարդապետք քաջարանք, բանաստեղծք, աստուածային զրոց քաջ գիտունք եւ հմուտք» (ի սուրբ աթոռս Էջմիածնայ - Լ.Խ.), յորոց մի էր Առաքել վարդապետն՝ քաջ ռարունի եւ վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց եւ թագաւորաց զեղեցկայարմար բանիւք դրոշմեաց եւ իւր յիշատակն անջնջելի եթող»⁴:

Յիշատակարանային աղբիւրներում հաւաստում է նաեւ Մայր Աթոռի Չեռագրատան մատենադարանապետի՝ «գրքապանի» պաշտօնի նշանակման մասին դեռեւս 1662 թուականից, որն ինքնին ակնարկում է արդէն Չեռագրական միաւորների հարստութեան մասին. «Այլ եւ զիս տարորշեալս ի սոցունց գգրքապան եւ զծրօղ մատենիս զՆերսէս յիշել մաղթեմ...»⁵:

¹ Անդ, էջ 530

² Նոյնի՝ Մանր ժամանակագրութիւններ, հ. Բ, էջ 357:

³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 981, ք. 502ա:

⁴ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 5171, քք. 368բ-369ա:

⁵ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 110, ք. 467բ:

XVIII դարը մեր ժողովրդի համար յատկանշում է թուրք-պարսկական մղոկնող պատերազմներով, երբ առաւել զիշատիչ ու բարբարոս օսմանեան զօրաբանակները իրենց առաջխաղացումներով դէպի Հայաստան եւ Անդրկովկաս, արիւնոտ լուծ էին հաստատում նուաճած երկրներում: Ազատատենչ հայ ժողովուրդը Դաւիթբէկեան ազատագրական շարժումներով զինուած դիմադրութիւն է ցոյց տալիս ինչպէս պարսիկների, այնպէս եւ նորակոչ, բայց առաւել վտանգաւոր զիշատիչ՝ օսմանեան Թուրքիայի զօրաբանակների դէմ, հերոսական ճակատամարտերի եւ ռազմավարական արուեստի պատմութեան փայլուն էջեր արձանագրելով:

Անձուկ ժամանակներ է ապրում Էջմիածնի մայր Աթոռը՝ յաճախակի աւարառումների ենթարկուելով մերթ պարսիկների, մերթ էլ թուրքերի կողմից. իսկ Էջմիածնի զանձների ու հարստութիւնների մէջ, իհարկէ, վերջին տեղը չէին բռնում ձեռագրերը...:

XIX դարի առաջին քառորդը պարսկա-թուրքական վայրագ բռնակառնութիւնների դէմ Անդրկովկասի ժողովուրդների մղած ազատագրական մեծ պայքարի նոր արշաւոյսի աւետումն է, երբ միաժամանակ ծաւալում են ռուս-պարսկական եւ ռուս-թուրքական պատերազմները անմիջապէս այդ երկրամասերում: Բանն այն է, որ ռուսական կայսրութեան առաջխաղացումը դէպի Անդրկովկաս թէկուզեւ ծաւալաշտական իր նկրտումներով՝ զուգադիպում եւ ընդառաջում էր պարսկա-թուրքական արիւնոտ լծերի տակ հեծող Անդրկովկասի ժողովուրդների, այդ թում եւ հայ ժողովրդի, ազատաբաղձ ձգտումներին: Չեռագրական աղբիւրների վկայութեամբ, անշուշտ ցարական Ռուսաստանի հովանաւորութիւնը իր մեծահարուստ մշակոյթով շատ աւելի նախամեծար էր, մինչեւ իսկ ազգային գերագոյն բաղձանք այդ ժողովուրդների համար տուեալ պատմական ժամանակաշրջանում, քան քաղաքակրթական ցածրագոյն մակարդակում գտնուող պարսկա-թուրքական բարբարոսական բռնակառնութիւնները. եւ այդ ինքնարոյս ու անկասելի ձգողակաւորութիւնը հասկանալի է դառնում շնորհիւ այն բացայայտ իրողութեան, որ Անդրկովկասի ժողովուրդները ռուսական կայսրութեան մականի տակ ոչ միայն ֆիզիքական գոյութեան ապահովութիւն կ'ունենային, այլեւ ազգային մշակոյթի զարգացման հնարաւորութիւն:

Մայր Աթոռի մատենադարանը, ձեռագրական իր հարստութեամբ, ինչպէս եւ սուրբ տաճարն ամբողջութեամբ, մեծապէս տուժում է, բնականաբար, զօրաշարժերի գործողութիւններից. դրան գումարած՝ նաեւ Դաւիթ-Դանիէլեան կաթողիկոսների միմեանց դէմ ծաւալած սուր պայքարը լուրջ հետեւանքներ ունեցաւ Մայր Աթոռի համար. Դաւիթ կաթողիկոսի կարգադրութեամբ եւ պարսիկների դրոյմով, Էջմիածնի հարստութիւնները, այդ թում եւ ձեռագրերը դեռեւս պարսիկների իշխանութեան տակ գտնուող Երեւանի բերդն են փախցնում: Զիչ ժամանակ անց, ընչաքաղցութեան սովոր պարսիկ զինուորները, ինչպէս Ս. Օրմանեանն է իր «Ազգապատում» աշխատութեան մէջ հաղորդում, որ յափշտակուած Մատենադարանի ձեռագրերը Թարիզի շուկայում աճուրդի են հանում՝ այն էլ «բեռներով եւ հազարներով...»:

Յետագայ տասնամեակներին, Եփրեմ կաթողիկոսի ժամանակներում (1909-1930 թթ.), սակայն, դրութիւնը անհամեմատ բարորոյում է. նորից յամառ եւ տենդագին աշխատանքներ են տարում գրչագրերի հաւաքման, ընդօրինակման եւ բազմացման ուղղութեամբ. գրչագրեր, որոնք յայտնի են հայագետներին «Գիրքս

¹ Մաղաթիա Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1914, էջ 337:

սրբոյ Էջմիածնի գրատան է 1813» թուականի կնիքով: Համարակալում եւ բնագրերի այբբենական կարգով գրանցում են գրչագրերը յատուկ ցուցակներում:

Հայ ժողովրդի ճակատագրում բախտորոշ նշանակութիւն ունեցաւ, անտարակոյս, 1828 թուականը, երբ Արեւելեան Հայաստանը, թօթափելով պարսկական եւ բուրքական մղձաւանջային տիրապետութիւնը, ընդգրկուեց ռուսական կայսրութեան ծիրում, այսուհետեւ միանգամընդմիջտ անմատչելի ու գերծ մնալով պարսկա-բուրքական բռնապետութիւնների ոտնձգութիւններից՝ ամէնօրեայ խեղումներից, խոշտանգումներից, ստերածութիւններից, սրածումներից, պատուազրկումներից ու յափշտակումներից:

Կեանքի ապահովութիւնը եւ անդորրութիւնը վարչա-քաղաքական նոր իրադրութեան պայմաններում իսկոյն իրենց զգալ տուեցին նաեւ մայր Աթոռի բարգաւաճման, այդ թում եւ նրա մատենադարանի ձեռագրական գանձերը հարստացնելու խնդրում:

«Անդադրում նուաճումների եւ սրածութիւնների շնորհիւ,- ասում է Յովհաննէս կարողիկոս Կարբեցու կոնդակներից մէկում,- հայ ազգն ու նրա գրականութիւնն այն չափով սպառուած եւ ոչնչացուած են եղել, որ հազարաւոր գրքերից հազիւ մի հազար հատ ժառանգութիւն է մնացել մեզ մեր նախնիքներից: ... Այն օրերից, երբ իմ հայրենիքը հանգստացել է ռուսաց կայսրների բարերար գայխոնի տակ, հայերը ձեռնարկել են հաւաքելու իրենց գրականութեան յիշատակարանները»¹:

Ներսէս Աշտարակեցու յանձնարարութեամբ մատենադարանապետ է նշանակում միաբաններից Մանուէլ Գիւմիշլիսանցին, որը յետագայում գրած «Կարգադրութիւն գրքատանն Էջմիածնի» մատենագիտական երկում այսպէս է նկարագրում Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի վիճակը. «... գտաք յարկեղսն արեղաց չորս հարիւր ութսուն եւ չորս կարետր եւ պիտանի մատեանս, որք անկան ի կարգ այբբենականի»²:

1840 թուականին Էջմիածնի գրապահոցում, ըստ յաջորդ մատենադարանապետ Յովհաննէս եպս. Շահխաթունեանցի կազմած Ձեռագրացանկի, գտնուելիս է եղել արդէն ոչ թէ 484, այլ 2740 գրչագիր, իր աճը բազմապատկելով աւելի քան հինգ անգամ:

Հայագետ-վրացագետ ակադեմիկոս Մ. Բրոսսէն 1840 եւ 1849 թուականներին ռուսերէն լեզուով հրատարակում է մատենագիտական ինչպէս այս, այնպէս եւ յետագայում մասամբ բարելաւուած ու ամբողջացած ցուցակները, գիտական առաւել լայն շրջանակներին թէկուզեւ աղօտ կերպով ծանօթացնելով հայկական ձեռագրական աղբիւրները:

Անշուշտ Ձեռագրերի երկարակեցութեան ու բարոյք ճակատագրերի համար չափազանց մեծ կարեւորութիւն ունէր նրանց պահպանման վիճակը. լուսատր, օղասուն եւ խոնաութիւնից գերծ գրապահոցի անհրաժեշտութիւնը, հոգատարութիւնն ու բուժման խնամքը սնկային հիւանդութիւններից, որ բնորոշ է «հիւանդացած» Ձեռագրերին, եւ ցեցերից ձերբազատելու վճռական միջոցների գործադրումը, դարերի ընթացքում ժամանակի աւերիչ ձեռքից գրչագրերը փրկելու եւ կազմագերծ մատեանները նոր կազմերով ապահովելու աշխատանքները, որոնք,

տարաբախտաբար, կամ ամենեւին չէին ծրագրում, կամ էլ, եթէ որոշ բան արում էր, ապա հեռու էր բաւարար լինելուց: Էլ չենք խօսում այն մասին, որ գրչագրերը պէտք է ոչ թէ արկղներում դարսուած մնային իբրեւ անգործածելի իրեր, այլ դուրս բերուած լինէին արկղներից ու գրադարակներում դասատրուած, հայագիտական ուսումնասիրութիւնների ծաւալման համար մատենագիտական սկզբունքներով մշակուէին՝ իրենց բնագրային բովանդակութեան բացայայտումով, որպէսզի հեշտացուէր ուսումնասիրողների համար գրչագիր մատեանների օգտագործումը:

Այսպէս, մինչեւ 1828 թուականը Մանուէլ Գիւմիշլիսանցու՝ իբրեւ Էջմիածնի գրապահոցի աւանդապահ նշանակումը, ողբալի դրութեան են մատնուած եղել գրչագիր մատեանները, որոնց մասին ականատեսի հաւաստմամբ հաղորդել է նախկին Էջմիածնական Մտեր Մտերեանը. «Ի վերայ սեղանատան է գրատունն, յորում դնի բազմութիւն տպագիր եւ գրչագիր մատենից՝ նորոց եւ հնոց: Այս գրատուն գորկ գոյով ի յատուկ պաշտպանող է միանգամայն անկեալ ի ձեռս տգիտաց՝ կայր անխնամ. մինչեւ բազմած յընտիւր մատենից ի կորուստ վարիլ եւ կիսոցն փտիլ...»:

Թէեւ Մանուէլ Գիւմիշլիսանցին, իբրեւ մատենագետ, ջանադիր փութկոտութեամբ որոշ «կարգ ու վայելչութիւն» հաղորդել է Էջմիածնի գրապահոցին ընդհանուր առմամբ, սակայն եւ այնպէս, մի տասնամեակ յետոյ էլ, երբ Ռուսաստանի կայսր Նիկոլայ Առաջինը այցելել է Էջմիածին, Հայոց նուիրապետութիւնը անյարմար է զգացել նրան ցոյց տալու հնադարեան գրչագրերը՝ դեռեւս սնդուկներում «թոզի մէջ շաղախուած» լինելու պատճառով³:

1827 թուականին որոշում է կայացում մասամբ ընդարձակելու Էջմիածնի մատենադարանը՝ երկու գմբէթաբաժիններ եւս յատկացնելով նրան: Այդ մասին վկայում է Յովհ. Շահխաթունեանը. «... Այլ գոյով տեղին տակաին փոքր (գրատանն Էջմիածնայ - Լ.Խ.)՝ գրեա թէ ի վերայ միմեանց կուտակեալ կային մատեանքն. վասն որոյ յանցեալ 1837 ամի գերկու գմբէթաբաժին եւս ի համարարանոցն՝ որ կից յարեւելից նորս, բաժանեալ միացուցին ընդ այս գրանոց, եւ եղել ընդարձակեցաւ տեղի մատենիցն, ուստի եւ մատեանքն նոր ի նորոյ կարգադրեցան ըստ նիւթոյն՝ ի մետասան բաժինս...»:

Արդարացի է վաստակաշատ գիտնական Քերովթե Պատկանեանի դիտողութիւնն այն մասին, որ Հայաստանի գրատունները կամ մատենադարանները, իրենց բնոյթով, մինչեւ XIX դարի 80ական թուականները առաւել նման են եղել «գրաշտեմարանների» կամ գրապահոցների, քան գիտականօրէն կարգադրուած գրադարանների. «... իսկապէս Էջմիածնում, ինչպէս եւ ամբողջ Հայաստանում,- գրում է հայագետը,- արդէն վաղուց գրատուն ասում բանը չկար, այլ կար մի տեսակ շտեմարան, ուր ձեռագիրներն ու գրքերը միմեանց վրայ դիպում էին խառնիխտոն կերպով, զոն գնալով խոնաութեան, մկներին եւ մնաւաւոր կործանող պահարանների: Եւ հազիւ թէ երկար դարերի ընթացքում մէկը իմացած լինէր թէ իսկապէս ի՛նչ է պարունակում այդ Մատենադարանի մէջ»²:

Այնուամենայնիւ, հարկ է արձանագրել, որ Էջմիածնի մատենադարանի վերոյիշեալ գրացանկերը առաջին քայլերն էին մատենագիտական լուրջ Ձեռագրա-

¹ Տե՛ս Ե. Շահազիզ, Դիւան Խաչատուր Աբովեանի, Երեւան, 1960, էջ 45-46:

² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2864, ք. 70բ:

³ Երիցեան Ա., Ամենայն հայոց կարողիկոսութիւնը եւ Կովկասի հայր XIX դարում, մասն Բ, 1895, էջ 441:

² Ք. Պատկանեան, Համառոտ տեսութիւն հայ պատմական գրականութեան, «Փորձ», 1880, Թ. 1, էջ 20:

ցուցակներ կազմելու ճանապարհին, ուստի եւ բնականաբար, չէին բացայայտում գրչագրերի բովանդակութեան նկարագրութիւնը բնագրագիտօրէն՝ համաձայն յետագայում հայագիտութեան մէջ մշակուած մատանագիտական սկզբունքների:

Բայց եւ ակադեմիկոս Մ. Բրոսսէի հրատարակութիւնները կարելի էր են կատարում՝ հրախրելով ռուսական կայսերական արքունիքի ուշադրութիւնը Մայր Աթոռի մատենադարանի ձեռագրական զանձների նկատմամբ, եւ առաջինը կայսերական արքունիքն է զնահատում ու մատնանշում դրանց կարելութիւնը ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ «Արեւելեան միւս ազգերի գրականութեան եւ պատմութեան համար», միաժամանակ պահանջ առաջացնելով առաւել ամբողջական մասնագիտական ցուցակ կազմելու, որում բացայայտուէին Էջմիածնի հայկական ձեռագրերում նաեւ այլ ժողովուրդների մասին հաղորդուած պատմական տեղեկութիւնները: Այսպէս, 1860 թուականին Ալէքսանդր Բ. կայսեր անունից Կովկասի փոխարքայի գործերի կառավարիչը հետեւեալ պաշտօնական գրութիւնն է յղում Մատթէոս Ա. կաթողիկոսին. «Թագաւոր կայսեր Էջմիածին կատարած Բարձրագոյն այցելութեան միջոցին Նորին Մեծութիւնը բարեհաճել է ուշ դարձնել նոյն վանքում պահուող գրքերի եւ ձեռագիրների ժողովածուի վերայ, որոնք կարգի բերուած չլինելով եւ սխառեմատիկ ցուցակներ չունենալով մնում են անյայտութեան մէջ եւ ուսումնական աշխարհի համար անօգուտ. մինչդեռ կարելի է նրանցում կան զանձեր ոչ միայն Հայկական, այլեւ Արեւելեան միւս ազգերի գրականութեան եւ պատմութեան համար: Այս ի յայտ ածելու համար Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճել է հրամայել, որ յանձնուի մասնագէտ ուսումնականներից մէկն ու մէկին որոշելու Էջմիածնի վանքի գրքերն եւ ձեռագիրները լեզուների ուսումնական առարկաների համեմատ, կազմելու նրանց սխառեմատիկ ցուցակները, նշանակելով նորանցում հնութիւնով եւ բովանդակութիւնով նշանատրագոյն օրինակներն. եւ այդպիսի ցուցակներն ուղարկել ժողովրդական կրթութեան նախարարութեան»¹:

1860-1861 թուականների ընթացքում պատրաստում է նոր ձեռագրացուցակ մատենադարանապետ Դանիէլ Շահնագարեանի եւ Անդրէաս վարդապետի մասնակցութեամբ. այն սեփական ծախքով հրատարակում է Թիֆլիսում Յակոբ Կարենեանցը եւ նրա անունով էլ ճանաչուած է հայագիտութեան մէջ այդ ձեռագրացուցակը, որում առաւել յաջող նկարագրուած են Էջմիածնի մատենադարանի ձեռագրերը, քան նախորդ գրացանկերում: Նրանում ներկայացուած են, փաստօրէն, 2334 գրչագիր մատենաներ, որոնք համարեա լիովին այժմ գտնուում են Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում (2333 գրչագիր, մի միաւորով պակաս):

Մատենադարանի զարգացման նոր փուլ է նշանաւորում Գէորգ Դ. կաթողիկոսի գահակալութեան ժամանակաշրջանը՝ 1866-1882 թթ., երբ լուսամիտ այս Հայրապետը ոչ միայն ծրագրում է քարաշէն յատուկ կառոյց բարձրացնել վեհարանին կից՝ ձեռագրերի հրկիզումից զերծ, արեւոտ եւ օդասուն մի պատսպարան, այլեւ հայրապետական կոնդակներով պարտաւորեցնում է բոլոր թեմերին, գաւառներին, «առանց զանցառութեան», Սբ. Էջմիածին ուղարկելու իրենց մօտ եղած ձեռագիր մատենաները, համարելով դրանք ազգային զանձեր, հետեւաբար եւ համազգային սեփականութիւն: Բացի դրանից, հայ դըպրութեան եւ ձեռագրական մշակոյթի այս երախտաւոր Հայրապետը վերահաստատում է նաեւ եկեղեցական ասանդոյթն այն մասին, որ կուսակրօն հոգեւորականի ունեցումաձքը մահուանից

յետոյ ինքնաբերաբար սեփականութիւն է համարում իր ծառայած հոգեւոր կենտրոնի: Օրինակ ծառայելու համար բոլորին, Գէորգ Դ. կաթողիկոսը դեռեւս իր կենդանութեան օրօք տպագիր եւ մանաւանդ ձեռագիր մեծարժէք սեփական բոլոր մատենաները ընծայում է Մատենադարանին:

Այսպիսով, արդէն 1881 թուականին Էջմիածնի Մատենադարանը հարստանում է եւս 331 գրչագրերով: Ձեռագրերի այս նոր ժողովածուն, յետագայում ընդգրկելով իր մէջ նաեւ ձեռագրական նորանոր միաւորներ նուիրատուութիւնների կամ ժառանգորդման միջոցներով, յայտնի է դառնում Հայրապետի անուամբ՝ «Գէորգեան ժողովածու»¹: Միայն յաջորդ տասնամեակում այս Հաւաքածուի ձեռագրական միաւորները հասնում են 782ի, իսկ Էջմիածնի գրչագրերի ընդհանուր քանակը՝ 3165ի²: Ուշագրաւ է եւ այն փաստը, որ Սիմոնի 1887ի հրամանագրով՝ կարականապէս արգելում է ձեռագրերի վաճառքը կամ աճուրդը, դատապարտելով նման արարքը որպէս ծանրագոյն յանցանք՝ իբրեւ ազգային զանձների օտարացում կամ յափշտակում:

Այնուամենայնիւ շարունակում է անհանգստացնել Էջմիածնի Մատենադարանի համար յատուկ շէնք կառուցելու հրատապութիւնը: Հայագիտութեան եւ վրացագիտութեան երախտաւորներից Նիկողայոս Մառը դեռեւս 1893 թուականի մայիսի 8ին իմաստուն մարգարէութեամբ գրել է իր նամակներից մէկում Գալուստ Տէր-Սկրտչեանին՝ Մատենադարանի համար համեստ մի շինութիւն կառուցելու նպատակով հանգանակութիւն կազմակերպելու անհրաժեշտութեան մասին. «Աւաղ, որ ես տկար եմ եւ անընդունակ գոնեա հիմա փոքր լումայով ամենասիրելի մատենադարանին յօգնութիւն հասնել. մի քանի հարիւրեակ բաւական է բոլորովին չար Ա(հ)րիմանի ձեռքից փրկելու այն թանգարանը, որի իսկական արժէքը գնահատել միայն ապագային է թողեալ»³:

Անդրադառնալով Գրապահոցի վատթար պայմաններին, մեծանուն գիտնականը տազնապահար ահագանգում է. «... Ի մասնաւորի Էջմիածնայ Մատենադարանի վերաբերմամբ պիտի ասեմ, որ նրա ներքին կողմը չէ հաւասարապէս լուսաւորուած. եւ համոզուած եմ, որ չլուսաւորուած կողմը պահուող ձեռագիրներն ամենամեծ վնասն են կրում, մանաւանդ պատի մէջ յարմարուած խոնար պահեստների մէջ: Վերջիններից հարկաւոր է ձեռագիրներն տեղափոխել առանձին պատրաստուած պահարանները. իսկ երբ ակնարկուած պատերը պարսպ կը մնան (Հագարապատին կողմը)՝ պատերին մէջ լուսամուտները պատրաստել, որ վնասակար խարամանի սերունդ ճճի, ցեցեր եւ այլն՝ անհետացած եւ ջնջուած լինեն ի սպառ, զօրութեամբ բարի արամագղական լուսոյ եւ արեգակին»⁴:

Սակայն Էջմիածնի Մատենադարանի կառուցումը, նիւթական անձուկ պայմանների պատճառով, հնարաւոր է լինում իրագործել շատ անելի ուշ, այն էլ 14 տարիների ընթացքում՝ 1903-1916 թուականներին, որտեղ եւ պահպանում են գրչագրերը մինչեւ 1939 թուականը:

Էջմիածնի Մատենադարանի ձեռագրական ֆոնդի հարստացման յաջորդ փուլը համարում է 1893-1915 ժամանակաշրջանը, այն է՝ մինչեւ առաջին համաշ-

¹ Ա. Սեղրակեան, Յովհաննէս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Պետերբուրգ, 1896, էջ 124:

¹ Տե՛ս Օ. Եղանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, «Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա, Երեւան, 1965 թ.:

² Անդ:

³ Պետ. Մատենադարան, Արխիւային բաժին, անհատական արխիւների ֆոնդ, 219, վաւ. 16:

⁴ Անդ:

խարհային պատերազմի առաջին տարին, երբ Մատենադարան են մուտք գործում Հայաստանի տարբեր բնակավայրերից ու հոգևոր կենտրոններից, հայագետների եւ հասարակական գործիչների անձնական գրադարաններից շուրջ 1508 գրչագրեր, ընդհանուր քանակը միայն հայերեն ձեռագրերի հասցնելով 4660ի, իսկ արաբատառ ձեռագրերինը՝ 232ի:

Պատերազմի արհաւիրքը իր հնարատր աղետալի հետեւանքներով նաեւ հայ ժողովրդի հոգևոր արժէքների նկատմամբ՝ խորապէս յուզում է Հայոց կաթողիկոսին ու առաջատր մտաւորականութեանը, ուստի եւ խելամիտ որոշում է կայացում՝ ապահով վայրում, պատերազմի անմիջական թատերաբեմի սահմաններից հեռու, ռուսական կայսրութեան մայրաքաղաք Մոսկուա տեղափոխել էջմիածնի Մատենադարանի ձեռագրերը, այլ արժէքների հետ միասին, 140 կնքում փակ արկղերով, Հայոց Սբ. Խաչ եկեղեցում ի պահ դնելու, մինչեւ առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Այստեղ անվտանգ պայմաններում պահպանում են դրանք մինչեւ 1922 թուականը, հոգածութեան յատուկ առարկայ դառնալով Ռ.Ս.Ֆ.Ս.Ռ. Ազգութիւնների գործերի ժողովրդական կոմիսարիատին առընթեր Հայկական գործերի կոմիսարիատի կողմից:

Տրամագծօրէն հակադիր ճակատագրերի արժանացան մեր ժողովրդի երկու հատուածները նաեւ իրենց մշակութային արժէքներով. եթէ պատերազմի արհաւիրքներից ու զանգուածային կոտորածներից այնուամենայնիւ զերծ մնացին Արեւելեան Հայաստանի բնակչութիւնն ու ձեռագրական զանձերը, ապա Արեւմտեան Հայաստանի ամբողջ բնակչութիւնն ու ձեռագրական զանձերը, ճարտարապետական կոթողներով ու հոգևոր կենտրոններով, պատմութեան մէջ առաջին ծրագրուած ցեղասպանութեան, ջարդ ու կոտորածի, առեւանգման ու յափշտակման, խորտակման ու քանդման՝ համատարած աւերման ու ամայացման ենթարկուեցին խելացնոր մոլեգնութեամբ...:

Ընդհանուր կողոպուտից ու թալանից մասամբ փրկում են Վասպուրականի եւ Տարօնի ձեռագրական զանձերը. գերագոյն ճիգերի գործադրմամբ հասցում դրանք էջմիածին՝ շուրջ 284 գրչագիր, իսկ մնացածը առանձին գաղտնարաններում պահում՝ յետագայում, յարմար առիթով, տեղափոխելու մտադրութեամբ: Մակայն ոչ ոք չէր պատկերացնում այն ժամանակ, իհարկէ, ջարդարարների ոճրածին ծրագրերի ամբողջ ահագնութիւնը...:

1915 թուականի Հոկտեմբերին ռուսական բանակը իր առաջխաղացումներով երկրորդ անգամ հասնում է Վան. պատեհ առիթից օգտուելով Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.ն յատուկ գրութեամբ յանձնարարում է Լիւն անապատի վանահայր Հիստեանին, որ գաղտնարաններում պահ դրուած վերոյիշեալ ձեռագրերն ու ազգային թանգարանային արժէքները ապահով հասցնի էջմիածին: Բայց վերջինիս հաղորդած հաշուետուութիւնից հետեւելն է պարզում. Լիւնի «... եկեղեցւոյ եւ ամբողջ սենեկաց դռները խորտակուած, ձեռագիրներու ընտիր մասը վերցուած է. կը մնան ճառընտիր-Յայսմատուրքներ եւ մաս մը անարժէք ձեռագրեր...», որոնք եւ Վանի ճանապարհով բերում են էջմիածին:

Առանձնապէս մեծ է երախտիքը Լիւն անապատի այս վանահօր. անխնոջ որոնումների շնորհիւ եւ սրտացաւ հոգատարութեամբ նա կարողանում է այդ օրե-

րին համատարած աղետից փրկել 1082 ձեռագրեր եւ: Վասպուրականից փրկուածների ընդհանուր քանակը, այսպիսով, կազմում է 1376 գրչագիր¹:

Միջոցներ են ձեռք առնում նաեւ Մշոյ վանքերում դեռեւս մնացած ձեռագրերը փրկելու համար. 1916 թուականին էջմիածնից յանձնաժողով է մեկնում Մոշ յատուկ առաքելութեամբ: Բայց բազմաթիւ վանքեր արդէն իսկ քանդուել էին թուրքական զօրքերի թնդանօթային հուժկու հարուածներից, իսկ ձեռագրերն ու արժէքատր հնութիւնները՝ թալանուած: Մոշից, այնուամենայնիւ, հնարատր է լինում միայն 102 գրչագրեր փրկել եւ հասցնել էջմիածին:

«Այսպիսով,- եզրակացնում է Մաշտոցի անուան Մատենադարանի գրապահոցի բազմամեայ աւանդապահ եւ հմուտ ձեռագրագետ Է. Եզանեանը,- Հայաստանում սովետական իշխանութեան հաստատման նախօրէին արդէն էջմիածնի Մատենադարանի ձեռագրական հաւաքածուներում կային 6419 ձեռագրեր, այդ թում հայերեն՝ 6137, արաբատառ 282»²:

Մատենադարանի պատմութեան մէջ, առաջին համաշխարհային պատերազմի մղձաւանջից յետոյ, պայծառ էջ բացուեց Հայաստանում հասարակական յարաբերութիւնների վերափոխմամբ: Մատենադարանի վերակազմումն ու վերակառուցումը դրուեց բոլորովին նոր հիմքերի վրայ. նրա զարգացումը տեղի ունեցաւ շեշտակի վերընթացութեամբ եւ իր բնոյթի ընդարձակմամբ՝ սոսկական գրապահոցից վերածուելով ձեռագրական գիտա-հետազօտական համագային ու նաեւ համաշխարհային կենտրոնի:

Խորհրդային Հայաստանի կառավարութեան 1920 թուականի Դեկտեմբերի 17ի հրամանագրով Մատենադարանը ճանաչուեց որպէս պետական մշակութային հիմնարկութիւն եւ դրուեց Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի ենթակայութեան տակ: Յաջորդ տարուայ Փետրուարի 5ին կառավարական որոշմամբ ստեղծուած է էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը, որի առնչութեամբ արուած է հետեւեալ կարեւոր յայտարարութիւնը նաեւ Մատենադարանը գիտական հիմքերի վրայ դնելու մասին. «Յանձնարարում է Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին վերակազմել էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների պետականացած ցանցը (Մատենադարան, Թանգարան, տպարան եւ այլն) եւ հիմնել էջմիածնում կուլտուր-պատմական ինստիտուտ, որ նպատակ պիտի ունենայ գիտական հիմքերի վրայ դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրութեան գործը եւ միաժամանակ մասսաների սեփականութիւն դարձնել հնութեանց այն բոլոր յիշատակարանները, որ ունին գիտական-գեղարուեստական նշանակութիւն եւ կարող են աղբիւր դառնալ կուլտուրական նոր արժէքների ստեղծագործութեան»³:

¹ Տե՛ս Օ. Եզանեան, նշուած աշխատ.:

² «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», անդ, էջ 111:

³ Մատենադարանի արխիւ, Մատենադարանի ֆոնդ, քրք. 74. վաւ. 91ա:

Եւ ահա, 1922 թուականի Ապրիլի 5-ին, կառավարական յանձնաժողովի ստուգմամբ ու պատասխանատուութեամբ, Մոսկուայից անկորուստ փոխադրում են բոլոր հայկական ձեռագրերը Հայաստան:

Յոանդուն շարունակում են ձեռագրերի հաւաքման, պահպանման ու վերանորոգման եւ երկարակեցութեան աշխատանքները: Այսպէս, ձեռագրերը համարելով համազգային սեփականութիւն, կառավարական որոշմամբ Լազարեան Դեմարանի 219 գրչագրերը, Գեորգեան 56 գրչագրերը, Չուաքթնոցի վանահայր Խաչիկ Դադեանի 101 ձեռագրերը եւ Հայաստանի, Բաքուի ու Թիֆլիսի եկեղեցիներում պահուող ձեռագրերը, ինչպէս եւ գաղթականների ու առանձին հայագետների մօտ եղած ձեռագրերը յանձնում են Մատենադարանին, որով «1925 թուականի դրութեամբ Մատենադարանի ձեռագրական ֆոնդերը իրենց մէջ ամփոփում էին 6790 միաւոր, որից հայերէն՝ 6528, արաբատա՝ 282»¹:

Մակայն Մատենադարանի, իբրեւ ձեռագրագիտական հիմնարկի, զարգացման հեռանկարների տեսակէտից թելադրական էր, որ այն մեկուսացումից դուրս բերուէր եւ տեղափոխուէր համալսարանի, ակադեմիայի հասարակագիտական հիմնարկների, մշակութային կենտրոնների, Հանրային գրադարանի միջավայրում, ընդ որում հայագետների ու գիտութեան այլ բնագաւառների մասնագետների հոծ բանակի անմիջական յաճախումների համար նպատակայարմար տեղանքում: Ուստի ժամանակաւորապէս, մինչեւ ճարտարապետական իրայատուկ նախագրմամբ նոր շէնքի կառուցումը, Մատենադարանին տրամադրում են Հանրային գրադարանի 2րդ եւ 3րդ յարկաբաժինները:

1939 թուականի Դեկտեմբերի 27-ից մինչեւ 1959 թուականը Մատենադարանը գործում է Ա. Միասնիկեանի անուան Հանրային գրադարանի շէնքում:

Ի յանդիմանումն այս դպրութեան եւ ձեռագրական մշակոյթի, ազգային ճարտարապետութեան ասանդոյթների համադրմամբ, իր ընդարձակ, լուսաւոր, կամարակապ Ցուցասրահով, Հայագիտական եւ Չեռագրագիտական ուսումնասիրութիւնների համար յատկացուած երկու առանձին մեծ Ընթերցասրահներով, գիտաժողովների, միջազգային սիմպոզիումների ու դասախօսութիւնների շքեղ դահլիճով, միջնադարն յիշեցնող վանական խուցերով նորակառոյց վիմակերտ Չեռագրատուն ամբոց-պալատը շահագործման է յանձնում 1959 թուականի սկզբներին: Հայաստանի կառավարութիւնը նոյն թուականի Մարտի 3-ի որոշմամբ Չեռագրատունը հռչակում է որպէս «ՀԻՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՎԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»՝ իր երեք գլխաւոր բաժանմունքներով, արխիւային նիւթերի, տպագիր գրքերի ու մամուլի առանձին բաժիններով, քիմիական բուժման ու լուսանկարչական լաբորատորիաներով եւ կազմատունով, նկուղայի՞ ընդարձակ գրապահոցով, որն ապահովուած է մթնոլորտային ճնշման եւ ջերմութեան կայուն աստիճանաչափով:

Նախատեսուած է եւ արդէն իսկ աշխատանքները սկսուած են, ձեռագրերի երաշխատրուած ապահովման համար հնարաւոր ամէն մի պատերազմական անակնկալից, Մատենադարանի թիկունքի ընդլայնակում՝ ժայռափոր ապաստարան-Գրապահոցի վիթխարածախս կառուցման:

Մատենադարանի գիտական այդ երեք բաժանմունքներն են՝ ա) Չեռագրերի գիտական պահպանութեան, բ) Բնագրերի ուսումնասիրութեան ու հրատարակութեան, եւ գ) Ռուսերէն թարգմանութեան, որոնք հայագիտական չափազանց բեղմնաւոր գործունէութիւն ծաւալելով վերջին տասնամեակների ընթացքում՝ Մատենադարանին, իբրեւ խոշորագոյն հայագիտական կենտրոնի, համաշխարհային հեղինակութիւն եւ ճանաչում են տուել:

Իսկ 1962 թուականին, Հայոց գրերի գիտի ու դպրութեան սկզբնաւորման 1600ամեակի համեմատիւթեանակաւ յորեկնական բացառիկ տօնակատարութեան օրերին, որն իր ընդգրկմամբ ու մասշտաբայնութեամբ աննախադէպ էր Մատենադարանի ամբողջ գոյութեան ընթացքում, Չեռագրական այս հռչակապ պալատը վերակոչուեց Հայոց գրերի հանճարեղ գիտարարի եւ հայ դպրութեան թագմերախտ հիմնադրի պատուին՝ իբրեւ «ՄԵՄՐՈՂ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒՄՆ ՀԻՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՎԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ - ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»:

Վերջին տասնամեակներին առաւել լայն ծաւալ են ստանում ձեռագրական գանձերի որոնման, հաւաքման եւ յանձնման աշխատանքները, ընդ որում հարցատացնելով Մատենադարանը մինչեւ 1940 թուականը եւս 2592 ձեռագրական միաւորներով, ընդհանուր քանակը հասցնելով 9382-ի, որն արդէն պատկառելի քանակ է՝ բնագրային իր մեծահարուստ բովանդակութեամբ. իսկ 1940-1961 թուականներում ձեռագրական միաւորների աճը նշանաւորում է դարձեալ 1101 ձեռագրերով, 1962-1982 թուականներում՝ շուրջ 600 ձեռագրերով, ընդհանուր քանակը անընդհատ բարձրանալով 11 հազարից...:

Մաշտոցի անուան Մատենադարանում գիտական աշխատանքները ծաւալում են ամենատարբեր ուղղութիւններով ու ընդգրկումներով. եթէ առաջներում ձեռագրերը ուսումնասիրում ու հրատարակում էին գերազանցապէս պատմագրական-բանասիրական նշանակութիւն եւ արժէք ունեցող բնագրերի նկատառումով, ապա Մաշտոցի անուան Մատենադարանը իր գոյութեան ընթացքում ըստ էութեան ընդարձակեց ձեռագրագիտական ուսումնասիրութիւնների թեմատիկան՝ ընդգրկելով իր քննութեան ու հրապարակումների ծիրի մէջ նաեւ քերականութիւնը, ճարտասանութիւնը, փիլիսոփայութիւնը, իրաւագիտութիւնը, աստղագիտութիւնը, մաթեմատիկան, երաժշտագիտութիւնը, իրաւաբանութիւնը, սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների պատմութիւնը, բժշկագիտութիւնը, գեղագիտութիւնը, պատմական աշխարհագրութիւնը, դեղագիտութիւնը, քիմիագիտութիւնը, մանրանկարչութիւնը, պատմական աշխարհագրութիւնը, արուեստների ու արհեստների գիտութիւնը, ռազմական ար-ուեստը, հնագրագիտութիւնը, ազգագրութիւնը, կիրառական ար-ուեստները եւ այլն, եւ այլն:

Մատենադարանի պատմութեան մէջ առաջին անգամ լինելով ձեռագրական նիւթը իր ամբողջ ծաւալով բացայայտում է գիտութեան առաջ եւ խորունկ ու լայն ընդգրկմամբ ծառայում հայագիտութեանը իր բոլոր մասնաճիւղերով: Չեռագրական հարուստ եւ անսպառ նիւթի գիտական օգտագործմամբ ու մշակմամբ վերջին տասնամեակներին Հայաստանում ու Միութեան մէջ գրուել եւ հրապարակուել են հարիւրաւոր աշխատութիւններ, դիսերտացիաներ ու մենագրութիւններ՝ գիտութեան իրաքանչիւր բնագաւառում նոր խօսք ասելով ու թարմութիւն բերելով, եւ որ կարեւորն է՝ միաժամանակ պատմական կամուրջ հանդիսանալով գիտական ժամանակակից մտքի եւ խոր անցեալի հոգեմտաւոր ժառանգութեան միջեւ:

¹ Տե՛ս Օ. Եղանեան, անդ, էջ 123:

Մաշտոցի անուան հին Չեռագրերի գիտա-հետազոտական Ինստիտուտը պարբերաբար հրատարակում է նաև իր գիտական տարեգիրքը՝ «Բանբեր Մատենադարանի» խորագրով, որն արտացոլում է գիտութան այդ կաճառում ծառայող հետազոտական աշխատանքները իրենց ընդհանուր կողմերով:

Մեր յօդուածաշարի երրորդ եւ վերջին հատուածում անդրադառնալու ենք հայ ժողովրդի ձեռագրական գանձերի գնահատմանը՝ համաշխարհային ձեռագրական գանձերի գնահատմանը՝ համաշխարհային հասարակական կարծիքի արժեւորմամբ ...:

«Նաւասարդ» ամսագիր, Յունուար,
Փետրուար եւ Մարտ, 1986:

ՉԵՌԱԳՐԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՂՈՒՄՆԵՐԸ ԳՐԻՉՆԵՐԻ ԵՒ ԴՐԱՆՅ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ԻՐԵՆՅ ԱՊՐԱԾ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԻՍՏԱՍԱԻՈՐՄԱՄԲ

Հայ դպրութեան մէջ ստեղծուել ու մշակուել է գրատր մշակոյթի զարգացման սկզբունքների եւ հիմնադրոյթների մի ամբողջական համակարգ, որոնք հանդիսացել են նրա ոգեշնչումների ու ներշնչանքների սրբազան խթանիչներ, որոնց մեկնաբանման համար ահա եւ մասնատրապետ կանգ կ'առնենք սոյն յօդուածում՝ ըստ հնարատրի հանգամանօրէն եւ բնութագրական արժեւորումներով:

Դրանցից ամենաուշագրաններից է «ԿԵՆԱՅ ԳԻՐ» պատկերացումը, որ վերագրում է աստուածային ինչ-որ երեւակայական Յուշամատենի «գոյութեանը», որի էջերում արձանագրուելու է գրչագիր մատենի ստեղծման եւ ընթերցման հետ առնչուած հայ մարդու անունը՝ իր հոգու անդորրութեամբ, մխիթարութեամբ ու երանութեամբ նաեւ յաւերժութեան մէջ՝ արքայութեան ու դրախտի առկայութեան հաւատքով նուիրագործուած: Հետեւաբար՝ «Կենաց գիր»-ում յիշատակուելու համար երաշխատրուած լուսագոյն հատուցումը, ըստ այդ հիասքանչ պատկերացման թելադրումների, - ա) գրչագիր յօրինելն էր ու բազմացնելը իբրեւ ընդօրինակող, մանրանկարիչ կամ կազմարար, բ) Չեռագիր պատուիրելն էր մեկենասի՝ ծախսերն հոգացողի հանգամանքով, գ) Չեռագիր գնելը կամ ազատագրելն էր գերութիւնից, դ) մինչեւ իսկ ընթերցելը, որի դէպքում ընթերցողը պէտք է պարտաւորութիւն զգար եւ յանձնառու լինէր աւարտին, «մաքրափայլ» եւ «լի բերանով», աղօթելու եւ օրհնանքով յիշատակելու շնորհակալ ու բարի գործ կատարած վերոյիշեալ բոլոր երախտատրների անունները, որոնք այս կամ այն կերպ նպաստել են Չեռագրական յուշարձանի երկունքին ու նաեւ պահպանութեանը բոլոր տեսակի փորձանքներից:

Այսպէս, հայկական Չեռագրական աշխարհում Յիշատակարաններից մէկում հանդիսատրապետ ասուած է՝ պարտաւորիչ թախանձանքով. «Ով որ ընթերնու՝

զՅովհաննէս արեղայն յիշեցէք միշտ եւ հանապազ յաղաքս ձեր, եւ Աստուած զձեզ յիշէ իւր արքայութիւնն, զիւր անունն գրէ ի կենաց գիրն, ամէն...»¹:

Աւելին. գրչագրի պատուիրատու-ստացողը աղերսանքով դիմում է միաժամանակ Քրիստոսին, ի նշան բարեգործութեան գնահատանքի, «Կենաց գիր»-ում արձանագրուելու արժանի համարել նաեւ այն հոգեւորականին՝ մինչեւ իսկ նրա ծնողներով միասին, որը սատարել է գրչագրի ձեռքբերմանը. «... Եւ զՅովհաննէս կրօնատրն իւր ծնողաւքն հանդերձ, զհայրն իւր Միոն եւ զմայրն իւր Սիրմայ, որ զգիրքս երեր թերեւ գնով ինձ երես. Քրիստոս Աստուած զիւր անունն եւ զիւր ծնողացն՝ զՄիոնին եւ զՍիրմին, ի Կենաց գիրն գրէ, ամենայն սրբոց բարեխաւտութեամբ...»:

«Ընդ (սոցա) եւ զիս, զՅովհաննէս վարդապետս, որ զգիրքս գնեցի, եւ զիս յիշեցէք»²:

Բնական է՝ իւրաքանչիւր գրագէտ մարդու, հեղինակի, թարգմանիչի թէ սուկական գրիչի հոգում նախանձախնդրութիւն է եղել ամէն անգամ հայ դպրութեան ոսկէֆոնդում իր ներդրումն անելիս՝ անպայման իր անունը յաւերժացնել ... «Կենաց գիր»-ում, այսինքն աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Կենքի Մատենան»-ում, որն առհասարակեան է միաժամանակ իր արժանատրութեան, մեծարման, եւ ինչո՛ւ չէ, նաեւ անմահութեան...: Եւ այս գողարիկ ու սրբագործուած հեռապատկերից, հասկանալիօրէն, մեծապէս շահել է հայ դպրութիւնը, գրչութեան արուեստը, զարկ տալով ու խթանելով հոգեւոր արժեքների ստեղծման բարի նախանձով պայմանատրուած մրցակցութեան ոգուն, որը գերիշխել է Միջնադարի գրչութեան բոլոր կենտրոններում (Scriptorium): Նաեւ սրբազան կիրքի վերածուած ստեղծագործական մղումների բեղմնատրութիւնը գրչութեան արուեստում՝ դժուար է նոյնիսկ գերազնահատել, որը, սակայն, օգնում է հասկանալու զաղտնիքներից մեծագոյնը՝ գրչագրերի յօրինման արդիւնաշատութեան ու նրանց պահպանման նախանձախնդրութեան ... հայերիս մօտ:

Չեռագրական աղբիւրներում փաստեր ունենք նաեւ «Կենաց գրով» ահաբեկելու, պատժելու բոլոր այն չարագործներին, որոնք կը յանդգնեն երբեւէ ջնջել գրչագրերի Յիշատակարաններից անուններ, կը պոկեն կամ կը պատռեն առանձին էջեր կամ հատուածներ, եւ կամ էլ կը գողանան գրչագրեր: Համարելով դա մեծագոյն յանցագործութիւն հայ դպրութեան սրբագործուած արժեքների նկատմամբ՝ սաստում է յիշատակագիրը դարձեալ «Կենաց գրից» նրանց արտաքսելու կամ «ջնջելու» սպառնալիքով. «... Իսկ եթէ որ ի կողմ չարին եղեալ եւ ըստ հակառակող կամաց նորա վարեցի, կամ յիմոց, կամ յաւտարաց, եւ կամ յառաջնորդաց եկեղեցոյս, եւ խտաւզել հանել ջանայ զայս գիրքս ի սուրբ Առաքելոյս՝ կտրեսցի ինքն ի Քրիստոսէ, իսկ որ զգիր յիշատակի ջնջէ յետ ժամանակի՝ ջնջեսցի ինքն ի Կենաց գրոյն, այլ հաստատուն պահողը հրամանացս աւրինեալ եղիցին ի Քրիստոսէ եւ յամենայն սրբոց, ամէն»³: Սի այլ Յիշատակարանում նման յանցապարտութեան համար զգուշացում է, որ գրչագրի գողացման կամ իւրացման դէպքում պատժող դատախազը լինելու է ոչ այլ ոք, քան բուն իսկ Քրիստոս իր երկրորդ զայտնան առթիւ, ընդ որում «Կենաց գրից» ջնջումն էլ վերաբերելու է ոչ միայն գրչագիր գողացողին կամ իւրացողին, այլեւ

¹ Յ. Տաշեան, Մայր ցուցակ, Վիեննա, 1895, էջ 1370:

² Անդ:

³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 3778, ք. 465բ:

նրա ամբողջ գերդաստանին... Այս առնչութեամբ Ստեփան գրիչը ազդարարում է. «Մի՛ որ իշխեսցէ հանել զսուրբ Անտարանս ի սուրբ հրեշտակապետացն, կամ գրաւական դնել, կամ գողանալ, կամ իւր սեպիականել, կամ յինչ եւ իցէ պէտս հանել ի սուրբ եկեղեցոյն, այլ կացցէ, մնացէ համապագ ի վերայ սրբոյ սեղանոյն... եկեղեցոյն: Եւ եթէ որ իշխանութիւն ի կիր արկցէ եւ հանցէ, Քրիստոս լինի նման դատախազ յաւուրն այցելութեան, եւ եյցէ ինքն իւրայնովքն ի Կենաց գրէն»¹: Բայց չարագործին «ներում է» խստագոյն այս պատժաւափը, եթէ նա վերջում զոջալով վերադարձնում է գրչագիրը իր տեղը, որի համար նա մինչեւ անգամ «օրհնանքի» է արժանանում. «Իսկ եթէ որ վասն հեծելի եւ կամ վասն այլ իրիք խռովութեան հանցէ, եւ յորժամ խաղաղի դարձուցէ ի տեղի իւր, արինի յԱստուծոյ...»²: Չայրոյթի ու ցասման, ինչպէս եւ զիջողութեան ու ներման յարափոփոխ այս վերաբերմունքը պայմանաւորուած է նրանով, որ գրչագիրը ո՛չ թէ փողի համար եւ փողով է յօրինուած, այլ՝ ... յանուն ընդօրինակողի «յիշատակի»: Անելի լաւ է խօսքը տանք հէնց իրեն՝ գրչին. «Ո՛վ եղբարք, ոչ թէ վասն մարմնաւոր ինչ լումայի գրեցաք զսուրբ Անտարանս, այլ վասն զմեզ յիշելոյ...»³:

Իբրեւ ընդհանրացում՝ նշենք, որ «անէծք»ը եւս, որպէս «ախարկու» սաստիչ, իր բարերար դերն է կատարել դարերի ընթացքում գրչագրերի պահպանման ու ժառանգորդարար հոգածութեան համար... ինչպէս եւ «օրհնանք»ը գրչագիրը երկիւղածութեամբ ու սրբութեամբ, գուրգուրանքով ու մասսայի խոսակցողներով ընթերցողների ու խնամատարների հասցէին...: Վանքերից կամ գրչութեան կենտրոններից Չեռագրերի օտարումը խստիւ արգելուած էր, ընդ որում գողացողը «նզովում» էր ոչ միայն հէնց Քրիստոսի, այլեւ Սուրբ Գրքի՝ մասնաւորապէս Անտարանի կողմից: Բարարարուենք միայն մի վկայակոչմամբ. «Ո՛վ զայս Անտարանս կամ այլ զիքք գողանա ի Հռոմայրէս, նզոված է ի սուրբ Անտարանէս, ամէն»⁴:

Եւ մարդիկ անկեղծօրէն եւ երկիւղածութեամբ հաւատում էին ինչպէս անէծքին, այնպէս էլ օրհնանքին: Չափազանցութիւն չի լինի եթէ ասենք, որ երկուսի էլ ներգործող ազդեցութիւնը եւ թելադրական ուժը ատելի էր Միջնադարում, քան ... իրաւաբանօրէն ձեւակերպուած Օրէնքը կամ Օրէնսդրութիւնը: Փաստերի առատութիւնից մէջբերենք թէկուզեւ մէկը. Չեռագիրն ստացողի անունից գրիչը իր մասնաւոր յիշատակագրութեան մէջ թախանձագին աղերսում է Աստուծոյ՝ բարի գործ արած էլլաթուն աիկնոջ ու նրա ծնողների համար. «Գանձող անապական եւ պահապան ամենայն եղելոցս, ազատեայ ի հրոյն յաիտեներից զստացող սորա (իմա՝ գրչագրի - Լ.Խ.) զէլլաթունն եւ զծնողս նորա»⁵: Ուշագրաւը նաեւ այն է սոյն վկայութեան մէջ, որ գրչագիր ունենալուն վերագրում է «զերբնական», նաեւ թովչական յատկութիւն, որպէս թէ այն «պահապան» է հանդիսանում սեփականատիրոջ համար բոլոր տեսակի չար փորձանքներից ու պատահարներից («պահապան ամենայն եղելոցս...»):

«Կենաց գիր» գաղափարի արժարձումը, սակայն, կարծէք զուգորդում է Միջնադարում պապական նուիրապետութեան կողմից ընդունուած մեղքերի թողութեան մասին բաց թողնուած հրովարտակներին, գրականութեան մէջ յայտնի «ինդուլգենցիաներին» (Indulgence), որ մեծագումար փողով վաճառում էին հաւատաց-

եալներին՝ արքայութեան մէջ տեղ գրաւելու խոստումով: Կարելի է դիտել, որ շատ անգամ գրիչները կամ պատուիրատու զնորդները նոյնպէս իրենց թողած Յիշատակարաններում ու Յիշատակագրութիւններում աներկմիտ որոշակիութեամբ յայտարարում են, որ Չեռագիր գրքի ընդօրինակումը նրանք ստանձնել են, կամ պատուիրատուները այն գնել են իրենց «մեղացեալ հոգու» փրկութեան համար: Դիցուք՝ «... գոր իմ՝ մեղապարտ եւ ստուանուն քահանայի Տիմաթի, ցանկացաղ եղէ այսմ աստուածախօս մատենի եւ ստացա զսա ինձ զանձ անկողոպտելի եւ փրկանս մեղացեալ հոգոյ իմոյ...»¹: Ինչպէս ակնբախ երեւում է մի այլ գրչագրի Յիշատակարանի հաւաստումներից, հոգու փրկութիւնը սերտօրէն աղերսում է մեր դպրութեան մէջ նաեւ «ինքնադաստիարակութեան» հետ, որոնք երաշխատում են, երբ մէկը իր արդար վաստակով գնում է Չեռագիրը. «Աստանաւոր յանգ ելեալ կատարեցաւ տառս..., ձեռամբ յոգնամեղ եւ թարմատար գրչի Յով(հաննու), ծախսիւք եւ արդեամբք առաքինազարդ Մարուզէի կուսակրան արեղայի, ի փրկութիւն հոգոյ իւրոյ եւ ի դաստիարակութիւն անձին իւրոյ...»²:

Բայց ինչքան իմաստային խոտոր բովանդակութիւն եւ ընդգծուած հակադրութիւն է պարփակուած հայ դպրութեան մէջ նուիրագործուած «Կենաց գիր» Յուշամատենի, որն հետամտում էր գրչագրերի յօրինման ու բազմացման վսեմ խրախուսանքին՝ յանուն ժողովրդի լուսատրութեան, եւ պապական եկեղեցու հոգու փրկագնման համար հրովարտակների լիառատ բաշխման միջեւ, որը տեղափոխ արում էր շահարկման՝ պարզապէս դրամական շորթումների ու գովումների համար միայն...: Ընդ որում բնութագրականն այն է յատկապէս, որ Յիշատակարաններում ու Յիշատակագրութիւններում ընդգծում է միաժամանակ գրչագրերի «անաչառ եւ անկաշառ» բարեխօս լինելը «Քրիստոսի դատաստանին», որով ակնարկում է աներկրայօրէն նաեւ «աչառու եւ կաշառած բարեխօսութիւնների» գոյութեան մասին քրիստոնէական աշխարհում: Համեմատիր. «... Ստացա զսուրբ Անտարանս առաջնորդ ինձ անանց կենացն, եւ բարեխաւս անաչառ եւ անկաշառ դատաստանին Քրիստոսի...»³: Նման մեկնաբանութիւնը, անտարակոյս, պատիւ է բերում հայ դպրութեանը:

«Կենաց գիր»ի մի ուրիշ լրացուցիչ տարբերակն է անշուշտ հայ գրչութեան արուեստում «ԿԵՆԱՅ ԳՊՐՈՒԹԻՒՆ» պատկերացումը, որն իր բնոյթով համարժէք է առաջինին՝ նոյնքան առիւնքնող ու զգլխիչ: Երկու դէպքում էլ յիշարժան են համարում «բարի մարդիկ», ազնիւ վարքագիծ դրսեւորող մահկանացուներ, որոնց առաքինութիւնը ամենեւին չի կորչում անյայտութեան մէջ, այլ նուիրագործում է՝ արձանագրուելով «Կենաց գիր»ում կամ «Կենաց դպրութեան» մէջ: Մարդու բարոյականացման ու ազնուացման ինչպիսի՝ չքնաղ մտայնացում՝ խրախուսելու համար հասարակութեան մէջ միայն բարու, ազնիւի ու առաքինիի յաղթանակը: Բայց ուշագրան այն է միաժամանակ, որ թէ՛ «Կենաց գիր»ում եւ թէ՛ «Կենաց դպրութեան» մէջ զրանցման արժանի են դիտուում մասնաւորապէս գրչութեան արուեստի երախտատրների եւ նրանց ստեղծագործութիւնների՝ Չեռագրերի պահպանման առնչութեամբ միայն յիշատակելի մարդիկ: Դիցուք՝ «... յիշատակ անցնելի առաջի Աստուծոյ Վարդանայ քահանայի եւ ամենայն երախտատրաց ամին գրոց, որոց անուանքն գրեալ կան յաւարտ սորին գրոց, եւ որոց ոչ են գրեալ՝ գրեսցին ի

¹ ԺԴ դարի Յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 169:

² Անց:

³ Անց:

⁴ Յիշատակարանք Չեռագրաց», կազմեց՝ Գար. կար. Յովսէփեան, Անթիլիաս, 1951, էջ 489:

⁵ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2195:

¹ ԺԴ դարի Յիշատակարաններ, էջ 69:

² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 5609, p. 85p:

³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 380, p. 309p:

դպրութիւն կենաց՝ յերկինս...»¹: Եւ կամ՝ մի այլ գրչի վկայութիւն. «... Մասն մի գրեալ էր Յովհաննէս քահանա, տացէ նմա տէր Աստուած վարձս բարիս: Եւ այս աւարտեցաւ ի վայելումն մարքամիտ եւ ընտիր կուսակրան քահանայի Պետրոսի, ի վայելս անձին խրոյ Վասի, եւ յիշատակ նոցին ոգոց եւ զարմից իրեանց, որոց ողորմեացի Քրիստոս Աստուած մաղթանալք բոլոր սրբոց խրոց, գրելով զանուանս նոցա ի դպրութեան կենաց...»²:

Յատկանշական է եւ այն փաստը մեր գրչութեան արուեստում, որ Յիշատակարանների ամբողջական եւ անաղարտ ընդօրինակումը, հիմք ծառայած բնագրերի հետ միասին, խրախուսելու նպատակով «խոստացում է» գրչագիր ընդօրինակողին «Կենաց դպրութեան» մէջ յիշատակուելու պատուին արժանացնել. «... Եւ որք ընդարինակէ՞ր՝ գրեսցիր զսակաւ յիշատակարանս մեր, եւ դուք գրեալ լիջիք ի դպրութիւն կենացն, ամէն»³:

Նկատենք, որ ինչպէս «Կենաց գրից», այնպէս եւ «Կենաց դպրութիւնից» վտարուելու սպառնալիք է տրուում բոլոր նրանց, որոնք կը յանդգնեն գրչագիր գողանալ, իրացնել կամ նրանից բերթեր պոկել, անուններ ջնջել: Դիցուք՝ գրչագիր գնող Մարգարէն, իր ընտանիքի անդամների դրամական միջոցներով ձեռք բերելով Չեռագիրը՝ յանձնում է այն ի պահ Թովմա երէցին, յիշատակագրելով. «... Եւ մի՛ որ իշխեսցէ հանել զսա ի Թովմա երեցուն, ո՛չ մեք, եւ ո՛չ աւտարք: Եւ եթէ որ յանդգնի եւ աւելի պակաս ասէ եւ կամ յիշատակարան կտրէ՝ կապած եւ դատապարտած լինի յԱստուծոյ եւ զինքն Քրիստոս ջնջէ ի դպրութենէ կենաց...»⁴: Եւ կամ՝ մի այլ գրչագրի հաւատամամբ. «... Եթէ որ յանդգնի (գողանալ)ով կամ հատանելով ինչ ի սմանէ, տարաներժի ի կենացն յախտենից եւ ջնջեսցի ի դպրութենէն...»⁵:

Նաեւ «Աստուծոյ որդեգրութիւնից» վտարում է նա՛, ով թշնամութիւնից ու ընչաբաղոյթիւնից մղում կը փորձի վանքից «հեռացնել» գրչագիրը. «... Մի՛ որ իշխեսցէ հեռացուցանել ի սուրբ ուխտէս՝ թշնամութեամբ կամ ազահութեամբ. ապա թէ որ յանդգնեսցի՝ տարագրեսցի եւ ինքն յորդեգրութենէն Աստուծոյ՝ գորութեամբ սրբոց նշանիս»⁶: Աւելի սարսափելի պատիժ կա՞յ, քան այս սպառնալիքը Միջնադարի մարդու համար...: Կարծում ենք՝ ո՛չ:

Բայց եւ մինչեւ իսկ «օրհնում» է նա, ով թէկուզեւ «զաղանալով» ուրիշից նոյն գրչագիրը վերադարձնում է տեղը, կամ էլ այլագրիներից «գերեվարում» այդ Չեռագիրը «ազատագրելով» յանձնում է նոյն վանքին. «Իսկ եթէ,- կարդում ենք շարունակութեան մէջ,- ըստ ժամանակի բերմանց եւ գողանայցի յամենքէ կամ ի ձեռաց աւարտուած գերեսցի, եւ որ զսա դարձուցէ ի տեղի իւր, նորոգեսցէ Աստուած գլխատակ նորա եւ գրեսցէ զանուն նորա ի Կենաց դպրութեան»⁷:

Իսկ գրչագիրը կամ Չեռագիրը մեր դպրութեան մէջ համարուել է, իր իմացախոհական բովանդակութիւնից ելնելով, նաեւ «ԿԵՆԱՅ ՔԱՐՈՉ»՝ այն նկատառումով, որ ընթացիկ կեանքը անցողիկ լինելով՝ ակնթարթային է եւ չունի յաներժութեան կամ յախտենականութեան դրոշմ, որին ձգտում է հայի հոգին անկասելի ներքին մղումով եւ որը մշտապէս փայփայում է իբրեւ գերագոյն մխիթարութիւն...: Մինչդեռ

¹ ԺԴ դարի Յիշատակարաններ, էջ 505:

² Անդ, էջ 53:

³ Անդ, էջ 591:

⁴ Անդ, էջ 43:

⁵ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 7642, ք. 387ա:

⁶ Յիշատակարանը Չեռագրաց, Անթիլիաս, էջ 409:

⁷ Անդ:

նիթական արժեքներին հակադրուող իմացախոհական կեանքի իսկական «Կենաց քարոզ» է, կեանքի ուսմունք՝ ճշմարիտ ապրում, որը հարստացնում ու զոհացնում է մարդուն: Այդ վերաբերում է ոչ միայն աստուածաշնչային եւ աւետարանական երկերին, այլեւ առհասարակ բոլոր գրչագրերին, որոնցում ամփոփուած բնագրերը այս կամ այն չափով ներածուած էին աստուածաբանական դրոյթներով ու կանխադրոյթներով: Այսպէս, չափազանց բնութագրական է այն փաստը, որ երբ Հայոց Օշին քազաւորը կամեցել է Մտեփանոս եպիսկոպոսին ցանկացած արժեքատր յիշարժան նուէր ընծայել արքայական, վերջինս հրաժարուելով «մարմնատր արժեքներից»՝ «եռափափագ սիրով» յօժարել է սոսկ գրչագիր ստանալ իբրեւ ... հոգեպարար կեանքի ըմբռնում...», յիշատակագրելով այդ առթիւ. «... Իսկ բարեպաշտ արքայն Աշին կամեցաւ պարզեւս ընծեռել իմս նսաստութեան, եւ ես զմարմնատր զոյս ինչ ոչ համարեցայ, այլեւ եռափափագ սիրով ըղձացաւ կենաց քարոզիս...»¹:

Մեր դպրութեան երախտատր ներկայացուցիչները՝ հեզահամբոյր գրիչները, որոնք տառապալից գրկանքներով, անձնուրաց զոհաբերումներով ու ճգնումներով կարողացել են նոյնիսկ տարապայման իրավիճակներում հայ ժողովրդի ամբողջ հոգեւոր հարստութիւնը՝ գրատր մշակոյթը սերունդներին փոխանցելով հասցնել մեզ, անընդհատ խոկացել են անցողիկի ու յաներժականի, ժամանակատրի եւ մշտնջենականի մասին, նախապատուութիւնը միշտ տալով, սակայն, վերջինին: Նրանք այն խորին համոզմունքն են ունեցել, որ իրենց մատենագրական Յուշարձանների ընդօրինակումներով ու բազմացումներով ... ծառայում են յաներժութեանը եւ, հետեւաբար, արժանամարտ են անմահութեան դափնեպսակի, հոգու խորքում մշտապէս փայփայելով հենց այդ երազանքը, ձգտումը, կոչումը: Ինչքան էլ անմխիթարական է եղել իրենց վերապրած ժամանակը, դժնդակ ու սահմուկեցուցիչ, փոքրիկայի ու խորշակաբեր, մեր գրիչները քաջ գիտակցել են, որ «դիւրակործան եւ ապականելի է» իրենց «կեցութիւնը», հոգսերը, տուայտանքները, բայց անմահութեան առհաւատչեայ են միայն «անկողոպտելի զանձեր»՝ Չեռագիր գրքեր երկնելը եւ դարերին յանձնելը, որոնք եւ «աննինջ յիշատակ» են հանդիսանում դրանց «հեղինակների»՝ հենց իրենց համար: Եւ որ կարելոյն է՝ գրչագիրը, նրանց պատկերացմամբ, մշտական եւ յաներժական Յուշարձան է («անգրաւ վկայ») ... Աստուծոյ առջեւ: Այս առումով չափազանց պերճախօս է ձեռագրական աղբիւրներում անվերջ հանդիպող Յիշատակագրութիւններից թէկուզեւ հետեւեալը. «... Իսկ ի յայս դառն եւ ի դժնեայ ժամանակիս զարթոյց Աստուած գեղոյս սուրբ երանաշնորհ քահանային Վարդանայ՝ ի մոռացանս լինել բազմակուտակ ալեկոծութեանս, զիտելով զդիւրակործան եւ զապականելի կենցաղս, թէ ընդ զսանելն արագ ունի զեղծումն, կամեցաւ զանձել զանձ անկողոպտելի եւ յիշատակ աննինջ, որ միշտ եւ անգրաւ ունի վկայ ընդ Աստուծոյ...»²: Կամ՝ մի ուրիշը, վաճառելով իր ունեցումները, փողով գնում է «պատուական ջարգարիտ» համար քողնելով «յախտենական յիշատակ»...: Համեմատի՛ր. «... Դարձեալ աղաչեմ (յիշել) ի տէր զբարի եւ զհաւտարիմ, զհեզահոգի եւ զբաղդբարարք սարկաւազն Նիկուլ, որ ցանկացող եղեալ այս աստուածային զանձուս եռափափագ տենչամբ զցայգ եւ զցերեկ, եւ վաճառեաց զինչս իւր եւ զնեաց զայս պատուական մարգարիտ, եւ եթող յիշատակ յախտենական իւր եւ ծնողաց իւրոց, հաւրն Թուխմանուկայ, եւ մայրն իւր՝ Մինային,

¹ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 7651, ք. 269ա:

² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 3778, ք. 464բ:

եղբարց իւրոց՝ Վասակին եւ Մրուանայ, եւ քերցն իւր՝ Մառային եւ Սիւրմային...»¹:
Եւ կամ էլ՝ իմաստասիրութեան ու դպրութեան նկատմամբ ինչպիսի՝ անպարագիծ
պաշտամունք է յայտնուած ստորեւ բերուող մի այլ Յիշատակագրութեան հետեւ-
եալ տողերում. «Ո՛վ եղբայր, թէ զիրս միայն հայիս՝ ունայն գտանիս, ապա թէ ի
զարութիւն բանին հայիս՝ ոչինչ է պատուական, որ արժէ գաա...»²:

Նոյնիսկ «ազատագարն եւ իշխանուի» իրեն համարող Մամախաբուն հայու-
ինն փիլիսոփայո՛ւմ է կեանքի ունայնութեան եւ յանրո՞ւթեան մասին, երբ յաւի-
տենականութիւնը խորհրդանշող հոգեպարար երկը դիտում է Աւետարանն ամ-
փոփող գրչագիրը. «... Որպէս եւ ես, անարժան աղախինս Քրիստոսի Մամախա-
բունս, ազատագարն եւ իշխանուի գողով այսու կենաւք, մտաբերեցի զանցաւոր եւ
զունայն կենցաղս, եւ ստացա զսուրբ Աւետարանս առաջնորդ ինձ անանց կենացն,
եւ բարեխաւս անաչառ եւ անկաշառ դատաստանին Քրիստոսի, եւ յիշատակ հոգւոյ
իմո յետ ելից իմոց, եւ ծնաւորաց իմոց, եւ եղբարց՝ ազատաց եւ ազատագարնաց, եւ
ի լուսաւորութիւն մանկանց նորածնելոց նոր Սիոնի»³:

Նաեւ «զանձի» ու «մարգարիտի» կամ էլ «անգին ակի» արժէք է վերագրուած
եղև Չեռագիր մատենան մեր մատենագրութեան մէջ, ընդ որում՝ «հոգեւոր զանձի
կամ մարգարիտի»: Այսպէս, Գլածորի համալսարանի սաներից Մլխիթար գրիչը
չափածոյ խօսքով յիշատակագրել է.

«Որք ընթերցմամբ հայիր ի սա
Եւ հանդիպիր զանձու տրա:
Տես թէ բանի՝ աշխատեցայ
Ես Մլխիթար գրիչ տրա...»⁴:

Բայց եւ Չեռագիր մատենան այնպիսի «զանձ» է, որը կողոպտել հնարաւոր չէ
այն իմաստով, որ նրա բովանդակութիւնը սեփականութիւն դարձնելուց յետոյ, այն
քո ուղեղից դուրս բերել կամ «յափշտակել» անկարելի է... դրա համար էլ
բնութագրուում է իբրեւ «զանձ անապական» կամ «զանձ անառիկ»: Համեմատիր.
«... Ես՝ յոգնամեղ գրիչս... ստացա զսա զանձ անապական...»⁵: Եւ կամ՝ «... Եւ
աւանդեցի զսա եկեղեցեացոյ Հայաստանի ընծայ անգին եւ զանձ անապական...»⁶:
Նաեւ՝ «... ես՝ անարժանս Ստեփանոս եպիսկոպոս մայրաքաղաքին Սեփաս-
(տ)իոյ, զանառիկ զանձս ... առի...»⁷:

Գլածորեցի մի այլ համալսարանական գրչագիրը բնութագրում է. «Ես ...
Պաղոս անուն վարդապետ, ըստ կարի իմում մեծաւ աշխատութեամբ, վատեալ ի
լուսոյ եւ պակասեալ ի զարութենէ, դողողեալ ձեռաւք գրեցի զսա եւ ընծայեցի իբր
զակն անգին եւ պատուական ի ձեռս պսակին եկեղեցոյ...»⁸:

Չեռագիրը, նման բնութագրումներով հանդերձ, իբրեւ «յիշատակ թողնելու»
մարմաջը այնքան համատարած է եղել եւ զայթակղիչ միաժամանակ, որ մինչեւ
իսկ գրչութեան արուեստում բոլորովին համբակ եւ անփորձ մարդիկ, երբ կեանքում

ոչ մի Չեռագիր ընդօրինակած չլինելով՝ յանդգնում են գրիչ վերցնել եւ արտագրել:
Նրանք անկեղծօրէն խոստովանում են միաժամանակ, որ իրենց արածը, ուժերից
վեր լինելով, այլ կերպ չի կարելի գնահատել քան «տամահութիւն» (թորքերէն բառ՝
անկշտութիւն կամ ազահութիւն). «Արդ, աղաչեմ զամենեսեան, չլինել մեղադիր
խոշորութեան եւ սխալանաց նորա, զի այլ չէր գրել Աւետարան, եւ վասն այնորիկ
գրեցի զսա, զի արիւնակն աղեկ էր եւ ընդիր: Նա ես տամահեցա ու գրեցի վասն
անձին իմոյ եւ զաւակաց իմոց, զոր տէր Աստուած վայելել տացէ բագում ժամա-
նակաւ, ամէն»¹:

Միջնադարում շատ էր տանջում, նոյնիսկ մտալկում վերջին դատաստանի օրը
«արդարանալու» եւ Քրիստոսի «ողորմածութեանը» արժանանալու գերագոյն նկա-
տառումը, որը թելադրում էր անշուշտ աստուածաշնչային հաւատքից: Լենկթե-
մուրեան ամայացումների օրօք նոյնիսկ, երբ «աւերակների մէջ իբրեւ «բու» քա-
փառող գրիչը Չեռագիր է ընդօրինակում ու մանրանկարում, պարզում է, որ նա
դրան ձեռնամուխ է եղել, իր իսկ խոստովանութեամբ, միայն նրա համար, որ
մարդիկ ... «բարեխօսեն» Քրիստոսի առաջ յետմահու եւ նրանից «ողորմութիւն»
կորզեն, առաջին հերթին իր, յետոյ եւ «բարեխօսողների» համար...: Ահա նրա
չափածոյ Յիշատակագրութիւնից մի հատուած.

«Ես մողորեալ մըտօք գերի,
Որ ցընորեալ կամ յաշխարհի,
Վա՛յ եւ եղօ՛ւկ յամենայնի,
Առաքել հողըս Մոկացի,
Դառըն ցաւօք շըրջիմ յերկրի.
Որպէս ըզբու յաւերակի,
Կամ տատանեալ բեկեալ նաի,
(Որ) հանապազ հանգիստ չունի:
Չաւետարանս ծաղկեցի
Մատամբ իմով մեղսամածի,
Ըզձեզ աղաչեմք եղբարք բարի,
Ինձ ասացէք տէր-ողորմի.
Յորժամ կանգնէք ի յատենի,
Յիշման առնէք զիս արժանի,
Չի եւ փըրկիչն ձեզ ողորմի
Յաւուր մեծի դատաստանին»²:

Չեռագիր գրքի արժէքն ու կարեւորութիւնը մի նոր աստիճանի է բարձրաց-
ուած, երբ մինչեւ իսկ նրան յատկացում է նաեւ «բարեխօս»ի դեր... Աստուծոյ
առաջ՝ գրչագրի սեփականատէր հանդիսացողի մեղքերի թողութեան համար...:
Այսպէս, Յիշատակարանային վկայութիւնների ծովում կարդում ենք. «... Որ եւ
տեսեալ զսուրբ Աւետարանս քաջահաւատ երեց Սիմեոն, յոյժ փափագմամբ եւ
սիրով էառ ի յարդար վաստակոց իւր, յիշատակ հոգո իւրոյ եւ յետ աստեացս
ելանելոյ բարեխաւս առ Աստուած»³: Ինչպէս տեսնում ենք, ավետարանական
պատգամներն իսկ վերաիմաստաւորում, յարմարեցում եւ տարածում են
գրչութեան արուեստի զարգացման, Չեռագրերի ընդօրինակման ու բազմացման
նկատմամբ՝ մինչեւ իսկ ամենատարապայման իրադրութիւններում...:

¹ ԺԴ դարի Յիշատակարաններ, էջ 508:

² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 7781, ք. 251ա:

³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 380, քք. 309բ - 310ա:

⁴ ԺԴ դարի Յիշատակարաններ, էջ 103:

⁵ Անդ, էջ 80:

⁶ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2515, ք. 82ա:

⁷ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 7651, 269ա:

⁸ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 9150, ք. 6ա:

¹ ԺԴ դարի Յիշատակարաններ, էջ 509:

² Անդ, էջ 313:

³ Անդ, էջ 33:

Այսուհանդերձ, հարկ է նշել, որ «Յիշատակ» յաներժացնելու տոչորոդ գաղափարի եւ Քրիստոսի ողորմածութեանն ու մեղքերի քաւութեանը արժանանալու մտասեւեռումի հետ միասին սերտօրէն աղերսում է նաեւ սէրը, պաշամունքի հասնող սէրը Չեռագրի, ու դրանով էլ՝ դպրութեան նկատմամբ: Յաղթահարելով ամէն տեսակի անպատեհութիւնները, թերացումներն ու մեղանչումները գրչութեան արուեստում՝ ընդօրինակողները յաճախ յայտարարել են. «... Անմեղադիր լերուք խշորութեան գրոյս, զի սիրո է պտուղ, եւ ո՛չ այլ ինչ իրաց...»¹:

Բայց սուկ «Հոգու յիշատակ» չէ գրչագիրը, որի յարատեւութիւնը խնդրական լինէր, այլ՝ «անջնջելի» յիշատակ է, որի մասին յստակօրէն ասուած է այլ վկայութիւններում. «... եւ եղեալ ի խնդիր այս աստուածային անկողոպտելի տէրունական զանձուցս ...: Վասն որոյ մեծ փափաքանաք ետ գրել զսա Ստեփանոս միայնակեացն, յիշատակ անջինջ հոգոյ իւրոյ եւ ծնաւդացն...»²

Գրչագիրը նաեւ «անջնջելի արձան» եւ «փրկութեան յոյս» է համարում ոչ միայն անձամբ իրենց՝ գրչի կամ պատուիրատու-ստացողի, այլեւ սրանց կենդանի եւ ննջեցեալ բոլոր հարազատների համար: Համեմատի՛ր. «Սրբասէր եւ իմաստուն քահանայ Խաչատուր ... ստացաւ զսա անջնջելի արձան ի մխիթարութիւն անձին իւրոյ եւ յոյս փրկութեան անձին իւր եւ ննջեցելոց իւրոց»³: Ահա թէ ինչպիսի՛ արժէտքումներ են վերագրուած Չեռագիր մատենանին, որոնք բխում են ոչ միայն հաւատից, այլեւ մանաւանդ ազգապահպանման համար նրա ունեցած բացառիկ նշանակութիւնից՝ լեզուի ու դպրութեան ուսուցում եւ հոգեմտաւոր սնունդ ջամբելու շնորհիւ:

Սեր գրչութեան արուեստում նուիրագործուած է նաեւ «ԿԵՆԱՅ ՎՏԱԿ» պատկերումը, որով բնութագրուած է Չեռագիրը ինքնին՝ համարելով այն «կեանք աւանդող», «կեանք բովանդակող», «կենսատու»: Իսկ հակադարձ հասկացութիւնը՝ մեռելութիւնը, մահացումը բնորոշ է դիաւում իմացախոհական կեանքի ժխտմանը, բացասմանը: Դիցուք՝ «Շնորհիւ (եւ) ողորմութեամբ Քրիստոսի... Մխիթար անուն պատուական աստուածասէր, զարդարեալ ամենայն առաքինութեամբ, ստացաւ զկենաց վտակս զայս ի հալալ արդեանց, յիշատակ հոգոյ իւրոյ եւ ի վարժումն որդոց»⁴:

Այդ իսկ պատճառով, իմացախոհական գաղափարների աշխարհը բնութագրելով իբրեւ անմահութեամբ օծուն լուսաւոր կեանք, գրչութեան արուեստում Չեռագիրը ըմբռնուել է նաեւ որպէս «ԼՈՒՄԱՅԵՎՉ» (լոյսով ողողուած, լոյսով յորդուն) եւ «ԿԵՆՍԱԿԻՐ ԿՏԱԿ» (այսինքն՝ «կեանք բովանդակող մատենան»): «Կամարք Աստուծոյ հար կենդանոյ եւ կարողի յամենայնի... ցանկացաւ եղէ այս լուսայեղձ եւ կենսակիր սուրբ կտակիս ...»⁵: Եւ կամ՝ «Յամի վեցհարիւրորդի քսաներորդի եւ հինգերորդի զրեցաւ լուսայեղձ տառս...»⁶:

Բայց եւ միաժամանակ հայ միջնադարում յախտնական յիշատակ թողնելու տենչը մարմնաչի վերածուելով՝ ամենախորունկ եւ ստուգագոյն «գաղտնիքներից»

¹ Անդ, էջ 376:

² Անդ, էջ 370:

³ Անդ, էջ 41:

⁴ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 1166, ք. 33ա:

⁵ Անդ:

⁶ Յիշատակարանք Չեռագրաց, Անբիլիսա, էջ 403:

ամենաքաքուն մղումն ու շարժառիթն է հանդիսացել ձեռագրական Յուշարձանների բեղմնառատ երկունքի:

Առաւել մասնաւորելով ու պարզաբանելով յախտնականութեան ձգտելու փայփայած այս հիասքանչ գաղափարը, որը վեհացնում ու կատարելագործում է մարդուն, հարստացնում նրա ներաշխարհը հոգեմտաւոր կեանքի տոգորումներով ու տրոփումներով, գրիչները յանգել են ասոյթային բիրեղացած ու խտացուած ընդհանրացման, որն իբրեւ գրչութեան արուեստի աւանդոյթ փոխանցել են սերնդից սերունդ.

«Չեռքս փրտի ի հող դառնայ,
Գիրքս մընայ հուր յախտեան...»:

Նման տարողունակ ասոյթային աւանդոյթը գրասպաշտութեան ու դպրապաշտութեան զերագոյն դրսեւորումն է անշուշտ, որով բնութագրուած է առհասարակ հայ մտաւորականի ստեղծագործական ոգին, իբրեւ ներշնչանքի ու մաքառման, նաեւ սիրոյ եւ անվհատութեան անսպառ աղբիւրի: Այդ յաներժութեան գաղափարի մի այլ բանաձեւումն է նաեւ հետեւեալը, որ հասել է մեզ, իբրեւ աւանդ, ձեռագրական աղբիւրների միջոցով.

«Երանի՛ գրիս, որ մնայ կենդանի,
Եւ աւա՛խ ձեռինս, որ հողանա(յ) ի գերեզմանի...»¹:

Այս սեւեռուն գաղափարը, որն ինքնին հմայիչ է իր գեղեցկութեամբ ու վեհութեամբ, մեր գրչութեան արուեստի զարգացման գերհզօր ազդակներից ու խթաններից զերսուզոյնն է եղել, որով բացայայտուել է հայի իմացախոհական շոյալութիւնը գիտութեան ու առհասարակ իմաստասիրութեան ոլորտում:

Կարեւոր է դիտել, որ գրչագիրը բնութագրուած է նաեւ իբրեւ «Մեծափառ կտակ». «... Եւ եղեալ ի մտի զայսպիսի յոյս դիմեցի ամենայն սրտի եւ ի հոչակաւոր ուխտն Յովհաննու վանք, եւ խնդրեցի զգաղափար այսմ մեծափառ կտակիս...»²: Խոստովանենք՝ նման բնութագրմամբ ինչպիսի՛ ակնածանք, հմայք եւ դիւքանք է արտայայտուած Չեռագիր գրքի նկատմամբ՝ զգացականի գերագոյն աստիճանով...:

Բնաւ պատահական չէ բնութագրումների այս համադրութեան մէջ գրչագրի նոյնացումը նաեւ «ԼՈՒՄԱՅԵՎՉ ԽՕՍՔ»ի հետ, որը յաճախուած հանդիպում ենք Յիշատակարաններում ու Յիշատակագրութիւններում: Օրինակ՝ «... Արդ, որ ոք աւգտիք ի լուսաւոր բանիցս, աղաչեմ յիշել զմեզ աղաւթիք սովորականաւք, յաւարտման գրոցս ասել՝ Քրիստոս որդի...»³:

Գրչագիրը բնութագրուել է նաեւ իբրեւ «Գերարփի» (արեւից պայծառ), «Գերալոյս» («լոյսից էլ լուսաւոր»): Համեմատի՛ր. «Ի թուականութեանս մեծ Հայկազեան սովմարիս ի Չեռորդի յիսներորդի երրորդի (1304), զրեցաւ գերարփիս այս, գերա-

¹ ԺԳ. դարի Յիշատակարաններ, էջ 377:

² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 3778, ք. 465ա:

³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 1419, ք. 130ա:

լոյս եւ աստուածախաւ...»¹: Եւ կամ՝ «Գրեցաւ գերարփիս այս ... ի յանապատիս Ուռնկատ կոչեցեալ»²:

Անշուշտ չի կարելի ժխտել այն պարագան, որ գրչագրերը յատկապէս Աւետարան կամ Աստուածաշունչ բնագրեր պարփակելիս, շեշտուածօրէն նոյնացում են Լոյսի, «Կենաց քարոզի» կամ «Կենաց կտակի» գաղափարի հետ, որպիսի բնութագրումներում, անտարակոյս, կարելի է նշանակութիւն է ձեռք բերում բնագրային նիւթը: Այդ բոլորով հանդերձ՝ Կենսքը եւ գրչագիրը, լոյսը եւ Ձեռագիրը համարժեքներ եւ նոյնանիշներ են եղել հայ դպրութեան մէջ, որով առաւել քան ընդգծում է հայ ժողովրդի զարմանալի գրասիրտին ու դպրապաշտութիւնը: Գրանուն համոզուելու համար բառակամ է թէկուզել աչքի առաջ ունենալ «Կենսք» բառի հետ կազմուած կայուն զուգորդութիւնները մեր գրչութեան արուեստում («Կենաց գիր», «Կենաց դպրութիւն», «Կենաց կտակ» եւ այլն), որոնց զուգահեռները հազիւ թէ հնարատր է գտնել մատենագրութիւն ունեցող հնագոյն այլ ժողովուրդների մօտ...:

Աստուածում համոզուելու համար ձեռագրական բազմաթիւ հաւաստումներից բերենք թէկուզել մէկ փաստ. Մատթէոս վարդապետի հեղինակած «Յաղագս Մարդոյն լինելութեան» բնագիրը, որը տարբեր է անշուշտ Աստուածաշնչերից եւ Աւետարաններից, ունի Յիշատակարան հէնց հեղինակի կողմից, որում իր երկը հակադրում է «խաւարամտութեանը» եւ նոյնացնում «լուսաւորութեանը»: Այնտեղ կարդում ենք. «... Ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն հարն հարա(ւա)յին Թամուր կոչեցեալ, եւ մեր դեզերեալ ի դրոմս սուրբ առաքելոյն Եւստաթի պանդխտական կենօք, առ ոստ երջանիկ բարոնապետին Գրիգորի, սպասեմք վերին խնամոցն, եւ իմ՝ առեալ աստ, անգեալ կենօք ձեռնարկեցի յայս գործ տեսութեան: Քանզի իմաստունք ոչ կարօտին սմա, զի նոցա ամենայն ինչ յայտնի է, այլ իմ ընկերակիցիքն ուցին ի սմանէ, զի մի՛ անգիտութեամբ խաւարն ամենեւին կորացուցէ զնոսա: Այլ եւ աղաչեմ զգաղափարողսդ, զի սակաւ յիշատակս մեր գրեսչիք ի կատարումն գրոց...»³: Ըստ որում յատկանշականն այն է, որ մինչեւ իսկ հայրենիքի ընդհանուր աւերածութեան, ակն ու սարսափի պայմաններում, երբ արիւնուշտ Լենկիթմուրը ամայացնում ու մոխրացնում էր անցած ճանապարհով, դեռեւս մտածու՛մ է մարդկանց լուսաւորելու եւ հոգւոյ խաւարը ցրելու մասին...: Այս առումով բնութագրական է նաեւ Ներսէս Շնորհալու ստեղծագործութիւնը՝ «Չափաբերականը» բնագիրը ամփոփող գրչագրում առկայ հետեւեալ Յիշատակագրութիւնը. «Ո՛վ եղբայր, ի յայս մէջս Ե. (5) թողք թողի վասն այն, զի արարչական շարականներ յամեն Եարակնոց կայ, եւ թողքըս սակաւ էր, եւ ահուփախս ի հետ, որ ամեն պահ մեռանէար. դու մի՛ մեղադրեր, թէ պակաս է. լո՛ւր ջանք դիր, որ զայս կարդաս եւ լուսաւորիս»⁴:

Դարձեալ «Լոյս»ի գաղափարի հետ է զուգորդում նաեւ Ձեռագիր գրքի բնութագրումը իբրեւ «ՄԱՐԳԱՐԻՏ ԼՈՒՍԱԻՈՐ», որը, սակայն, ոչ թէ աչքն է շլացնում եւ մարդոյ սնափառութիւնն է շոյում ու փայփայում իր փայլփլունութեամբ, այլ մեծադիմ մխիթարութիւն պատճառում ու մարդկային ծանրագոյն վշտերի բալասան հանդիսանում իբրեւ «տխրութիւնը որախտութեան» վերածող, նաեւ հրաշագործ սփոփանք՝ մինչեւ անգամ հարազատ զառակի վաղածամ կորստի դէպքում...: Բանն

այն է, որ Ձեռագիր գիրքը, ըստ մեր դպրութեան մէջ սրբագործուած աւանդոյթի, իբրեւ «հոգւոյ զուակ», փոխարինող է մինչեւ իսկ մարմնատր՝ արիւնակից զառակի, ընդ որում ոչ միայն եւ ոչ այնքան իբրեւ «համարժեքներ», այլ նոյնիսկ Ձեռագիր գրքի գերադասութեամբ՝ հարազատ արիւնակից զառակի նկատմամբ, այն հաւատարմ ու «տրամաբանութեամբ», մաւանդ մխիթարութեամբ, որ առաջինը «յաւերժական զառակ» է, մինչդեռ արիւնակիցը՝ «ժամանակատր»...: Սրանից յետոյ դժուար է «անմահութեան» աւելի խոր ըմբռնում պատկերացնել քան այն, որ ունեցել են հայ գրչութեան արուեստի ներկայացուցիչները:

Այսպէս, ձեռագրական աղբիւրներում պահպանուած է Հայկական Կիլիկիայի թագուհի Կատայի մասին վկայութիւն, երբ նա իր դստերը ծաղիկ հասակում կորցնելիս, ուրիշ մխիթարութիւն իր անպարագիծ կակիծի չի գտնում նիւթական արժեքների աշխատում քան ա՛յն, որ նրա յիշատակի յաւերժացման համար պատուիրի մի գրչագիր իբրեւ «պատուական եւ լուսաւոր մարգարիտ»՝ անանց հարստութիւն («զանանց մեծութիւն»), ընդ որում այն պատրանքն առնելու համար, որ ամեն անգամ գրչագրին նայելիս կամ ընթերցելիս, ... կենդանի տեսնենք իր ողբացեալ սիրասուն դստերը: Արժէ մէջբերել այդ հիասքանչ վկայութիւնը բնագրային հարազատութեամբ. «... Իսկ ապա քրիստոսաւեր եւ բարեպաշտ թագուհին մայր գեղեցիկ աստուածաւեր Կատային՝ բարի խորհուրդ գտաւ ամեալ, զպակասումն զառակին իրոյ լնու կամեցեալ եւ զտրտութիւն յորախտութիւն փոփոխել, նմանեալ առն վաճառականին, որ խնդրիցէ զպատուական մարգարիտն, զոր տէրն յԱւետարանի առակեաց, ելեալ ի խնդիր այսմ լուսաւոր մարգարտի, որ ոչ ինչ յեղելոցս փոխանակի ընդ սմա, ստացաւ զսա նիւթականօրն՝ զանանց մեծութիւն ստացեալ եւ յիշատակ դստեր իրոյ ի տեղի նորա կացուցեալ, իբրեւ այն, թէ գնա կենդանի տեսանելով յորժամ զսա տեսանիցն եւ ընթերնուցուն»⁵:

Ձեռագիր պատուիրելը եւ նիւթական զոհողութիւններով ձեռք բերելը իբրեւ «անմոռաց արձան» ոչ միայն զառակի, այլեւ ամուսնու, կնոջ, քրոջ, եղբոր, երախտաւոր ուսուցչի կամ ուսուցչապետի, մի խօսքով՝ ամենաբանկազին եւ սիրելի անձնատրութեան յիշատակի՝ ընդունուած սրտառուչ եւ հոգեթով սովորոյթ եւ աւանդոյթ եր մեր դպրութեան մէջ: Օրինակ, Միւնեաց իշխան Պէշգէնը վաղաժողիկ սիրած կնոջ յիշատակին «բազմածախ ոսկեծաղիկ» գրչագիր է պատուիրել, որի մասին հաւաստում է հետեւեալ Յիշատակարանում. «... Յիշեսչիք ..., որ մեծաւ սիրով ... ստացաւ զսա (իմա՝ Ձեռագիրը - Լ.Խ.) եւ ետ նուր արձան անմոռանալի ընդ այլ բազմութեան արդեանցն եւ զոսկեծաղիկ բազմածախ անգին եւ անհամեմատ Աւետարանս յիւր սեփական եւ գերաւորակ ուխտն Տաթեայ, ի յիշատակ գերեզմանի աղայնոյն Զրիստոսի եւ յոյժ չքնադեզոյն Փաշային, որ էր ամուսին նորա եւ տղա հասակաւ փոխեցաւ յաստեացս...»⁶:

Հարկ է նշել, որ Ձեռագիր գրքի նոյնացումը արիւնակից մարմնատր զառակի հետ եւ նոյնիսկ գերադասումը նրանից ոչ թէ եզակի կամ պատահական փաստ է մեր դպրութեան մէջ, այլ՝ ընդհանրացած ըմբռնում, որով աւելի քան արժեւորում է այդ գաղափարի կարեւորութիւնն ու վեհութիւնը: Առ այդ համեմատի՛ր նաեւ. «Արդ, ես՝ նուաստ ոգի Մխիթար քահանայ, որ ստացայ զսա ինձ հոգոյ զառակ...»⁷: Կամ՝ «... Յիշեսչիք ի սրբամատոյց եւ աստուածահաճոյ աղօթս զտէրն մեր ըստ մարմնոյ, զայրն զուարթնոց ցանկութեանց զխոհեամը խորհրդանն զմեծայոյս պարոնաց

¹ ԺԳ դարի Յիշատակարաններ, էջ 30:

² Անդ, էջ 158:

³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 5123, ք. 265:

⁴ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 438, ք. 117բ:

⁵ Յիշատակարանը Ձեռագրաց, էջ 404:

⁶ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 212, ք. 310բ - 311ա:

⁷ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 4018, ք. 253ա:

պարոնն գ՞նէշէն...», որ մեծաւ սիրով եւ կատարեալ հաւատով զաւակ ի Սիոն ստացաւ զաւակ»¹:

Չափազանց սրտամորմոք վշտի արձանագրութիւն է, որ թողել է գրիչը իր անհուն կակիծի պահին միայն նրա համար, որ Չեռագիրը որպէս անջնջելի յիշատակ յանրժացնի մոռոյ հրոսակների կողմից սրախողխող եղած իր միմուճար որդու յիշատակը: Այդ Յիշատակարանը առանց յուզմունքի ու փշաքաղութիւն անհնարին է կարդայ. «... Ես Յոն(ան) գրիչ, որ գտա յաւուրս յայս հարեալ եւ վիրատրեալ սզով անփարատ, վասնզի թռաւ աղանեկն յաչաց իմոց եւ կորուսցի զշառաւեղիկն իմ, տղանեկն զՄարգ(ար): Աղաչեմ զամենայն սուրբ մանկունս եկեղեցոյ, սղալանաց մի՛ մեղադրել, զի սզաւոր գրեցաք եւ լալով: Այլ յիշեցէք ի մեղաքաւիչ յաղաթս ձեր զիս՝ զանարժան գրողս զՅոն(ան), եւ զհայրն իմ զՄարգ(ար) քահանայ, եւ զմայրն իմ զՏիրանցն, եւ զիմ մարմնոյ աչաց լոյսն՝ զկտրեալն սրով հրեշտակին, որպէս զծաղիկ նոան՝ հարեալ ի կարկտ...»²: Այլուր՝ նոյն գրչագրում վշտից բանաստեղծ դառնալով, ողբացեալ հայրը յուզաթաթաւ յիշատակագրել է.

«Սիրտս լալով է պաշարած
Եւ իմ աչաց լոյսն տարած
.....
Եւ իւր քաղցր աչունքն խաւարած,
Յականջ սրախ ձայնն բերած,
Կա առաջիս ինքն կանգնած,
Որպէս ի կենդան էր, անմեռած...»³:

Մեզ համար, սակայն, գրիչի, իբրեւ դպրութեան սպասարդի, բարձր գիտակցականութիւնն է, նրա ազնիւ մղումն ըմբռնելն է կարեւորը. չնայած «դառն ժամանակներին» եւ սովին, որ առաջացել էր Հայաստանում մոռոյլական արիւնոտ տիրապետութեամբ, զաւակի կակիծը սրտում գրիչ Յովհաննէսը ամենայն լրջութեամբ եւ խորին համոզմամբ յայտարարում է՝ ուժ գտնելով իր մէջ. «... գորարիւնակ հոգի ոչ կարէ զարանալ եւ հանգչել եթէ ոչ բանի ճշմարտաց քննութեամբ, նոյնպէս եւ մարմին՝ առանց ազգի-ազգի (իմա՝ «տեսակ-տեսակ» - Լ.Խ.) պտղոց կերակրոյ...»⁴: Սրանումն է, ահա, մեր գրչութեան արուեստի հզօրութիւնը, ստեղծագործական տարերքը, գեղեցկութիւնն ու հմայքը...:

Իսկ այս ասանդոյթի ու բնութագրման արմատները անշուշտ աստուածաշնչային են, զուգորդութեամբ բխած Եսայի մարգարէի մի ցանկութիւն-բացազանչութիւնից, հասցեագրուած բոլոր հաւատացեալներին. «Երանի՛ նրան, որ Սիոնում (իմա՝ «երկնքում» - Լ.Խ.) զաւակ կ'ունենայ»: Բայց կարեւորն այն է ներկայ դէպքում, որ մեր դպրութեան ներկայացուցիչները Սիոնում զաւակ ունենալու քրիստոնէական բաղձանքը երանաւտութեան՝ գեղեցիկ մտայնացմամբ տարածում եւ վերագրում են Չեռագիր գրքի ձեռքբերման զաղափարին, սրբազան մղում եւ փութաջանութիւն հաղորդելով հայ դպրութեան զարգացմանը, գրչագրերի ընդօրինակմանն ու բազմացմանը՝ հետզհետէ առաւել մեծ ընդգրկումներով ու տոչորումներով:

¹ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 212, ք. 310ա:
² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 4972, քք. 228ա-բ:
³ Անդ, ք. 178ա:
⁴ Անդ, ք. 228ա:

Ուշագրաւ է ձեռագրական յիշատակումներից այն վկայութիւնը, որ դարձեալ ազնուագարմ հայրուհի, Սիոնիքի Խաղբակեան իշխանական տոհմից Վանենին միջնադարի ուսումնագիտական նշանաւոր կենտրոններից Խորանաշատ վանքում գրչագիր պատուիրելիս թողել է. «Ես՝ Վանենի, աղախին Քրիստոսի, դուստր Ջաջոյ Խաղբակեանց, ամուսին Կուկին որդոյ Արասայ Մեաղեանց իշխանաժեանց միարանեցա ի Խորանաշատոյ սուրբ Աստուածածինս, յիշելով զբանն Եսայ(ե)ա մարգարէի՝ Երանի՛ որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ետու զծախս սուրբ Աւետարանիս, ստանալ ինձ զաւակ հոգեւոր յեկեղեցի յիմանալիս Երուսաղէմ ի ժամանակս քաղաւորութեան դատեր Թամարին...»¹:

Իբրեւ ընդհանրացում նշենք, որ Չեռագիրը «անջնջելի յիշատակ» եւ «անմոռաց արձան» է համարուել մեր դպրութեան մէջ ոչ միայն վաղամեռիկ զաւակի համար, այլեւ գրչի կամ պատուիրատու-ստացողի օրօք դեռես սպարող այն սիրելի քանկագին անձանց, որոնք երախտիք ունեն եւ հարազատ են իրենց: Գիցու՛ք՝ «Ջգերաբուն բանի սպասաւոր եւ զբարեաց արժանաւոր յիշատակի՝ գրաբունապետն մեր գեսայի (իմա՝ Գլածորի համալսարանի դպրապետ Եսայի Նշեցին է - Լ.Խ.) աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, հանդերձ զարմիւք իւրովք. նաեւ զգրողն սորին եւ զծնաւոյն իւր աղաչեմ առնել յիշատակի արժանի, եւ յիշողքն յիշեալ լիցին ի Քրիստոսէ, ամէն, ամէն»²: Եւ կամ՝ «Ջարժանապատիւ հայրապետն Հայոց գաւէր Գրիգորիոս՝ ստացաւ զրոցս, աղաչեմ յիշել ի տէր, ծնողաւք, քերքք եւ եղբարքք, եւ բնախն զարմաւք, որպէսզի ողորմեսցի նոցա Քրիստոս. ընդ նոսին եւ մեղաւոր գրչիս Վարդանա, եւ իմոց ծնողացն, եւ որոց ամէն ասեն»³:

Այսպիսով՝ իբրեւ եզրակացութիւն նշենք. Չեռագիրը մեծարման, զնահատման, յիշատակի յանրժացման ամենաթանկագին եւ ամենաարժեքաւոր Յուշարձանն էր ամբողջ Միջնադարում, որի հետ չէր կարող չափուել կամ համեմատուել ուրիշ ո՛չ մէկ շլացնող կամ ակնահաճոյ որեւէ իր կամ հարստութիւն...: Սա էլ մեր ժողովրդի հոգեշնայլ հարստութեան դրսեւորումներից մէկն է, անտարակոյս:

«Արմաշ» Պարբերագիրք Ս. Գրային, Եկեղեցա-Պատմական եւ Կրօնական, Մոնթրէալ, 1988, Ե. Տարի, Թ. 1 (9):

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐ ԿԱՆ, ՈՐ ԱՄԵՆԵՒԻՆ

ՉԵՆ ՎԱՃԱՌՈՒԻ...

Մամուլից ցաւագնօրէն իմացանք, որ դարձեալ ազգային արժէքներ ու սրբութիւններ՝ մեր ժողովրդի «անկողոպտելի զանձեր» համարուող 35 Չեռագրեր աճուրդի են հանուած Լոնդոնում Մոքքալիզ հաստատութեան կողմից, այս անգամ ոչ թէ զողափարի դուրս բերում Չեռագրերի վաճառման նկրտումով Երուսաղէմի կրօնական-ազգային հաստատութեան հէնց ղեկավարութեան մեղսակցութեամբ, այլ ...

¹ Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, էջ 839
² Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 1681, ք. 259բ:
³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 500, ք. 239բ:

հայ գրի եւ մշակոյթի նախանձախնդիր, Չեռագրերի անհատական մեծ հաւաքածոյի տէր՝ նիւեորքաքնակ Յարութիւն Հազարեանի անմիջական հարազատների ընչաքաղցութեամբ...:

Գիտե՞ն արդեօք այժմ հանգուցեալ Յարութիւն Հազարեանի բարեկամները, որ ազնուահոգի այս հայորդին դեռ մի տասնամեակ առաջ անձամբ 32 Չեռագրեր էր նուիրել Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Հին Չեռագրերի պահպանման եւ ուսումնասիրման Գիտա-հետազօտական Հաստատութեանը՝ Մատենադարանին: Եւ այդ՝ ոչ միայն սոսկ ամենաապահով եւ պետական հովանաւորութիւն վայելող, համաշխարհային ճանաչմամբ յայտնի Չեռագրատանը յանձնած եւ ի պահ դրած լինելու ներքին բաւականութեամբ, այլեւ մանաւանդ հայագիտութեան բազմազգ ներկայացուցիչների կողմից դրանք ուսումնասիրուելու եւ ժողովուրդների պատմութեան ու մշակոյթի մքին ծալքերին թէկուզեւ դոյզն ինչ լոյս սփռելու արդար գոհունակութեամբ: Մատենադարանի ղեկավարութիւնն էլ, իր հերթին, ի ճանաչումն եւ ի գնահատական այս հոգեշոյլ հայորդու երախտիքի, որ խոստացել էր յետմահու նուիրել մնացած 35 Չեռագրերն էլ Մատենադարանին, Հայագիտական Ուսումնասիրութիւնների Դահլիճի նախասենեակի պատուաւոր անկիւնում, բացառութեան կարգով, իր մեծադիր շրջանակեայ նկարն է դրել ազգանուան գրութեամբ ... ի ցոյց հանրութեան:

Հանգուցեալի խոստման դրժումով չե՞ն կարծում նրա արինակից մերձաւոր ժառանգները, որ մեծագոյն վիրաւորանքն են հասցրել իրենց ազգովին յարգուած ու սիրուած հարազատի բարի յիշատակին...:

Տեղին է յիշեցնել մեր ժողովրդի համար շատ բնորոշ եւ միաժամանակ հաւատամբ դարձած աստուածաշնչային իմաստալի ասոյթն այն մասին, որ «Մարդ ոչ միայն կեցցէ հացի, այլեւ Բանի...»:

Նկատենք, որ գրչագիրը եւ հաւատամբը նոյնացուած են եղել մեր ժողովրդի գրաւոր պատմութեան ամբողջ ընթացքում՝ սկսած հայեցի դպրութեան սկզբնաւորումից ընդհուպ յետագայ ամբողջ հարիւրամեակներ: Այդ նրանից է, որ գրչագրերում է ամփոփուած, առաջին հերթին, հայի հաւատքը, որով սնում ու լիցքաւորում էր նրա գաղափարական ու յուզական ներաշխարհը, կազմաւորում ու շրջագծում նրա մտահորիզոնը, երանգաւորում նրա աշխարհընկալումն ու աշխարհահանաչողութիւնը. գրչագրերից էր քաղում, հաւատքի հետ միասին, նաեւ վարքագծի դրսեւորման բարոյագիտական նորմերի ամբողջ համակարգը, ընդ որում նաեւ գիտելիքների այն պաշարը, որ բաղկացնում էր հայի հոգեմտաւոր հարստութիւնը եւ միաժամանակ իմացական հզօրութեամբ փայփայում ու խթանում ազգային պետականութեան ստեղծման տեսլականը, հայեցի քաղաքակրթութիւնը եւ մշակոյթն ու առաջընթացն առհասարակ:

Գրչագրի եւ հաւատքի նոյնացումը ինքնին խորհրդանշում է նաեւ այն բացարձակ իրողութիւնը, որ հայեցի դպրութեան առաջացումն իսկ պայմանաւորուած էր բացառապէս քրիստոնէական հաւատքի որդեգրմամբ, հետեւաբար հայոց Գրերի Գիտը եւ Գրչագրի յղացումն ու բազմացումը իրենց նպատակադրումով պարտական էին մասնաւորապէս այս նոր հաւատքի յաղթանակին ու ամբապնդմանը՝ իր հետ բերած նաեւ կողմնակի եւ խորքային հետեւանքներով: Դրանք բնութագրում են՝ ազգային-պետական ինքնուրոյնութեամբ ու անկախութեամբ, հոգեբանական-աշխարհայեացքային իւրայատկութեամբ, բարբերի ու կեցութեան առանձնայատ-

կութեամբ, ազգային պետականութեան եւ սեփական ուրոյն քաղաքակրթութեան զարգացման բարեբաստիկ նոր հնարաւորութիւններով:

Ի նշանաւորումն հայոց գրի ու դպրութեան ստեղծման, ազգային տոմարում պատուաւոր տեղ է բռնում «Թարգմանչաց Օր»ը՝ որպէս հայ ժողովրդի իմացախական հանճարի, նրա գրաւոր հարուստ մշակոյթի՝ Չեռագրերի մեծագոյն տօնախմբութեան երախտարժան թուական, որ սրբագործուած է հայոց ազգային Եկեղեցու կողմից դարձ դար եւ կրթական-մշակութային-գիտական կենտրոնների կողմից ամէնուրեք, ու նաեւ առանձին յօրելիական տարիներին՝ համապետական ընդգրկումներով ու միջոցառումներով:

... Ազգային ինքնուրոյնութեան վկայականները հանդիսացող Չեռագիր մատենաների վաճառքը մեծագոյն սրբապղծութիւն է «Մշակոյթի տօն» ունեցող հազարամեակների ճանապարհորդ եւ փորձութիւններով իմաստնացած հինաւորց հայ ժողովրդի համար:

Ով ո՛վ, այն էլ ազգային արժէքների գնահատման ու պահպանման նախանձախնդիր ամերիկահայ ամենահարուստ եւ հոգեշոյլ այս գաղութը չի կարող հանդուրժել եւ ներել ազգային նկարագրի ու բարոյականութեան նման եղծումներն ու ... ոտնահարումները:

Համոզուած ենք՝ ամերիկահայ ազնուահոգի այս հայաեծ համայնքի տարեգրութեան մէջ կը բացառուեն այսուհետեւ նման զայթակղութիւններն ու սայթաքումներն առհասարակ...:

«Նոր օր», եօրեայ,
Դեկտ. 20, 1980

Մշակոյթի Տօնի առօրի

«ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՕՐ»Ի
ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Թարգմանչաց օր»ը հայ ժողովրդի իմացախական հանճարի, նրա գրաւոր հարուստ մշակոյթի մեծագոյն տօնախմբութիւնն է, որ սրբագործուած է Հայոց ազգային եկեղեցու կողմից դարձդար եւ կրթական-մշակութային-գիտական կենտրոնների կողմից ամէնուրեք, ու նաեւ առանձին յօրելիական տարիներին՝ համապետական ընդգրկումներով ու միջոցառումներով...:

Մատենքի վրայ կարելի է այսօր հաշուել հնագոյն ժողովուրդներից նրանց, որոնք իրենց Գիր ու Դպրութեան տօնն ունենան, Մշակոյթի յօրելեան նշեն, Իմացականութեան յաղթանակը հռչակեն. նախ՝ քչերն են պատմութեան արհաւիրքներին ու փորձութիւններին դիմակայել ու յարատեւել, երկրորդ՝ գոյատեւողների ճակատագրում էլ զիրն ու դպրութիւնը չեն ունեցել այն բախտորոշ նշանակութիւնը, ինչ

հայ ժողովրդի լինելության ու հերոսական մաքառմամբ իր վերապրումների համար...:

Հարկ է ընդգծել, որ քրիստոնեության ընդունումը 301 թուականին որպես պետական կրօն եւ աշխարհայեացք՝ մեծ յեղաշրջում էր մեր ժողովրդի պատմության մէջ, նոր դարաշրջան՝ կեցութեան, մտածելակերպի, հոգեբանութեան, աշխարհընկալման ու աշխարհաճանաչման, բարոյական արժէքների ձեռքբերման ու վարքագծի դրսեւորման, սկիզբ դնելով ուրոյն մի քաղաքակրթութեան, որ վճռական նշանակութիւն ունեցաւ հայ ժողովրդի յետագայ ամբողջ պատմական ժամանակաշրջանում: Իբրեւ նոր գաղափարախօսութիւն՝ ստեղծեց մշակոյթի բացառիկ հարբատութիւն, որպէս հրամայական անհրաժեշտութիւն ճնունդ տալով սեփական գրի եւ հայեցի գրականութեան: Իսկ դա էլ իր հերթին, այնպիսի հզօր ու մոզական շաղախի նշանակութիւն ունեցաւ հայ հասարակական հաւաքականութեան ներքին միասնութեան համար, որ դժուար է նոյնիսկ գերազնահատել: Հոգեւոր այդ զարթոնքը, իր աննախադէպ բնոյթով, առաջընթացի այնպիսի հորիզոններ բացեց ազգովին գոյատեւելու ինքնուրոյնութեան մաքառումներում, որի իմաստաւորումը կարելի է առաւել խորը ըմբռնել յետագայ դարերի բազում փորձութիւնների սրափ վերլուծութեամբ միայն:

Բայց մի ակնթարք պատմական յետադարձ հայեացքով անդրադառնա՛նք այն բացառիկ ցնծութեանն ու խանդավառութեանը, որ համակել էր Հայաստանի պետական եւ հոգեւոր գործիչներին, նախարարներին ու ազատագունդ զինականներին, ամբողջութեամբ հայ ժողովրդին հէնց այն պահին, երբ Մեսրոպ Մաշտոցը, զիտական խորաքնին որոնումներից ու տուայտանքներից յետոյ, հանճարեղօրէն երկնելով հայոց այբուբենը, իբրեւ մտքի տիտան ստեղծագործական երանութեամբ յաղթականօրէն վերադառնում էր Եղեսիայից քաղաքամայր Վաղարշապատ, նրան ընդառաջ եկաւ ամբողջ հայ ժողովուրդը հանդիսատար շքերթով՝ իր փրկութեան լաստը յայտնաբերողին յարգանքի տուրքը մատուցելու:

Գարձել էր արդէն պատմական փաստ հայոց այբուբենի յայտնագործութիւնը 406 թուականին, որի դարակազմիկ արձանագրութիւնը հաղորդում է դարերին պատգամային հանդիսատարութեամբ, վերագրելով հայոց այբուբենին, ոչ աւել ոչ պակաս, «աստուածային ծնունդի» վկայական:

«Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգեւեր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին»:

Աշխարհաբար քարգմանութիւնը. «Եւ այսպէս, Մաշտոցը շատ նեղութիւններ քաշեց իր ազգին մի բարի օգնութիւն գտնելու հա՛նար: Ամէն բան շնորհող Աստուծոյ իսկապէս պարգեւուեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր եւ սքանչելի ծնունդներ - հայերէն լեզուի նշանագրեր»¹:

Դէպքերին ականատես եւ Մաշտոցի աշակերտ ու կենսագիր Կորիւնը հանդիպման դրամատիկ այդ պահը նկարագրելիս նախ հայոց այբուբենի զիտարարի հոգեվիճակն է նկարագրում այսպիսի սրտառույ տողերով ու զուգահեռի անցկացմամբ՝ բացայայտելով ու իմաստաւորելով զիտի պատմա-քաղաքական ու

պատմա-մշակութային վիթխարի նշանակութիւնը. «Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս գուարճանայր յէջս Սինէական լերինն. չասեմք թէ առաւելօքն՝ պակասագոյն: Քանզի յԱստուծոյ առեալ եւ աստուածագիր հրաման ի բազուկս՝ այրն աստուածատես ի լեռնէն իջանէր. այլ վասն վրէժագործ ժողովրդեանն, որոց քիկունք ի տէրունիսն եւ կործան յերկիր, ախրադրուծք յիրեանց կուոս ճուլածուին երկիր պագանէին, եւ զնորին հրամանաբերն սրտառույ սրտաբեկ լացուցին. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն թախծութիւնն: Իսկ այսր երանելոյ՝ վասն որոյ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի, որ անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգեւոր մխիթարութեամբ՝ կարծեալ զընդունելեացն յօժարութիւնն եւ ընդունելեացն յուսով ուրախութեան՝ դասատարութիւն ճանապարհացն աւետարանել»:

Աշխարհաբար. «Մեծ Մովսէսն էլ այնպէս ուրախ չէր Սինա լեռից իջնելու ժամանակ. չենք ասում, թէ աւելի (ուրախ էր, այլ նոյնիսկ) շատ պակաս (ուրախ էր): Որովհետեւ աստուածատես մարդն աստուածագիր հրամանն աստուծոց առած եւ իր բազուկների վրայ (բռնած) իջնում էր լեռնից, բայց նա (տխար էր) չարագործ ժողովրդի պատճառով, որ քիկունքը դէպի տէրունիքը (դարձրած) եւ գետին կործանուած, տիրադուրծներ (եղած) իրենց ճուլածոյ կուրքին էին երկրպագում եւ նրա հրամանաբերին սիրտը կուտրելով, սրտառույ լացացրին. - որովհետեւ տախտակները ջարդելոց ակնյայտ երեւում է բերողի թախծութիւնը: Իսկ այս երանելիին, որի մասին են յօրինում իմ այս ճառերը, չեղաւ այնպէս, ինչպէս այնտեղ կատարուեց. այլ նա ինքն իր հոգեւոր մխիթարութեամբ լցուած՝ զիտըր ընդունողների յօժարութիւնը, եւ ընդունողների ուրախութեան յուսով (լցուած լինելոց) ճանապարհների կայաններն աւետարեր էին (նրա համար)»¹:

Պարզում է, որ հայոց գրերի ստեղծման անհրաժեշտութիւնը զիտակցուել էր համապետական ու համաժողովրդական մասշտաբով, եւ անհամբեր սպասում էր դրա երջանկաբեր լուծմանը: Հէնց այն հանգամանքը, որ Մաշտոցի ազգափրկաբար գործը համեմատում է Մովսէս մարգարէի Աստուծոց պատգամուած տասնաբանեայ պատուիրանների հետ, դրանով իսկ ընդգծում է հայոց այբուբենի զիտի քաղաքական եւ պատմա-մշակութային վիթխարի նշանակութիւնը, որ այնքան խորը եւ սպառիչ կերպով ըմբռնուել ու զնահատուել է դեռեւս նրա ստեղծման պահին: Բայց եւ միաժամանակ Մովսէս մարգարէի հետ որեւէ մահկանացուի համեմատութիւնը, քրիստոնէական աշխարհայեացքի տեսակէտից, թոյլատրելի չէր, համարելով դա «մեծագոյն յանդգնութիւն» եւ ծանր մեղանշում: Գիտակցելով որ այդ այդպէս է, Կորիւնը, չնայած դրան, միանգամայն արդարացուած է համարում Մովսէս մարգարէի հետ Մաշտոցի համեմատութիւնը, կարծէք մինչեւ իսկ, գործի կարեւորութեան առումով, նախապատուութիւնը տալով ո՛չ թէ Մովսէս մարգարէին, այլ ... Մաշտոցին, երբ կարդում ենք նաեւ հետեւեալ տողերը.

«Բայց մի՛ որ յանդգնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեցի, թէ զիարդ գայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախօսին, սքանչելագործին նմանեցուցեալ հաւասարեաց. որով թերես ստգտանիցեմք: Եւ կարեմք այլ աւելի հաւատովք. քանզի եւ չկայ ինչ ի վերայ յայտնեօք եւ ծածկականօք գաստուածականն խտտել, քանզի միոյն Աստուծոյ ամենագորի շնորիք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին»:

¹ Կորիւն, Վարդ Մաշտոցի, բնական բնագիրը, աշխարհաբար քարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Մանուկ Աբեղիանի, Երեւան, 1941, էջ 48-49:

¹ Անդ, էջ 52-53:

Աշխարհաբար. «Բայց ո՛չ որ թող մեզ յանդուզն չհամարի ասածներիս համար, թե ինչպէս մի շատ խոնարհ մարդու (իմա՝ Մաշտոցին - Լ.Խ.) նմանեցնելով հաւասարեցրեց Մովսէսին, աստուածախօսին, սքանչելագործին, որով թերեւս մեղադրուենք: Բայց կարող ենք այդ անել աւելի՛ եւս հաւատով, որովհետեւ ոչ մի հարկ էլ չկայ՝ յայտնի եւ անյայտ բաներով խոտել աստուածայինը, քանի որ մէկ ամենագոր Աստծու շնորհքն է մատակարարում բոլոր հողածին մարդկանց»¹:

Արուած է չափազանց լայնախոտ ընդհանրացում՝ պնդելով, թէ բոլոր տեսակի խիզախումների ու ստեղծագործական խոյանքների ատակ է իրաքանչիւր մահկանացու, ընդ որում այն գեղեցիկ փաստարկմամբ, որ դրանք բոլորն էլ, վերջին հաշուով, «համընդհանուր» եւ «ամենագոր Աստծու» պարզեւած «շնորհք»ի կամ ձիւրքի դրսեւորումներ են...:

Իսկ ժողովրդի հետ հանդիպման սրտառու պահը Երասխ գետի ափին այնքան հանդիսատար է եղել հրճուանքի իր պոթկումով, որ համազգային բնոյթ կրելով՝ նմանակը չունի ամենեւին հին մատենագրութիւն ունեցող ժողովուրդների տարեգրութեան մէջ համանման իրադարձութեան առթիւ: Թւում է՝ այն վերջերս պատահած լինի, երբ այնքան կենդանի ու զուսկաւ է նկարագրում Մաշտոցի կենսագիրը ուրախութեան այդ յորդումը, որը բխում էր, անտարակոյս, հայ ժողովրդի համար ստեղծուած ազգային-քաղաքական տագնապալի իրադրութեան զգաստ դիմագրաւումից.

«Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի քազատրական քաղաքն, ազդ լինէր քազատրին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանոյն ամբոխս, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելոյն զափամբ Ռահ գետոյն: Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի եւ բարբառօք ցնծութեան եւ երգօք հոգեւորօք եւ բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին»:

Աշխարհաբար. «Եւ արդ, երբ յիշարժան Մաշտոցը եկաւ, մօտեցաւ քազատրական քաղաքին, իմաց տուեցին քազատրին եւ սուրբ եպիսկոպոսին: Նրանք նախարարագունդ աւագանու բոլոր բազմութիւնն առնելով՝ քաղաքից դուրս եկան, Ռահ գետի ափին դիմաւորեցին երանելիին: Եւ ցանկալի ողջոյնը միմեանց տալուց յետոյ՝ այնտեղից ցնծութեան ձայներով եւ հոգեւոր երգերով ու բարձրաձայն օրհնութիւններով եւս դարձան քաղաքը, եւ տօնական ուրախութեամբ անց կացրին օրերը»²:

Ընդհանրացման ենթարկելով Մաշտոցի գիտարարութիւնը այլ ժողովուրդների ազգային այբուբենների ձեռքբերման արժեքների ու պատմական պարագաների հետ, գերմանացի մեծանուն հայագէտ Իոզէֆ Մարկուարտը ամենայն հեղինակաւորութեամբ ու պատասխանատուութեամբ հաւաստում է. եթէ մենք նկատի առնենք պատմական այն բացառիկ ծանր իրադրութիւնը, որի մէջ Մաշտոցը կարողացաւ զարթեցնել հայ ժողովրդի ազգային գիտակցութիւնը, եւ նրա այդ գործը համեմատենք Պիպինի եւ նրա զինակից Վինֆրիդի գործունէութեան հետ՝ այս վերջինները «իբրեւ «խեղճ թզուկներ կ'երեսան», համեմատութեամբ մտքի այդ հսկայի»³:

Գրերի զիտը, սակայն, ինքնանպատակ չէր բնաւ: Մաշտոցին եւ ժամանակի Հայոց կաթողիկոս Սահակ Պարթեւին յուզող հիմնական խնդիրը հայեցի մատենագրութեան ստեղծումն էր, որը պէտք է իրացուէր ոչ թէ տարերայնօրէն, այլ որոշակի ծրագրով ու նպատակադրումով: Այս գլխաւոր խնդրին ստորադասում էր, բնականաբար, հայեցի ուսուցման կազմակերպումը, որը ենթադրում էր դպրոցների համատարած ստեղծում:

Դեռ այն ժամանակ Հայոց երկրի պատասխանատուները յստակ ըմբռնել էին ազգապահպանման կառոյցի մէջ դպրոցի բացառիկ նշանակութիւնը մատաղ սերնդին հոգեւոր սնունդ ջամբելու եւ ազգային նկարագիր դարբնելու գործում: Ո՛չ այլ որ քան այդ իրադարձութիւնների եռանդուն մասնակից մատենագիր Կորիւնը հաղորդում է, որ երբ Հայաստանի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնները համոզուեցին Մաշտոցեան այբուբենի լիարժեքութեանը հայերէնի հնչոյթային համակարգը լիովին եւ սպառնիչ կերպով արտացոլելու հնարաւորութիւններում՝ ուսումնակրթական-լուսատրական լայն գործունէութիւն ծաւալեցին ամբողջ երկրով մէկ, ընդ որում համապետական միջոցառումներով ու հովանաւորութեամբ: Այս ամբողջ շարժումը Կորիւնը բնութագրում էր իբրեւ Գիտութեան «բացեալ աղբիւր»՝ գրելով.

«Իսկ իբրեւ զչափ առեալ զիրացն հաստատութեան, եւ համարձակագոյն եւ առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիտ վարդապետութեանն խմբին ուսուցանել եւ թեթել, եւ պատրաստական քարոզութեանն անգէտ մարդկան յօրհնէր: Որոց եւ ինքեանք իսկ ի կողմանց եւ ի զաւատաց Հայաստան աշխարհին յորդեալք եւ դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ»:

Աշխարհաբար. «Իսկ երբ իրերի հաստատութիւնը փորձեցին, ապա աւելի համարձակ եւ աւելի շատ էին ժողովում նորագիտ ուսման համար աշակերտներ՝ սովորեցնելու, կրթելու եւ անգէտ մարդկանց քարոզելու համար պատրաստելու: Նրանք իրենք էլ հէնց Հայաստան աշխարհի զանազան կողմերից ու զաւառներից բազմութեամբ վեր կենում, զալիս հասնում էին աստուածային գիտութեան բացում աղբիւրը»⁴:

Ի դէպ, հարկ է արձանագրել, համատարած լուսատրական աշխատանքի արգասաւորութիւնը այնքան զգալի ու շօշափելի արդիւնքներ է տուել կարճ ժամանակամիջոցում, որ մինչեւ իսկ Աստուածաշնչում Իսրայելական երկրի՝ «Դաւթի տանը» լուսատրութեան աղբիւր բոլորով մարգարէական գուշակութիւնը հեռաւոր ապագայում արդէն իսկ «իրագործուած» է համարում... Հայաստանում: Աւելի լաւ է թոյլ տանք խօսել այդ մասին Կորիւնին. «Քանզի յԱյրարատեան զաւառին՝ ի կայս քազատրացն եւ քահանայապետացն, բոլորեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ: Անդ էր յիշելի եւ մարգարէականն, եթէ՝ «Եղիցի անդ աղբիւր բոլորեալ ի տան Դաւթի»:

Աշխարհաբար. «Որովհետեւ Այրարատեան զաւառում, քազատրների ու քահանայապետների նստավայրում (իմա՝ Վաղարշապատում - Լ.Խ.) բոլորեց հայերի համար Աստծու պատուիրանների շնորհքը: Այստեղ պէտք է յիշել եւ մարգարէի խօսքը, թէ «Աղբիւր կը բոլորի այնտեղ, Դաւթի տանը...»⁵:

Այս խանդավառ ցնծութեան օրերի ականատես մատենագիրը Հայաստան երկրի ապրած հոգեմտաւոր յեղաշրջումը, որ դարակազմիկ նշանակութիւն ունեցաւ

¹ Անդ:

² Անդ, էջ 54-55:

³ Տե՛ս Իոզ. Մարկուարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց ս. Մաշտոցի, քարգծ. Ա. Վարդաննանի, Վիեննա, 1913, էջ 8:

⁴ Կորիւն, Վարք Մաշտոցի, էջ 58-59:

⁵ Անդ, էջ 58-59:

հայ ժողովրդի համար, այսպիսի յուզաբաթալ ոգեւորութեամբ է բնութագրում հայագիր դպրութեան պատմութեան հեղինակը.

«Անդ էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն եւ ակնավայել տեսիլ հայերոյն: Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն լինէր, ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլեւ յառաջագոյն յախտենիցն, եւ ապա եկելոցն, սկզբանն եւ կատարածի, եւ ամենայն աստուածատուր ասանդութեանցն»:

Աշխարհաբար. «Ի՛նչ սրտալիր ուրախութիւն էր այնտեղ այնուհետեւ, եւ ի՛նչ հաճելի տեսարան աչքի համար: Որովհետեւ մի երկիր, որ անունն անգամ չէր լսել այն կողմերի, ուր բոլոր աստուածային սքանչելի գործերը կատարուեցին, շատ շուտով, իսկոյն իմացաւ բոլոր եղած բաները, ոչ միայն ժամանակով կատարուածները, այլ եւ առաջագոյն յախտենականութիւնը (այսինքն՝ աշխարհաբարութիւնց առաջ եղածը, դրանից յետոյ եղած բաները, աշխարհի սկիզբը եւ վերջը, ըստ Աստուածաշնչի) եւ յետոյ եկածները, սկիզբը եւ վերջը, եւ բոլոր աստուածային ասանդութիւնները»¹:

Յատկանշականն այն է կուլտուր-լուսատրական այս հզօր շարժման, որ նա ոչ թէ սոսկ արքունական ձեռնարկում էր՝ սահմանափակելով միայն վերնախաւի ընդգրկմամբ, ոչ էլ ներքնախաւի միջոցառում, որ պարփակուէր միայն շինականների լուսատրմամբ, այլ այն համապետական ու համաժողովրդական բնոյթ ունէր. նրանում ընդգրկուեցին թէ՛ Հայոց արքունիքը եւ ազատագունդ բանակը, որով առաւել բան ընդգծուեց դրա ազգային-քաղաքական նշանակութիւնն ու միտուածութիւնը, եւ թէ՛ ժողովրդային բոլոր խաւերը՝ գաղափարախօսական հիմք ու նախադրեալ ստեղծելով հայրենիքի պաշտպանութեան ու անկախութեան սպա-հովմանն սպառնացող բոլոր տեսակի ռոնձգութիւններից՝ ո՛րտեղից էլ դրանք փորձուեն կամ ո՛ւմ կողմից էլ ձեռնարկուեն: Այսպէս, բոտն իրադարձութիւնների կենտրոնում գտնուող Կորիւնը հայոց գրի ու մատենագրութեան սկզբնաւորմանը նուիրուած երկում յայտնում է.

«Եւ իրեանց անդէն գ՛առընթերակաց արքունիսն, հանդերձ ամենայն ազա-տագունդ բանակիսն, աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ: Առաւել երանելոյն Սահակայ զՄամիկոնեան որեարն ի վարժս վարդապետութեանն պա-րապետեցեալ, որոց առաջնոյն Վարդան անուն էր, որ եւ Վարդկան կոչէր: Նոյն-պէս եւ զամենայն ոգի ջանայր յերիւրեւ, հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեան»:

Աշխարհաբար. «Եւ իրենք աստուածային իմաստութեամբ կրթեցին իննց այն-տեղ իրենց մօտ եղած արքունիքը բոլոր ազատագունդ բանակի հետ: Երանելի Սահակն ուսման վարժութեամբ զբաղեցնում էր աւելի Մամիկոնեան մարդկանց, որոնց առաջինի անունն էր Վարդան, որ եւ Վարդկան էր կոչում: Նոյնպէս եւ ամէն մարդու աշխատում էր նա կրթել, հասկացնել ճշմարտութեան գիտութիւնը»²:

Եւ իրօ՛ք, «միջազգային» զարգացող իրադարձութիւնների ընթացքը ամենա-կարճ ժամանակում հաստատեց գրերի գիտով ծաւալուած ազգային գաղափա-րախօսութեան վճռական նշանակութիւնը հայ ժողովրդի ազատագրական գոյա-մարտում յանուն ազգային արժանապատուութեան ու դաւանանքի, լեզուի ու սե-փական քաղաքակրթութեան, ինքնութեան ու անկախութեան, որ 451 թուականին

¹ Անդ:
² Անդ:

պայթեց իբրեւ Վարդանանց պատերազմ՝ ընդդէմ Մասանեան Պարսկաստանի համաձուլողական նկրտումների սանձազերծման...:

Իսկ ժողովրդին լուսատրելու ու զրազէտ դարձնելու համար Հայաստանի գաւառներն են գործուղում Մաշտոցի ու Սահակ Պարթեւի շնորհագարդ աշա-կերտները, այդ թում եւ ինքը՝ Կորիւնը.

«Որ եւ սկսան իսկ սինք եկեղեցոյ միջամուխ ձեռամբ գգործ անտարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատա-րումն գիտութեան, բաւականս եւ առ ի գայլսն զեկուցանելոյ: Որոց կանոն եւ օրինակ զիրեանց անձանց արգասիս եղեալ, եւ պատուիրեալ կալ ի նմին կանոնի»:

Աշխարհաբար. «Եւ իսկապէս՝ եկեղեցու սիւներն (իմա՝ Սահակն ու Մաշտոցը) սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի անտարանիչների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գաւառներն ու տեղերը խումբ խումբ ուղարկել ճշմարտութեան աշակերտներին, գիտութեան մէջ կատարելութեան հաս-ցուածներին (խմբերը)՝ կարող (համարելով) ուրիշներին էլ սովորեցնելու: Նրանց համար կանոն եւ օրինակ դրեցին իրենց վաստակը եւ պատուիրեցին նոյն կանոնի մէջ մնալ»¹:

Բնականաբար՝ դեռ այն ժամանակ ծառայել է հայ մշակութային գործիչների, մասնատրապէս Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի առաջ, մի կարեւոր՝ ելակէտային խնդիր. մայրենի մատենագրութեան շուտափոյթ ստեղծման ու ծաղկման համար ինչի՞ց պէտք էր սկսել: Գրահամակարգը արդէն յղացուած եւ որոշուած էր. արդեօք սեփական երկերի հեղինակումի՞ց, թէ՞ քարգմանութիւնից: Անշուշտ քարգմանու-թիւնից, որովհետեւ նախ եւ առաջ հարկատու էր աշխարհայեացքային բնոյթի հիմնական աշխատութիւնները, որոնք ընդհանրական նշանակութիւն ունէին, քարգմանել՝ զնահատելով քրիստոնէական աշխարհայեացքի պրոպագանդումը հայ ժողովրդի մէջ միաժամանակ որպէս ազգովին ձուլումից պատնէշող հիմնական ազդակի, որովհետեւ պատմական այս ժամանակաշրջանում կրօնը միաեիւսում ու միաձուլում էր ազգութեան հետ: Հէնց այդպէս էլ գիտակցել են մեր դպրութեան հիմնադիրները, երբ Կորիւնը դարձեալ գրում է Մաշտոցի մասին.

«Եւ արդ գնոսա (իմա՝ «վրացիներին» - Լ.Խ.), որ յայնչափ ի մասնատուր եւ ի բաժանեալ լեզուացն, ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր (իմա՝ «Մաշտոցը» - Լ.Խ.)»:

Աշխարհաբար. «Եւ արդ՝ վրացիներին, որ այնքան առանձին եւ բաժանուած լեզուներից ժողովուեցին, մէկ աստուածային պատգամներով կապեց, դարձրեց մէկ ազգ, մէկ աստծու փառաբանիչներ»²:

Երկրորդ՝ իննց քարգմանական գրականութեան միջոցով հնարատու էր բացայայտել հայոց լեզուի ներքին հարստութիւնը իր բոլոր նրբերանգներով եւ յղկել այն՝ ժամանակի չափազանց կարճ միջոցում: Հարկ է նշել, որ Մաշտոցին եւ Սահակին ոգեւորում էր այն գիտակցութիւնը, որ իննց քարգմանական գրականու-թեան շնորհիւ պատմական ամենակարճ ժամանակամիջոցում կը կարողանային արդէն կազմաւորուած եւ ձեւաւորուած մի ճոխ մատենագրութիւն ասանդել յետա-

¹ Անդ:
² Անդ, էջ 64-65:

գայ սերունդներին: Նրանց համար մայրենի լեզուի գրականացումն ու ուսուցումը հրատապ նշանակություն ունի նաև այն տեսակետից, որ հայ մանուկները ոչ միայն առեղի հեշտ եւ հիմնատուր ձեռով, անհամեմատ առաւել խորը եւ ընդգրկման լայն ծիրով կը կարողանային ընկալել եւ իրացնել մարդկային քաղաքակրթութեան ու գիտութեան նուաճումները տուեալ փուլում եւ համընթաց քայլել հասարակական մտքի զարգացման ընդհանուր առաջընթացի հետ, այլեւ շնորհիւ դրանց կ'ունենային պատմութեան արեւարալից ու մղձաւանջային բաւիղներում չմոլորուելու եւ լուսատուր հանգրուաներ հասնելու հոգու մշտական ջանք...:

Երբորդ՝ հենց տեսականօրէն մշակուած եւ համընդհանուր ճանաչում գտած աստուածաբանական, փիլիսոփայական, տրամաբանական, ճարտասանական, քերականական եւ այլ գիտակարգերի քարգմանութեամբ արագօրէն կարելի էր ստեղծել նաեւ Հայեցի գիտութիւն:

Չորորդ՝ քարգմանական գրականութեան շնորհիւ, վերջին հաշուով, հնարատու էր սեփական բեղմնատուր գրականութիւն հեղինակել՝ արմատաւորելով ինչպէս գրական սեռերը հայ մատենագրութեան մէջ, այնպէս եւ ընդլայնելով հայ հեղինակների իմացութեան տեսադաշտն ընհանրապէս:

Ի՞նչ կը լինէր մեր մատենագրութեան վիճակը, եթէ Մաշտոցն ու Մահակը իրենց տաղանդաշատ աշակերտներով սահմանափակուէին սոսկ հեղինակային երկերի ստեղծմամբ: Բնականաբար՝ շատ աղքատիկ ու լղարիկ մատենագրութիւն կ'ունենայինք՝ տեղայնական բնոյթի, որը չէր կատարի այն վիթխարի դերը, որ նա կատարեց հենց առաջացման իսկ օրից:

Բայց հայոց հնամենի լեզուն, դառնալով մատենագրութեան լեզու, նոր մակարդակի բարձրացրեց հայ ժողովրդի ինքնաճանաչման գիտակցութիւնը՝ խորացնելով եւ ընդլայնելով իր արժանատութեան ըմբռնումը ազգերի բարդ փոխյարաբերութիւններում: Դա նաեւ քաղաքական նոր կողմնորոշում էր՝ Արշակունեաց պարթեական Հայաստանի կտրուկ հակադրում Մասանեան Պարսկաստանի համաձուլողական նկրտումների դէմ, ազգային ինքնուրոյնութեան եւ անկախութեան զաղափարախօսութեան որդեգրում, որ ինքնըստինքեան եւ օրինակաբար էր հասկացում:

Մէկընդմիշտ խզելով մշակութային-կրօնական կապերը Մասանեան Պարսկաստանի հետ, Արշակունեաց Հայաստանը իր դարպասները լայն բացեց բիւզանդական քաղաքակրթութեան առաջ, բայց երբէք չհայնացաւ նրա հետ: Այս առնչութեամբ ակադ. Յ. Մանանդեանը իրաւացիօրէն նշում կ'անար. «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան իբրեւ պետական կրօն, անշուշտ, խիստ մեծ կարեւորութիւն ունեցող փաստ է: Հայաստանն այնուհետեւ սերտ յարաբերութեամբ կապուեց Հռոմէական կայսրութեան հետ ոչ միայն քաղաքականապէս, այլեւ կուլտուրապէս»¹:

Բայց եւ հայ քաղաքակրթութեան պատմութեան տուեալ դարաշրջանի համար ակներեւ է նաեւ որոշակի միտում՝ տարբերուելու եւ ինքնուրոյնութիւն պահպանելու, սեփական ուղիով ընթանալու: Դրա ապացոյցը տուել է, առաջին հերթին, հայ լուսատուրական Եկեղեցին իր գործունէութեան ամբողջ ընթացքում՝ յանգնելով այն բացարձակ իրողութեան, որ յետագայում ձեռք է բերել եւ դաւանանքով, եւ լեզուով,

¹ Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, Կ. Ք. մաս Ա, Երեւան, 1978, էջ 133:

եւ ձեւերով ինքնատիպութիւն եւ անկախութիւն: Միանգամայն ճիշդ է նկատուած հայագիտութեան մէջ, որ «*հայկական քաղաքակրթութիւնը բիւզանդականի պարզ արտացոլումը չէ...*: Հայերն անտարակոյս կրել են Բիւզանդիայի ազդեցութիւնը, սակայն նրանք ամէն տեսակետից պահպանել են իրենց առանձնայատուկ բնոյթը»¹:

Միաժամանակ հայկական քաղաքակրթութեան ու մշակոյթի դերը եւ բարերար ազդեցութիւնը Կովկասում, իր հերթին, եղել է լայնաշառաւիղ...:

«Մեւան» հանդէս, Ա. տարի,
1982, Նոյ. 1, Թիւ 12, «Նոր
օր», Մայիս 6, 1983:

Թարգմանչազ տօնի առթիւ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՉԵՌԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱՐԾԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՐ

Ազգային հպարտութիւն ներշնչող հայագիտական խոշորագոյն կենտրոնը՝ Երեւանի Մաշտոցի անուան Հին Չեռագրերի Գիտահետազոտական ինստիտուտ - Մատենադարանը նաեւ իր Յուցասրահով ազգաճանաչման աշխարհասփիտ անլեռնի կայան է հանդիսացել տասնամեակներ շարունակ, որում ցուցադրուած հայ իմացական հանճարի ձեռագրանմուշների առաջ խորին ակնածանքով ու հիացաբար իրենց գլուխն են խոնարհել տարբեր երկրների վարչապետներ, քաղաւորներ, հասարակական-պետական միջազգային հեղինակութիւն ունեցող գործիչներ, բոլոր մայր ցամաքների Մոսկուայում եւ Երեւանում հաւատարմագրուած դեսպաններ, աշխարհի տարբեր հանրապետութիւններից ժամանած Գիտութիւնների Ակադեմիաների պատկառելի պատուիրակութիւններ եւ այլն: Պատուաւոր հիւրերի Յուշամատենանում գրանցած իրենց տպաւորութիւնները ամենաստոյգ վկայութիւններն են Մատենադարանի միջազգային դիրքի ու հեղինակութեան, որ նա ձեռք է բերել Հայաստանի հայագէտ սերունդների արդիւնաշատ եւ շնորհակալ վաստակով:

Բաւական է թոցիկ ակնարկով թերթատել Մաշտոցի անուան Մատենադարանի Այցելումների Յուշամատենանը, որպէսզի ակնբախ դառնայ Չեռագրական այս պալատի առիւթնող հմայքն ու առթած խորին պատկառանքը ամէն մի կրթուած մարդու հոգում՝ ո՞ր ազգի էլ պատկանալիս լինի նա:

Մկսենք մերազգի մեծամուն գիտնականներից, աշխարհածանօթ ակադեմիկոս Լեւոն Օրբելու՝ Մատենադարանի Տպաւորութիւնների մատենանում թողած յիշատակութիւնից. «Անհնարին է գլուխ չխոնարհել հարազատ հայ ժողովրդի հին եւ միջնադարեան մշակոյթի առջեւ, - յայտարարում է վաստակաշատ գիտնականը:-

¹ Ա. Մեյլ, Հայագիտական հետազոտութիւններ, Երեւան, 1978, էջ 590:

Անհնարին է չհպարտանալ նրա հոյակապ պատմական անցեալով: Անհնարին է չուրախանալ այն բանի համար, որ իմ ժամանակակիցները այսպիսի սիրով ու աւիւնով են ձեռնարկել այս քանկարժէք նիւթերի ուսումնասիրութիւնը»:

Լեւ մտաւորական Ռ. Դանիլեւսկին հիացական յափշտակութեամբ բացականչում է. «Լինել Երեւանում եւ չտեսնել Մատենադարանը՝ դա նոյնն է, ինչ որ լինել Հոռոմում եւ չտեսնել պապին: Բայց այնքան էլ մեծ դժբախտութիւն չէ Հոռոմից մեկնել առանց պապին տեսնելու: Իսկ Մատենադարանը չտեսնելն անհնարին է...»:

Հարկ է արձանագրել, որ հայ ժողովրդի նուաճումներից ոչ մի իրադարձութիւն կամ փաստ այնպէս չի աշխարհասփռել նրա քաղաքակրթական համբար իմացախոհական հանճարի ճառագումով, ինչպէս Չեռագրագիտական այս հաստատութիւնը իր դեռես ոչ-վաղուցույ փառահեղ անցեալում:

Այսպէս, ակադեմիկոս Տաղէն Չեռագրական այս պալատի հարստութեամբ հմայուած՝ հայ ժողովրդին բնութագրում է «կուլտուրական ժողովուրդների առաջին շարքերում»։ «Հայաստանի Մատենադարանն անջնջելի տպաւորութիւն է թողնում, գրել է նա Յուշամատենում: Կանգնած ես ամենակուլտուրական պատմական մի ժողովրդի հանդիման, որը դասական հնադարից ընդհուպ մինչեւ ներկայ ժամանակներս դասուել է եւ դասում է կուլտուրական ազգերի առաջին շարքերում: Եւ որքան ուրախալի է, որ ժամանակակից հայ սերունդը այսպիսի սիրով ու հոգատարութեամբ է վերաբերում իր մեծ անցեալին»:

Համաշխարհային գիտական հասարակայնութեան համար զաղտնիք չէ, որ հայ մատենագրութիւնը միջազգային նշանակութիւն ունի այն իրողութեան շնորհիւ, որ հէնց իր սկզբնատրման ժամանակներից այնպիսի բնագրային աղբիւրներ է քարգմանել դասական հայերէնի, որոնց բնագրերը ասորերէնով, յունարէնով, լատիներէնով, պարսկերէնով, արաբերէնով, հին ֆրանսերէնով անհետ կորել են, եւ սակայն պահպանուել միայն գրաբար քարգմանութիւններով: Բացի դրանից, հայ մատենագիրները իրենց հեղինակած երկերում սկսած հինգերորդ դարից եւ աւելի վաղ ժամանակներից քարգմանութիւնները տեղեկութիւններ են հաղորդում ոչ միայն պատմական դէպքերի ու իրադարձութիւնների մասին, այլեւ գոյատեւած, ինչպէս եւ պատմական ասպարէզից անհետացած ժողովուրդների ու պետութիւնների վերաբերեալ: Աւելին. խոր անցեալից առ այսօր վերապրող ժողովուրդներ կան, որոնք առեւտրական տարանցիկ յարաբերութիւնների ու պատմական առնչութիւնների մէջ են գտնուել հայ ժողովրդի հետ, բայց եւ այնպէս միայն մեր դարի առաջին տասնամեակներին են գիր ու գրականութիւն ձեռք բերել: Վերջիններիս հետաքրքրութիւնն ու շահագրգռութիւնը այնքան մեծ է հայ մատենագրութեան, յատկապէս հայկական ձեռագրական աղբիւրների նկատմամբ, որ իրենց անցեալի ամբողջ պատմութիւնը վերարտադրելու համար ուրիշ միջոց չունեն, բացի հայ ձեռագրական հաւաստումներից ղիմելուց:

Այդ իսկ նկատառումով, ակադեմիկոս Եակոբովսկին, ընդգծելով հայկական ձեռագրերի միջազգային նշանակութիւնը՝ նրանցում պարփակուած արժանահաւատ տեղեկութիւնների համար նաեւ պատմական այլ ժողովուրդների վերաբերեալ, արձանագրում է. «Մատենադարանը ամենակուլտուրական ժողովուրդներից մէկի պատմութեան վերաբերեալ տեղեկութիւնների իսկական գմայելի գանձարան է: Միայն կարելի է նախանձել այն մասնագէտներին, որոնք կարող են այստեղ գտնել

ամենահարուստ նիւթեր ինչպէս Հայաստանի, այնպէս էլ նրան սահմանակից երկրների մասին»:

Ակադեմիկոս Պանկրատովան «երախտագիտական խոր զգացմունք» է արտայայտում հայ ժողովրդին՝ նրա ձեռագրական այս գոհարային հարստութեան համար, որով, անտարակոյս, ճանաչում է հայ ժողովրդի ակնառու նպաստը համաշխարհային քաղաքակրթութեան մէջ: Ահա՛ նրա խօսքերը. «Որպէս պատմաբան, որի համար հին ձեռագիրը մարդկութեան առաջընթաց շարժումն ապացուցող մի վեհագոյն գանձ է, արտայայտում եմ իմ երախտագիտութեան խոր զգացմունքը հայ տաղանդաւոր ժողովրդին՝ համաշխարհային մշակոյթի գանձարանում նրա կատարած հոյակապ ներդրման համար»:

Մոսկուայի եւ Պետրոգրադի պատմաբանների պատուիրակութեան անունից ակադեմիկոս Ե. Կոսմինսկին այսպիսի սրտառու զնահատական է գրանցել Յուշամատենում. «Մենք, Մոսկուայի եւ Լենինգրադի պատմաբաններս, խոր յուզմունքով եւ երջանիկ զգացմամբ դիտեցինք հայ հնագոյն, հարուստ եւ հոյակապ մշակոյթի այս բացառիկ Յուշարձանը... նրա գիտութեան, նրա քերթութեան, նրա արուեստի հոյակապ գանձարանը: Մեր սրտերը բարախեցին սիրոյ եւ յարգանքի խորը զգացմունքներով՝ եղբայրական այս ժողովրդի նկատմամբ, որը կարողացել է կերտել եւ պահպանել մշակոյթի այսպիսի հոյակապ յուշարձաններ: Ամենամեծ երջանակներն ենք յայտնում, որպէսզի դրանք հրատարակուեն եւ դառնան մատչելի բոլոր նրանց համար, ում որ թանկ է հայ ժողովրդի ներկան ու անցեալը...»:

Աշխարհածանօթ ձեռագրագետ պատմաբան ակադեմիկոս Դ. Լիխաչեւը յուշագրել է. «Չարգացած գրի ու գրականութեան յուշարձանները իւրաքանչիւր ժողովրդի ամենաարժէքաւոր մշակութային նուաճումներն են: Ժողովրդի գրականութեան հնագոյն յուշարձանները նրա ամենամեծ սրբութիւնն են: Մատենադարանը՝ հայ ժողովրդի ազգային տաճարն է, մի տաճար, որին իւրաքանչիւր իսկական բանասէր վերաբերում է ոչ միայն մեծագոյն յարգանքով ու հիացմունքով, այլեւ անկեղծ եւ խորը պատկառանքով»:

Իսկ երբեմնի Խորհրդային Միութեան արուեստի ներկայացուցիչները, զմայլած՝ ձեռագրերում սփռուած հայ մանրանկարչութեան զգլխիկ նմուշներից, յուշագրել են այսպէս. «... Այստեղ ապրում է հայ ժողովրդի մեծ մշակոյթը: 1500 տարի ի վեր պահպանում է իր գեղարուեստական հմայքը եւ գերում է մեզ շքեղ գեղագրութեամբ, գոյների ուժով եւ թարմութեամբ ու գիրք կազմելու վարպետութեամբ: ԹՈՂ ԿԵՅՅԷ՛ ԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐՂԸ, ՈՐԸ ՊԱՀՊԱՆԵԼ Է ԱՅՍՊԻՍԻ ԱՐԺԷԶՆԵՐ...»:

Անգլիացի հանրածանօթ հասարակական գործիչ եւ մտաւորական, Քենտըրբերիի տաճարի աւագերէց Հիլլետ Ջոնսոնը դեռես 1945 թուականին կատարած իր այցի ժամանակ թողել է հետեւեալ գրութիւնը Յուշամատենում. «Խոր ուշադրութեամբ ես հետեւել եմ համաշխարհային հռչակ վայելող այս թանգարան-մատենադարանի լուսապայծառ պատմութեանը: Ամբողջ քաղաքակիրք աշխարհի գիտնականները չափազանց երախտապարտ են հայ գիտնականներին այն ջերմ հոգատարութեան համար, որ ցուցաբերում են նրանք այս համաշխարհային գանձարանի նկատմամբ»:

Հարաւարական գրողների պատուիրակութիւնը հայկական ձեռագրական յուշարձանները արժէքաւորում են «համամարդկային մշակոյթի համար» ունեցած

բացառիկ կարեւորութեան տեսակետից. «Մեզ հիացնում է այսպիսի գրաւոր եւ նկարչական գործեր ստեղծող ժողովուրդը,- յուշագրում են նրանք: - Մենք ուրախ ենք, որ այսպէս լաւ են պահպանուում հին հայկական մշակոյթի յուշարձանները, որոնք մեծ նշանակութիւն ունեն համամարդկային մշակոյթի համար»:

Չիս լրագրուի էվա Ելինկովան Մատենադարանի ձեռագրական յուշարձանների կախարդի տպաւորութեան տակ հետեւեալ խորհրդածութիւնն է անում մինչեւ իսկ հայ ժողովրդի ճակատագրի մասին. «Մարդը միայն ներկայ չունի,- յիշատակագրել է նա:- Մարդկութիւնն ունի իր հետեւում անցեալ, իսկ առջեւում՝ ապագայ: Եթէ հայ ժողովրդի անցեալն այդքան հարուստ է եղել, նրա ապագան կը լինի ո՛չ պակաս նշանակալի...»:

Հունգարացի գրող Լասլո Էրդոշին ապշեցրել է հայկական ձեռագրերի բազմաքանակութիւնը եւ նրանց երկարակեցութեան նկատմամբ ցուցաբերուած բացառիկ խնամքն ու հոգատարութիւնը, ընդգծելով հայ ժողովրդի արտակարգ դպրապաշտութիւնն ու գրասիրութիւնը. «Այստեղ երեւում է,- հաւաստում է հունգարացի յուշագիրը,- որ ճակատագրի քմահաճոյքով աշխարհի տարբեր երկրներում սփռուած ժողովուրդը կարողացել է հաւաքել եւ պահպանել իր մշակոյթի գանձերն աւելի լաւ, քան առաւել բախտաւոր ժողովուրդները»:

Մինչեւ իսկ հայ ժողովրդի ստեղծած ձեռագրական աղբիւրների հարստութիւնը համեմատութեան մէջ է դրում այնպիսի հին եւ մեծ քաղաքակրթութիւն ունեցող ժողովրդի ձեռագրական յուշարձանների հետ, ինչպիսին չինականն է: Ոչ այլ որ, քան Չինաստանի Ժողովրդական հանրապետութեան մշակութային գործիչների պատուիրակութեան անունից գրող Մաո Դունը յուշագրել է Մատենադարանի Տպաւորութիւնների մատենանում. «... Մենք հիացած ենք Հայաստանի հին մշակոյթի փառքով...: Այսպիսի հին ձեռագրեր Չինաստանում շատ քիչ կան»:

Նոյնն է հաւաստում նաեւ Կոպենհագէնի համալսարանի Փրոֆեսոր Ալբերտ Օլզերը՝ արձանագրելով. «Ես զարմանքով եւ հիացմունքով տեսայ, թէ հնագոյն մշակոյթի որքան շատ գանձեր են պահպանուել այստեղ, Հայաստանում...: Յուսով եմ, որ այս գանձերն ապագայում կը դառնան աշխարհի միւս երկրների գիտնականների ուսումնասիրութեան առարկան»:

Նորվեգական պատուիրակութեան մշակութային եւ հասարակական գործիչ Հարալդ Հալսը հաւաստում է. «Նորվեգական մշակոյթի պատուիրակութիւնը, կուլտուրայի օրրանի մօտ հաւաքուած, իր անսահման հիացմունքն է արտայայտում այն ամէնի համար, ինչ որ տեսաւ այստեղ, Մատենադարանում»:

Ինչպէս միանգամայն արդարացի է դիտուած յուշագրերում, ժողովուրդների մեծութիւնը բնաւ չի չափում նրանց թուական քանակով, ո՛չ էլ ռազմավարութիւններով ու աշխարհակալութիւններով, այլ՝ մշակութային-քաղաքակրթական այն ներդրումով, որ այս կամ այն ժողովուրդը կարողացել է կատարել համաշխարհային քաղաքակրթութեան մէջ: Համաշխարհային պատմութեան տարեգրութեան մէջ միայն հպանցիկ են յիշատակուում երբեմնի հզօր եւ աշխարհաստան պետութիւնները իրենց բազմաեւ թանկանքով ու ժողովուրդներով, որոնց մասին միջին քաղաքացին աշխարհում այսօր աղօտ գաղափար անգամ չունի...: Այս իմաստով չափազանց բնութագրական է Մատենադարանի Տպաւորութիւնների Մատենանում երբեմնի Արեւմտեան Գերմանիայի Հեռագրական գործակալութեան պաշտօնական ներկայացուցչի յուշագրութիւնը, որը եւ աշխարհով մէկ ձայնասփռուել է Մատենադարանի մասին. «Հայաստանում ինձ վրայ մեծ տպաւորութիւն

բողեց Մատենադարանը: Այստեղ եւ տեսայ հայ ժողովրդի մեծահարուստ մշակոյթի կենդանի վկաները: ԱՅՊՊԻՍԻ ՄՇԱԿՈՅԹ ՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՉԻ ԿԱՐԵԼԻ ՓՈՔՐ ԱՍԵԼ...»:

«ՈՎ ԳԻՏԷ ՀԱՍՄԱՐՎԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՍՊԱՐԷՉՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՏՈՒՑԱՅ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՆՐԱ ԼԵՉՈՒՆ ՉԻ ԲՈՆԻ «ՓՈՔՐ» ԲԱՌԸ ԱՐՏԱՍԱՆԵԼ: ԻՐԱՎԱՆՉԻՒՐ ՄԱՐԳ, ՈՎ ԻՐԵՆ ԿՐԹՈՒԱՅ Է ՀԱՍԱՐՈՒՄ ՊԱՐՏԱՌՐ Է ԳԼԽԱՐԿԸ ՀԱՆԵԼ ԱՅՍՊՊԻՍԻ ՄՇԱԿՈՅԹ ՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌՋԵՒ: ԱՅՍ ՀԱՍԵՍՏ, ԲԱՅՅ ԻՍԱՍ-ՏՈՒՆ ԺՈՂՈՎՈՒՐԸ, ՈՐԸ ՄՇԱՊԷՍ ԵՐԻՏԱՍԱՐԳ Է ՄԱՅՅԵԼ, ԱՇԽԱՐՎԻՆ ՏԱԼԻՍ Է ԱՅՆՊԻՍԻ ՎԻԹԵԱՐԻ ԴԷՄՔԵՐ, ԻՆՉՊԷՍ ՏԱԼԻՍ ԵՆ ՄԵՇ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ...»:

Ահա «մեծ» եւ «փոքր» ժողովուրդների այն իրական չափանիշը, որն ի լուր աշխարհի յայտարարել է եւրոպացի այս լուսամիտ մտատրականը նաեւ Եւրոպայի ռադիկալայնով...:

Գիտական բազմապիսի եւ բազմաթիւ աշխատութիւնների ստեղծման համար արժանահաւատ աղբիւր եւ հիմք են հանդիսանում Մատենադարանի ձեռագրական յուշարձանները ոչ միայն հայագիտական հարցերի մեկնաբանման համար, այլեւ կովկասագիտութեան, բիւզանդագիտութեան, ասորագիտութեան, իրանագիտութեան, արաբագիտութեան պոքրեմների լուսաբանման համար: Այստեղ են գործուում, ձեռագրագիտական ուսումնասիրութիւնների նպատակով, ոչ միայն երբեմնի Խորհրդային Միութեան տարբեր հանրապետութիւններից, այլեւ Միացեալ Նահանգներից, Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Գերմանիայից եւ այլ երկրներից գիտնականներ, փրոֆեսորներ եւ ակադեմիկոսներ:

Դիցուք, երբեմնի Գերմանիայի Դեմոկրատական հանրապետութեան գիտութիւնների ակադեմիայի մի խումբ փրոֆեսորներ իրենց գոհունակութիւնն են յայտնում այն բանի համար, որ Մատենադարանի յունարէն ձեռագրերը նպաստել են իրենց գիտական ուսումնասիրութիւններում բնագրագիտական կնճռոտ հարցեր լուծելու առումով. «Չորս օր եղանք Երեւանում եւ Գերմանական գիտութիւնների ակադեմիայի յանձնարարութեամբ ուսումնասիրեցինք Մատենադարանի գանձերը, մասնաւորապէս յունարէն ձեռագրերը,- հաւաստում են նրանք:- Մենք մեծ երախտագիտութեամբ ենք նշում մեզ ցոյց տրուած մեծ բարեկամութիւնը: Մենք հիացած ենք հայ ժողովրդի մեծ պատմութեամբ եւ նրա հոգեւոր մշակոյթով, որոնք ոգեշնչում են հայ գիտնականներին: Յուսով ենք, որ սկսուած միացեալ աշխատանքը կը շարունակուի նաեւ առաջիկայում ու կը տայ իր ցանկալի արդիւնքները»:

Իսկ Գերմանիայի Դեմոկրատական հանրապետութեան կառավարական պատուիրակութեան անունից Մինխտրների Մովետի նախագահի տեղակալ Հերցերտ Վայցը յուշագրել է խոր յուզականութեամբ. «ՄԵՆՔ ԳՏՆԻՈՒՄ ԵՆՔ ՄԱՐԿՎԱՅԻՆ ՄՏԱՌՈՐ ՀՉՕՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՍՄՈՒԹԵԱՆ ԽՈՐ ՏՊԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ...»:

Հնդկաստանի նման մեծ երկրի առաջնորդ, պրեմիեր-մինիստր Ինդիրա Գանդին Յուշամատենանում արձանագրել է. «Պատմութիւնը միշտ հիասքանչ է: Մեզ համար յատկապէս հետաքրքիր էր վերջիջել Հայաստանի եւ Հնդկաստանի հնադարեան կապերը: Մատենադարանն ունի հին ձեռագրերի հիանալի հաւաքածո: Ձեռագրերը ցուցադրուած են գերազանց, իսկ մատչելի բացատրութիւնը տրուած է հասկանալի հպարտութեամբ»: Իսկ հնդկական կառավարութեան

Գրասենեակի պետ Փ. Հաքսարը այսպես է պատճառաբանում հնդիկների հետաքրքրությունը հայոց Մատենադարանի նկատմամբ. «Դեռես մանկությունից ձգտել եմ ու երազել այցելել Հայաստան եւ տեսնել նրա պատմական մայրաքաղաք Երեւանը: Ինչո՞ւ: Որովհետեւ հնդկական պատմության եւ քաղաքակրթության որոշ մասը իր խոր արմատներով շատ սերտ կապուած է Հայաստանի հետ...: Ես հիացած եմ տեսնելով այս հրաշալի Ինստիտուտը եւ նրա ձեռագրերի հաւաքածուին: ԵՍ ՄԻ ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՅ...: Խնդրում եմ շարունակէ՛ք ձեր շնորհակալ աշխատանքը»:

Մոսկուայում հաւատարմագրուած Աֆրիկայի, Եւրոպայի եւ Ասիայի դիւանագիտական ներկայացուցիչների՝ դեսպանների պատուիրակութեան անունից Այցելուների Յուշամատենում Տախլանդի արտակարգ եւ լիազօր դեսպան Յուաղ Լյուտիլը յայտարարում է. «Մոսկուայի դիւանագիտական կորպուսի այցելութեան առիթով հաճոյքն ունեմ իմ բարձր գնահատականը արտայայտելու հայ ղեկավարներին այս լաւ կազմակերպուած ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի համար: Այս Ինստիտուտը մեծապէս նպաստել է գիտութեանը եւ հասել համաշխարհային փառքի: Մենք բարձր ենք գնահատում Ինստիտուտի աշխատանքը ձեռագրերի գիտական պահպանման, ուսումնասիրման եւ հրատարակման գործում: Մենք ցանկանում ենք նոր յաջողութիւններ Ինստիտուտին եւ նրա ղեկավարներին»:

Իսկ նոյն պատուիրակութեան Քենիայի դեսպան Ժ. Ալանգատը լրացնում է. «Մատենադարան այցելեցինք Աֆրիկայի, Եւրոպայի եւ Ասիայի տարբեր երկրները ներկայացնող Մոսկուայում հաւատարմագրուած դեսպանների հետ: Մեզ վրայ խոր տպաւորութիւն թողեց հնագոյն մշակոյթի իմացութիւնների հսկայական ամբարանը: Մենք իսկապէս հիացած ենք, որ եղանք այստեղ եւ մեր ամենարտագին շնորհատրանքներն ենք մատուցում այդ իմացութիւնները ապագայ սերունդներին փոխանցելու վրայ թափած մեծ ջանքերի համար»:

Ֆիլիպինների սենատի նախագահ Հիլ Դ. Պոյատը յուշագրել է. «Մատենադարանը պարունակում է հայկական քաղաքակրթութեան սկզբնաւորումն ու զարգացումը վկայող անգնահատելի փաստաթղթեր: ՍԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԱԿԱՆ Է ՆՐԱՆ ԱՅԴ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՔԱՆԻ ՈՐ ԱՌԱՆՑ ԴՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՋՕՐԷԱԿԱՆՆԵՐԸ ԱՆԿԱՏԱՐ ԿԸ ԼԻՆԷԻՆ: Հայկական կառավարութիւնը մեծ ծառայութիւն է մատուցել Մարդկութեանը»:

Մատենադարանի հմայիչ օրինակը, իբրեւ Ձեռագրական պալատի՝ մեծ ակնածանքով է համակել նաեւ Միացեալ Նահանգների անմիջական հարեւան երկրի՝ Մեքսիկայի մշակութային գործիչների պատուիրակութեանը, որը այսպիսի խոստովանութիւն է թողել Մատենադարանի Յուշամատենում. «Մեզ՝ մեքսիկացիներին համար, որոնք սիրում են իրենց աւանդութիւններն ու մշակութային ժառանգութիւնը, ԱՅՍ ՀՈՅԱԿԱՊ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՅ ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻՔ ՄԵՐ ԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՓԱՆԻՇԸ, ՈՐ ՄԵՆՔ ՉԵՆՆԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀԻՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՀԱՇՈՒՈՎ, ՈՐՊԵՍՁԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԻՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՅՈՅՑ ՏԱՆՔ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԸ, ՈՐԻ ՆՄԱՆԸ ՄԵՆՔ ԱՅՍՕՐ ՏԵՍԱՆՔ ԱՅՍԵՂ, ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ»...:

Կը կամենայինք հայ մշակոյթի կաճող հանդիսացող Մատենադարանի մասին մեր այս հակիրճ հաղորդումը եզրափակել համաշխարհային գրողի համբարտի

արժանացած հայ ժողովրդի արժանատր գաւակ Ուիլեամ Մարտիանի յուշագրութեամբ, որ նա թողել է դեռես 1935 թուականին Մատենադարան կատարած իր առաջին այցելութեան ժամանակ՝ ազգային հպարտութեան ու նաեւ չքմեղանքի այսպիսի տողեր գրելով. «Այնքան հարուստ եմ Մատենադարանի այս ձեռագիր գանձերը, արձակն ու չափածոն...: ԽՈՐԱՊԷՍ ԱՄԱՉՈՒՄ ԵՄ, ՈՐ ՉԵՄ ԿԱՐՈՂ ԻՄ ՍԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՈՎ ԿԱՐԴԱԼ... ԹԵՐԵԻՍ ԿԸ ԹԱՐԳՄԱՆԷԻ ՄԷԿԵՐԿՈՒՍԸ ԱՆԳԼԵՐԷՆ...»:

Բայց մեծանուն գրողը իր բազմաթեղուն եւ տաղանդաշատ գրական վաստակով ամերիկեան գրականութեանը այնքան մեծ ծառայութիւն մատուցեց՝ փառաբանելով աշխարհով մէկ իրեն ծնող ժողովրդին՝ ազգային առաջնութիւնների ու բարեմասնութիւնների տարփողմամբ, որ նախնիների գրական լեզուն չիմանալը եւ արձակ ու չափածոյ ձեռագրական գոհարների թարգմանութեան թերացումը իր կողմից միանգամայն «ներելի» է ... վաստակած յիրաւի՝ իր այդ մեծ արդարացմամբ:

Հայաստանի գիտնականները, հարկ է նշել, անմահն Մեսրոպ Մաշտոցի ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾԻ՝ ձեռագրական գանձերում ամփոփուած Հայ Գրի ու Դպրութեան հոչակը աշխարհով մէկ տարածելու շնորհակալ պարտաւորութիւնը վերցրել են իրենց վրայ աւելի քան եօթ տասնամեակներ եւ այն կատարել են պատուով ու ազգային հպարտանքի բարձր գիտակցականութեամբ, միաժամանակ սէր եւ ակնածանք տածելով՝ հայ դպրութեան անցեալի մեծ ժառանգութեան երախտաւորների նկատմամբ... ընդամին՝ այս տարապայման ու վերին աստիճանի դժուարին՝ նիւթական ծանր եւ անստոյգ իրավիճակում էլ դարձեալ շարունակում են ծառայել Մաշտոցի սուրբ գործին...:

Ներկայիս ստեղծուած տխուր իրականութեան այս խորքի վրայ, բարձրաձայն խոստովանենք, շնորհապարտ զգացումներով է լցում հայ ժողովրդի սիրտը, երբ Ազգային Դպրութեան եւ Մշակոյթի մեծանուն Բարերար երջանկայիշատակ Ալէք Մանուկեանի արժանատր Դուստրը՝ Լուիզ-Սիմոն Մանուկեանը իր փրկարար աջակցութիւնն ու հովանին է տարածել նաեւ Մաշտոցի անունը կրող Հին Ձեռագրերի Գիտա-հետազօտական Ինստիտուտին՝ Մատենադարանին, որ հայ ժողովրդի ԱԶԳԱՅԻՆ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆՆ Է ՎԱԻԵՐԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՄԲ՝ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՈՎ, ԱՆՎԵՐԱՊԱՀՕՐԷՆ:

Մատենադարանին զօրավիզ կանգնելը եւ այն աչքի լոյսի պէս պահպանելը համապետական եւ համազգային հոգածութեան կարեւորութիւն եւ հրատապութիւն ունի՝ նա՛մանաւանդ Հայաստանի գիտական ու մշակոյթային կենտրոնների համար տարապայմանօրէն ստեղծուած ճգնաժամային եւ անձուկ այս օրերին...:

«Նոր օր», մայիս 6, 1983, «Մասիս»,
Յունիս 4, 1983:

ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա. Ընդհանուր բնութագիր¹:

Դպրութիւնը, լայն առումով, իրաքանչիւր ժողովրդի գրաւոր մշակոյթն է՝ սկսած ամենավաղնջական ժամանակներից. գրաւոր ընդհանուր մշակոյթ, որում պարփակուած են նաեւ գիտա-ուսումնական բոլոր այն բնագաւառները, որ հետագօտել են տուեալ ժողովրդի մատենագրութեան մէջ: Խօսել մի ժողովրդի դպրութեան մասին, նշանակում է շարադրել այդ ժողովրդի գրաւոր արտադրանքի առաջացման ու զարգացման պատմութիւնը՝ սկզբնաղբիւրների բնութագրմամբ, յարակցելով այն ուսումնագիտական կենտրոնների պատմութեանը, որոնցում կազմակերպւում է իրացում են անցեալի մտաւոր հարստութիւնն ու ժառանգութիւնը՝ մի կողմից, միւս կողմից՝ հեղինակւում ու ստեղծագործւում են նորերը: Հետևաբար՝ դպրութեան տեսութիւնը ընդգրկում է իր մէջ ինչպէս հայ գրաւոր մշակոյթի կարեւորագոյն յուշարձանների նկարագրութիւնն ու բնութագրումը, գրչութեան արուեստն ու բնագրագիտութիւնը, այնպէս էլ ուսումնագիտական կենտրոնների առաջացման ու զարգացման պատմութիւնը, որոնցում ծնունդ են առել մատենագրական սկզբնաղբիւրները՝ իրենց թէ՛ թարգմանական եւ թէ՛ հեղինակային համզամանքներով: Իսկ այդ նշանակում է, որ դպրութեան տեսութեամբ ներկայացւում է հայ ժողովրդի հասարակական-գիտական իմացութիւնը իր գրաւոր արտադրանքով՝ պատմական որոշ կամ յարաձիգ ժամանակաշրջանի ընդգրկումով: Ըստ որում հասարակական-գիտական իմացութիւնը որեւէ ժողովրդի կարող է, պատմական առանձին ժամանակաշրջանում, դրսեւորել օտար կամ մայրենի լեզուներով, ըստ այդմ էլ դպրութիւնը կարող է լինել այլալեզու կամ մայրենի: Տուեալ դէպքում սոյն Յատուկ դասընթացքը մայրենի լեզուով ստեղծուած դպրութեան տեսութիւնն է՝ Ե.-ԺԶ. դարերի վերաբերեալ:

Վերն ասուածից բխում է, որ դպրութեան տեսութիւնը սերտօրէն աղերսւում է ինչպէս մատենագրութեանը, գրչութեան արուեստին ու բնագրագիտութեանը, այնպէս էլ մատենագիտութեանը, սակայն չի նոյնանում նրանց հետ: Նա հաւասարապէս աղերսւում է ուսումնագիտական կենտրոնների առաջացման եւ նրանց ներքին կեանքի ու մանկավարժական հարցերի լուսաբանման պատմութեանը, բայց եւ չի նոյնանում մանկավարժութեան պատմութեան հետ: Դպրութեան տեսութիւնը իր

¹ «ԽՍՀՄ. Յաջորդական յօդուածներով պիտի հրատարակենք առանձին հատուածներ բանասիրական գիտութիւնների Դոկտոր, Փրոֆեսօր Լեւոն Գեորգի Խաչերեանի՝ «Հայ դպրութեան տեսութիւնն ու աղբիւրագիտութիւնը» թեմայով կարգացած Յատուկ դասընթացքէն՝ Երեւանի պետական համալսարանի եւ Կիբովականի Մանկավարժական ինստիտուտի պատմութեան բաժանմունքի ուսանողութեան համար, որոշ վերանայումով ու լրացումներով իր իսկ՝ հայագետի կողմից»:

ընդգրկման տարողութեամբ առաել համապարփակ է, եւ նրա հիմնական նպատակն է, վերջին հաշուով, ծանօթացնել տուեալ ժողովրդի հասարակական-գիտական իմացութեան զարգացման կարեւորագոյն ուղենիշներին:

... Նշենք նաեւ, որ Միջնադարի հոգեւոր ժառանգութիւնը գիտականօրէն ըմբռնելու եւ մեկնաբանելու համար անհրաժեշտ է քննական հայեացք ունենալ, պատմականութեան խստիւ հաշուառումով: Հայ դպրութեան պատմութիւնը, բնականաբար, իր սկիզբն է առնում Հայաստանում վանքերի հիմնադրումից: Հասարակ է այն իրողութիւնը, որ ամբողջ Միջնադարում ուսումնագիտական կեանքը, համընդհանուր առմամբ, կազմակերպուել է վանական հաստատութիւններում: Հէնց վանքերում են իրենց ուսումնագիտական պատրաստութիւնն ու որակաւորումն ստացել Միջնադարի մեր իմաստասէրները, քերականները, ճարտասանները, պատմագիրներն ու մատենագիրները, տաղասացներն ու երաժիշտները, տոմարագետներն ու աստղաբաշխները, գիտնականներն ու հոգեւոր-հասարակական գործիչները, գրիչներն ու ծաղկողները: Դրանք հանդիսացել են հոգեւոր-մշակութային-կրթական կենտրոններ:

Բայց եւ չպէտք է մոռանալ, որ հասարակական-գաղափարախօսական ինստիտուտներն իրենց պատմական անհրաժեշտութեամբ առաջացած լինելով զարգանում են միաժամանակ եւ անխուսափելիօրէն հասնում է մի մոմենտ, երբ արդէն հասարակական պայմանների փոփոխութեամբ իրենց գոյութեան հիմքերը կորցնելով՝ դադարում են գոյատեւելուց, դառնալով պատմական փաստ, ինչպիսին է մեհենական տաճարների ու դպրութեան կենտրոնների պարագան, որոնց փոխարինելու եկան քրիստոնէական վանքերը: Ասուածից հետեւում է, որ վանքերի ու նրանցում ստեղծուած մատենագրական վաստակի ուսումնասիրումը կատարելիս պէտք է ցուցաբերել պատմական եւ քննական հայեացք՝ լիովին դրականի ընդունումով ու արձանագրումով, դիտելով վանքերը որպէս անցած պատմական փուլի հոգեւոր մշակութային-կրթական կենտրոններ, լուսաւորութեան՝ դպրութեան ու գիտութեան դարբնոցներ, նաեւ հայապահպանման մարտկոցներ:

Թեման շարադրելիս չենք ուզում սահմանափակուել եզրակացութիւններով ու յայտարարութիւններով, որոնք համարեա ոչինչ չեն կարող տալ ունկնդիրի իմացութիւնը հարստացնելու տեսակէտից, առաել եւս՝ ապագայ մասնագետի հետագօտական հրայրքը բարբրելու առումով. ուստի եւ շեշտը կը դնենք թեմայի ըստ հնարաւորութեան համակողմանի ուսումնասիրման վրայ:

Հայ իմացականութիւնը՝ սկսած դեռեւս հինգերորդ դարի առաջին տարիներից, վիթխարի ժառանգութիւն է թողել յետագայ դարաշրջաններին ու մարդկութեանը: Հայագետների սերունդներ են ստեղծագործական չափազանց արդիւնաւէտ պեղումներ կատարել մեր բազմահարուստ եւ բազմաբովանդակ մատենագրութեան անդաստանում: Երիտասարդ հայ աղբիւրագետի կոչումն է՝ գիտական մեծ հմտութեամբ իրագել դառնալ մատենագրական յուշարձաններին ու դրանց շուրջ հայագետ սերունդների կատարած դրական աշխատանքներին՝ մի կողմից, միւս կողմի՝ արդի հայագիտութեան բարձունքներից հետագօտական նոր նուաճումներով հարստացնել հայագիտութիւնը ներկայ փուլում:

Պիտի արձանագրել, որ մեծ նշանակութիւն է ունեցել բանասիրութեան դերը գրաւոր մշակոյթ ձեռք բերած ժողովուրդների, այդ թում եւ հայ ժողովրդի, ճակատագրում: Դեռեւս Անտուան Մեյէն, որը համաշխարհային ճանաչում ունեցող հեղի-

նակութիւն էր հին քաղաքակրթութիւնների պատմութեան ուսումնասիրման եւ մանաւանդ հնդեպոպական լեզուաբանութեան տեսութեան բնագաւառում, Փարիզում 1924 թուականին կայացած հայագիտական նստաշրջանում ունեցած իր ելոյթում ընդգծում էր. «... Բայց միայն ճշգրտօրէն իմանալով անցած իրադարձութիւնները՝ մենք կարող ենք մեր գործունէութիւնը ղեկավարել իրականութեանը համապատասխան: Համեմատեցէ՛ք այն, ինչ պատահեց սլաւոնական ժողովուրդների: Սլաւոնական ժողովուրդները բանասիրութեանը չեն պարտական իրենց փայլուն վերածննդի համար, որի հիացած վկաներն ենք մենք այսօր. սակայն եւ այնպէս այդ ժողովուրդներից իւրաքանչիւրի վերածնունդը նախապատրաստում է եղել մտաւոր շարժումով, բանասիրական շարժումով, անցեալի՝ հետագոտութեամբ: Բանասերներն են եղել այն հիմնալի ողջ զարգացման աղբիւրը, որ այսօր մեզ ներկայացնում է սլաւոնական ժողովուրդների վերածնունդը: ... Անցեալի ուսումնասիրութիւնը ներկան ճանաչելու միջոց է»¹: Մասնատրելով իր խօսքը բանասիրութեան անդրադարձ նշանակութեան մասին նաեւ հայ ժողովրդի տարեգրութեան մէջ՝ մեծանուն գիտնականը իր մի այլ ելոյթում դեռեւս 1920 թուականին անում է հետեւեալ խիստ արժեքատը ընդհանրացումը, որ ուսանելի է մեզ համար. «... խաչակրթիւնների վերջնական անյաջողութիւնից ի վեր հայ ազգը պահպանուել է: Հայերը ոչ մի տեղ տրամադրութեան տակ չեն ունեցել իրենց պատկանող ուժ, ոչ մի տեղ չեն ունեցել իրենց սեփական կառավարութիւնը. բայց իրենց համար ստեղծել են ազգային ոգի. այն ապրում է նրանց յուշարձաններում, նրանց եկեղեցու մէջ, որը ո՛չ մի այլ եկեղեցու չի նմանում. այն ապրում է նրանց զրականութեան մէջ, որն ունի իր սեփական լեզուն, իր առանձնապատկանները. եւ որեւէ հայ պետականութեան բացակայութիւնը, ամէն մի սեփական իշխանութեան կորուստը երբէ՛ք չի կարողացել խախտել ազգային զգացումը, որն իր գոյութիւնը պահպանել է դարերի միջով: Վրայ են հասել բոլոր դժբախտութիւնները, իրենց զգալ են տուել բոլոր հալածանքները, սակայն ազգը երբեք չի մոռացել, որ ինքը գոյութիւն ունի իրենով եւ ունի իր սեփական ոգին»²: Թէ անցեալի մշակոյթի գանձերի հրատարակումը եւ ուսումնասիրումը ինչպիսի վիթխարի կարեւորութիւն է ունեցել ազգային գերագոյն պահանջների առաջադրման ու լուծման տեսակետից՝ Մէյլէն միաժամանակ հաւաստում է. «Հայերն աշխատեցին. բոլոր հին բնագրերը հրատարակուել են, ուսումնասիրուել. ազգային պատմութիւնը դրուել է աշխարհի աչքերի առաջ, եւ Հայաստանը, որ երբեք չէր կորցրել իր գոյութեան խոր զգացումը, աշխարհի առաջ երեւան եկաւ իր բոլոր նախկին իրատւոյններով, որ նա խնամքով պահպանել էր. բաւական էր միայն դրանք ակնյայտ դարձնել»³: Եւ որպէս այս բոլորի հետետեւութիւն, մի այլ առիթով բազմակատարական գիտնականը յանգում է այսպիսի տարողունակ եզրակացութեան. «Հայերը շատ մեծ ազգ չեն, բայց շատ հին ազգ են. մենք դա գիտենք պատմութիւնից. հայերի իրատւոյններն ունեցողը ճշմարտութիւնից բացի այլ բանի կարիք չունի...»⁴:

Բայց պատմական դառը փորձից ելնելով հեղինակի ասածինն, լրացման կարգով, պիտի աւելացնել նաեւ, որ հայերը պիտի գիտենան եւ սովորեն միաժամանակ

¹ Ա. Մէյլէ, Հայագիտական հետազոտութիւններ, Երևան, 1978, էջ 29:

² Անդ, էջ 534:

³ Անդ, էջ 534:

⁴ Անդ, էջ 518:

ճշմարտութիւնը պաշտպանելու, միաժամանակ հաստատելու արուեստը ամենայն ուժգնութեամբ ու աննկուն խիզախութեամբ...:

Այնուհետեւ. Հայ դպրութեան առաջացման գիտական պատմութիւնը շարադրելիս չի կարելի այն կտրուած ներկայացնել համաշխարհային մտաւոր-քաղաքակրթական մեծ շարժումներից, որոնք այնքան խորը դրոշմ են բողել մարդկային հասարակութեան առաջընթացի վրայ, ընդ որում հենց այդ մեծ երեւոյթների ու եղելութիւնների աղերսակցմամբ էլ հնարատը է նաեւ բացատրել հայ քաղաքակրթութեան ու մշակութային պատմութեան առանձին իրողութիւնները:

Այսպէս, քրիստոնէական կրօնն ընդունած աշխարհամասի վերաբերեալ խօսելիս պիտի նշել, որ արատական հասարակարգի ամբողջ տիրապետութեան ընթացքում քրիստոնէութիւնը ոչ միայն սոսկ կրօն էր, այլեւ տիրապետող աշխարհայեացք՝ իր անքննադատելի եւ անատարկելի դոգմաներով: Պատմական այս դարաշրջանում քրիստոնէայ բոլոր ժողովուրդների գրաւոր արտադրանքները, առանց բացառութեան, յագեցած են քրիստոնէական աշխարհայեացքով: Դա պատմական զարգացման այնպիսի անխուսափելիութիւն էր, երբ մի ամբողջ դարաշրջանում մարդկային մտածողութիւնը իրեն զրստերում էր քրիստոնէական աշխարհայեացքի միջոցով: Այլ կերպ ասած՝ մարդկութիւնը իր աշխարհըմբռնումը եւ ճանաչողութեան հաւաստումը իրականացնում էր ըստ քրիստոնէական վարդապետութեան: Սրանում է իւրաքանչիւր ժողովրդի, այդ թւում եւ հայ ժողովրդի, դպրութեան մէջ ամբարած դարաշրջանի քաղաքակրթութեան ամբողջ նշանակութիւնը, որը սքօղում է միայն աստուածաբանութեան թանձրամած թաղանթով:

Բանն այն է, որ առհասարակ Միջնադարի ժողովուրդների դպրութեան մէջ բոլոր գիտութիւններն ու արուեստները կարող էին գոյութիւն ունենալ եւ զարգանալ բացառապէս քրիստոնէական աշխարհայեացքի պրիզմայով ու նրա թոյլատրելիութեան սահմաններում: Պատահական չէ, որ բոլոր գիտութիւնները Միջնադարում դարձել էին աստուածաբանութեան աղախինը: Այս առնչութեամբ ֆրանսիացի գիտնական Ժիւլ Պարոզը, Միջնադարի ուսումնագիտական կեանքը լուսաբանելիս, փիլիսոփայութեան՝ աստուածաբանութեան հետ ունեցած փոխարարելութեան կապակցութեամբ նշում է. «Միւլթաստիկ փիլիսոփայութեան էական բնոյթը կայանում էր նրանում, որ ամբողջ գիտութիւնը ենթարկէր աստուածաբանութեանը, որի միակ աղբիւրը հանդիսանում էր Բիբլիան՝ մեկնաբանուած հայրերի, համաժողովների եւ պապի կողմից: Նա իրատւոյն չունէր բնութեան առնել աստուածաբանութեան կողմից ձեւակերպուած ճշմարտութիւնները. նրան վիճակուած էր միայն իր դրոյթները համապատասխանեցնել փիլիսոփայական մի համադրութեան մէջ. այստեղից յայտնի ասոյթը՝ փիլիսոփայութիւնը աստուածաբանութեան աղախինն է», լւ. «Philosophia theologiae ancilla»¹: Եւ դա միանգամայն հասկանալի է. չէ՛ որ Աստուածաշունչը դարաշրջանի տիրապետող եւ պաշտօնական միակ աշխարհայեացքն էր հանդիսանում:

Այս առիթն նոյն հեղինակը, իր աշխատութեան այլ մասերում, միանգամայն դիպուկ է բնութագրում կաթոլիկական եկեղեցու եւ նրա աշխարհայեացքի՝ քրիստոնէական աստուածաբանութեան համատարած եւ բացարձակ տիրապետութիւնը ուսումնականների հայեացքներում ու գիտութեան բոլոր բնագաւառներում՝ համաերոպական ընդգրկմամբ. «Միջնադարի կաթոլիկական եկեղեցու տիրապետման, կառավարման եւ ներթափանցման ամենակարողութիւնն է՝ ամբողջ հասարակա-

¹ Jule Paroz, Histoire Universelle de la Pédagogie, Paris, 1883, էջ 70:

նութեան ընդգրկմամբ: Մեծերն ու փոքրերը, գիտնականներն ու համրակները, բոլորը խանարեալում էին հեզօրէն եկեղեցու գերագոյն հեղինակութեան առաջ. իսկ վերջինս ուզում էր, որ նրանք դատադոյութիւններ անէին եւ գործէին միայն այն սահմաններում, ինչ ինքն էր որոշել՝ եկեղեցին»¹:

Սակայն աշխարհայեացքի տիրապետութիւնը չէր կարող տարերային բնոյք կրել: Այն, անտարակոյս, պէտք է կազմակերպուած լինէր ինչպէս նիւթական միջոցներով, այնպէս եւ կաղերով: Եկեղեցին, որպէս աւատական հասարակարգի գաղափարաբանական հաստատութիւնը, տարածում էր զանգուածների վրայ իր միահեծան հոգեւոր իշխանութիւնը եւ ոչ ոքի հետ այն չէր բաժանում: Քրիստոնէութեան էվոլուցիոն զարգացումը յայտնի է հասարակագիտութեանը. այն սկզբնական շրջանում՝ իր ծագմամբ լինելով ստրուկների եւ ճնշուածների գաղափարախօսութիւնը, յետագայ իր փոխակերպումներում, նոր դրոյթների ու պատգամների իր առաջադրմամբ, որոնք արդէն համապատասխանում էին պատմական նոր իրադարձութիւններին ու սոցիալական խնդիրներին, վեր ածուեց կայսրութիւնների եւ թագաւորութիւնների պաշտօնական գաղափարախօսութեան: Սակայն պարփակելով իր մէջ քաղաքակրթական ու բարեկրթական մեծ Ուսմունք, մարդու մարդկայնացման հոգեվոխութեան վիթխարի ուժականութիւն, դարձաւ նաեւ համաշխարհային կրօն՝ անկախ ցեղից եւ գոյնից...:

Չնայած այս բնութագրական առանձնայատկութիւններին, որ յատկանշական էր քրիստոնէական բոլոր եկեղեցիներին, այդուհանդերձ իւրաքանչիւր ժողովրդի ազգային եկեղեցին պատմութեան ընթացքում իր կատարած դերի տեսակէտից ոչ թէ նոյնանում էր, այլ՝ խիստ տարբերում: Հէնց այս առումով Հայոց ազգային եկեղեցին պատմական շատ կարեւոր դեր է կատարել մեր ժողովրդի ազգային կեանքում՝ նաեւ ամենադրական իմաստով, կախում պատմութեան քառուղիներում հայ ժողովրդի ունեցած տարապայման ճակատագրից...:

Բայց եւ այնպէս քրիստոնէական եկեղեցին ընդհանրապէս, առանձին վերցրած, չէր բարարում աւատական հասարակութեան հոգեւոր-իմացական բոլոր պահանջները: Նա, լինելով հոգեւոր նուիրապետութիւն, հիմնականում պաշտամունքային արարողութիւնների ու հաւատի հոգեւոր իշխանութեան դեր էր կատարում: Սակայն սուր պայքարի մէջ գտնուելով հեթանոսական եւ հերձուածող գաղափարաբանական ուժերի դէմ, եկեղեցին նոյնպէս հարկադրաբար պէտք է զբաղուէր գիտութիւններով ու արուեստներով, որպէսզի դրանով իսկ ապահովէր իր «անսասանութիւնը»՝ բարարելով հասարակութեան հոգեւոր բարձրագոյն պահանջմունքները եւս: Նա պէտք է բացարձակ գերիշխանութեան հաստատել նաեւ իմացականութեան բոլոր ոլորտներում՝ հաւասարապէս ինչպէս գիտութիւններում, այնպէս եւ արուեստներում: Կրթութեան, արուեստների եւ գիտութիւնների բարձունքները նուաճելու համար, ահա, ստեղծուեց Վանական Շարժում, որը համակեց բոլոր քրիստոնէայ երկրներին²:

«Նոր հայ», Շարաքաբերք,
17ր Ապրիլի, 1982:

¹ Անդ, օր 76:

² Վանական շարժման մասին տեսութիւնը, որ տպագրել ենք «Նոր Հայ» Շարաքաբերքի յաջորդական համարում (24ր Ապրիլի 1982 թ.), սոյնի հետ ընդգրկել են ծառայում իմ երկհատոր Ուսմունք-սիրութեան մէջ՝ «Հայ դպրութեան պատմութիւնը՝ քննական տեսութեամբ» խորագրով Եռաշաւորի Ա. Հատորում (Անրիլիս, 1999 թ., էջ 265-272), ուստի եւ կրկնութիւնից խոսափելու համար ընթերցողին յղում են իմ այդ աշխատութեանը՝ առանց ամբողջական պատկերացման համար:

ՆՈՐԻՆ Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԴԻՄՈՒՄ - ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՀԻՄՆԱՀԱՐՅԻ ԼՈՒԾՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ
ԻԲՐԵՒ ԴԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ՀՈՉԱԿՄԱՆ, 1700-ԱՄԵԱԿԻ ԻՍԿ
ԹԵԼԱԴՐԱԿԱՆՈՎ

Համանման Դիմում - Առաջարկութիւն՝ ներկայացուած է նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Նորին Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Վեհափառ Հայրապետին, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արմէն Խաչատրեանին, Յոբելիական Յանձնաժողովի նախագահ Ռորերտ Քոչարեանին եւ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադէյ Սարգսեանին:

Բանասիրական Գիտութիւնների
Դոկտոր, Փրոֆ. Լ.Գ.ԽԱՉԵՐԱՆԻՅ

31ր Մայիս, 2000թ., Կղնտէյ, ԱՄՆ:

Վեհափառ Հայր,

Գտնում ենք քրիստոնէութեան իբրեւ պետական կրօն հռչակման 1700ամեակի եւ Մաշտոցեան ազգային գրահամակարգի հանճարեղ մտայդացման 1600ամեակի սեմին, որ երկեակ առումներով քաղաքակրթական բախտորոշ վիթխարի նշանակութիւն ունեցան մեր ժողովրդի ազգային Ինքնութեան ձեւաւորման համար: Այս առթիւ Համազգային խնդիրների հիմնահարցերի լուծման ծրագրում անշուշտ կարեւորագոյն հրատապութիւն պէտք է ներկայացնի նաեւ «ՄԷ՛Կ ԱԶԳ ԵՒ ՄԷ՛Կ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒՂՎԱԳՐՈՒԹԻՒՆ» ընդհանրական պահանջի իրագործումը ազգակերտման այժմեական մեր հրատապ մարտումներում, ինչպէս բնականոն է

եւ պարտադիր՝ աշխարհի իրաքանչիւր քաղաքակիրթ ազգի գրականութեան եւ գրագրութիւնների յարատեւման համար:

Մակայն շուրջ ութսուն տարի է ինչ անխտենութեամբ, արհեստականօրէն եւ ստալինեան բռնադատութեամբ պարտադրուած էր անհարկիօրէն երկրնոյք ուղղագրութիւնների որդեգրումը մեր ժողովրդին՝ ազգային պատկանման, թուլացման, ուժասպառման, ի վերջոյ նաեւ համաձուլման նենգ ու հեռամէտ նկրտումների իրականացման դիտումով:

Մինչդեռ աղաղակող ցաւագին փաստ է համազգային առումով այն տխուր իրողութիւնը, որ Հայրենիք-Սփիւռք փոխարարութիւնների սերտաճման եւ հոգեկան-մշակութային հաղորդակցման առաւել ակնբախ արգելակներից է ենց մեր ազգի մասնատրապէս երկրնոյք ուղղագրութիւնը, որ խոչընդոտում է մեր առաջընթացին եւ ազգային միասնականութեան փայփայած սեւեռուն մեր նպատակների: Դեռեւս «Մքանչելի» Կորիւնը Հինգերորդ դարում Մեծն Մաշտոցի հանճարեղ մտայղացմամբ Հայագիր, Վրացագիր եւ Աղուանագիր դպրութիւնների սկզբնատրման պատմութիւնը գրառելիս, խորապէս հասկացել էր իր երախտաշատ Ուսուցչի քաղաքակրթական մեծագոյն նախաձեռնումների բախտորոշ նշանակութիւնը՝ միասնական մատենագրութեան եւ ուղղագրութեան յոյժ կարեւորութիւնը ազգային հոգեւոր ներկատուցութեւ սերտաճման եւ ազգային Ինքնութեան դարբնման ոգրումներում. նա՛մանաւանդ ստեղծուած այն ծանր իրողութեան նկատառումով, որ 387 թուականի պարսկա-հռոմէական դաշնագրով Արեւելեան եւ Արեւմտեան հատուածների բաժանուած Հայաստանը թէկուզէր հոգեւոր կամուրջով համախմբելու եւ ազգային միասնութիւնը ապահովելու կենսական անհրաժեշտութիւնը, Ազգային Վերապրումի համար, օրակարգային անյետաձգելի հրատապութիւն էր ներկայացնում մասնատրապէս Մեծն Մաշտոցի օրօք, ինչպէս եւ, պատմական գուզահեռի անցկացմամբ՝ մեր ժամանակներում եւս, երբ հայութիւնը աշխարհասփիւռ պայմաններում է իր Գոյամարտը մղում...:

Յետագայ բոլոր դարերում, ինչպիսի՛ արհաւիրքներ էլ անցել են հայ ժողովրդի Գոյապայքարի ընթացքում, հրաշալի արդարացրել է իրեն Մաշտոցեան միասնական ուղղագրութիւնը իբրեւ հայորդիների հոգեւոր հաղորդակցման գլխատր միջոց եւ միաժամանակ Վերապրումի կարեւորագոյն ԵՐԱՇԽԻՔ:

Եւ անհա 1922 թուականի Մարտի 4ի կառավարական հրամանագրով ընդունուեց արեղեանական չարաբաստիկ ուղղագրական ռեֆորմը եւ անանցանելի պատնէշ կանգնեցուեց Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ, պառակտուեց ազգային մեր ներուժը՝ յայտնուելով անբաղձալի եւ տարապայմանօրէն տխուր իրավիճակում: Անհաւատալի, ցանաւնական երկրեւեռ դրութեան մատնուեցինք ազգովին՝ մեզ պարտադրուած երկրնոյք ուղղագրութիւններով: 1940ական թուականներին մասամբ փորձ արուեց շտկելու պատմական այս ծախսերութիւնը՝ ընդունելով արեղեանական «բարեփոխում» տարբերակը Հայաստանում, որ այլապէս «հայաստանեան ուղղագրութիւն» յորջորջմամբ է յայտնի եւ դեռ արդի գործածութեան մէջ է Հայրենիքում: Այդ ժամանակ եւս մեր ժողովրդի ազգային միասնութիւնը իր միասնական ուղղագրութեամբ՝ յամառօրէն անտեսուեց, յատկապէս տիրող մեկուսացման ու գերակայութեան հոգեբանական բարդոյթի անյաղքահարելիութեան պատճառով, որ ամենեւին ներելի չէ:

Ընդվզեցուցիչ է եւ միաժամանակ ապշել կարելի է միայն, երբ սփիւռքահայ մամուլում արձագանգներ են հասնում այն մասին, որ ենց Մաշտոցի երկրում Մաշտոցեան միասնական գրահամակարգի վերականգնման ջատագովներին ու պայքարողներին նոյնիսկ հալածում են եւ աշխատանքներից հեռացնում են այս օրերին, այն էլ Չեր իսկ Հայրապետութեան օրօք...: Ահագանգող բնոյք ունեն, տարարախտարար, անձամբ ինձ եւ Սփիւռքի այլ մտաւորականներին հասած նամակների տագնապալի հաղորդումները: Դիցուք՝ առաջադրենք, փաստագործ յայտարարութիւն արած չլինելու համար, դրանցից մէկը միայն. «Վերջին իշխանափոխութեան առիթն օգտագործելով, մեր լեզուաբանների սեւհարիւրակային գունդը գրռեց եւ փոխեց Լեզուի տեսութեան դեկավարին, նորից թելադրեց սատեցնել-մեռցնելու քաղաքականութիւն, բոլոր թոյլատրելի ու անթոյլատրելի եղանակներով սկսեց մէկիկ մէկիկ վարկարեկել մեր կողմնակիցների անձը, որով եւ զգալի յաջողութիւններ ունեցաւ: Այս պատճառով է, որ մենք սկսեցինք դիմումներ յղել սփիւռքի մեր իմացած մտաւորականներին եւ աջակցութիւն խնդրեցինք» (Երեւան, 9ը Մեպտեմբերի, 1998թ.): Իսկ Լոսանջելոսահայ «Նոր կեանք» Շարքարքերը, արտատպելով Փարիզի «Յառաջ» թերթի խմբագիր Արփի Թոթոյեանի «Ուղղագրութեան հարցը եւ մեր քալիպանները» խօսուն վերնագրով յօդուածը, հաստատում է. «... Ուշագրաւ էր յատկապէս դասական ուղղագրութեան վերադարձի անհրաժեշտութեան գիտակից ու անշահախնդիր Վալերի Միլոյեանի մը պաշտօնանկութիւնը, լեզուի տեսութեան նախագահի պաշտօնէն: Նոյն դիրքերում վերջին զոհն ալ եղաւ Ազգային գրադարանի տնօրէն Գեորգ Տէր-Վարդանեան» («Նոր կեանք», Մարտ 18, 1999):

Ի դէպ՝ անձամբ ճանաչում եմ ընտիր մտաւորական, բանասէր, ձեռագրագետ եւ աղբիւրագետ եւ Ազգային Գրադարանի տնօրէն Գեորգ Տէր-Վարդանեանին, որը Երեւանի Համալսարանի Պատմութեան բաժանմունքի իմ երբեմնի շնորհալի աշակերտներից է եղել, գիտութիւնների թեկնածու եւ Մատենադարանի Չեռագրապահոցի բազմահմուտ վարիչը՝ յետագայում դարձեալ հանդիպելով իրեն համատեղ աշխատանքում:

Դարձեալ Հայաստանից յղած «Ուղղագրական Մաքառումներ» յօդուածում (տե՛ս «Նոր կեանք», Յունիս 1, 2000թ.) Յարութիւն Մովսիսեանը գրում է. «Մամուլում յօդուածներ տպագրուեցին 1922 թուի ուղղագրական բռնադատման հակազգային բնոյթի, դրա դաւաճանական դրդապատճառների եւ հետեւանքների մասին, բացայայտուեցին բռնադատման պատմութեան մութ մնացած ծայրերը: Խորհրդային տարիներին գաղտնի պահուող կամ լուրիւն մատնուած այդ փաստերի հրատարակումը զագագեցրեց Խորհրդային գաղափարախօսութիւնը չթօքափած մասնագիտական շրջանակներին (լեզուաբաններ, գրականագետներ, պատմաբաններ), որոնք փոխանակ փորձելու վերջ տալ ուղղագրական բռնադատմանը՝ սկսեցին փառաբանել խորհրդային ուղղագրութիւնը եւ հալածել դասականի ջատագովներին: Սկսուեց հաւատարկութեան մի դաժան ընթացք, որի կենտրոնը Գիտութիւնների Ակադեմիան էր: Ակադեմիայի ինստիտուտներից դուրս էին մղում նրանք, ովքեր հանդէս էին գալիս յօգուտ դասական ուղղագրութեան (շեղագրումը իմն է - Լ.Խ.):

Իսկապէս այս եւ այլ փաստեր տխուր խորհրդածութիւնների առիթ են տալիս՝ Մաշտոցի սուրբ գործին զինուորագրեալը հալածական հաւատարմութեան համար Նրա նուիրական ժառանգութեան պահպանութեան նկատմամբ...: Այստե՛ղ պէտք էր հասնել...:

եւ պարտադիր՝ աշխարհի իրաքանչիւր քաղաքակիրթ ազգի գրականութեան եւ գրագրութիւնների յարատեւման համար:

Սակայն շուրջ ութսուն տարի է ինչ անխեղեմութեամբ, արհեստակցօրէն եւ ստալինեան բռնադատութեամբ պարտադրուած էր անհարկիօրէն երկրնոյք ուղղագրութիւնների որդեգրումը մեր ժողովրդին՝ ազգային պառակտման, թուլացման, ուժասպառման, ի վերջոյ նաեւ համաձուլման նենգ ու հեռամէտ նկրտումների իրականացման դիտումով:

Մինչդեռ աղաղակող ցաւագին փաստ է համազգային առումով այն տխուր իրողութիւնը, որ Հայրենիք-Սփիւռք փոխարարութիւնների սերտաճման եւ հոգեկան-մշակութային հաղորդակցման առաւել ակնբախ արգելակներից է հենց մեր ազգի մասնատրասպէս երկրնոյք ուղղագրութիւնը, որ խոչընդոտում է մեր առաջընթացին եւ ազգային միասնականութեան փայփայած սեւեռուն մեր նպատակներին: Գեոեւս «Մքանչեի» Կորիւնը Հինգերորդ դարում Մեծն Մաշտոցի հանճարեղ մտալոյցմամբ Հայագիր, Վրացագիր եւ Աղուամագիր դպրութիւնների սկզբնատրման պատմութիւնը գրատելիս, խորապէս հասկացել էր իր երախտաշատ Ուսուցչի քաղաքակրթական մեծագոյն նախաձեռնումների բախտորոշ նշանակութիւնը՝ միասնական մատենագրութեան եւ ուղղագրութեան յոյժ կարեւորութիւնը ազգային հոգեւոր ներկառուցումքի սերտաճման եւ ազգային Ինքնութեան դարբնման ոգորումներում. նա՛մանաւանդ ստեղծուած այն ծանր իրադրութեան նկատառումով, որ 387 թուականի պարսկա-հռոմէական դաշնագրով Արեւելեան եւ Արեւմտեան հատուածների բաժանուած Հայաստանը թէկուզեւ հոգեւոր կամութիւնով համախմբելու եւ ազգային միասնութիւնը ապահովելու կենսական անհրաժեշտութիւնը, Ազգային Վերապրումի համար, օրակարգային անյետաձգելի հրատապութիւն էր ներկայացնում մասնատրասպէս Մեծն Մաշտոցի օրօք, ինչպէս եւ, պատմական զուգահեռի անցկացմամբ՝ մեր ժամանակներում եւս, երբ հայութիւնը աշխարհասփիւռ պայմաններում է իր Գոյամարտը մղում...:

Յետագայ բոլոր դարերում, ինչպիսի՛ արհաւիրքներ էլ անցել են հայ ժողովրդի Գոյապայքարի ընթացքում, հրաշալի արդարացրել է իրեն Մաշտոցեան միասնական ուղղագրութիւնը իբրեւ հայորդիների հոգեւոր հաղորդակցման գլխատր միջոց եւ միաժամանակ Վերապրումի կարեւորագոյն ԵՐԱՇԽԻԹ:

Եւ ահա 1922 թուականի Մարտի 4ի կառավարական հրամանագրով ընդունուեց արեղեանական չարարաստիկ ուղղագրական ռեֆորմը եւ անանցանելի պատնէշ կանգնեցուեց Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ, պառակտուեց ազգային մեր ներքուժը՝ յայտնուելով անբաղձալի եւ տարապայմանօրէն տխուր իրավիճակում: Անհատաւորի, նաեւ անբնական երկրեւեռ դրութեան մատնուեցինք ազգովին՝ մեզ պարտադրուած երկրնոյք ուղղագրութիւններով: 1940ական թուականներին մասամբ փորձ արուեց շուկելու պատմական այս ճախարերութիւնը՝ ընդունելով արեղեանական «բարեփոխում» տարբերակը Հայաստանում, որ այլապէս «հայաստանեան ուղղագրութիւն» յորջորջմամբ է յայտնի եւ դեռ արդի գործածութեան մէջ է Հայրենիքում: Այդ ժամանակ եւս մեր ժողովրդի ազգային միասնութիւնը իր միասնական ուղղագրութեամբ՝ յամառօրէն անտեսուեց, յատկապէս տիրող մեկուսացման ու գերակայութեան հոգեբանական բարդոյթի անյարգահարելիութեան պատճառով, որ ամենեւին ներելի չէ:

Ընդվզեցուցիչ է եւ միաժամանակ ապշել կարելի է միայն, երբ սփիւռքահայ մամուլում արձագանգներ են հասնում այն մասին, որ հենց Մաշտոցի երկրում Մաշտոցեան միասնական գրահամակարգի վերականգնման ջատագովներին ու պայքարողներին նոյնիսկ հալածում են եւ աշխատանքներից հեռացնում են այս օրերին, այն էլ Չերիսկ Հայրապետութեան օրօք...: Ահազանգող բնոյք ունեն, տարաբախտաբար, անձամբ ինձ եւ Սփիւռքի այլ մտաւորականներին հասած մամակների տազմապալի հաղորդումները: Դիցուք՝ առաջադրենք, փաստագրով յայտարարութիւն արած շինելու համար, դրանցից մէկը միայն. «Վերջին իշխանափոխութեան առիթն օգտագործելով, մեր լեզուարանների սեւհարիւրակային գունդը գրոհեց եւ փոխեց Լեզուի տեսչութեան ղեկավարին, նորից թելադրեց սառեցնել-մեռցնելու քաղաքականութիւն, բոլոր թոյլատրելի ու անթոյլատրելի եղանակներով սկսեց մէկիկ մէկիկ վարկարեկել մեր կողմնակիցների անձը, որով եւ զգալի յաջողութիւններ ունեցաւ: Այս պատճառով է, որ մենք սկսեցինք դիմումներ յղել Սփիւռքի մեր իմացած մտաւորականներին եւ աջակցութիւն խնդրեցինք» (Երեւան, 9ը Մեպտեմբերի, 1998թ.): Իսկ Լոսանջելըսահայ «Նոր կեանք» Շարքարերը, արտատպելով Փարիզի «Յառաջ» թերթի խմբագիր Արփի Թորոյեանի «Ուղղագրութեան հարցը եւ մեր թախկանները» խօսում վերնագրով յօդուածը, հաստատում է. «... Ուշագրաւ էր յատկապէս դասական ուղղագրութեան վերադարձի անհրաժեշտութեան գիտակից ու անշահախնդիր Վալերի Միրզոյեանի մը պաշտօնանկութիւնը, լեզուի տեսչութեան նախագահի պաշտօնէն: Նոյն դիրքերում վերջին գոհն ալ եղաւ Ազգային գրադարանի տնօրէն Գեորգ Տէր-Վարդանեան» («Նոր կեանք», Մարտ 18, 1999):

Ի դէպ՝ անձամբ ճանաչում եմ ընտիր մտաւորական, բանասէր, ձեռագրագէտ եւ աղբիւրագէտ եւ Ազգային Գրադարանի տնօրէն Գեորգ Տէր-Վարդանեանին, որը Երեւանի Համալսարանի Պատմութեան բաժանմունքի իմ երբեմնի շնորհալի աշակերտներից է եղել, գիտութիւնների թեկնածու եւ Մատենադարանի Չեռագրապահիցի բազմաժանր վարիչը՝ յետագայում դարձեալ հանդիպելով իրեն համատեղ աշխատանքում:

Դարձեալ Հայաստանից յղած «Ուղղագրական Մաքառումներ» յօդուածում (տե՛ս «Նոր կեանք», Յունիս 1, 2000թ.) Յարութիւն Մովսիսեանը գրում է. «Մամուլում յօդուածներ տպագրուեցին 1922 թուի ուղղագրական բռնադատման հսկագալային բնոյթի, դրա դաւաճանական դրդապատճառների եւ հետեւանքների մասին, բացայայտուեցին բռնադատման պատմութեան մութ մնացած ծալքերը: Խորհրդային տարիներին գաղտնի պահուող կամ լքութեան մատնուած այդ փաստերի հրատարակումը զազագեցրեց Խորհրդային գաղափարախօսութիւնը չթօքափած մասնագիտական շրջանակներին (լեզուարաններ, գրականագէտներ, պատմաբաններ), որոնք փոխանակ փորձելու վերջ տալ ուղղագրական բռնադատմանը՝ սկսեցին փառարանել խորհրդային ուղղագրութիւնը եւ հալածել դասականի ջատագովներին: Սկսուեց հաւատարմութեան մի դաժան ընթացք, որի կենտրոնը Գիտութիւնների Ակադեմիան էր: Ակադեմիայի ինստիտուտներից դուրս էին մղում նրանք, ովքեր հանդէս էին գալիս յօգուտ դասական ուղղագրութեան (շեռագրումը իմն է - Լ.Խ.):

Իսկապէս այս եւ այլ փաստեր տխուր խորհրդածութիւնների առիթ են տալիս՝ Մաշտոցի սուրբ գործին զինուորագրեալը հալածակա՛ն հաւատարմութեան համար Նրա նուիրական ժառանգութեան պահպանութեան նկատմամբ...: Այստե՛ղ պէտք էր հասնել...:

Հարկ է կրկին անգամ յիշեցնել. Ազգային գաղափարախօսութեան յաղթանակներից պիտի համարել, որպէս առաջնահերթութիւն, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՄԱՇՏՈՅԵԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ, որը համահայկական է միանգամայն համազգային սեփականութիւն է պահանջատիրութիւն լինելով՝ անժամանցելի է...: Այն չի կարող մենաշնորհը լինել առանձին լեզուաբանների է գրողների, որոնք սարսափում են ի տես յետագայ սերունդների կողմից չկարողացուելու իրենց մտավայտութեան...: Հենց այս անձնական երկիւղն է, որ գերադասում է համազգային շահերին եւ արգելք հանդիսանում Ազգային ուղղաբութեան միասնականութեան, որ միակ բնորոշն է եւ օրինաչափականը աշխարհի բոլոր ժողովուրդների ազգային գրականութիւնների համար, «բացառութեամբ» միայն հայկականն...:

Այս էլ նկատենք՝ Հայրենիք-Մփիւռք յարաբերութիւնների սերտաճման ու միասնականութեան իրականացումը, որ չեմ կասկածում, Վեհափառ Հայր, փայփայում էք, հնարաւոր է ո՛չ միայն թելթոններով, ո՛չ էլ Առաքելական եկեղեցու նուիրապետութեան էջմիածնական եւ անթիլիասական թելերի մեխանիկական միաձուլման կոչերով: Բանն այն է, որ Հայոց նուիրապետութեան երկու թելերն էլ աշխարհասփիւռ հայութեանը համապատասխանաբար բոլորանուէր ծառայում են գերազոյն ճիգերի գործադրմամբ՝ ազգային կառոյցների պահպանման նախանձախնդրութեամբ. իրականում, միասնական լինելով իրենց Լուսաւորչական ազգային դաւանութեամբ՝ եկեղեցա-ծիսական արարողութիւններով ու ազգային սեւեռումներով, ստեղծուած պատմական տարբեր իրադրութիւնների խկ թելադրանքով երկուսն էլ պատուով եւ ամենայն պատասխանատուութեամբ կատարում են իրենց ստանձնած պատմական առաքելութիւնները, հետեւաբար ազգային «անհանգըստութիւն» ու մտահոգութիւն պատճառել չեն կարող:

Սեր խնդրանքն է.

հիմա ճիշդ ժամանակն է՝ 1700-ամեակի Յոբելիական նախաձեռնումներում ՍՐԲԱԳՐԵՒԼ նաեւ այս պատմական անխտեմութիւնը եւ ՎԵՐԱԿԱՆԳՆԱԿԱՆ Մաշտոցեան միասնական ուղղագրութեանը համընդհանուր մեր ամբողջ ազգի համար՝ ինչպէս բնաշխարհի, այնպէս եւ սփիւռքահայութեան բուն իսկ կենսական շահերից ելնելով: Յոբելիական 1700-ամեակը այն միակ բախտորոշ առիթն է, երբ հնարաւոր է միանգամընդմիջտ լուծել Մաշտոցեան միասնական Համազգային Ուղղագրութեան վերականգնման քննուկը, եւ դա կը լինի ամենաբարեբախտիկ նշանաւորումը նման փառահեղ տօնակատարութեան...: Իրագործենք այն:

Պատմական իրողութիւնն այն է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ յուսալի արանդապահն է եղել ազգային արժէքների, այդ թում եւ առաջին հերթին Մաշտոցեան Համազգային Ուղղագրութեան...:

Առ այդ առաքում են Ձեզ մի օրինակ վերջերս լոյս տեսած մեր մշակոյթի բնագաւառում համազգային հիմնահարցի լուծման նուիրում իմ հայագիտական Ուսումնասիրութիւնը՝ «Հայոց Համազգային Մաշտոցեան Համակարգում Միասնական եւ Միակերպ Ուղղագրութեան Պատմութիւնը (Ե.-Ի. դարեր)» խորագրով: Եւրոյ 416 էջերից բաղկացած ծաւալուն եւ համակողմանի քննութեամբ կատարուած քառասունամեայ գիտական Ուսումնասիրութիւնս հնարաւոր եղաւ լոյս ընծայել այս օրերին Պուէնոս Այրեսի «Պօղոս Արզումանեան Հիմնադրամի» մեկնաստութեամբ եւ «Նոր Կեանք» Հրատարակչութեան կողմից Լոս Անճելըսում. այն կը նպաստի, անտարակոյս, գիտականօրէն պարզաբանելու ազգային-մշակութային աղէտի բոլոր երեսները, որ անխտեմաբար Արեղեանը եւ Խորհրդային իշխանու-

թիւնը երբեմնի՝ յանդգնել էին խեղաթիւրել Մաշտոցեան Ազգային Ուղղագրութիւնը, երբ այն արեւի քան 1.500 տարիներ յաջողապէս ծառայել էր (եւ ծառայում է արեւմտահայ գրական լեզուին) հայ մշակոյթին:

ՄԵ՛Կ Է՝ ԱՌԱՆՅ ԱՅՆ ԷԼ ԱՅՍ ԽԻՍՏ ՅԱՊԱՂԱԾ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐԻ ԱՄԲՈՂԶԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ, ՈՒՇ ԿԱՍ ԿԱՆՈՒՅ, ՊԻՏԻ՝ ՈՐ ԻՐԱԿԱՆԱՆԱՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՃԻԳԵՐՈՎ, բայց եւ նախապատիւ էր Ձեր գործօն եւ անմիջական միջնորդութեամբ իր խելամիտ լուծումն ստանաք, յատկապէս ի նշանաւորումն քրիստոնէութեան որպէս պետական կրօն Հայաստանում հռչակման 1700-ամեայ Յոբելեանի, որի մեծախորհուրդ իրականացումն էր ՄԱՇՏՈՅԵԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒՄԸ, որի 1600-ամեայ Յոբելեանի տօնակատարութիւնը նոյնպէս զուգադիպում է այս օրերին...:

Ամենայն Ակնածանքով եւ՝ Խոնարհաբար (ստորագրութիւնս):

«Հայ Կեանք», Յուլիս, 2000թ.,
«Նոր Օր», Յուլիս 15, 2000թ.,
«Նոր Հայաստան», Յուլիս, 2000թ.:

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆԻ
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐ ԳՐԱԲԱՐ
ԳԵՂԵՅԻԿ ՈՃՈՎ ՀԱՄԱԶՕՐ ԵՆ՝
«Ի ԲԵՐԱՆԷ ՔՈՒՄԱԷ» ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ...

Մաշտոցեան համակարգում միասնական եւ միակերպ համազգային Ուղղագրութեան քանդման իր ծրագիրը Մանուկ Աբեղեանը առաջին անգամ ներկայացրեց՝ 1913 թուականի Հոկտեմբեր 14-ին Էջմիածնում կազմակերպուած ... Մաշտոցեան այբուբենի գիտի 1.500-ամեակին եւ տպագրութեան 400-ամեակին նուիրում կրկնակ Յոբելեանների հանդիսաւոր նիստում:

Աբեղեանը միանգամայն ճիշդ է ... պատասխանում այն հարցին, թէ ինչո՞ւ աշխարհաբարի յաղթանակման դրօշակակիրները ամենեւին ձեռք չտուեցին գրաբարեան Ուղղագրութեանը եւ նոյնութեամբ որդեգրեցին այն. Չեկուցման մէջ յայտարարում է Աբեղեանը.

«19-րդ դարու աշխարհաբարեանները, որոնք գրում եւ կարդում էին շարունակ գրաբար, լեզուն աշխարհաբարի շուտ տալիս, բնականաբար ոչ մի խորքութիւն չպիտի տեսնէին բառերի պատկերը նոյնը պահելով: Եթէ նրանք գրաբարում գրում

էին *գորանայ*, բայց կարդում էին *գորանա*, եւ գրաբարի համար այդ խորք չէր երեւում, աշխարհաբարի համար եւս խորք չպիտի թուէր *գորանայ* գրել եւ *գորանա* կարդալ (sic!)»¹:

Հարց է առաջանում. յետագայում՝ նաեւ մեր օրերում. ի՞նչ անպատեհութիւններ ու խոչընդոտներ ծագեցին, որ «ստիպուած» եղաւ ինքը Արեղեանը արմատական փոփոխութեան ենթարկելու Մաշտոցեան համակարգուած Ուղղագրութիւնը, որ այնքան յաջող կերպով պարփակում եւ արտացոլում է մեր գրական երկու լեզուներն էլ...:

Բացարձակապէս՝ Ո՛Չ ՄԻ:

Արեղեանը պարզապէս իր շիլ յաւակնութիւններին յագուող չտալ չկարողացաւ՝ *ի հեճուկս եւ ի վնաս հայագիր միասնական ազգային մշակոյթի...*:

Այս է տխուր իրականութիւնը...:

Արեղեանի փաստարկումն ու «հիմնադրումը» գրաբանական ո՛չ մի արժէք չունի, երբ Ձեկուցման մէջ նաեւ ասում է. «*Կայ սակայն եւ մի ուրիշ պատճառ, որ էական է: Նրանք գիտակցաբար թէ անգիտակցաբար, ԲԱՅՅ ԱՆՀՐԱԺԵՇՏՕՐԷՆ ՄՏԻՊՈՒԱԾ ԵՆ ԵՂԵԼ ՊԱՃԵԼ ԳՐԱԲԱՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԷՆՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԱՌԱՋ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ,- ինչպէս յաճախ ուրիշների մէջ գրական լեզուն, կամ հէնց մեր գրաբարը 5-րդ դարում Աստուածաշնչի քարգմանութեամբ,- այլ մեր աշխարհաբարը հետզհետէ եւ մեծ մաքառումներով է կազմուել, այն էլ զանազան կողմերից, մինչեւ որ առաջ են եկել մեր երկու նոր գրական լեզուները*»²:

Ի՞նչ է պարզում բերում քաղուածքից, որ ընդունելի է նաեւ Արեղեանի համար: ԱՇԽԱՐՀԱԲԱՐԸ ԻՐ ԾՆՈՒՆԴՈՎ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԳՐԱԲԱՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ, ՈՐ ՆՈՅՆԻՄԿ ԱՅՅ ԻՐՈՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԷԱԿԱՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ ԻՆՔԸ:

Իսկ հինգերորդ դարի հայագիր գրականութեան ստեղծումը «մեծ գրական լեզուով», ինչպիսին է Աստուածաշունչի քարգմանութիւնը, սկիզբ առնելու «պայմանաւորուածութիւն»ը անարժէք պնդում է, որովհետեւ այսպէս թէ այնպէս հայագիր գրականութիւնը սկիզբ էր առնելու, քանի որ արդէն իսկ Հայոց այբուբենի գիտը արուած էր, հետեւաբար ո՛չ մի նշանակութիւն չունի «գրական մեծ գործով» սկիզբ առած լինելու մասին դատողութիւնը, ո՛չ էլ նման «հիմքի» բացակայութիւնը կարող է որեւէ նշանակութիւն ունենալ նաեւ աշխարհաբար գրական լեզուների առաջացման համար...: Գրաբարը վաղուց մեռած լեզու էր համարում եւ նրանով ստեղծուած մատենագրութիւնը ժամանակակից կարիքներին բարաբարել չէր կարող, ուստի պատմական անհրաժեշտութեամբ հայոց լեզուի զարգացումը բարբառային խօսակցական երկու գլխաւոր հիմքերի վրայ գրական մշակման ենթարկուեց, որ եւ կոչուեց արեւմտահայ եւ արեւելահայ աշխարհաբար ճիւղատրամներ:

Մինչեւ անգամ Մաշտոցեան Ուղղագրութիւնը պարտադիր պահանջ է համարում Արեղեանը՝ գրական երկու լեզուների առաջացման համար. նաեւ Մաշտոցեան Ուղղագրութեան ՅԱՐԱՏԵՒՈՒՄԸ անխուսափելի դիտում ... : Արեղեանը խստովանում է միաժամանակ, եւ պիտի ասել՝ իրաւացիօրէն.

¹ Մ. Արեղեան, Մեր ուղղագրութեան մասին, «Արարատ», 1913, էջ 1055:

² Անդ:

«Իսկ այսպիսի պայմանների մէջ գրաբարի ուղղագրութեան պահպանումն անհրաժեշտ էր ոչ թէ միայն նրա համար, որ հէնց իրենց աշխարհաբար գրողների համար *գորանա*, *վորքի* գրութիւնները խորք կը լինէին, այլ եւ աւելի եւս նրա համար, որ աշխարհաբարի հակառակորդներն ամենեւին չէին կարող հաշտուել այդպիսի նորածն գրութիւններին, որով կերպարանափոխում էր բառերի պատկերը (sic!)»¹:

Ինքնըստինքեան այնուամենայնիւ պատասխան է պահանջում հետեւեալ չարչրկող հարցի համար. ի՞նչը փոխուեց, երբ ընդամենը ... ինը տարի յետոյ իր այս Ձեկուցումից Արեղեանին հեշտութեամբ յաջողուեց, խորհրդային իշխանութեան անխտեմ աջակցութեամբ եւ վարչարարական հրամանագրով Հայոց Մաշտոցեան միակերպ ու միասնական Ուղղագրութեան հետ ԱՅԳԲԱՆ ԴԱԺԱՆ ՀԱՇՈՒԵ-ՅԱՐԳԱՐ ՏԵՄՆԵԼ...: Եւրջ 80 տարի անց էլ նոյն տխուր իրավիճակը չի՞ ներկայացնում միթէ ազգի երկրնոյք Ուղղագրութեան դեռ յամեցող անհասկանալի գործածութեամբ...:

Բայց եւ ինքնիրեն հակասելով նաեւ հերքում է Արեղեանը իր ճիշդ դատումները, երբ պնդում էր, որ գրաբարեան բնագրերը արձրածայն կարդում ենոք ոչ թէ դասական արտասանութեամբ, այլ՝ ժամանակակից, աշխարհաբարեան փոխուած հնչյուններով: Հետեւաբար՝ յեղյեղուկութիւն է ցուցաբերում Արեղեանը, երբ անմիջապէս պնդում է նաեւ. «Բացի այդ՝ դպրոցներում պաշտօնապէս ընդունուած էր միայն գրաբարը եւ մեր աշակերտները մինչեւ վերջին տարիներս դեռ միայն գրաբար էին գրում իրենց շարադրութիւնները. նրանք պէտք է ուրեմն միայն բառերի գրաբար գրութեանը վարժուէին եւ չէին կարող նոյն արտասանութեան համար դպրոցում սովորել գրել *որդի* եւ արտասանել *վորքի* (sic!)»²: Եւ այս ինքնահերքումը նոյն պահին եւ նոյն Ձեկուցման մէջ...:

Աշխարհաբար գրական երկու ճիւղերի առաջացման համար Մաշտոցեան համակարգուած Ուղղագրութեան որդեգրման պատճառը, միանգամայն ճիշդ կերպով պնդում է այս անգամ Արեղեանը, հայոց լեզուի ԲԱՉԱԲԱՐԲԱՆԱՅՆՈՒԹԻՒՆՆ Է.

«Ապա որ զլխաւորն է՝ *աշխարհաբարը մանր ձեռով եւ զանազան կողմերից առաջ գարով՝ չէր կարող հիմնուել որեւէ տեղի արտասանութեան վրայ, եւ մի նոր, գրաբարից տարբեր, բայց միակերպ ուղղագրութիւն առաջ բերել, որ օրինակելի եւ ընդունելի լինէր ամէնքի համար*»³:

Գարձեալ շեշտը դնում է Արեղեանը՝ Ուղղագրութեան որդեգրումի համար «միակերպ» գրութեան պահանջը, որը պէտք է բարաբարի եւ «օրինակելի եւ ընդունելի լինի ամէնքի համար»...: Հիանալի՝ է: Բացարձակապէս Ո՛Չ ՄԻ առարկութիւն չունենք գրաբանական այս ճիշդ դատումի համար:

Արեղեանը *հագար անգամ իրաւացի* է նաեւ, երբ ուրուագծում է նշում պայմանների խախտման դէպքում տխուր հետեւանքները հայ գրականութեան ճակատագրի համար.

¹ Անդ, էջ 1055-1056

² Անդ, էջ 1056:

³ Անդ:

«Այսպիսի հանգամանքներում, թողնել գրաբարի ուղղագրութիւնը՝ կը նշանակէր՝ ՄԻ ԽԱՌՆԱՓՆԹՈՐ ԳՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵԼ...»¹։

Անելին. Արեղեանի իսկ գնահատմամբ՝

«Գրաբարի ուղղագրութիւնն է միայն դարձել ՓՐԿՈՒԹԻՒՆ այդ դրութիւնից (այսինքն «քառասային խառնափնթոր վիճակից» - Լ.Խ.) դուրս գալու համար եւ է՛ այժմ նոյնը»²։

Դարձեալ Արեղեանի խոստովանութեամբ.

«Շատ անգամ յայտնուած ճշմարտութիւն է, որ աշխարհաբարը չէր կարող այնպէս արագ զարգանալ, եթէ չլինէր գրաբարը...»³։

Նաեւ ոչ միայն գոյառման, այլեւ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ չէին ունենայ արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուները, եթէ գրաբարը իր համակարգուած Ուղղագրութեամբ գոյութիւն ունեցած չլինէր, միանգամայն ճիշդ կերպով յայտարարում է Արեղեանը.

«Բայց ճշմարտութիւն պէտք է ընդունել եւ այն, որ եթէ չլինէր գրաբարի ուղղագրութիւնը մենք դժուար թէ ունենայինք մեր արդի գրական լեզուն, եւ մեր երկու աշխարհաբարներն այնքան հեռու կը լինէին իրարուց, որ կը կարդայինք, բայց դժուար կը հասկանայինք առանց առաջուց առանձնապէս սովորած լինելու...»⁴։

Կեանքի հեզնանքն էլ այն է, որ այս չարագուշակ հետեւանքների կանխատեսումը այդպէս էլ իրականացուեց եւ այդպիսին էլ է՛ ներկայումս՝ հէնց ... Արեղեանի իսկ ձախաւեր նախաձեռնութեամբ ու փութկոտ ճիզերով՝ դժբախտաբար։

Ապա շարունակութեանը Արեղեանը իր կանխատեսմամբ նաեւ հաստատում է ներկայ իրավիճակը առաւել վրդովեցուցիչ հետեւանքներով.

«Թէ ինչքան տարբեր կը լինէին բառերի պատկերը թէկուզ մեր երկու աշխարհաբարի մէջ, եթէ դիցուք արեւմտեան աշխարհաբարն արեւմտեան դպրոցական արտասանութեամբ գրէին, արեւելեանը՝ արեւելեան,- դրա մի փոքրիկ արտայայտութիւն է մեր տարբեր տառադարձութիւնները, որ դժբախտաբար կայ օտարազգի բառերի եւ անունների համար՝ Պետերբուրգ, Բեդերբուրգ, Փէթերպուրկ. Պարիզ, Բարիզ, Փարիզ եւլն։ Պէտք է երեւակայել այն ԽԱՌՆԱՓՆԹՈՐ դրութիւնը եւ անվերծանելի վիճակը (sic!), եթէ հայերէն բառերը օտարազգի բառերի այս տարբեր ձևերով գրէին թէկուզ, ասում եմ, արեւելեան եւ արեւմտեան գրական լեզուների մէջ»⁵։

Այս հետեւանքային ողբերգական վիճակը Արեղեանը լրացնում է նաեւ այն իրողութեան յիշեցումով, որ եթէ միջամուխ լինէին նաեւ բարբառային արտասանութիւնները, ապա հարկադրուած պիտի լինէինք ՀՐԱԺԱՐՈՒԹՅԱՆ ԼՆԱՆՆԵՐԻՑ... Իր իսկ դարձեալ բառացի խոստովանութեամբ ու կանխատեսումով.

¹ Անդ:
² Անդ:
³ Անդ:
⁴ Անդ:
⁵ Անդ:

«Հապա եթէ մէջ գային նաեւ զանազան բարբառների արտասանութեան ազդեցութիւնները, ... ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԷՏԶ ԿԸ ԼԻՆԵՐ ԶԵՆՔ ՔԱՇԵԼ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ ՈՒՆԵՆԱԼՈՒՅ»¹։

Արեղեանի եզրակացութիւնը այն է, որ Մաշտոցեան համակարգուած միասնական եւ միակերպ Ուղղագրութիւնը պարզապէս ... ՊԱՏՍԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ է.

«Կը նշանակէ գրաբարի աւանդական գրութիւնը, որ ընդունել են ամենուրեք, ՄԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՅ Է եղել աշխարհաբար առաջ բերելու համար, քանի որ ոչ մի տեղի արտասանութիւն չէր կարող տեղի տալ միսի առաջ, իսկ ընդհանուր միատեսակ գրութիւն, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ Է ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ՀԱՍԱՐ»²։

Ապշեցուցիչ խոստովանութեամբ՝ մէկ էլ յանկարծ ոչ այլ որ քան դարձեալ նոյն Արեղեանը ՀԱՍՏԱՏՈՒՄ է Ուղղագրութեան հնչիւնական դրութեան անցնելու առաջարկների սնանկութիւնն ու անհնարիւնութիւնը, երբ նման փորձերի ընդհանրացմամբ ճշմարտում է.

«Մրանով պիտի բացատրել մի քանի փորձերի անյաջողութիւնը, որոնցով կամեցել են 1850-1870 թուականներին գրել արտասանութեան համեմատ: Այդ ժամանակ այդպիսի փորձերը լուրջ ՎՆԱՍԵԼ կը նշանակէին աշխարհաբարի գործին, դանդաղեցնելով նրա յաղթութիւնը գրաբարի վրայ»³։

Կարծէք մենախօսութեամբ նաեւ «իրեն» նկատի ունենալով երկշտաբար իր Չեկուցման մէջ մատնանշում էր նաեւ.

«Այդպիսի փորձեր անողները վստահ պիտի լինէին իրենց մեծ հեղինակութեան վրայ, թէ իրենց ձեռնարկածն ընդունելի եւ օրինակելի կը դառնար ընդհանրութիւնից (sic!)»⁴։

Հարկ է նկատել, սակայն, որ «մեծ հեղինակութիւն»ն էլ որեւէ մէկի՝ դեռեւս ԻՐԱՒՈՒՆՔ ՉԻ ՏԱԼԻՍ եւ ԱՆԹՈՅԼԱՍՐԵԼԻ ենք գտնում Համազգային ժառանգութիւն եւ սեփականութիւն համարուող ՄԵՇԱԳՈՅՆ ԱՐԺԷՔՆԵՐԻՑ մէկի հետ այդպէս ինքնագլուխ վարուելու, ինչպիսին է լեզուի Ուղղագրութիւնը. դա պարզապէս դոքսիշտութիւն է...:

Բայց «Օրինակելիութեան» եւ «ընդունելիութեան» համար ազգի բոլոր հատուածների Համախոհական համաձայնութեան պարտադիր պահանջը, որ միանգամայն ճիշդ ՊԱՅՄԱՆ է, Արեղեանը ահաւոր կերպով ԴՐԺԵՅ ընդամենը ինը տարի յետոյ Հայոց լեզուի Ուղղագրութեան անձանաչելի կերպարանափոխմամբ՝ իսկելիսկ իր զգուշացրած բախտախնդիր եւ մեծամտութեամբ տառապող յաւակնող հեղինակներին նմանուելով՝ Դեռեւս Մաշտոցեան գրահամակարգի ԳԻՒՏԻ 1500-ամեայ Յորեկնական նիստում կարդացած Չեկուցման ժամանակ Արեղեանը հանդիսատրապէս յայտարարում էր նաեւ ամենայն հաւատիւնով որ ճշմարտացիութեամբ միանգամայն.

«Բայց ի հարկէ իրողութիւնն այն էր, որ գրաբարի դարերով սրբագործուած գրութիւնը,- որ, ինչպէս ասացի, կարդում էին աշխարհաբարի ձեռով, թէկուզ ամէն

¹ Անդ:
² Անդ:
³ Անդ, էջ 1057:
⁴ Անդ:

մարդ իր տեղական արտասանությամբ,- շատ աւելի մեծ հեղինակություն էր եւ չէր կարող զիջել այս կամ այն անհատական փորձերին, այս կամ այն տեղի արտասանութեանը (sic!)»¹:

Այս խոստովանութեամբ՝ սպառիչ պատասխան է տրուել միաժամանակ ընդդէմ ամեն մի եւ առաջին հերքին ու գլխատրապէս զեկուցաբեր Արեղեանի ուղղն-ձգութեան Մաշտոցեան համակարգուած միասնական եւ միակերպ Ուղղագրութեան...:

Արեղեանը իր այս հաստատումը շարունակում է առաւել վճռական եւ աներկմիտ յայտարարութեամբ.

«ԵՒ ԵԹԷ ՄԻ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ ՊԻՏԻ ԼԻՆԷՐ ՄԻԱԿԵՐՊ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ, ԴԱ ՊԻՏԻ ԼԻՆԷՐ ԱՆՀՐԱԺԵՇՏՕՐԻՆ ԳՐԱԲԱՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ, ԵՒ ՈՉ ՄԻ ՈՒՐԻՇԸ»²:

Գարձեալ ընդգծում եւ շեշտում է Մաշտոցեան Ուղղագրութեան բարերար ազդեցութիւնը եւ տատմօր դերակատարութիւնը մեր գրական երկու լեզուների ծննդեան համար նոյն ինքը՝ Արեղեանը՝ պարզապէս (թող չգարմանայ ընթերցողը) ՕՐՀՆՈՒԹԻ ԻՆ համարելով.

«ԵՒ գրաբարի ազդեցութեան այս անհրաժեշտութիւնը միապէս եղել է այն, որ մենք թէպէտ երկու գրական լեզու ունինք, բայց ԲԱՐԵԲԱՆՏԱԲԱՐ ԳՈՆԷ ՄԻ ԵՒ ՆՈՅՆ ԳՐԱԲԱՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ (sic!)»³:

Ապա իր այս խոստովանութիւնը ամբողջացնում է՝ կանխատեսելով Մաշտոցեան գրութար Ուղղագրութեան ժխտման պարագային վերահաս «ՄԵԾ ԴՇԲԱՆՏՈՒԹԻՒՆ»Ն ՈՒ ԱՂԷՏԸ համազգային առումով...: Անհատատալի է, բայց իրաւ.

«Թէ չէ, ՄԵԾ ԴՇԲԱՆՏՈՒԹԻՒՆ կը լինէր ազգային տեսակետից, եթէ մեր երկու գրական լեզուների մէջ ուղղագրութիւնը հիմնուած լինէր ոչ թէ գրաբարի վրայ, այլ տարբեր տեղերի արտասանութեան (sic!)»⁴:

Մեկնաբանութիւններն աւելորդ են, ԿԱՆԻԱՏԵՍՈՒՄԸ՝ միանգամայն ԻՐԱԿԱՆ ...:

Նկատենք, սակայն, այս ժամանակ, երբ նման հակասական եւ իրարամերժ «կարծիքներ» ու վարկածներ էր յայտնում Արեղեանը, դեռեւս «այն միամիտներից» չէր, որ ենթադրէր, թէ հեշտութեամբ կարելի էր փոխել Մաշտոցեան համակարգուած ու կանոնարկուած միասնական ու միակերպ Ուղղագրութիւնը, կամ թէկու՞ղ եւ խախտել այն ինչ-որ չափով...:

Առաջադրենք նաեւ Արեղեանի «ծանրակշիռ» խոստովանութիւններից եւս մէկը յորելիական այդ Ձեկուցումից.

«Վերելում գրածից, կարծեմ, պիտի երեւայ, որ մեր ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելն այնքան հեշտ չէ, ինչպէս միամտօրէն կարծողներ կան (sic!): Դժուար է ոչ միայն հնչաբանական պատճառով, այլ եւ նրա համար, որ մենք ունինք երկու գրական լեզու, իրենց ուրոյն դպրոցական արտասանութեամբ, եւ որ

¹ Անդ:
² Անդ:
³ Անդ:
⁴ Անդ:

երկու գրական լեզուներն եւս էապէս արդէն կազմակերպուած են ինչպէս քերականութեան, այնպէս եւ Ուղղագրութեան եւ արտասանութեան նկատմամբ ...»¹:

Պնդում է միաժամանակ, այն էլ իրաւացիօրէն, որ անցել է երկու գրական լեզուների Ուղղագրութեան մէջ որեւէ փոփոխութիւն կամ տեղաշարժ կատարելու ժամանակները...:

Մէջբերենք Արեղեանի իսկ խօսքերը.

«Ինչքան էլ մեր աշխարհաբարները նոր են, եւ մենք դեռ նոր ենք ապրում ուղղագրութեան վեճերը, բայց մեր այդ լեզուներն արդէն անցել են իրենց սկզբնական շրջանը, երբ պէտք է եղած լինէր ամեն հիմնական փոփոխութիւն ուղղագրութեան մէջ՝ ձեւաբանութեան եւ շարահիսութեան փոփոխութիւնների հետ միասին (sic!)»²:

Կարծէք՝ գործ ունենք բոլորովին ՄԻ ՈՒՐԻՇ հեղինակի հետ, որը նաեւ մինչեւ իսկ կանխատեսում է «ՅՆՅՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՒՄԸ» եթէ որեւէ քախտախնդիր յանդգնի նման քայլի դիմելու.

«Եւ եթէ մեր գրական լեզուներն իրենց սկզբնական շրջանում չեն կրել խոշոր փոփոխութիւններ ուղղագրութեան մէջ եւ, ինչպէս տեսանք, չէին էլ կարող անհրաժեշտօրէն կրել մեծ փոփոխութիւններ, ԱՅՍՈՒՂԵՏԵՒ ԵՒՍ ԱՄԷՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈՒՆՈՒԹԻՒՆ ԱՅԴ ՄԱՍՈՒՄ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԸՆԴՈՒՆԵԼ ԱՌԱՆՅ ՅՆՅՈՒՄՆԵՐԻ, քանի որ իշխում է նոյն հիմունքը, որով ընդունուած է գրաբարի ուղղագրութիւնը»³:

Որքան էլ զանեշտական է իր յետագայ նկրտումների համեմատութեամբ՝ նոյն Արեղեանը նաեւ «զուշացնում» եւ «սաստում» էլ է բոլոր նրանց, որոնք կը համարձակուեն քանդել Մաշտոցեան միասնական եւ միակերպ համակարգուած Ուղղագրութիւնը. ՀՐԱԺԱՐՈՒԷՔ ՄԻԱՆԳԱՍԸՆԴՄԻՇՏ ՆՄԱՆ «ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆ» ԽԵԼԱՅՆՈՐ ՄՏՔԻՅ, իբրեւ «եզրակացութիւն» յայտարարում է անվերապահօրէն...:

Պարզում է նաեւ ինքնահակասամամբ, որ Արեղեանը ԴԷՄ է եղել ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ «ՃԻՍՏ ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՐՉՆԵԼՈՒՆ», եւ որ Մաշտոցեան Ուղղագրութիւնը նաեւ «ՄԵՐ» ստացական դերանումար է բնութագրում: Բնագրային ընթերցմամբ տանք այս խիստ կարեւոր խոստովանութիւնը եւս Նորին Մեծութիւն Պատմութեան համար, որ այնքան անհոգիօրէն ԴՐԺԵՅ ընդամենը մի քանի տարի յետոյ՝ ճակատագրականօրէն աղետալի հետեւանքներով..., որ ՍՐԲԱԳՐԵԼ նոյնիսկ դժկամակում են այսպէս կոչուած «հեղինակութիւններ» նաեւ մեր օրերում.

Ըստ արեղեանական «հիմնադրոյթի», միանգամընդմիջտ պիտի հրաժարուել ուղղագրութեան մէջ հիմնական փոփոխութիւններ մտցնելու ամեն ծայրայեղ մտքից:- Որքան էլ անհատատալի է՝ Արեղեանը յայտարարում է իր Ձեկուցման մէջ իբրեւ «սեփական» եզրակացութիւն.

«Ուստի ՄԻԱՆԳԱՍ ԸՆԴՄԻՇՏ ՊԻՏԻ ՀՐԱԺԱՐՈՒԹԵԼ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՏՅՆԵԼՈՒ ԱՄԷՆ ԾԱՅՐԱՅԵՂ

¹ Անդ:
² Անդ:
³ Անդ:

ՄՏՔԻՑ, որով ցանկանում են մեր ուղղագրությունը խիստ հնչաբանական դարձնել (sic!), որովհետև այդպիսի մտքի գործադրությունը ՀԱՒԱՍԱՐԱԶՕՐ Է ՄԵՐ ՄԵԾ ՋԱՆՔԵՐՈՎ ՉԵՌՔ ԲԵՐՈՒԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒԵԼՈՒՆ, ԱՌՆՈՒԱԶՆ ԳՈՆԷ ԵՐԿՈՒ ԱՅՆՊԻՄԻ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ ՈՒՆԵՆԱԼՈՒՆ, ՈՐՈՆՔ ԻՐԱՐՈՒՑ ԱՆՉԱՓ ՀԵՌՈՒ ԿԸ ԼԻՆԻՆ (sic!)»¹:

Ինքնաձայնակ, ինքնամեղադրանքի եւ ինքնադատապարտման ա-ռանել խիստ բանադրումներ դժուար է պատկերացնել արեղենական ձայնաւեր խեղագրութեան մասին, որ մի քանի տարի յետոյ գիտակցաբար ու դիտումնաւորութեամբ իրականացրեց նոյն ինքը այդ տողերի հեղինակը՝ Մանուկ Աբեղեանը ...:

Գրաբանական այս կարեւոր խոստովանութիւններին անմիջապէս հետեւում են, սակայն, ... «մահանջի» ուղիները ... տրամաբանական այնպիսի ցատկումով, որ իրօք ապշեցնում է Աբեղեանը իր անյարիրութեամբ.

«Փոփոխութեան կուսակիցների այս ծայրայեղութեան կողքին՝ ծայրայեղութեան մէջ են ընկնում, սակայն, նաեւ փոփոխութեան հակառակորդները (sic!), մերժելով ամէն տեսակի փոփոխութիւն: Այստեղ ահա պիտի նկատի ունենանք ուրիշ ազգերի օրինակը: Ուստի տեսնենք, թէ ինչպէս են մտածում եւ վարում ուրիշները. ես կ'առնեմ միայն ֆրանսիացիներին, որոնց անունը յաճախ յիշում են մեր ուղղագրական վեճերի մէջ»²:

Այս առթիւ է, որ Աբեղեանը առաջադրում է ֆրանսիացի քերականներ Բրաշէի եւ Դուսուշէի հեղինակած «Ֆրանսերէնի քերականութիւն. բարձրագոյն դասընթացը» վերնագրով ձեռնարկի «Ուղղագրութիւն» գլուխից չափազանց ուսանելի մի մէջբերում, նաեւ վաղեմի գրական լեզուների Ուղղագրութիւնը «Գարեփոխելու ցաւով» տառապողների, այդ թում եւ իր՝ Աբեղեանի համար.

«Ֆրանսերէնի ուղղագրութիւնը սոսկալի համբաւ ունի. այն իմանալը մեծ պարծանք չէ, բայց մեծ ամօք է չիմանալը, ամենափոքր սխալը վարկաբեկում է հեղինակին եւ ուղղագրութիւն չիմանալը տգիտութիւն է եւ ծաղրելի ...»:

Ֆրանսիացի քերականները այս հարցադրումը ամբողջութեամբ ԲԱՅԱՐ-ՉԱԿԱՊԷՄ ԴԻՇԴ Է նաեւ հայերէնի Մաշտոցեան Ուղղագրութեան համար...:

Ապա մէջբերում քաղուածքը հետեւեալ շարունակութիւնն ունի.

«Ֆրանսերէնի տառերի արժէքը հազուադէպ համաձայն է այն հնչիւնին, որ նրանք ներկայացնում են ...: Որպէսզի ֆրանսերէնի ուղղագրութիւնը կատարեալ լինէր, պէտք է ամէն հնչիւն մի հատ տառով ներկայացուէր, եւ որ այս տառը միայն միեւնոյն հնչիւնի համար պահուած լինէր, ինչպէս *voia* բառի մէջ, որ չորս հնչիւն ունի չորս տառով արտայայտուած: Բայց շատ յաճախ գործ են ածում շատ տառեր միեւնոյն հնչիւնն արտայայտելու համար: Այսպէս *eau*, որ միայն մի հնչիւն (o) է պատկերացնում, կազմուած է երեք տառից. շատ յաճախ (o) է այսպէս միեւնոյն հնչիւնը տարբեր տառերով է արտայայտում: Այսպէս *an* հնչիւնը քսան տեսակ արտայայտուած է գտնում (բերում են օրինակներ), իսկ *in* հնչիւնը քսաներկու տեսակ (բերում են օրինակներ)»:

¹ Անդ, էջ 1057-1058:
² Անդ, էջ 1058:

Ապա այս վաստերից միանգամայն ճիշդ հաստատումներ է կատարում Աբեղեանը հայերէնի համար.

«Ինչպէս տեսնում էք, իրաւ որ ֆրանսերէնի ուղղագրութիւնը մերից շատ անելի դժուար է ...»¹:

Իսկ հայերէնի նուիրականացած Մաշտոցեան Ուղղագրութիւնը ՔԱՆԴԵԼ ՄԿՍԵՅԻՆ ընդամենը ... հիմնագրութեամբ եւ վեւագրութեամբ, մասամբ եւ կիսամասնայն յի բառակցում պատմական հնչիւնափոխութեամբ հազազայինի վերածման պատճառով և բաղաձայնի հետ նոյնացուելու իրողութիւնը չընդունելու համար բարձրացրած անտեղի աղմուկով...:

Աբեղեանը ֆրանսիացի քերականների հարցադրումները քննելիս Ուղղագրութեան տեսութեան առնչութեամբ՝ շարունակում է «խորհրդածել». «Նոյն քերականութեան մէջ մի առ մի թուած են ուղղագրութեան այդ դրութեան պատճառները, եւ թէ ինչպէս դարեր շարունակ աշխատել են ուղղագրութիւնը քերացնել եւ շատ բան հետզհետէ հեշտացրել են մտեցնելով արտասանութեանը. եւ ապա թէ ինչպէս հնչիւնաբանական ուղղագրութիւնը գործադրելն անհնարին է...»²:

Ֆրանսիացի քերականների պնդմամբ՝ «Առաջին երեւոյթից՝ ոչինչ անելի հրապուրիչ չէ, քան այս միակ կանոնը՝ գրել ինչպէս խօսում են. բայց ՈՉԻՆՉ ԱԻԵԼԻ ՅՆՈՐԱԿԱՆ ՉԷ լորջ քննութեան առնելիս: Արդարեւ եթէ ուղղագրութիւնը պէտք է միայն հնչաբանական լինի. եթէ պէտք է գրել՝ ինչպէս խօսում են, ինչպէ՞ս Պիկարդացին եւ Գասկոնացին, Պրովանսացին եւ Նորմանդացին կարող են մի ընդհանուր ուղղագրութիւն ունենալ: Ինչպէ՞ս կը զանազանեն այն ժամանակ *saint* (սուրբ), *sain* (առողջ), *sein* (ծոց), *seing* (ստորագիր), *cinq* (հինգ), *ceint*, որ միեւնոյն հնչիւնն ունին եւ որոնք միեւնոյն տառերը պիտի ունենան: Բազմաթիւ բառեր, որ այլ եւս չեն տարբերում արտասանութեամբ, կը շփոթուին գրութեամբ: Մեր լեզուն կը կորցնի իր սկզբնական դրոշմը եւ իր ազնութեան պատուանունը. միեւնոյն կերպարանքով, բայց երկրայական իմաստով բառերի այս կուտակութեան մէջ ֆրանսերէնը կը դառնայ անընթեռնելի նոյն իսկ նոյն լեզուն խօսողների համար ...»³:

Հետեւում է Աբեղեանի «խորհրդածութիւն»ը. «Ահա մի ՉՕՐԱԻՈՐ ԱՐԳԵԼՔ հնչիւնական ուղղագրութեան համար, որ ... գոյութիւն չունի հայերէնում»: Ուրե՞մն. եթէ համանունների արգելքը իրենց բազմաբանակութեամբ գոյութիւն չունի հայերէնի համար, նշանակում է, սողանցաբար հասկացնում է Աբեղեանը, կարելի է անցնել... հնչիւնական ուղղագրութեան, որ ոչ այլ ինչ է քան ՅՆՈՐԱՍՏՈՒԹԻՒՆ... 1.500-ամեայ մատենագրական հարստութիւն ունեցող գրական լեզուն, Աբեղեանի իսկ բառագործածութեամբ՝ «խառնափնթորելու» համար: Եւ սա այն դէպքում, երբ վերը այլուր տեսանք՝ Աբեղեանը երդում-պատառ էր լինում՝ պնդելով, թէ հնչիւնական ուղղագրութեան անցնելը կործանարար կը լինէր մեր գրական երկու լեզուների համար, կ'առաջացնէր անըմբռնողութիւն եւ դրա հետեւանքով էլ ազգային պատակտում...:

«Հայ Կեանք», Հոկտեմբեր, 1999թ., «Նոր Հայաստան»,
Հոկտեմբեր 16, 1999թ., «Նոր Օր», Նոյեմբեր, 1999թ.:

¹ Անդ:
² Անդ:
³ Անդ, էջ 1058-1059:

**ԱՐԵՂԵԱՆԱԿԱՆ ԽԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀՐԱՄԱՆԱԳՐՈՂ «ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՍՄՍԱՐ»
ՊՕՂՈՍ ՄԱԿԻՆՅԵԱՆԻ ԱՓՍՈՍԱՆՔԸ ԵՒ ...
ՅԵՏԻՆ ՆՊԱՏԱԿԸ**

Արեղեանի խեղագրության դեմ, որքան էլ տարօրինակ է եւ անհատապի, ծառայում է նախ և առաջ Լուսաւորութեան այն ժամանակուայ նախարար եւ արեղեանական խեղագրութեան «կնքահայր» Պօղոս Մակինցեանը: Վերջինիս իսկ խոստովանութեամբ.

«Պէտք է նկատել՝ որ ՆԱԵԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՈՒՄ ԱՅՍ ՀԱՐՑԻ (իմա՝ այսպէս կոչուած «ռեֆորմ»-ի - Լ.Խ.) ՆԿԱՏԱՄԱՐ ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՄԵՐԱԸՆԵՆՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ: Բաւական է յիշել Մալխասեանցի առարկութիւնները...: Նոյն իսկ մեր ընկերների շրջանում շատ կան այնպիսիները, որոնք ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՄԱՉԱՅՆ ՉԵՆ ՆՈՐ ՈՒՂՎԱԳՐՈՒԹԵԱՆ, ԱՅԼ ԸԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԳՐԵԼ ՀԻՆ ՈՒՂՎԱԳՐՈՒԹԵԱՄԲ: ԱՅՍ ԲՈԼՈՐԸ ՄԵՉ ՍՏԻՊՈՒՄ Է ԱՅՍ ՀԱՐՅԸ ՆՈՐԻՑ ԶՆՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ, ՈՐ՝ ԻՆՉՊԷՍ ՅԱՅՏՆԻ Է՝ ԼՈՒԾՈՒԹՅ ԿԻՍԱԿԱՏԱՐ ԿԵՐՊՈՎ (sic!)»¹:

Այս եւ այլ խոստովանութիւններում, որ ստորեւ մեր շարադրանքում ներկայացնելու ենք, բացայայտում են նաեւ հեռամէտ քաղաքական շարժառիթներն ու նպատակադրումները այսպէս կոչուած «արեղեանական «ուղղագրական ռեֆորմ»-ի:

Արեղեանական խեղագրութեան հեռամէտ քաղաքական շարժառիթներն ու նպատակադրումները: Հարկ է արձանագրել, սակայն, բուն շարժառիթները խորհրդային շրջանում «ղեկրետ»ով անցկացուած ուղղագրական երկու ռեֆորմների՝ խնամքով քաջցնում էին հայ մտաւորականութիւնից ու հասարակայնութիւնից Հայաստանում, որոնք մասամբ յայտնի դարձան միայն 1973 թուականին, երբ Երեւանի պետական համալսարանը լոյս ընծայեց Ս. Գիւրոյդաղեանի ուսումնասիրութիւնը՝ «Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն» խորագրով, ինչպէս եւ 1983 թուականին Սփիւռքում (Թեհրան) հրատարակուեց, առաւելապէս մասսայական ընթերցողի համար, Փրոֆ. Ռաֆայէլ Իշխանեանի ուշագրաւ յօդուածը՝ «Մեր ուղղագրական հիմնահարցը» վերնագրով²: Այդ բուն շարժառիթները, որոնք «բարեմիտ» պատճառաբանութիւններով էին քողարկուած, իրականում, սակայն, ինչպէս այժմ առաւել քան բացայայտ որոշակիութեամբ պարզուած է՝ ԱԶԳԱԿՈՐԾԱՆ նպատակներ էին հետապնդում:

¹ «Մարտակոչ», 1924, 5-ը Գեկտեմբերի:

² Տե՛ս «Ալիք» օրաթերթը (Թեհրան), 1983, Մայիսի 21, 22 եւ 23 համարներում:

Առաջին. Մաշտոցեան համակարգում ու կանոնարկուած միասնա-կան եւ միակերպ Ուղղագրութեան վերացմամբ ՎԵՐՋՆԱԿԱՆ երկփեղկում առաջացնել ազգային ամբողջական կառոյցում, որի շաղկապող հոգեւոր խարխիւլը իր յուսալի յարատեւութեամբ Հայոց լեզուի՝ Մաշտոցեան Ուղղագրութիւնն էր հանդիսանում արժանատրապէս հարիւրամեակներ ու հազարամեակներ շարունակ: Իսկ երկփեղկումը, իր հերթին, նպատակ էր հետապնդում՝ ԿՏՐԵԼ Սփիւռքը Հայրենիքից եւ ՄԵԿՈՒՍԱՅՆԵԼ հայրենաբնակ ժողովրդին արտերկրի հայութիւնից՝ հոգեւոր ընդհանրական մշակոյթի հաղորդակցման կասեցումով ու արգելումով, որին տեմ-դագին փութկոտութեամբ ձգտում էր ամէն կերպ ապագայնացած մտաւորակա-նութիւնը իր արդէն իսկ որդեգրած ռուսական լեզուամտածողութեամբ ու հոգեբա-նութեամբ, որը եւ տիրական դիրքեր էր գրաւել կուսակցական-պետական եւ մշակութային բարձրագոյն ոլորտներում: Այս ծրագիրն իրագործում էր համաձայն լեւինիզմի եւ ստալինիզմի այն խեղումած գաղափարաբանական պատկերացման, որ իբրեւ թէ «սովետական մշակոյթ»-ի ստեղծման համար նախապայման էր, բացարձակապէս դասակարգային պայքարի տեսութեան իսկ թելադրանքով՝ «հերմետիկ» խոստապահանջութեամբ նրա անջատումն ու առանձնացումը Սփիւռքեան «բուրժուական» ամէն մի ազդեցութիւնից ու ներքափանցումից...:

Երկրորդ. նոյն նպատակից բխող մեկնակէտն այն էր, որ Մաշտոցեան համակարգում միասնական ու միակերպ ուղղագրութեան վերացումով անջրպետ կ'առաջանար նաեւ անցեալի մեր մեծահարուստ հոգեւոր ժառանգութեան եւ սովետահայ մշակոյթի միջուկ, որով եւ կը հեշտացուէր դասական հնամենի մեր ազի իսպառ «խորհրդայնացումը»՝ ռուսականացման ճուրմի ամբողջական աւարտով, ըստ «ձեռով ազգային եւ բովանդակութեամբ սոցիալիստական» կեղծ թեզիսի ծրագրային պահանջների իրականացման...:

Երրորդ եւ վերջնական նպատակադրումը, որ առաւել արտառոցն ու անհեթեթն է, խոստովանո՞ւմ է ցինիկաբար ուղղագրական ռեֆորմի նախաձեռնողներից ու իրականացնողներից Խորհրդային Հայաստանի Լուսաւորութեան նախարար Պօղոս Մակինցեանը.

«Առանձնապէս ես ոչ մի դէպքում ոչ միայն ձայն չէի տայ ի նպաստ այդ ռեֆորմին՝ եթէ նրան ՉՀԱՍԱՐԷԻ ՄԻ ԱՍՏԻՃԱՆ՝ ԳԷՊԻ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՆՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ ԳԻՒՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ...»¹:

Աւելին. ողբերգա-զաւեշտականն այն է, որ Մակինցեանը ինքն էլ է հասկանում արեղեանական ուղղագրական ռեֆորմի ԱՆՊԷՏԸՈՒԹԻՒՆ լինելը՝ յայտարարելով, որ նրան ամենեւին ՉԷՐ ԿԱՐԵԼԻ ԶՈՀԱՐԵՐԵԼ ... Մաշտոցեան Ազգային Ուղղագրական համակարգը, երբ վերջինս լիովին կատարում էր գրական հաղորդակցումը դարերի յարահողով ընթացքում ո՛չ միայն իրարայաջորդող սերունդների, այլև մեր ժողովրդի պատմականօրէն առաջացած արեւելահայ եւ

¹ Տե՛ս «Մարտակոչ», 1925, Գեկտեմբեր, Մակինցեանի յօդուածը, որ քարճանաբար ներկայացրել է Ստ. Մալխասեանը ռուսերէնից, տպագրուած կենտրոնական մանուկում՝ «Заря Востока» թերթի 1924 թուականի Նոյեմբերի 29-ի համարում՝ «О латинском шрифте» (ի. լատինական այբուբենի մասին)՝ վերնագրով: Հարկ է արձանագրել նաեւ, որ դեռեւս նախքան այդ էլ, 1919 թուականին Մոսկուայում Ռուսաստանի ոչ-ռուս ժողովուրդների լուսաւորութեան խնդիրներին նուիրուած ժողովում, իբրեւ գլխատըր գեկուցող հանդէս է եկել նոյնիմբը Պ. Մակինցեանը՝ այսպիսի քեմալով... «Լատինական միատեսակ այբուբենի մասին ՌԱՅՍՈՒ-ի ժողովուրդների համար»:

արեւմտահայ հաստատման միջոց: Այդ իսկ պատճառով Լուսաւորութեան այս վայ-նախարարը հարկադրա-բար խոստովանում է նաեւ.

«Եթէ ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՌԵՖՈՐՄԱՆ ՎԻՃԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԱՆՈՉԵԼ-ՄՆԱԼ ԿԵՍ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ՝ ԱՅՍ ԴԵՊԵՌՈՒՄ ԱՌԵԼԻ ԼԱՒ ԿԸ ԼԻՆԵՐ ԱՌԱՆՑ ԱՅԼԵՒԱՅԼԻ ԴԱՌՆԱԼ ՀԻՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ...»¹:

Բայց ինքնամերկացմամբ առաւել յստակացնելով իր հրէշատը նպատակա-դրումը, Պ. Մակինցեանը առանց դոյզն ինչ խղճի խայթի ու զգաստութեան՝ շտապում է ՅՈՒՂՂԱՐԿԱՒՈՐԵԼՈՒ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ «ԱՐԻՏԻ»-Ը ՆԵՏԵԼՈՒ ՄԵՐ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԱՆՊԱՐՏԵԼԻՈՒԹԵԱՆ ԱՅՆ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ, ՈՐՈՆ-Ե ԶԱՐԹԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՍԲ ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ԵՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՐՀԱՒԻՐՔՆԵՐԻ ԽԱՉՈՒԴՆԵՐՈՒՄ ԱՆԳԱՄ ՉՄՈԼՈՐՈՒԵԼՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՄՈՒԹԵԱՍԲ ԵՒ ԱՆՍԱՄԱՆՈՒԹԵԱՍԲ...:

Չաւեշտօրէն «Լուսաւորութեան» նախարար յորջորջումը զառանցում է միա-ժամանակ.

«ՈՐՔԱՆ ՇՈՒՏ ՄԵՆ-Ե ԱՐԻՏԻԸ ՆԵՏԵՆ-Ե «ՄԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ-ԵԱՆ» ԱՆ-ԿԻՒՆԱՒՈՐ, ՏԳԵՂ ԵՒ ԱՉՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՆԱՄԱԿԱՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ (?!), ԱՅՆՔԱՆ ՇՈՒՏ ԿԱԶՏՈՒԹԵԱՆ ԱՐԵՂԵԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ (sic!)»²: Ահա թէ որտեղ է քաղում շան գլուխը ուղղագրական ռեֆորմ կատարելու շար-ժառիքների պետական մտայղացմամբ:

Յայտնի բանասէր եւ հայ դպրութեան պատմութեան քաջագիտակ Վ. Հացունին, պատասխանելով Մակինցեանի այս ծաբոտութիւն, «Բազմավէպ»ում 1924 թուականին հրատարակած «Երեւանեան ուղղագրութեան դէմ» ուշագրաւ յորումում, անսերենք շիտակութեամբ գրում է.

«Ո՛Չ, ՊԱՐՈՆ. ՉԵՐ ԿԱՐԾԻՔԸ ԿԸ ԶԱՐՄԱՐԻ ԱՐԻՏԻՆ, ԲԱՅՑ ՄԵՍ-ՐՈՐԵԱՆ ԳԻՐԸ Ո՛Չ. ԵՒ ՉԵՐ ԱՆԿԻՆԱՎՈՐ ԱԿՆՈՑՆԵՐՆ ԵՆ՝ ՈՐ ԱՅԳՊԵՍ ԿԸ ՅՈՒՏՆԵՆ ՀԱՅԵՎԱՅԻՈՅՆ ԳԻՏԵԸ: Անոր զիրն ընդհակառակն բողոքածն էր, ինչպէս կ'երեւի ցարդ հին երկաթագիր ձեռագրաց մէջ, եւ միջին դարն անկիւնա-տրեց...»³:

Հայ մշակոյթի ու լուսաւորութեան պատմութեանը ողբալիօրէն անգիտակ այս «կրքական» նախարարի բարբառանքին հակադրում ենք գերմանացի հայագէտ Իոզէֆ Մարկուարտի գիտական գնահատականը հայերէնի Մեսրոպաստեղծ այբուբենի մասին: Համեմատութեան եւ ընդհանրացման ենթարկելով Մաշտոցեան գրահամակարգը այլ ժողովուրդների այբբենական համակարգերի հետ, նա յանգել է հետեւեալ խորաքննի եզրակացութեան. եթէ մենք նկատի առնենք պատ-մական այն բացառիկ ծանր իրադրութիւնը, որի մէջ Մաշտոցը կարողացաւ զարթ-նեցնել հայ ժողովրդի ազգային գիտակցութիւն, եւ նրա այդ գործը համեմատենք Պիպինի եւ նրա զինակիր Վիլֆրիդի գործունէութեան հետ՝ ԱՅՍ ՎԵՐՁԻՆՆԵՐԸ

«ԽԵՂՃ ԹՉՈՒԿՆԵՐ Կ'ԵՐԵՒԱՆ, ՀԱՄԵՍԱՏՈՒԹԵԱՍԲ ՄՏՔԻ ԱՅԳ ՀՍԿԱ-ՅԻ»¹:

Դեռ աւելին. գերմանացի այս երախտատը հայագէտը նաեւ հետեւեալ հաս-տատումն անելով՝ եզրափակում է իր միտքը հայ մատենագրութեան ռաւիլիքաների՝ Առաջին Թարգմանիչների մասին.

«ՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՈՐՆ ԻՐ ԾՈՑԻՑ ԾՆԵԼ Ե ԱՅԳՊԻՍԻ ՄԱՐԴԻԿ ԵՒ ՊԱՇՏՈՒՄ Ե ՆՐԱՆՑ, ՈՐՊԵՍ ԻՐ ՀԵՐՈՄՆԵՐԻ, ՔԱՆԻ ԴԵՌ ՆԱ ՀԵՏԵՒՈՒՄ Ե ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԻՆ, ՉԻ՝ ԿԱՐԵԼԻ ԵՐԲԵՔ ԲՆԱՋՆՁՈՒԹԵԼ, ՈՐՔԱՆ ԵԼ ԹՈՒՐՔԵՐԸ, ԲՐԴԵՐԸ, ԹԱԹԱՐՆԵՐԸ, ՊԱՐՄԻԿՆԵՐԸ ԵՒ ԲՈԼՈՐ ՄԵԾ ՏԵ-ՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱԿԱՌԱԿ ԼԻՆԵՆ ՆՐԱՆ...»²:

Հարց է ծագում. այսպէս կոչում «Լուսաւորութեան կոմիսարը» «արխիւ ու-ղարկելով» Մաշտոցեան այբուբենի գրահամակարգը՝ փոխարէնը ի՞նչպիսին է հրամցնում: Պարզում է՝ Լատիններէն գրահամակարգը..., որի առնչութեամբ չի էլ քարցնում. «Մարտակոչ»ի 1924 թուականի Դեկտեմբերի 5-ի համարում Մակինցե-անը գրում է՝ խոստովանարար.

«ՄԵՆ-Ե ԿԱՍԱՐԵԼԱՊԵՍ ՀԱՄՈՋՈՒԵՑԻՆ-Ե՝ ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՌԵՖՈՐ-ՄԸ ՄԵՉ ԽՉԵՑ ԱՆՋԱՏԵՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԵՐԻՑ (sic!)»: Անսօղ է, անշուշտ, արհամարհական ոճը՝ «տարրերից», եւ ո՛չ թէ՝ «ժողովրդ-րից»...: Նման հաստատումը, հարկ է արձանագրել, նաեւ բուն իսկ իրենց ապագ-գային քաղաքական նկրտումների ամենայաջող իրականացումն էր...:

Նաեւ ամբապնդում մի այլ խոստովանութեամբ՝ այդ նոյն յայտարարութեան շարունակութեանը.

«ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ՝ ՈՐ ՄԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՐԱՍԱ-ՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՏԱՐԱԾՈՒՄ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ»:

Եւ կամ՝ մի նոր հիասքափեցուցիչ խոստովանութիւն եւս իր՝ Մակինցեանի, պետական այբերի եւ յատկապէս շարքաստիկ ռեֆորմի հեղինակի՝ Արեղեանի համար.

«Հէնց այս մի հանգամանքն (իմա՝ արեղեանական ուղղագրութեամբ հրատա-րակումը հայաստանեան գրքերի - Լ.Խ.) ԱՅՆՔԱՆ ԾԱՆՐԱԿՇԻՌ Ե, ՈՐ ՀԱՐ-ԿԱԴՐՈՒՄ Ե ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԵՐԱՅՆԵԼՈՒ ՄԵՋՏԵՂԻՑ (sic!)»:

«ՈՐՈՎՀԵՏԵՒ ՊԱՐՁՈՒԵՑ՝ ՈՐ ՅՕԳՈՒՏ ԱՅՍ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՐ ԱՐԱԾ ԱՄԲՈՂՁ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ ՎԻՇԵՑ (sic!)...»:

Նաեւ.

«... ՄԵՐ ՏՕՆԸ (իմա՝ սովետական իշխանութեան հաստատման չորրորդ տարեկիցը - Լ.Խ.) ԱՄԵՆԵՒԻՆ ՄԹԱԳՆԱԾ ՉԵՆ-Ե ԼԻՆԻ՝ ԽՈՍ-ՏՈՎԱՆԵԼՈՎ ԱՆԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԻ»:

Ապա եւ՝ ահաւոր մի խոստովանութիւն եւս նոյն կոմիսարի գրչից.

¹ «Մարտակոչ», 1924, 5-ը Դեկտեմբերի:
² Անդ:
³ Վ. Հացունի, Երեւանեան ուղղագրութեան դէմ, տե՛ս «Բազմավէպ», 1925, էջ 77:

¹ Տե՛ս Իոզէֆ Մարկուարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի, քարգծ. Ա. Վարդանեանի, Վիեննա, 1913, էջ 8:
² Անդ:

«ԻՍԿ ԵԹԵ ԱԲԵՂԵԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆՈՒԹԵԼ Է ՅԱԻՏ-ԵԱՆՍ ԺԱՄԱՆԱԿԱՑ, ՍԱ ԿԸ ԼԻՆԷՐ ԲԱՑԱՐՉԱԿ ՅԵՏԱԳԻՍՈՒԹԻՒՆ (sic!)»: Իսկ ընդամենը ... երկու տարի առաջ Աբեղեանը յորջորջում էր ԱՌԱՋԱԳԻՍԱԿԱՆ... պաշտօնական բնութագրմամբ:

Եւ դարձեալ.

«ՆՐԱ (իմա՝ Աբեղեանի - Լ.Խ.) ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԱՅՆՔԱՆ Է ԱՅԼԱՆԳԱԿԵԼ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ, ՈՐ ՇԱՏԵՐՆ ԱՐԴԷՆ ԵՐԿՈՒ ԵՒ ԿԷՍ ՏԱՐԻ ՍԻ ՄԻԱՅՆ ԱՅՍ ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՎ ՀԱՆԴԵՐՉ՝ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՅԵԼ ՆՐԱՆ ԸՆՏԵԼԱՆԱԼ...»¹:

Բուն նպատակակէտը՝ լատիներէն այբուբենի անցումն իրականացնելն էր ու նրա «որդեգրումը ապահովելը»:-«Լուսաւորութեան» այս վայ-կոմիսարը դարաւոր մեծահարուստ հոյակապ մատենագրութիւն եւ մշակոյթ ստեղծած հայ ժողովրդին «յարմար» է համարում «հաւասարեցնելու» կովկասեան անգիր վաչկատուն էքնիկական վայրենի խմբաւորումների հետ, ինչպիսիք են՝ չովաշները, չերքեզները, կովկասի թուրքերը եւ այլն: Մեկնակէտն այն է իր հարցադրման, որ՝

«ՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՐ (նկատի ունի՝ լատիներէնը - Լ.Խ.) ՄՏՑՆԵԼԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՐ ԲԱՋՄԱԼԵԶՎԵԱՆ ԿՈՎԿԱՍՑՈՑ ՈՉ ՄԻԱՅՆ ԽՈՍԵԼ ԻՐԱՐ ՀԵՏ ՉԱՆԱՋԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ, ԱՅԼ ԵՒ ԿԱՐԳԱԼ ՉԱՆԱՋԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ, ԾԱՆՕԹԱՆԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ (sic!)»²...: Իսկապէ՛ս՝ Տգիտութիւնը սահման չունի...: Այդ ինչպէ՛ս հնարատր է ծանօթանալ անգիր ժողովուրդների ... գրականութեան հետ բացառապէս ու միայն նրանց ընդհանրական այբուբենին ծանօթ լինելով - դա լոկ իրեն՝ Լուսաւորութեան կոմիսար Մակինցեանին է յայտնի:

Նախապէս Թառայեանի, Ստեփանի եւ այլոց համանման թէզը լատիներէնի որդեգրման կովկասեան անգիր ժողովուրդների կողմից կրկին շրջանառութեան մէջ դնելով՝ Մակինցեանը նաեւ ... «հիմնաւորում է. «Մի քանի անգիր ազգեր, ինչպէս չովաշները, չերեմիսները քիչ ժամանակ առաջ ընդունել էին ուսերէն այբուբենն ու զիրը: Բայց արդէն յաջորդ հերթին՝ չերքեզների, ափսազների համար կազմուեց մի այբուբեն, որ հիմնուած է լատինական գրի վրայ: Նոյնպէս վարուեցին եւ կիրգիզները: Թուրքերն եւս իրենց համար ստեղծեցին նոր այբուբեն, որ դարձեալ հիմնուած է լատինականի վրայ»:

Նաեւ իր շփոթ պատկերացումների ու առաջարկութիւնների համար Լուսաւորութեան այս վայ-կոմիսարը լատիներէնի անցման աստիճանաւորումն է «սահմանում»՝ սկզբում թողնելով հայ մամուլում եւ հրատարակութիւններում ... «ազատ մրցակցութիւն» հայերէնի եւ լատիներէնի կիրառութեան, բայց եւ «անասան» հաւատքն ունենալով, որ ... լատինական գիրը կ'ընդունուի Հայաստանի հանրապետութիւնում: Յնորարարութիւն է, բայց եւ՝ տխուր իրողութիւն, երբ սեւով սպիտակի վրայ կարդում ենք, առանց, սակայն, հաւատալու մեր աչքերին.

«Մենք չենք կասկածում, որ լիակատար ազատութեան դէպքում ամենակարծ ժամանակի ընթացքում հաղթութիւնը կը տանի լատինական գիրը (sic!)...»³:

¹ «Մարտակոչ», 1925, 5-ը Դ-եկտեմբերի:

² Անդ:

³ Անդ:

Եւ ի՞նչն է արտառոցը Մաշտոցեան համակարգում միասնական եւ միակերպ Համազգային Ուղղադրութեան ճակատագիրը կամայականօրէն որոշող այս բանգետի պնդումներում. նա կարծում է թէ՛

«ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ԷԼ ԱԻԵԼԻ ՀԵՇՏ ԿԸ ԼԻՆԷ ԿԱՄՈՋԵԼ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԳԻՐԸ ԳՈՐԾԱԾԵԼ ՔԱՆ ԱԲԵՂԵԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ... (sic!)»¹:

Ի դէպ՝ արձանագրենք նաեւ պատմութեան համար. դեռեւս 1921 թուականին Ռուս. հեռ. ընկ. գործերի վարիչ «հայազգի» Բոգդատիւրը (նախկինում՝ Բոգդատեան) մինչեւ անգամ գործնական նպատակով հայերէնի համար ... «յարմարեցում» այբուբեն է յերիւրել, որ եւ ... կիրառելի էր դիտում նաեւ ... կովկասեան լեզուների համար: Ոչ-մասնագէտի սիրողական մի բախտախնդրի նախաձեռնութեամբ կազմածն է.

Aa - ա	Ćć - չ	Gg - գ	Jj - յ	Mm - մ	Pp - փ	Tt - տ
Bb - բ	Dd - դ	Ĝĝ - ջ	Kk - կ	Nn - ն	Ŕŕ - ռ	Tt - ծ
Cc - գ	Ee - ե	Hh - հ	Ķķ - ք	Oo - օ	Ss - ս	Ŧŧ - փ
Čč - ճ	Ff - ֆ	Ii - ի	Ll - լ	Pp - պ	Šš - շ	Uu - մ
Vv - վ	Xx - խ	Yy - ղ	Zz - զ	Žž - ժ	Zz - ձ	jev - եւ
						Ja - յա Uu - մ ² :

Մակինցեանի յօդուածում ակնարկում է նաեւ այն մասին, որ Բուլղարիայում նոյնիսկ լատիներէն տառերով հայերէն թերթ է տպուել, բայց ընդամենը երկու համար: Նկատի ունենալով նաեւ Ն.Մառի լատինատառ գիտական տառադարձութեան համար նախատեսուած այբուբենը, որ կիրառելի չէ ամենեւին հայերէն կենդանի լեզուի համար, տգիտաբար իր հրճուանքն է յայտնում Մակինցեանը՝ «պէտք էր աւելի արմատապէս կատարել ռեֆորմը, այն ուղղութեամբ, որ բոլոր կովկասեան ազգերը միանային մի այբուբենի հիման վրայ» - ահա եւ ցնդարանութեան զլուխգործոց առաջարկը իր խեղկատակութեամբ մեր ազգային այբուբենի նկատմամբ...: Այս բախտախնդիր կոմիսարը, չբաւարարելով այսբանով, իսկոյն ... ձաղկում եւ դատափետում է հէնց ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆԻՆ իր ... «անյաջող ուղղագրական ռեֆորմի» համար՝ արժեզրկելով այն, ոչ աւել ոչ պակաս՝ իբրեւ «վիժուածք»ի...:

Եւ այն, ինչ որ չէր յանդգնել (եւ ո՛չ որ չի կարող յանդգնել) փոփոխութեան ենթարկել Մաշտոցեան այբուբենի բաղաձայնական համակարգը, այս արկածախնդիրը առաջարկում էր նաեւ այդ՝ նախքան ... լատիներէնի այբուբենը որդեգրելը, որ քննեցինք:

Միանգամայն չափազանց դիպուկ եւ միաժամանակ ողբալու չափ տխուր հետեւութեան է յանգում Վ. Հացունին՝ Հայաստանի լուսաւորութեան կոմիսարի այս ձաբոտութեան առթիւ, դատնակսկիծ գրելով. «Եւ եթէ երբեք յաջողի կովկասեան

¹ Անդ:

² Լատիներէն-հայերէն համադրական այբուբենը ըստ Ս. Գիլբրտաղեանի նշումն աշխատութեան, էջ 338:

ազգերուն գրեթե միութիւնը, եւ Երեւան տարուի եւ ընկղմի անդարձաբար նոյն հոսանքին մէջ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԱԶԱԾ ԶԱՂՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՅԻՇԱՍԱԿ ՍԸ ՄԻԱՅՆ ՊԻՏԻ ՄՆԱՅ ԱՆՈՐ ԱՅՆՈՒՀԵՏԵՒ. ԱՆՅԱԾ ՅԻՇԱՍԱԿ ՍԸ...»¹:

Արեղեանը դեռ չէր հասցրել տպագրել իր «Ուղղագրութեան ռեֆորմը» ծառայուն գրութիւնը 1925 թուականի սկզբներին, երբ «Մարտակոչ»-ում երեւացել էր Մակինցեանի «խոստովանութիւնները» եւ «ժխտաբափութիւնները» արեղեանական ուղղագրութիւնից, ինչպէս եւ բացայայտումները իր յետին նպատակների՝ լատինատառ գրահամակարգին անցնելու ցնդարանութիւններով...:

Մանուկ Արեղեանը իբրեւ թէ «խաբուած» է համարում իրեն: Մանուկ Արեղեանը իրեն... «խաբուած» է յայտարարում՝ «վշտահար» ի ու «դառնացած» ի տեսք ընդունելով իր «Յեռ Գրութեամբ», որ հանդիպում ենք նշում ծառայուն գրութեան աւարտին.

«P.S.

Այս գիրքը վեց ամիս առաջ, 1924 թ. մայիսին, արդէն պատրաստ էր եւ յունիսին տպագրութեան յանձնուած, երբ Թիֆլիսի «Заря Востока» քերթի մէջ, նոյն թուի նոյեմբեր ամսի 29-ի համարում, լոյս տեսաւ ընկ. Պ. Մակինցեանի մի յօդուածը, որի մէջ նա առաջարկում է բողոքել սահակ-մեսրոպեան տառերը եւ գրել լատիներէն տառերով: Այդ յօդուածի մէջ շօշափում է նաեւ ուղղագրութեան խնդիրը ՄԻ ԶԱՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ»²:

Թափանցիկ քօղարկմամբ՝ կարծես թէ Արեղեանը ՈՉ ՄԻ ՄԵՂՄԱԿՑՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ Մաշտոցեան համազգային ուղղագրութեան քանդման նախաձեռնումներում, երբ ձեռները լուսնալով «անմեղսունակ» տեսք է ընդունում փարիսեցիաբար. «Ժամանակին լուսնոլկում Պ. Մակինցեանը նոր ուղղագրութեան ղեկրեւի սկզբում գրել է. «Ժողովրդական լայն խաւերի համար հայրենի գրագիտութեան ուսումը հեշտացնելու, ընդհանուր կրթութիւնը բարձրացնելու եւ դպրոցն ուղղագրութիւն սովորելիս գործ դրած ԱՆՊԵՏՔ եւ ԱՊԱՐԴԻՒՆ ԺԱՄԱՎԱՃԱՆՈՒԹԻՒՆԻՅ եւ ԱՇԽԱՍԱՆՔԻՅ ԱԶՍԵԼՈՒ ՆՊԱՍԱԿԸ»³: Բայց ուշադիր ընթերցելիս՝ ծանօթ տողերի հանդիպած ես կարծում, որ Արեղեանի գրչին են պատկանել նրա իսկ մտքերի կրկնութեամբ, որ այլուր մեր սոյն Ուսումնասիրութեան մէջ նաեւ վերարձարծել ենք:

Մանուկ Արեղեանի աշխատութիւնների ակադեմիական հրատարակութիւնում անշուշտ կեղծ պնդում է արուած աշխատասիրողի կողմից Ծանօթագրութիւններում, երբ յայտարարում է՝ Արեղեանի սուտը «հաստատելով», թէ «... ԱՌԱՆՅ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԶՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ, սոյն գեկուցման հիման վրայ կազմում ու հրապարակում է «Նոր ուղղագրութեան մասին»՝ ՀՄԻՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի 1922 թ. մարտի 4-ի ղեկրետը եւ անյապաղ դրում գործողութեան մէջ»⁴:

Ապա շարունակում է Արեղեանը՝ «անմեղսակից» ձեւանալով. «Իսկ այժմ նա (իմա՝ Մակինցեանը - Լ.Խ.) յայտնում է, թէ ինքն այն ժամանակ իսկապէս մի ուրիշ,

¹ Վ. Հացունի, նշում յօդուածը, տե՛ս «Բազմալէս», 1925, էջ 78:

² Մանուկ Արեղեան, Երկեր, Հատոր Ը, էջ 490:

³ Անդ, էջ 490-491:

⁴ Անդ, էջ 655:

գաղտնի նպատակ է ունեցել եւ թէ ինքը «ոչ մի դէպքում ոչ միայն ձայն չէր տալ ռեֆորմի համար, այլեւ օրինագիծ չէր մտցնիլ Կոմիսարների Խորհուրդը, եթէ ուղղագրութեան ռեֆորմը չհամարէր իբրեւ մի աստիճան, որ հեշտացնում է լատիններէն տառերին անցնելը»¹:

Բայց եւ Արեղեանը իրեն մատնում է անմիջապէս յաջորդող տողերում, երբ բանից անտեղեակ ձեւանալով նաեւ պնդում է. «ԱՅԺՄ Է ՄԻԱՅՆ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԴԱՆՆՈՒՄ, թէ ինչու նա ուղղագրութեան ռեֆորմի խնդիրն (այսինքն Արեղեանի իսկ գեկուցումը ամբողջութեամբ՝ Արեղեանի՝ իսկ առաջարկութիւններով ու ձեւակերպումներով, այն էլ անփոփոխ կերպով, փոխանակ Ուղղագրական հարցերի գծով նշանակուած Յանձնաժողովի առաջարկութիւնների - Լ.Խ.) ամբողջական ձեւով ներկայացրեց Կոմիսարների Խորհրդին: Նա այդպէս վարուել է, որովհետեւ լաւ գիտէ եւ իր այդ յօդուածի մէջ մի բանի անգամ զանգան ձեւերով պարզում է, որ «հա-յերէնի ուղղագրութեան կատարեալ ռեֆորմից յետոյ» միայն հնարաւոր կլինի լատիներէնին անցնելը (խեղճ Արեղեան՝ բանից անտեղեակ - Լ.Խ.). ուստի եւ նա առաջարկում է ԲԱՂԱԶԱՅՆ ՏԱՌԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԷԼ ՓՈՒՍԵԼ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՍԱՏ ԴԱՐՉՆԵԼ, «ՄԻՆՉԵՒ ԾԱՅԻՐԸ ՏԱՆԵԼ ՈՒՖՈՐՄԸ»²:

Բայց չէ՛ որ Մակինցեանը, ինչպէս առարկայական փաստերով ու վկայակոչումներով ցոյց տուցինք քիչ վերը, դեռեւս 1919 թուականին խորհրդային կենտրոնական կառավարութեան նիստերի ամբիւնից, իբրեւ փոքրամասնութիւնների համաժողովի գլխաւոր գեկուցող, ՊԱՐՉԵԼ ԷՐ իր դիտաւորութիւնները այն մասին, որ ... ժամն է հասել լատիներէն այբուբենին անցնելու կովկասեան ժողովուրդների, այդ թում եւ հայ ժողովրդի համար...: Ի՞նչ գաղտնիքի բացայայտման մասին է խօսքը...:

Ապա իր «չքննադատ» եւ արդարացումը հարիւր տոկոսի բարձրացնել ուզեցնալով՝ Արեղեանը կեղծատրաբար գրում է. «Ես կարծում եմ, որ աւելի լաւ կլինէր, եթէ նախկին լուսնոլկումն ուղղագրութեան ղեկրեւի սկզբում հէնց այն գրած լինէր, ինչ որ ինքն իբրեւ գաղտնի նպատակ ունեցել է, այսինքն՝ լատիներէն տառերին անցնելու նպատակը: Այն ժամանակ գուցէ ժողովրդական կոմիսարներից մէկը կամ միւսը, գուցէ եւ մեծամասնութիւնը ձայն չէր տալ ուղղագրութեան ռեֆորմին, եւ գուցէ չէր լինիլ այն գուարճալի դրութիւնը, որի մէջ ընկած է ընկ. Պ. Մակինցեանը (առաջին հերթին՝ ինքը Արեղեանը - Լ.Խ.), գրելով որ՝ եթէ լատիներէն տառերը չընդունուեն, այն ժամանակ «աւելի լաւ է հին ուղղագրութեանն անցնել», որովհետեւ արտասահմանի հայերը Սիբիրայում, Կ. Պոլսում եւ այլուր չեն անցել նոր ուղղագրութեանը եւ նոյնիսկ հակառակ են դրան»³: Իսկ ընդհանրապէս Մաշտոցեան համակարգում միասնական ու միակերպ համազգային ուղղագրութիւնը լատիներէնով փոխարինելու Մակինցեանի գառանցանքի մասին Արեղեանը ոչ մի գայրոյք, ոչ մի վրդովմունք չի արտայայտում..., կարծէք Մակինցեանի «յայտնութիւնները» բոլորովին անկարեւոր՝ երկրորդական բաների մասին եղած լինէին...:

Նաեւ Պիղատոսի պէս փարիսեցիաբար չքննել ձեւանալով՝ Արեղեանը գրում է. «Ինչ որ ընկ. Մակինցեանը այժմ է մտածում, պէտք է խորհրդածէր 1922 թ., երբ իր կազմած Ուղղագրական յանձնաժողովի արձանագրութեան մէջ կարդում էր, թէ

¹ Անդ, էջ 491:

² Անդ, էջ 491:

³ Անդ:

արեւմտեան հայերը դէմ կրլինեն ուղղագրութեան փոփոխութեանը. երբ ես նոյն բուրի փետրուարի 25-ին «Ճորճիդային Հա-յաստանի» մէջ մի երկրորդ անգամ գրում էի, որ ուղղագրութեան ռեֆորմն այնպէս հեշտ ու արագ չի անցնիլ, ինչպէս կարծում են, եւ մէկ անգամից չի ընդունվիլ ամենքից եւ ամէն տեղ. նոյնիսկ Հայաստանի սահմաններում նոր ուղղագրութեան ընդհանրանալու համար՝ առնուազն քսան տարի ժամանակի պահանջ էի դնում, աւելացնելով թէ մի երեսուն եւ հինգ տարի յետոյ միայն՝ հին ուղղագրութեան սակաւաթիւ հնասէր ծերունիները կը շարունակեն գրել Հայաստանում. իսկ Կ.-Պոլսի եւ այլուր ցրուած հայերի համար գրում էի, թէ նրանք աւելի են կապուած հինին: Բայց այն ժամանակ ընկ. Մակինցեանը նշանակութիւն չէր տալիս զտղթական հայերին, որոնց արժէքն այժմ է մեծացել նրա աչքին: Երեւի յիշում են շատերը ընկ. Մակինցեանի կծու արտայայտութիւնը արեւմտահայ կոմսերվատիզմի գաղափարախօս Ե. Օտեանի հասցէին: Ի՞նչ փոխուեց այս կարճ ժամանակամիջոցին(sic!)»¹:

Իր կանխատեսումներում, սակայն, չարաչար սխալուեց Արեղեանը, երբ իր իսկ կենդանութեանը ականատես եղաւ, թէ ինչպէ՛ս իր խեղագրութիւնը երկու տասնամեակ էլ կեանք չունեցաւ ... ու չքացաւ երկրորդ օրապակաս ռեֆորմի ընդունմամբ:

Ինչպէս ակնբախ է բերուած ընդարձակ մէջբերումից, Արեղեանը «վրդովուած» է նրա համար, որ Մակինցեանը ... փոխել է իր վերաբերմունքը եւ որ վերջինս «մեծ կարեւորութիւն» է տալիս արեւմտահայութեան ընդդիմութեանը իր ռեֆորմի նկատմամբ: Հասկացողին շա՛տ բարեւ...:

Արեղեանը անկեղծ եւ ազնիւ չէ, սակայն, երբ վերաբերմունքային նոյն «կծու արտայայտութիւն»ներն է ունեցել արեւմտահայութեան նկատմամբ. դեռ «Ճորճիդային Հայաստան» կառավարական թերթի 1922 թ. փետրուարի 12-ի համարում Արեղեանը ծաւալուն յօդուածով էր հանդես եկել՝ հայերէնի խեղագրութեան իր առաջարկութիւնների «հիմնաւորումներով» ու ջատագովութեամբ, որ ի վերջոյ ընդունուի կառավարական որոշմամբ իր մշակած խեղումներով: Լուսժողկոմատի դեկրետի հրապարակումից ընդամենը ՉՈՐՄ ՇԱԲԱԹ ԱՌԱՋ, ԿԱՆԻՆԵԼՈՎ ԿԱՌՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ Արեղեանը ԲԱՌԱՅԻ պնդում է. «Լուսաւորութեան տարածման համար ուղղագրութեան հարցը քաղաքական հարց է», - գրում է Արեղեանը, ապա շարունակում՝ դարձեալ ԿԱՆԻՆԱՊԷՄ կրկնելով ՅԵ-SԱԳԱՅՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ 1922 թուականի Մարտի 4-ի դեկրետի ձեւակերպումը ԲԱՌ ԱՌ ԲԱՌ. «... Հայ լեզուի ուղղագրութեան ռեֆորմի խնդիրը Հայաստանի հեղափոխական իշխանութեան հեթոքական խնդիրներից միսն է»: Միանգամայն հասկանալի է, թէ ո՛վ՝ ո՛ւմ ձեւակերպումն է նոյնութեամբ հաստատում...: Այս առնչութեամբ Ս. Գիլբերտաղեանը, իր հերթին, հաւաստում է. «Այդ յօդուածի (իմա՝ Արեղեանի վերը նշուած - Լ.Խ.) շարունակութեան մէջ («Խ.Հ.», 25/2) Արեղեանը գրում է, թէ նոր ուղղագրութեանը ամենից շատ կը դիմադրեն արեւմտահայերը, բայց նրանք քիչ են, այս խնդրի նկատմամբ արժէք չունի նրանց դիմադրութիւնը, բաւական է, որ Հայաստանի կառավարութիւնը որոշում կայացնի, իսկոյն կտարածուի»²:

Նոյն «Յեռ Գրութեան» մէջ, անդրադառնալով Մակինցեանի դիտարկութեանը՝ վերջում լատիներէնի գրահամակարգը որդեգրելու պահանջի առնչութեամբ, Արեղեանը, դարձեալ առանց «վրդովունք»ի ու բացասումի՝ հանգի՛ ստ սրտով եւ ...

լռելեայն համաձայնում է, միայն թէ, յիշեցնում է, որ «խանգարիչ» խոչընդոտները հայերէնի ... բաղաձայններն են: Տա՛նք խօսքը իրեն. «Լատիներէն տառերին անցնել ..., հեշտ գլուխ գալու բան չէ այդ, թէկուզ միայն այն պատճառով, որ մեր բաղաձայնների համար, սակաւ բացառութեամբ, չունենք ընդհանուր, միակերպ արտասանութիւն. մենք դեռ ապրում ենք մեր բաղաձայնների շրջման ժամանակաշրջանը, որ դեռ չի վերջացել »¹: Ուրեմն՝ սկզբունքօրէն Արեղեանն էլ համաձայն է եղել լատիներէնին անցնելու՝ լռելով նաեւ իր յերիւրած խեղագրութիւնը, միայն թէ ... ժամանակը չէ դեռ, «բաղաձայնների շրջման բարեշրջութիւնը պէտք է աւարտուի»...:

Պատասխանելով նաեւ Մակինցեանի այն «մեղադրանքին», որ «Արեղեանի ուղղագրութիւնը որոշ ետադիմութիւն է... Արեղեանը մեզ վերադարձնում է գրեթէ 12-րդ դարը», Արեղեանը իսկոյն մատնացոյց է անում Ստեփանոս Մալխասեանցին, որ նման յերիւրանք արել է իր հասցէին եւ «համուզել» գիտունիկ Մակինցեանին. «Վերջապէ՛ւ ընկեր Պ. Մակինցեանը մի յայտնութիւն էլ է անում նոյն յօդուածի մէջ. «Արեղեանի ուղղագրութիւնը որոշ ետադիմութիւն է ... Արեղեանը մեզ վերադարձնում է գրեթէ 12-րդ դարը»: - Երեւի, նա վերջին երկուսուկէս տարուայ ընթացքում հայ ձեռագիրների ուսումնասիրութիւն կատարելով՝ գտել է, որ Ներսէս Շնորհալին եւ ուրիշները 12-րդ դարում գրել են «ակոս, հանդես, կավ, նվաստ, լոյս, հատակ, սենյակ, ամսորյա, եօթն, արյուն, գայ, գրեյի, յեկ» եւ ոչ թէ «ակաս, հանդէս, կաւ, նուաստ, լոյս, յատակ, սենեակ, ամսարեայ, եաւթն կամ եթն, արեւն կամ արիւն, գա, գրեի կամ գրէի, եկ»: Ս. Մ.-ը (իմա՝ «Ստեփանոս Մալխասեանցը» - Լ.Խ.) կարող է պարծենալ, որ իր տարածած առասպելը, թէ ուղղագրութեան ռեֆորմը եղել է «եռտահայեաց ուղղութեամբ», նոյնիսկ Պ. Մակինցեանին է մոլորութեան մէջ ձգել (sic!)»²:

«Նոր Կեանք», Հոկտեմբեր, 1999թ.,
«Նոր Հայաստան», Հոկտեմբեր 16, 1999թ.,
«Նոր Օր», Դեկտեմբեր, 1999թ.:

ՀԱՅԱԳԷՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԻ

ՊԱՏԱՍԻԱՆ-ՆԱՄԱԿԸ ԱԲԵՂԵԱՆԱԿԱՆ ԽԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ
«ԲԱՐԵԼԱԽԱՆ» ԱՆՊՏՈՒՂ ԸԻԳԵՐԻ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

Ն. Աղոնցի պատասխանը վերաբերում է 1926 թուականին կազմուած Հայաստանի Լուսժողկոմի Յանձնաժողովի (անդամներ՝ Հր. Աճառեան, Աս. Խաչատուրեան, Գր. Ղափանցեան եւ Մտ. Մալխասեանց) յղած «Համադրական Աղիւսակ Ուղղագրական Առաջարկների» գրութեան: Նրա այս բաւականին հանգամանալի գրութիւնը պահպանուել է, բայց որոշ «աննշան կրճատումով» է հրապարակել բանասէր-գրականագէտ Պ. Յակոբեանը միայն 1967 թուականին՝

¹ Անդ:
² Տե՛ս Ս. Գիլբերտաղեան, նշուած աշխատ., էջ 350:

¹ Անդ:
² Անդ, էջ 491-492:

«Պատմա-բանասիրական հանդէս»ի 4-րդ համարում (էջ 157-168): Հրապարակման նման յայտարարումը պիտի բացատրել անշուշտ այն պատճառով, որ երկար ժամանակ եւ մինչեւ օրս էլ արեղեանական խեղագրութեան եւ ռեֆորմի հետ առնչուած նիւթերը «բարո» էին համարում, եւ դրա արծագանքն է նաեւ, ներկայ դէպքում, բանասէրի տողատակային ծանօթագրումը՝ որում յայտնելով միաժամանակ իր կատարած միջամտութիւնը «երկու աննշան կրճատումներով», որի իրաւունքը, սակայն, ինքը չունէր բնաւ, նա՛մանաւանդ ինքնագրի հրապարակումը 40 տարի անց է իրականանում, երբ Աղոնցի գրութիւնը արդէն պատմական փաստաթուղթ է յետագայ ժամանակների համար, եւ երկրորդ՝ բանասէրի յիշեցումն այն մասին, որ հրապարակելով այն, «խմբագրութիւնը նպատակ չունի վերար-ծարծել հայոց լեզուի ուղղագրութեան խնդիրը, որը ժամանակին իր լուծումն ստացել է...»¹, բառական քափանցիկ է դարձնում դիտարոտութեան միտումնաւորութիւնը... Այն վաղուց դադարել էր «պետական գաղտնիք» լինելուց, բայց եւ ինքնապահովագրման ներքին գրաքննիչը դեռեւս շարունակում էր զգացնել սալ իրեն...:

Նշենք՝ իբրեւ իրագելում, որ Ն. Աղոնցը իր պատասխանը գրել է Փարիզից, 1927 թուականի Ապրիլի 18-ին: Անուանի հայագէտը ուշագրաւ մտքեր է արժարծել գրաբանական տեսական հարցերի վերաբերեալ, որոնք իրենց կարեւորութիւնը եւ արժէքը պահպանում են նաեւ այս օրերին էլ: Մի քանի առանցքային եւ ծանրակշիռ հարցադրումներ ունի, որոնց պարտաւոր է ամէն մի ուղղագրական բարեփոխում պատասխանել:

Առաջին. «լեզվա-պատմական պահանջը» բաւարարելը Աղոնցը յոյժ կարեւոր է համարում ամէն մի ուղղագրական բարեփոխումի համար. «... Ուղղագրութիւնը մէկէն աւելի պահանջներ ունի իր առաջ, որոնց բոլորովին պարտաւոր է գոհացնել: Բացի հնչական հաւատարմութիւնը, որ պահանջում է լեզուագիտութիւնը, բացի միակերպութիւնը, որ կարեւոր է մանկավարժական տեսակէտից, կայ եւ այլ հանգամանք, որ յաճախ մոռացում է վերանորոգիչների կողմից. այն է՝ ԼԵԶՈՒԱՊԱՏԱՍԿԱՆ ՊԱՀԱՆՋ, որի հիմամբ գիրը պէտք է պատկերացնէ լեզուի ամբողջութիւնը գէթ այն չափով, որքան արգելք չեն յարուցանում միւս յիշեալ պահանջները»²:

Երկրորդ. եթէ յանդգնութիւն է ցուցաբերում ուղղագրական բարենորոգումների, ՊԻՏԻ ՉՄՈՌԱՆԱԼ խնդրոյ առարկայ գրական լեզուի սնման եւ զարգացման պորտային կապերը. «Նոր գրական լեզուն կապուած է սերտօրէն գրաբարի եւ աշխարհաբարի բարբառների հետ: Երկու դայեակներից մէկը գրեթէ զոհ գնաց քաղաքական ձախողանքի, եւ կենդանի բարբառների մնացորդները այսօր անտուն, անտէր քափանում են կորստեան եւ աղաւաղման ճանապարհների վերայ:

«Մնում է հին լեզուն, որպէս ՄԱՅՐ ԵՒ ՄՆՈՒՅԻՉ ՆՈՐԻ: Մօտիկ անցեալի վէճերը գրական լեզուի զարգացման շախմատների շուրջը չարդարացրին նրանց հեղինակների գուշակութիւնները: Գրական լեզուն, պահելով հանդերձ իր ինքնուրոյնութիւնը, բնաւ պէտք չաւսաւ հրաժարուելու իր պատմական ժառանգութիւնից եւ լայնարձակ շահաւետեց հին լեզուն: Արդի լեզուն կիսով չափ գրաբար դարձաւ, եւ ՀԻՆ ՇՏԵՍԱՐԱՆԸ ԳԵՌ ՄՊԱՆՈՒԱԾ ՉԷ ՆՈՐ ԳՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ:

¹ Պ. Յակոբեան, «Ն. Աղոնցի դիտողութիւնները հայերէնի ուղղագրութեան եւ տառերի վայելչութեան վերաբերեալ», տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1967, էջ 157, տողատակային ծանօթ.:
² Անդ, էջ 158:

«Այս նկատառումով ԽՈՏԵԼԻ Է ԱՅՆ ԱՄԷՆԸ, ԻՆՉ ՈՐ ԽՏՐՈՅ Է ԾԱՌԱՅՈՒՄ ՀՆԻ ԵՒ ՆՈՐԻ ՄԷՋ»¹:

Բանն այն է, որ հայոց լեզուի երկու գրական մշակումների համար չափազանց կարեւոր նշանակութիւն ունի բառապաշարի հարստացման առումով գրաբար մայր լեզուի հետ պորտային կապի պահպանումը. փոխանակ լատիներէն արմատների փոխառմամբ բառակազմութիւններ կատարելու եւ հայերէնի դիմագիծը այլասերելու, որ բնորոշ է սովետահայ մտաւորականների համար, գրաբարի բառարմատների պատուաստումով հայեցի բառակերտումներ կ'ունենանք շատ աւելի ճոխ եւ գեղեցիկ...: Այս հանգամանքը անշուշտ նկատի ունի Ն. Աղոնցը «պորտալարի պահպանման» կարեւորութիւնը ընդգծելիս...:

Անհետատեսութիւն է համարում Աղոնցը «ներկայ բարեփոխիչների» նկրտումները, երբ իրենց խեղագրութեամբ անջրպետ են ստեղծում արեւելահայ գրական լեզուի եւ անցեալի գրաւոր մեծահարուստ ժառանգութեան միջեւ, որը, վերջին հաշուով, ՎՆԱՍԵԼՈՒ Է ՀԷՆՅ ԻՐԵՆ՝ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒԻՆ. «Եթէ աշխարհաբարը սեփական ուղղագրութիւն մշակէ, որպիսին է այժմեան պաշտօնական նորածէ ուղղագրութիւնը, բնական է, որ արտաքուստ պիտի անջատուի իր մօրից, պիտի դժուարեցնէ հնի ուսուցումը, որով ԱՄԵՆԻՅ ԱՌԱՋ ԵՒ ՄԵԾԱՊԷՍ ՎՆԱՍԵԼՈՒ Է ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ՇԱՀԵՐԻՆ»²:

Իսկ ամբողջութեամբ վերցրած արեղեանական չարափոխումները համազգային աւանդական ուղղագրութեան նկատմամբ՝ «ԼԵԶՈՒԱԿԱՆ ԲՈՆՆՈՒԹԻՒՆ» է համարում Աղոնցը. «Ահա թէ ինչու համար ՉԻ ԿԱՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՍՄ ԼԻՆԵԼ ԱՅՆ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐԻ, ՈՐՈՆԸ ԱՅԼ ԲԱՆ ՉԵՆ, ԵԹԷ ՈՉ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԲՈՆՆՈՒԹԻՒՆ»³:

Երրորդ. Մաշտոցեան համակարգում միասնական եւ միակերպ համազգային Ուղղագրութիւնը որքան էլ առարկելի կողմեր ունենայ, իր հասակակիցների մէջ ՄԱԿԱՄԱԹԻԻ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻՅ Է, ՈՐ ԱՐՍԱՍԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆԱՅ: Սթափ իր այս դիտողութիւնը, որ միանգամայն ուսանելի է նաեւ խեղագրումների տեսողով բռնուած չարափոխիչների համար, զգուշացնում է վատակաշատ հայագէտը. «Ինչ եւ լինին հայ գրի քերիքները, ամէն դէպքում նա այն սակաւաթիւ օրինակներիցն է իր հասակակիցների քում, որ կարիք չունին արմատական փոփոխութեան: Քաղաքակիրթ լեզուների գրեթէ բոլորի մէջ վաղուց բացուած է անանցանելի խորխորատ գրի եւ հնչիւնի միջեւ: Թէպէտեւ դիւրութեան մասին սրտացումները պակաս չեն, քան մեզանում, դարձեալ չեն նկրտում ուղղագրական բռնու խիզախումների, պահում են հին՝ շատ դէպքերում գրեթէ գաղափարագիր դարձած գրութիւնը, որպէսզի ՉԵՂԾԵՆ ԼԵԶՈՒԻ ՊԱՏԱՍԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՒ ՄՈՌԱՅՈՒԹԵԱՆ ՉՏԱՆ ԱՅՂ ԼԵԶՈՒՈՎ ԱՄԲԱՐՈՒԱԾ ԳԱՐԱՌՈՐ ՀԱՐՏՏՈՒԹԻՒՆԸ, ԱՆՅԵԱԼԻ ԾՈՒՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՎՆԱՍԵԼՈՎ ՆՐԱ ՄԱՏՉԵԼՈՒԹԵԱՆԸ»⁴:

Հայագէտի այս հարցադրումից բխեցրած նաեւ հետետիւրիւնը ազգային լինելութեան եւ յարատեւման տեսանկիւնով դիտուած՝ կրկին անգամ ու նորից խորհրդածելու զգաստութեան է հրաւիրում, երբ գրում է.

¹ Անդ:
² Անդ:
³ Անդ:
⁴ Անդ:

«Եթէ գորատը լեզուները այսքան զգոյշ են եւ սիրում են մնալ կառչած իրենց անցեալին, որքան աւելի իրատուք ունի մեր տկար եւ անպաշտպան լեզուն նոյնն անելու, մանաւանդ որ իՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ ՈՒՐԻՇ ԱԻԵԼԻ ԶՕՐԵՂ ԵՒ ՎՍՏԱՀԵԼԻ ԽԱՐԻՍԽ ՉՈՒՆԻ, ԲԱՆ ԻՐ ԱՆՑԵԱԼԸ»¹:

Ուսանելի է գիտենալ Յանձնաժողովի անդամների համար, յիշեցնում է Ադոնցը իր պատասխանում, որ՝

«ԽՕՍԸԸ ԵՒ ԳԻՐԸ ՇԱՏ ՀԻՆ ԵՒ ՀԱՍԵՐԱՇԵՆ ԴԱՇՆԱԿԻՅՆԵՐ ԵՆ. ԵՒ ՈՉ ՄԻԱՅՆ ԱԿԱՆՁԸ, ԱՅԼԵՒ ԱՉԲՆ ԻՐ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՆ ՈՒՆԻ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՒ ՈՒՋՈՒՄ Է ԱՅՆ ՊԱՀԵԼ ԵՒ ԱՅՆՏԵՂ ԱԻԵԼԻ ԲԱՆ ՏԵՄՆԵԼ, ԲԱՆ ԱԿԱՆՁՆ Է ԼՍՈՒՄ»²:

Իր նկատառումներում Ադոնցը նախօրօք զգուշացնում է, որ «բնական խորշանք կամ նախապաշարում» ունի ... «նորամուտներ» դէմ. «Իմ հայեացքները չեն տանում դէպի արմատական փոփոխութիւնների կողմը: Ոչ թէ նրա համար, որ բնական խորշանք կամ նախապաշարում ունիմ նորամուտներն յանդիման: Ոչ զուտ լեզուագիտական, ոչ մանկավարժական եւ ոչ անգամ գործնական որեւէ լուրջ հիմ չեմ տեսնում շեղուելու ասանդական ուղղագրութեան սկզբունքներից: Եթէ արդի մանուկ լեզուի շահը պահանջէր, կ'անցնէի առանց տատանուելու բոլոր յիշեալ կամուրջները»³:

Աւելին. Ադոնցը խորապէս վրդովուած է նաեւ նրա համար, որ հէնց արեւելահայ գրական լեզուի ՇԱՀԵՐԻ ԴԷՄ է արեղեանական խեղագրութիւնը, երբ պարզ եւ մեկին յայտարարում է միաժամանակ.

«Սակայն հէնց այդ շահի գիտակցութիւնն է, որ ՀԱԿԱՌԱԿՆ Է թե-լադրում: Պահել, պահպանել ամէն կարգի կապեր մայր լեզուի, հին գրական լեզուի հետ աշխարհիկ լեզուի կենսական շահերից էականն է: Նոր գրականում չկայ ոչ մի հնչական տարր, որ անժանօք լինի գրաբարին: Այս մի հաստատուն հիմ է ուղղագրական համերաշխութեան»⁴:

Այս առթիւ ողջախոսութեան հրաւիրելով Յանձնաժողովի անդամներին, նաեւ յորդորում է Նիկողայոս Ադոնցը.

«Իմ եզրակացութիւնս այն է, որ արդի ուղղագրութեան մէջ ներելի են այնպիսի սրբագրութիւններ եւ գուցէ հարկատր, որոնք ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ ՆԱԵՒ ԳՐԱԲԱՐԻ ՏԵՄԱԿԵՏԻՑ, ԱՅՆՊԻՍԻ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՅՆՊԻՍԻ ՄԱՄՆԱԿԻ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ԽԱՆՏՈՒՄ, ՉԵՆ ԿՏՐՈՒՄ ՆՈՐԸ ՀՆԻ ՀԵՏ ԿԱՊՈՂ ՕՂԱԿՆԵՐԸ: ՄԻԱՅՆ ՏԱՅՐԱՅԵՂ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՀԱՐԿԸ ԿԱՐՈՂ Է ԱՐԴԱՐԱՑՆԵԼ ԱՅՍ ՄԿՁԲՈՒՆՔԻ ԽԱԹԱՐՈՒՄԸ»⁵:

Ադոնցը գրաբանական խոր ըմբռնումով հասկանում է՝ «ինչպէս ամէն լեզուն, մանաւանդ «գառամեայ» լեզուներում, գրաբարի մէջ եւս կան անհարթութիւններ, շեղումներ ուղղագրական կանոններից: Նրանցից շատերն անցել են աշխարհաբարին: Չգտել կոկել ամէն մի անհարթութիւն, որ իր պատմական նստածքն ունի, վտարել այն, ինչ որ խոչընդոտ է թում, նշանակում է կենդանի լեզուն հասցնել

արհեստական վուպալիկ տափակութեան: Յանկայի է միակերպութիւնը, բայց արհամարհելի չէ բնաւ պետութիւնը: Ամէն բան իր չափն ունի եւ միօրինակութիւնն էլ պէտք է ազատ պահել տարտամ շարունակներից: ... Սրանք թելադրանքներ են շեշտակի շարունակականութեան, ուր իմաստն անգամ զոնում է ձեռին: Եւ ցաւալին այն է, որ շարունը ձեւակերպուած է թում երբեմն օտար բառերի ազդեցութեան տակ»¹:

Վերջում իր պատասխան-նամակում Ադոնցը անդրադառնում է նաեւ երեւանեան ռեֆորմի ընդունելութեան խնդրին՝ համազգային ընդգրկմամբ եւ չափանիշով: Սկզբիցնէք յայտարարում, որ արեւմտահայութիւնը «սարսուռով է նայում ամէն մի փոփոխութեան, որ շօշափում է լեզուն, եկեղեցին եւ միս ասանդները»: Իրապաշտ դիտումով եւ միանգամայն ճիշդ գնահատմամբ Ադոնցը գրում է իր պատասխան-նամակում.

«Արեւմտեան հայութիւնը ՄԻՇՏ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ Է ԵՂԵԼ ԼԵՋՈՒԻ ԽՆԴՐՈՒՄ ԵՒ ԱՄԱՆԴԱՊԱՀ: Ներկայ ցան եւ ցրիւ գաղութները, որ նրա բեկորներն են, պահում են իրենց նախկին տրամադրութիւնները: Այնքան կորուստներից եւ տապալումներից յետոյ, ՀԱՅՐԵՆԱՋՈՒՐԿ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՍՈՒՌՈՎ Է ՆԱՅՈՒՄ ԱՄԷՆ ՄԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ, ՈՐ ՇՕՇԱՓՈՒՄ Է ԼԵՋՈՒՆ, ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԻՒՍ ԱՄԱՆԴՆԵՐԸ»²:

Ապա հաստատում է հարազատութեամբ ողջ ճշմարտութիւնը. «ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՍԱԿՐՈՒԹԵԱՆ ՆՇՈՅԼ ԱՆԳԱՄ ՉԳՏԱԻ ՄԱՀՄԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵՒ ԱՆԳԱՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԵՏԵՒՈՂՆԵՐ ՉՈՒՆԵՑԱԻ:

«ԿԱՍԿԱՏ ՉԿԱՅ, ՈՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻԴ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԻՐ ՇԵՂՈՒՄՆԵՐՈՎ ՆՈՅՆ ԲԱՆՏԻՆ Է ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ:

«ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՏԵՐԸ ԱՅՍ ԴԷՊՔՈՒՄ ԱՆՁՕՐ ԵՆ ԵՒ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ»³:

Բայց եւ ազգային-քաղաքական կարճատեսութիւն է համարում ներհուն գիտնականը, եթէ անտեսուի Արեւմտահայութեան կամ Սփիւռքի այս բացասական տրամադրութիւնը եւ այնուամենայնիւ շարունակուի արեղեանական խեղագրութեան ձախաւերութիւնը յամառութեամբ եւ ինքնազուխութեամբ՝ վշտացած գրելով այդ մասին.

«ՆՈՐԱՊԷՍ ՑԱԻԵԼՈՒ Է, ԵԹԷ ԱՅՆ ՊԱՀԻՆ, ԵՐԲ ՀԱՅՐԵՆԻՔՆ ԻՐ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՎ ՋԱՆԱԼՈՒ Է ԻՐԵՆ ԲԱՇԵԼ ԱՇԽԱՐՀԱԼԱՏ ՋԱՄԱԿՆԵՐԸ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՆՈՐ ԱՆՋՐՊԵՏ ՀԱՆԴԻՍԱՆԱՐ ԵՒ ՓՈԽԱՆԱԿ ՄԵՐՉԵՑՆԵԼՈՒ ԵՐԿՈՒ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԸ, ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՍԵՊՈՎ ԸՆԴԱՅՆԵՐ ԵՂԱՏ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ...»⁴:

Համազգային գաղափարախօսութեամբ տոգորուած գիտնականը աղէտի անհազմութիւնը տեսնում է արեղեանական խեղագրութեան պատճառով ստեղծ-

¹ Անդ:
² Անդ, էջ 160:
³ Անդ, էջ 162:
⁴ Անդ:
⁵ Անդ:

¹ Անդ:
² Անդ, էջ 165:
³ Անդ:
⁴ Անդ:

յիմարական գալթակոթեան: Ձգուշացնում է, որ շատ կարեւոր է նաեւ «ընդունելութեան պարագան»: Այսպէս, պատասխան նամակում կարդում ենք.

«Անցեալներում ուրիշների բում ես եւս կարելի էի գտնում ձայնաւորից նախադասութեան ու-ն սղել լ-ի:

«Անգամ այս քեթեւ նորածնութիւնը, որ գէթ տնտեսական արժէք ունէր, ժողովրդականութիւն չգտաւ եւ նախկին ու-ն պահեց իր դիրքը: Հանրութեան հոտառութիւնը նաեւ ուղղագրական խնդիրներում անտես առնելու չէ: Ու-երի սղումը լ-երի կարծես խճողում է լեզուն նոր բաղաձայնով եւ վնասում նուագայնութեան: Մեր լեզուի քերութիւններից մէկը հենց բաղաձայնների կուտակումն է եւ նրանց քիւր նորէն գորացնել ցանկալի չէ: Թում է թէ մի երանգ կայ հատված կամ հատում եւ հատում արտասանութեան մէջ. մէկը՝ ականայից պիտի հնչուի հատված, հատ-ւած, կամ հա-տը-ված, հա-տը-ւած, միւսը՝ հա-տում, աստում, այսինքն՝ տ'wo, տուսերէն ТВО եւ ոչ Т-ը-ВО, ինչպէս արտասանում են հայերից շատերը:

«Յամենայն դէպս հատում գերադասելի է քան հատված, եթէ միայն ստիպված ենք թողնել պապենական հատումը»¹:

Իսկապէս՝ դառնօրէն ողբում ես, որ աւելի քան 1.500ամեայ Մաշտոցեան համագրային միասնական գրահամակարգը ... ԲՄԱՀԱՃՈՅՔԻ ԱՌԱՐԿԱՅ է դարձել այս կամ «բարեկարգիչի» ձեռին:

Մերժում է նաեւ, որ բարբառներում եւ աշխարհաբարի գրական երկու լեզուներում գրաբարեան ըլ երկբարբառը բառակազմութիւններում, երկբարբառների պարզեցման ընդհանուր եւ օրինաչափական միտումի համաձայն, արտասանուելով որպէս -ըլ երկձայն, պահանջում է համապատասխանաբար բոլոր նման հանդիպումներում պահպանել աւանդական ըլ- գրութիւնը եւ չփոխել -ըլ-ի²:

Մնացած հարցադրումներում տատանումներ ու անորոշութիւններ է ցուցաբերում Ադոնցը՝ արեղեանական հնչիւնաբանական խառնիճաղանճից ինքն էլ զլուխ չհանելով...³:

«Նոր Կեանք», Մեպտեմբեր, 1999թ.,

«Նոր Հայաստան», Մեպտեմբեր 25, 1999թ.,

«Նոր Օր», Հոկտեմբեր, 1999թ.:

¹ Անդ:

² Անդ:

³ Տե՛ս անդ, էջ 160-162:

ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅԱԳԷՏ ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԸ ԵՒ ԱԲԵՂԵԱՆԱԿԱՆ ԽԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հարիւրամեակների եւ հազարամեակների մատենագրութիւն ունեցող հայոց լեզուի համար առհասարակ լեզուաբանական-բանասիրական-բառարանագրական աշխատանքների անկաշկանդ ծաւալմանը խոչընդոտում եւ խանգարում են երկու ռեֆորմներով պայմանաւորուած խեղագրութիւններն էլ հաւասարապէս: Այստեղ չենք կարող չ'արձանագրել, որ ԱՄԵՆԱԽԱՅՏԱՌԱԿ դրութիւնը հայագիտական աշխատութիւնների հեղինակման առթիւ յարուցում բարդութիւնն ու դժուարութիւնն են, երբ ներկայումս ստեղծուած ուղղագրական բազմազանութիւնների ու խայտաբղէտութիւնների պատճառով ուսումնասիրողը գործ է ունենալու տարատեսակ բոլոր ուղղագրութիւնների հետ, եւ ոչ թէ՛ մէկ համակարգուած ու կանոնարկուած միասնական եւ միակերպ համագրային ուղղագրութեան, որ Մաշտոցեանն է իր աւանդականութեամբ:

Հրաչեայ Աճառեանը, չնայած խրախուսուող եւ պահանջուող արեղեանական խեղագրութեանը, իր հետագոտութիւնները երբեք չփորձեց գրել պաշտօնական ընդունուած գրականոններով. իր բոլոր ձեռագրերը Մաշտոցեան ուղղագրութեամբ էին գրուած, որ յետոյ տպագրութեան ժամանակ առաջադրուեցին պետհրատի (որ նոյնն է թէ Կենտկոմի) կողմից՝ երկու պահանջների բաւարարման դէպքում միայն լոյս ըն-ծայել. առաջին՝ «մարքս-լենինեան մեթոդոլոգիայի ոգով» քննադատական խօսք պարտադիր էր ասել Առաջաբանում հայագիտական իւրաքանչիւր ուսումնասիրութեան համար, նկատի ունենալով իբրեւ «հին սերնդի մտքի արգասիք» լինելը, երկրորդ՝ Մաշտոցեան Ուղղագրութիւնը անպայման հարկ էր փոխել, վերածել պաշտօնական գրականոնների: Հայագետների շրջանում յայտնի էր դարձել Աճառեանի «համաձայնութիւնը» իր խրովի իմաստաւորմամբ. «Եթէ մօրս էլ հայեայն, ընդունում եմ ուզածդ քննադատութիւնը, միայն թէ ...տպագրուեն գործերս»: Հարկ է արձանագրել՝ այնուամենայնիւ չափազանց մեծ է երախտիքը իր տաղանդաշատ եւ բազմաշնորհ աշակերտի՝ Էդուարդ Աղայեանի, որ «ձեռք գտել» էր «տպագրութեան անցագիր» ապահովելու եւ հայագիտութեան համար փրկելու Հրաչեայ Աճառեանի բազմաշնորհ աշխատութիւնները գիտական շրջանառութեան մէջ դնելով դրանք նաեւ յետմահու հեղինակի, որոնք այսօր հայագիտութեան ոսկէֆոնդի անփոխարինելի հարստութիւնն են կազմում՝ իրաւամբ: Տողերիս գրողն էլ, որպէս գիտատեխնիկական օգնական, ինքս եմ արել այդ բոլոր հատորների ձեռագրային վերածումները մեքենագրականի պաշտօնական գրականոններով՝ տասնամեակներ շարունակ, բանասիրական-լեզուաբանական բարձրագոյն կրթութեանս ձեռքբերման եւ ասպիրանտական ուսումնառութեանս ընթացքում, ինչպէս Աճառեանի կենդանութեան օրօք, այնպէս եւ յետմահու, նաեւ բնագրային համեմատութիւններով:

Առանձնապես իրայատուկ էր պարագան, սակայն, Հրաչեայ Աճառեանի հայագիտական աշխատությունների գլուխ-գործոցի՝ կոթողային եօթհատորեայ «Արմատական Բառարան»ի: Հայագիտության պսակը համարուող այս փառահեղ հանրագիտարանը ընդհանուր լեզուաբանության վերաբերող ուսումնասիրություններում զնահատուել ու բնութագրուել է իբրև «կատարեալ ստուգաբանական բառարան», որ ոչ մի լեզուի համար նման ընդգրկունություններ ու համակողմանիություններ չի իրականացուել. համաշխարհային հռչակ ունեցող ֆրանսիացի լեզուաբան Անտուան Մեյլի խօսքերով՝ Հրաչեայ Աճառեանի «Արմատական բառարան»ը առանձնանում է կատարման իր եզակիությամբ, որպիսին համեմատելիս՝ «ոչ մի լեզուի համար չկայ այսքան ճոխ, այսքան կատարեալ ստուգաբանական բառարան»¹:

Պիտի ողջ ճշմարտությունը ասել հանրագիտարանային հայագիտական այդ երկի հրատարակման առնչությամբ՝ այն պարզապես արեղեանական խեղագրություններ հրատարակել ԱՆՀՆԱԲԻՆ է...:

Աճառեանի Արմատական բառարանը ոչ միայն, նեղ իմաստով, սուկ հայերեն բնիկ բառարանների առաջացման ծագումնաբանական պատմությունն է՝ աղերսների ու առնչությունների բացայայտմամբ հնդեւրոպական այլ լեզուների հետ, այլև փոխառությունների պատմությունն է փոխառու եւ փոխատու լեզուների, այդ իսկ պատճառով աւելի շուտ բառագիտական-բառաստուգաբանական հանրագիտարանային բառարանի բնույթ եւ բովանդակություն ունի, ընդ որում՝ ըստ ամենայնի: Իւրաքանչիւր բառայօդուած բնուում է հինգ կարեւորագոյն բառարանագիտական հատկություններով, որով բառայօդուածի գիտական բացատրությունը սպառիչ բնույթ է ստանում, որի գրաւականը, անշուշտ, հեղինակի ծովածաւալ իմացությունն է լեզուների ու, մանաւանդ, աղբիւրների հմտութեան: Այստեղ, առաջին հերթին, ընդգրկուած է բազմադարեան հայերէնի գրատր յուշարձանների բոլոր փուլերը համապատասխան մատենագրական վկայություններով, ընդ որում՝ ոչ միայն իմաստաբանական, այլև քերականագիտական ձեւերի առանձնայատկություններով ու բազմազանութեամբ՝ պայմանով, որ իւրաքանչիւրի որոշակիությունը պահպանուած լինի եւ արտացոլուած՝ առանց շփոթանքի, որ, իրականում, միայն ու բացառապէս Մաշտոցեան համակարգուած Ուղղագրությունը կարող է երաշխաւորել: Գումարած դրան՝ տալիս է նաեւ մատենագրական վկայությունները բառարանատի կիրառությունների, ընդ որում իւրաքանչիւրի տարբեր եւ նրբերանգային արտացոլումներով:

Իսկ բառերի ստուգաբանությունը կատարում է գրատր հայերէնի տարբեր փուլերում գործած հնչյունական օրէնքների հաշուառմամբ՝ հաստատուն հիմքի վրայ ներկայացնում է Աճառեանը բնիկ հայերէն շուրջ 11.000 արմատական բառ՝ իրենց գիտական ճշգրիտ բացատրություններով ու փաստարկումներով, որով գերազանցում է Պոլ դը Լագարդի եւ Հայնրիխ Հիլքմանի հայերէնին նուիրուած ստուգաբանական բառարաններին, որ նրանց աշխատությունների համեմատութեամբ աւելի քան կրկնակին է Աճառեանինը՝ երկուսինը միասին գումարած:

Միաժամանակ ստուգաբանուած իւրաքանչիւր բնիկ հայերէն բառարանատի ստուգաբանական պատմությունն է ներկայացնում Աճառեանը այն հայագէտների

վկայակոչմամբ, որ երբեւէ փորձ են արել իրենց ուսումնասիրություններում եւ տարբեր ժամանակներում այս կամ այն բառարանատի առնչութեամբ:

Ներկայացնում է եւս առանձին երկու բաժիններով իւրաքանչիւր բառ-յօդուածի համապատասխան բարբառային դրսեւորումները բազմաբարբառ հայերէնում..., ինչպէս եւ հայերէնից կատարուած փոխառությունները ... այլ լեզուներում:

Իրօ՛ք իր տեսակի մէջ եզակի եւ վիթխարի իրագործում, որի համար Աճառեանը իր գիտական կեանքից շուրջ 40 տարի է նուիրել...:

Արեղեանական խեղագրութեան ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻԻՆՆՆՆՆ ա՛յն էր, որ ոչ միայն ԲՈՒՆՈՒՎԻՆ ՊԻՏԱՆԻ ՉԷՐ՝ այն առհասարակ մեր ազգային գրական լեզուների հին մատենագրությունները արտացոլելու, այլապէս «քարելոնեան խառնակչութիւն» եւ քառս կ'ըստեղծէր իրենով՝ այս կամ այն պատմական հետազօտությունը լեզուաբանական աշխատությունների գրառնել եթէ հարկ լինէր: Այդ փաստական իրողությունը ընդունում էր նաեւ արեղեանական եւ յետ-արեղեանական երկու դեկրետներն էլ միասնաբար..., յօժարելով եւ հարկադրաբար ... առաջարկելով գրաբարեան բնագրերը հրատարակել ... Մաշտոցեան Ուղղագրութեամբ:

Բայց եւ այնպէս Աճառեանի «Արմատական Բառարան»ը իր եօթ ստուարածաւալ հատորներով հարուստ գրաբարեան վկայություններ պարփակելով հանդերձ՝ գրաբարեան բնագիր կամ աղբիւր չէր, այլ ... հետազօտութիւն, ուստի եւ պարտաւոր էր հեղինակը հպատակուել չոր օրէնքի առաջ...:

Այնուամենայնիւ Մե՛ծ գիտնականը չխոնարհուեց, ուստի եւ ... հրաժարուեց տպագրել տալ արեղեանական խեղագրութեամբ:

Եւ նա, ստիպուած, մի աչքանի իր տկարութեամբ, սիզիֆեան աշխատանք կատարեց. ձեռքով կրկին, երեքկին, հաւանաբար չորեքկին ընդօրինակելով՝ վեց հատորներն էլ ապակետիպ հրատարակեց, շուրջ տասը տարիների ընթացքում՝ 1926-1935 թուականներին (եօթներորդը՝ յետագայում տպագիր լոյս տեսաւ), եւ այդ ա՛յն դէպքում, երբ իւրաքանչիւր հատոր 900-1000 էջերից էր բաղկացած...:

Դա միայն բողոք չէր ուղղագրական ռեֆորմի դէմ, այլև միանգամայն ճԻ՛ՇԴ-ՅՈՒՅՈՒՄ եւ ՊԱՏԳԱՄ նաեւ Հայաստանի մտաւորական յետագայ սերունդների համար...:

Քառասունհինգ տարի յետոյ, երբ արդէն գրադարանային հագուագիտ գրքերի շարքում էր դասուում Հայաստանում Հրաչեայ Աճառեանի հայագիտական կոթողային այս աշխատությունը իր եօթ հատորներով, Երեւանի պետական Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ լոյս ընծայուեց, չորս հատորների ընդգրկմամբ, առաջին տպագրությունը (1971-1979 թթ.) ... Մաշտոցեան համակարգուած ու կանոնարկուած միակերպ ու միասնական համազգային Ուղղագրութեամբ, ի հեճուկս նաեւ տիրող հա-յաստանեան երկրորդ դեկրետով կեանքի կոչուած խեղագրութեան, որ յա-մենում է կիրառուել առ այսօր..., որովհետեւ դա եւս ԱՆԿԱՐՈՂ ԷՐ ԱՃԱՌԵԱՆԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ ԻՐ ԲԱԶՄԱԶԱՆ ՀԱՅԵՐԷՆ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻԻՆՆԵՐՈՎ ԱՐՏԱՅՈՒԼԵՆ...:

Ի դէպ՝ Աճառեանի բացարձակ ժխտական վերաբերմունքի մասին է վկայում նաեւ Հայաստանի յայտնի գրականագէտներից Գառնիկ Ստեփանեանը, որն իր «Աճառեանի հետ» յուշագրությունում չափազանց պերճախօս հաստատում է կատարում. «Աճառեանին յանձնարարուել էր գրելու առաջաբանը «Խաղերէն

¹ Քաղաքաբն ըստ Հր. Աճառեանի, տե՛ս «Հայերէն արմատական բառարան», Երեւան, 1935, հ. 7, էջ 205:

«1. Կրատրական բայերի «վ» հնչյունը ամեն տեղ գրել վ-ով, ինչպես շատ տարածված էր եւ ուներ բառական հիմք (sic!), այսպէս՝ գրվել, գրվում է, գրվեց, գրված, իսկ երբ «ած», «ածք» դերբայի ձեւեր չեն, այլ կազմում են գոյականներ՝ գրել «ուած», «ուածք», օր. յաւելում, բացում»¹: Նման երկուսնորում ու պարագայական դիտարկումներով, անկեղծ ասենք, ուղղագրական կանոններ չեն ձեւակերպում լեզուներում...:

Մալխասեանցի յաջորդ «ընտրած» ուղղագրութեան պարագայական դիտարկումը.

«2. Երբ իրար մօտ են հանդիպում երկու «ու», մէկը արմատական եւ միւրը ածանցի՝ «ագղութիւն, հեռութիւն, եւն»՝ գրում են զեղչված ձեւով (ագղութիւն, հեռութիւն, բայց բառազլխում պահպանում են գրութեան հին ձեւը (ուու), քանի որ այդպիսի բառերի արտասանութիւնն էլ երկու տեսակ է, մէկը վ-ով միւրը ու-ով»²:

Եւ վերջին ուղղագրական պարագայական կանոնը, որ «ընտրել է» ակադեմիկոսը.

«3. Գաւառական բառերը, ինչպէս ծվլալ, շվացնել, շվի, շվշվոց եւն»³:

Ահա այս աւանդական ուղղագրութեամբ, բայց եւ «ընտրովի» եւ «նախա-մեծար» պարագայական կանոններով գրուած «Հայերէնի Բացատրական Բառարանը, որ առաջադրել է իբրեւ «ղեկավար սկզբունքներ» ակադեմիկոս Մտեփանոս Մալխասեանցը, որը, սակայն, ինչպէս մասամբ ցոյց տուցինք, ՉԻ՝ ԿԱՐԵԼԻ բնութագրել այնուամենայնիւ իբրեւ Մաշտոցեան համակարգուած միասնական եւ միակերպ ազգային ուղղագրութեամբ գրուած ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՌԱՐԱՆ...:

Այս՝ իմիջիայլոց:

«Նոր կեանք», Հոկտեմբեր, 1999թ.:

«Նոր Հայաստան», Հոկտեմբեր 9, 1999թ.:

«Նոր Օր», Նոյեմբեր, 1999թ.:

ՄԷ՛Կ ԱԶԳ՝ ՄԷ՛Կ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ. ՄԱՇՏՈՅԵԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ ԳՐԱԲԱԿԱՆՆ Է

Համազգային խնդիրների հիմնահարցերի լուծման ծրագրում՝ «Ազգային տու-ն»ը կարգի բերելիս, անշուշտ կարեւորագոյն հրատապութիւն պէտք է ներկայացնի նաեւ «ՄԷ՛Կ ԱԶԳ ԵՒ ՄԷ՛Կ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ» պահանջի իրա-գործումը ազգակերտման ներկայ մաքառումներում, որպիսին գործող օրինաչա-

¹ Անդ:

² Անդ:

³ Անդ:

փութիւն է եւ ընդհանրական՝ աշխարհի իրաքանչիւր ազգի գրագրութիւնում, ան-խախտ: Սակայն շուրջ ութսուն տարի է ինչ արհեստականօրէն եւ ստալինեան բռնադատութեամբ պարտադրուած էր անհարկիօրէն ու անհեթեթաբար հայրենա-բնակ մեր ժողովրդին արեղեանական եւ սպա «քարեփոխում» կիսամաշտոցեան հաշմուած ուղղագրութիւնների որդեգրումը՝ ազգային պատակաման, թուլացման, ուժասպառման, ի վերջոյ նաեւ համաձուլման հետամէտ նպատակադրմամբ, որ հետամտում էր կոմունիստական վարչակարգի ապագային գաղափարախօսու-թիւնը հայրենիքում:

Մինչդեռ Հայրենիք-Մփիւք փոխարարութիւնների սերտաճման եւ հոգեկան -մշակութային հաղորդակցման առաւել ակնբախ արգելակներից է եղել եւ մնում, հիմնականում, հենց հայ ազգի ստիպողաբար եւ վարչական կամայականութեամբ կիրառուած անտրամաբանական եւ միանգամայն անհասկանալի օրապակաս ուղ-ղագրութիւնը, որ մեծապէս խոչընդոտում է մեր առաջընթացին եւ ազգային միաս-նականութեան սեւեռուն նպատակներին, մի խօսքով՝ նորմալ ազգ հանդիսանա-լուն...:

Դեռեւս «Սքանչելի» Կորիւնը Հինգերորդ դարում Մեծն Մաշտոցի հանճարեղ մտայդացմամբ Հայագիր, Վրացագիր եւ Աղուանագիր դպրութիւնների սկզբնաւոր-ման պատմութիւնը շարադրելիս խորապէս ըմբռնել էր ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳ-ՐՈՒԹԵԱՆ յոյժ կարեւորութիւնը ազգային ներկառոցուածքի սերտաճման եւ ազգային Ինքնութեան դարբնման ոգորումներում. գնահատելով մասնաւորապէս Մեսրոպ Մաշտոցի պատմա-մշակութային սխրանքը նաեւ Վրացագիր մատենագ-րութիւն եւ դպրութիւն ստեղծելու առումով՝ Մաշտոցի շնորհալի աշակերտը խորա-քափանց ընդհանրացմամբ նշում էր. «Եւ արդ զնոսա, որ յայնչափ ի մասնատր եւ ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամացն ՄԻ ԱԶԳ ԿԱՊԵԱԼ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր» (աշխարհաբար թարգմա-նութեամբ՝ «Եւ արդ՝ վրացիներին, որ այնքան առանձին եւ անջատ-անջատ լեզուներով էին խօսում, Մաշտոցը համախմբեց, ՎԵՐԱԾԵՑ ՄԷ՛Կ ԱԶԳԻ, ՄԷ՛Կ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՏԳԱՄՆԵՐՈՎ ԿԱՊԵՑ, ԳԱՐՉՆԵԼՈՎ ՄԷ՛Կ ԱՍՏՈՒ ՓԱՌԱԲԱՆԻՉՆԵՐ») (տե՛ս «Վարք Մաշտոցի», Երեւան, 1941 թ., էջ 64):

ԺԳ. դարի Հայագիր դպրութեան տեսարան Վարդան Արեւելցին, մաշտոցեան գրահամակարգի 36 նշանագրերի բնութագրումը եւ իմաստաւորումը ներկայաց-նելիս հաւաստում է, որ հրաշագո՛րծ է գիրը, ՄԵՐ ԱՌԱՋԱԴԻՍՏՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ «ՄԱՆԴՈՒՄՆՆ»Ն Է ԱԶԳՈՎԻՆ ԲԱՐՉՐԱՆԱԼՈՒ ԶԱՂԱԶԱ-ԿՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՎ, շնորհիւ այն քանի, որ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՐՉԵՑՄԱՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹԵԱՄԸ Է ՕԺՏՈՒԱԾ. «անծանօթ»ը ծանօ-թացնում է, հեռատորը մերձեցնում, անբարբառ լինելով՝ ճարտասան է, երգարան լինելով՝ յամբախօս, սուրհանդակ լինելով՝ «տեղապահ» է, անթեւ թոչուն լինելով հանդերձ անշարժ մնացող, անշարժ լինելով հանդերձ շարժուող է, արագընթաց լինելով հանդերձ՝ յամբաշարժ է, տեղում երեւալով հանդերձ՝ տեղում չէ, մարմնատր լինելով հանդերձ՝ երբեային է...: Հակադրութիւնների այս իմաստաւորմամբ էլ բացայայտում է հեղինակը գրի բազմախորհուրդ բնոյթն ու էութիւնը: Բնագրային ընթերցմամբ. «Ո՛վ գերապանծ գիր զարմանալի, ո՛վ հիւսիքաշ տիպ գերազարդեալ, անբարբառ եւ ճարտասան, երգարան եւ յամբախօս, սուրհանդակ եւ տեղապահ, անթեւ թոչուն եւ անշարժ կայուն, կայիւք ընթացեալ եւ թոչմամբ մնացեալ,

երագրմբաց եւ յամբաշարժ, ի տեղի եւ անտեղի, ի մարմին եւ յանմարմին...»
(«Վարդան Արեւելցի, Ներքողեան..., տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Թ. 7, 1964):

Հայերէնի Ուղղագրութիւնը իր օրինաչափութիւններով ու կանոններով դեռեւս որոշել է Հայագիր դպրութեան հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը, այլապէս հանճարեղօրէն իր հեղինակած հայերէնի գրահամակարգը գործարկել ամենեւին չէր կարողանայ առհասարակ, այդ իսկ պատճառով այն կոչուում է իրաւամբ հենց իր անունով՝ «ՄԱՇՏՈՅԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ»:

Հայագիտական ուսումնասիրութիւնները աներկբայօրէն ցոյց են տալիս, որ Մաշտոցը ոչ միայն հայերէնի այբուբենական գրահամակարգը ստեղծեց, այլև՝ Հայագիր մատենագրութիւնը, որի հիմքում դրեց ուղղագրական իր իսկ սահմանած կանոնները, որ ամենայն յաջողութեամբ եւ համապարփակութեամբ՝ հայերէնի նոյնիսկ յետագայ զարգացման գրական բոլոր փուլերի մշակման համար նրա արտասանական համակարգերի արտացոլման միանգամայն յուսալի հնարաւորութեամբ:

Իրականում, Սկզբնաղբիւր Կորիւնի հաւաստմամբ, Մաշտոցը իրողապէս հանդիսացել է նաեւ հայերէնի Առաջին Այբբենարանի հեղինակը հայորդի սերունդների գրաճանաչութեան եւ ընթերցման ուսուցման համար՝ դասական հայերէնի հնչյունակապակցութիւնների եւ վանկակազմութիւնների օրինաչափական կանոնների հմտացմամբ, որ այն ժամանակուայ արտայայտութեամբ՝ «Գրչութեան արուեստ» էր կոչուում: Դարձեալ ճշմարտախօս Կորիւնի հաւաստմամբ այդ փաստը նոյնպէս վկայուած է. «Եւ անդ (իմա՝ Եղեսիայում, 405 թուականին Մաշտոցը Հայոց այբուբենը հեղինակելիս) վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, ՅՕՐԻՆԵՐ ՄԻՂՈՒՄՅԻՒՔ (իմա՝ յունարէն սύλλαβη = «վանկեր» բառածեփ հայերէն տառադարձութիւնն է - Լ.Խ.) ԿԱՊՕՔ» (անդ, էջ 48): Աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Եւ այնտեղ շուտով ձեւորեց հայերէն տառերը, տառանունները նշանակեց, յաջորդականութիւնը դասաւորեց եւ կազմեց վանկերի ու հնչյունակապակցութիւնների կանոնները իր այբուբենի կիրառութեան», որ ինքնըստինքեան ակնարկում է՝ ճշդեց հայերէնի Ուղղագրութիւնը, այն է՝ ձայնաւորների, երկբարբառների եւ եռարբառների, ինչպէս եւ բաղաձայնների հետ նրանց զուգորդումները, որ առանց այդպիսի հնչյունաբանական ստուգազոյն վերլուծութիւնների անհնարին է պատկերացնել անգամ:

Լեզուաբանական գիտութեան մէջ անվիճելի իրողութիւն է, որ Ուղղագրութիւնը մատենագրութիւն ունեցող երկ ժողովուրդների համար խիստ պահպանողական է եւ աւանդական, մինչդեռ Ուղղախօսութիւնը բոլոր դէպքերում համաժամանակեայ է եւ արդիական իր կիրառմամբ, որ բոլորովին տարբեր է Ուղղագրութիւնից, եւ այն շփոթել անթոյլատրելի է: Իսկ այդ նշանակում է՝ Ուղղագրութիւնը իր կիրառմամբ ՅԱՐԱՏԵԻԱԿԱՆ է, անսահմանափակ՝ ժամանակային առումով, մինչդեռ Ուղղախօսութիւնը բառի արտաբերման ՆԵՐԿԱՅ ՊԱՀԻ հասարակականօրէն ընդունուած արտասանութիւնն է արտայայտում պարզապէս: Ինչո՞ւ է այդպէս: Բացատրենք.

մատենագրութեան շորքի տուեալ լեզուի բոլոր բառերը ընդունում են որոշակի տեսողական-բանձրացական կերպարանք: Յարահոլով գործածութեամբ այդ բառերը գրութեան մէջ ձեռք են բերում կայունութիւն. նոյնիսկ այն փոփոխութիւնները, որ անզգալաբար եւ դանդաղօրէն կատարւում են նրա կենդանի արտա-

յայտութեան՝ արտասանութիւնի մէջ, մինչեւ որոշ սահմաններում խզում առաջ չեն բերում գրութեան եւ արտասանութիւնի միջեւ:

Բառերը գրութեան մէջ (տեքստում) բարձրաձայն կարդալիս մենք արտասանում ենք (կամ էլ լուս ընթերցելիս ընկալում ենք) ո՛չ թէ ըստ նրանց կազմում պարփակած յաջորդական առանձին-առանձին տառերի հնչյունական արժէքի եւ զուգորդման, այլ՝ ամբողջութեան մտապատկերային (գրաֆիկական) ընկալմամբ: Բացի դրանից, հոգեբանական երեւոյթ է, որ բառապատկերը մեր գիտակցութեան մէջ արթնացնում է հնչյունական այն պատկերը, որը համապատասխանում է նրա ժամանակակից արտասանութիւնին. ըստ որում անցեալում եթէ մեր մատենագրութեան մէջ արձանագրուած բառերը արտասանուել են այլ կերպ, լիովին գրութեանը համապատասխան ձեւով, ապա այդ միեւնոյն բառերը իրենց միեւնոյն պատկերով հայոց լեզուի զարգացման յետագայ շրջաններում՝ միջին հայերէնում եւ աշխարհաբարում արտաբերուել եւ արտաբերուում են ո՛չ թէ ըստ իրենց նախնական հնչյունային արժէքի, այլ՝ համաձայն յիշեալ փուլերում այդ բառերի ձեռք բերած ՆՈՐ ԱՐՏԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ: Այստեղից ընձեռուում է հնարաւորութիւն՝ մի կողմից բառերի գրութեան աւանդական պատկերի պահպանման, միւս կողմից՝ պատմական հնչյունափոխութեան անկաշկանդ զարգացման...:

Յատկանշական է, որ ԺԹ. դարում ծաւալուած գրապայքարի ժամանակ եւ արեւմտահայ, եւ արեւելահայ աշխարհաբար գրական լեզուների դրօշակակիրները՝ գրաբարի ձեւաբանութիւնից եւ շարահիսութիւնից հրաժարուելու կոչ անելով հանդերձ՝ ամենեւին ձեռք չտուին գրաբարի ուղղագրութեան համակարգին, որի հեղինակն է, ինչպէս վերը ասուեց՝ բացառապէս Մեծն Մաշտոցը: Նրանք գրաբարի փոխարէն աշխարհաբարը. գրական լեզուի մակարդակին բարձրացնելու իրենց ձգտումով հանդերձ՝ պահպանեցին գրաբարի Ուղղագրութիւնը: Եւ դա խելամիտ էր:

Հարց է ծագում. ինչո՞ւ նրանք ձեռք չտուին գրաբարի ուղղագրութեանը, որը իր համակարգով ամենեւին չէր արտացոլում ինչպէս արեւելահայ, այնպէս էլ, առաւել եւս, արեւմտահայ խօսակցական լեզուների համապատասխանութիւնները: Իրականում հարցի էութիւնն այն է, որ յիշեալ ժամանակաշրջանում նոյնիսկ գրաբար վերարտադրութեան ժամանակ չէր պահպանուել գրութեան հին արտասանութիւնը. այլ կերպ ասած՝ հենց գրաբար գրելիս եւ ընթերցելիս էլ թէեւ գրութիւնը աւանդական, բայց արտասանութիւնը՝ ժամանակակից էր (համաձայն արեւելահայ եւ արեւմտահայ արտաբերութեան): Գրաբար ուղղագրութեամբ գրուած բառապատկերը իր ձեւով արթնացնում էր հայի ուղեղում ոչ թէ հնչյունական համապատասխան բառապատկերը, այլ այն հնչյունապատկերը, որով արտասանուում էր տուեալ բառը հենց այդ ժամանակաշրջանում: Օրինակ՝ յառաջ, յաղթանակ, յոյս, ոճ, ոսկի, երգ, եզն բառերը ոչ թէ արտասանուում էին գրաբարեան ձեւով, ինչպէս Ե. դարում (yaraʃ, yaʃtʻanak, yoys, oʃ, oski, erg, ezn եւ այլն), այլ ժամանակակից արտաբերութեամբ՝ haraʃ, haʃthanak, hūys, voʃ, voski, yerkh, yezn եւ այլն:

Այս երեւոյթը ընդհանուր է մատենագրութիւն ունեցող բոլոր լեզուների համար: Այդ առումով ցայտուն օրինակ է ծառայում ժամանակակից անգլերէնը: Յայտնի է, որ չնայած անգլերէնի քերականական կառուցութիւնի չափազանց պարզութեանը, Անգլիայում անգրագիտութիւնը համեմատաբար շատ է: Ինչո՞ւ՞ պրացատրել: Ի՞նչու այլ պատճառների, կարելու է նկատել նաեւ այն, որ այդ լեզուում գրութեան եւ արտասանութիւնի միջեւ չափազանց մեծ անջրպետ գոյութիւն ունի. անգլիացին փաստօրէն պարտաւորուում է համարեա «երկու լեզու» միաժամանակ սովորել,

Գեոեւս ԺԹ. դարի վերջում, երբ հայագիտական հանդէսներում («Բազմավեպ», «Հանդէս ամսօրեայ», «Արարատ» ելն.) քննում եւ արծարծում էին հայերէնի ուղղագրութեան հարցերը, հայագէտներից ոմանք չէին ըմբռնում արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուների տարբեր արտասանութեան բնույթն ու նշանակութիւնը, նրանց առաջացման եւ զարգացման հիմքում եղած բնապատմական անհրաժեշտութիւնը: Օրինակ, վաստակաշատ բանասէր Բարսեղ Սարգիսեանը «Բազմավեպ»ում այն թիւր կարծիքն է յայտնում, որ արեւմտահայերէնի արտասանութեանը (խօսքը վերաբերում է բաղաձայններին, երբ ձայնեղները խլացել են, իսկ խուլերը՝ ձայնեղացել, ուստի եւ միայն երկաստիճան բաղաձայնական դրութիւն ունեն, ի հեճուկս արեւելահայերէնի, որ պահպանել է դասականի եռաստիճան դրութիւնը), իբր, կամայականութեան կամ ենթակայական հանգամանքի արդիւնք է: Ելնելով այս սխալ բացատրութիւնից, նա պահանջում է, որ արեւմտահայ գրողները «գոհագործութիւն» անեն նոր փոխառուող բառերի տառադարձութեան հարցում եւ ընդունեն արեւելահայերի տառադարձութիւնը, որն, ըստ էութեան, աւելի մօտ է կանգնած մեսրոպեան արտասանութեանը: Միս կողմից՝ նա հակուած է ընդունելու, որ իբր մեսրոպեան ուղղագրութեան (իր տերմինով՝ «յարմարագրութեան») յետագայ փոփոխութիւնը (պատմական հնչիւնափոխութեան առումով) արդիւնք է ոչ թէ կենդանի արտասանութեան փոփոխութեան, այլ բուն իսկ ուղղագրութեան «աղաւաղման»: Այդ կապակցութեամբ նա կշտամբում է նաեւ արեւելահայ այն թերթերին, որոնք գտնում են, որ գրութեան այլակերպ արտասանութիւնը հետեւանք է պատմական հնչիւնափոխութեան. «Արդեօք հնչման կամ կենդանի արտասանութեանց աղաւաղկութիւնն եղած է սկզբնապատճառ մասնեաց հինաւորց յարմարագրութեան աղաւաղման,- հարցնում է նա,- թէ ընդհակառակն, յարմարագրութեան աղաւաղկութիւնն համարելի է սկզբնառիթ մեսրոպեան տառից արտասանութեան աղաւաղկութեանը: Ըստ բողոքարկութեան ռուսահայ լրագրաց՝ իբր թէ առաջինն եղած լինի սկզբնապատճառ վերջնոյն» (Բ. Սարգիսեան, Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն, «Բազմավեպ», 1889, Յունիս, էջ 161):

Պատասխանելով Բ. Սարգիսեանի նման մտածողներին, Հիւրշմանը միանգամայն իրաւացի կերպով իր վերոյիշեալ նամակում գրում է. «... Ամենեւին օգուտ չունենար, եթէ արեւմտեան Հայք Տփղիսեցոց պահանջմանց հետեւելով հին արտաբերութեան դառնալու որոշումն ընեն. վասնզի անկարելի է» («Հանդէս ամսօրեայ», 1888, էջ 122): Հիւրշմանի կարծիքով՝ մի քանի արեւմտահայեր, բնակուելով Թիֆլիսում, անշուշտ, կը կարողանային նրանց արտաբերութիւնը իւրացնել. սակայն «երկու միլիոն» զանգուածը պիտի շարունակէր բառերն արտաբերել իր արտասանական դրութեան համաձայն. «Լեզուագիտական տեսակէտով՝ Տփղիսի պահանջմունքը չեմ կրնար իրաւացի դատել,- շարունակում է նա:- Հնաձեւն (Das Alttertumliche - նկատի ունի մեսրոպեան հայերէնը - Լ.Խ.) արժէք ունի լեզուագէտներու՝ բայց ոչ երբէք խօսողներու համար» («Հանդէս ամսօրեայ», անդ):

Այնուհետեւ. հնչիւնական փոփոխութիւնները հասնում են իրենց զարգացման այնպիսի մի կէտի, երբ միեւնոյն պայմաններում նոյն տիպի բառերը իրենց ներգործութեանը ենթարկելով, վեր են ածում հնչիւնական օրէնքի: Նկատենք, որ հնչիւնական օրէնքները գործում են զարմանալի կանոնաորութեամբ եւ ճշգրտութեամբ, որոնց ուսումնասիրութիւնը բացառիկ նշանակութիւն ունի տուեալ լեզուի պատմութիւնը գիտականօրէն լուսաբանելու, նրա ծագումնաբանական ցեղակցութիւնը պարզելու, զարգացման տարբեր փուլերի ճիշդ պարբերացումը կատարե-

լու տեսակէտից: Ընդդիմ այն բանի, որ Հիւրշմանը հիանալի կերպով հետազօտեց դասական հայերէնի հնչիւնական համակարգում գործող օրէնքները, խոշոր գիտկատարեց՝ պարզելով հայերէնի տեղը հնդեւրոպական լեզուաբանութեան միանգամայն սպառնիչ կերպով ապացուցելով, որ հայերէնը ոչ թէ իրանական ճիւղի մի բարբառ է, ինչպէս մինչ այդ ընդունուած էր հնդեւրոպարան նշանաւոր լեզուաբանների կողմից (Բուպպ, Գրիմ, Վինդիշման, Մարս Միլլեր եւ ուրիշներ), ա՛յլ՝ հնդեւրոպական առանձին անկախ մի լեզու (տե՛ս նաեւ Հիւրշմանի հետեւեալ աշխատութիւնները. «Über die Stellung des Armenischen in Kreise der indogermanischen Sprachen», 1875, «Zur Chronologie der Arm. Vocalgesetze», 1898, «Armenische Grammatik», հատ. 1, 1895, հատ. 2, 1897, Leipzig: Տե՛ս նաեւ Փրոֆ. Էդ. Աղայեան, «Լեզուաբանութեան հիմունքներ», Երեւան, 1987, էջ 277-288):

Ինզէֆ Կարստի՝ կիլիկեան միջին հայերէնի հնչիւնական օրէնքների բացայայտման շնորհիւ, այսօր մենք պատկերացում ունենք հնչիւնական այն տեղաշարժերի մասին, որ կրել է հայերէնը իր զարգացման տուեալ փուլում (Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901): Փրոֆ. Հր. Աճառեանը, հայոց լեզուի զարգացման տարբեր փուլերում գործող հնչիւնական օրէնքների հմուտ ուսումնասիրման շնորհիւ, կարողացաւ ամենայն մանրակրկիտութեամբ եւ սպառնիչ կերպով հետազօտել հայերէնի բառագանձը, ինչպէս նաեւ տալ հայոց լեզուի պատմութեան առաջին յաջող փորձը:

Հետեւաբար՝ պայման չէ ամենեւին, որ Ուղղագրութեան եւ Ուղղախօսութեան համապատասխանութիւնը պարտադիր լինի բոլոր ժամանակներում ու ղէպերում: Այդ իսկ պատճառով՝ անմտութիւն կը լինէր ամէն անգամ պահանջել, սոսկ Ուղղախօսութեան թելադրանքով, որ Ուղղագրութեան «բարեփոխում»ներ իրականացունեն հնագոյն մատենագրութիւն ունեցող ժողովուրդների գրութեան համակարգում:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՍՏԵՂՃԱՏ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՂՆ Է ԵՒ ԲԱՅԱՌԱՊԷՄ ՄԻԱԿ ՊԱՀՊԱՆԸ:- Զի՞նէր Ուղղագրութիւնը՝ կը կորչէր եւ պատմութեան անյայտութեան մշուշում կը սուզուէր դարերի իմացական այն հարստութիւնը, որի միակ ժառանգորդներն են յետագայ հայորդի սերունդները եւ ... մարդկութիւնը միաժամանակ:

Եւ իսկապէս հետաքրքրական է իմանալ՝ ի՞նչ է ցոյց տալիս Հայոց լեզուի բազմադարեան զարգացման պատմութիւնը Մաշտոցադիր Ուղղագրութեանը վերապահուած երախտարժան այս դերի առնչութեամբ:

Հաստատենք. բացառապէս Ե. դարում էր միայն, որ առաջին անգամ գրի առնուող հայոց կենդանի լեզուն իր Ուղղագրութեամբ եւ Ուղղախօսութեամբ միանգամայն ներդաշնակ էր բացարձակ համապատասխանութեամբ. գրութիւնը լիովին արտացոլում էր հնչիւնական արտասանութեան բառերի: Եւ դա ինքնին հասկանալի է:

Նման գոյավիճակը, սակայն, յարատեւեց մինչեւ Բագրատունեաց թագաւորութեան աւարտը (ԺԱ. դար), երբ ժամանակի յարահողով եօթ հարիւրամեակների ընթացքում աննկատելիօրէն հնչիւնական-արտասանական որակական փոփոխութիւններ արձանագրեց Հայոց լեզուն, որով եւ խախտուեց Ուղղագրութեան եւ Ուղղախօսութեան համապատասխանութիւնը: Իսկ ԺԲ. եւ մասնաւոր ժԳ. դարերի գրաբարը արդէն խօսակցական լեզու չէր. նա իր գոյութիւնը շարունակում էր իբրեւ գիտութեան լեզու եւ կամ սահմանափակում էր եկեղեցում կամ վանքի

պատերի մէջ: Այդ ինքնին նշանակում է՝ Ուղղագրութիւնը եւ Ուղղախօսութիւնը արդէն չէին համապատասխանում իրար, չէին ծածկում միմեանց:

Հարց է ծագում. ինչպէ՞ս վարուեցին այն ժամանակուայ մեր գրատը մշակոյթի ներկայացուցիչները՝ Վարդապետները, Ուսուցչապետները եւ վաստակատը Գրիչները: «Բարեփոխեցի՞ն» Մաշտոցադիր Հայոց Ուղղագրութիւնը: Ամենեւին էլ ո՛չ, միանգամայն ԱՆԱՂԱՐՏ պահեցին այն: Ուզենային էլ չէին կարող «բարեփոխել», որովհետեւ այլապէս խաչ կը քաշէին գրատը արտայայտութեամբ մտաւորական նախորդ սերունդների ամբողջ մատենագրական ժառանգութեան եւ առաջին հերթին Մաշտոցեան Գրական Շարժման վրայ, որպիսի ծանրագոյն մեղանշում՝ ո՛չ մէկի մտքով անգամ անցկացնել պարզապէս անհնարին էր...:

Ապա ինչպէ՞ս վարուեցին: - Առանձն երկխոսութեամբ ու սրբութեամբ վարուեցին Մաշտոցադիր Հայոց Ուղղագրութեան կանոնների անսայթաք գործադրման պահանջներին, միաժամանակ հայերէնագիտական բանասիրական հետազոտումների ձեռնամուխ լինելով տեսական աշխատութիւններ հեղինակեցին, հանգամանօրէն բացատրելով ու հիմնաւորելով ուղղագրական կանոնների կիրառման ճշդագոյն օրինաչափութիւնները ...:

Այսպէս, Հայոց լեզուի պատմութիւնից յայտնի է, որ ԺԲ.-ԺԳ. դարերում գործածուող հայերէնը շատ էր հեռացել գրաբարի դասական վիճակից. հետեւաբար այս շրջանում կիրառուող գրաբարը բոլորովին էլ այն չէր, ինչ Գ.-Ե. դարերում հայ ժողովրդի շուրթերի վրայ բորբոսացող լեզուն: Որքան էլ միջնադարեան հեղինակները աշխատում էին գրել հայ պատմիչների ու մատենագիրների դասական լեզուով, այդ նրանց չէր յաջողում. պատճառն այն է, որ նրանք գրաբար գրում էին իբրեւ սովորովի մի լեզուով, ուստի եւ իւրաքանչիւր միջնադարեան հեղինակի բարբառային լեզուամտածողութիւնը, քերականական ձեւերն ու արտայայտչական միջոցները թափանցում էին նրա գրատը արտադրանքի մէջ: Գեոեւ Բագրատունեան շրջանի (Թ.-ԺԱ. դդ.) գրաբարի մասին Ա. Այտընեանը իր դարագլուխ կազմող «Զննական քերականութեան» մէջ այն կարեւոր տեսակէտն է յայտնում, որ գրաբարը «իբօք գրաբար էր (= ոչ խօսակցական, դժուարըմբռնելի, միայն գրով ընթերցուող)» նաեւ այն շրջանի հայերի համար. «Միջին դարուն վերջերը եւ մասնատրապէս Բագրատունեաց ժամանակները՝ երբ արդէն մեր գրաբարը իրենց ալ իբօք գրաբար էր, ձեւացած էր կերպատրեալ աշխարհաբար լեզու մը» (անդ, էջ 140):

ԺԲ.-ԺԳ. դարերում գրաբարի խօսակցական լեզու չլինելու, գրքունակ եւ սովորովի բնոյթ կրելու վերաբերեալ, ի շարքս բազմաթիւ մատենագրական վկայութիւնների, ունենք նաեւ մի ծանրակշիռ փաստ. յիշեալ ժամանակաշրջանում հանդէս են եկել մի շարք հեղինակներ, որոնք իրենց ստեղծագործութիւններում գործածել են ինչպէս գրաբար, այնպէս էլ միջին հայերէն խօսակցական լեզուն, ընդ որում յատկանշական է, որ միեւնոյն հեղինակը, երբ փորձում է գուտ վերացական՝ իմաստասիրական, գիտական կամ աստուածաբանական խնդիրներին նուիրուած աշխատութիւններ գրել, դիմել է միայն գրաբարին, իսկ այն դէպքում, երբ նա աշխարհիկ, ժողովրդական բնոյթի, ընդհանուր հասարակական հետաքրքրութիւն առաջացնող, գործնական նշանակութիւն ունեցող անմիջական եւ կոնկրետ հարցերի շուրջ երկեր է գրել, դիմել է միջին հայերէնին: Այսպէս են վարուել, օրինակ, Ներսէս Շնորհալիւն, Ներսէս Լամբրոնացիւն, Վարդան Արեւելցիւն եւ ուրիշներ: Այդ նշանակում է, որ ժողովուրդը այլեւս գրաբար չէր հասկանում, իսկ հեղինակը իր

մտքերը նրան հասանելի եւ ըմբռնելի դարձնելու համար պէտք է հրաժարուէր գրաբարից եւ կիրառէր այն լեզուն, որով խօսում էր նա տուեալ ժամանակաշրջանում:

Բայց եւ Մաշտոցադիր Ուղղագրութիւնը ԱՆԱՂԱՐՏ պահելու պարտաւորութիւնն ունէին միաժամանակ: Քաջ գիտակցում էին, որ Ուղղագրութիւնը սոսկ յարմարագրութիւն չէր, այլ առաջին հերթին եւ զլիսաւորապէս դարերի ու հազարամեակների գրատը հաղորդակցութիւնների կապող կամուրջն էր սերունդների: Բանն այն է, որ Ուղղագրութիւնը իր միասնական համակարգի նաեւ գրական լեզուների տարբեր շրջանները, (ինչպէս եւ նա՛մանաւանդ ազգի տարբեր հատուածները) իրար կապող եւ զօղող կարեւորագոյն օղակ է, որը հնարաւորութիւն է տալիս նախորդ դարաշրջանների հոգեւոր արտադրանքները փոխանցել նաեւ յետագայ սերունդներին, նաեւ միմեանց միջեւ արդի ժամանակներում՝ անկախ տարածքային որեւէ հեռաւորութիւնից...: Սրանից պէտք է եզրակացնել, որ մատենագրութեան զարգացման համար անհրաժեշտ է ոչ միայն գրատը կերպարանք տալ հնչիւնային լեզուին, այլեւ ԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԲՈՐ ԵՒ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՇԱԿԵԼ:

Իրականում՝ բուն իսկ գրական լեզուի միութիւնը հնարատը է պահպանել միայն շնորհիւ միակերպ ուղղագրութեան: Ուղղագրութեան ընդհանուր եւ տեսական միասնականութիւնը անհրաժեշտ պայման է ընդհանուր գրական լեզուի համար: Խնդիրն այն է, լեզուաբանական տեսութեան թելադրանքով էլ, որ իւրաքանչիւր գրական լեզուի զարգացման համար միասնական քերականութեան հետ ենթադրուում է նաեւ գրութեան միակերպ ու միասնական համակարգ, որը ընդունելի եւ պարտադիր պէտք է լինի նոյն լեզուով խօսող ամբողջ հասարակութեան համար: Նկատենք նաեւ, որ բազմաթիւ բարբառներ եւ ենթաբարբառներ ունեցող լեզուի տարածքային տարբեր ներկայացուցիչները գրատը կերպով հաղորդակցելիս օգտուում են գրական լեզուի միակերպ ուղղագրութիւնից: Այս հանգամանքը, իր հերթին, հնարաւորութիւն է ընձեռում գրական լեզուի գործառնութիւնների ընդարձակման ու տարածման համար, դրանով էլ մեծ ոյժ եւ կենսունակութիւն հաղորդում գրական լեզուի ծաղկմանը: Այստեղից էլ անհրաժեշտութիւնը հայ մատենագրութեան դասական շրջանի Յուշարձանների՝ մանաւանդ «Քարգմանիչ»ների երկերի բանասիրական խորաքննիչ հետազոտութիւնների անհրաժեշտութիւնը, որով եւ ստեղծուեցին «Գրչութեան արուեստ»ի լեզուական-քերականական-ուղղագրական-գրադարձական առանձին «Ուղեցոյց»ների մի շարք բնագրեր, որոնք ապահովեցին Չեռագիր մատենաների գրագիտական բարձրորակ ընդօրինակումները եւ դրանց ընթերցման միասնական կանոնների՝ Ուղղագրութեան անընդհատականութիւնը: Այդ բնոյթի աշխատութիւններից են՝ Արիստակէս Գրիչի «Վերլուծութիւնք բացերեւապէս բազմազան բառից եւ բայից», Գեորգ Սկեւոնացու ա. «Մրատ վասն հանգամանաց հեզից», բ. «Մրատ վասն Առոգանութեանց», գ. «Մրատ գրչութեան», Գրիգոր Տաթեւացու՝ ա. «Լուծումն համառատ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեանն յԱռիստակիստ Հռետորէ», բ. «Համառատ ի խրատ գրչութեան Գեորգայ վարդապետի», գ. «Դարձեալ խրատ նոյն Գեորգ վարդապետի որ առ Ստեփաննոս Գոյնեքիցանց գրեալ Յաղագս գրչութեան արուեստի» երկերը, որ մենք առանձին գրքում գիտա-քննական համեմատութեամբ եւ ծաւալուն ուսումնասիրութեամբ հրատարակեցինք դեռեւս 1962 թուականին, Երեւանում, 410 տպագիր էջ, Մաշտոցի անուան Մատենադարանում տարիներ շարունակ հայագիտական հետազոտութիւններ կատարելիս: Բնագրային այդ աղբիւրները, իբրեւ դասընթացքներ, դարեր շարունակ դասաւանդուել են Միջնադարի մեր Վարդապետարան-

ներում, ճեմարաններում, Ակադեմիաներում եւ Համալսարաններում, նամանա-
ւանդ գրչութեան կենտրոններում հայերէնագիտութիւնը անխաբար պահելով:

1922 ԹՈՒՒԿԱՆԻ ԱԲԵՂԵԱՆԱԿԱՆ ՉԱՆԱԻՐ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԵՆ
ՖՈՐՄԱՆ ԵՒ 1940 ԹՈՒՒԿԱՆԻ ՆՐԱ ՍԱՄՆԱԿԻ ԲԱՐԵՓՈՆՈՒԹԱԾ ՏԱՐԲԵ-
ՐԱԿԸ, ՈՐ ԱՅԼԱՊԷՍ ԿՈՉՈՒՄ Է «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ»:-
Նկատենք, որ մեր գրապայքարի առաջամարտիկները ԺԸ եւ ԺԹ. դարերում լաւ
էին պատկերացնում ուղղագրութեան չափազանց կարեւոր նշանակութիւնը մատե-
նագրութեան զարգացման տարբեր փուլերի շողկապման եւ նրանց միասնութեան
պահպանման գործում: Միւս կողմից, նրանք հաշուի էին առնում այն խիստ բնորոշ
եւ խրայատուկ իրադրութիւնը, որ ներկայացնում էր այդ ժամանակ հայ ժողովրդի
տարբեր հատուածների (ե՛ր արեւելահայ, ե՛ր արեւմտահայ աշխարհաբարների,
ինչպէս նաեւ բարբառային խօսուածքների) արտասանուածքը՝ իրենց առանձնա-
յատկութիւնների խայտարեղէնութեամբ ու հակադրութեամբ. բացակայում էր
արտասանուածքի միասնութիւնը: Այս հանգամանքը առաւել հրամայաբար պար-
տադրում էր գրապայքարի տեսաբաններին պահպանելու հայերէնի աւանդական
ուղղագրութիւնը, որն իր տեսութեամբ ու կանոններով հիմնականում մշակուել է
ուսումնասիրուել էր, ինչպէս վերը ասուեց, դեռեւս ԺԲ.-ԺԳ. դարերում՝ գրչութեան
արուեստի լեզուական-քերականական տեսութեան հիմնադիրների կողմից. ԳՐՈՒ-
ԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԼԻՆԵՐ ԳՐԱԲԱՐԵԱՆ, ԲԱՅՅ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾԸԸ՝ ԻՒՐՈՎԻՔ՝,
ԻՒՐԱԲԱՆՉԻՒՐ ՀԱՏՈՒԱԾԻ ԽՕՍԱԿՅԱԿԱՆ ԼԵՋՈՒԻ ԵՒ ԲԱՐԲԱՌԻ ԱՐՏԱ-
ԲԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՊԱՏԱՍԻԱՆ:

Գրապայքարի ուսովիրաները ճիշդ կերպով ըմբռնում էին, որ եթէ մի կողմ
բողոքելով գրաբարեան աւանդական ուղղագրութիւնը եւ ուղղագրական ռեֆորմ
կատարելով ընդունէին միայն հնչիւնական դրութիւնը, աշխարհաբար երկու գրա-
կան լեզուների միջեւ կը ստեղծուէր անանցանելի մի անջրպետ. գրատը հաղոր-
դակցութիւնը այնքան կը դժուարանար, որ երկու հատուածների ներկայացուցիչ-
ները, առանձին դէպքերում, հազիւ թէ միմեանց մտքերը կը կարողանային կարգալ
եւ հասկանալ: Այդ նշանակում է, որ գրաբարեան ուղղագրութիւնը, իր կանոնների
որոշ խրոնիկութեամբ ու բարդութեամբ հանդերձ՝ մեր աշխարհաբար երկու գրական
լեզուների կազմաւորման եւ ամրապնդման ուղղութեամբ խիստ դրական կարեւոր,
այն է՝ մանկաբարձի դեր է խաղացել: Աւելին. նոյնիսկ Փրոֆ. Մ. Աբեղեանի
կարծիքով՝ «... ԳՐԱԲԱՐԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԸՆԴՈՒՆԵԼ ԵՆ
ԱՄԷՆՈՒՐԵԸ, ՄԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՅ Է ԵՂԵԼ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԱՌԱՋ
ԲԵՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ...» (Մ. Աբեղեան, Մեր ուղղագրութեան մասին, «Արարատ»,
1913, 11, էջ 1056-1057):

Նոյն հեղինակը մինչեւ անգամ հարկադրուած է ընդունել, որ մեր արդի գրա-
կան լեզուների գոյութիւնը պայմանաւորուած է հենց Մաշտոցեան ուղղագրու-
թեամբ. «Շատ անգամ յայտնուած ճշմարտութիւն է,- գրում է նա, որ աշխարհա-
բարը չէր կարող այնպէս արագ զարգանալ, եթէ չլիներ գրաբարը: ԲԱՅՅ
ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՊԷՏԸ Է ԸՆԴՈՒՆԵԼ ԵՒ ԱՅՆ, ՈՐ ԵԹԷ ՉԼԻՆԵՐ
ԳՐԱԲԱՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ, ՄԵՆՔ ԴԺՈՒԱՐ ԹԷ ՈՒՆԵՆԱՅԻՆՔ ՄԵՐ
ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒՆ, ԵՒ ՄԵՐ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՆԵՐՆ ԱՅՆՔԱՆ
ՀՆՈՒՒ ԿԸ ԼԻՆԵՆ ԻՐԱՐՈՒՅ, ՈՐ ԿԸ ԿԱՐԴԱՅԻՆՔ, ԲԱՅՅ ԴԺՈՒԱՐ ԿԸ
ՀԱՍԿԱՆԱՅԻՆՔ, ԱՌԱՆՅ ԱՌԱՋՈՒՅ ԱՌԱՆՉՆԱՊԷՍ ՍՈՎՈՐԱԾ ԼԻՆԵԼՈՒ»
(անդ, էջ 1057). մի ճշմարիտ խոստովանութիւն, որ ոյժը պահեց ու պահպանեց

յետագայ բոլոր ժամանակներում, այդ թում ներկայում եւ, առաւել եւս, ապա-
գայում..., այն էլ Աբեղեանի իսկ հաւատամամբ:

Բայց կեանքի հեզմանքն էլ այն է, որ տրամագծօրէն միանգամայն ՀԱԿԱ-
ՌԱԿԸ կատարեց այս նոյն հեղինակը 1922 թուականին իր առաջարկած ուղղագ-
րական «ռեֆորմ»ով, որ մինչեւ անգամ առաջին հայեացքից անհաւատալի է թում
նման ձախաւեր շրջադարձը...:

Հարիրամեակների եւ հազարամեակների մատենագրութիւն ունեցող հայոց
լեզուի համար առհասարակ լեզուաբանական-բանասիրական - բառարանագրա-
կան աշխատանքների անկաշկանդ ծաւալմանը խոչընդոտում եւ խանգարում են
երկու ռեֆորմներով պայմանաւորուած խեղագրութիւններն էլ հաւասարապէս:-
Այստեղ չենք կարող չ'արձանագրել, որ ԱՄԵՆԱՆԱՅՏԱՌԱԿ դրութիւնը հայա-
գիտական աշխատութիւնների հեղինակման առթիւ յարուցուած բարդութիւնն ու
դժուարութիւնն են, երբ ներկայումս ստեղծուած ուղղագրական բազմազանութիւն-
ների ու խայտարեղէնութիւնների պատճառով ուսումնասիրողը գործ է ունենալու
տարատեսակ բոլոր ուղղագրութիւնների հետ, եւ ո՛չ թէ՛ մէկ համակարգուած ու
կանոնարկուած միասնական եւ միակերպ համագրային ուղղագրութեան, որ
Մաշտոցեանն է իր աւանդակաւորութեամբ:

Իմ հայագետիս, խորին համոզմունքն է՝

ԵՐԲ ԷԼ ԼԻՆԻ ՎԵՐԱԳԱՌՆԱԼՈՒ ԵՆՔ ՍԱՇՏՈՅԵԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՀԱՍԱՋԳԱՅԻՆ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆԸ՝ ՏԷՐ ԴԱՌՆԱԼՈՎ
ՀԱՋԱՐԱՄԵԱԿՆԵՐԻ ՄԵՐ ԱՆՅԵԱԼԻ ԻՍԱՅԱԿԱՆ ՀԱՐՈՒՍՏ ԺԱՌԱՆԳՈՒ-
ԹԵԱՆԸ...:

ՔՍԱՆՍԷԿԵՐՈՐԴ ԴԱՐԸ ԴԻՄԱՌՈՐԵԼՈՒ ԵՆՔ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒՂԱԳ-
ՐՈՒԹԵԱՄԲ ԻԲԵՒ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՋԳ՝ ԴԻՄԱԳՐԱԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ
ՄԱՐՏԱՀՐԱԵՐՆԵՐԻՆ ՅԱՆՈՒՆ ԱՋԳՈՎԻՆ ՎԵՐԱՊՐՈՒՄԻ...:

Իմ իսկ մախաձեռնութեամբ եւ հայագետիս ինքնակամ պատասխանատու-
թեամբ հէնց յաջորդ տարին Արեւմտեան թեմի Առաջնորդարանի հովանաւորու-
թեամբ լոյս տեսած առաջին եւ յետագայ հայագիտական աշխատութիւններս
հրատարակեցի Մաշտոցեան ուղղագրութեամբ..., չնայած այն իրողութեանը, որ
Հայաստանում իմ հեղինակութեամբ արդէն իսկ հինգ աշխատութիւններ լոյս էին
ընծայուել հայաստանեան խեղագրութեամբ...:

Միաժամանակ դեռեւս 1990 թուականին Ուղղագրութեան հարցերի արծարծ-
մանը նուիրուած իմ ուսումնասիրութիւններում նաեւ պատմութեան համար
անվերապահօրէն յայտարարել եմ.

«ՍՓԻՒՆԱԿԱՆ ԳՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԱՆՏԱՐԺԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄՆ ԵՆՔ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՒ ԱՅՆ, ՈՐ ՀԱՄԱՐԻՄ ՄՆԱՅ ԴԱՍԱԿԱՆ՝
ՍԱՇՏՈՅԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՆԿԱՏԱՄԲ ԵՒ ՈԳԻ Ի
ԲՈՒՆ, ԻԲԵՒ ԱՋԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՎԱԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՍԿԸՋ-
ԲՈՒՆԱՅԻՆ ԱՆԴՐՈՒԹԵԼԻՈՒԹԵԱՄԲ ԿԻՐԱՌԵՅ ԵՒ ՊԱՀՊԱՆԵՅ ԱՅՆ»¹:

Վերջում՝ ամփոփելով մեր տեսակէտները, եզրակացրել ենք.

«Բնաշխարհի մեր ժողովրդի ազգային-քաղաքական գիտակցութեան ներկայ
բացառիկ զարթօնքն ու հասունացումը հրամայաբար քելադրում են.

¹ Տե՛ս «Արմաշ» հայագիտական պարբերագիրք, 1990, էջ 85, «Հայ լեզուաբանութեան առաջացման
պատմութիւնը եւ Քերականագիտական Միտքը V-XVI դարերում», Երկհատոր, Լիզպոն, 1992, հ.
Բ., էջ 406, «Հանդէս ամսօրեայ», 1998:

«ՀՐԱԺԱՐՈՒԵՆ ատալինիզմի պարտադրած արեղեանական ժամանակավրէպ վերջին ուղղագրական համակարգից եւս, որը՝

«ա. խրամատաւորում է մեր ազգային միասնութիւնը՝ հակասելով «Մէկ Ազգ, Մէկ Հայրենիք եւ Մէկ Մշակոյթ» գերմպատակին. արժէքազրկում եւ արհեստականօրէն դժուարացնում գրական հոգետր հաղորդակցութիւնը Բնաշխարհի եւ Մփիտքի միջեւ՝ մեր մշակութային ամբողջական հարստութեան խանգարումով. ջլատում համազգային համախմբումով պայմանաւորուած ազգային ուժականութիւնը. արգելափակում ազգային հպարտութիւն պարզետղ մաշտոցեան օրերից հայի հանճարով ստեղծուած իմացական վիթխարի գանձարանը գրաբարեան լեզուի՝ հայորդի մտաւորական սերունդների հաստոյութիւնից.

«բ. հայոց լեզուի հնամենի քառապատկերների եղծումով եւ աղաւաղու-մով գրկում հայերէնը պատմա-մշակութային արժէւորումներից եւ ունեցած միջազգային նշանակութիւնից.

«գ. իմաստագրկում հայերէնի ունեցած միջազգային քաղաքակրթական նշանակութիւնից՝ ամլացուելով Միջազգային Հայագիտութեան ուսումնասիրման առարկայ դառնալուց:

«Ճոհական ո՛չ մի ժողովուրդ, բնականաբար, նման զոհարերութեան չէր գնայ վասն ինքնաքերարժէքման եւ ... մշակութային խեղումների:

«Պահանջելով՝

«ՎԵՐԱԳԱՌՆԱԼ Մաշտոցեան ուղղագրական համակարգին որպէս մեր Ազգային Ինքնութեան Վաւերականութեան»¹:

ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԵՒ

ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

¹ Տե՛ս «Արմաշ» Պարբերագիրք, Մոնթրէալ, 1990, էջ 86, «Հայ լեզուաբանութեան առաջացման պատմութիւնը եւ Քերականագիտական միտքը Հայաստանում (V-XVI) դարերում», Լիզպոն, երկհատոր, 1992, հ. Բ., էջ 405, նաեւ «Հանդէս ամսօրեայ», 1998:

ՍԵՐՈՎԲԷ ԿԱՐՆԵՑՈՒ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ

ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵՉՈՒՈՎ¹

1965 թուականին Մաշտոցի անուան Մատենադարանի արխիվային նիւթերի ուսումնասիրութեան ժամանակ մեր ուշադրութիւնը գրաւեց անկազմ եւ անանուն մի Չեռագիր. այն գրուած է սովորական կապոյտ քրթի վրայ, սեւ մելանով, ֆրանսերէն լեզուով, քրթի չափերն են՝ 34x22,5 սմ., էջերը հեղինակի կողմից համարակալուած են՝ 1ից 40. ձեռագիրը պահուում է Մատենադարանի արխիվային բաժնի Կաթողիկոսական դիւանի վաւերագրերի մէջ²: Դատելով ձեռագրում նկարագրուող ղէպերից եւ հեղինակի կողմից նիւթի շարադրման մէջ յաճախակի կրկնուող «1812 թուական»ից, դժուար չէ հետեւեցնել, որ գրութեան ժամանակը հէնց 1812 թուականն է: Եթէ նկատի չ'ունենանք ձեռագրի տիտղոսաբերքի եւ հեղինակի անուան անյայտացումը, ապա պէտք է ասել, որ այն պահպանուել ու մեզ է հասել բաւականին լաւ վիճակում: Դա մի Ուղեգրութիւն է՝ Բաղդադից Էջմիածին անցած մի հայ ճանապարհորդի կողմից գրուած: Ե՞րբ է անյայտացել այդ Չեռագրի տիտղոսաբերքը, որի վրայ ամենայն հաւանականութեամբ գրուած է եղել Ուղեգրութեան հեղինակի անունն ու մականունը,- անյայտ է: Այդ Չեռագրի մասին աղբիւրներում որեւէ տեղեկութիւն չկայ. միայն 1958 թուականին ակադեմիկոս Ա.Ռ. Յովհաննիսեանը իր «Присоединение Закавказья к России и Международные отношения в начале XIX столетия» ուսումնասիրութեան մէջ, իրեն հետաքրքրող մի հարցի՝ անգլո-իւրանական յարաբերութիւնների պատմութեան լուսարանման առնչութեամբ, յղում է արել այս Չեռագրին, համարելով այն Բաղդադում մահացած Յակոբ արքեպիսկոպոսի մի ուղեկցի հեղինակութիւն³: Իսկ տարիներ առաջ Մատենադարանի արխիվային բաժնի ֆոնդերի փաստաթղթերը նկարագրելիս այն ուղղակի վերագրուել է XVIII դարի վերջերին եւ XIX դարի սկզբներին Հնդկաստանի հայկական գաղթօջախներում մի քանի տարիներ Էջմիածնի վանքի

¹ Տպագրելով սոյն հաղորդումը Սերովբե Կարնեցու Չեռագիր (ինքնագիրը՝ ֆրանսերէն լեզուով) աշխատութեան մասին, մեր պատրաստած բնագրի հայերէն թարգմանութեան հրատարակումը, զուգահիշ քննարկային ընթերցմամբ, պատմա-մշակութային Ճանօթագրումների օժտմամբ մեր կողմից՝ բողոմն ենք մի այլ առիթի:

* Իսկ այդ առիթը ներկայացաւ միայն 1968 թուականին, երբ Երեւանի «Հայաստան» հրատարակչութիւնը լոյս ընծայեց առանձին գրքով ֆրանսերէն բնագրի արեւելահայերէն իմ կատարած թարգմանութիւնը՝ բանասիրական եւ աղբիւրագիտական ուսումնասիրութեամբ, ինչպէս եւ պատմա-մշակութային ծանօթագրութիւններով հանդերձ, համաստորագրութեամբ Մատենադարանի աւագ գիտաշխատող Հ.Ն. Խաչատրեանի:

² Տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական դիւան, քրթապանակ 23, ծրար 171:

³ А. Р. Иоаннисян, *նշում աշխատ.*, էջ 337:

նուիրակի հանգամանքով գործած Յակոբ կրօնատրին: Հենց այդ ժամանակներից էլ այն գրանցուել է Մատենադարանի ցուցակներում «Հնդկաստանի Յակոբ վարդապետի ճամփորդական օրագիրը» վերնագրով:

Սոյն ձեռագիր աշխատության հեղինակի հարցը վերջնականապես պարզելու համար, սակայն, անհրաժեշտությամբ էր զգացում բանասիրական մանրակրկիտ հետախուզումներ կատարել տուեալ ժամանակաշրջանի արխիւային նիւթերում, ամենից առաջ ճշգրտել, թէ Յակոբ վարդապետը (յետագայում արքեպիսկոպոս) ե՞րբ է եղել Հնդկաստանում և ինչպիսի՞ն է եղել նրա ճակատագիրը:

Յակոբ վարդապետի իսկ վկայութեամբ, որպէս Էջմիածնի նուիրակ, ինքը Հնդկաստան է գնացել Դուկաս կաթողիկոսի հրամանով՝ XVIII դարի վերջերին, իր հետ պաշտօնակից ունենալով Վրթանէս վարդապետ Աշտարակեցուն: Մաշտոցի անուան Մատենադարանում 3322 համարի պահուող Յակոբ վարդապետի «Գիրք քարոզից» ինքնագիր ձեռագրի¹ Առաջաբանում այդ մասին կարդում ենք. «Յատուրս գերիշխանական պետութեան տեսած Դուկասու սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց, որոյ հրամանաւ գոյով ի Հնդկիս՝ վասն գործոյ նուիրակութեան սրբոյ Արոտոյն:

Յամի փրկութեան մերոյ 1799 և թուականիս հայոց ՌՄԽԸ ի բազմամարդ աշխարհն Հնդկաց»²:

Մեզ հասած վաւերագրերից իմանում ենք, որ հայրենիքից հեռու, օտար ափերում Էջմիածնի նուիրակը այնքան էլ հանգիստ կեանք չի ունեցել: Այսպէս, 1805 թուականին Հնդկաստանի Բոմբէյ քաղաքում նրա յօրինած «Երգարան»-ի ընդարձակ Առաջաբանում, անդրադառնալով այն հանգամանքներին, որոնք հարկադրել են նրան զբաղուել երգեր գրելով, ասում է. «Գոյով մաշեցեալ բազում ամս անհանգիստ տառապանօք և աշխատութեամբ ի պանդուխտ և հեռաբնակ աշխարհի ի կողմանս Հնդկաց ի ծովու և ի ցամաքի, ոչ անդէպ համարեցար հանգիստ տալ մերս մտաց և թշուառակիր անձին ի պէս պէս տրամութեանց և կսկծալի անակնկալ դիպումածոց որք անցին զմեօք: Ուստի հարկ եղև մեզ յօրինել զբանի մը երգս զուարճալիս և ուրախարարս...»³: Ի դէպ՝ նկատենք, որ «Երգարան»-ում գետնեղում 17 տաղերից մեծ մասում արտայայտուած է հեղինակի՝ հայրենիքի հանդէպ ունեցած սէրն ու կարօտը: Այդպիսիք են, օրինակ, նրա «Տաղ երգեալ ի դէմս սիրելոյ բարեկամի հեռացելոյ յերկիր անծանօք», «Ի դէմս հեռատր բարեկամի», «Տաղ երգեալ ի դէմս վարդին և պիւլպիւլին» և միս երգերը⁴: Առաջաբանի վերջում հեղինակը խնդրում է ընթերցողին յիշել իրեն «իբր կոչեցեալ նուիրակ կողմանցն Հնդկաստանի զշարահիւսօղն երգոցս զՅակոբոս... ընդ իս հա-

ւասար վշտակից և ցաւակից, բազմաշխատ... զՎրթանէս հանճարիմաստ վարդապետ Աշտարակեցի»¹:

Հնդկաստանի հայկական գաղթօջայիտում Էջմիածնի օգտին հանգամանակաճ նիւթական մեծ հարստութեամբ Յակոբ նուիրակը, Վրթանէս վարդապետի հետ, ճանապարհուած է դէպի Էջմիածին: Հասնելով Բաղդադ, տեղեկութիւն է ստանում, որ Էջմիածնում տիրում է խառնաշփոթութիւն և կաթողիկոսական գահին տիրանալու համար պայքար է մղում Դանիէլի և Դաւթի միջեւ: Այդ պայքարը, որը մեր պատմութեան մէջ յայտնի է Դաւիթ-Դանիէլեան անունով, քաղաքական սուր բնոյթ էր ստացել՝ ընդգրկելով Հայաստանն ու նրա սահմաններից դուրս գտնուող հայ գաղթօջայիները: Մեր նպատակից դուրս է անշուշտ, հանգամանօրէն բնութեան առնել այդ իրադարձութիւնների հետ կապուած հարցերը, սակայն նշենք, որ դա հեռու էր գտնուող կրօնական բնոյթի միջադէպ լինելուց:

Հայաստանը դարձել էր հակամարտ պետութիւնների քաղաքականութեան ասպարէզ, «ուր թէպէտ որպէս գործող անձինք երեսու էին հայ գործիչները, սակայն ի ներքուստ դեկավարում էին բոլորովին այլ հաշիւներ»²: Իրերի իսկական դրութիւնը պարզելու նպատակով նուիրակ Յակոբը երկու անգամ Վրթանէս վարդապետին դէպի երկիր է ուղարկում, նրա միջոցով էլ ուղղակի կապ հաստատում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ (յետագայում կաթողիկոս) Եփրեմի հետ³ և վերջինիս խորհրդով առժամանակ յետաձգում է իր մեկնումը դէպի Էջմիածին⁴: Այսպիսով են անցնում Յակոբ արքեպիսկոպոսին, հաւաքած հարստութեան հետ, Էջմիածին բերելու համար Դաւիթ կաթողիկոսի և պարսկական թագաժառանգ Արքա-Միրզայի գործադրած ջանքերը: Նա շարունակում է մնալ Բաղդադում: Հենց այստեղ էլ 1809 թուականի հոկտեմբերի 21ին, Յակոբ արքեպիսկոպոսը յանկարծամահ է լինում: Այս մասին նոյն թուականի հոկտեմբերի 26ին, նրա վշտակից և ուղեկից Վրթանէս վարդապետը յատուկ նամակով հանգամանօրէն լուր է հաղորդում Էջմիածնի Հոգեւոր խորհրդին⁵: Այդ է հաստատում նաև Յակոբ արքեպիսկոպոսի շիրմի տապանագիրը⁶:

¹ Նոյն տեղում, թ. 270:

² Գ. Աղանեանց, «Դիւան Հայոց պատմութեան», Թիֆլիս, 1893, հ. Ա, էջ 9:

³ Յակոբ նուիրակը Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին իր վիճակի մասին նամակներ է գրել դեռ տարիներ առաջ: Այսպէս, 1808 թուականի ապրիլի 15ին Բաղդադից Վրթանէս վարդապետի միջոցով Եփրեմին յղած նամակում այդ մասին կարդում ենք. «Յառաջ քան զայս յանցեալ թիւ 1804 և ի նոյեմբերի 29 երկու միօրինակ թուղթս ենք մատուցեալ ի սպաս սրբութեան ձեռոյ, մինն ձեռամբ պարոն Յովհան Աղաբաբովին և միան ի վերայ Պոտոյ Երեմիա Չելեպոյն, յուսամ ըստ ժամանակին ընկալեալ իցէք և իմացեալ զգրեալս մեր ի մինն. վասն որոյ աստ չլրկենք զնոյնս» (Մաշտոցի անուան Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 19, վաւ. 34ա):

⁴ Մաշտոցի անուան Մատենադարան, արխիւային քաժին, Կաթողիկոսական դիւան, Թղթապանակ 19, 34ա, 53, 59 և այլն:

⁵ Նոյն տեղում, Թղթապանակ 21, վաւ. 105ա և 105բ:

⁶ Այն գտնուած է Մատենադարանում պահուող համար 3322 ձեռագրի Յիշատակարանում, էջ 282ա:

«Իմ Յակոբայ Արիի դի- Հնդկաց երկրի նուիրա- կիս, ի յաւարտիլ գործոյն որ Չեմ Տեառն մխեցաւ Մինչ սուրբ գահիս և ծնո- ւիս, Երող կարօտ ողորմե- լիս, Ի ննջմանս մինչ վեց Մնացի ի դաշտին Բաբիլո- նիս,	տիս, կիս, յիս, յիս, դիս, լիս, անիս, նիս,
---	---

¹ Այս Ձեռագիրը ամփոփում է իր մէջ Յակոբ վարդապետի երկու ինքնուրոյն գործերը: Դրանցից առաջինը կրում է «Գիրք քարոզից» խորագիրը (թ. 1-268), ուր տեղ են գտել հեղինակի 50 քարոզներ՝ «Յօրինեալ ի Յակոբայ նուաստ վարդապետէ...», իսկ երկրորդը «Երգարան» է, որը ներկայացնում է զեղարուեստական որոշ հետաքրքրականութիւն և արժանի է ուշադրութեան (թ. 269-281): Այդ երգարանը յօրինուած է նոյն Յակոբի կողմից՝ «1805 թուին ի Բոմբայի ի Հնդկիս»: Ձեռագիրն ունի նաև 12 տողից բաղկացած չափածոյ Յիշատակարան, գրուած՝ Վրթանէս վարդապետի կողմից, որպէս Յակոբ արքեպիսկոպոսի տապանագիր:

² Չեմ. համար 3322, թ. 1ա:

³ Նոյն տեղում, թ. 269:

⁴ Նոյն տեղում, թ. 269-281:

Այս բոլորից հետևում է, որ 1812 թուականին գրում Ուղեգրութեան հեղինակը չէր կարող լինել երեք տարի առաջ մահացած Յակոբ արքեպիսկոպոսը: Արևիկ. եզակի դեմքով շարադրուած Ուղեգրութեան Առաջարկում էլ հեղինակը Յակոբի մասին խօսում է որպէս երրորդ մի անձնատրութեան: Այսպէս. «Յակոբը, ոգետրուած Դանիէլի վերահաստատումից, տրամադրում է գնալ Էջմիածին: Մակայն վրայ է հասնում մահը եւ կանխում իր մտադրութիւնը: Հետեւապէս ես մնացի մե՛նակ՝ Յակոբ արքեպիսկոպոսի գոյքերի հետ միասին, անգլիացիներին հովանաւորութեան տակ»:

Կարելի էր, իհարկէ, ենթադրել, թէ այդ Ուղեգրութեան հաւանական հեղինակը նուիրակ Յակոբ արքեպիսկոպոսի հետ Հնդկաստան ճանապարհորդած, նրա հետ «հաւասար վշտակից եւ ցաւակից, բազմաշխատ...» Վրթանէս վարդապետ Աշտարակեցիին է: Մակայն մի կողմ թողնենք ենթադրութիւնները եւ դիմենք փաստերին:

Ինչպէս դժուար չէ նկատել, Ուղեգրութեան հեղինակը եղել է գործին տեղեակ անձնատրութիւն, որը Յակոբ արքեպիսկոպոսի մահից յետոյ Բաղդադում նրա թողած հարստութիւնը Էջմիածին հասցնելու հարցի շուրջը աշխոյժ մամակագրութիւն է ունեցել հայոց նորընտիր Եփրեմ կաթողիկոսի հետ: Նա ճանաչուած ու վստահուած է եղել նաեւ Բաղդադի անգլիական դեսպանատան կողմից:

Այսպէս, իր Ուղեգրութեան Առաջարկում հեղինակը ասում է, որ երբ Եփրեմը Էջմիածին հասաւ՝ «ինձ գրեց, որ նրան բերեմ Յակոբ արքեպիսկոպոսի գոյքերը...»: Այնուհետեւ, աւելի որոշակի դարձնելով իր ասելիքը, հեղինակը մատնացոյց է անում նաեւ դէպի Էջմիածին կատարած ճանապարհորդութեան ճիշդ թուականը: 1811 թուականի օգոստոսի 22ին Եփրեմ կաթողիկոսի «Ինձ ուղարկած կարգադրութիւնը, գրում է նա, - ես կարողացայ իրագործել միայն յաջորդ գարնանը»: Արևիկ. նա մանրամասնութիւններ է հաղորդում նաեւ այն մասին, որ իր «անվտանգութեան համար» ինքը Բաղդադից դէպի Էջմիածին է ուղեւորուել «որպէս Հնդկական ընկերութեան ... անգլիացի յանձնակատար ...», միաժամանակ օժտուած լինելով *անգլիական անձնագրով*...:

Ուղեգրութեան Առաջարկի այս ուշագրաւ տեղեկութիւնները մեզ համար պարտումների նոր ճանապարհ բաց արեցին: Այս կապակցութեամբ որոնումներ կատարեցինք Մատենադարանի ֆոնդերում: Դրանցում արժէքաւոր տեղեկութիւններ գտանք մեզ հետաքրքրող հարցի վերաբերեալ, որոնք ոչ միայն հնարաւորութիւն են տալիս մէկընդմիջտ պարզելու Ուղեգրութեան հեղինակի անձնատրութիւնը, այլեւ ստուգելու փաստերի ճշմարտացիութիւնը, կատարելու հրատարակուած պատմագիտական աշխատութիւններում տեղ գտած որոշ փաստերի ճշգրտումներ:

Արխիւային հաւաստի փաստաթղթերը վկայում են, որ 1811 թուականի Օգոստոսի 22ին Եփրեմ կաթողիկոսի Բաղդադ ուղարկած կարգադրութիւնը ուղղուած է եղել «արժանատր օրհնութեանց զգոնամիտ որդւոյ սիրեցելոյ պատուելի Սերորէ վարդապետի Կարնեցոյ»ն...¹:

Ապա շնորհիւ իմ որդի-կիս, Տէր Վրթանէս վարդապետի տիս, Տեղափոխեալ եղայ շիր-միս, Հանգեայ փեսայս ի ծոց Հար սիս -

Յամի Տեառն 1809, հոկտեմբերի 21, ի Բաբիլոն:

¹ Մատենադարան, Արխիւային բաժին, ֆոնդ Ա. Երիցեանի, թղթ. 159, վաւ. 59:

Որ իրօք, Եփրեմ կաթողիկոսը Սերորէ Կարնեցուն հրաւիրում է Էջմիածին, հաստատում է նաեւ Սերորէի իսկ 1812 թուականի Յունուարի 22ին Բաղդադից Հնդկաստան՝ Յարութիւն Սահակեան-Աղանուրեանց Նոր Ջուղայեցուն յղած մամակից: Հեղինակը հաղորդում է, որ Եփրեմ կաթողիկոսը իրեն «կոնդակ գրեաց եւ հայրական սիրով հրաւիրեալ խոճապետաց ելանել, դիմել անյապաղ ի սուրբ Աթոն ... գորոյ հրամանն սիրով ընդգրկեալ յետ միոյ հանդերձեալ եմ ընդ բարձրապատիւ եղբօր իմում Վրթանէս վարդապետին գնալ ի սուրբ Էջմիածին»¹:

Բաղդադում նուիրակ Յակոբ արքեպիսկոպոսի թողած հարստութիւնները Էջմիածին, Սերորէ Կարնեցու միջոցով, տեղափոխելու փաստը հաւաստի լինելու վերաբերեալ անառարկելի վկայութիւն է 1812 թ. Մայիսին Էջմիածին՝ Ներսէս արքեպիսկոպոսին Բայազետից աղա Յակոբ Արծրունու յղած մամակը: Նամակի հեղինակը հաղորդում է, որ Սերորէ եւ Վրթանէս վարդապետները իրենց բերած սպարանքներով Բայազետից ճանապարհ են ընկել դէպի Էջմիածին. «Մուրք արքոյ ընչիցն², - կարդում ենք այնտեղ, - դավայով 2 (6) պեոն Բ (2) թեմպելիք ձիջով ճանապարհ ձրիք...»³:

Այս տեսակէտից ուշագրաւ է նաեւ Եփրեմ կաթողիկոսի 1812 թուականի Սեպտեմբերին Բաղդադի եւ Բասրայի անգլիական դիւանագիտական ներկայացուցիչ Կլաւդիոս Ջեմս Ռիչիին գրած մամակը: Էջմիածնի վանքի՝ 1812-1820 թուականների գրագրութիւնների մատեանում պահպանուած այդ մամակի համառօտ շարադրանքում կարդում ենք. «Շնորհակալութիւն յաղագս զանազան բարերարութեանց առ մեզ..., այլեւ շնորհակալութիւն վասն Սերորէ վարդապետին, գոր մեք խնդրեցաք, եւ նա առարեաց»⁴:

Մի քանի ամիս յետոյ՝ 1813 թուականի Յունուարի 26ին, Եփրեմ կաթողիկոսը մի այլ գրութեամբ Հնդկաստանի հայ գաղթօջախի ազգային գործիչներին եւ Էջմիածնի նոր նուիրակ Փիլիպոս արքեպիսկոպոսին ծանուցել է հետեւեալը. «զի Հնդկաստանու նուիրակ հանգուցեալ Յակոբ արքեպիսկոպոսի հոգետր որդի Վրթանէս վարդապետն ... եկն եհաս ողջամբ եւ խաղաղութեամբ աստ ի սուրբ աթոռս հանդերձ ընչիք մնացելովք, ընդ որում էր եւ գիտնականս վարդապետն Սերորէ անուն, գորմէ գուցէ լուեալ իցես...»⁵:

Որ Ուղեգրութեան հեղինակը Սերորէ Կարնեցին է, անառարկելի է դառնում նաեւ հնագրագիտութեան ընձեռած տուեալներով: Այդ ուղղութեամբ կատարած աշխատանքները միանգամայն դրական արդիւնք տուեցին. ներկայ Չեռագիւղը համեմատեցինք Մատենադարանում պահուող՝ ցար Նիկոլայ Առաջինին, զենեւալ Պասկեւիչին, Լազարեան եղբայրներին եւ այլոց տարբեր ժամանակներում ֆրանսերէն լեզուով Սերորէ Կարնեցու գրած եւ ստորագրած փաստաթղթերի հետ. պարզուեց, աներկբայօրէն, որ դրանք գրուած են *միեւնոյն անձնատրութեան* կողմից⁶:

¹ Կաթողիկոսական դիւան, թղթապանակ 19, վաւ. 8:

² Էջմիածնի օգոստին Հնդկաստանի հայ գաղթօջախներում Յակոբ նուիրակի հաւաքած հարստութիւնների ամբողջական ցուցակը տե՛ս Մատենադարանի արխիւային բաժնի Կաթողիկոսական դիւանում, թղթ. 31, վաւ. 227:

³ Կաթողիկոսական դիւան, թղթ. 23, վաւ. 59, 68:

⁴ Նոյն տեղում, թղթ. 44, վաւ. 356, էջ 45:

⁵ Նոյն տեղում, Ա. Երիցեանի ֆոնդ, թղթ. 159, վաւ. 67:

⁶ Նոյն տեղում, Կաթողիկոսական դիւան, թղթ. 55, վաւ. 258բ, Լազարեանների արխիւ, թղթ. 104, գործ 8, վաւ. 149 եւ այլն:

Նկատենք, որ դեռ անցեալ դարի վերջերին վաստակաւոր հայազէտ Ալեքսանդր Երիցեանը իր «Կովկասահայք» աշխատութեան մէջ նույնպէս հաւաստում է, որ Հնդկաստանից Բաղդադ բերուած Էջմիածնի հարստութիւնը տեղ է հասցրել ոչ այլ ոք, քան հենց ինքը Սերովբէ Կարնեցին:

Մակայն հարկ է նշել, որ «Կովկասահայք»-ում Բաղդադից Էջմիածին տեղափոխուած հարստութեան առնչութեամբ քոյլ է տրուել փաստական երկու անճշդութիւն. առաջին՝ շփոթուած է Հնդկաստանի նուիրակ Յակոբ արքեպիսկոպոսը Վրթանէս վարդապետի հետ. այսպէս, այնտեղ կարդում ենք. «... Հնդկաստան նուիրակ ուղարկած Վրթանէս եպիսկոպոսը մեծ գանձով վերադառնալիս է եղել Էջմիածին, բայց Բաղդադ հասնելով վախճանուել է...»¹ (ընդգծումը մերն է): Երկրորդ՝ քիւրիմացաբար յայտարարում է, որ այդ հարստութեան տեղափոխումը Սերովբէ Կարնեցու միջոցով, որպէս թէ, տեղի է ունեցել 1811 թուականին²: Մինչդեռ, իրականում, ինչպէս երևում է նորայայտ արխիւային տուեալներից ու ներկայ Ուղեգրութիւնից, այդ փաստը կատարուել է 1812 թուականի գարնանը: Նշուած սխալները յետագայում նայնութեամբ կրկնուել են նաեւ 1931 թուականին «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրուած Ռ. Արրահամեանի՝ «Կարնեցի Սերովբէ վարդապետի նամակները Ղրիմեցի Յովհաննէս վարդապետին» յօդուածաշարում³:

Այսպիսով, վերը բերուած փաստերը անհերքելիօրէն հաստատում են, որ Յակոբ արքեպիսկոպոսի մահից յետոյ Բաղդադում թողնուած հարստութիւնները Էջմիածին է տեղափոխել Սերովբէ Կարնեցին, ուղեկից ունենալով Վրթանէս վարդապետ Աշտարակեցուն, ուստի եւ աներկբայ է դառնում, որ Սերովբէ Կարնեցու գրչին է պատկանում տայն Ուղեգրութիւնը:

Սերովբէ Կարնեցին⁴ բոլորովին էլ անձանօք անձնատրութիւն չէ մեր մշակոյթի պատմութեան մէջ: Դեռ անցեալ դարի առաջին տասնամեակում հեռանալով Մխիթարեան միաբանութիւնից, նա դառնում է լուսատրչադաւան, գալիս Էջմիածին եւ աւելի քան երեսուն տարի՝ մինչեւ իր կեանքի վերջը, գործում մասնակցութիւն է ունենում ժամանակի հայ քաղաքական-եկեղեցական ու մշակութային կեանքին՝ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ նրա սահմաններից դուրս, մասնատրապէս Մոսկուայի, Պետրոգրադի, Աստրախանի հայկական գաղթօջախներում: Այդ են հաստատում ժամանակակիցների թողած նամակներում, պաշտօնական թղթերում, հայագիտական աշխատութիւններում ու Հայաստան այցելած օտար ճանապարհորդների ուղեգրութիւններում պահպանուած ուշագրաւ տեղեկութիւնները:

Սական նշենք, որ Սերովբէ Կարնեցու մասին մեզ հասած տեղեկութիւնները խիստ հակասական են ու իրարամերժ: Նկատենք նաեւ, որ յետագայ բանա-

ւերներից շատերը նույնպէս Սերովբէ Կարնեցուն գնահատելիս անկողմնակալ չեն եղել: Առաւօրեայ անհրաժեշտաբար հետեւում է, որ ժամանակն է արքիւրների համակողմանի ուսումնասիրութեամբ վերագնահատման ենթարկել նաեւ Սերովբէ Կարնեցու անձն ու գործունէութիւնը: Մակայն տուեալ դէպքում դա մեր ներկայ քննութեան սահմաններից դուրս է մնում: Միայն ասենք, որ Երոսայայում մեծացած, Հռոմում կրթութիւն ստացած, ապա կաթողիկական դասանանքից հրաժարուած Սերովբէ գիտնական վարդապետ Կարնեցին մի քանի տարի Բաղդադում յաջողութեամբ կատարում էր անգլիական դեսպանի երեխաների դաստիարակի դերը:

Յակոբ նուիրակի մահուանից յետոյ Բաղդադում անգլիական դեսպանատան հովանաւորութեան տակ գտնուող հարստութիւնները Էջմիածին ապահով տեղափոխելու համար ուղիներ էին որոնում, եւ ահա հենց այդ ժամանակ էլ Սերովբէ Կարնեցին դիմում է Եփրեմ կաթողիկոսին՝ խնդրելով իրեն ընդունել Հայաստանեաց եկեղեցու գիրկը: Այսպիսով, գտնում է այն յարմար մարդը, որը կարող էր Յակոբ նուիրակի կուտակած հարստութիւնները Էջմիածին հասցնել: Ինչպէս երևում է արխիւային փաստաթղթերից եւ Սերովբէ Կարնեցու Ուղեգրութեան Առաջաբանից, այդ գործում գործօն դեր է կատարել Բաղդադ անգլիական դեսպանութիւնը: Հագիւթ հարկ լինի կասկածելու, որ դա թելադրուած էր անգլիական դիւանագիտութեան շահերով: Յայտնի է, որ 1809 թուականի անգլո-իւրանական նոր պայմանագրի կնքումով Պարսկաստանում անհամեմատ ուժեղացել էր անգլիական ազդեցութիւնը: Մակայն չնայած դրան, անգլիական դիւանագիտութիւնը, ինչպէս խոստովանում է անգլիացի դիւանագետ գեներալ Սըր Ջոն Մակկոլմը, անհանգստացած էր այն բանի համար, որ «ռուսները, կարճ ժամանակի ընթացքում, Կովկասի հիւսիսից իրենց սահմանները տարածել էին մինչեւ Արաքսի ափերը»⁵: Ուստի Ռուսաստանի ազդեցութիւնը այդ մասերում, եթէ ոչ խապառ վերացնելու, ապա գէթ թուլացնելու խնդիրը անգլիական դիւանագիտութեան համար առաջնահերթ նշանակութիւն ունէր: Դրան հասնելու նպատակով, անգլիական դիւանագետները ուղիներ էին որոնում Անդրկովկասի, այդ թում նաեւ Հայաստանի հետ կապեր ստեղծելու, հայ աշխարհիկ ու հոգեւոր վերնախաւին սիրաշահելու համար: Իրենց մտադրութիւնների իրագործման ճանապարհին ոչ միջոցներ էին խնայում եւ ոչ էլ խտրութիւն դնում կիրառուող մէթոդների մէջ, ամէն անգամ հրապուրիչ, կեղծ հաւաստիացումներ տալով «Հայոց ազգը եւ եկեղեցին» հովանաւորելու մասին:

Անգլիական (ինչպէս եւ ֆրանսիական) դիւանագիտութիւնը ճիշդ գնահատելով, մի կողմից, պետականութիւնից զրկուած հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կեանքում հայ հոգեւոր կենտրոնի խաղանցած դերը, միւս կողմից՝ օգտագործելով կայսրութեան սահմաններում եղած հայ գաղթօջախների ռէալ հնարատրութիւնները, ջանում էր իր ազդեցութեանը ենթարկել Էջմիածինը ու նրա միջոցով փոխել հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը, խզել հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ եղած դարատար բարեկամութիւնը: Այս նպատակով անգլիական եւ ֆրանսիական պետութիւնները մի շարք գործնական քայլեր կատարեցին՝ սիրաշահել փորձելով հայ աշխարհիկ ու հոգեւոր վերնախաւին: Այդ կարգի ձեռնարկումների մէջ բոլորովին էլ վերջին տեղը չէին գրաւում հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչներին տրուած որոշ արտօնութիւնները եւ տնտեսական ծանր կացութեան մէջ գտնուող Էջմիածինն ինքնակամ օգնութիւն ցոյց տալու միջոցառումները: Այսպէս, իրաւունք էր տրուում, իրենց գերիշխանութեան տակ

⁵ Յով. Յակոբեան, Ուղեգրութիւններ, 1934, Երևան, հ. 2, էջ 53:

¹ Ա. Երիցեան, Կովկասահայք, Թիֆլիս, 1894, հ. Ա., էջ 551-552:

² Նոյն տեղում, էջ 552:

³ «Հանդէս ամսօրեայ», 1931, Թ. 1-2, էջ 72:

⁴ Նկատենք, որ արխիւային փաստաթղթերում 1814-1817 թթ. Սերովբէ Կարնեցին ստորագրել է նաեւ «Ժպիկեան» եւ «Արիստակեան» ազգանուններով, առանձին դէպքերում կցելով դրանց «Կարնեցի» մականունը (տե՛ս Մատնադարան, Լազարեանների արխիւ, թղթ. 104, վաւերագրեր 156, 160, 161, 177, 195 եւ այլն):

գտնուող տարածքներում եղած հայկական գաղթօջախներում էջմիածնից եկած նուիրակների միջոցով կազմակերպել հանգանակություններ: Աելի՛ն. «հոգատարութիւն» էր ցուցաբերում նաեւ հաւաքած այդ հարստութիւնները ապահով էջմիածին հասցնելու մասին: Աստուծոյ հաստատելու բազմաթիւ օրինակներ կան: Մակայն բաւարարուեց միայն սոյն Ուղեգրութեան եւ նրա հեղինակի հետ անմիջական առնչութիւն ունեցող երկու բնորոշ փաստերի մատնանշումով: Այսպէս, Վրթանէս վարդապետ Աշտարակեցու նամակներից իմանում ենք, որ Բաղդադի անգլիական դեսպանը 1810 թուականին նոյնիսկ զբաղուել է Յակոբ արքեպիսկոպոսի աճիւնի տեղափոխման հարցով: Այդ առթիւ էջմիածին ուղարկած իր նամակում Վրթանէսը գրել է. «Անգղիացոց ազգին դեսպանն ի մէջ այլ բազմապատիկ բարերարութեանց ... նա առ ազինս մեր արարելոց զգերագանցն արար յայտոսիկ աւուրս. հրամանաւ քաղաքիս (Բաղդադի) բղեշխին, զկնի չորից ամսոց զպարկէշտակենցադ մարմինն (Յակոբայ արքեպիսկոպոսի), գոր վասն խառնակութեանց ժամանակին այնորիկ, զայն մարմինն բարեյիշատակ սրբազանի խնոյ ի հասարակ գերեզմանս արտաքոյ քաղաքին քաղեալ էար, հռչակաւոր պատուով ի քաղաք բերեալ՝ փառաւորապէս յեկեղեցին քաղելով...»¹: Այնուհետեւ Վրթանէսը խնդրել է «օրհնութեան եւ երախտագիտութեան ուկեգօծ եւ գեղեցկագիր նամակ» ուղարկել դեսպանի սնունով²: Երկրորդ՝ ինչպէս երեւում է ներկայ Ուղեգրութեան Առաջաբանից, նոյն դեսպանը խնամքով նախապատրաստել, անգլիական դրօշի ներքոյ, Մերովրէ Կարնեցի եւ Վրթանէս Աշտարակցի վարդապետների ուղեկցութեամբ էջմիածին է ուղարկել Յակոբ նուիրակի կուտակած մեծ հարստութիւնները: Մրանք ո՛չ պատահական էին եւ ո՛չ էլ հայերի նկատմամբ անգլիացիների ունեցած «բարեացակամ» վերաբերմունքի արդիւնք, այլ ժեստ՝ սիրաշահելու համար հայ ազգեցիկ շրջաններին, իրենց իսկ անգլիացիների հետոն զնացող գլխատր նպատակի իրականացման ճանապարհին: Դա, յամենայն դէպս, բխում էր Անգլիայի Արեւելեան քաղաքակաւութիւնից, որի իրականացման համար, անտարակոյս, որոշ յոյսեր էին կապուած նաեւ Մերովրէ Կարնեցու առաքելութեան հետ:

Մերովրէ Կարնեցին մի քիչ այլ կերպ է բացատրում էջմիածին զնայու իր նպատակները: Այսպէս, Հնդկաստանում բնակուող մի հայ բանասերի՝ Յարութիւն Մահակեան Նոր Ջուղայեցի Աղանուրեանցին յղած նամակում նա հաղորդում է, որ ինքը պատրաստուած է էջմիածին գնալ. «ուր գուցէ ի հոգետր տեսնեն ընկալայց զուպարան... հանգուցեալ Յովսէփ կաթողիկոսին, որ ի Ռուսաստան», որպէսզի էջմիածնում կազմակերպի տպագրական գործը: Այնուհետեւ նա գրում է. «Ըսպասեա ուրեմն եթէ հաճիս, զի կատարել այսորիկ կարի հնարաւոր խորհրդոյս զոնէ մատեանք քո վայելչական տպագրութեամբ ի լոյս ընծայեսցին»³:

Էջմիածին հասնելուց մէկ տարի յետոյ՝ 1813 թուականի յունիսի 22ին իր այս մտադրութեան մասին Թիֆլիսից նա գրել է նաեւ Մոսկուա՝ Յովակիմ Լազարեանին: Այդ նամակում կարդում ենք. «Այն ունիւմ, եթէ վեհագնութիւնդ յաստուածարեալ գրուածոց գերեթջանիկ սրբազան հոգետր Տեառն մերոյ ունիք բաւական տեղեկութիւն զանձինս հանգամանաց ի վաղուց յետ ստացեալ, ուրեմն յայսորիկ կրկնութենէ լաւ եւս է ինձ ի բաց հրաժարիլ. զայս միայն այժմ ձերումդ վեհագնութեան ծանուցեալ, եթէ երկու ամսօք յառաջ ի սրբազնակատար վեհապետէ մերմէ առաքեցայ աստ. եւ ունիւմ ամանակ ինչ բնակիլ ի Թիֆլիզ. մինչեւ Աստուած այց

¹ Կաթողիկոսական դիւան, քրթ. 22, վա. 18:

² Նոյն տեղում, քրթապ. 19, վա. 8:

³ Նոյն տեղում:

արասցէ տառապեալ Մայր Աթոռոյ մերոյ, որոյ վիճակն այժմեան, ըստ որոյ քաջ գիտակ էք, է կարի ողբալիք: Համանգայն ի հարկէ վերահաստ լեալ էք փոքր ի շատէ, քէ քանի ըղձակերտ եմ ըստ իմումս կարեաց ի ձեռս բերել զտպարան իմն կանգնեալ ընդ հովանաւորութեամբ հօր եւ բարեփափաք իշխանի ուրուք. ուրանօր կարօղ լիցիւմ ամենեւին հանդարտութեամբ փութաջան վաստակօք ի լոյս ընծայել ի մէջ օրինեալ ազգի մերում գեղեցկիմաստ եւ ուսումնասիրական գրեանս. զմեծագոյն մասն քարզմանեալս ի գաղիացոց, յանգղիացոց, յիտալացոց եւ ի լատինաց գիտնական լեզուացն (գորոց գրաւական տեղեկութիւնն պարզեալ է ինձ աստուած), որով մարթասցի ազգս մեր ի խորին քուն տգիտութեան տակալին ննջեալ բանալ զաչս մտաց, եւ ճանաչել զիսկական զիւր եղելութիւնն եւ զանպղտոր այսորիկ կենաց երջանկութիւնն բանական կարողութեամբ ամենեւին ծառայել աստուծոյ եւ կենցաղավարեալ յայսմ աշխարհի»⁴:

Այս հարցերը որքան հետաքրքիր են, նոյնքան էլ կարօտ են համակողմանի ուսումնասիրութեան: Այստեղ ասենք միայն, որ Մերովրէ Կարնեցին շուտով տեղափոխուած է Մոսկուա եւ նշանակուած Լազարեան ճեմարանի առաջին ռեկտոր: Ի դէպ՝ Լազարեան ճեմարանի գոյութեան առաջին 50 տարիներին պաշտօնավարած տեսուչների եւ ռեկտորների քում Մերովրէ Կարնեցին ճանաչուել է ու զնահատուել որպէս «ակամատր ռեկտոր»⁵:

Այդ մասին վկայում են նաեւ Յովհաննէս եւ Խաչատուր Լազարեան եղբայրները: 1827 թուականի յունիսի 18ին նրանք Պետերբուրգից Թիֆլիս՝ Ներսէս Աշտարակեցուն յղած նամակում գրել են. «Գրաբերս այս բարձր արժանապատիւ Մերովրէ վարդապետ սիրեցեալս մեր՝ զուով հրաւիրեալ ի հանգուցեալ ծնողէ մեր յառաջս յուսուցանել զմանկունս ուսումնարանի մեր ի Մոսկով՝ ամենայն ջերմեռանդութեամբ եւ զարգացմամբ հանապազորդեալ զայն պաշտօն իւր զամս եօթն...»⁶: Ահա հէնց այստեղ էլ՝ Լազարեան ճեմարանում, ուսումնական պրակտիկ աշխատանքների հետ միաժամանակ նա զբաղուել է նաեւ գիտական գործունէութեամբ:

Առ այսօր հայագիտական աղբիւրներում Մերովրէ Կարնեցին յիշատակուել է միայն իբրեւ հայկական դպրոցների համար կազմած ու 1819 թուականին Մոսկուայում լոյս տեսած «Ծաղիկ գիտութեանց» խրատով ստուարածաւալ աշխատութեան հեղինակ⁷: Մակայն այս տեղեկութիւնները խիստ քերի են ու պակասատր: Ինչպէս վերը ակներեւ դարձաւ, Մերովրէ Կարնեցու գրչին է պատկանում նաեւ ներկայ Ուղեգրութիւնը:

Աելի՛ն. պարզում է միաժամանակ, որ Մերովրէ Կարնեցին հրատարակութեան համար պատրաստած է եղել նաեւ «Մահմեդի պատմութիւնը» վերնագրով ընդարձակ մի ուսումնասիրութիւն՝ շարադրուած պատմական փաստերի հիման վրայ, հեղինակի իսկ վկայութեամբ՝ «գոր աւանդին ամենայն գրիչք մեր եւ նօտարք»⁸: Նկատենք, որ այս ուսումնասիրութեան առաջին մի քանի տետրակները ոչ միայն տպարանում շարուած են եղել, այլեւ տպագրուած մամուլները պատրաստ

¹ Նոյն տեղում, Լազարեանների արխիւ, քրթա. 104, գ. 8, վա. 148:

² А. Зинovieв, Историческ. очерк Лазаревскаго института восточных языков, 1863, Москва, էջ 103:

³ Մատենադարանի արխիւային բաժին, Լազարեանների արխիւ, քրթա. 104, գ. 5, վա. 243:

⁴ Գ. Չարպիանայեան, Հայկական մատենագիտութիւն, 1883, Վենետիկ, 283, Ա. Լազիկեան, Հայկական մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի..., Վենետիկ, 1909-12, էջ 1204, եւ ուրիշներ:

⁵ Մատենադարանի արխիւային բաժին, Ա. Երիցեանի արխիւ, քրթ. 158, վա. 160:

են եղել կազմելու համար: Հեղինակը Էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսին է ուղարկել իր գրքի տպագրումը առելի քան 160 էջերը, որպեսզի վերջինս տայ իր համաձայնությունը այն լոյս աշխարհի հանելու համար: Սակայն այդ գրքի լոյսընծայումը արգելում է հենց Էջմիածինը:

1820 թուականի Յոնուարին Եփրեմ կաթողիկոսը Մոսկուա, Մերովրէ Կարնեցուն ուղարկած իր պատասխան մամակում գրել է. «զի որպիսայայտ գիրքս ընդ ծաղկավունջ զիտելեաց բազմաց ի մասնաւորի, զորս փնջեալ էր քո աշխատասիրութեամբ ի միում գրքական եւ ի տիպ իսկ արձանացեալ. թէն թերապէս տակաւին հաս ի ձեռս մեր, առ որ թախանձեալ սրտիւ հոտոտեցաք ըստ ազգս ազգս իւրաքանչիւր որ ծաղկանց ընթերցանութեամբ եւ գտաք ի նոսա ինչ ինչ մեր եւ սինօթ տուրք մեծի աթոռոյս որոց վասն ի ճահ երեւի ասել ինչ, որով մնալ համարինք անբասնա եւ անվրդով ազգովին»: Սրան հետեւում են «Պատմութիւն Մահմեդի» աշխատութեան վերաբերեալ Եփրեմի հինգ դիտողութիւնները: Այնուհետեւ Եփրեմը յանդիմանում է Մերովրէ Կարնեցուն, որ առանց նախօրօք համաձայնեցնելու տպագրութեան է յանձնել այս գործը, ուստի եւ ինքը արգելում է դրա լոյսընծայումը: Վերջացնելով իր թուղթը, Եփրեմ կաթողիկոսը նաեւ մխիթարում է հեղինակին. «Իսկ յաղագս յամեցման պատասխանուոյս մի՛ լիցի քեզ ամբողջի կամ դժուարիլ իւրք. այն զի գամագամ հոգօք ներքինք եւ արտաքինք յոք ընկղմեալս կամք բոլորովին, զրէթ բազմաց լինին գործոց եւ պատասանեաց խափանիչք կամ յամեցուցիչք»¹:

Ապարդիւն անցան նաեւ Մերովրէ Կարնեցու՝ այդ ժամանակ Էջմիածնի գործերում վճռական դեր խաղացած Ներսէս Աշտարակեցուն արած խնդրանքները՝ գրքի լոյսընծայմանը օգնելու մասին: Այդպէս էլ այդ գիրքը լոյս աշխարհի չեկաւ: Ի՞նչ եղան այդ ուսումնասիրութեան տպագրումը տետրակները, ինչպէս եւ հեղինակի ձեռագիրը, առ այսօր մնում են անյայտ²:

Եփրեմ կաթողիկոսի Մոսկուա, Յովակիմ Լազարեանին յղած 1817 թուականի մարտի 5ի նամակից իմանում ենք նաեւ այն մասին, որ Ռուսաստանի ցարական կառավարութեան դաւանանքների եւ լուսաւորութեան միմիտոր կենազ Ալեքսանդր Նիկոլաւիչ Գուլիցինը՝ «առաջարկեալ է յիշեալ Մերօրէ վարդապետին թարգմանել զնոր կտակարանն հայոց ի տաճկական բարբառ առ ի դիւրիմաց լինելոյ այնց հայոց, որք մոռացեալ զհայրենի լեզու իւրեանց, վարին տաճկական լեզուաւ»³:

Բացի այդ, այժմ պարզում է նոյնպէս, որ Մերովրէ Կարնեցին, երբ իրագել է դառնում Հնդկաստանում Դուկասի Աւետարանը չափածոյի վերածելու մասին, պատրաստակամութիւն է յայտնում գրելու դրա Առաջարանը: Այդ գործի հեղինակ, Հնդկաստանի Բոմբէյ քաղաքում բնակուող հայ բանասէր Յարութիւն Մահակեան - Աղանուրեանցին 1811 թուականին Բաղդադից գրած նամակում կարդում ենք. «Եթէ հաստատեալ ես տպագրութեամբ ի լոյս ընծայել զԴուկասու չափաբերական Աւետարանը յայտնեա ինձ պարզապէս զնիւթ առաջաբանութեան գործոյդ, քանզի ցանկամ նուաստս ի սէր պատուական անձիդ հիւսել զհամառօտ յառաջաբա-

նութիւն համամիտ մտոյդ եւ զուցէ արժա-նատր մատեանիդ»⁴: Իրականացրե՞լ է արդեօք իր այս մտայղացումները Մերովրէ Կարնեցին,- առայժմ դժուար է ասել: Սակայն անկախ դրանից, նշում փաստերը վկայում են նրա մտաւոր կարողութիւնների մասին: Ուստի պատահական չի կարելի համարել, որ ժամանակի հայ աշխարհիկ ու հոգեւոր ականաւոր գործիչները, օտար պետութիւնների բարձրաստիճան պաշտօնեաները իրենց գրագրութիւններում մեծ ակնածանքով են խօսում Մերովրէ Կարնեցու մասին, բնուագրելով նրան՝ «ծաղկածին գրասէր», «զիտնական», «պերճիմաստ բարունի» եւ այլ մակդիրներով⁵. Իսկ Հայաստան այցելած օտար ճանապարհորդները իրենց ուղեգրութիւններում նրա մասին գրել են. «այդ զիտ-նական՝ որ ուսմամբ իւրով գերազանցէր քան զայլ ամենայն կարդակիցս իւր»⁶:

Ուղեգրութիւնն ընթերցողին անշուշտ կը հետաքրքրի այն հարցը, թէ ինչո՞ւ նրա հեղինակը՝ Մերովրէ Կարնեցին, որ քաջ զիտակ է եղել մայրենի լեզուին, իր գործը գրել է օտար լեզուով՝ ֆրանսերէն: Այդ հարցի պատասխանը տուել է ինքը՝ հեղինակը Ուղագրութեան Առաջաբանում. Մերովրէ Կարնեցին Հայաստան էր գալիս անգլիական անձնագրով, որպէս Հնդկական առետրական ընկերութեան յանձնակատար: Աւելին. նա ճանապարհ է դուրս գալիս Բաղդադից դէպի Էջմիածին «Մօզորօք» կեղծանունով⁷: Ուստի բնական է, որ ճանապարհորդութեան ընթացքում օրը օրին գրի առնուած դէպքերը չէր կարելի գրել հայերէն, որը կը մատնէր հեղինակի ազգային պատկանելութիւնը:

Երկրորդ հարցը, որ էական նշանակութիւն ունի, Ուղեգրութեան նպատակադրումն է, եւ, որ կարեւորն է, դրա իրականացումը: Հեղինակը իր գործի Առաջաբանում նշում է, որ «Աշխարհի տարբեր մասերում կատարուած ուղեւորութիւնների նկարագրութիւնները միշտ էլ նպաստել են հարստացնելու պատմութիւնն ու աշխարհագրութիւնը նորանոր տեղեկութիւններով: Հենց այս մտասերումամբ էլ հեղինակը գրում է իր Ուղեգրութիւնը:

Որպէս ականատեսի գրչի արդիւնք, Ուղեգրութիւնը, անտարակոյս, ունի անվիճելի առաւելութիւններ: 55 օր տեւող ճանապարհորդութեան ընթացքում Ուղեգրութեան հեղինակը անցել է Իրաքի, Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող քաղաքների ու գիւղերի միջով: Նշենք, սակայն, որ հեղինակը չի բաւարարուել իր տեսած ու լսած փաստերի միայն արձանագրումով, այլեւ հաղորդում է պատմական, ազգագրական եւ աշխարհագրական շատ տեղեկութիւններ իր անցած ճանապարհին՝ հանդիպած ցեղերի ու ժողովուրդների կենցաղի եւ սովորոյթների, մասնաւորապէս այդ վայրերում ապրող հայկական բնակավայրերի, դրանց բնակչութեան թոյլ, զբաղմունքի, հարեւան ժողովուրդների հետ ունեցած յարաբերութիւնների, ինչպէս եւ տիրող քաղաքական իրադրութեան, սոցիալա-

¹ Նոյն տեղում, Կաթողիկոսական դիւան, թղթ. 36, վա. 23:

² Ծանօթ լինելով այս փաստին, Մերովրէ Կարնեցու «Պատմութիւն Մահմեդի» գրած ուսումնասիրութիւնից շուրջ մէկ հարիւրամեակ յետոյ, բանասէր Բ. Կիլեսերեանը 1925-1926 թուականներին «Հանդէս անօրեայ»ում (Թ. 5-6, էջ 256) երատարակուած «Իսլամը հայ մատենագրութեան մէջ» յօդուածաշարում իր արածը զննատել է որպէս «Նորութիւն մը հայ մատենագրութեան բոլորովին անկախ մի մարզին վրայ...»:

³ Մատենադարան, Լազարեանների արխիւ, թղթ. 1103, գործ 9, վա. 10:

⁴ Նոյն տեղում, ֆ. Կաթողիկոսական դիւան, թղթ. 19, վա. 8: Մատենացոյց արուող չափածոյի վերածուած Դուկասի Աւետարանը ձեռագիր վիճակում պահում է Մաշտոցի անուան Մատենադարանում, համար 169-ի տակ:

⁵ Կաթողիկոսական դիւան, թղթ. 36, վա. 23, Լազարեանների արխիւ, թղթ. 104, գործ 8, վա. 118, Խոնդ Երիցեանի արխիւ, թղթ. 159, վա. 62 եւ այլն:

⁶ Իրաւատուր Արովեան, Երկերի լիակատար ժողովածու, 1956, Երեւան, 7, էջ 308:

⁷ Կաթողիկոսական դիւան, թղթ. 23, վա. 59:

կան երեւոյթներն էլ այլն մասին: Նկատենք, որ Իրաքից՝ Պարսկաստանի եւ Թուրքիայի տարածքներով նրա անցած ու նկարագրած ճանապարհը մինչ այդ դեռ քիչ էր տրորուած եւրոպացի ճանապարհորդների կողմից:

Սերովրէ Կարնեցու նորայայտ այս Ուղեգրութիւնը իր բովանդակութեամբ հարուստ տեղեկութիւններ պարփակելով Մերձատր Արեւելքի վերաբերեալ, անշուշտ որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում, նաեւ կարեւոր սկզբնաղբիւր է ինչպէս հայագետների, այնպէս եւ արեւելագետների համար:

«Բանբեր Մատենադարանի»,
1967, Թ. 8:

ԴԱԻԹ ԲԷԿԻ «ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» «ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ» ՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ¹

Վերջին տասնամեակներում մեր հարուստ պատմագրութեան առանձին մատենագրական Յուշարձանների գիտա-քննական լոյսընծայումը արժեքատուր ներդրում է ինչպէս հայագիտութեան, այնպէս եւ կովկասագիտութեան զարգացման խնդրում: Այդ ուղղութեամբ ծառայուող աշխատաքները անհրաժեշտ է ամէն կերպ խրախուսել ու առաջ մղել՝ ապահովելով նաեւ դրանց ռուսերէն հրատարակութիւնները, ելնելով Կովկասի եղբայրական ժողովուրդների եւ Արեւելքի պատմութեան լուսաբանման համար իբրեւ սկզբնաղբիւրների նրանց ունեցած կարեւոր նշանակութիւնից:

Ոչ պակաս կարեւորութիւն ունեն նաեւ *հայ ազատագրական պայքարի պատմութեանը վերաբերող մատենագրական Յուշարձանների գիտա-քննական հրատարակումները*, որոնք բացայայտում են պատմական տարրեր պարբերաշրջաններում հայ ժողովրդի ընդվզման ու հերոսական ոգորումների դրուագները: Այդ բնոյթի մատենագրական մեծարժէք յուշարձան է նաեւ Ստեփանոս Շահումեանի անուամբ հայագիտութեանը յայտնի «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգի եւ պատերազմաց Հայոցն Խափանու...» բնագիրը, որի գիտա-քննական հրատարակումը վաղուց անհրաժեշտութիւն է դարձել: Տողերիս հեղինակները դեռեւս 1969 թ. ձեռնամուխ էին եղել առանձին գրքով, ի յանդիմանումն Դաւիթ Բէգի կողմից գլխաւորում Բախրիի ազատագրական շարժման 250ամեակի, այդ սկզբնաղ-

¹ Այս Յօդուած-Ուսումնասիրութիւնը բացառապէս բնագրագիտական-աղբիւրագիտական եւ բանասիրական բնոյթ ունենալով՝ ամբողջութեամբ մեր գրչին է պատկանում, քայց համաստորագրութեամբ լոյս տեսաւ դարձեալ Մատենադարանի գիտաշխատող Հ. Ն.Խաչատրեանի, որը աշխատակցային իր մասնակցութիւնն էր բերելու յետագայում «Դաւիթ Բէկ» մատենագրական Յուշարձանի լոյսընծայման ընդհանուր մեր ծրագրում տրամադրելով իր կողմից փաստաթղթեր, քարտեզներ եւ նկարներ, որ այնպէս էլ չիբականացուեց, տարարախտարար, Հայաստանում...:

բիւրի գիտա-քննական բնագրի կազմման աշխատանքներին: Մակայն պրոֆ. Ա. Գ. Աբրահամեանը հապճեպութեամբ «Բանբեր Հայաստանի արխիւների» (1972 թ.) Թ. 3ում հրատարակել է «Ընտիր պատմութեան» «նախագաղափար»: Այդ փութկոտութիւնը պրոֆ. Ա. Աբրահամեանին յանգեցրել է բնագրագիտական ու ձեռագրագիտական մի շարք կոպիտ սխալների:

Որքան էլ տարօրինակ է աղբիւրագետի համար, սակայն փաստ է, որ պրոֆ. Ա. Աբրահամեանը, չնայած իր հաւաստիացումներին, անձամբ նեղութիւն չի կրել «Ընտիր պատմութեան» «նախագաղափար»ը հրատարակելիս նրա բոլոր խմբագրութիւնները ուսումնասիրելու: Նա բաւարարուել է Ե. Փեչիկեանի՝ դեռեւս 35 տարի առաջ լոյս տեսած «Դաւիթ Բէկի պատմագրական աղբիւրները եւ Մխիթարեանք» յօդուածի («Բազմավէպ», 1938, Թ. 8-9, էջ 172-187) փաստական ու բանասիրական տեսակետից առարկելի ու հակասական հետեւութիւնների որդեգրումով, միաժամանակ անելացնելով դրանց նաեւ սեփական սխալները: Պրոֆ. Աբրահամեանի համերաշխութիւնը Ե. Փեչիկեանի բնագրագիտական ու ձեռագրագիտական բոլոր հակասական պնդումների հետ, իբրեւ կանոն, զարմանալիօրէն բացարձակ է:

Այսպէս, միեւնոյն էջում՝ մոռանալով, որ Փեչիկեանից վերջրած տեղեկութեան համաձայն (սակայն առանց նրան վկայակոչելու) գրել է՝ «Ընտիր պատմութեան» երկու ձեռագիր օրինակ *այժմ* գտնուում է ս. Ղազարի մատենադարանում¹, ընդամենը մի նախադասութիւն յետոյ պրոֆ. Աբրահամեանը շարունակում է. «Ընտիր պատմութիւնն» այժմ յայտնի է հետեւեալ վեց ձեռագիր ընդօրինակութիւններով. - 1. *Վենետիկի Մխիթարեանների մատենադարանի Ա. Գ.- 620 ձեռագիրը՝ բաղկացած 61 էջից: Այս ձեռագիրը եղած ընդօրինակութիւններից հնագոյնն է. նրանից են միջանկեալ որոշ օղակներով ծագում միւսները*²:

Այստեղ թոյլ են տրուած ոչ թէ պատահական վրիպումներ, այլ՝ երակտային սխալներ: Նախ՝ «Ա. Գ. 620» համարի տակ ոչ թէ մէկ ձեռագիր է գրանցուած Վենետիկի մատենադարանում, այլ, ինչպէս Փեչիկեանն է վկայում, երկու, որոնք բովանդակում են «Ընտիր պատմութիւնը» ծառայային տարրեր ընդգրկումով՝ մէկը 33 էջ, միւսը՝ դրա մօտաւրապէս կրկինը՝ 61 էջ: Երկրորդ՝ «հնագոյն»ը ոչ թէ 61 էջանոց ձեռագիրն է, այլ՝ 33 էջանոցը: Հակասական պնդումներն այս հարցում անելի քան ակնբախ են պրոֆ. Աբրահամեանի երկու յօդուածներում: Այսպէս, «Բանբեր Հայաստանի արխիւների» հանդէսում հրատարակած յօդուածում նա երեք անգամ յայտարարում է, որ «Ընտիր պատմութեան» «Վենետիկի հնագոյն» օրինակը ... ընդարձակ ձեռագիրն է... (մի անգամ՝ էջ 85ում, 2 անգամ՝ էջ 87ում), իսկ «Պատմա-բանասիրական հանդէս»ում արդէն իբրեւ «նախնական բնագիր» վկայակոչում է իր հրատարակած «նախագաղափար»ը՝ մոռանալով, սակայն, թէ ինչ է գրել «Բանբեր Հայաստանի արխիւների» հանդէսում: Այս անգամ էլ նա պնդում է. «Փեչիկեանը նշում Եւրոպայում յօդուածում հրատարակել է սենսացիոն մի տեղեկութիւն, որ «Ընտիր պատմութեան» յայտնի եւ հայագիտութեան մէջ քաղաքացիութիւն ստացած բնագիրը ոչ թէ Ղուկաս Մերաստացու նախնական գրուածքն է (իմա՝ Գուլամիբեանի հրատարակութեան հիմքում ընկած ձեռագրի այսպէս կոչուած «61 էջանոց» ընդարձակ տարբերակը - Լ.Խ., Հ.Խ.), այլ նրա յետագայի խմբագրուած օրինակը: Նա յայտնել է նաեւ, որ Մերաստացու *նախնական բնագիրը հասել է մեզ եւ այժմ պահուում է Վենետիկի Մխիթարեանների մատենա-*

¹ «Բանբեր Հայաստանի արխիւների», 1972, Թ. 3, էջ 85: Այս եւ յետագայ բոլոր շեղագրումները մերն են:

² Նոյն տեղում:

դարանում A - 620 բուհամարի տակ»¹: Իսկ նոյն «Պատմա-բանասիրական»-ի էջերում ընդարձակ տարբերակի մասին, նահանջելով «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեպում արած իր պնդումներից եւ կասկածի տակ առնելով նրա «հնագոյն լինելը, ասում է՝ դա «հնագոյն օրինակներից է...»²:

Երրորդ սխալն այն է, որ եթէ պրոֆ. Արրահամեանը անձամբ բնագրագիտական ու ձեռագրագիտական վերլուծութեան ենթարկած լինէր յիշեալ աղբիւրի բոլոր ընդօրինակութիւնները, ապա աներկբայօրէն կը համոզուէր, ձեռագրական միւս բոլոր արտագրութիւնները չեն ծագել սրանցից եւ ոչ մէկից: Աւելին. սրանցից եւ ոչ մէկը ոչ մի ընդօրինակութիւն էլ չի ունեցել...:

Ի դէպ, պրոֆ. Արրահամեանին ամենեւին չի հետաքրքրում, թէ բնագրական զարգացման ինչպիսի ուղի է անցել «Ընտիր պատմութեան» տարբեր խմբագրութիւնները, ապա երբէք Ղուկաս Սեբաստացու անմշակ՝ սեւագիր նօթագրութիւնը տպագրութեան չէր յանձնի որպէս «սենսացիոն», «պատմագիտական մեծ արժէք» ներկայացնող բնագիր...:

Այսպէս, Ե. Փեչիկեանի հաղորդումն այն մասին, որ Վենետիկի Մխիթարեանների մատենադարանում առկայ է Ղուկաս Սեբաստացու թերատ, անմշակ եւ նոթագրային առաջին գրառումը, պրոֆ. Արրահամեանը ներկայացնում է որպէս «սենսացիա»: Օրինակ՝ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդէպում նա գրում է. «Փեչիկեանը առեւալ յօդուածում հաղորդել է սենսացիոն մի տեղեկութիւն այն մասին, որ Մխիթարեանների մատենադարանում պահպանուել է Մխիթար (???) Սեբաստացու նախագաղափար այն բնագիրը, որ ...» (էջ 88): Անցողակի նկատենք, որ այստեղ պրոֆ. Արրահամեանը անփայտօրէն նոյնացրել է Ղուկաս Սեբաստացուն՝ Մխիթար Սեբաստացու հետ...: Այնուհետեւ՝ «Պատմա-բանասիրական հանդէս»ում կարդում ենք. «Փեչիկեանը նշում յօդուածում հրապարակել է սենսացիոն մի տեղեկութիւն, որ «Ընտիր պատմութեան» յայտնի եւ հայագիտութեան մէջ քաղաքացիութիւն ստացած բնագիրը ոչ թէ Ղուկաս Սեբաստացու նախնական գրուածքն է, այլ...» (էջ 161): Բայց չէ՛ որ Ղուկաս Սեբաստացու «նախագաղափար» կոչուած տարբերակը թերատ, անմշակ եւ փաստական տուեալներով աղքատիկ բնագրային թերամշակ նիւթ է, որի մասին արուած հաղորդումը «սենսացիա» համարելը պարզապէս անգիտութեան հետեւանք է: Այս յայտարարութիւնը, ըստ երեւոյթին, պէտք է եկել պրոֆ. Արրահամեանին «նախագաղափարի» հրատարակութեան կարեւորութիւնը «հիմնաւորելու» համար:

Սակայն ոչ այլ որ, քան այդ հաղորդման հեղինակ Ե. Փեչիկեանը իրաւամբ հաւատում է, որ Ընդարձակ տարբերակը, ի տարբերութիւն Համառօտի (իմա՝ «նախագաղափարի»), վերջինիս կրկինն է իր ծաւալով, ընդ որում՝ «այս առաւելութեամբ որ, բացի դէպքերու մանրամասնութենէն, ունի վերջաբան մը՝ ուր կը ձաղկէ անմիաբանութիւնը՝ պատճառ քայքայման եւ կործանման, ինչ որ կը պակսի նախորդ (իմա՝ «նախագաղափարի») ձեռագրին մէջ՝ այն է հ. Ղուկասի գրածէն. եւ յետոյ կուտայ Դաւիթ Բէկի գորավարներուն եւ անոնց բանակներուն եւ բանակատ(ե)ղներուն անունը, հուսկ յետոյ Տէր Աւետիս քահանայ օրավարին վրայ ներքող մը՝ նման կիլիկեան երգիչներու ողբերգ-գովեստին ի պատիւ ասպետ Լիպարիտի»³: Բացի այս ճիշդ գնահատականից, որ փաստական բոլոր տուեալներով

ապացուցում է նաեւ խմբագրութիւնների մանրախոյզ ուսումնասիրմամբ, «նախագաղափար»-ի մեր ձեռքի տակ գտնուած մանրալուսանկար ժապաւէնում, բնագրի վերջում, գիտակ այլ անձնատրութեան կողմից ձեռագրով աւելացում է մի ծանօթագրութիւն, որը լիովին համապատասխանում է բնագրի բուն իսկ իրավիճակին: Այնտեղ կարդում ենք. «Մտեփանոս Շահումեան պատմած է ս. Ղազարու մէջ Դաւիթ Բէկի պատերազմներու պատմութիւնը եւ հ. Ղուկաս Սեբաստացին նորագրած է եւ ապա աւելի ընդարձակ եւ գրական ոճով շարադրած է. այս հատորը նորագրութիւնն է:

Այս բոլորից յետոյ, չնայած պրոֆ. Արրահամեանի հարկադրաբար խոստովանութեանը «նախագաղափար» բնագրի նաեւ «պակասութիւնների» մասին, ինչպէ՛ս կարելի է իբրեւ լուրջ հաւատում ընդունել նրա հետեւեալ յայտարարութիւնը. «Իր պակասութիւններով հանդերձ, Ղուկաս Սեբաստացու նախագաղափար «Պատմութիւն Ղափանցոց» բնագիրն ունի պատմագիտական մեծ արժէք (sic!), ուստի այն հրատարակում ենք՝ դնելով գիտական շրջանառութեան մէջ»⁴:

Պրոֆ. Արրահամեանը, խորհրդաւոր հանդիսաւորութեամբ շեշտելու համար անհարկօրէն հրապարակ հանուող «նախագաղափարի» հայագէտների կողմից «անուշաղորութեան» մատնուած լինելու «պատճառ»ը, վկայակոչում է, դարձեալ յենտեղով Փեչիկեանի վրայ՝ այն «փաստ»ը, որ, իբր, Չամչեանին եւ Ալիշանին յայտնի չի եղել այն: Նա գրում է. «Նախագաղափար այդ աշխատութիւնը, ինչպէս ցոյց է տուել Փեչիկեանը, վրիպել է ինչպէս Մ. Չամչեանի, այնպէս էլ Ալիշանի ուշաղորութիւնից եւ չի հրատարակուած»²: Սակայն այս առնչութեամբ ասենք, որ Ե. Փեչիկեանը ճիշդ չէ իր այդ ենթադրութեան մէջ, երբ գրում է. «Հ. Ալիշան որքան որ Դաւիթ Բէկի պատմութեան հեղինակ հ. Ղուկասը կը համարի, սակայն իրականին մէջ ինք անձամբ կը թուի հ. Ղուկասի ձեռագրին, որովհետեւ եթէ տեսած ըլլար մակագիրը հ. Ղուկասի անունով՝ ինքը նորութիւն պիտի չյայտարարէր»³: Մինչդեռ, իրականում, դա այդպէս չէ. Ալիշանը «Լիշկ» կամ «Լեշկ» գետակի անունը ճշգրտելիս համեմատութիւն է անցկացնում ինչպէս Ա. Գուլամիրեանի հրատարակած, այնպէս եւ Վենետիկում պահուող նախագաղափար ձեռագրի հետ՝ ծանօթագրելով. «Ի տպագրեալ պատմութեան (իմա՝ Գուլամիրեանի - Լ.Ս.) պակաս է անուն գետակին, այլ գտանի ի բնագրին, որ կայ ի մերում գրատան»⁴: Ինչպէս նման պարագաներում ասում են՝ մեկնաբանութիւններն աւելորդ են: Ինչ վերաբերում է Չամչեանին, ապա նա այն հմուտ պատմաբանն է, որը հասկացել է, թէ լուսագոյն եւ ամբողջական բնագիրը ոչ թէ «նախագաղափարն» է, այլ՝ Ընդարձակը, այդ պատճառով էլ Մինիքի ազատագրական շարժումները շարադրել է ըստ վերջինիս՝ որպէս առաւել հաւաստի աղբիւրի: Իսկ եթէ հայագէտներից ոչ որ չի էլ մտածել «նախագաղափարը» հրատարակելու մասին, ապա այդ այն պատճառով, որ ամբողջականի եւ առաւել հաւաստի խմբագրութեան առկայութեան դէպքում այն գիտական արժէք չի ներկայացրել:

Ե. Փեչիկեանի պնդմամբ՝ «Ընտիր պատմութեան» բնագիրը զարգացման երկու փուլ է ունեցել, ըստ որում, առաջինը «նախագաղափարն» է, երկրորդը՝ Ընդարձակը,

¹ Տե՛ս վենետիկեան Ա ձեռագրի մեքենագրուած տարբերակի մանրալուսանկար ժապաւէնը, էջ 30: Այս եւ վենետիկեան Բ ձեռագրի մանրալուսանկար ժապաւէնը սիրալիք տրամադրել է մեզ լրագրող Ս. Օրբելեանը, որին եւ մեր խորին շնորհակալութիւն ենք յայտնում:
² «Բանբեր Հայաստանի արխիվների», էջ 91:
³ Նոյն տեղում, էջ 88:
⁴ «Բազմավէպ», էջ 175-176:

¹ «Պատմա-բանասիրական հանդէս», 1972, Թ. 3, էջ 161:
² Նոյն տեղում, էջ 160:
³ «Բազմավէպ», 1938, քիւ 6-9, էջ 175:

որը, իբր, ոչ թե միեւնոյն Ղուկաս Սեբաստացու գրչին է պատկանում, այլ Մսիսթարեան հայրերի հաւաքական ջանքերի արդիւնք է, եւ ընկած է Գուլամիթեանի հրատարակութեան հիմքում: Որպէսզի բնագրական համեմատութիւններն ու զուգադրումները հնարատր լինեն, այսուհետեւ պայմանականօրէն «նախագաղափարը» ներկայացնելու ենք իբրեւ A տարբերակ, Ընդարձակը՝ իբրեւ B տարբերակ, իսկ Գուլամիթեանի հրատարակութիւնը՝ իբրեւ C տարբերակ:

Այսպէս, ուրեմն, Փեչիկեանը A եւ B տարբերակների կապակցութեամբ իր բանասիրական քննութիւնից եզրակացնում է, որ «Մսիսթարեան հայրերու գրի առած պատմութիւններն են»¹ ամփոփուած B տարբերակում, ընդ որում իր բնագրագիտական բոլոր զուգադրումներն էլ կատարելիս Փեչիկեանը B տարբերակը ներկայացնում է որպէս «Մսիսթ. Հարց» աշխատութիւն²: Բայց նման պնդումը, պէտք է ասել, մոլորութիւն է: Իրականում՝ սոյն սկզբնաղբիւրի պատմա-լեզուական մշակումները անցել են զարգացման ոչ թե երկու, այլ երեք փուլ, ընդսմին՝ առաջին երկուսը հենց Դաւիթ Բէկի գլխատրած ազատագրական շարժումների պատմութիւնը գրառող Ղուկաս Սեբաստացու ստեղծած տեքստերն են՝ Համառօտ եւ Ընդարձակ տարբերակներով. իսկ միայն երրորդը՝ Գուլամիթեանի հրատարակութեան հիմքում ընկած ձեռագիրը (որը տարբեր է B տարբերակից) եւ միւս բոլոր ընդօրինակութիւնները Վենետիկի մսիսթարեան գիտնականների խմբագրմամբ կազմուածն է, որը հեղինակային նոյն ընդարձակ տեքստի սոսկ լեզուա-ոճական վերամշակումն է, աճեցնայն հաւանականութեամբ՝ պայմանաւորուած հրատարակութեան նախապատրաստելու անհրաժեշտութեամբ³: Այն հարցադրման ճշդութիւնը, որ Ղուկաս Սեբաստացին ստեղծել է բնագրային երկու տարբերակներ, մէկը՝ նախնականն ու համառօտը, նոքագրային բնոյթի, միւսը՝ ընդարձակը, վերամշակուածն ու ամբողջականը, որը ծաւալային ու փաստական նոյն ընդգրկումն ունի, ինչ երրորդ տարբերակը, կասկածից վեր է: Դրանում համոզուելու համար բաւական է զուգադրական համեմատութիւններով առնչութիւնների մէջ դնել երեք տարբերակներն էլ, որպէսզի ակներեւ դատնայ այն ստույգ իրողութիւնը, որ լեզուա-ոճական առանձնայատկութիւնների ընդհանրութեան տեսակէտից A տարբերակը առաւել

¹ «Բազմավէպ», էջ 177:

² Նոյն տեղում, էջ 176, 189:

³ Մենք մեր յօդուածը սարսուել էինք, երբ լոյս տեսաւ Ս. Արամեանի գրութիւնը «Բազմավէպ»ում (1972, թ. 2-3)՝ «Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց» վերտառութեամբ: Անկախ մեզանից՝ նա նոյնպէս գտնում է, որ A եւ B տարբերակների գրառողը միայն Ղ. Սեբաստացին է. սակայն C տարբերակի (իմա՝ Գուլամիթեանի հրատարակութեան) վերաբերեալ նրա պնդումն այն մասին, թէ իբր հրատարակուած տեքստը Գուլամիթեանի իսկ «կամայական փոփոխութիւնների» ու խմբագրման արդիւնք են՝ հիմնովին սխալ է: Այն հերքում է հետեւեալ անտարկելի փաստով. բանն այն է, որ դեռեւ Գուլամիթեանի հրատարակութիւնից 112 տարի առաջ (1759 թ.) Ամստերդամում արտագրուած Ռաֆայէլ Յովակիմեանի գրչագիրը (ինչպէս եւ մեզ հասած միւս ձեռագրերը) ունի բնագրային հենց նոյն ամբողջական ընթերցումը, ինչ Գուլամիթեանինը:

մերձ ու հարազատ է B տարբերակին, քան C տարբերակին, ըստ որում վերջինս առանձնանում է առաջին երկուսից էլ հաւասարապէս: Բաւարարուենք միայն մի երկու փաստի առադրմամբ:

A տարբերակը

(կամ՝ Համառօտը)

1. «Եւ զգիտօրէսն Գանչու եւ Շամախու ասպատակեալ յաւար առին, որք եւ զագուլեցին ի մուսարեկեան տոհմէ զիշխանն Շամախու սպանին, եւ զամենայն զօրաւոր դիմակեացսն սատակեցին եւ զժողովորդսն երկրին եւ զկանայս եւ զմանկունս գերի վարեցին: Չորոց մի ըստ միոջէ յայսմիկ վայրի չունիմք պատմել» (էջ 1):

2. «Եւ կամ թէ զիա՞րդ զայսչափ չարիս տեսեալ հայոց ընդդէմ ելին նոցա ի բազ վանել. գունդ կազմեցին, զզէն զզեզան, պատրաստեցան ի պատերազմ. նահատակեցան առ Թարթար գետովն ընդդէմ ամենայն յարձակելոցն յասպատակութեան երկրին իւրեանց» (էջ 1):

B տարբերակը

(կամ՝ Ընդարձակը)

«Եւ զգիտօրէսն Գանչու եւ Շամախու ասպատակեալ աւար առին, եւ զագուլեցին ի մուսարեկեան տոհմէ զիշխանն Շամախու սպանին, եւ ամենայն զօրաւոր դիմակսան սատակեցին. եւ զժողովորդս երկրին եւ զկանայս գերի վարեցին, որոց չունիմք յայս վայրի մի ըստ միոջէ պատմել» (էջ 1):

«Եւ կամաց թէ զիա՞րդ զայսչափ չարիս տեսեալ հայոց բնակչացն Զուրարացոց եւ ուխտացոց ընդդէմ ելին նոցա ի բազ վանել, գունդ կազմեցին, զէն զզեզան. պատրաստեցան ի պատերազմ, ճակատ կազմեցին առ Թարթար գետովն, ընդդէմ ամենայն յարձակելոցն յասպատակութիւն երկրին իւրեանց» (էջ 1):

C տարբերակը, կամ՝ Գուլամիթեանի հրատարակութեանը

«Եւ զգիտօրէսն Գեանչայու, եւ Շամախու ասպատակեալ աւար հարկանէին, եւ զԱգուլեցին Մուսարեզեան տոհմէ զիշխանն Շամախու, ի մահ վատնէին, եւ զամենայն զօրաւոր դիմակացսն առ հասարակ սատակէին, եւ զժողովորդս երկրին զկանայս, եւ զմանկունս ի գերութիւն վարէին զորոց մի ըստ միոջէ յայս վայրի չունիմք պատմել» (էջ 1-2):

«Եւ կամ թէ զիա՞րդ զայսչափ չարիս տեսեալ Հայոց բնակչացն Գուգարացոց, եւ որք շուրջ էին բնակիչք Հայոց, զիմու գարդու յօրինեցան, ի մարտ պատրաստեցան միահամուռ ճակատեալ առ Թարթար գետովն ընդդէմ ամենայն արձակելոցն ի յասպատակութիւն երկրի իւրեանց» (էջ 1-2):

Շեղագրած բառերից, բառակապակցութիւններից ու նախադասութիւններից ակնբախ հետեւում է, որ A եւ B տարբերակները լեզուա-ռճական առանձնա-յատկութիւններով առաւել մերձ են ու հարազատ իրար, քան այդ երկուսը՝ C տարբերակին: Բնագրային համեմատութիւնների այս լոյսի տակ գիտական վաւերական արժէք չի ներկայացնում հայագիտութեան մէջ յայտնուած այն կարծիքը, որ «Մխիթարեան Բ ձեռագիրը... որքան կը խտտորէր իր մանրամասնութեամբ եւ նորանոր պարզաներով Ա ձեռագրէն՝ իր ամբողջութեամբ, սակայն, մէն մի պարբերութեամբ եւ ընդհանրապէս բառաորտ կը գուզընթանար Գուլամիթեանի հետ»¹: Մինչդեռ, իրականում, լեզուա-ռճական առանձնա-յատկութիւններով իրար հետ նոյնական են վեներտիկեան A եւ B ձեռագրերը, ինչպէս հաւաստիօրէն ցոյց են տալիս բնագրային վերոբերեալ ընդհանրութիւնները, իսկ Գուլամիթեանի հրատարակութիւնը առանձնաճանաչում ու տարբերում է այդ երկուսից էլ: Նկատենք, որ բնագրային մերձութեանը նշուած բնոյթի տեքստային երեք տարբերակներում որոշելու համար վճռական նշանակութիւն ունի ոչ թէ ծաւալային յարաբերութիւնները, որի վրայ յենում է Ե. Փեչիկեանը, այլ՝ բացառապէս նրանց *լեզուա-ռճական համապատասխանութիւնը*, քանի որ ծաւալային տեսակէտից B եւ C տարբերակները հիմնականում նոյնական են. միակ յաւելումը, որ ունի C տարբերակը, բնագրի վերջում՝ զօրապետների թուարկումից առաջ եղած 5-6 տողանոց ընթերցումն է. համեմատիք.

B տարբերակ

«Այլ գտան անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու ժանտ ախտիս անմիաբանութեան, ուստի իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց զողորմութիւնն աստուծոյ» (էջ 22):

C տարբերակ

«Այլ գտանին անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու ժանտ ախտիս անմիաբանութեան, վասն որոյ անօրէն խորհրդովք ընդունաւն եւ սնտախ պատճառաւօք իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց եւ մերժել զպարգես եւ զողորմութիւնսն աստուծոյ ի հասարակութենէ իւրեանց, եւ եղեն կամաւ ստրուկք օտարաց որպէս եւ յառաջն, որք մինչեւ զայժմ մնային ի իշխանութեան իւրեանց, եթէ սակաւ ինչ եւս ժամանակ ժուկայեայր էին, մինչեւ անգանիզէր բռնութիւնն օսմամբուցող. մանաւանդ զի աստուած օգնական էր նոցա յամենայն պատերազմունս. եւ զի ոչ պակասէին նոցա անառիկ եւ ամուր տեղիք» (էջ 93-95):

¹ «Բազմապէս», էջ 179:

Փեչիկեանի այն յայտարարութիւնը, որ B տարբերակը «Մխիթարեան հայրերի» հաւաքական գրառման արգասիք է՝ բնագրագիտական տուեալներով չի ապացուցում եւ, հարկ է ասել, առհասարակ անհնար էլ է ապացուցել...: Անվիճելի իրողութիւնն այն է, սակայն, որ *իրականում առկայ է միայն մէկ գրառող՝ յանձին Դուկաս Սեբաստացու, որը ստեղծել է երկու տեքստ Գաիթ Բէկի գլխատրած Միւնիքի ազատագրական շարժումների պատմութիւնն ընդգրկող՝ Համառօտ եւ Ընդարձակ տարբերակներով*. իսկ C տարբերակը ոչ թէ այդ շարժումների պատմութեան նոր գրառում է, ինչպէս կարծում է Փեչիկեանը, եւ վերջինիս անվերապահ կրկնում է Աբրահամեանը, այլ՝ Ընդարձակը, որը եւ վերջնական խմբագրումն է Մխիթարեան գիտնականների կողմից՝ այն հրատարակութեան պատրաստելու համար: Ընդ որում առկայ բոլոր ձեռագրական ընդօրինակութիւնները բխում են հէնց այս C տարբերակից: Նշանակում է՝ *Գուլամիթեանը խելամիտ է վարուել հրատարակութեան համար հիմք ընդունելով բացառապէս C տարբերակի ընդօրինակութիւններից մէկը*:

Բացի վերը նշուածից, C տարբերակի լեզուա-ռճական մշակման ենթարկուած, հրատարակութեան համար խմբագրուած լինելու կարեւոր ցուցանիշներից է նաեւ *բնագրական ձեւադրումը*: Այսպէս, եթէ A տարբերակն ունի միայն մէկ ընդհանուր վերնագիր՝ «Թե որպէս ի վտարել թագաւորութեանն պարսից հայքն Խափանու ի կռիւ ելին», իսկ B տարբերակը անմիջապէս սկսում է «Գլուխ առաջին»ով՝ «Թէ որպէս եւ վասն է՞ր եղել մուտն Գաիթ Բէկին ի Դափան. եւ թէ զիա՞րդ ելին միաբան ընդ նմա բնակիչք գաւառին եւ ընդդէմ դարձան թուրքաց» խորագրով, ապա C տարբերակը օժտուած է եւ ընդհանուր վերնագրով, եւ երեք զլուխներով ու առանձին հատուածով, որոնք համապատասխանաբար բացայայտող վերտառութիւններ ունեն:

Աւելին. եթէ A եւ B տարբերակներում պարբերութիւնները միապաղաղ յարակցութեամբ իրար են յաջորդում՝ դժուարացնելով ընթերցումը, ապա C տարբերակը սահմանագատում է առաջին երկուսից պարբերութիւնների համարակալմամբ ու ամէն անգամ նոր տողերի սկզբնաւորմամբ, որոնք հեշտացնում են, բնականաբար, ընկալումն ու ընթերցումը:

Ոչ պակաս յատկանշական է եւ այն, որ A եւ B տարբերակները, ունենալով թերի տխրասաթերք, չեն պահպանել մատենագիտական կարեւորագոյն տուեալներ, որոնք լոյս սփռէին սկզբնաղբիւրի ստեղծման հանգամանքների ու արժանահատութեան վրայ: Մինչդեռ C տարբերակը օժտուած է ծաւալուն տխրասաթերքով, որում արտացոլուած են ոչ միայն պատմագրութեան էական՝ բնորոշ բովանդակութիւնը, այլեւ Միւնիքի շարժումներին մասնակցած ականաւոր գործիչների անունները, որոնք *առաջին դէմքով եւ ականատեսի հաւաստմամբ յուշապատմել ու թելադրել են այն*:

Հետեւաբար՝ բնագրագիտական միակ վաւերական եզրակացութիւնը կը լինէր այն, որ C տարբերակը չի բխում ոչ B, ոչ էլ, առաւել եւս՝ A տարբերակներից. այն, ըստ էութեան, բնագրային առանձին տարբերակ է: Նշանակում է՝ վերը մեր յիշատակած եւ ուրիշ առանձնա-յատկութիւնների հաշուառման դէպքում անշուշտ անյարիր պնդում պիտի համարել Ե. Փեչիկեանի այն ենթադրութիւնը, որ, իբր, «կասկած չի մնար որ Գուլամիթեանի ձեռագիրը Մխիթարեան Բ ձեռագրին մէկ

օրինակն է...»¹: Պրոֆ. Աբրահամեանը, սակայն, որդեգրելով Փեչիկեանի այս քիւր եզրակացութիւնը եւս, B տարբերակի եւ Գուլամիրեանի հրատարակած բնագրի յարաբերակցութեան մասին ստեղծում է մի վիճակ, որից դժուար է գլուխ հանել: Փեչիկեանի վերոյիշեալ քաղուածքը բերելուց յետոյ՝ համակարծիք լինելու տրամադրութեամբ, շարունակութեան մէջ, սակայն, որպէսզի ցոյց տայ, թէ ինքը եւս «ուսումնասիրել» է «Ընտիր պատմութեան» ձեռագրական բոլոր ընդօրինակութիւնները, Աբրահամեանը գրում է. «Ոչ միայն Գուլամիրեանցի եւ Վենետիկի հնագոյն ձեռագրի, այլեւ Գուլամիրեանցի բնագրի եւ միւս ձեռագրերի բնագրերի մեր կատարած ուսումնասիրութիւնից պարզուեց, որ նրանք էապէս չեն տարբերում իրարից (sic!) եւ պատմական առանձնապէս կարեւոր շեղումներ եւ տարբերակներ չունեն (sic!)...»²: Ինչպէս տեսնում ենք, այստեղ պրոֆ. Աբրահամեանի բնագրագիտական պեղումները օգուտ առկայա են մնում, որովհետեւ դրանք չեն փաստարկուում համապատասխան հիմնաւորումներով:

Բնագրագիտական արժէք չունեցող վերոբերեալ պնդմանը կարեւորութիւն չի ընծայում նաեւ ինքը՝ այդ տողերի հեղինակը, երբ հանդէս է գալիս «Պատմա-բանասիրական հանդէս»ի էջերում՝ թոյլ տալով բանասիրական մի անճիշտ պնդում եւս: Այս անգամ, մեղանշելով գիտական ճշմարտութեան դէմ, նա ամէն կերպ վարկաբեկում է Գուլամիրեանի հրատարակութիւնը, որպէսզի բարձրացնի «նախագաղափարի» արժէքը... յայտարարելով, թէ, որքան էլ տարօրինակ է, արժանա-հաւատ է ոչ թէ Գուլամիրեանի հրատարակութիւնը, այլ՝ ... «նախագաղափար»ը: Այդպէս էլ գրում է նա. «Բոլոր դէպքերում, Միւնիքի ազատագրական շարժումների պատմութիւնը բազմակողմանի եւ ճշմարտացի ներկայացնելու համար անհրա-ժեշտ է դիմել ոչ թէ Գուլամիրեանցի հրատարակած «Ընտիր պատմութեանը», որը յետագայի խմբագրուած բնագիր է, այլ՝ Սերաստացու նորայայտ ինքնագիր բնագրին...»³

Մի՞թէ տարօրինակ չէ, երբ Գուլամիրեանի հրատարակած բնագրի անու-րանալի արժանիքներն ու առաւելութիւնները դիտմամբ արժէքագրելով՝ պրոֆ. Աբրահամեանը վերագրում է դրանք նախագաղափար անմշակ բնագրին, սեւով սպիտակի վրայ գրելով. «Մեր ձեռքի տակ է այժմ Ղուկաս Սերաստացու նախա-գաղափար այդ բնագրի ՄԵՔԵՆԱԳԻՐ օրինակը, որը եւ յանձնում ենք հրա-տարակութեան: Թէ՛ նա ինչ տարբերութիւն ունի մեզ յայտնի բնագրից եւ պատմագիտական ինչ արժէք է ներկայացնում, այդ դժուար չէ տեսնել Գուլա-միրեանցի բնագրի հետ համեմատութեամբ: Մեր կարծիքով, նրա առաւելութիւնն ու կարեւորութիւնը անատարկելի է: Նա հնարատրութիւն է ընծեւում մեզ լուծելու հայագիտութեան մէջ Միւնիքի ազատագրական շարժումների հետ կապուած մի շարք վիճելի հարցեր՝ թուրքական բանակի Միւնիքի վրայ յարձակուելու տարեթիւր, Դաւիթ Բէկի եւ Մյիքթար սպարապետի մահուան թուականները, օգնում է ճշդելու բազմաթիւ տեղանուններ, որոնք եւ նշում են ծանօթագրութիւնների մէջ եւ այլն»⁴: Չարմանում ես՝ ինչպէ՞ս կարելի է բացարձակապէս անյարիր ու սխալ պնդում-ներին հաւաստիութեան պատրանք վերագրելու համար «սնտարկելիութեան» վատահոլութիւն հաղորդել իր տողերին: Եթէ մի պահ ընդունենք, որ, իրօք այդ այդպէս է, այս բոլորը եթէ բանասիրական ձեռնածութիւն չէ, ապա ինչո՞ւ բնագրա-

գիտական համարեա բոլոր ուղղումները հեղինակը առաջադրում է ոչ թէ նախա-գաղափար ձեռագրից, այլ չգարմանաբ (!) իր կարծիքով Գուլամիրեանի հրատա-րակութեան հիմքում ընկած վենետիկեան Ընդարձակ ձեռագրից... (հմմտ. «Պատ-մա-բանասիրական հանդէս», էջ 179, 180, 181, 182 եւ 183):

Նախ, ընդհանուր կարգի մի դիտողութիւն՝ մեթոդական բնոյթի: Եթէ Գուլա-միրեանի հրատարակութիւնը, տեքստային խմբագրման առումով, չի բխում ոչ B տարբերակից, ոչ էլ, առաւել եւս՝ A տարբերակից, իսկ միւս ձեռագրական ընդօրի-նակութիւնները հարազատ քոյրերն են հէնց Գուլամիրեանի հրատարակութեան հիմքում ընկած ձեռագրի, ապա համարժէք համեմատելիներն են, բնագրագի-տական տեսակետից, ոչ թէ A եւ B տարբերակները Գուլամիրեանի հրատա-րակութեան հետ, այլ ձեռագրական միւս բոլոր ընդօրինակութիւնները: Հետեւաբար տեքստային ստուգագոյն եւ սպառիչ ուղղումները Գուլամիրեանի հրատարակած բնագրի նկատմամբ կարող են տրամադրել (եւ իրօք տրամադրում են) միայն նրա ճիւղաւորումները հանդիսացող քոյր ձեռագրերը: Այդ պատճառով էլ պրոֆ. Աբրահամեանի առաջարկած «ուղղումները» բնագրագիտական արժէք չեն ներկա-յացնում գիտա-բնական տեքստի պատրաստման համար, բայց եւ այնպէս ոչ մասնագէտ ընթերցողի համար դրանք անշուշտ տպաւորիչ են...:

Միտումնաւոր է պրոֆ. Աբրահամեանի՝ երկու յօդուածներում էլ կիրառած հակադրութեան մեթոդը՝ կանխակալօրէն այս կամ այն հրատարակութիւնը եւ կամ նրա հեղինակին նսեմացնելու նկատումով:

Այսպէս, հակադրելու ի՞նչ կարիք կայ Գուլամիրեանի հրատարակութիւնը A եւ B տարբերակներին՝ սխալ մեթոդով կատարած իր «ուղղումների» ցուցադրման նպատակով: Ո՞ւմ յայտնի չէ, որ Գուլամիրեանի հրատարակութիւնը ոչ թէ բոլոր ձեռագրերի համադրութեամբ իրականացուած գիտա-բնական բնագիր է (Գու-լամիրեանը երբէք այդպիսի յաւակնութիւն չի էլ ունեցել), այլ՝ ընդամենը մի ձեռագրի պարզ արտատպութիւն, ընդ որում այդ ձեռագրի բոլոր թերութիւններով ու առաւելութիւններով հանդերձ: Բայց դեռեւս 1871 թուականին մատենագրական այս Յուշարձանի սուկական հրատարակութիւնը Ա. Գուլամիրեանի շնորհակալ ծառա-յութիւնն է հայագիտութեանը, որով Միւնիքի ազատագրական մաքառումների պատմութիւնը ոգեշնչման աղբիւր ծառայեց վիպասանութեան, երաժշտութեան, բեմական արուեստի, կինոյի համար:

Այսպէս, մի դէպքում՝ Դաւիթ Բէկի գորավարներից Ստեփանոս Շահումեանի եւ նրա զինակիցների պատմութեան արժանահաւատութիւնը պսակազերծելու դիտու-մով պրոֆ. Աբրահամեանը գրում է.

«Կարելի է Սերաստացու բնագրում մատնացոյց անել այլ թերութիւններ եւ պակասութիւններ եւս, սակայն բերուած փաստերը, կարծում ենք, բաւական են յանգելու այն եզրակացութեան, որ միայն Սերաստացու գրի առած բնագրի հիման վրայ չի կարելի կազմել Միւնիքի ազատագրական շարժումների գիտական պատ-մութիւնը...»⁵:

Իսկ ո՞վ ասաց, թէ «միայն Սերաստացու գրի առած բնագրի հիման վրայ կարելի է կազմել Միւնիքի ազատագրական շարժումների գիտական պատմու-թիւնը»: Ամէն մի վատերագիր, փաստաթուղթ կամ յիշատակութիւն լրացուցիչ իր արժէքն ունի հետազօտողի համար: Բայց մատենագրական այս Յուշարձանը

¹ Նոյն տեղում, էջ 179:

² «Բանբեր Հայաստանի արխիւների», էջ 87:

³ «Պատմա-բանասիրական հանդէս», էջ 162:

⁴ «Բանբեր Հայաստանի արխիւների», էջ 88-89:

⁵ Նոյն տեղում, էջ 91:

այնպիսի բանկազին սկզբնադիրք է, որի արժանահաւատութիւնը ընդգծում է քեկուզեւ նրանով, որ այն թելադրել են ազատագրական այդ շարժումների բուն իսկ մասնակիցները, ընդ որում՝ ականաւոր մասնակիցները: Մի՞թէ այս իրողութիւնից յետոյ կարելի է ասել.

«Շատ կցկտոր, դէպքին անծանօթ (sic!) մարդու լեզուով է նկարագրում Հալիճորի նշանաւոր ճակատամարտը թուրք նուաճողների դէմ»...:

Մի այլ դէպքում, համերաշխելով ակադ. Ա. Յովհաննիսեանի հետ, հենց Գուլամիրեանին դատափետելու համար Արրահամեանը մեղադրում է նրան «անբարեխղճութեան» ու «փաստեր խարդախելու» մէջ. «Աղբիւրագիտական առաջին հարցը,- գրում է Արրահամեանը,- որ ծառանում է տուեալ բնագիրը ուսումնասիրողի առջեւ, այդ այն է, թէ որքա՞ն բարեխիղճ է գտնուել Գուլամիրեանցը բնագրի հրատարակութեան խնդրում, չկա՞ն արդեօք առանձին աղաւաղումներ: Այս հարցի ուսումնասիրութեամբ զբաղուել է ակադ. Ա.Գ. Յովհաննիսեանը «Դաւիթ-բէկի գլխատրած Գափանի ապստամբութիւնը» խորագրով իր յօդուածում:

Մակայն նախ ասենք, որ յանգուցեալ ակադ. Յովհաննիսեանը յիշեալ իր յօդուածում «աղաւաղումների հարցի ուսումնասիրութեամբ» յատուկ չի զբաղուել՝ չունենալով այդպիսի եւ ո՛չ մի յաւակնութիւն. բայց այդ առթիւ Ա. Գուլամիրեանի վերաբերեալ թոյլ է տուել կանխակալ վերագրումներ, որոնք բնագրագիտական հանգամանակից ստուգման ու հաստատման կարիքն ունեն: Այդ բանը չի արել նաեւ Ա. Արրահամեանը:

Բանն այն է, որ ակադ. Յովհաննիսեանի սխալ վերագրումները բխում են նրանից, որ նա սեւեռուն կարծիք է ունեցել Գուլամիրեանի հրատարակութեան հիմքում ընկած աղբիւրը համարելու հենց իր սեփականութիւնը հանդիսացած ձեռագիրը, ըստ որում՝ բոլոր այն դէպքերում, երբ շեղումներ են լինում ընթերցումների միջեւ՝ համարել է դրանք «աղաւաղումներ», նոյնիսկ «դաւանաբանական նենգափոխումներ», իսկ Գուլամիրեանի հրատարակութեան մէջ բաց թողնուած առանձին տողերն ու բառակապակցութիւնները, իբր, *ցարական ցենզորայի արգելման արդիւնք են* ...: Ինքնին հասկանալի բնագրային այս տարրընթերցումները ձեռագրերի միջեւ՝ Ա. Արրահամեանի համար, իբրեւ աղբիւրագէտի, թում է թէ ըմբռնելի պէտք է լինէին:

Արդ, որո՞նք են «բնագիրը խարդախելու մի քանի փաստերը»:

Առաջին. Աշ. Յովհաննիսեանի «ձեռագրում ասում է,- գրում է Ա. Արրահամեանը,- որ Շահնավազը ընդառաջելով Շահումեանցի խնդրանքին՝ «... կոչեալ Դաւիթ պէկն Սմիթիացի ի Հայկազեան տոհմէ, ետ նմա իշխանութիւն երթալ յաշխարհն Միւնեաց, որ այժմ կոչի Խափան»: Գուլամիրեանցը, *Դաւիթ բեկին սիւնեցի տեսնելու ցանկութեամբ տարուած*, այդ բնագիրը փոխել է հետեւեալ կերպ. «ն կոչել զԴաւիթ բէկն Միւնեցի ի Հայկազեան տոհմէ, ետ նմա իշխանութիւն երթալ յիւր հայրենի յաշխարհն Միւնեաց, որ այժմ կոչի Խափան» (էջ 5)¹: Չարմանալի ի՞նչ կայ այստեղ. ոչ միայն Աշ. Յովհաննիսեանի ունեցած ձեռագիրը, այլև Մատենադարանի համարներ 4598, 6835 ձեռագրերի եւ միկրոֆիլմ համար 250ի ընթերցումները ունեն միեւնոյն՝ «մծխեթացի» տեղանունը: Առաւել բնական է ենթադրել, որ Գուլամիրեանի հրատարակութեան հիմքում ընկած ձեռագրում «սիւնեցի» բառը եղած լինէր «մեծխեթացի» բառի փոխարէն: Ինչո՞ւ անպայման

յետին միայն վերագրել հրատարակչին. չէ՛ որ ձեռագրերից երկուսն էլ (համարներ 6835, 1057) ունեն ճիշդ ու ճիշդ Գուլամիրեանի հրատարակած բնագրի՝ «*յիւր հայրենի յաշխարհն Միւնեաց*» ընթերցումը, որը ենթադրում է նաեւ «սիւնեցի» ընթերցման հնարատրութիւնը՝ անկախ Գուլամիրեանի ցանկութիւնից, մանաւանդ որ ոչ այլ ոք քան հենց Արրահամեանը յատուկ ջանքեր է գործադրել եւ մի ամբողջ հատում է նուիրել (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», էջ 165-168) Դաւիթ «սիւնեցի» լինելը ապացուցելու համար...:

Երկրորդ. Աշ. Յովհաննիսեանին պատկանած «ձեռագրի այն տեղեկութիւնը, որ Միւնիքում ազատագրական շարժումները վերջանալուց յետոյ Տէր Աւետիքը, մեղքերը քսելու համար, իբրեւ թէ գնում է Հոռն «թողութիւն» խնդրելու համար, ուղարկում է Երուսաղէմ Հայոց պատրիարքի մօտ»¹:

Այս հարցի վրայ ուզում ենք կանգ առնել առաւել հանգամանօրէն:

Սկզբից եւեթ նշենք, որ Գուլամիրեանի հրատարակութիւնից տարբեր, բայց Աշ. Յովհաննիսեանի ձեռագրին համընկնող ընթերցում ունեն նաեւ ձեռագրական միւս ընթերցումները (տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարանի համարներ 3297, 6835 ձեռագրերը եւ համար 250 միկրոֆիլմը, ընդ որում՝ Աշ. Յովհաննիսեանի ձեռագրում յետնագոյն ժամանակներում ռեփինով ջնջել են այդ ընթերցումը՝ փոխարէնը ոչինչ չգրելով (տե՛ս թ. 49ա): Մակայն ուշագրան այն է, որ դեռեւս Ա. Գուլամիրեանը, իր տրամադրութեան տակ չունենալով ձեռագրական այլ տարբերակներ, բայց նկատելով, որ Չամչեանի «Պատմութեան» մէջ խնդրոյ առարկայ ընթերցումը բոլորովին այլ կերպ է վերաշարադրուած, քան իր հրատարակութեան համար հիմք ծառայած ձեռագրինը, ծանօթագրութեան մէջ զարմանք է յայտնում, թէ որտեղի՞ց է վերցրել երախտաւոր պատմաբանը նման տեղեկութիւնը. «*Չարմանա մք, թէ Հայր Միքայէլ վարդապետն Չամչեանց (հատ. Գ. գլ. ԽԹ, էրես 800), ուստի՞ զիտացեալ՝ կամ յորպիսի՞ աղբերաց առեալ՝ վստահանայ ինքնաստեղծ պատմութեամբ յօրինել,- գրում է նա,- գնոր իմն սովորութիւն Ազգիս, գրելով ի պատմութեան իւրում՝ թէ. «Իսկ Տէր Աւետիքն առեալ զընտանիս իւր՝ չոգաւ ի Գաղատիս, եւ անտի զնացեալ յարեւմուտս, էտա զներումն ի Ծայրագոյն Քահանայապետէն Հռովմայ, վասն մղելոյ նորա զայնչափ պատերազմունս ի Քահանայութեան իւրում...»*»²:

Իհարկէ՝ Գուլամիրեանին յայտնի չի եղել, որ Ե տարբերակի ձեռագրում առկայ է հենց այն ընթերցումը, որը եւ հիմք է ծառայել Մ. Չամչեանի համար: Եթէ վիճելի ընթերցման այն փոփոխակը, որ առկայ է հրատարակութեան մէջ, հենց Գուլամիրեանի միջամտութեան ու դիտումնաւոր «խարդախման» արդիւնք լինէր, ապա անհասկանալի կը լինէր հրատարակչի անկեղծ զարմանքը, որը միայն ճշմարտութիւնը բացայայտող պատասխան ակնկալելու բնոյթն ունի, եւ ո՛չ՝ սեփական կեղծիքի կոծկում, ինչ որ անհամոզիչ է նման պարագայում:

Ի լրումն ասուածի, առաջադրուած հարցի առնչութեամբ բնագրային մի փոփոխութիւն եւս առկայ է Գուլամիրեանի հրատարակութեան մէջ, որին ուսումնասիրողներից ոչ ոք չի անդրադարձել: Այսպէս, կարելու է նշել, որ Գուլամիրեանի հրատարակութեան մէջ ոչ միայն տեղանունն է փոխուել՝ «Գաղատիան» դարձուելով «Երուսաղէմ», այլև Տէր Աւետիքին վերաբերող ամբողջ բնութագիրը, Հալիճորի

¹ Նոյն տեղում, էջ 86-87:

² Նոյն տեղում, էջ 87:

³ «Շնորհիւ պատմութիւն Դաւիթ բէկին եւ պատերազմաց Հայոցն Խափանու...», Վաղարշապատ, 1871, էջ 70:

գորավար Փարսադանի մասին արուած յիշատակութեան հետ միասին, բնագրի վերջաւորութիւնից առաջ է տարուել եւ մուծուել Սիմեոն գորպայեանի յիշատակումից անմիջապէս յետոյ: Նշանակում է՝ արուած է նաեւ բնագրային «վիրահատութիւն» (համեմատել՝ A տարբերակ՝ էջ 29, B տարբերակ՝ էջ 35, Գուլամիրեանի հրատ.՝ էջ 76-77): Այդ իսկ պատճառով Գուլամիրեանի հրատարակութեան մէջ զանց է առնուած հեղինակային տարբերակներում գորպայեան Տէր Աւետիսին ձօնուած ներքողական բանաստեղծութիւնը, որով աւարտում է Դաւիթ Բէկի գլխաւորած շարժման հերոսապատումը, ընդամին՝ այդ չափածոյի հեղինակի մասին արուած է այսպիսի նշում. «Որպէս եւ ոմն յարգելի երիցանց անտի գրեաց առ նա զայս ոտանատր առ նոյն յորդոր» (տե՛ս A տարբերակ, էջ 29, B տարբերակ, էջ 35):

Ինչո՞վ բացատրել բնագրային այս կարգի փոփոխութիւնները. արդե՞օք անգգուշութեան կամ տեխնիկական վրիպման հետեանք են դրանք, թէ՞ իրենց հիմքում ունեն դաւանաբանական նկրտումներ, որոնք, բնականաբար, ամենեւին չեն վերաբերում բնագրեր հրատարակելու գիտական պահանջներին:

Կարծում ենք, որ այս կարգի փոփոխութիւնները պայմանաւորուած են դաւանաբանական հակամարտ նկրտումներով. երբ բնագրի ընդօրինակման ժամանակ լուսաւորչադատան մի գրիչ իր դաւանանքի ջերմեռանդութիւնից մղուած կատարել է բնագրական նշում փոփոխութիւնները: Հէնց դրանով պէտք բացատրել նաեւ այն աղաղակող փաստը, որ Գուլամիրեանի հրատարակութեան համար հիմք ծառայած ձեռագրում դիտարկութեամբ ջնջուել է գրատողի անունը՝ թողնելով միայն ոչինչ չասող «վարդապետի» բառածելը:

Այն, որ իրօք Տէր Աւետիսը եկել է Հռոմ, եւ ո՛չ թէ Երուսաղէմ, կողմնակիօրէն ապացուցում է նաեւ նրանով, որ նրա զինակիցներից շատերը Ստեփանոս Շահունեանի գլխաւորութեամբ արդէն ժամանել էին Իտալիա եւ Վենետիկի սբ. Ղազար վանքում միասնաբար, փոխադարձ լրացումներով հաղորդել Ղուկաս Սեբաստացուն Դաւիթբեկեան հերոսապատումը: Երկրորդ՝ Մ. Աւգերեանը վենետիկեան ընդարձակ բնագիրը ցանկագրելիս յակնդէմ-անուանէ յիշատակում է, որպէս դէպքերի ու իրադարձութիւնների գլխաւոր մասնակից, ակնատես ու պատմող՝ Տէր Աւետիսին: Երրորդ, որ առաւել կարեւոր փաստարկ է, Տէր Աւետիսի Գաղատիայում եւ Իտալիայում գտնուելու մասին տեղեկութիւն է հաղորդում այս Սկզբնաղբիւրը պարփակող վաղագոյն ձեռագրերից մէկը, որը ենթադրում է ժամանակակցի վկայութիւն. ընդամենը Դաւիթ Բէկի մահուանից 31, իսկ Սկզբնաղբիւրի հեղինակումից 22 տարի յետոյ Ամստերդամում արտագրուած գրչագրում Յովակիմ Ռաֆայելեան¹ Դաւիթանցին իր թողած Յիշատակարաններում նոյնպէս արժարծում է Տէր Աւետիսի՝ Երուսաղէմ, թէ՞ Հռոմ գնալու խնդիրը՝ որպէս դաւանաբանական կարեւոր հարց: Յիշատակարանից ամենայն ակնհայտութեամբ բացայայտ է դառնում, որ գրիչը լուսաւորչադատան է, բայց եւ այնպէս հարկադրաբար արձանագրում է փաստը ըստ բնագրի հաւաստման՝ գրելով. «... հանդերձ ընտանեօքն փախստական լեալ (Տէր Աւետիսն - Լ.Խ.) գայ հասանի ի յերկիրն Գաղատիա, եւ անդ ենթարկեալ ընդ հրամանօքն Պապին (ընկալնոյր զներումն մեղանացն)»: Եւ որովհետեւ ձեռագրի ընդօրինակման ժամանակ՝ 1759 թ., գրատողը 8 տարի առաջ արդէն վախճանուած է եղել, ուստի Յովակիմ Ռաֆայելեանը անգիտանալով նրա անունը՝ ափսոսանք է յայտնում, որ չի կարող դիմել նրան, որպէսզի վերջինս

պատասխանէր տարակուսանք յարուցող տողերի համար՝ թէ ինչո՞ւ Հռոմի պապից Տէր Աւետիսը ներում է խնդրել: Բայց որովհետեւ բնագրում հաղորդուածից բացի ուրիշ որեւէ հիմք չունի գրիչը՝ դատարկեալում է Տէր Աւետիսին ամենաբացասական եւ ծայրայեղ բնութագրումներով, քանի որ նա, ըստ գրիչի, «առաջին սրբութիւնը (իմա՝ լուսաւորչադատութիւնը) անարգել է պապից ներումն խնդրելու պատճառով...»¹: Դառնութեան ու հիասթափութեան ներքին ցաւով գրիչը ուրանում է նոյնիսկ, որ Տէր Աւետիսը երբեւէ եղել է լուսաւորչադատան, այն էլ՝ քահանայ ..., ուստի եւ զայրոյթից պոռթկում է. «Ե՛լ ի մէնջ, այլ ո՛չ էր ի մէնջ. զի եթէ ի մէնջ էր, մնայր առ մեզ...»²:

Սակայն Ա. Գուլամիրեանը առաւել լայնախոհ եւ ազնի մտաւորական էր, քան նրան անհարկիօրէն մեղադրողները կարծում են: Բաւական է այս առթիւ յիշատակել մի փաստ եւս. հրատարակիչը ձեռագրի տիպոգրաֆերքում ջնջուած տեսնելով գրատողի անունը՝ արդարացի խստութեամբ դատարկեալում է այն կատարողներին, իբրեւ «անխոհեմ եւ անզգայ մարդիկ». ընդամին՝ անկեղծութեամբ խոստովանում է միաժամանակ, որ իր ճիգերը ապարդիւն են եղել պատմագրական աղբիւրներում պարզելու տմարդիօրէն ջնջուած գրատողի անունը. «Բայց ցաւում ենք շատ, - ասում է նա, - որ չկարողացանք գտնել այս ազնի Պատմագրութեան բուն հեղինակը, պատճառ անխոհեմ եւ անզգայ մարդիկ անհետացրել են այս ազնի հեղինակ վարդապետի անունը, ջնջելով նորա անունը եւ տոնանունը՝ միմայն Վարդապետ բառը թողելով, ինչպէս մենք եւս թողուցինք ահա, որի համար շատ տեղեր եւ պատմագրութիւններ փնտրելով, չկարողացանք եւ ոչ մի տեղ գտնէ ծանօթութիւն ինչ գտանել»³:

Երրորդ. «Յովիաննիսեանը ունի է նաեւ Գուլամիրեանցի բնագրի երկու տեղում ցարական ցեղագրայի կողմից կրճատելու փաստ»⁴, - գրում է Ա. Աբրահամեանը, բայց ինքը, իբրեւ բնագրագետ, խորամուխ չի լինում դրա մէջ՝ Գուլամիրեանի ամբողջ աշխատութեան տեսանկիւնից: Իրականում՝ դրանք եւս հիմք-ձեռագրի անընթեռնելիութեան կամ մաշուածութեան պատճառով Գուլամիրեանի հրատարակութիւնում բազմակէտերով են նշում իբրեւ բացթողումներ, մի դէպքում էլ՝ կիսատ նախադասութեան տպաւորութիւն է թողնում: Բոյր ձեռագրերի օգնութեամբ վերականգնենք եւ գուզարենք դրանք.

Գուլամիրեանի հրատ.

1. «Ձի՞նչ մեծագոյն քան զկայսրութիւնն Մակեդոնացոց եւ Հռոմէայեցոց. եւ ընդէ՞ր կորեան եւ կործամեցան. վասն զի պակասեցաւ ի նոցանէ Միաբանութիւնն եւ Սէրն

Իմ կազմած գիտա-բնական բնագիրը

«Ձի՞նչ մեծագոյն քան զկայսրութիւնն Մակեդոնացոց եւ Հռոմէայեցոց. եւ ընդէ՞ր կորեան եւ կործամեցան. վասն զի պակասեցաւ ի

¹ Նոյն տեղում:
² Նոյն տեղում:
³ Տե՛ս «Ընտիր պատմութիւն...», էջ Ժ:
⁴ «Բանքեր Հայաստանի արխիւներէ», էջ 87:

¹ Ի դէպ, այս գրչի ազգանունը, ըստ երեսոյթին վրիպակի հետեանքով, տպուած է «Մաֆայելեան» (տե՛ս «Բանքեր Հայաստանի արխիւներէ», էջ 86):
² Լեւինգրադի Արեւելագիտական ինստիտուտի հայկական ձեռագրերի ֆոնդ, B - 129, p. 61p:

հաւասարութեան, որով զօրացեալ իսկ էին Չի որպէս միաբանութիւնն հոգի է եւ կեանք ամենայն հասարակութեան, նոյնպէս եւ հակառակն սորին, այսինքն անմիաբանութիւնն եղծիչ է, եւ սատակիչ ամենայն հասարակութեան» (էջ 73):

նոցանէ Միաբանութիւնն եւ Սէրն հասարակութեան, որով եւ զօրացեալ իսկ էին. ընդէ՞ր եղեւ եւ կործանումն Ազգին մերոյ, երկրին մերոյ եւ քաղաւտորութեանն: Վասն զի բարձաւ միաբանութիւնն յիշխանաց եւ ի նախարարաց մերոց: Չի որպէս միաբանութիւնն հոգի է եւ կեանք ամենայն հասարակութեան, նոյնպէս եւ հակառակն սորին, այսինքն անմիաբանութիւնն եղծիչ է, եւ սատակիչ ամենայն հասարակութեան:

2. «Եւ եղեն կամաւ ստրուկ օտարաց որպէս եւ յառաջն, որք մինչեւ ցայժմ մնացին եւ սակաւ ինչ եւս ժամանակ ժուժկալեալք էին» (էջ 75):

«Եւ եղեն կամաւ ստրուկ օտարաց որպէս եւ յառաջն, որք մինչեւ ցայժմ մնային ի յիշխանութեանն իւրեանց, եթէ սակաւ ինչ եւս ժամանակ ժուժկալեալք էին»:

Սակայն ընդգծուած բացթողումներում, ինչպէս ընթերցողը կը նկատի, աւելի բնագրային թերաւարտութիւն կայ, քան քաղաքական սրութիւն: Ի դէպ, «միասնականութեան» եւ «համագգային սիրոյ» կոչը, որ առկայ է բացթողումներում, Ա. Գուլամիւրեանը լայնօրէն շեփոքում է նաեւ իր Առաջաբանում ու Յանելուածի նիւթերում, քայքայ օտասական ցենզուրան հանդուրժողաբար թոյլատրել է...: Գուլամիւրեանը նոյնպէս, իբրեւ «Երրորդ յանելուած», ազգային առկայ վիճակին նուիրուած չափածոյ «Ողբ» է գետեղել, ինչպէս եւ գրել է այսպիսի տողեր. «Սեր ընդհանուր Հայոց Ազգի այժմեան եւ ապագայ վիճակը մանրամասնաբար դիտելու ժամանակ՝ յիրաւի, չեմ կարծում որ ամեն ճշմարիտ Հայ աչքերից՝ արտասուաց կաթիլները հեղեղի նման վազելէն պիտի դադարին, - պատճառ, եթէ ճշմարիտ սրտով նայենք նրանց վերայ եւ մարդկային իրատուրքով դատենք, ո՞հ, այն ժամանակը անշուշտ կատաղութիւններ եւ ցնդումներ պիտի յառաջ գան...» (էջ 89): Կամ՝ «... որքան խորիւմ ենք, այնքան առաւել բազմանում են եւ դիզում մեր առաջ ազգիս անտանելի ցաւերը եւ մտածմունքը, վերջապէս դառն է եւ ողբայի մեր վիճակը, ո՞հ, դառն է եւ ողբայի՝ մեր վիճակը կրկնում են եւ...» (էջ 102): Մրանք քաղաքական առաւել սուր արտայայտութիւններ են, քան բաց թողնուած գրաբարեան տողերը...:

Որպէսզի «ակներեւ դարձնի» Ա. Գուլամիւրեանի իբրեւ թէ «կամայականութիւններն» ու «միջամտութիւնները» բնագրի նկատմամբ՝ պրոֆ. Արրահաւեանը իր առաջադրած «ուղղումներում» եւս չի խնայում նրան: Այսպէս, էջ 4, տող 9. «Բսկ եթէ որո՞վ մարթասցի զհայեցուած իւր առաջի իշխանաց իշխանին արժանատր ցուցանել, խորհեցաւ զիրս յանուն յիսուն արանց տանուտերանց Խափանու յօրինել...»: Խօսքը վերաբերում է Ստեփանոս Շահումեանցի՝ Շահնաւագ խանին ներկայացրած գրութեանը: Գուլամիւրեանցի հրատարակած ձեռագրի խմբին պատկանող ընդօրինակութիւններում հանդիպում է ոչ թէ «... խորհեցաւ զիրս յօրինել», այլ՝ «խորհեցաւ սուտ զիրս ... յօրինել»: Գուլամիւրեանցը, ըստ երեւոյթին, անյարմար համարելով, «սուտ» բառը դուրս է թողել նախադասութիւնից («Պատ-

մա-բանասիրական հանդէս», էջ 180): Բայց մի՞թէ գրաբարի լաւ գիտակ մարդուն կարելի է վերագրել այդպիսի անհեթեթութիւն. բանն այն է, որ սուտ բառի «բացթողմամբ» յօրինել եւ շարունակութեան մէջ, որ չի բերել Արրահաւեանը՝ «ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքս քանդակել, եւ զայն զիր նոքօք կնքեալ հաստատել» (Գուլ. էջ 49) ընդգծուած բառերը բողոքում են նման վարկածի դէմ: Ինչո՞ւ չի կարելի առանց բռնաձիգութեան մտածել, որ «սուտ» բառը պարզապէս չի ունեցել հիմք-ձեռագիրը, եւ հարցը կ'սպառուէր: Չէ՞ որ ձեռագրական տարբերակներով համադրական քննութեամբ վերականգնում են նման գրչագրական բացթողումները:

Անցնենք Աշ. Յովհաննիսեանի ձեռագրի եւ Գուլամիւրեանի հրատարակութեան բնագրագիտական համեմատութիւններին, որոնք առաւել հաւաստի եւ վաւերական կոտաններ են ստոյգ եզրակացութիւնների յանգման համար: Այդ ձեռագիրը այժմ գտնուում է Մատենադարանում եւ գրանցուած է 10579 համարի տակ: Մենք ամենայն մանրակրկիտութեամբ ուսումնասիրել եւ ընդգրկել ենք այն մեր կազմած գիտա-քննական բնագրում: Բնագրական բոլոր առանձնայատկութիւններով այդ ձեռագիրը ըստ էութեան տարբերում է Գուլամիւրեանի հրատարակութիւնից. հետեւաբար եւ՝ բացառուած պէտք է համարել այն սխալ կարծիքը, ըստ որի, դա նոյն ձեռագիրն է, որն, իբր, հիմք է ծառայել Գուլամիւրեանի հրատարակութեան:

Սոյն ձեռագրում կան բառեր ու բառակապակցութիւններ, որ չունի Գուլամիւրեանը, ինչպէս եւ առկայ են բառաձեւերի, շարադասութեան եւ ուղղագրական բնոյթի խիստ տարբերութիւններ, որոնք խալառ բացառում են դրանց նոյնութեան հնարաւորութիւնը: Այսպէս.

<u>Չեռ. 10579</u>	<u>Գուլ. հրատ.</u>
1. «ցքսան եւ մի երրորդ» (8ա)	«ցքսաներորդ» (էջ 14)
2. «սուտ զիրս» (3ա)	«զիրս» (էջ 4)
3. «ի վերայ արձակէին նորա»	«ի վերայ նոցա արձակէին» (17)
4. «էր ընդ կոտորեալսն նաեւ Պալի զօրավարն, որդի մելիք Փարսադանին, որոյ գզլուխն հատեալ ընկեցեալ էին, ի բացի մերձ ի Խոտանան, քայքայ գրողոր պարանոցն, այլ մինչ զկէսն ուլանն: Ուստի...» (22բ):	«էր ընդ կոտորեալսն՝ նաեւ Պալի օրավարն, որդի մելիք Փարսադանին, որոյ պարանոցն կիսով չափ հատեալ ընկեցեալ էին, ի բացի մերձ ի Խոտանան: Ուստի...» (էջ 41)
5. «ձայն փողոյ եւ ձայն գօսերաց» (26բ)	«ձայն փողոյ, եւ ձայն թմբկաց» (48)
6. «զայս խոցս եւ գվիրաւորս հալածականս առնէին» (28բ)	«զայս խոցս, եւ վէրս ի վերայ դնելով հալածականս առնէին...» (51-52)
7. «Արձաւարարին» (28բ)	«Արձանաբարին»
8. «Ի Հալիձոր երկիրին» (41բ)	«Ի Հալիձոր երկիրն» (70)

9. «ոչ համարձակեցաւ» (28բ)

10. «մինչդեռ ի վանսն էին նորա սրբոյն Թովմայի, արտաքոյ քաղաքին, եւ սկսան ի քաղաքէ անտի հրացանս արձակել ի վերայ գորացն» (35բ)

11. «էին ի յազգէն հայոց» (41բ)

12. «եպիսկոպոսունք»

13. «եւ եղեն կամաւ ստրուկ այլ-ազգեաց» (41ա)

14. «ընդէր եղել կործանումն ազգին մերոյ, երկրին մերոյ եւ թագաւորութեանն: Վասն զի բարձաւ միաբանութիւնն եւ յիշխանագ եւ ի նախարարագ մերոց...» (48ա)

15. «ի յիշխանութեան իւրեանց» (41ա)

16. «Պանդխտեցաւ ի Գաղատիայ» (49ա)

17. Չիք:

18. Չիք:

«ոչ համարձակեցաւ եյանել առժամ» (52)

մինչդեռ ի վանսն էին նորա սրբոյն Թովմայի՝ անտի հրացանս արձակել ի վերայ գորացն» (64)

«էին ի յազգէն Հայոցս յուսաւորական» (70)

«եպիսկոպոսունք Տաթևու»:

«եւ եղեն կամաւ ստրուկ օտարաց» (75)

Չիք:

Չիք:

Չիք:

Անուանք գորապետին եւ գորացն Դաւթի ի գանազան տեղիս

Առ ի մխիթարել զազգն Հայոց ողջոյն» (75):

Անուածին աւելացնենք նաեւ, որ Աշ. Յովհաննիսեանին պատկանած ձեռագրում կան բազմաթիւ ընթերցումներ, որոնք համապատասխանում են ոչ թէ Գուլամիլեանի հրատարակութեան, այլ մեր օգտագործած համար 4598, 3297, 6855 ձեռագրերին եւ համար 250 միկրոֆիլմին, իսկ առաւել մերձ՝ համար 6835 ձեռագրին: Ուստի բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ այն բխել է հենց համար 6835 ձեռագրից:

Որպէս մտոյշ բերենք նաեւ պրոֆ. Աբրահամեանի «բնագրագիտական քննութեամբ» կատարած «աղղումներից» մի երկուսը, որոնք նպատակ ունեն Միւնխենի ազատագրական շարժման տետրոսիւնը, չգիտես ինչո՞ւ, անպայման երեք տարով կրճատելու: Գուլամիլեանի հրատարակութիւնը արժէքագրելու նպատակով նա իր փաստարկները հետեւեալ կերպ է «հիմնաւորում».

«Դաւիթ բէկի մահը, ըստ «Ընտիր պատմութեան» մէջ հաղորդուած տեղեկութեան, - գրում է նա, - տեղի է ունեցել

1728 թ.», ապա շարունակում. «Դուկաս Սեբաստացու նախագաղափար օրինակում Դաւիթ բէկի մահուան տարեթուի մասին տեղեկութիւնը այլ է»: Բնականաբար՝ ընթերցողը սպասում է, որ իր առաջադրելիք փաստը իրօք այլ լինի: Բայց ո՞վ զարմանք. առաջարկ վկայութիւնը ո՞չ մի այլ թուականի հետ աղերս չունի. «Այստեղ ասուած է, - յարում է յօդուածագիրը, - «Եւ ի ժամանակի այսմիկ մեռաւ Դաւիթ պէկն խաղաղութեամբ ի տան իւրում յամի տեառն 1728 (ապա փակագծում իր կողմից «ծանօթագրում» է՝ «28-ը մատիտով աւելացուած» - Լ.Խ.) ... ի յամսեան (ամսաթուի տեղը բաց թողած)»: Ահա թէ ի՞նչ. բայց չէ՞ որ «Բանբեր Հայաստանի արխիւների» հանդէսում նոյն ինքը Աբրահամեանը յայտնում է, որ իր «ձեռքի տակ է այժմ Դուկաս Սեբաստացու նախագաղափար այդ բնագրի Մեքեն-ԱԳԻԻՐ օրինակը», որը եւ յանձնում է հրատարակութեան (տես էջ 88): Այս դէպքում հարց է ծագում. այդ ո՞ր աղբիւրագէտը երբեւէ կը յանդգնի «Մեքեն-ԱԳԻԻՐ» օրինակի հիման վրայ, այն էլ մատիտով ՀԱՍՏԱՊԱՏԱՄԵՆՆ ՆՈՅՆ ԹՈՒԱԿԱՆԸ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԷՊԸՈՒՄ բնագրագիտական «աղղում» առաջադրել...:

Աբրահամեանը այնուհետեւ եզրակացնում է. «Այսպիսով պարզում է (sic!), որ Դաւիթ բէկի մասին պատմագրողը հաստատ չի իմացել Դաւիթ բէկի մահուան ո՞չ տարին, եւ ո՞չ ամսաթիւը. հետեւապէս Սեբաստացու նախագաղափար օրինակի վրայ խմբագրուած ձեռագրեր (???), որոնցից ծագում է Գուլամիլեանցի հրատարակութեան բնագիրը, մահուան թուականի մասին եղած տարեթիւր մեզ հաստատուն կրուան ծառայել չեն կարող (sic!)»:

Նկատենք, որ այս դէպքում եւս գրառողին ուղղուած «մեղադրանքը» անհիմն է. եթէ նախագաղափարի մեքենագիր օրինակի հիման վրայ Աբրահամեանի կատարած եզրակացութիւնը մի պահ նոյնիսկ «հաւանական» համարենք, ապա չէ՞ որ պատմագրողը, բացի նախագաղափարից, շարադրել է նաեւ Ընդարձակ՝ առաւել ստուգուած եւ հաւաստի, մշակուած բնագիրը, որի վկայութիւնը արդէն փարատում է ամէն տեսակի տարակուսանքներն ու կասկածները: Ի՞նչ է գրուած այնտեղ. «Եւ եղել ի ժամանակի յայսմիկ հիւանդանալ Դաւթի եւ մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիժոր, *ամի տ(եառ)ն 1728ին եւ ի թուին հայոց ՌՃՀԷ*» (էջ 31): Բացարձակապէս յար եւ նման Գուլամիլեանի հրատարակութեան հաւաստմանը ...:

Բայց այս բոլորը պրոֆ. Աբրահամեանի համար ո՞չ մի նշանակութիւն չունի: Նա Դաւիթ Բէկի՝ 1726 թ. մահացած լինելու «գօրեղ» փաստերից է համարում նաեւ երեսութեան այն հանգամանքը, որ 1726 թ. Մխիթար Բէկի նախաձեռնութեամբ Ռուսաստանի ցարին յղուած Ուղերձում Դաւիթ Բէկի ստորագրութիւնը չի եղել...: «Անկարելի է, որ Դաւիթ բէկը, եթէ կենդանի լինէր, - գրում է նա, - չստորագրէր այդ փաստաթղթի տակ: Հիմք ունենալով այդ պէտք է ընդունել, որ 1726 թ. զարմանք Դաւիթ բէկն արդէն մահացած էր»²: Բայց յիշեցնենք Աբրահամեանին, որ այդ փաստաթղթի տակ չեն ստորագրել նաեւ Դաւիթ Բէկի շատ գորավարներ եւս, որոնք, չնայած դրան, շարունակել են ռազմական գործունէութիւն ծաւալել...: Խնդիրն այն է, որ 1726 թ. Միւնիքում ստեղծուած ռազմա-քաղաքական իրադրութեան պայմաններում երեւի նպատակայարմար չէր Դաւիթ Բէկի ստորագրութեան առկայութիւնը Ռուսաստանից օգնութիւն խնդրելու Աղերսագրում: Բացի այդ, յայտնի է, որ հենց այդ ժամանակ Դաւիթ Բէկի եւ Մխիթար Մպարապետի անձնական յարաբերութիւնները, գծաւորեան պատճառով, շատ վատացել էին: Այս

¹ «Պատմա-բանասիրական հանդէս», էջ 177:

² Նոյն տեղում, էջ 177:

իրողութիւնը հանգամանօրէն լուսաբանուած է պատմագրութեան մէջ¹, որի վկայակոչումը, սակայն, «ձեռնտու» չի եղել Արքահամեանին՝ իր վարկածի «արժանահատութիւն»ը ապացուցելու համար:

Սակայն պրոֆ. Արքահամեանին հարկ էր «յաղթահարել» բնագրային մի խոչընդոտ եւս, որը սերտօրէն առնչուած է վերոյիշեալ նրա «ուղղման» հետ: Ինչպէս յայտնի է, Դաւիթ Բէկի մահուանից յետոյ, փոխարինելով նրան՝ երկու տարի գլխատըր հրամանատարութիւնը ստանձնել էր Մխիթար Սպարապետը, հետեւաբար վերջինիս այդ պաշտօնավարումը պէտք է համապատասխանեցուէր ոչ թէ 1728ից մինչեւ 1730 թ. ընկած ժամանակամիջոցին, այլ՝ 1726ից մինչեւ 1728 թ.: Ի՞նչպէս վարուել այս «խանգարիչ» փաստը մէջտեղից վերացնելու համար:

Պրոֆ. Արքահամեանը այս առնչութեամբ գրում է. «Անհրաժեշտ է նաեւ վերանայել Մխիթար Սպարապետի սպանութեան թուականը, որը քաղաքացիութիւն է ստացել 1730 թ. տակ: Դրա համար հիմք է ծառայել «Ընտիր պատմութեան» մէջ հաղորդուող հետեւեալ տեղեկութիւնը. «Եւ անդ յիւրոցն հարեալ թօփով, մեռանէր (Մխիթարն) յամի տեան 1730, յետ երկուց ամաց իշխելոյն» (էջ 71): Այստեղից Արքահամեանը եզրակացնում է. «Պարզում է (sic!), որ Մխիթարի մահուան թուականը Սեբաստացու նախագահափար օրինակում բացակայում է: Այն, անշուշտ, *յետսամուտ է*²: Բայց չէ՛ որ դարձեալ հեղինակային Ընդարձակ բնագրում սետով սպիտակի վրայ գրուած է. «Եւ անդ յիւրոցն հարեալ թօփով մեռանէր (Մխիթարն) յամի տեան 1730 յետ երկուց ամաց իշխելոյն» (էջ 32)), բացարձակապէս յար եւ նման Գուլամիրեանի հրատարակութեան: Նշանակում է՝ Մխիթարի մահուան 1730 թուականը ամենեւին էլ «յետսամուտ» վկայութիւն չէ, ինչպէս կարծում է Արքահամեանը:

Այնուհետեւ. յիշեցնելով, որ Մխիթար Սպարապետի տապանագրի թուականը սխալ վերծանմամբ է ներկայացուել հայագիտութեան մէջ եւ համապատասխանեցուել Գուլամիրեանի հրատարակութեան վկայակոչումով թուականի հետ, պրոֆ. Արքահամեանը գրում է. «Ժամանակին սխալ է վերծանուած եղել Մխիթար Սպարապետի տապանաքարի արձանագրութեան մէջ յիշուած մահուան թուականը: Հաւանական է, հրատարակչի մօտ *ցանկութիւն է եղել* (sic!) այն համաձայնեցնել «Ընտիր պատմութեան» տարեթուի հետ...»³: Իր այս պնդման համար յենում է նշանատը վիմագրագէտ Ս. Բարխուդարեանի «Դիւան հայ վիմագրութեան» մեծարժէք աշխատութեան Բ պրակի էջ 64ում տպագիր տեքստի եւ տախտակ VII համար 56ա-բ տապանագրի լուսապատճենների վկայութեան վրայ: Բերե՛նք այդ տապանագիրը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ի ՀԱՆԳԻՍ(Տ)ԵԱՆ,
ԻՋ(Ե)ԱԼ ՄԱՐ(Մ)ՆՈՎ Ի ԳԵՐԵՁՄԱՆ.
ՄԱՅ ՄՆԻԹԱՐ ՄԵՇ ԱՆՈՒՎԱՆ.
ՄԱՅ ԲԷՄՈՒՐԱՏ ԳՆԱՅ ՋԻՎԱՆ.
ՈՐ Է ԵՐԿՐԷՆ ՍԱ ԿԱՆՃՈՒՎ ԷՐ,
ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ԹՎ.: ՌՃՀԶ:

¹ Տե՛ս Ստ. Շահումեան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէկի եւ պատերազմաց Հայոց Խափանու, Վաղարշապատ, 1871, էջ 4: *Լէօ*, Հայոց պատմութիւն, հատ. 3, Երեւան, 1946, էջ 685-686: *Ա. Միրզոյեան*, Մխիթար Բէկի կողմից ռուսական կառավարութեանն ուղղուած ուղեորձի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս.գիտ.), 1952, Թ. 8, էջ 87-98 եւ ուրիշներ:

² «Պատմա-բանասիրական հանդէս», էջ 178:

³ Նոյն տեղում:

Առանձնապէս յատկանշական է վերջին տողը, որում պարփակուած է մահուան թուականը: Այն լուսապատճեն նկարում առանձնակի է բերուած: Բայց մենք չբարարարուեցինք դրանով. վերջերս ստացանք տապանագրի նոր նկարահանումը¹: Ամբողջ տապանագրի տարբեր ընթերցումները ուշադիր բննելու դէպքում ակնհետ է դառնում այն, որ բոլորովին տարբեր չափաի ու գրչութեան որակի են թուականը կրող գլխանկեան քարի գրութիւնը տապանագրի տեքստի առաջին մասից: Բացի արտաքին յատկանիշներից, որ հետաւոր նմանութեան դէպքում շատ յաճախ նոյնութեան խաբկանք են ստեղծում, առաւել կարեւոր են վիմագիր այդ հատուածների *ներքին՝ իմաստային-բովանդակային յատկանիշները*, որոնց ո՛չ Ս. Բարխուդարեանն է ուշադրութիւն դարձրել, ո՛չ էլ Ա. Արքահամեանը:

Տուեալ դէպքում երկու փորագրութիւնների անյարիր լինելը վկայում է նրանց քերականական անհամապատասխանութիւնը: Այսպէս, շիրմաքարի տեքստը, բացի վերջին տողից, խօսում է *եզակի* անձնաւորութեան՝ Մխիթար Սպարապետի կենսագրական ամենաւական տուեալների մասին, բայ-ստորոգեալների համապատասխան՝ եզակի ձեւաւորմամբ. մինչդեռ գլխանկեան շիրմաքարի բայ-ստորոգեալը՝ յոգնակի ձեւաւորումն ունի («ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ»), ուստի եւ այն վերաբերում է ոչ թէ մէկի, այլ մի քանիսի վաճառումին:

Բոլոր դէպքերում՝ չպէտք է մոռանալ, որ տապանագիրը յետագայ ժամանակների գործ է, ուստի եւ նրա վաւերականութիւնը վերապահութեամբ պէտք է ընդունել:

Ասումից հետեւում է, որ պրոֆ. Արքահամեանի բոլոր ճիգերը՝ «Ընտիր պատմութեան» մէջ մատնանշուած Դաւիթ Բէկի եւ Մխիթար Սպարապետի մահուան թուականները «խախտելու» իր դիտաւորութիւնն իրականացնելու ուղղութեամբ՝ բացարձակապէս ԱՆՀԻՄՆ ԵՆ...:

ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հասարակագիտական բաժանմունքի
«Պատմա-բանասիրական հանդէս»,
1974. Թ. 1:

¹ Ընկ. Զ. Պետրոսեանը մեր խնդրանքով Գորիսից ուղարկեց այդ տապանագրի ֆոտոպատճենը, որի համար մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում:

ԳԼԱՉՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲՆՈՅԹԸ ԵՒ ՈՉ ԹԷ
ՆՐԱ ԱՌԱՋՆԵԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ

«Բանբեր Երեւանի համալսարանի» հանդեսի 1974 թ. 2րդ համարի «Բանավեճ եւ քննարկում» բաժնում գեղեղամած է Փ. Անթաթեանի ընդդիմախօսական յօդուածը՝ «Արդեօ՞ք հայ առաջին համալսարանը Գլածորն է» վերնագրով:

Յօդուածագիրը հանդէս է եկել մեր վերջերս լոյս ընծայած «Գլածորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ (XIII-XIV դդ.)» աշխատութեան քննախօսութեամբ, տեսական մշակման ենթարկած մեր մի շարք դրոյթներ ու հարցադրումներ վիճարկելու յաւակնութեամբ: Ողջունելի է անշուշտ, երբ գիտական շրջանառութեան մէջ դրուած գիրքը արժանանում է բանավեճի, որը եւ կը նպաստի առաջ քաշուած հարցերի առաւել խոր ու համակողմանի լուսաբանմանը եւ զարգացմանը՝ ի շահ հայագիտութեան: Բայց տուեալ դէպքում, տարաբախտաբար, գործ ունենք մի քննախօսութեան հետ, որը գրուած է «ընդդիմախօսութիւն՝ յանուն ընդդիմախօսութեան» սկզբունքով:

Սկսենք հէնց վերնագրից: Յօդուածագիրը յօրինել է, այն էլ իբրեւ հիմնական «թեզ», ու վերագրել մեզ մի ինքնահնար պնդում, որ բնաւ մերը չի եղել: Մեր աշխատութեան մէջ *երբէք ոչ մի տեղ եւ ոչ մի անգամ չենք ասել, թէ Գլածորը հայ առաջին համալսարանն է*, որպէսզի գոնէ հիմք տար նրա յօդուածի հէնց այդ վերնագրով հրապարակ գալուն, այն էլ շարադրանքում «բանավիճային» մղումներով... «հերքելու» համար իր իսկ առաջ քաշած վարկածը: Գրքի անաչառ ընթերցողին քաջ յայտնի է, որ մեզ բնաւ չի հետաքրքրել եւ ամենեւին էլ գիտական հարց չենք համարել այն, թէ «քանիերո՞րդ» համալսարանն է եղել Գլածորի համալսարանը եւ թէ նրանից առաջ ենթադրուող «հայկական համալսարանները» որո՞նք են եւ, ընդամին՝ ինչպիսի՞ գործունէութիւն են ծաւալել եւ այլն: Այնինչ մեր միակ խնդիրն է եղել՝ փաստարկել եւ հիմնադրել, մեզ հասած սկզբնաղբիւրների վկայութեան համակողմանի եւ խորաքննի վերլուծութեամբ, տուեալ ժամանակաշրջանի երոպական համալսարանների ուսումնագիտական ծրագրերի եւ կազմակերպչական ներքին կառուցուածքի, «ֆակուլտետների», դասընթացների, գիտական աստիճանաւորման, մի խօսքով՝ բացառապէս նրանց համալսարանական յատկանիշների ու առանձնայատկութիւնների հետ համեմատական քննութեամբ *հաստատել նաեւ Գլածորի համալսարանական բնոյթը*:

Եթէ հայագիտական գրականութեան մէջ մեզանից առաջ հանդէս եկած ուսումնասիրողները հաւաստել են, որ Գլածորը եղել է միջնադարեան համալսարան՝ այդ վկայող ձեռագրական աղբիւրները շրջանառութեան մէջ դնելով, ապա մենք մեր հրատարակած աշխատութեամբ փորձել ենք, հետազոտութեան համեմատական ու քննական մեթոդով, *աներկբայ դարձնել Գլածորի համալսարանական բնոյթը, նրա նոյն տիպի համալսարան լինելը, ինչ երոպական համալսարանները*,

ընդ որում՝ նաեւ իւրայատկութիւնների բացայայտումով ու ընդգծումով: Մեր գլխատր եւ հիմնական այս թեզը ապացուցելու համար հայագիտական գրականութեան մէջ առաջին անգամ հնարատր է եղել մեզ յայտնաբերել Գլածորի համալսարանի Ուսումնական դասագրքերը: Վերջիններիս գիտական բնութագրման հիման վրայ որոշել ենք Գլածորի համալսարանական դասընթացները, երոպական համալսարանների դասընթացային առարկաների քննութեամբ ցոյց տուել դրանց ընդհանրութիւնը ու մինչեւ անգամ նոյնութիւնը: Այնուհետեւ պարզել ենք, թէ գիտութեան կողմից ընդունուած կոմպլեքսային յատկանիշների ինչպիսի՞ ամբողջութեան առկայութեան դէպքում հնարատր է Գլածորը համարել նաեւ համալսարան՝ երոպական մասշտաբով: Մա՛ է եղել եւ է՛ մեր աշխատութեան *Հիմնահարցը*: Ուստի, եթէ մեր ընդդիմախօսը հակաճառելու բան ունէր, ապա պէտք է իր յօդուածը վերնագրէր՝ «Արդեօ՞ք Գլածորը համալսարան է» ..., այդ դէպքում «բանավիճային հաղորդակցումը» արդարացում կը լինէր:

Բայց մեր ընդդիմախօսը սեփական մտայօրինումը դարձրել է իր քննախօսութեան առանցքը՝ սկսելով նրանով, եւ վերջացնելով դարձեալ նրանով, ըստ որում մինչեւ իսկ ռուսերէն ամփոփման մէջ յօդուածի նպատակադրումը համարելով, այս անգամ իրաւամբ, միայն այդ՝:

Այսպէս, նա իր յօդուածում գրում է. «Սկսենք Գլածորը որպէս մեր առաջին համալսարան ճանաչելու նրա (իմա՝ Լ.Խաչերեանի - Լ.Խ.) հիմնական դրոյթներից (sic!)» (էջ 192-193): Եւ որպէսզի իր այս վերնագրմանը «օրինակութեան» եւ «փաստացիութեան» երեսութեան տեսք տայ, բարեբախտաբար մատնանշում է նաեւ «համապատասխատ» էջերը, գրելով. «Ըստ նրա (իմա՝ Լ. Խաչերեանի - Լ.Խ.) Գլածորին նախորդած բոլոր դպրոցներն էլ միայն «բարձր տիպի» կամ լաւագոյն դէպքում՝ «բարձրագոյն տիպի» են եւ *ոչ երբէք համալսարան* (էջ 7, 67), *առաջին հայկական համալսարանը Գլածորն է*» (էջ 193):

Բայց եթէ մեր «հիմնական դրոյթն» է՝ Գլածորը հայ առաջին համալսարան ճանաչելը, ապա մեր ընդդիմախօսը պարտատր էր չբաւարարուել սուսկ էջի յղումով, այլեւ մէջբերել համապատասխան քաղուածքը կամ քաղուածքները գիտական բարեխղճութեամբ: Հէնց բանն էլ այն է, որ *անկարող է գտնել այդպիսին*: Ուստի ընթերցողին ճիշդ կողմնորոշելու նպատակով բերենք մեզ վերագրուած «դրոյթ»ի այդ յղումներից քաղուածքներ: Էջ 7-ում գրել ենք. «Իհարկէ՛ մեր դպրութեան առաւել քան հազար վեցհարիւրամեայ հարուստ պատմութեան ընթացքում, իբրեւ ուսումնագիտական մտքի փարոսներ՝ ճառագել են բարձրագոյն տիպի նաեւ այլ դպրոցներ, որպիսիք են՝ Վաղարշապատի, Անիի, Արգինայի, Կարսի, Նարեկի, Կամրջածորի, Տաթեւի, Մանահիւնի, Հաղբատի, Այրիվանքի, Հաղարծինի, Տավուշի, Նոր-Գետիկի, Խորվիրապի-Կայենածորի, Կեչառոյքի, Սսի, Հռոմկլայի, Գրազարկի, Ակնեի, Մեծքարի, Սեւ լեռան, Սկեւոյի Ուսումնագիտական կենտրոնները, որոնց մասին, տարաբախտաբար, մատնագրութեան մէջ շատ կցկտուր տեղեկութիւններ են պահպանուել: Բայց Գլածորի համալսարանի առաւելութիւնը, ի տարբերութիւն դրանց, բնորոշում է նրանով, որ ուսումնագիտական այս կաճառի մասին, ճակատագրի բարեբախտիկ բերումով, շատ բան է պահպանուել գրչագրերում: Եւ միայն այս հանգամանքը հնարատրութիւն է ընձեռում մեզ՝ հէնց Գլածորի համալսարանի միջոցով մեր դպրութիւնը

¹ Տե՛ս «Բանբեր Երեւանի համալսարանի», 1974, թ. 2, էջ 205: Այստեղ եւ յետագայ մէջբերումների էջերը կը նշուեն տեքստում: Եղագրումները իմն են - Լ.Խ.:

առնչութիւններին մէջ դնելու եւրոպական համալսարանների դպրութեան հետ»: Անբռնածիզ դատողութեան դէպքում՝ ասուածից բխում է, որ Գլածորը հայ առաջին համալսարանն է, այն էլ առաջադրուած որպէս մեր աշխատութեան «հիմնական դրոյթ»...: Ամենեւին Ո՞՞:

Իսկ էջ 67-ում ձեռագրական աղբիւրներից վկայութիւններ ենք բերել այն մասին, որ Գլածորի համալսարանը ժամանակակիցների կողմից դիտուել է «արեգակնափայլ», «զերահոյակ», «ուսման եւ մակացութեանց» կենտրոն, նրա «ռեկտորը»՝ Նչեցին, «թագաւոր ամենայն հայոց»՝ ուսուցչապետութեան իմաստով, «զպետս վարժից ազին թորգոմայ Եսայի» եւ այլն: Ընդ որում՝ ոչ մի անհարկի նշոյլ իսկ չկայ Գլածորի, իբրեւ առաջին համալսարանի, պնդման մասին...:

Չնայած դրան, մեր ընդդիմախօսը նոյնիսկ «մեղադրում» է մեզ նաեւ այն բանում, որ մեր աշխատութիւնում, իբր, «կամայ-ակամայ նսեմացուել են նոյն բնոյթի (sic!) նախորդ դպրոցների գիտա-մշակութային դերն ու մակարդակը, իսկ Գլածորինը՝ անհարկի ուռճացուել» (էջ 192): Այս ասում է այն դէպքում, երբ նրա իսկ մատնանշած մեր գրքի 67-րդ էջում գրել ենք. «Ունեցել ենք մշակոյթի բազմաթիւ լուսատւ կենտրոններ, որոնցով բողոքել ու ճառագել է հայ ժողովրդի իմացական հանճարը, ստեղծուել ու բեղմնաւորուել է հոգեւոր մեր հարստութիւնը, որի մշակութային արժէքն ու նշանակութիւնը բարձր է գնահատուած համաշխարհային գիտութեան մէջ»: Ինչպէս ասում են՝ թիրախը այս դէպքում եւս նպատակային չէ իր վրիպումով:

Չարմանալին ու զուեշտականն այն է միաժամանակ, որ յողուածազիրը չի բարարարում իր այս «հիմնական դրոյթը» անհարկիօրէն վերագրելով մեզ, այլեւ աւելորդ ճիգեր է գործադրում ... «ջրելու» համար այդ՝ այս անգամ արարտական խօսքում գրելով. «Եզրափակենք: Հայ առաջին համալսարանը Գլածորը չէ...» (էջ 205):

Այստեղ ուզում ենք կանգ առնել մի հարցի վրայ, որը մեր ընդդիմախօսի լեյտմտութիւն է կազմում նրա ամբողջ քննախօսութիւնում. հէնց վերը իրենից բերուած քաղուածքներում, երբ դժգոհութիւն է յայտնում, թէ ինչու Գլածորը իբրեւ «առաջին» համալսարան ենք ներկայացրել՝ իր մտասերեւածմամբ անշուշտ, իսկ նախընթաց շրջանի միւս ուսումնագիտական կենտրոնները՝ միայն իբրեւ «բարձր» տիպի կամ «բարձրագոյն դպրոցներ», քանի որ, ըստ նրա տրամաբանութեան, «նսեմացուած» է համարում այդ վարդապետարանները այն պատճառով, որ նրանք եւս «նոյն բնոյթի» են, ինչ Գլածորը...:

Մակայն միջնադարում ծնունդ առած «համալսարանական» հաստատութեան բնոյթը որոշելիս, մենք, իբրեւ տիպարային օրինակափութիւն, մեկնել ենք ո՛չ թէ սոսկ ցանկութիւնից, ինչպէս մեր ընդդիմախօսն է վարում, ա՛յլ՝ այն նախադրեալներից ու կոնկրետ յատկանիշների առկայութեան կոմպլէքսից կամ ամբողջութիւնից, որ ընդունուած է եւրոպական համալսարանների պատմութեան ուսումնասիրութեանը նուիրուած տեսական ծանրակշիռ աշխատութիւններում եւ, հետեւաբար, հաւաստում է գիտութեան կողմից: Հէնց եւրոպական մասշտաբով համալսարանական նախադրեալների, ներքին կառուցուածքի, դասընթացքների բնոյթի, դասախօսական մակարդակի եւ համալսարանական միւս յատկանիշների ու առանձնաշատկութիւնների քննութեան եւ համեմատութեան հիման վրայ Գլածորը, սահմանագատուելով միջնադարի նախընթաց շրջանի հայկական միւս բարձրագոյն դպրոցներից կամ ուսումնագիտական կենտրոններից, բնութագրել ենք որպէս

իրօ՛ք համալսարան: Թիւր եւ մակերեսային պատկերացումներն ու ընկալումները կանխելու համար զգուշացրել ենք ընթերցողին՝ գրելով մեր աշխատութեան մէջ. «Ի դէպ, «համալսարան» (իբրեւ universitas) ուսումնական հաստատութիւնը իր ծնունդով ու ներքին կազմակերպութեամբ արդիւնք է միջնադարի հասարակական կառուցուածքի եւ իր առանձնաշատկութիւններով բխում է նրանից: *Անտիկ աշխարհում նոյնպէս եղել են բարձրագոյն տիպի ուսումնական հաստատութիւններ, բայց դրանք երբէք չեն կարող դիտուել եւ չեն դիտուում որպէս համալսարաններ: Բանն այն է, որ «համալսարան» հասկացութիւնը, իբրեւ ուսումնական բարձրագոյն հաստատութիւն, իր մի շարք առանձնաշատկութիւններով էսպէս տարբերում է նախընթաց դարաշրջանների բոլոր տիպի բարձրագոյն ուսումնական կենտրոններից եւ իր սաղմնային յատկանիշներով ամենալայն ընդհանրութիւններն ունի ժամանակակից համալսարանների հետ՝ որպէս նրանց նախատիպի»¹: Ուստի ամբողջ մեր աշխատութեան մէջ համեմատութիւններ եւ ընդհանրութիւններն ու տարբերութիւններն քացայայտումներ Գլածորի համալսարանի նկատմամբ՝ կատարել ենք քացառապէս տուեալ ժամանակաշրջանում գործող եւրոպական համալսարանների հետ՝ որպէս համեմատելի միատրոնների իրենց մակարդակային համարժէքների բնոյթի իսկ պատճառով: Բայց մեր ընդդիմախօսը պահանջում է չբարարարուել միայն Գլածորի բարձրագոյն կրթական կենտրոնը «համալսարան» ճանաչելով, այլեւ բոլոր նախընթաց շրջանի վարդապետարանները պիտակաւորել «համալսարան» բարձրահնչուն անուանումով: Բայց դա կը լինէր, թող ներուի ասել, ազգային սնապարծութեան եւ ցուցադրական հայրենասիրութեան կեղծ բարեպաշտութիւն, որին տուրք տալ մենք չենք կարողոյ եւ երբէք էլ մտադիր չենք...: Այլապէս մեր քննախօսը չէր գրի, ընդդիմախօսելով մեզ՝ Թանահատը որպէս Գլածորի համալսարան ներկայացնելու վարկածը մեր մերժելու առթիւ. «Ուրեմն Թանահատում գրել-կարդալ չե՞ն ուսել, գրչութեան օջախ չի՞ եղել, ձեռագրեր չե՞ն ընդօրինակուել. եթէ՛ այդ (եւ անպայման՝ այդ, վկայ ձեռագրերն ու ձեռագրացուցակները), ապա էլ ի՞նչ «քացառապէս հոգեւոր կենտրոն»... (էջ 203): Ըստ նրա՝ Թանահատը հէնց Գլածորի համալսարանն է... իր այդ նշած յատկանիշների շնորհիւ:*

Իսկապէս՝ հարց է ծագում. եթէ իբրեւ «համալսարան» պիտակաւորուելու «չափանիշը» «գրել-կարդալ» ուսուցանելն է, «գրչութեան օջախ հանդիսանալով ձեռագրեր ընդօրինակելը», ապա մեր ընդդիմախօսը չարաչար սխալում է միայն վարդապետարանները «համալսարան» ճանաչելու իր դիտատրութեան մէջ, քանի որ մեր գրչութեան օջախները մի քանի հարիւր անգամ աւելի շատ են եղել, քան վարդապետարանները, հետեւաբար եւ՝ ի՞նչ կայ որ, հարիւրաւոր համալսարաններ ենք ունեցել...:

Անշուշտ առաջինը մենք կ'ողջուէինք, եթէ որեւէ հայագէտ կարողանար քացայայտել նախազբաւորեան հայկական առաջին համալսարանը կամ համալսարանները եւ գիտականօրէն՝ համալսարանական յատկանիշների հիման վրայ փաստարկել որ առարկայականօրէն ապացուցէր դրանց այդպիսին լինելը, բայց ո՛չ երբէք առաջնորդուէր՝ ... մեր ընդդիմախօսի պատկերացումներով ու չափանիշով...:

Բացի այդ, եթէ նա ամէն տեսակի ուսումնագիտական ու դպրութեան տեսութեան տարբեր հասկացութիւնները չժպտէր, ապա չէր առաջարկի մեզ անդրա-

¹ Լ. Խաչերեան, Գլածորի համալսարանը ..., էջ 7:

դառնալ նաև Գլաձորի համալսարանի և ասորական ու բիզանդական բարձրագույն դպրոցների ենթադրեալ առնչություններին՝ *այն դէպքում, երբ դրանք բնա համեմատելի չեն իրենց սկզբունքայնօրէն տարբեր բնոյթի պատճառով*: Նա գրում է. «Գլաձորի (այլև հայ միւս բարձրագույն բնոյթի դպրոցների) համալսարանական մակարդակը տեսական-փաստական առումով ճշդելու համար, առնուազն տարօրինակ է (sic!), որ ասորական և, յատկապէս բիզանդական նոյն բնոյթի (sic!) եւ ուսումնական հիմնական ծրագրի ու դասագրքերի, եւ դասաւանդութիւնների ու կրթական տրադիցիաների բնագաւառում» (sic!) (էջ 199-200): Տարօրինակը հէնց այն է այս պնդման մէջ, որ անտեսուած է ոչ միայն պատմականութեան սկզբունքը, որ ելակէտային նշանակութիւն ունի իւրաքանչիւր հասարակական երեւոյթի գնահատման հարցում, այլև գրչի մի հարուածով ժխտուել է հայ դպրութեան ազգային իւրայատկութիւններն ու զարգացման սեփական մայրուղին՝ յայտարարելով, թէ ասորական ու բիզանդական և «հայ դպրոցների ընդհանրութիւնը շատ դէպքերում մինչև իսկ նոյնական է եղել...»: Աւելին. արուած պնդումը, մեղմ ասած, բացարձակ անտեղեկութիւն է միջնադարի դպրութեան տեսութեան հարցերում, երբ «*համալսարանական» երեւոյթը առաջարկուում է բացատրել և հիմնաւորել ... ոչ-համալսարանական կամ, առելի ստոյգ, նախահամալսարանական դպրութեան իրողութիւններով*: Սակայն մեր ընդդիմախօսը «խորհուրդ» է տալիս նաև հայկական համալսարանը մինչև անգամ արաբական դպրութեան «դրուածքի» հետ համեմատութիւններ անելու և աղերսակցութիւններ հաստատելու: Որքան էլ տարօրինակ է, բայց «բանավէճ» յարուցող մեր քննադատը գրում է. «Կարծում ենք ինչ-որ տեղ և ինչ-որ չափով օգտակար կը լինէին, եթէ նկատի առնուէին նաև *միւս ժողովուրդների (եռամեացիների, արաբների) հին և միջնադարեան դպրոցների դրուածքի ու մակարդակի վերաբերեալ ուսումնասիրութիւնների արդիւնքները*: Այլ կերպ անխուսափելիօրէն թերի կը լինի հայ դպրոցների վերաբերեալ ամէն մի ընդհանրացնող ուսումնասիրութիւն...» (էջ 200):

Բայց գիտական բեղմնատուութիւն չունեցող նման հարցադրումներին արդէն իսկ պատասխանել ենք մեր գրքում և գիտակցաբար հրաժարուել այդ կարգի ապարդիւն որոնումներից՝ գրելով. «*Եթէ Հին Յունաստանի և Հռոմի ուսումնական բարձրագույն հաստատութիւններից և ոչ մէկը չի բնութագրում իբրև համալսարան, պատճառն այն է, որ դրանցից և ոչ մէկը չի ունեցել իր ներքին սահմանադրութիւնը, աւարտաճանտերը՝ թեզերի պաշտպանութեամբ, ուսումնական աստիճանատուումը, առանձին ֆակուլտետները, քաղաքական մեծ կշիռը հասարակական կենտրոնում և այլ առանձնայատկութիւններ, որոնք բնորոշ են եղել միայն միջնադարեան համալսարանական հաստատութիւններին*: Գլաձորի համալսարանը իր բոլոր յատկանիշներով լիովին համապատասխանում է միջնադարում ծնունդ առած մտաւոր շարժման այս բացառիկ բնկումին՝ համալսարանական հաստատութիւններին, որոնք այնքան վճռական դեր խաղացին հասարակական զարգացման համաշխարհային առաջընթացում՝ նախապատրաստելով Վերածննդի փառահեղ դարաշրջանը»¹:

Սակայն մեր ընդդիմախօսի հիմնական մտասերեռումը ոչ թէ ըստ էութեան քննարկման առարկայ դարձնելն է եղել մեր աշխատութիւնը և արժարժուած տեսական մշակումների առթիւ հայազիտական լուրջ խօսակցութիւն ծաւալելը, որը մենք շատ ցանկալի ենք համարում, այլ մեր ուսումնասիրութիւնը *պատրուակ ծառայեցնել* իր «նոր» թեզը շրջանառութեան մէջ դնելու համար, այն է՝ *համալսարա-*

նական պիտակով օժտել միջնադարեան նախազլաձորեան շրջանի հայկական բոլոր վարդապետարանները:

Այսպէս, Գլաձորը որպէս միջնադարեան երոպական մակարդակի համալսարան փաստարկելու և հիմնաւորելու համար ելակէտ ենք ունեցել գիտութեան կողմից *ընդունուած համալսարանական յատկանիշների ամբողջութիւնը իբրև կոմպլէքսայնութիւն*, որոնք օրգանապէս կապուած են միմեանց և պայմանատուում են մէկը միւսին, ըստ որում դրանցում առաջնայինն ու հիմնականը, *իբրև որոշիչ գործօն և համալսարանական կրթութեան գրաւական համարելով դասընթացային ծրագիրն ու ձեռնարկ-դասագրքերը*:

Բայց մեր ընդդիմախօսը, մետաֆիզիկ եղանակով, անջատելով համալսարանական յատկանիշների կոմպլէքսայնութիւնից իւրաքանչիւր առանձնայատկութիւն միւսից, դիտում է այն կղզիացած ու մեկուսի, և յայտարարում՝ գիտէ՞ք, այդ յատկանիշը կարելի է տեսնել դեռևս Գլաձորից շատ վաղ գոյութիւն ունեցած այսինչ վարդապետարանում, դրա «վաղեմութիւնը» առկայ է նաև այնինչ վաճառական դպրոցում, դրա «անդրանկութիւնը» չափազանց է վերագրել Գլաձորին և այլն, և այլն: Ոչ-գիտական այս «սկզբունքով» կարելի է «հերքել» իւրաքանչիւր հասարակական-մշակութային երեւոյթ, քանի որ նախընթաց փուլերի հետ այն անխուսափելիօրէն աղերսում է սոսկ այն իրողութեան պատճառով, որ նախընթաց փուլերի կամ իրականութիւնների զարգացման նոր մակարդակն է ներկայացնում իրենից, հետևաբար պարփակում է իր մէջ զարգացման «բացասման-բացասում» ընդհանրական օրէնքով նաև նախընթացի դրական բոլոր կողմերը: Միւս կողմից՝ բացարձակ ճշմարտութիւն է, որ հասարակական-մշակութային երեւոյթները (և առհասարակ բոլոր երեւոյթները) կորցնում են, իբրև կանոն, իրենց *բնոյթային իրավիճակները և նոյնիսկ դադարում գոյութիւն ունենալուց՝ հէնց որ տարանջատում ենք նրանց էութեան կամ յատկանիշները*: Գիտակցաբար թէ անգիտակցաբար՝ մեր ընդդիմախօսը կոպիտ կերպով ռոմանտարում է հէնց այս ճշմարտացի, բայց և միաժամանակ ելակէտային՝ պարտադիր սկզբունքը՝ մշակութային երեւոյթների գիտական ուսումնասիրման և գնահատման առթիւ:

Ասուածում համոզուելու համար բարարարուենք մի քանի փաստերի առաջնամբ:

Մեր ընդդիմախօսը գրում է. «Նախ՝ ուսումնականների համալրումների» ընդարձակուելու մասին: Նշենք, որ մատենագրական տուեալները 60 տարիների համար Գլաձորին յատկացնում են 363 շրջանաւարտ, *մինչդեռ Տաթևի IX-X դարերում գործող դպրոցին՝ շուրջ 500 «ընթացիկ տարեկան սովորող», ուստի՝ շատ ատելի, քան Գլաձորի դպրոցինը»* (էջ 193):

«Նման մի ապացոյց է դիտուած նաև այն, որ Գլաձորում վերապատրաստում և նշանակում են դասախօսներ՝ «տեսական», «գործնական», «գիտական» և «արդիւնական» բարունապետներ...»: Բայց դարձեալ անտեսում է վաղեմութեան հանգամանքը: ... Ուստի, այս «մասնագիտացում» ուսուցիչուսուցչապետների ասպարէզ գալն էլ, անտարակոյս, *նախազլաձորեան երեւոյթ է և չի կարող համալսարանական անդրանկութեան իրաւունքով օժտել Գլաձորը»* (էջ 194):

«Լ. Խաչերեանը կարծում է, թէ քանի որ Գլաձորի շրջանաւարտները ընթերցել են աւարտաճանտեր, ուստի և պէտք է այն համարել համալսարան: Այս եւս *կարելի չէ լուրջ համարել, նախ այն պատճառով, որ ստոյգ չգիտենք, թէ Գլաձորին նախորդած դպրոցները նման ուսումնական աւանդոյթ չեն ունեցել, և, յետոյ, մի՞թէ*

¹ Նոյն տեղում, էջ 7-8:

որոշիչն այն է, որ բեկնածուն արտաճած արտասանելով ստանայ իր վարդապետական աստիճանը» (էջ 195):

«... Հայաստանի տարբեր կողմերից այս կամ այն հռչակ վայելած դպրոցն ուսումնառութեան կամ կատարելագործման գալը ... միայն զրածորեան երևոյթ չէ... Գլածորը տունալ դէպքում էլ առաջին բացառութիւնը չէ եւ, բնականաբար, ոչ էլ առաջին համալսարանը» (էջ 193): Եւ այսպէս շարունակ...

Որքան էլ պարագործային թուայ առաջին հայեացքից, բայց եւ փաստ է, որ ազգային մշակոյթի սնապարծութիւնից մեր ընդդիմախօսը *անխուսափելիօրէն յանգում է ազգային մշակութային արժէքների ուրացման՝ նիհիլիզմի:*

Յանուն այն սեւեռուն նպատակի, որ նսեմացնի հրապարակ եկած առաջին ամբողջական աշխատութիւնը Գլածորի համալսարանին նուիրում՝ օգտուելով ընթերցողի՝ սկզբնադիւրսները ստուգելու հնարաւորութիւն չունենալու հանգամանքից, մեր ընդդիմախօսը *գոհարեքում է ... նոյնիսկ Գլածորի համալսարանը՝ լիովին կասկածի տակ վերցնելով նրա մինչեւ իսկ համալսարանական բնոյթը:* Դժուար է հաւատալ, բայց դիմենք փաստերին:

«... Գլածորի «համալսարան» յորջորջուելը նրա «համալսարանականութեան» զրաւականը չէ» (էջ 197), - յանկարծ յայտարարում է նա՝ քանի որ հիմա էլ անհրաժեշտութիւն է զգացել «ապացուցելու» Գլածորի համալսարանի լրիւ արժէքագրկման տեսակէտը, որպէսզի «համոզի», թէ չէր արժի մի ամբողջական աշխատութիւն գրել...

«Այս առթիւ չենք կարող հեղինակին շիշեցնել,- գրում է նա,- Գլածորից շատ ատելի վաղ իր գործունէութիւնը սկսած Հատուց Թառի դպրոցն էլ է «համալսարան» կոչուել, *նոյնպէս XIV դարում եւ դարձեալ ոչ «պատահական» մի անճնաւորութեան՝ Մանուէլ Բջնեցու կողմից:* Ապա հարցնում է ընդդիմախօսը՝ «Ուրեմն Հատուց Թառն էլ է համալսարան» եւ մտանալով իր «*նոյնպէս XIV դարը*», աւելացնում անմիջապէս՝ «այն էլ՝ Գլածորից առաջ» (էջ 197): Ինչպէս նկատելի է՝ «նոյնպէս XIV դարը յանկարծ դարձաւ «Գլածորից առաջ»...

Այնուհետեւ. «Գլածորի «համալսարան» անուանումը թէպէտ արժանի է ուշադրութեան,- գրում է նա,- բայց այդ եւս որոշիչ համարել կարելի չէ: Ինչո՞ւ: Որովհետեւ. ա) միջնադարեան Հայաստանում այն այսօրուայ առումով (???) եւ միակ նշանակութեամբ չի կիրառուել (???) ..., բ) անուանումը էութեան ճշգրիտ ցուցանիշը չէ միշտ» (էջ 196): Ի դէպ, այս այն դէպքում է ասում, երբ մեր գրքում որոշակի պատասխան է տրուած այն մասին, թէ ի՞նչ ենք հասկանում «միջնադարեան համալսարան» ասելով, որն «*իր սաղմնային յատկանիշներով ամենալայն ընդհանրութիւններն ունի ժամանակակից համալսարանների հետ՝ որպէս նրանց նախատիպ*» (էջ 7):

Շարունակենք հետել Գլածորի համալսարանի ժխտման՝ «ուչնացման» մեր ընդդիմախօսի նկրտումներին. «Հայ միջնադարեան դպրոցական կեանքի, ի մասնաւորի Գլածորի, լուսագոյն գիտակներ Գ. Յովսէփեանը եւ Լ. Խաչիկեանը թէւ Գլածորի համար «համալսարան» անունն են գործածում, բայց երկուսն էլ վերապահութեամբ, *սկզբից եւեթ առաջինը՝ այն առնելով չակերտների մէջ, երկրորդը՝ փակագծում* (տե՛ս Գ. Յովսէփեան, նշուած աշխատութիւնը, էջ 251, 424): Պարզ է, որ այդպիսով նրանք իրենց վերաբերմունքն են ճշդել տունալ խնդրի նկատմամբ» (էջ 190, ծան. 15):

Մեր ընդդիմախօսը, «փաստացի» երեւալու համար, նաեւ էջերն է նշում: Այսպէս, Գ. Յովսէփեանը իր աշխատութիւնը վերնագրել է «Գլածորի բարձրագոյն դպրոցը կամ «համալսարանը», մասնագէտներին միանգամայն հասկանալի պատճառով «համալսարան» բառը վերցնելով չակերտների մէջ իր միջնադարեան ըմբռնմամբ, ըստ որում *ոչ միայն 251, այլեւ իրաքանչիւր էջում կրկնելով այդ վերնագիրը:* Լ. Խաչիկեանը, սկսած իր յօդուածի վերնագրից եւ ամբողջ շարադրանքում, առանց չակերտների ու մանաւանդ առանց փակագծերի, հետեւաբար եւ՝ առանց «*վերապահութեան*», օգտագործել է *Գլածորի համալսարան* (տե՛ս 423-450 էջերը) եւ *Գլածորեան համալսարան* (տե՛ս 428, 429, 443, 447 եւ այլ էջերը) համարժէք հասկացութիւնը հէնց այդ բառակապակցութիւններով: Իսկ ընդդիմախօսի մատնանշած էջում, ընդամենը միայն մի անգամ, այն էլ *մի քանի դպրոցների եւ Գլածորի առնչութեամբ*, փակագծում դրել է նրանց համարժէք «մակարդակների» համար *համալսարաններ* յոգնակի բառածելը: Բերենք այդ քաղուածքը. «Յովհաննէս Մարկաւազի Անիում հիմնադրած դպրոցը, Մխիթար Գօշի Նոր-Գեաղիկեան դպրոցը... Նրա աշակերտ *Վանականի, ապա Վարդանի, Ներսէսի, Եսայու եւ այլոց դպրոցները (համալսարանները)* հէնց այնպիսի հաստատութիւններ էին, որոնք տալիս էին երկրին թէ բարձրաստիճան հոգեւորական կադրեր եւ թէ կուլտուրական գիտական գործիչներ՝ «վարդապետներ»¹: Ի դէպ, հարկ է նշել, որ զրաւոր խօսքում փակագծի մէջ դրուածը նոյնպէս, *առանց վերապահութեան, ՀԱՄԱՐԺԷԶ է* արտայայտած իր բառիմաստին...:

Եւ, վերջապէս, Լ. Խաչիկեանի նոյն այս յօդուածում, առանց փակագծերի կամ չակերտների, Գլածորի մասին կարդում ենք. «... Գլածորեան համալսարանը ... յառնում է մեր առաջ որպէս ուսումնական մի հաստատութիւն, որ հիմնադրուած լինելով գերմաներէն լեզուով ամենահին համալսարանից (Պրագա) շուրջ ութսուն տարի առաջ, եւ համարեա հասակակից լինելով եւրոպական գիտական մտքի ամենահեղինակաւոր հաստատութիւններից մէկին՝ Փարիզի համալսարանին, *մրցում է նրա հետ իր կատարած կուլտուր-կրթական դերով, թէ՛ բողոքած մատենագրական հարուստ ժառանգութեամբ եւ թէ՛ դասաւանդուած գիտութիւնների բազմազանութեամբ ու խորութեամբ*»²: Այնինչ մենք մինչեւ անգամ չենք համարձակուել մեր գրքում, գերազնահատութեան զայթակղութիւնից խուսափելու համար, Գլածորի համալսարանի՝ եւրոպական համալսարանների հետ «մրցելու» յաւակնութիւն ունեցած լինելու մասին...:

Բայց մեր ընդդիմախօսը դեռեւս շարունակում է Գլածորի արժէքագրկման ու «ուչնացման» իր գիծը յամառօրէն առաջ տանել՝ գրելով. «Ուրիշ քանասերներ էլ «համալսարան»ը օգտագործելով, *յաւակնութիւնը չունեն այդ կատեգորիայով օժտելու մեր միջնադարեան այս կամ այն դպրոցը, որովհետեւ, թերեւս առանց բացառութեան (sic!), բոլոր հռչակաւոր դպրոցներն էլ այս կամ այն առիթով նրանց կողմից երբեմն կոչուել են «համալսարան», այսպիսով ընդգծելով դրանց ոչ անպայման «համալսարանական» աստիճանը, այլ «բարձրագոյն» բնոյթը*» (էջ 199, ծան. 15): Բայց մեզ թող մերտի հարցնել, որ այս պնդումներն անողը որեւէ արդարացում կարո՞ղ է ունենալ, երբ «Հայ ժողովրդի պատմութեան» բազմահատորակի Գ հատորում, իր իսկ գրած հատուածում, բազմիցս հարեւանցիօրէն Գլածորի համալսարանը յիշատակելիս, այն կիրառել է *առանց չակերտների*,

¹ Լ. Խաչիկեան, Գլածորի համալսարանը եւ նրա սաների առեմնախօսութիւնները, Համալսարանի ցիւ. աշխ. ժողովածու, 1946, հ. 23, 424:
² Նոյն տեղում, էջ 449-450:

առանց փակագծերի եւ առանց որեւէ վերապահութեան...»¹: Բայց եթէ կ'ուզէք՝ սա ընդհանրապէս քննարկման հարց էլ չէ ըստ էութեան. ուրիշները Գլածորի համալսարանը չակերտներ կան փակագծերի մէջ են առել, բայց մի այլ հայագէտ, իր տրամադրութեան տակ ունեցած փաստերի լիագործութեամբ այն անվերապահօրէն է կիրառել - յետոյ ի՞նչ...

Որ մեծամուն հայագէտ Գար. Յովսէփեանի պատմագիտական հարուստ ժառանգութիւնը իր փաստաքննական վերլուծութեան բնոյթով «բարերար ազդեցութիւն» է ունեցել հայ միջնադարի շատ մասնագէտների, այդ թւում է եւ տողերիս հեղինակի վրայ, անժխտելի է: Մակայն չի կարելի համաձայնուել գրախօսողի այն անհիմն հարցադրման հետ, որ, իբր, «Գլածորի պատմութեան, վիճակի եւ էութեան քաջիմաց բանասէրի՝ Գ. Յովսէփեանի «բարերար ազդեցութիւնը, թէն հիմնականում քօղարկուած (???)»¹, բայց շատ է (sic!) Լ. Խաչերեանի սոյն աշխատութեան վրայ...» (էջ 204, ծան. 19):

Մակայն մեր աշխատութիւնը զուգարելու դէպքում անաչառ ընթերցողը բացորոշ կը նկատի, որ ոչ մի ընդհանուր եզրեր չկան *ոչ կառուցուածքի, ոչ մեթոդալոգիայի ու հարցադրումների մեկնաբանման եւ ոչ էլ նպատակադրման տեսակետից* Գար. Յովսէփեանի աշխատութեան հետ: Էպիգոնութիւնը խորք է եղել եւ է՝ մեր էութեանը, այդ իսկ պատճառով հեղինակութիւնների առաջ ստրկամտութիւն չենք ցուցաբերել. այլ քննական հայեացքով, գիտական մեթոդալոգիայով, սկզբունքային շատ հարցերում տարամիտուելու ու նաեւ հակադրուելու ենք վատակաշատ հայագէտ Գ. Յովսէփեանի (եւ ոչ միայն նրա) հարցադրումներին ու կոնցեպտուալ բնոյթի հայեացքներին: Եւ հէնց այս հանգամանքը համարում ենք մեր աշխատութեան նաեւ կարեւորագոյն բարեմասնութիւններից մէկը...:

Մտանալով, որ «բանավիճային» իր յօդուածի սկզբում հաւաստել է, թէ «Խաչերեանը կատարել է ծառայուն որոնումներ», «փաստական առատ նիւթը հնարատրութիւն է ընձեռել, որ նա անդրադառնայ առնչակից զանազան հարցերի եւ յանգի դրական եզրակացութիւններին» (էջ 192), մեր ընդդիմախօսը ինքնահերքումով ւարտում է իր «քննախօսութիւնը»՝ գրելով հետեւեալ տողերը. «Հեղինակը սոյն աշխատութիւնը «բազմաստիճան հետազօտումների շնորհիւ» (էջ 5) լոյս ընծայելուց առաջ, պէտք է առնուած մի «աստիճան» էլ հետազօտելու ուսումնասիրուող նիւթերն ու հարցերը (sic!)»: Ապա վերցնելով մեր գրքից զլածորեան թեւատր մի խօսք, եզրափակում է պաթետիկ, բայց անվայելուչ եւ դարձեալ ոչ-ճիշդ հասցէագրումով. «Ինչքան ճիշդ են ասել դեռեւս Գլածորութիւն, «յամենայնէ անհմտանալ ոչ է պարտ, բայց սակայն գպիտանիսն յինքն ժողովել» (էջ 205): Կարծում ենք՝ մեկնաբանումները աւելորդ են...:

1. Գլածորի համալսարանի վերաբերեալ մեր Ուսումնասիրութիւնը կատարելիս սկզբում քննել ենք, փուլ առ փուլ, ուսումնագիտական այդ խոշոր կենտրոնի ստեղծման պատմութիւնը՝ ձեռագրական սկզբնաղբիւրների մանրակրկիտ հետազօտմամբ, անդրադառնալով ինչպէս նրա նախապատմութեանը, այնպէս էլ՝ յատկապէս նրա բուն իսկ գործունեութեանն ու ւարտին: Ըստ որում նախապէս քննութեան նիւթ ենք դարձրել աղբիւրագիտական, բանասիրական բնոյթի բոլոր հարցադրումները, որ վկայում ու թելադրում են ձեռագրական հաւաստումները Գլածորի համալսարանական յատկանիշների վերաբերեալ, ընդամին՝ համարելով

դրանք *պատմական խորք եւ պատուանդան* նրա համալսարանական գործունեութեան, եւ ոչ աւելին: Այդ մասին գրքի 71-րդ էջում տողատակի ծանօթագրութեամբ նաեւ զգուշացում ենք տուել: Ուստի մեր ընդդիմախօսը իրաւունք չունէր մինչ այստեղ քննարկուած ձեռագրական բոլոր վկայութիւնների առնչութեամբ ասելու, թէ Խաչերեանը դրանք «որոշիչ» հանգամանք է համարում Գլածորի համալսարանական բնոյթը հիմնաւորելու խնդրում... (էջ 196-197 եւ այլուր):

Վկայակոչելով նաեւ «Պատմա-բանասիրական հանդէս»ի 1965 թուականի համար 4-ում տպագրուած «Մատենագրական տեղեկութիւնները Գլածորի համալսարանի մասին» մեր յօդուածը, ընդդիմախօսը դարձեալ սեփական վերագրումները հասցէագրում է մեզ եւ ապա կրքոտութեամբ ... «ջրում» դրանք: Այսպէս, Մտեփանու Օրբելեանից կատարած քաղուածքի հետ բերում է նաեւ մեր խօսքերը. «Ի դէպ, եզրակացնում է Լ. Խաչերեանը, - քաղուածքում ասում է «Հայաստանեայց աշխարհի յոգնակի ձեռով (ընդգծումը մերն է - Փ.Ա.), իսկ այդ նշանակում է, որ նկատի է առնուած ինչպէս Արեւելեան Հայաստանը, այնպէս էլ Կիլիկիան Հայաստանը, ուրեմն Գլածորը հռչակում է համահայկական առումով»: Բայց ընթերցողի իսկ ներկայացրած սոյն մէջբերումը «մեկնաբանելիս»՝ «Մինչդեռ այդպիսի յոգնակի ձեռ» չկայ (էջ 198), - յայտարարում է նա: Թող ներուի մեզ հարցնել՝ «Հայաստանեայց» բառածելը «եզակի»՝ ձեռով է գործածուած...: Այնուհետեւ «մեկնաբանում» է մեր ընդդիմախօսը. «Հայաստանեայց աշխարհի» բառակապակցութեան մէջ վերջադաս ս-ն շատ իզուր շփոթուած է յոգնակի հայցական հոլովի ս ցուցիչի հետ (???)» Այն պարզապէս ս- ստացական յօդն է...», ապա անհասկանալի յատկանութեամբ՝ «Սա պարզագոյն բերականութիւն է ...» (էջ 198, ծան. 14):

Բայց չէ՞ որ մեր ամբողջ յօդուածում եւ իր իսկ բերած քաղուածքում ոչ մի խօսք, նոյնիսկ ոչ մի ակնարկ չկայ «իզուր շփոթուած» «վերջադաս ս հայցական հոլովի» մասին..., որ ահա մեր ընդդիմախօսը իրօք իր «պարզագոյն բերականական» գիտելիքներն է դրսեւորում՝ «հաւաստելով», թէ դա «պարզապէս ս-ստացական յօդն է»: Ի հիասթափութիւն իրեն պէտք է ասենք, որ և ձեռոյթը «Հայաստանեայց աշխարհի» բառակապակցութեան նախադաս որոշիչում գրուած է ոչ թէ «ստացական»ի, այլ դիմորոշ յօդի արժէքով, իսկ «ստացականութեան», յատկացման յարաբերութիւնը արտայայտուած է *հայց* բերականական ձեռոյթով ... *յոգնակիութեան* իմաստի հետ միասին:

Գիտական բանավէճ մղելու յատկանութիւն ունեցողը պէտք է առաջին հերթին, իբրեւ կարեւորագոյն նախապայման, փաստերի հետ ազնիւ եւ անաչառ վարուելու անհրաժեշտութիւնը սովորած լինի, որպէսզի չ'ընկնի ամէն անգամ անյարմար դրութեան մէջ...:

2. Գլածորի ուսումնագիտական բաժինների («Ֆակուլտետների») հարցը պարզաբանելիս, գրել ենք. «Առարկութիւն չի կարող վերցնել այն պնդումը, որ Գլածորի համալսարանի ամենաշնորհալի ուսումնականներից Յովհան Որոտնեցին, Տաթևի իր համալսարանը հիմնադրելիս, նրա ներքին կառուցուածքի նմուշը պիտի վերցնէր հէնց այն բարձրագոյն ուսումնական հաստատութիւնից, որտեղ իր ուսումնասիրութիւնն էր ձեռք բերել ինքը եւ որի նմանորութեամբ նա ստեղծում էր երկրորդը՝ աւելի ուշ շրջանում եւ պատմական տարբեր պայմաններում»¹: Երեւոյթը նոյնն էր նաեւ երապական համալսարանների առաջացման հարցում: Փարիզի համալսարանը

¹ «Հայ ժողովրդի պատմութիւն», 1973, ակադեմիական բազմահատորեակ, հ. 4, տե՛ս 437, 440, 441, 442 էջերը:

¹ Մեր աշխատութիւնը՝ «Գլածորի համալսարանը», էջ 96:

րանը դիտուել է շատ ուրիշ համալսարանների ծնող մայրը՝ այնտեղ սովորած անուանի գիտունների նախածոնությունները հիմնադրուած:

Իսկ մեր ընդդիմախօսը, պարզապէս հակաճառած լինելու համար, այս անգամ դիմում է մերկապարանոց *սովետություն*, պաթետիկ ձեռով հարց տալով. «Այսպէս որ գնանք, ո՞ր կը հասնենք: Չէ՞ որ մեր բոլոր անուանի գիտնական մատենագիրներն էլ «հետաքրքրությունների և մասնագիտական տարրեր քերումներ» ունեն: ... Ինչ վերաբերում է հեղինակի (իմա՝ Խաչերեանի - Լ.Խ.) շրջ հիմքին՝ նրա «ծննդաբանական» տեսութանը, այս առթիւ առաւել եւս օգտակար ասելիք չունենք (???), որովհետեւ գաղտնիք չէ, որ հին եւ միջնադարեան մեր շատ դպրոցներ յաջորդաբար, անուղղակի կամ ուղղակի, մէկը միւսի «ծնունդ են...» (195): Գիտական լուրջ հարցադրման լուծումը, ցատօք, վերացուեց ... զանշտի:

3. Աշխատութեան մէջ Գլածորի համալսարանական մակարդակը որոշելու հարցում, այո՛, վճռական նշանակութիւն ենք տուել այն ձեռնարկ-դասագրքերին, որոնք կիրառութիւն են գտել իբրեւ *այդպիսիք ուսումնագիտական այդ կենտրոնում*: Ադրիւրագիտական բնութեամբ եւ համապատասխան վկայութեամբ դասընթացների գիտական բնութագրումն ենք տուել միայն *այն բնագրերի, որոնք Գլածորի մատենադարանի ֆոնդին են պատկանելիս եղել եւ բացատրապէս այդ հիմքի վրայ լայն համեմատութիւններ ենք անցկացրել եւրոպական համալսարանների դասընթացքների հետ, ըստ որում առաջին փորձը կատարել գիտութեան մէջ յայտնի համալսարանական կրթութեան համար նախատեսուած «Եօք Ազատ Արուեստների» ուսուցման դասակարգումը տալու նաեւ Գլածորի համալսարանում: Բնական է, նման դիտանկիւնով քննարկման դէպքում մենք ոչ մի նշանակութիւն չենք տուել (եւ չենք էլ կարող տալ), թէ ձեռնարկ-դասագրքերը իբրեւ բնագրեր ե՞րբ են ստեղծուել մեր մատենագրութեան մէջ, աւելի վա՞ղ, թէ՞ համաժամանակեայ, «ժողկայքա՞ղ» են եղել, թէ ինքնուրոյն ստեղծագործութիւններ եւ այլն, թէ եւ դրանց վերաբերեալ ադրիւրագիտական ճշգրտումներ տալուց բնաւ չենք խուսափել: Բայց կարելի էր ենք համարել միայն այն, որ *քննարկուած ձեռնարկ-դասագրքերի ամբողջութիւնը միասնաբար կիրառութիւն գտնելով Գլածորի համալսարանում՝ համալսարգ են կազմել, հանդիսանալով նրա ուսումնագիտական ծրագրի հիմքը*¹:*

Մեր ընդդիմախօսը, վերջապէս «բարեհաճում» է արուած գիտափորձը գնահատել իբրեւ «որոշ առումով ոչ իզուր», բայց դա էլ ժխտելու համար իսկոյններ ատելացնում՝ «սակայն այս դէպքում էլ հեղինակը (իմա՝ Լ.Խաչերեանը - Լ.Խ.) իր բուն նպատակին չի հասել» (198): Եւ գիտէ՞ք ինչու: Աւելի լաւ է խօսքը տանք իրեն. «... յիշեալ խնդիրների առնչութեամբ իր (իմա՝ Լ.Խաչերեանի - Լ.Խ.) վկայակոչած փաստերը *նախագլածորեան սկիզբ ու կիրառութիւն ունեն*» (198-199): Եւ ապա՝ դարձեալ «գիջում» անելով՝ Լ. Խաչերեանի վերոնշեալ փաստարկման մէջ, *անշուշտ, ճշմարտութիւն կայ եւ այն ուշադրութեան արժանի է ընդհանուր առմամբ*», եւ էլ չարաբաստիկ հարցադրումը՝ «բայց ոչ միայն եւ ոչ առաջին անգամ Գլածորի պարագային...» (199): Յետոյ նորից «մոռանալով» գրածը՝ յայտարարում է. «նոր եւ համոզիչ ոչինչ չկայ» (193): Ստացում է տտրամաբանական ... կախարդանք, որից դժուար է գլուխ հանել:

Եւ ահա, իր սովորութեան համաձայն, թոյլ է տալիս նաեւ փաստական իրողութիւնների աղաւաղումներ՝ յայտարարելով. «Հետեւելով հեղինակի (իմա՝ Խաչերեանի - Լ.Խ.) տրամաբանութեանը, նշուած այդ «ձեռնարկ-դասագրքերին»

կարելի է ամենայն դիւրութեամբ ատելացնել հայ մատենագրութեան ուզածը յուշարձանը» (էջ 194): Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Խաչերեանի տրամաբանութեանը ճիշդ հետեւելու դէպքում՝ ո՛չ որի թոյլ չի տրուի թէկուզեւ մէկ մատենագրական յուշարձան ատելացնել Գլածորում դասատանդում դասագրքերի վրայ, բացի այդ համալսարանում կիրառութիւն գտածներից, ըստ որում՝ *պայմանով, որ վկայուած լինի յիշատակարանային համապատասխան հաւաստմամբ...:*

Բայց որպէսզի ընթերցողի աչքում առաջադրուած զլածորեան ձեռնարկ-դասագրքերի արժանահատութիւնը գցի, մեր ընդդիմախօսը մի «նուրբ» հնար եւս թոյլ է տուել իրեն կիրառել, յայտարարելով, թէ «կարելի չէ համաձայնել», որ «Եսայի Նչեցու թղթերը, համախօսականները, քարոզները եւ այլն» ծառայած լինեն «որպէս ուսումնական ձեռնարկ» (էջ 193-194): Բանն այն է, որ համալսարանի «տեկտոր» Եսայի Նչեցու «թղթերը, համախօսականները, քարոզները» մենք *բնաւ չենք համարել եւ չենք էլ ներկայացրել ընդդիմախօսի մատնանշած՝ «Համալսարանական դասընթացներն ու ձեռնարկ-դասագրքերը»* (98-131) գլխում, այլ դրանց մասին խօսք է ասուել՝ «Համալսարանի դասախօսական կազմը» գլխում, երբ խորաքննչիւր Ուսուցչապետի, այդ թում եւ Նչեցու, կեանքն ու գործունէութիւնը ուրուագծելիս, մեր որդեգրած սկզբունքի համաձայն, միաժամանակ բնութագրել ենք նաեւ նրանցից *խրաքննչիւրի մատենագրական վաստակը որպէս... ժառանգութիւն*: Այսքան միայն: Իսկ կոնկրետ խնդրոյ առարկայ «թղթերի», համախօսականների եւ քարոզների մասին թուարկում է արուած գրքի ... 147-րդ էջում:

5. Մեր դպրութեան տեսութեան մէջ առաջին անգամ փորձել ենք սոյն գրքում գիտական մշակման ենթարկել ուսումնագիտական տերմիններն ու մակդիրները, որոնք կիրառութիւն են գտել միջնադարի հայ իրականութեան մէջ, ընդհանուր աղերսների մէջ դնելով դրանք այդ ժամանակաշրջանի *եւրոպական համալսարանական դպրութեան ուսումնական կեանքի որոշում շրջանառութեան մէջ եղած նոյնաբնոյթ տերմին-մակդիրների հետ, հաւաստելով դրանց ընդհանրական բնոյթը*: Սա սկզբունքային եւ ելակէտային նշանակութիւն ունեցող հարցադրման նորովի հետազօտումն էր, որով հնարատր կը լինէր բացայայտելու եւ պարզելու ուսումնագիտական յարաբերութիւններն ու նորմերը ինչպէս ընդհանրապէս հայ իրականութեան մէջ, այնպէս էլ ի մասնաւորի Գլածորի համալսարանում: Ըստ որում Գլածորի համալսարանի առնչութեամբ մեր մատենագրութեան մէջ գործածուած ուսումնագիտական տերմիններն ու մակդիրները բննել ենք յունարէն, լատիներէն եւ եւրոպական լեզուներում կիրառուած եւ մեր կողմից վերհանուած համապատասխան տերմին-մակդիրների զուգադրմամբ: Այս առթիւ գրել ենք. «Ի դէպ՝ նկատենք, որ նման մակդիրները ... միջնադարի համար ընդհանուր բնոյթ են ունեցել եւ լայն կիրառում գտել նաեւ Եւրոպայի ուսումնագիտական միջավայրում, վերագրելով ականատր գիտնականներին եւ ուսումնականներին՝ ի նշան նրանց կատարած իմացական որոշակի փաստակի կամ ծառայութիւնների ճանաչման: Այլ կերպ ասած՝ դրանք նոյնպէս իրենց ժամանակաշրջանի հայ ուսումնագիտական կեանքի նորմերից բխող բնութագրումներ են, ինչպիսիք որ գոյութիւն ունեն նաեւ ժամանակակից գիտական աշխարհում՝ միայն տարրեր կոչումներով ու տարրեր բովանդակութեամբ»¹:

Մեր ընդդիմախօսը, չհասկանալով կամ չուզենալով հասկանալ մէջբերուած քաղուածքի բուն նկատառումը, դարձեալ աղաւաղում է մեր միտքը. «Տեսնելով, որ,

¹ Տե՛ս նոյն տեղը, էջ 98-131:

¹ Նոյն տեղում, էջ 61:

այնուամենայնի, այս կարգի փաստերը շատ են եւ հին (???)¹, Լ. Խաչերեանը հարկադրուած խոստովանում է (sic!), թէ «դրանք (իմա՝ գովաբանական մակդիրները - Փ.Ա.) միջնադարի համար ընդհանուր բնոյթ են ունեցել» (197), եւ ահա նորից յօդուածագրի միեւնոյն յանգեքզը՝ «սակայն մոռանում է (???)², որ դրանք եւս, իբրեւ այդպիսին, կարող են դիտուել որպէս հաւասարագօր փաստեր նաեւ *մայասգլաճորեան բարձր տիպի դայրոցների մակարդակը գնահատելիս*» (197):

6. Մեր ընդդիմախօսը գրքում քննարկուած ատենախօսութիւնից մի քաղուածք մէջբերելով, որով վկայում է ներկայութիւնը հանդիսութեանը ինչպէս վարդապետների, այնպէս եւ համալսարանական շրջանաւարտների, որոնք ձգտում են ուսումնագիտական աստիճանի, գրում է. «Բանը ընդամենն այն է, որ այստեղ շփոթուած է եւ անճանական դերանուան հասցէատերը, եւ ստեղծուած այս ողջ, թող ներուի ասել, *գեղարուեստական քիւրիմագութիւնը* (sic!): Այդ հասցէատերը ոչ թէ «ղեռես աստիճան հայցողի վիճակում գտնուող» ատենախօսն է, այլ «առաքեալների կաճառում» հանգչելու ենթակայ նոյն ինքն դասախօսը, որովհետեւ ... «ախաւասիկ եւ եւ մանկունք իմ, գոր ետ ինձ աստուած» քաղուած են Պօղոս սառաքեալի «Առ Եբրայեցիս» գրած թղթից (զլխ. Բ, 13), այդ իսկ պատճառով ձեռագրում դրանք *յապաւում մու կիսատ են գրուած*՝ որպէս քաջ յայտնի խօսքեր նման շրջանակների համար: ... Մոյնով անարկում է այն, թէ Զրիստոսը, «*շնորհօրն աստուծոյ՝ ընդունելով մահը, դրանով «բազում որդիս փրկութեան ու փառքի» առաջնորդելով եւ ներկայանալով աստծուն իր «փրկած որդիներին» հետ միասին, սրտի գոհունակութեամբ արտասանել է այդ նոյն խօսքերը* (Թուղթ առ Եբրայեցիս, զլխ. 3, 9-14)» (էջ 204-205):

Նախ՝ ընթերցողին յիշեցնենք, մեր գրքից բերուած քաղուածքը վերաբերում է տեսական այնպիսի լուրջ հարցի մեկնարանմանը, թէ որպիսի՞ն է եղել *Գլաճորի համալսարանում ընդունումը եւ կիրառութիւնը գտած ուսումնագիտական աստիճանատրման կարգը*, ուստի անհրաժեշտ էր պարզել, թէ ինչպիսի՞ հանդիսատեսութեան պայմաններում էր կատարում այդ, ի՞նչ բովանդակութիւն եւ կառուցումը ունէին շրջանաւարտների արտասանած ատենախօսութիւնները, ըստ որում՝ «թեզերի» պաշտպանութիւնը կատարում էր «վարդապետական աստիճան ստանալուց առաջ, թէ՞ յետոյ, որը եւ գիտականօրէն ապացուցելու՝ համար հարկատր էր ճշգրտել նաեւ ատենախօսի *իրավիճակը*: Հետեւաբար՝ մեզ *բնաւ չէր կարող հետաքրքրել եւ հիմա էլ չի հետաքրքրում*, թէ «ախաւասիկ եւ եւ մանուկ» թէկուզ եւ «յապաւում» արտայայտութիւնը իր «աղբիւրի» տեսակետից, պատահաբար թէ իրօք, որտեղի՞ց է վերցուած, ոչ էլ առաջադրած մեր հարցադրման հետ որեւէ վերաբերութիւն ունի այն «բացատրութիւնը», որ տալիս է մեր ընդդիմախօսը: Եւ վերջապէս միջնադարի տեսական հարցերի մշակման բնագաւառում (եւ ոչ միայն միջնա-դարի) պէտք է կարողանալ տարբերել առաջնայինը երկրորդայինից, բալլաստը՝ ռացիոնալ հատիկից, որպիսի մօտեցումը միայն գիտութեան համար նշանակութիւն ունի: Իսկ տուեալ դէպքում, կարծում ենք, մեզ յաջողուել է քննական հայեացքով բացայայտել այն իրողութիւնը, որ իրօք երկու կարգի մասնակիցներ են եղել հանդիսատեսութեան պայմաններում ուսումնագիտական աստիճանի շնորհմանը, այն է՝ ա) արդէն իսկ վարդապետական աստիճանում «հաստատուած» վարդապետներ եւ բ) դրան ձգտող *շրջանաւարտներ*, որոնք ատենախօսութիւններ պէտք է կարդան՝ ստանալու համար «վարդապետական աստիճանը»: Այ սա՛՛ է կարելուորը:

Չենք ժխտում՝ մեր ընդդիմախօսն աստուածաբանական դոգմաների իմաստութեան հարցում «ամբոցելի» է մեր նկատմամբ¹, եւ այդ իսկ պատճառով կարող է «մեղադրել» պատահական գուզադիպութեամբ «երեք բառի» սկզբնաղբիւրը մեր «չգիտենալու» համար... Բայց դա բնաւ հիմք չի կարող տալ նրան յայտարարելու, թէ Խաչերեանը «շփոթել» է ատենախօսութեան «հասցէատիրոջը», այն է՝ դասախօսին՝ շրջանաւարտի տեղ ... ընդունել, «ստեղծելով», իբր, «գեղարուեստական քիւրիմագութիւն»...: Ուստի հարկադրուած ենք դարձեալ ճշմարտութիւնը վերականգնելու համար դիմել նոյն ատենախօսութեան այլ վկայութիւններին.

«... Բայց առ թեզ են բանք իմ, ով այրող աստուծոյ եւ այր ցանկութեանց հոգոյն սկիզբն եւ կատարած իմոց բանից..., ո՛վ *անհամեմատոյ յամենիսեան...*, *բայց գմինն միայն կարացից ասել՝ զգոթ հայրական խնամոցոյ առ որդիացեալքս բո՞*»²:

«... Արդ, եւ վերջացեալս յամենայնի այսբան բարեացս, *զի՞նչ տաց փոխարէնս, մանաւանդ թէ եւ բանից իմաստութեան զի՞նչ հատուցից. ոսկի՞ արդեալք կամ արծաթ՞ կամ ական պատուակա՞նս. հիւք յերկրէ, որ երկրաւորացս է սիրելի: Ո՛չ գայս, վասն զի անհամեմատ է իմաստունն գայս բանին. իսկ եթէ գրանս՝ սակայն եւ գայս ի թէն ընկալայ: Արդ, ոչ գոյ իմ, անկ է, զի կշռեցից զգին այս գանձիցս գոր ստացա՞նք*...»³:

Արուած հաւաստումները այնքան են պերճախօս եւ աներկմիտ, որ մեկնաբանութիւն չեն պահանջում հասցէատիրոջ՝ ճառախօսի «շրջանաւարտ» (եւ ոչ թէ՛ դասախօս) լինելու մասին. ընդամենն՝ սրանք խնդրոյ առարկայ մեր քաղուածքի անմիջապէս նախորդող տողերն են...: Այս բոլորից յետոյ չարամիտ չէ՞ նրա անհիմն եւ մանաւանդ անպատասխանատու ամբաստանութիւնները. «Բայց խնդիրը, միայն սոյն խօսքերի՝ ձեռագրում առկայ 3 բառի ... սխալ ընթերցումը եւ նրանց սկզբնաղբիւրը չգիտենալը չէ, այլ այն, թէ ինչպէս չեղած տեղը ինչ «չափազանց բնութագրական եւ բազմախոստում» վկայութիւններ կարող է յայտնաբերել եւ ինչ չափազանցուած եզրակացութիւնների կարող է յանգել Լ. Խաչերեանը, եթէ միայն ուզենա (sic!)» (էջ 204-205):

7. Մեր քննադատը անդրադարձել է նաեւ հայագիտութեան մէջ արժարժուած՝ Թանահատ - Գլաճոր նոյնացման վարկածի շուրջ ծաւալուած թեր ու դէմ կարծիքներին: Նա յայտարարում է. «Մեզ համոզիչ չի թուծ նաեւ Լ. Խաչերեանի տեսակետը Գլաճորի համալսարանի տեղադրութեան վերաբերեալ (էջ 200): Գա նրա գործն է: Եւ ապա բացականում՝ «ո՛ր է այդ Աղբերց վանք համալիրը, ո՛ր են նրա թէկուզ աներակները» (էջ 201). Իսկապէս մի առեղծուած, որ, սակայն, դեռեւս ոչ թէ Խաչերեանը, այլեւ ընդհանրապէս հայագիտութիւնը չի լուծել՝ սպասելով ստոյգ եւ վաւերական յայտնաբերումների: Իսկ այն փորձերը, որ արուել են առ այսօր, այդ թում նոյնիսկ «ենագիտական պեղումների» բնոյթի, տակաւին հաւաստի արդիւնքների չեն յանգել, որքան էլ մեր ընդդիմախօսը պնդի. «XIII-XIV դարերում կառուցուած կամ գործած ոչ մի վանք անյայտ ու անհետ չէ կորած, չէր կորչի, մանաւանդ, Գլաճորի նման մի ամբողջական համալիր» (էջ 201):

¹ Շանօք. երկար ժամանակ, նախքան Մատենադարան տեղափոխուելը իբրեւ գիտաշխատող, ապա՝ գիտ. քարտուղար, Փ. Անթրեանը եղել է, որպէս «ամենափոստահելի անձ», Ամենայն Հայոց Կազմէն կարողիկոսի գաւազանակիրը... իսկ կրօնական աստիճանով՝ եպիսկոպոս - Լ.Ն.:

² Մատենադարանի ձեռ., համար 734, p. 139ա:

³ Նոյն տեղում:

Սկզբում յայտարարելով, թե ինքը համաձայն չէ Խաչերեանի դիտողություններին, երբ վերջինս մերժում է Ի. Ղարիբեանի հնագիտական բռնածիզ «փաստարկումները» յօգուտ «Թանահատ - Գլաձորի համալսարան» նոյնացման վարկածի (էջ 201), առաջարկում է այն «դրոյթը», թե իբր, «եթե ոչ հենց սկզբից ետք, ապա կարճ ժամանակ յետոյ (այստեղ մասամբ մահանջելով Ի. Ղարիբեանի պահանջից - Լ.Խ.) *Գլաձորի դպրոցն այստեղ՝ Թանահատում է շարունակել գործել...*» (էջ 203): Այնուհետև, տեսնելով, որ ծայրը ծայրին չի հասցնում եւ «զույս չի հանում», ճարահատ խոստովանում է. «Անտարակոյս, դժուար է (???) փաստերի այսօրուայ դրութեամբ անվերապահ համաձայնել այս դրոյթին» (այսինքն իր իսկ վերոյիշեալ առաջարկութեանը - Լ.Խ.) (էջ 203): Բայց չէ՛ որ մենք էլ հենց դա ենք ասել մեր գրքում (էջ 15, 15 17, 18 եւ այլուր), ուրիշ ոչինչ: Մակայն դա չի խանգարել, որ մեր ընդդիմախօսի էլի յայտարարի՝ «բայց որ դա (իմա՝ Թանահատ - Գլաձոր նոյնացումը - Լ.Խ.) *հաւանական (sic!), աւելի շօշափելի, աւելի իրական ու փաստական (???) է, քան Լ.Խաչերեանի պնդումը, կարելի չէ կասկածել (???)*: Այդ ինչպէ՛ս է «հաւանականը» նաեւ «աւելի իրական ու փաստական է...»: Հաւանականը, այնուամենայնիւ, մնում է հաւանական...:

Քննարկուող մեր աշխատութեան մէջ վկայութիւն ենք բերել նաեւ Ստեփանոս Օրբելյանից Թանահատի սոսկ հոգեւոր-կրօնական կենտրոն լինելու վերաբերեալ: Վերջինիս հաւաստմամբ՝ հնագոյն ժամանակներից Թանահատի միաբանները եղել են «մշտապաշտօնը», այսինքն յարատեւ՝ գիշեր ու գօր աղօթողներ ու ճգնողներ, որոնք ծայրահեղ ոգեշնչմամբ կրօնական ինքնագրկումների ենթարկելով իրենց՝ նոյնիսկ թան խմելուց ինքնակամօրէն հրաժարուել են, որի պատճառով իրենց հոգեւոր կենտրոնն էլ ճանաչում ու տարածում է գտել իբրեւ «Թանահատի վանք» կամ պարզապէս «թանահատ», այսինքն՝ թանից կտրած... (տե՛ս մեր աշխատ., էջ 16): Բերել ենք նաեւ մատենագրական փաստեր նրա զուտ կրօնական բնոյթ ունենալը հաւաստող՝ արձանագրելով միաժամանակ, որ ընդամենը 3-4 ձեռագրերի ընթացիկութիւններ են մեզ հասել այդտեղից, ըստ որում «*դրանցից եւ ո՛չ մէկը ուսումնական ձեռնարկ-դասագրքի բնոյթ չի ունեցել*»¹:

Այնուհետև ընդգծել ենք նաեւ, որ նրա զուտ կրօնական բնոյթի որոշման խնդրում ծանրակշիռ եւ առարկայական այլ փաստեր են մատակարարում հենց Երեսանի Պետական համալսարանի Հայ ժողովրդի պատմութեան ամբիոնի կատարած պեղումները, որոնք, հակառակ արուած աղբիւրագիտական տեսակէտից անյարիր եւ անհամոզիչ հետետախնդրի, միանգամայն ապացուցում են *Թանահատի կրօնական միաբանութեան բնոյթը եւ բացառում Գլաձորի համալսարանի հետ նոյնացման դոյզն հնարատրութիւնն իսկ*²: Փաստերով ցոյց ենք տուել, որ Թանահատում գտնուած շիրմաքարերի վրայ մակագրուած անունները միայն պատահական զուգադիպութեամբ համընկնում են Գլաձորի համալսարանի ուսուցչապետներից ոմանց անունների հետ, ընդ որում նրանց կենսագրական տուեալները հակասութեան մէջ լինելով վերջիններիս կեանքի ու գործունէութեան հետ: Իբրեւ հերքող ծանրակշիռ փաստ մատնանշել ենք այն իրողութիւնը, որ Թանահատում հանգչողները բոլորն էլ «սոսկ քահանաներ» լինելով, չէին կարող ենթադրուել իբրեւ Գլաձորի համալսարանի հոչակատր ուսուցչապետներ...:

Այս առթիւ մեր ընդդիմախօսը, առարկելով մեզ, գրում է. «Ասել (???)» որ այդ անունների տէրերը «սոսկ քահանաներ» են, բացառել նրանց վարդապետ եւ րաբունի լինելը (???)» ըստ այդմ էլ յայտարարել, թե «Թանահատից վանքը ի հակադրութիւն Գլաձորի, «բացառապէս հոգեւոր կենտրոն» է, նշանակում է ցուցաբերել առնուազն անգիտութիւն եւ պատմական փաստերին տալ բռնագրօսիկ, «շուտ տուած» մեկնաբանութիւն (sic!)» (էջ 201-202):

Ընդէնք դարձեալ «հասցէների շփոթման» մի հարց եւս. ոչ թէ մենք ենք «ասում» Թանահատում թաղուածների քահանայ լինելը, այլ՝ ... շիրմաքարերի մակագրութիւնները, որոնք լուսապատճենուած նկարահանմամբ նաեւ տպուած են «Բանբեր Երեսանի համալսարանի», 1971, Թ. 2ում, 254-256 էջերում: Երկրորդ՝ իրօք «անգիտակութիւն» ու «պատմական փաստերի» կոպիտ ոտնահարում է, երբ առաջարկում է «քահանաներին» ընդունել նաեւ «վարդապետի» կամ «րաբունու» տեղ...: Մինչդեռ միջնադարի վիճազրութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ *քահանան* բացառապէս իբրեւ «քահանայ» է թաղուել եւ ըստ այսմ յիշատակուել, *վարդապետը* «վարդապետ», *եպիսկոպոսը* «եպիսկոպոս», *կաթողիկոսը*՝ «կաթողիկոս» համապատասխան իրենց կոչումների, եւ ո՛չ թէ, ինչպէս կարծում է մեր ընդդիմախօսը, քահանան ... բողոքի փոխարէն: Բաւարարուենք տապանաքարերի վրայ եղած քահանայի եւ վարդապետի *տարբերակուած* մակագրումների բազմաթիւ ու անհամար վկայութիւններից մի երկու փաստի առաջումով. «Այս է հանգիստ Ս(ար)գիս բի» (իմա՝ քահանայի)¹: «Դաւիթ *p(ահանայ)*»²: Բայց եւ՝ «Հար մեր Դաւիթ *v(արդ)ապետ* Քոբայրեցո է տապանս, յիշեալ ի տ(է)ր սուրբս»³, «Սարգիս *v(արդ)ապետ* է Գեղամեցի Չի (1271)»⁴: Իսկ ուսուցչապետը հենց որպէս «րաբունապետ» մակագրութիւնն է ունեցել իր տապանաքարի վրայ. «Ձերջանիկ րաբունապետն Հայրապետ, Նորոզող այսմ ուխտի, յիշեցէք. թվին: ՉԼԹ» (1290թ.):

«Ի ՅԱՅՍ ՏԱՊԱՆ ԲՆԱՐԱՆԻ
ԿԱ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՆՇԽԱՐ ՄԵԾԻ
ՆԵՐՄԷՍԻ ԲԱԲՈՒՆԵԱՑ ՊԵՏԻ...»⁵:

Սեյիմի կարավանատան վիճակական արձանագրութիւնում, որ հասել է մեզ 1332 թուականից, Գլաձորի համալսարանի «ուկտորը» իրեն յիշատակել է տուել որպէս «ԲԱԲՈՒՆԱՊԵՏ ԵՍԱՆ...»⁶:

Չնայած այս բոլորին, այնուամենայնիւ մեր ընդդիմախօսը գրում է. «Լ. Խաչերեանը պէտք է գիտենար նաեւ, որ «սոսկ» կամ «պարզ» քահանաներին, այն էլ՝ ոչ թէ մէկին կամ երկուսին բացառապէս, այլ որպէս օրէնք՝ բոլորին ... վանքերում, մանաւանդ «աւանդատներում», թաղելը օրինաչափ չէ. կանոնագիտութեան տեսանկիւնից նոյնիսկ օրինական էլ չէ (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Ա, 1964, էջ 380-381), ուր ասուած է. «Եւ որպէս եղեւ անառակ սովորութիւն քահանայից եւ նոցին կանանց՝ գերեզմանս առ եկեղեցիս առնել եւ տեղիս սրբութեան, յայսմհետ մի՛ իշխեսցեն առնել, այլ ժողովրդականացն հանգստարանս տեղիցին եւ քահանայիցն հանգստարանք...» (էջ 202, ծան. 18):

¹ Մեր «Գլաձորի համալսարան» աշխատ., էջ 96:
² Տե՛ս նոյն տեղում, էջ 15, 17, 18 եւ այլուր:

¹ Կ. Ղաֆաղարեան, Մանասիի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Երեսան, 1957, էջ 174:
² Նոյնի՝ Հաղբատ, Երեսան, 1963, էջ 535:
³ Նոյն տեղում, էջ 234:
⁴ Ս. Բարխուդարեան, Դիւան հայ վիճագրութեան, պրակ 2, էջ 124:
⁵ Նոյն տեղում, էջ 36:
⁶ Նոյնի երրորդ պրակը, էջ 177-178:

Իսկապես տարօրինակ տրամաբանություն. ինչո՞ւ պետք է կշտամբել Խաչերեանին «գիտենալու կամ չգիտենալու» մէջ՝ այն դէպքում, երբ ընդդիմախօսի առարկությունը, իրականում, դարձեալ ու նորից անողոք փաստի դէմ է...: Երկրորդ՝ մի՞թէ կանոնական ձևակերպումը *ինքնին չի՞ վկայում քահանաներին վանքերում քաղելու յաճախում փաստերի առկայությունը միջնադարում*: Այո՞, հէնց այս իրողությունը առաւել եւս հաստատում է, անկախ մեր ընդդիմախօսի ցանկությունից, որ «անառակ սովորութեան» համաձայն Թանահատում քաղումը քահանաները չէին կարող Գլածորի համալսարանի հոշակատր ուսուցչապետները լինել:

Թում է, թէ առարկել չի լինի մեր ընդդիմախօսին հոգեւոր նուիրապետութեան «Ֆունկցիոնալ» հարցերում. այդ ինքնավստահութեամբ էլ գրում է. «Թիրիմացութիւնը թխում է ընդհանրապէս «քահանայ» անուան հասկացութեան եւ «քահանայ»-ի ֆունկցիայի ոչ-միջնադարեան վիճակը նկատի ունենալուց, նրա կանոնական նուիրապետական, միջնադարեան-փաստական ընկալմանը անտեղեակ լինելուց... «Քահանայ» կարող են կոչուել նաեւ վարդապետական աստիճան ունեցող հոգեւորականները» (էջ 202, ծան. 18):

Ինչպէս նկատելի է, ընդդիմախօսի ձգտումն է՝ ամէն կերպ *համահարթել* քահանայի եւ վարդապետի տարբերությունը միջնադարում: Բայց ոչ այլ ոք, քան մեծամուն հայագէտ եւ միաժամանակ *կաթողիկոս* Գար. Յովսէփեանը *նկատել* եւ *ընդգծել* է այդ տարբերությունը՝ հաւաստելով այն իրողությունը, որ տարբեր հասկացություններ են եղել միջնադարում «նուիրապետական կազմակերպությունը», որին ծառայում էր քահանան, եպիսկոպոսը, կաթողիկոսը, եւ վարդապետարանը, որին ծառայում էր վարդապետը (երոպական դպրութեան մէջ՝ «դոկտորը», «մագիստրոսը»): Պոռչին *«չյաջողութեց եկեղեցական անկախ եպիսկոպոսութիւն հիմնել Վայոց ձորի իւր մասի համար, - գրում է նա, - որովհետեւ դա կապուած էր նուիրապետական կազմակերպութեան եւ աւանդութեան հետ, բայց ոչ որ չէր կարող արգելք լինել այնտեղ մի վարդապետարան-մտաւոր կեդրոն ստեղծել եւ այսպիսով իր իշխանութեան այս կողմից առանձին փայլ տալ. որովհետեւ դպրոցը վարդապետի անձի հետ էր կապուած, երբեմն եւ անկախ հոգեւոր իշխանութեան կամ նուիրապետութեան կամքից»*¹: Նոյն տարբերակումը եղել է նաեւ միջնադարեան Երոպայում:

Բացի դրանից. Լ. Խաչիկեանի նշում յօդուածում «վարդապետը» ճիշդ կերպով բնութագրուել է իբրեւ ամենագիտուն մարդը միջնադարում՝ ի տարբերություն ոչ միայն քահանայի, այլեւ՝ եպիսկոպոսի եւ, մինչեւ իսկ՝ կաթողիկոսի²: «Միսիքար Գօշը ... սոսկ վարդապետ էր», - գրում է հեղինակը, - «նոյնպիսի մի վարդապետ էր, առանց եկեղեցական որեւէ պաշտօնի, ԺԳ դարի խոշոր մատենագիր եւ քաղաքական գործիչ Վարդան Արեւելցին»³: Լ. Խաչիկեանը հայկական եկեղեցու «*խղճութեան կամքի անտարբեր ինստիտուտ*» է համարում վարդապետարանը⁴:

Հարկ է նշել, սակայն, որ քննարկուող աշխատութեան մէջ մեզ յուզել է առաւելապէս հարցի ոչ թէ «նուիրապետական», այլ՝ ուսումնագիտական կողմը: Սկզբնաղբիւրների հարուստ փաստերի ու վկայությունների հիման վրայ եւ Գլածորի համալսարանի սաների իրավիճակի քննութեամբ պարզել ենք, թէ ինչպիսի կրթու-

թիւն ստացողներն էին ընդունում այնտեղ եւ որքան էր ուսումնառութեան տեսողութիւնը՝ *ինչպիսի՞ կրթական ցենզ ձեռք բերելու ձգտումով*: Այս առնչութեամբ անհերքելի եւ վաւերական սկզբնաղբիւրներով հաւաստուել է, որ Գլածորի համալսարան ընդունողները երեքամեայ նախնական կրթութիւն ստացած «սոսկ քահանաներ» են եղել 17-18 տարեկան հասակի, եւ Գլածորի համալսարանում 7-8 տարի սովորելուց յետոյ աւարտել են՝ «վարդապետի» որակատրումով: Այս առումով, մատենագրական վկայությունների իսկ թելադրանքով, որոշել ենք «քահանայի» կրթական ցենզը որպէս «թերուս» գիտելիքների տէր սուրբիկտի, որի մասին հաւաստել է նաեւ ոչ այլ ոք, քան մեծ ուսուցչապետ Ներսէս Շնորհալին. «... Աստուածային օրէնքն պահանջեն ի քահանայից ... գեկեղեցական գիրս ուղիղ ընթերցում, եւ զմանր ուսմունս ձայնաւորացն պաշտել յեկեղեցիս, եւ ապա զայ ի ձեռնադրութիւն քահանայութեամբ»: Այս եւ բազմաթիւ այլ նոյն բնոյթի փաստերից ու վկայություններից յետոյ, որ բերուած են մեր աշխատութիւնում՝ ընդդիմախօսը դեռ յամառում է պնդել, թէ, իբր, «հիմքից զուրկ տեսութիւն ենք զարգացրել» (էջ 202, ծան. 18) քահանայի եւ վարդապետի մասին...: Տարբերությունների համահարթման ու ջնջման միտումը ծայրայեղութեան հասցնելով՝ անտրամաբանական մի յայտարարութիւն եւս է կատարում ընդդիմախօսը. «Յիշեցնենք նաեւ, - գրում է նա, - որ անգամ եկեղեցու գերագոյն պետերը՝ կաթողիկոսը եւ Հռոմի պապը «քահանայապետ»ներ են» (էջ 202, ծան. 18): Ի՞նչ է, նշանակո՞ւմ է, որ նրանք նոյն կարգազիճակն են ներկայացնում...: Ինչպիսի՞ միամտութիւն: Գիտութեան համար, ինչպէս յայտնի է, կարելի են ոչ թէ այսօրինակ «համահարթման» նկրտումները, այլ երեւոյթների *խորքային՝ էութեանական տարբերակիչ յատկանիշների բացայայտումն ու զննահատումը*:

Ահա սրանք են *բոլոր* այն «առարկությունները», որ յարուցել էր մեր դէմ Փ. Անթաթեանը, եւ որոնց պատասխանեցինք մէկ առ մէկ: Գիտական բանավեճերը նրա համար են, կարծում ենք, որ հնարաւորութիւն ընձեռեն արժարժուած հարցերի շուրջ յանգելու առաւել խոր ու ճշմարտացի բացայայտումների եւ հետետօթիւնների՝ նպաստելով գիտական մտքի բեղմնաւորմանն ու առաջընթացին: Մակայն Փ. Անթաթեանի յօդուածը հազիւ թէ բնութագրուի մնաց յատկանիշներով:

«Բանքեր Երեւանի համալսարանի»,
1975թ., համար 3:

¹ Գար. Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, մասն Բ, Երուսաղէմ, 1944, էջ 106:

² Լ. Խաչիկեան, նշում յօդուածը, էջ 424:

³ Նոյն տեղում, էջ 423:

⁴ Նոյն տեղում, էջ 424:

¹ Ընդհանրական Թուրք սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1971, էջ 59:

ԻՆՉՊԵՍ ՉՊԵՏՔ Է ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՅԱԾՐՈՐԱԿ
ՏԵՔՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԲՆԱԳՐԱԳԻ-
ՏԱԿԱՆ ԱՆՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՄԲ, Կամ՝
ԳՕՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՉԱԽՈՂՈՒԱԾ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ¹

Մատենագրական Յուշարձաններից իր հասարակական հնչեղությամբ ու նշանակությամբ յոյժ կարեւորութիւն ունեցող իրաւաբանական երկ է Մխիթար Գօշի Դատաստանագիրքը: Հարիւրամեակներ շարունակ այն մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի հասարակական կեանքում՝ ինչպէս բնաշխարհում, այնպէս էլ գաղթօջախներում: Նրանում պարփակուած իրաւանորմերի ամբողջութիւնը արտացոլում է Հայաստանի աւատական հասարակարգի սոցիալ-իրաւաբանական-քաղաքական-տնտեսական յարաբերութիւններն իրենց զօշեան գնահատմամբ: Այդ իսկ պատճառով Գօշի սոյն աշխատասիրութիւնը իր ընձեռած փաստական հարուստ տեղեկութիւններով ու մեկնաբանումներով կարեւորագոյն սկզբնաղբիւր է Հայաստանի աւատական հասարակարգի համակողմանի ու խորաքննիչ ուսումնասիրման համար: Ուստի այդ սկզբնաղբիւրի հետազօտական նշանակութիւնը խորապէս զգում են ոչ միայն իրաւաբանները, այլեւ հասարակագէտները, պատմաբանները, ազգագրագէտները, դպրութեան տեսութեամբ զբաղողները, աղբիւրագէտները, մի խօսքով՝ հայագէտներն առհասարակ:

Լինելով հասարակագիտական ընդգրկման մեծ շառաիղով եւ ծանրակշիռ արժէքով օժտուած մատենագրական Յուշարձան՝ Գօշի Դատաստանագրքի ակադեմիական հրատարակութիւնը գիտական բարձր կատարողականութեամբ վաղուց հասունացած անհրաժեշտութիւն էր, որին անձկութեամբ սպասում էր հայագիտութիւնը, մանաւանդ, երբ արդէն իսկ Վ. Բաստամեանցի շուրջ մէկ հարիւրամեակ առաջ գիտական մեծ բարեխղճութեամբ իրագործած առաջին եւ միակ հրապարակումը դարձել է գրադարանային հազուագիտ գիրք նոյնիսկ մասնագէտների համար: Այս եւ այլ հանգամանքներ առաջադրում են Գօշի Դատաստանագրքի ամէն մի նոր հրատարակութեան խստագոյն պահանջկոտութիւն՝ *գիտականութեան* եւ *բանասիրական հմտութեան* երկեակ առումներով:

Վերջերս Խ. Թորոսեանի աշխատասիրութեամբ լոյս տեսաւ Մխիթար Գօշի Դատաստանագիրքը՝ բնագրային երկու տարբերակներով, կազմողի Առաջաբանով եւ Ծանօթագրութիւններով²: Մակայն խոր ափսոսանքով պիտի խոստովանել,

¹ Ի դէպ, մեր սոյն Ուսումնասիրութիւն-Վերլուծականը, շուրջ 133 մեքենագիր էջից բաղկացած, գրուել է Մատենադարանում, եւ 1975 թականի Օգոստոսի 28ին պաշտօնապէս մէկական օրինակից այն ներկայացրել են ՀՍՄՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հասարակական բաժանմունքին, ՀՍՄՀ Մինիստրների Խորհրդին, որի տեսչութեան եւ ենթակայութեան տակ էր գտնուած Մատենադարանը, եւ Հայաստանի Հանայնավար կոսակցութեան Կենտրոնի Գիտութեան բաժնին:

Այժմ առաջին անգամ այն տպագրութեան են յանձնում մասնակի յապատմներով:

² «Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի», աշխատասիրութեամբ՝ Խ. Թորոսեանի, խմբագրութեամբ՝ ակադ. Լ. Խաչիկեանի եւ բանասիր. գիտ. քեկնածու Պ. Խաչատրեանի, Երեւան, 1975 թ.:

որ սա մեր միջնադարեան իրաւաբանական մեծարժէք Յուշարձանի քէն երկրորդ, բայց խեղձած ծնունդն է:

Յաւօք պէտք է արձանագրել նաեւ, որ Մատենադարանի մակնիշով հրատարակ եկած իրաւաբանական այս երկի՝ Գօշի Դատաստանագրքի բնական բնագիրը պատրաստուել է անհանգուրժելիօրէն գիտական ցածր մակարդակով: Ընթերցողին են հրաւրուել սխալաշատ եւ աղաւաղուած բնագրային ցածրորակ բնագրային Տարբերակներ՝ տարբերությունների մեխանիկական համադրումով, ընդ որում գրաբարի քերականութեան պատճառով աշխատասիրողի սեփական քերքմընումները հինք են դարձել իրաւաբանական սխալ ընդհանրացումների ու բանասիրական քիւր հետեւութիւնների, ինչպէս եւ Առաջաբանում Գօշի հայեացքների գնահատման առնչութեամբ թոյլ են տրուել մեթոդաբանական կարգի լուրջ սխալներ, որոնց կողքով գիտական բնագրատուի մեծ մասը անցնել չի կարող:

Դեռեւս 1971 թ. Մաշտոցի անուն Գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի Հին բնագրերի ուսումնասիրման ու հրատարակման սեկտորում մենք հանդէս էինք եկել նոյն այս դիտողութիւններով, որոնք, սակայն, տարաբախտաբար անհետեւանք են մնացել:

Մեր այս քննութեան նպատակն է՝ փակել ճանապարհը այս կարգի խտան աշխատանքների յետագայ հրատարակումների, որոնք ցաւագօրէն լոյս աշխարհ են գալիս հովանաւորութեամբ «գրահատրուած»...

1. Իղեալականացման նկրտումներ եւ տեսութեան

խ ե ղ ա թ ի ը ռ ու մ ն ե ր

Հարկ է նշել, որ քննարկուող աշխատասիրութեան Առաջաբան-ուսումնասիրութիւնը, ընդհանուր առմամբ, գրուած է Դատաստանագրքի ու նրա յօդանորի ջատագովման չափազանց մեծահնչիւն գամմայով, որը յանգեցրել է չափանիշների ու գնահատումների զգաստութեան բացակայութեան: Անցեալի ժառանգութեան եւ մշակոյթի ներկայացուցիչների գործունէութեան իղեալականացումը երբեք էլ լաւ խորհրդատու չի եղել մշակութային երեւոյթների խորաքննի վերլուծութեան ու գիտականօրէն ճիշդ արժէքաւորման, ընդ որում միշտ եւ ամենուրեք խանգարելով հետազոտողի գիտական յստակատեսութեանը, խոր անցեալի իրողութիւնների պատմական ճշմարտութիւնների բացայայտմանն ու նրանցից մակարեքուած ընդհանրացումների հաւաստիութեանը: Հէնց անցեալի իղեալականացումն էլ պարարտ հող է տրամադրում ազգային սնապարծութեան ու սահմանափակութեան՝ արջի ծառայութիւն մատուցելով, փաստօրէն, հէնց սեփական մշակոյթի արժէքների իրական գնահատումներին:

Դեռեւս Գօշի Դատաստանագրքի ուսումնասիրման եւ հրատարակման առաջին երախտաւորը՝ Վ. Բաստամեանցը, լինելով Վարդապետ եւ ս. Գայանէի վանահայրը, ԺԹ դարի 80-ական թուականներին, հէնց Գօշի Դատաստանագրքի առիթով, զգուշացնում էր ազգային սնապարծութեամբ տարտուղներին մի շատ ուսանելի խորհրդով, որը նաեւ այժմեական է հնչում իր պայծառատեսութեամբ. «... Բայց

ճշմարտութիւնը չէ՛ պիտոյ ծածկել - գիտութիւնը ազգասիրութիւն չէ ճանաչում» (ընդգծումը իրն է - Լ.Խ.)¹:

Եւ առաջինը ինքը Բատամեանցը բացայայտելով Գօշի կազմած Դատաստանագրքի աղբիւրագիտական յենքը՝ նրա բնոյթի որոշումով, առարկայօրէն այսպէս է գնահատում այդ մատենագրական երկը. «... Միսիբար Գօշի յատաջարանութիւնը՝ իբրեւ հեղինակի ինքնուրոյն սեփական շարադրութիւն՝ մեր աչքին աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ ամբողջ Դատաստանագիրքը, որ մի ժողովածու է կամ խմբագրութիւն ուրիշ տեղերից հաւաքած յօդուածների եւ ուր միայն սակաւ հատուածների մէջ երեւում են նորա սեփական դատողութիւնները»: Եւ իրօք, աղբիւրագիտական վերլուծութիւնը միանգամայն հաստատում է, որ արուած եզրակացութիւնը անհերքելի իրողութիւն է:

Այդ հաստատում են նաեւ յետագայ իրաւաբան մասնագէտները:

Այսպէս, հայ իրաւաբանական մտքի պատմութեան յայտնի հետազոտող պրոֆ. Խ. Մամուլեանը նոյնպէս հաւաստում է, որ «Միսիբար Գօշի դատաստանագիրքն իր խաչատարէտ, մեծ մասամբ օտար աղբիւրներից քաղուած օրէնքներով, տալիս է հայ իրաւունքի խճողուած պատկերը»², այլեւ՝ «... Յիրաւի, այն բոլոր հարցերը, որոնք արժարժում են Նախադրութեան մէջ, քիչ թէ շատ տեսական բնատրութիւն են կրում»³:

Գօշագիտութեան մէջ իր որոշակի վաստակն ունեցող սովետական շրջանի ուսումնասիրողներից պրոֆ. Ա. Սուքիասեանը նոյնպէս գտնում է, որ «Հէնց այս «Նախադրութիւնը» ... պէտք է համարել «Դատաստանագիրք» բառի իսկական առումով...»: «Նախադրութիւնը» նման է տրակտատի՝ գիտական շարադրութեան, որի մէջ Գօշը շարադրել է ընդհանրապէս իր իրաւական ըմբռումները...: Ինչ վերաբերում է եկեղեցական կանոններին եւ աշխարհական օրէնքներին, ապա դրանք պարունակում են իրաւունքի առանձին ու բազմաթիւ ճիւղերի նորմեր եւ, ըստ էութեան, կազմում են տարբեր օրէնագրքերի ժողովածու, դառնում «Հաւար օրինաց»⁴:

Բայց Թորոսեանը ոչ միայն լուրջութեամբ է շրջանցել աղբիւրագիտական այս բացայայտումները իրենց գնահատականներով, այլեւ, աւելին, բնագրագիտական մոլորեցնող անցերելի «սրբագրութիւն» է կատարել՝ էապէս արժէքազրկելով իր իսկ կազմած «բնական» բնագրային տարբերակները, չկոստելով, սակայն, իր այդ արարքի տխուր հետեւանքները: Այսպէս, այն դէպքում, երբ Վ. Բաստամեանցը աղբիւրագիտի հմտութեամբ՝ բազմիցս ու տքնաջան որոնումներով բացայայտելով Գօշի օգտագործած սկզբնաղբիւրները, տարբերակել ու սահմանազատել է իր կազմած գիտա-բնական բնագրում սկզբնաղբիւրը՝ Գօշի մեկնաբանումից չակերտների միջոցով, Թորոսեանը թեթիւ ձեռքով... վերացրել է այդ սահմանազատումը՝ Դատաստանագիրքն ամբողջութեամբ ... բաշխելով Միսիբար Գօշին որպէս նրա ...

¹ «Միսիբարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց», աշխատասիրութեամբ Վ. Բաստամեանցի, Վաղարշապատ, 1880, էջ 50-51:

² Նոյն տեղում, էջ 122: Այս եւ յետագայ բոլոր ընդգծումները իմն են - Լ.Խ.:

³ Խ. Մամուլեան, Միսիբար Գօշի Դատաստանագիրքն ու հայոց քաղաքացիական իրաւունքը, Վիեննա, 1911, էջ 13:

⁴ Նոյն տեղում, էջ 24:

⁵ Ա. Սուքիասեան, Միսիբար Գօշը եւ «Հայոց դատաստանագիրքը», Երեւան, 1965, էջ 81-83:

ստեղծագործությունը: Աղբիւրագիտական այս աղաւաղումը, բնականաբար, գրկել է մասնագետ ուսումնասիրողին այն հնարաբանութիւնից, որ իմանայ եւ հետագոտութեան ընթացքում ճիշդ կողմնորոշուի՝ այս կամ այն դրոյթը վկայակոչելիս, այն Գօշի¹ն է պատկանում, թէ՞ ... սկզբնաղբիւրին: Մինչդէռ Բաստամեանցը գիտական մտահոգութեամբ աղբիւրագիտական չափազանց կարեւոր եւ շնորհակալ իր այդ աշխատանքի առթիւ գրում է. «Ընթերցողին թերութիւն տալու համար՝ մենք զատեցինք միմեանցից ուրիշ տեղից քաղած կանոնը եւ յօդուածները եւ Մխիթարի սեփական խօսքերը՝ սկսելով դոցա չակերտով եւ նոր տողով»²:

Նկատենք նաեւ, որ Բաստամեանցը նոյնիսկ «ինքնուրոյն սեփական շարադրութիւն» համարած Գօշի Դատաստանագրքի Առաջաբանի 11 գլուխներից միայն վեցն է համարում «իրաւաբանական հարցերին» նուիրում, որոնք էլ, իրենց բնոյթով, այսպիսին են. «Իսկ քննելով այդ վեց գլուխը՝ մենք տեսնում ենք,- գրում է նա,- որ դոցա մէջ չկայ ամբողջութիւն, չկայ մի ամփոփ վարդապետութիւն կամ բէօրիա, չկայ հիմնատր իրաւաբանական գիտութիւն, իրաւաբանութեան գլխատր կէտերից մեծ մասը բաւարարվին չեն յիշած, միտները չեն մշակուած օրինատր կերպով»³: Մրանք այնպիսի լուրջ եւ բնութագրող թերութիւնների յիշեցումներ են, որոնք եթէ չեն համապատասխանում գիտական ճշմարտութեանը՝ ապա լուրջամբ չպէտք է շրջանցուէին մեր օրերի ուսումնասիրողի կողմից եւ ընթերցողին թիրիմացութեան ու մոլորութեան մէջ զգէին յախտուն եւ շլացուցիչ վերագրումներով...

Դատաստանագրքի իրական բնոյթը ներկայացնելիս, Բաստամեանցը, այնուամենայնիւ, բնաւ նպատակ չի ունեցել նրա նշանակութիւնը մազաչափ անգամ նսեմացնելու. «Պարզ է որ՝ մեր հեղինակը (իմա՝ Գօշը - Լ.Խ.) ծանօթ չէ եւ չէ ուսումնասիրել իրաւաբանական գիտութիւնը հիմնատր կերպով,- շարունակում է նա,- ծանօթ չէ այդ գիտութեան մատենագրութեան հետ, ծանօթ չէ հռովմէական եւ բիզանդական իրաւաբանութեան հետ: Բայց եւ այնպէս՝ ոչ որ չէ կարող պատարակել եւ դատապարտել նորան իր բոլոր իրաւաբանական թերութիւնների ու պակասութիւնների պատճառով, այլ պէտք է միշտ երախտապարտ լինել նորան, վասն զի նա զոնեա հոգացել է գրով արձանացուցանել մեր ժողովրդի մէջ մնացած հինօրեայ իրաւաբանական կամ դատաստանական աւանդութիւնների եւ սովորութիւնների բեկորները»⁴:

Բաստամեանցը նոյնիսկ իբրեւ «գիտնական քննութեան» չդիմացող ժողովածու է համարում Դատաստանագիրքը, բայց դա եւս ոչ ոքի իրաւունք չի տայ նաեւ մեր ժողովրդի հասարակական կեանքում ու մատենագրութեան մէջ նրա յոյժ կարեւոր դերն ու նշանակութիւնը անտեսելու. «Եւ եթէ նորա, Դատաստանագիրքը այժմ չէ կարող դիմանալ գիտնական քննութեան իբրեւ մի իրաւաբանական երկասիրութիւն,- շեշտում է Բաստամեանցը,- դա մեզ համար այնուամենայնիւ շատ քանկազին զանձ է իբրեւ միակ իրաւաբանական գրուածք ազգային մատենագրութեան մէջ»⁵: Եւ կամ՝ «... Այդ երեւելի ժողովածուն ... Դատաստանագիրքն է, այս մի հատ վարդը մեր իրաւաբանական մատենագրութեան չոր ու ցամաք պարտիզի մէջ»⁶:

¹ Վ. Բաստամեանց, նշում աշխատ., էջ 115:

² Նոյն տեղում, էջ 175:

³ Նոյն տեղում, էջ 179:

⁴ Նոյն տեղում, էջ 179-180:

⁵ Նոյն տեղում, էջ 80:

Պրոֆ. Խ. Սամուէլեանը եւս նոյնն է հաստատում՝ մասնագիտական առումով. «Մխիթար Գօշը չէր ստացել ոչ մի իրաւաբանական կրթութիւն, դատախարակուել ու սնունդ էր քրիստոնէական ոգու եւ կղերական դոգմաների մթնոլորտում, հետեւաբար այդ տեսակ հեղինակից կարող ենք պահանջել միմիայն նրա աշխարհայեցողութեանը համեմատ մի գործ»¹:

Նշենք, սակայն, որ ոչ միայն Դատաստանագիրքն է Թորոսեանը յախտուն դրուատանքներով բնութագրում, այլեւ՝ նրա յօրինողին. «Սակայն դարի հարթութեան վրայ (sic!) Մխիթար Գօշը լեռնանում է (՞) մեր դէմ ոչ միայն իր գրական-գիտական ծանրակշիռ վաստակով, այլեւ...»²: Եւ կամ՝ «... մեր դէմ լեռնացող (՞) Ներսէս Լամբրոնացին եւ Մխիթար Գօշը...»³: Ի՞նչպէս կարող է որեւէ հեղինակ, որքան էլ հանճարեղ լինի, «լեռնանալ մեր դէմ»՝ այդ մենք չենք պատկերացնում...: Բայց նկատենք, որ հագիլ թէ մեծարման այս տարօրինակ եւ անգուսպ ջատագովումը իր երկուրեակն ունենայ մեր մատենագրութեան մէջ, եւ, որ կարեւորն է, երբեւ նաեւ նպաստի, թէկուզեւ ամենադոյզն չափով, Գօշի ... գիտական բնութագրումները:

Չափազանցումները եւ գեղումները, ինչպէս յայտնի է, միշտ էլ խեղաթիւրում են ներկայացնում իրողութիւնները եւ մտադրուածից տրամագծօրէն հակառակ տպատրութիւնն են թողնում: Այսպէս, Գօշին իբրեւ դարաշրջանի մեծութիւն բնութագրելու համար Թորոսեանը պատկերաւոր մի համեմատութիւն է անում, որը մարքսիստական գրականութեան մէջ յայտնի է ... իր պատկանելութեամբ. «ԺԲ-ԺԳ դարերի միջակայ յիսնամեակը պատմա-քաղաքական մեծ յեղաթելումների ժամանակաշրջան էր Հայաստան աշխարհի ու հայ ժողովրդի կեանքում: Մի դարաշրջան էր դա, որ կարիք ուներ մեծութիւնների եւ տուեց գէնքի ու մտքի մեծութիւններ: Դրանցից մէկը Մխիթար Գօշն էր»⁴: Իհարկէ՝ «միջակայ յիսնամեակը» հագիլ թէ ... «դարաշրջան» կարելի է համարել, որը տրամաբանական ակնբախ սայթաքում լինելով՝ ուզում ենք ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել ոչ թէ դրա, այլ այն բանի վրայ, որ քաղուածքի ընդգծուած միտքը Թորոսեանը վերցրել է Ֆ. Էնգելսի «Բնութեան դիալեկտիկայ» աշխատութիւնից ամենեւին էլ ոչ գիտական պատշաճ եղանակով. անմտերի է այն, որ Թորոսեանը շրջասացութեամբ, բայց առանց աղբիւրի յիշատակման, իբրեւ «սեփական մտայղացում» է առաջադրել փոխառած միտքը, ընդամին այն տարբերութեամբ միայն, որ պատմական այլ իրողութեան եւ այլ երեւոյթի կապակցութեամբ ասուածը ... մեխանիկաբար վերագրել է ԺԲ դարի հայ իրականութեանը: Մինչդէռ Ֆ. Էնգելսը նկատելի ունենալով բացառապէս եւրոպական Վերածննդի փառահեղ դարաշրջանը՝ իրաւամբ գրում է. «Դա մարդկութեան մինչ այդ ապրած մեծագոյն պրոգրեսիվ յեղաշրջումն էր, մի դարաշրջան, որը տիտանների կարիք ուներ եւ որը տիտաններ ստեղծեց...»⁵: Նոյնութիւնը, ինչպէս նկատելի է, ակնբախ է իր անտարակուսելիութեամբ:

Թորոսեանը նաեւ Լէօյի մօտ կարդացել է՝ ԺԷ դարի վերջին հայ ժողովրդի կեցութեան բնութագիրը պատկերաւոր արտայայտութեամբ՝ «թրի եւ գրչի» շար-

¹ Խ. Սամուէլեան, նշում աշխատ., էջ 20:

² Խ. Թորոսեան, «Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Երկու խօսք, էջ 5:

³ Նոյն տեղում, Առաջաբան, էջ ԺԶ:

⁴ «Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ Է:

⁵ Կ. Մարքսը եւ Ֆ. Էնգելսը Արուեստի մասին, Երեւան, 1963, հ.1, էջ 420: Համեմատի՛ր նաեւ՝ Ֆ. Էնգելս, Բնութեան դիալեկտիկայ, Երեւան, 1950, էջ 7:

ծումների վերաբերյալ եւ... բոցրել, դարձեալ առանց աղբիւրի ցուցադրման, իբրեւ ... սեփական պատկերաւոր մտածողութեան» արգասիք՝ «յարմարեցնելով», սակայն, պատմական ա՛յլ ժամանակաշրջան եւ ա՛յլ անձնատրոսիւն բնութագրելու իր միտումին: Մինչդեռ Լէօն գրում է. «... 17-րդ դարի վերջերից հայերի մէջ ծառայում են երկու հուժկու շարժումներ - մէկը թրի եւ միւսը գրչի համար, շարժումներ, որոնց ծնողը մի մայր էր եւ որոնք բնութեամբ էլ իրարից անբաժան, իրար լրացնող ու մեծացնող են»¹:

Եւ ահա, այս անգամ էլ Լէօնից փոխ առնելով «թրի ու գրչի» (բայց, ներեցէք, փոքրիկ «նրբութեամբ»՝ «սրի ու գրչի»...) տեսութիւնը, Թորոսեանը հէնց այդ պլանով էլ վերաշարադրում է ԺԲ դարի իրադրութիւնը Հայաստանում. «Մտրն ու գրիչը պէտք է միանային», - յայտարարում է նա, իբրեւ «սուր» ներկայացնելով Չաքարեանների գլխատում պայքարը, եւ իբրեւ «գրիչ»՝ Գօշին... իր Դատաստանագրքով: Ընդ որում այնքան դուր է եկել Լէօնից փոխ առած թեւաւոր այս խօսքը, որ Թորոսեանը իրադրութիւնների նկարագրութիւնը հէնց այդ պարբերաբաժանմամբ է կատարում. «Նախ սրի մասին»² առում է նա եւ վերաշարադրում Չաքարեանների ծառայած զինակցի գործողութիւնները, ապա՝ «Այժմ գրչի մասին»³ անդրադարձմամբ կանգ առնում Գօշի Դատաստանագրքի նշանակութեան եւ զմահատման վրայ: Բայց գիտական բարեխղճութիւնը եւ ազնուութիւնը կը պահանջէր, որ «սրի ու գրչի շարժումների միացմանը» այդքան կարեւորութիւն ընծայած Թորոսեանը զոնէ մէկ անգամ յիշատակէր իր սկզբնաղբիւրը, որ ընթերցողն էլ իմանար եւ համոզուէր՝ պատշաճում է արդեօք տրուած բնութագիրը նաեւ ԺԲ դարի համար, եւ մի՞թէ Չաքարեանների հայրենի տարածքի ազատագրումը կարելի է նոյնպիսի «թրի շարժում» համարել, ինչպիսին ԺԷ դարի վերջերին Իսրայէլ Օրոսի գլխատրած «թրի շարժումը», եւ, անասարակ, հնարաւոր է մի Դատաստանագրքով նաեւ ... «գրչի շարժում» ենթադրել:

Հայ ժողովրդի համար այն պարզ (թէեւ խիստ կենսական) հասարակական կարիքի գիտակցումը, որ անհրաժեշտ է, առկայ սկզբնաղբիւրների հիման վրայ, Դատաստանագրքը կազմել, Թորոսեանը, մեծարման իր էքստազի մէջ, ներկայացնում իբրեւ ինչ-որ գերբնական բան. ընդ որում գորաշարժի ենթարկելով մեր ամբողջ ժողովրդին՝ Դատաստանագրքի յօրինումը բնորոշում է, ոչ աւել ոչ պակաս՝ իբրեւ «հայ ժողովրդի հոգեւոր լարման արտայայտութիւն»՝ գրելով. «ԺԲ դարի վերջերից հայ ժողովուրդը լարել էր իր հոգեւոր-ֆիզիքական բոլոր կարողութիւնները ..., Դատաստանագրքը այդ լարման հոգեւոր կողմի արտայայտութիւնն էր (sic!)»: Եւ ապա դարձեալ՝ «Մտրն ու գրիչը գործում էին միասնաբար ու պայմանաւորում յաջողութիւնը փոխադարձաբար»⁴: (Համեմատի՛ր Լէօնի խօսքերի հետ՝ «Թորն ու գրիչը բնութեամբ էլ իրարից անբաժան, իրար լրացնող ու մեծացնող են...»):

Բայց Թորոսեանը մեծարման զեղումների իր հետքի մէջ բարձրակէտին է հասնում, երբ հոետապական բառախաղերի դիմելով պերճախօսութեան պատրանք է ստեղծում՝ յուշելով նաեւ, թէ Գօշը իր Դատաստանագրքով ոչ միայն դարի կնիքն է կրել, այլեւ ... ինքն է դարի վրայ ... կնիք դրել: Մէջբերենք մեծ յաւակնութեամբ ասուած այդ «թեւաւոր խօսքը», որ Գօշի դէպքում անպատշաճ լինելով՝ վեր է

ածուած, ցուազօրէն, անհեթեթութեան. «Դարն իր կնիքը դնում է բոլորի վրայ, գրում է Թորոսեանը,- բոլորից վեր բարձրացողը բարձրանում է հէնց նրանով, որ նաեւ իր կնիքն է դնումն դարի վրայ: Վերջինը, սակայն, պայմանաւորուած է այն խորքով ու լայնքով, որով ըմբռնում է դարի հրամայականը»¹: Նման յորդ վեղումների դէմ, խստաովանենք, ամբողջ ծայնով կը բողոքէր նոյնիսկ Մխիթար Գօշը մինչեւ անգամ ցատմնալի ընդվզումով... մի գիտնական, որը կեանքում շատ լաւ գիտակցելով իր համեստ կարողութիւնները, աշխարհընկալմամբ էլ լինելով այդպիսին, երբեք սնապարծութեամբ չի տոչորուել իր Դատաստանագրքի յօրինման համար...: Ի դէպ, նշենք նաեւ, որ նման վերագրումներն իրենց անյարիքութեամբ՝ պարզապէս արդիւնք են Թորոսեանի մօտ *քննական հայեացքի իսպառ բացակայութեան*...:

Մինչդեռ Բատամեանցը գիտականօրէն ճիշդ է բացայայտում Գօշի վաստակի եւ թոյլ, եւ ուժեղ կողմերը, պատշաճը հատուցելով միաժամանակ նրա պատմական ծառայութեանը հայ մշակոյթին, որը հազիւ թէ հնարաւոր լինի վիճարկել. «Իհարկէ՛ Մխիթարը իր նոյն իսկ շատ նուազ իրաւաբանական գիտութեամբ եւ պատրաստութեամբ կարող էր աւելի լաւ մշակել իր աշխատասիրութիւնը,- իրաւագիտէն նշում է Բատամեանցը,- կարող էր զոնեա աւելի բանկազին տեղեկութիւններ հաղորդել մեզ՝ ուշ դարձնելով մանաւանդ աշխարհական օրէնքների վերայ եւ ժողովելով ժողովրդի մէջ մնացած բոլոր աւանդութիւնները եւ սովորութիւնները դատաստանի եւ այլ իրաւաբանական խնդիրների մասին, եւ պետական, միջազգային, քրեական, քաղաքացիական կամ այլ օրէնքների մնացորդները»²: Բնական է, որ լաւը՝ լաւագոյնի նկատմամբ իր նուաստութեամբ յարաբերական է եւ, ներկայ դէպքում, ոչ միայն անհատական կարողութիւնների, այլեւ ժամանակի ու պատմական պայմանների տարբերութեան իմաստով: Այդուհանդերձ Բատամեանցը զգաստ զմահատմամբ եզրակացնում է. «Բայց եւ այն սակաւ տեղեկութիւնների համար, որ Գօշ Մխիթարը աշխատել է պահպանել ապագայ սերունդի համար, շնորհապարտ լինինք նորան»³:

Իրաւացի է պրոֆ. Ա. Մուքիասեանը, երբ դեռեւս 1965 թականին լոյս ընծայած «Մխիթար Գօշը եւ «Հայոց դատաստանագիրքը» ուշագրաւ աշխատութեան մէջ զգուշացնում էր. «Չզուեղով ցոյց տալ Գօշի մարդասիրութիւնը եւ առաջադիմական մտածողութիւնը, մի բանի հեղինակներ ընկնում են ծայրայեղութեան մէջ, մոռանում չափի զգացումը եւ փորձում անվերապահօրէն արդիականացնել Գօշին, նրան վերագրելով այնպիսի մտքեր, որ փաստօրէն չի արտայայտել կամ նրա որոշ տեսակէտներին տալիս են քմահաճ բացատրութիւններ»⁴:

Թորոսեանի «հետազօտական ոճի» մասին ընթերցողին պատկերացում տալու համար այստեղ թոյլ տալով մեզ փոքրիկ մի շեղում՝ նկատենք, իբրեւ տխուր իրողութիւն, որ Թորոսեանը սեփականացնում է ոչ միայն ուրիշների մտքերը, երկուքով ու մեծ հմտութեամբ ձեռք բերած հաստատումները կամ դրոյթները, այլեւ նոյնիսկ նրանց լեզուական արտայայտչաձեւերը:

Այս անգամ էլ Բատամեանցից (որին անհոգիօրէն շատ է կողոպտել նա, եւ դրան դեռեւս կ'անդրադառնանք առանձին՝ քիչ յետոյ) Թորոսեանը մատենա-

¹ Լէօ, Հայոց պատմութիւն, 1945, հ. 3, էջ 475:

² «Մխիթար Գօշի վերջ Դատաստանի», Առաջաբան, էջ ԺԱ:

³ Նոյն տեղում, կժԳ:

⁴ Նոյն տեղում, կժԳ, տե՛ս նաեւ էջ Զ:

¹ Նոյն տեղում, էջ Ը:

² Ա. Բատամեանց, նշում աշխատ., էջ 180:

³ Նոյն տեղում:

⁴ Ա. Մուքիասեան, նշում աշխատ., էջ 39:

գիտական հետեւեալ կարեւոր ընդհանրացումն է իւրացրել՝ դարձեալ շրջասացութեամբ: Բաստամեանցը գրում է. «... Մեր նոր մատենագրութիւնը, աղքատիկ ինքն ըստ ինքեան, մանաւանդ աղքատ է իրաւաբանական շարադրութիւններով: Տարաբախտաբար՝ միեւնոյն աղքատութիւնը մենք տեսնում ենք մեր հին մատենագրութեան մէջ...»¹: Ընդգծուած տողերի հետ համեմատելով Թորոսեանի խօսքերը, որոնք բանաբարաբար են, առանց, սակայն, իրենց սկզբնաղբիւրի յիշատակման: Թորոսեանը բաւարարուել է միայն «յայտնի» ընդհանրական ասոյթի «ինքնապահովագրմամբ»: «Յայտնի է (sic!), որ մեր մատենագրութիւնը հարուստ չէ (= «աղքատ է» ըստ սկզբնաղբիւրի - Լ.Խ.) հայ ժողովրդի ներքին կեանքին՝ սոցիալ-տնտեսական յարաբերութիւններին, հասարակական տարրեր խառնելի իրական դրութեանը եւ նման այլ հարցերի վերաբերող տեղեկութիւններով»²:

Թորոսեանը նաեւ ակադ. Աշ. Յովհաննիսեանից վերցրել է ամբողջական մտքեր ու ձեւակերպումներ՝ դարձեալ առանց աղբիւրի յիշատակումների: Այսպէս, Աշ. Յովհաննիսեան. «Գրանցուած օրէնքների կարիքն աճում էր միայն որպէս կամայական առիւթներումներին չափ ու սահման դնելու միջոց» («Դրուագներ», հ. 1, էջ 203): Թորոսեան. «Իր Դատաստանագրքով նա ձգտում էր իրական շրջանակների մէջ առնել (= «չափ ու սահման դնել» - Լ.Խ.) պաշտօնէութեան՝ չարաշահումներով լի գործունէութեանը եւ օրինական դատաստանի բնութեամբ փոխարինել արատական ինքնիրաւ կամայականութեան անգուսպ քմայքը» (= «կամայական առիւթներումներին» - Լ.Խ.): Եւ կամ՝ «ինքնահաճ չարաշահումներին (= «կամայական առիւթներումներին» - Լ.Խ.) նահակադրում է կարգն ու կանոնը» (= «չափ ու սահման դնում» - Լ.Խ.), սանձարձակ կամայականութեանը՝ կայուն օրինականութիւնը»³ (= «կամայական առիւթներումներին չափ ու սահման դնում» - Լ.Խ.):

Աշ. Յովհաննիսեան. «Գօշը մէկն էր հէնց այն մարդկանցից, որոնք ... ուրուագծում (էին) քաղաքական ապագայ համակեցութեան յատակագիծը եւ կառուցում նրա նպատակայարմար օրէնքների սխտէմը, մտահոգուած անվթար ու «ամբողջ պահել» գալիք համակեցութեան շէնքը» («Դրուագներ», էջ 293): Թորոսեանը շրջասացութեամբ միեւնոյն միտքը իբրեւ «սեփականը» կրկնում է նոյնիսկ միեւնոյն առանձին բառերով ու բառակապակցութիւններով. «Մխիթար Գօշը դրանով իսկ իր զգալի աւանդն էր բերում երկու դասերի շահերի շփման եզրերը հարթեցնելու, ներդասակարգային յարաբերութիւնները կայուն ու ներդաշնակ հունի մէջ դնելու գործին, որով ոչ միայն ապագայ պետական կեանքի ներքին վարչութեան նպատակայարմար յատակագիծն էր տալիս (sic!), այլեւ լրջօրէն նպաստում էր իր ժողովրդի ուժերի համախմբմանը ներկայում, հէնց այդ ապագայի համար» (էջ ԻԸ):

Այնուհետեւ՝ Աշ. Յովհաննիսեան. «Գօշը մէկն էր հէնց այն մարդկանցից, որոնք իրենց լուսամիտ իրաւախտութեամբ ընդառաջում էին գալիք իրաւակարգին» (էջ 293): Թորոսեան. «Դատաստանագրքով Մխիթար Գօշը ընդառաջում էր ցանկալի գալիքին» (էջ Ե): Եւ կամ՝ «Մխիթարը կանխում է երկար սպասուած ու վերջապէս երեւացող գալիքը» (էջ 559): Կարծում ենք՝ առ այժմ բաւական են փաստերը:

Բայց շարունակենք իդեալականացման նկրտումների բնութիւնը:

¹ Վ. Բաստամեանց, նշում աշխատ., էջ 6-7:

² «Մխիթար Գօշ, Գիւրգ Դատաստանի», Առաջաբան, էջ ԽԱ:

³ Նոյն տեղում, էջ ԻԶ:

Որքան էլ տարօրինակ է, Դատաստանագիրքը, որ նախքան Գօշը իր հիմնական մատով արդէն իսկ կիրառութիւն ունէր հայ իրականութեան մէջ իբրեւ «Լանոնագիրք Հայոց», Թորոսեանի կողմից բնորոշում է ... որպէս «հայ ժողովրդի քաղաքական ամենօրեայ գէնք»: Նա գրում է. «Մխիթարը իր ժողովրդին տունց քաղաքական ամենօրեայ գէնք» (sic!) Այդ գէնքը նուազ հատու չէր, քան սուրբ»¹:

Ինքնին հասկանալի է, որ իւրաքանչիւր Դատաստանագիրք նաեւ քաղաքական նշանակութիւն ունի: Բայց մի՞թէ դրանից կարելի է հետեւցնել, թէ Դատաստանագիրքը «քաղաքական», այն էլ «ամենօրեայ գէնք» է հանդիսացել որեւէ ժողովրդի համար, որ Գօշի Դատաստանագիրքն էլ այդպիսին լինէր: Հնարատ՞ր է երբեւէ պատկերացնել, որ որեւէ Դատաստանագիրք ծառայած լինի իբրեւ «քաղաքական գէնք» մի ժողովրդի համար, այն էլ Միջնադարում՝ նրա «ամենօրեայ» քաղաքական պայքարում...: Նախ եւ առաջ Միջնադարի խոր քմբիրում չի եղել «ժողովրդի քաղաքական պայքար», եթէ քաղաքական պայքար ասելով պէտք է հասկանալ «իշխանութեան գրաւման համար մղուող պայքար», ինչպէս ընդունուած է սոցիոլոգիական գրականութեան մէջ: Հասարակական կեանքը այնքան միգամած էր ու անշարժութեան չափ ծանծաղուտ, որ ժամանակավրէպ պնդում կը լինէր առհասարակ խօսել ժողովրդի «ամենօրեայ քաղաքական պայքարի» մասին..., երբ իսպառ բացառում էր նաեւ ժողովրդի «քաղաքական» կազմակերպութիւնը, որ «քաղաքական» պայքար էլ մղէր...: Երկրորդ՝ Գօշի Դատաստանագիրքը նոյնիսկ իր բոլոր ձեռագրական ընդօրինակութիւններով հարիրամեակների ընթացքում եօթանասունի էլ չէր հասել...: Երրորդ՝ այն ժողովրդի ձեռքին չի էլ արուել իբրեւ «ընթերցանութեան» գիրք (եւ չէր էլ կարող տրուել), ուստի ժողովուրդը այն չի էլ կարողացել, որպէսզի ... նրա ամենօրեայ քաղաքական պայքարի գէնքը լինէր...: Նման պնդումը, իհարկէ, յատուր պատշաճի արուած Թորոսեանի հեթոքական գեղումներից է, որ բնաւ չի բնութագրում Դատաստանագրքի հասարակական նշանակութիւնը ..., որը եւ պէտք է տրուէր:

Բայց Թորոսեանը Գօշին ճգնում է ներկայացնել նաեւ, ոչ աւել ոչ պակաս՝ որպէս ... պատմական մատերիալիզմի հիմնադիր՝ այն էլ «համաշխարհային» մասշտաբով: Անախրոնիկ մեծաշառախող «տեսական» այդ ընդհանրացումը յեմուտ է հետեւեալ քաղուածքի վրայ. «Ազատ յԱրարչէն եղել մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղել հողոյ եւ ջրոյ»:

Թորոսեանը, նախ՝ չի հասկացել, թէ տուեալ համատեքստում «մարդկայինս բնութիւն» բառակապակցութեամբ ի՞նչ է ուզեցել ասել Գօշը, եւ քիչիմացաբար այն «համարժէք» է համարել... «Աստծուն». մինչդեռ այն նշանակում է՝ «մարդկային էութիւն», աւելի ստոյգ՝ «մարդու հասարակական էութիւն», որը արարչից ազատ՝ անկախ է առաջացել..., ուստի տէրերին ծառայելը հողի եւ ջրի կարիքի պատճառով է տեղի ունեցել: Բայց մի տեսէ՛ք, թէ Թորոսեանը ինչպէս է «մեկնաբանում» այս քաղուածքը. «Մինչ Մխիթար Գօշը եւ փիլիսոփաները, եւ աստուածաբանները, եւ իրաւաբանները նոյնպէս արձանագրել են, որ աստծու կողմից, ասել է թէ բնութիւնից (sic!) մարդ ազատ է ծնում, անազատութիւնը առաջանում է յետոյ»²: Մինչդեռ «Ազատ յԱրարչէն եղել մարդկայինս բնութիւն» ընթերցման ստոյգ բարձրամտութիւնն է՝ «Աստծուց անկախ եղաւ մարդու (հասարակական) էութիւնը...», եւ ո՛չ թէ՛ «Աստծու կողմից, ասել է թէ բնութիւնից, մարդ ազատ է ծնում...»,- ինչպէս

¹ Նոյն տեղում, էջ Ե:

² Նոյն տեղում, էջ ԻԳ-ԻԴ:

բիրըմբռնմամբ հասկացել է Թորոսեանը եւ որից մեկնելով՝ նաեւ «տեսութիւն» մշակել...:

Թորոսեանը գրում է. «Փնտրել են նաեւ այս վերջինի (իսմա՝ «անագատութեան» - Լ.Խ.) պատճառը: Ոմանք դա համարել են պատերազմը, որը գերի է բերում եւ գերեվարուածներին դարձնում անագատ, միսները դրա մէջ տեսել են աստծու պատիժը մարդու նախածին մեղքի համար եւ այլն: Մեծն Արիստոտելը նոյնիսկ բնական կարգ էր համարում, որ մարդկանց մի մասը ծնուած է ազատ, միւսը՝ ստրուկ: Բոլոր դէպքերում *անագատութեան հիմքը գտել են արտաքին պատճառների մէջ եւ չեն փորձել այն որոնել հասարակութեան ներքին կեանքում, այն իրական յարաբերութիւնների մէջ, որ պայմանաւորում է այդ կեանքը իր բոլոր կողմերով*»¹:

Անա թէ ինչպէս այս մի հատիկ ու միակ փաստով, թէն աւատական իրականութեան միանգամայն ճիշդ ընկալմամբ, այն է՝ «անագատութիւնը հողի եւ ջրի կարիքի պատճառով եղաւ» ձեռնարկով մամբ հասարակագիտական չափազանց մեծ ու ծանրակշիռ հետետեսին արուեց եւ ... վերագրուեց Գօշին, այն դէպքում, երբ պատմաբանացուցութեան ըմբռնումներում յեղաշրջում առաջ բերած այդ տեսութեանը մարդկութիւնը հասու եղաւ միայն XIX դարում: Գօշի վերոյիշեալ ասոյթը, լինելով կղզիացած ու դիպուածային, երբեք չի բնորոշում նրա աշխարհայեացքը, որ կրօնական է եւ սխալաստիկ: Եւ ահա Թորոսեանը ոչ աւել ոչ պակաս Գօշին դուրս է բերում ... իբրեւ պատմական մատերիալիզմի «հիմնադիր» յայտարարելով նաեւ. «*Մարդկային մտքի պատմութեան մէջ մինչ ԺԳ դարը Միսիթար Գօշը մէկն է առաջիններից ու եզակիներից (sic!), եթէ ոչ ՄԻԱԿԸ (sic!), որ անագատութեան հիմքը փնտրել է հասարակութեան ներքին կեանքում ու գտել սոցիալ-տնտեսական պատճառների մէջ*»²:

Նախ՝ պէտք է առհասարակ զգուշանալ, անբարտաւան եւ մեծախօսիկ չեքուալու համար, «մարդկային մտքի պատմութեան» անունից խօսելուց ու կատեգորիկ վճիռներ արձակելուց, երբ չափազանց պարտաւորեցնող է մարդու կեանքի համար նոյնիսկ մայրենի մատենագրութեան պատմութիւնից *հիմնաւոր* խօսելը...: Երկրորդ՝ նման մեծադողող յայտարարութիւնը սնապարծութիւն չհամարելու համար՝ Թորոսեանը զոնէ ձեռնպահ պէտք է մնար «մարդկային մտքի պատմութեան մէջ մինչեւ ԺԳ դարը» Գօշի հետ համեմատուող նաեւ «*առաջինների ու եզակիների*» մասին յիշեցում անելուց: Իսկապէ՛ս՝ դժուար է սրան անուն տալ...:

Իհարկէ՝ Թորոսեանը ներկայ դէպքում էլ օգտուել է պրոֆ. Սուքիասեանի ուսումնասիրութիւնից, բայց ... դարձեալ առանց յիշատակման³: Վերջինիս միանգամայն ընդունելի հարցադրումը, սակայն, բացարձակաճանցելով՝ Թորոսեանը յանգել է, տարաբախտաբար, ժամանակավրէպ պնդումների: Այսպէս, պրոֆ. Ա. Սուքիասեանը գրում է. «Անագատութեան առաջացման պատճառների հարցում է, որ Գօշը նորարար է, սխալաստիկայի կեղեից վեր խոյացած, *իրականութեան հողի վրայ կանգնած մի մտածող*: Այս հարցում է, որ նա տարբերում է իր ժամանակի հայ եւ օտարագի մտաւորականներից, նրանցից մէկ գլխով բարձր կանգնում: Եթէ բազմաթիւ հայ եւ օտարագի գիտնականներ *մարդկանց անհասարարութեան*

պատճառ էին համարում մեղքը, պատերազմները (գերեվարութիւնը, ազաւորութիւնը եւ յափշտակութիւնը, ապա Գօշը, ի տարբերութիւն նրանց, գիտացիների ծառայական վիճակը բացատրում էր «հողի եւ ջրի» կարիքով, դրանց պակասութիւնով, գիտացիների հողագրութեամբ: Բայց այս ճիշդ դրոյթից Գօշը այն հետետեսին չի անում, որ պէտք է վերացնել աւատական հողատիրութիւնը, գիտացիներին վերադարձնել նրանցից խլուած հողը»¹: Ասուածի հետ համամիտ լինելով՝ միաժամանակ մենք կ'աւերացնէինք. Գօշը միաժամանակ աւատատէրերի շահերից ելնելով խօսում է «անագատութեան» կապակցութեամբ «հողի եւ ջրի» մասին, յուշելով նրանց. «Թոյլ տուէք այդ մարդկանց օգտուել ե՛ր հողից, ե՛ր ջրից, այլապէս կը զրկուէք աշխատողներից»: Բանն այն է, որ նոյն յօդուածում Գօշը խօսում է տաժանակիր աշխատանքից, հողից ու ջրից զրկուած լինելու պատճառով ճորտերի փախուստի մասին...:

Եւ որովհետեւ Թորոսեանը շատ է սիրում իր գնահատումների չափանիշների համար միշտ «համաշխարհային մասշտաբներ» վերցնել, ներկայ դէպքում էլ Գօշի իդէալականացումը ուրուագծում եւ ամբողջացնում է այսպէս. «... *Այն, ինչ վերցրել է Միսիթարն իր դարից ու տուել մարդուն, մեծ է իր դարի համար համաշխարհի չափանիշով (sic!)*»²: Նկատենք, սակայն, որ նման գեղումները, զաւելտական լինելուց բացի, մեծազոյն արգելակներն են եղել եւ ե՛ն գիտական մտքի զարգացմանը...:

Եւ պարզում է, որ Գօշի «դարից վերցրածն ու մարդուն տուածը» աւելին չէ, քան ... «յաւելեալ (sic!) անարդարութեան վերացումը». «*Միսիթարեան բացարձակ (sic!) արդարութեան գաղափարն, այսպիսով, եզրակացնում է Թորոսեանը, յաւելեալ անարդարութեան վերացման մտքին է յանգում եւ դրանով սահմանափակում*»³: Ի գիտութիւն Թորոսեանի պիտի ասել, որ ամէն մի օրէնսգրքի առաջացումը ինքնըստինքեան ենթադրում է «յաւելեալ անարդարութիւնների» փոխարէն *տուեալ դասակարգային ներհակականութեամբ բնորոշուող հասարակարգի անարդարութիւնների հաստատում ու ամրապնդում*, այլապէս այդ հասարակարգի համար օրէնսգիրք կազմելու անհրաժեշտութիւնը առհասարակ կ'իմաստազրկուէր...:

Իսկ եթէ աւատական անարդարութիւնները (առանց «յաւելեալների») Գօշը ընդունում էր (եւ դա կասկածից վեր է), ապա ինչպէ՛ս հասկանալ Թորոսեանի խորապէս հակապատմական ու հակագիտական այն թեզը, որ իբր Գօշի հայեացքներում «մարդու եւ անձի» պրոբլէմը լուծուած է... յօգուտ առհասարակ մարդու եւ ոչ թէ պատմականօրէն որոշակի սոցիալական «անձի»: Այս առթիւ Թորոսեանը յայտարարում է. «Իրաւունքի պատմութեան մէջ *մինչեւ Միսիթարը եւ հէնց Միսիթարի ժամանակ էլ օրէնքը պաշտպանում էր ոչ թէ մարդուն, այլ անձին, որոշակի մարդուն, կապուած նրա սոցիալական դիրքի հետ*»⁴: Դիտել տանք Թորոսեանին, որ դա այդպէս էր եւ այդպէս է՝ նաեւ ոչ միայն «մինչեւ Միսիթարը եւ հէնց Միսիթարի ժամանակ էլ», այլեւ դրամատիքական կարգերի տիրապետութեան ամբողջ ընթացքում:

Ի դէպ, թէն Թորոսեանը ձեռի համար յանկարծ յայտարարում է, որ «մարդու եւ անձի հակադրութիւնը հասարակութեան՝ հակադիր դասակարգերի բաժանուելու արդիւնք էր եւ յարատեւելու էր այնքան ժամանակ, քանի դեռ հասարակութիւնը

¹ Նոյն տեղում, էջ ԻԴ:
² Նոյն տեղում:
³ Տե՛ս Ա. Սուքիասեան, նշուած աշխատ., էջ 20-30:

¹ Նոյն տեղում, էջ 26-27:
² «Միսիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ ԽԳ:
³ Նոյն տեղում, էջ ԻԶ:
⁴ Նոյն տեղում, էջ ԽԱ:

շարունակելու էր մնալ երկվեդկուսած հակադիր դասակարգերի»¹, բայց եւ ... ճգնում է *հակառակը* «ապացուցել»:

Նախ նշենք, որ Թորոսեանի դատումների տրամաբանությունը հասկանալու համար ընթերցողը պետք է պարզի նրա մի շատ կարեւոր առանձնապատկերները եւս, որն իր բնույթով անսովոր է. Թորոսեանի մտածողութեանը բնորոշ է սկզբում պնդել ուրիշ տեղերից քաղած ճշմարտությունները, որպէսզի յետոյ ետանդուն ճիգեր գործադրելով ... *հերքի* դրանք:

Այսպէս, Թորոսեանը վերը ընդունեց, որ «միջնադարում (եւ առհասարակ) մարդու եւ անձի հակադրությունը չէր կարող վերացնել որեւէ անհատ, որքան էլ հանճարեղ ու առաջադիմական լինի նա» (էջ ԽԱ), իսկ անմիջապէս յաջորդ էջում նոյն Թորոսեանը գրում է. «Մակայն, ըստ բնական իրաւունքի մարդկանց հաւասարութեան գաղափարից Միսիթար Գօշը եզրակացութիւն է հանում նաեւ նրանց հաւասարութեան վերաբերեալ ըստ դրական (իմա՝ սոցիալական - Լ.Խ.) իրաւունքի, եւ մարդկանց հաւասարութեան գաղափարը բնական իրաւունքից փոխադրելով դրական իրաւունքի համակարգը, սահմանում է մի շարք նորմեր, որոնցով, իրօք, հաւասարեցնում է մարդն ու անձը դրական իրաւունքում»²: Իսկ մինչ այդ, ինչպէս վերը ցոյց տուցինք, Թորոսեանը նաեւ պնդում էր (եւ ասեմք՝ իրաւացիօրէն), որ Գօշի «բացարձակ արդարութիւնը յանելալ անարդարութիւնների վերացումն էր», որը այլ բան չի նշանակում քան աւատական հասարակարգի «անարդարութիւնների ընդունում»՝ իբրեւ հետեւանք աւատատիրոջ ու ճորտի սոցիալական հակադրութեան, եւ իմա էլ նոյն Թորոսեանը հէնց դրան տրամագծօրէն ներհակ պնդումն է անում, որպէսզի ... դարձնալ Գօշին բարձրացնի իր դարից ու դարաշրջանից վեր, ընդ որում՝ ոչ մի ապացոյց չբերելով իր այդ անապացուցելի փաստարկելու համար. «Մակայն, ընդգծելին այն է, - շարունակում է «գարգացնել» Թորոսեանը իր այս արտառոց տեսութիւնը, - որ Միսիթար Գօշը ամբողջովին չի ձուլում իր հասարակարգի սեղմիչ կադասարներին եւ յաղթահարելով դրանց դիմադրական ոյժը, վեր է բարձրանում դրանցից, որով վեր է բարձրանում եւ իր դարից եւ կանգնելով մարդու պաշտպանութեան դիրքերում, դարի ամենամեծ հակասութիւնը բնական եւ դրական իրաւունքներում լուծում է յօգուտ առաջինի (sic!)»³:

Թորոսեանը «Մարդու եւ անձի» պորբլէմի գիտական լուծումը, ժամանակավրէպ պնդումով՝ վերագրում է ... Գօշին, բարձրացնելով նրան նորից ու կրկին անգամ «համաշխարհային» մակարդակի մտածողի, ընդ որում՝ անպայման միայն «եզակի» մտածողի, որին եւ, իբր, յաջողուել է «պատմական առաջին եւ մեծ քայլը անել». «Մարդու եւ անձի հակադրութեան վերացման բնագաւառում պատմականօրէն առաջին քայլը պիտի լինէր խտրականութեան վերացումը մարդու եւ անձի կեանքի հանրային - իրաւական պաշտպանութեան բնագաւառից եւ Միսիթարը արել է պատմական այդ մեծ քայլը եւ իրաւունքի պատմութեան մէջ, բերես, առաջինն է եղել, որ արել է այդ քայլը (sic!): Այս կէտում է, որ նա վերացրել է մարդու եւ անձի հակադրութիւնը եւ հաւասարեցրել նրանց (sic!): Մա հսկայական մի առաջընթաց է իր դարի համար (sic!)»⁴: Ո՞ւմ են պետք այս յերիւրանքներն ու մերկապարանոց կեղծիքները ահաւոր փչոցներով զուգորդուած, որ տեղ են գտել

Մատենադարանի «ակադեմիական» այս հրատարակութիւնում...: Այդ բոլորից յետոյ եւ այդ բոլորի հետ՝ ի՞նչպէս կարելի է հաշտեցնել Թորոսեանի նաեւ հետեւեալ ... ինքնահերքումները. «Անշուշտ, սա չի նշանակում, թէ Միսիթար Գօշը վերացնում է (sic!) մարդու եւ անձի հակադրութիւնը ընդհանրապէս (sic!), թէ բոլոր կէտերում հաւասարեցնում է նրանց, դա անհնար էր եւ առարկայապէս (sic!), որովհետեւ հասարակարգը ներքուստ հասունացած չէր դրա համար (sic!) եւ ընդհանրապէս դա անհատի գործ չէ (sic!), եւ ենթակայապէս, որովհետեւ ինքը՝ Միսիթար Գօշը աւատական կարգերի ներկայացուցիչն էր ու ջերմ պաշտպանը, աւատական մտածելակերպի տիպիկ օրինակը (sic!): Այլ հասարակարգ, քան աւատականը, Միսիթարը չի պատկերացնում եւ չէր էլ կարող պատկերացնել (sic!)»¹: Դժուար է (եթէ չ'ասենք՝ անհնարին) պատկերացնել միեւնոյն էջում այսքան իրարամերժ հակասական ու անյարիր պնդումների «հաշտ ու խաղաղ» համատեղումը ...: Բայց հարկ է արձանագրել, որ միայն ամենավատ տեսակի էկլեկտիկ մտածողութեան համար բնորոշ նման շարադրանքը, երբ այդպիսի տողեր գրողը բնաւ չի գիտակցում մինչեւ անգամ իր պնդումների միջեւ տրամաբանական ներքին կապի խսպառ բացակայութիւնը...: Այնուամենայնիւ հարց տանք Թորոսեանին՝ հնարատ՞ր է աւատական հասարակարգում ենթադրել անգամ մարդու եւ անձի պորբլէմի սուսկ առաջադրումը (էլ չենք ասում՝ «լուծման» մասին) ... յօգուտ մարդու, երբ, Թորոսեանի իսկ խօսքերով ասած՝ «այդ հասարակարգը ներքուստ հասունացած չէր դրա համար...»:

Գօշազէտ իրաւաբաններից պրոֆ. Ա. Սուքիասեանը դեռեւս տասը տարի առաջ հրատարակած իր աշխատութիւնում արդարացի քննադատութեամբ եւ աններկբայ որոշակիութեամբ գրել է. «Գօշը կողմնակից չի եղել մարդկանց հաւասարութեան, ինչպէս սխալմամբ ենթադրել են ոմանք: Այդ սխալը առաջացել է նրա Դատաստանագրքի որոշ տողեր ոչ ճիշդ հասկանալու հետեւանքով»²: Թորոսեանը պարտաւոր էր անդրադառնալ այս դիտողութեանը՝ ... եթէ ինքը նորից «պաշտպանում» է արդէն իսկ ... մերժուած տեսակէտը:

Բայց քիչ է ասել «գաւելտական», երբ «մարդու եւ անձի» սոցիալական մեծ պորբլէմը գտեհկացնելով՝ Թորոսեանը նեղացնում եւ իմաստագուրկ է դարձնում՝ ... վեր ածելով մահմեդականի՝ հայի հետ հաւասար տուրք տալու ... գօշեան պահանջի. «... Մահմեդականը, հէնց միայն այն բանի համար, որ մահմեդական է, - «փաստարկում» է Թորոսեանը Գօշի ըմբռնումը «մարդու եւ անձի» պորբլէմի վերաբերեալ, - յրացուցիչ հարկ ու տուրք չի վճարում, մահմեդականը հայի նկատմամբ նուաստացած դրութեան մէջ չի դրում (sic!) եւ այլն: Ընդհակառակն, մահմեդականը վճարում է նոյն հարկերը, ինչ եւ հայը...»³:

Ահա թէ գործնականում ի՞նչ է նշանակում «մարդու եւ անձի» պորբլէմը, որ այդքան շոնդալից տեսութեամբ սկզբում ներկայացրեց Թորոսեանը՝ յանգնելով ... ճղճիմ հետեւութիւնների, այն է՝ մահմեդականի՝ հային հաւասար տուրք վճարելուն...: Ապա՝ դարձեալ մեծ ամպլումով Թորոսեանը գրում է. «Մարդու եւ անձի պորբլէմի որդտում կրօնական նեղմիտ երկվեդկուսած հակադրելով մարդափորութեան լայնախոհ դիտակէտը (ուշադրութիւն դարձրէք՝ մահմեդականի՝ հային հաւասար տուրք տալը համարում է «մարդափորութեան լայնախոհ դիտակէտ...» - Լ.Խ.),

¹ Նոյն տեղում:
² Նոյն տեղում, էջ ԽԲ:
³ Նոյն տեղում:
⁴ Նոյն տեղում, էջ ԽԲ:

¹ Նոյն տեղում:
² Ա. Սուքիասեան, նշուած աշխատ., էջ 19:
³ Նոյն տեղում, էջ 19:

Մյսիքար Գօշը կրօնական-գաղափարական հակաուսկորդներին հակադրում էր անելի մեծ ու վսեմ գաղափարաբանություն, զինական բշմամիների իրաւաբարձական խտրական համակարգին՝ *անխտրելի համակեցութեան մարդամեծար ծրագիրը (sic!)»¹*:

Մինչդեռ, իրականում, աւատական աշխարհայեացքի սահմանափակութեամբ պայմանաւորուած Գօշի «արդարամտութիւնը» մահմեդականի նկատմամբ՝ բնա չի համապատասխանում ... Թորոսեանի պնդումներին:

Գօշը երբէք էլ մահմեդականին լիարժէք մարդ չի համարել. նրա համար լիարժէք մարդը միայն «քրիստոնեան» է: Իսկ մահմեդականի եւ քրիստոնիայի միջեւ՝ «բազում է միջոցն»² յայտարարում է Գօշը, իր այս *խտրական* հայեացքը «հիմնաւորելով» անհաւատների մասին Պօղոս Առաքեալի այն հարցադրմամբ, թէ «զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի...»³: Բայց առաւել ցայտուն է երեւում Գօշի «անխտրելի համակեցութեան նախամեծար ծրագիրը» (Թորոսեան), երբ Գօշը իր կոնկրետ վերաբերմունքն է արտայայտում՝ մահմեդականի եւ քրիստոնեայի արեան զինը անհամեմատ բարձր է համարում քան մահմեդականինը, որովհետեւ նա, ըստ Գօշի, թէ՛ «բանի շնորհ»ով օժտուած մարդ է, եւ թէ՛, ի յաւելումն դրան՝ քրիստոնեայ, իսկ վերջին դէպքում նաեւ «ըստ աշտիճանաց յաւելցի»⁴: Մինչդեռ մահմեդականի արեան զինը՝ քրիստոնեայի արեան զնից երեքից մէկն է, ասում է Գօշը, որովհետեւ «*նչ բանի ունել շնորհ եւ ոչ զքրիստոնեութեան...*»⁵:

Գունագարդման եւ իղէլականացման համար հասարակագիտական մեծ գաղափարներով անպայման Գօշին օժտելու ապաշնորհ այս փորձերը անողոր փաստերի բացարձակ կեղծումով ու շպարումով՝ պարզապէս արջի ծառայութիւն են զօշագիտութեանը եւ սպանում ... հէնց Գօշին: Գօշը (եւ ոչ միայն Գօշը) բնաւ դրա կարիքը չունի:

Մասնագէտները հերքում են Թորոսեանի անյարիր պնդումները: Այսպէս, դեռեւս Բաստամեանցը ընդգծում էր, որ «Մյսիքարը հեռացնում է վկայ լինելու իրաւունքից անհաւատները: ... Այս կողմից՝ մեր հեղինակը հեռու չէ ուրիշ ազգերի օրէնսդրութիւններից: Կրօնը այնպիսի մեծ նշանակութիւն է առել տեղիւրեան զգացմունքին»⁶: Եւ այս աստղը կրօնական կոչումով գիտնական «Վարդապետ»ն է...:

Բ. Յարութիւնեանը Գօշի բնագրի ոռուսերէն իրատարակութեան Առաջաբանում նոյնպէս նշում է. «Կրօնական սահմանափակութիւնը ... խորք չէ նաեւ Գօշին: Մի շարք յօդուածներում ... տարբերութիւն է դնում քրիստոնեայի եւ այլադաւանի միջեւ՝ առաւելութիւնը տալով քրիստոնեային»⁷:

Նոյնը հաւաստում է նաեւ պրոֆ. Ա. Մուքիասեանը, երբ գրում է. «... Քրեական պատիժներ սահմանելու, հարկեր նշանակելու, վկաների ցուցմունքները ընդունելու

¹ «Մյսիքար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ ԼԱ:

² Վ. Բաստամեանց, նշուած աշխատ., բնագիր, էջ 60:

³ Նոյն տեղում, էջ 59:

⁴ Նոյն տեղում, էջ 309:

⁵ Նոյն տեղում:

⁶ Նոյն տեղում, էջ 158-159 (Առաջաբան):

⁷ «Армянский Судебник Мхитаря Гоша», пер. А. Паповяна, Ереван, 1954, стр. XXVII.

գործում Գօշը ցուցաբերել է *խտրականութեան ոգի «այլազգիների»* (իմա՝ մահմեդականների է Լ.Խ.) *նկատմամբ*¹: Դարձեալ՝ «... Գօշը, պատիժներ սահմանելիս, «այլազգիների» (մահմեդականների) հանդէպ եղել է, որպէս կանոն, անողոր»²:

Եթէ Թորոսեանը, հակառակ Գօշի, ճգնում է նրան վերագրել անյարիր պնդումներ, ապա զոնէ հաշուի պէտք է առնել եւ փորձել «հերքել» իրենից ստաջ հանդէս եկած մասնագէտների միահամուտ կարծիքը Գօշի ցուցաբերած «խտրականութեան» մասին՝ մահմեդականների նկատմամբ՝ հէնց ... զոշագիտութիւնը յարգած լինելու համար: Բայց Թորոսեանը նախընտրել է ... անտեսել նրանց:

2. Խճճումներ Դատաստանագրքի յօրինման ժամանակի որոշման՝ գիտական փաստարկումների փոխարէն

Հարկ է նշել, որ առանձնապէս պրոբլէմ չի եղել Գօշի Դատաստանագրքի յօրինման ժամանակի հարցը հայագիտութեան մէջ, մանաւանդ այն պատճառով, որ հեղինակը իր Նախադրութեան Ժ գլխում եւ գլխաւոր Յիշատակարանում (որը բացառութեան կարգով Գօշը գետեղել է եւ համարել *իրրել Նախադրութեան ԺԱ. գլուխ*) աներկբայօրէն յայտարարել, թէ *երբուհից* է ձեռնամուխ եղել Դատաստանագրքի ստեղծմանը, *ինչպիսի* նպատակադրում է ունեցել, հետեւաբար եւ՝ *ինչ* բնոյթ պէտք է կրի այն, նշելով միաժամանակ ընդգրկման տարողութիւնը, նիւթերի որոնման ու հաւաքման, ինչպէս եւ իրաւանորմերի ձեւակերպման աշխատանքները միայն ու միայն *յընթացս ժամանակի* կատարելու մասին: Փաստօրէն այս երկու գլուխները լրացնելով միմեանց եւ մէկը միւսի շարունակութիւնը լինելով *տրամադրում են բոլոր այն կարեւորագոյն մատենագիտական տեղեկութիւնները, որ ամբողջացնում են հեղինակի իսկ վկայութիւնները Դատաստանագրքի ստեղծման հանգա-մանքների մասին*:

Այսպէս, Նախադրութեան Ժ. գլխում Գօշը զգուշացնում է ընթերցողին այն մասին, որ իր գրելիքը սոսկ իրաւաբանական ուսումնասիրութիւն չէ, որ լինէր միայն իր մտորումների արգասիքը, այլ՝ *սկզբնաղբիրների համադրմամբ մարմնաւորուող իրաւանորմերի մի հաւաքածու*, որում պարփակուած իրաւանորմերը ստեղծուել են ոչ թէ միանգամից, այլ՝ դարերի ընթացքում, ոչ թէ առանձին անձնատրութիւնների, այլ բազմաթիւ հեղինակութիւնների ու հանրաճանաչ ժողովների կողմից. «... Մի՛ որ զայբակղեսցի թէ մեք մերովք մտացածին բանիք գրեմք զսա»³ ստորագեալի բայաժամանակով (իմա՝ սահմ. ներկայով) յուշելով, թէ աշխատութեան երկնումը ոչ թէ աւարտուած, այլ կատարման ընթացքում է գտնուած: Ասյա ընդգծելով ու բացայայտելով նոյն միտքը, կրկին անգամ Գօշը հաւաստում է. «... ոչ թէ մտացածին բանիք գրեմք զսա, այլ *ի գրոց եւ յազգաց ժողովներ զսա ի պէտս հաւատացելոց*»⁴: Որ Դատաստանագիրքը ՆՈՐ է շարադրում եւ նրա աւարտը

¹ Ա. Մուքիասեան, նշուած աշխատ., էջ 68:

² Նոյն տեղում, էջ 243:

³ Վ. Բաստամեանցի նշուած աշխատ., էջ 64:

⁴ Նոյն տեղում, էջ 66:

նախատեսել հնարարը չէ՝ նոյնիսկ համոզուած չլինելով, թէ Գօշը ինքը կը հասցնի՝ ամբողջացնել այն, թէ՞ ուրիշները կը շարունակեն,- այդ բոլորը պայմանաւորուած են բուն իսկ Դատաստանագրքի *բնոյթով*, որը յար եւ նման է եկեղեցական կանոնախմբերի, որոնք ոչ թէ մի անգամուայ եւ մի անհատի մտայղացման արգասիք են, այլ բազմաժամանակեայ եւ շատ անհատների ու ժողովների վաւերացման արդիւնք: Որպէսզի ոչ ոքի մօտ տարակոյսի նշոյլ անգամ չմնայ, որ Դատաստանագիրքը նոր պէտք է գրի՝ Գօշը գործածում է նաեւ «այժմ» բառը, իսկ «աւարտի» մասին նոյնիսկ նշում է, որ գուցէ ինքը չկարողանայ եւ ուրիշները այն վերջացնեն. «Բայց պարտ է գիտել, զի ոչ թէ այս միայն է զիրս Դատաստանի *գոր այժմս գրեմք*, եւ ոչ թէ ի մէնջ միայն պարտ է առնուլ զաւարտումն, զի զկանոնաց ունի զմասնութիւն: Ձի որպէս կանոնք զի ոչ միանգամ եղաւ եւ ոչ ի միում տեղուց եւ ոչ ի միջէ, այլ առ սակաւ սակաւ եւ ի բազում ժամանակս եւ ի բազմաց եղաւ եւ եղեալ լինի մինչեւ յախտեան»¹: Ամենադոյզն կասկածներն ու երկբայութիւնները փարատելու համար, թէ երբեւէ միանգամից հնարարու է Դատաստանագիրք ստեղծել՝ Գօշը կրկին զգուշացնում է, որ միայն ու բացառապէս դեռեւս *սկիզբն* է ինքը գրում եւ աստիճանաբար ժամանակի ու իրաւադէպերի ականատես եւ ականջաւոր լինելու պարագային տարբեր ժամանակներում այն պէտք է ճշխացուի ու աւարտի հասցուի: Աւելին. ոչ միայն մինչ այդ եղած, այլեւ յետագայում տեղի ունենալիք յանցագործութիւնների դատավարումները իմաստուն մարդկանց կողմից պէտք է ընդհանրացուեն եւ գրառուեն համապատասխան ձեւակերպումներով Դատաստանագրքում. «*Ձի այժմ ի մէնջ սկիզբն տորա եղեւ եւ ի դէպ է առ սակաւ սակաւ աճել յայլ եւ յայլ ժամանակս եւ որքան տեսցի եւ լինիցի դատաստան յիմաստուն արանց՝ զնոյն գրել ի կարգի, եւ այնպէս առ սակաւ սակաւ զալ ի կատարումն եւ կատարեալ լինել*»²:

Ասածից պարզ է ու աներկբայ, որ Նախադրութիւնը եւ Յիշատակարանը գրելիս առաջին անգամ կազմուող Դատաստանագիրքը դեռեւս պատրաստի եւ աւարտուն չի եղել եւ լինել չէր կարող, այլ *յընթացս ժամանակի* պէտք է իր մարմնաւորումն ու կերպարանքը ստանար: Ընչոյ այնպէս, ինչպէս Նիկիական ժողովի կանոնախմբմբը, Գիրք Արարածոցը, Աւետարանը՝ «ոչ ի միջէ գրեցաւ եւ ոչ ի միում ժամանակի, այլ ի այլեւայլ ժամանակի եւ յայրոց», եւ դա ոչ թէ «թերութիւն» (իր բառով՝ «պակասութիւն») է դիտուում, այլ հէնց այդպէս է պէտք («արժան է»), պայմանով, սակայն, որ ուրիշների կողմից արուող լրացումները լինեն «ուղիղ տեսութեամբ եւ բարեհաճոյ դատմամբ»³, նոյն ձեւով էլ «այս գիրք (իմա՝ Դատաստանագիրքը - Լ.Խ.) որ ի մէնջ սկսեալ եղեւ, եթէ ի մէնջ առ սակաւ սակաւ գրեալ լինի, եւ եթէ՝ ի բազմացն եւ յայլեւայլ ժամանակս գրեսցի, չէ՝ ինչ պակասութիւն, այլ՝ արժան է»⁴:

Պատահական չէ նաեւ, որ Յիշատակարանը հէնց Գօշի կողմից դիտուել է իբրեւ Նախադրութեան օրգանական մաս, ուստի եւ համարուել որպէս նրա ԺԱ. գլուխը՝ վերջաւորութեանը ունենալով հետեւեալ յիշեցումը. «*Կատարեցաւ Նախադրութիւնս գրոցս Դատաստանի ի ճառս մեռասան*»⁵:

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում, էջ 68:

⁴ Նոյն տեղում:

⁵ Նոյն տեղում, էջ 75:

Հէնց այն հանգամանքը, թէ ինչո՞ւ, խախտելով Յիշատակարանների զեւտեղման ընդունուած աւանդոյթը՝ աշխատութեան վերջում ներկայացնելու փոխարէն Յիշատակարանը յարակցուել է անմիջապէս Նախադրութեանը՝ դեռեւս չգրուած աշխատութիւնից առաջ, *պատճառաբանուած է եւ հիմնաւորուած* իր իսկ հեղինակի՝ Գօշի կողմից: Այսպէս, նորից յիշեցման կարգով եւ Յիշատակարանի՝ Նախադրութեանը կցելու հարկադրանքի առիթս Գօշը գրում է. «Բայց զճազութիւն յիշատակիս ի Նախադրութիւնս գրոցս դատաստանի եղեւ, զի *կատարած* (իմա՝ «աւարտ») - Լ.Խ) *տորա ի ձեռն մեր միանգամայն Ո՛Չ է*, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն»¹: Ի դէպ, նկատենք, որ Մխիթար Գօշը իր Յիշատակարանին ոչ թէ սովորական, այլ՝ *ծրագրային յայտագրի բնոյթ է տուել իրաւաբանական Յուշարձան յօրինելու իր մտայղացման մասին*, հաղորդելով միաժամանակ, թէ ահա *այսինչ* որոշակի քուականից ձեռնամուխ է լինում իրաւաբանական երկի ստեղծմանը՝ *ա՛յսպիսի* նպատակադրումով, աղբիւրների ու նիւթերի հէնց *ա՛յսպիսի* ընդգրկմամբ, եւ աշխատութեան բնոյթով պայմանաւորուած առանձնաշատութիւնների յարուցած դժուարութիւնների յաղթահարման նաեւ *ա՛յսպիսի* ուղիներով: Այս բոլոր հարցերի վրայ կանգ է առնում Գօշը՝ հիմնաւոր եւ համոզիչ փաստարկներով ապացուցելով, որ *այլ կերպ* հնարարու չէ Դատաստանագիրք գրել մի ժողովրդի համար, որը չի ունեցել նման յոյժ կարեւոր եւ կենսական երկի նախընթացը:

Ուղղամիտ եւ անաչառ ընթերցողներին դիմելուց յետոյ, որ նախանձախնդիր լինեն ծրագրուող իրաւաբանական իր աշխատութեանը ծանօթանալիս սպրդած սխալների ու վրիպումների սրբագրման նկատմամբ, Մխիթար Գօշը դարձեալ նրանց ուշադրութիւնն է հրահիրում՝ ասելով. «ԲԱՅՑ *ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղեւ ի քուականութեանս հայոց ՈՒԳ (= 1184թ.)*»², եւ որ՝ «որքան է կար ի գործ անկանխիք հիսեւ *ՋԿՆԻ* զիրս դատաստանի»³, այսինքն՝ «որքան կարողութիւն ունենք՝ ձեռնամուխ կը լինենք ՅԵՏԱԳԱՅՈՒՄ շարադրել դատական իրողութիւնները»: Անկեղծօրէն խոստովանելով սխալների ու վրիպումների անխուսափելիութիւնը նման աշխատութիւնում, Մխիթար Գօշը միաժամանակ գիտակցում եւ յիշեցնում է նաեւ դրա «պատճառները», որոնց բուն կարեւոր է համարում եւ այն իրողութիւնը, որ սկզբնադրիւրները դեռեւս հնարաւորութիւն չի ունեցել հաւաքելու եւ դրան-ցից շատ քչերն է իր ձեռքի տակ ունեցել, որպէսզի կարողանար իրեն հարկաւոր իրաւաբանական նիւթերը դուրս բերել եւ համադրել («եւ *զաղբաստութիւն մատենից յորոց զնիւթս հաւաքել ի դէպ էր բանից*»⁴):

Եւ ահա հեղինակի հաղորդած մատենագիտական այս յստակ եւ որոշակի բազմակի հաւաստումները չըմբռնելով՝ նորաթուխ զօշագէտը ամէն ինչ զվիսիվայր է ներկայացնում եւ այս անգամ *հակաճառում է ... ընդդէմ Գօշի ու նոյնիսկ ... «հերքում» նրան*, ընդ որում իր այս նկրտումների «հաստատման» համար եռանդուն կառչելով նաեւ հայագիտութեան մէջ տեղ գտած *բացառապէս* սխալ մեկնաբանումներից, որոնք վաղուց մերժուած են եղել մասնագէտների կողմից, չնայած իր այն յայտարարութեանը, թէ ինքը լաւակնում է «համակողմանիօրէն» քննել հարցը...:

¹ Նոյն տեղում, էջ 74:

² Նոյն տեղում, էջ 69-70:

³ Նոյն տեղում, էջ 74:

⁴ Նոյն տեղում, էջ 69:

Նախ՝ «նոր հետազոտողներից առաջինը» անհիմն կերպով Թորոսեանը համարում է Մ. Չամչեանցին, որը երբեք առանձնապես չի գրադուրել Մխիթար Գօշի աշխատության մատենագիտական հարցերով և նման նպատակ չի էլ ունեցել. այլ միայն իր Հայոց Պատմության մեջ, ի շարք այլոց, նշում է, որ Գատաստանագիրքը գրուել է 1184 թուականին¹, մի բան, որ ներելի է նրան: Այնուհետև Մ. Թեօփիլեանցին է յիշատակում Թորոսեանը իբրև «առաջին հետազոտողներից» մեկին, որն իր «Բառարան»ում Գօշի Գատաստանագրքի մասին միայն *նախագիտելիքներ* է հաղորդել և, իհարկե, նա եւս բնաւ յաւակնութիւն չի ունեցել որոշելու Գատաստանագրքի հեղինակման ժամանակը: Իբրև այդպիսին Թորոսեանը վկայակոչում է նաև Ալիշանին և յետոյ՝ Բատաստանցին: Սակայն զգալով, որ թիրիմացութիւնը չափազանց աչք ծակող է, Թորոսեանը ինքնապահովագրման համար իսկոյն դիմում է այդ «նոր հետազոտողների» ... հերքմանը՝ գրելով. «Սակայն պետք է նշել, որ մինչև Վ. Բատաստանցը ոչ որ յատկապէս չի քննել Գատաստանագրքի ստեղծման քուակնի հարցը և չի հաստատել իր տեսակէտը»²:

Չհասկանալով Գօշի գրաբարեան այն պարզունակ բաղաձայնները, որ վերը բերեցինք, Թորոսեանը զարմանալի է թերըմբոնում ցուցաբերում՝ ապշեցուցիչ մակարեքումներ անելով, որոնք ընդհանրութեան ու համապատասխանութեան անզամ հեռաւոր եզրեր չունեն Սկզբնաղբիւրի հետ: Ըստ Թորոսեանի՝ «Մխիթարը ոչ թէ չգիտէր, թէ երբ է աւարտելու Գատաստանագիրքը, այլ *հաստատ գիտէր, որ երբեք չի աւարտելու այն ոչ ինքը և ոչ էլ իրենից յետոյ որեւէ մէկը (sic!)*, որովհետև ըստ նրա՝ Գատաստանագիրքն առհասարակ աւարտուող գործ չէ»³: Եթէ իրօք Գօշը նման պնդում արած լինէր, խոստովանում ենք՝ մեծագոյն անհեթեթութիւն դուրս տուած կը լինէր. մի՞թէ առհասարակ որեւէ մէկը (բացի Թորոսեանից) երբեւէ կարող է պատկերացրած լինէր, թէ աշխարհում գոյութիւն ունի ինչ-որ գիրք, որ բնաւ աւարտուող չէ՝ ոչ հեղինակի, ոչ էլ ... որեւէ մէկի կողմից...: Ի դէպ, նոյնիսկ սրբագնացուած աստուածաբանական երկերին նման վերագրումներ դեռես չեն արուել...:

Բայց նոյն Թորոսեանը ընդամենը երկու էջ յետոյ ... հերքում է իր իսկ պնդումը, որը «հետադրական» բնոյթ ունենալով՝ յանուն պերճախօսութեան՝ իմաստն է գոհաբերել...: Միեւնոյն բառերով, բայց արդէն հաստատական հաւաստումով Թորոսեանը գրում է. ... «Մխիթարը, բնական է գիտէր (sic!), թէ երբ է աւարտուել Գատաստանագիրքը (sic!), և եթէ նա ասում է, որ Գատաստանագրքի սկիզբն ու աւարտը եղել են նոյն տարում (sic!), ապա ոչ մի հիմք չկայ չհաւատարու հեղինակին...»⁴:

Երբ Գօշը ասում է, թէ Գատաստանագիրքը իր բնոյթով նման է կանոնախմբերին ու Աւետարանին, որոնք միանգամից չեն գրուել և միայն մի հոգու ստեղծագործութիւնները չեն եղել, այդպէս և Գատաստանագիրքը հնարարը չէ մի անզամից և բացառապէս մի հոգու կողմից գրուի, այլ աստիճանաբար՝ տարբեր ժամանակներում և, հնարարը է, նոյնիսկ տարբեր մարդկանց կողմից հեղինակուի՝ պայմանով, սակայն, որ «ուղիղ տեսութեամբ և բարեհաճոյ դատմամբ» լրացումներն արուեն, ապա այս հանգամանքը ոչ թէ «թերութիւն» է, այլ թելադրուած է

Գատաստանագրքի բուն իսկ էութեամբ, մի՞թէ սրանից կարելի է հետեցնել, թէ Գատաստանագիրքը «առհասարակ աւարտուող գործ չէ», հետեւաբար եւ՝ «երբեք չի աւարտելու այն ոչ ինքը և ոչ էլ իրենից յետոյ որեւէ մէկը», ինչպէս «հասկացել» է Թորոսեանը: Ո՛չ, երբեք: Թորոսեանը իր ըմբոնողութեամբ պարզապէս ուզեցել է այս անզամ ջրել ... Գօշին և ... անյարմար վիճակում դրել նրան՝ պնդումներ անելով ի հեճուկա... բնագրային հաւաստումների:

Եւ ահա սրանից Թորոսեանը բխեցնում է մի երկրորդ՝ նախորդին բոլորովին ներհակ մի պնդում. «Բայց սա բնաւ ապացոյց չէ (sic!) այն բանի, յանկարծ յայտարարում է Թորոսեանը, որ Գատաստանագիրքը *տուեալ ժամանակում՝ 1184թ. մի ամփոփ ամբողջութիւն չէր, աւարտուած չէր (պայմանականօրէն) ...*»¹: Ահա թէ ի՜նչ. ըստ Թորոսեանի, Գօշը, իբր, իր Նախադրութեան Ժ. գլխում և Յիշատակարանում խօսելիս է եղել *երկու տեսակ* Գատաստանագրքերի մասին, մէկը՝ «պայմանական», այն է՝ «աւարտուած», միւսը՝ «անպայմանական», այն է՝ «առհասարակ չաւարտուող» Գատաստանագրքի մասին, որը երբեւէ ոչ որի կողմից ոչ մի ժամանակում լոյս աշխարհ չի գալու...: Եւ ահա նորայայտ այս գօշագէտը «զարգացնում» է պայմանական և ոչ-պայմանական (ֆիկտիւ) Գատաստանագրքերի առաջացման իւրօրինակ իր «տեսութիւնը»: Շանթաբանաց դրանց:

«Մխիթարի պատկերացմամբ, ուրեմն, շարունակում է Թորոսեանը, Գատաստանագիրքը գրելը մի երկարատեւ, շարունակական, բայց և չաւարտուող ու անվախճան (???) պրոցէս է: Այդ պրոցէսի սկիզբը ոչ թէ Գատաստանագրքի սկիզբն է, այլ Գատաստանագիրքն ամբողջութեամբ է սկիզբ(sic!)»²: Ըստ այս տողերի հեղինակի, Գատաստանագիրքը գրելը մի բան է, իսկ արդէն գրուած Գատաստանագիրքը՝ ուրիշ բան, ընդ որում իրենց բնոյթով նոյնիսկ իրար *հակադրուող* յանգեղով այսպիսի անհեթեթութեան. գրուած Գատաստանագիրքը պայմանական սկիզբ է ... յստեթօրէն գրուող (յայտնի չէ թէ ում կողմից) Գատաստանագրքի, որը սկիզբ ունի, բայց վերջ չունի...:

Երկրորդ անհեթեթութիւնն այն է, որ, իբր, Գատաստանագիրքը գրելու «պրոցէսն սկսում է ոչ թէ Գատաստանագիրքը գրելու ձեռնարկումով (???)», այլ Գատաստանագիրքն *ինչ-որ մի կէտում (???) պայմանականօրէն աւարտի հասցնելուց յետոյ*»³: Եթէ «տեսական» այս ճամարտակութիւնը վերլուծելու լինենք՝ կը ստացուի ... տավտալոգիա և մի բան էլ արելի. գրելը սկսում է ոչ թէ (sic!) Գատաստանագիրքը գրելու ձեռնարկումով, այլ ... տուեալ Գատաստանագիրքը ամբողջութեամբ աւարտած լինելով...:

Երրորդ անհեթեթութիւն. «Քանի դեռ Գատաստանագիրքը պայմանականօրէն աւարտուած չէ, քանի դեռ տուեալ ժամանակահատուածում հեղինակը չի արել այն ամենը, ինչ հնարարը է համարել և, հետեւապէս, Գատաստանագիրքը դեռ շրջանառութեան մեջ է, այդ պրոցէսը (իմա՝ Գատաստանագիրքը գրելու պրոցէսը - Լ.Խ.) չի կարող սկսուել (???)»⁴: Այսպէս, ուրեմն, ստացում է բնական զանշտական պնդում, որն իր երկարական չունի հայագիտութեան մեջ. եթէ Գատաստանագիրքն աւարտած չէ հեղինակը, ապա դա դեռես Գատաստանագիրքը գրելու «պրոցէսի»

¹ Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1796, էջ 96:

² Խ. Թորոսեան, «Մխիթար Գօշ, Գիրք Գատաստանի», Առաջաբան, էջ ԽԳ:

³ Նոյն տեղում, էջ ԽԵ:

⁴ Նոյն տեղում, էջ ԽԸ, ծան. 58:

¹ Նոյն տեղում, էջ ԽԵ:

² Նոյն տեղում, էջ ԽԶ:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում:

սկիզբ համարել չի կարելի...: Հարց տանք Թորոսեանին՝ բա ի՞նչ պետք է համարել...:

Չորրորդ անհեթեթություն, որը, սակայն, ժխտումն է նախորդի. «Մխիթարի խօսքերը վկայում են, որ այդ պրոցեսն է (իմա՝ Դատաստանագիրք գրելու - Լ.Խ.) սկսուել... «Ձի այժմ ի մէջ սկիզբն սորա եղել» չի նշանակում, թէ Դատաստանագիրք գրել սկսուեց (sic!), Նախադրութեան կամ Դատաստանագրքի առաջին յօդուածի սկիզբը դրուեց, այլ նշանակում է, որ Դատաստանագրքի, որպէս ամբողջութեան (...), օրէնսգիրք ունենալու սկիզբը դրուեց» (sic!): Ապշում են՝ կարդալով այս հակասական եւ իրարամերձ պնդումները, միաժամանակ չես կարողանում զսպել քեզ նաեւ հետեւեալ հարցը տալուց Թորոսեանին. արդեօ՞ք սքափ վիճակում է գրել այդ տողերը, որոնք հրամցուած են «տեսութեան» յաւակնութեամբ...:

Հինգերորդ անհեթեթություն. ըստ Թորոսեանի, Յիշատակարանը Գօշը դիտմամբ չի գրել որպէս թէ արդէն իսկ գրուած իր Դատաստանագրքի վերջում, այլ Նախադրութեանն է կցել, որպէսզի ... ուրիշները կարողանան շարունակել Դատաստանագիրքը գրել, եւ ո՛չ թէ «փակ» տեսնելով Յիշատակարանի պատճառով հրաժարուեն...: Այդպէս էլ «մեկնաբանում» է Թորոսեանը Գօշին նոյնիսկ այն դէպքում, երբ բերում է նաեւ իբրեւ թէ «համապատասխան» քաղուածքը, որը, սակայն, լիովին հերքում է նման ենթադրութեան հնարատր նշոյլն անգամ: Հասկացութիւնների ահաւոր շփոթմամբ Թորոսեանը տեսք, թէ ինչպէս է «բացատրում». «Եւ որովհետեւ Մխիթարի համոզմամբ Դատաստանագիրքը արարատող գործ չէ (sic!), այն անընդհատ պետք է աճի, լրացուի, շարունակուի, հէնց այդ պատճառով է, որ նա իր յայտնի Յիշատակարանը կցել է Նախադրութեանը («Բայց գծագրութիւն յիշատակիս ի Նախադրութիւն գրոցս Դատաստանի եղել, զի կատարած սորա ի ձեռն մեր միանգամ ոչ է») եւ Դատաստանագրքի վերջին, ինչպէս պետք է լինէր ըստ սովորութեան, որպէսզի «չփակի» Դատաստանագիրքը, հնարատրութիւն տայ լրացնելու «այլոց, որք կամին գրել եւ յաւելու (sic!)»: Մինչդեռ Գօշը, հէնց այդ քաղուածքով նկատի ունենալով, ըստ երեւոյթին, Թորոսեանի նման «մեկնաբան»ին՝ զգուշացնում է. «Բայց Յիշատակարանի գրութիւնը Դատաստանագրքի Նախադրութեան մէջ ընդգրկուեց, որովհետեւ սրա (իմա՝ Դատաստանագրքի - Լ.Խ.) արարող մի անգամ մեր ձեռին չի եղել», որ նշանակում է՝ «Դատաստանագիրքը ամենեւին դեռեւս գրուած չէր...», տրամագծօրէն հակառակը Թորոսեանի պնդման: Իսկ ինչ վերաբերում է Թորոսեանի այն «մեկնաբանմանը», թէ Գօշը իր Յիշատակարանը Նախադրութեանն է կցել, որպէսզի «չփակի» եւ չխանգարի ուրիշներին Դատաստանագիրքը յաւելումներով լրացնելու համար, ապա նոյնիսկ Գօշը Չմմառի ձեռագրի «Դատաստանագրքի» վերջում գրած իր մի այլ Յիշատակարանում ասում է. «... Այժմ մեր հանգուցանել կամեցաք գրելով ըստ կարի, ո՛չ խափանել զայլոց, որք կամին գրել եւ յաւելու»²:

Այժմ երկու խօսք Չմմառի ձեռագրի մասին, որում պարփակուած Յիշատակարանի վկայակոչմամբ Թորոսեանը փորձում է ամբողջութեամբ հերքել Գօշի՝ իրարաբանական երկ ստեղծելու վերաբերեալ գիտական փաստարկումները, որ վերը ցոյց տուեցինք:

¹ Նոյն տեղում, էջ ԽԶ:

² Մ. Զէշիշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Չմմառի վանքի մատենարանին, Վիեննա, 1964, էջ 425:

Նախ՝ Յիշատակարանի հասցեագրման պարզումը Թորոսեանը լռութեամբ՝ «սուս ու փուս» վերցրել է Վ. Հացունուց, երբ վերջինս դեռեւս 1942 թ. «Բազմավեպ»ում տպագրած իր յօդուածում ճշդել է, որ Յիշատակարանը իբրեւ ձեռագրի «հաւատարմագիր» Գօշը յղել է կաթողիկոս Գրիգոր Տղային¹: Բայց Թորոսեանը «չի մոռացել» յիշատակել տողատակի դիտողութեամբ, որ Հ. Ոսկեանը իր «Մատնագրական քննութիւններ» երկում (Վիեննա, 1926, էջ 147-154) «այլ» կարծիք է ունեցել՝ հասցեատէր համարելով Աղուանից Մտեփանոս կաթողիկոսին..., ուստի տպատրութիւն բողոքելով, թէ Յիշատակարանի հասցեատիրոջը Թորոսեանը ինքն է «բացայայտել»...: Թորոսեանը նաեւ դժկամացել է յիշատակել նոյնիսկ իր դէմ բանավեճ մղած էմ. Պիազեանին, որը հիմնաւոր ու լուրջ առարկութիւններ է ունեցել ինչպէս Դատաստանագրքի գրութեան ժամանակի, այնպէս եւ խմբագրութիւնների ու այլ հարցերի թորոսեանական «մեկնաբանումների» վերաբերեալ²: Սա՝ իմիջիայլոց:

Շարունակենք մեր քննութիւնը. Յիշատակարանը լինելով անթուակիր, ունի, սակայն, ուշագրաւ հաւաստումներ Դատաստանագրքի արարտման մասին: Գօշը յայտնում է, որ Նախադրութիւնում զետեղուած իր գլխաւոր Յիշատակարանի խոստմանը համաձայն, որ 1184 թուականին սկսած Դատաստանագիրքը յարածիզ ժամանակում գրելու է, «այժմ» արդէն արարտի է հասցրել Դատաստանագիրքը. «Փառք Փրկչին մերոյ..., որ ետ գղադարումն աստանար տալ Գրոցս դատաստանի: Ձի թէն յառաջագոյն ասացաք գրելով զսակաւ Յիշատակարանն, եթէ արարտումն սորա ոչ է, սակայն ԱՅԺՄ մեր հանգուցանել կամեցայ գրելով ըստ կարի...»³: Այս մէջբերումից ակնբայս է, որ Գօշը հետեւողական լինելով իր հաւաստումների մէջ, երբէ՞ք չի հակասել Նախադրութեան մէջ զետեղուած Յիշատակարանի նկատառումներին, երբ այս վերջին Յիշատակարանն է գրել Դատաստանագրքի արարտի մասին յայտնելիս: Սա մեկնակէտային նշանակութիւն ունի՝ թէկուզեւ «արարտական» Յիշատակարանի վկայութիւնները ճիշդ ըմբռնելու համար:

Բայց «արարտական» Յիշատակարանը անթուակիր լինելու պատճառով անորոշ է դառնում այստեղ նաեւ շատ կարեւոր «այժմ» բառը, որպէսզի պարզուի, թէ երբ է արարտել Գօշը իր Դատաստանագիրքը: Այդ «այժմ» բառի բացայայտմամբ էլ պայմանաւորուած է նաեւ յաջորդ նախադասութեան իմաստը, որի վրայ յենուելով, բայց նախորդից՝ «այժմ»ից անջատելով՝ Թորոսեանը այս անգամ Ղ. Ալիշանից որդեգրած մի այլ չափացուցում կարծիք⁴ առաւել «հիմնաւորելու» եւ իբրեւ «բացարձակ ճշմարտութիւն» ներկայացնելու համար չի խնայում... նոյնիսկ Գօշին՝ դուրս բերելով նրան իբրեւ յեղեղուկ մի գիտնականի, որն զբաղուած է եղել կարծէք, ինքնախճճումներով ու ինքնահերքումներով...:

Այսպէս, Յիշատակարանի շարունակութեանը կարդում ենք. «Եւ թէպէտ յամի, յորում սկսաք, (այսպէս) գրեցաք զեղեալ չափս դատաստանի, սակայն յաղագս

¹ Տե՛ս «Բալմավեպ», 1942, էջ 5-6:

² Տե՛ս Ն. Թորոսեան, «Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ ԽԶ, ծան. 57:

³ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1964, Թ. 2:

⁴ Մ. Զէշիշեան, Մարդ ցուցակ..., էջ 425:

⁵ Ղ. Ալիշան, Հայաստանում, էջ 408, էջ 2:

հալածանացն որ եհաս մեզ, ընտանի եւ ոչ օտար, *յապաղեալ գրել զՅիշատակարանս զայստիկ*¹

Այս քաղուածքի «գրեցար» ստորագեալը սերտօրէն առնչուած է նախորդ նախադասութեան «այժմ» բառի հետ, որ կրկնութիւնից խուսափելու համար Գօշը նորից չի կրկնել «այժմ գրեցար», ինքնըստինքեան դա հասկանալի լինելու պատճառով: Բացի այդ, Չմմառի ձեռագրացուցակը կազմող՝ հայագէտ Մ. Զէշիշեանը, միանգամայն ճիշդ ըմբռնելով Գօշին, փակագծում աւելացրել է, իմաստի պարզեցման եւ հնարատր քիւրիւսագութիւններ փարատելու համար, «այսպէս» բառը, որի վրայ, սակայն, Թորոսեանը ուշադրութիւն չի դարձրել: Հետեւաբար՝ «Եւ թէպէտ յամի, յորում սկսաք, (այսպէս) գրեցաք զեղեալ չափս դատաստանի» նշանակում է՝ «թէն այն տարում, երբ սկսեցինք, այժմ (այսպէս) գրեցինք Դատաստանագրքի ներկայ ծաւալը», եւ ո՛չ թէ՝ «Թէպէտ այն տարում, երբ սկսեցինք, գրեցինք Դատաստանագրքը ներկայ (դրուած/տրուած) չափով...», ինչպէս «հասկացել» է Թորոսեանը Ալիշանի եւ Հացունու հետեւողութեամբ:

Յիշատակարանը թուական չունենալու պատճառով Վ. Բաստամեանցը իրաւացիօրէն վերապահութիւն է յայտնել Դատաստանագրքը հէնց նոյն տարում աւարտուած լինելու վերաբերեալ, մանաւանդ, որ առանց նախընթաց «այժմ» բառի՝ նշուած վիճելի նախադասութիւնը իրօք «անորոշութիւն» է պարփակում: Մինչդէռ Թորոսեանի համար, բանից պարզում է, նոյնիսկ նշանակութիւն չունի, թէ այս Յիշատակարանը Գօշը ե՞րբ է գրել. «... Յիշատակարանն, իրօք, չունի թուական, *բայց կարեւորը այն չէ, թէ երբ է գրել Միսիթարն այդ տողերը (sic!),* այլ այն, թէ ինչ է գրել այդ տողերում»²: Թորոսեանի համար «թէպէտ յամի յորում սկսաք, (այսպէս) գրեցաք զեղեալ չափս դատաստանի» «խօսքերը շատ պարզ են» եւ նոյնիսկ կշտամբում է Բաստամեանցին, որ չի հասկացել դրանք. «Միայն զարմանալ կարելի է, որ Վ. Բաստամեանցը,՝ գրում է նա,՝ դրանք համարում է անորոշ եւ դժուար վերաբերելի ամբողջ Դատաստանագրքի աւարտման: *Աւելի որոշ ու պարզ դժուար թէ կարելի լինէր ասել այն, ինչ ասել է Միսիթարը ...*»³:

Եւ որպէսզի «շատ հեշտ» ըմբռնուած նախադասութեան իմաստը ծայրը ծայրին հասցնի, Թորոսեանը այս անգամ հաշուի առնելով նաեւ լրջմիտ ընթերցողին, բայց դարձեալ ի հեճուկս Գօշի, յայտարարում է. «... Իրօք կարող է շատ էլ հաւանական չթուալ, որ ծաւալով այդքան մեծ, արժէքով այդքան բաժր, ըստ էութեան այդքան բարդ ու պատասխանատու, գործնական-գիտական-քաղաքական մեծամեծ դժուարութիւնների յաղթահարման հետ կապուած մի գործ, այս տարակուսանքը եւս վերանում է մի շարք տուեալներով հաստատուող այն պարզ իրողութեամբ (sic!), որ *Դատաստանագրքը կազմելու համար անհրաժեշտ նախապատրաստական ամբողջ աշխատանքը Միսիթարը կատարել է մինչեւ 1184 թ. եւ այդ թուականին միայն ի մի է բերել ու թղթին յանձնել կուտակուած նիւթը*⁴: Կրկնութեան սիրահար լինելով՝ Թորոսեանը նոյն հարցը արժարժում է նաեւ Ծանօթագրութիւնների բաժնում գրելով. «Ակնյայտ է, որ այդպիսի մեծ, խիստ պատասխանատու եւ կարի ծանրակշիւ գործը *մի տարում չէր կարող իրականանալ, եթէ նախապատրաստուած չլինէր անհրաժեշտ ու տեսական աշխատանքը*»:

քով: Միսիթարն է այդ մասին վկայում... (sic!)»⁵: Ինչպէս կը նկատի ընթերցողը, եթէ Առաջաբանում Թորոսեանը միանգամայն վճռական կարծիք յայտնում՝ «Դատաստանագրքը կազմելու համար անհրաժեշտ նախապատրաստական ամբողջ աշխատանքը Միսիթարը կատարել է մինչեւ 1184 թ. եւ այդ թուականին միայն ի մի է բերել ու թղթին յանձնել կուտակուած նիւթը», ապա Ծանօթագրութիւններում՝ նոյն այդ կարծիքը ... թէական է հրամցնում՝ ապացուցելով իր իսկ քերահաւատութիւնը իր պնդումների նկատմամբ: Իսկ ի՞նչ կ'ասի Թորոսեանը, երբ ոչ այլ ոք, քան Գօշը դեռեւս իր առաջին՝ հէնց 1184 թուականին գրած Յիշատակարանում երկու անգամ ընդգծել է՝ Դատաստանագրքը գրելու կապակցութեամբ իր դժուարութիւնները թուարկելիս, որ սկզբնաղբիւրները դեռեւս ձեռքի տակ չեն եղել, առաւել եւս՝ «կուտակուած նիւթ» հնարատր էր միայն յետագայում հայթայթել. ա) «եւ *զաղթատութիւն մատենից, յորոց զմիոքս հաւարել ի դէպ էր բանից*»⁶: բ) «Եւ արդ՝ որքան է կար ի գործ անկանիւք ՀԻԲՄԵԼ ՉԿՆԻ զիրս դատաստանի»⁷: Կարծում ենք՝ մեկնաբանութիւններն աւելորդ են:

Բայց տարօրինակն այն է, որ այս բոլորից յետոյ դեռ Թորոսեանն է յաւակնում «կշտամբել» Բաստամեանցին՝ նրա փաստարկների միայն «արտաքուստ» համոզականութեան մեղադրանքով. «Վ. Բաստամեանցի այս տեսակէտը, որ թէն ճիշդ չէ (sic!), ինչպէս կը տեսնենք ստորեւ, ընդունուեց ուսումնասիրողների կողմից, հաւանաբար այն պատճառով, որ *արտաքուստ համոզիչ են թուում նրա փաստարկները*⁸: Մինչդէռ, եթէ պէտք է խոստովանել ճշմարտութիւնը (եւ անպայման պէտք է), ապա ասենք, որ «փաստարկների արտաքուստ» համոզականութիւնը հէնց իրեն՝ Թորոսեանի «բանասիրական աշխատանքների» միտումութիւնն է բնորոշում...: Եւ անհամեստութիւնը նաեւ այն է, որ երբ Թորոսեանը ուզում է հերքել Բաստամեանցի փաստարկների «արտաքուստ» համոզականութիւնը, «աւելի ուշագրաս» տուեալներով՝ իբրեւ «վկայութիւն» ... ընթերցողին յղում է իր մի յօդուածին...⁹:

Այսպէս, ուրեմն, ոչ մի կասկած չկայ այն բանում, որ *Դատաստանագրքը գրուել է սկսուել 1184 թուականից եւ անընդհատ համալրման ու ամոզացման գործընթացում է եղել մինչեւ սոյն Յիշատակարանի հաւաստումը*:

Ինչ վերաբերում է Դատաստանագրքի աւարտին, ահա ամենայն հաւանականութեամբ պէտք է ենթադրել, ելնելով անթուակիր այս Յիշատակարանի հասցեատիրոջ՝ կաթողիկոս Գրիգոր Տղայի մահուան թուականից, ամենաուշը մինչեւ 1193 թուականը⁶:

Ինչպէս կը նկատի ընթերցողը, Թորոսեանը ոչ միայն չի լուծել Դատաստանագրքի յօրինման մօտաւրապէս ճիշդ ժամանակը, այլեւ Գօշի իսկ հաղորդած հաւաստումների զարմանալի անըմբռնողութեամբ առաւել քան խճճել է մատենագիտական ստույգ վկայութիւնները եւ ճգնել է հերքել... մինչեւ անգամ Գօշին՝ հետեւութիւններ անելով հակառակ Գօշի:

¹ Տե՛ս Մ. Զէշիշեան, նշուած աշխատ., էջ 425:

² «Միսիթար Գօշ, Գիրք դատաստանի», Առաջաբան, էջ ԽԸ, ծան. 58:

³ Նոյն տեղում, էջ ԽԷ, ծան. 58:

⁴ Նոյն տեղում, էջ ԽԸ, ծան. 58:

¹ Նոյն տեղում, էջ 534:

² Վ. Բաստամեանց, էջ 69:

³ Նոյն տեղում, էջ 74:

⁴ «Միսիթար Գօշ, Գիրք դատաստանի», Առաջաբան, էջ ԽԴ:

⁵ Տե՛ս նոյն տեղում, էջ ԽԴ:

⁶ Ի դէպ, Թորոսեանը նոյնպէս հաւանական է համարում այս ենթադրութիւնը, բայց եւ այնպէս դա «յարմար չի գալիս» իր մտասնեռումին եւ ... հրաժարում է (տե՛ս նոյն տեղում, էջ ԽԶ):

3. Երբ խմբագրութիւնները բնութագրում են «սոցիո-լոգիական» կեղծ հիմունքներով... տեքստային անգրագետ կազմութիւնների հիման վրայ՝ «ի հիմնատրումն» սակաւարժէք բնագրերի անհարկի հրապարակման

Բնագրագիտական անառարկելի ճշմարտութիւն է, որ մատենագրական որեւէ Յուշարձանի մի շարք խմբագրութիւնների առկայութեան պարագային մեկնակէտային առաջին խնդիրը, որ ծառայում է աշխատասիրողի առջեւ, վերաբերում է դրանցից ամբողջականի եւ յաւագոյնի ընտրութեանը, որը դժբախտաբար, ճիշդ չի լուծուած ներկայ դէպքում: Այդ իսկ պատճառով Գօշի սակաւարժէք բնագրային տարբերակների հրապարակումը ո՛չ թէ առաջընթաց քայլ է արդէն իսկ հայագիտութեան մէջ շուրջ մի հարիւրամեակ առաջ լոյս տեսած ամբողջական եւ լաւագոյն բնագրի համեմատութեամբ, այլ՝ ցաւազնօրէն ետընթաց քայլ է, հետեւաբար՝ նաեւ անվաւեր: Պարզաբանենք աղբիւրագիտական ձախողանքի այս մեղադրանքը, որ ամենածանրակշիռն է բնագրագիտական միւս «լուծումների» համեմատ, որոնց անդրադառնալու ենք յաջորդաբար՝ յընթացս մեր այս քննախօսութեան:

Գօշի Դատաստանագիրքը, ինչպէս յայտնի է հայագիտութեանը, ունեցել է Ընդարձակ եւ Համառօտ խմբագրութիւններ, ըստ որում Ընդարձակը, իր հերթին, ներկայացնում է հեղինակային մշակման երկու տարբերակներով՝ *նախնական* եւ *վերջնական* տեքստերով¹: Ըստ այսմ՝ Ընդարձակի նախնական տեքստը յատկանշում է ձեւակերպումների թերատութեամբ, ճապադութեամբ ու լեզուա-ճակատական անմշակութեամբ, աշխարհիկ եւ եկեղեցական կանոնների ոչ-տարանջատմամբ ու խմբատրամբ, եւ երեք կարեւոր յօդուածների բացակայութեամբ: Մինչդեռ *վերջնական* տեքստը բնութագրում է՝ ձեւակերպումների համեմատական յստակութեամբ ու աներկմտութեամբ, լեզուա-ճակատական առաւել մշակմամբ ու յղկուածութեամբ, աշխարհիկ եւ եկեղեցական կանոնների տարանջատմամբ ու համապատասխան խմբատրամբ, եւ, վերջապէս յօդուածների լրիւութեամբ: Բեւեռացումը այնքան ակնբախ է, որ ասուածի ապացուցման համար բնաւ անհրաժեշտութիւն չի զգացում փաստեր առաջադրելու: Սակայն, այնուամենայնիւ, ընթերցողին պատկերացում տալու համար Ընդարձակ խմբագրութեան *նախնական* եւ *վերջնական* տարբերակների բնագրային ընթերցումների լեզուա-ճակատական մշակման *որակական* տարբերութիւնների մասին, բաւարարուենք, դիցուք, մի երկու նմուշի առադրումով.

Նախնական տարբերակ

«Վեցերորդ՝ գրէթէ երդմամբ հաստատի դատաստան, եւ Տէր արգել կամելով բնաին զհաւատացեալս զմեզ լինել» (Թոր., էջ 2):

Վերջնական տարբերակ

«Վեցերորդ՝ զի ի դատաստանի ի հարկէ երդումն մտանէ, եւ Տէրն արգել զերդումնն կամելով զմեզ՝ ճշմարիտ հաւատացեալս լինել, զի այոն՝ այո լինի, եւ ոչն՝ ոչ, որ է հան՝ հա եւ ոչն ոչ» (Բաստ., էջ 9):

Նախնական տարբերակում ճապաղ է՝ ա) «երդման» անհրաժեշտութեան հիմնատրումը դատավարումներում «գրէթէ» բառով, որ Թորոսեանը սխալագրութեամբ ներկայացրել՝ «գրէթէ» բառածեւով: Մինչդեռ *վերջնական* տարբերակում ձեւակերպումը որոշակի է եւ յստակ՝ հաւաստելով, որ «երդումը դատարանում մուծուել է *անհրաժեշտաբար*»: բ) *նախնական* տարբերակում «Տէր արգել» նախադասութեան ուղիղ խնդիրը բացակայում է, որով անհասկանալի է, թէ ի՞նչը արգելեց տէրը: Մինչդեռ *վերջնական* տարբերակում առկայ է ուղիղ խնդիրը՝ «զերդումնն», որով նախադասութեան իմաստը բացայայտ է դարձել: գ) *Նախնական* տարբերակում դերբայական նախադասութեան («կամելով բնաին զհաւատացեալս զմեզ լինել») փոխանուն գոյականը չունի որոշիչ, որը շատ կարեւոր է տուեալ դէպքում, մինչդեռ *վերջնական* տարբերակը ունի՝ «ճշմարիտ հաւատացեալս»: դ) նախնական տարբերակը երդման էութիւնը բացայայտող եւ ամբողջ նախադասութիւնը պարզաբանող կրկնակ երկրորդական նախադասութիւնները չունի, որոնք առկայ են *վերջնական* տարբերակում, որով ձեւակերպումը դարձել է ամբողջական եւ սպառիչ: «զի այոն այո լիցի, ոչն՝ ոչ, որ է հան հա, եւ ոչն՝ ոչ»:

Համեմատենք պատահական մի լեզուամուշ ես.

Նախնական տարբերակ

«Չորրորդ՝ զի նուագեաց հըմտութիւն ի մէնջ փորձել ըստ ժամանակի, եւ ազգի, եւ աշխարհաց զփոփոխելն ըստ պատահման, եւ ոչ նման Արիմաց, եւ Մարգարէից, եւ Աւետարանին մնալ անշարժ» (Թոր. էջ 3):

Վերջնական տարբերակ

«Չորրորդ՝ զի այժմ պակասեաց ի մէնջ զհտութիւնն, որով կարող լինէաք փորձել եւ ընտրել զդատաստանն ըստ ժամանակի եւ ազգաց եւ աշխարհաց, կամեցաք ի գրոց հաւաքմամբ գրել զդատաստան, զի լիցի անշարժ ըստ նմա-նութեան օրինաց եւ աւետարանին» (Բաստ., էջ 10):

Նախնական տարբերակում խօսքն անորոշ է, թէ ո՞ր ժամանակուայ համեմատութեամբ *ի՞նչ* է նուագել եւ ի՞նչը պէտք է ընտրել ըստ ժամանակի, ըստ ժողովուրդների եւ ըստ երկրների, մինչդեռ *վերջնական* տարբերակում այդ բոլոր տարտամութիւնները վերացուել են՝ իմաստի բացարձակ յստակութիւն տրամադրելով: բ) *Նախնական*ում չի բացայայտուած, թէ ինչի՞ համար են այդ բոլոր թուարկումները, մինչդեռ *վերջնական* տարբերակում որոշակի ասուած է՝ դատաստանագիրք կազմելու վերաբերեալ անհրաժեշտ իրաւանորմների *ընտրութեան* եւ *հաւաք*

¹ Կարծում ենք՝ խմբագրութիւնների եւ բնագրային տարբերակների մեր առաջադրած բնութագրումը առաւել ճիշդ է արտացոլում իրերի վիճակը Գօշից մեզ հասած բնագրերի: Թորոսեանը բոլոր բնագրերն էլ հաւասարապէս «խմբագրութիւններ» է համարում:

ման համար ... գ) նախնական տարբերակի եւ վերջնականի եզրակացութիւնները *անյարիր են միմեանց*, ընդ որում՝ *նախնականը* սխալ հետեւութիւն է, *վերջնականը*՝ ճիշդ, հիմնատրուած: Այսպէս, ըստ նախնականի՝ «չպէտք է լինի (ի՞նչը - չի ասուած, միայն *վերջնական* տարբերակից իմանում ենք, որ *դատաստանագիրքը* չպէտք է լինի) Օրինաց, Մարգարեից (գրքերի) նման անշարժ, այլ կերպ ասած՝ դատաստանագիրքը շարժական՝ լրացուող, հետեւաբար՝ *կայուն*՝ «անշարժ» բնոյթ չունենայ...»: Մինչդեռ վերջնական տարբերակում ասուած է, որ «կամեցանք... դատաստանագիրք գրել, որպէսզի Օրինաց գրքի եւ Աւետարանի նման *անշարժ կայուն* լինի (իրաւանորմը)»...», այլ կերպ ասած՝ դատաստանագիրքը գրուած է նրա համար, որ վերջ տրուի տարբերայնութեանն ու անկայունութեանը դատավարումներում...:

Ինչպէս նկատելի է, այս երկու ընթերցումների լեզուա-ոճական տարբերութիւնները, որակական առումով, չափազանց բացորոշ են. *նախնական* տարբերակը չունի ձեւակերպումների ամբողջականութիւնն ու իմաստային յստակութիւնը՝ լեզուա-ոճական յղկուածութեամբ, մինչդեռ *վերջնական* տարբերակը բնորոշուած է եւ առաւել ակնբախ է հէնց այդ բարեմասնութեամբ:

Այնպիսի կարեւոր, բայց եւ մեկնակէտային, մինչեւ անգամ որոշիչ հարցի անտեսումը, որպիսին բնագրային տարբերակների լեզուա-ոճական առանձնա-յատկութիւնների հաշուառումն է, բնաւ չի խօսում աշխատասիրողի բնագրագիտական մօտեցման հաւաստիութեան օգտին: Թորոսեանը միայն բարարարուել է այդ հարցի շուրջ տարբեր հայագէտների կարծիքները ընդհանուր յայտարարութեան կարգով արձանագրելով՝ *առանց սեփական դիրքորոշման*:

Այսպէս, խօսելով «Ա խմբագրութեան» (իմա՝ *նախնական* տարբերակի) մասին, գրում է. «Գիտակ բանասերների կարծիքները լեզուի ու ոճի մասին տարբեր են. բնութագրումների եզրերն են՝ (sic!) ընտիր եւ հմուտ - ոչ-կանոնաւոր եւ աղաւաղ» (էջ 52): Առաւել ճապաղ գնահատական է տրուած նաեւ *վերջնական* տարբերակի լեզուի ու ոճի մասին՝ յայտարարելով. «Ա խմբագրութեան լեզուի ու ոճի մասին ասուածը ընդհանուր առմամբ ուժի մէջ է մնում նաեւ այս խմբագրութեան (իմա՝ վերջնական տարբերակի կամ Բաստամեանցի հրատ.- Լ.Խ.) համար, սակայն, այստեղ նկատելի է պարզեցման ձգտումը» (էջ 52): Այսքան միայն: Ո՛չ մի բննարկում: Մինչդեռ, հէնց իրաւաբանական Յուշարձանի հրատարակման համար *առաւել քան անհրաժեշտ էր գիտական շրջանառութեան մէջ դնել բնագրային տարբերակներից բացառապէս այն բնագիրը, որի ձեւակերպումների լեզուա-ոճական յղկուածութիւնն ու յստակութիւնը, համեմատական առումով ԳԵԼԻՎԵՐԻ է մնացածներից*: Բանն այն է, որ լեզուական ճշգրտութիւնն է միայն ապահովում եւ երաշխաւորում իրաւանորմերի ստոյգ ընկալումն ու կիրառումը՝ ձերբազատելով դատաւորներին հնարաւոր թերմբոնումներից, տարտամութիւնից ու շփոթումներից: Դատաստանագիրքը մատենագրական Յուշարձաններից ՄԻԱՄԿՆ է, որ բնաւ չի հանդուրժում լեզուա-ոճական անփութութիւն եւ ճապաղութիւն, ուստի եւ մշտապէս ձգտում է նկատուած լեզուական ձեւակերպումների բացարձակ անթերիութեան՝ յանգելով առաւել բիրեղացումների: Իսկ եթէ փորձէր Թորոսեանը խորամուխ լինել Գօշի Դատաստանագրքի Ընդարձակ խմբագրութեան երկու տարբերակների լեզուա-ոճական առանձնա-յատկութիւնների բացայայտման մէջ, ապա, զոնձ իրրեւ իրաւաբան, *մէկընդմիջաւ կը հրաժարուէր նախնական տարբերակը, Համառօտ խմբագրութեան հետ միասին, հրապարակելուց որպէս ցածրորակ եւ սակաւարժէք բնոյթի թերամշակ բնագրեր*:

Նկատենք, որ Ընդարձակի հրատարակման առաջին եւ յաջող փորձը, 11 ձեռագրերի ընդգրկմամբ, իրականացրել է Վ. Բաստամեանցը դեռեւս 1880 թուականին՝ բնագրագիտօրէն արդարացուած հետեւեալ մօտեցմամբ, իրրեւ գիտա-բնական տեսքտ նա հրատարակել է Ընդարձակի *վերջնական տարբերակը, մինչդեռ նախնական տարբերակը, Համառօտ խմբագրութեան հետ միասին, որպէս այլընթերցում ու սակաւարժէք տեսքտ, որն իր հրապարակման իմաստը կորցրել է Գօշի իսկ խմբագրած աւարտում եւ ամբողջական բնագրի առկայութեան շնորհիւ, ներկայացրել է առողատակում*: Իսկ այս նշանակում է, որ Վ. Բաստամեանցը գիտական շրջանառութեան մէջ է դրել իրաւաբանական սոյն Յուշարձանի *հեղինակային լուրագոյն եւ ամենահաւաստի բնագիրը*, ուստի եւ աղբիւրագիտական հիմնատրուածութեամբ իրաւացիօրէն եզրակացրել է. «Ես վերականգնեցի, որչափ այդ հնարաւոր էր, մի կատարեալ օրինակ Մխիթարի Դատաստանագրքի»¹:

Սա արդէն իսկ բնագրագիտական լուրջ նուաճում է Գօշի Դատաստանագրքի ակադեմիական հրատարակութեան ճանապարհին, երբ անհրաժեշտաբար պէտք է ընդգրկուէին իրաւաբանական սոյն Յուշարձանի ձեռագրական բոլոր ընդօրինակութիւնները՝ գիտա-բնական ստուգագոյն ընթերցումներ առաջադրելու եւ վերականգնելու հնարաւորութեամբ: Այս դէպքում, բնականաբար, հարկ կը լինէր, բնագրագիտութեան արդի պահանջներից ու մակարդակից ելնելով, համադրական աշխատանքները կատարել՝ համեմատելով Ընդարձակ խմբագրութեան բացառապէս *վերջնական* տարբերակի ձեռագրական ընդօրինակութիւնները՝ իրրեւ նոյն հիմքից բխած քոյր ձեռագրեր, սոսկ օժանդակ աղբիւր օգտագործելով նախնական տարբերակի եւ Համառօտ խմբագրութեան ձեռագրերը: Եւ միայն այս պայմանների լրացման պարագային մենք իրօք կ'ունենայինք Գօշի Դատաստանագրքի առաւել հաւաստի ակադեմիական բնական ամբողջական բնագիրը:

Բայց, տարաբախտաբար, Թորոսեանը ընթացել է բնագրագիտական աշխատանքների ոչ այն ուղիով, որ արգասաբեր եւ օգտակար կարող էր լինել գօշագիտութեան բնագաւառում: Անտեսելով Բաստամեանցի բնագրագիտական ակնբախ ծառայութիւնը Ընդարձակի լուրագոյն եւ ամենահաւաստի տարբերակը հրատարակութեան համար որոշելու գործում, որն արդարացուած է բանասիրական եւ ձեռագրագիտական բոլոր նախադրեալներով ու հիմնատրուածներով, Գօշի Դատաստանագրքի նոր հրատարակութիւնը իրականացնող Թորոսեանը գիտական շրջանառութեան մէջ է դրել, որքան էլ տարօրինակ է եւ անհասկանալի, *ցածրորակ բնագիրը*, այն է՝ *Ընդարձակի նախնական տարբերակը՝ Համառօտի հետ միասին*: Այլ կերպ ասած՝ իրրեւ տարբերութեամբ տողատակում ներկայացրած սակաւարժէք բնագրերը *յանհրաժեշտ բարձրացուել են վերելու՝ գիտա-բնական բնագրի մակարդակին*...: Սա, անշուշտ, չափազանց տխուր իրողութիւն է իր անսրբաբերի անդրադարձներով... եւ աննախադէպ՝ հայագիտութեան մէջ, լինելով նաեւ անյարիր՝ բնագրագիտական բոլոր սկզբունքներին, եւ արդիւնք, մեղմ ասած, աղբիւրագիտական չափա-նիշների թիւր եւ տարտամ ըմբռնողութեան: Մինչդեռ Դատաստանագրքի Ընդարձակ տարբերակի *վերջնական* տեսքտը, որը հէնց Գօշի կողմից հեղինակային աւարտում մշակուածութեան ու յղկման՝ ճշգրտման ենթարկուած բնագիրն է, բոլորովին գանգ է առնուած ... նոր հրատարակութեամբ՝ *գրկելով, այսպիսով, մասնագէտներին ու առհասարակ հայագէտներին Գօշի Դատաստանագրքի ամենահաւաստի ու վաւերական գիտա-բնական բնագիրը ունենալու հնարաւորութիւնից*:

¹ Վ. Բաստամեանց, նշուած աշխատ., էջ 114:

Հետեւաբար՝ օրինական հարց է ծագում. իսկ ի՞նչ կարիք կար եւ ո՞ւմ էր հարկաւոր Թորոսեանի «տասը տարուայ կարի ծանր եւ յոգնաջան աշխատանքի արդիւնք սոյն հրատարակութիւնը» (Առաջաբանի ինքնառեկլամից), երբ իրաւաբանական ձեւակերպումների իմաստային եւ լեզուական ճշգրտութիւնն ու լիակատարութիւնը, կառուցուածքային զարգացման վերջնական ձեւակերպումն ու ամբողջականութիւնը եկեղեցական ու աշխարհիկ կանոնախմբերի տարանջատմամբ՝ Գօշ հեղինակի իսկ կողմից վաւերական ոյժ եւ հաւաստիութիւն է ստացել ոչ թէ Թորոսեանի հրատարակած սակաւարժէք ու ցածրորակ տեքստերը, այլ՝ Վ. Բաստամեանցի հրատարակած, վաղուց մասնագէտների դրուատանքին արժանացած Ընդարձակ խմբագրութեան *վերջնական* բնագիրը, որը հայագիտութեան մէջ արդէն իսկ հաստատուն քաղաքացիութիւն է ձեռք բերել:

Այս մոլորութեանը, ըստ երեւոյթին, Թորոսեանին մղել է, ամէնից առաջ, միեւնոյն աղբիւրի տողատակ տարուած, բայց չհրատարակուած բնագրերը լոյս ընծայելու գայթակղութիւնը: Այդ իսկ պատճառով նրան առաւել «հրապարիչ» է թուացել, ուստի եւ շլացուցիչ՝ Ընդարձակի նախնական տարբերակը եւ Համառօտ Խմբագրութիւնը շրջանառութեան մէջ դնելը, որոնք հայագիտութեան կողմից առ այսօր իրաւամբ *անկարելի են համարուել հրատարակութեան համար*: Եւ որպէսզի «արդարացնի» իր այդ նկրտումը, Թորոսեանը դիմում է յախտուն եւ անձնապատան յայտարարութիւնների, որոնք ոչ մի աղերս չունենալով գօշագիտութեան հետ, ապացուցում են միայն բնագրագիտական իր սեփական թերըմբռնումներն ու ապակողմնորոշումը:

Այս առթիւ, իր սեւեռուն նպատակի «հիմնաւորման» համար Թորոսեանը չի խորշում նոյնիսկ սենսացիոն պնդումներից՝ համոզել ջանալով ընթերցողին այն բանում, թէ իբր հայագիտութիւնը առ այսօր «թիրիմացութեան» մէջ է եղել Բաստամեանցի հրատարակած Դատաստանագիրքը համարելով ... Գօշի իսկ հեղինակութիւնը: Ուստի Թորոսեանը ամենայն «լրջութեամբ» յաւակնում է Դատաստանագրքի *առնուազն երկու տարբեր հեղինակներ ճանաչել*, ըստ որում որպէս նախնական տարբերակի հեղինակ՝ Մխիթար Գօշին, իսկ իբրեւ *վերջնական տարբերակի հեղինակ՝ մի անյայտ մատենագրի, որին դեռեւս չի կարողացել պարզել հայագիտութիւնը...*, բայց որի յայտնաբերման ու ճշդման փորձ՝ ինքը Թորոսեանն էլ խուսափում է անելուց: Սա բանասիրութեան մէջ յայտնի, բայց դատապարտելի հնար է, երբ յանուն այն բանի, որ անցկացուի սեփական խլամբ կամ սակաւարժէքը, ամեն կերպ նսեմացում է կեանքում քննութիւն բռնածը, հաւաստին ու արժէքատրը, եւ անհարկիօրէն դրուատում ու ուռնացում՝ դալուկը, տխեղը: Երկու տարբեր հեղինակների ճանաչման պնդումն արւում է նաեւ այն դէպքում, երբ Միջնադարի ամբողջ մեր մատենագրութիւնը ամենադոյզն իսկ կասկածի հիմք չի տուել Մխիթար Գօշից բացի որեւէ այլ հեղինակի հնարաւոր ենթադրութեան...: Բայց եւ այնպէս Թորոսեանը գրում է. «Դատաստանագրքի մեզ հասած երեք խմբագրութիւններից ցարդ հրատարակուել է միայն մէկը եւ միայն մէկ անգամ. դա Վահան Բաստամեանցի՝ ամենաբարձր գնահատականի արժանացած հրատարակութիւնն է...: Մակայն դրանով Մխիթար Գօշի անուամբ հրատարակուել է մի գործ, որի հեղինակի մասին չենք կարող ստուգապէս ասել, թէ Մխիթար Գօշն է (sic!): Մինչդեռ, Դատաստանագրքի այն բնագիրը, որի հեղինակը ստուգապէս ինքը՝ Մխիթար Գօշն է, Ա խմբագրութիւնը (իմա՝ նախնական տարբերակը - Լ.Խ.), ցարդ հրատարակուած չէ»¹: Ընթերցողին, այնուամենայնիւ,

անյայտ է մնում, թէ ի՞նչն է Թորոսեանի «ժանրակշիռ» այս յայտարարութեան աղբիւրագիտական «հիմնաւորումը»՝ երբ խուսափել է որեւէ փաստ առաջադրելուց: Բայց դա այնքան էլ հեշտ գործ չէ, որովհետեւ այդ նոյնն է թէ՛ փորձել ապացուցել անապացուցելին: Բանն այն է, որ երկու տարբերակներն էլ (նախնականն ու վերջնականը), ըստ էութեան, *իրաւանորմերի միեւնոյն բնոյթն ունեն՝ ընդգրկման համարեա միեւնոյն ծաւալով եւ գնահատման միեւնոյն չափանիշներով, որ իսպառ բացառում են դրանց տարբեր հեղինակների գրչին պատկանելու ամենահեռաւոր կասկածն անգամ*, եթէ, իհարկէ, հաշուի ենք առնում բնագրագիտութեան տուեալները: Բացի դրանից, նոյնիսկ ոչ-բնագրագէտին փարատող անհերքելի փաստ է առկայ. Ընդարձակի երկու տարբերակներն էլ ունեն հեղինակի կողմից գրուած *միեւնոյն Յիշատակարանը*, ընդ որում *միեւնոյն տեղում*՝ Նախադրութիւնից անմիջապէս յետոյ: Իսկ Յիշատակարանը, ինչպէս յայտնի է, *բնագրի ինքնութեան վաւերական փաստաթուղթն է, առաւել եւս՝ երբ այն գրուած է բնագրի հեղինակի, ներկայ դէպքում՝ Մխիթար Գօշի կողմից...*: Եթէ վերջնական տարբերակը այլ հեղինակի աշխատասիրութիւնը լինէր, ապա անպայման դրա մասին յիշեցու-մը մի կերպ կ'արտացոլուէր Յիշատակարանում կամ այլուր՝ համապատասխան նշումով, բայց այդպիսի նշոյլ անգամ իսպառ բացառուած է:

Թորոսեանը, չհասկանալով ու չգնահատելով Գօշի Դատաստանագրքի Ընդարձակ խմբագրութեան երկու տարբերակներից յաւագոյնի եւ ամբողջականի բնագրագիտական միանգամայն ճիշդ լուծումը Բաստամեանցի կողմից, որը մեկնակետային նշանակութիւն ունի Գօշի Դատաստանագրքի ամեն մի նոր հրատարակութեան համար, Բաստամեանցին վերագրում է բաներ, որոնք բնա չեն բխում իրերի բուն էութիւնից: Այս առթիւ Թորոսեանը հաստատում է միայն բնագրագիտական երկու մեծ թիրիմացութիւններ, որոնք էապէս խանգարել են աղբիւրագիտական հարցերում իր ճիշդ կողմնորոշմանը: Նա գրում է. «Հրատարակելով երկու մասի բաժանուած բնագիրը, Վ. Բաստամեանցը դրանով իսկ *սկզբնական* (⁰⁰⁰) *ու հեղինակային է համարել հենց այդ բնագիրը* (sic!)»¹: Մինչդեռ, Բաստամեանցը, լինելով հմուտ բանասէր եւ աղբիւրագէտ, միեւնոյն հեղինակի՝ Գօշի ստեղծած բնագրային երկու տարբերակներից ընտրութիւնը կատարելիս չէր կարող առաջնորդուել սոսկ *«սկզբնական»ի նախապատուութեան չափանիշով*, որը միանգամայն հակագիտական մօտեցում կը լինէր, իսկ կասկածել իր հրատարակածի Գօշի հեղինակային պատկանելութեանը՝ բնագրագիտական մեծագոյն անըմբռնութիւն:

Մի այլ դէպքում, դարձեալ անհարկիօրէն ուռնացնելու համար իր հրատարակած ցածրորակ բնագրի արժէքը՝ Թորոսեանը այս անգամ, կտրուկ բեռնացում է կատարում. միայն *նախնական* տարբերակն է օժտում «հեղինակային» բնագրի իրաւունքով, իսկ Բաստամեանցի հրատարակութիւնը Գօշին պատկանելը՝ դեռեւս չապացուցուած համարում...: Աւելին. Թորոսեանը ուրանում է նոյնիսկ «դրական որեւէ փաստի» առկայութիւնը առհասարակ վերջինիս հեղինակի ո՛վ լինելը որոշելու վերաբերեալ՝ յայտարարելով «Բ (իմա՝ Բաստամեանցի հրատ. - Լ.Խ.) խմբագրութեան հեղինակի հարցը պարզելու համար *դրական որեւէ փաստ չունենք* (sic!)»²: Ապա մեղմելով իր այս յախտուն պնդումը եւ հակասելով իրեն՝ իսկոյններէ շարունակում է. «Անուղղակի որոշ տուեալներից (sic!) միայն կարող ենք ենթադրել, միանալով Վ. Հացունուն, որ Բ խմբագրութեան հեղինակը նոյնպէս Մխիթարն է...»²:

¹ «Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ 42:

¹ Նոյն տեղում, էջ 51:

² Նոյն տեղում, էջ 51:

Իսկ ինչ է, «անուղղակի որոշ տուեալները» դրական փաստեր չե՞ն...: Բացի դրանից, մի՞թէ ուղղակի տուեալ չէ՞ հետեւեալ ակնառու փաստը, որը Թորոսեանը ինքն է վկայակոչում. «Լ. Բաստամեանցը այն (իմա՝ Գօշի աշխատութեան վերջնական տարբերակը - Լ.Խ.) սկսում է նոր էջահամարով եւ այն վերնագրով, որ ունի բնագիրը՝ «Դատաստանագիրք Մխիթարայ Գօշի...»: Ապա լրիւ հերքելով նաեւ իր այս ասածը՝ չէզոքացնում է այն հետեւեալ յայտարարութեամբ, որ անմիջապէս շարունակութիւնն է. «Սակայն, սա միայն ենթադրութիւն է եւ ատելին չէ, քան հակառակ ենթադրութիւնը (sic!)²: Մտանալով հակասական իր այս պնդումները, Թորոսեանը Բաստամեանցի հրատարակած բնագրի վերնագրին անդրադառնալիս նաեւ գրում է. «Մխիթար Գօշի հեղինակային իրատուրը վաւերական է ու ստոյգ (sic!), ուստի Դատաստանագրքի վերնագրի այդ մասը փոփոխութեան ենթարկուել չի կարող (sic!)»³:

Ի դէպ, այս հակասութիւնները արդիւնք են, ըստ երեւոյթին, այն բանի, որ Թորոսեանը դեռեւս 1962 թուականին «Բանբեր Մատենադարանի» տարեգրքում տպագրած «Երկու խմբագրութիւն Մխիթար Գօշի» յօդուածում բողոքովին ԱՅԼ կարծիք է պաշտպանել: Նա վեց կէտից բաղկացած փաստարկումներով ջանքեր չի խնայել ընթերցողին համոզելու, որ «Դատաստանագրքի երկրորդ խմբագրութիւնն (իմա՝ Բաստամեանցի հրատարակածը - Լ.Խ.) ամբողջապէս պատկանում է Մխիթարին»⁴: Հիմա էլ, չկարողանալով լիովին ձեռքազատուել նախկին ճիշդ տեսակէտից, ... համադրել է այն իր «նոր» տեսակէտի հետ: Բայց դրա համար գիտութեան մէջ ընդունուած որոշակի գործառնոյթ գոյութիւն ունի, որի պահպանումը պարտադիր է բոլորի համար: Նման դէպքերում յայտարարում է, որ հեղինակը ժամանակին այլ տեսակէտ է ունեցել, իսկ այժմ հրաժարում է դրանից եւ պաշտպանում բողոքովին տարբեր կարծիք... որով իրեն յարգած է լինում հեղինակը՝ ընծանելով միաժամանակ հնարաւորութիւն ընթերցողին ճիշդ կողմնորոշուելու: Բայց դա արում է, երբ հեղինակը հայեացքների բարեշրջում է ապրում..., եւ ո՛չ թէ հակասական մտքերի ծաղկաբաղ հրամցում...:

Ինչ վերաբերում է այսպէս կոչուած Համառոտ խմբագրութեանը, ապա դա եւս հրատարակչական շոյալութիւն է, որի համար ոչ ոք չի կարող ներել Մաշտոցի անուան Մատենադարանին: Բանն այն է, որ այս խմբագրութիւնը սոսկ գործնական նպատակների համար Գօշի իրաւաբանական հեղինակային ծաւալուն երկի համառոտումն է, որ անշուշտ թերաբժէք մատենագրական միատր է պարգապէս: Պատահական չէ, որ հայագէտներից եւ ոչ մէկը անցեալում ուշադրութիւն չի դարձրել դրան, իսկ հրատարակութեան մասին, առտել եւս, ոչ ոքի մտքով էլ չի անցել...:

Բայց Թորոսեանը ճգնում է ամէն կերպ «արդարացնել» նաեւ Համառոտի հրատարակութիւնը: Նա, իբրեւ «յատկանշական» հանգամանք, նշում է Համառոտի ինչ-որ «կրօնական տարրերից գտուած լինելու» միտումը, ի տարբերութիւն Ընդարձակ խմբագրութեան...: Այդ առթիւ գրում է. «Յատկանշական է, որ Գ խմբագրութիւնում (իմա՝ Համառոտում - Լ.Խ.) համառոտելու աշխատանքը կատարուել է ոչ թէ իրաւաբանական միտքը, իրաւաբանական բովանդակութիւնը կրճատելու հաշուին, այլ իրաւաբանական բովանդակութիւնը կրօնական տարրերից մասամբ զտելու ուղղութեամբ»¹: Եւ իր ասածը «հիմնաւորելու» համար առաջադրել է բնագրային համեմատական գուգադրութիւն Ընդարձակ եւ Համառոտ խմբագրութիւնների ընթերցումներից²: Սակայն պարզուր է (եւ ուրիշ կերպ չէ՛ր էլ կարող լինել «համառոտումը»), որ կանոնի խտացումը արուել է ... «պատմականութեան» զեղման կամ բեռնաթափման հաշուին, իսկ Գօշի մօտ իրաւաւորների հիմնաւորման «պատմականութիւնը ուրիշ բան չէ (եւ չէր էլ կարող լինել), եթէ ոչ «կրօնական տարրի» առկայութիւն, որը, սակայն, գործնական տեսակէտից, Համառոտ Դատաստանագրքի համար իր նշանակութիւնը ունենալ չէր կարող: Եւ որպէսզի «զաղափարական առտելութեան» մշուշը յանկարծ չբացայայտուի, քանի որ Համառոտ խմբագրութիւն ասուածը, վերջին հաշուով, ուրիշ բան չէ, եթէ ոչ Գօշի Ընդարձակ բնագրի վրայ վերածնունդ աննշանակ մանրատիպը, Թորոսեանը իսկայն իրեն «ապահովագրում» է. «Ճիշդ է, Դատաստանագիրքը իր ամբողջ ծաւալով չէ, որ Գ խմբագրութիւնում ենթարկուել է մշակման այս դիտակէտից (sic!), սակայն այդ միտումն առկայ է»³:

Սակայն իրաւաբան գօշագէտներից պրոֆ. Ա. Սուքիասեանը դեռեւս 10 տարի առաջ հերքել էր իրաւաբանական ճշգրտմամբ Թորոսեանի այս կեղծ բնութագիրը Գ խմբագրութեան վերաբերեալ, որ վերջինս հրամցել էր «Մխիթար Գօշի Դատաստանագրքի ձեռագրերն ու խմբագրութիւնները» վերնագրով յօդուածում: Պրոֆ. Ա. Սուքիասեանը իրաւացի հիմքով ցոյց է տուել, որ համառոտումը կատարուել է ոչ թէ «իրաւաբանական մտքի կրճատման» հաշուին, այլ ... լեզուի ու «ձեւական տարբերութիւնների»: Նա գրում է. «Սակայն նրա (իմա՝ Թորոսեանի - Լ.Խ.) դատողութիւնները այս ձեռագրախմբի մասին (էջ 135-139) վերաբերում են հիմնականում Ա եւ Գ խմբագրութիւնների ձեւական տարբերութիւններին, քանի որ Ա խմբագրութիւնը համառոտուել է, խօսքը դարձել է ատելի հակիրճ, փոխուել է լեզուն, բայց այդ ամէնը կատարուել ոչ ի հաշիւ իրաւաբանական մտքի կրճատման» (վերջին ընդգծումը իրեն - Լ.Խ.)⁴:

Բայց ասողին լսող է պէտք: Թորոսեանը, իր սովորութեան համաձայն, դարձեալ խուլ է ձեւացել արուած դիտողութեանը՝ առանց անդրադառնալու այն մասին, որ երբեւէ մերժուել է իր առաջադրած անհիմն թեզը մանաւանդ իրաւաբանական գրականութեան մէջ...:

Յատկանշական է եւ այն, որ խմբագրութիւնների ճանաչման եւ գնահատման հիմունքները Թորոսեանը բողոքովին սխալ մեկնակէտից է առաջադրում, որոնք ոչ մի կերպ համատեղելի չեն բնագրագիտական սկզբունքների հետ՝ իրենց բնոյթով լինելով խաբուսիկ եւ կեղծ-գիտական:

Որքան էլ զարմանալի է ու տարօրինակ՝ Թորոսեանը մինչոյն հեղինակի աշխատութեան Ընդարձակ խմբագրութեան երկու տարբերակների եւ Համառոտ խմբագրութեան առանձնայատկութիւնները բնութագրելիս, «խմբագրութիւնները բնորոշող արտաքին-ձեւական յատկանիշների» թուին է վերագրում, կառուցուածքային հանգամանքների հետ միասին, նաեւ նրանց լեզուա-ոճական տարբերութիւնները. մի բան, որ կոպիտ մեղանշում է բնագրագիտութեան սկզբունքների դէմ: Մինչդեռ այբուբենային ճշմարտութիւն է, որ իրաւաբանական մատենագրական

¹ Նոյն տեղում, էջ 6Ա:
² Նոյն տեղում:
³ Նոյն տեղում, էջ 6:
⁴ «Բանբեր Մատենադարանի», 1962, Թ. 6, էջ 73:

¹ «Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ 6:
² Նոյն տեղում:
³ Նոյն տեղում:
⁴ Ա. Սուքիասեան, նշուած աշխատ., էջ 101-102:

երկի տարբեր խմբագրությունները միմեանց հակադրելիս, իբրև *բեռնացնող ներքին յատկանիշ, որը եւ որոշիչ նշանակություն ունի, լեզուա-ճճական տարբեր մշակումներն են:*

Միս կողմից՝ Թորոսեանը «խմբագրությունները բնորոշող «ներքին-էական յատկանիշներ» է համարում բննարկուող տարբերակներում առանձին ձեռնարկներում մտածելի իմաստային նրբերանգների առկայությունը, որոնք մասամբ սկզբնաղբիւրի հեղինակի իսկ մշակման, ճշգրտման ու բիրեղացման արգասիք են, *սակայն գերազանցապէս՝ Թորոսեանի իսկ կազմած սխալ ընթերցումների արդիւնք...:* Բայց եւ այնպէս, որքան էլ տարօրինակ է, Թորոսեանը փորձել է սոցիալական «տեսական» մեծահնչուն հետետիւթներ անել ինչ-որ «դասային-դասակարգային» տարբերությունների *պատրանքային առկայութեան վերաբերեալ ... միեւնոյն հեղինակի աշխարհայեացքում, որոնք, յամենայն դէպս, բնաւ չեն բխում իրերի իսկական դրութիւնից:*

Միայն զարմանք կարող է առաջացնել Թորոսեանի այն պնդումը, թէ իբր «Դատաստանագրքի խմբագրությունների առկայութիւնը նախ եւ առաջ դասային տարբեր շահերի արտայայտման արդիւնք է (*sic!*) եւ յետոյ միայն ձեռնական յատկանիշներով տարբերակուող փաստ»¹: Մա աղբիւրագիտական հաւաստում չէ բնաւ. եթէ իրօք «խմբագրությունների առկայութիւնը նախ եւ առաջ դասային տարբեր շահերի արտայայտման արդիւնք» լինէր, ապա ոչ թէ տարբեր խմբագրություններ, այլ *տարբեր հեղինակների տարբեր աշխատութիւններ պէտք է ստացուած լինէին*, որ ներկայ դէպքում անիմաստ է անշուշտ, թէւ Թորոսեանը փորձել է հէնց այդպէս ներկայացնել խեղճ Գօշի մատենագրական երկը...: Նա նոյնիսկ կշտամբում է իրենից առաջ գօշագիտութեամբ զբաղուած հետազօտողներին՝ «աշխարհայեացքային սահմանափակութեան» մէջ միայն այն պատճառով, որ նրանք հաշուի չեն առել «խմբագրությունները բնորոշող դասային տարբեր շահերի» հակադրութիւնը ... ընդամին՝ միեւնոյն հեղինակի աշխատութեան բնագրային տարբերակներում: Թէ ինչքանով դասակարգային մօտեցում» է ցուցաբերել Թորոսեանը «տեսական» իր վերլուծումներում Գօշի աշխարհայեացքը բննելիս, այդ վերը մենք ցոյց տուցինք հանգամանօրէն: Բայց բնագրագիտութեան հարցերում հարկուոր է ոչ այնքան «դասակարգային վերլուծութիւն», որքան աղբիւրագիտական-բանասիրական հմտութիւն...: Թորոսեանը խմբագրությունների առաջացման նորահնար իր «տեսութեան» առթիւ գրում է. «Ուստի *խմբագրությունները բաժանող հիմնական, գլխաւոր յատկանիշը (*sic!*) ամէնից առաջ այն տարբերություններն են, որոնցով բնորոշում է միեւնոյն իրաւայարարութեան կարգատրումը տարբեր ձեռագրայիններում:* Այս կարեւոր հանգամանքի անտեսումը նախորդ ուսումնասիրողների կողմից, հաւանաբար, ոչ այնքան աչառու վերաբերմունքի հետեւանք է, որքան *ինքնին արդիւնք աշխարհայեացքի սահմանափակութեան (*sic!*)*²:

Բայց Թորոսեանը չի կարողացել ապացուցել իր այս թեզը եւս, չնայած նրան, որ դրան հասնելու համար յատկացրել է բազմաթիւ էջեր՝ ճզմելով միաժամանակ «տպաւորութիւն» թողնել բնագրային գուզաղիք համեմատություններով ... ոչ մասնագէտի վրայ, որոնք, իրականում, նպատակավրէպ են:

¹ «Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ ԾԴ:

² Նոյն տեղում, էջ ԾԵ:

Առաջադրած իր այդ թեզի համաձայն, Թորոսեանը պարտաւոր էր ցոյց տալ, թէ ինչպիսի՞ «դասային տարբեր շահեր են արտայայտուել» Ընդարձակ խմբագրութեան նախնական եւ վերջնական տարբերակներում, որպէսզի համոզէր ընթերցողին դրանց առաջացման ու հակադրման «սոցիալական» պատճառներում: Բայց բեղմնաւորութիւն չունեցող նման դիտաւորութեան իրականացում՝ մինչեւ անգամ Թորոսեանին յաջողուել չէր կարող: Այդ իսկ պատճառով, գօշագիտութեան մէջ նրա այս եզակի վարկածը ուշադիր քննելիս, նկատուած ենք, ընդամենը *մէկ անգամ*, այն էլ *բնագրի սխալ ընկալումով*, համեմատութիւն է բերուած Ա եւ Բ «խմբագրությունների», իսկ մնացած բոլոր դէպքերում ներկայացուած են իբրև *բացարձակ միասնութիւն...:* Ապա օրինական հարց է ծագում. ինչո՞ւմ են կայանում Ա եւ Բ «խմբագրությունների» առաջացման ու հակադրման «սոցիալական» պատճառները, որոնք եւ, իբր, տարբեր խմբագրություններ հանդիսանալու հիմքերի հիմքն են կազմել...: Ինչ է, «խմբագրությունները բնորոշող սոցիալական ներքին» մէ՞կ յատկանիշով:

Արդ, քննենք Ա եւ Բ «խմբագրությունների» հակադրութիւնը պայմանաւորող «սոցիալական» այդ միակ յատկանիշը.

ԱԳ

«Այլ քանզի առ մեզ ապականեալ է այսպիսի կարգ, աւանդելի է զիրս եւ զզիրս (Գ՝ չիք եւ զզիրս) դատաստանի ի ձեռս եպիսկոպոսաց, զի ոչ ոք է ի մեզ (Գ՝ առ մեզ) ըստ արտաքնոցն վարժեալ իմաստութեամբ յաշխարհականաց կամ ըստ Իսրայելի դպիր: Եւ զի այժմ նոցա է (Գ՝ եպիսկոպոսաց է) յանձն (Գ՝ յանձին) հոգք եկեղեցեաց (Գ՝ եկեղեցոյ) եւ աշխարհականաց (Գ՝ աշխարհաց), եւ ըստ պատահմանն (Գ՝ եւ յետ եպիսկոպոսաց) եղիցի իշխանաց (Գ՝ + ըստ պատահմանն) եւ գլխաւորաց ժողովրդեան, հմտագունից քահանայից (Գ՝ այլեւ քահանայից իմաստնոց) եւ վարդապետաց, սակայն աւանդապահ այսմ իրի եպիսկոպոսունք (Գ՝ եպիսկոպոսք) եղիցին:

(Թորոս. էջ ԾԷ):

Բ

Եւ արդ՝ մեզ այսպէս լիցի. զի ի տեղոջ յորում լիցի քրիստոնեայ թագաւոր կամ իշխան - նոքա զաշխարհի դատաստանս հոգայցեն ատենիւ եւ իրաւամբք. զի զեկեղեցոյ դատաստան եպիսկոպոսն հոգացել վարդապետական վարժմամբ եւ երկու կամ երեք կատարեալ արամբք ընդ նմա ի դատաստանի: Եւ ի տեղոջ, ուր ոչ իցեն թագաւոր կամ իշխան, պարտ է յեպիսկոպոսն տալ զսա յաւանդ, զի զամենայն դատաստանս նոքա հոգացեն»:

(Բաստ., 26):

¹ Տե՛ս նոյն տեղում, էջ ԾԷ, ԾԸ, ԾԹ, Կ, ԿԱ, ԿԲ:

Ինչպես ակներև է, սոյն ընթերցումների հիմնական մտքերը համարեա նոյնն են. միայն Բ «խմբագրութեան» ընթերցումը առաւել յստակ եւ մեկին է ձեռնկերպուած, քան Ա եւ Գ «խմբագրութիւնների» ընթերցումները միասին վերցրած. ընդամին՝ վերջիններիս դէպքում եթէ ասուած է, որ նայած տեղանքի կամ իրադրութեան («ըստ պատահման») դատաւորներ կարող են լինել, բացի հոգեւորականներից, նաեւ իշխաններ ու ժողովրդի գլխատուներ («եղիցի իշխանաց եւ գլխատուաց ժողովրդեան»), ապա Բ «խմբագրութեան» ընթերցման մէջ ուղղակի ասուած է, որ բոլոր այն վայրերում, ուր կայ (որ եւ հաւասարագօր է Ա խմբագրութեան «ըստ պատահման» բառակապակցութեան իմաստին), քրիստոնեայ թագաւոր կամ իշխան, վերջիններս են աշխարհիկ դատաւարութիւնները տնօրինում, իսկ նրանց չեղած դէպքում հոգեւորականները՝ ինչպէս եկեղեցական, այնպէս եւ աշխարհիկ բոլոր տեսակի դատերը վարում: Բայց ահա Թորոսեանը, առանց խորամուխ լինելու գօշեան հարցադրման մէջ, իսկոյն «եզրակացնում» է. «Մի դէպքում դատական ամբողջ իրաւասութիւնը տրուած է հոգեւոր իշխանութեանը (իմա՝ Ա եւ Գ խմբագրութիւններում - Լ.Խ.), միւս դէպքում (իմա՝ Բ խմբագրութիւնում - Լ.Խ.) այն բաժանուած է հոգեւոր եւ աշխարհական իշխանութիւնների միջեւ»¹:

Ըստ երեւոյթին Թորոսեանը չի հասկացել Ա (եւ Գ) խմբագրութեան բնագրում «ըստ պատահմանն եղիցի իշխանաց եւ գլխատուաց ժողովրդեան» գօշեան ձեռնկերպման իմաստը, որը կանխում է նման որեւէ կամայական «մեկնաբանում»: Ի դէպ, այս կարգի խտտոր ընկալումներից Գօշը նոյնիսկ զգուշացրել է ժամանակին՝ թէկուզեւ Հաթերքի Վախթանիկ իշխանին նուիրած իր ընծայականով, որ գտնուած է այժմ Վենետիկ 1237 թուահամարի տակ պահուող ձեռագրում, որը եւ, ըստ արուած «խորհրդաւոր» յայտարարութեան, եղել է նաեւ Թորոսեանի տրամադրութեան տակ: Այդ ընծայականում Գօշը յիշագործել է իշխանին հէնց իր այս Դատաստանագիրքը (որը Ա խմբագրութեան է պատկանում) օգտագործելու իրաւունքով. «Տէր Աստուած վայելել տացէ աստուածաւէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկայ, որդոյ Հասանա, ի կամս իր գգիթս Դատաստանի անսխալ ուղղութեամբ վայելել զպատուիրանս տրին...»²: Իսկ այս նշանակում է, որ դատաւարումը սկզբիցեւեթ Գօշը նախատեսել է նաեւ աշխարհիկ տէրերի համար...:

Բայց դժբախտութիւնը միայն այն չէ, որ Թորոսեանը գրաբարեան պարզ տեքստը յաճախ է սխալ ընկալում եւ խտտոր մեկնաբանում, ինչպէս այդ ցոյց կը տրուի շարադրանքի ընթացքում: Յաւալին այն է, որ նրան յատուկ է նաեւ դատումների անհետեւողականութիւնը մինչեւ անգամ իր մասնագիտական իրաւաբանական «լուծումներում»: Այսպէս, թէեւ նկատել է, որ «հէնց Ա խմբագրութեան մի շարք յօդուածներում ... նշուած են համարեա բոլոր այն գործերը, որոնց ընդդատութիւնը տրուած է աշխարհական իշխանութեանը»³, որով Գօշը չի բացառել աշխարհիկ դատաւարութեան վաւերականութիւնը նաեւ սկզբնական խմբագրութիւնում, բայց եւ այնպէս Թորոսեանը ճզնում է բռնագրօսիկ մեկնաբանմամբ համահարթել իր «եզրակացրածի» եւ հիմք ծառայած բնագրային ընթերցման ամբողջ հակա-

ստիւնը: «Բայց դրանով (իմա՝ աշխարհիկ դատաւարութեան վերաբերեալ յօդուածների առկայութեամբ - Լ.Խ.), - ասում է նա, - սոսկ արձանագրուած է իրերի փաստական վիճակը (sic!), այնինչ ընդհանուր ու սկզբունքային ձեռնկերպում ստացած յօդուածը իր մէջ պարունակում է մի ձգտում, որը վաղուց յատուկ էր հայ եկեղեցուն»⁴: Ահա թէ ի՛նչ. նոյնիսկ «նշանակութիւն չունի», թէ «ինչով» է բացատրում Գօշը իր այդ ձեռնկերպումը: Բանից պարզում է, ըստ Թորոսեանի, որ կարեւորը ոչ թէ փաստական ընդունումն է աշխարհիկ դատաւարութեան, այլ ... «տեսական» հարցադրումը, որը, ինչպէս վերը ցոյց տրուեց, Թորոսեանի կողմից նոյնպէս ճիշդ չէր ընկալուել: Եւ ահա անհասկանալի յաւակնուտութեամբ նա հետեւցնում. «Միտումով, թէ ոչ, յամենայն դէպս գտնէ տեսականօրէն (sic!), Մխիթարը սահմանում է եկեղեցու դատական մենաշնորհ (sic!)»⁵:

Չնայած նաեւ իր այս «հաւաստմանը», նոյն Թորոսեանը Ծանօթագրութիւնների բաժնում, նորից հակասելով իրեն, հերքում է վերոբերեալ իր բոլոր պնդումները: Այսպէս, Իոզէֆ Կարստին հակաճանելիս գրում է. «Ի. Կարստի այն կարծիքը, թէ ըստ Դատաստանագրքի հոգեւոր իշխանութիւնն է դատաւարութեան իսկական ու միակ օրինական կրողը, կարող էր իր հիմնատրումը գտնել, թերեւս (sic!), Դատաստանագրքի ԱԳ խմբագրութիւնների վերը բերուած յօդուածում (իմա՝ «Նախադրութեան» Ե յօդուածում - Լ.Խ.), որը իրօք, արտաքրստ (sic!) նման եզրակացութեան հնարաւորութիւն (sic!) տալիս է», ապա դարձեալ ընդգծում է իր այս կտրուկ նահանջը Թորոսեանը նախորդ պնդումներից. «Բայց դա միայն արտաքրստ»⁶: Եթէ այդպէս է, ապա հարց է ծագում. իսկ «ներքրստ» ինչպէ՞ս է գօշեան հարցադրումը Ա խմբագրութիւնում. «Իրականում, - «բացատրում» է Թորոսեանը, - այս խմբագրութիւնների (իմա՝ Ա եւ Գ խմբագր. - Լ.Խ.) համաձայն էլ եպիսկոպոսը, այսինքն հոգեւոր իշխանութիւնը, միայն «աւանդապահն է այսմ իրի», այլ կերպ դատաիրաւասութիւնը նրան է յանձնուած «յաւանդ»՝ ի պահ այնքան ժամանակ, քանի դեռ «առ մեզ ապականեալ է այսպիսի կարգ»՝ քանի դեռ չկայ թագաւորական իշխանութիւնը: Իսկ երբ կայ (sic!) կամ երբ ստեղծուի, եպիսկոպոսը միայն «զեկեղեցոյ դատաստանն հոգացել», իսկ թագաւոր «գաշխարհի դատաստանն»⁷:

Ի դէպ, նկատենք՝ ոչ ոք Թորոսեանին հերքել չի կարող այնպէս, ինչպէս ինքը Թորոսեանը ... իրեն: Դա ամէն մէկին տրուած չէ ի վերստ: Այսպէս, առանց իր դատումների անտրամաբանական լինելը ըմբռնելու, նոյնինքը Թորոսեանը գրում է. «Մխիթարի համար էլ մարմնաւոր իշխանները նոյնքան իսկական եւ օրինական (sic!) դատաւորներ են, որքան եւ հոգեւոր իշխանները, որովհետեւ նրանց է նուիրում Դատաստանագիրքը՝ վերջինիս պատուիրաններով ղեկավարուելու համար»⁸: Եւ ահա Թորոսեանը նոյնիսկ ջանքեր է գործադրում եւ փաստեր առաջադրում ընթերցողին համոզելու, թէ գիտէք ինչ, «վերջապէս հէնց ինքը Մխիթարն է սահմանել Դատաստանագրքի շատ ու շատ յօդուածներ (sic!), որոնցով նախատեսուած յանցաղէպերը կամ արարքները ընդդատեալ է համարել աշխարհականներին՝ թագաւորին, իշխաններին ու դատաւորներին, որով սրանք եւս համարուած են

¹ Նոյն տեղում, էջ 57:

² Ձեռագիր Վենետիկի մատենադարանի, համար 1237, էջ 100:

³ «Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի», Առաջաբան, էջ 4Ը:

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում:

⁵ Նոյն տեղում:

դատական իշխանության օրինական ներկայացուցիչներ»¹: Ապա Թորոսեանը, ըստ երեւոյթին, հենց իրեն ուղղելու եւ ճշդելու նպատակով, մի քիչ զգաստացած գրում է. «Ուստի, նախադրութեան Ե գլխի համապատասխան հատուածը (իմա՝ քննարկուած յօդուածը - Լ.Խ.) չպէտք է հասկանալ (sic!) ոչ այն իմաստով, թէ աշխատական իշխանութեան դատավարութեան նշանակութիւնը իրականում երկրորդական էր (sic!), եւ ոչ էլ այն իմաստով, թէ այդ վերջինն է Մխիթարի համար ցանկալի կարգը (օօօ)»²: Եթէ այդպէս է, բա ո՞ր մնաց Մխիթարի «սահմանած եկեղեցու դատական մենաշնորհը ...»՝ կը հարցնի ընթերցողը, քանի դեռ զգաստութիւնը չի կորցրել «գլխապտոյտ» այս հակասութիւնները...:

Ատուածից հետեւում է, որ Ա եւ ԲԳ խմբագրութիւնների առաջացման ու հակադրման «բնորոշող ներքին-էական» դասային-սոցիալական տարբերութիւններ չկան, որ յատկանել էր ցոյց տալ Թորոսեանը, ընդ որում նրա «ապացուցածը» ուրիշ բան չէր, եթէ ոչ դրանց *հերքումը*...:

Այժմ անդրադառնանք ԱԲ եւ Գ խմբագրութիւնների հակադրման «սոցիալական-դասային ներքին-էական բնորոշող» միւս յատկանիշներին, որ առաջադրել է Թորոսեանը:

ԱԲ

«Չի եթէ ի սեփական վիճակի (կաթողիկոսի) իցէ վախճանեալն անժառանգ, հայրապետին եղիցի ժառանգութիւնն, եւ եթէ ի վիճակի եպիսկոպոսի իցէ՝ յերիս բաժանեսցի՝ հայրապետին, եւ եպիսկոպոսին, եւ քահանայից ժողովրդեանն: Եւ եթէ վարդապետ որ ի նահանգին իցէ եւ զնոյն աշխատութիւն կրէ դատաստանի, մասն ինչ յիցի մմա՝ (Բ՝ եւ մմա), նովին չափով (Բ՝ չափելով) այրոզն»:

Առաջարան, էջ ԾԸ

Ա խմբագրութիւնում (տե՛ս էջ 26) Թորոսեանը փաստօրէն բոլորովին անհասկանալի եւ աղճատուած տեքստ է առաջադրել՝ «Չի եթէ ի սեփական վիճակի իցէ վախճանեալն անժառանգ, հայրապետին եղիցի ժառանգութիւնն, եւ եթէ ի վիճակի եպիսկոպոսին իցէ՝ յերից բաժանեսցի...», ընդ որում՝ եւ դա այն դէպքում, երբ ճիշդ

¹ Նոյն տեղում, էջ 538:

² Նոյն տեղում:

ընթերցումը բնագրային՝ առկայ է Բաստամեանցի հրատարակութիւնում...: Իսկ Գ խմբագրութեան ընթերցումը կազմելիս Թորոսեանը ... հետեւել է Բաստամեանցին:

Արդ, ի՞նչ է նշանակում՝ «եթէ անժառանգ վախճանուածը *սեփական վիճակում* (իմա՝ թեմում) գտնուի, նրա ժառանգութիւնը հայրապետին կը լինի, իսկ եթէ եպիսկոպոսի վիճակում՝ երեքի է բաժանում (նրա գոյքը)»: Մինչդեռ, պարզում է, որ տարբերութեամբները հնարատրութիւն ընձեռում են վերացնելու այս անհետեւութիւնը, բայց Թորոսեանը չի կարողացել «կողմնորոշուել» եւ խուսափել աղճատ ընթերցումից. *Գ ձեռագիրը «սեփական» բառի տեղ ունի «հայրապետին»* ճիշդ բառը, եւ այդ դէպքում միայն հասկանալի է դառնում բնագրային ընթերցումը, այն է՝ «եթէ անժառանգ վախճանուածը հայրապետի թեմում գտնուի, նրա ունեցումները պատկանելու է հայրապետին. եթէ եպիսկոպոսի թեմում լինի՝ երեքի է բաժանում...»: Իսկ Թորոսեանը տարբերութեամբների բաժնում իբրեւ ... գրչագրական սխալ է ներկայացրել «հայրապետին» բառաձեւը՝ նշելով. «Գ. հայրապետին փխ սեփական...» (էջ 173):

Ինչ վերաբերում է խմբագրութիւնների հակադրման «սոցիալական հիմքի» նրա «մեկնաբանմանը», ապա պարզում է, ըստ Թորոսեանի, որ ԱԲ բնագրերը տարբերում են, իբրեւ խմբագրութիւն, Գ խմբագրութիւնից միայն այն պատճառով, որ ԱԲ-ում վարդապետը դատ վարելիս ստանում է անժառանգ վախճանուածի գոյքի մի մասը, եւ դրա հաւասարութեամբ մնացածը բաշխում է միսներին, մինչդեռ Գ խմբագրութիւնում ասում է, որ վախճանուածի գոյքը բաժանում է *վեց մասի*. մի մասը վարդապետն է ստանում, իսկ մնացածը բաժանում երեքի: Այստեղից քմահաճ հետեւութիւն է արւում այն մասին, որ, իբր, ԱԲ խմբագրութիւններում «վարդապետի դերն ու նշանակութիւնը ընդգծուած է (sic!)», ընդ որում «ԱԲ-ի վարդապետը մաս էր ստանում, եթէ *մասնակցում էր ատենին* (օօօ)», «*իսկ քառ Գ-ի անկախ դրանից* (օօօ)»¹: Ինչպէս ընթերցողը կը նկատի, վարդապետի նսեմացուելու կամ չնսեմացուելու վերաբերեալ Թորոսեանի մակաբերումների համար բնաւ հիմքեր չկան բնագրերում, ո՛չ էլ, առաւել եւս, դրանցով պայմանաւորուած խմբագրութիւնների առաջացման հակադրութիւն...:

Հարց է ծագում՝ ինչո՞վ ապացուցեց Թորոսեանը «դասային-սոցիալական հակամարտութիւնների առկայութեան» իր վարկածը՝ խմբագրութիւնների բեւեռացման հիմունքները «բացատրելիս»: Ոչնչով: Յուսկնութիւնը այլ էր, բնագրային հաստատումը՝ անյարի՛ր դրան...:

Սոցիալական-դասային «տարբերութիւնների» միւս «յատկանիշը», որի վրայ իր թեզն է կառուցում Թորոսեանը, հետեւեալն է.

¹ Նոյն տեղում, էջ ԾԷ:

ԱԲ

«Իսկ եթե ի կնոջէն իցէ մեկնիւն անպատճառ, յերիցն զմին մասն յիւրոց ընչիցն առն թողէ»:

Առաջաբան, էջ ԾԸ:

Այս երկու զուգարդումներում սոցիալական-դասային ո՛չ մի տարբերութիւն չկայ եւ իսկապէս «մեկնաբանութիւններն աւելորդ» են (էջ ԾԸ), բայց ո՛չ, իհարկէ, յօգուտ թորոսեանի վարկածի: Այնուամենայնիւ հարկադրուած ենք բացատրութիւն տալ միայն ու միայն անհիմն յաւակնութիւնը փարատելու համար:

Ընթերցումներում երկու դէպքում էլ առկայ է բացառական հոլովածելը՝ «ի կնոջէն», իսկ բացառականը, ինչպէս յայտնի է, ի շարս այլոց, «պատճառի» գաղափար է արտայայտում նոյնիսկ առանց «պատճառ» բառը օգտագործելու: Բացի այդ, Գ խմբագրութիւնում «պատճառ» բառն է գործածուած, ի տարբերութիւն ԱԲ խմբագրութեան «անպատճառ» բառի, ոչ թէ սոցիալական-դասային ինչ-որ շահերի հակադրութիւն մատնանշելու առումով, ինչպէս «կարծում» է Թորոսեանը, այլ պարզապէս դա արդիւնք է այն բանի, որ նրա հիմքում ընկած ձեռագիրը, որից համառօտուած է Գ խմբագրութիւնը, ունեցել է ... «պատճառ» բառը, որի մասին վկայում է ինչպէս Թորոսեանի օգտագործած Գ ձեռագիրը («ի կնոջէն իցէ պատճառս մեկնելոյ»..., էջ 186), այնպէս եւ Բաստամեանցի երեք ձեռագրերը («Եւ եթէ ի կնոջէն էր պատճառն ...», էջ 104, ծան. 182): Սա՛ է դրա «գաղտնիքը», որը, սակայն, թիրիմացութեան մէջ է գցել Թորոսեանին...: Իսկ թէ բաժանման առթիւ իբրեւ տուգանք ամուսնուն իր գոյքի երեքից մէկն է տալիս թէ կէտը՝ նոյնպէս «դասային-սոցիալական» տարբեր շահերի դրսեւորում լինել չի կարող, առաւել եւս՝ խմբագրութիւնների առաջացման ու տարբերակման «ներքին բնորոշող» ... յատկանիշ:

Այնուհետեւ.

ԱԲ

«Ազատ յԱրարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ եւ ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան. զի թողեալ զտերունիսն ազատ է ուր եւ կամեսցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ որ ի տերանցն եւ բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հարն ազատ են որդիքն ծնեալք այլոր եւ ոչ անդ»:

Գ

«Եթէ ի կնոջէն է պատճառն, զկէս ընչիցն կնոջն տուգանք տացնն յայրն»:

Առաջաբան, էջ ԾԸ:

Ընթերցումներում երկու դէպքում էլ առկայ է բացառական հոլովածելը՝ «ի կնոջէն», իսկ բացառականը, ինչպէս յայտնի է, ի շարս այլոց, «պատճառի» գաղափար է արտայայտում նոյնիսկ առանց «պատճառ» բառը օգտագործելու: Բացի այդ, Գ խմբագրութիւնում «պատճառ» բառն է գործածուած, ի տարբերութիւն ԱԲ խմբագրութեան «անպատճառ» բառի, ոչ թէ սոցիալական-դասային ինչ-որ շահերի հակադրութիւն մատնանշելու առումով, ինչպէս «կարծում» է Թորոսեանը, այլ պարզապէս դա արդիւնք է այն բանի, որ նրա հիմքում ընկած ձեռագիրը, որից համառօտուած է Գ խմբագրութիւնը, ունեցել է ... «պատճառ» բառը, որի մասին վկայում է ինչպէս Թորոսեանի օգտագործած Գ ձեռագիրը («ի կնոջէն իցէ պատճառս մեկնելոյ»..., էջ 186), այնպէս եւ Բաստամեանցի երեք ձեռագրերը («Եւ եթէ ի կնոջէն էր պատճառն ...», էջ 104, ծան. 182): Սա՛ է դրա «գաղտնիքը», որը, սակայն, թիրիմացութեան մէջ է գցել Թորոսեանին...: Իսկ թէ բաժանման առթիւ իբրեւ տուգանք ամուսնուն իր գոյքի երեքից մէկն է տալիս թէ կէտը՝ նոյնպէս «դասային-սոցիալական» տարբեր շահերի դրսեւորում լինել չի կարող, առաւել եւս՝ խմբագրութիւնների առաջացման ու տարբերակման «ներքին բնորոշող» ... յատկանիշ:

Առաջաբան, էջ ԾԸ:

Չուզարդուած բնագրային ընթերցումները «դասային տարբեր շահերի արտայայտման» հիմքեր նոյնպէս չեն տալիս: Գօշի գլխատր միտքը ճորտի վիճակի մասին (որ Թորոսեանի մօտ համարժէք է «շինականին»)՝ «թողեալ զտերունիսն ազատ է ուր եւ կամեսցի կալ», արտայայտուած է ինչպէս Ընդարձակ խմբագրութեան ԱԲ տարբերակներում, այնպէս էլ Համառօտում, առանց, սակայն, Գօշի բացատրութեան՝ մասնակի դէպքի յիշեցման մասին: Համառօտումը կատարուել է *իւնց մասնակիութեան կրճատման հաշուին, առանց յատուկ դիտարկութեան* (համեմատի՛ր՝ ԱԲ. «Ապա թէ այսմ ոչ ներէ որ ի տերանցն եւ բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հարն ազատ են որդիքն ծնեալք այլոր եւ ոչ անդ», Գ-ն սրա ընդհանուր դրոյթն է վերցրել, այսինքն՝ որդիներին վերաբերածը. «Եւ ոչ է իրաւունք թագաւորաց եւ իշխանաց բռնադատել զոք կենալ ի գեղ մի կամ ի մի երկիր»): Եւ քանի որ կրճատումները, իբրեւ կանոն, եղել են «պատմականութեան» ու մասնակի դէպքերի բեռնաթափման հաշուին եւ հետեւանք չեն «դասային-դասակարգային» շահերի արտացոլման՝ կրելով *զուտ բնագրային համառօտման բնոյթ*, ինչպէս Թորոսեանի իսկ առաջադրած «փաստերի» քննութիւնը այդ ցոյց է տալիս, ապա սա եւս իբրեւ այդպիսին պէտք է գնահատել: Իհարկէ՝ օրինակաբար ստացուել է այնպէս, որ, ըստ Գ խմբագրութեան, զիւղացուն ոչ որ չի կարող բռնադատել մինչեւ կեանքի վերջն ապրել որեւէ որոշակի վայրում, որը եւ կարող է տուեալ դէպքում «սոցիալական» բացատրութեան դուր բացել, եթէ *դա օրինակապիական լինէր նաեւ միւս դէպքերի համար*, որը, սակայն, բացառում է:

Բայց կայ առաւել զաւելտականը, որ խմբագրութիւնների բաժանման «ներքին-լական բնորոշող յատկանիշներից» իբրեւ վերջինն է առաջադրել Թորոսեանը.

ԱԲ

«Այլ գետք, յորոց հասին սահմանաց՝ ոչ է, բայց առ որ հասանն»:

Գ

«Այլ գետք, ուստի ակն ելանէ՝ նոցա է, եւ ոչ առ ուր հասանեն»:

Առաջաբան:

Առաջաբան, էջ ԾԸ:

Նախ՝ ԱԲ խմբագրութիւններում ոչ թէ «հասին» բառածինն է, այլ՝ «հոսին», որով իմաստը բոլորովին փոխում է եւ ընթերցումը փարատում է (տե՛ս Թորոս. էջ 48, 566, Բաստ. էջ 327): Երկրորդ՝ անգրագէտ է կազմուած Գ խմբագրութեան «քննական» տեքստը. պատկառելի թիւ կազմող ութ ձեռագրեր *վկայում են ճիշդ ընթերցումը, որը բացարձակապէս յար եւ նման է ԱԲ խմբագրութիւնների բնագրային ընթերցմանը, սակայն որպէս «սխալագրութիւն» Թորոսեանը տարել է ... տարբերութիւնների բաժինը*, ուր, իբրեւ ձեռագրական «աղճատում» նշում է հետեւեալը. «ԻՏԿԳԸՅՆԸ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) Այլ գետք, ուստի ակն ելանեն՝ նոցա ոչ է (՛՛ չիք, ԾԿԳԸ են), այլ առ (ԾԿ չիք) ուր հասանենն (ԾԿՆ հասանենն)», էջ 449:

Թորոսեանը, հաւատարիմ «քննական» տեքստ կազմելու իր մեխանիկական համադրման մեթոդին, այստեղ ոչ թէ երկրորդական կարգի սխալներ է թոյլ տուել, այլ՝ սկզբունքային ու մեկնակէտային, որով հիմնովին աղճատել *Գօշի իրաւահաս-*

կացութիւնը՝ հաստատական մտքերը դարձնելով ժխտական, իսկ ժխտականը՝ հաստատական, եւ սեփական տեքստաբանական իր այս բերրմբունուը հիմք է դարձրել մինչեւ անգամ «տեսական» հետետեքիւնները... ընդ որում եւ դա այն ղէպքում, երբ Ա եւ Բ խմբագրութիւնները նոյնպէս յաշում են նրան, թէ ուղիղ ընթերցումը ինչպիսիսն պէտք է լինի, եթէ նոյնիսկ ձեռագրական տարբերութեանց ներքին թորոտեանը դժուարանում է գլուխ հանել: Բայց դա, ըստ երեւոյթին, թորոտեանին «ձեռնտու» չէր լինի խմբագրութիւններում «սոցիալական-դասային տարբեր շահերի արտայայտման» իր վարկածի «հիմնաւորման» համար...: Եւ տեսէ՛ք, թէ ինչպէս է «մեկնաբանում» ու «եզրակացնում» թորոտեանը. «Յայտնի է, թէ Հայաստանում հողագործութեան համար ինչ նշանակութիւն ունէր ջորը, ուստի ջրի կարգաւորման հարցը բացառիկ կարեւորութիւն ունէր: Եւ ահա, միեւնոյն հարցը սկզբունքօրէն հակառակ ձեւով է կարգաւորում... (sic!)»¹:

Ի դէպ, ցաւալին ոչ միայն այն է, որ թորոտեանի կազմած «քննական» տեքստերը պատրաստուած են բնագրագիտական ցածր մակարդակով, այլեւ այն, որ աշխատասիրողը իր կազմած անգրագէտ ընթերցումները հիմք դարձնելով՝ յաւակնում է նաեւ «տեսական» ընդհանրացումներ կատարել եւ խմբագրութիւնների որոշման «սոցիալական հիմունքների» նորահնար եղանակ առաջադրել...:

Ամփոփելով «տեքստաբանական» իր վերոյիշեալ զուգադրումները, թորոտեանը Գօշի աշխատութեան խմբագրութիւնների բաժանման տարբերիչ առանձնայատկութիւնները բացատրապէս համարում է «սոցիալական հիմունքները», որոնք, ինչպէս տեսանք, արդիւնք են սխալագրութիւնների՝ իբրեւ բնագրային ընթերցումների հրամցման...: Այդ իսկ պատճառով թորոտեանի «տեսական» հետետեալ բնորոշումը գուրկ է բնագրագիտական որեւէ նշանակութիւնից. «Հէնց այս տարբերութիւններն (իմա՝ այսպէս կոչուած «դասային-դասակարգային» - Լ.Խ.) են, որ առաջին հերթին պէտք է նկատի առնուեն ձեռագրերը դասդասելիս եւ նաեւ դրանք են, որ թոյլ են տալիս ձեռագրախմբերը առանձնացնել որպէս ուրոյն խմբագրութիւններ (sic!)»²:

4. «Քննական» բնագրերի վերականգնման աշխատանքների տեքստաբանական ուրակը:

Մեր մատենագրութեան միջնադարեան Յուշարձանների գիտա-քննական բնագրերի կազմումն ու հրատարակումը չափազանց պատասխասատու եւ պարտաւորեցնող խնդիր է, որի յաջող իրագործման գրաւականը, առաջին հերթին, գրաբարի քերականական իրակութիւնների խորաքննի իմացումն է, որով եւ երաշխաւորում են բանասիրական բոլոր արձարծումների ու նրանց լուծումների գիտականութիւնը: Ելակէտային այս պահանջը առաւել չափով վերաբերում է առանձնապէս իրաւաբանական Յուշարձաններին, ըստ որում ենթադրում է ոչ միայն բառիմաստային անճշդութիւնների ու շարահիւսական անհամաձայ-

¹ Նոյն տեղում, էջ 50:

² Նոյն տեղում:

նութիւնների, այլեւ մինչեւ անգամ կէտադրութեան՝ նոյնիսկ ստորակէտի սխալ կիրառման խապառ բացառում:

Աննախադէպ երեւոյթ է, որ քննախօսուող աշխատասիրութիւնում ոչ միայն անգրագէտ բնագրային կազմութիւններն ու աղաւաղումներն են առաջադրում արդէն իսկ Բաստամեանցի քննական բնագրի միանգամայն ճիշդ ընթերցումների փոխարէն, այլեւ ... անգրագիտութիւնները «պատճառաբանու՛մ» եւ, մանաւանդ, «փաստարկու՛մ» են «բանասիրական» մեծ յաւակնութեամբ...: Դա ոչ միայն զաւեշտական է, այլեւ վտանգաւոր՝ իր ... «մարտնչող» բնոյթով:

Ի դէպ, մենք այստեղ հնարաւորութիւն չունենք քննելու եւ ընդհանրապէս թորոտեանի վայրիվերոյ կիրառած տրոհական նշանների բոլոր սխալներն ու վրիպումները, որոնք, դժբախտաբար, որակ են կազմում, այլ միայն ու բացառապէս կ'անդրադառնենք նրանց, որոնք թորոտեանի իսկ կողմից «բանասիրական քննարկման» են ենթարկուել: Նշենք նաեւ, որ թորոտեանը «բանասիրական» իր եզրայանգումները կատարում է, իբրեւ կանոն, երեք խմբագրութիւնների համապատասան քաղուածքների զուգադրումների հիման վրայ, ուստի եւ մենք էլ հարկադրուած ենք քննել բնագրային այդ զուգադրումների բնագրագիտական վաւերականութիւնը՝ առաջադրելով դրանք այնպէս, ինչպէս քննարկուող աշխատութեան մէջ ներկայացուած են առհասարակ: Այսպէս.

Ա

«Այլ պղինձ եւ երկաթ եւ այլք ի նմանեաց սոցին՝ իշխանաց իցէ մեծամեծագ, պարգևօք թագաւորաց» (47):

Գ

«Պղինձ, եւ երկաթ, եւ կլայեկ եւ այլք յայսպիսեաց՝ իշխանաց լիցի մեծամեծ, պարգևօք ի թագաւորաց» (317):

Բ

«Այլ պղինձ եւ երկաթ եւ այլք ի նմանեաց նոցին - իշխանաց իցէ մեծամեծագ պարգևօք թագաւորաց»:

(Բաստ., 326):

Ամենաընտիրը այս երեք ընթերցումներից Բաստամեանցի՛նն է՝ տրոհական նշանների կիրառման առումով: Թորոտեանը նոյնիսկ իր կազմած համադրական ընթերցումներում չի ձգտել հասնել քերականական ձեւերի միասնութեան, որը գիտականութեան առաջին պայմանն է. մի դէպքում (Ա) սեռական հոլովով է ներկայացրել «թագաւորաց» բառաձեւը՝ յար եւ նման Բաստամեանցի ընթերցմանը, միւս դէպքում՝ ... բացառական հոլովով («ի թագաւորաց») - իմաստային ա՛յլ նրբերանգով: Մի դէպքում՝ որոշիչը («մեծամեծագ») համաձայնեցուած է իր որոշեալի հետ, միւս դէպքում՝ չի համաձայնեցուած («մեծամեծ»): Վայրիվերոյ այս

համադրումից յետոյ Թորոսեանը նոյնիսկ «կշտամբում» է Բաստամեանցին՝ ամբողջ նախադասութեան մէջ ... տրոհումը ճիշդ չկատարելու համար: Նա յարակնում է պնդել, թէ իբր «առաջին հայեացքից բուն է (sic!), որ այստեղ (իմա՝ Գ խմբագրութիւնում - Լ.Խ.) ստորակէտը պէտք է դրուի «վիցի» բառից յետոյ, որով «մեծամեծ» կը վերաբերի ոչ թէ «իշխանաց», այլ՝ «պարգևօք» բառին, որովհետև «իշխանաց»ին վերաբերելու հասար սպասելի էր, որ «մեծամեծ» բառը լինի հոլովուած՝ «մեծամեծաց», որպէս անակնադի ետադաս գործածութեան դէպք (566): Բայց ոչ մի գրաբարագէտ ոչ «առաջին հայեացքից», ոչ էլ առաւել եւս՝ «վերջին հայեացքից» ստորակէտը չէր դնի «վիցի» ստորոգելից յետոյ՝ արհեստականօրէն անջատելով որոշիչը (որ «մեծամեծ», բայց ստոյգը եւ ընտիրը՝ «մեծամեծաց» բառածինն է) իր որոշելից՝ որ «իշխանաց» բառածինն է...: Ապա իր իսկ մտովի երեւակայած անգրագիտութիւնը դատափետելով՝ Թորոսեանը շարունակում է. «Եթէ ստորակէտը դրուի «վիցի» բառից յետոյ, կ'ստացուի. պղինձը եւ այլն իշխաններին է հանդերձ *բազալորի* կողմից տրուող մեծամեծ պարգևներով. մի բան, որ անիմաստ է: Մինչդեռ խօսքն այն մասին է, որ պղինձը (հանքերը) եւ այլն մեծամեծ իշխաններին է եւ *դրանց մշակման արտօնութիւնը նրանց պարգևում, շնորհում է բազալորը*» (էջ 566): Հազիւ թէ առաւել կամայական «բացատրութիւն» լինի, քան Թորոսեանի այս պնդումը: Մինչդեռ Գ-օշի բննարկատող սոյն իրաւանորմը պարփակում է երկրային հարստութիւնների քարկում այն բանի նշումով, թէ ո՛ւմ՝ ի՛նչ հանքեր կարող են պատկանել, այդ բուն՝ «պղինձը, արծաթը եւ այլն մեծամեծ իշխաններին են պատկանում՝ *բազալորների* պարգևների հետ միասին»: (Ի դէպ, ինքնին հասկանալի է, որ այդ պարգևների մէջ մտնում են առաջին հերթին հէնց այն տիրոջները, նշուած հանքատեսակների հետ, որ բազալորներն են շնորհել մեծամեծ իշխաններին՝ նրանց մատուցած ռազմաքաղաքական ծառայութիւնների դիմաց): Իսկ Գ-օշի բնագրում՝ «պարգևօք *բազալորաց*» բնաւ չի նշանակում «հանքերի մշակման արտօնութիւնը մեծամեծ իշխաններին պարգևում, շնորհում է *բազալորը*», ինչպէս Թորոսեանն է հասկացել:

Բայց առաւել զանշտական ընթերցումներ առաջադրել է Թորոսեանը նոյն իրաւանորմի այլ պահանջների ձեռագրական սխալ համադրումների պատճառով: Չիւքի, խունկի եւ այլնի վաճառքից «տասանորդ» բաժին է տրուում իշխաններին՝ ասում է Գ-օշը, ապա շարունակում.

Ա

«Իսկ պտուղ ամենայն, գտեալ ի մայրիս իւրաքանչիւր սահմանաց, նոցին լիցի շինականաց: Իրաւացի է տասանորդել ատարացն ի կթել պտղոյն, որ ոչ իւրեանց իցէ, այնոքիկ, որոց իցէ սահմանն եւ ըստ խնդրոյ նոցին կամաւք եղիցի»:

Թորոս. էջ 47-48:

Գ

«Իսկ պտուղը ամենայն, գտեալ ի մայրիս շինականացն եղիցի իւրաքանչիւր սահմանս»:

Թորոս. էջ 317:

Բ

«Իսկ պտուղ ամենայն գտեալի մայրիս իւրաքանչիւր սահմանաց նոցա լիցի: Շինականաց իրաւացի է տասանորդել օտարացն ի կթել պտղոցն որ ոչ իւրեանց իցէ, այնոցիկ՝ որոց իցէ սահմանն եւ ըստ խնդրոյ նոցին կամօք եղիցի»:

Բաստ., էջ 327:

Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Գ-օշի իրաւանորմի ճիշդ ըմբռնումը տուել է միայն Բաստամեանցը. ըստ այդմ բարգամութիւնը կը լինի. «Իւրաքանչիւրի սահմանների մէջ մտնող անտառներում առկայ պտուղը պէտք է պատկանի *իշխաններին*» («նոցա» դերանունը փոխարինում է նախորդ նախադասութեան մէջ գործածուած «իշխանաց» բառին): Շինականները պէտք է «տասանորդ» բաժին տան օտարներին պատկանող մրգերի քաղից, որը իրենցը չէ, (այլ) նրանցն է, ում սահմանում են գտնուում, եւ դա պէտք է լինի նրանց յօժարութեամբ»: Բաստամեանցի՝ տրոհութեան նշանների հմուտ կիրառմամբ կազմուած այս բնագրային ստոյգ ընթերցմանը Թորոսեանը հակադրում է իր անգրագէտ ընթերցումը եւ սկսում «հակաճառել» ... Բաստամեանցին:

Ինչպէս ակնբախ է հերթական աղաւաղումից, Թորոսեանը չըմբռնելով երկրորդ նախադասութեան տրականով արտայայտուած ենթական («Շինականաց») միադիմի բայի մօտ (*իրաւացի է* = «պէտք է», «արդար է» իմաստով)՝ կարծել է, թէ այն պէտք է նախորդ նախադասութեան պատկանի իբրեւ ... յատկացուցիչ, եւ ստացուել է այնպէս, որ, ըստ Թորոսեանի ընթերցման, *անտառներում գտնուող պտուղը սահմանային տարածքով պատկանելիս է եղել ոչ թէ իշխաններին, այլ ... շինականներին*. ընդ որում «նոցին լիցի շինականաց» ընթերցումը առաջադրելիս Թորոսեանը չի էլ մտածել, որ կրկնակի յատկացուցիչը նման կազմութեամբ ոչ միայն անյարիր է գրաբարի լեզուական համակարգին, այլեւ՝ *իրաւանորմի անհերքութիւն* ...: Բացի այդ, Բաստամեանցի «նոցա լիցի» ճիշդ ընթերցումը ձեռագրական տարբերակներում ունեցել է նաեւ Թորոսեանը, բայց ... տարել է այն տարբերցումների բաժինը իբրեւ ... «սխալագրութիւն» (տե՛ս էջ 193, «ԲԶԷ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) «նոցա լիցի»):

Այնուհետեւ.

Թորոսեանը իր այս չկշռադատուած միջամտութեամբ *գրկել է երկրորդ նախադասութեանը նաեւ ենթականից*, երբ այն տեղափոխել է *նախորդ նախադասութիւն* շարահիսակական տարբեր պաշտօնով՝ իբրեւ կրկնակի յատկացուցիչ... «Իրաւացի է տասանորդել ատարացն ի կթել պտղոյն» Թորոսեանի կազմած անենթական եւ անմիտ նախադասութեան առթիւ հարց տանք նրան. երբեւէ հաշիւ տուե՞լ է իրեն Թորոսեանը, թէ ո՛վ կամ ո՛վքեր պէտք է «տասանորդ» տան օտարի մրգերը քաղելիս...:

Բայց նայե՛ք նրա յարակնութեանը. բանից պարզում է, որ ոչ թէ պատահական վրիպում է թոյլ տուել Թորոսեանը, այլ «խորապէս» համոզուած կարծիք,

ուստի եւ «բնագրագիտական իր ծառայութիւնն» առաջարկել զօշագիտութեանը՝ գրելով. «Վ. Բաստամեանցը կէտադրութիւնը կատարել է այսպէս. «Իսկ պտուղ ամենայն գտեալ ի մայրիս իւրաքանչիւր սահմանաց նոցա լիցի: Ծինականաց իւրաւացի է տասանորդէլ օտարացն ի կթել պտղոցն...»: Ապա հետեւում է Թորոսեանի «գնահատականը»՝ «որով զգալիօրէն փոխուել է յօղուածի իմաստը»...:

Տրոհական նշանների իր «ուղղումներով» եւ իմաստային միաւորների նոր վերաարժեքաւորումներով Թորոսեանը ոչ միայն աղաւաղում է Գօշին, այլեւ մոլորութեան մէջ է գցում իրաւարան հետազօտողներին՝ նրա բնագրային կազմութիւններին վստահելիս: Այսպէս, Գօշը, անդրադառնալով Օրինաց գրքի՝ գերեւարութեամբ հարձ վերցրած գեղեցիկ կնոջ մասին վկայութեանը, հաւաստում է. եթէ լլկելուց յետոյ դուր չգաս նրան, ազատ արձակիր եւ երբեք փողով մի՛ վաճառիր եւ մի՛ անարգիր նրան. երբ քրիստոնեան վերցնի նրան կնութեան, ապա նախ պէտք է մկրտի նրան եւ յետոյ ամուսնանայ օրինական կարգով: Իսկ եթէ դուր չգայ իրեն, ապա չպէտք է ազատ արձակի, այլեւ ընդհանրապէս նրան արձակելու իրաւունք չունի՝ առանց պտոնկութեան փաստի: Գօշի այս մեկնաբանումը Թորոսեանը «չի հաւանում» եւ ... աղաւաղում, նաեւ ... «փաստարկելով»: Չնայած այն իրողութեանը, որ Բաստամեանցը արդէն իսկ ճիշդ է տրոհել իմաստային՝ շարահիսակական միաւորները, բայց Թորոսեանը հակաճառում է նրան՝ յայտարարելով. «Վ. Բաստամեանցը կէտադրել է. «Ոչ եթէ յորժամ հաճեսցի՝ ոչ արձակէ ազատ, այլեւ ոչ բնաւ արձակել... իշխան է», որով էսպէս փոխուել է յօղուածի իմաստը» (sic!, էջ 574): Եւ առաջարկում է Թորոսեանը արտառոց մի «ուղղում»՝ Գօշի հաւաստումը վեր ածելով ... անհեթեթութեան. «Որ տրոհման նշանը պէտք է դրուի (հաճեսցի) «ու»ից յետոյ եւ ոչ թէ դրանից առաջ, հաստատում է յօղուածի իմաստով (sic!)»: Եւ այդ «արբագրումը» Թորոսեանի երկու ընթերցումներում էլ ստացել է հետեւեալ անհասկանալի կերպարանքը. «Եւ ոչ եթէ յորժամ հաճեսցի ոչ (??), արձակէ ազատ, այլեւ ոչ բնաւ արձակել, առանց բանի պտոնկութեան, իշխան է» (Ա, էջ 80, Գ, էջ 347):

Նախ՝ անյարիր է գրաբարի քերականութեանը՝ ստորոգեալի մէկի տեղ երկու ժխտական մասնիկներ վերցնելը նման կառուցուածքում, եւ այդքանը միայն պէտք է յուշեր Թորոսեանին, որ *ձեռնպահ մնար միջամտութիւնից՝ չփչացնելու համար արդէն իսկ Բաստամեանցի առաջադրած ճիշդ տրոհումը*. Երկրորդ՝ Գօշի գրած «ու արձակել» ժխտական ստորոգեալը «ու»ի անջատումով եւ նախընթաց «հաճեսցի» բայաձեւին վերագրելով դարձրել է ... հաստատական պնդում, որով անհոգիաբար աղճատել է բնագիրը...:

Իբրեւ տխուր իրողութիւն հարկ է արձանագրել, որ Բաստամեանցի արդէն իսկ ճիշդ լուծած տրոհական նշանների կիրառումը խախտելով «կարգաւորելու» անուան տակ՝ Թորոսեանը վերստին աղճատում է իմաստային միաւորների շարահիսակական յարաբերութիւնները եւ նորից ու նորից անհրաժեշտութիւն ստեղծում ... իր աղաւաղումները ուղղելու: Բայց ի՞նչ է շահել զօշագիտութիւնը այս բոլորից...:

Այսպէս, նա «քննութեան» է առնում նաեւ հետեւեալ հատուածը, եւ «առարկելով» Բաստամեանցին՝ ներկայացնում սեփական ընթերցումները ... բնագրային նոր աղաւաղումներով. «Բայց մի՛ որ ապախտ առնել զվկայութիւն Տեառն կարծիցէ ինձ (??) զկանանց, զի այլազգ Աստուծոյ վկայ լինելն է եւ այլազգ՝ մարդկան. թէ պատահին, որպէս եւ պատահեցան բազումք, ի Տեառնէ ընկալեալք լիցին...» (Ա, էջ 13, Գ, էջ 295):

Նախ՝ Թորոսեանը չի կարողացել լուծել բնագրային տարրական, բայց եւ իմաստային շատ կարեւոր մի խնդիր՝ *ինձ/ինչ* ձեռագրական տարբերութեանը ճշգրիտը ընտրելով ներկայացնել քննական տեքստում: Չկարողանալով կողմնորոշուել, թէ ո՞րն է դրանցիկ *միակ*՝ միսին բացառող ստոյգ ընթերցումը, քիւրիմացաբար «քննական» տեքստում համադրել է... «ինձ» («զվկայութիւն Տեառն կարծիցէ ինձ կանանց») մթագնող ու խաթարող բառը, իսկ ճշգրիտը՝ «ինչ»՝ քարմատարը տարել է ... տարբերութեանների բաժինը իբրեւ ... «զբնագրական սխալ». ընդ որում՝ ո՛չ թէ դիպուածաբար (դա թերեւս ներելի լինէր), այլ ... գիտակցաբար եւ յատուկ ընդգծումով. «ԺԻԶՊ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) ինչ փխ ինձ» (490):

Յաւախն նաեւ այն է, որ Թորոսեանը երբեք հաշիւ չի տալիս իրեն, թէ իր միջամտութիւններով կամ ձեռագրական տարբերութեանների մեխանիկական համադրումներով իրաւանորմերը իմաստային ինչպիսի՛ այլափոխութիւնների եւ ճապարկութիւնների են ենթարկուում՝ վեր ածելով անգրագէտ ընթերցումների: Դրա պատճառներից գլխաւորը, անտարակոյս, ուրիշ բան չէ, եթէ ոչ գրաբարի քերականական օրինաչափութիւնները չիմանալը եւ *սոսկ սեփական «արամբարանութեամբ» առաջնորդուելը*...:

Ապա «քննադատելով» քաղուածքում ընդգծուած տողի կապակցութեամբ Բաստամեանցին, Թորոսեանը գրում է. «Վ. Բաստամեանցը ստորակէտը դրել է «պատահեցան» բառից յետոյ, որով *նշանակալիօրէն փոխում է հատուածի իմաստը (sic!)*», (էջ 542): Եւ տեսէ՛ք՝ թէ ինչպէս է «հիմնաւորում» Թորոսեանը կարծեցեալ այդ «իմաստափոխութիւնը». «Ըստ այդմ՝ կանանց թիւը (sic!) պէտք է շատ լինի, բազում, որպէսզի «ընկալեալ» լինեն» (էջ 543)... աստուծոյ: Բայց արի տես, որ Բաստամեանցի տրոհմամբ՝ բնագիրը յուշում է, որ խօսքը աստուծու կողմից կանանց բազում վկայութիւնների ընդունման «ղէպերի» մասին է, եւ ո՛չ ամենեւին՝ ... *կանանց բազմութեան*, ինչպէս ծուռ «մեկնաբանում» է Թորոսեանը: Բաստամեանցի կազմած՝ «Թէ պատահին, որպէս եւ պատահեցան» ընթերցումը նշանակում է՝ «եթէ (կանանց վկայութեան) ղէպեր պատահեն, ինչպէս եւ պատահեցան...», միջանկեալ բացայայտող նախադասութիւնը՝ «որպէս պատահեցան», բացառապէս վերաբերում է նախընթաց «թէ պատահին» նախադասութեան մեկնմանը, ուստի եւ ո՛չ մի կապ չունի կանանց թուի քանակական շատութեան հետ... եւ անհեթեթութիւն է «բազումք» բառը վերագրել դրան: Բաստամեանցը միանգամայն ճիշդ է վարուել, որ ստորակէտը հէնց «պատահեցան» բառից յետոյ է դրել, իսկ «բազումք» բառը, որպէս ենթակայ, անբաժանելի սերտութեամբ կապուած լինելով միւս գլխաւոր անդամի՝ ստորոգեալի հետ, գլխաւոր նախադասութեան կազմում ներկայացրել. «(կանանց վկայութիւններից) շատերը կ'ընդունուեն Աստուծոյ կողմից»: Եւ ահա Թորոսեանը մեղանչելով գրաբարի շարահիսակական կանոնների դէմ՝ յանդիման «բազումք» ենթական անջատում է գլխաւոր նախադասութիւնից եւ բռնագրօսիկ կերպով միացնում միջանկեալ նախընթաց մեկնական նախադասութեանը («որպէս պատահեցան բազումք») Բաստամեանցին ... ուղղելու յաւակնող դիտումով: Այսպիսով, *ճիշդ ընթերցումը Թորոսեանի միջամտութեամբ դարձաւ ... խաթարուած*: Ի վերջոյ, հասկանալով, թէ բանն ինչումն է, Թորոսեանը Բաստամեանցի ընթերցման ընկալումը վերագրում է իր կազմածին, որ բոլորովին անյարիր է, եւ ... «կշտամբում» Բաստամեանցին: Այսպէս, նա գրում է. «Մինչդեռ, խօսքը կանանց վկայութեան օրինակների «բազումք»ութեան մասին է (sic!)» (էջ 543): Այս ամբողջ քանակաբանական ձեռնածութեան «զաղտնիքն» այն է, որ Թորոսեանը սեփական տեքստային թերըմբռնումը նախապէս վերագրեց Բաստամեանցին ու ... «քննա-

դատեց», եւ ստորակէտը տեղափոխելով՝ աղաւաղեց ընթերցումը, *իսկ Բաստամեանցի ճիշդ ընկալումը իրացրեց ու ներկայացրեց որպէս ... իրենը:*

Բնագրագիտութեան բնագաւառում բժախնդրութիւնը մինչեւ իսկ տրոհութեան նշանների՝ ստորակէտի նկատմամբ, յատկապէս իրաւաբանական Յուշարձաններ հրատարակելիս, առաւել բան պարտադիր է՝ եթէ այն արտում է գործիմացութեամբ եւ իմաստային նրբերանգների խորաքննի ուսումնասիրմամբ, բայց ոչ երբեք՝ յանուն ցուցադրական շոինդի ու շլացման... Ի հաշիւ բնագրային աղճատումների: Ցաւօք, Թորոսեանի միջամտութիւնները իրենց արդիւնքով միայն խաթարել են արդէն իսկ արուած բնագրագիտօրէն ճիշդ ընթերցումները, որոնք *աւելորդ ջանքեր են պահանջում վերստին սրբագրելու Թորոսեանի քիւրիմացութիւնները:*

Այնուհետեւ.

Բաստամեանցը, եթէ կ'ուզէք, շատ բանով նոյնիսկ օգնել է Թորոսեանին՝ տողատակում ներկայացնելով Ա եւ Գ խմբագրութիւնների բնագրերը իբրեւ տար-ընթերցումներ *նաեւ կէտադրութեան ճիշդ կիրառման տեսակէտից:* Սակայն, ինքնատիպ երեւալու համար Թորոսեանը, ամբողջովին իրացնելով հանդերձ Բաստամեանցի բեղմնատուր աշխատանքի արգասիքները, ցոյց է տալիս երբեմն, թէ ինքը, այնուամենայնիւ, տարամիտում է նաեւ Բաստամեանցից, որ յանկարծ չթուայ, թէ ինքը ամէն ինչ վերցրել է նրանից կոյրօրէն՝ «սուս ու փուս»...

Այսպէս, մահմեդական օրէնսդրութեան սկզբնաղբիւրների բնոյթին անդրադառնալիս Ա խմբագրութիւնում առկայ է Գ-օշի հետեւեալ բնագրային ընթերցումը, որ բերել է Բաստամեանցը տողատակում իբրեւ այլընթերցում՝ միանգամայն ստոյգ տրոհմամբ. «զի գոր ինչ սեպհական է մերոյ օրինաց՝ ընդունեմք. իսկ զախտաւոր խառնուածսն ի բաց լուծանեմք *երբեմն*, իսկ զօրատրն լրմամբ ընդունեմք աւետարանին» (Բաստ. էջ 65, ծան. բ):

Թորոսեանը առարկում է «երբեմն» բառի տեղադրմանը եւ առաջարկում է միացնել այն յաջորդ նախադասութեանը, որն սկսում է «իսկ» շաղկապով, հետեւաբար՝ ստորակէտը առաջարկում է տեղափոխել «լուծանեմք» բառից յետոյ: Որո՞նք են նրա «փաստարկները». «Վ. Բաստամեանցը ստրակէտը դրել է «երբեմն» բառից յետոյ, - գրում է նա, - որով լրջօրէն փոխում է յօդուածի իմաստը: Ըստ այդմ, մահմեդական իրաւունքում արտաքոյ ս. Գրքից եղած «զախտաւոր խառնուածսն» Մխիթարն «ի բաց է լուծանում» երբեմն, *մինչդեռ նա մերժում է միշտ*» (էջ 544): Նկատենք, սակայն, Գ-օշի անունից խօսող Թորոսեանը այս դէպքում եւս ծուռ է ներկայացնում հեղինակին՝ վերագրելով նրան «ամենագէտի» յաւակնտութիւն, որ երբեք չի ունեցել Գ-օշը կեանքում: Վերջինս, ճանաչելով իր համեստ կարողութիւնները իբրեւ քրիստոնէայ մտածող, ազնուօրէն գիտակցում է, որ մահմեդական օրէնքներում ներհաստած ամէն ախտաւոր բան չէ, որ կարող է բացայայտել կը լինեն եւ այնպիսիք, որոնք կը վրիպեն իր ճանաչումից, ուստի եւ գիտնականի համեստութեամբ ապահովագրում է իրեն *«երբեմն»* սահմանափակող բառով...:

Բացի այդ, կայ նաեւ հարցի լեզուական կողմը, որը Թորոսեանին յուշում է, որ իրաւունք չունի Բաստամեանցի դրած ստորակէտը տեղաշարժելու, եթէ չի ուզում անյարմար վիճակում ընկնել: Չէ՛ որ համադրական բարդ նախադասութիւններում ներհակութեան գաղափար արտայայտող երկրորդական նախադասութիւնը *«իսկ» շաղկապից առաջ ոչ մի ուրիշ բառ չի ընդունում եւ բաժանում է նախորդ նախադասութիւնից ... միայն ստորակէտով, այնպէս որ «երբեմն իսկ» բառակապակցութիւնը ...* քերականօրէն արտառոց է: Հետեւաբար Թորոսեանի ընթերցումը, որ

ներկայացում է Ա (էջ 23) խմբագրութիւնում եւ Ծանօթագրութիւնների բաժնում (էջ 544)՝ միանգամայն սխալ է եւ իրօք «լրջօրէն փոխում է հաստուածի իմաստը»՝ հասցնելով ... աղճատման, գրաբարի շարահիսակական կանոնների անտեսման պատճառով:

Թորոսեանը կէտադրութեան տեղափոխման նոյնպիսի անյաջող փորձ է կատարել եւ իսկապէս բնագրային ընթերցմանը քմահաճ բնոյթ տուել՝ ելնելով դարձեալ սուկ «տրամաբանական» իր մտադատողութիւններից: Այսպէս, Գ-օշը բուարկում է այն «դժուարութիւնները», որ ինքը ունեցել է Դատաստանագիրքը շարադրելիս. ընդ որում թուարկումը ճիշդ արտացոլելու համար իբրեւ ամբողջութիւն՝ Բաստամեանցը միջակէտով է բաժանում իրաբանչիւր «դժուարութիւն» իր հանգամանքներով, որոնք մեկնողական բացատրութեան նշանակութիւն ունեն: Այսպէս, Գ-օշը իր պանդխտութիւնը ակնարկելիս՝ յայտնում է նաեւ դրանից առաջացած հետեւանքների եւ գրչութեան արուեստում «ժամտութիւն չունենալու» մասին՝ աշխատութեան ճակատագրի տեսակէտից. «եւ պանդխտութիւն. եւ զանտեղութիւն եւ զանտեղեկութիւն գրչութեան» (Բաստ. էջ 69): Բաստամեանցի կէտադրութիւնը միանգամայն արտացոլում է շարահիսակական յարաբերութիւնները իմաստային միաւորների միջեւ՝ չբողմնելով շփոթութեան կամ ճապարհութեան դոյզն ինչ կասկած անգամ: Սակայն Թորոսեանը «կասկածում» է եւ ... փոխում կէտադրութիւնը՝ ստեղծելով շարահիսակական ա՛յլ յարաբերութիւններ՝ իմաստային միաւորների տարբեր արժէքաւորումներով: Այսպէս. «(Ա) Եւ զպանդխտութիւն եւ զանտեղութիւն. եւ զանտեղեկութիւն գրչութեան» (էջ 24): Ստացուել է այնպէս, որ Գ-օշը կրկնաբանել՝ Թորոսեանի կէտադրութեան համաձայն. «*Եւ պանդխտութիւն եւ անտեղութիւն եւ անտեղեկութիւն գրչութեան*». այնինչ Գ-օշն յիշեցնում է, որ Դատաստանագրքի յօրինման դժուարութիւններից էին՝ «պանդխտութիւնը, գրչութեան վայր եւ հմտութիւն չունենալը»:

Բայց Թորոսեանը մի անթոյլատրելի սխալ եւս է կատարել՝ անդամահատելով միասնական հասկացութիւնը բողբոմլին տարբեր իմաստային ինքնուրոյն միաւորների՝ միայն այն պատճառով, որ Բաստամեանցի ճիշդ ըմբռնողութեամբ կիրառուած կէտադրութիւնը փոփոխութեան ենթարկի եւ ... «առարկի» նրան. «եւ արտաքնոց զգայութեանց տկարութիւն» բառակապակցութիւնը իմաստային մէկ անբաժան միաւոր է, որ նշանակում է՝ «արտաքին միջավայրի ընկալման տկարութիւն», որով Գ-օշը ակնարկում է իր առաջացած տարիքը...: Բայց չըմբռնելով այն՝ Թորոսեանը այնպէս է այլափոխում բնագրային այս ընթերցումը, որ նրանից առաջացնում է երկու տարբեր իմաստային միաւորներ: Նկատելով, որ անմիջապէս նախորդ իմաստային - շարահիսակական միաւորը «եւ զհակառակութիւն ներքնոց» բառակապակցութիւնն է, եւ «ներքին մարդկանց (իմա՝ «իւրայինների») հակառակութիւնը» ընկալելով իբրեւ հէնց Գ-օշի հետ (եւ ոչ թէ *միմեանց* հետ՝ ինչպէս հեղինակն է ասում) թշնամական յարաբերութիւնների մէջ գտնուող անճանաչողութիւններին, Թորոսեանը դրանից հետեւցնում է, որ անմիջապէս շարունակութեանը հանդէս եկող «արտաքնոց» բառն էլ պէտք է վերաբերի «արտաքին թշնամիների» ..., որոնց մասին, ի դէպ, տուեալներ կան այլ աղբիւրներում, ուստի «արտաքնոց» բոնիփարար անջատում է շարահիսակական միաւորի միս անդամներից ու առանձնացնում ... միջակէտով, իսկ մնացած մասը՝ իբրեւ սուկ «զգայութիւնների տկարութիւն»...: Ըստ Թորոսեանի՝ «եւ զհակառակութիւն ներքնոց եւ արտաքնոց. զգայութեանց տկարութիւն եւ զմարտս դիւաց...» (էջ 24, նաեւ Ծանօթ., էջ 545)՝ վերացնելով Գ-օշի ակնարկն այն մասին, որ «արտաքին միջավայրի ընկալումների տկարութիւն ունենալը», այսինքն իր ծերութիւնը նոյնպէս դժուարութիւններից մէկն

էր Դատաստանագիրքը գրելու...: Բայց մի պահ ընդունենք, որ Թորոսեանը ... ճիշդ է. այդ դէպքում եթէ իրօք խօսքը ներքին եւ արտաքին թշնամութիւնների մասին լինէր, ապա «զհակառակութիւն» բառը պէտք է լինէր *յոզմակի* եւ ո՛չ թէ եզակի, իսկ եթէ Գօշի անձնական յարաբերութիւններին վերաբերէր, ապա անպայման անձնական դերանուամբ պէտք է արտայայտուած լինէր...: Այսպիսով, Թորոսեանը *տրա-մարանական* (եւ ո՛չ՝ տեքստաբանական) *թուացող հիմք* ստեղծելով՝ աղաւաղում է Գօշին, եւ ... «քննադատում»՝ Բաստամեանցին տրոհութեան նշանների «սխալ» կիրառումների համար...:

ա. Բնագիրը չհասկանալով անգրագէտ ընթերցումների

կազմութիւններ:՝ Սոյն հատուածի շարադրման ընթացքում առ այժմ կը բաւարարուենք տեքստաբանական այն «վերլուծութիւնների» քննութեամբ, որոնց *յատուկ* ուշադրութիւն է դարձրել Թորոսեանը իր Ծանօթագրութիւնների բաժնում՝ գօշագիտութեան մէջ իր «նպատք» ցուցադրելու եւ դրանցից բխեցրած իր «տեսական» ընդհանրացումները ներկայացնելու նկատառումներով:

Այս դէպքում եւս, փոխանակ տարընթերցումները կշռադատելու ու բնագրագիտօրէն վերլուծելու՝ հասնելու համար ընթերցումների ստուգագոյն ըմբռնմանը, Թորոսեանը ձեռագրական սխալագրութիւնները, իբրեւ կանոն, իր կազմած բնագրերում ներկայացնում է ... որպէս «ճշդագրութիւններ»՝ համադրելով դրանք ոչ միայն «քննական» տեքստերում, այլեւ յասկանալիութեամբ օգտագործում ու ցուցադրում գրչագրական այդ սխալագրութիւնները... «բանասիրական ու բնագրագիտական» դիտողութիւնների եւ բանավեճերի համար՝ ընդդէմ արդէն իսկ առաջադրուած բնագրային ճիշդ լուծումների: Այսպէս.

Ա

«Իսկ Արեւնքն առաւելութեամբ վարին, առեալ զպատճառն ի բնատրական արինացն՝ մահու մեռնիլ հայրանարգին»:

(Թորոս. էջ 1):

Բ

«Բայց Մովսիսի օրէնքն առաւելութեամբ վարեցաւ առեալ զպատճառն ի բնատրական օրինացն թէ՛ որ անարգէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեցի»:

(Բաստ. էջ 6)

Գ

«Իսկ անօրէնքն առաւելութեամբ վարին, առեալ զպատճառն ի բնատրական օրինաց՝ մահու մեռանիլ հայրանարգին (Թորոս.283):

Այս երեք հատուածների նոյնիսկ բոուցիկ համեմատութիւնը ակնբախ է դարձնում այն, որ Բ խմբագրութեան մէջբերումը առաւել յստակ եւ ամբողջական է ձեւակերպուած, քան միւսները. մի դէպքում (Ա խմբ.,) խօսում անորոշաբար «Ա-

րէնք»ի մասին, միս դէպքում (Բ խմբ.) ճշգրտում՝ որոշակի ակնարկելով «մովսիսական օրէնքի» մասին, երրորդ դէպքում (Գ խմբ.) յանկարծ *անօրէնքների* մասին, ըստ որում միեւնոյն իմաստային բովանդակութեան վերագրմամբ բոլոր խմբագրութիւններին: Սոսկ այս վերջին իրողութիւնը պէտք է յուշէր Թորոսեանին, որ Գ խմբագրութեան «անօրէնք» բառածելը միայն *սխալագրութիւն* կարող է լինել, մանաւանդ իր կազմած տեքստի մի քանի տող ներքեւում խօսում է Օրէնքի (եւ ո՛չ թէ «անօրէնք»ի) մասին. «Ձի որպէս *Օրէնքն* եւ Աւետարանն հրամայել են...» (էջ 283):

Մենք համեմատեցինք նաեւ տարընթերցումների բաժնում ձեռագրական վկայութիւնները, որոնք միանգամայն օգնում են վերացնելու այդ անհետեւութիւնը: Բայց Թորոսեանը «բնագրագէտի իմացութեամբ» զիտակցաբար նշել է այն որպէս ... «աղճատում»: Այսպէս. «Ձ (ձեռագիրն ունի - Լ.Խ.) օրէնքն փխ անօրէնք»... (էջ 417): Ինչպէս կարելի է «հաշտեցնել» այս աղաղակող անյարիրութիւնը բնագրագիտական համադրական աշխատանքում՝ եթէ ոչ քննական տեքստի անորակութեամբ, որն իր հերթին տարընթերցումների *մեխանիկական* ցուցադրման ... արդիւնք է:

Բայց մի տեսէ՛ք, թէ ինչպէս է Թորոսեանը իր առաջադրած բնագրային սխալ ընթերցումը «հիմք» դարձնելով՝ «իրաւաբանական» բաւական ծանրակշիռ եզրակացութիւն հանում: Այսպէս, նա գրում է. «Հայրանարգի» վերաբերեալ բնական իրատւոյնից վերցուած պատժի խստացումը վերագրուած է Ա խմբագրութիւնում «արեւնք»ին (sic!), Բ խմբագրութիւնում՝ Մովսիսական օրէնարքութեանը, *Գ խմբագրութիւնում՝ «անօրէնքներին», այսինքն՝ ոչ-քրիստոնեաներին, մասնատրապէս մահ-մեղականներին ... (sic!)*» (էջ 531): Մինչդեռ, իրականում, երեք խմբագրութիւններում էլ խօսքը վերաբերում է միեւնոյն մովսիսական օրէնքին...:

Ի դէպ, Թորոսեանի կազմած «քննական» բնագրերի Ա եւ Գ «խմբագրութիւնների» նոյն քաղուածքներին անմիջապէս յաջորդող տողերում թոյլ է տրուած տեքստային-իմաստային մի այլ կոպիտ աղճատում եւս, որ իրաւաբաններին թիւր եզրակացութիւնների յանգեցնում էր քաղուածքում. «Ձի թէպէտ Արեւնքն եւ Աւետարանն իբր մոռացեալ զբնատրական արեւնքն յիշեցուցանեն, սակայն զիշխանական կամսն ոչ բառման» (Ա, էջ 1, նոյնը՝ Գ, էջ 283): Այստեղ ի՞նչ խօսք կարող է լինել «իշխանական կամքը չվերացնելու» մասին: Եթէ դա աղճատում չէ, ապա Թորոսեանը կա՛մ պիտի ծանօթագրէր եւ բացատրէր (եթէ հասկանալի անշուշտ դրա իմաստը), կա՛մ պիտի ճշգրտէր այդ ընթերցումը՝ բնագրագիտական որոնումներ անելով: Բայց ո՛չ այն է արեւ, ո՛չ միսը: Նայում ենք նրա ցուցադրած ձեռագրական տարընթերցումների բաժինը: Եւ ո՛վ զարմանք՝ Գ ձեռագիրը վկայում է միայն ճիշդ ընթերցումը՝ *«անձնիշխան կամս»* (էջ 155): Բաստամեանցը նոյնպէս տալիս է հէնց նոյն ճշգրիտ ընթերցումը (տե՛ս էջ 7), որով իրաւանորմի իմաստը լիովին պարզում եւ հասկանալի է դառնում: Իսկ «անձնիշխան կամք» հասկացութիւնը մի ամբողջ տեսական խոշոր պոռթիւմ է միջնադարի աստուածաբանական ուսմունքում՝ իր փիլիսոփայական հիմնաւորումներով՝ նշանակելով մարդու վարուեցողութեան կամ նրա կամքի դրսեւորման ազատ (եւ ո՛չ՝ ի վերուստ) լինելը: *Չա արդէն բոլորին այլ բան է, քան ... «իշխանական կամքը», որը, իհարկէ, այդ դէպքում «սոցիալական-դասակարգային» կատեգորիա է...*

Այնուհետեւ.

«Եւ երկրորդ՝ եկն նա արկանել արէնս կատարեալս ի մէջ կատարելոց, ոչ կամեցաւ զարէն անկատարից գրով արանդել դատաստան»:

(Թորոս., էջ 2):

«Եւ երկրորդ՝ եկն Քրիստոս եւ ուսոյց կատարել օրէնս մարդկան, եւ ոչ կամեցաւ ըստ մտանութեան անկատարից գրով դատաստան տալ»:

(Բաստ. էջ 7):

Գ

Եւ երկրորդ է՝ արկանել օրէնս կատարեալս ի մէջ կատարելոց եւ ոչ կամեցաւ զօրէնս կատարեալ գրով արանդել դատաստան (էջ 283):

Դարձեալ ակնբախ է բնագրագիտական այն իրողութիւնը, որ Բ «խմբագրութիւնը» առանձնանում է միաներից ընթերցման առաւել ամբողջականութեամբ ու ճշգրտութեամբ. եթէ Ա «խմբագրութիւնում» յայտնի չէ, թէ ո՛վ է եկել, ապա Բ խմբագրութիւնում որոշակի է՝ Քրիստոսը. ընդ որում նշում ղէպերում «երկրորդ» բառը պարզապէս թուարկում ցոյց տուող մեկնական բառ է: Բայց տես՝ ք, թէ Գ «խմբագրութիւնում» ինչ է ստացուել. որքան էլ զարեշտական է՝ «եկն» բայածերը դարձել է օժանդակ բայ՝ «երկրորդ» բառի համար, իսկ վերջինս էլ վեր է ածուել ստորոգելիական վերադրի... («երկրորդ է»)՝ աղաւաղելով ու անհասկանալի դարձնելով ամբողջ ընթերցումը իբրեւ ... անհեթեթութիւն:

Ստուգեցինք Գ «խմբագրութեան» ձեռագրական վկայութիւնները: Փաստերն ապշեցուցիչ են իրենց ծանրակշռութեամբ. տասը ձեռագրեր տալիս են միանգամայն ճիշդ ընթերցումը, որ, սակայն, Թորոսեանը իբրեւ «գրագրական սխալագրութիւն»... տարել է տարընթերցումների բաժինը: Այսպէս. «ԽԾԿՀՆՅՆՇՈՉ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) Եւ երկրորդ՝ եկն Քրիստոս» (էջ 418): Դժուարանում ես՝ ի՞նչ անում տալ սրան...:

Բայց առաւել տարօրինակ է Թորոսեանի «մեկնաբանութիւնը», որն իր անյարիրութեամբ ու, մանաւանդ, ճանարտակութեամբ նախօրինակը չունի հայագիտութեան մէջ: «Այստեղ եւս,- գրում է նա,- դրսեւորում է խմբագիրների տարբեր (sic!) վերաբերմունքը նոյն հարցի կապակցութեամբ: Ա խմբագրութիւն. Քրիստոսը եկաւ տարածելու «կատարեալ օրէնքը», «կատարեալների մէջ» եւ չկամեցաւ «անկատարների» ոչ-քրիստոնեանների (sic!) սովորութեան համաձայն «գրով արանդել դատաստան» (էջ 532): Ահա թէ ի՞նչ. Թորոսեանից իմանում ենք, որ «զարէն անկատարից» նշանակում է «ոչ-քրիստոնեանների սովորութեան համաձայն», մինչդեռ դա պարզապէս կը նշանակի՝ «մահկանացուների նման»՝ անկախ դատանքի պատկանելութիւնից: Բանն այն է, որ, ըստ թեոլոգիական ուսմունքի՝ «կատարելութիւնը» աստուածային բարեմասնութիւն է, իսկ «անկատարութիւնը»՝ մահկանացուների: Երկրորդ՝ նոյն քաղուածքի «արէնս կատարեալս» եւ «զարէն անկատարից» բառակապակցութիւններում կիրառուած արէնս/զարէն բառածերը ոչ թէ մէկ բառ են, այլ տարբեր իմաստներ արտայայտող երկու առանձին ձեռքարանական արժէք ունեցող տարբեր բառեր. առաջինը գոյական է («օրէնք»

իմաստով, հայց. հոլ.), երկրորդը՝ կապ («նման» իմաստով): Հետեւաբար՝ «զարէն անկատարից» կը նշանակի «անկատարների (այն է՝ մահկանացուների) նման»: Իսկ «ոչ կամեցաւ զարէն անկատարից գրով արանդել դատաստան» նախադասութեան թարգմանութիւնը աշխարհաբար կը լինի՝ Քրիստոսը «չկամեցաւ մահկանացուների նման գրով արանդել դատաստանը»...:

Տարօրինակն այն է նաեւ, որ Թորոսեանը «մատնանշում» է Ա, Բ եւ Գ «խմբագրութիւնների» միեւնոյն քաղուածքների միջեւ ինչ-որ իմաստային-իրարաբանական ձեւակերպումների տարբերութիւններ ու մինչեւ անգամ «հակադրութիւններ»: Շարունակելով տեքստային իրօրինակ «վերլուծութիւնը», նա գրում է. «Այլ կերպ է ըմբռնուած Քրիստոսի դերն ու առաքելութիւնը Բ խմբագրութիւնում (sic!). Քրիստոսը եկաւ եւ «ուսոյց կատարել օրէնս» - կատարել արդէն եղած օրէնքները (ընդգծումը իրն է - Լ.Խ.), այդ պատճառով հարկ չկար «գրով դատաստան տալ» (էջ 532): Մեղմ ասած՝ սա եւս բոլորովին անյարիիր «մեկնաբանութիւն» է...:

Նախ՝ «կատարել օրէնս» բառակապակցութիւնը այդ համատեքստում միայն անհեթեթ կարող է լինել: Ինչպէ՞ս Քրիստոսը կարող էր սովորեցնել «կատարել արդէն եղած օրէնքները», այդ դէպքում՝ էլ ի՞նչ իմաստ եւ նշանակութիւն կ'ունենար Քրիստոսի վարդապետութիւնը. չէ՛ որ դրանով Թորոսեանը ժխտում է Քրիստոսի գալու ... բուն իսկ «նպատակը», մի բան, որ Գօշը բնաւ չէր կարող ասել: Բաստամեանցի հրատարակութեան մէջ բացայայտ տպագրական վրիպակ է «կատարել» բառածերը՝ «կատարեալ» ճիշդ բառածերի փոխարէն, որ բնագրագիտութեան մօտ կանգնած մարդը իսկոյն կը կռահէր, եւ ո՛չ թէ վրիպակի հիման վրայ ... տեսական ընդհանրացում կը կառուցէր:

Թորոսեանի պնդումը, թէ՛ «այդ պատճառով հարկ չկար (sic!) գրով դատաստան տալ» - աներեւակայելիօրէն խառնաշփոթ «մեկնաբանութիւն» է, որ տեսարանական ընկալման հետ չունի եւ ո՛չ մի աղերս: Իրականում՝ Բ «խմբագրութեան» ընթերցումը նոյնն է, ինչ Ա եւ Գ «խմբագրութիւններինը»: Քրիստոսը եկաւ եւ մարդկանց սովորեցրեց կատարեալ օրէնքը, այն է՝ Աւետարանը, այդ պատճառով չկամեցաւ մահկանացուների նման գրի առնուած դատաստան տալ...: Հէնց դրանում է կայանում Քրիստոսի օրէնքի «գերապատուութիւնը»՝ աստուածային անթերիութիւնը Գօշի նման մահկանացուների դատաստանի գրառումից...:

Այնուհետեւ.

ԱԲ

«Բայց մի ան ապաշխարեսցէ, ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի արինացն»:

(Ա, էջ 92, Բ, էջ 156):

Գ

«Բայց մի՛ ապաշխարեսցէ, այլ ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի օրինացն» (էջ 359):

Այս զուգադրումը Թորոսեանը առաջադրել է՝ «ըստ բովանդակութեան էապէս քիչ թէ շատ տարբեր» ընթերցումները խմբագրութիւններում բացայայտելու նպատակով...: Ինչպէս թուցիկ համեմատութիւնից ակնբերել է, մէջբերուած ընթերցումներում տարբերութիւնը իսկապէս մեծ է՝ ... բնագրային աղաւաղում յուշելու չափ:

«Եւ երկրորդ՝ եկն նա արկանել արևնս կատարեալս ի մէջ կատարելոց, ոչ կամեցաւ զարէն անկատարից գրով արանդել դատաստան»:

(Թորոս., էջ 2):

«Եւ երկրորդ՝ եկն Քրիստոս եւ ուսոյց կատարել օրէնս մարդկան, եւ ոչ կամեցաւ ըստ նմանութեան անկատարից գրով դատաստան տար»:

(Բաստ. էջ 7):

Գ

Եւ երկրորդ է՝ արկանել օրէնս կատարեալս ի մէջ կատարելոց եւ ոչ կամեցաւ զօրէնս կատարեալ գրով արանդել դատաստան (էջ 283):

Դարձեալ ակնբախ է բնագրագիտական այն իրողութիւնը, որ Բ «խմբագրութիւնը» առանձնանում է միւսներից ընթերցման առաւել ամբողջականութեամբ ու ճշգրտութեամբ. եթէ Ա «խմբագրութիւնում» յայտնի չէ, թէ ո՛վ է եկել, ապա Բ խմբագրութիւնում որոշակի է՝ Քրիստոսը. ընդ որում նշում է դէպքերում «երկրորդ» բառը պարզապէս բուրբուրում ցոյց տուող մեկնական բառ է: Բայց տեսէ՛ք, թէ Գ «խմբագրութիւնում» ինչ է ստացուել. որքան էլ զատելական է՝ «եկն» բայածերը դարձել է օժանդակ բայ՝ «երկրորդ» բառի համար, իսկ վերջինս էլ վեր է ածուել ստորոգելիական վերադրի... («երկրորդ է»)՝ աղաւաղելով ու անհասկանալի դարձնելով ամբողջ ընթերցումը իբրեւ ... անհեթեթութիւն:

Ստուգեցինք Գ «խմբագրութեան» ձեռագրական վկայութիւնները: Փաստերն ապշեցուցիչ են իրենց ծանրակշռութեամբ. տասը ձեռագրեր տալիս են միանգամայն ճիշդ ընթերցումը, որ, սակայն, Թորոսեանը իբրեւ «գրչագրական սխալագրութիւն»... տարել է տարբերումների բաժինը: Այսպէս. «ՄԾԿՆՃՅՆՇՈՂ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) Եւ երկրորդ՝ եկն Քրիստոս» (էջ 418): Դժուարանում ես՝ ի՞նչ անում տալ սրան...:

Բայց առաւել տարօրինակ է Թորոսեանի «մեկնաբանութիւնը», որն իր անյարիւրութեամբ ու, մանաւանդ, ճամարտակութեամբ նախօրինակը չունի հայագիտութեան մէջ: «Այստեղ ես,- գրում է նա,- դրսևորում է խմբագիրների տարբեր (sic!) վերաբերմունքը նոյն հարցի կապակցութեամբ: Ա խմբագրութիւն. Քրիստոսը եկաւ տարածելու «կատարեալ օրէնքը», «կատարեալների մէջ» եւ չկամեցաւ «անկատարների» ոչ-քրիստոնեաների (sic!) սովորութեան համաձայն «գրով արանդել դատաստան» (էջ 532): Ահա թէ ի՛նչ. Թորոսեանից իմանում ենք, որ «զարէն անկատարից» նշանակում է «ոչ-քրիստոնեաների սովորութեան համաձայն», մինչդեռ դա պարզապէս կը նշանակի՝ «մահկանացուների նման»՝ անկախ դաւանանքի պատկանելութիւնից: Բանն այն է, որ, ըստ թեոլոգիական ուսմունքի՝ «կատարելութիւնը» աստուածային բարեմասնութիւն է, իսկ «անկատարութիւնը»՝ մահկանացուների: Երկրորդ՝ նոյն քաղուածքի «արևնս կատարեալս» եւ «զարէն անկատարից» բառակապակցութիւններում կիրառուած արևնս/զարէն բառածերը ոչ թէ մէկ բառ են, այլ տարբեր իմաստներ արտայայտող երկու առանձին ձեռարանական արժէք ունեցող տարբեր բառեր. առաջինը գոյական է («օրէնք»

իմաստով, հայց. հոլ.), երկրորդը՝ կապ («նման» իմաստով): Հետեւաբար՝ «զարէն անկատարից» կը նշանակի «անկատարների (այն է՝ մահկանացուների) նման»: Իսկ «ոչ կամեցաւ զարէն անկատարից գրով արանդել դատաստան» նախադասութեան թարգմանութիւնը աշխարհաբար կը լինի՝ Քրիստոսը «չկամեցաւ մահկանացուների նման գրով արանդել դատաստանը»...:

Տարօրինակն այն է նաեւ, որ Թորոսեանը «մատնանշում» է Ա, Բ եւ Գ «խմբագրութիւնների» միեւնոյն քաղուածքների միջեւ ինչ-որ իմաստային-իրարաբանական ձեւակերպումների տարբերութիւններ ու մինչեւ անգամ «հակադրոյթներ»: Շարունակելով տեստային իրօրինակ «վերլուծութիւնը», նա գրում է. «Այլ կերպ է ըմբռնուած Քրիստոսի դերն ու առաքելութիւնը Բ խմբագրութիւնում (sic!). Քրիստոսը եկաւ եւ «ուսոյց կատարել օրէնս» - կատարել արդէն եղած օրէնքները (ընդգծումը իրն է - Լ.Խ.), այդ պատճառով հարկ չկար «գրով դատաստան տար» (էջ 532): Մեղմ ասած՝ սա եւս բոլորովին անյարիւր «մեկնաբանութիւն» է...:

Նախ՝ «կատարել օրէնս» բառակապակցութիւնը այդ համատեքստում միայն անհեթեթ կարող է լինել: Ինչպէ՞ս Քրիստոսը կարող էր սովորեցնել «կատարել արդէն եղած օրէնքները», այդ դէպքում՝ էլ ի՞նչ իմաստ եւ նշանակութիւն կ'ունենար Քրիստոսի վարդապետութիւնը. չէ՛ որ դրանով Թորոսեանը ժխտում է Քրիստոսի գալու ... բուն իսկ «նպատակը», մի բան, որ Գօշը բնաւ չէր կարող ասել: Բաստամեանցի հրատարակութեան մէջ բացայայտ տպագրական վրիպակ է «կատարել» բառածերը՝ «կատարեալ» ճիշդ բառածեւի փոխարէն, որ բնագրագիտութեան մօտ կանգնած մարդը իսկոյն կը կռահէր, եւ ո՛չ թէ վրիպակի հիման վրայ ... տեսական ընդհանրացում կը կառուցէր:

Թորոսեանի պնդումը, թէ՛ «այդ պատճառով հարկ չկար (sic!) գրով դատաստան տար» - աներեւակայելիօրէն խառնաշփոթ «մեկնաբանութիւն» է, որ տեսարանական ընկալման հետ չունի եւ ո՛չ մի աղերս: Իրականում՝ Բ «խմբագրութեան» ընթերցումը նոյնն է, ինչ Ա եւ Գ «խմբագրութիւններինը»: Քրիստոսը եկաւ եւ մարդկանց սովորեցրեց կատարեալ օրէնքը, այն է՝ Աւետարանը, այդ պատճառով չկամեցաւ մահկանացուների նման գրի առնուած դատաստան տար...: Հէնց դրանում է կայանում Քրիստոսի օրէնքի «գերապատուութիւնը»՝ աստուածային անթերիութիւնը Գօշի նման մահկանացուների դատաստանի գրատումից...:

Այնուհետեւ.

ԱԲ

«Բայց մի ան ապաշխարեացէ, ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի արինացն»:

(Ա, էջ 92, Բ, էջ 156):

Գ

«Բայց մի՛ ապաշխարեացէ, այլ ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի օրինացն» (էջ 359):

Այս զուգադրումը Թորոսեանը առաջադրել է՝ «ըստ բովանդակութեան էապէս քիչ թէ շատ տարբեր» ընթերցումները խմբագրութիւններում բացայայտելու նպատակով...: Ինչպէս թոռուցիկ համեմատութիւնից ակնհայտ է, մէջբերուած ընթերցումներում տարբերութիւնը իսկապէս մեծ է՝ ... բնագրային աղաւաղում յուշելու չափ:

Բայց նախքան մեր քննությունը ասենք ընթերցողին, որ Գօշի յօդուածներում *իմի հարց* է շօշափուած, որպէսզի պատկերացումը պարզ լինի... սխալի ահագնութեան մասին:

Խօսքն այն մասին է, որ անբարոյական կնոջը ամուսինը կարող է ազատ արձակել, իսկ վերստին նրան ընդունելու ցանկութիւն ունենալու դէպքում՝ կինը մէկ տարի պէտք է ապաշխարի՝ մեղքերը քաւելու համար: Պատժաչափի բնոյթը («մի ամ ապաշխարեսցէ») յստակ է ձեւակերպուած Ա եւ Բ «խմբագրութիւններում», իսկ Գ-ում՝ *հակառակ* ցուցում է տրուած (*մի՛ ապաշխարեսցէ*): Եւ ահա փաստերի քննութեանը պարզում է, որ Թորոսեանը դարձեալ սեփական թերըմբոնումը, գրաբար չգիտենալը եւ տարըմբոցումներից գլուխ հանել չկարողանալը «եխմբ» է դարձրել «բնագրագիտական» այս աչքակապութեան: *Հէնց իր մատնանշած եօք ձեռագրերը տալիս են միանգամայն ճիշդ ընթերցումը՝* յար եւ նման ԱԲ «խմբագրութիւններին» ..., բայց դրանք նա իբրեւ «սխալագրութիւն» ... ներկայացրել է տարըմբոցումներ բաժնում: Այսպէս, այնտեղ կարդում ենք. «ԽՏՂԾՅՆՇՈ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) բայց *մի ամ* (Խ չիք, Յ լուսանցքում) *ապաշխարեսցէ* ի ձեռն ողորմութեան» (էջ 478): Ըստ երեւոյթին Թորոսեանին շշկրացրել է այն, որ մի ձեռագիր «ամ» բառը ունեցել է լուսանցքում, միւսը՝ գրադաշտում՝ տողի մէջ, մի ուրիշը բնաւ չի ունեցել, ուստի Թորոսեանն էլ որոշել է բնաւ չդնել..., քանի որ դա «առաւել ձեռնտու» է բնագրային զուգադրումների համար՝ «բովանդակային էական տարբերութիւնները» խմբագրութիւններում ցոյց տալու նկատառումով...:

Թորոսեանը իբրեւ «խմաստային - բովանդակային» տարբերութիւն «խմբագրութիւններին» բնագրային ընթերցումներում համարում է նաեւ հետեւեալը.

ԱԲ

Գ

«... գտուգանս լինել ի դատա-տրագ»: (Ա, էջ 82, Բ, էջ 309):

«... գտուգանս լինել ի բագա-տրագ»: (էջ 350):

Տարբերութիւնը ընդգծուած բառերն են: Բաց ենք անում տարըմբոցումների բաժինը եւ դարձեալ՝ հիասթափութիւն. *հինգ ձեռագրեր* վկայում են ... ճիշդ ընթերցումը, որը յար եւ նման է ԱԲ խմբագրութիւններին, բայց Թորոսեանը «սխալագրութիւն» է համարել այն, ընդ որում՝ ոչ թէ պատահաբար, այլ՝ «համոզմունքով», դրա համար էլ նշել է նաեւ «փոխանակ» բառի ընդգծումով. «ԽՏՂԾՅՆՇՈ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) *դատատրագ*, Յ՝ *դատաստանաց փխ բագատրագ*» (էջ 472): Պարզում է, որ Թորոսեանը նոյնիսկ իր առաջադրած բնագրային կազմութիւնները *միմեանց հակադրելու համար ծուռ է համադրում եւ ապա ... ցուցադրում իր «բանասիրական» նկատառումները...*:

Թորոսեանի կազմած բնագրային ընթերցումները մէկը միւսից արտառոց են, մէկը միւսից՝ անհեթեթ: Այսպէս, ընկենք նաեւ հետեւեալ զուգադրումը, որ Թորոսեանը որպէս ... «նմոյշ» իր կազմութիւնների որակի ցուցադրման՝ ներկայացրել է.

Ա

ԲԳ

«... ծնեալն ի մարմնոյ մարմին է: Եւ մարմին ծնեալ ի մարմնոյ ժառանգ եղիցի, որպէս յԱստուծոյ ծընեալքն՝ Աստուծոյ» (էջ 106):

«... ծնեալն ի մարմնոյ մարմին է: Եւ մարմնոյ ծնեալն մարմնոյ ժառանգ եղիցի, որպէս յԱստուծոյ ծընեալքն՝ Աստուծոյ (Բ, էջ 405-406, Գ, էջ 371):

Այս զուգադրումներում ընդգծուած նախադասութիւնները իրօք «խմաստային հակադրութիւն» են յուշում: Առաջին դէպքում նշանակում է՝ «մարմինը, ծնունդով մարմնից՝ ժառանգ կը լինի», որը այնպիսի մի անհեթեթութիւն է, որ բարձրացուած է առեղծուածի մակարդակին եւ նորմալ բանականութիւնը այն ընկալել ամենեւին չի կարող: Սա Թորոսեանի կազմած «քննական» բնագիրն է: Երկրորդ դէպքում նշանակում է՝ «մարմնի ծնածը (կամ՝ սերածը) մարմնին ժառանգ կը լինի». սա միանգամայն հասկանալի է: Առաջին դէպքում բացարձակ անըմբոնողութեան եւ տեքստային կազմման անկարողութիւնը հետեւանք է նաեւ այն բանի, որ նոյնիսկ «յուշող» հանգամանքները անգօր են եղել Թորոսեանին կողմնորոշելու. չէ՛ որ «որպէս յԱստուծոյ ծնեալքն՝ Աստուծոյ» ընթերցմամբ, որ առկայ է երկու հանդիպակաց զուգադրումներում էլ, արդէն իսկ յուշում է այն մասին, որ Թորոսեանի աղաւաղած ընթերցումը պէտք է լինի իմաստով՝ «Մարմնից ծնուածը ժառանգ պէտք է լինի մարմնին, ինչպէս աստծուց ծնուածները՝ աստծուն»...: Հէնց այս «յուշող» հանգամանքը բաւական էր, որ Թորոսեանին թելադրի, թէ բնագրային «աղճատում» է թոյլ տուել՝ նոյնիսկ այն դէպքում, եթէ ձեռագրական տարըմբոցումները զլանում են նրան օգնութեան հասնել: Բայց, ո՛վ զարմանք, այս անգամ եւս ձեռագրական փաստերը մերժելով մերժում են Թորոսեանի «կազմածը»: Այսպէս, ըստ իր իսկ բերած ձեռագրական տարըմբոցումների՝ ԲԵՉԷԹ ձեռագրերն ունեն *հարիւր տոկոսանի* յար եւ նման այնպիսի ընթերցում, ինչպիսին՝ Թորոսեանի զուգադրածը, որ նրա կողմից ներկայացուել է «իբրեւ իմաստային-բովանդակային» տարբերութեան հակադրութիւն..., այն է՝ «մարմնոյ ծնեալն ի մարմնոյ ժառանգ եղիցի» (էջ 238):

Չարմանալ պէտք չէ, եթէ ասենք, որ սեփական սխալ համադրումներով բնագրային ընթերցումները, իբրեւ կանոն, Թորոսեանը միշտ «եխմբ» է դարձնում «բանասիրական դիտողութիւնների» համար: Եւ ահա հերքական նրա «համեմատութիւններից», որոնցով Թորոսեանը ուզում է «հաստատել» «խմաստային-բովանդակային» տարբերութիւնների առկայութիւնը խմբագրութիւններում.

ԱԲ

Գ

«Եթէ պատահիցի ունեք գտա-նել յանդաստանի, կամ յայլ ինչ ի կայուած իւր, կամ ի շինել գտուն իւր, ոսկի կամ արծաթ ի զանձուց, եթէ նմանութեամբ գիտասցեն, թէ յառաջ-նոց բագատրագ է, արքունի լիցի»: (Ա, էջ 48, Բ, էջ 328):

«Եթէ շինէ որ տուն, կամ վարէ արտ, կամ փորէ հող եւ գտանէ զանձ կարասով կամ այլ փոքր ամանով, այն բագատրագ է իրատունք» (318):

Հանդիպակաց ընդգծումների «տարբերությունը» առաջացել է սոսկ այն պատճառով, որ Գ խմբագրությունում ձեռագրական տարբերությունների համադրումը արժան է *անհմուտ* եւ *ծուռ կերպով*. Եթէ Թորոսեանը փոխանակ տարբերությունների բաժնում տանելու՝ համադրել հետեւեալ ընթերցումը իր կազմած «քննական» տեքստում, ապա ոչ մի կարիք չէր լինի իբրեւ «քննադրային հակասություն» ցուցադրել զուգադրումներն առհասարակ. «ԽՄԿՂԾՆԸ (ձեռագրերն ունեն - Լ.Խ.) գտանէ կարասով (ճ կարսով) կամ այլ փոքր ամանով գանձ ի հին թագաւորաց ի վեր, թագաւորաց է (ԽՂՆԸ չիք) իրաւունք» (էջ 449):

Նաեւ ապշել կարելի է բառիմաստային այն «բացատրությունների» առթիւ, որ տալիս է սովորական բառերին Թորոսեանը: Ահա այդպիսի մի նմոշ. «Եթէ մտանիցես յայգի ընկերի քոյ, կերիցես խաղող մինչեւ յագենալ անձին քոյ, բայց յամանս մի՛ ամանիցես»: Այս իրաւանորմի մեկնութեան առթիւ Գօշը եզրակացնում է, որ «ըստ *կերողին* տոյժ լիցի» (Ա՛ էջ 83-84, Գ՛ 351, Բ՛ 392): Այս հասարակ «կերող» բառը, որի իմաստը նոյնիսկ բացատրուած է իրաւանորմում՝ թէ ինչպիսի՛ գործողութիւն նկատի է առնուած, Թորոսեանը յանկարծ զարմացնում է ընթերցողին իր «բառագիտութեամբ»: Նրանից իմանում ենք, որ «կերող» բառը իբր թէ քննարկուող համատեքստում ունեցել է «գող», «յափշտակիչ» իմաստները. «Ըստ այսմ ՃԻԱ յօդուածի՝ *«կերող» նշանակում է «գող», «յափշտակիչ»*, - «մեկնաբանում» է Թորոսեանը, - այնքան, որքան այգուց պտուղը դուրս է տարւում հակառակ տիրոջ (sic!)», (էջ 575): Բայց չէ՛ որ այդպիսի բան չկայ, նոյնիսկ հակառակն է ասուած՝ *արգելում է խաղողը «ամաններում լցնելը»...* եւ (ենթադրում է նաեւ)՝ *դուրս տանելը...*, ընդ որում տուգանքը նախատեսուած է միայն *նայած ուտողի վարքագծի* («ըստ կերողին»), այսինքն՝ եթէ խաղողն ուտում եւ ամաններով դուրս է տանում: Մի՞թէ հնարատր է նաեւ բառիմաստային անյարիբութիւններ թոյլ տալ եւ բռնագրօսիկ մակաբերումներ առաջադրել նոյնիսկ այն դէպքերում, երբ խօսքը վերաբերում է չափազանց կոնկրետ եւ ամենատվորական բառերին՝ իրենց առումին գործածութեամբ...: Այո՛, հնարատր է, եթէ ... Թորոսեանն է «բառագիտութեամբ» զբաղում...:

«Ի հաստատումն» իր «բառագիտական» հետեւութեան՝ այն կապակցութեամբ, որ «կերող» ենթակայական դերբայը շփոթելով նաեւ գոյականի հետ՝ նրա իմաստը համարում է «ուղղակի՝ *յափշտակութիւն*» (էջ 575): Թորոսեանը պրպտումներ է արել նաեւ մատենագրութեան մէջ. Ներսէս Լամբրոնացուն ձօնած «Ներբողեան»-ում Գրիգոր Սկեռացին ունեցել է հետեւեալ տողը, որը ձեռագրական ընդօրինակությունների միջոցով, ըստ բոլոր հիմքերի, մեզ է հասել *աղաւաղմամբ*, բայց Թորոսեանը այն չի հասկացել եւ հրամցրել է իբրեւ իր փաստարկմանը «նպաստող» վկայութիւն, ուստի եւ ընդգծել. «քաղաք ամրագոյն փակեաց, զի / *կերողէն յապահովասցին*»: Եւ այս «ի կերողէն» բառածելը, իբր, նշանակել է՝ «յափշտակութիւնից»: Բայց նոյն տողի մի այլ ընթերցում վկայակոչելով՝ իր փաստարկը «ամրապնդելու» համար, Թորոսեանը այս անգամ ակամայից ստոյգ բառածին («ի գերողէն») է առաջադրում, առանց կռահելու, որ դրանով արդէն իսկ հերքում է իր նախորդ փաստարկումը՝ գրչագրական սխալը («ի կերողէն») ներկայացրած լինելով... իբրեւ «յափշտակութիւն»: Եւ ահա, յանկարծ, Թորոսեանի իսկ օգնութեամբ, «զաղտնիքը» հանգուցալուծում է: Այսպէս, նոյն Թորոսեանը գրում է. «Լամբրոնացու մի այլ վարքում, որ ընդհանրութիւններ ունի Գրիգոր Սկեռացու գործի հետ, մեզ հետաքրքրող տողը այսպէս. «զի ի գերողէն ապահովեսցին» (նոյն տեղում, էջ 575): Իսկապէս՝ պարզ չէ՞ միթէ, որ քաղաքը կարելի է *գերավարողից* ապահովել՝ վտանգագերծել, բայց ոչ ամենեւին՝ «կերողից»...

Հարկ է նշել, որ բառագիտութիւնը Թորոսեանի համար «ալքիմիա» է, կախարհանք. ուզենայ՝ նաեւ կ'առաջարկի բոլորովին *անյարիբ բառեր փոխանակել իբրեւ նոյնիմաստ բառեր*: Այսպէս, հէնց նոյն տեղում, երբ Թորոսեանը «ապացուցեց», թէ «կերող» նշանակում է «գող», «յափշտակիչ», ոգետրուած դրանից՝ այժմ առաջարկում է նաեւ *նախորդ հատուածի «կրողաց» բառածելը փոխարինել ... «կերողաց»-ով իբրեւ համարժեքի*. Նա այդպէս էլ գրում է. «Այս կապակցութեամբ ուշագրաւ է ՃԻ հատուածի վերջին երկու տողը...: Այստեղ «կրող» = «յափշտակող»: Այս պատճառով (sic!), նաեւ նկատի ունենալով ՃԻԱ յօդուածը, *տակի ճիշդ ենք համարում ՃԻ յօդուածի «կրողաց» կարդալ «կերողաց»...* (էջ 575):

Իսկ ի՞նչ է պատահել «կրողաց» բառին. դադարե՞լ է արդեօք իր բուն բառիմաստն արտայայտելուց եւ մթագունե՞լ է գործածութեան մեծ յաճախումութեամբ օժտուած այս բառը, որ Թորոսեանը ընթերցողին «խորհուրդ» է տալիս այն «կարդալ» իբրեւ ... «կերողաց»: Բայց Թորոսեանի առաջարկութեանը խորամուխ լինելու համար բերենք նշուած ընթերցումը իր երեք բնագրային տեսքով: Ի դէպ, մովսիսական իրաւանորմը ասում է, որ եթէ ընկերոջ արտը մտնելու լինես, հասկը կը քաղես քո ձեռքով, բայց ընկերոջդ նման մանգաղով մի՛ հնձիր. սրան հետեւում է Գօշի հետեւեալ եզրակացութիւնը.

Ա

«Ձի գողորմութիւն ի կամաց առնողին կամի Արեւքն եւ ոչ ի կամաց կրողաց» (էջ 83):

Բ

«Ձի գողորմութիւն ի կամաց առնողին կամի Օրեւքն եւ ոչ ի կամաց կրողաց...» (էջ 392):

Գ

Ձի գողորմութիւն ի կամաց առողին կամ Օրեւքն եւ ոչ ի կամաց կրողացն» (էջ 350):

Այժմ մի դիտողութիւն Թորոսեանի կազմած բնագրային այս ընթերցումների ՈՐԱԿԻ մասին. նրա առաջադրած ընթերցումներից մէկը (Ա) ունի «առնողին» բառածելը՝ յար եւ նման Բաստամեանցի կազմածին, միւսը՝ (Գ) «առողին», չնայած նրան, որ ձեռագրական ընթերցումները հնարատրութիւն ընձեռում են այն եւս ուղղելու եւ միասնականացնելու. բայց Թորոսեանը, հաւատարիմ մեխանիկական համադրումների իր ոճին, տարել է այն ... տարբերությունների բաժինը (Ն-Ո ձեռագրերն ունեն՝ առնողին, էջ 472): Ինչպէս ակներեւ է, Թորոսեանը չի ապահովել մինչեւ անգամ *միեւնոյն ընթերցումների լեզուական դրսեւորման միասնութիւնը...*:

Այնուհետեւ.

Բաստամեանցը ճիշդ է կռահել, որ Գօշի կազմած կրկնակ պայմանի բարդ ստորադասական նախադասութիւններից մէկը (առաջինը) աւարտում լեզուական կառուցուածք ունի, իսկ միւսը՝ ոչ: Խօսքը վերաբերում է հետեւեալ բնագրային ընթերցումներին.

<1> «Եթէ պատահի զկնի բողոյն եւ մահուն զղջանալ՝ որ ատելութեամբ մեկնեցան ապաշխարութեամբ միասցին. <2> բայց եթէ պատահի այնպիսի լինել, որոց միատրել իցէ (ձեռագրերում՝ «չիցէ» - Լ.Խ.) արժան» (էջ 139):

Բաստամեանցը, յանուն «հակասութեան» ու «իմաստի մթութեան» վերացման՝ առանց ժխտական չ մասնիկի է ներկայացրել ստորագեալը («իցէ փխ չիցէ»): «Մենք ենթադրում ենք,- պատճառաբանում է նա,- որ դա գրչի կամ գուցէ նոյնիսկ հեղինակի պատահական սխալ է, ուստի դուրս հանեցինք այդ չ մասնիկը...» (էջ 139): Բայց անցողակի նկատենք, որ չ մասնիկի հեռացումով կամ առկայութեամբ «հակասութիւնը» կամ «իմաստի մթագումը» բնաւ չի վերանում կամ պարզում, դրա համար էլ այդ բոյլ պատճառաբանութիւնը չի համոզել նաեւ իրեն՝ Բաստամեանցին, ուստի եւ միայն շարունակութեանը ճիշդ եւ համոզիչ բացատրութիւն է տուել՝ գրելով. «Իսկ եթէ ընդունենք, որ այդ սխալ չէ եւ պետք է լինի չիցէ, այն ժամանակ պիտի ենթադրենք որ կանոնս չէ վերջացրած» (էջ 139): Նրա այս վերջին ենթադրութեան հաւաստիութիւնը, պետք է ասել, պայմանաւորուած է բարդ ստորադասական նախադասութեան թերի կառուցուածքով. տրուած է պայմանի երկրորդական նախադասութիւնը՝ մեկնական մի այլ նախադասութեան հետ միասին, իսկ գլխաւոր նախադասութիւնը, որը պետք է արտայայտի հիմնական միտքը, ստացուել է:

Մակայն Թորոսեանի համար բնագրային «անյաղթահարելի» դժուարութիւններ չկան, որպէսզի հակաճառի ու նոյնիսկ կշտամբի Բաստամեանցին, թէ ինչպէս «աւելորդ» զգուշաւորութիւն ու վերապահութիւն է ցուցաբերել. «... Մենք այստեղ չենք տեսնում ոչ բնագրի իմաստի մթութիւն եւ ոչ էլ յօդուածի թերաւարտութիւն (sic!)» (էջ 575), յայտարարում է Թորոսեանը: Եւ զիտէ՞ք ինչպէս է վերացնում, այնուամենայնիւ, «յօդուածի թերաւարտութիւնը» Թորոսեանը. բնագրի «բայց» հակադրական գաղափար արտայայտող համադասական շաղկապը «ընկալելով» ... իբրեւ կապ՝ «բացի», իսկ «արժէ»ն էլ՝ «չարժէ»... «Յօդուածն ասում է,- կատարելով իր «հերքումը» «մեկնում» է Թորոսեանը,- զղջման դէպքում նախկին ամուսինները կարող են միանալ, բացի այն զոյգերից, որոնց, ինչ-ինչ պատճառներով, չ'արժէ միատրել» (էջ 575):

Թորոսեանը բնագրային միջամտութիւններ է կատարում բոլոր այն դէպքերում, երբ իրաւանորմի իմաստային բովանդակութիւնը, լեզուական դժուարութեան պատճառով, մատչելի չի եղել իրեն: Ըստ որում, իբրեւ յատկանշական երեւոյթ, բաւական չէ, որ անձեռնհաս իր միջամտութիւնները ամօթխածաբար չի պարտկում ու «անմեղսունակութիւն» ցուցաբերում, որի դէպքում թերեւս հնարաւոր լինէր ներել նրան սայթաքումների ու վրիպումների համար, այլեւ՝ ... անպայման «փաստարկում» ու «քանասիրական հիմնաւորումների» է ճգնում ենթարկել սեփական քիւրիմացութիւնները... միայն ոչ-մասնագէտների աչքին թոզ փչելով, թէ «բնագրագիտական վերծանումներ» է անում եւ ոչ թէ ... ձեռնածութիւններ: Դրա ցայտուն նմուշներից է նաեւ հետեւեալ հերքական բնագրային աղաւաղումը.

Ա

«Եւ թէ ի տան հարուի աշխատեալ իցէ, իբր վարձկանի առցէ վարձ եւ ոչ մասն» (էջ 75):

Գ

«Եւ թէ խորքն եւ կամ որդի դստերն ի տանն իրում (°°°) աշխատեալ իցեն, իբր վարձկանի առցեն վարձ եւ ոչ մասն (էջ 342):

Բ

Եւ թէ խորքն կամ որդի դստերն ի տանն իրում աշխատեալ իցէ, իբր վարձկանի առցէ վարձ եւ ոչ մասն (376)

Ընտիր ընթերցումը միայն Բաստամեանցինն է. Թորոսեանի կազմած երկու ընթերցումներն էլ, իբրեւ աղաւաղումներ, ոչ միայն որակապէս զգալի չափով զիջում են, այլեւ՝ միմեանց նկատմամբ էլ աղճատում են հանդիսանում...:

Ըստ Գօշի այս իրաւանորմի, որ միանգամայն ճիշդ արտացոլուած է Բաստամեանցի կազմած բնագրում, խորքը կամ ամուսնացած աղջկայ զաւակը պապիկի տանը աշխատելիս իբրեւ վարձկան է վարձ ստանում, եւ ո՛չ՝ բաժին, ժառանգորդ որպէս: Թորոսեանի կազմած Ա խմբագրութիւնում իրաւանորմը աղաւաղուել է... անհեթեթութեան աստիճանի. «Եթէ խորք հօր (sic!) («հարուի») տանը աշխատի, (թոռնիկը) իբրեւ վարձկան վարձ է ստանում, եւ ոչ ժառանգի մաս»: Գօշը խօսում է մօր գծով պապիկի ու թոռնիկի ժառանգական յարաբերութեան մասին, իսկ Թորոսեանի բնագրային ընթերցմամբ՝ խորք պապիկի ... եւ թոռնիկի: Եւ այս ա՛յն դէպքում, երբ Բաստամեանցը իր ծանօթագրութեան մէջ Թորոսեանի առաջադրած ձեռագրական ընթերցումը տողատակում ներկայացնելիս նշել է՝ «հօրուի = սխալ» (էջ 376): Գոնէ ա՛յս պետք է զգուշացնէր Թորոսեանին ձեռնպահ մնալ արդէն իսկ ընթրնուած սխալ ընթերցումը իբրեւ ճիշդ հրամցելուց...:

Իսկ Թորոսեանի կազմած Գ խմբագրութեան ընթերցման մէջ չկայ յատկացուցիչը՝ «ի տանն հօր» բառածելը, որով ստացուել է այնպէս, որ յուշում մի նոր անյարիւրութիւն՝ «Եթէ դստեր որդին իր տանն (°°°) աշխատի...»:

Գօշը, վկայակոչելով Առաքեալի խօսքն այն մասին, որ դստեր զաւակները պապիկի համար «խորք» են դիտում, եւ ոչ թէ՝ «որդիներ», շարունակում է. «Ապա թէ որ զկանանցն ընդդէմ այսմ դիցէ, զի իբր գորդուց՝ զձմունդս նոցա հրաժարեցուցանէ ի խնամութիւնսն, զիտասցէ զի պսակաւն ընդ մօրն ընտանութիւն եղել եւ խափանի ամուսնութիւնսն» (Բաստ., էջ 376): Իրաւանորմի հիմնադրոյթն այն է, որ հօր համար «սերմը» դուստրն է եւ ոչ թէ դստեր որդին («զի իր սերմն դուստրն է եւ ոչ որդի դստերն»): Բաստ., էջ 376): Թորոսեանը Գօշի իրաւանորմի այս պահանջը հասկանալ չկարողանալով, մեր ընդգծած «զկանանցն» բառածելը դարձրել է ... «զկանոնաց»: Այսպէս, նա կազմել է՝ «Ապա թէ որ զկանոնացն ընդդէմ այսմ դիցէ ... զիտասցէ» նախադասութիւնը, որով ըստ Թորոսեանի ստացուել է՝ «Իսկ եթէ մէկը կանոնների զաւակների առնչութեամբ այս իրաւանորմի հակառակը ենթադրի ... թող իմանա...» անհեթեթ ընթերցումը: Մինչդեռ «զկանանցն» նշանակում է «կանանց զաւակների առնչութեամբ», որը հասկանալի է տուեալ համատեքստում, որովհետեւ խօսքը գնում է հէնց կանանց՝ դստերի գծով զաւակների եւ պապիկի ժառանգական յարաբերութիւններին. դա հաստատում է նաեւ «զձմունդս նոցա» ընդգծուած յատկացուցիչ դերանումամբ...: Իսկ «զկանոնացն»՝ անիմաստ է, որովհետեւ ինչ-որ կանոնների մասին յուշող կամ ակնարկող ոչինչ չկայ համատեքստում: Բայց ահա այս աղճատմանը ... հետեւում է Թորոսեանի բնագրագիտորէն չիմնաւորուող, սակայն զարմանալի յաւակնութեամբ կայացրած «վճիռը»՝ սեփական քիւրիմացութիւնը իբրեւ «ճշդութիւն» ներկայացնելու փութկոտութեամբ. «(ԱԳ) Ապա թէ որ զկանոնացն ընդդէմ այսմ դիցէ ...»: Եւ շարունակում. «Ը խմբագ-

րութիւնն ունի զկանանցն, որն ակնյայտօրէն (sic!) սխալ է (կամ գուցէ վրիպակ է (sic!))» (էջ 374):

Յաջորդ թիրիմացութիւնը.

ԱԳ

«Ոչ գոք առանց գիտութեան ընդունել, եւ վարդապետաց չքամահել զմիմեանս եւ զանկարգսն անդրէն դարձի իմաստութեամբ բժշկել»: (Ա՛ էջ 88, Գ՛ էջ 355):

Բ

«Ոչ գոք առանց գիտութեան ընդունել, եւ վարդապետաց չքամահել զմիմեանս եւ զանհրահանգսն անդրէն դարձի իմաստութեամբ բժշկել» (էջ 146):

Բնագրագիտօրէն պատճառաբանուածն ու ընտիրը Բաստամեանցի ընթերցումն է անշուշտ: Յօդուածը վերաբերում է բանադրուած ու կարգաթող արուած հոգեւորականի վերականգնման համար առաջադրուած պայմաններին. վերջինիս կարող են հոգեւորականութեան շարքերը նորից ընդունել այն դէպքում միայն, երբ «հաւաստեալ քննութիւն արասցեն», եւ, որ կարելոք է՝ «բանի վարդապետութեան բժշկեն»: Հէնց Գօշի մեկնութիւնն էլ, որը զուգահիշ բերեցինք վերը, համապատասխանում է կանոնին՝ «ոչ գոք առանց գիտութեան ընդունել», այլ միայն՝ «իմաստութեամբ բժշկել» աստուածաբանութեան հրահանգներում տգէտ մարդկանց, այն է՝ «զանհրահանգսն»: Այսպիսով, քննա-կան բնագրում «զանհրահանգսն» ընթերցումը լիովին արդարացուած է, եւ այն «աւելի յարմար» է համարել Բաստամեանցը, քան նոյնիսկ «զանյարգսն» ընթերցումը, թէւ այն եւս իմաստի տեսակետից «յարմար» է գտնում (տե՛ս Բաստ., էջ 146, ծանօթ. 273). մինչդեռ, մեր կարծիքով, վերջինս միայն շատ «աղօտ» կերպով կարող է արտացոլել բնագրային իմաստը:

Բայց Թորոսեանի առաջարկութիւնը արդէն իսկ յաջող լուծում ստացած ընթերցման նկատմամբ՝ միանգամայն անընդունելի է: Ի՛նչ «անկարգների» մասին է խօսքը. «կարգաթող» լինելը կրօնական մարդկանց՝ հետեւանքային իրավիճակ է, եւ ո՛չ՝ պատճառական, որի մասին խօսք է ասուած կանոնում եւ Գօշի մեկնութեան մէջ: Թորոսեանը «անհրահանգ» ճիշդ ընթերցումը մերժելիս բարարարում է դրա բառարանային բացատրութեամբ եւ իր «անկարգ»ը առաջարկելիս միաժամանակ բացայայտում է միջնադարեան մատենագրութեան «կարգ» տերմին-հասկացութեան սոսկ արդի իր ըմբռնումը՝ յանգելով ... նորից «ծուտ» մեկնութեան: Այսպէս, Թորոսեանը գրում է. «Անհրահանգ» նշանակում է անկիրթ, անվարժ, անփորձ (ըստ ՆԲՀ): Ակնյայտ է, որ Կանոնում այսպիսի մէկի մասին չէ (sic!), այլ այնպիսի անձի, որը խաբում է (*), խախտում կարգը (**), գործում ընդդէմ կարգի (***), (էջ 576):

Գօշի նորայայտ «մեկնաբանի» այս տողերից ընթերցողը կ'իմանայ, թէ ինչ-որ ապստամբի, կարգերի դէմ հանդէս եկած ըմբոստի մասին է խօսքը գնում. մի բան, որ մեծագոյն թիրիմացութիւն է: Հետեւաբար «զանկարգսն» բնագրային ընթերցումը մերժելի է՝ իբրեւ բնագրային աղճատում:

Անհետեւողանութեան ցայտուն վկայութիւն է նաեւ Թորոսեանի պնդումն այն մասին, որ Գօշի երեք խմբագրութիւնների հետեւեալ ընթերցումներից «ճիշդը», իբր թէ, հէնց իր կազմած Ա խմբագրութեան ընթերցումն է, իսկ Գ խմբագրութեան ըն-

թերցումը, որը դարձեալ Թորոսեանի կազմածն է՝ թողել է բնագրային այն տեսքով, որն իր իսկ ... «մերժածն» է: Չուզադրե՛նք դրանք.

Ա

«ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳՈՂՈՅ Ի ՓԱՅՏ ՀԱՆՆՈՂԱՅ»:

Բ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ Ի ՓԱՅՏ ՀԱՆՆՈՂԱՅ

Գ

«ՎԱՄՆ ԳՈՂՈՅ Ի ՓԱՅՏ ՀԱՆՆՈՂԱՅ»:

Ստացուել է իրաւանորմի խեղաթիւրման չափազանց անյարիր մի պնդում, որի դէմ զայրոյթով կը բողոքէր Գօշը՝ եթէ հրաշքով յանկարծ յարութիւն առնէր...: Ըստ Ա խմբագրութեան Թորոսեանի կազմած ընթերցման՝ գողերը ոչ թէ «խաչուողներ» են («ի փայտ հանելոյ»), այլ՝ ... ուրիշներին խաչի վրայ հանողներ, հետեւաբար՝ գողերը ոչ թէ դատուողներ են, այլ՝ ... դատողներ: Գոնէ իրաւանորմի ըմբռնում ունենար նման տարօրինակութիւն հրամցնող մեր օրերի «իրաւաբանը», որ խուսափէր ամէն անգամ թոյլ տուած անհեթեթութիւնից՝ եթէ զբարարի օրինաչափութիւնները առհասարակ չի պատկերացնում: Այսպէս, Թորոսեանը չի հասկացել «Յաղագս» դատաստանաց գողոց *ի փայտ հանողաց* վերնագրային իր կազմած ընթերցման ընդգծուած մասի *բացայայտիչ* լինելու շարահիսական պաշտօնը: Նա միայն նկատել է, որ ձեռագրերի մեծ մասը «*ի փայտ հանողաց*» ընթերցումն ունի՝ փոխանակ Ե ձեռագրի «*ի փայտ հանելոյ*» ստոյգ ընթերցման, ուստի *մեխանիկական հաշտարկմամբ* իսկոյն հակուել է ձեռագրերի *քանակական մեծամասնութեան* տրամադրած ընթերցման «ճշդութիւնը» ընդունելուն, եւ ահա եռանդուն ջանքեր է սկսում գործադրել եւ նոյնիսկ ... «փաստարկել» դրա «հաւաստիութիւնը» ի հեճուկս միւս խմբագրութիւնների: Լսե՛նք նրան. «Ի տարբերութիւն ԲԳ խմբագրութիւնների, Ա խմբագրութեան վերնագիրը ճիշդ է արտայայտում (sic!) յօդուածի բովանդակութիւնը՝ *հանողաց* եւ ոչ *հանելոյ*» (էջ 588, տողատակի ծանօթ. 1): Սա մի պնդում է, որ նոյնիսկ չի համապատասխանում իր իսկ կազմած բնագրային ընթերցմանը: Եթէ վերնագիրը վերցուած է բովանդակութիւնից, ապա *վերնագիրն ու բովանդակութիւնը պէտք է համապատասխանեն... իրար*. Բայց ամբողջ դժբախտութիւնն էլ հէնց այն է, որ Թորոսեանի կազմումներով ... *չեն համապատասխանում*: Այդ տողերը գրելիս Թորոսեանը մի՞թէ «աքափ» վիճակում չի եղել, երբ իր «մտքերի» հաստատման, բայց ըստ էութեան՝ հերքման համար ինքն իսկ անմիջապէս առաջադրել է բովանդակութեան հետեւեալ ընթերցումը. «Այլ վասն գողոց ի փայտ հանելոյ էիք հարցեալ» (էջ 128): Հետեւութիւնները բողոքում ենք ընթերցողին անել...

Բայց Թորոսեանը իր կազմած հակասական ընթերցումների խայտաբղէտութիւնը ուզում է անպայման նաեւ «հիմնաւորել», ըստ որում այդ ընթացքում էլ դուր բացելով նորանոր խճճումների: Ըստ նրան, քննարկուող վերնագրում իբր թէ «*խօսքը մահուան դատավճիռը կատարողների (****) մասին է, գողերին ի փայտ հանողների (****) եւ ոչ նրանց ի փայտ հանելու մասին (sic!)*», (էջ 583)

Այնուհետեւ.

«Եւ ջրաղացպանք փորձք լիցին արուեստի ամենայն կազմածոյ, զի մի՛ գրազմատանջն ապականեսցեն զկերակուր աներկեղութեամբ: Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել, այլ զվնասն ես տուժել»: (150):

«Ջրաղացպանք փորձ լիցին արուեստի ամենայն կազմածի, զի մի՛ բազմատանջն ապականէ զկերակուրն աներկեղութեամբ: Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել, այլ զվնասն ես տուժել»: (412):

Եւ ջրաղացպանք փորձք լիցին արուեստի ամենայն կազմածոյ, զի մի՛ գրազմատանջն ապականեսցի զկերակուրն աներկեղութեամբ. այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ տալ վարձ, այլ զվնասն ես տուզանել»: (439):

Ա խմբագրութեան բարդ ստորադասական նախադասութեան նպատակի պարագայ երկրորդական նախադասութիւնը («Եւ ջրաղացպանքն ... աներկեղութեամբ») «վերականգնելիս», Թորոսեանը երեք լուրջ սխալներ է թոյլ տուել. այն դէպքում, երբ եզակի ենթական պէտք է դրուի ուղղական հոլովով (այդ հնարատրութիւնն ընձեռում են Ջէ ձեռագրերը), ներկայացրել է հայցականով («գրազմատանջն») իբրեւ ... ուղիղ խնդիր. երկրորդ՝ եզակի ենթականի համար («գրազմատանջն») Թորոսեանը առաջադրել է յոգնակի ստորոգեալ («ապականեսցեն»)՝ այն դէպքում, երբ Ջէ ձեռագրերը յուշում են Թորոսեանին, որ այդպէս չպէտք է վարուել. եւ երրորդ՝ ուղիղ խնդիրը («զկերակուր») պէտք է լինի ոչ թէ առանց յօղի, այլ յօղով («զկերակուրն»), որի մասին վկայում են ԲՁԷԹ ձեռագրերը:

Բացի նշուածից, բոլոր խմբագրութիւնների ընթերցումներն էլ հաւասարապէս՝ առանց դոյզն ինչ նրբերանգի, յուշում են, որ «գրազմատանջ»ը ջրաղացաքարն է, որն ունի իր ուղիղ խնդիրը յանձին «զկերակուրն» բառի, որի տակ փոխաբերաբար հասկացում է ցորենը, հետեւաբար՝ ջրաղացաքարն է «ապականում»՝ աղում ցորենը, եւ ո՛չ թէ՝ «ցորենը ապականում է ... ցորենը, ինչպէս սխալմամբ ընկալուել է «Նոր Հայկազեան բառարանում», որի վրայ յենուելով էլ Թորոսեանը «եզրակացնում» է. «Ըստ այսմ՝ բազմատանջ = ցորեն» (էջ 607), ընդ որում՝ ենթադրելով այդ իմաստը «խրայատուկ» միայն Ա խմբագրութեան ընթերցմանը: Իսկ «Բ խմբագրութիւնից,- ասում է Թորոսեանը,- դժուար է որոշակի եզրակացութեան գալ (sic!)» (էջ 607): Հարց տանք Թորոսեանին՝ իսկ ինչո՞ւ եւ ինչո՞վ է «պատճառաբանում» առեղծուածային այդ «գժուարութիւնը», երբ բոլոր խմբագրութիւններն էլ ունեն բացարձակապէս միեւնոյն իմաստային բովանդակութիւնը՝ նոյնիսկ բառացի ընթերցմամբ (համեմատի՛ր՝ Ա՝ «զի մի՛ բազմատանջն ապականէ զկերակուրն աներկեղութեամբ», Բ՝ «զի մի՛ բազմատանջն ապականեսցէ զկերակուրն աներկեղութեամբ»): Եւ յանկարծ Թորոսեանը կանգ առնելով Գ խմբագրութեան ընթերցման վրայ՝ յայտարարում է. «Մակայն Գ խմբագրութիւնից ակնյայտ է (sic!), որ բազմատանջ-ը ջրաղացաքարն ...» (էջ 607): Բացարձակապէս միեւնոյն բա-

ռացի ընթերցմանը տրուեց բոլորովին տարբեր ու մինչեւ անգամ միմեանց բացառող («աակայն» շաղկապով) բացատրութիւններ...: Ինչպէս փաստերի քննարկումը ցոյց է տալիս, Թորոսեանը իր «բանասիրական դիտողութիւններում բացարձակապէս միեւնոյն ընթերցմանը կարող է բոլորովին իրարից տարբեր եւ նոյնիսկ իրար բացատող մեկնաբանումներ տալ...», եւ կամ հակառակը՝ բոլորովին տարբեր, նոյնիսկ իրար ժխտող ընթերցումներ բա-ցարձակ նոյնութեան յանգեցնելով՝ նաեւ ... հաւասարեցնել:

Ասուածի ճշմարտացիութեան մէջ համոզուելու համար հեռու չգնանք. քերենք քննարկուող այս իրաւանորմի անմիջապէս շարունակութիւնը: Ա եւ Գ խմբագրութիւններում առկայ է հետեւեալ նախադասութիւնը. «Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել, այլ եւ զվնասն ես տուժել»: Բաստամեանցը ունի՝ «այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ տալ վարձ, այլ զվնասն ես տուզանել» (էջ 439): Այս ընթերցումներից առաջին երկուսի իմաստն այն է, որ «այդպիսի վնաս պատճառող (իմա՝ ցորենը փչացնող) ջրաղացպաններին արդարացի է չվարձել, այլեւ՝ վնասի հատուցումը պահանջել»: Իսկ Բաստամեանցի ընթերցման իմաստն է՝ «այդպիսի վնաս պատճառող ջրաղացպաններին արդարացի է վարձը չտալ, այլեւ՝ պահանջել վնասի հատուցումը»: Ինչ խօսք, այս վերջինն է ստուգազոյն ընթերցումը, որովհետեւ ցորենը աղալու համար վարձք են տալիս ջրաղացպաններին, եւ ո՛չ թէ՝ ... վարձում նրանց. բացի այդ՝ աշխատանքը արդէն իսկ կատարուած է, այն էլ՝ անորակ...: Եւ յանկարծ իմաստային այս բացայայտ հակադրութիւնը Թորոսեանը «համահարթում» է հետեւեալ հաւասարեցումով, որին դժուար է նոյնիսկ անուն տալ. «Այստեղ «ոչ վարձել = վարձ չտալ, ինչպէս ակնյայտ է (նոյնիսկ «ակնյայտ է» - Լ.Խ.) նախադասութեան իմաստից (sic!), որը հաստատում է (մինչեւ անգամ՝ «հաստատում է» - Լ.Խ.) նաեւ Բ խմբագր. ընթերցումով՝ «ոչ տալ վարձ» (էջ 607): Ահաւոր է, չէ՞:

բ. Երբ սկզբնաղբիւրների «սրբագրութիւններ» են առաջարկում՝ ... նրանցից ծաղկաքաղ արուած սխալ արտագրութիւնների հիման վրայ:- Մա նոյնպէս աննախադէպ է, բայց եւ՝ փաստ: Օրինաչափականը՝ հակառակն է ...: Արդ, զուգադրենք բնագրային ընթերցումները.

«Չդիակողոպուտ եթ ըմբռնեցի եւ ապա կամաւք խոստովանեալ՝ ոչ մեղցի, ԻՄԿ ԵԹԷ որ ոչ սպանցէ, ըննեսցէ զնա սուրբ եկեղեցի՝ մինչեւ ի մահ որոշեցի, քանզի տեղի ապաշխարութեան նորա չիք» (Ա՝ էջ 87, Բ՝ էջ 399, Գ՝ էջ 354):

«Չդիակողոպուտ եթ ըմբռնեցի եւ ալկամայ կամաւք խոստովանեալ՝ մեղցի, ԻՄԿ ԵԹԷ որ ոչ սպանցէ, ըննեսցէ զնա սուրբ եկեղեցի՝ մինչեւ ի մահ որոշեցի, քանզի տեղի ապաշխարութեան չիք» (Կանոնագիրք, հ. Ա, էջ 108):

Դատաստանագրքի բոլոր խմբագրութիւններում սոյն յօդուածի սկզբնաղբիւրը, ինչպէս իրաւամբ ցոյց է տուել Բատաստանացը, «Հարանց հետեւողաց» կանոնադրութեան ԺԷ կանոնն է՝ համարեա բառացի, միայն այն տարբերութեամբ, որ սկզբնաղբիւրը՝ «ալկամայ կամաւոր խոստովանեալ՝ մեղցի» ընթերցումն ունի, իսկ Գօշի խմբագրութիւնները՝ «ապա կամաւք խոստովանեալ՝ ոչ մեղցի» ընթերցումը, որով ստեղծուել է տեքստային-իմաստային հակադրութիւն, որ չի լուծել նաեւ Բատաստանացը: Եթէ խորամուխ լինէր Թորոսեանը թէկուզեւ միայն իրաւանորմի իմաստային կողմի ընկալման մէջ, ապա անպայման կը խուսափէր Բատաստանացի սխալից:

Այսպէս, Սկզբնաղբիւրի ընթերցման համաձայն, «եթ դիակ կողոպտողը բռնուի եւ հարկադրաբար խոստովանի՝ պէտք է մահապատժի ենթարկուի, իսկ եթէ ոչ որ չսպանի նրան, սուրբ եկեղեցին պէտք է քննի նրան, եւ մինչեւ մահ մեկուսացուի, որովհետեւ չկայ ապաշխարութեան վայր նրա համար»: Հէնց ուշադիր համեմատութիւնից ակնբախ է, որ Գօշի բնագրային խմբագրութիւնների նշուած յօդուածում առկայ է բացայայտ աղաւաղում, որով մթագնուած է իրաւանորմի բուն իսկ իմաստը: Այդ ընթերցումների համաձայն՝ «դիակ կողոպտողը եթ բռնուի եւ ապա յօժարակամ խոստովանի՝ չպէտք է մեռնի, իսկ եթէ ոչ որ չսպանի նրան» (***), սուրբ եկեղեցին պէտք է քննի...»: Տարբարակ տրամաբանութեան իսկ պահանջով՝ հէնց այն հանգամանքը, որ ասուած է՝ «Էսկ եթէ ոչ որ չսպանի նրան», նշանակում է, որ նախորդ նախադասութեան միտքը սպանութեան մասին է...: Բայց որովհետեւ Թորոսեանը չի հասկացել թէկուզ եւ Գօշի բնագրային տարբերակներում՝ «իսկ եթէ որ ոչ սպանցէ» ընթերցումը, եւ այն ընկալել է այնպէս, որ իբր դիակ կողոպտողը ինքն է «... մարդ սպանել», ապա դրանից յանգում է բոլորովին *հակառակ* եզրակացութեան՝ հետեցնելով. «ուրեմն պատիժը պէտք է *աւելի ծանր լինի, քան նախորդ դէպքում* (sic!), եւ որովհետեւ մահից աւելի ծանր պատիժ չկայ, ուրեմն վերապահութիւնից առաջ նախատեսուած պատիժը աւելի մեղմ է եղել՝ «ոչ մահ» (sic!)» (575-576): Ահա թէ ինչպիսի «գոհարային» վերլուծութիւն է հրամցրել Թորոսեանը՝ ապացուցելով միաժամանակ սոսկ տրամաբանական մտակառոյցներով բնագրագիտական հարցեր «պարզելու» անհնարիւնութիւնը: Այս բոլորից կարելի էր խուսափել՝ եթէ դիմէր բնագրագիտական ճիշդ մեթոդին, այն է՝ *սրբագրել արտագրութիւնը Սկզբնաղբիւրի միջոցով*...: Բայց Թորոսեանը տեքստային իր այս սխալ ընալումները հիմք դարձնելով՝ «խիզախել» է նոյնիսկ առաջարկել, որ *Սկզբնաղբիւրը ... սրբագրուի ծաղկաբաղ արուած տեքստով*, որ ... Գօշինն է՝ գրելով. «Ըստ այդմ ենթադրելի է (sic!) որ Կանոնագրքում կանոնը *սկզբնապէս եղել է*

այնպէս, ինչպէս է Դատաստանագրքում (sic!)» (էջ 576): Ահա թէ ի՞նչ. բանից պարզում է, որ դիակապումն է ... սպանել մարդ: Մինչդեռ «իսկ եթէ որ ոչ սպանցէ» չի նշանակում հէնց իր՝ դիակապուտի մարդ սպանած լինելը, այլ, ընդհակառակը, «եթ դիակապուտին մէկը չսպանի»: «Էսկ եթէ» բառակապակցութիւնը ոչ մի «վերապահութիւն» էլ ցոյց չի տալիս, ոչ էլ այն պատկանում է նախընթաց նախադասութեանը՝ դիակապուտի «ոչ մեղցի» ընթերցմանը, այլ՝ յաջորդին եւ «պայմանի» իմաստով է. «եթ (իրեն) մէկը չսպանի, ապա եկեղեցին պէտք է քննի նրա գործը...»: Նաեւ՝ եթէ սկզբնապէս եղել է «մեղցի», շարունակում է Թորոսեանը ցնդաբանել. ապա միանգամայն աւելնորդ է դառնում «մինչեւ ի մահ որոշեցի» (***). *յանցագործը պէտք է կենդանի մնար, որ հնարատր լինէր՝ մինչեւ մահ որոշել* (sic!)» (էջ 575): Հարց տանք Թորոսեանին՝ «մինչեւ մահ ի՞նչ պէտք է որոշէր» յանցագործը...: Ըստ երեւոյթիւն, Թորոսեանը պատկերացում էլ չի ունեցել այդ աղբերը գրելիս, թէ ի՞նչ է նշանակում գրաբարեան «որոշել» բայը տուեալ համատեքստում: Այն բնաւ չի նշանակում՝ «մի բան վճռել», «եզրակացութեան գալ», «մի բանի յանգել»՝ ինչպէս այդ բայի *արդի* իմաստն է, այլ՝ «մեկուսացնել/մեկուսացուել», «առանձնանալ/առանձնացուել», «սահմանազատել/սահմանազատուել»...: Այդ պատճառով էլ ասուած է՝ «մինչեւ ի մահ որոշեցի, *քանզի տեղի ապաշխարութեան նորա չիք*» (Ա, էջ 87, Բ, էջ 399, Գ, էջ 354):

Որ Թորոսեանի դատումները սոսկ ճամարտակութիւններ են եւ ո՛չ մի աղերս չունեն բնագրագիտութեան հետ՝ անհերքելիօրէն ապացուցում է նաեւ Գօշի այդ յօդուածի շարունակութեամբ, որ արդէն Գօշի (եւ ո՛չ թէ Սկզբնաղբիւրի) մեկնաբանումն է, որով բոլոր կասկածները եւ ապակողմնորոշումները, որոնք արդիւնք են գրաբարի ամենապարզ ընթերցումները չհասկանալուն, փարատում են. «Յայտ է յասացելոյս, գրում է Գօշը. եթէ ԱՆՁՂՁԻՅՆ ՍԱՀ ՈՐՈՇԵԱՅ, *այլ այնպիսեացն արեան լիցի գին ըստ ցուցելոյ արիւնակին*» (ն.տ.): Ուրեմն խօսքը ոչ թէ «կամաւոր խոստովանութեան», այլ «ալկամայից» խոստովանութեան մասին է եղել Գօշի բնագրում, որ նոյնն է թէ՛ «անգղջից», որպիսի յանցագործին էլ ՍԱՀ է («մեղցի») սահմանուած եւ ոչ՝ կենդանութիւն («ոչ մեղցի»)ը, ընդ որում հէնց այդպիսի վճիռն էլ Գօշը *արդարացի* է համարում:

Սկզբնաղբիւրը, հակառակ բնագրագիտութեան մէջ ընդունուած մեթոդի, արտագրութեան միջոցով «սրբագրելու» թորոսեանական նորահնար եղանակի ցայտուն նմուշներից է նաեւ հետեւեալը.

«Գաւառի երիցունք ի քաղաքի եկեղեցուց, իբրեւ անդ իցէ եպիսկոպոս կամ երէց քաղաքին, չէ պատշաճ նոցա պատարագ մատուցանել կամ հաց յագապի տալ եւ ոչ բաժանել յեկեղեցուց: Ապա թէ նոքա շատին իցեն, եւ կոչիցի՝ յագապի տացէ...» (Ա, էջ 94-95, Գ, էջ 361):

«Գաւառի երիցունք ի քաղաքի եկեղեցուց, իբրեւ անդ իցէ եպիսկոպոս կամ երէց քաղաքին, չէ պատշաճ նոցա պատարագ մատուցանել կամ հաց յագապի տալ եւ ոչ բաժանել յեկեղեցուցն: Ապա թէ նոքա հրամայիցեն եւ կոչիցի, յագապի տացէ...»(էջ 162):

Գաւառատանագրքի բոլոր խմբագրութիւնների հիմքը Նեոկեսարիայի կանոնադրութիւնն է, որից ծաղկաբաղ է արել Գօշը: Միակ տարբերութիւնը ընթերցումներում «շատին իցեն» // «հրամայիցեն» բայ-ստորոգեալներն են, ընդ որում «հրամայիցեն»ը լիովին հարազատ է Սկզբնաղբիւրին, հետեւաբար՝ աղաւաղումը «շատին իցեն» բայ-ստորոգեալն է, որ մթագնուած՝ առեղծուածային լինելու չափ անհասկանալի է դարձել, բայց եւ այնպէս Թորոսեանի համար ի՞նչ կայ որ. նա նոյնիսկ փորձում է ... «պատճառաբանել» եւ նոյնիսկ ... «արդարացնել» այդ աղաւաղումը, ընդ որում ներկայացնելով այն առաւել ... «հարազատ» ընթերցում, քան... նոյնիսկ Սկզբնաղբիւրը: Իսկ Բաստամեանցը հարազատ է մնացել Սկզբնաղբիւրին:

Ըստ Թորոսեանի «քերականագիտական» իմացութեան՝ «շատին իցեն» յարադրութեան մէջ «շատին» բառածելը ... բայ է. «Շատին» «շատիլ» բայն է,- գրում է նա,- որ նշանակում է՝ շատանալ, բաւականանալ» (էջ 577): Բայց բառարանից վերցրած իր այս տեղեկութիւնը վերաբերում է ամենեւին էլ ո՛չ այն կիրառութիւններին, որ քննուում է: Թորոսեանը նոյնիսկ «շատին իցեն» բաղադրեալ ժամանակ համարելով համարժէք է դիտում «բաւականեալք իցեն» կառոյցին: Խոստովանէր, սակայն, որ քերականական նման կառոյցներ («շատին իցեն»), երբ ներկայի բայածելը յարադրուած լինի... «են» բայի ապառնի ժամանակի բայածելի հետ՝ դեռեւս անծանօթ է զբարբարի բայական համակարգին ... մինչ Թորոսեանը:

Հարկ է նշել նաեւ, որ «շատին իցեն» կառոյցում «շատին» բառածելը հովուած «շատ» բառն է, եւ ո՛չ թէ խոնարհուած բայածել է. այս թիրիմացութիւնից կարելի կը լինէր խուսափել, եթէ իրաւանորմի իմաստը զոնէ հաշուի առնուէր: Այսպէս, քննարկուող իրաւական կանոնն ասում է, որ գաւառի երէցները քաղաքի եկեղեցում, եպիսկոպոսի կամ քաղաքի երէցի առկայութեան դէպքում, չեն կարող, պատշաճութեան առումով, եկեղեցում պատարագ մատուցել կամ հաց տալ եւ աղբատներին կերակուր բաժանել: Եւ սակայն, աղաւաղմամբ առաջացած Գօշի խմբագրութիւնների բնագրային նշումը առեղծուածը («շատին իցեն») Թորոսեանը, այնուամենայնիւ, «մեկնաբանում» է այսպէս. «Յօդուածի իմաստն է. եթէ քաղաքի եպիսկոպոսը կամ երէցը զբաղուած են ուրիշ տեղ կամ թէ եկեղեցում են, բայց դարձեալ զբաղուած (sic!), քաղաք եկած գաւառի երէցը նրանց հրամանով, բոյլառութեամբ (sic!) կարող է ագապի տալ (օօօ)»: Փաստօրէն՝ տեսէք թէ ինչ է արել Թորոսեանը. բուն կանոնական մասը, որ տարբեր է Գօշի մեկնաբանումից, Թորոսեանը «բացատրում» է վերջինով՝ այն դէպքում, երբ դա անհնարին է անել՝ «ապա թէ նոքա շատին իցեն» (օօօ) եւ կոչիցի՝ յագապի տացէ» մթին եւ աղաւաղ

ընթերցումը վերծանելիս ... , այսինքն, ըստ Թորոսեանի, «ապա նրանք կը բաւարարուեն (օօօ), եւ կը հրաւիրուի (գաւառի երէցը), որ հոգեհաց տայ...»: Այստեղ եւ ամբողջ կանոնական մասում ո՛չ մի խօսք չկայ «քաղաքի եպիսկոպոսի կամ երէցի զբաղուածութեան» մասին՝ եկեղեցում թէ այլուր. իսկ վերջիններիս «հրաման»ով կամ «բոյլառութեամբ» աղբատներին հոգեհաց բաժանելու մասին Թորոսեանի «բացատրութիւնը» վերցուած է... ո՛չ թէ կանոնական, այլ՝ Գօշի մեկնաբանումից, ընդ որում Թորոսեանը չի ըմբռնել նաեւ բնագրի «յագապի տացէ» բառակապակցութեան ընդգծուած բառը, որը հոլովուած է, իսկ ուղղականը՝ «ագապ» է, եւ ո՛չ թէ «ագապի», ինչպէս թիրիմացաբար կիրառել է Թորոսեանը իր խօսքում («ագապի տալ» sic!), առանց նաեւ հասկանալու ու հասկանալի դարձնելու դրա իմաստը՝ «մեջեցեալների հոգու համար արուող կերակուր աղբատներին», իբրեւ աշխարհաբարում գործածուող բառ անբարգմանաբար օգտագործելով: Այն, որ կանոնական մասի «շատին իցեն» աղաւաղ ընթերցումը պետք էր սրբագրել Սկզբնաղբիւրի «հրամանաւ» բառածելով, ինչպէս արդէն իսկ ուղղել էր Բաստամեանցը, յուշում է նաեւ Գօշը իր մեկնաբանութեան մէջ, այնպէս անըմբռնելի հակասութիւն կ'առաջանար (ինչպէս եւ առաջացել է Թորոսեանի ընթերցումներում) կանոնական մասի եւ Գօշի մեկնաբանման միջեւ...: Վերջինս ասում է. «Ձի թէ արք քաղաքի պատիւ ունին, որչափ եւս առաւել՝ եպիսկոպոս եւ քահանայ: Այլ թէ նոքա այլ ուրեք բաւականեալք իցեն եւ կամ անդ են եւ անպարապք, եւ կոչին, հրամանաւ նոցա արասցեն» (էջ 95):

Որպէս օրինակափութիւն, Թորոսեանը անվերջ աղաւաղում ու մթին ընթերցումներ է առաջադրում՝ բոլոր այն դէպքերում, երբ դրանք արդէն իսկ ... ճշգրտուած են Բաստամեանցի հրատարակութիւնում:

Այսպէս, «հոգեհանգստի» կապակցութեամբ նուիրատուութեան վերաբերեալ Պարտաի ԻԸ կանոնում ասուած է, որ վախճանեալի յիշատակին հոգեհաց կամ նուիրատուութիւն անելիս, հարկաւոր է առաջին հերթին այդ անել իր գիւղի կամ բնակավայրի եկեղեցում եւ նրա հոգեւորականներին հաշուի առնելով, յետոյ միայն՝ «ձեռնհասութեան» դէպքում՝ նաեւ այլ եկեղեցու կամ նրա հոգեւորականների: Կանոնական այս պահանջը Գօշը «արդարացի» է համարում, ուստի եւ հետեւեալ մեկնաբանումն է տալիս, որը Թորոսեանը, իր սովորութեան համաձայն, աղճատաբար է ներկայացրել իր կազմած «քննական» երկու խմբագրութիւններում էլ, ըստ որում՝ գիտակցաբար, միայն թէ ... «հակադրուի» Բաստամեանցին. «Յոյժ ուղիղ է այս դատաստան,- ասում է Գօշը,- յետ գհարկաւորն յիւրն առնելոյ եկեղեցուց, ապա յայս կամ ի կրաւնաորս տալ: Կամ թէ պատահի յաղագս անձեռնհասութեան (sic!) եւ կամ յաղագս յուսոյ ի հեռաորս եւ գհարկաւորն տալ հաւանութեամբ իւր երիցուն եւ հրամանաւ իւր վանացն առաջնորդի, զնոսա ըստ կարի շահելով...» (Ա, էջ 117, Գ, էջ 384): Վիճելի ընթերցումը «անձեռնհասութիւն» բառն է, որ ստեղծել է անհերքութիւն՝ Թորոսեանի կազմած ընթերցումների պատճառով: Ինչպէ՞ս կարող էր Գօշը ասել, թէ «անկարողութեան (իմա՝ «անձեռնհասութեան») ... դէպքում հեռաւորներին (իմա՝ այլ բնակավայրի եկեղեցում ու նրա կրօնաւորներին - Լ.Խ.) հարկաւոր նուիրատուութիւնը կարելի է անել միայն իր երէցի ու վանահօր համաձայնութեամբ՝ վերջիններիս ըստ կարողութեան շահաբըրքրելով: Մի՞թէ՝ «կարողութիւն չունեցողը» («անձեռնհասը») երբեւէ ի վիճակի կը լինի, բացի իւր բնակավայրի եկեղեցուց՝ նաեւ այլ բնակավայրերի եկեղեցիներին ու կրօնաւորներին նուիրատուութիւններ անել...: Միայն հակառակ ենթադրութիւնն է հնարաւոր՝ «ձեռնհասութիւնը», որպիսի ձեռագրական ընթերցումը նոյնիսկ առկայ է եղել Թորոսեանի իսկ համեմատուած ձեռագրերում, բայց նա «գիտակցաբար»

մերժել է իբրև ... «սխալագրություն»։ «ԱԳ խմբագրությունների բոլոր ձեռագրերը, բացի Գ ձեռագրից (sic!), ունեն անձեռնհասություն։ Մենք անփոփոխ բողիմք բնագիրը ոչ միայն այն պատճառով, որ բոլոր ձեռագրերը (բացի մեկից) ունեն այդ ընթերցմը, այլև ... (էջ 580)։ Անցողակի նկատմամբ, որ ճիշդ չէ «բոլոր» բառը գործածել «ամբողջի» իր բառիմաստային առումով, երբ *բացատրության հետ միասին է կիրառում...*։ Ի՞նչ «բոլոր»։

Մինչդեռ Բաստամեանցը արդեն իսկ բնագրագիտական ուղղումը կատարել է՝ միաժամանակ ծանօթագրելով. «Թեպետ միայն համար 490ի մեջ գրած է՝ ձեռնհասություն, իսկ մեր եւ միս բոլոր օրինակների մեջ՝ *անձեռնհասություն, բայց որովհետև սոյն ռժով չէ յարմարում նախադասության իմաստին, մենք ըստ համար 490 օրինակի դրինք ձեռնհասություն, որ աւելի յարմար է կանոնի իմաստին*» (էջ 206)։ Սա առարկություն չվերցնող բնագրային ճիշդ լուծում է...։

Այնուամենայնիւ Թորոսեանի համար «անառարկելի» բնագրային լուծումներ չկան։ Նրան աւելի ճիշդ է քում, չգարմանա՛ք, «անձեռնհասություն»ը...։ Ըստ Թորոսեանի, բանից պարզում է, «կարգաւորման առաւել անհրաժեշտութիւն (sic!) ունի «անձեռնհասություն» վիճակը (sic!, էջ 580)։ Կարելի՞ է ինչ-որ կերպ հասկանալ, թէ ի՞նչ է ուզում ասել Թորոսեանը՝ «անձեռնհասություն վիճակը կարգաւորման աւելի անհրաժեշտութիւն ունենալու» վերաբերալ իր պնդմամբ...։ Եւ ի՞նչ գործ ունի «անձեռնհասություն վիճակը» իրաւանորմի Գօշի մեկնաբանման հետ, որ կարիք էլ զգացուել է այն նոյնիսկ ... «կարգաւորելու» «առաւել անհրաժեշտութեամբ»...։ Բայց աւելի լաւ է խօսքը տանք Թորոսեանին. «Որովհետև այս դէպքում է, - ասում է նա, - որ «ուրիշ» եկեղեցու որեւէ բան տալու մեծ ցանկութիւնը ինչ-որ չափով կարգաւորուելու է «իր եկեղեցուն արուելիքներից» (580)։ Ահա թէ ի՞նչ է նշանակում «անձեռնհասութեան վիճակը»...։ Նորմալ տրամաբանութեամբ օժտուած մարդը չի՞ յիշեցնի Թորոսեանին, թէ *ա՞ր անկարողութեան դէպքում ի՞նչ պէտք է ունենայ, որ նուրի առհասարակ որեւէ բան որեւէ մէկին...*։

Տեսնելով, որ այս խճճումից նոյնիսկ ինքն իրեն «համոզել» չի կարողանում Թորոսեանը իր «բնագրային վերլուծութիւնը» կարճ է կապում՝ ասելով. «Յամենայն դէպս քննելի հատուածի «անձեռնհասություն» բառը իմաստաւորում է (sic!), ուստի եւ բողիմք *անփոփոխ*» (էջ 580)։ Հիանալի է, չէ՞, այսպիսի «անապացոյց» ապացուցումը ...։

Բանից պարզում է նաեւ, որ Թորոսեանի համար «բնագրային ճշմարտութիւն»ը մէկ չէ, այլ ... *բազմազան*։ Եւ նրա բոլոր բնագրագիտական «վերլուծութիւնները», որ քննարկեցինք մինչ այժմ եւ շարունակում ենք քննարկել, արդիւնք են հենց այդ «բնագրային ճշմարտութիւնների» ... յեղյեղուկութեան։ Այսպէս, «Բանադրանքի» վերաբերեալ կանոնական յօդուածը ունի հետեւեւալ վիճելի ընթերցումը.

ԱԳ

«Եւ թէ դէպ լիցի երեխայ հասանել այնպիսոյն կամ մեռել որ, քահանայն մկրտեսցէ գերեխայն եւ գմեռեալն քազաւորեսցէ» (Ա, էջ 117, Գ, էջ 382)։

Բ

«Եւ թէ դէպ լիցի երեխայ հասանել այնպիսոյն կամ մեռեալ, քահանայն մկրտեսցէ գերեխայն եւ գմեռեալն քաղեսցէ» (էջ 207)։

Խօսքը վերաբերում է բանադրանքի ենթարկուած որեւէ մէկի «վախճանուած երեխայի» նկատմամբ ցուցաբերելիք վերաբերմունքին. եթէ այդպիսինի երեխան մահանայ, ապա քահանան պէտք է մկրտի եւ թաղի, որովհետև, ըստ Պարտալի ԺԹ կանոնի, որից ծաղկաբաղ է արել Գօշը, *բանադրուած իւր համար պատասխանատու չեն կարող լինել նրա զաւակը կամ ընտանքի միս անդամները*։ Հօրը, բանադրանքի պատճառով, քահանան չպէտք է թաղի մահանալու պարագային, իսկ զաւակին պէտք է մկրտի եւ թաղի, - սա՛ է կանոնի պահանջը։

Ի դէպ, յատկանշական է, որ Բաստամեանցի կազմած բնագրային ընթերցումը միայն լեզուականօրէն է սխալ («կամ մեռեալ»)։ Ստուգագոյնը եւ օրինաչափը, իհարկէ, Սկզբնադրիւրն է («մեռանելոյ»)։ Բաստամեանցը տուեալ դէպքում վրիպել է, երբ Սկզբնադրիւրով չի ուղղել իր բնագիրը՝ բնագրագիտական իր ճիշդ մօտեցման համաձայն այլ պարագաներում։ Բայց Բաստամեանցի վրիպումը առաւել «խորացրել» է Թորոսեանը՝ «բնագրագիտական» բանավէճի մակարդակին բարձրացնելով այն։ Ըստ Թորոսեանի կազմած բնագրային ընթերցման՝ «Եւ թէ դէպ լիցի երեխայ հասանել այնպիսոյն կամ մեռել որ (sic!), խօսքն այստեղ վերաբերում է ոչ թէ մէկ հոգու՝ բանադրուածի երեխայի վախճանուելուն, այլ երկու՝ նրա երեխային կամ որեւէ մահացածի...» («Եւ եթէ պատահի որ այնպիսինը երեխայ ունենայ կամ մահացած մէկը...»)։ Դարձեալ ստացուել է անհեթեթութիւն։ Բայց ավստասլին միայն այն չէ, որ սխալ ու ճապաղ բնագրեր է կազմում Թորոսեանը, այլև այն, որ «վիստարկում» է անհեթեթութիւնը ... ի հեճուկս սկզբնադրիւրի, որից Գօշը ... արտագրութեամբ ծաղկաբաղ է արել։

Եւ ահա Թորոսեանը իր եւ Բաստամեանցի ընթերցումները *հաւասար մակարդակի վրայ* դնելով (որ բնաւ հնարատր չէ)՝ յայտարարում է. «Լ. Բաստամեանցի *ուղղումը ճիշդ է (sic!)*, բայց որովհետև ձեռագրերը այդպիսի ընթերցում չունեն (sic!), մենք սրբագրեցինք համաձայն Ե ձեռագրի, որը *նոյնպէս ճիշդ է...*» (էջ 580)։ Ահա թէ ինչպէս նոյնիսկ իրար բացառող ընթերցումները հաւասարապէս «բնագրային ճշմարտութիւններ» են Թորոսեանի համար։

Բայց դեռ սարսափելին կայ. Թորոսեանը նոյնիսկ «աղաւաղ» է յայտարարում ... Սկզբնադրիւրը՝ գրելով. «Կանոնագրում յօդուածի շարադրանքը աւելի աղաւաղ է... (sic!)» (էջ 580)։

գ. Տարընթերցումների մեռեալ հաշուարկը եւ մեխանիկական մեթոդը։- Սկզբնադրիւրների հետ ծաղկաբաղ արուած քաղուածքները համապատասխանեցնելու պարտադիր սկզբունքին խանգարել են տարընթերցումների *մեռեալ հաշուարկը*, երբ չեն իմաստաւորում դրանք, եւ *համադրման մեխանիկական մեթոդը*, երբ տարընթերցումները սոսկ ցուցադրական նշանակութեամբ են մերկայացում։ Հիմնաւորեն՝ նրա ստուածը ապացոյցներով։

«Այլ բորեպիսկոպոսք են ըստ արինակի եւ ըստ կարգի երթանասինցն, իբրեւ լծակիցք եւ գործակիցք վասն փրկութեան, որ յաղքատս կատարելոց է» (Ա՛ էջ 95, Գ՛ 361):

«Բորեպիսկոպոսք են ըստ օրինակի եւ ըստ կարգի եօթանաս(ն)իցն իբրեւ լծակիցք եւ գործակիցք վասն փութութեան որ յաղքատս կատարելոց է» (էջ 162-3):

Թորոսեանի առաջդրած Ա եւ Գ խմբագրութիւնների ընթերցումները միայն առեղծուած են յուշում, ուստի եւ ոչ մէկի համար պիտանի չեն. ինչպէ՛ս թէ՛ «բորեպիսկոպոսները (իմա՛ գաւառական եպիսկոպոսները) լծակիցներ եւ գործակիցներ են աղքատների նկատմամբ նախատեսուած փրկութեան համար...»:

Պէտք է ասել, որ այս յօդուածի աղաւաղումն ուղղելու համար առանձին դժուարութիւն լինել չի կարող՝ եթէ նոյնիսկ մի պահ ընդունենք, որ Բաստամեանցը եւս զլացած լինէր իր ընտիր ընթերցումը ներկայացնելուց. քննարկուող իրաւանորմը, լինելով ծաղկաքաղային արտագրութիւն Նէօկեսարիայի ԺԹ կանոնի, կարելի էր համեմատել Սկզբնաղբիւրի հետ եւ իսկոյն վերացնել աղճատումը՝ «վասն փրկութեան» փոխարէն ունենալով «վասն փութութեան» («հոգատարութեան կամ խնամատարութեան համար») ճիշդ ընթերցումը: Այդ փաստը թէւ արձանագրում է Թորոսեանը, բայց միայն նրա համար, որ ... «առարկի» Բաստամեանցին եւ «հիմնաւորել» փորձի «բնագրագիտական» իր ոճի ... *անսկզբունքայնութիւնը՝ մեխանիկական բնոյքը*: Այսպէս, նա գրում է. «Անշուշտ, ճիշդը (sic!) տուեալ դէպքում *փութութեան* ընթերցումն է, բայց քանի որ տպագրի հիմքը (իմա՛ Բաստամեանցի հրատարակութեան - Լ.Խ.), ԱԳ խմբագրութիւնների բոլոր ձեռագրերը եւ Մխիթարի օգտագործած Կանոնագիրքը (sic!) ունեցել են *փրկութեան, մենք նպատակայարմար չգտանք սրբագրել բնագիրքը*» (էջ 578): Ահա թէ ի՛նչ. Թորոսեանը ինքը խոստովանում է, որ բնագրեր կազմելու իր «սկզբունքը» եղել է *ոչ թէ աղաւաղումների եւ գրչագրական սխալների բացայայտումն ու ուղղումը*՝ առաջնորդուելով իրաւանորմերի իմաստային բովանդակութեան ճշդութեան ապահովմամբ (որը ՄԻԱԿ նպատակադրումը եղել է եւ է՝ բնական բնագրերի պատրաստման ու հրատարակման), այլ՝ ձեռագրական տարբերությունների մեխանիկական համադրումը: Այլուր՝ Թորոսեանը հէնց այդպէս էլ խոստովանում է բնագրագիտութեան հետ ոչ մի ընդհանրութիւն չունեցող իր այդ «սկզբունքը»՝ ձեռագրական տարբերությունների համադրումը սոսկ իբրեւ *ինքնանպատակ* համարելը, գրելով. «... Քանի որ ԱԳ խմբագրութիւնների բոլոր ձեռագրերը ունեն «չիցէ», ուստի բնագիրք պէտք է մնայ այդպէս, անկախ նրանից՝ *պարզ է բնագրի իմաստը թէ մութ* (sic!)» (էջ 575): Եթէ այդպէս է, ապա ասենք, որ մման «սկզբունքով» կազմուած բնագրերը հայագիտութեան համար ԵՐԲԵՔ արժէք ունենալ չեն կարող եւ ո՛չ-որի էլ դրանք պէտք չեն լինի:

Յատկանշական է Թորոսեանի «բնագրագիտական» մեթոդը բնութագրող հետեւեալ նմուշը եւս, երբ անբեղմնատր եռանդագին ճիգեր են գործադրում աղճատուծը ... *չսրբագրելու համար*. Չուզադրենք այդ ընթերցումները եւս.

«Եթէ արծաթ փոխ տացես եղբար բում, որ աղքատ իցէ ան քեզ, մի՛ ճեպեսցես զնա եւ մի՛ արկանիցես նմա տոկոսիս» (Ա՛65, 332):

«Եթէ արծաթ փոխ տայցես եղբոր բում, որ աղքատ իցէ եւ բնակեցի առ քեզ, մի՛ ճեպեսցես զնա եւ մի՛ արկանիցես նմա տոկոսիս» (Ելք, ԻԲ, 25, Բաստ. 356):

Բաստամեանցը, իբրեւ ներիւմ բնագրագէտ, նկատում է, որ «աղքատ իցէ առ քեզ» (աշխարհարար՝ «աղքատ է քո մօտինը» կամ «աղքատ կայ քո մօտ») ընթերցումը թերի է եւ յուշում է իմաստային՝ շարահիսաական անհարթութիւն: Ուստի դիմում է Սկզբնաղբիւրին եւ սրբագրում այն՝ միաժամանակ տալով հետեւեալ ուսանելի ծանօթագրութիւնը. «Աստուածաշունչի մէջ, որտեղից հանած է սոյն կտորը, գրած է՝ *«եւ բնակեցի առ քեզ»*: Թէպէտ ոչ մի օրինակի մէջ չկայ *եւ բնակեցի*, բայց ենթադրելով որ այդ պատճառական սխալ է գրչի, *գուցէ նոյն Մխիթարի աշքի տակից փախած, մենք աւելացրինք իմաստի պարզութեան համար*» (էջ 356, ծան. 767):

Բայց Թորոսեանին «իմաստի պարզութիւնը» հազիւ թէ յուզում է. նրան հարկատր է մի կերպ հակաճառել եւ ... միաժամանակ հակադրուել՝ «հիմնաւորելու համար ... աղճատ ընթերցումը - խտրութիւն չդնելով նոյնիսկ «փաստարկների» լրջութեան մէջ. «Դատաստանագրքի ոչ մի ձեռագիր չունի «եւ բնակեցի»,- գրում է Թորոսեանը,- ... Մեր ստուգած հայերէն Աստուածաշունչից «եւ բնակեցի» չունեն Չոնրապեան հրատարակութիւնը (Վենետիկ, 1805 թ.) Վենետիկի 1860 թ. հրատարակութիւնը, Կ. Պոլսի 1895 թ. հրատարակութիւնը. *ունի Պետերբուրգի 1817 թ. հրատարակութիւնը. չունեն նաեւ Պետերբուրգի 1912 թ. եւ Մոսկովեան պատըրխարքարանի 1956 թ. ռուսերէն հրատարակութիւնները: Նշանակում է Ելքի այդ յօդուածը հնուց արդէն երկու ընթերցում է ունեցել: Պէտք է, որեմն, ենթադրել, որ Մխիթարի ձեռքի տակ եղած օրինակը եւս չի ունեցել «եւ բնակեցի» ընթերցումը: Այդ պատճառով յօդուածը թողինք ըստ Դատաստանագրքի ձեռագրերի (sic!)» (էջ 572): Ահա քեզ թորոսեանական «բանասիրութիւն», որը հետամուտ է ... *արդէն իսկ սրբագրուած աղճատումները նորից մերժելու, որպէսզի վերստին շրջանառութեան մէջ դնի աղճատուած ընթերցումները...**

Քննենք նաեւ հետեւեալ պերճախօս փաստը. դիցուք՝ տարբերությունները տալիս են միմեանց ժխտող երկու ընթերցումներ, որոնցից միայն մէկը կարող է ճիշդ լինել, միւսը՝ անպայման սխալ. իսկ ճշդութեան երկակիութիւնը «հաւանականութեան տեսութեամբ»՝ իսպառ բացառում է, մանաւանդ ընթերցումների հակասութիւնը առկայ է ոչ միայն միմեանց նկատմամբ, այլեւ դրանցից մէկի՝ Թորոսեանի կազմածի անհամապատասխանութիւնը ակնբախ է յատկապէս *Սկզբնաղբիւրի հետ*: Ահա թէ ինչպէ՛ւ է բնագրային «հակասութիւնները» լուծում Թորոսեանը՝ իր կազմած երկու ընթերցումները յանգեցնելով հետեւեալին. «(ԱԳ) Եւ *եղէ* ի թողութեանն» (Ա՛ էջ 89, Գ՛ էջ 337). մինչդեռ Բաստամեանցինը՝ «Եւ *ոչ եղէ* ի թողութեանն» ընթերցումը յար եւ նման է Սկզբնաղբիւրին, որ Աստուածաշունչն է: Իմաստային կողմի *առաջնութեան* եւ Սկզբնաղբիւրի նկատմամբ *հարազատութեան պահանջը*, որ ամէն մի բնագրագէտի ելակէտային սկզբունքն է, Բաստամեանցը այսպէս է փաստարկում. «Թէպէտ մեր եւ միւս բոլոր օրինակների մէջ չկայ՝ ոչ եւ դրած է միայն ելցէ, բայց որովհետեւ նախ նոյն իսկ նախադասութեան իմաստը պահանջում է որ լինի՝ ոչ ելցէ, երկրորդ՝ *Աստուածաշունչի մէջ, որտեղից հանած է*

սոյն կտորը, կայ այդ ոչ եւ դրած է՝ ոչ ելցէ, եւ երբորդ՝ չէ կարելի կարծել որ Մխիթարը կամենար մի այդպիսի մեծ փոփոխութիւն անել աստուածային օրէնքի մէջ, որը նա այնպէս սրբութեամբ յար(ա)դրում է, ուստի մենք ենթադրում ենք որ այդ ոչ մասնիկի պակասութիւնը աւելի պատահական է եւ գրիչների սխալ, թերես նոյն իսկ Մխիթարի այլից փախած, վասն որոյ եւ դնում ենք ոչ ելցէ համաձայն Աստուածաշնչին, մանաւանդ որ այդպէս է գրած եւ յունարէն ու սլաւոներէն Աստուածաշնչի մէջ» (էջ 364, ծան. 785):

Բայց Թորոսեանը «համաձայն չէ» այս ճիշդ հարցադրմանը. նա նոյնպէս քաղուածաբար բերում է Բաստամեանցի բնագրագիտական միանգամայն հաստի սոյն լուծումը, սակայն ... միայն այն ժխտելու համար՝ «նրբին» մի եղանակով, որ ոչ-մասնագէտի վրայ կարող է «տպաւորութիւն թողնել», Թորոսեանը համեմատում է տպագիր չորս Աստուածաշնչերը՝ գտնելու համար՝ արդեօք կա՞յ մի այնպիսին, որը չունենայ «ոչ» ժխտականը «ելցէ» բայածեի մօտ, եւ ... գտնում է երկու Աստուածաշնչերը ժխտականով ընթերցում ունեն («ոչ ելցէ», «մի՛ ելցէ») եւ երկուսը՝ առանց դրան («եւ ելցէ») *հաւասար բաժանմամբ*: Եւ ահա Թորոսեանը «եզրակացնում» է. «Այս պայմաններում իրականութեան համապատասխան կարելի համարել եթէ մտածենք, որ Մխիթարի ձեռքի տակ եղած Աստուածաշնչերը ունեցել է վերջին ընթերցումը (իմա՝ առանց «ոչ» ժխտականի - Լ.Խ.) եւ ըստ այդմ էլ ընդօրինակուել է Մխիթարի կողմից: Այդ պատճառով բնագիրը թողինք անփոփոխ (sic!)» (էջ 573): Հարց է ծագում. իսկ ինչո՞վ շահեց «քննական» բնագիրը՝ աղաւաղուած ընթերցումը ուղղելու եւ սրբագրելու տեսակետից - ՈՉՆՉՈ՛Վ. աղաւաղումը մնաց աղաւաղում, իսկ թէ Գօշը ինչպիսի Աստուածաշնչի օգտագործած կարող էր լինել ենթադրութիւնը՝ տուեալ ղեկքում էական Ո՛Չ ՄԻ նշանակութիւն չունի: Ինչպէս պարզում է, Թորոսեանին բնագրի իմաստային ճշգրտութիւնը եւ ընթերցման անաղարտութիւնը բնաւ չեն հետաքրքրում՝ միայն թէ ամէն մի վրիպակ, ի՛նչ գնով եւ ի՛նչ ձեւով ուզում է լինի, ... «փաստարկի», *թէկուզեւ սխալը, աղճատուածը, քիւրիմացութիւնը ներկայացնի «քննական» տեքստերում...*:

Այս տեսակետից չափազանց բնութագրական են եւ յիշեցնում նախորդին՝ Թորոսեանի հետեւեալ բնագրային սխալ եւ աղճատ կազմումները, որոնք թէւ ուղղուել եւ սրբագրուել էին Բաստամեանցի կողմից, սակայն Թորոսեանի բնագրակազմական արատաւոր մեթոդը դարձեալ խանգարել է ճիշդ ընթերցումներ առաջադրելուն: Այսպէս, զուգադրենք դրանք.

ԱԳ

«Պատասխանի. կինն իշխւմ մեկնել, եւ այրն այլ կին առնույ» (Ա՝ 101, Գ՝ 367):

Ինչպէս նկատելի է, միեւնոյն «պատասխանը» միեւնոյն աղբիւրի՝ հրատարակուած ընթերցումներում ներհակ իմաստներ է արտայայտում: Հարց է ծագում՝ իրաւաբան հետազոտողները որո՞վ պէտք է առաջնորդուեն, որ հարազատ մնան Սկզբնաղբիւրին եւ խուսափեն քիւրիմացութիւններից: Իսկ Սկզբնաղբիւրը, որից առաջացել են միմեանց ժխտող այս ընթերցումները, Աբանաս Ալեքսանդրացու ԻՉ կանոնն է (Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 301). ընդամին՝ պատասխանը այն «հարց-

Բ

«Պատասխանի. կինն իշխեսցէ մեկնել եւ այրն այլ կին ոչ առնել» (էջ 178):

մանն» է վերաբերում, թէ ամուսինը՝ անասունի հետ պիղծ յարաբերութեան մէջ մանելիս եթէ կինը բաժանուի, իրաւունք ունի՞ նորից կին առնել: Սկզբնաղբիւրը կտրականապէս մերժում է, իսկ Թորոսեանը ենթադրում է, թէ կարո՞ղ է...: Եւ զիտէք ի՞նչ է Թորոսեանի մոլորութեան պատճառը՝ դարձեալ՝ ու դարձեալ՝ *իմաստի անտեսումը եւ տարընթերցումների հաշուարկային համադրումը*. Բայց տարօրինակն այն է, որ սա արւում է նաեւ բոլոր այն ղեկքերում, երբ տեքստային վիճելի ընթերցումները արդէն իսկ բնագրագիտօրէն ճիշդ են լուծուած Բաստամեանցի կողմից...: Այսպէս, վերջինս իրաւամբ գրում է. «Պէտք է նկատենք, որ No 488, 448, 490... օրինակների մէջ չկայ ոչ բացասական մասնիկը, որով բոլորովին փոխում է կանոնի իմաստը: Բայց որովհետեւ այդ ոչ կայ մեր եւ միս մնացեալ օրինակների մէջ, եւ մանաւանդ կանոնագրքերի մէջ, թողինք անփոփոխ» (Բաստ. էջ 178, ծան. 545): Այս սպառնիչ հիմնաւորումից ու բացատրութիւնից յետոյ մի՞թէ որեւէ լրջախոհ բնագրագէտը կը յամառի հակառակը պնդել...: Կարծում ենք՝ որ ո՛չ:

Բայց ահա Թորոսեանը նորից քանդում է արդէն իսկ բնագրագիտութեան համար նուաճուածը եւ դարձեալ հրում ընթերցողին անճշդութիւնների խորխորատը...: Եւ այդ չնայած նրան, որ «տպագիր Կանոնագիրքը իր բոլոր ձեռագրերով (բացի մէկից) այնպէս է, ինչպէս Բ խմբագրութիւնը,- գրում է ոչ այլ որ քան նոյն ինքը Թորոսեանը,- արգելում է տղամարդուն ամուսնանալ: ԱԳ խմբագրութեան ձեռագրերից այսպէս են միայն երեքը: Գ՝ «այրն այլ կին մի՛ առնել», ՆԲ՝ «այրն այլ կին ոչ առնել»: Այս պարագային հնարատր է ենթադրել, որ ԱԳ խմբագրութեան ձեռագրերի մեծ մասի ընթերցումը աղճատումը է, վրիպակ: Բայց մենք, *այնուամենայնիւ (sic!), չսրբագրեցինք բնագիրը, հետեւեալ պատճառներով...*» (էջ 578): Իսկ այդ «պատճառներն» են. «ԱԳ խմբագրութիւնների ձեռագրերի մեծագոյն մասը (sic!) եւ *հնագոյնները (դարձեալ մեխանիկական հաշուարկ - Լ.Խ.) չունեն «ոչ»-ը, ուրեմն հնարատր է նաեւ ենթադրութիւնը, որ այդ ձեռագրերը (ԳՆՈ) սրբագրուել են (???) կամ ըստ Բ խմբագրութեան (sic!) կամ ըստ Կանոնագրքի sic!): Իսկ «Մխիթարի ձեռքի տակ եղած Կանոնագիրքը տարբերուել է մեզ հասածից, ուստի հնարատր է ենթադրել, որ այդ «ոչ»-ը չի եղել նաեւ հէնց Մխիթարի օգտագործած Կանոնագրքում» (578): Թէկուզ եւ այդպէս՝ ինչպէս Թորոսեանն է ասում, բայց աղճատումը դադարե՞ց դրանով աղճատում լինելուց եւ արդարացուե՞ց կանոնի «պատասխանը» թորոսեանական «մեկնաբանմամբ»: Իհարկէ՝ ո՛չ. մագաչափ անգամ դրութիւնը չփոխուեց եւ ոչինչ չապացուցուեց, եւ որ կարելորդ է ոչինչ չարուեց իմաստային ճշդութիւնը վերականգնելու համար...: Իսկ թէ ո՞ւմ է պէտք Թորոսեանի յերկրամ այս «բանասիրութիւնը» թողնում ենք ընթերցողին եզրակացնել:*

Այնուհետեւ.

ԱԳ

«Իսկ եթէ խաբիցէ որ գկոյս խաուեցեայ եւ ննջիցէ ընդ մմա, վարձանաբ վարձեսցէ զնա իւր կնութեան» (Ա՝ 64, Գ՝ 333):»

Աստուածաշունչ

«Իսկ եթէ որ խաբեսցէ գկոյս գոյ խսուեայ եւ ննջեսցէ ընդ մմա, վարձաճօք վարձեսցէ զնա իւր կնութեան» (Ելք, ԻԲ, 16):

Թորոսեանը Բաստամեանցից զիտի, որ իր կազմած ընթերցումները իբրև սկզբնաղբիւր ունեն Աստուածաշնչի համապատասխան յօդուածը՝ բառացի բանաբարութեամբ, բացի մի տարբերութիւնից, որն ուղղման կարօտ է. ընդ որում այդ տարբերութիւնը, իրաւանորմի ճշգրտութեան տեսակէտից, այնքան էլ անկարեւոր չէ: Գրաբարում՝ «զկոյս ոչ խօսեալ»՝ շնչանում օրիորդ է նշանակում, իսկ «զկոյս խօսեցեալ կամ խօսեալ»՝ նշանուած օրիորդ: Անտեսելով իմաստային այս նրբերանգը՝ Թորոսեանը գրում է. «Առաջին հայեացքից կարող է թուալ (sic!), թէ «գոչ»ը պատահական գրչագրական վրիպակ է եւ, ուրեմն, յօդուածը պէտք է սրբագրել ըստ Ելք-ի (իմա՝ սկզբնաղբիւրի - Լ.Խ.): Բայց, այս դէպքում, թում է, *խօսք չի կարող լինել գրչագրական վրիպակի մասին* (***), որովհետեւ այդ «գոչ»ը չկայ Դատաստանագրքի եւ ոչ մի ձեռագրում (sic!)» (էջ 572): Դարձեալ արեւմտաեւրոպայի իմաստային ճշգրտութեան եւ սկզբնաղբիւրի հարազատութեան պարտադիր պահանջի նկատմամբ՝ ի սէր տարբերութեան մեխանիկական հաշուարկման, որ բնագրագիտութեան համար սոսկ «տեղեկատուական» (ինֆորմացիոն բնոյթի) նշանակութիւն ունեն, եւ ոչ երբեք՝ որոշիչ լուծում ու եզրայանգման վճիռ սրբագրումների...:

Աղաւաղումների ոչ պակաս ուշագրաւ նմուշներ են մտել Թորոսեանի կազմած հետեւեալ ընթերցումները՝ ի տարբերութիւն Բաստամեանցի.

Ա

«զի համարեայ քոյր քո է... թէ համարեայ քոյր է»:

Գ

«զի համարեայ քոյր է ... թէ համարեայ քոյր քո է» (էջ 386):

Բ

«զի համարեայ քոյր քո է ..., քանզի իբր սասց թէ համարեայ քոյր քո է» (220):

Ինչպէս նկատելի է զուգադրումներից, Թորոսեանը ոչ միայն իր կազմած ընթերցումները տարբեր է ներկայացրել Բաստամեանցի բնագրային ընթերցումից, այլեւ իր այդ կազմածները՝ միմեանցից... ընդ որում՝ դարձեալ իր անձեռնհասութեան պատճառով: Այսպէս, մի դէպքում՝ Ա խմբագրութեան «քոյր քո է» ընթերցմանը համապատասխանեցրել է Գ խմբագրութեան «քոյր է» սխալ ընթերցումը, միս դէպքում՝ ընդհակառակը, Ա խմբագրութեան «քոյր է» սխալ ընթերցմանը՝ Գ խմբագրութեան «քոյր քո է» ճիշդ ընթերցումը...: Մինչդեռ համեմատութիւնից պարզում է, որ Գ խմբագրութեան Ծ ձեռագիրն ունեցել է Ա խմբագրութեան համապատասխան՝ «քոյր քո է» ճիշդ ընթերցումը, բայց ... Թորոսեանը այն տարել է սխալագրութիւնների բաժինը (տե՛ս էջ 498), իսկ Ա խմբագրութեան «քոյր է» ընթերցման փոխարէն չորս ձեռագրերն (ԲԳՁէ) ունեցել են Գ խմբագրութեանը յար եւ նման ընթերցում, սակայն Թորոսեանը ... ցուցադրել է դրանք տարբերութեան բաժնում (տե՛ս էջ 256): Մրան դժուար է նայնիսկ անուն տալ...:

Այժմ անդրադառնենք Թորոսեանի կազմած ընթերցումների յարաբերութեանը Բաստամեանցի բնագրային ընթերցման նկատմամբ: Ենթադրենք՝ ազգագրագէտը կամ իրաւաբանը ուզում է պարզել ազգակցական յարաբերութիւնները եւ տուեալ իրաւանորմի պահանջը. բնագրային ո՞ր ընթերցման վրայ պէտք է յենուի՝ Թորոսեանի, թէ՛ Բաստամեանցի: Եթէ Թորոսեանի կազմածը ընդունի իբրև «հա-

ւաստի», բոլորովին այլ հետեւութեան կը յանգի, որի վաւերականութիւնը, սակայն, պայմանաւորուած է հէնց հիմքի՝ սկզբնաղբիւրի ստուգութեամբ: Իսկ եթէ Բաստամեանցի կազմածն ընդունի իբրև բնագրային ճշգրտութիւն՝ տրամագծօրէն այլ եզրակացութեան կը յանգի: Բանն այն է, որ ինչպէս Թորոսեանի, այնպէս եւ Բաստամեանցի ընթերցումները բխում են միեւնոյն սկզբնաղբիւրից՝ Աստուածաշնչի «Ղեստական» գրքի ԻԸ գլխի 17րդ յօդուածից, ուր ասուած է՝ «... զի համարեայ քոյր քո է...», այսինքն՝ միեւնոյն հօրից ծնուածը քո քոյրն է...:

Բաստամեանցը, չնայած նրան, որ իր համեմատած բոլոր ձեռագրերը «համարեայ» բառածեղի փոխարէն ունեցել են «համօրեայ» կամ «համօրեայ» բառածեղի (ինչպէս եւ՝ Թորոսեանը), ստուգելով սկզբնաղբիւրը՝ «համարեայ» ճիշդ բառածեղի է ներկայացրել քննական տեսքում, իսկ ձեռագրական ընթերցումները, իբրև սխալագրութիւններ, տողատակ տարել (տե՛ս էջ 220, ծան. «ԺԷ» եւ «ԺԸ»): Իսկ Թորոսեանը. նրա համար բնաւ էլ կարեւոր չէ իմաստային ճշգրտութիւնը եւ բնագրային անաղարտութիւնը, այլ միայն՝ ... տարբերութեան մեծեալ հաշուարկը, որի մասին նայնիսկ ինքն է յայտարարում. «Բանի որ ձեռագրերից ոչ մէկը չունի համարեայ եւ, հակառակը, ունենք համարեայ ընթերցումը, ուստի բնագիրը սրբագրեցինք» (*** ըստ այդմ) (էջ 582), ուզում է ասել՝ «բողեցինք աղճատուածը»...: Իսկ բնագրագիտական թերմբունման թէկուզեւ այս խոստովանութիւնը որեւէ նշանակութիւն կարող է ունենալ ազգագրագէտին կամ իրաւաբանին ստոյգ մոլորութիւններից ետ պահելու համար՝ այն յօդուածին առնչուելիս: Կարծում ենք՝ բնաւ երբեք:

Հարկ է նշել, որ մտել անսկզբունքայնութիւնը Թորոսեանի՝ տարբերցումների մեխանիկական համադրման իր «սկզբունքի» մտել էր կազմում: Նա, որ այդքան մեծ ջանադրութեամբ յամառում էր անտեսել բնագրային իմաստը եւ սկզբնաղբիւրներից հարազատ մնալու բնագրագիտական պարտադիր պահանջը, յանկարծ՝ «կարեւոր» է համարում դրանք...: Այսպէս, «եւ անուանեալ որդի կնոջն իսրայելացոց» ընթերցման առթիւ, որ առաջադրել է իբրև ընտիր ընթերցում Բաստամեանցը, Թորոսեանը գրում է. «Դատաստանագրքի ոչ մի ձեռագիր չունի «որդի»»: Վ. Բաստամեանցը աւելացրել է իր կողմից, որովհետեւ նախադասութեան իմաստը ակնյայտօրէն պահանջում է այդ: Բայց Վ. Բաստամեանցը աւելացնում է նաեւ, որ Աստուածաշունչը եւս չունի «որդի» (էջ 132, տարբերցումաձևը Ը): Նշենք, որ մեր ստուգած Աստուածաշնչերից «որդի» ունեն, օրինակ՝ Վենեալիկի 1860 եւ Կ. Պոլսի 1895 թ. հրատարակութիւնները, այդ պատճառով մենք եւս աւելացրինք բնագրում (sic!)» (էջ 572):

«Բանասիրական» իր բոլոր ծանօթագրութիւնների մէջ երեք դէպք եւս կարող ենք յիշել, որ բնագրային իմաստը ինչ-որ չափով նշանակութիւն է ունեցել Թորոսեանի համար. 1. ԱաԲԳ ձեռագրերի ընթերցումը համարելով գրական վրիպակ՝ սրբագրել ենք համաձայն Գ խմբագրութեան, մանաւանդ որ այդպէս է պահանջում յօդուածի իմաստը (sic!)» (էջ 543): 2. «Բոլոր ձեռագրերն ունեն: Այլ վաճառ ուղիղ ըստ հարկի: Ուղղել ենք համաձայն հատուածի իմաստի (sic!)» (իմա՝ «վճիռ» - Լ.Խ.), մանաւանդ որ Բ խմբագրութիւնում եւս այդպէս է (sic!)» (էջ 545): 3. «Բ խմբագրութիւնը, ինչպէս եւ ԱԳ խմբագրութիւնների բոլոր ձեռագրերն ունեն՝ ձեռն կամ ի ձեռն, կամ ի ձեռս: Սրբագրել ենք համաձայն Աստուածաշնչի (իմա՝ սկզբնաղբիւրի - Լ.Խ.) ինչպէս վարուել է մտել (sic!) Բաստամեանցը» (էջ 573):

Բացառութեան կարգով՝ ճիշդ մօտեցում ցուցաբերած մասնակի դէպքեր են սրանք, որոնք, ցաւօք, զարգացում չեն ստացել եւ օրինաչափական չեն դարձել, այլ նորից եւ մէկընդմիջտ հրաժարուելով բնագրագիտական այս պահանջներից՝

Թորոսեանը վերադառնում է իր հակազիտական յեղեղուկ մեթոդին, այն է՝ տարր-
բերցումների համադրման մեխանիկական հաշտարկման արատատր եղանակին:

5. Գիտական բարոյականության ամենատարրական նորմաների ուղնահարում

Գիտական բարեխղճությունը պակաս կարևոր չէ, քան գիտական ձեռնհա-
սությունը, ընդ որում դրանք նաև այնքան սերտօրեն աղերսուած են միմեանց հետ,
որ երկուսի միասնությունը միայն բնորոշում են իրա՛ւ գիտնականին: Կոնկրե-
տացնելով մեր խօսքը քննախօսուող աշխատասիրության հեղինակի գիտական
վարքագծի մասին, ասենք, որ նա ամենակոպիտ կերպով ուղնահարում է գիտական
բարոյականության ամենատարրական, բայց եւ՝ բոլորի համար պարտադիր նոր-
մաները:

Վերը մենք ցոյց տուցինք, թէ ինչպէս Թորոսեանը իրացրել է առանձին
հեղինակների ոչ միայն արտայայտությունները, այլև ամբողջական մտքերն ու
դրոյթները՝ առանց աղբիւրի յիշատակման, ներկայացնելով դրանք իբրև սեփա-
կան ... մտայնացումներ:

Թորոսեանը իրացրել է նաև ուրիշների՝ մեծ տքնութեամբ ու սիրտմաշող
որոնումներով ձեռք բերած *բանասիրական ու աղբիւրագիտական աշխատանքը*:

Այսպէս, նա «հանգիստ խղճով» ամենից շատ սեփականացրել է Բաստամ-
եանցի աղբիւրագիտական տքնաջան, բայց եւ շնորհակալ աշխատանքը՝ Գօշի
օգտագործած սկզբնաղբիւրների ճշգրտման եւ ցուցադրման վերաբերեալ: Բաս-
տամեանցը դրանով իսկ մեծապէս արժէքատուրել եւ ապահովել է Գօշի բնագրի
գիտականությունը: Եւ ահա Թորոսեանը *բացարձակ նոյնութեամբ եւ ամբողջու-
թեամբ* վերցնելով Բաստամեանցի հրատարակութիւնից աղբիւրագիտական բոլոր
տունալները, առաջադրել է դրանք նաև իր հրատարակած ցածրորակ երկու տար-
բերակներում՝ «սուս ու փուս», որպէս ... իրե՛նը, *ոչ մի տեղ չյիշատակելով*, թէ այդ
արդիւնքին ինչպէ՛ս է հասել... ինքը:

Որպէսզի պատկերացում ունենայ ընթերցողը, թէ ինչպիսի տաժանակիր աշ-
խատանք է կատարել Բաստամեանցը սկզբնաղբիւրների յղումները մեծագոյն
ճշգրտութեամբ բացայայտելիս, վկայակոչենք երախտաւոր այս հայազէտի իսկ
խօսքերը. «Որովհետեւ Մխիթարը իւր յօդուածներից մեծագոյն մասը, մանաւանդ
Առաջին կամ Եկեղեցական կանոնների մասնի մէջ, ժողովել է եկեղեցական եւ
հայրապետական կանոններից, Աստուածաշունչից, եւ այն, *մենք հարկաւոր
համարեցինք ցոյց տալ իւրաքանչիւր յօդուածի աղբիւրը, որտեղից վերցրած է այն*»
(էջ 115):

Այս չափազանց պատասխանատու եւ աշխատատար ծանր խնդրի լուծման
համար տեսէք, թէ ինչքան ճիգ եւ եռանդ է գործադրել Բաստամեանցը՝ համ-
բերութեան մեծ զինուածութեամբ. «Մորա համար հարկաւոր եղաւ անդադար աչքի
տակ *ունենալ երեսնի չափ ձեռագիր կանոնագրքեր...*: Միեւնոյն նպատակով մենք
ստիպուած էինք *հարիւրաւոր անգամ բերթել Աստուածաշունչը եւ մանաւանդ չիմ
Կտակարանի մի քանի մասները, որոյ համար տարաբախտաբար չըկայ մինչև
այժմ շինած մի համարարքա...*» (ն.տ.):

Եւ ահա այս բոլորը Թորոսեանը «հաճոյքով» վերցրել է պատրաստի վի-
ճակում՝ առանց, սակայն, երբեւէ ակնարկելու անգամ, որ յոյժ կարեւոր աղբիւ-

րագիտական այս ծանօթագրութիւնների համար զօշագիտութիւնը պարտական է
Բաստամեանցին, եւ ոչ թէ՛ Թորոսեանին...:

բ. Գօշի Դատաստանագրքի՝ կիրառական բնոյթի եւ գործածութեան շա-
ռախիղի վերաբերեալ ամբողջ շարադրանքը (էջ ԼԱ--ԼԳ) Թորոսեանը այնպէս է
ներկայացրել, որ կարծէք այդ հարցերի շուրջ *առաջին խօսքը* իրեն է պատկանում:
Բայց դա խոր քիրիմացութիւն է եւ ինքնատեկամի դատապարտելի յաւակնութիւն:
Իրականում՝ այդ բոլոր տեղեկութիւնները Թորոսեանը քաղել է, մասնակի «քար-
մացումներով», Բաստամեանցից, երբ վերջինս դեռեւս հարիւր տարի Թորոսեանից
առաջ անդրադարձել է աղբիւրագիտական բոլոր հարցերին եւ իր հիմնաւոր խօսքն
ասել դրանց վերաբերեալ:

գ. Բաստամեանցից ինչքան հնարաւոր է շատ քան վերցնելու գայթակղութիւնը
այնքան մեծ է եղել Թորոսեանի մօտ, որ նոյնիսկ իբրև «Յատելուած» ներկայացրել
է իրաւաբանական երեք այն յօդուածները, որոնք Բ խմբագրութեան օրգանական
մասն են կազմել եւ *ոչ մի առնչութիւն չեն ունեցել Թորոսեանի հրատարակած Ա եւ
Գ խմբագրութիւնների հետ* (տե՛ս էջ 527-528): Մարդ մնում է ուղղակի ապշած ի
տես այս աննախադէպ փաստի...:

դ. Ուրիշ դէպքերում էլ փոխանակ բարարարելու յղումներով եւ արդէն իսկ
հայագիտութեանը յայտնի բանասիրական յայտնագործութիւնների վերաբերեալ
դիտողութիւններով, Թորոսեանը «ջանասիրաբար» նորից շրջանառութեան մէջ է
դնում դրանք էջեր ցնող հատուածներով, բայց միշտ զուգորդելով առաջին դէմքով,
ինչպէս՝ «համադրենք», «համեմատենք» եւ այլն արտայայտություններով, երբ ար-
դէն իսկ «համադրուած» եւ «համեմատուած» են այլ հեղինակների կողմից իբրև
սեփական արդար վաստակ...: Ըստ երեւոյթին՝ ակնբախ է Թորոսեանի «միտումը».
նա այդպէս է վարուել՝ իր աշխատասիրութիւնը նաև բանասիրական տեսակէտից
«տպաւորիչ» դարձնելու անսթղ մկրտումով:

Այսպէս, զարմանալի է «հետամտութեամբ» այն, որ Թորոսեանը ցուցադրա-
կան յաւակնութեամբ երեք մեծադիր էջ (Գ-ՉԲ) *լատիներէն մէջբերումներ է արել
հայերէն զուգադիր թարգմանութեամբ՝ բոլոր այն դէպքերում, երբ Բաստամեանցն է
առաջին անգամ իր աշխատութեան հետագօտական մասում կատարել հէնց նոյն
թարգմանութեամբ* (էջ 31-36), բայց դա չի խանգարել, որ Թորոսեանը, այնուամե-
նայնի, յայտարարի. «Համադրենք (sic!) այս օրէնագրքից մի քանի հատուած...»
(էջ 2):

Մի այլ դէպքում էլ եօթը մեծադիր էջ համադրական տախտակ է մէջբերել, երբ
այն հայագիտութեան համար արդէն իսկ յայտնի նուաճում է: Բայց մի տեսէ՛ք, թէ
Թորոսեանը այն ինչպէս է նորից շրջանառութեան մէջ դնում. «Յայտնի է, որ
եկեղեցու դասերի շարակարգը մեր մատենագրութեան մէջ մանրամասն նկարագ-
րել են Լամբրոնացին, Մխիթար Գօշը եւ Օրբելեանը, որոնց զուգադրութիւնը
շահեկան կը լինէր քննելի հարցի համար, ուստի համեմատենք (sic!)» (էջ 588): Եւ
եօթ էջ մէջբերելուց յետոյ արդէն իսկ ուրիշի կողմից «համեմատուած» տախտակը,
Թորոսեանը նոր միայն ... «խոստովանո՛ւմ» է վերջապէս. «Այս համադրութիւնը
կատարել է դեռ Ի.Ռ. Կարսոնը... (sic!) եւ *իրաւացիօրէն* եկել այն եզրակացութեան,
որ համադրուած հեղինակները, տուեալ դէպքում, իրարից չէ որ քաղում են» (էջ
596): Հարց է ծագում. եթէ նոր մեկնաբանումներ ու հետեւութիւններ չեն արւում,
ապա ինչո՞ւ եւ ո՞ւմ էր հարկաւոր մէջբերել այդ եօթ մեծադիր էջերի բանաբաղումը՝
ուղղակի՝ անհասկանալի է, բայց եւ միտումը ... չափազանց թափանցիկ է, ըստ
ամենայնի:

ե. Թորոսեանը պատասխանատուութիւն չի զգում նաև գիտական հասա-
րակայնութեան առաջ իր «տեսակէտները» յաճախակի փոփոխելիս ճշդումներ

անելու, եւ այս առթիւ *իրատացիորէն դիտողութիւն էր արուած նրան հայագիտական մամուլում*. «Թորոսեանի գրած յօդուածները միեւնոյն հեղինակին չպէտք է համարենք, որովհետեւ մի յօդուածում եղած պնդումները ժխտում են միւսում» (Էմ. Պիտազեան, տե՛ս «Մխիթար Գօշի Դատաստանագրքի խմբագրութիւնների մասին» յօդուածը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1964, Թ. 2, 205):

Ներկայ դէպքում՝ ինչպէ՛ս չզարմանալ Թորոսեանի վարքագծի վրայ, երբ հայագիտական մամուլում առաջադրած գրչագրական մի սխալագրութիւն այնքան «խոր» հասնողաժողովրդամբ ու յամառութամբ պաշտպանելիս նոյնիսկ ... «բանավէճ է մղել»: Այդ գրչագրական վրիպակը «*ընթերցման Բ տառիս*» աղճատումն է, որի վրայ մինչեւ անգամ «տեսական» թե՛ղ էր կառուցել Թորոսեանը այն մասին, որ իբր Գօշը ոչ թէ մէկ, այլ ... երկու գիրք է գրել, ըստ որում՝ Դատաստանագիրքը ոչ թէ մէկ գիրք է, այլ ... երկու, եւ որ այդ վկայութիւնը հենց Բ խմբագրութեան ... «հաստատումն» է: Այս քիւրիւմացութիւնները փարատելու համար Գ. Արզարեանը հանդէս եկաւ երկու հիմնատր եւ փաստարկուած յօդուածներով (տե՛ս «Մի ուղղում Մխիթար Գօշի Դատաստանագրքի աղճատումը բնագրում», ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, Թ. 1, էջ 77-80, նոյնի՝ «Պատահեալը ընթերցմամբ տառիս» դարձուածքը Մխիթար Գօշի 1184 թ. յիշատակարանում», «Պատմա-բանասիրական հանդէս», 1965, Թ. 4, էջ 141-150): Արզարեանը հնագրագիտութեան տուեալներով եւ յիշատակարանային վկայութիւններով միանգամայն ակներեւ էր դարձրել Թորոսեանի համար, որ յաճախակի գործածուած եւ քաղաքացիական իրաւունք ստացած կայուն բառակապակցութիւն է «*ընթերցմամբ տառիս*» բնագրային բանաձևումը՝ ի տարբերութիւն «*ընթերցման տառիս*», եւ, մանաւանդ՝ «*ընթերցման Բ տառիս*» վրիպակների...:

Թորոսեանը, իր հերթին, նաեւ «պատասխանել» էր ու յամառել ձեռագրագիտական իր սխալների մէջ՝ մինչեւ անգամ յայտարարելով, թէ իր «եզրակացութիւնը պարտադիր է թէ՛ բանասիրորէն եւ թէ՛ տրամաբանորէն (sic!), եւ որ «Ընթերցման Բ տառիս» գրչագրական սխալը ո՛չ թէ «անուշադրութեան հետեւանք» է, «աղճատումնք», այլ՝ «մտածուած-գիտակցուած աշխատանքի արդիւնք» (տե՛ս Խ. Թորոսեան, «Մխիթար Գօշի Դատաստանագրքի հետ կապուած մի քանի հարցերի մասին», «Պատմա-բանասիրական հանդէս», 1964, Թ. 4, 154): Եւ ահա, զանեշտորէն պարզում է, որ Թորոսեանը նոյնիսկ իրեն չի կարողացել «պարտադրել» սեփական «եզրակացութիւնը»... թէ՛ բանասիրորէն եւ թէ՛ տրամաբանորէն: Բննախօսուող աշխատասիրութեան Ծանօթագրութիւնների բաժնում լռելիայն հրաժարուել է Թորոսեանը իր նախկին «տեսակէտներից»՝ այնքան ամօթխածաբար, որ կարծէք ոչինչ չի պատահել, նախօրօք կարծիքների բախումներ չեն եղել...: Մակայն քաջութիւն չունենալով ընդունելու Արզարեանի անտարակուսելի ուղղումը՝ Թորոսեանը այս անգամ էլ կառչում է... միւս վրիպակից, այն է՝ «*Ընթերցման տառիս*» սխալագրութիւնից՝ գրելով. «Քանի որ խօսքը Դատաստանագրքի ընթերցանութեան ժամանակ նկատուող սխալների ու դրանց ուղղելու մասին է, ուստի արտայայտութիւնը սրբագրեցինք (sic!) համաձայն նախադասութեան իմաստի՝ «*ընթերցման տառիս*» (էջ 545): Չէ՛, գործ ունենք բախտախնդիրի հետ...:

Այստեղ նկատենք, որ Թորոսեանը թէւ հրաժարուել է «երկու գրքերի» իր նախկին ըմբռնումից, բայց ... որդեգրել է Արզարեանի ճիշդ մեկնաբանումը, միայն թէ այս անգամ մի այլ վրիպակի ... «պաշտպանութեամբ»:

Գ. Թորոսեանը գիտական արիւթիւն եւ ազնուութիւն չի ուցել ընդհանուր «յայտարարի» բերելու բանասիրական իր խճճումների առթիւ նոյնիսկ բանավէճերում առաջադրուած աղբիւրագիտական ճշդումները: Նա այդ բոլորին «պատասխանել» է ... բացառիկ *խլութեամբ*: Այսպէ՛ս է վարուել, ի շարս այլոց, նաեւ բանասէր-աղ-

բիւրագէտ Էմ. Պիտազեանի նկատմամբ՝ ոչ մի տեղ չիշատակելով գօշագիտութեանը նուիրուած նրա երկու ուշագրաւ յօդուածները (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1964, Թ. 2, 1964, Թ. 8):

Գիտական բարոյականութեան ոտնահարումները, հարկ է նշել, բնաւ ցուցանիչ չեն աշխատասիրողի նաեւ ... գիտնականութեան:

ԵԶՐԱՎԿԱՅՆԵՆԸ: Բննախօսուող իրաւաբանական աշխատասիրութիւնը, բացառիկութեան կարգով, ունեցել է, որակի բարելաւման նկատառումով, երկու խմբագիրներ, ընդ որում երկուսն էլ՝ ակադ. Լ.Խաչիկեանը եւ բանասիր. գիտ. թեկնածու Պ. Խաչատրեանը բանասէր-տեքստաբաններ են, որոնք, տարաբախտաբար, ոչ միայն բաժանել են աշխատասիրող Խ. Թորոսեանի մեթոդոլոգիական լուրջ սխալներն ու հակագիտական համըմբռնումները (conceptions), այլեւ վաւերացրել են բնագրագիտական ու բանասիրական անձեռնհասութեամբ նրա կազմած սխալաշատ եւ աղճատուած ցածրորակ տեքստերը: Գիտա-բնական բնագրեր հանդիսանալուց շատ հեռու լինելով՝ *Թորոսեանի հրամցրած խաբարուած ու խեղուած տեքստերը ծաղր են բնագրագիտութեան նկատմամբ*:

Իրաւաբան մասնագէտ խմբագրի բացակայութիւնը, անտարակոյս, բացատարաբ է անդրադարձել իրաւաբանական Յուշարձանի գիտական բնութագրման ու գնահատման վրայ՝ չկանխելով տեսական սխալ հարցադրումներն ու հակագիտական հայեացքները, որոնք ամենեւին չեն բխում իրերի խորաքննի վերլուծութիւնից:

Բնագրագիտական ոչ-ճիշդ կողմնորոշման պատճառով Գօշի Դատաստանագրքի սակաւարժէք խմբագրութիւնների լոյսընծայումը ոչ միայն *հրատարակչական շոայրութիւն է*, որի հետ, թերեւս, հնարատր լինէր հաշտուել, այլեւ՝ **ՆՊԱՏԱԿԱՎՐԷՊ:** Շուրջ մէկ հարիւրամեակ առաջ, բանասիրական ու բնագրագիտական հմտութեամբ Բաստամեանցի կողմից իրականացուած Գօշի ամենաընտիր բնագրի՝ եկեղեցական եւ աշխարհիկ իրաւագործների բաժանում ունեցող երկի գիտա-բնական հրապարակումից յետոյ Խ. Թորոսեանի այս նոր աշխատասիրութիւնը ՋՐԿԵԼ Է ՍԱՄՆԱԳԷՏՆԵՐԻՆ ՈՒ ԱՌՀԱՄԱՐԱԿ ԿԱՅԱԳԷՏՆԵՐԻՆ ԳՕՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԱՍԵՆԱՀԱՄԱՍԻ ՈՒ ՎԱԽԵՐԱԿԱՆ ԳԻՏԱՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԻՑ:

Ուստի **ԴԱՐՁԵԱԼ ՕՐԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՁ ԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ Է ՄՆՈՒՄ ԳՕՇԻ ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ՅՈՒՇԱՐԺԱՆԻ ԸՆՏԻՐ ԵՒ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ԳԻՏԱՔՆՆԱԿԱՆ ԱԿԱԳԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆԸ՝** նոր ձեռագրերի ընդգրկմամբ, **ԱՐՏԱՑՈՒՆԵԼՈՎ ԹՈՐՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ՑԱԾՐՈՐԱԿ ՏԵՔՏԵՐԸ ՄԻԱՅՆ ԵՒ ԲԱՅԱՌԱՊԷՍ ՏՈՂԱՏԱԿՈՒՄ՝ ՈՐՊԷՍ ... ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ, ինչպէս բնագրագիտորէն վարուել է Վ. Բաստամեանցը:**

Պրոֆ. Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Ստորագրութիւն)

28ը Օգոստոսի, 1975 թ.»:

«Առանձնատիպ» «Հասկ» հա-
յագիտական Տարեգրքի Նոր
շրջանի Է.-Ը. տարիներու հա-
տորեն՝ 1955-96, էջ 597-622»:

ԲԱՅԱՏՐԱՎԱՆ Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆԻ «ԴԱԻԹ ԲԷԿ»
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ «ԲԱԶՍԱՎԷՊ» ՈՒՄ
ՏՊԱԳՐՈՒԱԾ «ԳՐԱՆՕՍՈՒԹԵԱՆ» ԱՌԹԻԻ

Առանց կրճատումի, նուազեցումի ու մեկնաբանութեան հրատարակութեան կու տանք փրոֆ. Լեւոն Գ. Խաչերեանի այս Բացատրականը, պարզ այն մտադրու-
թեամբ, որ միջամտութիւն մը կամ մեկնաբանութիւն մը կրնայ ամբողջական
կողմնակցութիւն նշանակել: Բանասիրականին կողքին ու անոր առնչուող կրնան
ըլլալ այլ հարցեր եւ կ'ան. զանոնք չենք շրջանցեր ու չենք կեդրոնանար ալ անոնց
վրայ:

Բացատրականէն առաջ հրատարակուող երեք նամակները, (որոնցմէ երկուքը
փրոֆ. Լ. Գ. Խաչերեանէն ստանձնած ենք), կը տեղեկացնեն յօդուածին լոյս
ընծայման մերժուած ըլլալուն պարագան: Առաջինը Հ. Սահակ վրդ. ճեմճեմեանէ
ուղղուած է Լ. Գ. Խաչերեանին, երկրորդը՝ վերջինէն առաջինին, իսկ երրորդը՝ Հ.
Սահակին մեզի, մեր նամակին իբր պատասխան:

Ահա այսպէս՝ առանց մեկնաբանութեան:

ԽՍԲ.»

1

ՄԻԹԱՐԵԱՆ ՍԱՅՐԱՎԱՆՔ

Վենետիկ, 3 Մայիսի, 1901

Պատուական Տիար
Փրոֆ. Դոկտ. Լ. Գ. Խաչերեան
Ռեսիդա - ԱՄՆ

Սիրով ստացայ Ձեր 13 Ապրիլ թուակիրը, եւ ներկայովս կու գամ իսկողովել
Ձեզի թէ անցեալին խմբագրութիւնս ստացած է Եփրեմ Սրբազանի ձեռքով դրկուած
Ձեր յօդուածը, որու կ'ակնարկէք:

Նկատած որ Բագմավէպը միշտ ջանացած է ընթացք չտալ բանավճերու,
բանի ոչ մի օգուտ ունի, նաեւ նկատած որ կատարուած մի սխալ բուժելու համար՝

անօգուտ է կատարել երկրորդ սխալ մը, Վարչութիւնս յարմար նկատեց չիրատարակել Չեր յօդուածը Բազմավէպի մէջ, առանց ուզել արգիլելու որ նոյնը տպագրուի ուրիշ Հանդէսի մը մէջ, յօգուտ հայագիտութեան:

Առ ի գիտութիւն ըսեմ որ Չեր յօդուածին նմանահանութիւնը դրկեցինք գրախօսող յօդուածագրին, որպէսզի տեսնէր Չեր պատասխանը եւ ընդունի Չեր կատարած արդար դիտողութիւններն ու անդրադարձութիւնները: Նա ընդունելով հանդերձ ինչ ինչ կէտեր՝ նոյնչափ երկար յօդուածով պատասխանած էր: Այս կացութիւնը մեզ դեռ ատելի հաստատեց որ ընթացք պէտք չենք տալ Բազմավէպի մէջ, մանաւանդ որ այլեւս կը սկսէինք մտնել անհատական հին վէճերու սահմանէն ներս:

15-ը Հոկտեմբերի, 1991 թ.,
Ռեսիդա:

Հ. Սահակ Ծեմճեմեանին,
«Բազմավէպ» հանդէսի Խմբագրին:

Յարգելի Խմբագիր,

Ստացայ սոյն թուի Մայիսի 3ի Չեր նամակը, որում յայտնուած խմբագրութեանդ մերժումը իմ «Բացատրական» պատասխան յօդուածի Չեր իսկ պարբերականում տպագրելու խնդրանքի առնչութեամբ՝ անարդար է իր աչառութեամբ ու անհասկանալի միտումնաորութեամբ: Իր բնոյթով բացարձակապէս անյարիր եւ նոյնիսկ խտուր է «Բազմավէպ»ի նման հայագիտական հանդէսի ոգուն, որի ստեղծման օրից առ այսօր բոլոր հատորներին հաղորդակից եմ եղել իմ ուսումնասիրութիւնների բերումով, ընդ որում անվերապահ յարգանք տածելով նրա երախտատու հրատարակիչների նկատմամբ:

ա. Իմ «Դաւիթ Բէկ» աշխատասիրութեան առնչութեամբ «սեւցրէքեան» ոգով երկարաշունչ մի գրադատութիւն տպագրեցիք բանասիրութեան մէջ անստոյգ մի գրչի ստորագրութեամբ՝ ոմն «Անդրանիկ Տէր-Ներսէսեանի», յայտարարելով թէ «դա մի աշխատութիւն է, որ գրուած է գրուելու համար միայն»...: Իմ եւ Չեր խմբագրութեան պարտքն է միաժամանակ յանիրաւի դատաւիտուած հեղինակի պատասխանը եւ բացատրութիւնները ներկայացնել ընթերցող բանասէր հասարակայնութեանը, որին չյարգել ոչ որի իրաւունք չի տրուած՝ գիտական ճշմարտութիւնը ի յայտ բերելու համար:

բ. Խմբագրութեանդ առաջին պատճառաբանութիւնը պատասխան յօդուածիս մերժման՝ այն է, որ «Բազմավէպը միշտ ջանացած է ընթացք չտալ բանավէճերու», ըստ Չեր տուած հիմնատրման: Բայց սա բանավէճ չէ, այլ պատասխան-բացատրութիւն՝ գրադատութեան մէջ թոյլ տրուած ազաւազումների ու խեղումների, աշխատութեանս արժարժած պատմա-բանասիրական եւ ձեռագրագիտական հարցադրումների առնչութեամբ: Չէք բարեհաճել անգամ գրութեան բուն հեղինակային ստորագրութիւնը յայտնի դարձնել ընթերցողին, «խիստ գաղտնի» պահելով նաեւ ինձնից Չեր նամակում: Դա նոյնպէս գիտական բարոյականութեան

խախտում է, թոյլ տալով որ նա վախկոտավարի ու նենգաբար թաքնուի ուրիշի անունով...:

գ. Խմբագրութեանդ երկրորդ պատճառաբանութիւնը իմ պատասխան-բացատրութիւնը չտպելու այն է, ըստ Չեր նամակի, որ «նաեւ նկատած որ կատարուած մի սխալ բուծելու համար՝ անօգուտ է կատարել երկրորդ սխալ մը, Վարչութիւնս յարմար նկատեց չիրատարակել Չեր յօդուածը Բազմավէպի մէջ, առանց ուզել արգիլելու որ նոյնը տպագրուի ուրիշ Հանդէսի մը մէջ, յօգուտ հայագիտութեան»: Հարց է ծագում. եթէ Վարչութիւնը ընդունում է, որ «ՄԽԱԼ» է գործել այդ յօդուածը տպագրելով, ապա նախ թող քաջութիւնը եւ գիտական ազնուութիւնը ունենայ այդ յայտարարութիւնը տալու Բազմավէպի էջերում յանուն անաչառութեան եւ արդարութեան: Երկրորդ՝ ինչո՞ւ հաւասար իրատուքներ չի պարզեցնում նաեւ ինձ՝ բազում յերիւրածոյ վերագրումների մէջ հրապարակաւ մեղադրուողիս: Տո՛ւք նաեւ ինձ այդ հնարաւորութիւնը, եթէ հայագիտական հարցերում իսկ ջանգլիների օրէնքով գործելը բացառուած էք համարում: Իմ Պատասխան-Բացատրութիւնը տպէք, հետը միասին նաեւ Վարչութեանդ բոլոր վերապահութիւններն ու դիտողութիւնները գուգորդելով: Ամենեւին չեմ նեղանայ: Երրորդ՝ իմ կողմից բոլորովին զանցառութիւն կը լինէր եւ բարոյական մեղանշում, եթէ Չեր խորհրդին հետեւելով ուրիշ հանդէսի դիմէի տպագրութեան: Չէ՞ որ Դուք նախածեցնել էք առաջինը, Դուք էլ բարոյապէս պարտաւորուած էք Պատասխան-Բացատրութիւնը տպագրելու հէնց «Բազմավէպ»ում, եւ ո՛չ այլուր: Դա՛ է ընդունուած կարգը, թոյլ տուէք ասել:

դ. Ուշագրաւ է նաեւ հետեւեալ կէտը Չեր նամակում. «Առ ի գիտութիւն ըսեմ որ Չեր յօդուածին նմանահանութիւնը դրկեցինք գրախօսող յօդուածագրին, որպէսզի տեսնէր պատասխանը եւ ընդունի Չեր կատարած ԱՐԴԱՐ դիտողութիւններն ու անդրադարձութիւնները: Նա ընդունելով հանդերձ ինչ ինչ կէտեր, նոյնչափ երկար յօդուածով պատասխանած էր»: Հետաքրքիր է՝ այդ ի՞նչ հոգածութիւն եւ մանաւանդ՝ սրտացաւութիւն է ցուցաբերուել, բայց զլացուել նոյնը ցուցաբերելու մեզ...: Երկրորդ՝ ի՞նչ կարեւոր է ընդունո՞ւմ է գրադատը իմ դիտողութիւններն ու հերքումները: ԴԱ ԻՐԱ ՀԱՍԱՐ ՉԻ ԳՐՈՒԱԾ, որ «բարեհաճէք» կամ ոչ, այլ՝ ԸՆԹԵՐՑՈՂ ԲԱՆԱՍԻՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ, նաեւ՝ ՈՏՆԱՀԱՐՈՒԱԾ ԻՄ ՀԵՂԻՆԱՎՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ:

Մի՞թէ այս «կացութիւն»ը, ինչպէս Դուք էք պնդում Չեր նամակում՝ «մեզ դեռ ատելի հաստատեց որ ընթացք պէտք չենք տալ Բազմավէպի մէջ»...:

Կը ներք աճշուշտ, յարգելի Խմբագիր Հ. Սահակ Ծեմճեմեան, իմ ամբողջ «բարեացակամ հասկացողութեամբ» հանդերձ, չեմ կարող հաշտուել այս խիստ աչառու եւ անարդար վերաբերմունքի հետ: Ես, որպէս հայագիտութեան քառասուն տարուայ մշակս, ոչ մի մենաշնորհ կամ առաւելութիւն չեմ խնդրում Չեզանից, ԱՅԼ ՄԻԱՅՆ ՀԱՒԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏՊԷՔ ՆԱԵՒ ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆ ՅՕԴՈՒԱԾԸ, որում Ո՛Չ ՄԻ անձնական բնոյթի արժարժումներ չկան (եւ չեն էլ կարող լինել, պարզ այն պատճառով, որ անյայտ է ուզեցել մնալ գրադատը):

Յուով՝ սպասում եմ:

Յարգանքով (ստորագրութիւնս)
Բանասիրական Գիտութիւնների
Դոկտոր-Փրոֆեսոր:

Մխիթարեան Մայրավանք

Ս. Ղազար, 4 Մեպտ. 1995

Պատուական Տիար Իշխան Չիֆֆչեան
Խմբագիր «Հասկ Հայագիտական
Տարեգիրք»ի

Չեր 9 Օգոստոս քուակիր նամակը ուղղած էիք Հ. Տաճատին, որ վեց ամիսէ Լոս Անճելըս կը գտնուի: Բայց որովհետեւ Չեր նամակին նիւթին տեղեակ եմ, քանի նոյն շրջանին ես էի խմբագիրը Բազմավէպին, ահա քանի մը լուսարանութիւն:

Երեսանի բանասերներէն Անդրանիկ Տէր-Ներսէսեան ես անձնապէս չեմ ճանչնար: Գրախօսականը որ գրեց եւ դրկեց, բովանդակայից գտնելով՝ հրատարակեցինք Բազմավէպի մէջ: Բնականաբար ջանացի բուական բան դուրս թողուլ, որպէսզի մնանք գիտական մակարդակի վրայ, առանց վիրատրելու վաստակաւոր փրոֆ. Խաչերեանը:

Վրայ հասաւ Խաչերեանի ընդարձակ գրախօսականը, հրատարակութեան խնդրանքով: Յարմար չնկատեցի հրատարակել եւ իրեն ալ այս պատճառաբանութիւնը գրեցի՝ թէ «մի անգամ սխալեցանք նման յօդուած հրատարակելով (ակնարկելով Անդրանիկի գրածին), այս երկրորդ սխալով մը՝ դժուար է որ սրբագրենք առաջինը, քանի Բազմավէպին նպատակը չէ կոտորաշտ ըլլալ»:

Այս է իմ բոլոր գիտցածը, այս յօդուածին մասին, եւ կը յուսամ հաւատարանկեղծութեանս:

Մաղթելով Չեզի ամէն յաջողութիւն՝ մնամ սիրով

Հ. Մահակ Վ. Ծննճեան
Մխիթարեան

Չարմանքով կարդացի հայագիտութեան մէջ անյայտ ընդդիմախօսի՝ ոմն Անդրանիկ Տէր-Ներսէսեանի 24 մանրատառ էջերից բաղկացած հակաճանաչութիւնը Բազմավէպի 1989 քուականի 1-4 միացեալ համարում (Վեներտիկ, էջ 413-436):

1. Չարմանքով, որովհետեւ այսպէս կոչուած «գրախօսութեան» ակնբախ կրթութիւնը «սեւագրէքեան» մտասեւեռմամբ՝ անյարիր են առեւտարակ գիտական քննարկումներին, ի մասնաւորի այնպիսի հայագիտական լուրջ հանդէսի ոճին ու մակարդակին, որպիսին է Բազմավէպը, որը միշտ էլ մեր յարգանքին է արժանացել

իր հրապարակած յօդուածների անաչառութեամբ, առարկայականութեամբ ու հաւաստիութեամբ: Ափսոսանք վերապրեցինք՝ ինչպէ՞ս է որ Բազմավէպի խմբագրութիւնը համաձայնուել կեղծ ստորագրութեամբ եւ «ջարդարարական» նկրտումներով յօդուած հրատարակել: Հակառակ բազմիցս մեր արած հարցումներին, Բազմավէպի խմբագրութիւնը յանիրաւի հրաժարուեց յայտնել յօդուածագրի ինքնութիւնը, որպէս թէ «պետական գաղտնիք» համարելով...:

Բայց մենք բարոյական պարտաւորութիւն ունենք, Բազմավէպի իսկ էջերում, պատասխանելու, որպէսզի յարգած լինենք բանասէր ընթերցողներին մասնաւորապէս՝ փարատելու համար ընդդիմախօսի միտումնաւոր մեկնաբանութիւններն ու թիրիմացութիւնները մեր հրատարակած մատենագրական Յուշարձանի աղբիւրագիտական ու բնագրագիտական հարցադրումների առնչութեամբ:

Այդ եւս զլացուեց մեզ:

Ընդդիմախօսը, որքան էլ տարօրինակ է, իր մտքի սեւեռակէտում սկզբիցեւեք ունեցել է իրեն չարչրկող միայն մէկ նպատակ, որ առաջադրել է նաեւ իբրեւ «եզրակացութիւն», երբ այնուամենայնիւ «հանգստանում» է գրելով. «Այս «գիտաքննականը» (խօսքը Դաւիթ Բէկ մեր աշխատասիրութեանն է վերաբերում - Լ.Խ.), որքան էլ դժուար է խոստովանելը (sic!), աշխատանքի եւ միջոցների ապարդիւն վատնում է՝ գիրք, որ գրուել է յանուն գրուելու եւ որը հայագիտութեանը տալու ոչինչ ունի...» (Բազմավէպ, էջ 436: Այս եւ յետագայ բոլոր ընդգծումները իմն են - Լ.Խ.): Եւ ահա 24 մանրատառ էջերում ճգնել է նա, ընդամին՝ տեղագին փութկոտութեամբ, «ապացուցելու» իր այս մտասեւեռումը բանասիրական մարզանքներով:

Բայց եւ ինքնահակասմամբ պնդում է միաժամանակ իր յօդուածի առաջին տողերում՝ ասելով, որ «ինքնին ուրախալի եւ շնորհատրանքի արժանի փաստ» պէտք է համարել (Բազմավէպ, էջ 413) ... «հայագիտութեանը ոչինչ չտուող» նաեւ ... Դաւիթ Բէկ մեր աշխատասիրութիւնը:

Բարեբախտաբար մեր աշխատասիրութիւնը հրապարակի վրայ է արդէն, բազում տուայտանքներից ու փորձութիւններից յետոյ: Իհարկէ, մենք այն խորին եւ աներեր համոզմունքն ունենք՝ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳԻՐՔԸ ԿԱՅ ԱՐԴԷՆ, ԴԱ ԱՍԵՆԱՌԻԺԵՂ, ԱՍԵՆԱՀԱՄՁԻՉ, ԱՍԵՆԱՄՊԱՌԻՉ ՀԵՐՔՈՒՄՆ Է ամէն տեսակ նսնմացումների...:

Մեր զարմանքը վերաբերում է նաեւ այն բանին, որ յօդուածը իր բնոյթով, իրականում, ոչ թէ «գրախօսութիւն» է 1988 քուականին Լոս Անջելըսում մեր հրատարակած «Դաւիթ Բէկ» աշխատասիրութեան արժանիքների ու վրիպումների մասին, որ գիտական գրախօսութեան առաջնահերթ խնդիրն է, այլ հակաճանաչութիւն՝ յօդուածագրի իսկ յերիւրած բացառապէս «թերութիւններին» անողոր դատափետմամբ, ընդ որում առաջնորդուելով հետեւեալ կանխորոշիչ տրամաբանութեամբ. ինչ որ հաւաստում է Խաչերեանը, ի յառաջագումն, «սխալ» է անպայման, իսկ ինչ որ իր ընդդիմախօսներն են պնդում, ի յառաջագումն, «ճիշդ» են անպայման...: Եւ այս մեթոդով «ջարդում» ու բնովում է եւ Խաչերեանին, եւ իր աշխատասիրութեանը: Ընդամին՝ նա բանասիրական, բնագրագիտական կամ աղբիւրագիտական ո՛չ մի պորթլէմ չի լուսարանում կամ լուծում, չունի դրական ո՛չ մի առաջարկութիւն, այլ միայն՝ վիրատրուած «պաշտպան փաստաբանի» դեր է ստանձնել ինքնակոչ յաւակնութեամբ, բնական մեր ուսումնասիրութեան մէջ հանդիպած այն հեղինակների նկատմամբ, որոնք գիտական լուսարձակի տակ

առնուելով մեր վերլուծութիւններում, սկզբնաղբիւրի հետ առընչուած պրոբլէմների լուծման իրենց ներդրումներն ու վրիպումներն են ունեցել...: Հետեւաբար յօդուածը, որ ինքնին իրովի պաշտպանական խօսք է, պէտք է գետնորուէր ո՛չ թէ «Գրախօսութիւնների» բաժնում, ա՛յլ՝ «Յօդուածների եւ Հրատարակումների» մասում, դա արդէն բանական կը լինէր:

Ի դէպ, յիշեցնենք նաեւ, գիտական մատենախօսութեանն անյարիք՝ թերմբնումներով, խառնաշփոթութիւններով, հակասութիւններով ու պարադոքսներով լի «գրախօսութեան» հրատարակումը իր մարտնչող ժխտողականութեամբ հնարատր է դարձել Բազմավէպում՝ նոյնիսկ այն իրողութեան անտեսմամբ, որ մեր «Դաւիթ Բէկ» աշխատասիրութիւնը ակադեմիական քննարկման բովով է անցել նախքան լոյս ընծայումը՝ հեղինակատր մասնագէտների մասնակցութեամբ, Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Հայ ժողովրդի պատմութեան Միջին Դարերի եւ Աղբիւրագիտութեան բաժանմունքում: Այդ մասին իրագել ենք դարձրել նաեւ գիտական հասարակայնութեանը մատենագրական այս Յուշարձանի հրատարակման առթիւ, որտեղ նշուած է իբրեւ փաստական իրողութիւն. «Մեր շնորհակալութիւնն ենք յայտնում նաեւ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Միջնադարեան պատմութեան բաժնի վարիչ, բազմավաստակ բանասէր-աղբիւրագէտ, այժմ հանգուցեալ Դոկտ. Վազգէն Յակոբեանին, որը գիտական յատուկ նիստով կազմակերպեց սոյն սկզբնաղբիւրի քննարկումը՝ ռուսերէնով եւս քարգմանելու ու հրատարակելու որոշման կայացմամբ» (տես «Դաւիթ Բէկ», էջ 23): Սա «ինքնաապահովագրման» համար չենք ակնարկում ամենեւին, ո՛չ էլ առուել եւս՝ գրաքննադատութիւնից մեր աշխատասիրութիւնը գերծ յայտարարելու իմաստով, ո՛չ ամենեւին, հազար անգամ ո՛չ. ԱՅԼ՝ սքալի եւ պատասխանատու վերաբերման նկատառումով, ընդ որում զգաստացնելով խօլարշաւ յարձակումներից՝ վարկարկումներից ու նսեմացումներից...: Ի՞նչ ասենք հայագիտական հանդէսներում եւ մամուլում լոյս տեսած դրական գնահատականների, ինչպէս նաեւ հայ եւ օտարագրի ճանաչուած հայագէտների ու մշակութային գործիչների մեզ եւ Արեւմտեան թեմի Առաջնորդարանին յղած հարիւրատր նամակների մասին՝ իրենց դրուատումներով...:

2. Որպէսզի մասամբ գէթ հասկանալի դառնայ բանասէր ընթերցողին, թէ ինչո՞ւ մեր աշխատասիրութիւնը արժեգրկելու ու վարկարկելու այդքան հետեւողական կրքոտութիւն է հանդէս բերել ընդդիմախօսը, մի երկու խօսք անպայման ունենք ասելու մեր «Դաւիթ Բէկ» աշխատասիրութեան լոյս ընծայման ռոյխականի մասին, որ բարեբախտաբար յաջող վախճան ունեցաւ ի վերջոյ՝ լոյս տեսաւ գիտաքննական ուսումնասիրմամբ եւ վերադարձուեց այն իսկական տիրոջը՝ մեր ժողովրդին:

18րդ դարի հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութեանը նուիրուած մատենագրական սոյն Յուշարձանի ուսումնասիրմանը ձեռնամուխ էինք եղել Մատենադարանի երկու այլ գիտաշխատակիցների հետ միասին՝ դեռեւս 1970 թուականից, անճանական նախաձեռնութեամբ եւ, ուղղակի ասենք՝ «պարտիզանական» կարգով. այսինքն՝ այն չէր «պլանաւորուած» ո՛չ Մատենադարանի տնօրէնութեան մշակած սկզբնաղբիւրների ծրագրերում, ո՛չ էլ Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտկոմի նախատեսումներում: Այս առնչութեամբ գրել ենք մեր գրքի՝ «Աշխատասիրողի կողմից» բաժնում.

«... Վերջին տասնամեակներում մեր հարուստ պատմագրութեան առանձին Յուշարձանների գիտա-քննական հրատարակութեամբ լոյսընծայումը արժեքատր

ներդրում է ինչպէս հայագիտութեան, այնպէս եւ իրանագիտութեան, քիզանդագիտութեան եւ կովկասագիտութեան զարգացման խնդրում: Այդ ուղղութեամբ ծաւալուող աշխատանքները անհրաժեշտ է ամէն կերպ խրախօսել ու առաջ մղել, ապահովելով նաեւ դրանց միջազգային լեզուներով՝ անգլերէնով, ֆրանսերէնով եւ ռուսերէնով հրատարակութիւնները, ելնելով Կովկասի ժողովուրդների եւ Արեւելքի պատմութեան լուսաբանման համար հայկական սկզբնաղբիւրների ունեցած կարեւոր, երբեմն եւ՝ նոյնիսկ առաջնակարգ նշանակութիւնից:

«Ոչ պակաս կարեւորութիւն ունեն նաեւ հայ ազատագրական պայքարի պատմութեանը վերաբերող մատենագրական Յուշարձանների գիտա-քննական հրատարակումները, որոնք բացայայտում են պատմական տարբեր պարբերաշրջաններում հայ ժողովրդի ընդվզման ու հերոսական ոգորումների դրուագները: Այդ բնոյթի մատենագրական մեծարժէք Յուշարձան է նաեւ Ստեփանոս Շահումեանի անուամբ հայագիտութեանը յայտնի «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէկին եւ պատերազմացն Խափանու...» խորագրով սոյն բնագիրը, որի գիտա-քննական հրատարակումը բոլոր ձեռագրերի ու տպագրութիւնների համեմատական ամբողջական ուսումնասիրմամբ՝ վաղուց հրատապ անհրաժեշտութիւն էր դարձել» («Դաւիթ Բէկ», էջ 22):

Նաեւ «Ներածութեան» մէջ անդրադարձել էինք.

«Մատենագրական սոյն Յուշարձանի գիտական հրատարակութիւնը վաւերական ամենացայտուն փաստաթուղթերից մէկն է միաժամանակ պարսկական, րայց եւ մանաւանդ քուրքական արիւնտ երկեակ լծերի մերկացման՝ իրենց հաստատած ամենավայրագ ու հոգելիլիչ սարսափների վարչակարգերով հպատակեցուած ժողովուրդների նկատմամբ՝ մի կողմից, միւս կողմից՝ այն հայ ժողովրդի պատմութեան ամենապայծառ եւ ամենահերոսական էջերից մէկն է իր ռազմունակութեան վիթխարի ուժակնութեամբ, նամանաւանդ նրա ազատաբաղձ ոգու անընկճելիութեամբ եւ անհեղձելիութեամբ:

«Այս Յուշարձանը ոգեշնչման անսպառ աղբիւր է եղել եւ՝ հայ ժողովրդի բոլոր սերունդներին՝ քաղաքական ազատութեան եւ ազգային իրաւունքների ճանաչման ու յաղթանակի առումներով, ցոյց տալով աշխարհին, որ նա ոչ միայն ստեղծել գիտէ իր հայեցի մեծասքանչ քաղաքակրթութիւնը հազարամեակների, այլեւ այն պաշտպանել ոգի ի բոլին նաեւ ռազմական արուեստի ամբողջ հմտութեամբ ու գերմարդկային արիւթեամբ:

«Մատենագրական սոյն Յուշարձանի հրատարակութիւնը նաեւ կարեւորագոյն նպաստը կը լինի Հայ Դատին՝ աշխարհին յիշեցնելու համար, որ հայ ժողովուրդը ցեղասպանութեան դահիճների նախճիրներում անակնկալի բերուած ոչ միայն հեզաբար մորթուել է «քաղաքակիրթ երկրների» իսկ աչքի առաջ, այլեւ զինական ընդվզումների հերոսամարտերով պատմութեան տարապայման ու անագորոյն իրադրութիւններում իսկ գիտեցել է պաշտպանել իր Հայրենիքը ու նաեւ պահպանել Ազգային Ինքնութիւնը...: Այդ իսկ պատճառով սոյն Յուշարձանի նաեւ քարգմանութիւնը միջազգային լեզուներով՝ հրատապ խնդիր է մեր օրերում, որին իսկոյնեւեթ ձեռնամուխ պէտք է լինեն ազգային բարձր գիտակցականութեամբ օժտուած ձեռնհաս քարգմանիչները» («Դաւիթ Բէկ», էջ 27):

Տարագրութեան մէջ գտնուելով, արդէն 1988 թուականին առաւել բացայայտ համարձակութեամբ հրատարակաւ արձանագրեցինք ողջ ճշմարտութիւնը, թէ ինչո՞ւ հայ ժողովրդի ազատագրական պայքարին նուիրուած մատենագրական սոյն

Յուշարձանը այնուամենայնիւ հնարատր չեղաւ լոյս ընծայել Հայաստանում, որ մեր մեծագոյն փափագն էր, չնայած այն իրողութեանը, որ դեռեւս 1977 թուականից պատրաստ էր հրատարակութեան եւ ներկայացուած Պետական Հրատարակչութեանը:

«Տողերիս հեղինակը, ընդառաջ գնալով հասարակական այս պահանջին, դեռեւս 1970 թուականից ձեռնամուխ էր եղել, դարձեալ արտապլանային կարգով, ... ի յաւերժացումն Դաւիթ Բէկի գլխատրած Սիւնիքի ազատագրական շարժման 250-ամեակի, այդ Սկզբնաղբիւրի գիտա-քննական բնագրի կազմման աշխատանքներին: Մեր սկզբնական նպատակն էր՝ հրատարակել սոյն Սկզբնաղբիւրը գուզաղիք արեւելահայերէն եւ ռուսերէն թարգմանութիւններով, ինչպէս նաեւ փաստաթղթերի ու քարտէզների ցուցադրական Յատելուածով: Մակայն նման ծրագրով եւ ընդգրկմամբ Սկզբնաղբիւրի լոյսընծայումը, տարարախտարար, տարիներ շարունակ մնալով Հայաստանի Հրատարակչական դարակներում, այնպէս էլ չտպագրուեց Հայրենիքում: Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէին բազմիցս յղած մեր դիմումները մատենագրական այս Յուշարձանի տպագրութեան խնդրանքով՝ անհետեւանք մնացին: Իսկ մինչ այդ Աղբրեջանում իրար ետեւից բազմաախրած ու շքեղ կազմով լոյս էին տեսնում աղբրեջաներէն, մանաւանդ ռուսերէն եւ օտար լեզուներով՝ զրքեր ու հրատարակութիւններ, որոնք ուրիշի սեփականութեան իրացման անգուսպ իրենց նկրտումներով ու պատմութեան կեղծարարութեամբ յարակնութիւն ունեն օրը ցերեկով յափշտակելու եւ «աղբրեջանականացնելու» ոչ միայն մեր մշակութային Յուշարձանները, այլեւ մանաւանդ հայրենի պատմական հողատարածքները ամբողջական երկրամասերով, այդ թում եւ Արցախով ու Սիւնիքով միասին: Յանուն «բարի դրացիական» եւ «եղբայրական յարաբերութիւնների զարգացման»՝ ոչ միայն թոյլ չէր տրուում հայ գիտնականներին պատասխանել աղբրեջանցի պատմաբանների խեղաթիւրումներին ու յափշտակումներին, փաստական ճշմարտութեան դէմ նրանց կատարած ապերասան մեղանշումներին, այլեւ հարկադրում էին գրումնի տակ պահել հայկական Սկզբնաղբիւրները, որոնք իրենց ստեղծական իսկ հրապարակմամբ՝ գիտական աշխարհի առաջ միանգամայն կը մերկայանէին ու կը հերքէին աղբրեջանցի ընչաբաղդ «եղղաշների» բացարձակ ստերն ու յերիւրանները:

«Սոյն Սկզբնաղբիւրը Լոս-Անջելոսում հրատարակելիս, այն ներկայացնում ենք տարիների գիտա-հետազօտական ուսումնասիրութիւնների արդիւնքը հանդիսացող բացառապէս մեր աշխատասիրութիւնը՝ Ներածութեամբ, Արեւելահայերէն թարգմանութեամբ, զոբարեան համահաւաք Քննական բնագրով եւ պատմաբանասիրական ընդարձակ Ծանօթագրութիւնների Բաժինով, առանց ռուսերէն թարգմանութեան տեքստի, որ Լ.Ա. Խանլարեանին էր, եւ առանց Յատելուածի, որ Հ.Ն. Խաչատրեանին էր» (անդ, էջ 22-23):

Որքան էլ «գարմանալի» թուայ՝ այս Սկզբնաղբիւրի (ինչպէս եւ Լոս Անջելոսում լոյս տեսած մեր միւս բոլոր հինգ Սկզբնաղբիւրների) հրատարակմանը որոշակիօրէն խանգարում էին Մատենադարանի եւ մայիսին տնօրէնը՝ ակադեմիկոս Լ. Խաչիկեանը, եւ այժմեան տնօրէնը՝ թղթակից-անդամ Ս. Արեւշատեանը:

Ակադ. Լ.Խաչիկեանը, ի դէպ, Հայաստանի հայազէտներին յայտնի գոնէ մէկ նախափորձ ունեցել է արգելելու եւ ցրելու նոյնիսկ Միութեանական ակադեմիկոս Յակոբ Մանանդեանի նման հեղինակի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» Գ հատորի լոյս ընծայումը 1951 թուականին՝ արդէն իսկ կազմուած

վիճակում զրքի, երբ պէտք է տպարանից գրախանութները իջեցուէին մտուցները վաճառքի, մտասաներորդ ժամին «վախեցնելով» Համայնավար կուսակցութեան Կենտկոմին, որ եթէ հրատարակուէին Մանանդեանի աշխատութեան վերջին քսաներորդ եւ քսանմէկերորդ գլուխները, որոնք վերաբերում են «եղբայրական Աղբրեջանի» նախնիների խժոժութիւններին, անբաժութիւններին ու վայրագութիւններին Հայաստանի հողի վրայ ԺԵ-ԺԶ դարերում, ապա դրանից խիստ «կը նեղանար» Աղբրեջանը...: Պետհրատի սրտացաւ աշխատակիցների ջանքերով եւ յանդգնութեամբ, սակայն, այդ հրատարակութիւնից շուրջ 50 օրինակներ բարեբախտաբար փրկուել էին, կարծէք Պատմութեան Դատաստանի համար...:

Պատմագիտական այդ աշխատութիւնը, կրկին անգամ պաշտօնական վերատեսութեամբ ու փոփոխմամբ, լոյս է տեսնում 1952 թուականին, առանց, սակայն, խնդրոյ առարկայ դարձած երկու գլուխների, որոնք ... «Հարա-Ղոյունլու բորքմենների տիրապետութիւնը Հայաստանում» եւ «Հայաստանը Աղ-Ղոյունլու բորքմենների տիրապետութեան» վերնագրերն ունէին:

Այնուհետեւ իր երախտատր ուսուցիչն հանդիսացած Յակոբ Մանանդեանի մահուանից (ապրիլի 2, 1952թ.) յետոյ Լ. Խաչիկեանը հանգիստ իրացրեց այդ գլուխները քաղաքութեամբ իր հրատարակած Յիշատակարանների Առաջաբաններում, որ յետագայում հաստոր առ հաստոր շրջանառութեան մէջ դրուեցին:

Եօթնամասնական թուականներին մենք հնարաւորութիւն ունեցանք մատենագիտական եւ բնագրագիտական համեմատական քննութեան ենթարկելու Մանանդեանի այդ հատորի երկեակ հրատարակութիւնները միմեանց հետ՝ մի կողմից, միւս կողմից՝ Լ.Խաչիկեանի ԺԵ դարի երեք հատորանոց Յիշատակարանների Առաջաբանները՝ Մանանդեանի զրքից հանուած երկու գլուխների հետ:

Արդիւնքների մասին դեռեւս «1975 թուականի դեկտեմբեր-1976 թուականի յունուարին», 35 մեքենագիր էջից բաղկացած «Փաստեր ակադեմիկոս եւ Մաշտոցեան մրցանակի դափնեկիր Լ.Ս. Խաչիկեանի կողմից թոյլ տրուած գիտական բարոյականութեան ռոնահարման մասին» խորագով մատենագիտական-բնագրագիտական համեմատական ուսումնասիրութիւնը պաշտօնապէս ներկայացրինք (համաստորագրութեամբ Մատենադարանի աւագ գիտաշխատող, պատմաբան Հ. Խաչատրեանի) Հայաստանի Գիտութիւնների ակադեմիային, Միւսիստրների Սովետի նախագահութեանը եւ Համայնավար կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէին համաժամանակեայ թուականով, հայագիտութեան բնագաւառում թոյլ տրուած աղաղակող մեղանշումների համար պատասխանատուութեան հրաւիրելու կարեւորմամբ Մատենադարանի տնօրէն Լ.Խաչիկեանին¹:

Բայց եւ մենք հարկադրուած եղանք 1981 թուականի փետրուարին տարագրութեան ուղին բռնելու, այլեւս անհնարին լինելով տոկալ հալածանքներին ու հաշտեյարդարներին:

Այնուամենայնիւ հասայ այն բանին (բայց ի՞նչ գնով), որ ի վերջոյ մեծանուն հայազէտ Յ. Մանանդեանի հեղինակային իրատունքները վերականգնուեցին նրա

¹ Հէնց որ հնարաւորութիւն ընծայուի հրատարակութեան նաեւ այս հարցի հետ առնչուած վաւերագրերի, պատմութեան դատաստանին կը յանձնենք մեր այս քննական ուսումնասիրութիւնը եւ: Մեր այս խոստումը այժմ կատարում ենք, ահա, Սոյն հատորի հրատարակութեամբ. տե՛ս էջ 27-301:

երկերի երրորդ՝ ակադեմիական նոր հրատարակությունում, հանուած եւ իւրացուած երկու գլուխների ամբողջական ընդգրկումով:

Այդ առընչութեամբ 1977 թուականին լոյս տեսած Յ. Մամանդեանի «Բննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» Գ. հատորում «Խմբագրութեան կողմից» ասուած է. «Գ. հատորի հրատարակութեան ժամանակ (1952 թ.) *ինչ-ինչ պատճառներով հանուել է XV դարի պատմութեան շարադրանքը եւ մի շարք տեղեր կատարուել են փոփոխութիւններ: ՆԵՐԿԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԵՂԻՆԱԿԻ ՏՈՒԵԱԼ ՀԱՏՈՐԻ ՉԵՌԱԳԻՐ ԲՆԱԳԻՐՆ Է, որը գտնուած է Հայկական ՄՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անուան Հին Չեռագրերի Ինստիտուտ-Մատենադարանի արխիւում»... (էջ 5):*

Իսկ ակադեմիկոս Լ.Ս. Խաչիկեանին Հայաստանի խորհրդային կառավարութիւնը, Կենտկոմի առաջարկութեամբ, պարզեատրեց Խորհրդային Միութեան կառավարական ամենաբարձր շրանշանով... *նաեւ յետմահու:*

Եւ տակաւին «ուրախ» չէ ամենեւին մեր ընդդիմախօսը, որ ի վերջոյ Լոս Անջելըսում մեզ յաջողուեց, երկար ու ցաւազին ողիսականից յետոյ, Արեւմտեան թեմի Առաջնորդարանի ազնիւ աջակցութեամբ հրատարակել նաեւ «Դաւիթ Բէկ»ը ... *եւնց Արցախեան պահանջատիրական շարժման բռուն օրերին*, փարիսեցիաբար «ցանկութիւն» յայտնելով, որ «Դաւիթ Բէկ»ը լոյս տեսած լինէր Երեւանում բնագրային գրաբարով, արեւմտահայերէնով, արեւելահայերէնով, ռուսերէնով եւ անգլերէնով... «Դոյզն իսկ կասկած չունենք,- գրում է նա,- որ Դաւիթ Բէկի Պատմութեան հրատարակման գաղափարը հայագիտութեան երկու կարեւոր կենտրոններում (իմա՝ Մատենադարանում եւ Վենետիկում - Լ.Ս.) առաջացել է միմեանցից անկախ: Սակայն, հանգամանքների բերումով, երեւանեան ձեռնարկման գիրք դառնայն ուշացաւ (իսկապէ՞ս - Լ.Ս.): ... Մեր համոզմամբ մնում էր (այսօր՝ նոյնպէս) անել հետեւեալը. ... բնագիրը թարգմանել եւ արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի, եւ անգլերէնի ու ռուսերէնի...» («Բազմավէպ», էջ 417):

Բայց առ այսօր էլ թոյլ չի տրուել հրատարակելու նաեւ սոյն Յուշարձանի ռուսերէն թարգմանութիւնը վաստակաշատ պատմաբան-թարգմանիչ Լ.Ս. Խանլարեանի՝ *տասնհինգ* երկար ու ձիգ տարիներ անցնելուց յետոյ էլ ..., մինչեւ որ տարաբախտ պատմաբան-թարգմանչուեին վաղաժամ իր մահկանացուն կնքեց վերջերս, այնպէս էլ առանց հրատարակուած տեսնելու իր աշխատութիւնը...:

Իսկ Աղբրեջանի Գիտութիւնների ակադեմիան եւնց վերջերս, հայատեաց ակադ. Ջիա Բունիաթովի առաջարկով, ռուսերէն թարգմանութեամբ եւ 30 հազար տպաքանակով (մեր հրատարակած «Դաւիթ Բէկ»ի ընդամենը ... 500 տպաքանակի դիմաց), բայց եւ հայերէն բնագրի չարամիտ աղաւաղումներով հրատարակել է դարձեալ 18րդ դարի հայ ազատագրական պայքարի կարկառուն մի այլ դէմքի՝ Եսայի կաթողիկոս Հասան Ջալալեանցի շատ արժէքատուր պատմագրական երկը՝ «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից, դիպելով յաշխարհին Աղուանից» խորագրով, ընդ որում «Աղբրեջանական պատմութեան աղբիւրներ» մատենաշարի տակ (տե՛ս «Գրական թերթ», 16րդ Փետրուարի, 1990 թ., պատմ. գիտ. Դոկտ. Պ. Մուրադեանի յօդուածը՝ «Հերթական գոհը Հասան-Ջալալեանցն է» խօսուն վերնագրով), «ապացուցելով», որ հայերը Արցախում ... եկուր են, իսկ աղբրեջանցիները՝ բնիկ...: Ի՞նչ արած. դարձեալ եւ կրկին անգամ հայաստանեան թուլամորթ եւ անջիղ՝ թմբիբային բնատրութիւնն է պատասխանատուն այս ապաշնորհ իրավիճակի. մենք տէր չենք կանգնում մեր ազգային սկզբնաղբիւրներին (եւ դեռ

տէր կանգնողներին էլ հալածո՛ւմ ու բնովո՛ւմ ենք...) եւ սպասում այնքան ժամանակ, որ ուրիշները յափշտակեն մեր գանձերը, իրացնեն ու նենգափոխեն, յետոյ էլ բնից յանկարծակի զարբնողի նման ամբողջ ձայնով բացականչում ենք՝ «Այդ ի՞նչ արեցիր..., այդ ո՞նց թալանեցիր մեզ...»:

Բայց այնուամենայնիւ ուրիշի անուամբ թաքնուած մեր ընդդիմախօսը մատնում է իրեն, երբ պնդում է մինչեւ անգամ, որ առհասարակ «կարիքը չկար» Խաչերեանի «գիտա-բնական» ակադեմիական հրատարակութեան Դաւիթ Բէկի՝ *նոյնիսկ Արցախեան Շարժման բժժ օրերին, երբ, ընդհակառակն, այնքան հրատապ անհրաժեշտութիւն էր դարձել արցախահայութեան համար Դաւիթբէկեան ազատագրական հերոսապատմի ուսանելի փորձը Գոյապայքարի օրհասական մեր ոգորումներում:* Մի՞թէ պետք է այս տարրական ճշմարտութիւնը «բացատրել» ամենավերջին հային անգամ, չխօսելով այլեւս իրեն «մասնագէտ» յաւակնող եւ, ըստ երեւոյթին, «պատասխանատու պաշտօն» զբաղեցնող ընդդիմախօսի մասին, երբ սեռով սպիտակի վրայ գրում է. «... Բնագրագիտութիւն կոչուող գիտութեան մեթոդայ սկզբունքների համաձայն (sic!) այս աղբիւրը 1978ից ի վեր (այսինքն՝ Հ. Մամուէլ Արամեանի Վենետիկում հրատարակած գիրքը նկատի ունի - Լ.Ս.) այլեւս «գիտա-բնական» հրատարակութեան կարիք չունէր...» («Բազմավէպ», էջ 417):

Այս անճիշդ պնդման մէջ, սակայն, բացաւայտուած է ոչ միայն արդէն ծանօթ վրդովեցուցիչ հետետղական զիծը հայ ժողովրդի ազատագրական շարժման սկզբնաղբիւրները գիտականօրէն ու ակադեմիական վաւերականութեամբ հրատարակելու նախկինում մեզ ծանօթ եւ դառնօրէն ճաշկաժ ժխտական վերաբերմունքը, այլեւ ընդդիմախօսի բնագրագիտական թիւր պատկերացումը վենետիկեան հրատարակութեան եւ մեր լոյս ընայածի *էական* եւ *սկզբունքային* տարբերութեան մասին, որը տուեալ դէպքում ոչ թէ երկրորդական, այլ առաջնային՝ մեկնակէտային նշանակութիւն ունի յետագայ բնարկումների համար:

Առաջին. նա չի հասկացել, որ Հ. Ս. Արամեանի հրատարակութիւնը բոլորովին այլ տեսակի հրապարակում է իր բնոյթով ու բնագրային կառոյցով մեր աշխատասիրութիւնից. Հ. Մամուէլ Արամեանը Դաւիթբէկեան շարժման պատմութիւնը գրառող Հ. Դուկաս Մերաստացու *սեւագիր Համառօտ եւ Ընդարձակ տարբերակների ձեռագրական մէկական միատրների լոյս արտատպութիւնն է, իբրեւ յաւելուած Գուլամիրեանի բնագրի կցումով*, իսկ մեր աշխատասիրութիւնը Դաւիթբէկեան պատմութեան միայն *վերջնական՝ ամբողջական եւ աւարտուն Երրորդ խմբագրութեան Գուլամիրեան տպագրութեան եւ նրա հինգ բոյր ձեռագրական ընդօրինակութիւնների մեր պատրաստած ակադեմիական գիտա-բնական հրատարակութիւնն է:* Բնագրագիտական այս հարցի պարզաբանմանը յատուկ երկու գլուխներ ենք առաջադրել ճիշդ կողմնորոշուելու համար՝ հետեւեալ վերնագրերով. ա) «Ձեռագրական Յուշարձանի բնագրային զարգացման երեք փուլերը» («Դաւիթ Բէկ», «Ներածութիւն», էջ 33-42) եւ բ) «Երեք խմբագրութիւնների բնագրային առնչութիւնները՝ նրանց առանձնայատկութիւնների բնութագրմամբ» (անդ, էջ 42-64): Այսքան ծաւալուն ու մանրակրկիտ մեկնաբանութիւնից յետոյ եթէ մեր «մասնագէտ» ընդդիմախօսին չենք կարողացել շփոթից զերծ պահել, ապա դա մեր թերացումը չէ ամենեւին:

Երկրորդ. ցաւօք՝ նա չի հասկացել նաեւ այն իրողութիւնը, որ վենետիկեան եւ լուսանջելըսեան հրատարակութիւնները իրենց բնոյթով ու միտուածութեամբ «նոյնական» չլինելով հանդերձ՝ ո՛չ թէ բացասում են իրար, ա՛յլ՝ թերեւս *լրացնում են*, յամենայն դէպս՝ բոլորովին մէկը միսին չի արժեզրկում, ինչպէս թիւրիմացաբար

պնդում է մեր ընդդիմախօսը: Այսպես նա չէր գրի, անպայման «սուր հակադրություն» տեսնելով Հ. Ս. Արամեանի եւ մեր աշխատասիրության կարեւորության եւ անհրաժեշտության առումներով. «Այսպիսով, հեղինակային սեւագիր եւ մաքրագիր տարբերակներով հրատարակուել է (իմա՝ Հ. Ս. Արամեանի կողմից - Լ.Խ.) մեր պատմագրության մի կարեւոր յուշարձան. գոյություն ունեցող մնացեալ բոլոր օրինակներն այդուհետեւ դադարեցին (») բնագրագիտական արժէք ու կարեւորութիւն ունենալ (sic!)...» («Բազմավէպ», էջ 416): Նման պնդումը, ինչ խօսք, լով բանասիրական-աղբիւրագիտական սահմանափակ մտքի վկայութիւն է միայն, որից, հարկ է խոստովանել, միանգամայն զերծ էր Հ. Ս. Արամեանը, երբ աներկմտաբար հակադրում է մեր ընդդիմախօսին. «Վերոյիշեալ աղբիւրներն զատ (իմա՝ Վենետիկի երկու ձեռագրերը նկատի ունի, որ ինքը արտասուպութեամբ հրատարակեց յետագայում - Լ.Խ.) եթէ դեռ կան ուրիշ գրչագիր աղբիւրներ, մեզի յայտնի չեն: Կը մաղթենք որ ատենք այ մէջտեղ գան ու դեռ աւելի յուսարանն իրենց մանրամասնութիւններով, ազգին պատիւ բերող այս հերոսամարտն ու հերոսները» («Բազմավէպ», 1972, Թ. 2-3, էջ 237): Հենց այդ է, որ արել ենք բազմամեայ ձեռագրագիտական մեր պրպնումներով ու յայտնաբերումներով, գիտա-քննական բնագիր կազմելով բոլորովին նոր եւ վերջնական խմբագրութեան Դաւիթբէկեան հերոսապատում մատենագրական Յուշարձանի՝ Գուլամիրեանի հրատարակութեան հիմքում ընկած Չեռագրի եւ հինգ այլ քոյր ձեռագրական ընդօրինակութիւնների ընդգրկմամբ, ինչպէս եւ չորս օժանդակ աղբիւրների համամատական քննութեամբ, որոնք սերտօրէն առնչուել են այս Սկզբնաղբիւրի հետ: Հետեւաբար՝ մեր լոյս ընծայած աշխատասիրութիւնը, ի տարբերութիւն 119 տարի առաջ (1871 թ.) հրատարակուած Գուլամիրեանի եւ 12 տարի առաջ (1978 թ.) Հ. Ս. Արամեանի բնագրերի, պաշտին եւ միակ գիտա-քննական բնագիրն է հայագիտութեան մէջ:

Իրեն «մասնագէտ» համարող ընդդիմախօսը մեր աշխատասիրութեան այր-ժէքագրկման սեւեռուն դիտումով հարցականի տակ է դրել նաեւ նրա լոյս ընծայման առհասարակ «արդարացումն» իսկ...:

Իր նախատրամադրութիւնը սկզբից յայտնել է երկչտութեամբ՝ «օրինելուի» երեւալու ձեւացումով, որպէսզի յետոյ բացարձականացնի եւ աւարտի մեր աշխատասիրութեան «անվերապահ ժխտումով» ..., թէ չէ միանգամից բացասումը հայագէտ ընթերցողը դժուար կը մարտէր...:

Ահա նրա կանխակալ «կարծիքները»:

Իր հակաճառութեան առաջին իսկ էջում. «... ԺԸ դարի հայ ազատագրական պատերազմի անգուգակական աղբիւրի՝ նախորդից ընդամէնը տասը տարի յետոյ արուած այս հրատարակութեան փաստը մասնագէտի մէջ առաջին հերթին եւ ակամայ արթնացնում է այն միտքը, թէ գիտութեանն ի՞նչ նորութիւն է բերում նոր տպագրութիւնը, ի՞նչ է տալիս այն մեր բնագրագիտութեանը, աղբիւրագիտութեանը, պատմագիտութեանը եւ ընդհանրապէս՝ հայագիտութեանը: Բնական այս հարցի պատասխանը պարզելու միակ օրինաւոր եւ շիտակ ուղին գոյգ հրատարակութիւնների բաղդատումն է եւ նրանց մէջ օգտագործուած կամ յիշատակուած աղբիւրների ու գրականութեան ստուգումը: Վերջինիս արդիւնքն էլ ներկայ գրախօսութիւնն է, որ ցաւօք, մեր կամքից անկախ պատճառներով (sic!), նոր հրատարակութեան վերաբերմամբ դրուատական չեղաւ» («Բազմավէպ», էջ 413):

Մինչդեռ՝ հաշուետու լինելով գիտական հասարակայնութեանը, մենք համառօտակի իրագել էինք դարձրել մեր աշխատութիւնում այն նորոյթը, որ բերել ենք թէկուգեւ միայն բնագրագիտական եւ աղբիւրագիտական առումներով.

«... Իր տրամադրութեան տակ չունենալով ձեռագրական բոլոր ընդօրինակութիւնները, Հ. Ե. Փեչիկեանին չի յաջողուել (քննականաբար՝ անհնարին էր միայն Վենետիկի Մխիթարեանների մատենադարանում պահուող ընդամէնը երկու ձեռագրերի ուսումնասիրութեամբ) պարզել Դաւիթ Բէկի պատմութեան վերաբերեալ աղբիւրի բնագրային զարգացման ուղեգիծը՝ ստեղծուած խմբագրութիւնների ճշդումով, որը մեկնակէտային նշանակութիւն ունի ազատագրական պայքարի պատմութեան կարեւորագոյն այս Սկզբնաղբիւրի հրատարակման համար գիտա-քննական բնագիրը որոշելու տեսակէտից: Ընդ որում Հ. Ե. Փեչիկեանը չի կարողացել մինչեւ անգամ Վենետիկի այդ երկու խմբագրութիւնների առնչութիւնը, իրենց բնոյթի որոշմամբ՝ պարզել: Նրա սխալ պատկերացմամբ՝ այդ երկու խմբագրութիւններից միայն Համառօտը Գուլաս Սեբաստացունն է, իսկ Ընդարձակը՝ Մխիթարեան հայրերի հաւաքական աշխատութեան արգասիք, ինչպէս վերը ցոյց տուեցինք: Չեռագրական համակողմանի քննութեամբ՝ խմբագրութիւնների ուսումնասիրումը չեն արել նաեւ Հ. Ս. Արամեանը եւ Ա. Գ. Աբրահամեանը, որով խմբագրութիւնների պարզաբանումը մնացել էր խճճուած՝ տեղիք տալով թերթբնումների ու մտորութիւնների՝ լաւագոյն եւ ամենահաւաստի խմբագրութեան գիտա-քննական հրատարակութեան խնդրում: Հարցի լուծումը առաջադրել էինք մենք՝ ինչպէս ձեռագրական բոլոր ընդօրինակութիւնների, այնպէս եւ տարբեր, նաեւ պատմագրական երկերում ու թարգմանաբար ընդգրկումների ամբողջական ու համակողմանի քննութեան հիման վրայ...» (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», Թ. 1, 1974 եւ «Դաւիթ Բէկ», էջ 39):

Ահա թէ ինչպէս խղճի հետ գործարք կնքելով՝ ընդդիմախօսը չնկատելու է տալիս եւ ուրանում է մեր աշխատասիրութեան բերած բնագրագիտական-աղբիւրագիտական նորոյթը անգամ, որպէսզի իր հակաճառութեան վերջում էլ անպատասխանատու յայտարարութեամբ ասի՝ դա «մի գիրք է, որ գրուել է գրուելու համար...»:

Բայց եւ մեր ընդդիմախօսը իրեն դարձեալ հակասելով՝ ... ջրում է իր նախորդ ասածը, այս անգամ հաւաստելով, որ մեր գիտա-քննական հրատարակութիւնը բնա էլ «ինքնանպատակ» եւ «աւելորդ» չի եղել, այլ ունեցել է «առիթ», նպատակ եւ արդարացում...: Եւ դրանցում մինչեւ անգամ «դոյզն ինչ կասկած չունի» ու կարծէր՝ մինչեւ իսկ «ծպարտութիւն» է զգում, որ Դաւիթ-Բէկեան Սկզբնաղբիւրի ուսումնասիրման եւ հրատարակման գաղափարը իբրեւ գիտա-քննական բնագիր՝ մտայղացուել է նաեւ Հայաստանի հայագիտութեան կենտրոն հանդիսացող Մատենադարանում, ընդ որում՝ նոյնիսկ բնակա՝ ն համարելով այդ:

Խօսքը տանք իրեն.

«Վենետիկեան հրատարակութեան առիթը, ինչպէս տեսանք, Դաւիթ Բէկի գլխատրած ազատագրական շարժման 250ամեակն էր. նոյնն էր նաեւ Երեսնամյ Լ. Խաչերեանի, Հ. Ն. Խաչատրեանի եւ Լ. Ա. Խանլարեանի «արտասպաւնային»¹ ձեռնարկման շարժառիթը: Նրանց սկզբնական նպատակը եղել է՝ «գիտա-քննա-

¹ Այսինքն՝ Մատենադարանի Գիտական Խորհրդի կողմից ուսումնասիրութիւնների եւ հրատարակութիւնների Ծրագրում չէր նախատեսուած - Լ.Խ.:

կան բնագրի» հետ «հրատարակել սոյն սկզբնաղբիւրը զուգադիր արեւելահայերէն եւ ռուսերէն թարգմանութիւններով, ինչպէս նաեւ փաստաթղթերի եւ քարտէզների ցուցադրական Յանդուածով» (ԳԲ, էջ 22): *Դոյզն իսկ կասկած չունենք, որ Դաւիթ Բէկի Պատմութեան հրատարակման զաղափարը հայագիտութեան երկու կարեւոր կենտրոններում առաջացել է միմեանցից անկախ*: Մակայն, հանգամանքների բերումով, երեւանեան ձեռնարկման գիրք դառնալն ուշացաւ» («Բազմավէպ», էջ 417): Բայց այս կեղծապատիր ձեւացումը մի չքմեղանք է post factum, ինքնարդարացման դիտումով՝ պատասխանած լինելու համար այն բնական հարցումին, թէ ինչո՞ւ Մատենադարանում աշխատացուած մատենագրական Յուշարձանը ... յանկարծ տպագրում է Լոս Անջելըսում, ինչպէս եւ նրա աշխատասիրողի Լոս Անջելըսում հրատարակած, բայց Մատենադարանում հեղինակուած ուսումնասիրութիւններն ու բնագրային սկզբնաղբիւրները: Կարո՞ղ է պատահել, որ մարդիկ մտածեն՝ հեղինակին էլ են հալածել եւ նա հարկադրաբար տարագրութեան ուղին է բռնել: Մատենադարանի տնօրինութիւնը եւ Հայաստանի ղեկավարութիւնը չեն կարող նման «մեղքի» տակ ընկնել, քա՛ւ լիցի, ինչպէ՛ս թէ...

Տարօք, չենք կարող մոռանալ, երբ անհասկանալի հեշտութեամբ թոյլ արուած էր մեզ ընտանիքով Լոս Անջելըս վերաբնակութիւն հաստատելու, վերջին օրերին Մատենադարանի տնօրէն, ակադ. Լ.Խաչիկեանին դիմեցի, որպէսզի իմ հեղինակած անտիպ աշխատութիւններից մէկական օրինակ պատճենահանումներով հետս վերցնելու պաշտօնական թոյլտուութիւն տայ՝ կլօք կնիքի վաւերացումով, իսկ նա պատասխանեց.- Ո՛չ մի դէպքում, «ընկերները» (ԿԳԲ-ի եւ Կենտկոմի մարդիկ - Լ.Խ.) խորհուրդ չեն տալիս ինձ, որ ընդառաջեմ: Մարդիկ ի՞նչ կ'ասեն արտասահմանում. այդ ո՞նց է, որ Խաչերեանը տասնամեակներ շարունակ աշխատելով Մատենադարանում այդ բոլորը ստեղծել է Հայաստանում, բայց հրատարակել ... Լոս Անջելըսում»:

Մտիպուած, կեանքի վտանգումով, օղանաով թոնելուց առաջ, Մոսկուայի ԿԳԲ-ի քթի տակից հրաշքով փախցրեցի՞նք աշխատութիւններս՝ այն դէպքում, երբ ուրիշներ արուեստի գործեր, նկարներ, աղամանդներ, արժէքատու գորգեր, թանգարանային նմուշներ էին փախցնում «սիրելի Հայրենիքից»՝ ոմանք մեծագումար կաշառքներ տալով, ոմանք՝ իբրեւ «վստահուած հայրենասէր գործիչներ», որոնք ջրի ճամբայ էին դարձրել Հայաստան այցելութիւններ կատարելը, վասն «նուիրուածութեան» անարգել տանում էին...: Մեր հոգու վրայ միայն թեթուութիւն ու մխիթարութիւն զգացինք նաեւ հոգեւոր զաւակներիս փրկելով... եւ դարձեալ իմ ժողովրդին վերադարձնելով դրանք հրատարակուած տեսքով..., այո՛, թէ՛ կուզու Լոս Անջելըսում:

3. Գիտական բարոյականութեան հարցեր:- Ներել չենք կարող ընդդիմախօսի գործադրած յատուկ ջանքերը՝ մեզ գծտեցնելու համար Մխիթարեան Միարանութեան յարգարժան գիտնական Վարդապետների հետ, որոնց հետ միշտ էլ հոգեմտաւոր հաղորդակցման ու գիտական փոխյարաբերութիւնների մէջ ենք եղել հայագիտական մեր ամբողջ գործունէութեան ընթացքում: Բնաւ չենք կարող յօդուածագրի ազնիւ կեցուածքին եւ լրջութեանը վերագրել նրա այն ապաշնորհ նկրտումները, երբ արհեստական «հակադրութիւն» ու սէպ խրելու որոշակի դիտումով մեր բնագրագիտական ամէն մի դիտողութիւն-առաջարկութիւն-ճշդումը, որ գիտա-բանասիրական քննարկումներում ու վերլուծութիւններում միանգամայն պատշաճ եւ ընդունելի ձեւակերպումներով է ներկայացուած, Մխիթարեան այս

կամ այն Վարդապետի հարցադրման առնչութեամբ, իսկոյնեւեթ միտումնաւոր կերպով նա որակում է «կշտամբանք», «խրատ» կամ «դաս» տուող, «խստապահանջ ուսուցչի դեր» ստանձնող, «անողոր դատաւորի» պահուածք ունեցող եւ այլն, եւ այլն:

Մինչդեռ մեր գիտական առարկութիւններում ու դիտողութիւններում ամենայն պարկեշտութեամբ ու նաեւ բարեկրթութեամբ ենք վերաբերուել ոչ միայն Մխիթարեան Վարդապետների, այլեւ առհասարակ մեր բոլոր ընդդիմախօսների նկատմամբ, խստիւ պահպանելով շարադրանքի արտայայտչական գիտական նորմաները, ընդ որում՝ ո՛չ միայն խնդրոյ առարկայ «Դաւիթ Բէկ» աշխատասիրութեան, այլեւ մեր բոլոր ուսումնասիրութիւններում ու հրապարակումներում: Միշտ էլ ակնածանքով նշել ենք Մխիթարեան Հայրերի հայագիտական անուրանալի վաստակի ու հայ մշակոյթի զարգացման ոսկէֆոնդում նրանց ունեցած երախտիքի ու ծանրակշիռ ներդրումի մասին, այն էլ հրապարակային ճանաչումով ու շեշտադրումներով:

Ընդդիմախօսը, ցաւօք, ընկել է էժանագին էֆեկտի ետեից եւ ղեկավարուել «քսի տարու»՝ սաղրիչի նման անտեղի «գրգռելու» տգեղ եւ տղայամիտ մղումներով... (տե՛ս «Բազմավէպ», էջ 418. «Լ. Խաչերեանը Հ. Ս. Արամեանին կշտամբում է...», դարձեալ նոյն էջում՝ «... այդ դէպքում Լ. Խաչերեանը կարող էր *ամենայն իրաւամբ (sic!) կշտամբել նրան*» (իմա՝ նորից Հ. Ս. Արամեանին - Լ.Խ.): Պարզում է, որ մեր ընդդիմախօսը չի հասկանում, որ ո՛չ «իրաւամբ», ո՛չ էլ «յանհրաւի» կարելի է «կշտամբել» որեւէ մէկին հայագիտութեան (եւ առհասարակ գիտութեան) մէջ, իսկ «առարկել»՝ անշո՛ւշտ կարելի է եւ պէ՛տք է գիտական վերլուծութիւններում ու հիմնաւորումներում, որը, դժբախտաբար, բացակայում է ընդդիմախօսի բառապաշարում իր ամբողջ հակաճառութեան մէջ: Եւ կամ նոյն բնոյթի՝ «... սա չի խանգարել Լ. Խաչերեանին, որպէսզի ... *խրատի* Փեչիկեան Վարդապետին» (էջ 420 եւ այլուր): Ընդդիմախօսը դեռ չի բարձրացել այն ըմբռնողութեանը (անկախ իր տարիքից ու ձեռք բերած տիտղոսներից...), որ *գիտական մտածողութեան համար ո՛չ թէ անձերն են խնդրոյ առարկայ, այլ՝ պորթլէմները*, եւ եթէ հաստ լինէր, չէր համարձակուի իր յեղեղով եւ թիւր պատկերացումներով գրել առհասարակ իր ընդդիմախօսութիւնը այս մակարդակով: Նա պէ՛տք է իմանար, որ բնագրագիտական հարցերը քննելիս, հետազօտողի համար ամենեւին նշանակութիւն չունի *անձերի ինքնութիւնը*, այլ միայն՝ *հարցերի լուծման ճանապարհին նրանց գործադրած յարաբերական ճիգերի արդիւնաւտութիւնը կամ վրիպումը*: Այդ իսկ պատճառով, բոլորովին անտեղի են յիշեցումներն այն մասին, որ գիտէ՞ք, այս անգամ էլ Խաչերեանը քննադատել է *«բառական յայտնի պատմարան եւ աղբիւրագէտ Աշոտ Արքահամեանին»* («Բազմավէպ», էջ 420), նաեւ *«յայտնի պատմարան»* Աշոտ Յովհաննիսեանին, (բայց մոռացել է այս դէպքում ասելու, որ միաժամանակ «ակադեմիկոս» է..., տե՛ս «Բազմավէպ», էջ 420): Բնաւ էլ կարելու չէ նաեւ, բացարձակապէս ո՛չ մի նշանակութիւն չունի, թէ դիտողութիւնները կամ առարկութիւնները արուած են այս կամ այն հեղինակի *«կենդանութեան օրօք»*, թէ՞ «յետմահու»...: Յօդուածագրն թում է, թէ մանաւանդ «յետմահու» չի կարելի նրա այս կամ հարցադրումը վիճարկել աղբիւրագիտական կամ բնագրագիտական նոր փաստարկումներով...: Ինչպէ՛ս թէ՛ դա սրբապղծութիւն է «անքննելի» եւ «անձեռնմխելի» հեղինակութիւնների նկատմամբ...: Նման մօտեցումը գիտութեան մէջ ցաւալի եւ տխուր անդրադարձումն է անշուշտ տուալիտար մտածողութեան, որ այնքան անբաժնիւններ է գործել սովետական գիտութեան *նորմալ* զարգացման առաջընթացում...:

4. Ընդդիմախօսը «առարկում» է մեզ մինչև անգամ այն հարցում, թե ինչո՞ւ «Դալիթ Բէկ» մեր աշխատասիրութեան աւարտը նշել ենք 1977 թուականին, այլ, նրա «կարծիքով»՝ անպայման՝ Հ. Ս. Արամեանի գրքի հրատարակումից յետոյ՝ «1979» թուագրութիւնը ներկայացնէինք: Մեփական կանխակալ կարծիքները ուրիշներին փաթաթելու զարմանալի պարտադրողականութիւն ունի ստուերի մէջ պահուելու սիրող ընդդիմախօսը, որ միանգամայն նաեւ վրդովեցուցիչ է (տե՛ս «Բազմավէպ», էջ 417 եւ 419):

Հիասթափեցնենք իրեն. ինչպէս տպագիր խօսքով յայտնել ենք գիտական հասարակայնութեանը («Դալիթ Բէկ», էջ 65), *այդպիսին էլ եղել է իրականում*: Պարզում է՝ ամէն ինչում «վատ բան» գուշակելով, այս դէպքում եւս վերագրում է մեզ «խուսափումի ինչ-որ դիտատրութիւն»՝ Հ. Ս. Արամեանի գրքին իրագել լինելու մտքից...: Իսկ դա ի՞նչ կարելու է, երբ Հ. Ս. Արամեանը իր բնագրերը բանասիրական ուսումնասիրութեամբ հանդերձ նախապէս տպագրել էր «Բազմավէպ»ի 1972 եւ 1977 թուականների համարներում, որոնց հանգամանօրէն անդրադարձել ենք մեր աշխատասիրութեան մէջ եւ մեր դիտողութիւններն առաջադրել: Ամէն ինչում «յետին միտք» գտնելու եւ անհիմն ամբաստանութիւններ անելու ախտավարակ այս հոգեբանութիւնը, ցաւօք, չափազանց խոր արմատներ է գցել սովետական մարդկանց հոգիներում, որոնցից ձերբազատուելը այնքան էլ հեշտ չէ՝ մանաւանդ անագնի նպատակներ հետապնդելիս...: Ժողովուրդն իզուր չի ասում՝ մարդ ուրիշին ինչպէ՞ս է ճանաչում, ինչպիսին որ ի՛նքն է ...: Բա ինչ ասենք այն փաստին (ու նաեւ բազմաթիւ մեր պաշտօնական դիմումներին Հայաստանի Կենտրոնին եւ հրատարակչութիւններին), որ մեր «Դալիթ Բէկ» աշխատասիրութիւնը պաշտօնապէս քննարկման էր դրուել Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայում մեր նշած թուականին եւ հաւանութեան արժանացել՝ տպագրութեան յանձնարարականով, որը այնպէս էլ իրականացուել ԱՆՀՆԱՐԻՆ ԵՂԱԻ ...:

Բայց ահա երեք տեղում երեք անգամ անդրադառնում է այս անհեթեթ հարցին ընդդիմախօսը:

Առաջին անգամ. Խաչերեանը «1970ական թուականների սկզբներին կազմած բնագիրն ու նրա տարընթերցումները թողել է անփութախ, սրան կցել նոյն 70-ականներին գրած ծանօթագրութիւնները եւ 1979 թ. (1977) շարադրած ներածութիւնը» (հեղինակի ստորագրութեանը յաջորդում է «Երեւան ք. Մատենադարան, 1977 թ.» ծանօթութիւնը» («Բազմավէպ», էջ 417):

Երկրորդ անգամ. «... Յանուն իր «գիտա-քննականի գոյութեան արդարացման (1977) Լ. Խաչերեանն իր Ներածութիւնը բազմիցս վերագրել է 1977 թուականով ... իզուր է ... տեսք անում, թէ Հ. Ս. Արամեանի աշխատութեանը ծանօթ է 1972-1977թթ. Բազմավէպի էջերից, որ այդ աշխատութեան անունն էլ չգիտէ՝ որովհետեւ վերջինս տպագրուել է 1978 թ. Մայիսին...», իսկ ինքը իր ուսումնասիրութիւնը գրել է ահա՛ 1977թ.: Իզուր է, որովհետեւ...» («Բազմավէպ», էջ 419):

Հարցադրումն ինքնին անիմաստ է եւ ծիծաղաշարժ: Ինչո՞ւ «յանուն իր գիտա-քննականի արդարացման (1977) Լ. Խաչերեանն իր Ներածութիւնը թուագրել է 1977 թուականով» եւ ոչ՝ 1979 թուականով, ըստ ընդդիմախօսի: Այդ ի՞նչ «ճակատագրական» եւ «բախտորոշ» նշանակութիւն է տուել մեր աշխատասիրութեան աւարտի թուագրմանը, որ երեք անգամ էլ «իզուր է» ասելով կրկնկալով հետապնդում է մեզ...:

Եւ յանկարծ մոռանալով եւ ինքնահակասամբ ջրելով նախորդ երկու պնդումները, երրորդ կրկնաբանութեամբ դարձեալ անդրադառնալով այս վերին աստիճանի աննշանակ եւ անիմաստ հարցին, բոլորովին անհիմն վերագրում բարդում իր քննահան ըմբռնողութեամբ, նորից «իր համոզմամբ»... «Մովորաբար բնագրագէտները նախ կազմում են անհրաժեշտ բնագիրը, քննարկում օգտագործած բոլոր ձեռագրերի եւ տպագրերի ընձեռած նիւթը, այդ քննութեան հիման վրայ է շարադրում թէ բնագրագիտական առաջարան-ուսումնասիրութիւնը եւ թէ նոյնաբնոյթ (1977) ծանօթագրութիւնները: Այս գրքի քննութեան ընթացքում, սակայն, յանգեցինք այն համոզման (sic!), որ նախ գրուել է Ներածութիւնը, այնտեղ ձեռակերպուել են բնագրագիտական դրոյթները (1977), որից յետոյ բնագիրն ու նրա ձեռագրական նիւթը յարմարեցուել են պատրաստի տեսակէտներին (1977): Խորապէս համոզուած ենք (sic!)...» («Բազմավէպ», էջ 435):

Միայն ափսոսալ կարելի է, որ իր «խորը համոզումներով» այս անգամ էլ ՉԱՐԱՉԱՐ սխալում է ընդդիմախօսը նոյնիսկ մեր աշխատանքային ոճը ըմբռնելու հարցում եւս...:

5. Ընդդիմախօսը «մեղադրում» է նաեւ, թէ ինչո՞ւ «Դալիթ Բէկ» մեր աշխատասիրութեան գիտա-քննական բնագիրը հրատարակելիս մեր սկզբունքների մասին առանձին տեղում չենք խօսել:

1962 թուականից իվեր գիտա-քննական բնագրեր ենք լոյս ընծայել: Մեր հէնց առաջին հայագիտական գրքում, որ վերնագրուած է՝ «Գրչութեան արտեստի լեզուական-քերականական տեսութիւնը Միջնադարեան Հայաստանում» (Երեւան, 1962, 407 էջ), պարզել ենք առանձին ենթավերնագրի տակ (տե՛ս «Օգտագործուած Ձեռագրերի եւ նրանց բնագրերի պատրաստման հանգամանքների մասին», էջ 221-22) գիտա-քննական բնագրեր կազմելու սկզբունքները: Երկրորդ անգամ էլ անդրադարձել ենք այդ հարցին 1984 թուականին Լոս Անջելըսում հրատարակած «Յովհաննէս Երզնկացի. Հատարումն մեկնութեան քերականի» երկում (390 էջ)՝ հետեւեալ վերնագրի տակ. «Համադրուած Ձեռագրերը եւ Հրատարակութեան հանգամանքները» (տե՛ս էջ 73-78): Իսկ ամէն մի նոր հրատարակած գրքում նորից նոր մեր բնագրագիտական սկզբունքները կրկին պարզելու անհրաժեշտութիւն չենք տեսել, որովհետեւ մեր սկզբունքները չեն փոխուած...:

Անշուշտ ժպիտ առաջացրեց, երբ ընդդիմախօսի նախագիտելիքները կարդացինք «պարզ», «համեմատական» եւ «քննական» բնագրերի կազմման տարատեսակների մասին, որոնք, սակայն, ամենեւին կապ չունէին իր հակաճառութեան հետ... (տե՛ս «Բազմավէպ», էջ 427):

6. Մեր «Դալիթ Բէկ» աշխատասիրութիւնը, որի դատաւիեամանն է նուիրուած ընդդիմախօսի հակաճառութիւնը, ՉԲՆՆԱՐԿԵԼՈՒ ընդդիմախօսի ճարպիկ պատճառաբանութիւնները...: Նախ մեզ «մեղադրում» է հայերէնի շարադասական, շարահիսական «անհարբութիւններում»: Բերենք իր «փաստարկման» իւրովի եղանակը, որով «հիմնադրու» է...:

Այսպէս, մեր աշխատասիրութեան տիտղոսաթերքի վերնագրային ազդարարութիւնները յօդուածագիրը դարձրել է ... «սովորական շարադրանք» մեր խօսքի, եւ այն «հիմք» դարձնելով, ահա, «քննադատու» է մեզ: Տիտղոսաթերքի մեր ներկայացրած ընթերցումն է.

«Դ Ա Ի Ի Թ Բ Է Կ

ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գրառութեամբ՝ Հ. ՂՈՒԿԱՍ ՍԵՔԱՍՏԱՅՈՒ

Քննական բնագիրը եւ աշխարհաբար թարգմանութիւնը՝ ներածական ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրու- թիւններով հանդերձ՝ Բանասիրական Գիտութիւնների Դոկտոր, Փրոֆէսոր Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆԻ

Լոս Անճելըս

1988 թ.»

Բնագրագիտութեան իրեն «մասնագէտ» համարող ընդդիմախօսը այս ամբողջ վերնագրային ընթերցումը վեր է ածել մէկ խճողուած նախադասութեան, մտածելով նաեւ իր քմահաճ կէտադրութիւնը, ընդ որում չհասկանալով ամենեւին, որ վերնագրային ազդարարութիւնների միջեւ մեր թողած բացատները եւս «շարահիսական արժէք» ունեն...:

Այսպէս, նրա հրամցրած տարբերակում կարդում ենք.

«Դ-աիք Բէկ», (ի՞նչ իրաւունքով է դրել ստորակէտը - Լ.Խ.) Ընտիր պատմութիւն, (դարձեալ ստորակէտ է աւելացրել - Լ.Խ.) Գրառութեամբ (վերացրել է բոլորը) Հ. Ղուկաս Սեբաստացու, (նորից ստորակէտ է դրել - Լ.Խ.) Քննական բնագիրը եւ աշխարհաբար թարգմանութիւնը՝ Ներածական ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւններով հանդերձ՝ Բանասիրական գիտութիւնների Դոկտոր, Փրոֆէսոր Լ. Գ. Խաչերեանի, (դարձեալ ստորակէտ է աւելացրել - Լ.Խ.) Լոս Անճելըս, (նորից ստորակէտ է դրել - Լ.Խ.) 1988, (վերացրել է «թ.» ընթերցումը եւ աւելացրել ստորակէտ - Լ.Խ.) 211 մեծադիր էջ (այսուհետեւ ԴԲ): Առայժմ նկատենք,- արդէն պատրաստ է մեր ընդդիմախօսի ծուռ մեկնաբանութիւնը,- որ խորագրի այս շարադասութիւնը պարտաւորեցնում է հասկանալ, որ Դ-աիք Բէկն իր յօրինած պատմութիւնը թելադրել է Հ. Ղուկաս Սեբաստացի գրառողին, այդ պատճառով էլ այս բառերի կիրառելիութեան պարտադիր լինելու դէպքում (խկապէս՝ ի՞նչ է ուզում հայերէնով ասել - Լ.Խ.) կարելի էր վերնագրել «Ընտիր Պատմութիւն Դ-աիք Բէկի» ձեւով»¹ («Բազմավէպ», էջ 413):

¹ Եւ այդ տողերի հեղինակը շարունակում է «հիանալ» իր հայերէնով, առաջադրելով այսպիսի «գոհարներ» եւս լեզուամտածողութեան. «Հ.Ս.Արամեանը դեռեւս 1972ին լռելեայն պարզել է ճշմարտութիւնը» («Բազմավէպ», էջ 420): Եթէ անյարմար չլինի հարցնել, խօսքն ուղղենք իրեն. այ

Ահա ընդդիմախօսի քննարկման արատաւոր մեթոդի տիպական նմոյշ, թէ ինչպէս կարելի է (բայց բնագրագիտական քննարկման անբոյլատրելի զանգառութեամբ) նախապէս բնագրային ձեռնախնդումով կեղծ հիմք ստեղծել, յետոյ էլ «մեղադրականներ» շարել... յայտարարելով, թէ՛ ահա սա «շարահիսական անհարրութիւններից» է Խաչերեանի շարադրանքի, ուստի եւ խուսափումի դուր բացի նաեւ իր համար՝ այս անգամ պնդելով, թէ «Գրքի այս բաժնի (նկատի ունի արեւելահայերէն գրական թարգմանութիւնը - Լ.Խ.) վրայ աւելի ծանրանալ չարժէ, տեսանք (sic!), որ կազմողն այստեղ գործել է(՞) նոյն եղանակով՝ անփոյթ (՞), անխնամ (՞) եւ անբարեխիղճ (՞) ձեւով: Արեւելահայերէն աշխարհաբար թարգմանութիւնը քննելուց (sic!) նոյնպէս հրաժարում ենք...» («Բազմավէպ», էջ 436): Իսկ այս բաժինը զուգադիր բնագրի հետ միասին (67-162 էջեր) կազմում է համարեա կէսը գրքի:

Ընդդիմախօսի բնագրագիտական «վերլուծութեան» այս այսպանելի մեթոդը, որ շատ բնորոշ էր Հայաստանում ակադ. Աշոտ Յովհաննիսեանին, Փրոֆ. Աշոտ Աբրահամեանին եւ այլ «ճանաչուած» գիտնականներին, որոնց դէմ «անողոր դատաւորի նման» հրապարակաւ հանդէս ենք եկել բազմիցս, բնութագրել ենք իբրեւ «բանասիրական ձեռնածութիւն»..., որի կապակցութեամբ, ահա, «զանգառում» է նաեւ ընդդիմախօսը (տե՛ս «Բազմավէպ», էջ 425):

Ի դէպ, արձանագրենք նաեւ. ընդդիմախօսը նախապէս «հրաժարուել» էր քննելուց մեր աշխատասիրութեան նաեւ «Ծանօթագրութիւնների բաժինը», որը կազմում է ուղիղ 61 մանրատառ խառցուած էջեր (163-204), ըստ Լուսինեան շուրջ մէկ երրորդը գրքի: Այս բաժնի առնչութեամբ եւս նա շատ հանգիստ «ազատում» է իրեն, գիտէ՞ք ինչից՝ «զլխացաւանքից»..., գրելով առանց անյարմար զգալու. «Գիտա-քննականի» հիմնականում պատմագիտական-տեղագրական ծանօթագրութիւնների քննութիւնը կը նշանակի մտնել Միւնխաց ազատագրական պատերազմի պատմագրութեան եւ պատմագիտութեան խնդիրների մէջ, որ ներկայ գրախօսութեան ծրագրի մէջ չի մտնում...» («Բազմավէպ», էջ 435): Ի՞նչ լաւ է, հիանալի՝ «արդարացում» մեր գրադատի: Այդ դէպքում հարց տանք իրեն. ապա ի՞նչն է քննարկելու, ի՞նչ մնաց տակը ...:

Պարզում է, ընդդիմախօսի իսկ խոստովանութեամբ՝ մեր «Դ-աիք Բէկ» աշխատասիրութեան երկու վերջին բաժինները՝ ա) աշխարհաբար արեւելահայերէն թարգմանութիւնը եւ բ) պատմա-բանասիրական ու տեղագրական Ծանօթագրութիւնները քննութեան չեն առնուել ... իր իսկ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ պատճառով եւ բարարարել է միայն Ներածութեան բնագրագիտական-աղբիւրագիտական բաժնի «վերլուծութեամբ», որը կազմում է մէկ հինգերորդից էլ պակաս մասը («Դ-աիք Բէկ», էջ 25-63) մեր գրքի...: Այնուամենայնիւ միայն այդքանը «հիմք» է տուել ընդդիմախօսին, տենդագին կրքոտութեամբ բնովելու եւ «բանադրելու» մեր ամբողջ աշխատասիրութիւնը:

Դեռ կը շարունակենք անդրադառնալ ընդդիմախօսի դատաւիտեամբ՝ «Նե-րածութեան» մէջ առաջադրուած մեր բնագրագիտական դրոյթների ու աղբիւ-

յարգելի ընդդիմախօս, ինչպէ՞ս հնարաւոր է մանաւանդ աղբիւրագիտական հարցեր լուծել ու ճշմարտութեան յանգել... «ըրեւայն» եւ մեր հասկանանք...: Եւ կամ՝ «Օղի դէմ սուր ճօճող այս ամբողջ նախադասութիւնը...» («Բազմավէպ», էջ 420-421): Այդ որտեղի՞ց է իմացել, որ «նախադասութիւնը նաեւ օղի մէջ սուր ճոճել» կարող է...: Եւ այսպէս ուրիշներ...: Վստահաբար սրանք ռուսական լեզուամտածողութեան շորշուկներ են՝ հակաճանաչող ռուսական կրթութեան պատճառով...:

րագիտական հարցադրումների քննաձև մեկնաբանումներին, որոնք առաւելապէս արդիւնք են իր իսկ թերըմբռնումների, շփոթի եւ սխալ պատկերացումների:

7. «Դ-ախթ Բէկ» սկզբնաղբիւրի երեք խմբագրութիւնները եւ նրանց բնագրային առանձնայատկութիւնների շփոթումը ընդդիմախօսի հակասական եւ իրարամերձ պնդումներով: Առհասարակ նսեմացնելու եւ «անարժէք» համարելու համար մեր հրատարակած բնագրային ուրոյն խմբագրութիւնը, ընդդիմախօսը «գրկել» է նրան Դ-ախթէկեան ազատագրական շարժման պատմութեան նաեւ *Երրորդ եւ ամբողջական՝ աւարտուն խմբագրութիւնը լինելու բնագրագիտական անկապտելի իրատւոյնից*՝ անդեղով, թէ այն, իբր, որպէս ձեռագրական «քննաձև ընդօրինակութիւն» է ստեղծուել «Ապրոյեանի ընտանիքի պատուէրով»՝ ընդառաջ զնալով նրանց «ցանկութեանը», այն էլ ով ո՛վ՝ Մխիթարեան գիտուն Վարդապետներից մէկի ձեռքով...: Ի դէպ, հարկ է նշել սկզբիցեւեք, որ մեր ընդդիմախօսը անընդհատ շփոթում է բնագրային խմբագրութիւնը ձեռագրական ընդօրինակութեան հետ՝ յաճախ ձեռագրագիտական այս ըստ էութեան տարբեր հասկացութիւնները կիրառելով մէկը միսի փոխարէն...: Այս անգամ էլ ընթերցումների որակական տարբերութեամբ զատորոշուող մեր հրատարակած խմբագրութիւնը, ի հեճուկս նաեւ Մխիթարեան Վարդապետների (Հ. Մ. Ազեբեանի, Հ. Ե. Փեչիկեանի) «նոյնական» է համարում վեներտիկեան Ընդարձակ կոչուած Ձեռագրի հետ: Այս կապակցութեամբ գրում է. «... Դ-ժուար չէ ենթադրել, որ 1759 թ. առաջ Մխիթարեան որեւէ միաբան Հ. Ղ. Սեբաստացու մաքրագիր օրինակից արել է մի արտագրութիւն...: Դիւրին եւ ժողովրդական գրաբարով» (ուշադրութիւն դարձրէք այս բառերի վրայ - Լ.Խ.) արուած ընդօրինակութիւնը (sic!) նախատեսուած էր Մխարանութեան հետ սերտ կապեր ունեցող զմիտնարմակ Ապրոյեան ընտանիքի համար...» («Բազմավէպ», էջ 416): Այս տողերից պարզուած է, որ ընդդիմախօսը դեռեւս վերահասու չի եղել ձեռագրագիտական այն ըմբռնմանը, որ «*գիրին եւ ժողովրդական*» ընթերցումով բնագրային տարբերակը միանգամայն նոր «խմբագրութիւն» է ենթադրում, եւ ո՛չ թէ՝ «ընդօրինակութիւն» ... «խիստ գրաբարեան ընթերցում ունեցող Հ. Դուկաս Սեբաստացու մաքրագիր օրինակի համեմատութեամբ...: Բայց այս թիւր ըմբռնութեամբ նա հակադրուել է ոչ միայն Խաչերեանին, այլեւ առաջին հերթին Հ. Ե. Փեչիկեանին (որ հաւաստում է, թէ այդ խմբագրութիւնը «Մխիթարեան հայրերու գրի առած պատմութիւններն են...») եւ բնագրագիտական իր համեմատութիւնների ժամանակ բազմիցս զուգադրել է Հ. Դուկաս Սեբաստացու ինքնագիր Համառօտ եւ Ընդարձակ տարբերակների հետ իբրեւ *առանձին խմբագրութիւն*... («Բազմավէպ», 1938, Թ. 6-9, էջ 175-182), նաեւ Հ. Ս. Արամեանին, որ իբրեւ յաւելուած առանձին ներկայացրել է այդ խմբագրութիւնը իր աշխատասիրութեան մէջ...:

Մեր ընդդիմախօսի թոյլ տուած բնագրագիտական միս՝ երկրորդ շփոթն այն է քննարկուող քաղուածքում, որ Ընդարձակ խմբագրութիւնը նա պարզապէս «մաքրագիր օրինակ» է համարում Հ. Ղ. Սեբաստացու «սեւագիր օրինակի» (այսինքն Համառօտի), երբ այդ մասին ամենայն յստակութեամբ բացատրութիւն էինք տուել մինեւոյն բնագրի *երկրորդ խմբագրութիւնը* լինելու վաւերականութեամբ. «Երկրորդ փուլը սոյն տարբերակի (իմա՝ Համառօտի) վերամշակուած եւ առաւել ծաւալուն խմբագրութիւնն է, որը դարձեալ պահուած է Վեներտիկի Մխիթարեանների մատենադարանում «620» համարի տակ: Այն համարեա կրկինն է «Նախագաղափար» տարբերակի...» («Դ-ախթ Բէկ», էջ 36): Իսկ «մաքրագիր օրինակ» ասելով հաս-

կացում է միայն *սեւագրից կատարուած սոսկական ընդօրինակութիւն առանց վրիպումների ու ջնջումների*...:

Ի դէպ, մեր ընդդիմախօսը այնքան չի կարողացել յարթահարել իր ըմբռնողութեամբ մատենագրական այս Յուշարձանի խմբագրութիւնների տարբերակումը, որ *եղակէտային նշանակութիւն* ունի ճիշդ կողմնորոշման ու զննահատումների համար, դարձեալ եւ կրկին անգամ կրկնում է նոյն սխալը. «Չամչեան Վարդապետն իր Հայոց Պատմութեան մէջ օգտագործել է այս երկրորդ օրինակը (կամ «մաքրագիրը»՝ ըստ իր նախորդ ձեւակերպման - Լ.Խ.) որից ծագում է նաեւ Գուլամիթեանի տպագրի հիմք ձեռագիրը» («Բազմավէպ», 1989թ., էջ 415), այսինքն երրորդ՝ աւարտուն խմբագրութիւնը, որ մենք զիտա-քննական բնագրով հրատարակել ենք: Նոյն վարկածը, որ հայագիտութեան մէջ արդէն իսկ մենք փարատել ու ճշդել ենք, դարձեալ ու նորից կրկնում է նա շարունակ (համեմատի՛ր նաեւ «Բազմավէպ», էջ 419, 420, 421 եւ այլուր...):

Այնուամենայնիւ անելանելի խճճումների մէջ ընկած մեր ընդդիմախօսը նաեւ յաւակնում է «խորհուրդնե՛ր» տալ մեզ, թէ ինչպէս կարելի էր եւ պէտք էր Խաչերեանը իր «զիտա-քննական» բնագիրը կազմէր...: Լսե՛նք իրեն. «... Մխիթարեան Մխարանութիւնից ստանալով Պատմութեան մաքրագիր տարբերակը վերահրատարակելու իրաւունքը (sic!) առաջարկին եւ բնագրին պէտք էր կցել արեւելահայերէն եւ ռուսերէն թարգմանութիւնները, յաւելուած փաստաթղթերն ու քարտզները եւ այս ամբողջը հրատարակել Երեւանում...» («Բազմավէպ», էջ 417): Ամենատարատոցն այս «սպահանջների» մէջ, սակայն, ոչ թէ այն է, որ նա անհարկիօրէն կրկնում ու վերարտադրում է բնագրային հրատարակման ՄԵԲ՝ *ծրագիրը եւ իրականացումը*, այլ՝ նաեւ քօղարկուած ակնարկ է անում իր բնագրային անըմբռնողութեամբ, որ իբր «զլացել ենք» մեր զիտա-քննական բնագրի հրատարակութեան (ինքը շփոթաբար «վերահրատարակութիւն» բառն է գործածում) համար «իրատուք» ձեռք բերէինք Մխիթարեան Մխարանութեան ո՛չ մի հրատարակութիւն մենք չենք «վերահրատարակել»...: Այդ կարող են հաստատել նաեւ իրենք՝ Մխիթարեան գիտնականները: Ահա թէ բնագրագիտական ու ձեռագրագիտական թերըմբռնումները որքան զաւեշտական դրութեան կարող են մատնել մեր «զրադատին», եւ թերեւս այդ պատճառով էլ ուզեցել է անյայտ մնալ առհասարակ...:

8. Ընդդիմախօսի պատկերացումը բնագրագիտութեան մասին չափազանց թերի է եւ անբարար. նա կարծում է, որ «այս զիտութեան հիմնական նպատակը հին կամ նոր *բնագրերի նախնական* հեղինակային տեսքի կամ վիճակի բացայայտումն ու վերականգնումն է» («Բազմավէպ», էջ 416, ընդգծումը այս դէպքում իրն է - Լ.Խ.): Այս բնութագրումը միակողմանի եւ թերի է, որովհետեւ չի ծածկում բնագրագիտութեան ընդգրկած բոլոր ոլորտները, այլ միայն՝ մի ոլորտը, որը յայտնի է իրեն: Յատկապէս այն չի պատշաճում այնպիսի Սկզբնաղբիւրի հրատարակման դէպքում, որպիսին մեր լոյս ընծայած զիտա-քննականն է: Իրականում մենք ունենք այստեղ Դ-ախթէկեան շարժման պատմութեան գրառող, իսկ *հեղինակը, կամ աւելի ճիշդ՝ հեղինակները այդ շարժման անմիջական ղեկավար մասնակիցներն են*: Դրանով պիտի բացատրել, որ հայագիտութեան մէջ յաճախ սոյն Յուշարձանը ճանաչուել է ոչ թէ գրառողի՝ Հ. Դուկաս Սեբաստացու անունով, այլ Դ-ախթէկեան շարժման կենտրոնական ղեմերից *Ստեփանոս Շահումեանի* անունով, որ այս հերոսապատումը թելադրողներից միայն մէկն է եղել...: Գրառումն

Էլ ոչ թե մէկ բնագիր է, այլ՝ երեք, ընդ որում երեք ուրոյն մշակումներով, այն է՝ առանձնակի երեք խմբագրութիւններով: Մրանցից իւրաքանչիւրի համար կարելի է առանձին գիտա-քննական բնագրեր կազմել, եթէ առկայ են Չեռագրական տարրերը ընդօրինակութիւններ: Տուեալ՝ մեր Սկզբնաղբիւրի դէպքում առաջին եւ երկրորդ խումբագրութիւնները չունեն ձեռագրական տարրեր ընդօրինակութիւններ, այլ ընդամենը գրառողի Համառօտ եւ Ընդարձակ խմբագրութիւնների մէկական Չեռագրեր: Հետեւաբար՝ սրանցից գիտա-քննական բնագրեր ԱՆՀՆԱՐԻՆՆ է պատրաստել, լուսագոյն դէպքում՝ համապատասխան արտատպումներ կարելի է հրատարակել, ինչպէս Հ. Ս. Արամեանն է վարուել: Մինչդեռ երրորդ՝ Սկզբնաղբիւրի մեր խմբագրութիւնը հինգ ձեռագրական ընդօրինակութիւններ ունի եւ վեցերորդը Գուլամիրեանի հրատարակութեան հիմքում է ընկած, ուստի եւ հնարատու է նրանց գիտա-քննական բնագիրը կազմել, ընդ որում ոչ թէ «հեղինակային տեսքի վերականգնման» հասնելու, այլ երրորդ խմբագրութեան ընթերցումների լեզուա-ոճական ճշգրտութեանը յանգելու նպատակն իրականացնելով: Եւ եթէ կ'ուզէք՝ մեզ, իբրեւ բնագրագէտի, այնքան էլ չի հետաքրքրել «հեղինակային կարեւորութիւնը», որքան առաւել ամբողջական բնագրային հերոսապատումը Դաւիթբէկեան շարժման, որպիսին այդ երեք խմբագրութիւնների մէջ մեր լոյս ընծայածն է...: Հասկացողին շատ քարել:

Հետեւաբար՝ սխալ չափանիշով է մօտեցել մեր հրատարակած աշխատասիրութեան նկատմամբ ընդդիմախօսը, երբ կարծել է թէ մեր խնդիրն է եղել «վերականգնել նախնական՝ հեղինակային տեսքը» բնագրի...: Այստեղից էլ անհեթեթ հետեւութիւն է արել մեր հրատարակած Սկզբնաղբիւրի մասին, երբ պնդում է, թէ «հեղինակի ինքնագրի առկայութեան դէպքում նրանից ծագող բոլոր միւս օրինակներն արժէզրկուած են...» («Բազմավէպ», էջ 416):

9. Մեր աշխատասիրութեան մէջ ձեռագրագիտական փաստարկներով վերականգնել ենք ճշմարտութիւնը Արգար Գուլամիրեան հրատարակչի եւ նրա լոյս ընծայած այս Սկզբնաղբիւրի հետ առնչուած հարցերի մասին:

Արգար Գուլամիրեանը հայ մշակոյթի այն երախտաւորներրից է, որ դեռես 1871 թուականին, Վաղարշապատում, ընդամենը մէկ Չեռագրի արտատպութեամբ՝ հրատարակեց «Դաւիթ Բէկ» բնագրի երրորդ խմբագրութիւնը, որ վաղուց արդէն դարձել էր գրադարանային հագուագիտ գիրք: Այն իր շատ կարեւոր դերն էր կատարել մեր ազգային ոգորումների, գրականութեան, արուեստի, կինոյի ստեղծագործական ներշնչումներում՝ ազգային զարթոնքի եւ մարտական ոգու ամրապնդման ու թեւածումների առումներով:

Արգար Գուլամիրեանի հրատարակութեան հիմքում ընկած Չեռագիրը, տարաբախտաբար, ունեցել է բացթողումներ, անընթեռնելի բառեր ու բառակապակցութիւններ, երբեմն եւ պարբերոյթներ (ինչ որ անսովոր երեւոյթ չէ ձեռագրական աշխարհում), որպիսիք մեր գիտա-քննական բնագրում վերականգնել եւ ուղղել ենք թոյր Չեռագրերի քննական համեմատութեամբ:

Սակայն մինչ մենք հանդէս կը գայինք գիտա-քննական բնագրով, մի շարք ուսումնասիրողներ յանիրաւի մեղադրականներ էին բարդել այս ազգի ու երախտաւոր հրատարակչի հասցէին՝ անուանարկումներով ու բնովումներով, «անագնութեան», «կեղծատրութեան», «խաբէութեան» անհիմն կասկածներով, ամենեւին գլխի չընկնելով, իբրեւ ձեռագրագէտ, որ դրանք ոչ թէ հրատարակչի դիտատրութեամբ արուած «մեղանշումներ» են, այլ պարզապէս հիմք Չեռագրի

ընթերցման արտացոլքն են...: Նման անհարկի վերագրումներով աղբիւրագիտութեան մէջ հանդէս են եկել առանձնապէս ակադ. Աշոտ Յովհաննիսեանը եւ Փրոֆ. Աշոտ Աբրահամեանը, նրանց հետեւողութեամբ նաեւ ուրիշներ:

Մեր դիտողութիւններում ու ճշգրտումներում ուրիշ բան չենք արել, իբրեւ ձեռագրագիտական փաստարկումների եզրակացութիւն եւ ընդհանրացում, քան այն, որ վերականգնել ենք հրատարակչի բարի անունը միաժամանակ: Այսքան միայն (տե՛ս «Դաւիթ Բէկ» մեր աշխատասիրութեան 29, 39-63 էջերը):

Ջարմանալ միայն կարելի է ընդդիմախօսի դատումի համար. «Իսկ Խաչերեանի պաշտամունքը (?) Գուլամիրեանի եւ նրա հրատարակութեան նկատմամբ հասնում է սրբացման (") նրան դարձնում է հայ բնագրագիտութեան սուրբը (""))» («Բազմավէպ», էջ 424): Եւ կամ՝ «Գուլամիրեանի սրբացումը կամ կանոնացումը ("")) կատարուել է ...» («Բազմավէպ», էջ 424-425): Ասենք միայն՝ նման պնդումները ամենեւին աղերս չունեն բնագրագիտական հարցերի լուսարանման հետ եւ բնաւ չեն վկայում իբրեւ լուրջ բանասէրի դատումներ:

Բայց այնուամենայնիւ ուզում ենք անդրադառնալ այստեղ մի երկու հարցի:

Աշոտ Յովհաննիսեանի անձնական Չեռագիրը, որ այժմ պահուած է Մատենադարանում 10579 համարի տակ, ամենայն մանրակրկիտութեամբ ու համակողմանիօրէն ձեռագրագիտական քննութեան ենք ենթարկել՝ ապացուցելով միանգամ ընդմիշտ, որ այն Գուլամիրեանի հրատարակութեան հիմքում ընկած Չեռագիրը Չէ՝ ամենեւին, Ո՛չ էլ նրանում եղած ջնջումները տողերի վրայից գիծ քաշելով կամ էջերը ռետինով իսպառ ջնջելով որեւէ պաշտօնական՝ «գրաքննիչի» վաւերականութիւնն ունեն: Դա զուտ առասպել է: Չեռագիր մատենաները, իբրեւ պատմամշակութային զանձեր, մեր ամբողջ մատենագրութեան պատմութեան ընթացքում Ո՛չ ՈՒՔի կողմից «գրաքննութեան» չեն ենթարկուել ու ջնջումներ եւ յաւելումներ արուել «գրաքննիչի» կողմից...: Յանգել ենք ձեռագրագիտական այն հետեւութեան, որ դրանք անհատական բնոյթ ունեն եւ համապատասխանեցուած են Գուլամիրեանի հրատարակութեան ընթերցումների հետ, ընդ որում ջնջումները եւ յաւելումները կատարուած են հենց այն տեղերում եւ այն չափերով, որ տեղերում եւ որ չափերում Աշոտ Յովհաննիսեանի Չեռագիրը իր ընթերցումներով Չի ՀԱՄԷՆՎԵՆՈՒՄ Գուլամիրեանի հրատարակութեան ընթերցումների հետ...: Եւ որովհետեւ ամենայն պատասխատուութեամբ եւ «անողոր դատարարի խտուրեամբ» ենք բացայայտել այս ճշմարտութիւնը ձեռագրագիտական համեմատութիւնների վրայ, ընթերցողի մօտ տարակոյսի նշոյլ անգամ չթողնելու համար գուզադիր ընթերցումները եւ ջնջումները հատուածների (ինչպէս եւ յաւելումների) ներկայացրել ենք նաեւ ամենաճշգրիտ միջոցով՝ լուսանկարահանումներով... (տե՛ս «Դաւիթ Բէկ», էջ 60, 61, 62, 63): Այս բոլորով հանդերձ թութակի նման կրկնում է մեր անձանօթ մնալ ցանկացող ընդդիմախօսը նոյն սխալ ու մտացածին վերագրումները, ինչ որ ակադ. Աշոտ Յովհաննիսեանը եւ Փրոֆ. Աշոտ Աբրահամեանը թոյլ են տուել՝ աւելացնելով նաեւ նորերը՝ առաւել անլուրջ ու կեղծապատիւ պնդումներով: Այսպէս, քննարկուող Չեռագիրը ո՛չ մի տեղ, բացարձակապէս ո՛չ մի անգամ ո՛չ մի «ստորագրութիւն» չունի կարծեցեալ «գրաքննիչի», բայց իր հակաճառութեան մէջ անհարկի «պաշտպանութեամբ» յայտարարում է, այն էլ «համոզմունքով» (ի դէպ, յաճախ տեսանք յընթացս մեր պատասխանի իր վկայակոչած սեփական «համոզմունքների» կշիռը...), որ, իբր, գրքով արուած ջնջումների «մելանը յար եւ նման է գրաքննիչի մելանին» («Բազմավէպ», էջ 422), հեթական սո՛ւտ՝ առանց կարմրելու ասուած...: Իր այս սուտ վկայութեան վրայ

կանգնելով՝ դարձեալ դիմում է հետտորական հարցումով՝ «խկ ի՞նչ են գրաքննիչի ստորագրութիւնները բոլոր էջերի լուսանցներում» («Բազմավէպ», էջ 422), երբ թէկուզն *նմուշի համար* որեւէ մէկի ո՛չ մի «ստորագրութիւնը» ՉԿԱՅ ձեռագրում...:

10. Սկզբնաղբիւրի խմբագրութիւնների քննարկման ընթացքում առարկել էինք Հ. Ե. Փեչիկեանին, ինչպէս նաեւ Հ. Ս. Արամեանի եւ Փրոֆ. Աշոտ Աբրահամեանի թոյլ տուած ձեռագրագիտական մեղանշումների առնչութեամբ:

Որքանո՞վ է լուրջ ընդդիմախօսի «վիճարկումը» մեր այն հարցադրման նկատմամբ, երբ Սկզբնաղբիւրի երեք խմբագրութիւնների բնագրագիտական մանրակրկիտ համեմատութեամբ, առարկելով այս անգամ Հ. Ե. Փեչիկեանին, յանգել ենք հետեւեալ կարեւորագոյն եւ որոշիչ եզրակացութեան. «Անվիճելի իրողութիւնն այն է սակայն, որ *իրականում անկայ է միայն մէկ գրառող՝ յանձին Դուկաս Մերաստացու, որն ստեղծել է երկու տեքստ Դաւիթ Բէկի գլխատրած Միւնիքի ազատագրական շարժումների պատմութիւնն ընդգրկող՝ Համառօտ եւ Ընդարձակ տարբերակներով*» («Դաւիթ Բէկ», էջ 44):

Ընդդիմախօսը անմիջապէս շարունակում է.

«*Աւելի զանշտական (sic!) է ամբողջովին ընդգծած այս նախադասութեան շարունակութիւնը (իմա՝ Խաչերեանի - Լ.Ն.). «Իսկ Ը տարբերակը՝ ոչ թէ այդ շարժումների պատմութեան նոր գրառում է, ինչպէս կարծում է Փեչիկեանը, եւ վերջինիս պարզապէս կրկնում է Փրոֆ. Աբրահամեանը, այլ Ընդարձակի վերջնական խմբագրումն է Մխիթարեան գիտնականների կողմից՝ նախատեսած լինելով այն հրատարակութեան համար*» («Բազմավէպ», էջ 420):

Այս տողերին հանդիպելիս անաչառ ընթերցող բանասէրը կը հարցնի բնականաբար. այդ ինչի՞ց երեւաց, որ Խաչերեանի բնագրագիտական եզրակացութիւնը Սկզբնաղբիւրի խմբագրութիւնների մասին «զանշտական» է, երբ ընդդիմախօսը մինչ այդ չէր համարձակուել բնագրագիտական հերքումով մեր հետեւութեան «զանշտական» լինելը ապացուցել, որ յետոյ էլ շարունակութիւնը Խաչերեանի արտայայտած տեսակէտի համարէր նաեւ «աւելի՛ զանշտական»...: Սա ի՞նչ գիտական շարադրանքի տրամաբանութիւն է: Պիտի բարի լինէր ընդդիմախօսը կամ «հերքելու», կամ «վիճելի» համարելու Խաչերեանի բնագրագիտական հարցադրումները, եւ ո՛չ թէ անապացոյց ու անձնապաստան յայտարարութիւններ անէր՝ «աւելի՛ զանշտական...»:

Ի դէպ, այս նոյն Փրոֆ. Աշոտ Աբրահամեանին բազմիցս առարկել ու վիճարկել ենք յընթացս բնագրագիտական մեր վերլուծութիւնների «Ներածութիւնում»: Ընթացի մերժել ենք բնագրագիտութեան մէջ աննախադէպ այն եզակի փորձը նրա, երբ ոչ ազնիւ ձեւով Վենետիկից ձեռք բերած ՄԵԶԵՆԱԳԻԻՐ օրինակը Համառօտ խմբագրութեան՝ տպագիր էր հրամցրել հայագիտութեանը «Սկզբնաղբիւրի...» արժէքով (տես «Բանբեր Հայաստանի Արխիւների», 1973, Թ. 2): Ինչո՞ւ այդ մասին ծպտուն անգամ չի հանում ընդդիմախօսը, այլ միայն յիշեցնում է բանից անտեղեակ ընթերցողին՝ «բաւական ականաւոր պատմաբան եւ աղբիւրագէտ» լինելը Աբրահամեանի, որին քննադատել համարձակուել է Խաչերեանը...:

Առարկել ենք նաեւ Հ. Ս. Արամեանին: Դիտել տուել ենք, որ Չեռագիրը բնագրագիտութեան մէջ համարում է պատմա-մշակութային *անեղծելի* մատե-

նագրական միատր: Այն հրատարակելու դէպքում անշուշտ թոյլատրում է եւ պէ՛տք է բանասիրական ու աղբիւրագիտական ամէն տեսակի դիտողութիւններ, առարկումներ ու հակասութիւններ մատնացոյց անել, որ շատ կարեւոր է հայագիտութեան համար, *սակայն այդ բոլորը միայն Ներածական խօսքում, սողատակերում կամ ծանօթագրութիւններում, առանց միջամտիս լինելու գրչագրի կառոյցին, որը նուիրականացած է պատմականօրէն եւ հեղինակային առումներով*: Սկզբունքային այս դրոյթից մեկնելով մենք վիճարկել էինք Հ. Ս. Արամեանի մօտեցումը, երբ Համառօտ տարբերակը արտատպելիս ներկայացրել էր այն գիտական հասարակայնութեանը ըստ իր հայեցողութեան, ըստ կամս՝ երկատելով մէկ միասնական կառոյց ունեցող ձեռագրական բնագիրը: Այդ մասին գրել ենք մեր աշխատասիրութեան մէջ.

«Ինչ վերաբերում է բանասէր Հ. Ս. Արամեանի հրատարակած Համառօտ այս տարբերակին, ապա պիտի ասել, որ նա սոսկ արտատպութիւնը լինելով բուն իսկ ձեռագրի, որը երբեք չի ունեցել այլ ընդօրինակութիւններ, միանգամայն ներշնչում է արժանահաւատութիւն: Բայց մենք ուզում ենք առարկել նրան մի հարցում. սոյն բնագրի բանասիրական բաժնում հեղինակը ուշագրաւ դիտողութիւններ ունի անշուշտ նրա ներքին ծալքերի վերաբերեալ՝ պատումի յէնքի բացայայտման ու մեկնաբանման ուղղութեամբ: Դրանք սոսկ բանասիրական արժէք ներկայացնող կոստիւմներ ու ենթադրութիւններ են միայն, որոնք, մեր կարծիքով, չպէտք է դրդէին նրան «վիրահատման» ենթարկելու բնագիրը՝ վերածելով այն ըստ իր ճաշակի եւ պատկերացման: Որքան էլ հաւանական վարկածներ առաջ քաշուեն իրենց տրամաբանական համոզականութեամբ այս կամ այն բնագրի ենթադրեալ կառուցուածքի կամ բաժանումների մասին, բնագրագիտական տեսակէտից ո՛չ որի իրատւոյթ չի տրուում անցեալից մեզ հասած որեւէ ձեռագրական բնագիր, հակառակ նրա հեղինակին, վերածել ըստ իր հայեցողութեան: Բայց Հ. Ս. Արամեանը, ցաւօք, իր իսկ նախաձեռնութեամբ նախնական Համառօտ այս տարբերակը երկու մասի է բաժանել՝ հետեւեալ ձեւով.

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՅԻՈՑ

Ա. օրինակ

(Մտնդրն. Ս. Ղազարու, Չեռագիր քիւ 2685)

Մասն առաջին

(Պատում Ստեփան Շահումեանին)

«Բազմավէպ», 1977, Թ. 1-2 301:

Մասն երկրորդ

(Պատում Տէր Աւետիք քահանայի)

«Բազմավէպ», անդ, էջ 312:

(տես «Դաւիթ Բէկ» մեր աշխատասիրութիւնը, էջ 36):

¹ Այսինքն մեր աշխատասիրութեան մէջ հրատարակուած՝ երրորդ խմբագրութիւնը:

Մեր այս հարցադրման դեմ ես «վիճում» է ընդդիմախօսը՝ պնդելով թե ոչ միայն կարելի է, այլև պարտաւոր է բնագրագետը «միջամտել»...: Նա սետով սպիտակի վրայ գրում է. «Եթէ ձեռագիրն ինքն է արտաքին ու ներքին յատկանիշներով բաժանում երկու մասի, բնագրագետը պարտաւոր է (ընդգծումը այս դէպքում ընդդիմախօսինն է - Լ.Խ.) անել այդ բաժանում - «վիրահատութիւնը» («Բազմավէպ», էջ 418): Մեծատառով դարձեալ կ'ասենք՝ Ո՛Չ: Սա դուր կը բացի ԿԱՄԱ-ՅԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ձեռագրական բնագրերի հրատարակման գործում, որ ԱՆԹՈՅԼԱՏՐԵԼԻ է:

11. Գիտական ճշմարտութեանը ոչնչով չեն օգնում նաեւ դրուատանքները, անհիմն ջատագովութիւնները կամ անհարկի «պաշտպանութիւնները», այլ ընդհակառակն, առաւել եւս խճճում են արդէն իսկ բացայայտուած իրողութիւնների վաւերական հաստատումները եւ մոլորեցնում ընթերցողին:

Այդպիսիք են, ցաւօք, մեր ընդդիմախօսի բոլոր անհարկի ջատագովումները Սկզբնաղբիւրի խմբագրութիւնների պարզաբանումներում մերժուած տեսակետների հեղինակների հասցէին՝ իրենց ճշացող խնկարկումներով:

Այսպէս, նա գրում է.

«... Հ. Ս. Արամեանը յանգել է բաւականաչափ եւ անառարկելիօրէն ապացուցում հետեւեալ եզրակացութիւնների.

«ա. ... Ըստ ներքին փաստերի (՞) նա պարզել է նաեւ, որ այս օրինակը երկու մաս ունի. ա. «Պատում Ստեփանոս Եւսեփեանի», բ. «Պատում Տէր Աւետիք քահանայի». այսպիսի հրատարակչական ենթախորագրերով էլ տպագրուել է Մերաստացի Վարդապետի աշխատութեան սեւագիրը (ՊԳ, էջ 119-45)» (տե՛ս «Բազմավէպ», էջ 415):

Բայց «անառարկելիօրէն ապացուցում» այս եզրակացութիւնը մենք մերժել ենք իրրեւ «ձեռագրական վիրահատութիւն» եւ ձեռագրագիտութեան մէջ անընդունելի նախափորձ (տե՛ս «Դաւիթ Բէկ», էջ 38-39):

Տեսնենք նաեւ «անառարկելիօրէն ապացուցում» յաջորդ թուարկումը ընդդիմախօսի.

«բ. Նոյն 1736-7 տարիներին նոյն վարդապետն (իմա՛ Հ. Ղ. Մերաստացին - Լ.Խ.) իր սեւագրի հիման վրայ շարադրել է Պատմութեան մաքուր տարբերակը՝ ձեռ. Ս. Ղազար, թիւ 620...» («Բազմավէպ», էջ 415):

Առարկել եւ մերժել ենք այս «եզրակացութիւնը եւս»՝ ճշդելով բնագրագիտութեան համար, որ Վենետիկի 620 համարի Ձեռագիրը ոչ թէ սոսկական «մաքուր տարբերակն» է սեւագիր կոչուածի, այլ՝ *Երկրորդ խմբագրութիւնն* է գրառումի, որը թէ՛ նոր հարցադրումների ու դրուագների ընդգրկումով եւ թէ՛ ծաւալային կրկնութեամբ որոշակիօրէն տարբերում է սեւագրից, հետեւաբար *Երկրորդ խմբագրութիւնը «մաքրագրութիւն» բնութագրելը միանգամայն ՄԻՄԱ է բնագրագիտական առումով*» (տե՛ս «Դաւիթ Բէկ», էջ 36-38):

Երրորդ «անառարկելիօրէն ապացուցում»ը.

«գ. Չամչեան Վարդապետն իր Հայոց Պատմութեան մէջ օգտագործել է այս երկրորդ օրինակը (իմա՛ «մաքրագիրը» - Լ.Խ.), որից ծագում է նաեւ Գուլամիրեանի տպագրի հիմք ձեռագիրը...» («Բազմավէպ», էջ 415):

Այս «եզրակացութիւնը» եւս «անապացուցում» եւ միանգամայն անընդունելի ենք համարել, որովհետեւ բնագրային ընթերցումներով Գուլամիրեանի հիմքում ընկած Ձեռագիրը որոշակիօրէն տարբեր է թէ՛ այսպէս կոչուած «սեւագիր» եւ թէ՛ «մաքրագիր» բնագրերից՝ բնութագրելով այն, բնագրագիտական լրիւ իրատւոյնով, որպէս Երրորդ խմբագրութիւն (տե՛ս «Դաւիթ Բէկ», էջ 39-63):

Չորրորդ եւ վերջին «եզրակացութիւնը».

«դ. Այս մաքրագիր օրինակից է, որ (մէջբերում է Հ. Ս. Արամեանի գրքից - Լ.Խ.) «կատարում են ընդօրինակութիւններ ալ. հաւանաբար՝ Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 3297, 4598 եւ 6835 ձեռագրերը, աղբիւր դառնալով յետագային՝ Ա. Գուլամիրեանցի հրատարակութեան» («Բազմավէպ», էջ 415):

Այս կարծիքը եւս բնագրագիտական տուեալների հետ չհամընկնելով՝ ըստ էութեան առարկել եւ հիմնովին մերժել ենք (տե՛ս «Դաւիթ Բէկ», էջ 39-55):

Նկատենք. ընդդիմախօսի անվերապահ պնդումների առնչութեամբ նա Ո՛Չ ՄԻ հարցում սեփական կարծիք կամ տեսակետ չունի: Ուստի յանկարծ զգում է, որ այնուամենայնիւ հարկաւոր է «մի քիչ չափաւորել» արժէտումները՝ այս անգամ գրելով. «... Միտքարեան Վարդապետի եզրակացութիւնները, որ *մեր համոզմամբ* ճշգրիտ են եւ *անհրաժեշտ չափով փաստարկուած*» («Բազմավէպ», էջ 415): Այստեղ արդէն չկայ «անառարկելիօրէն ապացուցում» պնդումը, այլ վերապահութիւնը ցոյց է տրուած «մեր համոզմամբ» զգուշացումով, որը առնչուած է արդէն բնագրագիտական իր գիտելիքների եւ փորձի սահմանափակութեան հետ... եւ գործածել է «անհրաժեշտ չափով փաստարկուած» առաւել սքափ արտայայտութիւնը:

Բայց դարձեալ՝ ներքուստ տանջելով իրեն այն միտքը, որ արդէն հրապարակում առկայ է Խաչերեանի աշխատութիւնը, կարիք է զգում նորից անցնելու անվերապահ պնդումների խնկարկումների համար. «... Հ. Ս. Արամեանը 1978 թ. գարնանը, իր եղբայրակիցներ Հ. Տէր-Ներսէսեանի, Հ. Սահակ Ընծեմեանի, Հ. Լեւոն Ձեփեանի եւ Հ. Տաճատ Եարտըմեանի օգնութեամբ... *լուծեց ԻԸ դ. մեր պատմագրութեան այս կարեւոր յուշարձանի գիտական բոլոր խնդիրները*» («Բազմավէպ», էջ 415-416):

Եւ յանկարծ՝ կտրուկ մի նահանջ եւս է կատարում ու արդէն զարմացնում ընթերցողին. «Վենետիկեան հրատարակութիւնը, կրկնում ենք, աղբիւրի բնագրագիտական հարցերը պարզեց (sic!). *բայց նրա հետ կապուած աղբիւրագիտական եւ բանասիրական աշխատանքները չաւարտեցին*» («Բազմավէպ», էջ 417): Բա ո՞ր մնացին «անառարկելիօրէն ապացուցում եզրակացութիւնները», երբ «չեն աւարտուել աղբիւրագիտական եւ բանասիրական աշխատանքները»...: Նման յեղեղութիւնը նոյնպէս ցուցանիչ չէ ամենեւին գիտական մտածողութեան...

Մինչդեռ այս առնչութեամբ արդէն գրել ենք մեր աշխատասիրութեան մէջ, որի արձագանքն ենք զտնում նաեւ ընդդիմախօսի այս հարկադրական խոստովանութեան մէջ.

«Սպասելի էր, անշուշտ, որ բանասէրը (իմա՛ Հ. Ս. Արամեանը - Լ.Խ.) անդրադառնար այս առթիւ հայագիտական մամուլում բարձրացուած բնագրագիտական բազմաթիւ վիճելի հարցերի քննութեամբ եւ տար, աղբիւրի ընձեռած տուեալների հիման վրայ թէկուզ, այս կամ այն բնագրային ճշգրտման վերաբերեալ

հնարատր լուծումը, որը կը նպաստէր, բնականաբար, մատենագրական սոյն Յուշարձանի գիտա-քննական ամբողջական բնագրի պատրաստման աշխատանքներին: Դրանք լիովին շրջանցել է իր ուսումնասիրության մէջ՝ սահմանափակուելով գերազանցապէս ժամանակաշրջանի պատմական իրադարձութիւնների շարադրանքով: Ո՛չ էլ օգտագործում ամատենագիտական ցանկում մատնացոյց արել հայագիտական մամուլում արժարժուած բնագրագիտական հարցերի շուրջ լոյս տեսած աշխատութիւնները, որ ներելի չէր անշուշտ, Սկզբնաղբիւրի ուսումնասիրման ամբողջական պատկերացումը ներկայացնելու տեսակետից» («Դաւիթ Բէկ», էջ 38-39):¹

Մեր ընդդիմախօսը ինքնահակասամբ վերջապէս խոստովանում է նաեւ, թէի թերասացութեամբ. «Մեր համոզմամբ (***)
Ն. Մ. Արամեանի հրատարակութեան միակ թերութիւնը պատմագիտական բնոյթի ծանօթագրութիւնների չգոյութիւնն է...» («Բազմավէպ», էջ 416):

12. Ընդդիմախօսի բարձրացրած մի հարցի էլ անդրադառնանք եւ վերջացնենք:

Գուլամիրեանի տպագրութեան ընթերցումների շուրջ բնագրագիտական լուրջ բանավէճ մղելիս Փրոֆ. Աշոտ Արրահամեանի եւ ակադ. Աշոտ Յովհաննիսեանի քննաձեռն մեկնաբանութիւնների եւ յանիրաւի մեղադրականների վնդդիմախօսը դիտումով, ամէն ինչում մեզ հակաճառելու տենդով բռնուած ընդդիմախօսը շփոթում եւ անճրկում է: Անկարող լինելով դարձեալ «պաշտպանութեան» տակ վերցնելու նրանց՝ որպէս պարզապէս «անպտուղ բանավէճ» մղող է յայտարարում մեզ, պնդելով միաժամանակ, որ իբր «ամենաքստմնելի» մեղքն ենք գործել, երբ Աշոտ Արրահամեանին ակնարկել ենք «ձեռագրաեղծիչ» դիպուկ մակդիրով:

Ընդդիմախօսը գրում է. «Մակայն այս ամբողջ անպտուղ բանավէճի մէջ ամենաքստմնելին (sic!) այն է, որ Խաչերեանը նոյն մեկնաբանութիւնների ընթացքում, երկու տեղում Ա. Արրահամեանին կոչել է ձեռագրաեղծիչ...» («Բազմավէպ», էջ 423):

Պատասխանենք իր անտեղի վրդովմունքին ու զարմանալուն. ըստ երեւոյթին, ընդդիմախօսը չգիտի (կամ ձեռագրում է թէ չգիտի), որ «ձեռագրաեղծիչներ» միշտ էլ եղել են, կան եւ կը լինեն ե՛ւ անցեալում, ե՛ւ ներկայում, ե՛ւ ապագայում...: Դա յայտնի է ձեռագրագիտութեամբ զբաղուող ամէն մի մասնագէտ բանասէրի համար:

¹ Ի դէպ՝ առնուազն անգնութիւն է վեճեցնելու հայերի կողմից, երբ դեռնա Գիտութիւնների ակադեմիայի Հասարակական բաժանմունքի հայագիտական «Պատմա-բանասիրական հանդէս»-ի էջերում 1974 թուականի համար 1-ում (201-219 էջերում), «Բանավէճեր եւ Քննարկումներ» բաժնում հանդէս էինք եկել «Դաւիթ Բէկի «Ընտիր պատմութեան» «Նախագաղափար» օրինակի մասին» խորագրով մեր յօդուածով, Հ.Ն.Մաշատեանի համաստորագրութեամբ: Այնտեղ գիտական հասարակայնութեանը իրազեկ էինք դարձրել. «Տողերիս հեղինակները դեռեալ 1969 թ. ձեռնամուխ էին եղել առանձին գրքով, ի յաներժացումն Դաւիթ Բէկի կողմից գլխատրուած Միւնիքի ազատագրական շարժման 250-ամեակի, այդ սկզբնաղբիւրի գիտա-քննական բնագրի կազմման աշխատանքներին» (անդ, էջ 201; Հարց տանք նրանց՝ քարոյական ինչ իրատուքով վերոյիշեալ վեճեցնելու վարդապետները մետասաներորդ ժամին հապճեպօրէն կցել են Մամուլ Արամեանի աշխատասիրութեանը նաեւ Գուլամիրեանի տպագրած խմբագրութիւնը, որի գիտա-քննական բնագրից, համապատասխան ձեռագրերի ընդգրկմամբ, արդէն իսկ պատրաստել էինք հրատարակութեան եւ գիտական հասարակայնութեանը իրազեկ էինք պահել այդ մասին, ինչպէս ակնբեր է մեր սոյն բանավիճային գրութիւնից: Հետեւութիւնը բողոքում ենք բանասէր ընթերցողներին...:

Տուեալ դէպքում՝ հետաքրքիրը եւ հանելուկայինը այն է, որ Արրահամեանի «Բանբեր Հայաստանի արխիւները» 1972, Թ. 3-ում տպագրուած իր յօդուածում վիճելի միեւնոյն հատուածը հետեւեալ տեսքն է ունեցել, առանց որեւէ «խմբագրումի». «Եւ եղեն կամաւ ստրուկ այլագգեաց, որպէս եւ յառաջն, որք մինչ ցայծմ մնացին ի յիշխանութեանց» (էջ 87): Մենք եւս մեր յօդուածում նոյն ընթերցումն էինք ընկալել (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», Թ. 1, 1974, էջ 216): Իսկ ներկայում ընդգծուած ընթերցումը ջնջուած է Աշոտ Յովհաննիսեանի Ձեռագրում: Նշենք նաեւ, որ այս տեղի է ունեցել «Բանբեր Հայաստանի արխիւների» 1972 թուականի տպագրուած Աշ. Արրահամեանի յօդուածի եւ «Պատմա-բանասիրական հանդէս»-ի 1974, Թ. 1-ում զետեղուած մեր քննախօսութիւնից յետոյ. բայց թէ ո՞ւմ կողմից եւ ի՞նչ հանգամանքներում - այդ հարցով մենք չէ, որ պէտք է զբաղուենք: Ուստի եւ բացառուած պէտք է համարել այն ենթադրութիւնը, որ այդ փոփոխութիւնները ինչ-որ «գրաքննիչի», եւ ո՛չ ձեռագրաեղծիչի, միջամտութեան «ապացոյցն» են հանդիսանում (տե՛ս «Դաւիթ Բէկ», էջ 62-63):

Ընդդիմախօսը թող բարի լինէր «հակախատ» բերելու վասն իր «պաշտպանալիներին» գոնէ չքմեղացնելու: Բայց ՉՈՒՆԻ, որտեղի՞ց բերի...:

Դրա փոխարէն, նման դէպքերում, «հակայարձակման» անցնելը պաշտպանութեան լուսազոյն միջոցն է համարում ընդդիմախօսը, ուստի նա՛ է «կեղծիքների» ամբաստանութեամբ մեզ մեղադրում: Նրա պատասխանն է. «Այս առիթով պարտաւոր ենք ներկայացնել (՞) գրախօսուող գրքի ունեցած եղծման (՞) բազմաթիւ (՞՞) փաստերից մէկը...» («Բազմավէպ», էջ 423):

Ահա թէ ո՞ւմ հետ գործ ունենք:

«... Աւելի անմեղ չէ մի այլ կեղծիք», - շարունակում է նա, կարծէք թէ, ըստ իր դատումի, կարող են նաեւ «անմեղ կեղծիքներ» էլ լինել...:

Ո՞րն է մեր «աւելի անմեղ չեղող կեղծիքը»:

Մէջբերում է կատարում մեր «Դաւիթ Բէկ» աշխատասիրութիւնից.

«Գուլամիրեանի հրատարակութիւնն ունի «Անուանք գորապետացն եւ գորացն Դաւիթի ի գանազան տեղիս» խորագիրը (էջ 76), որը չունի Յովհաննիսեանի ձեռագիրը» (տե՛ս թ. 41ր, ձեռ. 10579, «Դաւիթ Բէկ», էջ 63):

Ապա իր ինքնութիւնը թարցնող «ամօթխած» ընդդիմախօսը պնդում է.

«Իրականում ձեռագրի այդ էջում խորագիր կայ (sic!). «Այսրիկ էին գորավարք եւ գորապետք Դաւիթ բէկին, մինչ յամուրն Շնիէր» («Բազմավէպ», էջ 423):

Նաեւ հոռետրական հարցումով դիմում է բանից անտեղեակ ընթերցողին.

«Բնագրագիտութեան ո՞ր սկզբունքով է առաջնորդուել մեր հեղինակը»... («Բազմավէպ», էջ 423):

Պատասխանում ենք՝ միանգամայն ճշմարիտ սկզբունքով, ԱՌԱՆՅ ԱԽԷԼ ԿԱՍ ՊԱԿԱՍ «ԱՆՍԵՂ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ»...:

Հիմա բանասեր ընթերցողի ուշադրությունն ենք հրահրում գուգադիր բնագրական սոյն համեմատությունների վրայ.

Գուլամիրեանի բնագիրը

Յովհաննիսեանի Չեռագիրը

ԱՆՈՒԱՆՔ ԶՕՐԱՊԵՏԱՅՆ ԵՒ ԶՕՐԱՅՆ

ՉԻՔ:

ԴԱԹԻ Ի ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԻՍ

Այսոքիկ էին գորավարք եւ գորապետք

Այսոքիկ էին գորավարք եւ գորապետք

Դ-աւիք Բէգին մինչ ի յամուրն Շնհէր...

րապետքն Դ-աւիք Պէկին, մինչ

էր յամուրն Շնհէր...

Ընդդիմախօսի «բնագրագիտական ձեռնածությունը» միանգամայն ակնբախ է. տեքստային ընդհանուր շարակարգից պոկելով երկու տող՝ ուզում է ծախսել վերնագրի տեղ, այն դէպքում, երբ այդ նոյն ընթերցումը առկայ է եւ Գուլամիրեանի բնագրում իբրեւ շարագիր ընթերցում...:

Դժուար է պատկերացնել՝ մի՞թէ կարելի է այնքան յանդգնություն ունենալ, որ անյայտ մնալ ցանկացող մեր ընդդիմախօսը փորձի «մոլորեցնել» նոյնիսկ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան բանասերներին եւս՝ յանձինս «Բազմավէպի» խմբագրութեան...:

Հետետրին անելը դարձեալ բողոնում ենք անաչառ ընթերցողին:

Առաւել շոինդով ու «տպաւորիչ» դարձնելու համար իր հակաճառությունը, ընդդիմախօսը նեղություն է կրել եւ վերջում մի քանի էջով մեր կազմած գիտաբնական բնագիրը «նորից կազմել»՝ ցոյց տալու համար, որ իր կազմածը «աւելի ստոյգ» է քան մերը: Այնուամենայնիւ *նա չի կարողացել ի յայտ բերել թէկուզեւ ՄԷԿ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԲԱՌԻ սխալ կամ աղաւաղուած ընթերցում մեր կազմածում, որ դոյզն ինչ չափով արժէքագրկէր գիտաբնական բնագիրը...*:

Իսկ իր ձեռագրական համեմատությունների ճշդութեանը, անկեղծ ասենք, հաւատք ամենեւին չենք ընծայում, որովհետեւ իր աշխատանքի ոճին բնորոշ են «բնագրագիտական ձեռնածությունները», որոնց բազմիցս հանդիպեցինք յընթացս մեր Պատասխանի, ոչ էլ, տարաբախտաբար, հնարաւորություն ունենք կրկին ստուգելու գրչագիր Չեռագրերը, որոնք արդէն չեն գտնուում մեր տրամադրութեան տակ..., թէեւ դրանք բազմիցս ստուգուել են մեր աշխատասիրութեան տպագրությունից առաջ:

Հ Ա Տ Ո Ր Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՊԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ԵՐ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԱՐԽԻՎ

И.К.КУСИКЯН, Очерки исторического синтаксиса армянского литературного языка, Изд. Академии наук СССР, Москва, 1959г.

Յ.Կ.ԿՈՒՄԻԿԵԱՆ. Ակնարկներ գրական հայերեն լեզուի պատմական շարահիստության:

Վաղուց էր զգացում հայերենի պատմական շարահիստության ուսումնասիրության անհրաժեշտությունը: Հայերենի տարբեր փուլերի շարահիստության ստատիկ փնտհայտական և կարագրական ուսումնասիրություններ քիչ չեն հրատարակվել վրայ, ինչպես՝ Ստ. Պարասանեանի «Գործնական քերականության» երկրորդ հատորը՝ «Համաձայնությունը» (որտեղ քննության են առնում միայն գրաբարի լեզուական իրողությունները, 1869 թ.), ակադ. Ստ. Մալխասեանցի «Գրաբարի համաձայնությունը» (1892), Յար. Թումանեանի «Հայոց աշխարհաբար լեզուի համառոտ համաձայնությունը» (1911), պրոֆ. Մ. Աբեղեանի «Աշխարհաբարի շարահիստությունը» (1912), պրոֆ.-դոկտ. Գ. Մեսլի «Հայոց լեզուի շարահիստություն» (1937), եւ դոցենտ Վ. Առաքելեանի «Շարահիստությունը» (արդի հայերենի լեզուական փաստերի վրայ գրում, հ. Ա., 1959) աշխատությունները, էլ չենք խօսում գրաբարին վերաբերող շարահիստական այն հարուստ դիտողությունների մասին, որոնք սփռում են դասական հայերենի մեր խոշորագույն քերականների ձեռնարկներում: Ասում ենք պետք է անլուսնել ման այն, որ պատմա-համեմատական լեզուաբանության կարկառուն ներկայացուցիչ եւ միաժամանակ խոշոր հայագետ Անտուան Մեյլեն, ի տարբերություն վերը յիշած հեղինակների, առաջին անգամ դասական հայերենի շարահիստական իրողությունները վերլուծության է ենթարկել պատմա-համեմատական լեզուաբանության տեսանկյունից:

Սակայն հայերենի պատմական շարահիստության ուսումնասիրությունը, որը պետք է ընդգրկի հայերենի զարգացման բոլոր փուլերը, առաջին անգամ տրուում է պրոֆ. Յ.Կ. Կուսիկեանի վերջերս լույս տեսած «Գրական հայերենի պատմական շարահիստության ուրուագծեր» արժեքատու աշխատությանը: Հեղինակը սկզբից-եւեթ խոստովանում է ձեռնարկած հետազոտության ամբողջ բարդությունն ու դժուարությունը, նշելով, որ «եթե նկատի ունենանք գրաւոր տուեալների ժամանակագրական հսկայական շրջանակը (աւելի քան 1500 տարուայ) եւ ձեւաբանության մէջ, հետեւաբար ման ընդհանրապէս հայերեն համակարգում կատարուած զգալի փոփոխությունները, ապա հասկանալի կը լինի, որ ամբողջական պատմական շարահիստության ստեղծման համար նախապատրաստական աշխատանքը հնարաւոր կը լինի իրագործել միայն մի շարք հայագետների հաւաքական ջանքերով» (էջ 3): Այդ պատճառով հեղինակը իր առաջ համեստ նպատակ է դրել՝ «նշել հայերենի շարահիստության զարգացման նշանախտները (կոնտուրները)»՝ նկարագրելով նրա առանձին կողմերը պատմական տեսանկյունից: Բայց նոյնիսկ նման հարցադրումը եւ նրա լուծումը կապուած է չափազանց բարդ ու կնճոռոտ

երևոյթների լուսարանման հետ, մանաւանդ, երբ նկատի ունենանք, որ դա առաջին խիզախ եւ, պէտք է ասել նաեւ՝ յաջողուած փորձն է հայագիտութեան մէջ:

Գրախօսուող աշխատութիւնը բաղկացած է Առաջաբանից. «Հայերէնի պատմական շարահիսութեան ուսումնասիրութեան խնդիրներն ու մեթոդները» հատուածից, «Հայերէնի հնագոյն շրջանի շարահիսութեան մասին», «Հինգերորդ դարի հայերէնի շարահիսութեան մասին», «Փոփոխութիւններ հայերէնի շարահիսութեան մէջ 6-12-րդ դարերում եւ նրանց բնույթը», «Միջին հայերէնի շարահիսութեան մասին (13-16-րդ դարերի շարահիսութեան հիմնական գծերը)», «Արդի հայերէնի շարահիսութեան մասին (արեւելեան տարբերակը)» գլուխներից, որոնք իրենց հերթին ստորաբաժանում են համապատասխան ենթագլուխների եւ հատուածների:

Պատմական շարահիսութեան ուսումնասիրման խնդիրներն ու մեթոդները քննելիս, հեղինակը գիտական պատշաճ գնահատական է տալիս 18-20-րդ դարերում հանդէս եկած այն քերականներին, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են հայերէնի շարահիսութեան զարգացման տարբեր կողմերին: Ըստ որում նրանց դիտողութիւնները մեծ մասամբ յանգում են հետեւեալին. յիշեալ քերականները բնութարարում են սոսկ նրանով, որ նշում են դասական հայերէնի շարահիսական այս կամ այն երեւոյթի խախտումը կամ բացակայութիւնը միջին հայերէնում, եւ կամ՝ միս կողմից, արդի հայերէնին նուիրուած քերականական ձեռնարկներում ու մենագրական աշխատութիւններում պարզապէս արձանագրում են շարահիսական երեւոյթների ընդհանրութիւններն ու տարբերութիւնները դասական հայերէնի նկատմամբ: Գրախօսուող աշխատութեան հեղինակը առանձնապէս բարձր է գնահատում այն հայագետներին, որոնք իրենց աշխատութիւններում փորձեր են կատարել լուսարանելու դարերի ընթացքում տեղի ունեցած շարահիսական փոփոխութիւնները (օրինակ, Ա. Այտընեանին, Ս. Պալասանեանին, Ստ. Մալխասեանցին, Հր. Աճառեանին, Մ. Աբեղեանին, Ա. Մեյլին, Ի. Կարստին եւ ուրիշներին), ինչպէս նաեւ բարբառագետներ Զ. Պատկանեանին, Ս. Սարգսեանցին, Լ. Ստեբանցին, որոնց երկերում քիչ չեն այնպիսի դիտողութիւններ, որոնք այս կամ այն կերպ ակնարկում են դասական հայերէնի կամ միջին հայերէնի շարահիսական երեւոյթների վերապրուկների առկայութիւնը այս կամ այն բարբառում: Նկատենք, որ այս բոլորը, անշուշտ, միայն առանձին տուեալներ կարող են հաղորդել հայերէնի պատմական շարահիսութեամբ զբաղուողին, որոնք թէև շահեկան են, բայց չեն կարող լուծել այն խնդիրները, որոնք ծառանում են հատագոտողի առաջ:

Պրոֆ. Յ. Կուսիկեանը միանգամայն իրաւացի կերպով ընդգծում է նաեւ, որ սովետական հայագետներին՝ հայերէնի պատմական շարահիսութիւնը ուսումնասիրելուն մեծապէս խանգարել է Ն.Յա. Մառի այսպէս կոչուած «լեզուի նոր ուսմունքը»: Բանն այն է, որ հակագիտական այս «ուսմունքի» դրոյթները, սխալ եւ աղճատուած ձեւով ներկայացնելով լեզուի զարգացման ընդհանուր պրոցէսն ու նրա օրինաչափութիւնները, ժխտում են լեզուի պատմականութիւնը, խզում նրա տարբեր ստատիկ փուլերի միջեւ եղած կապերն ու յաջորդականութիւնը: Աւելին. լեզուի դասակարգայնութեան բանաձեւումը, իր հերթին, յանգեցրեց այն բանին, որ «աւատական լեզուն» յայտարարուած դասական հայերէնի՝ զբաբարի նկատմամբ արհամարհական եւ նուաստացուցիչ վերաբերմունք ցուցաբերուեց. հասկանալի է, որ նման պայմաններում բացառում էր հայերէնի պատմական շարահիսութեան մասին որեւէ լուրջ ուսումնասիրութիւն կատարելու հնարաւորութիւնը:

Հայերէնի պատմական շարահիսութեան ուսումնասիրութեան իր եղանակն ու դրոյթները շարադրելիս, պրոֆ. Կուսիկեանը ելնում է ճիշդ նախադրեալներից եւ գիտական հաստատուն դիրքերից: Իր հետագոտած առարկան նա պատկերացնում է իր ամբողջ խորութեամբ ու լայնութեամբ. «Պատմական շարահիսութեան հիմնական խնդիրները, - գրում է պրոֆ. Կուսիկեանը, - պէտք է դիտել նախադասութիւններում բառակապակցութիւնների փոփոխութիւնների հետագոտման, ինչպէս եւ քերականական կանոնների կամ շարահիսական օրէնքների փոփոխութիւնները ուսումնասիրելու մէջ: Պատմական շարահիսութեան մէջ պէտք է հետագոտուեն նորմաների փոփոխութիւնների որոշակի միտումները՝ ինչպէս բառակապակցութիւններում, այնպէս էլ պարզ եւ բարդ նախադասութիւնների կառուցումներում» (էջ 6): Այս առթիւ հեղինակը զգուշացնում է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել նաեւ այն փաստերը, որոնք ցոյց են տալիս լեզուի քերականական կառուցումների դանդաղ, աստիճանական փոփոխութիւնը: Նա պահանջում է, որ պատմական շարահիսութեան ուսումնասիրութեամբ բացայայտուի այն իրողութիւնը, թէ պատմական մի շարք դարաշրջաններում յատկապէս լեզուի ո՛ր կողմերն են հանդէս բերել առաւել կայունութիւն փոփոխութիւնների նկատմամբ՝ մի կողմից, իսկ միւս կողմից՝ ցոյց տրուի, թէ շարահիսական ինչպիսի՜ երեւոյթներ այս կամ այն չափով փոփոխութիւնների են ենթարկուել դարերի ընթացքում: Հարցի լուսարանումը դեռ այսքանով էլ չի սպառում. հեղինակը արդարացի կերպով գտնում է, որ շարահիսական երեւոյթների փոփոխութիւնները չպէտք է դիտել իբրեւ ինքնապարփակ եւ ինքնամպատակ՝ որպէս այդպիսին, այլ այդ փոփոխութիւնները անհրաժեշտ է քննել եւ ուսումնասիրել իբրեւ արդիւնք լեզուի զարգացման ներքին օրինաչափութիւնների, այլ կերպ ասած՝ տուեալ շարահիսական երեւոյթների եւ նորմաների ճշգրտման ու կատարելագործման տեսանկիւնից: Եւ իրօք, այս պահանջը այնքան կարեւոր եւ ելակէտային նշանակութիւն ունի, որ դրանով հետագոտուող առարկայի շարադրանքին գիտական լուրջ բնույթ է հաղորդում: Հեղինակը արդարացի է նաեւ այն հարցում, երբ պնդում է, որ լեզուի զարգացումը տեղի է ունենում անհաւասարաչափ կերպով՝ ինչպէս ժամանակագրական տարբեր փուլերում շարահիսական երեւոյթների, այնպէս էլ լեզուի առանձին կողմերի փոփոխութիւնների տեմպերի տեսակէտից: Ելնելով այս ճիշդ դրոյթից, պրոֆ. Կուսիկեանը գիտական ամենայն բժախնդրութեամբ ուշադիր կերպով հետեւում է հայոց լեզուի զարգացման ամբողջ բարդ եւ վերին աստիճանի հակասական ընթացքին՝ համակողմանի մօտեցում ցուցաբերելով լեզուական այս կամ այն երեւոյթը լուսարանելիս:

Սակայն հայերէնի (եւ ո՛չ միայն հայերէնի) պատմական շարահիսութեան հարցերը հնարաւոր չէ լուծել ինքնին՝ մեկուսացուած ձեւով, առանց ձեւաբանութեան հետ նրա ունեցած սերտ աղբրի: Աւելին. շարահիսութեան զարգացումն ու փոփոխումը զուգորդում են ձեւաբանութեան զարգացմանն ու փոփոխութեանը, իսկ շատ դէպքերում էլ պայմանաւորում են վերջինով: Եւ եթէ այսօր գրագէտ հայը դժուարանում է կարդալ եւ հասկանալ 1500 տարի առաջ կենդանի գործածուած դասական հայերէնը, սպա դրա պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ արդի հայերէնի ձեւաբանութեան եւ շարահիսութեան արմատական տարբերութիւնը հին հայերէնից. բոլոր բառերը նա կարող է ըմբռնել (որովհետեւ հայերէն են եւ դեռ այսօր էլ կազմում են արդի հայերէնի բառային կազմի հիմնական մասը), բայց չի կարող հասկանալ բառերի եւ բառակապակցութիւնների, ինչպէս նաեւ բարդ նախադասութեան մէջ նրա բաղադրիչ մասերի փոխարարբերութիւնը միմեանց նկատմամբ: Այս առումով զբախուող հեղինակի մօտեցումը նոյնպէս արդարացուած է. նա ամբողջ

նիքի ուսումնասիրությունը կատարում է հայերենի ձևաբանության մեջ տեղի ունեցած տեղաշարժերի ու փոփոխությունների մեկնաբանման հետ զուգահեռ:

Պետք է նկատել, որ շարահիսաական փոփոխությունների մասին խօսելիս, հեղինակը առաջին շատ ծանրացել է նախադասության ներսում բառակապակցությունների ուսումնասիրության վրայ, քան բուն նախադասությունների (պարզ թե՛ բարդ) տարբեր տիպերի ու տեսակների բարեշրջության եւ նրանց առանձնայատկությունների հաշուառման եւ վերլուծության: Ինչպես յայտնի է, շարահիսութեան առարկան է հանդիսանում ոչ միայն բառակապակցությունների, այլև նախադասության տարբեր կառուցումների եւ տիպերի ուսումնասիրությունը: Ի դեպ նշենք, որ հեղինակը պարզ եւ բարդ նախադասությունների ուսումնասիրման հարցը դնում է, բայց դրա լուսաբանությունը չի ստանում սպառնիչ բնույթ: Այդ առթիւ նա գրում է. «Պարզ նախադասությունների, բարդ համադասական եւ բարդ ստորադասական նախադասությունների տիպերի փոփոխությունները պետք է բացայայտուեն այն նպատակով, որպեսզի ցայտ տրուի, թե նախադասությունների կառուցումը ինչպիսի միջոցներ այս կամ այն պատճառով ընկել են (դուրս են մղուել գործածությունից - Լ. Լ.) եւ, ընդհակառակն, այդ միջոցներից որո՞նք ոչ միայն պահպանուել, այլև տուել են իրենց բողոքումները» (էջ 7):

Ինչպես տեսնում ենք, հեղինակի հարցադրումը չափազանց կարեւոր է եւ առանցքային նշանակություն ունի պատմական շարահիսութեան տեսակետից, սակայն ամբողջ աշխատության շարադրանքի մեջ շատ քիչ տեղ է յատկացում, այն էլ ընդհանուր ձևով, միայն համադրության կարգով, յիշեալ հարցի լուսաբանմանը: Մեզ թույլ է, որ այս էական խնդրի համակողմանի եւ հանգամանալից հետազոտմանը խանգարել է աշխատության սեղմ ծառայել՝ իր շոշափած վիթխարի թեմայի նկատմամբ:

Կարեւոր է նշել, որ հայոց լեզուի զարգացման իւրաքանչիւր ստատիկ վիճակի շարահիսական քննությունը կատարելիս, հեղինակը ուշադիր հետազոտության է դիմում գրաւոր արտայայտում տուեալ լեզուի եւ նրա նկատմամբ բարբառների բողած ազդեցության փոխարարբերություններին: Այդ նշանակում է, որ հեղինակը հետամուտ է լինում մեր լեզուի դիմամիկ զարգացման ընթացքին ոչ թէ մեկուսացում ձևով՝ լեզուական շրջապատից ու միջավայրից կտրուած պայմաններում, այլ հենց այդ միջավայրի հետ սերտօրէն շաղկապում ու աղերսակցութեան մեջ:

Աւելին. աշխատության յաւելադիր արժանիքներից մէկն էլ այն է, որ հեղինակը հայոց լեզուի պատմական շարահիսութիւնը շարադրելիս յաճախ է դիմում այդ լեզուն կրող ժողովրդի պատմական ճակատագրին, նրա հանգուցային դրուագներին, որոնք, իրենց հերթին, լոյս են սփռում այլ կերպ անբացատրելի լեզուական այս կամ այն երեւոյթների ըմբռնմանը:

Հայոց լեզուի պատմական շարահիսութեան պարբերացումը կատարելիս, պրոֆ. Կուսիկեանը առաջնորդուել է գիտական սկզբունքով. քանի որ շարահիսական նոր որակի երեւոյթների առաջացումը եւ հին որակի երեւոյթների անհետացումը տեղի է ունենում դանդաղ, աստիճանաբար եւ աննկատ ձևով, հետեւաբար անհնար է ժամանակագրական ճշգրիտ սահմանագիծ որոշել դրանց յաջորդականութեան միջեւ, ապա այդ դէպքում պատմական շարահիսութեան պարբերացման համար հիմք պէտք է ընդունել միայն նոյնանման երեւոյթների բանակային կուտակումը կամ անհետացումը: Մեկնելով դրանից, պրոֆ. Կուսիկեանը հայոց լեզուի պատմությունը բաժանում է հինգ դարաշրջանների. ա) հնագոյն

շրջան՝ մինչեւ մեր թուականութեան 5-րդ դարը, բ) հին շրջան՝ 5-12-րդ դդ., գ) միջին շրջան՝ 12-17-րդ դդ., դ) նոր շրջան՝ 17-19-րդ դդ., ե) նորագոյն շրջան՝ 19-20-րդ դդ.:

Հնագոյն շրջանի հայերէնը, որը հայագիտութեան մեջ կոչում է նաեւ վիպասանական հայերէն (8-2-րդ դդ. ն.մ.թ.), պրոֆ. Կուսիկեանը քննում է Մովսէս Խորենացու, Ագաթանգեղոսի եւ Մագիստրոսի աշխատություններում ժողովրդական բանահիսութիւնից պահպանուած առանձին հատուածների ընձեռած լեզուական իրողությունների հիման վրայ: Չնայած այն կարծիքին, որ տարածում է հայ մատենագրութեան մեջ, թէ մեսրոպեան տառերից (393-395 թթ.) առաջ հայերը զիր ու գրականութիւն չեն ունեցել, պրոֆ. Կուսիկեանը համակարծիք է այն հայագետների հետ, որոնք ենթադրում են հայ գրի ու գրականութեան գոյութիւնը ասորերէն կամ յունարէն տառերով: Այդ պնդման համար իբրեւ հիմք եւ փաստարկ վկայակոչում են Ղազար Փարպեցու յայտնի խօսքերը, երբ վերջինս աներկ-բայօրէն գրում է. հայկական արքունիքում «ասորի եւ յոյն գրով վճարէին յայնժամ գործ բազաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն. զվճուցն եւ գիրովարտակացն»¹: Այս տեսակետի օգտին է խօսում նաեւ այն, որ մեսրոպեան գրերի գիտից անմիջապէս յետոյ ստեղծուած մեր հարուստ մատենագրութիւնը աչքի է ընկնում իր լեզուական կուտ օրինաչափություններով, աֆորիզմներով, պատկերաւոր արտայայտութիւններով, զեղեցիկ ու դիպուկ դարձումներով, եւ, վերջապէս, նախադասությունների հարուստ համակարգով (շաղկապաւոր եւ յարարերական բառերի առատ գործածութեամբ հանդերձ): Կարելի է սրանում հեշտութեամբ համոզուել, երբ նկատի ունենանք, որ մեր օրերում իսկ նոր զիր ու գրականութիւն ստացած ժողովրդի լեզուն շատ առելի նախնական է լինում. պատրաստի ձեւով նա փոխ է առնում համապատասխան գաղափարներ արտայայտելու համար բազմաթիւ բառեր, արտայայտություններ, դարձումներ, եւ առհասարակ ակնբախ է լինում քերականական կանոնների խայտարղէտութեամբ ու ոչ հաստատուն օրինաչափություններով²:

Լեզուական այն սակաւ նիւթը, որ ընձեռում է վիպասանական շրջանի հայերէնը, պրոֆ. Կուսիկեանը շարահիսական մանրակրկիտ վերլուծութեան է ենթարկում: Այս զլխում քննում է պարզ եւ բարդ նախադասությունների կառուցումը՝ դիմաւոր բայաձեւերով եւ կամ դերբայով արտայայտում ստորգետնային, նշում

¹ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն հայոց եւ թողք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեանը Գ. Տէր-Սլրոչեանի եւ Ստ. Մախասեանի», Տփղիս, 1904, էջ 13:
² Բայց մեր յետագայ հայագիտական ուսումնասիրություններում հիմնովին վերանայեցինք այս վարկածի նկատմամբ մեր արտայայտած «համատարած»՝ աղբիւրագիտական ու բնագրագիտական համակողմանի փաստարկումների հիման վրայ եւ յանգեցինք այն վստեղական եզրակացութեանը, որ սխալ է մեկնաբանուել Փարպեցու այս վկայութիւնը. «ասորական եւ յունական գրով» ասելով մեր պատմիչը նկատի է ունեցել բացառապէս «ասորական եւ յունական գրականութեան» գործածական լինելը նախքան մաշտոցեան գրահամակարգի յայտնագործումը, որ միանգամայն հաստատի է եւ իրական, ամենեւին էլ ոչ՝ «ասորական եւ յունական տառերի» մասին է խօսքը: Այս ասելուց հետո՞ս տե՛ս դեռեա՞ն 1963 թուականին ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Հասարակագիտական բաժանմունքի «Պատմա-բանասիրական հանդէսի» համար 4-ում մեր տպագրած «Պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդիի հայագիտական աշխատությունները» վերնագրով քննախօսութիւնը (էջ 255-261), ապա մեր ծառայում յօդուած-ուսումնասիրութիւնը՝ «Վարդան Արեւելցի, հայերէն գրահամակարգի եւ դպրութեան տեսաբան» խորագրով (Կիրովականի Մանկավարժական Ինստիտուտի «Գիտական կոնֆերանսի ժողովածու», Երևան, 1974, էջ 105-153), ինչպէս եւ մեր Եռահատոր այլ Մեմագրութիւնը՝ «Հայ Գալութեան Պատմութիւնը» Հինգերորդ տեսութեանը, 2000 թ., Անթիլիաս:

³ Նաեւ հիմնարկող դարում նոր գրական լեզուի մակարդակին բարձրացում դասական հայերէնի կատարելութեան գիտական բացատրութիւնը, իրականում, պիտի տալ բազմադարեան հայոց լեզուի «բանաւոր գրականութեան» մշակմամբ, որ մեր վիպասանների եւ գողթան երգիչների անուրանալի երախտիքն է եղել. տե՛ս հանգամանօրէն դարձեալ մեր նշում աշխատութիւնը:

գլխատր եւ երկրորդական անդամների բնոյթն ու նրանց կատարած ֆունկցիան, ընդգծում յօդերի եւ նախդիրների կարեւոր դերը հին հայերէնի շարահիսակական համակարգում, ինչպէս նաեւ բացայայտում շարադասութեան առանձնայատկութիւնները: Որոշիչի եւ որոշեալի փոխարարութիւնները քննելիս, ուշագրաւ է հեղինակի կարծիքը այս առթիւ. նա բազմաթիւ փաստեր է բերում վիպասանական հայերէնից, երբ որոշիչը դրում է նաեւ իր որոշեալից առաջ՝ թով եւ հոլովով չհամաձայնելով դրան. «Մակայն որոշիչի մեծ ազատութիւնը՝ դրուելով երբեմն նախադաս, երբեմն յետադաս, խօսում է այն մասին, - գրում է հեղինակը, - որ միջին եւ յատկապէս արդի հայերէնում որոշիչի նախադաս դիրքում ամբապնդուելը միայն ձեւաբանական փոփոխութիւնների արդիւնք չէ, որ տեղի են ունեցել միջին եւ արդի հայերէնում, այլ դրա հետ մեկտեղ հանդիսանում է հնագոյն հայերէնում գոյութիւն ունեցող երեւոյթի յարատեւումն ու ամբապնդումը» (էջ 21): Ինչպէս տեսնում ենք, հեղինակը շարահիսակական երեւոյթների բացատրութիւնը տալիս է պատմական յաջորդականութեան եւ կապի մէջ, նորի զարգացումն ու ծաւալումը միշտ դիտելով հնի ընդերքում, նոր որակի տարրերի աստիճանական տարածման եւ հին որակի տարրերի աստիճանական մահացման պայմաններում: Ընդամին պէտք է ընդգծենք, որ նա գիտական նոյն եղանակով է առաջնորդում նաեւ շարահիսակական միւս երեւոյթները լուսաբանելիս: Դրանով է պրոֆ. Յովս. Կուսիկեանը շատ անգամ տարբերում եւ նոյնիսկ հակադրում այն հայագէտներին, որոնք երբեմն հայերէնի այս կամ այն երեւոյթը ձգտում են բացատրել ոչ թէ լեզուի զարգացման ներքին օրինաչափութիւններով, այլ սոսկ արտաքին գործօնով՝ ազդեցութեամբ:

Հայագիտութեան համար առանձնապէս կարեւոր են այն հետեւութիւնները, որ պրոֆ. Կուսիկեանը արել է այս հատուածի վերջում. «... հնագոյն հայերէնի նախադասութիւնների կառուցումը չկայ մի յատկանիշ, որը շարահիսակական կողմից ցեղակից դարձնէր նրան կովկասեան կամ սեմական լեզուներին: Մասնատրապէս նախադասութեան կառուցումը կովկասեան լեզուներին շատ բնորոշ այսպէս կոչուած էրգատի կառուցումը (նախադասութեան) ոչ մի յատկանիշ չկայ» (էջ 28): Այնուհետեւ. «Հնագոյն շրջանի հայերէնի պարզ նախադասութեան հնդեւրոպական բնոյթը կարելի է բացատրել ոչ միայն ծագումնաբանական տեսակէտից, այլեւ նրանով, որ այդ լեզուն դեռեւս իր նախնական վիճակում զարգացել է հին պարսկերէնի եւ հնդեւրոպական լեզուներին պատկանող խեթական լեզուների հարեւանութեան պայմաններում» (անդ):

Երկրորդ գլուխը, որը վերաբերում է հիմնականում դասական հայերէնի շարահիսակական հարցերի քննութեանը, կազմում է աշխատութեան ամենածաւալուն մասը (35-92 էջեր): Այստեղ՝ Եզնիկից, Կորիւնից, Բուզանդից, Եղիշէից, Փարպեցուց քաղուած օրինակների հիման վրայ, վիպասանական շրջանի հայերէնի հետ ունեցած պատմականութեան ու յաջորդականութեան կապերի մէջ հետազօտում են շարահիսակական նոյն երեւոյթների ընդհանրութիւններն ու տարբերութիւնները նախորդ շրջանից: Ուշագրաւ է, որ հեղինակը իր փաստական ճիշդ ընտրութեան նկատմամբ տարբերակուած մօտեցում է ցուցաբերել. նա սահմանազատել է թարգմանական եւ ինքնուրոյն ստեղծագործութեամբ արտադրուած մատենագրութիւնը, ըստ այդմ էլ յատուկ վերաբերմունք դրսեւորել. այս տարբերակումը կատարելիս հեղինակը միտում է ունեցել ցոյց տալու, մի կողմից՝ թարգմանուած լեզուների (հիմնականում յունարէնի եւ ասորերէնի) ազդեցութիւնը հայերէնի շարահիսակութեան վրայ, միւս կողմից՝ ինքնուրոյն ստեղծագործութիւնների հնարարութիւնը, հեղինակը շեշտը դնում է հայերէնի շարահիսակական կանոնների եւ նորմաների զարգացման ներքին օրինաչափութիւնների վրայ: Փոխազդեցութիւնները ընդունում են

մերում են հայերէնի շարահիսակական համակարգի մէջ միայն այն չափով, որչափով որ դրանք համապատասխանում են հայերէնի ընդհանուր ուղում եւ նպատակում շարահիսակական այս կամ այն երեւոյթի ճշգրտմանը, կատարելագործմանն ու արտայայտչականութեանը: Այդ տեսակէտից ուշագրաւ են հեղինակի քննած երկու գործօնների դերն ու նշանակութիւնը՝ պատմական հատոյթով դիտուած:

Պրոֆ. Կուսիկեանը կողմնակից է այն տեսակէտին, ըստ որի որոշակի կերպով կազմաւորուած բարբառների առկայութիւնը դեռեւս 5-րդ դարում կասկածից վեր է համարում. այս հարցում նա հակադրում է Աճառեանին եւ այլ հայագէտներին, որոնք գտնում են, որ մետապեան հայերէնը իր հնչիւնական, ձեւաբանական եւ շարահիսակական համակարգերով, ինչպէս նաեւ բառային կազմի ընդհանրութեամբ միասնական կոտ լեզու է եղել, որից մեկնելով ենթադրում են, որ այդ շրջանի հեղինակների երկերում ընդհանուր օրինաչափութիւններից շեղուող մասնակի եւ աննշան տարբերութիւնները հիմք են տալիս միայն ենթաբարբառների գոյութեանը եւ ոչ՝ բարբառների: Պրոֆ. Կուսիկեանը այս առթիւ օգտագործում է Նոբայր Բիւզանդացու՝ «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնը» (Տփղիս, 1900) աշխատութեան տուեալները, ինչպէս նաեւ իր կողմից նկատուած շարահիսակական տարբերութիւնները, որոնք աւելորդ անգամ հաստատում են, սակայն, Աճառեանի տեսակէտը: Կարծում ենք, որ զրաբարի բայական համակարգի իմաստային-եղանակային խայտաբղէտութիւնը, սահմանական եղանակի ներկայ անկատարի, եւ մանաւանդ անցեալ անկատարի, 1-ին եւ 2-րդ ապառնիների արտայայտած ըզձական, հարկադրական եւ պայմանական եղանակների իմաստները չպէտք է բարբառային տարբերութիւնների ներթափանցման արդիւնք համարել: Դա աւելի շուտ դասական հայերէնով խօսող հանրութեան քերականական այդ իմաստների ըմբռնման եւ գիտակցութեան մէջ դրա ամբապնդման հետեւանք է: Նոյնպէս ճիշդ չենք գտնում նաեւ յարգելի պրոֆեսորի այն կարծիքը, որ իբր դասական հայերէնում խնդրառութեան տեսակէտից առանձին բայերի տարամիտում հանդէս բերելը բարբառային ազդեցութեան նշանակութիւն ունի: Իրականում, միեւնոյն բայերի տարբեր խնդրառութիւնը կապուած է բայիմաստի փոփոխութեան հետ, ինչպէս եւ՝ բայական սեռի տեղաշարժերի: Ինչ վերաբերում է «իբրեւ» յարաբերականով կազմուած երկրորդական նախադասութիւնների՝ ստորոգեալի անցեալ դերբայով արտայայտուած փաստին, որի յաճախուածութիւնը շատ ակնբախ է Կորիւնի մօտ, ապա դա նոյնպէս բարբառայնութեան ուժեղ դրսեւորում չի կարող համարուել. բանն այն է, որ առհասարակ դերբայական նախադասութիւնների տարբեր տիպերն ու կառուցումները երբեք էլ անհարազատ չեն եղել դասական հայերէնին. ընդհակառակն, դերբայական նախադասութիւնների լայն կիրառութեամբ զրաբարը սահմանազատում է հայերէնի զարգացման յետագայ փուլերից եւ կապում հնդեւրոպական հիմք-լեզուի հետ, ինչպէս այդ ցոյց է տուել Ա. Մեյլեմը²:

Խօսելով ազդեցութիւնների երկրորդ գործօնի՝ յատկապէս յունաբանութեան մասին, պրոֆ. Կուսիկեանը քննութեամբ է այն միանգամայն ճիշդ դիրքերից: Թէեւ լայն չափով յունաբանութիւնը ներծծուեց 5րդ դարի վերջից մինչեւ 12րդ դարի հեղինակների մեծ մասի երկերում, սակայն շարահիսակական եւ ձեւաբանական այլ կարգի նրա նորմաւորութիւնները ամուլ մնացին հայոց լեզուի զարգացման ճանապարհին, եթէ չհաշուենք հայերէնի բառակազմութեան բնագաւառում նախածանց-

¹ Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, մասն Բ, Երեւան, 1951, էջ 125:

² A. Meillet, La phrase nominale pure en arménien, Extrait des Mémoires de la Société de Linguistique de Paris, t. XV, էջ 5:

ների հարստացման գործում նրա դրական նշանակությունը: Յունարան դպրոցի ներկայացուցիչները, այնուամենայնիւ, կարելու դեր խաղացին մեր մշակութային բարձրացման ընդհանուր գործում: Լեզուի բնագաւառում նրանց գործունէութեան կողմնակի արդիւնքը եղաւ այն, որ նրանք յունարէնի նկատմամբ ստրկական հետեւողականութիւն ցուցաբերելիս հարկադրուած եղան ուսումնասիրել նաեւ հայերէնի լեզուական փաստերը, երեսն հանել նրա համապատասխանութիւնները յունարէնի խօսքի մասերի նկատմամբ: Մակայն յունարան դպրոցի ծայրայեղութիւնները, իրենց հերքին, հակառակ ունակցիա առաջացրին հայոց լեզուի զարգացման նախանձախնդիր մշակների մօտ. գտնուեցին հեղինակներ, որոնք առաւել եւս ամուր կառչեցին դասական շրջանի նորմաներին ու օրինաչափութիւններին, որի պատճառով նրա գրաբար լինելը առաւել եւս ընդգծուեց, միւս կողմից՝ հանդէս եկան նաեւ այնպիսի գրողներ, որոնք դիմեցին իրենց ժամանակի խօսակցական լեզուին:

Եզրափակելով այս զլուխը, որը նուիրուած է 6-12-րդ դարերում հայոց լեզուի շարահիստութեան մէջ կատարուած փոփոխութիւններին, պրոֆ. Կուսիկեանը խորաքափանց կերպով եւ մանրագին դիտողութիւններով ցոյց է տալիս շարահիստական այն տեղաշարժերը, որոնք դանդաղ, անկատ ձեւով, աստիճանաբար իրենց զգալ են տալիս: Հեղինակը մերժում է հայագիտութեան մէջ արժարժուած այն «տեսութիւն»ը, որ իբր հայերէնի զարգացման յետագայ փուլերը արդիւնք են դասական գրաբարի «քայքայման», «աղաւաղման» կամ «փչացման», որից մեկնելով հայերէնի պարբերացումը տրուում էր իբրեւ «ուկեղարեան», «արծաթի», «պղնձի» կամ «ցեխի» դարերի հայոց լեզուներ: Նա դասական հայերէնի նկատմամբ մատենագրութեան մէջ հանդիպած շեղումները, նահանջներն ու տարբերութիւնները դիտում է իբրեւ ժողովրդական խօսակցական լեզուի տարրերի ներթափանցում հին լեզուի ընդերքում: 7րդ դարից սկսած մատենագրութեան մէջ տեղ գտած «ռամիկ», «մփին», «գոեհիկ» լեզուի մասին արտայայտութիւնները հեղինակը ճիշդ կերպով մեկնում է իբրեւ ժողովրդական խօսակցական լեզուի վկայութիւններ, ի հակադրութիւն «ստասիկ» գրաբար լեզուի: Այս առթիւ հեղինակը յենում է առաւելապէս Դրասխանակերտցու՝ Ծապուհ Բագրատունու պատմութեան մասին արած յիշատակութեան, Թ. Քոթենատրի, Սմբատ Գունդըստարի, Գ. Տաթեւացու եւ այլոց ասոյթների վրայ, որոնք որոշակի կերպով ընդգծում են խօսակցական լեզուի հակադրութիւնը գրաբարի նկատմամբ: Այն դէպքում, երբ մասսաների հոգեւոր դաստիարակութեան խնդիրները պահանջում էին նրանց գիտակցութեան վրայ ներգործելու համար պատրաստի ձեւակերպումներ, զրում է հեղինակը, ապա գրաբարը միանգամայն բաւարարում էր այդ պահանջը, իսկ աշխարհիկ գիտութիւնների երեսն գալը (ինչպէս՝ բժշկութեան, օրէնադրութեան, տոմարագիտութեան, աշխարհագրութեան, գրական տարբեր սեռերի) հրամայական պահանջ էր առաջացնում կենդանի խօսակցական լեզուի իրողութիւնները կիրառելու նաեւ մատենագրութեան մէջ: Ինչպէս տեսնում ենք, հեղինակի մօտեցումը այս հարցում եւս միանգամայն արդարացի է եւ գիտականօրէն հիմնադրուած: Մակայն մեզ քում է, որ այս փոքրիկ, բայց շատ արժէքաւոր հատուածը (93-100 էջեր) կառուցուածքային տեսակէտից առանձին զլուխ կազմելու իրաւունք չունէր. դա աւելի շուտ ներածական մաս կարող էր կազմել յաջորդ զլխի՝ միջին հայերէնի շարահիստութեանը նուիրուած բաժնին:

Չորրորդ զլխում հեղինակը քննում է միջին հայերէնի շարահիստութեան հիմնական գծերը՝ 13-16-րդ դարերի մատենագրութեան մէջ: Այնտեղ տրուում են «Կու» եւ «Ում» բարբառային ճիւղերի առաջացման պատմական նախադրեալ-

ներն ու նրանց կազմաւորման պրոցէսը: Բարբառային առաջին ճիւղը կազմաւորում է Կիլիկեան Հայաստանում, իսկ երկրորդը՝ Կենտրոնական Հայաստանում՝ Արարատեան դաշտավայրում: Եթէ Կիլիկեան Հայաստանում, Ռուբինեան քաղաքութեան առկայութեան պայմաններում, միջին հայերէնի զարգացումը տեղի ունեցաւ «Կու» ճիւղի բարբառներից մէկի գրական աստիճանի բարձրացման շնորհիւ, եւ, բնականաբար, գիտութեան շատ բնագաւառների բուռն ծաղկումը արտացոլող հարուստ մատենագրութեամբ, ապա նոյն երեւոյթը, բայց աւելի անբարենպաստ պայմաններում, «Ում» ճիւղի բարբառների գրական տարբերակով առաջացաւ ու ծաղկեց Կենտրոնական Հայաստանում: Միջին հայերէն հասկացութեան մէջ հեղինակը ընդգրկում է հենց այս երկու բարբառային ճիւղերը իրենց գրաւոր արտադրանքներով, միայն այն տարբերութեամբ, որ եթէ Կիլիկեան Հայաստանի լեզուն համեմատաբար ուսումնասիրուած է աւելի հանգամանօրէն (օրինակ, Իոզ. Կարստի մեծարժէք աշխատութեամբ), ապա Կենտրոնական Հայաստանի «Ում» ճիւղը ներկայացնող երկերի լեզուն, որը պահպանում է ձեռագիր աշխատութիւններում, դեռեւս գիտական ուսումնասիրութեան ոլորտից դուրս է մնացել: Ուշագրաւ է, որ հեղինակը գրական այս երկու տարբերակների միմեանց կապող ենթակառուցային շերտը համարում է գրաբարը, որով պահպանում էին հայերէնի համաժողովրդական որակն ու զարգացման համընդհանուր միտումները: Հեղինակի կարծիքով՝ թէւ բարբառային տարբերութիւնների հիման վրայ առաջացան որոշ փոփոխութիւններ ձեւաբանութեան առանձին կողմերի մէջ (ինչպէս՝ դիմորշ յօղերի կիրառութեան մէջ, հոլովական եւ քայական վերջաւորութիւնների կառուցուածքում), ստեղծուեց բառամբերքի բազմազանութիւն, սակայն բառային հիմնական ֆոնդը, նորմաները մնացին ընդհանուր (տե՛ս էջ 102):

Ցանկալի կը լինէր, որ հայոց լեզուի պատմութեան ուսումնասիրման համար շրջադարձային նշանակութիւն ունեցող այս հատուածի լեզուական փաստերի լուսաբանմանը աւելի շատ տեղ յատկացուէր, քան կայ քննարկուող աշխատութեան մէջ (102-107 էջեր):

Գրախօսուող աշխատութեան երկրորդ ծաւալում մասը *վերջին զլուխն* է, որը նուիրուած է աշխարհաբարի (արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուների) եւ արդի հայերէնի շարահիստական համակարգի քննութեանը (108-151 էջեր): Այստեղ շարահիստական շատ կարելու դիտողութիւններ են արուած՝ աշխարհաբարի լեզուական իրակութիւնները համեմատութեան մէջ դնելով հայերէնի զարգացման անցած փուլերի հետ: Հին հայերէնի ձեւաբանութեան փոփոխութեան հետ փոխում է նաեւ շարահիստութեան ամբողջ համակարգը, ըստ որում հեղինակը իր վերլուծութիւնը կատարելիս չի ձգտում միայն փոփոխութիւններ ու տարբերութիւններ տեսնել, այլեւ նկատում եւ արձանագրում է նաեւ շարահիստական այնպիսի երեւոյթներ, որոնք իրենց բնոյթով համեմատաբար մեծ կայունութիւն են ցուցաբերել դարերի ընթացքում: Արդի հայերէնի հոլովների մասին խօսելիս հեղինակը գտնում է, որ դրանք իրենց կատարած ֆունկցիայով հիմնականում չեն տարբերում դասական շրջանի հոլովների ֆունկցիաներից. այստեղ կատարում է մի վերապահութիւն՝ եթէ հին հայերէնի հոլովական համակարգը բաղկացած էր վեց հոլովներից, իսկ ներգոյականի քերականական իմաստի դրսեւորման համար օգտուում էր, եզակիում՝ տրականից եւ հայցականից, յոգնակիում՝ միայն հայցականից (ի նախդիրի հետ միասին), ապա ժամանակակից հայերէնի հոլովական համակարգը օժտուած է եօթ հոլովներից՝ ներգոյականի քերականօրէն ուրոյն ձեւաւորման հետ միասին: Հեղինակը հետեւելով հայոց լեզուի պատմութեան ամբողջ ընթացքին, նկատում է, որ հին հայերէնը, բացի հոլովական հարուստ սխառեմից, օժտուած էր նաեւ նախ-

դիրների եւ նախադրութիւնների ու ետադրութիւնների կողմ համակարգով, որոնք շարահիսակաւ ու ոճական ամենատարբեր եւ ամենաուրբ իմաստներ էին դրսեւորում, հաղորդելով դասական հայերէնին առաւել ճկունութիւն եւ արտայայտչականութիւն: Մակայն հայոց լեզուի յետագայ փուլերում եւ յատկապէս աշխարհաբարում, ձեւաբանութեան եւ շարահիսութեան մէջ կատարուած տեղաշարժերի հիման վրայ, նախդիրներն ու նախադրութիւնները վերածուցին ետադրութիւնների, իսկ նախդիրները ռուսերէնի ազդեցութեամբ այժմ նորից շրջանառութեան մէջ են մտնում եւ շատ մեծ տարածում գտնում յատկապէս քարգմանական գրականութեան մէջ:

Մեծ փոփոխութիւններ են կատարուել նաեւ հին հայերէնի բայական համակարգում: Ինչպէս յայտնի է, դասական հայերէնը բայական իր կառուցուածքով առաւելապէս համադրական էր, բայց դրան զուգահեռ, անհրաժեշտութեան դէպքում, երկրորդաբար օգտւում էր նաեւ վերլուծական տիպի բայածեւերից: Հայերէնի զարգացման ընթացքում տեղաշարժեր են կատարուել, որոնց հետեւանքով արդի հայերէնում գերիշխում է բայի կառուցման վերլուծական տիպը: Այս պրոցէսին մեծապէս նպաստել են միջին հայերէնում «կու» մասնիկի եւ «պիտի» սպասարկու բառի գործածութիւնը դիմաւոր բայածեւերի հետ միասին: Այդ առումով խոնարհման համակարգի նաեւ ժխտական ձեւը հիմնականում վերլուծական բնոյթ ձեռք բերեց: Եւ այս բոլորը վճռական նշանակութիւն ունեցան հայերէնի շարահիսութեան զարգացման յետագայ ընթացքի համար:

Աշխատութեան համարեա թէ բոլոր հատուածներում հեղինակը անդրադառնում է որոշիչի եւ որոշեալի փոխարարութեան հարցին՝ հայերէնի զարգացման տարբեր փուլերում. ըստ որում որոշիչի նախադաս գործածութեան փաստեր բերում են նոյնիսկ վիպասանական հայերէնից, այնուհետեւ դասական շրջանից եւ այլն: Հեղինակը նշում է, որ «Միայն յունաբան դպրոցի ազդեցութիւնը յանգեցրեց այն բանին, որ գրական լեզուում որոշիչի յետադաս գործածութիւնը սկսեց համարուել, իբրեւ թէ դասական հայերէնի պահանջներին համապատասխանող միակ հիմնական նորմա» (էջ 129): Անշուշտ վիպասանական հայերէնում եւ դասական շրջանի մատենագրութեան մէջ բացառուած չեն որոշիչի նախադաս կիրառութեան փաստերը, այդ դէպքում որոշիչը որոշեալի հետ չի համապատասխանում ո՛չ թուով, ո՛չ էլ հոլովով: Նկատենք, որ որոշիչի նախադաս գործածութիւնը պայմանաւորուած էր այն օրէնքով, որ ածականի, դերանունի, թուականի համաձայնութիւնը իրենց որոշեալի հետ բացառում էր. դա մի պրոցէսի դրսեւորումն է, երբ ածականը, դերանունը եւ թուականը գոյականի հետ գործածուելիս այլեւ չէին ստանում ձեւաբանական մասնիկներ, որոնք այնքան բնորոշ են թեքական լեզուների համար, ուստի եւ ձեռք էին բերում ձեւական անկախութիւն: Այդ նշանակում է, որ հայերէնի զարգացումը թեքականութիւնից դէպի կցականութիւն քաքնուած է նաեւ այս երեսոյթի մէջ, որը շատ խորը հնութիւն ունի: Այս առումով հեղինակի քննադատութիւնը այն հայագետների հասցէին, որոնք աշխարհաբարի շարահիսակաւ կառուցուածքի այս կարգի փոփոխութիւնները արդիւնք են համարում կովկասեան կամ բուրբական լեզուների ազդեցութեան, միանգամայն արդարացի է:

Այս գլխում առանձնապէս յաջողուած է տրոհուող նախադասութեան անդամներին կամ նախադասութիւններին նուիրում հատուածը, որտեղ հանգամանօրէն քննուում են շարահիսակաւ այդ կատեգորիային պատկանող տարբեր տիպերն ու կառուցուածքները՝ համեմատութեան զուգահեռներ անցկացնելով

ինչպէս գրաբարի, այնպէս էլ միջին հայերէնի եւ աշխարհաբարի տուեալների միջեւ:

Վերջում ուզում ենք տեխնիկական կարգի մի դիտողութիւն անել. քննարկուող երկի հայերէն քաղուածքներում մեծ չափերի են հասնում ուղղագրական սխալները, բառերի աղաւաղումները, մեծատառերի եւ փոքրատառերի ոչ ճիշդ կիրառութիւնները, կէտադրութեան եւ տողադարձի սխալ գործածութիւնները: Կարծում ենք, որ այդ թերութիւնները յաջորդ հրատարակութեան ժամանակ անպայման կը վերացունեն:

Իբրեւ եզրակացութիւն գոհունակութեամբ պէտք է նշել, որ գրախօսուող աշխատութիւնը հայագիտութեան համար մեծ հետաքրքրութիւն ներկայացնող՝ հայոց լեզուի պատմական շարահիսութեանը նուիրում առաջին լուրջ ուսումնասիրութիւնն է, որ արժանի է բարձր գնահատանքի:

Երեսնի ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հասարակական բաժանմունքի «Պատմա-բանասիրական հանդէս», 1960, Թ. 1:

SIRARPIE DER-NERSESSIAN,
A CATALOGUE OF THE ARMENIAN
MANUSCRIPTS (THE CHESTER
BEATTY LIBRARY), Dublin, 1958,
in Two volumes.

«ՄԻՐԱՐՓԻ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ
ՉԵՌԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ (ՉԵՍՏԸՐ ԲԵՏՏԻԻ
ԱՆՈՒՄՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ), Դուբլին, 1958,
Երկու հատորով».

Լոյս է տեսել հայ մանրանկարչութեան եւ բիզանդական արուեստի յայտնի մասնագէտ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Սիրարփի Տէր-Ներսէսեանի կազմած Չեռագրացուցակը՝ երկու հատորով: Նկարագրուած ձեռագրերը պատկանում են մի անհատ մարդու՝ ոմն Չեստըր Բետտիին, որը մեծ սէր եւ հակում ունի ընդհանրապէս ձեռագրերի մանրանկարչական արուեստի եւ մասնատրապէս՝ հայ մանրանկարչութեան նկատմամբ: Չեստըր Բետտիին հայերէն ձեռագրերի նկատմամբ իր հետաքրքրութիւնը բացատրում է նրանով, որ հայ գրչութեան արուեստի նուաճումները մեծ տպաւորութիւն են թողել իր վրայ: Նա հաւաստում է, որ հայ գրչութեան արուեստը, լինելով կարեւոր կապ Արեւելքի եւ Արեւմուտքի գրչութեան արուեստների միջեւ, համեմատաբար քիչ է ուսումնասիրուած Եւրոպայում: Այդ պատճառով նա մեծ բարեբախտութիւն է համարում այն, որ իր մօտ եղած հայերէն ձեռագրերի գիտական նկարագրութիւնը յանձն է առել այնպիսի մի խոշոր հայագէտ եւ մանրանկարչութեան հմուտ մասնագէտ, ինչպիսին Սիրարփի Տէր-Ներսէսեանն է:

Չեստըր Բետտին ունի անձնական խոշոր գրադարան, որտեղ ի մի են հաւաքուած պատմական խոր անցեալ ունեցող կուլտուրական շատ ժողովուրդների ձեռագիր գանձեր: Նրա գրադարանի համարակալուած ձեռագիր աշխատութիւնների հայկական բաժինը ամփոփում է 67 միաւոր՝ սկսած 551 համարից մինչեւ 617 համարը, ըստ որում դրանցից 3-ը Աստուածաշնչեր են (1 համառօտ, 1 ամբողջական եւ 1 պակասաւոր): 40-ը՝ Աւետարան. 2-ը՝ Սաղմոսարան. 6-ը՝ Շարակնոց. 4-ը՝ Քարոզգիրք: 5-ը՝ Յայտնաւորք. 1-ը՝ Եկեղեցական տոմար. 2-ը՝ Հմայիլներ. 1-ը՝ Սամուել Անեցու պատմութիւնը. 1-ը՝ տիեզերագիտութիւն. 1-ը՝ Մեկնութիւն գործք առաքելոցի: Յուցակի վերջում, յաւելուածի կարգով, տրուած է նաեւ երկու արծաթեայ կազմերի նկարագրութիւն:

Սոյն Չեստագրացուցակը, ինչպէս ասուեց, բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորում տրուած է յիշեալ ձեռագրերի գիտական նկարագրութիւնը, իսկ երկրորդում՝ միայն նրանց մանրանկարների պատճենները, առանց հեղինակային խօսքի:

Սկզբից եւեթ ասեմք, որ հեղինակը իր Չեստագրացուցակը կազմել է մանրանկարչութեան թեքումով, նպատակ ունենալով արժէքաւորել եւ գիտական աշխարհին ներկայացնել հայ մանրանկարչական արուեստը իր ամբողջ խորութեամբ, առանձնայատկութիւններով ու երանգներով: Այդ տեսակէտից սոյն աշխատութիւնը իր բնոյթով տարբերում է մինչ այդ մեզ ծանօթ հայերէն բոլոր ձեռագրացուցակներից: Դա առաջին եւ յաջող փորձն է ձեռագրացուցակների հարուստ ժառանգութիւն ունեցող մեր մատենագիտութեան մէջ, որը կազմուած է արուեստագիտութեան որոշակի թեքումով ու նպատակասլացութեամբ:

Հեղինակը հայ մանրանկարչութեան եւ զարդարութեան բնագաւառում յայտնի է իր բազմաթիւ արժէքաւոր աշխատութիւններով ու յօդուածներով, որոնք լոյս են տեսել մեծ մասամբ անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով¹:

Ի՞նչ եղանակով է կատարուած ձեռագրերի նկարագրութիւնը գրախօսուող երկում, ինչպիսի՞ տուեալներ առանձնապէս կարեւոր են ժամանակակից գիտութեան համար՝ ելնելով հայագիտութեան արդի պահանջներից - այս հարցերին պատասխան տալու համար անհրաժեշտ է քննել սոյն Չեստագրացուցակում հեղինակի կիրառուած սկզբունքները, ուստի եւ հարկ կը լինի կանգ առնել միայն նրա առաջին հատորի բովանդակութեան եւ կառուցուածքի վրայ:

Աշխատութիւնը բացում է Չեստըր Բետտիի գրադարանավար Ջեյմս Վերե Սայուարտ Վիլկընսընի յիշատակին նուիրուած ձօնով: Դրան յաջորդում է Չեստըր Բետտիի Ներածական խօսքը, որից յետոյ՝ Առաջարանը, որտեղ Սիրարվի Տէր Ներսէսեանը խօսում է հայ մանրանկարչութեան բնոյթի, նրա արժէքի եւ նշանակութեան մասին, անդրադառնում՝ աշխատութեան շարադրման հանգամանքներին եւ արծարծած խնդիրներին: Այնուհետեւ բերում են երեք տախտակներ. Ա. նկարագրուած ձեռագրերի ցանկ՝ էջերի նշումով, Բ. ձեռագրերի ժամանակագրական աղիւսակ եւ Գ. մանրանկարների ցանկ: Միայն 3-ական ձեռագիր գալիս են XII եւ

¹ Տե՛ս նրա հետեւեալ աշխատութիւնները. The Date of the Initiale Miniatures of the Etchmiadzin Gospel, Art Bulletin, 1933, vol. XV, No 4, Manuscripts Arméniens illustrés des pères Métkhitaristes de Venise. 2 vols. Paris, 1937. Une apologie des images de septième siècle. Reprinted from Byzantion vol. XVII, 1944-1945. U.S.A.. Armenia and the Byzantine Empire. Brief History of Armenian Art and Civilization, Cambridge, 1945. An Armenian Gospel of the Fifteenth Century. Reprinted From the January 1950 Issue of the Boston Public Library Quarterly եւ այլն:

XIII դարերից, 7 ձեռագիր՝ XIV դարից, 8-ական ձեռագիր XV եւ XVI դարերից, 3 ձեռագիր՝ XVII դարից եւ 2 ձեռագիր՝ XVIII:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նկարագրուած հաւաքածուն յատկապէս հարուստ է XV-XVI դարերի ձեռագրերով, հեղինակը մի ընդարձակ ներածութիւն է տուել հայ մանրանկարչութեան նախընթաց փուլերի՝ տարբեր դպրոցների եւ ուղղութիւնների համառօտ շարադրանքով, ըստ որում՝ նա ոչ միայն ցոյց է տուել բիզանդական եւ ուշ-դասական արուեստի ազդեցութիւնը հայ մանրանկարչութեան վրայ, այլեւ շեշտելով հայ մանրանկարչութեան էական ու բնորոշ գծերը, ընդգծում է նրա անդրադարձ ազդեցութիւնը Մերձատր Արեւելքի, բիզանդական եւ նոյնիսկ Արեւմտեան Եւրոպայի մանրանկարչական արուեստի վրայ:

Հայ մանրանկարչութեան սկզբնաւորութիւնը հեղինակը կապում է դեռեւս գրերի գիտի՝ հայ գրի եւ գրականութեան ստեղծման հետ: Այդ ենթադրութեան համար հիմք է ծառայում VI դարի վերջի եւ VII դարի սկզբի մատենագիր Վրթանէս Քերթոզի վկայութիւնը իր ժամանակ գոյութիւն ունեցող շքեղ ձեռագիր աշխատութիւնների մասին, որոնք ոսկով եւ արծաթով զարդարուած գեղեցիկ մանրանկարներ են ունեցել, փղոսկրեայ կազմ եւ գրչութեան բարձր արուեստ: Բացի դրանից, վերլուծելով մեզ հասած Մլքէ թագուհու Աւետարանի (902), Էջմիածնի Աւետարանի (989), Գագիկ թագաւորի Աւետարանների մանրանկարները, հեղինակը յանգում է այն եզրակացութեան, որ հայ մանրանկարչական արուեստի այդպիսի բարձր մակարդակի վրայ գտնուելը արդիւնք է զարգացման երկարատեւ, դարաւոր փորձի եւ աւանդոյթների:

Այնուհետեւ հեղինակը, փաստական հարուստ տուեալների հիման վրայ հետեւում է հայ մանրանկարչութեան կենտրոնների պատմութեան ընթացքին, ցոյց տալով իւրաքանչիւր կենտրոնի գեղագիտական հայեացքները՝ արուեստի ոճական առանձնայատկութիւնները եւ նրանց ծաւալած գործունէութեան բնոյթն ու տարողութիւնը, փոխազդեցութիւններն ու աղբրները՝ բիզանդական, եւրոպական, պարսկական, արաբական եւ այլ ժողովուրդների մանրանկարչութեան եւ զարդարութեան հետ, որոնց հետ այս կամ այն չափով շփում եւ հաղորդակցութիւն է ունեցել հայ ժողովուրդը պատմական տարբեր ժամանակաշրջաններում:

Կարեւոր է նկատել, որ հեղինակը հայ մանրանկարչութեան եւ զարդարութեան պատմութիւնը շարադրելիս յատուկ ուշադրութիւն է նուիրում հայ ժողովրդի պատմական ճակատագրին: Աւելին. մանրանկարչական այս կամ այն օջախի առանձնայատկութիւններն ու բնորոշ կողմերը հեղինակը բացատրում է շատ անգամ պատմական հանգամանքներով եւ իրադրութեամբ. այլ կերպ ասած՝ արուեստի պատմութիւնը տրուում է հայ ժողովրդի պատմութեան հետ գիրկընդխառն: Հեղինակը ամենայն իրաւամբ գրում է այդ առթիւ. «Արուեստի պատմութիւնը սերտօրէն հետեւում է քաղաքական իրադարձութիւնների ընդհանուր ուղղութեան»¹: Նրա այս ելակէտային դրոյթը կարմիր թելի մման անցնում է ամբողջ աշխատութեան միջով: Այսպէս. խօսելով կիլիկեան մանրանկարչութեան եւ զարդարութեան շքեղութեան ու ճոխութեան մասին, ի տարբերութիւն Մեծ Հայքի մանրանկարների համեմատական պարզունակութեան, հեղինակը հաշուի է առնում հետեւեալ հանգամանքները. Կիլիկիայի աշխարհագրական դիրքը, որը հայ ժողովրդի պատմութեան եւ նրա արուեստի զարգացման տեսակէտից կարեւոր նշանակութիւն է ունեցել. բնակչութեան կազմը (հայերի հետ միասին ապրել են մեծ թումլ յոյներ, որոնց կառուցած

¹ A Catalogue of the Armenian Manuscripts, vol. I, Ներածութիւն, էջ XII:

ճարտարապետական կոթողները դեռևս կանգուն էին մնում այն ժամանակ), խաչակիրների մուտքը Կիլիկիա, Ռուբինեան բազալտաբլուրների քաղաքական սերտ յարաբերությունները լատինական բազալտաբլուրների հետ, որի հետևանքով արևմտեան սովորություններն ու մտածելակերպը իրենց դրոշմը դրեցին կիլիկեան արուեստի վրայ, եւ վերջապէս՝ դէպի Միջերկրական ծով ելք ունենալը, որով հայերը շփուեցին եւ հաղորդակցութեան մէջ մտան բազմաթիւ այլ ժողովուրդների հետ: Այս բոլոր հանգամանքները, անտարակոյս, իրենց դերը խաղացին կիլիկեան մանրանկարչութեան ձեւաորման ու զարգացման մէջ:

Հեղինակը իւրաքանչիւր դարաշրջանի եւ իւրաքանչիւր կենտրոնի մանրանկարչութիւնն ու զարդարուեստը բնութագրելիս բնում ու վերլուծում է, թէ ի՞նչ տարրերից է բաղկացած այս կամ այն դպրոցի մանրանկարչութիւնը, սիւժետային այս կամ այն բովանդակութեան ի՞նչ նոր տարրեր են աւելացուել յետագայում, երանգների ու գծերի ինչպիսի՞ պերճութեամբ ու ներդաշնակութեամբ է բնորոշում այն. ըստ որում ընդգծում է ոչ միայն առանձին մանրանկարչական կենտրոնների ինքնատիպութիւնը, այլեւ նրանց ընդհանրութիւնը ինչպէս միմեանց, այնպէս էլ այլ ժողովուրդների արուեստների հետ: Այստեղ դրսեւորում է հեղինակի խոր խմացութիւնը բիզանդական, եւրոպական, պարսկական, արաբական, սեգջուկեան արուեստների բնագաւառում: Նա ձգտում է հայ մանրանկարչութիւնը ներկայացնել իր բոլոր ակունքներով ու լայն կտաւի վրայ եւ ո՛չ թէ՛ ինքնապարփակ, մեկուսացուած: Այդ պատճառով նա մանրակրկիտ համեմատութիւններ եւ գուճահետներ է անցկացնում բոլոր այն դէպքերում, երբ ընդհանրութիւններ ու նմանութիւններ եւ կամ ազդեցութեան ակնբախ ցուցանիշներ են դրսեւորում հայ մանրանկարչութեան եւ զարդարուեստի մէջ:

Ուշադրութեան է արժանի նաեւ այն, որ հայ մանրանկարչութեան եւ զարդարուեստի թէկուզեւ սեղմ պատմութիւնը տալու համար հեղինակը ուսումնասիրել է իրեն մատչելի բոլոր այն մանրանկարները, որոնց նա ծանօթացել է տասնեակ տարիների ընթացքում: Իւրաքանչիւր մանրանկարչական կենտրոնի ամբողջական եւ բազմակողմանի պատմութիւնը իր զարգացման մէջ տալու համար նա խմբատրել է այս կամ այն մանրանկարչական կենտրոնին պատկանող բոլոր զարդանկարած ձեռագրերը եւ այնուհետեւ բացայայտել դրանց հիմնական այն առանձնայատկութիւնները, որ տուեալ ժամանակաշրջանում բնորոշ են եղել այդ դպրոցին:

Ներածութեանը յաջորդում է ձեռագրերի բուն նկարագրութիւնը, որը կազմել է հատորի ամենաստուար մասը (3-193 էջեր): Այնուհետեւ տրւում են օգտագործուած գրականութեան ցանկը եւ ապա ինչպէս ընդհանուր, այնպէս էլ նկարագրուած ձեռագրերի ամուսնացանկեր:

Իւրաքանչիւր ձեռագրի նկարագրութիւնը հեղինակը կատարում է ութ բաժինների մէջ:

I. *Նիւթ եւ դասաւորութիւն.*- Հեղինակը ձեռագրի բովանդակութիւնը համարում է առաջնային, եւ այդ պատճառով առաջին բաժինը յատկացնում է դրան: Ձեռագրի նիւթերը նա թուարկում է ճիշդ այնպէս, ինչպէս որ կան ձեռագրում: Նիւթ են

համարում նաեւ դիմանկարներն ու խորանները, որոնք նշում են իրենց յաջորդականութեամբ. ըստ որում բնագրային նիւթերը նշելիս հեղինակը Աստուածաշնչի եւ Աւետարանի գրքերի վերնագրերը բերում է ոչ թէ այնպէս, ինչպէս ձեռագրում կան, այլ իր բառերով:

Նիւթերի դասաւորութիւնը նկարագրելուց յետոյ հեղինակը խօսում է դատարկ, յետագայում աւելացուած կամ պակասեցուած, կորած ու պատռուած թերթերի մասին: Ուշագրաւ է, որ հարկ եղած դէպքում, ընդմիջարկման կարգով հեղինակը իր խօսքն ասում է հէնց բովանդակութեան նկարագրման ընթացքում, բովանդակութեան այս կամ այն հարցը լուսարանելու համար օգտագործում է բնագիրը կամ Յիշատակարանը: Դրանով ընդգծւում է Ձեռագրացուցակի գիտականութիւնը, այն հարստանում է բանասիրական նուրբ դիտողութիւններով: Ի դէպ՝ Տաշեանի եւ Մարգիսեանի Ձեռագրացուցակների մեծագոյն առաւելութիւնն այն է, որ դրանք յագեցուած են բանասիրական հարուստ դիտողութիւններով, որոնք արուած են ընդմիջարկման կարգով, տպագրուած հայագիտական աշխատութիւնների անսահմանափակ օգտագործմամբ, հեղինակային խօսքի անմիջական միջամտութիւններով:

II. *Չափսեր* եւ այլն.- Երկրորդ բաժնում տրւում են ձեռագրի արտաքին չափսը, գրադաշտի ծաւալը եւ սիւնակների քանակը՝ տողերով հանդերձ, թերթերի եւ պրակների քանակը: Այս տուեալները միանգամայն բաւարար են:

III. *Թուղթ եւ գրութիւն.*- Այս բաժնում տրւում են հետեւեալ տեղեկութիւնները. 1. թղթի որակը. 2. գրութեան տեսակը եւ քանաքի գոյնը (օրինակ՝ «բոլորգիր» սեւ քանաքով») . 3. զարդագրեր (բուսագիր, կենդանագիր, մարդագիր եւ այլն, ոսկեգրեր, կարմրաներկ գրութիւն եւ այլն. 4. վիճակ (լուսանցակողերի մաշուածութիւն):

Այստեղ նկատենք մի հանգամանք. հեղինակը զարդագրերը, ոսկեգրերը եւ կարմրաներկ գրութիւնը դիտում է ոչ թէ գերազանցապէս մանրանկարչութեան արուեստի տեսանկիւնից, այլ իբրեւ գրութեան տարրեր ձեւեր, գտնելով, որ նրանց մէջ գերիշխում է գրութեան ձեւի յատկանիշը՝ շքեղութեան առումով, ի տարբերութիւն երկաթագրի, բոլորգրի կամ նուորգրի, որոնք սովորաբար սեւ քանաքով են գրում եւ աւելի պարզ ու ընդհանուր բնոյթ ունեն:

IV. *Կազմ.*- Չորրորդ բաժնում նկարագրում է կազմը, նշում է կազմի կաշեպատ տախտակ, շագանակագոյն, դրոշմագարդ կամ հասարակ լինելը, երբեմն նաեւ շքեղ փականակապեր եւ ելուստներ ունենալը. խօսք չկայ միայն ժամանակաշրջանի, կազմողի, վայրի, աստառի եւ բուղերի մասին: Ըստ որում առաջին հայեացքից կարող էր սպասուել, որ մանրանկարչութեան մասնագէտը յատկապէս մանրամասն կանգ առնէր դրոշմագարդերի նկարագրութեան, դրանց արժէքաւորման, ոճական առանձնայատկութիւնների եւ այլ հարցերի վրայ, մինչդեռ հեղինակը բաւարարում է նրանով, որ մեծ մասամբ նշում է դրանց դրոշմագարդ լինելը կամ չլինելը եւ դրոշմուածքի բովանդակութիւնը (եթէ սիւժետային է): Հեղինակի այս մօտեցումը եւս մենք ճիշդ ենք համարում, որովհետեւ կազմի նկարագրութիւնը առնչւում է Ձեռագրացուցակի հետ միայն այն չափով, որչափով այն դիտում է իբրեւ մատենագրական տուեալ. ինչ խօսք, որ կազմը կարելի է ուսումնասիրել նաեւ դրոշմագարդերի արուեստի (ինչպէս եւ կազմագիտութեան) տեսանկիւնից, բայց դա արդէն հետազոտութեան առանձին բնագաւառ է: Հեղինակը միայն երկու արժաբեայ կազմերի համար տուել է հանգամանալից նկարագրութիւն, այն էլ՝ Յաւելուածում, որպէս լուսագոյն կազմերի մոյշ, բացառութեան կարգով:

¹ Տե՛ս բիզանդագիտութեան եւ անասարակ արուեստի բնագաւառում նրա վաստակը՝ «L'Illustration du roman de Barlaam et Jovassaph, Paris, 1937. Armenia and the Byzantine Empire, Cambridge, 1945. Two Slavonic Parallels of the Greek Tetravengelia, Paris, 1927. Reprinted from the Art Association of America, New York, 1927.

V. *Թուական, վայր, գրիչ, սեփականատէր*.- Այս բոլոր տուեալները նշում են հինգերորդ բաժնում, ըստ որում դրանք տրուում են հեղինակի նկարագրական խօսքով:

Իբրեւ շարադրանքի ոճի դրական երեսոյք նկատենք, որ հեղինակը ձեռագրերի նկարագրման ընթացքում ընդհանրապէս խուսափում է չոր սխեմատիզմից, որը դրսեւորում է հարցակարգերով առաջնորդուելու ժամանակ, եւ ձգտում է լակոնիկ սեղմութեամբ, բայց նկարագրական իր խօսքով տալ ձեռագրերի մասին ամենաանհրաժեշտ մատենագրական տուեալներ. այլ կերպ ասած՝ հարց ու պատասխանի ձեւով չի կառուցում իր խօսքը, որը շատ տաղտկալի ոճ կ'ստեղծէր ձեռագրացուցակի ընթերցման համար:

VI. *Յիշատակարաններ*.- Այս բաժնում տրուում են նկարագրուած ձեռագրերի Յիշատակագրութիւններն ու գլխաւոր Յիշատակարանը՝ իրենց յաջորդականութեամբ: Ինչպէս յայտնի է, սովորաբար գլխաւոր Յիշատակարանը գրում է ձեռագրի վերջում. իսկ Յիշատակագրութիւնները՝ ձեռագրի պատահական մասերում, բայց գլխաւոր Յիշատակարանից առաջ: Ըստ որում եթէ Յիշատակագրութիւնները կարելի էր չեն եւ ոչ մի նոր բան չեն աւելացնում ձեռագրերի պատմութեանը եւ կամ կրկնում են մի քանի անգամ, ապա չեն բերում, եւ կամ էլ վերարտադրում են դրանց բովանդակութիւնը հեղինակի խօսքերով: Մեզ թում է, որ հեղինակը ճիշդ է վարուել նաեւ այս հարցում. Յիշատակագրութիւնների եւ գլխաւոր Յիշատակարանի յաջորդականութեան պահպանումը շատ կարեւոր է, որովհետեւ դրա շնորհիւ բանասէրի համար բացայայտ կը դառնայ տուեալ ձեռագրի ստեղծման պատմութիւնը՝ իր բոլոր յարակից հանգամանքներով ու պարագաներով: Ինչպէս յայտնի է, Յիշատակագրութիւնները մեծ մասամբ գրում են ձեռագրի արտագրման ընթացքում՝ զանազան պարագաների բերումով. շատ անգամ գրիչը հարկադրուած է լինում ձեռագրի հէնց այս կամ այն հատուածի արտագրութեան հետ կապուած որեւէ կարեւոր մտմենտ կամ հանգամանք հաղորդել: Ենթադրենք, որ մի գրչին փոխարինել է մի ուրիշ գրիչ, եւ վերջինս յիշատակում է, թէ ինչպիսի պայմաններում է յանձն առել շարունակելու ձեռագրի արտագրութիւնը. հէնց դրանից բանասէրի համար աւելի բացորոշ կը լինի, թէ ո՞ր գրիչը որտեղից մինչեւ որտեղ է արտագրել ձեռագիրը: Եւ ընդհանրապէս շատ կողմերից էլ նպատակայարմար է Յիշատակագրութիւնների եւ Յիշատակարանների յաջորդականութիւնը պահպանել նոյնութեամբ:

VII. *Մանրանկարչութիւն եւ զարդարութեամբ*.- Այստեղ բերում են բոլոր մանրանկարները՝ իրենց բովանդակութեան նկարագրումով: Մանրանկարչութեան բացայայտումը տրուում է ըստ բովանդակութեան, ըստ կոնկրետ անձնատրութիւնների, առարկաների եւ երեսոյքների դիրքային պատկերացման. չկայ մանրանկարների ոճական նարագրութիւն, գոյների եւ ձեւերի պատճենահանում՝ մասնագիտական խրթին, անհասկանալի եւ անմատչելի տերմինաբանութեամբ: Փաստօրէն այս հատուածում հեղինակը վերարտադրում է մանրանկարների սիւժետային բովանդակութիւնը, որով ամեն մի ընթերցողի համար պարզ է դառնում մեր միջնադարեան ծաղկողների ստեղծագործական թեմատիկան: Մանրանկարների մասնագիտական վերլուծութիւնը հեղինակը տալիս է յաջորդ բաժնում, որը եւ հանդիսանում է հէնց նրա ուսումնասիրութեան հիմնական բնագաւառը:

VIII. *Դիտողութիւններ*.- Այս բաժինը, բանասիրութեան եւ մանրանկարչութեան արուեստի տեսակէտից, ամենակարեւոր հատուածն է: Այստեղ դրսեւորում են հեղինակի հարուստ գիտելիքները մանրանկարչութեան եւ հայագիտութեան

բնագաւառներում: Տուեալ ձեռագրին վերաբերող բոլոր բանասիրական դիտողութիւնները հեղինակը կատարում է այս բաժնում՝ մատենագիտութեան ընձեռած տուեալների հաստատումներով, պարզում է ծաղկողի անձնատրութիւնը, եւ տուեալ բնագրի հետ առնչուող բազմաթիւ այլ հարցեր: Այնուհետեւ հեղինակը մասնագիտական լուրջ, գիտական խոր վերլուծութեան է ենթարկում ձեռագրի մանրանկարչական արուեստը, ցոյց տալիս ծաղկողի ոճական առանձնայատկութիւնները, Հայաստանում մանրանկարչական տարբեր դպրոցների եւ ուղղութիւնների աղերսն ու փոխարարութիւնները, քիզանդական եւ ուշ-դասական արուեստի փոխազդեցութեան հարցերը, լիովին եւ սպառնիչ կերպով արժէքատրում եւ գնահատում է տուեալ ձեռագրի մանրանկարները: Չափազանց առատ են հեղինակի նուրբ դիտողութիւնները, որոնք հայ մանրանկարչութեամբ զբաղուողի համար մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնեն:

Ուշադրութեան է արժանի յատկապէս հեղինակի աշխատանքի ոճը. նա իր իւրաքանչիւր խօսքը հիմնաւորելու համար տողատակին տալիս է բազմաթիւ աղբիւրներ՝ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլերէն, իտալերէն, ռումիներէն, յունարէն, լատիներէն լեզուներով. դրա շնորհիւ նրա Ձեռագրացուցակը առաւել պատկառելի եւ հաւաստի է դառնում: Հեղինակը իր եզրակացութիւնների մէջ միշտ հաշուի է առնում նախկինում հրատարակուած Ձեռագրացուցակներում արտայայտուած կարծիքներն ու տեսակէտները: Աւելին. եթէ տուեալ ձեռագրի հետ կապուած այս կամ այն հարցը արդէն լուծուած է նախորդ Ձեռագրացուցակներում, ապա յիշատակում է դրանք: Այսպիսով հեղինակի Ձեռագրացուցակը իր ներքին էութեամբ օրգանապէս կապուած է միւս բոլոր Ձեռագրացուցակների հետ՝ անկախ այն քանից, թէ ինչ լեզուով են նկարագրուած՝ հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, թէ՞ գերմաներէն: Այս հանգամանքը նոյնպէս հեղինակի գիտական ոճի յաւելադիր արժանիքներից մէկն է:

Գրախօսուող աշխատութիւնը, սակայն, զերծ չէ նաեւ թերութիւններից, որոնք, մեր կարծիքով, հետեւեալներն են.

1. Բովանդակութեան նշումը նկարագրութիւնը ունի մի խոցելի կողմ՝ բանասիրութեան առումով. անգլերէն լեզուով գրուած սոյն աշխատութեան մէջ նկարագրուած ձեռագրերի միւթերի վերնագրերն ու սկզբնատողերը հայերէն չեն բերուած, որի հետեւանքով Ձեռագրացուցակն օգտագործողը մնում է տարակուսանքների եւ անորոշութեան մէջ՝ տրուած միւթի ինքնութեան նկատմամբ: Այդ պատճառով բանասէրն ու բնագրագէտը բաւարարութիւն չեն կարող ստանալ՝ ի վիճակի չլինելով Ձեռագրացուցակից օգտուելու ինչպէս հարկն է: Ի դէպ, չպէտք է մոռանալ, որ Ձեռագրացուցակը առաւել մեծ նշանակութիւն ունի բանասիրութեան եւ բնագրագիտութեան համար:

Հեղինակը չի բերել նաեւ Յիշատակագրութիւնների եւ Յիշատակարանների բնագրերը, այլ բաւարարուել է սուկ նրանց անգլերէն թարգմանութեամբ: Այս մտեցումը դարձեալ ճիշդ չէ՝ մի քանի նկատառումներով. նախ՝ Յիշատակագրութիւնների եւ Յիշատակարանների բնագրերը հնագրական (պալեոգրաֆիկ) եւ լեզուաբանական՝ քերականական տեսակէտից շատ կարեւոր են հայ գրչութեան արուեստի եւ լեզուի պատմութեան ուսումնասիրման համար, երկրորդ՝ նրանք պատմական սկզբնաղբիւրներ են, որոնք իրենց անմիջականութեամբ ու վաւերականութեամբ անփոխարինելի են եւ անաչառ: Ի դէպ ասենք, որ 1937 թ. հեղինակի հրատարակած «Չարդանկարուած հայերէն ձեռագրեր» աշխատութեան Յաւելուածում յաջորդաբար բերուած են Յիշատակագրութիւնների եւ Յիշատակա-

րանների բնագրերը, որոնց կողքին՝ նաև նրանց ֆրանսերեն թարգմանությունը¹, ինչպես դրանից առաջ արել են Կոնիքերը² և ուրիշները:

2. Չի պատճառարանում նաև դիմանկարների և խորանների նշումը բովանդակության մեջ. դրանց տեղը ոչ թե բովանդակության բաժնում է, այլ՝ մանրանկարչության և զարդարուեստի:

3. Հեղինակի բազմակողմանի և խոր իմացումը բիզանդական, երոսյական, պարսկական, արաբական, սելջուկեան մանրանկարչության և զարդարուեստի բնագաւառում գայթակղեցնող մոմենտ է ծառայել շեշտը աւելի շուտ դնելու ազդեցությունների, քան հայ մանրանկարչության ինքնատիպության վրայ:

Իբրև եզրակացութիւն նշենք, որ չնայած այս թերութիւններին, գրախօսուող աշխատութիւնը կարելուր ներդրում է հայագիտութեան և մասնատրապէս հայ մանրանկարչութեան ու զարդարուեստի բնագաւառում:

ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հասարակագիտական բաժանմունքի
«Պատմա-բանասիրական հանդէս»,
1960, Թ. 4:

EZNIK DE KOLB, De deo, Patrologia
Orientalis, tome XXVIII, Fascicules
3, 4. Edition critique du texte arménien
et traduction française, notes et tables,
par Louis Mariès et Ch. Mercier, Paris,
1959.

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ. Յաղագս Աստուծոյ, Հայերէն
բնագրի բնական հրատարակութիւն և ֆրանսերէն
թարգմանութիւն, ծանօթագրութիւններ
և ցանկեր, Լուի Մարիէ և Շ. Մերսիէ, Փարիզ,
1959:

Եզնիկ Կողբացի V դ. հայ այն խոշոր հեղինակներից է, որի փիլիսոփայական երկի բովանդակության ու կառուցուածքի շուրջը մեր բանասիրության մէջ արտայայտուել են տարբեր տեսակետներ: Հայագետներից ոմանք գտնում են, որ Եզնիկի երկը սոսկ յունական, ասորական և պարսկական տարբեր աղբիւրների ծաղկաբաղ է, առանց կառուցուածքային միասնութեան, շարադրուած նիւթի տար-

¹ Sh'u nrua' «Manuscripts armeniens illustres des XIIe, XIIIe et XIVe siècles», Paris, 1937, էջ 171-184:

² Sh'u Frederick Conybeare, A Catalogue of the Armenien Manuscripts in the British Museum, 1913:

բեր հատուածների մէջ առանց ներքին սերտ կապի ու միաձուլութեան: Ոմանք էլ այն կարծիքին են, որ թէև անվիճելի է օգտագործուած տարբեր աղբիւրների առկայութիւնը Եզնիկի աշխատութեան հիմքում, սակայն կասկածից վեր է, որ այդ աշխատութեան հեղինակը մէկ անձնատրութիւն է, միւս կողմից ընդունում են, որ Եզնիկի աշխատութեան ձեռագրային միակ օրինակը թերի է, պակասատր և կամ ունի կառուցուած-քային խախտումներ:

Եզնիկի մասին, իբրև V դ. հայ փիլիսոփայի և Մեսրոպ Մաշտոցի առաջին աշակերտներից մէկի, յիշատակում են Կորիւնը և Խորենացին, իսկ Եղիշէի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատութեան մէջ Աշտիշատի ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցանկում յիշում է նաև Բագրեւանդի եպիսկոպոս Եզնիկը, որը հաւանաբար նոյն Եզնիկ փիլիսոփան է: Յետագայ դարերում միայն Կիրակոս Գանձակեցիին է երկու անգամ յիշատակում նրան՝ առանց նոր բան աւելացնելու: Ուստի հաճելի անակնկալ է լինում և մեր մատենագրութեան համար կարելուր յայտնութիւն, երբ 1762 թ. Կ. Պոլսի պատրիարք Յակոբ Նալեանի կարգադրութեամբ Աբրահամ վարդապետը Չմիտնիայում հրատարակում է Եզնիկի երկը: Եզնիկի աշխատութեան ընդօրինակուած ձեռագիրը չի ունեցել ո՛չ գլուխների և ո՛չ էլ առանձին հատուածների բաժանում: Հրատարակիչը գրքի Յիշատակաբանում յայտնում է, որ Կ. Պոլսի Յակոբ պատրիարքն է զանազան պրակների բաժանել «զճառակերպ ասացուածսն սրբոյ հեղինակին»¹, վերնագրելով այն «Գիրք ընդդիմութեանց»: Այնուհետև Եզնիկի երկը դառնում է մեր բանասիրութեան մանրագնին քննութեան առարկան:

Արտն Բագրատունին 1826 թ. Վենետիկում վերահրատարակում է Եզնիկի երկի Չմիտնիայի տպագիր օրինակը՝ տալով իր ուրոյն բաժանումները: Բագրատունին ենթադրում է, որ Եզնիկի աշխատութիւնը հիմնականում բաղկացած պէտք է լինի չորս գրքերից, որոնք են՝ ա) Եղծ աղանդոց հեթանոսացն, բ) Եղծ քէշին պարսից, գ) Եղծ կրօնից Յունաց իմաստնոցն և դ) Եղծ աղանդոյն Մարկիոնի: Բագրատունու կատարած այս բաժանումը հիմնականում ընդունում է հայ բանասիրութեան կողմից անվերապահ կերպով և նոյնութեամբ պահպանում յետագայ վերահրատարակութիւններում:

Սակայն այս բաժանումը եւս իրեն չի արդարացնում ևս առաւել եւս խճճում է Եզնիկի երկի բովանդակութեան ու կառուցուածքի տարբեր հատուածների փոխյարաբերութեան հարցը: Երկար ժամանակ անյայտութեան մէջ էր մնում Եզնիկի երկի միակ ձեռագիրը, որը ենթադրում էր, թէ հրոյ ճարակ է եղել Չմիտնիայի 1841 թ. մեծ հրդեհի ժամանակ:

Մեծ բարեբախտութիւն է, որ Հ. Աճառեանը գտնում է այն Էջմիածնի մատենադարանում և «Հանդէս ամսօրեայ»ի միջոցով հաղորդում իր այս նորոյթի մասին: 1902 թ. յօդուածաշարի ձեւով «Հանդէս ամսօրեայ»ի էջերում Հ. Աճառեանը, Գ. Տէր-Սլրտչեանի աշխատակցութեամբ, լոյս է ընծայում «Ըննութիւն և համեմատութիւն Եզնկայ նորագիտ ձեռագրին» աշխատութիւնը, որտեղ տալիս է ձեռագրի տարբերութիւնները Բագրատունու՝ 1826 թ. հրատարակածի հետ և կատարում լեզուական-քերականական ուղղումներ՝ ելնելով դասական հայերէնի լեզուական առանձնայատկութիւններից ու օրինաչափութիւններից: Այդ ուղղումները չափազանց արժէքատր են բնագրում տեղ գտած աղաւաղումներն ու վրիպումները վե-

¹ «Գիրք ընդդիմութեանց արարեալ ի սրբոյ Եզնկայ Կողբացոյ հայոց վարդապետ և յաշակերտ նեծի թարգմանին մերոյ սրբոյն Մեսրոպայ, յամի Հայոց 1211 (+ 551 = 1762), յեզնիք», էջ 288-289:

բացնելու եւ Եզնիկի երկի գիտական բնագրի պատրաստման գործը յաղթահարելու ուղղութեամբ:

Այնուհետեւ Եզնիկի երկի նկատմամբ հայագետների հետաքրքրութիւնը առաւել եւս մեծանում է: Աղբիւրագիտական պրպատումները կարող էին մի կողմից բացայայտել նրա օգտագործած սկզբնաղբիւրները, միւս կողմից՝ երեւան հասնել այնպիսի աշխատութիւններ, որոնք պատմական ճակատագրով չբացել են եւ որոնց բնոյթն ու նշանակութիւնը հնարատր է: Խմանալ միայն այն քաղուածքներից, որ Եզնիկը բերում է իր երկում: Այս առումով առաւել ուշագրաւ է յատկապէս Գալեմբերեանի «Նորագոյն աղբերք Եզնկայ» յօդուածաշարը, որը տպուել է «Բազմավէպ»ում:

Յետմահու հրատարակութեամբ 1959թ. Փարիզում, Գ. Կիլպէնկեան ֆոնդի միջոցներով լոյս տեսաւ ակնատր հայագետ Լուի Մարիէսի կազմած Եզնիկի քննական բնագիրը եւ նրա ֆրանսերէն թարգմանութիւնը, աշխատակցութեամբ Շ. Մերսիէի:

Լ. Մարիէսի այս նոր հրատարակութեամբ հայագիտութիւնը հարստանում է Եզնիկի երկի քննական բնագրով: Մակայն նախապէս նշենք, որ մենք չէինք ունենայ Եզնիկի երկի գիտական այս հրատարակութիւնը, եթէ հեղինակը հանդէս եկած չլինէր եզնիկագիտութեան բազմաթիւ կնճռոտ հարցերի ուսումնասիրութեանը նուիրուած մի ուրիշ աշխատութեամբ, որի տեսական եւ բանասիրական հետազոտութիւնների վրայ է հիմնում ներկայ աշխատութիւնը: Այդ պատճառով էլ գրախօսուող աշխատութեան արժանիքների մասին ճիշդ պատկերացում կազմելու համար հարկադրուած ենք նախապէս քննութեան առնել եւ շարադրել այն հայեացքներն ու դրոյթները, որ հեղինակը զարգացրել է դեռեւս 1924 թ. հրատարակած իր մենագրութեան մէջ¹:

Հայ բանասիրութեան համար խիստ կարեւոր էր պարզել, թէ Եզնիկը ի՞նչ չափով եւ ի՞նչպէս է օգտուել իր սկզբնաղբիւրներից, ո՞րն էր աղբիւրներից օգտուելու նրա եղանակը: Լ. Մարիէսը այս առնչութեամբ իր մենագրութեան մէջ ամենայն մանրամասնութեամբ քննում է բոլոր այն տեսակետներն ու դրոյթները, որ մինեւ այդ արտայայտուել են հայագիտութեան մէջ: Նախ եւ առաջ նա վերանայում է Եզնիկի բնագրի Բագրատունու տուած բաժանումները՝ համոզիչ փաստարկներով ու առարկութիւններով ցոյց տալով, որ դրանք ամենեւին չեն բխում Եզնիկի նպատակադրումից ու հարցադրումներից: Մանրագնին քննութեամբ, հարցերի ու հարցադրումների համադրման ու խմբաւորման միջոցով հեղինակը պարզում է բնագրի յստակ ու ջինջ պատկերը, որ, ամտարակոյս, աւելի հարագատ է Եզնիկին: Նման մօտեցումը հնարատր է դարձնում առաւել հիմնաւորուած եւ պատճառաբանուած ձեւով բնագրային նոր, գիտական ձեւաւորում տալու ուսումնասիրուող ձեռագրին: Այդ դէպքով բանասէրի թափանցող աչքից չեն կարող վրիպել այնպիսի անյարիր կապակցութիւններ հատուածների կամ պարբերոյթների միջեւ, որոնք առաջանում են կամայական ու բռնազբօսիկ վերնագրումների ժամանակ եւ խարտիկ պատրանք ստեղծում հնարատր խախտումների կամ էլ՝ պակասող միւրերի մասին: Միւս կողմից՝ բովանդակութեան ներքին կապերի ու յարաբերութիւնների ուսումնասիրումը մղում է բանասէրին աւելի խոր ճանաչելու իր հետազօտած

հեղինակին, բացելու բոլոր այն մութ ծալքերը, որոնք խանգարում են բնագրի, ըստ ամենայնի, ճիշդ ըմբռնմանն ու իւրացմանը:

Այդ տեսակետից եզնիկագիտութեան մէջ լուրջ ներդրում է ֆրանսերէն այն թարգմանութիւնը, որ տուել է Մարիէսը, Լը Վայեան դը Ֆլորիվալի համեմատաբար անյաջող թարգմանութիւնից յետոյ¹: Այստեղ Եզնիկի ամբողջ շարադրանքի բաժանումներն ու ենթաբաժանումները ընդհանուր առմամբ կատարուած են ճիշդ: Եզնիկի թարգմանութիւնը ներկայացուած է այսպէս. ա) Ներածութիւն, բ) Մասն առաջին, իր երկու մեծ բաժիններով. գ) Մասն երկրորդ. դարձեալ իր երկու բաժիններով: Սրանք իրենց հերթին ունեն ներքին բազմաթիւ պարբերոյթներ ու ենթապարբերոյթներ, որոնք իմաստաւորուած են համապատասխան վերնագրերով. ընդ որում այդ վերնագրումները երբեմն վերաբերում են շատ փոքր հատուածների: Բնագրի բաժանումների այդ մանրատուութիւնը պատճառաբանում եւ արդարացում է նրանով, որ Եզնիկի երկը իր բնոյթով գերազանցապէս բանավիճային է. բնականաբար նրա շարադրանքի ու ոճի երանգաւորումը նոյնպէս, ըստ էութեան, հռետորական, հրապարակախօսային ու մարտական յագեցուածութիւն ունի: Մակայն եթէ հեղինակին ընդհանուր առմամբ յաջողուել է տալ թեմատիկ եւ առարկայական բաժանումներ ամբողջ բնագրում, ապա նոյն բանը չենք կարող ասել այդ թեմատիկ եւ առարկայական բաժանումների բնութագրումների մասին. բնութագրումներ, որոնք պայմանաւորուած են Մարիէսի աշխարհայեացքով: Այստեղ ծագում է կարեւոր մի հարց. ո՞րն է Եզնիկի աշխատութեան գնահատման Մարիէսի ելակետը, ի՞նչ տեսանկիւնից է նա արժեքաւորում այն:

Եթէ Եզնիկի աշխատութիւնը գնահատենք սուկ իբրեւ քրիստոնէական դաւանանքի ջատագովութիւն, ինչպէս սխալմամբ կարծում է Մարիէսը, ապա բնականաբար առարկայական բաժանումների բնութագրումներն էլ մեծ մասամբ աստուածաբանական դատողութիւնների երանգաւորում պիտի ունենան: Այդ նշանակում է, որ շատ բան կախուած է ճիշդ ելակետից: Այդ պատճառով էլ գտնում ենք, որ այլ լեզուներով յետագայ թարգմանութիւնների ժամանակ անհրաժեշտ է անպայման վերանայել Մարիէսի տուած առարկայական բաժանումների բնութագրումները: Բանն այն է, որ իրականում Եզնիկի աշխատութիւնը ոչ թէ աստուածաբանական երկ է, այլ առաջին հերթին *մարքանան հզօր գէնք է՝* հայ ժողովրդի համար պատմական բախտորոշ մի ժամանակաշրջանում, ինքնապահպանման ու յարատեւման գաղափարախօսական մարտահրաւր՝ մի կողմից բիւզանդացիների, միւս կողմից՝ պարսիկների հետ ձուլուելու վտանգի դէմ: Դրանով կարելի է բացատրել Եզնիկի աշխատութեան կրքոտ ու միաժամանակ դիպուկ, գաղափարական հակառակորդներին խոցող, ոչնչացնող ոճը՝ թշնամական հոսանքների եւ ուղղութիւնների դրոյթները մերկացնելիս ու մերժելիս, նրա սուր ծաղրն ու սպանիչ արհամարհանքը:

Եզնիկի աշխատութեան ընդհանուր գնահատականի հարցում Մարիէսի անընդունելի տեսակետը իր արտայայտութիւնն է գտել ինչպէս մենագրութեան, այնպէս էլ թարգմանութեան բուն իսկ խորագրում՝ որպէս «Յաղագս Աստուծոյ» (De Deo): Մարիէսը իր մենագրութեան առաջաբանում մերժում է Չմիւռնիոյ հրատարակութեան «Գիրք ընդդիմութեանց», Վենետիկի «Եղծ աղանդոց», Վիեննայի «Ընդդէմ աղանդոց» խորագրերը, պատճառաբանելով, թէ իբր դրանք չեն բացայայտում Եզնիկի բնագրի բովանդակութիւնը, քանի որ Մարիէսի կարծիքով, Եզնիկի մտա-

¹ Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de "Contre les Sectes". Études des critique litteraire et textuelle, par Louis Mariès, Paris, 1924.

¹ Le Vaillant de Florival.. Refutation des differentes sectes de Païens, de la religion des Perses, de la religion des Sages de Grèce, de la secte de Marcion, par le Docteur Eznik..., Paris, 1853.

հոգութիւնն ու նպատակադրումը ոչ այնքան տարբեր աղանդների դէմ պայքար ծառայելն էր, որքան Աստուծոյ փառաբանութիւնն ու ջատագովութիւնը...: Այդպիսի բացատրութիւնը հիմնովին սխալ է եւ կանայական: Հայ բանասիրականագրութիւնը քննադատութիւնը ժամանակին բացասաբար է արտայայտուել այդ տեսակետի մասին: Եթէ Մարիէտը ճիշդ լինէր այդ հարցում, ապա Եզնիկը իր առաջարկումը երբէք չէր ասի, թէ Աստուած իր էութեամբ անքննելի է եւ իր բնոյթով՝ անհասանելի, ուստի եւ նրա նկատմամբ չէր պահանջի անքննադատ վերաբերմունք եւ կոյր հաւատք ցուցաբերել («Եւ արդ քանզի մի էութիւնն անքննելի է եւ անհաս քննեամբ, առ նորա անքննութիւնն ընծայութիւն անգիտութեան մատուցանելի է. եւ առ էութիւն նորին դաւանութիւն գիտութեան եւ ոչ քննութեան»): Այստեղից տրամաբանօրէն հետեւում է, որ անքննելի եւ անտեսանելի երեւոյթին յատուկ աշխատութիւն նուիրելը որեւէ նշանակութիւնից զուրկ կը լինէր, քանի որ նախապէս խոստովանում է, որ դա վեր է մարդկային բանականութեան հասողութիւնից ու ենթակայութիւնից: Եթէ իրօք Եզնիկի երկը Աստուծոյ ջատագովութիւնը լինէր, ապա խիստ կը նուազէր նրա ընդհանուր արժէքը, նրա հասարակական ու քաղաքական նպատակաւարացութիւնը, ուստի եւ չէր ունենայ այն նշանակութիւնը, որ նա իրաւամբ ունի:

Մարիէտի մեկնադրութեան առաւել ուշագրաւ եւ արժէքատու հատուածը Եզնիկի *օգտագործած աղբիւրների քննութեանը վերաբերող գրութիւնն է*: Այստեղ հեղինակի ներդրումը իրօք որ շատ մեծ է: Այս հատուածում հեղինակը տեսութաբանական եւ աղբիւրագիտական լուրջ հետազոտութեան է ենթարկում Եզնիկի երկը: Մարիէտը այս բաժնում նախ քննում է Եզնիկի օգտագործած այն սկզբնաղբիւրները, որ արդէն ծանօթ են հայ բանասիրութեանը. բայց այստեղ առաւել մեծ ուշադրութիւն է դարձնում տեսութաբանական այնպիսի կարեւոր հարցերի լուսաբանման վրայ, որոնք բնորոշում են, թէ ի՞նչ եղանակով եւ ո՞րչափով է օգտուել ու քաղուածքներ բերել Եզնիկը տարբեր հեղինակներից, ի՞նչպէս են այդ քաղուածքները վարպետօրէն ու արուեստով ներհիւսուել նրա ստեղծագործական պլանում, եւ ի՞նչ չափով, չնայած աղբիւրների առատ օգտագործման փաստին, այնուամենայնիւ, Եզնիկը մնացել է *ինքնուրոյն եւ միակ ճարտարապետը իր երկի*: Այս հարցերի պարզաբանման ու գիտական լուրջ հետետեսութիւնների յանգամանք նպաստել է ոչ միայն հեղինակի հայագիտական լուրջ պատրաստութիւնը (աշակերտել է Անտուան Մեյէին եւ Ֆր. Մակլէրին), այլեւ նրա խոր իմացութիւնը ասորագիտութեան, յունագիտութեան եւ լատինագիտութեան բնագաւառներում: Ընդդէմ նրա բազմատեղեակութեան եւ բանասիրական անվիճելի հմտութեան, արդէն իսկ ծանօթ փաստերի վերագնահատման մէջ անգամ Մարիէտը նորութիւն է բերում:

Հեղինակը ուշադրութիւն է հրաւիրում այն բանի վրայ, որ Եզնիկը քաղուածքներից օգտուելիս հանդէս է բերում իւրօրինակ մօտեցում. նա շատ անգամ հարագատ չի մնում իր աղբիւրին եւ բուն իսկ մէջբերումների մէջ փոփոխութիւններ է մտցնում, վերածելում եւ վերադասաւորում է սկզբնաղբիւրի տրամաբանական կառուցուածքը յարմարեցնելով իր տրամաբանութեանն ու նպատակադրումին, որով նոյնիսկ պատրանք է ստեղծում այդ տողերի նկատմամբ իբրեւ սեփական մտալոյցումի: Անշուշտ, միջնադարում, երբ որոշակի նորմաներ չկային աղբիւրներից օգտուելու կարգի վերաբերեալ, նման մօտեցումը բոլորապէս էր: «Նախ եւ առաջ Եզնիկը մանրացնում է վերածելում է իր քաղուածքները, - գրում է Մարիէտը, - որպէսզի կարողանայ դրանք մոծել մի նոր կառուցուածքի մէջ»¹: Ըարունակելով

զարգացնել նոյն միտքը, Մարիէտը եզրակացնում է. «Որքան էլ մեծ լինեն Եզնիկի մէջբերումները, այնուամենայնիւ նա գիտի ինքնուրոյն մնալ»¹:

Աղբիւրագիտական բաժնի երկրորդ մասում Մարիէտը ցոյց է տալիս Եզնիկի այն նոր աղբիւրները (թուով եօթ՝ Որոզինէս, Դիոդորոս Թարսացի, Աքիլէս Ստացիոս, Գրիգոր Նիսացի, Իրենէոս, Ադամանթիոս եւ Եփրեմ Ասորի), որոնք կարողացել է գտնել երկարատու պրպտումների շնորհիւ: Այդ աղբիւրների յայտնաբերումը ընդարձակում է խորացնում է հայ բանասիրութեան տեսադաշտը Եզնիկի աշխատութեան ներքին բովանդակութիւնը բացայայտելու տեսակետից: Հեղինակը յոյս է յայտնում, որ յետագայ պրպտումներն ու ջանքերը դեռ շատ բան կարող են ասել այլ աղբիւրների հետ Եզնիկի երկի առնչութեան մասին, բայց դրանից ամենեւին չի նսեմանայ Եզնիկի աշխատութեան նշանակութիւնը:

Մարիէտը կատարում է նաեւ բնագրում տեղ գտած սխալների, աղաւաղումների ու վրիպումների ուղղումներ: Ինչպէս յայտնի է, այդ ուղղութեամբ զգալի աշխատանքներ են կատարել Նորայր Բիզանդացին, Գալեմքեարեանը, Թոմեանը եւ Աճառեանը: Սակայն Մարիէտի առաջարկած ուղղումները բոլորովին անկախ են դրանցից: Տեսութաբանական խիստ պատասխանատու այդ աշխատանքները նա կատարում է, ելնելով մի դէպքում՝ սկզբնաղբիւրների հետ արուած մանրագին համեմատութիւնից, միս դէպքում՝ Եզնիկի երկի քննութիւնից: Եթէ առաջին դէպքում Մարիէտը, համեմատութեան միջոցով, հնարաւորութիւն է ընձեռում բանասէրներին առաւել յստակութեամբ եւ ճշգրտութեամբ ըմբռնելու Եզնիկի շարադրանքի առանձին ձեւակերպումները, որոնք թէեւ լեզուականօրէն անբերի են, բայց բովանդակած մտքերի առաւել բացայայտման եւ ցայտունութեան տեսակետից՝ անորոշ, ապա երկրորդ դէպքում, երբ ըստ բնագրի ենթադրուող աղաւաղումների փոխարէն առաջարկում են տարբեր բառեր կամ մեկնաբանութիւններ, կարելի է դրանց մի մասը ընդունել իբրեւ հաւաստի, միւսները՝ մերժելի կամ վիճելի: Այսպէս, Եզնիկի՝ «որ բաւական է որպէս ի տալն զկենդանութիւնն, նոյնպէս եւ ի գիտութիւն իւրոյ անարար էութեանն, եւ յիւրոց արարածոցն ի հաստմնն ըստ իւրաբանչիւր բնութեանց ածել» նախադասութեան մէջ ընդգծուած բառը Մարիէտը համարում է այդ տեղում «անհասկանալի, մթին», «անընթեռնելի», որովհետեւ դրա բառական իմաստը բացատրում է սոսկ իբրեւ «ամրութիւն» (solidité). մինչդեռ, բացի դրանից, այս բառը նշանակում է նաեւ «ստեղծում», «արարում», «զոյացում»: Տուեալ դէպքում Եզնիկի բնագրում ճիշդ է օգտագործուած այդ բառը եւ ամենեւին կարիք չկայ փոխարինելու այն մի ուրիշ բառով, ինչպէս Մարիէտն է առաջարկում՝ «հաստմն» բայանունով, որ անյարիւր է: Այնուհետեւ նոյն նախադասութեան մէջ «յիւրոց արարածոցն» բառակապակցութեան հոլովը հեղինակը սեռական է համարում, այնինչ բացառական է եւ պէտք է մեկնել՝ «արարածների կողմից»: Բոլորովին անհարկի եւ անելող է «զի մի՛ մթարքն՝ որ զբօք շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւնն յուայն լիցին» բարդ ստորադասական նախադասութեան մէջ «շողայցեն» բառի փոխարինումը «շողալիս իցեն» կամ «շողալիսիցեն» բառերով: Անհրաժեշտ է նկատել, որ Եզնիկի աշխատութիւնը ոչ թէ սոսկ փիլիսոփայական երկ է, այլեւ միաժամանակ գեղարուեստական ստեղծագործութիւն. ուստի եւ իր մտքերը առաւել զեղեցիկ եւ դիպուկ արտայայտելու համար Եզնիկը յաճախ է դիմում դասական հայերէնի գեղարուեստական հնարներին, բառերի գործածութեան փոխաբերական իմաստներին ու գրական ոճաւորմանը: Տուեալ դէպքում, երբ խօսքը վերաբերում է աչքի շուրջ գտնուող «ճպտոին» (այստեղ մթարք գոյականը գործածուել է «բիծ»

¹ 1924 թուականի Մեկնագրութիւնը, էջ 85:

¹ Նոյն տեղում, էջ 92:

«ճպուռ» բառի հոմանիշային արժեքով՝ որպես պետախոսքին, որ կիրառուել է անմիջապես նախորդող նախադասութեան մէջ, շատ բնական է եւ պատկերատոր նրա բնոյթը բացայայտել «շողայցեն» բայաձեւով: Ի դէպ, նշենք նաեւ, որ ֆրանսերէն թարգմանութեան մէջ յաճախ Մարիէտը չի ըմբռնում դասական հայերէնում «եւ» շաղկապի ունեցած իմաստային ամենատարբեր առումները (միասնութիւն, ներհակութիւն) եւ բոլոր դէպքերում թարգմանում է միասնութեան յարաբերութիւն ցոյց տուող ֆրանսերէն համապատասխան շաղկապով (et). մինչդէռ դրանից, անտարակոյս, աուժում է Եզնիկի միտքը այն դէպքերում, երբ գրաբարի «եւ» շաղկապը բարդ համադասական նախադասութիւնների մէջ բաղադրիչ մասերի ներհակութիւնն է ցոյց տալիս: Այսպէս՝ «... պարզեւ գիտութիւն ամենայն անգիտաց, եւ ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագէտ գիտութիւնն եւ ինքն մնայ անխախտաւ յամենահնար իմաստութեանն» («... et il fait don de science a tous ceux qui sont sans science. et lui-même en totalité en lui-même la science omniscience et a gros buillions sur tous il fait jaillir l'indelectible sagesse et lui-même demeure inébranlable en la tout inventive sagesse», էջ 550): Ընդգծում է եւ- շաղկապը միայն ու միայն ներհակութեան, հակադրութեան զաղափար կամ յարաբերութիւն է արտայայտում, ինչպէս՝ բայց, սակայն, մինչդէռ, այնինչ շաղկապները: Յաճախ նկատում ենք ընդ նախդիրի միայն մէկ իմաստի (միասնութեան զաղափար) ըմբռնում թարգմանութեան մէջ. մինչդէռ գրաբարում այդ նախդիրը կիրառական բազմաթիւ իմաստներ է արտայայտում՝ նայած թէ ինչ խնդրատեան մէջ է գտնուում: Օրինակ՝ «... եւ զիս՝ չէականքն եւ չմշտնջենատորք ընդ էականին եւ ընդ մշտնջենատորին երկրպագութիւն առնուցուն» (Et comment les (êtres) qui n'ont pas, par essence l'être et ne sont point eternels, iront-ils, avec l'Être, qui a, par essence l'être, et avec l'Eternel, recevoir adoration», էջ 552): Այստեղ ընդ նախդիրը երկու դէպքում էլ տրական խնդիր է վերցրել (էականին, մշտնջենատորին) եւ արտայայտում է *փոխարինութեան* իմաստ (ինչպէ՞ս է որ ոչ-էական եւ ոչ-մշտնջենատոր արարածները երկրպագութիւն են ընդունում էականի եւ մշտնջենատորի *փոխարէն*, *նրանց տեղ*), մինչդէռ Մարիէտը թարգմանել է *միասնութեան առումով* էականի եւ մշտնջենատորի հետ (avec) կապով, որը շատ հեռու է եւ նոյնիսկ խեղափոխում է Եզնիկի բուն միտքը: Երբեմն շփոթում են նաեւ գրաբարի յօդի կիրառութեան տարբեր հանգամանքներն ու նրանց արտայայտած տարբեր իմաստները: Այսպէս. «Եւ մանաւանդ մարմնատորք եւ երեւելիք, որպէս արեգակնն եւ լուսինն եւ աստեղք եւ հուր եւ ջուր եւ երկիր, որ ի մոզոց եւ ի հեթանոսաց պաշտին» («Et surtout des (êtres) corporels et visibles, comme votre soleil et votre lune, et astres, et eau, et terre, et par Païens sont culturelement honorés, էջ 552): Եւ- յօդը դրում է միայն արեգակ եւ լուսին բառերի վրայ ոչ թէ այն իմաստով, որ նշանակի ձեռք արեգակը, ձեռք լուսինը, ինչպէս կարծում է Մարիէտը (votre), այլ այն իմաստով, որ նշում է գոյականներից (աստեղք, հուր, ջուր, երկիր) միայն արեգակ եւ լուսին բառերն են նախապէս յիշուած, ուստի եւ եւ- յօդը գործածում է որոշիչի նշանակութեամբ:

Հեղինակը գրաբարի «բաւական է» դիմազուրկ բայի իմաստը հասկանում է արդի իմաստով («հերիք է», «suffit), մինչդէռ դասական հայերէնում գերազանցապէս նշանակում է՝ «կարող է», «ի վիճակի է»: Հմտ. «... որ բաւականն է որպէս ի տալն զկենդանութիւն, նոյնպէս եւ ի գիտութիւն իւրոց անարար էութեանն (lui précisément qui suffit, comme à donner la vie, pareillement aussi à conduire jusqu'à la connaissance (non comprehensive) de son essence increée..., էջ 519):

Ի գուր է հեղինակը, հետեւելով ձեռագրին, անքնին բառի սխալ ձեւը դրել իր կազմած բնագրում («անքնին»), որովհետեւ ան- ժխտական ածանցն է, իսկ քնին

արմատը. աստեղ չկայ շեշտից կախում ինչիւնափոխութիւն, որպէսզի ստանալին կրկնակ (նն), ինչպէս՝ քննութիւն, հետաքննելի եւ այլն:

Անհրաժեշտ է սակայն ընդգծել, որ մատնանշուած թերութիւններն ու վրիպումները ամենեւին չեն նսեմացնում Մարիէտի Մեծագրութեան եւ թարգմանութեան արժեքն ու նշանակութիւնը: Դրանք երկուսն էլ արժեքատու ներդրում են եզնիկագիտութեան բնագաւառում:

Բնագիրը կազմելիս Լ. Մարիէտը հիմք է ընդունել Եզնիկի երկի 1826 թ. Բագրատունու հրատարակութիւնը՝ բաղդատելով ձեռագրի այն տարբերակներին, որոնք հրատարակել են Հ. Աճառեանն ու Գ. Տէր-Սկրտչեանը: Մուրանկին փակագծերում, իբրեւ ենթադրուող բացթողումների լրացումներ, տրուել են հեղինակի կողմից առաջարկուող վերականգնումները, որոնք մեծ մասամբ հիմնուած են յունական սկզբնաղբիւրների մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, իսկ տողատակում տրուում են տարբերակները (նոյնիսկ ուղղագրական բնոյթի ամենաչնչին տարբերութիւնները) եւ հնագրագիտական բնոյթի առանձին նշումներ ձեռագրի նկատմամբ: Ամբողջ բնագիրը, ինչպէս ձեռագրում, ներկայացւում է առանց բաժանումների, գլուխների կամ պարբերութիւնների, վերջում միայն տրուում են Մարիէտի առաջարկած բաժանումները ֆրանսերէն լեզուով՝ իրենց նոր վերնագրերով:

Ֆրանսերէն թարգմանութիւնը կատարուած է բարձր որակով, բարեխղճութեամբ ու խնամքով: Այստեղ արդէն հեղինակը տուել է թեմատիկ ու առարկայական նիւթերի իր բաժանումները, ընդ սմին՝ բնութագրումներով, համապատասխան նշումներով: Թարգմանութեան վերջում ներկայացւում է ծանօթագրութիւնների հարուստ բաժինը ընդգրկում է շուրջ 1046 բացատրութիւն: Ծանօթագրութիւնների բաժինը, առանց վերապահութեան, կարելի է համարել ուսումնասիրութիւն: Այստեղ ոչ միայն մեկնաբանում են Եզնիկի բնագրի առանձին մութ եւ խորքին տողերը, յունարէն սկզբնաղբիւրների միջոցով լուսաբանում համապատասխան տեղերը, հնագրագիտութեան եւ այլ յարակից ու օժանդակ փաստերի միջոցով տրուում են կարեւոր վերականգնումներ, այլեւ ցոյց է տրուում, թէ մեկնաբանման ինչ տարբերութիւններ կան իր եւ միւս թարգմանութիւնների միջեւ, մերժում կամ ընդունում է այս կամ այն մեկնաբանութիւնը եւ կամ էլ աւելացւում են իմաստի նոր նրբբանումներ: Վերջում տրուում են Աստուածաշնչից Եզնիկի կատարած մէջբերումների տեղերը, ինչպէս եւ առարկայական նիւթերի ցանկը:

Այսպիսով, մեր հայագետների ուշադրութիւնը հրաւիրելով Մարիէտի հրատարակած Եզնիկի բնագրի եւ ֆրանսերէն թարգմանութեան անժխտելի արժանիքների վրայ, գտնում ենք, որ V դարի մեր մատնագրութեան ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկի՝ Եզնիկի այլ լեզուներով յետագայ թարգմանութիւնների յաջողութիւնը կարող է երաշխատրուել, երբ քննադատաբար կիրառուեն այդ բնագաւառում Մարիէտի կատարած ներդրումները:

Գիտութիւնների ակադեմիայի
Հասարակագիտական բաժանմունքի
«Պատմա-բանասիրական հանդէս», Թ.2, 1962:

ԴՈՎՏՈՐ ՉԱՐԼՁ ԴԱՌԻՍԷԹԻ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երոպայում հայագիտության զարգացմանը իրենց նպաստն են բերում նաև անգլիացի հայագետները, ինչպես՝ Ուինստոն եղբայրները, Կոնիքերը, Բեյլեն և ուրիշներ: Դրանց մեջ իր տասնամեայ հայագիտական գործունեությանը աչքի է ընկնում նաև բանասիրական գիտությունների Դոկտոր, Լոնդոնի Արեւելեան և Աֆրիկեան լեզուների ինստիտուտի հայագիտության դասախօս Չարլզ Դաուսթը:

Ծնունդ է 1924 թուականին: Իբրև ուսանող սովորել է Օքսֆորդի համալսարանում՝ յաճախելով ֆրանսիական գրականության դասընթացները: 1947 թ. ընդունվում է Քեմբրիջի համալսարանը, որտեղ հմտանում է համեմատական լեզուաբանության ու արեւելեան լեզուների մեջ. իսկ 1949 թ. ստանում է ժամանակակից և միջնադարեան ժողովուրդների լեզուների իմացության վկայական՝ առաջին կարգի պատուգրով: Բանասիրության ընդհանուր տեսության և գիտական մեթոդաբանության խրատման համար աշակերտել է դոկտոր-պրոֆեսոր Հ. Բեյլենին:

Իբրև հիմնական մասնագիտություն նախընտրելով հայագիտությունը, պրոֆ. Չարլզ Դաուսթը 1950-1954 թթ. շարունակում է իր ուսումնառությունը այս անգամ Փարիզում՝ յաճախելով Արեւելեան կենդանի լեզուների ազգային ինստիտուտի և կաթոլիկական ինստիտուտի դասընթացները և ստանում երկու վկայական՝ հայագիտության ու վրացագիտության մասնագիտացումով: Այստեղ աշակերտում է հայագետներ Ֆրեդերիկ Ֆեյդիին և Շառլ Մերսիեին:

Բայց պրոֆ. Չարլզ Դաուսթի համար առաել յատկանշական տարին լինում է 1954 թուականը, երբ Քեմբրիջում հայագետին շնորհում է բանասիրական գիտությունների Դոկտորի կոչում՝ միջնադարեան յայտնի հայ մատենագիր Մովսէս Կաղանկատուացու (Դրասխանակերտցու) «Պատմություն Աղուանից» երկի ուսումնասիրության և անգլերեն փայլուն թարգմանության համար: Եւ նոյն թուականին նշանակվում է հայագիտության դասախօս՝ Լոնդոնի համալսարանի Արեւելեան և Աֆրիկեան հետազոտությունների բաժանմունքում, որտեղ և շարունակում է պաշտօնավարել: Ուշագրաւ է նաև, որ պրոֆ. Չարլզ Դաուսթի ղեկավարութեամբ Լոնդոնում հայագիտության բնագաւառում հմտանում են մի շարք անգլիացի ուսանողներ:

Պրոֆ. Դաուսթի համար երկար տարիների ցանկություն է եղել լինել Սովետական Հայաստանում:

Եւ ահա այն թուականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին պրոֆ. Չարլզ Դաուսթը պաշտօնական հիւրն էր Սովետական Հայաստանի հայագիտության կարեւորագոյն կենտրոններից մէկի՝ Մաշտոցի անուան Մատենադարանի: Այդ

օրերին անգլիացի հայագետը մեծ եռանդով աշխատում էր հայկական ձեռագրերի վրայ, նիւթեր քաղում իր յետագայ ուսումնասիրությունների համար, լուսանկարում մեր մանրանկարչութեան լուսագոյն նմոշները, մատենագիրների դիմանկարները՝ հայագիտությունն ուսումնասիրող իր ուսանողներին ցուցադրելու մտադրութեամբ, իսկ ազատ ժամերին էլ ուղեւորություններ էր կատարում դէպի Հայաստանի պատմական յուշարձանները՝ սեփական աչքերով տեսնելու և լրացնելու իր այն գիտելիքները, որ տարիներ շարունակ փութաջանութեամբ քաղել է հայագիտական գրքերից ու աշխատություններից: Նա միաժամանակ հանդիպումներ էր ունենում Սովետական Հայաստանի հայագետների՝ պատմաբանների, լեզուաբանների ու բանասերների հետ, տեղեկանում Հայաստանում ծաւալուող հայագիտական աշխատանքներին և այլն:

Հոկտեմբերի 2ին Մաշտոցի անուան Մատենադարանում, մեր գիտական հասարակայնության առաջ, պրոֆ. Դաուսթը հայերէն լեզուով հանդէս եկավ հետաքրքրական մի զեկուցումով՝ «Մովսէս Խորենացու և Ամմիանոս Մարկելիանոսի առնչութեան մասին» թեմայով, ինչպէս նաև ամփոփ հաղորդում առեց Երոպայում ծաւալուող հայագիտական աշխատանքների վերաբերեալ:

Պրոֆ. Դաուսթը վերջին տարիներին հրատարակել է մի շարք յօդուածներ և աշխատություններ, որոնք վերաբերում են հայ մատենագրութեան յուշարձանների վերհանման ու լուսաբանման հարցերին, դրանով իսկ իր կարեւոր վաստակը բերելով հայագիտության զարգացմանը Երոպայում:

«Անտեսուած մի հատուած կովկասեան աղուանների պատմութիւնից» (A Neglected Passage in the History of the Caucasian Albanians) յօդուածը պրոֆ. Դաուսթը 1957 թ. լոյս է ընծայում Լոնդոնի համալսարանի «Արեւելեան և աֆրիկեան հետազոտությունների ինստիտուտի բիւլետէն»ում: Սոյն յօդուածում հեղինակը արեւմտաեւրոպական գիտնականների ուշադրութիւնն է հրաւիրում Մովսէս Կաղանկատուացու հանրայայտ աշխատութիւնից մի հատուածի վրայ, որը գտնուում է Բրիտանական թանգարանում պահուած հայկական ձեռագրերից մէկում: Այդ հատուածը բացակայում է պրոֆ. Պատկանեանի և Մ. Էմինի կատարած ռուսերէն թարգմանութիւններում (1860), ուստի դրանով էլ պայմանաւորուած է նրա բնագրագիտական նշանակութիւնը: Այս հատուածում կան պատմական որոշ դէպքերի ու եղելութիւնների, ինչպէս և անձնաւորութիւնների վերաբերեալ տեղեկութիւններ, որոնք կարեւոր նշանակութիւն ունեն այդ ժամանակի պատմագրութեան համար: Հեղինակը համապատասխան հատուածի անգլերէն թարգմանութիւնը տալուց յետոյ մեկնաբանում է այդ հատուածի պատմագիտական նշանակութիւնը և տալիս մի շարք բառերի ստուգաբանութիւնը:

Նոյն հանդէսում 1958 թ. պրոֆ. Դաուսթը տպագրում է «Մխիթար Գօշի Աղուանից ժամանակագրութիւնը» (The Albanian Chronicle of Mxitar Gosh) աշխատութիւնը: Գոշի այս ժամանակագրութիւնը ներմուծում է նրա «Դատաստանագիրքը» ամփոփող մի ձեռագրում (Վենետիկեան համար 1237): Այդտեղ խօսում է աղուանից այն կաթողիկոսների մասին, որոնք գործել են Մովսէս Կաղանկատուացու «Պատմութիւն Աղուանից» աշխատութեան մեջ նշուած կաթողիկոս-

ներից անմիջապես յետոյ, մինչեւ «գալ զիրս որքան լուսք եւ տեսաք», - գրում է Գօշը: Թէն հայ մատենագրութեան մէջ Գօշից մեզ հասած «Աղուանից ժամանակագրութիւն» խորագրով աշխատութիւն չկայ, բայց պրոֆ. Դատուէրը, ելնելով աղուանից կաթողիկոսների ժամանակագրութիւնը Գօշի «Դատաստանագրութեան» ներմուծումը լինելու հանգամանքից, վերնագրում է այն իբրեւ այդպիսին: Ընդգծելով Գօշի այս հատուածի կարեւորութիւնը, անգլիացի հայագետը գրում է. «Աղուանից պատմութեան աղբիւրներից մէկը, որ մինչեւ այժմ իր բնագրային լեզուով անյայտութեան մէջ է մնացել Երուսաղիմի գիտնականների համար՝ չնայած սելջուկեան ժամանակաշրջանն ուսումնասիրող հետազոտողների համար նրա ունեցած շահեկանութեանը, Մխիթար Գօշի (այս) փոքրիկ ժամանակագրութիւնն է» (էջ 172):

Կաղանկատուացու Աղուանից պատմութիւնը յիշատակելուց յետոյ, Գօշը բերում է աղուանից կաթողիկոսների ցուցակը՝ համապատասխան քուականների նշումով, որոնք, պրոֆ. Դատուէրի կարծիքով, այլուր բացակայում են եւ հաւանաբար վերցուած են վաղուց կորած կաթողիկոսական արձանագրութիւններից:

«Արեւելագիտական հետազոտութիւնների հանդէս» «Le Muséon»-ի LXXIII հատորում բանասիրական գիտ. Դոկտոր Դատուէրը գրել է մի այլ ուշագրաւ յօդուած՝ «Մովսէս Երզնկացու «Տրատ վասն խոստովանութեան» վերնագրով («Movsēs Erzingaçis "Advice on Confession")»: Մովսէս Երզնկացին XIII դարի վերջի եւ XIV դարի սկզբի մատենագիր է, աշակերտել է «գրչութեան արուեստի» տեսարան եւ քերական, նշանատր գրիչ Գեորգ Սկետացուն: Մովսէս Երզնկացին դառնում է ոչ միայն հմուտ գրիչ, այլեւ ուսուցիչ գրիչների. նա յայտնի է նաեւ իր «Ողբ»ով, որ գրել է իր մեծ ուսուցչի՝ Գեորգ Սկետացու մահուան առթիւ:

Մովսէս Երզնկացու «Տրատ»ը պրոֆ. Դատուէրը դիտում է իբրեւ բաղկա-ցուցիչ մասը այն խրատական գրականութեան, որ ստեղծուել է միջնադարեան Հայաստանում, որը եւ սերտօրէն առնչում է Դաւիթ Ալաւկայ որդու յայտնի աշխատութեանը՝ «Տրատը կանոնականք»ին: Բանասիրական քննութիւնից յետոյ պրոֆ. Դատուէրը առաջադրում է բնագիրը եւ այնուհետեւ՝ դրա անգլերէն թարգմանութիւնը:

1961 թ. «Հանդէս ամսօրեայ»-ի համար 10-12-ում պրոֆ. Դատուէրը գրել է մի այլ հետաքրքրական յօդուած՝ «Կոստանդնուպոլսի պատրիարք Ստեփանոս Առաջինը եւ նրա մեղադրողները» վերնագրով ("Stepanos I, Patriarch of Constantinople and His Accusers"): Այստեղ հեղինակը քննում է Բողլէեան մատենադարանում գտնուող մի ձեռագրի (համար 35) տուեալները: Ձեռագիրը մի Սաղմոսարան է եւ այն ընդօրինակել է Ստեփանոս Ուլուխալացին: Վերջինս Պոլսի եօթներորդ հայ պատրիարքն է հանդիսացել եւ, նրա գործունեութեան հետ կապուած են հայ իրականութեան մի շարք կարեւոր դէպքեր: Յօդուածում բանասիրական դիտողութիւններով ու պատճառաբանութիւններով ճշդում են Ստեփանոսի պատրիարքութեան տարիները, ինչպէս եւ արում բնագրում հանդիպող առանձին փոխառեալ բառերի ստուգաբանական բացատրութիւնները:

«Բրիտանական թանգարանի քառամսեայ» հանդէսում (հատ. XXIV, No 3-4) պրոֆ. Դատուէրը գիտական նկարագրութեան է ենթարկում մանրանկարչութեամբ հարուստ մի հայերէն ձեռագիր, որը նոր է աւելացել հայկական ձեռագրական այն ֆոնդին, որի ամբողջական նկարագրութիւնը տուել է Կոնիքերը իր Ձեռագրա-

ցուցակում: Պրոֆ. Դատուէրի նկարագրած ձեռագիրը մի ճառընտիր է, որը գրանցուել է Բրիտանական թանգարանում 12559 համարի տակ:

Հայագիտական աշխատութիւնների մէջ ուշադրութեան արժանի են հեղինակի հրատարակած յօդուածները «Բրիտանական հանրագիտարան»ում («Encyclopaedia Britannica»), ինչպէս՝ «Հայոց պատմութիւն», «Հայ գրականութիւն», «Ազգաբնագէտ», «Մուրք Մարտա», «Բաֆֆի», «Մայեաթ-Նովա» թեմաներով, մի յօդուած էլ լոյս է տեսել «Չեմբրըզի հանրագիտարան»ում (C. Chambers Encyclopaedia) «Հայոց լեզու» վերնագրով:

Այնուհետեւ պրոֆ. Դատուէրը իրար ետեւից հրատարակում է առաւել ամբողջական եւ ծառայուն աշխատութիւններ: 1961 թ. նա առանձին գրքով լոյս է ընծայում իր դոկտորական աշխատութիւնը՝ Մովսէս Կաղանկատուացու «Պատմութիւն Աղուանից» (The History of the Caucasian Albanians by Movsēs Daskuranci) երկի անգլերէն թարգմանութիւնը՝ համապատասխան ծանօթագրութիւններով: 1961 թուականին պրոֆ. Չարլզ Դատուէրի ներկայացրած հրատարակութիւնը արեւմտա-երոպական լեզուներով արուած առաջին ամբողջական եւ գիտական թարգմանութիւնն է՝ մատենագրական աղբիւրների ու ծանօթագրութիւնների հարուստ նշումներով: Անգլերէն թարգմանութեան հիմքում ընկած են Շահնագարեանի (Փարիզ, 1860) եւ Մ. Էմինի (Մոսկուա, 1860) հրատարակութիւնները, որոնք, իրենց հերթին, համեմատութեան մէջ են դրուել Բրիտանական թանգարանում, Ֆրանսիայի Ազգային մատենադարանում, Վենետիկի Մխիթարեանների եւ Լիբանանի Անթիլիասի մատենադարաններում գտնուող համապատասխան ձեռագրերի հետ: Բանասիրական այդ դժուարին աշխատանքը, քննական բնագրի բացակայութեան պայմաններում, հնարատրութիւն է ընձեռել պրոֆ. Դատուէրին տարրընթերցումների միջոցով բացայայտելու եւ ճշգրտելու աղաւաղուած առանձին բառերի ու նախադասութիւնների իմաստը. մի հանգամանք, որ առաւել եւս ընդգծում է անգլերէն թարգմանութեան հաւաստիութիւնն ու գիտական նշանակութիւնը: Ներկայացնելով պատմական այս Յուշարձանը, պրոֆ. Դատուէրը նշում է, որ այն ոչ միայն առանձին նշանակութիւն եւ հետաքրքրութիւն ունի հայ մատենագրութեան, այլեւ՝ յատկապէս քիզանդագիտութեան, սասանեան եւ արաբական կայսրութիւնների ու խազարների պատմութեամբ զբաղուող մասնագէտների եւ ուսանողների համար:

Աշխատութիւնը ունի Առաջարան, մասնագիտական Ներածութիւն, բնագրի առաւել հանգամանալից բացայայտմանը նպաստող Ծանօթագրութիւններ, ինչպէս եւ անձնանունների, տեղանունների ու առարկայական Ցանկեր:

Նոյն թուականին Լուվէնում (Բրիքսել) իր ստորագրութեամբ երկու հատորով լոյս է տեսնում XI դարի վերջի եւ XII դարի սկզբի հայ ականատր իրաւագէտ եւ մատենագիր Դաւիթ Ալաւկայ որդու «Տրատը կանոնականք» աշխատութեան բնագիրն ու անգլերէն թարգմանութիւնը (The Penitential of David of Ganjak, Louvain, 1961, volumes 3 and 4): Այդ աշխատութիւնը հայ մատենագրութեան մէջ ծանօթ է նաեւ իբրեւ «Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից եւ պատահմանց եղելոց» կամ «Կասն պէսպէս հարցմանց խոստովանութեանց խրատը զգուշացուցիչք»: Մատենագիտական տուեալների հիման վրայ պրոֆ. Չարլզ Դատուէրը ցոյց է տալիս, որ իրաւաբանական այս Յուշարձանը մինչեւ XVIII դարը մոռացութեան է մատնուել: Իսկ XIX դարում առանձին բանասէր-քննադատներ բացասաբար են արտայայտուել իր բնոյթով եզակի այդ երկի բովանդակութեան նշանակութեան մասին: Սակայն XX դարի սկզբից վերաբերմունքը փոխում է այդ աշխատութեան գնահատման հարցում եւ շատ բանասէր-քննադատներ ընդգծում

են պատմական, իրաւաբանական եւ կենսաբանական մտքի զարգացման մէջ դրա կարեւորութիւնն ու նշանակութիւնը հայ մատենագրութեան անդատանում: Այդ աշխատութիւնը, ըստ հայ իրաւաբանական մտքի պատմութեան հեղինակատոր մասնագէտի՝ Խ. Սամուէլեանի, հայկական կանոնական «նորմերի հիման վրայ կազմուած երկ է, որը մեծ մասամբ բովանդակում է կանոնական նորմերի եւ օրէնքների հրահանգներ ու բացատրութիւններ: Հայաստանում դա որոշակի ճանաչում ու պաշտօնական գործածութիւն է գտել, եւ անգամ նրա յօդուածներից շատերը Մխիթար Գօշը բառ առ բառ ներմուծել է իր Դատաստանագրքում:

Բնագրի հրատարակութեան համար հիմք է ծառայել պրոֆ. Ա.Գ. Աբրահամեանի՝ «Էջմիածին» ամսագրում լոյս ընծայած տեքստը (1952 թ., համարներ՝ Ա-Դ): Պրոֆ. Չարլզ Դատուէրը, սակայն, չի բարարարում միայն դրանով. ընդունելով համոզմունք, որ չափազանց բարդ եւ գրեթէ անհնարին է քննական բնագրի պատրաստումը, (նկատի ունենալով յետագայ գրիչների կողմից արուած բազմաթիւ ներմուծութիւններն ու բացթողումները), նա, այնուամենայնիւ, կարծում է, որ արտասահմանի տարբեր մատենադարաններում գտնուած համապատասխան ձեռագրերի համեմատութիւնը, անտարակոյս, կ'օգնի բացայայտելու եւ ճշգրտելու առանձին աղաւաղուած բառերի ու նախադասութիւնների իմաստը եւ քերականական ստոյգ ձեւերը: Ելնելով այդ անհրաժեշտութիւնից, պրոֆ. Չարլզ Դատուէրը, իր հերթին, համեմատութեան մէջ է դնում պրոֆ. Ա.Գ. Աբրահամեանի կազմած բնագիրը Վենետիկի, Երուսաղէմի, Ջըմմառի (Լիբանան) մատենադարաններում եւ Բեյլէի անձնական գրադարանում եղած շուրջ 7 ձեռագրերի հետ: Ուշագրաւ է դիտել, որ բնագրի կազմման եւ հրատարակման գործում դրսեւորում են անգլիացի հայագէտի բանասիրական հմտութիւնն ու բնագրագիտական կարողութիւնը:

Կարեւոր է նկատել նաեւ, որ պրոֆ. Չարլզ Դատուէրը իրաւաբանական այս Յուշարձանը դիտում է առանձին զուգահեռների մէջ սեմական եւ իրանական նոյնատիպ աշխատութիւնների հետ, ցոյց տալով մի կողմից դրանց ընդհանրութիւններն ու առնչակցութիւնները, միւս կողմից՝ տարբերութիւններն ու իւրաքանչիւրի ինքնատիպութիւնը. «Միջմանը» (եբրայական դատաստանագիրքը - Լ.Խ.) եւ «Լերատը» (Դաւիթ Ալավկայ Որդու աշխատութիւնը - Լ.Խ.) գերազանցապէս բխում են մի աղբիւրից՝ Հին Կտակարանից, - գրում է նա, - մինչդեռ գրադաշտական օրէնագրքերի հետ «Լերատը»-ի նմանութիւնները յուշում են Հայաստանի մշակութային հին կապերը իրանական աշխարհի հետ (տե՛ս Դաւիթ Ալավկայ Որդու աշխատութեան անգլերէն թարգմանութիւնը, էջ XVI):

Բնագիրը պարունակող հատորը ունի Ներածութիւն, որտեղ քննուած են տեքստի պատրաստման հետ կապուած հանգամանքները, համառոտագրութիւնների, ներածութեան ու ծանօթագրութիւնների մէջ գործածուած յատուկ անունների, տեղանունների եւ առարկայական ցանկեր. իսկ թարգմանութիւնը բովանդակող հատորը բաղկացած է նաեւ մատենագիտական ներածութիւնից, Աստուածաշնչից բերուած քաղուածքների, յատուկ անունների եւ առարկայական նիւթերի ցանկերից:

Բացի նշուած աշխատութիւններից, պրոֆ. Չարլզ Դատուէրը այժմ ձեռնամուխ է եղել Տիմոթէոս Կուրի «Հակաճառութեան» գիտական թարգմանութեանը անգլերէն լեզուով: Նա յանձն է առել մասնակցելու նաեւ աշխարհով մէկ սփռուած եւ տարբեր մատենադարաններում ու անհատական գրադարան-ներում գտնուող հայ ձեռագրերի մանրալուսանկարման շնորհակալ գործին:

ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հասարակագիտական բաժանմունքի
«Պատմա-բանասիրական հանդէս»,
1962, Թ. 4:

Նաեւ «Գրական թերթ»ում տպագրել էմ
«Անգլիացի հայագէտը Մատենադարանում»
վերնագրով իմ հաղորդումը, 1962, Թ. 40:

ՊՐՈՖԵՍՈՐ ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻԻ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երոպայի ամենաականաւոր եւ բազմամեայ վաստակ ունեցող հայագէտներից՝ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին շուրջ մէկ ամիս պաշտօնական այցելութեամբ գտնուած էր Սովետական Հայաստանում: Նրան ուրախառիթ պատեհութիւն էր ընծայուել լինելու այն ժողովրդի բնաշխարհիկ երկրում, որի դարաւոր լեզուն, մատենագրութիւնը, բանահիւսութիւնը եւ պատմութիւնը տասնեակ տարիներ շարունակ ուսումնասիրել եւ դասաւանդել է նա այնքան սիրով ու նուիրուածութեամբ:

Պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին ծնուել է 1908 թուականին, Փարիզում: Միջնակարգ կրթութիւնը ստացել է Վերսալում: 1931-1933 թթ. յաճախում եւ յաջողութեամբ արարտում է Փարիզի Արեւելեան Կենդանի Լեզուների Ազգային Ինստիտուտը, որը դեռեւս 1798 թուականից առ այսօր հանդիսացել է հայագիտութեան ամենախոշոր դարբնոցը Երոպայում: Առաջին հայագէտ Ռուսոցչապետն էր այս հնագոյն ինստիտուտում՝ Յակոբ Շահան Ջրպետը, որը իրօք հսկայական ջանքեր է գործադրել հայագիտական ամբիոնի ստեղծման, կազմակերպման եւ ամրապնդման ուղղութեամբ, հրատարակելով միաժամանակ ֆրանսերէն լեզուով ծաւալուն դասագիրք հայոց լեզուի քերականութեան վերաբերեալ: Այստեղ են դասախօսութիւններ կարդացել եւ հայագիտական ամբիոն ղեկավարել այնպիսի նշանաւոր հայագէտներ, ինչպիսիք են՝ Ֆլորիվալը, Դիլորիէն, Կարիերը, Մեյէն, Մակլերը, որոնք իրենց եռանդուն ու քննմանաւոր գործունեութեամբ մեծ վաստակ են բողել հայագիտութեան բնագաւառում: Ինչպէս տեսնում ենք, հայագիտութիւնը ֆրանսիայում զարգացման երկար ուղի է անցել եւ աւելի քան 165-ամեայ պատմութիւն ունի:

Հէնց այս պատկանելի վաղեմութիւն ունեցող Արեւելեան Կենդանի Լեզուների ինստիտուտում էլ հայագիտական հիմնաւոր եւ լայն պատրաստութիւն է ձեռք բերում նաեւ երիտասարդ Ֆրեդերիկ Ֆեյդին՝ Ռուսոցչապետ Ֆր. Մակլերի ղեկա-

վարութեանը, դառնալով նրա ամենասիրելի աշակերտը. նկատելով վերջինիս փութեանը և նրա մտաբերողութիւնը ու լայն հետաքրքրութիւնները հայագիտական տարբեր ճիւղերի նկատմամբ՝ Ֆր. Մակլէրը նրան համարում է իր «հոգեւոր զաւակը»: Հայագիտական ուսումնառութեան մէջ խորանալու նպատակով Ֆր. Ֆեյդին 1932-1933 թթ. աշակերտում է նաեւ հայագէտ Լուի Մարիէսին: Իր ուսումնառութեանը զուգահեռ, 1931-1933 թթ. նա Մերի Մամուլէ Մուրադեան հայկական վարժարանում դաստանդում է ֆրանսերէն լեզու: 1933-1936 թթ. երաւիրում է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելեան հայկական վարժարանը՝ մանկավարժական աշխատանքի: Այստեղ, 1935 թ. հանդիպում է իր ապագայ տիկնոջը՝ հայուհի օրիորդ Հերմինէ Ֆեսիկէն-Եանին: Նոյն թուականին, արդէն խորապէս հմտացած լինելով գրաբարին եւ աշխարհագրութեան (մասնաւորապէս արեւմտահայերէնին)՝ լոյս է ընծայում իր անդրանիկ զիբքը ֆրանսերէն լեզուով՝ «Grammaire de la langue arménienne moderne, dialecte occidental (2e et 3e année)» («Քերականութիւն արդի հայերէնի՝ արեւմտահայերէնի - երկրորդ եւ երրորդ տարիների») վերնագրով:

1936 թուականին վերադառնում է Փարիզ. հայկական միջավայրում հանդէս գալով հայերէն լեզուով գեկուցումներով ու դասախօսութիւններով՝ կարճ ժամանակում Ֆրեյդերիկ Ֆեյդին, իբրեւ հայագէտ, լայն ճանաչում է գտնում: 1937 թուականին ընտրում է Մ. Գազարի Միսիսեան ճեմարանի («Ակադեմիա») անդամ: 1940 թ. աւարտում է Սորբոնի հանրահոշակ համալսարանը: 1949 թ. պրոֆեսորի կոչում է շնորհուրով իրեն, եւ նոյն թուականին էլ նշանակւում է Արեւելեան Կենդանի Լեզուների Ազգային ինստիտուտի հայագիտական ամբիոնի փոխարինող-դասախօս, այնուհետեւ ամբիոնի վարիչ՝ առ այսօր¹:

Այս շրջանում լայն ծաւալ են ստանում պրոֆ. Ֆեյդիի ինչպէս մանկավարժական գործունեութիւնը, այնպէս էլ հայագիտական հետազոտութիւնների հրատարակումները: Ուսուցչականի մօտ հայագիտական տեսական ու գործնական լուրջ պատրաստութիւն է անցել անգլիացի այնպիսի հայագէտ, որպիսին է բանասիրական գիտութիւնների դոկտոր Չարլզ Դաուսէթը:

Ուշագրաւ է, որ հայագէտների, այդ թում եւ պրոֆ. Ֆեյդիի, երկարատեւ գործունեութեան շնորհիւ այսօր Սորբոնի համալսարանում թոյլատրւում է հայագիտական քննաներով դոկտորական դիսերտացիաներ պաշտպանել: Հարկ է նշել նաեւ, որ պրոֆ. Ֆր. Ֆեյդին Լեզուաբանական եւ Արեւելագիտական միջազգային հանդիպումներում ու համաժողովներում հանդէս է գալիս լուրջ հետաքրքրութիւններ կայացնող հայագիտական գեկուցումներով:

Պրոֆ. Ֆր. Ֆեյդիի գիտական հետազոտութիւնները կարելի է խմբաւորել եւ բննել չորս բաժիններում՝ ըստ նրանց բնոյթի ու նպատակադրման: Հեղինակի նախասիրութիւնները հիմնականում ամփոփւում եւ կենտրոնացւում են հայ ժողովրդի պատմութեան, լեզուի, գրականութեան եւ ժողովրդական բանահիւսութեան բնագաւառներում:

1. *Պատմագիտական հետազոտութիւններ*: Պրոֆ. Ֆեյդին իր բոլոր աշխատութիւններում հետախուզումներն ու վերլուծութիւնները կատարում է հայ ժողովրդի պատմական անցեալի լուսաբանմամբ: Դա նրա գիտական վաստակի ամուրանալի արժանիքներից մէկն է անշուշտ:

Նրա առաջին աշխատութիւնը, որ լոյս է ընծայուել Փարիզում հրատարակուող «Անահիտ» հայագիտական հանդէսում (1938, Թ. 4-5-ում)՝ կրում է հետեւեալ վերնագիրը. «Հեթում Պատմիչ, «Ճաղիկ պատմութեանց աշխարհին» գիրքին հեղինակը», Ա. Չուպանեանի առաջաբանով: Անցողակի նկատմամբ, որ սա պրոֆ. Ֆեյդիի հայերէնով շարադրուած առաջին տպագիր գիտական աշխատութիւնն է, որը նա միաժամանակ իբրեւ գեկուցում կարդացել է Փարիզում՝ հայ մտաւորականութեան ներկայութեամբ: Պրոֆ. Ֆեյդին հանգամանօրէն վերլուծում է Հեթում Պատմիչի տոյն երկի ստեղծման շարժառիթները, այդ ժամանակաշրջանի (XIII-XIV դարեր) պատմական իրադարձութիւնները, անդրադառնում գրքի առանձին բաժինների ներքին կառուցուածքին եւ արժեքաւորում այդ երկի պատմագիտական եւ աղբիւրագիտական նշանակութիւնը: Նա ընդգծում է, որ Հեթում Պատմիչի այս յատկապէս թաթարների մասին ռազմա-քաղաքական հարուստ տուեալներ պարունակող երկը մեծ հետաքրքրութեամբ ընթերցուել է ֆրանսիայում եւ նոյնիսկ դասուել է նշանաւոր ճանապարհորդ Մարկո-Պոլոյի յայտնի աշխատութեան կողքին. «Այս գործը, - գրում է պրոֆ. Ֆեյդին, - Փարիզի Մատենադարանի ցուցակին մէջ կը կարդացուի՝ «Հեթումին բաւական կարեւոր դիրք մը կ'ապահովցնէ ԺԳ. դարու ֆրանսայի պատմիչներու շարքին մէջ» («Անահիտ», 1938, Թ. 4-5, էջ 24, ընդգծումը իմն է - Լ.Խ.): Այս փաստը նոյնպէս վկայութիւն է այն բանի, որ հայ պատմիչի գործը դուրս է եկել ազգային մատենագրութեան սահմաններից: Ի դէպ՝ այստեղ հարկ ենք համարում նշել, որ Հեթում Պատմիչի այս երկի գիտա-քննական բնագիրը՝ ֆրանսերէն ձեռագիր տարբերակների համեմատութեամբ, դեռեւս սպասում է իր հմուտ կազմողին. ի դէպ՝ այդ առթիւ արդէն իսկ իր պատրաստականութիւնն էր յայտնել պրոֆ. Ֆեյդին տարիներ առաջ:

Այնուհետեւ պրոֆ. Ֆեյդին ուշագրաւ երկու յօդուած է նուիրել Փաստոս Բուզանդի Պատմութեանը: Առաջինը վերնագրուած է՝ «Un passage énigmatique de Fauste de Byzance» («Փաստոս Բուզանդի (Պատմութեան - Լ.Խ.) միջին մի հատուածը», «Բազմավէպ», 1957, Թ. 11-12, էջ 282-284), որը միաժամանակ իբրեւ հաղորդում գեկուցել է 1957 թ. Միւնխենում կայացած Արեւելագիտական միջազգային համաժողովում: Հեղինակը փորձում է բանասիրական, բնագրագիտական եւ լեզուաբանական մանրակրկիտ վերլուծումների հիման վրայ սրբագրել Փաստոս Բուզանդի Պատմութեան Վեցերորդ դարութեան բովանդակութեան ցանկի հետեւեալ հատուածը, որը իբր միջին եւ աղաւաղուած է դիտուում. «Ստորոտ ամենայն պատմութեանց Յաղագս իմ տեղեկութեան որք միանգամ զմատեանս ընթերցույր տունք տասն՝ համարական թուօք»: Նախապէս նա բերում է Էմինի, Մատաթեանի, Տաշեանի, Մառի, Մալխասեանի մեկնաբանութիւնները, ճշդում եւ վերաարժեքաւորում, վերջում առաջարկելով իր ուղղումն ու մեկնաբանութիւնները:

Միս կարեւոր յօդուածը վերաբերում է Փաստոս Բուզանդի Պատմութեան կառուցուածքին՝ ամբողջութեամբ վերցրած, եւ վերնագրուած է՝ «L'Histoire de Fauste de Byzance comprenait elle deux livres aujourd'hui perdus?» («Փաստոս Բուզանդի Պատմութիւնը ընդգրկո՞ւմ է արդեօք կորած երկու զիբք եւս», «Բազմավէպ», 1958, Թ. 6-7, էջ 140-143): Իրօք՝ հարցադրումը կարեւոր է եւ լուսաբանման կարօտ: Հայագիտութեան մէջ այդ հարցը տարակուսանքների եւ վէճերի առիթ է տուել: Պրոֆ. Ֆեյդին անհրաժեշտ առանձին ուղղումներ է մտցնում որոշ բառերի եւ նախադասութիւնների մեկնաբանման մէջ, որոնք նպաստում են այլ կերպ ըմբռնելու Փաստոսի Պատմութեան ներքին կառուցուածքը, որից եւ եզրակացնում է, որ երկը մեզ է հասել ամբողջական փճակում, ուստի եւ չի ունեցել նախընթաց (Առաջին եւ երկրորդ) կորած համարուող երկու դպրութիւններ: Այդ եզրակացութեան համար մի

¹ Նկատի ունեն յօդուածիս գրութեան ժամանակը, այն է՝ 1963 թուականը:

կողմից նա յենում է Մալխասեանցի մատնանշած վկայութիւնների վրայ, ըստ որի ա) հնագոյն խմբագրողը նշում է Փաստոսի երկի Երրորդ դպրութիւնը իբրև սկիզբ եւ Վեցերորդ դպրութիւնը իբրև վերջ լինելը, ինչպէս եւ բ) համաձայն Փաստոսի Առաջաբանի, իր Պատմութիւնը սկսում է Խոսրով Կոտակի բազաւորութիւնից եւ աւարտում Արշակունեաց բազաւորութեան անկումով. մի պնդում, որ լիովին համապատասխանում է նաեւ Փաստոսի Պատմութեան մեր ձեռքը հասած բնագրի բովանդակութեանը: Միս կողմից՝ պրոֆ. Ֆեյդին իր պատճառաբանութիւններում յենում է դարձեալ Մալխասեանցի կողմից մատնանշուած՝ Ղազար Փարպեցու վկայութեան վրայ, ըստ որի վերջինիս թուարկած՝ Փաստոսի Պատմութեան որպէս Երկրորդ դպրութիւն դիտուող գլոխների ցանկը լիովին համապատասխանում է մեզ հասած Փաստոսի Պատմութեան համարակալուած հէնց Չորրորդ դպրութեանը:

2. Լեզուաբանական աշխատութիւններ: Պրոֆ. Ֆեյդիի հայագիտական վաստակում առանձնապէս մեծ է հայոց լեզուի տեսութեան, ինչպէս եւ նրա նորմատիքերականութեան եւ պատմական քերականագիտութեան հարցերի լուսաբանմանը նուիրուած աշխատութիւնների տեսակարար կշիռը: Օտարագիւնների համար շարադրուած հայերէնի նորմատիքերականութիւնների շարքում յատկապէս կարեւոր տեղ են գրաւում պրոֆ. Ֆեյդիի ֆրանսերէն երկու դասագրքերը: Առաջին դասագիրքը, ինչպէս ասուեց, նա հրատարակում է 1935 թուականին, Ս. Ղազարում՝ «Grammaire de la langue arménienne moderne, dialecte occidental» («Բերականութիւն արդի հայերէնի (արեւմտահայերէնի)»), 203 էջից բաղկացած: Իսկ երկրորդը՝ 1948 թուականին Փարիզում՝ «Manuel de la langue Arménienne, Arménienne occidentale moderne» («Ձեռնարկ հայոց լեզուի, այն է՝ արեւմտահայերէնի»), 342 էջից բաղկացած: Վերջինս նախորդի համեմատութեամբ առաւել ամբողջական է եւ քերականական նիւթի մատուցման եղանակով լիովին բարեփոխուած ու կատարելագործուած՝ հեղինակի հետազօտական փորձի եւ հմտութեան խորացման շնորհիւ: Ըստ որում Առաջաբանում բացատրութիւն է տրուում ուսուցման մէջ կիրառուած մէթոդի եւ աշխատութեան նպատակադրման մասին, Ներածութեան մէջ ամփոփ կերպով խօսուում է հայոց լեզուի հնդեւրոպական բնոյթի, նրա զարգացման տարրեր փուլերի, ինչպէս եւ ժամանակակից հայերէնի երկու գրական լեզուների մասին, այնուհետեւ տրուում են արեւմտահայ գրական լեզուի ձեւաբանական եւ շարահիւսական օրինաչափութիւնները այնպիսի մատուցմամբ, որ սովորող օտարագրի ուսանողը կարողանայ կարճ ժամանակում նաեւ գործնականօրէն նախադասութիւններ կազմել: Այդ պատճառով էլ լեզուի հիմնական տարրերը բացատրում են միասնաբար: Բացի այդ, պրոֆ. Ֆեյդիի վերջին դասագիրքը կազմուած է ոչ միայն արեւմտահայ գրական լեզուի նոռմատիքային օրինաչափութիւնները ուսուցանելու միտումով, այլեւ միաժամանակ ընթերցանութեան համար մատուցուած նիւթերով խորամուխ դարձնելու օտարագրի ուսանողներին հայագիտութեան մէջ՝ ծանօթացնելով նրանց Հայաստանի աշխարհագրութեանը, պատմութեանը, լեզուի ծագումնաբանական եւ կառուցուածքային ընդհանուր բնորոշումներին եւ առհասարակ մեր մշակոյթի տարրեր բնագաւառներին, որոնք անհրաժեշտ են հայագիտութեամբ զբաղուողին:

Բացի վերոյիշեալ աշխատութիւններից, ֆրանսիացի հայագէտը պարբերաբար մամուլում հանդէս է գալիս արեւմտահայ գրական լեզուի այս կամ այն երեւոյթի ուսումնասիրմանը նուիրուած յօդուածներով: Տարիների ընթացքում հայերէնի ուսուցման եւ անձնական պրպատմների ժամանակ օտարի աչքով եւ օտարի ականջով նկատած նրբին դիտողութիւնները նա գիտական ընդհանրաց-

ման է ենթարկում. ըստ որում նա չի սահմանափակում միայն արեւմտահայ գրական լեզուի օրինաչափութիւնների բնութեամբ, այլեւ դրանք համեմատութեան մէջ է դնում ինչպէս գրաբարի, այնպէս էլ արեւելահայ գրական լեզուի համեման լեզուական իրողութիւնների հետ՝ ընդգծելու համար այն բնորոշն ու խրայատուկը, որը առանձնապատու է արեւմտահայ գրական լեզուին: Այսպէս, օրինակ, պրոֆ. Ֆեյդին հրատարակել է «Les Articles en Arménien moderne occidental» («Յօդերը արդի արեւմտահայերէնում», «Բազմավէպ», 1952, Թ. 7-9) յօդուածը, որում եւ ցուցական յօդերի կիրառման խրայատուկութիւնները: 1954 թուականին Կեմբրիջում կայացած Արեւալագէտների համաժողովում պրոֆ. Ֆեյդին կարդացել է նաեւ մի զեկուցում՝ «Les facultés d'expression de la langue arménienne» («Հայերէնի արտայայտչական կարողութիւնները») թեմայով:

Իտալերէն լեզուով «Բազմավէպ»ում պրոֆ. Ֆեյդին մի այլ աշխատութիւն է լոյս ընծայել՝ «Cambiamenti di struttura del verbo armeno-Tempi, Modi e aspetti in armeno» («Բայի կառուցուածքային էվոլյուցիան, ժամանակը, եղանակը եւ կերպը հայերէնում», «Բազմավէպ», 1956, Թ. 3) վերնագրով, որում պատմական մօտեցմամբ բնութագրում է բայ խօսքի մասի բարեշրջումը դարերի ընթացքում՝ սկսած գրաբարից մինչեւ ժամանակակից հայերէնի երկու գրական լեզուները:

Պրոֆ. Ֆեյդիի լեզուաբանական յօդուածներից առանձնապէս ուզում ենք կանգ առնել երկուսի վրայ, որոնք իրենց արծարծած հարցերով ընդհանրութիւն են կազմում, ուստի եւ կը բնենք դրանք միասնաբար:

«Հանդէս ամսօրեայ»ում (1962, Թ. 5-6) պրոֆ. Ֆեյդին տպագրել է «Considérations sur l'alphabet de saint Mesrop» («Դիտողութիւններ սուրբ Մեսրոպի այբուբենի մասին») յօդուածաշարը, իսկ «Բազմավէպ»ում (1962, 9-12) «La haute signification de l'invention de l'alphabet arménien par saint Mesrop» («Սուրբ Մեսրոպի ստեղծած հայերէն այբուբենի մեծ նշանակութիւնը»): Վերջինս նա իբրև զեկուցում կարդացել է նաեւ Սոբրոնի համալսարանում:

Ընդգծելով պատմահայր Խորենացու յայտնի թեւտոր խօսքը հայ ժողովրդի մասին՝ պրոֆ. Ֆեյդին հիացմունք է արտայայտում Մեսրոպի հանճարով ստեղծուած այբուբենի առաջացրած մշակութային մեծ յեղաշրջման նկատմամբ:

«Մի ժողովրդի արժէքը չի չափուում նրա քանակային կարեւորութեամբ. գրում է նա, - այս առիթով չէ, որ անհրաժեշտ է վերոյիշել որակի եւ քանակի միջեւ եղած հակադրութիւնը» («Բազմավէպ», 1962, Թ. 9-12 283):

Նա հարց է դնում՝ ո՞րն է հայ ժողովրդի գոյատեւման եւ յարատեւման գաղտնիքը. չէ՞ որ, գրում է նա, հայ ժողովուրդը իր ֆիզիքական գոյութիւնը պահպանել է այնպիսի պայմաններում, երբ իր երկիրը աշխարհագրական դիրքով գտնուել է ներխուժումների քառուղիներում՝ ինչպէս արեւելքից, հիւսիսից, այնպէս էլ արեւմուտքից, եւ անընդհատ կտորակուել է նա, ծուատուել ու բզկտուել օտար բռնակալների կողմից: Սակայն իր կենսունակութեամբ նա յարատեւել է եւ չի անհետացել պատմութեան ասպարէզից. *այստեղ է, ահա, քանակին յարթելու ուժի հրաշքը*, - եզրակացնում է պրոֆ. Ֆեյդին: Պատմական ընդհանրացում կատարելով, նա աներկմիտ հաւաստիացմամբ գրում է.

«... Ես իրատունք ունէի ասելու, որ *հայերը գիտեցան իրենց գոյութիւնը պահպանել կեանքում եւ ոչ թէ պարզապէս վերապրել: Որովհետեւ չի ենթադրում, թէ հայերը անմատչելի լեռների միջեւ մասնատուած գտնուելու շնորհիւ միւնուղն*

լեզուով խօսող ցեղային խայտաբղետութիւնից ստեղծուած էթնիկական պայրկ հասարականութիւն են: Ոչ: Անկախ նրանից, թէ ազգային պետականութեան ժամանակ, թէ առանց պետականութեան, տարրեր տիրողների լծի տակ՝ միատրուած են եղել թէ անջատուած՝ հայերը երբեք չեն դադարել ազգ լինելուց:

«... Եւ նա, ով հայ ժողովրդի յարատեւման կենսական երաշխիքը տուեց, սուրբ Մեսրոպ Մաշտոցն էր» (նոյն տեղում, էջ 284):

Պրոֆ. Ֆեյդին հանգամանօրէն քննում է գրերի գիտի ստեղծման պատմական անհրաժեշտութիւնը, քաղաքական շարժառիթներն ու հեռամտ նպատակները, վերաբառում է հայրենասիրութեան մէջ երկարատեւ վեճերի, թեր ու դէմ կարծիքների բախման առիթ հանդիսացած այնպիսի հարց, որպիսին նախամեսրոպեան գրի եւ գրականութեան գոյութեան ենթադրութիւնն է: Հայագիտական գրականութեան մէջ այս առնչութեամբ իրենց ծանրակշիռ խօսքն են ասել այնպիսի խոշոր հայագետներ, ինչպիսիք են Հրաչեա Աճառեանն ու Մանուկ Աբեղեանը, որոնք գիտական լուրջ փաստարկումներով հերքեցին նախամեսրոպեան հայ գրի եւ գրականութեան «առկայութեան» մասին վարկածը: Այս կապակցութեամբ հետաքրքրական մտքեր է զարգացնում նաեւ պրոֆ. Ֆեյդին:

Հակադրուելով նախամեսրոպեան գրի եւ գրականութեան «առկայութեան» մասին վարկածի կողմնակիցներին, պրոֆ. Ֆեյդին նոյնպէս գտնում է, որ գրերի գիտից անմիջապէս յետոյ հայ մատենագրութեան բացառիկ արտադրանքը հիացում առթող իր կատարելութեամբ՝ անպայման չպէտք է ենթադրի նախամեսրոպեան գրի եւ գրականութեան առկայութիւնը: Հայ դասական պատմագրութիւնը ամենեւին չի հաւաստել ո՛չ մի ծանրակշիռ փաստ այդ վարկածի օգտին: Պատմաքննական մանրակրկիտ փաստարկումներով պրոֆ. Ֆեյդին ներկայացնում է իրերի վիճակը գրերի գիտից առաջ: Նա ընդգծում է այն միտքը, որ հաւաստի ոչ մի ապացոյց չունենալով հանդերձ նախամեսրոպեան շրջանից՝ հայ մատենագրութեան արտակարգ բողբոջումն ու ճառագայթումը գեղարուեստական ոճաւորմամբ՝ կարելի է բացատրել լեզուաբանօրէն: Հայոց լեզուն մշակուել է դարերի ընթացքում, յղկուել եւ ոճաւորուել է ժողովրդական բանահիւսութեան բովում, հռետորական եւ քարոզական բանաւոր արուեստում. եթէ գրերի գիտից անմիջապէս յետոյ հնարաւոր եղաւ մեծ ճշգրտութեամբ քարգմանութիւններ կատարել, ասում է պրոֆ. Ֆեյդին, պատճառն այն է, որ բազմաթիւ անգամներ նման հատուածներ նախապէս տասնեակ տարիների ընթացքում բանաւոր կերպով արդէն քարգմանուել էին: Այդպէս է պարագան այն քարգմանութիւնների, որ դասախօսները բազմաթիւ անգամներ բացատրում են սովորող աշակերտների սերունդներին: Միս կողմից՝ մերժելով հանդերձ նախամեսրոպեան գրի եւ գրականութեան առկայութիւնը, պրոֆ. Ֆեյդին հաւասարութեան գիծ չի անցկացնում դասական մատենագրութեան եւ «ժողովրդական գրականութեան», այսինքն՝ ժողովրդական բանահիւսութեան միջեւ. «... Ժողովրդական գրականութիւնը բաւարար նախապատրաստութիւն չէ յաջորդ օրն իսկ արտադրելու V դարի հայ գրականութեան նման գործեր: Սակայն եկեղեցու հայրերի դարում քարոզչութիւնը ամենեւին ժողովրդական ոճով արուած պրոպագանդա չի եղել, եւ քրիստոնէական մտածողութեան արտայայտչականութիւնը պահանջում էր աստուածաբանական խոր ուսումնասիրութիւններ եւ խիստ ճշգրիտ ու նրբին լեզու» («Հանդէս ամսօրեայ», 1962, թ. 5-8, էջ 185):

Անդրադառնալով գրերի գիտի խորհրդին եւ այն վիթխարի ներգործութեանն ու դերին, որ ունեցաւ այն հայ ժողովրդի պատմական բախտի ու ճակատագրի

համար, պրոֆ. Ֆեյդին նշում է. գրերի գիտից յետոյ «հայկական քաղաքակրթութիւնը, որն արդէն այնքան նշանակալի էր իր ճարտարապետութեան շնորհիւ, իր դրսեւորումը պիտի գտներ այրութեան մէջ, մինչեւ անգամ գիտութիւնների մէջ, եւ ապահովէր իր յարատեւութիւնը գրականութեամբ, մի այնպիսի գանձով, որը նուազ կործանելի է, քան նրա նրբագեղ եկեղեցիները» («Բազմալէպ», 1962, թ. 9-12, էջ 287, ընդգծումը իմն է - Լ.Խ.): Երբեմնակեղծ զարգացնել իր այս ընդհանրացումը, վերախնայատարում է մեսրոպեան գրի եւ գրականութեան նշանակութիւնը նաեւ ներկայի համար:

«Եւ այս եին քաղաքակրթութիւնն է,- գրում է նա,- որ թոյլ է տալիս տեսնելու, թէ ինչպէս հայերը փայլում են մարդկային գործունէութեան բոլոր բնագաւառներում՝ ինչպէս արտասանմանում, այնպէս էլ հայկական հանրապետութիւնում, որի երեւանեան համալսարանը չի երկնչում արեւմտեան երկրների համալսարանների հետ քաղաքատեւան մէջ դրուելուց» (նոյն տեղում, էջ 289):

Պրոֆ. Ֆեյդին Ֆրանսիայում լոյս տեսած «Clarté» («Պայծառութիւն») հանրագիտարանում 1957 թ. հրատարակել է «Littérature arménienne» («Հայ մատենագրութիւն»), նաեւ «Europe» («Եւրոպա») գրական հանդէսում՝ «Coup d'œil rétrospectif sur la littérature arménienne» («Յետադարձ հայեացք հայ մատենագրութեան վրայ») աշխատութիւնները, ունի նաեւ մի շարք գրաքննադատական յօդուածներ պարբերական մամուլում:

3. *Գրականագիտական երկեր:* Պրոֆ. Ֆեյդին զբաղուել է նաեւ հայ գրականագիտութեան հարցերով: Նրան առանձնապէս հետաքրքրել են հայկական երգիծանքն ու կատակերգութիւնը, քատերական ստեղծագործութիւնները, այդ պատճառով էլ յատուկ ուսումնասիրութիւններ է նուիրել Յակոբ Պարոնեանին եւ Երուանդ Օտեանին, ինչպէս եւ քարգմանել ու հրատարակել է վերջինիս «Առաքելութիւն դէպի Ծապլվար» («Une mission a Dzabelvar») ստեղծագործութիւնը: Պրոֆ. Ֆեյդին իր գրականագիտական, ինչպէս եւ ժողովրդական բանահիւսութեանը վերաբերող հետազօտութիւնները նախապէս լոյս է ընծայել «Բազմալէպ»ում, ապա հրատարակել՝ «Տետեր հայ գրականութեան» (Cahiers de littérature arménienne) մատենաշարով:

«La Comédie et la Satyre en Arménie. Baronian et Odian» («Կատակերգութիւնն ու երգիծանքը Հայաստանում. Պարոնեան եւ Օտեան») աշխատութիւնում պրոֆ. Ֆեյդին հիմնական հանգրուաններով անդրադառնում է հայ քատերի պատմութեան ընթացքին եւ հանգամանօրէն կանգ առնում Պարոնեանի եւ Օտեանի ստեղծագործութիւնների վրայ, վերլուծում եւ ընդգծում նրանց գեղագիտական հայեացքները, արուեստի բարձրութիւնը, կերպարների կերտման վարպետութիւնը, գրական հնարանքների ճարտարութիւնը եւ այլն, եւ այլն: Խօսելով Պարոնեանի տաղանդի մասին, նրան համեմատում է Ֆրանսիացի նշանաւոր երգիծարան Մոլիերի հետ. «Բայց ահա հանդէս է գալիս հայ իսկական Մոլիերը յանձին Յակոբ Պարոնեանի», - գրում է նա (նոյն տեղում, էջ 5): Պարոնեանի կերտած կերպարները, անշուշտ, կրում են տեղի եւ ժամանակաշրջանի կնիքը, ասում պրոֆ. Ֆեյդին. *բայց նրանք ունեն նաեւ համամարդկային մի կողմ. Պաղտասարը պատկանում է XIX դարի վերջի հայկական որոշակի մի միջավայրի, բայց միաժամանակ նա իր ճաշակով եւ ընդհանրապէս հոգով յարիսենական պարզունակ մարդն է, որը միշտ ուշացել է իր ժամանակից, Անուշը յաւերժական կոկէտն է...* եւ այլն:

Պրոֆ. Ֆեյդին բնութագրում է Երուանդ Օտեանին իբրև ամենամաքուր ռալիստական դարոցի խոշոր վիպասանի, նորավէպ գրողի և երգիծողի: Իբրև եզրակացություն իր ուսումնասիրության, պրոֆ. Ֆեյդին աներկմիա յստակութամբ ու համոզմունքով գրում է. «... շնորհիվ Պարոնեանի և Օտեանի, հայերի մօտ կատակերգությունն ու երգիծանքը կատարելագործման են հասել, և այս երկու խոշոր հեղինակների ստեղծագործությունները արժանի են գետնդուրու արեւմտեան գրականության գլուխ-գործոցների կողքին՝ մարդկության գրական մեծ ժառանգության մէջ» (էջ 24):

1961 թ. պրոֆ. Ֆեյդին հրատարակում է Երուանդ Օտեանի «Առաքելութիւն դէպի Ծապլվար» երգիծական երկի ֆրանսերէն իր. քարգմանութիւնը՝ ամփոփ մի առաջաբանով: Առաջաբանում նա գրում է. «Մենք ընտրեցինք «Առաքելութիւն դէպի Ծապլվար» երկի քարգմանութիւնը, որովհետեւ նրա հաւասարը չգիտենք երոպական գրականութեան մէջ...» (էջ 7):

Պրոֆ. Ֆեյդին «Լառուսի» յանձնարարութեամբ գրել է մի աշխատութիւն եւս «La littérature arménienne du XIIe au XVIIIes» («Հայ գրականութիւնը XII դարից մինչեւ XVIII դարեր») խորագրով, որը անտիպ է:

4. Հայ բանահիւտութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ և քարգմանութիւններ: Պրոֆ. Ֆեյդին առանձին ջերմութեամբ և ոգևորութեամբ է գրադում հայ բանահիւտութեան հարցերով: Նա «L'Épopée populaire arménienne» («Հայ ժողովրդական դիցազնավէպը») վերնագրով մի ուշագրաւ ուսումնասիրութիւն է գրել, որն առաջին անգամ տպագրուել է «Բազմավէպ»ում (1957, ԹԹ. 7-8 և 9-10): Նա քննում է հայ ժողովրդական բանահիւտութեան արձագանգները Խորենացու և Մագիստրոսի աշխատութիւններում, վերլուծում Հայկի և Բէլի կոչիւր, Արամի, Շամիրամի և Արա Գեղեցիկի, Շարա Ռկրամոյի, Աժդահակի, Վահագնի, Արտաշէսի և Սաթենիկի պատումները, արժէքատրում և իմաստատրում դրանք, ցոյց տալիս որոշ աղերսներ ու առնչութիւններ պարսկական բանահիւտութեան հետ: Ելնելով այդ բոլորից, պրոֆ. Ֆեյդին յանգում է հետեւեալ եզրակացութեան. «... Անյիշելի ժամանակներից ի վեր, հինգերորդ դարից վաղ մի անցած ժամա-նակաշրջանում, և նոյնիսկ հաւանաբար վեցերորդ դարում, Հայաստանի դէպի քրիստոնէութիւն մասսայական շրջադարձի ժամանակաշրջանում, *հայերը երկարապատում էպոսներ ունէին, որոնք ոչնչով չէին զիջում միւս ժողովուրդների էպոսներին...*» (նոյն տեղում; էջ 16):

Պրոֆ. Ֆեյդին իր հետազօտութեան մէջ իբրև մեկնակէտ է ընդունել այն դրոյթը, ըստ որի ժողովրդական էպոսը արտացոլում է սոցիալական կեանքը և որոշ ժամանակաշրջանի գաղափարախօսութիւնը, մանաւանդ վեր հանում այն հիստորի ժողովրդի վեհ զգացմունքներն ու իղէալը: Հետազօտողը գրադուել է նաեւ «Մասունցի Դաիթ» դիցազնավէպի գաղափարական բովանդակութեան ու կերպարների վերլուծութեամբ: «Մասունցի Դաիթ» էպոսի մասին մատենագրական տեղեկութիւններ հաղորդելուց յետոյ, բանասիրական վերլուծման է ենթարկում նրա ժամանակաշրջանի, պատմական անձնատրութիւնների հետ հերոսների հեռաւոր առնչութիւնների, Կիլիկեան քաղաքութիւնների և խաչակիրների աղօտ արձագանգները և այլ խնդիրներ: «Հենց նախերգանքից էլ ընկնում ենք հիացմունքի մէջ՝ «Մասունցի Դաիթ» դիցազնավէպի նկատմամբ, - գրում է նա: - Մեր «Ռոյանդի երգը առանց նախերգանքի է մտնում սիւժէի մէջ...: Տասայի հիասքանչ պոէմը սկսում է Վիրգիլիոսի նմանողութեամբ...»:

Պրոֆ. Ֆեյդին ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ «Մասունցի Դաիթ» դիցազնավէպի կառուցուածքը, տեսարանների արագ փոխաջորդումը, կերպարների մարդկային բնատրութիւնները կարծէք լեզունային պատմութեան տպատրութիւն չեն թողնում. նրա հերոսները ոչ թէ երեւակայական են, այլ այնպէս են ընդհանրացուած, որ *ազգային հերոսների բնոյթ են ստացել:* Վերլուծելով «Մասունցի Դաիթ» դիցազնավէպի գաղափարական բովանդակութիւնը, պրոֆ. Ֆեյդին նշում է. *Նախ և առաջ դիցազնավէպում կայ մի անզուսպ ձգտում դէպի անկախութիւն. բոլորը պատրաստ են ամէն ինչ գոհաբերելու իրենց երկիրը պաշտպանելու և իրենց ժողովրդին ազատելու համար. ուստի և նրանք հսկաների պատերազմներ են մղում, գործադրելով իրենց անյաղքահարելի ուժը, շնահանջելով ոչ մի վտանգի առաջ: Ընդհակառակը, երբ իրենց ազատութիւնը ապահովուած է, մի կողմ են թողնում զէնքերը և երբեք չեն ծառայեցնում դիւանք հարեան ժողովուրդներին ճնշելու համար. նրանց առաքիներութիւնը երբեք չի կայանում տիրապետման և նուաճման հոգեբանութեան մէջ»* (նոյն տեղում) էջ 32):

Բնական է՝ այն խորութեամբ ու նրբերանգութեամբ, ինչպէս որ ընկալել և իմաստատրել է ֆրանսիացի հայագէտը, նա՝ կարող էր, իբրև արժանատր ու հմուտ մասնագէտ, ներկայացնել «Մասունցի Դաիթ» դիցազնավէպի ամբողջական քարգմանութիւնը ֆրանսերէն լեզուով, որը և կատարել է, ի դէպ, ԻԻՆԷՄԿՈՅԻ՝ յանձնարարութեամբ: Ուրախութեամբ իմանում ենք, որ նա այդ գործը արդէն իսկ աւարտել և տպագրութեան է յանձնել:

Հայ բանահիւտութեան բնագաւառում պրոֆ. Ֆեյդին այժմ ձեռնամուխ է եղել նաեւ ժողովրդական հաւատալիքների՝ հմայիլների ուսումնասիրման և հրատարակման գործին, որը հեղինակի նախատեսութեամբ բաղկանալու է երկու հատորից՝ հետազօտական և բնագրային բաժիններից:

Պրոֆ. Ֆեյդին առաջին անգամ հնարաւորութիւն ունեցաւ գտնուելու Սովետական Հայաստանում, սեփական աչքերով տեսնելու հայ ժողովրդին իր ստեղծագործական առօրեայում, ակնատեսի հայեացքով դիտելու և կշռադատելու այն վիթխարի վերափոխութիւնները, որ անցեալի անբուժելի վնասները և արհիւնաբան եղած մեր երկիրը վերապրել է իր այս վերածննդի տարիներին. արդիւնաբերութեան հսկաների լիաքոր գործունէութիւնը, շինարարութեան աննախընթաց ծաւալումը, գիտական հիմնարկների և լուսատրութեան ապշեցուցիչ աճը, Հայկական գիտութիւնների ակադեմիան, Երեւանի պետական համալսարանը և Մաշտոցի անուան վեհատեսիլ Մատենադարանը - այս բոլորը խորապէս յուզել են ֆրանսիացի հայագէտին:

- Ասկէ յիսուն տարի առաջ, - ասաց նա Գիտութիւնների ակադեմիայի նիստերի դահլիճում ունեցած իր ելոյթում, - ո՞վ կարող էր երեւակայել, թէ այսպիսի կարճ ժամանակամիջոցի մը մէջ կը վերածնուի Չեր երկիրը այնպէս, որ Հայաստանի հողի վրայ ստեղծուած կ'ըլլայ Հայկական գիտութիւններու ակադեմիա մը՝ գիտնականներու իր պատկառելի քանակով: Այս երկու բառերու՝ «ժայկական» և «ակադեմիա» բառերու զուգակցումը բազմանշանակալի է ինձի համար, որպէս Չեր անցեալի պատմութիւնը իմացողի...:

¹ Այսինքն՝ Միջազգային Կազմակերպութեան (ՄԱԿ-ի) Մշակութային Բաժանմունքի:

Բազմազարդ անցաւ պրոֆ. Ֆեյդիի ստորեան՝ շրջագայութիւններ դէպի Հայաստանի պատմական վայրերը, յուշարձանները, հանդիպումներ ու շփումներ՝ մեր Հանրապետութեան գիտնականների հետ. նա ձեռագրեր համեմատեց Մատենադարանում՝ Փաստոս Բուզանդի վերաբերեալ, դասախօսութիւններ կարդաց՝ «Հայագիտութիւնը Եւրոպայում» թեմայով եւ այլն, եւ այլն: Մովսէսական Հայաստանում ծառայած հայագիտական աշխատանքների մասին պրոֆ. Ֆեյդին այսպէս ամփոփեց իր տպաւորութիւնները իր մի գրոյցի ժամանակ.

- Արեւմուտքի մէջ հայերու կողմէ հայագիտութեան մշակումը առնուազն նուազելու վրայ է. առաջուայ խանդով չեն գրադիր: Բայց ատիկա իրենց յանցանքը չէ, որովհետեւ կեանքի պայմանները թոյլ չեն տար զբաղուելու. մեծ մասամբ ուսուցչութեամբ կը զբաղին եւ հետազօտական աշխատանքներ չեն կրնար ընել: Բարեբախտաբար Հայաստանը ճիշդ ժամանակին բռնեց հայագիտութեան ջանքը, այստեղ ալ հայագիտութիւնը ծաղկեցաւ: Պէտք է ըսեմ, որ հայագիտութեան այս բացառիկ արտադրութիւնը թէ՛ քանակի եւ թէ՛ որակի տեսակէտով ինձի չգարմացուց. թէն չէի ստանար գրքեր, բայց գիտէի որ հայագիտութիւնը այստեղ իր արժանի տեղը գտած է: Այնպէս որ եթէ ես զարմացած չմնացի, ապա զմայլած՝ անպայման: Իսկապէս՝ հայագիտութիւնը այստեղ կը մշակուի ճիշդ այնպէս, ինչպէս ֆրանսագիտութիւնը Ֆրանսիայի մէջ, գերմանագիտութիւնը՝ Գերմանիայի մէջ - հաւասար կերպով, - առանձին շեշտով ասաց նա:

Յանձին պրոֆ. Ֆեյդիի, Եւրոպայում ապրում եւ ստեղծագործում է բեղմնատուր գրչի տէր, հայագիտութեան լայն ոլորտներ ընդգրկող հմուտ եւ համակողմանի կարողութիւններով օժտուած ձեռնհաս մեծանուն մի հայագէտ:

ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հասարակագիտական բաժանմունքի
«Պատմա-բանասիրական հանդէս»,
1963, Թ. 4:

HISTOIRE DE L'ARMENIE

par Moïse de Khorene,
Nouvelle traduction de l'arménien
classique par Annie et Jean-Pierre
Mahé (d'après Victor Langlois)
avec un introduction et des notes,
L'aube des peuples, Gallimard, Paris, 1993.

ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՐԺԱՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՎ

Վերջերս Փարիզում լոյս տեսաւ, ֆրանսերէն թարգմանութեամբ, Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց» մատենագրական Յուշարձանը՝ Աննի եւ Փրոֆ. Ժան Պիեր Մահէի հեղինակակցութեամբ: Վերնագիրն է՝ «Մովսէս Խորենացի. «Պատմութիւն Հայոց»». նոր թարգմանութիւն հայերէն դասական լեզուից. Աննի եւ Ժան-Պիեր Մահէի կողմից (հետեւողութեամբ՝ Վիկտոր Լանգլուայի), Ներածութեամբ ու Ծանօթագրութիւններով հանդերձ, «Ժողովուրդների արշալոյսին» մատենաշարով»:

Հայոց Պատմահայրը, լինելով Մաշտոցի շնորհաշատ աշակերտներից, իր ուսումնառութիւնը սարտելուց յետոյ Հայաստանում, նորաստեղծ հայագիր մատենագրութեան Ուսուցչապետների յանձնարարութեամբ, ուսումնառութիւնը կատարելագործելու նպատակով, մի խումբ աշակերտակիցների հետ միասին մեկնում է ժամանակի գիտութեան նշանաւոր կենտրոնները՝ Եդեսիա, Աթէնք եւ Ալէքսանդրիա: Վերադարձին, իր երախտընկալ Ուսուցիչները՝ Մաշտոցը եւ Մահակը, արդէն վախճանուել էին:

Նա իր պատմագրական երկը գրել է բաւական ուշ, ծերութեան տարիներին, շուրջ 480ական թուականներին, Հայոց ականատուր իշխաններից Մահակ Բագրատունու մեկենասութեամբ եւ ծրագրային առաջադրանքով: Երախտարժան իր պատուիրատուին յուզել էր հայ ժողովրդի ծագումնաբանութիւնը (որ դեռ ոչ ոքի կողմից չէր նախաձեռնուել) տալ առանձին մէկ պատմագրական երկի մէջ՝ սկսած Հայկ Նահապետից, այն է՝ Բարեղոնեան աշտարակաշինութիւնից մինչեւ հայագիր դպրութեան հիմնադիրներ Մեսրոպ Մաշտոցի ու Մահակ Պարթեի մահը: Եւ Մովսէս Խորենացին պատուով կատարեց յանձնարարականը՝ զերազանց հմտութեամբ իրականացնելով այն:

Պատմահայր Խորենացին խորապէս ըմբռնում էր իր ժողովրդի արժանաւորութիւնը, երբ ձեռնամուխ եղաւ, պատմաբանի ըմբռնական հետազօտութեամբ, պեղել հայ ժողովրդի տարեգրութիւնը. «... Թէպէտ եւ ենք անու փոքր եւ թուով յոյժ

ընդ փոքր սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ քաղաքութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի»: Աշխարհաբար քարգմանութիւնն է՝ «... Թէ եւ մենք փոքր ամու ենք եւ շատ սահմանափակ թուով եւ շատ անգամ օտար քաղաքութեան տակ նուաճուած, բայց եւ այնպէս մեր աշխարհում էլ քաջութեան շատ գործեր կան իրականացուած, գրելու եւ յիշատակելու արժանի»: Եւ իրօք, սոյն պատմագրական Յուշարձանը *հայ ժողովրդի Ինքնութեան վաերական Վկայութիւնն է միաժամանակ:*

Նա, ի տարբերութիւն մեր միւս պատմիչների, պատմական փաստերն ու եղելութիւնները սոսկ արձանագրողը չէր, ոչ էլ կրատրական նկարագրողը. այլ՝ *գիտնական պատմարանն* էր նաեւ ժամանակակից ըմբռնմամբ՝ փաստերն ու եղելութիւնները հասարակագիտական վերլուծութեամբ իմաստաւորողը պատճառակցական կապերի բացայայտումով եւ համադրումով, դիւանական աղբիւրների եւ պատմական արձանագրութիւնների բազմալեզուեան ընդգրկումով ու վերծանումներով, հայ եւ օտար պատմագրական երկերի քննութեամբ ու արժեւորումներով: Պատմութեան բաղկացուցիչ տարրերն էր համարում՝ *տեղը, ժամանակը, պատճառը, հերոսը կամ գործող անձը եւ եղանակը*: Իսկ այդ նշանակում է՝ պատմութիւնը ծաւալում է որոշ վայրում, որոշ ժամանակում, որոշ պատճառական փոխակապակցութիւններում, որոշ անձերի կողմից իրագործում եւ որոշ եղանակով, ձեւով ու դրսեւորմամբ անդրադարձում:

Պատմահայր Խորենացին առաջինն է հայ դպրութեան մէջ, որ պատմագիտութեան իր հայեացքն է բանաձեւել եւ իրագործել միաժամանակ իր դարագլուխ կազմող գլուխ-գործոցում՝ «Պատմութիւն Հայոց» երկում. «Ո՛՞ է ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԸՇՄԱՐԻՏ, ԱՌԱՆՅ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ»: Հենց այդ պատճառով էլ իր այս կոթողային երկասիրութիւնը առանձնանում է պատմագրական միւս երկերից *ժամանակագրական իր կոտ համակարգով՝* մեծաւ մասամբ համընթաց լինելով յունական եւ հռոմէական դասական պատմագրութեան կիրառած ժամանակագրութեան սկզբունքի հետ:

Լինելով իրայատուկ Հանրագիտարան հայկական քաղաքակրթութեան եւ այլ հնագոյն ժողովուրդների, որոնց հետ ռազմա-քաղաքական, անտեսական եւ մշակութային յարաբերութիւնների մէջ է գտնուել պատմական իրադարձութիւնների բերմամբ հայ ժողովուրդը, Մովսէս Խորենացու մատենագրական Յուշարձանը առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացրել իր մասամբ եւ *միջազգային կարեւորմամբ*: Այդ իսկ պատճառով այն քարգմանուել է բազմաթիւ լեզուների՝ լատիներէնի, իտալերէնի, ֆրանսերէնի, անգլերէնի, գերմաներէնի, ռուսերէնի, հունգարերէնի եւ այլն: Այն հարուստ աղբիւր է ոչ միայն հայագիտութեան, այլեւ կովկասագիտութեան, ուրարտագիտութեան, իրանագիտութեան, ասորագիտութեան, բիզանդագիտութեան համար:

Սկզբիցեւեք նկատենք, որ քննախօսուող քարգմանական աշխատասիրութիւնը սոսկ քարգմանութիւն չէ, սովորական իմաստով, դասական հայերէնից՝ ժամանակակից ֆրանսերէնի. այն միաժամանակ, իրականում, գիտական քարգմանութիւն լինելով՝ բանասիրական-բնագրագիտական-աղբիւրագիտական լուրջ հետազոտութիւն է՝ արտացոլելով խորենացիագիտական նուաճումները եւ բանասի-

րական, եւ քարգմանական բնոյթի, ընդ որում՝ նաեւ քարգմանիչների զգալի ներդրումով: Նրանք չեն բաւարարուել արդէն ձեռքբերուածով հայագիտութեան մէջ, այլեւ երկարատեւ ու սեւեռուն ձեռագրագիտական պրպտումներով եւ ուսումնասիրութիւններով Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի Չեռագրատանը՝ *փաստօրէն քննական նոր քնազրի վրայ խարսխուած միանգամայն արժանահաւատ ընտիր աղբիւր են ֆրանսերէն քարգմանութեամբ մատուցել գիտական աշխարհին*, որ պատիւ է բերում հայագիտութեան այս նուիրեալներին:

Մատենախօսուող հրատարակութիւնը օժտուած է բանասիրական *Ներածութեամբ* (էջ 9-92), որում արծարծում են խորենացիագիտական հարցերը, որոնք մասամբ լուծում են գտել անցեալում, մասամբ էլ նորովի են լուսաբանում. քննում են Պատմահօր օգտագործած աղբիւրների բնոյթը, որակը, համեմատական հաւաստիութիւնը եւ այլ պատմագիտական ու աղբիւրագիտական հարցեր, ինչպէս եւ ժամանակաբանական բարդ ու կնճռոտ խնդիրներ՝ լուծումների առաջադրմամբ:

Երկրորդ փոքրիկ Հատուածը վերնագրուած է՝ «*Անփոփ տեղեկութիւն քարգմանութեան եւ ծանօթագրութիւնների մասին*» (էջ 93-94): Հեղինակակից աշխատասիրողները յայտնում են, որ քարգմանութիւնը կատարել են Թիֆլիսի 1913 թուականի հրատարակութեան Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի քննական բնագրի հիման վրայ, նաեւ 1991 թուականին Երեւանում վերահրատարակուած տարբերակի ընդգրկումով, որ հարստացուած է Պատմահօր երկի ձեռագրական նոր ընդօրինակութիւններով, նրանց տարընթերցումների հաշուառումով նմանապէս:

Չնայած հեղինակակիցները սկզբում մտադրուած են եղել բաւարարուել Վիկտոր Լանգլուայի 1869 թուականին իրականացրած քարգմանութեամբ՝ փոքրիկնչ խմբագրական լրացումներով ու շակումներով, այդ պատճառով էլ գրքի վերնագրում փակագծերում նշել են՝ «Հետետղութեամբ Վիկտոր Լանգլուայի» հրատարակում են ներկայ Յուշարձանը: Իրականում, սակայն, գործի աւարաից յետոյ պարզուել է, որ առանձին գլուխներ հիմնովին փոփոխութեան են ենթարկուել իրենց ճշդումներով ու լեզուա-ոճական խմբագրումով, որ արդէն *նոր քարգմանութեան բնոյթ է կրել*:

Առանձին յաջորդ հատուածով տրուած է հայերէն յատուկ անունների տառադարձութեան հեղինակակիցների կիրառած սկզբունքի բացատրութիւնը (էջ 95-98)՝ ֆրանսերէն ընթերցողի համար դասական հայերէնի հնչյոթների դժուարիմաց լինելու նկատառումով:

Նաեւ բացատրական է տրուած առանձնաբար՝ «Յապատումները Աստուածաշնչի գրքերի» վերնագրով (էջ 99):

Գլխաւոր եւ զանգուածային Բաժինը անշուշտ ֆրանսերէն քարգմանութիւնն է մատենագրական Յուշարձանի (էջ 103-324), որ օժտուած է պատմա-մշակութային եւ բանասիրական հարուստ յղումներով:

Պիտի խաւտովանել՝ ընտիր քարգմանութիւն է, որի առհասարակեան հեղինակակիցների հայագիտական բարձրորակ պատրաստածութիւնն է՝ գումարած քարգմանելի լեզուի (դասական հայերէնի) եւ քարգմանուող լեզուի (ֆրանսերէնի) գաղտնիքների հիմնալի տիրապետումը:

«Յանելումներ» բաժնում (էջ 326-418) տրուած են բնագրի հետ առնչուած, լեզուական, պատմա-մշակութային, աղբիւրագիտական, բնագրագիտական դիտողութիւններ եւ մեկնութիւններ, որոնք նպաստում են մատենագրական սոյն Յուշարձանի ըստ էութեան եւ ըստ ամենայնի ըմբռնմանն ու արժէտըմանը:

Վերջում քարգմանութիւնը օժտուած է նաեւ «Օգտագործուած մատենագիտական» Յատուկ անունների Ցանկերով եւ Հայաստանի պատմական քարտէզով:

Ողջունում են այս առթիւ ֆրանսիացի հայագէտներին՝ «Չեր վարձքը կատար» ասելով:

«Փարոս», Օգոստոսի 1, 1994:
Նաեւ «Նոր կեանք», «Ասպարէզ»:

Բ Ա Ձ Մ Ա Վ Ա Ս Ս Ա Կ

Հ Ա Յ Ա Գ Է Տ Ը

(Հ. Ներսէս Ալիքեանի վախճանման առթիւ)

Հայագիտութիւնը մեծ կորուստ ունեցաւ ընթացիկ տարուայ¹ Հոկտեմբերի 28-ին վախճանուեց հայ մատենագրութեան երախտատը հետազօտողը, մեր բանասիրութեան եւ աղբիւրագիտութեան հմուտ ու խորագէտ հսկան, Երուսալում հայագիտութեան զարգացմանը խթանող կարեւորագոյն պարբերաբերքի՝ «Հանդէս ամսօրեայ»ի բազմավաստակ խմբագիրը՝ Հայր Ներսէս Ալիքեանը:

Աւելի քան 60ամեայ գիտական բեղմնատը գործունէութիւն ծաւալեց հայ մշակոյթի անդաստանում Հ. Ներսէս Ալիքեանը՝ անօրինակ ջանասիրութեամբ ու նուիրումով ծառայելով հայագիտութեանը:

Ականատը հայագէտը ծնուել է 1883 թուականին, Արդուինում: Նախակրթական ուսումը ծխական դպրոցում ստանալուց յետոյ, 1885 թուականին մեկնում է Վիեննա: Այստեղ նա թրծում է իբրեւ հայկաբան, ընդարձակում եւ հարստացնում է իր ծանօթութիւններն ու գիտելիքները հայագիտութեան բնագաւառում, հմտանում մեր բազմաբովանդակ եւ բազմահարուստ մատենագրութեան, ձեռագրական արուեստի եւ առհասարակ անցեալի մեր հոգեւոր ժառանգութեան մէջ, տիրապետում օտար լեզուների՝ յատկապէս յունարէնին եւ լատինարէնին: Այնուհետեւ նա Վիեննայի համալսարանում հետեւում է յունական, լատինական եւ քիզանդական գրականութեան ու պատմութեան, ինչպէս եւ փիլիսոփայութեան ու աստուածաբանութեան դասընթացքներին, աշակերտում քրիստոնէական ժամանակաշրջանի

գեղարուեստի եւ ճարտարապետութեան պատմութեան մասնագէտ մեծանուն Ստրժիգովսկուն:

Ուսումնառութիւնն աւարտելուց յետոյ, իբրեւ հայ մշակոյթին քաջածանօթ անձնատրութիւն, Վիեննայի Մխիթարեանների ուսումնարանում նշանակում է Հայոց լեզուի, գրականութեան, պատմութեան, իրատունքի ուսուցիչ, միաժամանակ՝ փոխ-տնօրէն, մատենադարանապետ եւ ասպա խմբագրապետ «Հանդէս ամսօրեայ»ի, 1909 թուականից ի վեր՝ գրեթէ անընդմէջ:

Անխոնջ հետազօտողը դեռեւ 1903 թուականից հայագիտական բազմաթիւ ուսումնասիրութիւններ է հրատարակում «Հանդէս ամսօրեայ»ի էջերում, որոնք իրենց արծարծած հարցադրումներով ու բնական մտտեցումներով լայն արձագանք են գտնում հայագէտների շրջանում: Դրանցից շատերը յետագայում ամբողջացում են եւ հրատարակում իբրեւ առանձին աշխատութիւններ: Նրա անուրանալի վաստակի մասին գաղափար կազմելու համար բաւական է նշել, որ նա լոյս է ընծայել շուրջ հինգ հարիւր ուսումնասիրութիւն եւ յօդուած, չհաշուած ձեռագիր այն հետազօտութիւնները, որ նա չէր հասցրել տպագրութեան յանձնել:

Բնագրագիտական հետախոյզ ու մանրագնին պրպտումներն ու քննութիւնները շատ անգամ յանգեցնում են բանասէրին ժամանակագրական ընդունուած արանդական թուականների վերանայման, աղբիւրագիտական համեմատութիւնների ու զուգահեռների միջոցով մատենագրական հեղինակային գործերի երկփեղկման ու տարանջատման անհրաժեշտութեանը: Նրա այդօրինակ մտասեւեռումը, սակայն, միշտ չէր արգասաւորում պատմագիտական ու բանասիրական հիմնատը եւ ստոյգ հետեւութիւններով: Այնուամենայնիւ մատենագրական նրա լայն եւ խորը ծանօթութիւնները երբեք հանգիստ չեն տալիս բանասէրի որոնող ու հետաքննող մտքին. նա մի կողմից նոր բնագրեր է յայտնաբերում մեր հնագոյն քարգմանական գրականութեան մէջ, ինչպէս ասորական կրկնագիր մի ձեռագրում Յովհ. Ոսկերեանի «Մաղմոսաց Մեկնութեան» հայերէն քարգմանութիւնը (5րդ դարի), Ս. Եփրեմի «Գործք Առաքելոցի մեկնութեան» հայերէն քարգմանութիւնը Վիեննայի Մխիթ. Մատ. համար 571 ձեռագրում, Թեովհի «Վասն ճարտասանական կրթութեանց» աշխատութիւնը, «Միմէոն Լեհացոյ Ուղեւորութիւն» երկը Լվովի համալսարանի մի ձեռագրում, «Մակար Բ. Երուսաղեմացոյ Թուղթն առ Վրքանէս Սիւնեաց եպիսկոպոս» եւ այլն, միւս կողմից՝ բազմաթիւ բնագրեր է հրատարակում հայ մատենագիրներից, քարգմանական գրականութիւնից, հայագիտական, վկայաբանական, տաղասացական բնոյթի աշխատութիւններից, ինչպէս եւ լոյս ընծայում առանձին արժէքատը ուսումնասիրութիւններ:

Առանձնապէս մեծ է Հ. Ներսէս Ալիքեանի նախանձախնդրութիւնը ձեռագրական այս կամ այն հաւաքածոյների ցուցակագրման ու նկարագրման գործում, դրանով իսկ փրկելով այդ ձեռագրերը անյայտութեան աղջամուղջից եւ հնարաւորութիւն ստեղծելով դրանք գիտական շրջանառութեան մէջ դնելու: Այդ կապակցութեամբ գնահատելի է նրա զարմնալի փութեռանդութիւնն ու անսահման աշխատասիրութիւնը՝ շնչկրկնելով դժուարութիւնների ու զոհաբերութիւնների առաջ: Նա գիտական ուղեւորութիւններ է կատարել հայկական գաղութներում. բայց նրան յատկապէս ձգում էր Երեւանի Մատենադարանը, որի ձեռագրական հարստութիւնը առիթնող նշանակութիւն ունէր մեղուջան բանասէրի համար: Եւ ահա, 1924-1928 թուականներին հնարաւորութիւն է տրուում նրան լինելու Երեւանում եւ աշխատելու Մատենադարանում՝ ցուցակագրելով եւ ուսումնասիրելով ձեռագրերը:

¹ 1963 թուական:

Հ. Ներսես Ակիմեանի կարևոր ծառայություններից մեկն է նաև հայագիտական ուսումնասիրքի՝ «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրապետությունը, որ նա ստանձնել էր շուրջ կես դար, ընդ որում նա ոչ թե սոսկ խմբագրապետի աշխատանքներ էր կատարում, այլև համարեա իրաքանչիւր համարի յօդուածների գերակշռող մասի հեղինակումով՝ տարիներ շարունակ իր ուսերի վրայ է տարել նրա անխափան հրատարակումը:

Հայագիտութեան անդաստանում Հ. Ներսես Ակիմեանը համակողմանի հմտութիւն ու քաջատեղեակութիւն ունեցող գիտնական էր, ուստի եւ իր ուժերը փորձել էր միջնադարեան մեր մշակոյթի բազմաթիւ բնագաւառներում. ըստ որում նա հրատարակել է ոչ միայն աղբիւրներ, այլև իր լայն ծանօթութիւններով ու դիտողութիւններով տարբեր բնագաւառների մասնագէտների ուշադրութիւնն է հրաւիրել այս կամ այն հարցի վրայ, որն այլապէս կարող էր վրիպել ձեռագրական մեր արուեստին ոչ այնքան հմուտ հետազօտողների կողմից: Այդ իսկ պատճառով, հայագիտութեան այս կամ այն բնագաւառի մասնագէտը իր ուսումնասիրութեան եւ նիւթի մշակման ընթացքում հազիւ թէ կարողանայ շրջանցել կամ չ'անդրադառնալ Հ.Ներսես Ակիմեանին՝ ինչպէս հետազօտուող նիւթի հայթայթման առումով, այնպէս էլ՝ նրա դիտողութիւնների հաշուառման տեսակէտից:

Հ. Ներսես Ակիմեանի վաստակը, անտարակոյս, իր արժանի տեղը կը գրաւի հայագիտութեան մէջ:

«Մովետական Հայաստան» ամսագիր,
Պաշտօնաթերթ Սփիւռքի կոմիտէի,
պատկերագարդ, 1963, Թ. 11:

ՀԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ
ԵՐԿԵՐԻ ՌՈՒՄԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայագիտութեան բնագաւառում ծաւալուող աշխատանքների մէջ լուրջ ներդրում է հին եւ միջնադարեան իմաստասիրական երկերի գիտական համահաւար-համեմատական բնագրերի կազմումն ու հրատարակումը, ոուսերէն զուգահեռ քարգմանութեամբ:

Հայ իմաստասիրական երկերի ոուսերէն քարգմանութիւնը բաւականին լայն ծաւալ ստացաւ մեզ մօտ սովետական տարիներին: Մինչև այժմ ոուսերէն են քարգմանուել տարբեր ծաւալի ինը աշխատութիւններ. ա) «Հերմեյա Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք», բ) «Չեմոնի իմաստասիրի Յաղագս բնութեան», գ) «Յովհաննու Որոտնեցոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց երկերը հրատարակուած են Մատենադարանի «Բանբեր»-ի Թ. 3-ում (1956), դ) «Ճարտասան, յաղագս բնութեան» եւ ե) «Սահմանք փիլիսոփայականք» երկերը՝ Մատենադարանի «Բանբեր»-ի Թ. 5-ում (1960), իսկ առանձին գրքերով՝ գ) «Յովհաննու Որոտնեցոյ Վերլուծութիւն «Մտորոգութեանց Արիստոտէլի» եւ է) «Յովհաննու Որոտնեցոյ համառօտ վերլուծութիւն Պորփիրի դժուարալուծիցն» (երկուսը մի գրքում, 1956), բ)

Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան», 1960) եւ բ) «Մեկնութիւն «Մտորոգութեանց» Արիստոտէլի» (1961):

Թարգմանուած բնագրերի ստուար մեծամասնութիւնը արդիւնք է յունարան դպրոցի գործունէութեան: Չեմոնաւու լինելով քարգմանական աշխատանքների, մեր երկրորդ քարգմանիչները բախում էին լուրջ դժուարութեան. դասական հայերէնը, որը հիանալի կերպով ձեւաւորում էր գեղեցիկ գրականութեան մէջ արտայայտուած ամենաբազմերանգ մտքերն ու գաղափարները, բաւականին անգօր դուրս եկաւ գիտական-իմաստասիրական երկեր յօրինելու կամ քարգմանելու համար. եւ դա բացատրում է ոչ թէ կառուցուածքային ներքին հնարաւորութիւնների անզարգացածութեամբ կամ անճկունութեամբ, այլ հիմնականում համապատասխան գիտութիւնների համար պահանջուող տերմինաբանութեան ու մասնագիտական սեղմ ու կոտ, ճշգրիտ հասկացութիւնների ու արտայայտութիւնների բացակայութեան հանգամանքով: Եւ դա, անտարակոյս, հասկանալի է առաջին անգամ գրի անուող մատենագրութեան համար: Կասկածից վեր է նաև, որ գիտական-իմաստասիրական երկերի հայերէն քարգմանութեան վրայ ուժեղ դրոշմ է դրել Ալեքսանդրեան դպրոցի մշակած քարգմանական սկզբունքը, ըստ որի, հնարաւոր աղաւաղումներից ու փիրմբոնումներից խուսափելու համար, պահանջում էր բառացի նիւթական քարգմանութիւն. նման մօտեցումը յանգեցնում էր քարգմանութիւն կատարող լեզուի կառուցուածքային-շարահիսական օրինաչափութիւնների բացայայտ հպատակեցմանը քարգմանուող լեզուին: Այլապէս ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ թէև մեր առաջին քարգմանիչները նոյնքան շատ քարգմանութիւններ կատարեցին յունարէնից եւ ասորերէնից, բայց հաւատարիմ մնացին հայոց լեզուի օրինաչափութիւններին ու ոգուն. մինչդեռ երկրորդ քարգմանիչների լեզուն հիմնովին եւ տրամագծօրէն հակառակ էր հայոց լեզուի բուն օրինաչափութիւններին ու խորք՝ նրա ոգուն: Ոչ միայն իրենց նորաստեղծ բառաբարդութիւնների կազմութիւնը երկրորդ քարգմանիչները լիովին համապատասխանեցրին յունարէնի բառաբարդման կանոններին՝ նախածանցների հարուստ համակարգով, այլև շարահիսութեան օրինաչափութիւնները՝ համաձայնութիւններն ու խնդրառութիւնները, շարահասական նորմաները ամբողջովին ենթարկեցին յունարէնին: Սա իրօք մի յեղաշրջում էր մեր մատենագրութեան լեզուի զարգացման մէջ՝ իր թէ՛ դրական եւ թէ՛ բացասական հետեւանքներով:

Դրականն այն էր, որ յունարէնի հարուստ նախածանցների ու բառակերտման եղանակների նմանողութեամբ հայերէնի բառակազմական հնարաւորութիւնները արտակարգօրէն աճեցին՝ ի վիճակի դառնալով արտայայտելու ամենաբարդ ու ամենավերացական գաղափարներ ու հասկացութիւններ. ստեղծեցին մասնագիտական զարմանալի առատ տերմիններ ու արտայայտութիւններ, լեզուն ձեռք բերեց գիտական սեղմութեամբ ու ճշգրտութեամբ մասնագիտական շարադրանքներ ստեղծելու հնարաւորութիւն. ուստի եւ յունարան հայերէնի շնորհիւ ընդարձակուեց նաև մեր մատենագրութեան առարկայական թեմատիկան՝ ընդգրկելով միջնադարեան գիտութեան բոլոր բնագաւառներն ու ճիւղերը, որով մեր դպրութիւնը դարձաւ առաւել լայնապարփակ ու բազմաբովանդակ:

Բացասականն այն էր, որ յունարէնի կառուցուածքային առանձնայատկութիւնների պատճենաւորումով խիստ այլափոխուեց այդ շրջանի մեր գրական լեզուն, լեզուական տեսակէտից այդ բնոյթի քարգմանութիւնները անճանաչելիօրէն հեռացան դասական հայերէնից. այնպէս որ նոյնիսկ ներկայիս քաջ գրաբարգէտի համար դրանց վերծանումն ու մեկնաբանումը, առանց յունարէնի իմացու-

թեան եւ համապատասխան մասնագիտական հմտութեան, չափազանց դժուարին է, եթէ ոչ անհնարին: Գուցէ դա է եղել պատճառը, որ այդ բնոյթի երկերի լեզուական առանձնայատկութիւնների ուսումնասիրմամբ շատ ուշ է սկսում զբաղուել հայ բանասիրութիւնը: Փռոֆ. Ն. Ադունցի՝ «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնը նորին» (Պետրոզորադ, 1915) եւ ակադ. Մանանդեանի՝ «Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները» (Վիեննա, 1928) մեծարժէք աշխատութիւններով հիմք է դրում մեր մատենագրութեան պատմութեան այդ իրօրինակ զբաղման շարժման համակողմանի բնութեան եւ հետազօտութեան: Իսկ այդ բնագրերի ռուսերէն թարգմանութիւնը միայն վերջերս է հնարարուր դարձել:

Գիտական մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում ակադ. Մանանդեանի կազմած «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեայիս սահմանք» համահաւարք բնագրի ռուսերէն թարգմանութիւնը փիլիսոփայական գիտ. թեկնածու Մեն Արեւշատեանի կողմից: Սոյն աշխատութիւնը ուշագրաւ է նրանով, որ լինելով աստուածաբանական-իմաստասիրական բնոյթի ստեղծագործութիւն, պահպանուել է *միայն հայերէնով*, իսկ նրա յունարէն բնագիրը կորել է: Այդ պատճառով էլ հայերէն տարբերակի նշանակութիւնը անհամեմատ մեծ է: Մանանդեանի կարծիքով՝ այս երկը իր լեզուական առանձնայատկութիւններով պատկանում է յունարան թարգմանութիւնների երկրորդ խմբին, որի մէջ մտնում են «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղէքսանդրեայ Հակաճառութիւն»ը եւ Եամբրոիկոսի խմբի արիստոտելեան երկերը¹: Միս կողմից՝ սոյն աշխատութեան ազդեցութիւնը հայ միջնադարեան փիլիսոփայական գրականութեան վրայ, մասնագէտների պնդմամբ, անվիճելի է: Հրատարակուած աշխատութիւնը ունի նաեւ ակադ. Մանանդեանի առաջաբանը:

Մ. Արեւշատեանը հրատարակել է նաեւ համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող Չենոն Իմաստասերի «Յաղագս բնութեան» երկի ռուսերէն թարգմանութիւնը («Բանբեր Մատենադարանի», անդ, էջ 315-342)՝ առաջաբանով հանդերձ: Օտար աղբիւրներից Չենոն Իմաստասերի աշխատութեան մասին գիտութեանը յայտնի են միայն առանձին դրոյթների քաղաւածքներ՝ տարբեր հեղինակների մօտ վերաշարադրուած ձեւով: Չենոնի «Յաղագս բնութեան» աշխատութիւնը համառօտ եւ ընդարձակ տարբերակներով պահպանուել է *միայն հայ մատենագրութեան մէջ*: Ընդարձակ տարբերակը, վերնագիր չունենալով, երկար ժամանակ՝ անյայտութեան մէջ է մնացել: Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Խաչիկեանին 1949 թ. յաջողում է յայտնաբերել այն եւ կազմել համահաւարք-համեմատական բնագիրը՝ Մատենադարանում առկայ համառօտ տարբերակի երեք այլ ձեռագրերի օգնութեամբ, եւ համապատասխան առաջաբանով հրատարակել Մատենադարանի «Գիտական նիւթերի ժողովածու»ի II համարում (1949, էջ 65-98): Սոյն աշխատութեան յունարէնից կատարուած հայերէն թարգմանութեան ժամանակաշրջանը, ելնելով ակադ. Յ. Մանանդեանի տուած պարբերացումից եւ լեզուական իրողութիւնների իր սեփական դիտողութիւններից, Լ. Խաչիկեանը վերագրում է յունարան դպրոցի գործունէութեան երրորդ շրջանին (VI դարի վերջը եւ VII դարի սկիզբը)²:

Նոյն ժամանակաշրջանի յունարան դպրոցի թարգմանչական գործունէութեան արդիւնք են նաեւ անանուն հեղինակների «Ճարտասան. յաղագս Բնութեան

¹ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1956, Թ. 3, էջ 290:

² Տե՛ս Մատենադարանի «Գիտական նիւթերի ժողովածու», 1949, Թ. 2, էջ 76:

եւ Մահմանք փիլիսոփայականը» վերնագրերը կրող աշխատութիւնները, որոնք հատուածաբար հասել են մեզ: Մրանք առանձնայատուկ բնոյթի երկեր են, որոնք միջնադարում ծառայել են իբրեւ յունական փիլիսոփայութեան դասագիրք: Այդ երկերի համահաւարք-համեմատական բնագրերը, նրանց ռուսերէն թարգմանութիւնը, մասնագիտական առաջաբանով միասին, հրատարակել է Մ. Արեւշատեանը Մատենադարանի «Բանբեր»ի Թ. 5ում, (1960, էջ 371-392):

Մեզ բուն է, որ «Բանբեր»ի տարբեր համարներում լոյս տեսած բնագրերն ու նրանց ռուսերէն թարգմանութիւնը ստելի նպատակայարմար կը լինէր ամփոփել առանձին գրքում եւ այդպէս ներկայացնել դրանք գիտական հասարակայնութեանը: Դրան պէտք է ձեռնամուխ լինել՝ ելնելով այդ բնագրերի կարեւորութիւնից եւ համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմութեան վրայ նրանց ունեցած անդրադարձից:

1960 թ. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչութիւնը լոյս ընծայեց Մ. Արեւշատեանի պատրաստած «Դաւիթ Անյաղք, Մահմանք իմաստասիրութեան» աշխատութիւնը՝ առաջաբանով, համահաւարք բնական բնագրով ու զուգահեռ ռուսերէն թարգմանութեամբ, ինչպէս նաեւ ծանօթագրութիւններով: Աշխատութեան առաջաբանից պարզում է, որ ռուսերէն թարգմանութեան առաջին տարբերակը հեղինակը կատարել է դեռեւս 1951 թ., սակայն այն համարել է անբարարար, քանի որ իր ձեռքի տակ չի ունեցել «Մահմանք»ի բնական համահաւարք բնագիրը եւ թարգմանութեան համար հիմք է ընդունած եղել միայն 1833 թ. վենետիկեան հրատարակչութիւնը («Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւիթ Անյաղքի Մատենագրութիւնը»): Այդ պատճառով էլ Մատենադարանում զտնուող ընտրովի հինգ ձեռագրերի հիման վրայ պատրաստած բնական համահաւարք բնագրից հեղինակը կատարել է նոր թարգմանութիւն, երբ ձեռագրական տարբերությունների օգնութեամբ ստուգուել, ճշդուել եւ վերականգնուել են բազմաթիւ ձեւակերպումներ ու բառեր:

Առաջաբանում բնութագրում է V դարի վերջում եւ VI դարի սկզբում ապրած հայ փիլիսոփայական մտքի կարկառուն ներկայացուցչի՝ Դաւիթ Անյաղքի գիտական ժառանգութիւնը, ընդհանուր եւ հիմնական գծերով վերլուծում եւ արժէքաւորում են հրատարակուող բնագրի տեսական դրոյթները, ցոյց է տրուում այդ երկի թողած ազդեցութիւնը հայ միջնադարեան փիլիսոփայութեան պատմութեան վրայ, պատշաճ արժէքաւորումով գնահատում եւ վեր է հանում բնական բանասիրութեան ծառայութիւնը Դաւիթ Անյաղքի անուան հետ կապուած բազմաթիւ փիլիսոփայական երկերի աւանդական վերագրումների պարզաբանման ուղղութեամբ:

Միս առաւել խոշոր փիլիսոփայական աշխատութիւնը, որ միայն վերջերս լոյս տեսաւ, կրում է «Ամանուն մեկնութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի» վերնագիրը: Ուշագրաւ է, որ սոյն երկը իր բնոյթով ու նշանակութեամբ մեծ անդրադարձներ է ունեցել միջնադարեան հայ փիլիսոփայական մտքի վրայ: Դրա կարեւորութիւնն ու հրատարակչութիւնը այնքան ակնբախ է եղել անցեալում, որ կարիք է զգացուել մի շարք անգամներ կրկին մեկնութիւնների ենթարկելու այն: Այս մեկնութեան առաւելութիւնը ընդգծում է նաեւ նրանով, որ բովանդակում է Արիստոտելի «Կատեգորիաների» («Ստորոգութեանց») ամբողջութիւնը, որից իւրաքանչիւր հատուած բառացի թարգմանաբար բերում է սկզբում եւ ապա մեկնում: Այսպիսով, շնորհիւ այդ համահաւարքի, պահպանուած է լինում նաեւ Արիստոտելի վերոյիշեալ աշխատութեան *դեռեւս VI դարում յունարէնից թարգմանուած հայերէն տարբեր*

ըսկը: Բացի դրանից, սոյն աշխատութիւնը համարում է Արխտոտէլի «Կատեգորիաներ»ի *հնագոյն* մեկնութիւններից մէկը, որի քննական բնագրի կազմումն ու ռուսերէն զուգահեռ հրատարակումը բացառիկ նշանակութիւն ունի համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմութեան, ինչպէս եւ Արխտոտէլի սոյն երկի բանասիրական ճշդումների ու վերականգնումների համար:

Թէեւ ունենք այս Մեկնութեան վեներտիկեան հրատարակութիւնը («Կորին վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւիթ Անյաղթի Մատենագրութիւն», 1833), բայց-այն արտատպումն է թերի, սխալաշատ եւ պակասատր մի ձեռագրից: Առաջին անգամ սովետական տարիներին է, որ գիտական լայն հասարակայնութեան սեփականութիւնն է դարձում յիշեալ երկի քննական ամբողջական բնագիրը Մատենադարանում գտնուող հնագոյն եւ արժեքատր հինգ ձեռագրերի համեմատութեամբ: Աշխատութեան պատմա-փիլիսոփայական առաջաբանը պատկանում է փիլիսոփայական գիտութիւնների Դոկտոր Վ. Չալոյեանին, քննական բնագիրը կազմել են Վ. Չալոյեանն ու Մատենադարանի աշխատակից Ս. Լալաֆարեանը, իսկ ռուսերէն թարգմանութիւնն ու ծանօթագրութիւնները՝ Ս. Արեւշատեանը:

Առաջաբանում Դոկտ. Չալոյեանը քննում է բանասիրութեան նուաճումները Արխտոտէլի «Կատեգորիաներ»ի մեկնութեան վերաբերեալ, անդրադառնում Մեկնութեան թարգմանչի (ըստ իրեն՝ հեղինակի) անձնատրութեան, ժամանակի եւ տեղի հարցերին, շարադրում Մեկնութեան հիմնական դրոյթները եւ ներկայացնում Անանուն մեկնիչի աշխարհայեացքային ընդհանուր գծերը, վերջում նկարագրելով քննական բնագրի հիմքում ընկած ձեռագրերը:

Թարգմանիչը բնագրի տարընթերցումները համեմատութեան մէջ է դրել Ա. Կուրիցկու կատարած ռուսերէն թարգմանութեան հետ (Մոսկուա, Մոցէկզիզ, 1939), ընդ որում յունարէնի հետ հայերէն բնագրի կարեւորագոյն տարընթերցումների մատնանշման զուգահեռ, ծանօթագրութիւններում նա ցուցադրում է հայերէն տարընթերցումները՝ Ա. Կուրիցկու ռուսերէն թարգմանութեան նկատմամբ: Դա բանասիրական արժեքատր եւ խիստ պատասխանատու աշխատանք է, որի նախաձեռնութիւնը պատկանում է Ֆ. Կոնիքերին: Վերջինս հայերէն ձեռագրերի տուած տարընթերցումները համեմատել եւ բանասիրական լուրջ դիտողութիւններ է կատարել յունարէն տեքստի նկատմամբ:

Յետ-յունարան հայերէնով գրուած բնագրերի ռուսերէն թարգմանութիւններն են՝ Յովհան Ռոտունցու իմաստասիրական երեք երկերը. ա) «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», բ) «Վերլուծութիւն Մտորոգութեանց Արխտոտէլի» եւ գ) «Համառօտ վերլուծութիւն Պորփիրի դժուարալուծիցն»: Առաջին բնագրի թարգմանութիւնը պատկանում է Ս. Արեւշատեանին («Բանբեր Մատենադարանի», Թ. 3, էջ 343-386). վերջին երկուսինը՝ Վ. Չալոյեանին եւ Փրոֆ. Ա. Ադամեանին (երկու աշխատութիւնները միասին ամփոփուած են մի գրքում՝ «Յովհաննու Ռոտունցու Վերլուծութիւն Մտորոգութեանց Արխտոտէլի» վերնագրով, խմբագրութեամբ Ս. Արեւշատեանի, Երեւան, 1956):

Պէտք է նկատել, որ այս բնագրերը անհամեմատ պարզ գրաբարով են շարադրուած, նրանց տերմինաբանութիւնը առատել կայուն է, իմաստասիրական հասկացութիւններն ու մտքերը ձեւակերպուած են առատել որոշակիութեամբ ու աներկղիմութեամբ: Նման բնագրերի թարգմանութիւնը համեմատաբար հեշտանում է, քանի որ նրանցում յունարան հայերէնով մեզ հասած անտիկ եւ հայ

միջնադարեան փիլիսոփայական երկերի խրթնաբանութիւնը, հիմնականում, յաղթահարուած է, արդէն իսկ վերծանուած են իմաստասիրական կարեւորագոյն դրոյթներն ու հարցադրումները, բացայայտուած են տերմինների ու մասնագիտական բառակապակցական արտայայտութիւնների բովանդակութիւնը եւ այլն, եւ այլն:

Անտիկ եւ հայ միջնադարեան իմաստասիրական երկերի ռուսերէն թարգմանութիւնների մասին ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ յունարան հայերէնով գրուած փիլիսոփայական երկերի ռուսերէն թարգմանութեան շնորհիւ բացայայտուած եւ վերծանուած են մեզ հասած բարդ եւ խրթին ոճով շարադրուած բնագրերը: Այդ պատճառով էլ ոչ միայն լայն շրջանառութեան մէջ են մտնում անտիկ եւ հայ միջնադարեան իմաստասիրական երկերը, այլեւ դրանք դադարում են մեռեալ միաւորներ լինելուց, նպաստելով հայագիտութեան տարբեր մարզերում տեսական այս կամ այն հարցը լուսաբանելու խնդրին: Դրան օժանդակում է այն, որ թարգմանուած իւրաքանչիւր բնագիր օժտուած է համապատասխան Առաջաբանով, բանասիրական բնոյթի Դիտողութիւններով ու Ծանօթագրութիւններով:

Անտիկ եւ հայ միջնադարեան փիլիսոփայական երկերի՝ Մովետական Հայաստանում կատարուած ռուսերէն թարգմանութիւնը, անտարակոյս, նշանակալի աւանդ է հայագիտութեան կարեւոր մի բնագաւառի ուսումնասիրման ու հետազօտման եւ հայագիտական մտքի լուսագոյն դրսեւորումներին ու արժէքներին միջազգային ճանաչում տալու գործում:

ՀՄՍՀ Գիտութիւնների ակադեմիայի
Հասարակագիտական բաժանմունքի
«Պատմա-բանասիրական հանդէս»,
1964, Թ. 1:

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ. «Բայը Ժամանակակից Հայերէնում», ՀՄՍՌ ԳԱ
Հրատ., 1962, Գիրք Ա:

ԱՐԺԷՔԱՌՐ ՆԵՐԳՐՈՒՄ ՍՈՎԵՏԱՀԱՅ
ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայագիտութիւնը ընդհանրապէս եւ հայ քերականագիտութիւնը մասնաւորապէս հարստացան եւս մի մեծարժէք ու մնայուն աշխատութեամբ, որը իր գիտական համակողմանի վերլուծութեամբ եւ ընդգրկման լայն տարողութեամբ ու խորութեամբ սովետահայ լեզուաբանական մտքի վերջին տասնամեակի կարեւորագոյն նուաճումներից է: Դոցնու Ա.Ա. Աբրահամեանի՝ «Բայը Ժամանակակից հայերէնում» աշխատութիւնը հետազօտական լուրջ մենագրութիւն է, որը հանդիսանում է հեղի-

նակի երկար տարիների մեղուաջան աշխատանքի ու բեղմնատր գրչի արգասիքը: Նման երկասիրութեան լոյսընծայումը վկայում է, անտարակոյս, հեղինակի հայագիտական խոր հմտութեան, լեզուաբանական ներքին մտածողութեան, նուրբ դիտողականութեան ու խորաթափանց ընկալման, ինչպէս եւ տեսական լայն ընդհանրացումներ կատարելու անվիճելի կարողութեան մասին: Հեղինակը իր գիտական վաստակով վաղուց յայտնի է եւ լայն ճանաչում է գտել մեր հասարակայնութեան մէջ. նրա «Հայերէնի դերբայները եւ նրանց ձեւաբանական նշանակութիւնը» (1952 թ., երկրորդ հրատ. 1958թ.) մինչ այդ լոյս տեսած դասական հայերէնի քերականական կառուցուածքի հետազոտութեանն ու սխտեմատորմանը նուիրուած ձեռնարկներից ամենատարածուած եւ յաջողուած աշխատութիւնն է. բազմաթիւ են նաեւ հեղինակի լեզուաբանական ծանրակշիռ ու հմտալից այլ ուսումնասիրութիւններն ու յօդուածները: Այժմ հրատարակի վրայ է դրուած հեղինակի առաւել ամբողջական եւ ծաւալուն աշխատութեան՝ «Բայը ժամանակակից հայերէնում» մենագրութեան առաջին հատորը, որը իր բերած նորոյթներով ու ներդրումներով հարստացնում եւ սպառնիչ է դարձնում մեր պատկերացումը արդի հայերէնի բայի դրսեւորումների մասին:

Սովետահայ քերականագիտութիւնը տարբեր տեսանկիւններից եւ հարցերի ու հարցադրումների ընդգրկման տարբեր ոլորտով անդրադարձել է ժամանակակից արեւելահայ գրական լեզուի բայական համակարգին ու նրա առանձին կարգերին: Այդ իմաստով էլ կարելի է ասել, որ արդի հայերէնի խօսքի մասերից բայը ուսումնասիրման է ենթարկուել առաւել մեծ չափով եւ հանգամանօրէն: Այդ բացատրում է մեծ մասամբ նախադասութեան մէջ բայի ունեցած վճռական դերով ու արտայայտած բառական-քերականական բազմազան դրսեւորումներով եւ իմաստային լիառատ նշանակութիւններով: Ինչպէս յայտնի է, հայերէնի բայը իր բառական միատրոններով ու քերականական կարգերով աշխարհի լեզուների մէջ ամենահարուստ բայական համակարգերից մէկն է ճանաչուած: Բայց գրախօսուող աշխատութիւնը յատկանշուած եւ ընդգծուած է նրանով, որ ուսումնասիրելով բայի դրսեւորումները մեր լեզուի պատմական որոշակի ժամանակաշրջանում՝ համեմատաբար կայուն (ստատիկ) փուլում, միաժամանակ պատմական զուգահեռներով մեկնաբանում ու բացատրում է լեզուական այնպիսի իրողութիւններ, որոնք հազարամեակների ու հարիւրամեակների իրենց անցած ճանապարհով այլ կերպ անհասկանալի ու անըմբռնելի են մնում: Այստեղ, ահա, բացայայտում է հեղինակի զարմանալի խորիմացութիւնը հայոց լեզուի զարգացման լայնահուն ընթացքի տարբեր դարաշրջանների վիճակի մասին՝ եւ դասական հայերէնի ու հնդեւրոպական հիմք-լեզուի հետ առնչակցումների, եւ յունաբան հայերէնի, եւ միջին հայերէնի, եւ արեւելահայ աշխարհաբարի սկզբնաղբյւրն ու զարգացման տարբեր դրութիւնների, եւ բարբառների վերաբերեալ: Դա իր հերթին մեծապէս բարձրացնում է աշխատութեան գիտականութիւնը:

Ներկայ գրքում ընգրկուած են բայի խօսքի մասային էութեանը, բառական-քերականական կառուցուածքին եւ սեռի քերականական կարգին վերաբերող հարցերն ու պարզումները:

Դոցենտ Ա.Ա. Աբրահամեանը ձեռնամուխ է եղել ամենաբարդ խօսքի մասի՝ բայի համակողմանի քննութեանը՝ շարադրման իր ծրագիրը իրագործելով հետեւեալ կերպ. սկզբում գիտականօրէն նկարագրում են բայի խօսքի մասային բնոյթն ու նրա բառական ձեւաւորումը, փաստական հարուստ նիւթերի վերլուծմամբ ցոյց են տրուում ժամանակակից արեւելահայ գրական լեզուում բայական

բառապաշարի առաջացման եղանակներն ու շերտերը, այնուհետեւ՝ բացայայտում են նրա քերականական կարգերն ու իմաստները:

Առաջին բաժնում շատ արժէքատր դիտողութիւններ են արւում բայական բառոյթի կազմութեան եղանակները ուսումնասիրելիս, ուրուագծում արեւելահայ գրական լեզուում բայական կառուցուածքի հիմունքներն ու օրինաչափութիւնները: Հանգամանօրէն լուսաբանում եւ բնութագրում են բայական կազմութեան երկու գլխատր տեսակները՝ համադրական (ձոյլ) եւ վերլուծական (յարադրական): Մեր գրական լեզուում շրջանառութեան մէջ են շուրջ 6.000 բայական ձոյլ կամ համադրական բառոյթներ, իսկ յարադրական բայերի քանակը հասնում է հազարների (տե՛ս գրախօսուող աշխատութիւնը, էջ 47): Հեղինակը ճիշդ կերպով հայերէնի բայերը դիտում է իբրեւ բաղադրական, ոչ միաձեւոյթ կազմութիւններ:

Լեզուական տուեալների վերլուծմամբ հեղինակը բացայայտում է բայական ցուցանիշների յարաբերական բեղմնաւորութիւնն ու կենսունակութիւնը. նա ընդգծում է, որ առանձնապէս բեղմնատր է -ել մասնիկը, համեմատաբար նուազ արգասաբեր է -անալ մասնիկը, իսկ առաւել պակաս բեղմնատր՝ -ալ մասնիկը: Ընդ որում հեղինակը այս բաժնում անդրադառնում է բազմաթիւ յարակից հարցերի մեկնաբանմանը, որոնք շահեկան են նիւթի ամբողջական ընդգրկման տեսակէտից. քննում են փոխառուող բառերի ու հասկացութիւնների բայացման առանձնայատկութիւններն ու սկզբունքները, երբ ժամանակակից հայերէնը իր ոլորտում շրջանառութեան մէջ է դնում դրանք վերակազմուած ձեւով՝ լիովին ենթարկելով արդի հայերէնի բայական համակարգի գործուն օրինաչափութիւններին ու ոգուն:

Ժամանակակից հայերէնի բայական բառոյթի կառուցուածքը եւ մասնաւորապէս այլ խօսքի մասերից բայեր կազմելու լեզուական երեւոյթը ուսումնասիրելիս հեղինակը քննարկում է ընդհանուր արմատ ունեցող անուանական ու բայական միատրոնների փոխարաբերութեան պրոբլեմը: Այդ պրոբլեմը լեզուաբանութեան մէջ պատկանում է չլուծուած խնդիրների շարքին: Հեղինակը հայերէնի փաստերի հիման վրայ դրա լուծման մի շարք միջոցներ եւ հիմունքներ է առաջադրում: Դրանց հիման վրայ նշում են երեք ուղիներ. ա) բայական եւ անուանական բառոյթների առաջացումը՝ ընդհանուր արմատից, բ) բայերի առաջացումը անուանական բառոյթներից եւ գ) անուանական բառոյթների առաջացումը բայերից:

Բայի կառուցուածքում հանդէս եկող լեզուական, քերականական բոլոր տարրերի դերի ու նշանակութեան, գործածութեան հանգամանքների ու կենսունակութեան բացայայտումով, ինչպէս եւ հնացածի, բարբառայինի ու կենդանի գրականի սահմանների ընդգծումով՝ մանրախոյզ վերլուծութեան շնորհիւ իրենց սպառնիչ բացատրութիւնն ու մեկնութիւնն են գտնում բայական բառոյթի կազմաւորման ու ձեւաւորման ներքին օրինաչափութիւններն ու ամբողջ տեխնիկան:

Առանձնապէս առաւել յատկանշական է իր ներդրումներով աշխատութեան երկրորդ բաժինը, որը նուիրուած է սեռին:

Բայի քերականական այս կարգի եւ նրա իմաստների քննութիւնը այստեղ կատարում է ծաւալուն կերպով եւ նիւթի հետազոտման նոր դասդասումների համաձայն: Սկզբում տրուում է պատմական ակնարկ՝ բայի քերականական իմաստների ըմբռնման մասին հայ քերականագիտութեան մէջ՝ պատշաճ գնահատականներով ընդունելով կամ մերժելով այս կամ այն տեսակէտը: Այնուհետեւ հեղինակը, ելնելով ժամանակակից քերականագիտութեան նուաճումներից ու սեփական դատողութիւններից եւ ըմբռնումներից, առանձին հատուածներում

վերլուծում է արդի գրական հայերենում սեռի դրսևորման քերականական առանձնայատկություններն ու իմաստները: Տեսական պատճառաբանությամբ ու հիմնավորմամբ նախ հեղինակը որոշում է սեռի սահմանման հիմունքները՝ իբրև ելակետ ընդունելով գործողության կամ եղելության յարաբերությունը՝ մի կողմից՝ սուբիեկտի, միւս կողմից՝ առարկայի նկատմամբ, ընդգծում առարկայական ելակետի ու վախճանակետի քերականական արտոբակցիայի բնոյթը, ենթակայի ու խնդրի դրսևորման քերականական եւ տրամաբանական հասկացությունների համընկնումներն ու տարբերությունները: Այստեղ դժուար է թուարկել քերականական բոլոր իմաստների ու ձևերի այն ամբողջական ու խտացած շարքը, որ հեղինակը ամենայն մանրակրկիտությամբ քննում է համապատասխան դասակարգումով: Բառարարուենք ասելով, որ հեղինակը հետազոտելով սեռային հասկացությունները եւ տալով սեռադասերի, սեռերի եւ սեռային առումների խմբատրումները, բազմաթիւ ճշգրտումներ ու յտակություն է մտցնում բայի քերականական իմաստների ըմբռնման եւ ձևակերպումների մէջ, ինչպէս եւ նոր երեւոյթներ է բացայայտում ու արժեքատրում: Այդ տեսակետից յատկապէս ուշագրաւ է «Կրկնասեռության երեւոյթը եւ կրկնասեռ բայերը ժամանակակից հայերէնում» հատուածը: Հայ քերականագիտության մէջ առաջինը դոց. Ա.Ա. Աբրահամեանն է կրկնասեռութիւնը դիտում որպէս քերականական երեւոյթ. այդ բնոյթի բայերը, որոնք սեռային յատկանիշով չլինելով միատարր, իրենց մէջ միաժամանակ համատեղում են երկու սեռ՝ առանց ձևափոխության ենթարկուելու, անկախ սեռային ցուցիչների ներմուծումից (կրատրական, միջին-անդրադարձ, պատճառական): Այդ տիպի բայերում սեռային զուգահեռութիւնը արտայայտում է իրենց սկզբնաձևային դրութեամբ: Օրինակ՝ նայել - «հայեացքն ուղղելով մի բանի, մտիկ տալ» նշանակութեամբ չէզոք է (նայել հայելուն, հագուստին...), իսկ «դիտել, ստուգել, զննել» իմաստով՝ ներգործական (նայել կինոնկարը, գիրքը...), այդպէս եւ՝ *փչել, սպասել, սովորել, աշխատել, ապրել, լսել, հոգալ, ստել, բշել, պրծնել* եւ այլ բայերը: Կարեւորն այն է, որ ոչ միայն քերականօրէն արժեքատրուած են դրանք, այլեւ բացայայտուած են այդ երեւոյթի գոյացման ուղիներն ու հանգամանքները:

Եւ այսպէս էլ քննարկում են հետազոտուող խնդիրների հետ կապուած բազմաթիւ երեւոյթներ, որոնց բնութագրումը հնարատր չէ մի յօդուածի սահմաններում տալ:

Ամփոփենք մեր եզրակացութիւնը. գրախօսուող աշխատութիւնը գիտական բարձր մակարդակով կատարուած ուսումնասիրութիւն է, ժամանակակից գրական հայերէնի համապատասխան լեզուական իրողութիւնների հետազոտմանը նուիրուած արժեքատր մենագրութիւն, որը կարեւոր ներդրում է սովետահայ լեզուաբանութեան մէջ:

«Գրական թերթ», 11ը Յունուարի,
1963թ.:

Է.Ղ. ԱՂԱՅԵԱՆ. «Գրաբարի Քերականութիւն» Հատոր I, Սինխրոնիա,
Գիրք Ա., Հնչիւնաբանութիւն:

Լ Ե Ջ Ո Ւ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Ն Ո Ր Ո Ւ Ղ Ի Ն Ե Ր Ո Վ

Գիտական հասարակայնութեան է ներկայացուած ՀՍՍՌ ԳԱ Թղթակից-անդամ, Փրոֆ. Է.Ղ. Աղայեանի «Գրաբարի քերականութիւն» երկհատոր աշխատութեան առաջին գիրքը, որ նուիրուած է դասական հայերէնի հնչիւնաբանութեան ուսումնասիրմանը: Հեղինակը իր մենագրութիւնը, ըստ արժանուոյն, ձօնել է հայ դպրութեան հանճարեղ հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի անմահ յիշատակին՝ նրա ծննդեան 1.600ամեակի առթիւ:

Սկզբիցեւեք հարկ է նշել, որ աշխատութիւնն իր հետազոտական նոր եղանակով, արծարծած հարցադրումների խորութեամբ եւ մեկնաբանման իրայատկութեամբ, եզրակացութիւնների ու ընդհանրացումների գիտական հիմնատրուածութեամբ սովետահայ լեզուաբանութեան եւ քերականագիտութեան մէջ սկիզբ է դնում հետազոտութիւնների նոր ուղղութեան: Սոյն մենագրութիւնը *առաջին փորձն է* մեզանում լեզուի կառուցուածքային (ստրուկտուրալ) հետազոտութեան, որով ճշգրտութեամբ կարող են ուրուագծուել հայոց լեզուի զարգացման տարբեր գոյալիճակները՝ գրաբարը, միջին հայերէնը, աշխարհաբարը՝ իր գրական երկու դրսևորումներով: Գրախօսուող աշխատութեան նշանակութիւնը եւ գիտական անդրադարձումները լեզուաբանական հետազոտութիւններում կը լինեն բացառիկ ու ծանրակշիռ: Փաստօրէն բոլորովին նոր տեսանկիւնով, վերլուծման առաւել հաւաստի եւ ճշգրիտ մեթոդների կիրառմամբ ու կառուցուածքային համակարգում լեզուական իրողութիւնների հմտալից լուսաբանմամբ նոր աստիճանի բարձրացում սովետահայ լեզուաբանութիւնն ու քերականագիտութիւնը. սրանով սկիզբ է դրում հայոց լեզուի զարգացման տարբեր փուլերի *համաժամանակեա (սինխրոնիկ) վիճակների կառուցուածքային ուսումնասիրման*: Իրականում՝ սոյն մենագրութիւնը արդի լեզուաբանական նորագոյն մեթոդների՝ կառուցուածքային վերլուծութեան սկզբունքների ու դրոյթների ոչ միայն տեսական, այլեւ գործնական վարպետ կիրառումն է, որի կարիքն ու անհրաժեշտութիւնը խորապէս զգացում էր մեզանում:

Մենագրութեան հեղինակը իր նպատակադիր ծրագրով եւ ընդգրկման տարողութեամբ նախատեսում է երկու հատորներում տալ գրաբարի զարգացումն ու մահացումը: Ըստ որում, առաջին հատորում ներկայացուելու է դասական շրջանի գրաբար հայերէնի քննական քերականութիւնը, երկրորդում՝ գրաբարի պատմութիւնն ընդհանրապէս: Այսպիսով, հեղինակը ձեռնամուխ է լինում մասնատրապէս դասական հայերէնի եւ ընդհանրապէս գրաբարի ամբողջական ու համակողմանի

ուսումնասիրությանը: Առաջադրուող երկասիրությունը, պիտի խոստովանել, այդ ծրագրի իրագործման առաջին եւ յաջող արգասիքն է:

Գրախօսուող աշխատությունը բացկացած է երկու մասից.

Ներածության բաժնում խօսում է աշխատության կառուցումների ու նպատակադրման մասին, տրուում է գրաբարի համառոտ տեսությունը, ուրուագծում դասական հայերենի յետագայ ընթացքն ու ճակատագիրը. այնուհետեւ հանգամանալից վերլուծության է ենթարկում Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչների, ինչպէս եւ յետագայ դարերի ինքնուրոյն քերականների հնչյունաբանական տեսությունը, պատշաճ գնահատականներով արժէքատրուում են այդ քերականներից իւրաքանչիւրի հնչյունաբանական գիտելիքներն ու ըմբռումները:

Գրաբարի հնչյունաբանության հարցերով շատերն են զբաղուել: Հայերենի հնչյունների դասակարգումն ու առանձնայատկությունների բնութագրումը տրուել է Թրակացու քերականության առաջին քարգմանության մէջ, դեռ 5-րդ դարում: Այնուհետեւ, աւանդօրէն, այս կամ այն մասնակի ճշգրտումներով, մման դասակարգումն ու բնութագրումը յարատեւում են ինչպէս մեկնաբանական բնոյթի, այնպէս էլ ինքնուրոյն քերականական երկերում, մինչեւ որ մեծամուն հայագէտ Հ. Հիւրշմանը, այդ տուեալների հիմնաւոր վերլուծութեամբ, հիմք է դնում գրաբարի պատմական հնչյունաբանության գիտական ուսումնասիրման: Դիոնիսիոսի երկի հայերէն քարգմանութեան մէջ մեր այբուբենի դասաւորութեան հետագօտմամբ Հիւրշմանը որոշեց մետրական այբուբենի իւրաքանչիւր տառի արտասանական բնոյթն ու մօտաւոր արժէքը: Յետագայում առանձին ճշդումներ ու լրացումներ կատարեցին Ա. Սեյժն, Պետերսոնը, Հ. Աճառեանը, Մ Արեղեանը, Գ. Ղափանցեանը եւ ուրիշներ: Բայց այս հեղինակները գրաբարի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը կատարել են *պատմական տեսանկիւնից*, որը եւ բնորոշ մեթոդական ուղղութիւն է եղել գրաբարի (եւ ո՛չ միայն գրաբարի) հնչյունական համակարգի քննութեամբ զբաղուած բոլոր լեզուաբանների համար: Այդ իսկ պատճառով, որքան էլ արժէքատր միւթեր կուտակուած լինեն տուեալ բնագաւառում, այնուամենայնիւ, դրանք դեռուս չեն կարող մեզ տալ գրաբարի հնչյունական համակարգի իրական գոյավիճակը՝ ամբողջական առումով, չեն կարող ներկայացնել իբրեւ հայոց լեզուի երբեմնի սինխրոնիկ (համաժամանակեայ) վիճակի նիւթական բաղադրիչ տարրերի կատարած դերի ու միմեանց նկատմամբ ունեցած փոխարարբերութիւնների ստոյգ եւ սպառիչ վերլուծութիւնը: Դրան հասնելու համար հարկատր էր դիմել *հնչոյթաբանական վերլուծութեան* կիրառմանը, որը, սակայն, արդի լեզուաբանութեան միայն վերջին տասնամեակների նուաճումներից է:

Այս առումով էլ պրոֆ. Է. Բ. Աղայեանի սոյն մենագրութիւնը հիմնովին տարբերում է աւանդական լեզուաբանական-քերականագիտական ձեռնարկներից. նա ձեռքագատում է հայ լեզուաբանական-քերականագիտական վերլուծութեան կաշկանդումներից՝ լայն ասպարէզ բացելով լեզուի նիւթական բաղադրիչ տարրերի համակողմանի ու փաստաբնական ուսումնասիրման համար:

Հետագօտութեան հիմնական եւ ծանրակշիռ մասը կենտրոնացուած է աշխատութեան *երկրորդ մասում* (դասական հայերենի հնչյունական համակարգի (սինխրոնիկ) վերլուծութիւնը):

Այստեղ պարզաբանում են հնչոյթաբանական տեսութեան ընդհանուր հիմունքները: Ըստ որում, հեղինակը արդի լեզուաբանական գրականութեան մէջ արտայայտուած տեսակէտներն ու դրոյթները ոչ թէ պարզապէս որդեգրում է իբրեւ

անառարկելի ճշմարտութիւններ եւ վերջնական ասոյթներ, այլ, քննական խիստ հայեցակէտով վերլուծման ենթարկելով դրանք, կարեւոր ճշգրտումներ եւ ուղղումներ է մտցնում տեսական ընդհանուր դրոյթներում՝ դասական հայերենի իրողութիւնների նկատմամբ դրանց կիրառման ժամանակ: Միս կողմից, հեղինակը ամենեւին էլ չի հրաժարում նախաշէմքից՝ պատմական քերականագիտութեան ու հայ բարբառագիտութեան տուեալներից ու նուաճումներից, այլ, ընդհակառակն, դրանք համադրում է իբրեւ օժանդակ եւ լրացուցիչ փաստարկներ՝ կառուցուածքային վերլուծութեամբ ձեռք բերուած արդիւնքներն ու հետետրիւնը վերստուգելու եւ ամրապնդելու, կամ էլ՝ այլապէս անբացատրելի երեւոյթները մատչելի ու վերլուծելի դարձնելու համար:

Հնչոյթաբանական վերլուծութիւնների սկզբունքներն առաջադրելուց յետոյ, հեղինակը որոշում է հնչյունի եւ հնչոյթի փոխարարբերութիւնները, տալիս դրանց գիտական սահմանումները, որոնցով էլ առաջնորդում է աշխատութեան յետագայ շարադրանքում:

Այնուհետեւ պրոֆ. Աղայեանը քննութեան է ենթարկում գրաբարի հնչոյթային ամբողջ համակարգը, բնութագրում հնչոյթներն ու հնչոյթային կապակցութիւնները, առանձին օրինաչափութիւններ պարգում դասական հայերենի հնչյունական համակարգում գործող հնչոյթների ուղորտների վերաբերեալ: Ըստ որում նկատենք, որ հեղինակը մանրակրկիտ հաշուառման ու քննութեան է առնում «Հայկագեան Բառարանում» ամփոփուած դասական հայերենի ողջ բառային կազմը՝ նրա հնչյունական բաղադրիչ տարրերով. իրական փաստերի խորաքափանց վերլուծութիւնից բխեցում են նոր օրինաչափութիւններ ու կանոններ, որոնց լոյսի տակ վերանայում ու վերագնահատում են հայ քերականագիտութեան մէջ արտայայտուած կամ ընդունուած մետրական այբուբենի իւրաքանչիւր տառի հնչյունական բնութագրումներն ու արժէքատրումները. մի շատ բարդ ու կնճոտ խնդիր, որի պարզաբանմանը հեղինակը հասնում է փաստական նիւթի լայն ընդգրկման շնորհիւ:

Ուշագրաւ է, որ հեղինակը փորձում է որոշել գրաբարեան հնչոյթների արտասանական ու ձայնային յատկանիշները. նա քննում է գրաբարի վանկակազմութեան, շեշտադրութեան եւ ելեւջատրման (ինտոնացիայի) հարցերը՝ այս կապակցութեամբ քննելով նաեւ մեր ժողովրդական բանահիւսութեան տաղաչափական առանձնայատկութիւնները:

Գրքում հանգամանօրէն խօսում է հնչյունափոխութեան բարդ ու նրբին երեւոյթների, յատկապէս շեշտի եւ հիմքակազմութեան հետ առնչուող հնչյունական փոփոխութիւնների մասին, որոնք նա քննում է «*Հերթագայական լծորդութիւններ*» եւ «*Ազատ լծորդութիւններ*» բաժիններում:

Կարող ենք վստահօրէն ասել, որ ընդհանուր լեզուաբանութեան տեսութեան ու պատմա-համեմատական քերականագիտութեան հարցերի քաջատեղեակութիւնը, հայ բարբառագիտութեան ու դասական հայերենի օրինաչափութիւնների ու փոխարարբերութիւնների խորիմացութիւնը հեղինակին հնարատրութիւն են տուել խոսափելու հնչյունաբանական բարդ երեւոյթների միակողմանի բացատրութիւններից ու մեկնաբանութիւններից եւ ամրապնդելու իր հետետրիւններն ու եզրակացութիւնները հաստատուն կուտաններով: Պէտք է ասել, որ տեսական ամենաբարդ պրոբլէմներն ու ամենախրթին հարցադրումները շարադրուում եւ մեկնաբանում են գիտական այնպիսի պարզութեամբ ու յստակութեամբ, տրամաբանական

համոզվելու և, մանաւանդ, այնպիսի ոճով, որ մեծագուծութիւնը միաժամանակ գեղարուեստական հմայքով է գրաւում ընթերցողին: Այս բոլորը, ինչ խօսք, վկայում են հեղինակի լայնահուն և յստակ մտածողութեան, ինչպէս և լեզուական բարձր կուլտուրայի մասին:

Իբրև հիմնական եզրակացութիւն, չենք կարող չնշել հետեւեալը. դեռ մինչև այսօր չունենք ժամանակակից հայերէնի գիտական-ակադեմիական քերականութիւնը. չենք տարակուսում, սակայն, որ այդ ուղղութեամբ ծաւալուող աշխատանքները կարող են յաջողութեամբ պսակուել միայն այն դէպքում, երբ կառուցուածքային վերլուծութեան կ'ենթարկուեն ժամանակակից հայերէնի բաղկացուցիչ բոլոր մասերը: Այդ առումով էլ պրոֆ. Է.Բ. Աղայեանի սոյն հետազոտութիւնը իր նորոյթով այնպիսին է, որ երկար ժամանակ կ'զբաղեցնի սովետահայ լեզուաբանական միտքը:

«Գրական քերք», 21-ը Օգոստոսի,
1964 թ., Թ. 34:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՅ». աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Երևան, հատ. Ա, 1964, հ. Բ, 1971:

Հայագիտութեան համար նշանակալի երեւոյթ է Կանոնագրի գիտական-ակադեմիական հրատարակութիւնը, որը յաջողութեամբ իրագործել է ՀՍՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտը՝ երկու ստուարածաւալ հատորների լոյսընծայումով, աշխատասիրութեամբ արքիւրագէտ ու բանասէր, պատմ. գիտ. Դոկտոր Վազգէն Յակոբեանի: Այս երկու հատորները կազմում են օրգանական մէկ ամբողջութիւն՝ նրանցում պարփակուած բնագրերի թեմայի ընդհանրութեամբ և Միջնադարի հայ հասարակական կեանքում դրանց խաղացած կարեւոր դերով:

Գրախօսուող աշխատութեան գլխատը արժանիքը այն է, որ առաջին անգամ սպառիչ է ամբողջական ընդգրկումով գիտական շրջանառութեան մէջ է դրուել Կանոնագիրը՝ իր չափազանց բարդ կառուցուածքով, թէպէտ բանասէրներին այս Յուշարձանի ամբողջական լոյսընծայումը, իբրև հրատապ անհրաժեշտութիւն, հետաքրքրել է դեռևս XVIII դարի 30-40-ական թուականներից սկսած:

Որպէսզի յստակ պատկերացում կազմենք քննախօսուող երկի մասին, անհրաժեշտ է, թէկուզեւ թուցիկ կերպով, թուարկել մինչ այդ եղած բոլոր հրատարակութիւնները՝ ընդգրկման ու բնոյթի ընդհանուր ուրուագծումով:

1738 թ. Հռոմում լատիներէն լեզուով լոյս տեսած իրաւաբանական մի յուշարձանում, որ իրաւագիտութեանը յայտնի է Անջելո Մայիի հրատարակութեամբ¹, ընդգրկուել են նաեւ հայկական Կանոնագրից առանձին կանոնախմբեր՝ Արս. Անճարակեանի թարգմանութեամբ: Դրանք են՝ Գրիգոր Լուսաւորչի, Ներսէսի եւ Ներշապուհի, Մահակ Պարթեւի, Շահապիվանի, Յովհան Մանդակունու, Արրա-

հան Մամիկոնեանի, Մահակ Չորոփորեցու, Յովհաննէս Օճնեցու, Միոնի, Դվինի, Կարինի, Վաչագանի կանոնախմբերը:

1867 թ. «Ծիլն Աւարայրի» հանդէսի առանձին համարներում Մ. Աղաբէկեանը տպագրեց ընդամէնը չորս կանոնախմբեր, ընդ որում որպէս սոսկ ձեռագրական արտատպութիւն:

1874 թ. Աբէլ Մխիթարեանցը Վաղարշապատում առանձին գրքով հրատարակեց բացառապէս հայկական եկեղեցական ժողովների ձեւակերպած եւ հեղինակաւոր գործիչների կազմած կանոնախմբերը հետեւեալ վերնագրով՝ «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց»: Հրատարակիչը միաժամանակ բնագրի նկատմամբ ջանտուքիւններ է կատարել՝ առանձին կանոնների բովանդակութիւնը համաոտագրելով կամ վերապատմելով: Հետեւաբար՝ այս հրատարակութիւնը եւս թերի էր եւ հեռու՝ գիտականութիւնից:

1878 թ. Աղ. Պալեանը Վիեննայում լոյս ընծայած «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս» աշխատութեան յանդիմանում ներկայացրել է Մահակ Պարթեւի կանոնախմբի սոսկ մի մասը, Յով. Օճնեցու կանոնախմբերը, ինչպէս և Շիրակաւանի (862 թ., 1243 թ., 1307 թ.), Աղանայի կանոնախմբերը, դարձեալ առանց քննական բնագրերի համադրման, միայն որպէս սոսկ ձեռագրական արտատպութիւն:

1900-1904 թթ. ընթացքում «Լուսն» հանդէսում պարբերաբար լոյս տեսաւ Արիստակէս Դարբեանի՝ առարկայական (թեմատիկ) սկզբունքով կազմած Կանոնագիրը՝ «Կանոնք ս. ժողովոց եւ հարց եկեղեցոյ» ընդհանուր խորագրով, որոնք յետագայում (1904 թ.) ամփոփուեցին առանձին գրքում՝ իբրև Ա. պրակ, որը, սակայն, չի ընդգրկում իրաւաբանական այդ Յուշարձանը ամբողջութեամբ: Այդ գրքում կիրառուած առարկայական սկզբունքի շնորհիւ կառուցուածքային փոփոխութիւններ են մտցուել Կանոնագրքում, խախտելով նրա բնագրային կառուցուածքը:

Նոյն սկզբունքի կիրառմամբ Յովհ. Շահապուրեանցը հրատարակութեան է պատրաստել Կանոնագիրը, որը, սակայն, մնացել է անտիպ եւ այժմ պահուում է Մաշտոցի անուան Մատենադարանի արխիւային բաժնի թղթ. համար 43-ում, որպէս վաւերագիր համար 5:

1903 թ. Շուշում Ն. Մելիք-Թանգեանը հրատարակում է «Հայոց եկեղեցական իրաւունքը» աշխատութիւնը, որում թէւ համեմատաբար շատ կանոնախմբեր են ընդգրկուած, բայց մի շարք կանոնախմբեր դուրս են մնացել: Բացի այդ, հրատարակիչը համաոտագրել ու վերադասաւորել է կանոնախմբերը, շատ դէպքում զանց առնելով առանձին կանոնախմբեր: Գրքի սկզբում ներկայացուած են յունարէն մի շարք կանոնախմբերի թարգմանութիւնները՝ բովանդակային վերապատմութեամբ ու համաոտումներով, որոնք, իրենց հերթին, զուգորդում են հէնց իր՝ բանասէրի դիտողութիւններով ու մեկնաբանումներով, յետոյ նոր յարադրում են կանոնախմբերի վաղնջական բնագրային թարգմանութիւնները:

Առանել ամբողջական հրատարակութեան տպատպութիւն է թղնում Արս. Գլոճեանի՝ 1914թ. Թիֆլիսում լոյս տեսած «Կանոնագիրը հայոց» երկասիրութիւնը, սակայն այն եւս անբաւարար է բնագրագիտական տեսակէտից: Ինչպէս ժամանակին նշել է վաստակաշատ հայագէտ Լ. Մելիքութեանը, այս հրատա-

¹ Scriptorium veterum nova collectio e Vaticanis codicibus edita, t. X, Romae, 1738.

րակութիւնը զգալի չափով զուրկ է գիտական նշանակութիւնից, քանի որ իրենից ներկայացնում է սոսկ կանոնական տարբեր կատեգորիաների, իրաւանորմների ժողովածու, որը թէև կազմում է 25 ձեռագրերի հիման վրայ, սակայն առանց տարբերութեան նշման, ընդամենի հրատարակչի կամայական խմբաւորմամբ¹: Այս գնահատականը բաժանում է նաև հայ իրաւաբանական մտքի պատմութեան հմուտ հետազոտող պրոֆ. Խ. Մամուլեանը²:

Իւրայատուկ բնոյթի է Ախրական Տիգրանեանի՝ 1918թ. ռուսերէն լեզուով հրատարակած ուսումնասիրութիւնը Հայոց Կանոնագրքի վերաբերեալ³: Գերազանցապէս բանասիրական բնոյթի այս հետազոտութեան մէջ տրուած են Կանոնագրքի տարբեր տիպերի առանձնաշարակութիւնները, Կանոնագրքի ինչպէս արտաքին նկարագրութիւնը, այնպէս եւ ներքին բովանդակութիւնը՝ երբեմն բնագրային մատուցմամբ: Կանոնագրքի բնագրերի հրատարակումը, ըստ երեւոյթին, վերապահուած է եղել յաջորդ հատորներին, որոնք, տարաբախտաբար, լոյս չեն տեսել:

Բնագրին զուգահէր իտալերէն թարգմանութեամբ ընդամենը 5 կանոնախմբեր է հրատարակել Հ. Դեդիդեանը 1941 թ. Վենետիկում լոյս ընծայած իր «Collectio Canonum Ecclesiae Armenae» աշխատութեան մէջ՝ իտալերէն եւ հայերէն առաջաբաններով:

Այսպիսով, հրատարակուած ու տպագրութեան պատրաստուած անտիպ աշխատասիրութիւններից եւ ոչ մէկը չի ներկայացրել Կանոնագրքը ամբողջութեամբ՝ կառուցուածքային հարազատութեամբ տարբերութեանն ուսումնասիրմամբ ու համադրմամբ իբրև *քննական բնագիր*: Առանձին կանոնախմբեր (Առաքելայների, Շահապիվանի ժողովի, Մեանտոսի, Գանգրայի ժողովի, Պարտաւի եւ Դուինի ժողովների) տարբեր հայագէտների կողմից հրատարակուել են գիտական պատշաճ բարեխղճութեամբ, սակայն դրանցից եւ ոչ մէկը Կանոնագրքի ամբողջականութեան մասին զաղափար տալ չի կարող:

Գրախօսուող աշխատութեան գիտա-քննական բնագրի պատրաստմանը ձեռնամուխ լինելով Վ. Յակոբեանը բնագրագիտական աշխատանքների իր ծրագիրը իրագործել է՝ ելնելով բոլորովին տարբեր նախադրեալներից ու սկզբունքներից, որոնք, ըստ էութեան, համահնչուն են դասական բանասիրութեան պահանջներին եւ բխում են քննականութեան գիտական հարցադրումներից: Հաշուի առնելով Կանոնագրքի նման երկի գիտա-քննական բնագրի յաղթահարման ամբողջ բարդութիւնն ու դժուարութիւնը, նա աղբիւրագիտական հետախուզումների նախապատրաստական մեծ աշխատանքներ է տարել, բանասիրական խճճուած ու կնճռոտ խնդիրների լուծման համար կատարելով ձեռագրագիտական ընդարձակ քննութիւն: Նա ուսումնասիրել է շուրջ 200 ձեռագիր եւ իր կազմած գիտա-քննական համադրական բնագրի հիմքում ընդգրկել է 48 ձեռագրական տարբերակներ, դրանց աւելացրած նաև տպագիր հրատարակութիւնները: Հարկ է ընդգծել, որ բացառապէս ձեռագրական աղբիւրների ընձեռած հարուստ նիւթերի խորաքննի ուսումնասիրմամբ հնարատր է դարձել բացայայտել Կանոնագրքի ստեղծման, զարգացման ու ամբողջացման նրբահիւս ու մթին ուղիները, աղբիւրագիտական

ճշգրտութեամբ վերականգնել Կանոնագրքի ստեղծման բնագրային պատմութիւնը: Խնդիրն այն է, որ Կանոնագիրքը, այն ծաւալով ու կանոնախմբերի ընդգրկման այն յաջորդականութեամբ, որ առկայ է ձեռագրերում, արդիւնք է ոչ համաժամանակեայ ձեռագրման եւ մէկ խմբագրի կամ կազմողի մտայղացման, այլ՝ *տարբեր դարերի եւ զանազան գրիչների կողմից անընդհատ աւելացման եւ բազմացման*: Հետեւել Կանոնագրքի ստեղծման, զարգացման ու ամբողջացման պատմութեանը, իւրաքանչիւր դէպքում բացայայտելով նոր կանոնախմբի կամ կանոնախմբերի աւելացումը՝ ամեն անգամ դրանց կոնկրետ ժամանակները որոշելով ձեռագրական վկայութիւնների եւ աղբիւրագիտական հաստատումների համակողմանի քննութեամբ, *բանասիրական մանրախոյզ հետազոտութիւն է պահանջում*, որը եւ ամենայն ձեռնհասութեամբ իրագործուած ենք տեսնում Վ. Յակոբեանի այս աշխատասիրութեան մէջ: Աւելացնենք նաև, որ հետազոտողի հետեւութիւններն ու ճշգրտումները կարող էին իրականացուել միայն այն դէպքում, եթէ նա հանգամանօրէն եւ սպառիչ մանրամասնութեամբ ուսումնասիրած լինէր ձեռագրական բոլոր արտագրութիւնները՝ իրենց կառուցուածքային բազմազանութեամբ եւ յիշատակաբանային ու յիշատակագրային վկայութիւններով: Հենց սա էլ Վ. Յակոբեանի ակնբախ առաւելութիւնն է՝ իր նախորդների համեմատութեամբ: Նրա բնագրագիտական եզրայանգումները խարսխուած են փաստերի ամրակուռ պատուանդանի վրայ:

Վ. Յակոբեանը կարողացել է լուծել Կանոնագրքի բոլոր ձեռագիր ընդօրինակութիւնների բաժանումը Ա եւ Բ խմբերի՝ թեմատիկ կանոնախմբերի տարբեր յաջորդականութեան եւ բնագրական ուրոյն միատրների առանձնաշարակութիւնների քննութեան հիման վրայ, միաժամանակ որոշելով նրանց փոխարարբերութիւնը ինչպէս կազմաւորման ժամանակի, այնպէս եւ հեղինակային պատկանելութեան տեսակէտից: Սա չափազանց խրթին, բայց եւ շատ կարեւոր աղբիւրագիտական պահանջ է. այդ ճշգրտումից է կախուած նաև ամբողջ Կանոնագիրքը գիտական հրատարակութեամբ ճիշդ ներկայացնելու խնդիրը՝ ինչպէս Կանոնագրքի առաջին կազմողի՝ Յովհաննէս Օձնեցու ամբողջական կառոյցը բացայայտելու, այնպէս էլ նրանից յետոյ Կանոնագրքի ստացած յաւելադիր բնագրերը պարզելու եւ դրանց ստոյգ յաջորդականութիւնը որոշելու տեսակէտից: Առանց այս կնճռոտ հարցերի գիտական լուծման հնարատր չէ դարերի ընթացքում ձեռագրական ընդօրինակումների ժամանակ ներթափանցած ինչպէս պատահական, այնպէս եւ կամայական միջամտութիւնների պատճառով ստեղծուած լարի-րինթոսի մէջ որոշակի կարգ եւ յստակութիւն մտցնել, բնագրական միատրների ճշգրիտ փոխարարբերութիւնը պարզել:

Ա հատորում ներկայացուած է VIII դարում ապրած կաթողիկոս Յովհաննէս Օձնեցու կազմած առաջին Կանոնագիրքը՝ 24 կանոնախմբերով: Ուշագրաւ է Օձնեցու կիրառած սկզբունքը այդ կանոնախմբերի յաջորդականութիւնը որոշելիս, որ բացայայտում է աշխատասիրողը: Առանձին դէպքերում ոչ այնքան ժամանակագրական յաջորդականութեան սկզբունքն է նրա համար առաջնորդող դրոյթ հանդիսացել, որքան դրանց «իրաւաբանական» նշանակութիւնը, ըստ որում նա կանոնախմբերը իր աշխատասիրութեան մէջ մուծելիս, իբրև երկրորդ սկզբունք, ունեցել է թարգմանական բնոյթի՝ առորական եւ յունական ծագում ունեցող կանոնախմբերի առաջադրումը սկզբից, յետոյ նոր՝ հայկական կանոնախմբերի մատուցումը: Այսպէս, այդ 24 կանոնախմբերից թարգմանական բնոյթի են 16ը (Առաքելական, Կղեմէսի եւ «Հարանց հետեւողաց» բնագրերը, Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի, Անկիւրիայի, Նեոկեսարայի, Անտիոքի, Գանգրայի,

¹ Տե՛ս "Об источниках древнеармянского права", էջ 143г. (Известия Кавказского Историко-Археологического Института)/.

² Տե՛ս նրա «Հին հայ իրաւմերի պատմութիւն», հւլ. 1, 1939, էջ 63-64:

³ "Древне-Армянская книга Каанов. Очерки описания и исследования памятника", т. 1, Описательная часть. Петроград, 1918г.

Լատոգիկէի, Սարոգիկէի եւ Կեսարիայի ժողովների որոշումները, Աթանաս Աղէքսանդրացու, Բարսեղ Կեսարացու եւ Մեսանտոսի սահմանած կանոնախմբերը, իսկ հայկական ծագում ունեցող կանոնախմբերը ութն են (Շահապիվանի, Դուինի երկու ժողովների որոշումները, Գրիգոր Լուսաւորչի, Մահակ Պարթեւի, Յովհան Մանդակունու, Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի եւ Մահակ Չորովորեցու կանոնախմբերը: Նա այս կանոնախմբերը օժտել է նաեւ ցանկերով, առաջաբան-ծանօթագրութիւններով եւ այլն:

Ը հատորում ընդգրկուած են Օձնեցու կազմած Կանոնագրքին աւելացուած բոլոր այն կանոնախմբերը, որոնք մուծուած են յիշեալ Կանոնագրքի X եւ XI դարերում ստեղծուած խմբագրութիւններում, կանոնախմբերի թիւը հասցնելով 57-ի: Եւ եթէ ձեռագրերում այս 57 կանոնախմբերը գտնուում են միատեղ՝ իբրեւ իրաւանորմերի մէկ միասնական ժողովածու, ապա դա արդարացում էր նրա գործնական կիրառութեան պատճառով: Բանն այն է, որ անկախ այդ կանոնախմբերի աղբիւրագիտական պատկանելութիւնից եւ արժէքից, *դրանք կիրառութեան նոյն ոյժն ունէին՝ իբրեւ գործող պաշտօնական իրաւանորմերի համակարգ*, հաւասար կարելութիւն ունենալով եկեղեցու համար, որին եւ վերապահուած էր իրաւագիտութիւնն ու նրա հիմնադրութիւնների մշակումը:

Այժմ՝ ըստ էութեան:

Ա հատորը բաղկացած է ծաւալուն նախաբանից (էջ VII-LXXIX), Օձնեցու կազմած լիակատար Կանոնագրքի քննական բնագրից (3-357), ծանօթագրութիւնների բաժնից (541-647), յաւելումներից (650-668) եւ բնագրական, առարկայական ու անուանական ցանկերից:

Նախաբանում աշխատասիրողը անդրադառնում է ձեռագրական այս Յուշարձանի գիտական ու ճանաչողական արժանիքներին, իրաւաբանութեան, պատմութեան, փիլիսոփայութեան, լեզուաբանութեան, ազգագրութեան համար ունեցած նրա նշանակութիւններին, եկեղեցու իրաւական դերին ու սոցիալական նկրտումներին, իրաւայարաբերութիւնների բնագաւառում աւատական հասարակութեան մէջ ձեւաւորուած դասակարգերին ու դասային տարբեր խտրութիւն վերապահուած իրաւունքներին ու պարտաւորութիւններին եւ այլն: Այնուհետեւ նա կանգ է առնում ձեռագրական երկու հիմնական խմբերի եւ նրանց ենթախմբերի առաջացման պատմութեան վրայ, համառօտակի ուրուագծում նրանց առանձնայատկութիւնները եւ մասնաւորում իր խօսքը Օձնեցու կազմած Կանոնագրքի ընդգրկած կանոնախմբերի վերաբերեալ՝ դրանցից իւրաքանչիւրի ընդհանուր բնութագրմամբ, պարզաբանում իր սկզբունքները քննական բնագիր կազմելու առնչութեամբ եւ առանձին ենթաբաժնով ներկայացնում օգտագործած ձեռագրերի նկարագրութիւնը:

Քննական *բնագիրը* աշխատատար ամենաձանր բաժինն է, որին թէկուզեւ բոլորիկ հայեացք գցելը բաւական է պատկերացում կազմելու համար գործադրուած այն ճիգերի մասին, որոնք պահանջուել են: Տարբերութեանների կատարուած համադրումը *համեմատութեան մէջ վերցուած բոլոր ձեռագրերի ու տպագիր իրապարսկումների քննական հետազօտման յայտարար պատկերն է*: Վ. Յակոբեանը ոչ միայն հաշուի է նստում ձեռագրերի ընձեռած տարբերութեանների հետ՝ նրանց ստոյգ ընթերցումը քննական բնագրում ներկայացնելու նախանձախնդրութեամբ, այլեւ (մասնաւորապէս թարգմանական կանոնախմբերի դէպքում) դիմում

հինք ծառայած սկզբնաղբիւր յունարէն համապատասխան տեքստերի օգնութեանը՝ հնարատր ճշգրտութեան հասնելու նպատակով:

Վերականգնողական աշխատանքներում գործի բարդութիւնը կայանում է նաեւ նրանում, որ բացի բառաձեւային խայտարղէտ տարբերութեաններից, որ ներկայացնում է իւրաքանչիւր համեմատուող ձեռագիր, *առանձին կանոնների մէջ կայ բնագրային խմբագրումների հսկայական բազմազանութիւն* ինչպէս ծաւալուն, ամբողջական տեքստերի, այնպէս եւ համառօտագրումների կամ վերաշարադրումների ձեւով, որ պայմանաւորուած է յետագայ ընդմիջարկումների առկայութեամբ, յօդուածների տարբեր հերթականութեամբ կամ պոկուած թերթերի պատճառով բացակայող յօդուածներով, որոնց արտացոլումը պարտադիր է գիտա-քննական բնագրեր կազմելիս: Տարբերութեաններում այս ամենի ցուցադրումը անհնար է տեխնիկապէս, եւ աննպատակայարմար՝ բնագրագիտական տեսակէտից: Այդ պատճառով էլ բնագրական խայտարղէտ ընթերցումների ձեռագրագիտական-բանասիրական քննութիւնը՝ իր դիտողութիւններով ու մեկնաբանումներով Վ. Յակոբեանը կենտրոնացրել է ծանօթագրութիւնների բաժնում, ըստ որում ծանօթագրութիւններից իւրաքանչիւրը բանասիրական մի առանձին յօդուածի համարժէք ուսումնասիրութիւն է: Հեղինակը իբրեւ սկզբունք ընդունել է ձեռագրագիտական ու բանասիրական դիտողութիւնների ու մեկնաբանումների համախմբումը՝ իւրաքանչիւր կանոնախմբի համար առանձին-առանձին: Նա այս բաժնում քննում է նաեւ առանձին կանոնախմբերի հեղինակային պատկանելութեան վաւերականութեան հարցը, ցոյց տալով, միաժամանակ, դրանց աղբիւրագիտական արժէքը: Կան մի շարք կանոնախմբեր, որոնք վերագրուել են եկեղեցու այս կամ այն նշանաւոր գործչին՝ դրանց հեղինակութեանը ոյժ հաւաստելու միտումով, սակայն, իրականում, նրանց գրչին չեն պատկանում, այլ յօրինուած են, հետեւաբարեւ՝ կեղծ: Ու թէպէտ աղբիւրագիտական առնչութիւնների պարզաբանումը բնաւ նշանակութիւն չի ունեցել միջնադարի համար՝ այդ կանոնախմբերի իրաւաբանական արժէքի եւ կիրառման տեսակէտից, ու դրանց աղբիւրագիտական առնչութիւնների բացայայտումը ոչ որի էլ չի հետաքրքրել, սակայն մեր ժամանակների համար, երբ այդ բնագրերը դարձել են *պատմական փաստ*, նրանց աղբիւրագիտական առնչութիւնների ճշգրտումը արդէն *գիտական անհրաժեշտութիւն* է իր կարելութեամբ:

Այդպիսի կեղծ կամ անվաւեր բնագրեր են՝ Առաքելական, «Հարանց հետեւողաց», Աթանաս Աղէքսանդրացուն, Մեսանտոսին վերագրուած կանոնախմբերը, ինչպէս եւ, հաւանաբար, Կեսարիայի կանոնախմբերը: Բանասէրը այդ բնագրերի անվաւերութիւնը ապացուցում է ինչպէս նշուած հեղինակների մատենագրական վաստակի հաշուառման օգնութեամբ, այնպէս էլ այլ յարակից աղբիւրագիտական տուեալների մեկնաբանման միջոցով:

Բայց մեզ թում է, որ առաւել նպատակայարմար կը լինէր բնագրագիտական առնչութիւնների այս կարելու խնդիրը քննել ոչ թէ ծանօթագրութիւնների բաժնում, այլ հէնց նախաբանում:

Ի դէպ, նշենք նաեւ, որ Կանոնագրքի կազմման պատմութեան ամբողջականութիւնը տալու մտաւեղութեամբ Վ. Յակոբեանը ծանօթագրութիւնների բաժնում ընդգրկել է նաեւ այն բոլոր ձեռագրական կիսատ ընդօրինակումները, որոնք քննական համեմատութեան ոլորտում վերցուած չեն եղել իր կողմից, իսկ յաւելուածում նա գետեղել է Կանոնագրքի հնագոյն բեկորները, որոնք հասել են մեզ երկու ձեռագրերի պահպանակներում եւ չորս պատառիկներում:

Բ հատորը համարեա նոյն կառուցուածքն ունի, ինչ Ա հատորը: Այն բաղկացած է ներածութիւնից (էջ VI-CXXII), Օձնեցու կազմած Կանոնագրքին յետագայում աւելացած 35 կանոնախմբերի բնական բնագրից (3-304), ծանօթագրութիւնների բաժնից (307-394), յաւելումից (397-409), բնագրային սկզբնատողերի, առարկայական եւ անուանական ցանկերից (416-473): Բացի Ներածութիւնից, մնացած բոլոր բաժիններում կիրառուած են միեւնոյն սկզբունքները, ինչ Ա հատորում, որոնց մասին խօսուեց վերը, ուստի եւ Բ հատորին անդրադառնալիս կանգ կ'առնենք ներածութեան մէջ արծարծուած ձեռագրագիտական, աղբիւրագիտական եւ բանասիրական խնդիրների բնութեան վրայ:

Սկզբից եւեթ հարկ է նշել, որ ներածութեան մէջ շօշափուած առանձին հարցեր, աղբիւրակցութեան տեսակետից, պէտք է տեղ գտնէին ոչ թէ Բ հատորում, որտեղ նրանց առկայութիւնը չի պատճառարանում, այլ՝ Ա հատորում: Այսպէս, հէնց առաջին բնագրագիտական հարցադրումը՝ «Կանոնագրքի ձեռագրերի երկու խմբերը, նրանց առնչութիւնները միմեանց հետ եւ Յովհաննէս Օձնեցու ժողովածուի հետ» ենթավերնագրով, որը երակէտային նշանակութիւն ունի աղբիւրագիտական ու բանասիրական բոլոր միւս խնդիրների ճիշդ լուսարանման համար, պէտք է քննուէր Ա հատորի նախաբանում, որտեղ այս հարցադրման մասին նոյնիսկ ընդհանուր ակնարկ կայ:

Ի դէպ, բանասէրի՝ ձեռագրական խմբերի մանրախոյզ քննութիւնից բխեցրած եզրակացութիւնն այն մասին, որ ինչպէս Ա, այնպէս եւ Բ ձեռագրախմբերը, որոնք ունեցել են պատմական զարգացման տարբեր ճակատագրեր, սկզբնապէս ծագել են մինչեւ Ա-Խ (1-40) կանոնախմբերը՝ «միեւնոյն հնագոյն ձեռագրի առանձին տարբերակներից» եւ յետագայում՝ աստիճանաբար ուռճացուելով ընդօրինակումների ժամանակ. «միայն շարունակութեան մէջ են շեղուել» (էջ XI),- աղբիւրագիտական փաստարկներով պատճառարանուած միանգամայն ճիշդ հետեւութիւն է, ուստի եւ՝ համոզիչ: Նրա միւս եզրայանգումն այն մասին, որ Ա խմբի ձեռագրերի ընդգրկած կանոնախմբերի դասաւորութիւնը արուած է գերազանցապէս նրանց արժէքի ու նշանակութեան գնահատումով, իսկ Բ խմբի ձեռագրերի կանոնախմբերի՝ ժամանակագրական յաջորդականութեան սկզբունքի կիրառմամբ, նոյնպէս հիմնաւորում է աղբիւրագիտական վկայութիւններով:

Բնագրագիտական փաստարկումներով ապացուցուած պէտք է համարել Վ. Յակոբեանի նաեւ այն հաւաստումը, որ Բ խմբի ձեռագրերը, իրենց հերթին, ծագել են X դարում Ա խմբի ձեռագրերից՝ դասաւորման ու ընդգրկման տարբերակուած առանձնայատկութիւններով, եւ որ Յովհաննէս Օձնեցու կազմած Կանոնագիրքը «համեմատաբար անաղարտ» վիճակով մեզ է հասել միայն Ա խմբի ձեռագրական ընդօրինակութիւններում» (էջ XV):

Ձեռագրական բոլոր խմբերի ու ենթախմբերի մանրախոյզ քննութիւնը բանասէրի կողմից հիմք է ծառայել նաեւ մի շարք հարցերի առաջաշմանը, որոնք մեծապէս նպաստում են ինչպէս Կանոնագրքի՝ հազարամեակների ընթացքում երեւան եկած նոր խմբագրութիւնների ծագման մօտաւոր ժամանակները որոշելուն, այնպէս եւ նրանցում պարփակուած կանոնախմբերի քանակն ու բնոյթը պարզելուն: Իր տրամադրութեան տակ ունենալով Կանոնագրքի ձեռագրական բոլոր ընդօրինակումները՝ իրենց սպառիչ տուեալներով, Վ. Յակոբեանը կարողացել է իր ծանրակշիռ եւ հեղինակաւոր խօսքն ասել առաջ քաշած հարցերի վերաբերեալ:

Այսպէս, քննելով Կանոնագրքի X դարի 90-ական թուականներին յօրինուած առաւել ամբողջական նոր խմբագրութիւնը, երբ Օձնեցու 24 կանոնախմբերը հասցում են արդէն 40-ի, բանասէր-պատմաբան Վ. Յակոբեանը գտնում է, որ այս ժամանակից էլ կազմաւորում եւ առանձնացում են նաեւ Բ խմբի ձեռագրերը:

Բնագրագիտական այս կարեւոր արդիւնքներին յանգելուց յետոյ, Վ. Յակոբեանը այնուհետեւ ուսումնասիրում է Ա եւ Բ խմբերի ձեռագրերի զարգացման ու համալրման պատմութիւնը: Կանգ առնելով ձեռագրերի Ա խմբի XI դարի խմբագրութեան հարցի վրայ, նա ապացուցում է, որ Ա խմբի ձեռագրերի իր օգտագործած հնագոյն A գրչագրի 17ը (41-57 կամ ԽԱ-ԾԷ) աւելացել են հէնց այդ գրչագրի յօրինման ժամանակ, այն է՝ 1098 թուականին: Իբրեւ դրա ապացոյց նա նշում է, որ հնագոյն այդ գրչագիրը, թէւ ընդգրկում է բոլոր 57 կանոնախմբերը, բայց բովանդակութեան ցանկում նշուած են միայն առաջին 40-ը, իսկ մնացած 17 կանոնախմբերը այդ ցանկից դուրս են մնացել: Բացի այդ, նա պարզել է, որ գրիչը նախ այդ ձեռագիրը ընդօրինակել է Սեւ լեռան նշանաւոր Ուսումնագիտական կենտրոններից Պառլախու վանքում՝ տէր Խաչիկի հիմք-օրինակից, յետոյ մեկնում է Արմեն լեռան Յովհաննա անապատը, որտեղ կարծիքի համար ցոյց է տալիս իր արտագրած Կանոնագիրքը Մելիտինէ վանահօրը եւ նրա փոխանորդ Գրիգորիսին, որոնք եւ «գիտացեալ գերութիւն գործոյս... հրամայեն լնու զպակասութիւն քերութեան գործոյս բարեացն»¹:

Ձեռագրագիտական ու բնագրագիտական նոյն սկզբունքներով եւ առարկայական քննութեամբ Վ. Յակոբեանը վերականգնում է նաեւ Բ խմբի ձեռագրերի հետզհետէ ընդգրկած կանոնախմբերի պատմութիւնը՝ ինչպէս դրանց համախմբման ժամանակագրութեան պարզաբանմամբ, այնպէս եւ խմբագրութիւնների առանձնայատկութիւնների ընդգծումով:

Յաջորդ հարցը, որ աղբիւրագիտական ծանրակշիռ նշանակութիւն ունի իւրաքանչիւր բնագրի գիտական հրատարակման համար, կանոնախմբերի հեղինակային վաւերականութեան խնդիրն է, որ Վ. Յակոբեանը քննում է «Կանոնագրքին աւելացուած մի շարք կանոնախմբերի վաւերականութեան եւ այլ հարցեր» վերնագրի տակ: Այստեղ ուշագրաւ են բանասէրի քննական վերլուծումները եւ արժէքաւոր դիտողութիւնները: Բնագրագիտական իր ճշդումների ապացուցման համար նա ելնում է ոչ միայն տուեալ բնագրի մասին մատենագրական փաստերից, այս կամ այն հեղինակի գրական ողջ վաստակից, հայ եւ օտար աղբիւրների վկայութիւններից, այլեւ, որ շատ կարեւոր է, բնագրի բովանդակութիւնից, նրանում արծարծուած խնդիրների պատմականութիւնը ճշդելու համար քննական համեմատութիւններ ու զուգահեռներ անցկացնելով տարբեր դարերում իրօք տեղի ունեցած պատմական իրադարձութիւնների, դասաւորական վէճերի, ազգագրական առանձնայատկութիւնների, իրաւա-բարոյական նորմերի ըմբռնումների ծագման հնարաւոր ժամանակաշրջանների հետ: Այս կամ այն բնագրի մասին անվտանգութեան կասկած ունենալու դէպքում, իր հետեւութիւններն առաւել քիւրեղացնելու նպատակով, նա փորձում է հիմնաւորել, թէ տուեալ կանոնախմբում ի՞նչ աղբիւրագիտութիւնների մէջ է գտնուում նաեւ վաւերական կանոնախմբերի հետ, ինչքանով է օգտուել դրանցից եւ ի՞նչ եղանակով միահիւսելով իր կանոնները՝ որդեգրել դրանք իբրեւ բոլորովին նոր տեքստ: Այսպիսի ամբողջական քննութիւնից ձեռք բերած հետեւութիւնների ու հաստատումների լոյսի տակ բանասէրը այնուհետեւ բանա-

¹ Գար. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 260-261:

վեճի մէջ է մտնում այն հայագետների հետ, որոնք խնդրոյ առարկայ բնագրերի վաւերականութեան կամ անվաւերակա-նութեան մասին կարծիք են յայտնել:

Վ. Յակոբեանը իր այս ծաւալուն ներածութեան մէջ արծարծում է երկու հիմնական խնդիր. ա) անվաւեր կամ կեղծ համարուած կանոնախմբերի փաստական կիրառումը արդեօք վկայում է մատենագրական աղբիւրներով, եւ բ) ինչպէ՞ս են որոշուած Կանոնագրքի փաստական օգտագործման ժամանակաշրջանի մօտաւոր սահմանները՝ ամբողջութեամբ վերցրած: Նա ընդհանրապէս խուսափում է հայագիտութեան մէջ Կանոնագրքի կապակցութեամբ արդէն լուծուած խնդիրների վերարծարծումից, զիտակցաբար չի անդրադառնում Մխիթար Գօշի եւ Սմբատ Մպարապետի՝ իրենց Դատաստանագրքերում Կանոնագիրքը լայնօրէն օգտագործած լինելու փաստերին, քանի որ Վ. Բաստամեանցը, Ս. Տիգրանեանը եւ ուրիշներ արդէն հանգամանօրէն ցոյց են տուել դրանք իրենց ուսումնասիրութիւններում: Նա միայն առաջարկում է այն փաստերը, որ ինքն է բացայայտել: Եւ եթէ ակնարկում է Գօշին, ապա միայն այն նկատառումով, որ ցոյց տայ, թէ վերջինս իր Դատաստանագրքում ինչպէս է օգտուել նաեւ անվաւեր ու կեղծ կանոնախմբերից, բայց վերագրելով դրանց օրինականութեան՝ իրաւանորմների նոյնաբժէք ոյժ եւ հաւաստիութիւն, ինչ վաւերականներին է յատուկ: Այս առումով էլ հայագիտութեան համար միանգամայն ընդունելի է Վ. Յակոբեանի այն հիմնական դրոյքը, ըստ որի «այդ բնագրերի (իմա՝ անվաւեր կանոնախմբերի - Լ.Խ.) վկայութիւնները, որպէս պաշտօնական վաւերագրերի հեղինակութիւն, օգտագործուել են եւ մատենագրական տարբեր բնոյթի երկերում, եւ հայ եկեղեցու իրաւաստութեան տակ գտնուող հարցերի վերջնական լուծման կարգադրութիւններում» (էջ CXI, ընդգծումը իմն է - Լ.Խ.):

Այսպէս, օրինակ, XIII դ. նշանաւոր գիտնական, փիլիսոփայ եւ քերական Յովհաննէս Երզնկացի Պլուզը իր «Նորաո հասարակաց...» արժէքաւոր երկում մէջբերումներ է արել Առաքելական, Գրիգոր Լուսաւորչի, Սահակ Պարթևի, Բաթսեղ Կեսարացու, Ներսէս Բ Բագրեւանդացու, Յովհ. Օձնեցու, Կեղծ Ներսէսի եւ այլոց վերագրուած կանոնախմբերից: Այնուհետեւ, XV դարում մեծանուն փիլիսոփայ եւ հասարակական գործիչ Գրիգոր Տաթեւացին «Գիրք Հարցման» աշխատութեան «Վասն է՞ր ազգն ֆոսնգաց գերկու օր պահոցն լուծանէ» հարցադրմանը բացատրութիւն տալու առթիւ յենում է Նիկիայի եւ Բարսեղ Կեսարացու, ինչպէս եւ Եփրեմ Ասորու կանոններից քաղուածաբար կատարած վկայակոչումների վրայ: Վ. Յակոբեանը նշում է նաեւ ձեռագրական այլ աղբիւրներում բանաբաղ արուած դրոյքներ այնպիսի կանոնախմբերից, որոնց հեղինակները համարում են Յովհ. Երուսաղէմացին, Նեկտարը, Գրիգոր Աստուածաբանը, Հիպոլիտը, Սերբիանոսը, Մանուէլը, Մելիտոնը եւ ուրիշներ, ինչպէս եւ վկայակոչումներ են արում այնպիսի կանոնախմբերից, որոնք յայտնի են իբրեւ Լատոյիկէի եւ Կարինի ժողովների սահմանած որոշումներ:

Աղբիւրներում իրաւադատումների հիմնաւորման ու փաստարկման առնչութեամբ վկայակոչումներ են արուած Կանոնագրքից՝ իբրեւ ամենահեղինակաւոր իրաւանորմների ժողովածուից, նաեւ XVIII, XIX դարերում եւ մինչեւ անգամ XX դարի սկզբներին:

Զնայած այն իրողութեանը, որ Յովհ. Օձնեցու կողմից VIII դարում կազմուած Կանոնագիրքը պաշտօնապէս չէր քննուած ու վաւերացուած որեւէ իրաւասու մարմնի կողմից, այն ունեցել է իրաւանորմների եւ իրաւադատումների յիսկատար եւ բացարձակ նշանակութիւն հայ իրականութեան համար: Այս հանգամանքը, ինչպէս

հիմնաւոր փաստարկումներով ցոյց է տալիս Վ. Յակոբեանը, իր ներգործութիւնը չի կորցրել նաեւ այն դէպքում, երբ յետագայ դարերում աւելացել են նոր կանոնախմբեր՝ վաւերական թէ անվաւեր, որոնք, իրենց հերքին, օժտուել են իրաւադրումներով միեւնոյն դեկավար սկզբունքային նշանակութեամբ: Եթէ նկատի ունենանք նաեւ պատմական այն դառը իրողութիւնը, որ հարիւրամեակների ընթացքում, հայկական պետականութեան բացակայութեան պայմաններում հայ եկեղեցին ստանձնել էր նաեւ պետական իշխանութեան որոշ գործառնոյթներ, ապա Կանոնագրքի կապակցութեամբ նշուած իրողութիւնը ամբողջ Միջնադարի եւ յետագայ ժամանակների համար հասկանալի է դառնում: Հետեւաբար՝ աղբիւրներում Կանոնագրքի վերաբերեալ արուած վկայակոչումները, իբրեւ ամենահեղինակաւոր իրաւանորմների ժողովածուի, միայն այս հանգամանքների նկատառմամբ են պատճառաբանուած:

Ինչ վերաբերում է Կանոնագրքի փաստական օգտագործմանը եւ նրա խաղացած պատմական դերին, ապա Վ. Յակոբեանը իրաւացիօրէն հաւաստում է, որ այն կիրառուել է ազգային-եկեղեցական եւ կենցաղային հարցերի առնչութեամբ, ինչպէս հայկական բնաշխարհում, այնպէս եւ գաղթօջայիներում՝ դարձեալ ոչ միայն ամբողջ Միջնադարում, այլեւ XVIII, XIX եւ նոյնիսկ XX դարի առաջին տասնամեակներին, ընդհամէն՝ հայ ժողովրդի հասարակական կեանքում այն ունեցել է խիստ կարեւոր նշանակութիւն:

Ինչո՞ւմ է կայանում Կանոնագրքի այս բացառիկ կենսունակութիւնը պատմական մի շարք դարաշրջանների համար: Անտարակոյս՝ նրանում, որ Կանոնագրքում պարփակուած իրաւանորմներն ու իրաւադատումները վերաբերում են, նախ՝ այնպիսի ընդհանրական թեմաների, որոնք իրենց նշանակութեամբ յոյժ կարեւորութիւն ունեն բոլոր ժամանակների համար. դիցուք՝ մարդու սերնդագործութեան հետ առնչուող բազմաթիւ ու բազմախորհուրդ խնդիրներն ու հանգամանքները, ընդհանրապէս երկու սեռերի փոխյարաբերութիւնները՝ հազարամեակների ընթացքում արձանագրուած դէպքերի ու փորձութիւնների ընդհանրացումով եւ հասարակական արժէքաւորումով, ծննդի, մկրտութեան, արքունքի, նշանադրութեան, պսակադրութեան, ամուսնական կեանքի ամենատարբեր ու զաղտնի կողմերի, կայուն ընտանիքի կազմաւորման, հաւատարմութեան, դաւաճանութեան, ամուսնալուծութեան, ինչպէս եւ չհասութեան, արեւակցական մերժութեան աստիճաններով պայմանաւորուած ամուսնական իրաւունքի սահմանափակման կամ կասեցման ու խա-փանումների մասին առաջադրուած կանոնների եւ իրաւանորմների ընդգրկումով եւ այլն, եւ այլն: Այնուհետեւ՝ Կանոնագրքում արծարծուած են նաեւ այնպիսի թեմաներ, որոնք վերաբերում են հայ աւատական հասարակութեան գոյատեւման ու ամրապնդման գործօններին, դիցուք՝ դաւանանքի սկզբունքներին, եկեղեցու իրաւունքներին, նրա ներկայացուցիչների՝ քահանաների, եպիսկոպոսների, կաթողիկոսների, վարդապետների իրաւաստիւններին ու պարտականութիւններին եւ այլն, եւ այլն: Մի խօսքով՝ *Կանոնագրքում հասարակական կեցութեանն առնչուող կանոնների ու կարգաւորումների մի ամբողջ սիստէմի առկայութիւնը մշակուած ձեւով՝ գրաւական է եղել իրաւաբանական այս Յուշարձանի այդքան երկարատեւ օգտագործման:* Մակայն, ցաւօք, Կանոնագրքի օգտագործման յարածիգութիւնը Վ. Յակոբեանի աշխատասիրութեան մէջ բացատրուում է գերազանցապէս հայ պետականութեան կորստեան պատճառով եկեղեցուն վիճակուած պատմական ճակատագրով, եւ ոչ թէ՛ *Կանոնագրքում արծարծուած թեմաների բնոյթով, որը առաջնային ու վճռական նշանակութիւն ունի տուեալ խնդրում:*

Ներածութեան վերջին ենթաբաժինը, որ վերնագրուած է «Այլեւայլ հարցեր» խորագրով, վերաբերում է Բ հատորում ընդգրկուած կանոնախմբերի բնական քննարկի պատրաստման հանգամանքների բացատրութեանը:

Մեր խօսքը եզրափակելուց առաջ հարկ ենք համարում անդրադառնալ միայն Բ հատորում տեղ գտած լեզուա-ճակատ մեղանշումներին, որոնցից, անշուշտ, կարելի էր խուսափել նման մեծարժէք աշխատասիրութեան խստապահանջ խմբագրման դէպքում:

Նախ՝ բոլորովին չի պատճառաբանում ժամանակակից հայերէնի բառային կազմին խորք եւ անյարիր բառերի օգտագործումը, որոնք զուտ գրաբարեան լինելով ոչ միայն հնարոյր են, այլեւ՝ մթին ու նոյնիսկ անհասկանալի մեր օրերի ընթերցողի համար:

Այսպէս, «անագան» գրաբարեան բառը օգտագործուել է ինչպէս առանձին, այնպէս եւ «մի փոքր» բառակապակցութեան յարակցմամբ՝ «ուշ» եւ «մի փոքր ուշ» իմաստներով: Օր. «Միթէ պարզ չէ, որ այդ բառն *անագան* ընդմիջարկութիւն է» (էջ LXXXVII). այնուհետեւ՝ «Երկրորդը, 1611 թուականից *մի փոքր անագան* Կ. Պոլսում ընդօրինակուած Կանոնագրքի յիշատակարանն է...»: (էջ XXXV), կամ՝ «*Մի փոքր անագան* նոյնպիսի կարծիք են հաւատում Ն. Մելիք-Թանգեանը եւ Մ. Օրմանեանը» (էջ XLIII):

Նոյնը պիտի ասել նաեւ «երիցս» բառածեփի համար, որ գրաբարեան հնարոյր ոճեր կազմելու փորձի վերաբարձումն է. «Երիցս արդարացի է Տաշեանը երբ գրում է» (էջ XLV. ի դէպ, ստորակէտ պէտք է դրուել «երբ» յարաբերականով կապակցուած երկրորդական նախադասութիւնից առաջ. իսկ նման կէտադրական վրիպումները, ցաւօք, յաճախուած են):

Նոյնիսկ գրաբար մատենագրութեամբ չի աւանդուած «խաչընդուս» անհասկանալի բառի գործածութիւնը, ուստի եւ Հայկազեան Բառարանը չի ներկայացնում այն իբրեւ առանձին բառայօդուած: Իսկ ժամանակակից հայերէնի բառական կազմի համար այն բոլորովին անհարազատ ու անյարիր բառածեփ է եւ դրա կիրառումը երբէք խրախուսելի չէ: Վ. Յակոբեանը գրում է. «Ասուածը ցոյց է տալիս, որ սոյն կանոնախմբերը Երուսաղէմի հայրապետ Մակար Ա-ի նամակն է ուղղուած կաթողիկոս Վրթանէսին (IV դար) եւ Ալիմեանի *խաչընդուս* ջանքերը այն վերագրելու Միւնեսց Վրթանէս եպիսկոպոսին (VI դար)՝ իզուր են» (էջ LVIII):

Կրատրական կառուցուածքի նախադասութիւնը պահանջում է միաժամանակ նրանում հանդէս եկած բայ-ստորոգելի նաեւ կրատրական ձեւաւորումը (այսինքն՝ *վ/ու* ձեւոյթի ներմուծումը ներգործական սեռի բայում), որ անտեսուած է հետեւեալ բարդ նախադասութեան երկրորդական բաղադրիչում. «Ելնելով սրանից կարելի է եզրակացնել, որ Երկրորդ Նիկիական կանոնախմբերը կազմել է V դարի վերջերին, կամ VI դարի սկզբներին» (էջ LVIII):

Իհարկէ, յաջող չէ ասել՝ «ոգու վերաշարադրում», փոխանակ «ընդհանուր իմաստի վերաշարադրում» ճիշդ ձեւակերպման. ընդհանրապէս գրութիւնը, թէկուզ փոխաբերական իմաստով, «ոգի» ունենալ չի կարող: Այսպէս. «Ներածութեան» մէջ կարդում ենք. «Այս յօդուածը, ըստ էութեան, Մահակ Պարթևի կանոնախմբի Ի՛ւ յօդուածի եւ Պողոս առաքեալի առ Եփեսացիս թղթի (Ե. 31) *ոգու վերաշարադրումն է*» (էջ LXXXI):

Ժամանակակից հայերէնում «այս» ցուցական դերանունը գերազանցապէս որոշիչի եւ ստորոգելիական վերադրի պաշտօններով է հանդէս գալիս, բայց ո՛չ երբէք՝ գոյականական գործածութեամբ պայմանաւորուած իբրեւ ուղիղ խնդիր, ինչպէս, օրինակ, հետեւեալ թերի նախադասութիւններում. «Այս բնենք մօտիկից» (էջ LCII), փոխանակ «այս խնդիրը» կամ «այս հարցը» եւ այլն...: «Այս գտնում ենք նաեւ No 2063 Ճառընտիրում...» (էջ CXIII, ծանօթագրութիւն 2):

«Առկայ» բառը իբրեւ որոշիչ գործածելու դէպքում անհարկի է դրան զուգադիր օգտագործել նաեւ «եղած» բառածեփը որպէս որոշիչ. դրանցից մէկն ու մէկը բաւական է, իսկ զուգադիր գործածութիւնը՝ աւելորդ, քանի որ «առկայ»ն արդէն եղած բան է նշանակում. օր. «... *առկայ եղած* փաստերը վերաբերում են...» (էջ XCVIII):

Միայն է ասել՝ «Վ. Բաստամեանցի *օգտագործուած* ձեւագրերում» (էջ CI), այլ պէտք է գրել՝ «Վ. Բաստամեանցի *օգտագործած* ձեւագրերում», քանի որ սեռական հոլովով կիրառուած անձնանունը փաստօրէն ներգործող խնդիր է, հետեւաբար յարակատարով դրսեւորուած բայական որոշիչը ներգործական սեռի ձեւաւորմամբ պէտք է կիրառուի եւ ո՛չ թէ կրատրական կառուցուածքի լինի, որի դէպքում արդէն իմաստը հիմնովին փոխում է. նշանակում է՝ այդ ձեւագրերը ոչ թէ Վ. Բաստամեանցն է օգտագործել, ինչպէս ուզում է հասկացնել հեղինակը, այլ նրա ձեւագրերը օգտագործուած են եղել ուրիշների կողմից...:

Կան նաեւ այլ վրիպումներ:

Նշուած մասնակի թերութիւնները, սակայն, ամենեւին ստուեր չեն գցում այս ծանրակշիռ աշխատասիրութեան վրայ, որի հրատարակութիւնը պահանջել է մեծ փութաջանութիւն, հմտութիւն ու ձեռնհասութիւն: Իրաւաբանական այս կարեւոր Յուշարձանի հրատարակութիւնը արժէքաւոր աղբիւր կը ծառայի մասնաւորապէս հայ իրաւագիտութեան պատմութեան ուսումնասիրութեան համար:

ՀՍՍՀ ԳԱ Հասարակագիտական
Բաժանմունքի «Պատմա-բանասի-
րական հանդէս», 1972, Թ.4:

«ԱԶԳ, ԵԿԵ-ԼԵՑԻ, ՀԱՅՐԵՆԻԹ»:
Հեղինակ՝ Արամ Ա. Կաթողիկոս Հայրապետի
Մեծի Տանն Կիլիկիոյ, 1999թ., Անթիլիաս,
«ազնի մեկենասութեամբ ... Տէր եւ Տիկին
Կարպիս եւ Մայտա Պէզնեանի»:

Քննախօսուող Սոյն հատորը, որ պարփակում է 293 էջեր, իւրօրինակ է իր բնոյթով ու միտումնաւորութեամբ. այն *համազգային գաղափարախօսութեամբ* տոգորուած Հոգեւոր Առաջնորդի սրտաբաց հրատարակային գրոյցն է աշխարհասփիռ եւ հայրենաբնակ իր ժողովրդի հետ՝ արդի ժամանակաշրջանում դիմագրուած նրա տարբեր մարտահրաւրների եւ բազմազան տագնապների բացայայտ ու խիզախ

արծարծումներով, ընդամենը՝ իր խոհական եւ խորհմաստ պատգամների ու մտորումների փոխանցումով մասնառքապէս: Նաեւ Միջ-եկեղեցական Համաշխարհային կազմակերպութեան Նախագահի Իր հանգամանքի շնորհիւ մատենախօսուող աշխատութիւնում լայնաշառաւիղ հարցադրումների ընդգրկումն, իր հերթին, վկայում է Մեծի Տանն Կիլիկիոյ Հոգեւոր Առաջնորդի լայնահուն եւ խորաքափանց մտածողութեան օժտուածութեան մասին, անկասկած, յատկապէս՝ քննական վերլուծութեան ու խորաքննիչ եզրայանգումների այժմեականութեան կարեւորմամբ:

Խորագիրը, հարկ է նշել, միայն ընդհանուր կերպով է արտացոլում եւ բնորոշում արծարծուած խնդիրների բնոյթը. սեւեռումները հարցադրումների՝ իրենց տեսական եւ գործնական առաջադրանքներով, շատ աւելի ընդգրկուն են եւ բազմաշերտ, հիմնադրոյթների ու սկզբունքների համազգային *նորովի* առաջադրմամբ՝ մեր ժողովրդի առաջ ծառայած հրամայականների առնչութեամբ, որ յընթացս մատենագիտական մեր քննութեան անդրադառնալու ենք բնականաբար, Հատորի լրիւ արժեւորումը բացայայտելու ու ներկայացնելու դիտումով:

Ըստ էութեան, բովանդակութիւնը, պիտի արձանագրել, ոչ թէ քննատիկ նիւթի մշակման ներհայեցողական շարադրանք է՝ կարփնետային յղացման արգասիք որպէս, այլ՝ յընթացս Իր Գահակալութեան վերջին չորս տարիների եռանդուն գործունէութեան Հովուապետական այցելութիւնների ժամանակ Հեղինակի ունեցած ելոյթներն են Մփիւռքի ամբողջ տարածքում գոյառած Իր հօտի՝ հայ համայնքների առաջ, մասամբ եւ հայրենիքում ու Արցախում պաշտօնական հանդիպումների առիթներով:

Հաստատենք ամենայն անվերապահութեամբ՝ Հատորն ամբողջութեամբ իրատեսակ *Հաշուետուութիւն* է միաժամանակ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմական առաքելութեան, որ է՝ Հայակերտումն ու Հայապահպանումը Մփիւռքեան բազմակնճիւր իրադրութիւններում. Հաշուետուութիւն, որ քիչ Հոգեւոր Առաջնորդներ, պիտի խոստովանել, յանդգնել են խիզախել ներկայացնել մեր պատմութեան հոլովոյթում...:

Բայց նկատենք՝ այն չոր ու ցամաք Հաշուետուութիւն չէ ամենեւին, այլ՝ գուժորդուած խորաքննիչ վերլուծումներով ու առաջադրանքներով՝ գրական մշակմամբ, վասն Ազգային Վերապրումի եւ Յանրժայտման, նա՛մանաւանդ Հոգեւոր Առաջնորդի Տեսլականի ուրուագծմամբ՝ մեկնելով Ազգովին դիմագրաւած մարտահրաւերների թելադրականութեամբ: Հետեւաբար եւ՝ այն *Ունկնդրելի* է եւ միանգամայն *Ուսանելի*, առաջին հերթին, ազգային մտահոգութիւններով տոչորուող Մտաւորականութեան եւ առհասարակ հոգեւոր ու աշխարհիկ պատասխանատու մարմինների համար մասնառքապէս:

Արձանագրենք միաժամանակ՝ Հատորի առաջին էջից մինչեւ վերջին էջը, կարմիր թելի նման, անցնում է առանձնապէս պաշտպանած Իր հիմնական գաղափարի շեշտադրումը եւ տարփողումը, այն է՝ «ՄԵՆ ՀԱՅԿ ԿԱՅՈՒՄԻՆ, ՄԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԵՆ ԵԿԵՂԵՑԻ» կարգախօսի: Բայց եւ այնպէս, ելնելով Իր ներկայացրած ելոյթների բնոյթից, Հեղինակը միանգամայն իրաւացի հիմնաւորմամբ վեց բաժիններում է դրանք խմբաւորել գրքում: Այսպէս.

ա. «Ժամանակը գործով արժեւորել», բ. «Մահ իմացեալ անմահութիւն է», գ. «Ի խնդիր ոգեղէն հացին», դ. «Անթիլիասը՝ յանձնառու առաքելութիւն է», ե. «Ժողովրդի հետ» եւ գ. «Մէկ հայութիւն, մէկ հայրենիք, մէկ եկեղեցի»: Ընդ որում՝ սրանցից իւրաքանչիւր բաժին, իր հերթին, մատուցուել է Հեղինակի կողմից նաեւ

ներառարծարծումներով. դիցուք՝ առաջին բաժնի առնչութեամբ՝ «Զբարիս խորհել, խօսել եւ գործել...», «Ի բաց արասցուք զգործն խաւարի», «Դէպի գործ ու գործակցութիւն» եւ «Ո՞ր է մեր զանձը որպէս Ժողովուրդ»: Կամ՝ երկրորդ բաժնի կապակցութեամբ. «Հաւատարիմ նահատակներու ծայնին», «Ուխտ Ապրիլեան», «Ողջո՞յն Տէր-Զօրէն», «Վարդանանց պատերազմը 451ին եւ՝ Այսօր», «Քալել միասնաբար Մեծ Երազի ճամբով», «Մայիս 28-ը հրաւեր հայակերտումի եւ հայրենակերտումի», «Վասն ազատութեան Ազգիս Հայոց...», «Արդարութիւն կը պահանջեն»: Եւ կամ՝ երրորդ բաժնի ընդգրկումներն են. «Հայ գիրքին տէր կանգնեցէք», «Հայ գիրքը պէտք ունի մեկնեալի», «Չորս ողջո՞յն», «Դարեւանքը աղբիւր ազգաշէն ծառայութեան», «Ի խնդիր հաւաքական սարկաւազութեան». Չորրորդ բաժնի քննաներն են. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը նոր հրամայականների դիմաց», «Դէպի գործ՝ վերանորոգ տեսիլքով», «Անթիլիասը՝ հաւաքական ծառայութիւն», «Հնագանդութիւն, ծառայութիւն եւ միասնականութիւն», «Անթիլիասի ու Վատիկանի միջեւ գործակցութեան նոր ուղիներ», «Սիրոյ ու գործակցութեան հրամայականը», «Միասին գործել», «Ուխտագիր եպիսկոպոսութեան՝ ուխտագիր ծառայութեան»: Հինգերորդ բաժնի բովանդակութիւնն են կազմում «Աւետարանական Թուղթ»երի գրասենով ներկայացուածները, որոնք անմիջական աղերսակցութիւն ունեն ժողովրդի հետ երկխօսութեան, որ յաջորդաբար եւ յարատեւ զարգացնում է Մեծի Տանն Կիլիկիոյ Հոգեւոր Առաջնորդը իր Հովուապետական շփումների ժամանակ. «Թուղթ առ Հայութիւն Կիպրոսի», «Թուղթ առ Հայութիւն Իրանի», «Թուղթ առ Հայութիւն Յունաստանի», «Թուղթ առ Հայութիւն Սիրիոյ», «Թուղթ առ Հայութիւն Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի» եւ «Թուղթ առ Հայութիւն Հարաւային Ամերիկայի Արեւելեան թեմի»: Վեցերորդ բաժնի առաջադրած քննաներն են. «Տէր, ցոյց ինձ ճանապարհ...», «Ժաշի ճամբայ՝ սիրոյ ու զոհողութեան ճամբայ», «Վերանորոգ յանձնառութեամբ դէպի 21-րդ դար», «Մրբայոյս Միտոն՝ աղբիւր հայութեան ու միութեան», «1700-ամեակը հրաւեր հաւատքի առաքելութեան», «Ուխտի վերանորոգում», «Կենանքը ապրիլ հաւատարմութեամբ», «Դէպի մէկ ամբողջութիւն», «Հայաստան եւ Մփիւռք՝ անբաժան ու անբաժանելի ամբողջութիւն», «Հաւատք, յոյս եւ սէր՝ ճշմարիտ ճամբան հայութեան», «Պիտի գօրացնենք Մփիւռքը, որպէսզի աւելի գօրացնենք Հայաստանը», «Ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ», «Դէպի ազգային մէկ քաղաքականութիւն», «Հայաստան-Մփիւռք գործակցութեան համազգային ուխտ», «Հայ մարդը նոր դարաշրջանին դիմաց»:

Թէկուզեւ վերնագրային այս համառօտակի յիշեցումից միանգամայն ակնբայս է այն իրողութիւնը, որ ուշադիր ընթերցմամբ էլ ակներեւ է դառնում՝ Հեղինակը հայ ժողովրդի վերապրած Ներկայի բազմաբարդ տարբեր իրադրութիւնները Մփիւռքում եւ Հայրենիքում քննելիս, իր վերլուծութիւնները աղերսակցում է նրա արմատների եւ պատմական անցեալի ուսանելի դասերի ու հետեւութիւնների հետ սերտ շաղկապութեամբ, իսկ Ապագան կանխատեսելիս ու կերտելիս՝ եզրայանգումները պատասխանատուութեան մեծ զգացումով խարսխել պահանջում է Ներկայի հաւաստի կողմնորոշումների եւ քայլերի վրայ:

Ճշդում է մտցնում Իր գահակալած Ս. Աբոռի առաքելութիւններում Հոգեւոր Առաջնորդը Մեծի Տանն Կիլիկիոյ, երբ իրապաշտ հաստատումներով նաեւ ճշմարտում է.

«Արդարեւ, Հայկական Յեղասպանութեան ճանաչումը ու մեր ժողովուրդի իրաւունքներու հետապնդումը մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ամենէն կենսական տարածքներէն մէկը պիտի շարունակէ մնալ:

«Չմոռնանք, որ այս Կաթողիկոսութիւնը արիւնարբոյ թշնամիին կողմէ արեւունցաւ ու ապա արմատախիւղ դարձաւ իր դարատար Աթոռավայրէն՝ Միսին:

«Չմոռնանք, որ այս Ս. Աթոռին իրաւական, հողային ու նիւթական ինքըներն ու իրաւունքները խլուեցան նոյն թշնամիին կողմէ:

«Չմոռնանք, որ այս Ս. Աթոռին ժողովուրդն էր ջարդուեցաւ ու մնացեալը արքայութեան իր պապենական հողերէն ու ցրուեցաւ աշխարհի չորս կողմերը»(անդ, էջ 51):

Բայց, ցաւօք, այդ «մոռացումները», չզիտես ինչո՞ւ, մինչեւ այսօր անհասկանալիօրէն ... յամենում են: Ժամանակն է, որ իրերը եւ պատմական իրողութիւնները իրենց անուններով ու իրողութիւններով ՎԵՐԱՃՇԴԵՆՔ, այո՛: Ուրացումները եւ անտեսումները ո՛չ որի էլ ներելի չէ այնքա՛ն: Ուշքի՛ գալ է պէտք:

Հեղինակը, իբրեւ Արեւմտահայութեան արժանատի Հոգեւոր Առաջնորդ, չի վարանում ամենեւին քննելու եւ ճշդելու ինչպէս Սր. Էջմիածին մայր Աթոռի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, այնպէս եւ Հայրենիք եւ Սփիւռք փոխարարութիւնները արդի փուլում: Տեսական ունեցող Հոգեւոր Առաջնորդի օժտուածութեամբ Նա իրաւամբ հաստատում է նաեւ.

«... Անհրաժեշտ է ժամանակի նշանները ճիշդ կարդալ, մեր կեանքի կարիքները, մտահոգութիւններն ու առաջնահերթութիւնները ճիշդ տեսնել ու մտածելակերպի ու գործելակերպի նոր ընթացք ճշդել» (անդ, էջ 101, շեղագրումը իմն է - Լ.Խ.):

Տարիներ շարունակ յամեցող քիւրիւսագութիւնները փարատելու համար իր ելոյթներում բազմիցս յայտարարում է Մեծի Տանն Կիլիկիոյ Սր. Աթոռի գահակալը Սր. Էջմիածնի հետ փոխարարութիւնները ճշդելիս.

«Ս. Էջմիածնի Մայր Աթոռին հետ ամբողջական ու անվերապահ գործակցութիւնը (շեղագրումը Ի՛րն է - Լ.Խ.) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար կը նկատենք կեանքի ու գործի անշեղ ու յստակ ընթացք եւ հրամայական առաջնահերթութիւն: Հայ եկեղեցին մէկ է իր ծնունդով, հիմունքով, կեանքով, հաւատքով, նուիրապետութեամբ եւ առաքելութեամբ: Խորապէս կը հաւատանք որ նոյն եւ մէկ եկեղեցոյ Կաթողիկոսական երկու Աթոռներուն միջեւ ամբողջական ու սերտ գործակցութեամբ մեր եկեղեցին աւելի կը պայծառանայ ու կը զօրանայ, մեր ժողովուրդի միասնականութիւնը աւելի՛ կ'ամրապնդուի եւ մեր հայրենիքը աւելի՛ կը զօրանայ» (անդ, էջ 108):

Արամ Ա. կաթողիկոս Հայրապետը նաեւ զգուշացնում է՝ «հեռու մնալ» արելոյդ եւ անտեղի հակադրութիւններէ ու զրգոտութիւններէ, որոնք «անառողջ մթնոլորտ» են ստեղծում՝ պահանջելով արդարօրէն, որ «Մեր եկեղեցոյ պէտք է նայիլ որպէս մէկ ամբողջութիւն՝ իր Ս. Էջմիածնով ու Անթիլիասով որպէս մէկ սիրտին երկու անբաժան մասերը»: Աներկբայաբար յորդորելով միաժամանակ.

«Պէտք է հեռու մնալ ամէն տեսակ երկուութիւն, բաժանում, մրցակցութիւն կամ հակասութիւն տեսնելու կամ յառաջացնելու փորձիչ մօտեցումներէ» (անդ, էջ 109):

Առաւել յստակ բանաձեւելով փոխարարութիւնները, միանգամայն իրապաշտ հարցադրմամբ յայտարարում նաեւ.

«Արդ, ճիշդ չէ խօսիլ «եկեղեցական տագնապի» մասին: Եկեղեցական տագնապ գոյութիւն չունի: Նոյն եւ մէկ հայ եկեղեցոյ մէջ վարչական հարցեր կան, որոնք կը կարօտին հանգրուանային ու ամբողջական լուծման: Դիշդ չէ, պատմութեան որոշ շրջաններու եւ որոշ դէպքերու վերլուծումներով եւ երբեմն այ նոր յղացքներով, մօտեցումներով ու յայտարարութիւններով այնպիսի մթնոլորտ մը ստեղծել, որ ո՛չ մէկ շահ կ'ապահովէ մեր եկեղեցոյ (շեղագրումը իմն է - Լ.Խ.): Թող Մայր Աթոռը քաջ գիտնայ, որ Ս. Էջմիածինը մեր սրբութիւն սրբոցն է. մենք երկու Էջմիածին չունինք, այլ՝ մէկ, որ է՛ ու կը մնայ նախամեծար Մայր Աթոռ Ամենայն Հայոց» (անդ, շեղագրումը դարձեալ իմն է - Լ.Խ.):

Նաեւ հանդիսատրապէս հաւաստում.

«Թող դադրին այլեւս «Էջմիածնական» ու «անթիլիասական» բաժանարար որակումները: Մեր եկեղեցոյ պէտք է նայիլ որպէս մէկ ամբողջութիւն՝ իր Ս. Էջմիածնով ու Անթիլիասով որպէս մէկ սիրտին երկու անբաժան մասերը» (անդ):

Իր խորին համոզմամբ՝ Լուսաւորչադաւան Հայոց եկեղեցու «երկու թերեւ» էլ հաւասարապէս պէտք է ամրապնդուեն եւ հզօրացուեն իրենց կառոյցներով, քանզի երկուսն էլ ծառայում են ամբողջական հայութեանը, վերջին հաշուով, եւ մայր Հայրենիքին: Սփիւռքեան ազգային կառոյցների ամրակառուցութիւնը բազմիցս ապացուցեց եւ շարունակում է ապացուցել անվերապահ զօրավիգութիւնը եւ համակողմանի սատարումը բնաշխարհի մեր ժողովրդի եւ պետականութեան վերապրած յատկապէս ներկայ դժուարին ժամանակներում: Միանգամայն յստակացմամբ նաեւ իրաւացիօրէն յայտարարում է Հոգեւոր Առաջնորդը իր զրբում.

«Մեր նախորդներուն նման Մենք ալ կ'ըսենք.- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պէտք է աւելի՛ զօրանայ, որովհետեւ՝ որքան զօրանայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, այնքան աւելի կը զօրանայ Ս. Էջմիածինը, եւ՝ փոխադարձաբար» (անդ, շեղագրումը իմն է - Լ.Խ.):

Փոխպայմանաւորութեան այս շաղկապուածութիւնը իրօք լայնախոհութեան եւ «մեծ պատկերի մէջ» (In big picture) երեւոյթները դիտարկելու ու զնահատելու կարողականութեան անհերքելի վկայութիւնն է Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալի, որով փորձում է փարատել տասնեակ տարիներով նստուածք ունեցող նախապաշարումները հայ իրականութեան մէջ:

Նա քաջ գիտակցում է, որ Ինքը սոսկ Հոգեւոր Առաջնորդ չէ, այլ առաջին հերթին Ազգային որոշակի առաքելութեան կոչուած հայ Լուսաւորչական հոգեւոր նուիրապետութեան Սփիւռքեան տարածքի ազգային հրատապ խնդիրների իրականացման պատասխանատուն եւ ուղղութիւն տուողը, ազգային կառոյցների նախանձախնդիր պահպանողն ու ամրացնողը ի խնդիր հայակերտումի եւ հայապահպանումի: Այս Յանձնառութիւնը, իրականում, պիտի խոստովանել բարձրաձայն, շատ աւելի եւ անհամեմատօրէն բարդ ու դժուարին է, քան, թէկուզ, հայրենիքի Հոգեւոր կենտրոնինը՝ Սուրբ Էջմիածնինը, որը նաեւ, ի տարբերութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, համարեա ազգային միատարրութեամբ ապրող հայութեան միջավայրում ծառայելով՝ բնաշխարհի Հայոց անկախ պետականութեան զօրակցութիւնն է վայելում, հետեւաբար եւ՝ շատ աւելի նուազ վտանգուած է հայակերտումն ու հայապահպանումը, ինքնըստինքեան, քան բազմազան ու բազմապիսի

օտար պետությունների սահմաններում ապաստան գտած աշխարհասփիռ հայութեան պարագան է՝ բազմաշակոյթ եւ բազմակեզու միջավայրով շրջապատուած, այս պէտք է ընդունել՝ առանց վերապահութեան:

Պատմականօրէն ստեղծուած Սփիւռքեան այս իրադրութիւնից ելնելով՝ բազմակեզուեան հոետորութեամբ օժտուած Համաշխարհային Միջ-եկեղացական Խորհրդի Նախագահ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը, նաեւ միջազգային Իր այս բեղմնատըր եւ շնորհակալ գործունէութեամբ՝ համաշխարհային հասարակայնութեանը բոլոր պատեհ առիթներով արծարծում է Հայոց անժամանցելի Ազգային Արդար Դատը: Պահանջատիրութեամբ հանդէս եկած Իր խոհական կոտ եւ խիզախ ելոյթներով ու բանաձեւումներով շեշտում եւ ընդգծում է յատկապէս, որ Ինքը տէրն է Յեղասպանութեան նախճիրներից ճողոպրած աշխարհասփիռ Արեւմտահայութեան իրաւունքների եւ արդար հատուցումների, ինչպէս տուժած ազգերն են վերագտնում ու վերաախիրանում իրենց իրաւունքների եւ արդարութեան Միջազգային Ատեաններում:

Կորովի եւ անխոնջ այս Հայրապետը ողջունելի Իր գործունէութեամբ եւ միջազգային յարաբերութիւնների ըմբռնման իր մեծ կենսափորձով նաեւ խիզախ քայլեր է առնում, յանուն հայութեան կենսապայմանների ու բարեկեցութեան ապահովութեան, ինչպէս եւ մեր Ազգային Արդար Դատի հետապնդման՝ *երկխօսութիւնների դռներն է լայնօրէն բացում* Հռոմի Պապի՝ Վատիկանի, մինչեւ անգամ նաեւ իսլամական աշխարհի համապատասխան երկրների հոգեւոր առաջնորդների հետ փոխըմբռնումի ճանապարհով, որոնց հիւրընկալութեան բարեհաճութիւնն են վայելում սփիւռքեան հայահոծ համայնքային հաւաքականութիւնները: Ընդհակալ է օրհնաբեր նախաձեռնումներ, որոնք խիստ կենսական են աշխարհասփիռ հայութեան խաղաղ եւ անվտանգ անդորրութիւնը ապահովելու եւ պահպանելու տեսակէտից:

Իր ամբողջ կարեւորմամբ հարկ է ընդգծել նաեւ, որ սովետական կայսրութեան փլուզումից եւ անկախութեան ձեռքբերումից յետոյ Սուրբ Էջմիածնի հոգեւոր նուիրապետութեան առաջ նոյնպէս գործունէութեան լայն ասպարէզներ են բացուած, որ շուրջ ութսուն տարիներ շարունակ զլացում էին իրեն. հսկայական խնդիրներ են ծառայած վերակառուցման, վերակազմակերպման եւ ընդարձակման առումներով՝ ոչ միայն բնաշխարհի, այլեւ *մանաւանդ ներքին Սփիւռքի լայնածաւալ տարածքում*, որտեղ ապրում են եւ պատսպարում ներկայումս անլիքան երեք միլիոն հայութիւն. շուրջ ութսուն տարիներ արգելափակուած, վերացուած եւ կամ անտէրութեան մատնուած ազգային կառոյցները պիտի վերստեղծել տեղի ազգային բարերարների՝ երբեմնի Մանթաշովներին փոխարինող ձեռնարկատերերի օգնութեամբ եւ անմիջական մասնակցութեամբ. վերայառնել ազգային կառոյցները՝ նորերը ստեղծելով միաժամանակ, որպէսզի չփոշիանայ եւ չծուլուի հայութիւնը անտէր եւ անտիրական թողնելով...: Հետեւաբար՝ պատմական հրատապ անհրաժեշտութիւն է ծագել շուտափոյթ ազգային կառոյցների ցանցը ստեղծելու՝ եկեղեցի, դպրոց, մշակութային միութիւններ, թերթեր հայկական, մայրենի լեզուով ձայնասփռումներ ու հեռատեսիլային հաղորդումներ արձակել՝ արագընթաց ուժացման եւ այլասերման վտանգների դէմ թումբեր որպէս, նաեւ հայրենիքի ու հայութեան կապերի սերտաճման կամուրջներ գցելու, պահպանելու ու զարգացնելու դիտումով՝ նա՛մանաւանդ:

Հէնց այդ իսկ տեսակէտից, հարկ է ընդունել միաժամանակ, որ *Մեծի Տանն Կիլիկիոյ եւ առեասարակ Սփիւռքի աւանդական կուսակցութիւնների եւ հայրենա-*

սիրական կազմակերպութիւնների հսկայական կուտակած փորձը խիստ շահեկան է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նուիրապետութեան գործունէութեան համար, որ ինքնըստինքեան հետեւում է քննարկուող երկի անաչառ ընթերցումից:

Փոխադարձ հարստացման ու լրացման ոգով են շարադրուած կուտակուած պատմական փորձի փոխանցումը հայակերտման եւ հայապահպանման մարտումներում, որով առաւել քան կարեւորում է քննարկուող Սոյն գիրքը: Ըստ սուր են դրուած «ապահայացման» (Հեղինակի բառն է) գրոհումների արշաւը մանաւանդ սփիւռքեան պայմաններում, ահագանգելով այդ մասին՝ միաժամանակ սրափութեան կոչ է արւում.

«Ազգեր պատմութեան փոթորիկներուն դիմաց կապրին ու կը գոյատեւեն՝ երբ կառչած են իրենց արմատներուն, այլ խօսքով՝ իրենց ինքնութիւն տուող, իրենց կեանքը աշատորոզ ու գոյութիւնը կտանող մնայուն արժէքներու» (էջ 17):

Ապա հաստատում ուժացման դէմ միանգամայն անյեղի օրինաչափութիւնը.

«Երբ մեր մշակութային արժէքները կը սկսին նօսքանալ մեր կեանքէն ներս, արեւմտեան թեթեւաբարոյ արժէքներ կը սկսին ողողել մեր կեանքը: Երբ մեր կազմակերպութիւններն ու միութիւնները ճղճիմ հարցերով կը զբաղին եւ իրենց ներքին տարակարծութիւնները գերիվեր կը նկատեն ընդհանրական շահերէն, այդ կազմակերպութիւններն ու միութիւնները կը սկսին կորսնցնել իրենց կազմակերպչական ուժականութիւնը եւ ազգային հաւաքական շահեր հետապնդելու իրենց առաքելութիւնը, իրենց գոյութեան իրաւունքն իսկ» (անդ, էջ 17-18):

Այդ իսկ պատճառով՝ ահագանգում է Արամ Ա. Կաթողիկոս Հոգեւոր Առաջնորդը իր ժողովրդին.

«Արթուն կաց, ժողովուրդ հայոց, որովհետեւ շրջապատուած ես յայտնի եւ անյայտ եւ նոյնիսկ բարեկամ կարծուած թշնամիներով՝ ամէն տեղ ու ամէն վայրկեան:

«Համախմբուի՛ր քու հաւատքիդ ու գօրութեանդ, միութեանդ ու յաւերժութեանդ ամուր կռուանը դարձած անփոխարինելի երեք գանձերուն շուրջ՝ ԱԶԳ, ԵԿԵՂԵՑԻ, ՀԱՅՐԵՆԻԷ:

«Առանց այս գանձերուն աղքատ ես.

«Առանց այս գանձերուն անդիմազիծ ես.

«Առանց այս գանձերուն ոչինչ ես...» (անդ, էջ 7):

Մշակոյթի կարեւորումը հայակերտումի եւ հայապահպանումի մարտումներում նոյնպէս նորովի իր մեկնաբանումն է ստացել: Զննախօսուող երկուն ուշագրաւ եւ ընդգրկուն տեղ է բռնում Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հայ մշակոյթի՝ իրրեւ «ժողովուն հաց»ի, զարգացման եւ խրախուսման արծարծումը. «... Ես մեր ժողովուրդին գանձը կը տեսնեմ երեք սրբագան ու յաւերժական արժէքներուն մէջ՝ ԵԿԵՂԵՑԻ, ՀԱՅՐԵՆԻԷ ու ՄՇԱԿՈՅԹ», խորին համոզմունքով եւ հանդիսաւորապէս յայտարարում է Հեղինակը (անդ, էջ 24), ընդ որում՝ իրարից անբաժան պատկերացնելով ազգային գերագոյն այդ գանձերը:

Երկրորդ «Մեծ գանձ»ի՝ Հայրենիքի առնչութեամբ Հեղինակը հաւաստում է միաժամանակ. «Մեր ժողովուրդը ծով գոհողութեամբ միշտ տէր կանգնեցաւ իր հայրենիքին, զայն նկատելով իր գոյութեան առանցքը եւ իր յանրժողութեան երաշխիքը: Այո՛, Հայաստանը մեզի համար անզին գանձ մը եղաւ: Հո՛ն դրինք մեր արժէքները» (անդ, էջ 25, շեղագրումը իմն է - Լ.Խ.): Նաեւ երդումի պէս հոգու ամենախորին խորքերից բանաձեւում է ամենայն յստակութեամբ, իբրեւ Հոգեւոր Առաջնորդ, նաեւ Իր հաւատոյ հանգանակը.

«Մեր պատմութեան ընդերքներէն եկող ձայնը մեր պապերուն այսօր կ'ըսէ մեզի թէ՛ Հայաստանն է ու միշտ պիտի մնայ մեր ժողովուրդին մեծ գանձը: Հայաստանը գանձն է մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն՝ հայրենաբնակ թէ սփիւթաբնակ (շեղագրումը իմն է - Լ.Խ.): Ան կը պատկանի բոլորին: Բոլորս ալ հաւասարապէս պարտաւորութիւն ու իրատուութիւն ունինք այս գանձին նկատմամբ, որ շահուած է ու պահպանուած մեր սուրբերուն աղօթքով, մեր նահատակներուն արիւնով եւ մեր հերոսներուն սուրով»: Ապա զգուշացնում իրաւամբ, բայց եւ համարեա «բանադրանք»ի ուժգնութեամբ.

«Վա՛յ մեզի երբ այս գանձը մեր ժողովուրդին միայն մէկ հատուածին սեփականութիւնը կամ իրատուրը նկատենք (շեղագրումը դարձեալ իմն է - Լ.Խ.): Վա՛յ մեզի երբ հեռու մնանք այս գանձէն: Հայրենիքը մեր անկողնուպտի ու սրբազնասուրբ գանձն է՝ մեր պապերուն կողմէ որպէս սուրբ աւանդ յանձնուած մեզի: Պէտք է տէր կանգնինք անոր: Պէտք է պաշտպանենք զայն մեր ամբողջ ուժով, մեր բրտիներով ու նոյնիսկ արիւնով՝ նոր օրերու բոլոր թշնամիներուն դէմ, որոնք կ'ուզեն զայն յափշտակել» (անդ, էջ 25-26):

Նշուած Եռեակ ազգային ժառանգութիւնները համարելով «մնայուն արժէքներ» հայութեան համար, նաեւ նրա դիմագրաւած արդի տագնապները մատնանշելիս ցաւագոհութեամբ հաստատում է Հեղինակը այն տխուր իրողութիւնը, որ «Այսօրուան աշխարհը մեզի այնպիսի արժէքներ կը հրամցնէ, որոնք զնայուն են ու մակերեսային: ... Երբ մտնենք մեր կեանքէն ներս, այնպիսի երեսոյթներու, կացութիւններու ու դէպքերու ակամատես ու ականջալուր կ'ըլլանք, որոնք ցոյց կուտան թէ մեր կեանքէն ներս մնայուն արժէքներու նահանջ մը կայ (շեղագրումը իմն է - Լ.Խ.): Յաճախ թեթեւին, ու հաճախ ետեւէն կը վազենք: Յաճախ պղպշակային արժէքներուն կը կառչինք: Յաճախ ուրիշը եւ ուրիշինը կը փորձենք կապել, անտեսելով մեր ունեցածը, ուրանալով մեր ինքնութիւնը, մոռնալով մնայունը» (անդ, էջ 17):

Տարբեր ժողովուրդների մշակութային համեմատական քննութեամբ Հեղինակը բացայայտում է նաեւ հայ մշակութային առանձնայատկութիւնն ու կենսական կարեւորութիւնը իբրեւ «ազգային դիմագիծ»ը կերպատրոզ գլխաւոր, Իր իսկ բնութագրմամբ՝ «վճռադրոշմ» անհրաժեշտութիւն. «Եթէ ուրիշ ժողովուրդներուն համար մշակոյթը սոսկ արուեստներու ու սովորութիւններու, մտածելակերպի ու կենցաղակերպի մէկ ամբողջութիւնն է, հայ ժողովուրդին համար մշակոյթը բոլորովին տարբեր բան է: Հայ ժողովուրդի խոր էութիւնը ու իրայատուկ ինքնութիւնը, հայ ժողովուրդի հոգիին ճենճերումները, սրտին տրոփիւնները եւ մտքին բռնիքները զեղեցկօրէն ու հարազատօրէն արտայայտող հաւաքական ճիգ մըն է հայ մշակոյթը: Հայ մշակոյթն է որ մեր ժողովուրդին տուած է իւրայատուկ դիմագիծ ազգերու մեծ ընտանիքին մէջ: Այսպէ՛ս է եղած հայ մշակոյթը հին դարերէն սկսեալ: Հայ ժողովուրդը ինքզինքն նոյնացուցած է իր մշակոյթին հետ» (անդ, էջ 26, շեղագրումը իմն է - Լ.Խ.):

Հեղինակի միանգամայն դիպուկ եւ սպառնիչ ընդհանրացմամբ՝ նաեւ պատմական դաժան իրադարձութիւնների բերումով հայ ժողովրդի «անհայրենիք մնացած ժամանակներում» էլ հայ մշակոյթը սփոփարար «հայրենիք» է եղել մինչեւ ... նրա վերանուաճումը, նոյնիսկ «Փրկութեան լաստը» ընկալուել «պատմութեան անեղ փոթորիկներուն դէմ»: Բնագրային հաւաստմամբ. «Ահա թէ ինչու հայ մշակոյթը մեզի համար դարձած է ո՛չ միայն մեր հոգեմտաւոր արժէքներու գանձարանը, այլ նաեւ մեր ժողովուրդի կեանքը հարստացնող ու զինք անմահացնող գերերկրային ոյժ մը: Ահա թէ ինչու մեր ժողովուրդը ամբօրէն կապուած է եղած միշտ իր մշակոյթին՝ զայն դարձնելով իր հայրենիքը, երբ մնացած է անհայրենիք եւ իր փրկութեան լաստը պատմութեան անեղ փոթորիկներուն դէմ» (անդ, էջ 26, շեղագրումը իմն է - Լ.Խ.):

Աւելին. Սփիւթեան համայնապատկերի տարագիր հայութեան իրավիճակի ընկալմամբ իմաստաւորելով Մշակոյթի վիթխարի նշանակութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը հաստատում է միաժամանակ. «Այսօր, յատկապէս սփիւթի մէջ, հայ մշակոյթը մեզի համար կը շարունակէ մնայ սրբազան ու անփոխարինելի գանձ: Հեռու այդ գանձէն մեր կեանքը դատարկ է իր ոգեղէն ու ազգային պարունակէն: Հեռու այդ գանձէն հայութիւնը անդիմազիծ ու աննպատակ գոյութիւն մըն է սփիւթեան այլասերիչ պայմաններուն մէջ: Արդ, ո՛չ միայն հայ մշակոյթը պէտք է պահել որպէս անցեալէն եկող նուիրական աւանդ, այլ պէտք է զայն աւելի ամրացնել ու հարստացնել, որպէսզի այդ գանձով մենք դառնանք աւելի՛ ամուր ու հարուստ» (անդ, էջ 26-27, շեղագրումները իմն են - Լ.Խ.):

Եզրափակելով մեր Գրադատութիւնը, ողջունում ենք Ն.Ս.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի այս արժէքատր Հատորը, որն իր ազգային-եկեղեցական-մշակութային հիմնահարցերի արժարծմամբ, կարեւոր նպատակ կը բերի, չենք տարակուսում, Հայակերտումի եւ Հայապահպանումի արդի մեր մաքառումներում:

«Նոր Կեանք», 3ը Օգոստոսի, 2000թ.,
«Նոր Հայաստան», 19ը Օգոստոսի, 2000թ.,

ԵՌԱՄԵԾ ԻՄԱՍՏԱՄԵՐ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅՈՒ
«ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ»
ԵՐԿՆ ԱՄՓՈՓՈՂ ՉԵՌԱԳՐԻ ՏՈՒՆԴԱՐՉԸ
ՈՎԿԻԱՆՈՍԻ ԱՅՍ ԱՓԵՐԻՑ

Մաշտոցեան գրերով դրոշմուած ձեռագրերի ճակատագիրը նոյնն է եղել, ինչ որանք երկնող, գուրգուրանքով ու խանդաղակաթութեամբ, նաեւ ջերմեռանդ հաւատքով պաշտող ու պաշտպանող բազմաչարչար հայ ժողովրդինը: Գրչագիրը եւ հաւատքը նոյնացուած էին հայի համար՝ սկսած մեր դպրութեան սկզբնաւորումից ընդհուպ յետագայ ամբողջ դարերի եւ մեր օրերի համար: Այդ նրանից է, որ գրչագրերում է ամփոփուած, առաջին հերթին, հայի հաւատքը, որով սնուում եւ լիցքատրում էր նրա գաղափարական ու յուզական ներաշխարհը, կազմատրում

ու շրջագծում նրա մտահորիզոնը պատմական մի ամբողջ դարաշրջանում, երանգաւորում նրա աշխարհընկալումն ու աշխարհաճանաչողութիւնը. գրչագրերից էր քաղում, հաւատքի հետ միասին, նաեւ վարքագծի դրսեւորման բարոյագիտական նորմերի ամբողջ համակարգը, ընդ որում նաեւ գիտելիքների այն պաշարը, որ բաղկացնում էր հայի հոգեմտաւոր հարստութիւնը եւ միաժամանակ իմացական հզօրութեամբ խթանում հայեցի քաղաքակրթութեան ու մշակոյթի առաջընթացն առհասարակ:

Մեր դպրութեան երախտաւոր ներկայացուցիչները՝ հեզահամբոյր գրիչները, որոնք տառապալից գրկանքներով, անձնուրաց զոհաբերումներով ու ճգնումներով կարողացել են նոյնիսկ տարապայման իրավիճակներում հայ ժողովրդի ամբողջ հոգեւոր հարստութիւնը՝ գրաւոր մշակոյթը սերունդներին փոխանցելով հասցնել մեզ, անընդհատ խոկացել են անցողիկի ու յաւերժականի, ժամանակաւորի եւ մշտնջենականի մասին, նախապատուութիւնը միշտ տալով, սակայն, վերջինին: Նրանք այն խորին համոզմունքն են ունեցել, որ իրենք մատենագրական յուշարձանների ընդօրինակումներով ու բազմացումներով ծառայում են յաւերժութեանը եւ, հետեւաբար, արժանանալու են անմահութեան դափնեպսակի, հզօր խորքում մշտապէս փայփայելով հէնց այդ երագանքը, ձգտումը, կոչումը: Ինչքան էլ անմխիթարական է եղել իրենց վերապրած ժամանակը, դժնդակ ու սահմուկեցուցիչ, փոթորկալի ու խորշակարեր, մեր գրիչները քաջ գիտակցել են, որ «դիրակործան եւ ապականելի է» իրենց «կեցութիւնը», հոգսերը, տուայտանքները, բայց անմահութեան առհաստէայ են միայն «անկողոպտելի գանձեր»՝ ձեռագիր մատենաներ երկնելը եւ դարերին յանձնելը, որոնք եւ «աննինջ յիշատակ են հանդիսանում դրանց «հեղինակների»՝ հէնց իրենց համար: Եւ որ կարելորն է՝ գրչագիրը, նրանց պատկերացմամբ, մշտական եւ յաւերական յուշարձան է («անգրաւ վկայ») ... Աստուծոյ առջեւ:

Ձեռագրերը ազգապահպանման հոգեւոր զինուորների նոյն ճակատամարտերն են մղել գոյամարտի գրոհումներում, ինչ Մաշտոցի 36 մարտիկները...:

Հայի ընտանիքում ձեռագիրը մեծարժէք գանձ համարուելով հանդերձ նաեւ նուիրագործուած մասունք էր, սրբութիւն, տոհմայնութեան առհաստէայ, կտակ, որ փոխանցում էր իբրեւ գերդաստանային նուիրականութիւն, ընտանիքի յաջորդ սերունդներին: Այդպիսին է նաեւ նկարագրուող ձեռագիրը, որը պատկառելի հասակ է ունեցել՝ բոլորելով շուրջ 544 տարիներ: Այն սկսած 1878 թուականից պատկանելիս է եղել Կանիւնեաների գերդաստանին, որի շատախղիներից վերջինը՝ Մարի Կանիւնեանը, իր անմիջական հարազատների յիշատակի յաւերժացման համար, սրտի թրթիռով նուիրաբերում է Ս. Էջմիածնի Մատենադարանին...: Եւ գաղութիս առաջնորդ Գերշ. Եփրեմ եպսկ. Թապազեանը՝ հանդիսանալով միաժամանակ մեր մշակոյթի խորագիտակ անձնաւորութիւն եւ հոգեւոր գանձերի պահպանման ու հաւաքման ջերմեռանդ հոգաձու, ոչ միայն յորդորում ու կազմակերպում է այս արժէքաւոր ձեռագրի տունդարձը, այլեւ յանձն է առնում անձամբ իրակա-նացնել կտակարարի կամքը՝ բազմօրեայ եւ բազմաձայս ճանապարհորդութեամբ գրչագիրը հասցնելով Էջմիածին, Վեհափառին:

Ձեռագրի կազմը՝ տախտակեայ կաշեգարդ է, ընդ որում Միջնադարի հայ գրչութեան արուեստում կազմարարութեան գեղեցիկ նմոյշներից մէկը, որը իրա-

ւամբ դիտում է իբրեւ կիրառական արուեստի ակնառու գործ: Կազմի եզրերն ունեն ուղղագիծ զուգահեռներ՝ ինչպէս շոգեճնշումով ձեւաւորուած դրոշմումներ, այնպէս եւ յաջորդած երիզաւոր դրուագումներ գնդասեղի ծակոտկէնումներով՝ իբրեւ յարաճուն, նրբահիւս, ալիքաձեւ, ակնահաճոյ նախշումներ: Դրանց յաջորդում են եզրաւոր բացատում դարձնալ շոգեճնշումով առաջացած փոսիկաւոր աստղա-գարդեր՝ վանդակաւոր քառակուսիների համադրմամբ, իսկ կենտրոնի բացատում զուգադիր ուղղահայեացքով քառակուսի մեծ վանդակներ՝ իրար ազուցուած ծակոտկէն օվալաձեւ շրջանակներով բազմադիրք, շղարշային ասեղնագործութեան հմայք առթելով դիտողին: Կողի մասից մաշտաձուրթիւնը արապայտուած է կաշեկազմի ճաքճքումով եւ առէջքի՝ յենքաթելերի մասնակի արձակումով: Իսկ կազմը ներսից՝ կապոյտ գոյնի լաթակազմ է:

Ձեռագիրը բաղկացած է 131 թերթերից: Չափսը՝ 17.5 x 14սմ. է:

Վիճակը՝ մասնակի վերանորոգման է ենթարկուած. առանձին թերթեր պոկուած եւ կրկին կպցրած սոսնձով, իսկ մի երկուսը՝ ներդիր, անջատարար:

Մատենագիտական տուեալները ձեռագրի յատկանշում են հետեւեալ հանգամանքներով.

խան

Երկու թերթ սկզբից եւ երկու թերթ վերջից մագաղաթեայ պահպանակներ բունի հնագոյն մի ձեռագրի՝ երկսիւն գրադաշտով, մաշտոցեան երկաթագիր, որ հնագրական առանձնայատկութիւններով յուշում է Ե.-Չ. դարերի վաղեմութիւն:

Բուն ձեռագրի նիւրթ՝ թուղթ է, միասին գրադաշտով, բոլորգիր:

Բովանդակութիւնը՝ ժամանակի էնցիկլոպեդիկ մտածող, բազմավաստակ գիտնական եւ հասարակական գործիչ Գրիգոր Տաթեւացու (1346-1409) մանկավարժական-եկեղեցա-ծխական մէկ երկն է՝ «Մահմանադրութիւն դաստիարակութեան նորաձեւելոց մանկանց, որք հրաւիրելոց իցեն յաստիճան քահանայութեան. խրատք հարկաւորք եւ պիտանիք արարեալ մեծ վարժապետին Գրիգորի հոետորին»:

Գրչութիւնը, արուեստի տեսակէտից, որակեալ է, վարպետ գրչի արտադրանք. ձեւաւորման շքեղութեան համար օգտագործուած է նաեւ մանրանկարչութիւն՝ խորանագարդեր եւ լուսանցադարդեր, ինչպէս եւ թռչնագրեր. խորագրերի ու ենթավերնագրերի սահմանագատման համար՝ կարմրագոյն թանաք, իսկ շարականների երգեցողութեան համար՝ նաեւ հայկական ձայնանիշեր (խազեր):

Ձեռագիրը օժտուած է գրչի գլխաւոր Յիշատակարանով, անեղծ վիճակում, եւ յետագայ ստացողների Յիշատակագրութիւններով:

Գրիչը՝ Յակոբ արեղայ Տրապիզոնցին է. պատուիրատու-ստացողը՝ Կոստանդինուպոլսի «արհիեպիսկոպոս տէր Յովակիմը»:

Գրչութեան ժամանակը՝ Փրկչական 1438 («ՊՁԷ») թուականն է:

Գլխաւոր Յիշատակարանը, որ ձեռագրի ինքնութեան առհաստէան է, ընթերցում է այսպէս.

«Գրեցաւ գիրքս ձեռնադրութեան թվ. ՊՁԷ, ի վայելումն արհիեպիսկոպոսին տէր Յովակիմին Կոստանդնուպոլսի, զոր տէր աստուած վայելեալ տացէ յամբարանս ժամանակաց ամէն: Կատարեցաւ հրամայեալն ի քէն ո՛վ տէր պատուական, զսակաւ գծիկս ընկալ յանպիտան Յակոբ արեղէ Տրապիզոնցոյ, իբրեւ զխերեւէս

այրոյն եւ անմեղադիր լեր խոշորութեանն եւ անարհեստութեան եւ սխալանաց սորա, զի կար մեր այսչափ էր, եւ մի՛ մտանար ի մտաց քո սուրբ ի բարի մասին զանարժանս, աղաչեմ» (թթ. 116e-117ա):

Գրչագրի յետագայ ճակատագրին մասամբ կարողանում ենք հետեւել յաջորդ ստացողների Յիշատակագրութիւնների ընթերցումից, որոնցից կարելուորներն են.

«Չվերջին ստացող սուրբ տառիս, որ ձեռնադրութեան զիրք կոչի, զմահդասի Մարիամս ետու զսայ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ յամենայն յարեան մերձատրաց իմոց, ի ձեռն Աստուածատուր վարդապետին, որ է յայժմու ժամանակիս պատրիարք Կոստանդինուպոլսի մայրաքաղաքի, զոր տէր Աստուած զինքն հաստատուն եւ անդորուելի պահեսցէ մինչեւ ի խորին ծերութիւնն ի վերայ զաւագանին իւրոյ, ամէն» (թ. 117բ):

Պարզում է, որ ինչ ինչ հանգամանքների բերումով գրչագիրը յետագայում սեփականութիւն է դարձել «մահդասի Մարիամին», որն իր մերձաւորների յիշատակի յաւերժացման համար ի պահ տուել է Աստուածատուր վարդապետին, երբ վերջինս բարձրացել է մինչեւ Կոստանդինուպոլսի պատրիարքութեան աթոռին: Յիշատակագրութեան մէջ, տարաբախտաբար, բացակայում է յանձնման բուականը:

Բայց յաջորդ Յիշատակագրութիւնը, որ նոյն «Աստուածատուր պատրիարքի» գրչին է պատկանում, ունի թուական՝ «ՋՂԸ (= 992 + 551 = 1543) ապրիլ ԻԱ (21).

«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք սուրբ տառիս, կարդալով կամ արինակելով՝ յիշեսցիք ի մաքրափայլ յաղաթս ձեր զմահդասի Մարիամս եւ զայրն իմ բարեսէր զԽոճայ Յովասափն եւ զորդիքն իմ զԽոճայ Պաղչին եւ զՀաճի Կիրակոսն եւ զամենայն արեան մերձաւորսն մեր ասացէք լիակատար սիրով, լոյս փառաց Քրիստոս որդի Աստուծոյ, ի գալստեանդ քո հայրենի փառաւր որդմնայ ամենայն վերագրելոցս ի սմայ եւ որք բանի մեզ ասասցէ զործովք նմայ կատարէ Քրիստոս Աստուած մեր, միջնորդութեամբ մար իւրոյ Մարիամու եւ յամենայն սրբոց յամենեքեան:

«Գրեցաւ սակաւ զիրս ձեռամբ Աստուածատուր պատրիարքին ի թվին ՋՂԸ (= 1543) ապրիլ ԻԱ» (թթ. 117բ - 118ա):

Յաջորդող մի քանի անարժէք յիշատակագրութիւններից հետեւում է, որ ձեռագիրը սեփականութիւնն է դարձել, սկսած 1770 թուականից, «Աշտոցի տիրացու զոչեցեալ Մարգիս»ին, նշելով առանձին ղէպքերում նաեւ ընտանիքի անդամների ծնունդն ու մահը: Մի երկու ճապաղ գրութիւններ էլ կան առանձին էջերում, որոնք ճանաչողական ոչ մի արժէք չեն ներկայացնում: Իսկ 1878 թուականից առ այսօր գրչագիրը պատկանելիս է եղել Կանիմեանների գերդաստանին, որի մասին արուած վկայութիւնն է՝ «1878 Կարապետ Կանիմեան» (թ. 129ա):

Բարի ե՛րբ երկրից երկիր՝ մինչեւ Ովկիանոսի այս ափերը դեգերելով պանդխտա՞ծ ձեռագրին դէպի հայ գրի ու դպրութեան, մեծահարուստ մշակոյթի ու բաղաբալկութեան օրրան Վաղարշապատ-Էջմիածին, վերապրելու համար այս անգամ իր նոր կեանքը, գիտական-մշակութային կեանքը, որը ամէն մի ձեռագրի

բուն կեանքն է, նրա միակ իմաստատրուած գոյառումը, դառնալով սեփականութիւնը հայագիտութեան, որով եւ մինչեւ իսկ մարդկային համընդհանուր բաղաբալկութեան:

Ամէն մի ձեռագիր, որ դեռեւս անհատական սեփականութիւնն է եւ շարունակում է իր թափառումների երթուղին սփիւռքի անստուգութեան տարածքում՝ չարժէքատրուած ու չզննահատուած գանձ է, ճիշդ այնպէս, ինչպէս ոսկին՝ ընդերքում կամ լեռնահանիքերում ու աւազախրումներում զտնուելիս...: *Այն ժամանակ ձեռագիրը, իբրեւ պատմականօրէն յօրինուած անկրկնելի ստեղծագործութիւն, վերստանում է իր իսկական արժէքը, երբ հայագիտութեան սեփականութիւնն է դառնում՝ ընդգրկուելով գիտական շրջանառութեան մէջ, որով նա բացայայտում է իր ամբողջ արժէքը խոր անցեալի պատմա-մշակութային իրողութիւնների լուսարանմամբ, եւ ձեռք բերում ... իր իրական եւ բազմարժանդակ կեանքը:*

Ողջերթի նոյն բարեմադրութիւնները նաեւ դեռեւս պանդուխտ մեր միւս գրչագրերին ենք մաղթում, որոնք պէտք է հետեւեն եւ ուղեւորեն դէպի իրենց միակ ապահով ու զուրգուրտ հանգրուանը, դրուելով հայ եւ օտարագրի գիտնականների բացառիկ ուշադրութեան եւ համակողմանի ուսումնասիրման կենտրոնում:

«Նոր կեանք», 1983թ.:
«Ասպարէզ», 2ը Փետրուարի, 1983թ.:

«ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»
ԱՐԺԷՔԱԻՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ողջունելի նախաձեռնութեամբ է հանդէս եկել դեռեւս 1971 թուականին լուսանճելըսահայ համայնքում կազմակերպուած «Հայ Դրամագիտական Ընկերակցութիւն»ը՝ իր հերթական հրատարակութիւնը ամբողջովին նուիրելով հայ դրամագիտութեան հիմնադրի եւ երախտատրի՝ Հ. Կղեմենտ Միլիլեանի մահուան 100-ամեակի յիշատակին (1878-1978 թթ.): Հայ հնամենի ու մեծահարուստ մշակոյթի այս բնագաւառը բնութագրելով անգլերէն եւ հայերէն զուգահէյր յօդուածներով ու ամփոփումներով՝ հանդէսի խմբագրութիւնը միաժամանակ ամերիկեան (եւ ո՛չ միայն ամերիկեան) գիտական լայն հասարակայնութեան ուշադրութեանն է ներկայացրել ինչպէս հայ դրամագիտութեան «հայր» ճանաչուած անխոնջ հնագէտի ու հետազօտողի տքնաջան վաստակը, այնպէս եւ Արուաշէսեան թագաւորութեան եւ Կիլիկիայի հայ պետականութեան վաւերական վկայութիւնները հաստատող դրամահատումները, որոնք շրջանառութեան մէջ են մտել հայ պետականութեան գոյատեւման պատմական ամենատարբեր դարաշրջաններում:

Ի դէպ, երկրպագուեան՝ յատկապէս անգլերէն եւ հայերէն, իբրեւ մատենաշար, նման հրատարակութիւնների նախաձեռնումն ու իրականացումը մեր դարաւոր բազմարժանդակ դպրութեան նաեւ պատմագրական, փիլիսոփայական, իրաւաբանական, բժշկական, քերականական, երաժշտական, գրական-գեղարուեստական, ազգագրական բնագրական յուշարձանների՝ առհասարակ շնորհակալ գործ է

եւ անպայմանօրէն խրախուսելի: Ժամանակն է, որ նաեւ սփիւքում փութաչափօրէն, ծրագրուած նախատեսումներով, քարգմանաբար գիտական աշխարհին յաջողաբար ներկայացունեն, հայագիտութեան բարձր մակարդակով, իմացախոհական, երբեմն նաեւ քաղաքակրթական անփոխարինելի արժէք ունեցող մեր ազգային հոգեւոր գանձերը՝ դրանց շուրջ ստեղծուած ընդհանրացնող խորաքննիչ ուսումնասիրութիւններով հանդերձ:

Մատենախօսուող հանդէսին իրենց հմուտ մասնակցութիւնն են բերել ինչպէս Վենետիկի Մխիթարեան միաբանութեան ճանաչուած բանասէրները, այնպէս եւ Մովսէսեան Հայաստանի եւ Ամերիկայի դրամագիտութեան պատմութեան մասնագէտները: Հանդէսը բաղկացած է 167 մեծադիր էջերից եւ Յաւելուածի 21 էջերից (Հ. Կ. Միպիլեանի ինքնագրերի եւ մետաղադրամների ու դրամպտոմների լուսապատճեններից):

Յօդուածագիրները տարբեր կողմերից բացայայտել են նիւթական մշակոյթի այս գործչի ինչպէս գիտական-հասարակական կերպարը, նրա որոնումների ու յայտնաբերումների տառապանքն ու գիտակցական մեծագոյն ինքնագոհարերումները, այնպէս եւ նրա գտածոների դրամագիտական արժէքն ու շրջանառութեան ընդգրկումները:

Գրամագիտական որոնումների եւ հետազոտումների ինքնարժեքագրող նշանակութիւն ունեն Հ. Միպիլեանի նամակներից արուած բանաբաղումները, որ ներկայացրել է Հ. Գրիգորիս Մանեանը Միաբանութեան արխիւից: Նամակների ընթերցումից պարզույն է, թէ ինչքան մեծ եռանդ ու ջանքեր է ներդրել Հ. Միպիլեանը՝ Ռուսիոյն հայ պետականութեան դրամները որոնելու եւ, իրրեւ ազգային նիւթական յուշարձանների նմոշներ, յաւեւ կորստից փրկելու գործում, անսահման սէր ու նուիրում ցուցաբերելով իր դժուարին, բայց եւ շնորհակալ հետազոտումներում: Չնայած Փոքր Ասիայի պատմական բազմաթիւ վայրերում անձամբ շրջագայած լինելուն՝ Ռուսիոյն հայկական թագաւորութեան դրամները յայտնաբերելու սեւեռուն նպատակով, այնուամենայնիւ նա խոր քախիծով բացազանչում է իր չիրականացած ծրագրերի համար. «... Ե՛րբ պիտի երթամ որ հոնտեղ մեր պակասները ըստ մասին լեցնելու ջանամ...» (20): Եւ ինչ որ ձեռք էր բերում, ոչ թէ նուիրատուութեամբ էր ստանում, այլ մեծ մասամբ իր իսկ նիւթական սուղ միջոցների տրամադրմամբ, երբեմն էլ նոյնիսկ «բերնի հացը» կտրելով...: Հէնց այդպէս էլ հաստատում է նա. «Ինձի շատ ծանր կու գայ, որ ես բերնէս կտրեմ ու 30-40 ֆրանքով հայու դրամներ առնեմ...» (էջ 22): Մակայն նրա սէրը հայ մշակոյթի նիւթական այդ յուշարձանների նկատմամբ այնքան անպարագիծ է եղել, որ պատրաստականութիւն է յայտնել ամէն դժուարութիւն յաղթահարելու՝ ինչպիսին էլ լինի դա. «... եթէ յաջողի ինձի Կիլիկիայի կողմերը երթալ,- գրում է իր մի այլ նամակում,- ամէն քար պիտի շարժեմ, կարելի է որ բան մը գտնենք» (էջ 22): Եւ ահա այս ձեռով է որ Հ. Միպիլեանը կարողացել է ամենահարուստ դրամական հաւաքածոն կազմել՝ տքնանքով ու գոհարերումներով, եւ դրանով իսկ փրկել անհետ կորստից արդէն պատմական նշանակութիւն ունեցող այդ անզին գանձերը, որոնք անփոխարինելի արժէք ունեն ինչպէս Ռուսիոյն հայկական թագաւորութեան շուրջ երեք հարիւրամեայ անտեսական կեանքի, այլ երկրների հետ ունեցած առեւտրական յարաբերութիւնների բնոյթի ու տարողութեան բացայայտման առումով, այնպէս էլ պատմագիտական ճշգրտումների յանգման իմաստով:

Հ. Միպիլեանի հնարաւորութիւնները անհամեմատ ընդլայնում են, երբ դրամագիտական բազմամեայ հետախուզումներով հասարակական լայն ճանա-

չում նուաճելով շուտով նշանակում է Կոստանդնուպոլսի կայսերական թանգարանում իրրեւ տեսուչ, երկրի վեհապետի իսկ յատուկ հրամանագրով: Իր այս հանգամանքը առիթ է ընձեռել Հ. Միպիլեանին ի մօտոյ հետաքրքրուելու եւ հետամուտ լինելու Ռուսիոյն թագաւորութեան շրջանում հայ պետականութեան շրջանառութեան մէջ դրած դրամների տեսակներին ու բնոյթին ծանօթանալու, թափանցելով եւ իրազեկ դառնալով նրանց գտնուելու քաքուն վայրերին, որ այլապէս ուրիշների համար պարզապէս անմատչելի էին: Այդ իսկ պատճառով հայ դրամագիտութեան այս երախտաւորը կարողացել է իր կեանքի ընթացքում գիտական նկարագրութեան ենթարկել շուրջ 3.000 Ռուսիոյն դրամներ, որոնց ընդհանրացմամբ ու բնութագրմամբ, իրրեւ արդիւնք իր բազմամեայ տրնաջան աշխատանքի, շարադրել է իր յետմահու լոյս տեսած «Դասաւորութիւն Ռուսիոյն հայ պետականութեան (եւ առհասարակ) դրամների փրկագնման յոյժ կարեւոր նշանակութիւնը եւ դրանց ապահով հանգրտանման անհրաժեշտութիւնը հայ ազգային մշակութային հաստատութիւններում, երբ դեռեւս 1868 թուականին Պոլսից գրում էր Վենետիկ, Ս. Ղազար՝ Հ. Միմոն Անտոնեանին. «... Շատ մը Ռուս. դրամներ առեր եմ, որոնց մէջ Տարսոնի Կոստանդնի արծաթը աղէկ պահէ, հէշ տեղ մը չկայ... ասիկա Պոլիս գտայ: ... Ջանա որ մեր թանգարանին համար փոյթ տանիք: Եւ շատ շնորհակալ եմ. աղէկ ճոխացուցեր ես եւ կը ճոխացնես, մի մայիր որ ուրիշները ինքէրես չունին: Անոնք չեն հասկնար թէ ինչ ըսել է ազգային հաստատութիւն մը, որուն չէ թէ միայն նոր ստակ, հապա հինն ալ պէտք է ու ազգային հնութիւնը ալ հարկատր են ...» (էջ 19, ընդգծումները իմն են - Լ.Խ.):

Հանդէսում Հ. Միպիլեանի դրամագիտական վաստակի գնահատմամբ ընդհանրացնող խօսք է ասել յայտնի դրամագէտ-հետազոտող Չ. Պտուկեանը իր անգլերէն լեզուով շահեկան յօդուածում: Նա համառօտակի անդրադառնում է Հ. Միպիլեանից առաջ հայ դրամագիտութեան վիճակին ընդհանրապէս, ապա մասնաւորում եւ վեր հանում այն ուշագրաւ նուաճումը, որ նշանաւորել է Հ. Միպիլեանը հայ դրամագիտութեան բնագաւառում:

Արժէքատր է նաեւ Հ. Սահակ Վրդ. Դեմճեմեանի հաղորդումը՝ «Անցեալ դարու դրամագէտ մը՝ Սերովլէ Ալիշան» վերնագրով, ինչպէս եւ վերջինիս՝ եղբօր (վաստակաշատ հայագէտ Ղ. Ալիշանի) հետ ունեցած նամակագրութիւնից բերուած քաղուածքները, որ նոյն յօդուածագրի կողմից ներկայացուել են Հանդէսում: Հ. Միպիլեանն ու Ս. Ալիշանը, լինելով ժամանակակիցներ եւ, մանաւանդ, դրամագէտներ, անձամբ առնչուել են իրար հետ, եւ կարծէք մշտական «մրցակցութեան» մէջ են եղել Ռուսիոյն դրամներ հաւաքելու հետքում: Ինչպէս նկատելի է, երկուսի էլ փոխյարաբերութիւնների ուսումնասիրումը այս կամ այն չափով լոյս է սփռում նրանց կերպարի բնութագրման վրայ:

Չափազանց սրտառու է նոյն յօդուածագրի մի այլ հաղորդումը՝ Թորոս Իշխանի ոսկի երկու մատանիների ճակատագրերի մասին, որոնց հանդիպել է իր կեանքի ընթացքում Սերովլէ Ալիշանը: Կարծում ենք, որ առաւել նպատակաշարժաբար եւ տրամաբանական կը լինէր դրա ընդգրկումը նոյն յօդուածագրի առաջին հաղորդման մէջ, որ վերը նշուեց: Այժմ Ս. Ղազարի թանգարանում պահուող նոյն այդ ոսկի մատանիի դրամագումների նկարագրութեանն է անդրադարձել Հ. Պ. Անանեանը՝ համեմատելով այն Չուիցերիոյ Բազէլ քաղաքի թանգարանում գտնուող համանուն մի այլ ոսկի մատանու հետ, որ ենթադրում է պատկանած լինել

ոչ թէ Ներսէս Ենոքիայի ժամանակակից Թորոս Բ.ին, այլ՝ Լեւոն Բ. քազաւորի որդի Թորոս իշխանին:

Օրսֆորտ համալսարանից Գ. Մ. Մեքքալֆի հաղորդումը նուիրում է Կիլիկեան հայկական քազաւորութեան ԺԳ. դարի դրամահատումների արծաթային որակի որոշմանը տեխնիկայի վերջին նուաճումների՝ մասնատրասպէս Իքս ճառագայթային քննութեամբ: Համեմատական վերլուծութեամբ հեղինակը յանգում է այն եզրակացութեան, որ *Լեւոն Ա. եւ Հերում Ա. քազաւորների բողարկած արծաթ շրամները իրենց ծուլուածքով առաւել բարձրորակ են, քան Լատինական Արեւելքի խաչակրաց իշխանութիւնների բողարկած պղնձախառն արծաթ դրամները:*

Փրոֆ. Տ. Գոյումճեանի անգլերէն լեզուով հաղորդումը վերաբերում է Լեւոն Ա. քազաւորի «օժման» առթիւ բողարկուած դրամների երկկողմանի երեսների դրուագումների նկարագրութեանը եւ դրանց իմաստային բացայայտմանը:

Իր ուսումնասիրութեան մէջ Ե. Ներսէսեանը անդրադառնում է Լեւոն Բ. քազաւորի այն դրամահատումներին, որոնք Կիլիկիայի առետրական նշանաւոր նաւահանգիստ Այասի փողերանոցում են ծուլուել, համառօտակի կանգ առնում Կիլիկիայում 1266-1289 թուականներին տեղի ունեցած պատմական իրադարձութիւններին, քննում նշում փողերանոցում հատած դրամների մակագրութիւնների տարբերակները, ապա ներկայացնում դրանց նկարագրութիւնը:

Քենըք ՄքՔենզին (Նիւ Երրզից) անգլերէն լեզուով իր յօդուածում քննում է Օսմանեան կայսրութեան տարածքում հայ, յոյն, հրեայ փոքրամասնութիւնների ԺԹ. դարում սահմանափակ ոլորտում (հիմնականում՝ եկեղեցիներում) կիրառած դրամատոմսերի բնոյթն ու արժէքը, մետաղադրամ մանրութի սակաւութեան պայմաններում:

Անտարակոյս, դրամագիտութիւնը, լինելով *հնագիտական դիսցիպլին*, համարում է անցեալի նիւթական յուշարձանների ուսումնասիրման բնագաւառներից մէկը, հետեւաբար եւ դիտում է իբրեւ պատմագիտութեան, բայց եւ մանաւանդ տնտեսագիտութեան համար օժանդակ առարկայ: Իբրեւ այդպիսին նրա խորաքնին ուսումնասիրմամբ *բացայայտում են տուեալ պետութեան տնտեսական յարաբերական հզօրութիւնը կամ տկարութիւնը, երկրի արտադրական մակարդակը, ապրանքափոխանակային յարաբերութիւնները ինչպէս ներքին շուկայում, այնպէս եւ այլ պետութիւնների հետ, շատ անգամ ճշգրտում կամ հաստատում են դրամահատող քազաւորների գահակալութեանն առնչուող պատմագիտական մտք եւ խճճուած հարցեր* եւ այլն: Հէնց այս տեսանկիւնով եւ այսպիսի՝ լայն շառաւիղով ներհուն քննութեան նիւթ է դարձրել հայ դրամագիտութեան խոշոր մասնագէտ Դ.Ոկտ. Խ. Մուշեղեանը՝ Հայաստանի վաղեմի մայրաքաղաք Արտաշատում 1971 թուականին յայտնաբերուած դրամական գանձը եւ Դուինում հատուած Աբբասեան արաբական խալիֆայութեան դիրհեմների (դրամական միաւոր) բնոյթը (768-943 թթ.) իր երկու ծաւալուն եւ շահեկան յօդուածներում:

Վերջում կ'ուզենայինք մեր շնորհակալական խօսքն յայտնած լինել լոսանջելլասահայ վաստակաշատ տպագրիչներ՝ ամուսիններ Մարի եւ Ջորջ Ուզունեաններին, երկլեզուեան այս մասնագիտական բարդ, բայց եւ բարձրորակ հրատարակութեան համար:

«Նօր Օր», Երօրեայ թերթ,
1981, Օգոստոսի 25:

Ե Ր Գ Ի Ծ Ա Բ Ա Ն Ի

Փ Շ Ո Տ Ո Ւ Դ Ի Ն Ե Ր Ո Վ

Հայ երգիծական գրականութիւնը զարգացման լայն եւ փառահեղ ուղի է անցել, ընդ որում ստեղծելով այնպիսի գլուխ-գործոցներ, որոնք իրենց գեղարուեստական արժէքով եւ կերպարների երգիծական կատարելութեամբ հանգիստ կարող են դասուել, եւ իրօք դասում են համաշխարհային գրականութեան դասական հեղինակների համապատասխան ստեղծագործութիւնների շարքին: Յատկապէս արեւմտահայ գրականութիւնը, յանձինս հանճարեղ Յակոբ Պարոնեանի եւ Երուանդ Օտեանի, այնպիսի երգիծաբան հսկաներ է տուել, որոնք խարանդ ծաղրի եւ համակող ծիծաղի հզօր ուժով ազգովին դաստիարակել ու դաստիարակում են ոչ միայն իրենց ժամանակակիցներին, այլեւ յետագայ սերունդներին՝ իրենց կարեւոր նպաստը բերելով ազգային նկարագրի կերտմանն ու բարելաւմանն ընդհանրապէս: Նրանց երկերի բեմականացմամբ այսօր իսկ հայրենի թատրոնների բեմա-հարթակներում այնպիսի մասսայական հանդիսատեսներ են գրաւում յարաճուն հետաքրքրութեամբ, որ աշխարհի խրաքանչիւր գրող եւ երգիծաբան կը նախանձէր անպայմանօրէն:

Մփիւրքահայ գրականութեան անդաստանում ողջունելի է, անտարակոյս, պարոնեանական եւ օտեանական աւանդոյթներով տոգորուած, բայց սեփական տաղանդով երգիծելու աներկբայելի ձիրքով օժտուած ԱՐՇԱԿ ԽՆԴԻՐԵԱՆԻ գրական ասպարէզ մուտք գործելը իր վեց գողտրիկ հատորեակներով. առաջինը գրական շրջանակներին արդէն ծանօթ է «Գործելւածն» վերնագրով (Լոս Անջելլոս, 1980 թ., 70 էջ), երկրորդ հատորեակն է՝ «Փշածաղիկ» խօսուն խորագրով (1981 թ., 74 էջ), երրորդը՝ «Կլվլուկ՝ Յիմարներու Դրախտին Մէջ» (1988, 107 էջ), չորրորդը՝ «Թովմաս Էֆենտիի Վերջին Արկածը» (1989, 46 էջ), հինգերորդը՝ «Ինչպէ՞ս Տեսաք «Մեր» Ամերիկան» (1996, 102) եւ վեցերորդը՝ «Մատեան Խնդութեան» (1996, 98 էջ):

Մատենախօսուող այս հատորեակներում ընդգրկուած գրական պատկերները իրաւամբ կարելի է բնութագրել, իրենց կառուցուածքային զարգացմամբ, սկզբի եւ աւարտի սերտ ներդաշնակութեամբ, սեղմութեամբ ու կոտորեամբ, պատկերաւոր մտածողութեամբ ու, մանաւանդ, ծիծաղաշարժ սրամտութեամբ՝ իբրեւ երգիծական քանդակներ: Նրանցում արծարծում են, որպէս իրական համայնապատկեր, Լոսանջելլոսահայ գաղութի ազգային կեանքի գրեթէ բոլոր ոլորտները իրենց

հոգսերով ու մտորումներով, ուրախութիւններով ու տխրութիւններով՝ կուսակցութիւններ, հայրենասիրական միութիւններ, մամուլ, արուեստ, երաժշտութիւն, հեռատեսիլ (Հայկական ժամ), կենցաղագիտութիւն, բարոյականութիւն, տնտեսական կեցութիւն, քաղաքականութիւն, աշխատանքային յարաբերութիւններ, ազգապահպանման ոգեկոչումներ եւ այլն, եւ այլն: Ինչպէս տեսնում ենք՝ իր տեսադաշտում հասարակական կեանքի երգիծական բնութագրման բառականին մեծ եւ բարդ ընդգրկում ունի հեղինակը: Ուշագրան ու ամենաբնորոշը Արշակ Խնդիրեանի ստեղծած երգիծական դիմաստուերներում, սակայն, այն է, որ նա համայնքային կեանքի թերութիւններն ու վրիպումները ձաղկելիս, բարոյական մեղանշումները՝ քաղքենիութիւնն ու սնափառութիւնը, շահամոլութիւնն ու բռնաբռն, պռոտախօսութիւնն ու երկերեսանութիւնը, տգիտութիւնն ու նեղմտութիւնը պախարակելիս կամ արուեստի խտորումները սուր ծաղրով դատափետելիս երբէք չի «երճում» ամէն ինչ «սեւացնելու» եւ մերժելու մոլուցքով: Ո՛չ ամենեւին: Նա սրտացաւօրէն, բարեհոգաբար, իբրեւ երգիծաբանի իր նուիրական կոչումին գիտակից լայնախոհ եւ զգայուն մտաւորական խորունկ վիշտ է ապրում այդ բոլորի համար՝ միայն թէ ծիծաղի միջոցով, պահանջելով ենթատեքստում միաժամանակ՝ *սքափութիւն* եւ *լրջութիւն* ամէն ինչում, համայնքային մշակութային գործի ղեկավարման նպատակասլացութիւն, պատասխանատուութեան բարձր գիտակցութիւն ստանձնած պարտաւորութիւնների եւ հայ համայնքի նկատմամբ, քաղաքացիական վարքագծի բարեկիրք դրսեւորում ամէնուրեք՝ վայել անցեալի հարուստ մշակոյթ ունեցող մեր ժողովրդին, ընդ որում ազգային արժանապատուութեան խոր ըմբռնումով, եւ, վերջապէս, ազգային արժէքներին ու արժանաբարձրութեան հաւատարմութիւն՝ նաեւ արուեստի բնագաւառում: Հեղինակն իր ամբողջ երգիծական տաղանդը, ահա, ի սպաս է դրել իր առաջադրած այս սկզբունքների ու գաղափարների եռանդագին պաշտպանութեանը, որոնք վկայում են, անշուշտ, նրա բարոյական արժանիքների մասին եւ, բնականաբար, յարգանք ներշնչում իր անձնատուրութեան նկատմամբ:

Հեղինակի մտայնացումները եւ դրանց գրական մատուցման եղանակները, ձեւի եւ բովանդակութեան տեսակետից, պէտք է ասել, ինքնատիպ են ու գրաւիչ. նա կարողանում է թէկուզեւ մէկ նախադասութեամբ, երգիծական հիւմորով, խտացում ու տարրողունակ ընդհանրացումներ կատարել: Դիցուք՝

«Գիտեմ, որ ձեռն ձի կը ծնի, կապիկէն՝ կապիկ, կովէն կով, օձէն՝ օձ ..., սակայն մարդէն ի՞նչ կը ծնի՝ վստահ չեմ»...:

Կամ՝ «Միայն երգելով «անկեղծ» չես ըլլար, ինչպէս որ Ս. Գիրքը գոց սորուելով սուրբ չես ըլլար...»:

Եւ կամ՝ «Մարդիկ կան, որոնց գործի միակ դրամագլուխը իրենց լեզուն է»:

Կամ էլ՝ «Աստուած հայերուս արծուի քիթ տալու տեղ՝ երանի արծուի աչք տար...»:

Ինչ խօսք՝ խորիմաստ է, եւ ... ստիպում է մտածել..., նաեւ պահանջում ազգային նոր յատկանիշի ձեռքբերում եւ օժտածութիւն՝ «արծուի աչք» ունենալու կարողականութիւն...:

Հայաստանի մտայնութիւնը գլխաւոր մտահոգութիւն է դիտում երգիծաբանը Ռվկիանոսի այս աստիճան, ուր նախանջ են ապրում՝ մայրենի լեզուն, մշակոյթը, տոհմիկ բարքերը եւ սովորոյթները, եկեղեցին, դպրոցը, մամուլը, հայերէն գիրքը եւ առհասարակ ազգային ինքնութիւնը յատկանշող բոլոր ստորագելիները:

Դիցուք՝ ազգային «Մահոյ փութացնող բաներ» ենթավերնագրի տակ, ի շարք այլ վերասերող իրողութիւնների, սրտացաւութեամբ մատնանշում է մեր ժամանակների Պարոնեանը այն արագընթաց վերափոխումները, որ վերապրում են նոր ժամանակները բազմացող եւ բազմալեզու այս հասարակութիւնում, ընդ որում կանխատեսելով «ժամանակ մը վերջ» այն իրողութիւնը, որ իրենց «հայկականութիւնից մնալու է ... բնութագրական կոր քիթը» միայն. «Երբ տեսնես թէ ինչպիսի՛ յօժարութեամբ, օր ըստ օրէ աւելի ու աւելի ազգակիցներ, ինքզինքնին ամերիկեան ամենազգի բազմութեանց խառնելով, ու անոնց սովորութիւններն ու բարքերը ընդունելով իրենց տուներէն ներս, բարձր տեղ կեցողի մը հովեր կ'առնեն: Այս մարդոց վրայ ժամանակ մը վերջ, իրենց անցեալի հայկականութեան որպէս միակ վկայ, իրենց քիթերը պիտի մնան ... ազգութիւնը կը գնայ ... քիթը կը մնայ...»: Իհարկէ՝ խիստ յոռետեսական այս հաստատումը միայն նրանց համար է, որ արդէն հրաժեշտ են տուել իրենց արմատներին՝ հայագագացողութեանը...:

Ուժացման գործընթացը նրբանկատութեամբ ընկալելով՝ երգիծաբանը իրաւամբ նշում է, որ այն սկսում է այն պահից, երբ մեծ գոհողութիւններով կատուցում հայկական եկեղեցին, դպրոցը, ենթական կամ հաւաքականութիւնը նոյնազգի, որոշում է *կասեցնել հասկացողութիւնը*, իբրեւ հաղորդակցութիւն, *մայրենի լեզուով*...: Առաջադրելով նորեկ երկու հայերի միջեւ կայացած խօսակցութիւնը, երգիծաբանը ճշմարտում է.

« - Այս շրջանի (իմա՝ Լուս Անջելոսի - Լ.Խ.) հայերը բոլորն ալ վերջին մի քանի տարիներուն եկած են Ամերիկա. ինչո՞ւ համար եկեղեցոյ բակին բոլոր յայտարարութիւնները անգլերէն գրուած են ...:

«- Թերեւս հայերէն չեն ուզեր հասկնալ... անոր համար...»:

Հեզնելով «խնայողութեան սկզբունք»ի կիրառումը մայրենի լեզուի գործածութեան հարցում՝ Արշակ Խնդիրեանը նաեւ իր երգիծական հերոսի միջոցով հաստատում է իրաւամբ, Ամերիկա նոր ժամանակ հային հեզնաբար բնութագրելով.

«Ծայր աստիճան խնայատէր մ'ըլլալուն՝ նախ խնայեց իր հայաշունչ անուան, ու ինքզինը վերամկրտեց «Ճանըթըն», որպէսզի ան օտարներու քերնին մէջ ծամածուռ բան մը չդառնայ:

«Մինչեւ օրս ալ, հայերէն լեզուին հետ կը վարուի այնպէս, ինչպէս կը վարուի իր կիրակնօրեայ զգեստին հետ. շատ չի գորածեր, որ չմաշի... ու կը գործածէ այն պարագային միայն, երբ իրիչ լեզու չի մնար խօսելիք. օրինակ, երբ հետո գործ ունի, եւ նոյնիսկ գիտէ որ հայ ես, այսպէս կը սկսի իր խօսակցութիւնը.

- «- Կուտ մօրնիկն մըսքըր Նիկողոս, տու եու սփիք ինկլի՞շ...
- « - Նօ...
- « - Ծոմա ֆարսի հարֆ միզանի՞դ...
- « - Նօ ...
- « - Կավարիչ փա ռուսի՞ ...
- « - Նօ ... նօ ...
- « - Նակասասալիթա քա պա մանկ ֆիլիփինօ՞...
- « (անճրկած) նօ ... նօ...
- « - Հասպա էսփանէօլ ...
- « (քրտնելով) նօ՞ ... նօ՞... էսփանէօլ...

« - Հայերեն կը խօսի՞ք ...
« (շունչ մ'առնելով) այո՛ ... այո՛ ...
«Ուրեմն հայերեն խօսի՞մք...»:

Սա ուժացման հոգեբանությունն է, որ հիանալիորեն ներկայացրել է երգիծաբանը:

Հեզնանքի երգիծական ուժգնությանը դատափետում է նաև օտար՝ խառը ամուսնությունները, վկայակոչելով փաստեր նաև ցեղային ոչ մի ընդհանրություն չունեցող ... սեռականի հետ, անվերադարձ կորստեան մատնելով տոհմական գենը, երգիծաբանը խորը վիշտ վերապրում, երբ ներկայ է լինում հարսանիքի, ուր հայ երիտասարդը ամուսնանում է ... արաբուհու հետ: Յուզական խորհրդածությունների տրուելով՝ հարսանքատր տարեց Մահակի բերանով անձկագին թախծում է.

« - Չե՞ն հասկնար ... ասոնցմե ծնած փոքրիկը ինչպե՞ս Հայ պիտի մնայ ... տան մեջ արաբերեն, դուրսը անգլերեն, եւ մեծ հայրիկէն հայերէ՞ն լսելով... դպրոցէն երբ տուն գայ, ո՞վ պիտի մայի հայերէն լեզուի. քերականութեան, հայոց պատմութեան դասերուն... այլազգ մա՞յրը, թե՞ գործէն յոգնած-դաղրած տուն եկած հայրը. ամէն պարագայի, օտարի արգանդէն հայկազնիկ մը յուսացողը, իրեն չպատկանած հողին վրայ վարուցանք ընող գիւղացիին կը նմանի ... աշխատանքն ու բերքը ուրիշին երթալէ ետք՝ սերմն ալ վրայ կուտայ ... վերջապէս, ե՞րբ պիտի զգաստանան մարդիկ, որ իրաւունք չունին կամովին ծալուելու, որովհետեւ մեր իւրաքանչիւրի կորուստով, կը կորչի նաև թիզ մը հող, մեր ներկայի հոգեկան, եւ ապագայի ֆիզիքական հայրենիքէն»:

Չույման եւ այլասերման դէմ թումը՝ «պատուար» որպէս, երգիծաբանը պահանջում է Ամերիկա ժամանած իւրաքանչիւր հայից «նուագագոյն»ն անել.

« - ... Բայց երկրի մը մեջ, ուր որեւէ ժամանակ նոյն բանը քեզի՛ կրնայ պատահիլ եւ թերեւս նոյն հեշտութեամբ չվերջանայ, որքանո՞վ ինքզինքդ պատրաստած ես նման պատահարի մը (այսինքն՝ սեռականի կամ օտարի հետ խառը ամուսնութեան պարագային - Լ.Խ.), երբ գաւակդ թելը օտար մը անցուցած դռնէդ ներս մտնէ ու ոտքերը գետին զարնելով որեւէ ազգէ մէկը ընտրէ ու հայրական րոյնէն հեռանայ, առաւել՝ խորթանայ...: Բայց ի՞նչ կարելի է ընել: Կարելի՞ն գոնէ: Արձանագրէ՛ գաւակներդ Հայկական միութիւններուն եւ կազմակերպութիւններուն: Խտացո՛ւր մեր միութիւններու շարքերը եւ հետագային, այդ շարքերը իրենց պատուը անպայման պիտի տան, մեծապէս նուազեցնելով վերայիշեալ վտանգի հարուածը, ճակատագրէն արդէն հարուածեալ քու հայու յոգնած ուսերուդ»:

«Ազգային պատուախնդրութեան նախանձախնդրութիւնը» հեղինակը շատ կարեւոր է համարում. նա տազնապահար՝ ցաւագին կսկիծով արձանագրում է նաև, որ գոնէ հայ մամուլը պիտի այնքան ողջախոսութիւն ու խելամուտիւն ունենայ, որ ... չձայնակցի հայ ժողովրդի հասցէին շարժուած ամէն մի վիրաւորանքին՝ իր էջերը եւս տրամադրելով արտասպասմամբ: «Երազիս մեջ երազ տեսայ» երգիծական մանրապատումում Ամերիկայի Կրթական Նախարարութեան ստեղծման առթիւ յոյս է փայփայում երգիծաբանը, որ դա այլեւս չի կրկնուի՝ նշելով. «Ամերիկայի մեջ օրական 20 հազարէն աւելի մանր գաղութիւններ կ'ըլլան. եթէ տարին անգամ մը մէկ Հայ մը նման յանցանք կը գործէ, մեր թերթերը «ազգային» պիտակ փակցնելով երեսոյթին, թերթերու մէջ պիտի չհրատարակեն...»:

Իրօ՛ք, ազգային արժանապատուութեան նախանձախնդիր մտաւորականը միայն դառը ափսոսանքով կը գրէր այս տողերը:

Մի ուրիշ ընդհանրացում, որ շատ ուսանելի է յիշել ամէն անգամ հայապահպանման մաքառման ոգորումներում. «Ամերիկայի երգիչներուն համար,- գրում է երգիծաբանը,- երգը «պիզնէս» է: Հայերուս համար, հայ երգը հայապահպանման ազդակներէն մին է, եւ պէտք չէ որ մեր, եւ կամ մեր գրպանին պահանջած ձեռով վարուինք մեր երգերուն հետ: Դիշդ այդ պատճառով է, որ երբեմն կը «քաշքշեմ» մեր կարգ մը երգիչները (իբրեւ ընկերներ՝ կը սիրեն զիրենք): Իւրաքանչիւր երգիչ երգ մը «ստեղծել» առաջ, նախ մէյ մը մտածելու է, թէ իր ըրածը որեւէ նպաստ կը բերե՞ր մեր մշակոյթի զանձանակին, թէ պարզապէս ձայներու եւ բառերու կոյտ մըն է որ հրապարակ կը նետէ, պոտորելով առանց այդ ալ արդէն գտումի կարօտ այդ ճիւղը»: Հարցադրում, որին առարկել հնարատը չէ ամենեւին:

Խստագոյնս դատապարտում է նաև այսպէս կոչուած «երգիչների» մատուցումները թրքական եղանակների՝ հայերէն թարգմանություններով.

«Հայերէն գիրք արդէն կարդացող չկար, ինչ որ պատճառ դարձաւ որ Հայ գրողները անհետանան: Մնացած էր Հայ երգը, այդ ալ, լլկեցին...»:

Նաև.

«ԹՐԹԵՐԷՆ երգեր եթէ լսես, սխալ կ'երագես կոր... Թորքերը այլեւս երգ չունին ... Բողորը մենք առինք...»:

Հայերենասեր մտաւորականի սրտացաւ յորդորանքով, բայց եւ իր ժողովրդի մեծ մշակոյթի ժառանգութեան խոր գիտակցմամբ ու հպարտութեամբ, երգիծաբանը նոյնիսկ բանաձեւային խտացման է յանգել, երբ խօսքն ուղղելով լուսանշեղսաբնակ երիտասարդներին՝ գրում է.

«Դ՛ուք մեր պատանի ընթերցողներ, հետեւեալը մտքերնիդ պահեցէք.

ԱՆԳԼԵՐԷՆ ԽՕՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՀԱՅԵՐԷՆԸ ՄՈՆՆԱԼ ԴԱՅՄԱՆ ՉԷ...»:

Յիշեցնենք այս առթիւ նաև լեզուաբանական յայտնի ճշմարտութիւնը՝ ո՛վ իր մայրենի լեզուն լաւ գիտէ, օտար լեզուին էլ կարող է աւելի լաւ տիրապետել, քան մայրենին չիմացողը առհասարակ:

Միանգամայն առողջ եւ խորաթափանց հայեացք է զարգացնում հեղինակը՝ մարդուն բնորոշելով ու գնահատելով... իր իսկ արմատով: Մթափեցնելով իր արմատը շուտափոյթ ուրացող-մոռացող հայ երիտասարդին՝ հեզնաբար սաստում է հետեւեալ գգուչացումով. «Մենք կ'ուզենք, որ դուն լաւ ըլլաս, ու չմոռնաս ԱՐՄԱՏԴ...: Իսկ եթէ ոտքերդ գետին զարնելով անպայման կ'ուզես հեռանալ մեզմէ, գնա՛. սակայն ինչ ազգի հետ ալ գործ ունենա՛ նախ հայերէն մտածէ, վերջը դէմինիդ լեզուով խօսէ, որովհետեւ մտածելու առաւելութեամբ օժտուած ես ԱՐՄԱՏԻԴ շնորհիւ...»: Այս հայեացքը ամբողջացում է առաւել ընդգրկուն եւ միաժամանակ բիրեղացած հետեւութեան առաջադրմամբ, որով բացայայտում է երգիծաբանի ընկերային-հասարակական խոր ըմբռնումը.

«Ամերիկեան լաւ քաղաքացի ըլլալու համար, հայութենէն հեռանալը պայման չէ»:

Այս դրոյթի ճշմարտացիութիւնը հիմնատրուում է այն գաղափարի իմաստաւորմամբ, ըստ որի, ի հակառակէն դատելով՝ իրաւ հայը, ունենալով ազնիւ եւ բարձր նկարագիր, չի կարող ամերիկեան վատ քաղաքացի լինել, այլ՝ ... ընդհակառակը:

Բայց եւ տարողունակ ընդհանրացում է կատարում հեղինակը, երբ բոլոր ժամանակների համար միանգամայն ճշմարիտ հետեւեալ խտացած բանաձեւումն է կատարում, որ իմաստային կարեւորմամբ ականջի օղ դարձնելու է առհասարակ, նաեւ մեր ազգի գոյատեւման «Գաղտնիք»ը բացայայտելով.

«Գաղտնիք չէ, որ ԱԶԳ ՄԸ ՄԻՇՏ ՆՈՐ, ԱԶԳ-ԱՍԷՐ ՄԵՐՈՒՆԴ ՄԸ ՅԱՌԱԶ ԲԵՐԵԼՈՎ Է ՈՐ Կ'ԵՐԿԱՐԱԶԳԷ ԻՐ ԿԵԱՆՔԸ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐՈՒՆ ԸՆԴՄԵՋԷՆ, ԵՒ ՄԷԿ ՏԵՄԱՐ ՄԵՐՈՒՆԴ ԿԸ ԲԱԻԷ, ԱՆԴԱՌՆԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԱՍԱՐ...»:

Վերջում նշենք նաեւ, որ հեղինակը ինչպէ՞ս է բնութագրում «Երգիծանք» գրասեռը եւ «Երգիծող» գրականագէտին՝ Երգիծաբանին:

Իհարկէ, բնաւ հաճելի չէ լսել քննադատութիւն, մանաւանդ հեզմանք կամ ծաղր մարդկային քուլտիւրիստների, քերութիւնների, հասարակական-ընկերային արատների, խոցերի, կեղծիքի ու ստի, բարոյական մեղանշումների եւ հոգեկան խաբարումների նկատմամբ, թէկուզ եւ թելադրուած լինի դրանք վերացնելու կամ ուղղելու ամենաբարի եւ ամենաազնիւ դիտատրութեամբ: Բայց ի՞նչ արած. երգիծական գրականութեան կոչումն էլ, իբրեւ գրական ժանր, հէնց այդ է որ կայ. գոյների խտացմամբ ու հեզմանքի սուր նշողակով առաւել ցայտուն ու խոցելի դարձնել կոմիկական իրադրութիւնների պատկերմամբ հակահասարակական եւ հակաբարոյական երեւոյթները: Դեռեւս մեծ Պարոնեանն էր, իբրեւ երգիծանքի բնորոշում, ձեւակերպել.

«Մոլորութիւններու վրայ ծիծաղիլն առաքինութեան ճամբուն մէջ գտնուիլ կ'ենթադրէ»:

Այդ իսկ պատճառով կենդանութեան օրօք ոչ մի երգիծաբան տակաւին չի «սիրուել» իր ժամանակակիցների կողմից, թէւ յետագայում ժողովուրդը անմահացրել է նրանց՝ յաճախ նրանց ասոյթներով սրբազրել համանման երեւոյթներ իր ժամանակի: Այդպիսին է եղել Պարոնեանի եւ Օտեանի պարագան: Դա շատ լատ ըմբռնել է նաեւ քննախօսուող հատորեակների հեղինակը՝ Արշակ Խնդիրեանը, երբ իրավիճակի խոր ըմբռնմամբ գրում է միաժամանակ.

«Եթէ ձեզմէ ոմանք կ'ուզեն երգիծանքի հետեւիլ, պէտք է գիտնան թէ՛

- *Երգիծանք գրելու համար, սիրուիլը պայման չէ՛»:*

Այդ նշանակումն է, որ երգիծաբանը նախօրօք եւ առաջին հերթին հոգու արիւթեամբ պէտք է զինուած լինի՝ միայն ու միայն ժամանակի դատաստանին յանձնելով իր երգիծական վաստակը նամանաւանդ նաեւ յետմահու, եւ ո՛չ թէ չափանիշ ընդունի իր ժամանակակիցների ենթակայական՝ «սուբիեկտիւ» վերաբերմունքը: Իսկ Արշակ Խնդիրեանը արժանի է երգիծաբանի բարձր կոչումին, երբ ներքին հրայրքով ընտրած գրական այս ժանրի առնչութեամբ, պատասխանատուութեան լուրջ գիտակցութեամբ այնուամենայնիւ դարձեալ գրում է.

«- Այդ ծանր պայտասակները շալկած ո՞ր կ'երթաս...»:

- Դաբո՞ն ... պիտի հետեւիմ բոնցքամարտի, ինքնապաշտպանութեան, ժխտօյի, քարաթէի, նետածգութեան, հրացանածգութեան ճիւղերու...:

- Ինչո՞ւ...:

- Վերադարձի՛ս՝ հայ երգիծագիր պիտի փորձեմ ըլլալ...»:

Մեկնաբանութիւններն, ինչպէս ասում են, աւելորդ են:

Արշակ Խնդիրեանը, պիտի խոստովանել, բնատուր երգիծաբան է, տարերքով: Մեր համոզմամբ՝ բոլոր տուեալներն ունի մեր օրերի Պարոնեանը դառնալու, եւ կարծէք՝ դա ինքն էլ է զգացել, երբ ի լուր ամէնքի յայտարարում է. «Պարոնայք, մի՛ կարծէք, որ Պարոնեաններ չի ծնիր այս ազգը. այդքան միամիտ մի՛ ըլլաք. այլ գիտցէ՛ք, որ երգիծանքէն զովասանք սպասելը ... միամտութիւն է միայն, քանզի ինչպէս վարպետը ըսած է՝ «ծաղրելը մեր սրբազան պարտականութիւնն է»:

Իսկ երգիծաբանի տաղանդով իրօք օժտուած խոհուն այս մտաւորականին մաղթելով յետագայ նորանոր ինքնաբացայայտումներ, համոզուած ենք, որ իր արժանի տեղը կը գրաւի հայ մեծահարուստ գրականութեան տարեգրութեան մէջ:

Թէւ չմոռանանք ասելու մեր եզրափակիչ խօսքից առաջ, որ *տաղանդը եւս, այնուամենայնիւ, կարիք ունի խնամքի, եւ մանաւանդ, խրախուսանքի*.

Չենք տարակուսում, որ ընթերցողը լիաթոք ծիծաղելու վայելքն ըմբռնելու շատ պահեր կ'ունենայ այս վեց հատորեակներին հաղորդակից դառնալիս, որոնց համար, զոնէ մտքում, անպայման շնորհակալութիւն կը յայտնի Արշակ Խնդիրեանին:

«Զաջ Նազար», 11րդ տարի, Թիւ 117-118,
Յունուար-Փետրուար, 1982, էջ 26-27:

ԳՐԻԳՈՐ ՇԷՆԵԱՆ. «Տիկինս ըսաւ թէ...»
(Պատմուածքներ, Յուշեր, Խճանկարներ), Երեւան, 1991: Նոյն հեղինակի՝
«Ամուսինս ըսաւ թէ...», «Նոր կեանք»
Հրատարակչութիւն, Մատենաշար Թիւ
13, Լոս Անճելըս, 1993:

Մատենախօսուող երկու Հատորներն էլ, իրենց գրասեռի բնութագրմամբ՝ երգիծական ստեղծագործութիւններ են, որ հեղինակը տարիների ընթացքում նախապէս լոյս է ընծայել իբրեւ առանձին ակնարկային յօդուածներ սփիւթեան մամուլում («Մփխոք», «Ազգակ», «Նայիրի» եւ «Նոր կեանք»)՝ գրական-գեղարուեստական *պատմուածքային* ներկառոյցով: Իրականում՝ լիրանանահայ եւ լու-

անջնջլուսահայ ազգային-մշակութային, հասարակական եւ կենցաղային կեանքն է արտացոլում իր խայտաբղէտութեամբ ու երփներանգութեամբ, ընդամին՝ ակնարկագրի ու պատմութեան գեղարուեստական մշակմամբ, առիթնող հմայքով ու մանաւանդ իրայատկ՝ «Շէնեանական գուարթախոսութեամբ», այլ կերպ ասած՝ երգիծական նրբամիտ եւ հաճելի հիմնով: Մփիւքահայ կեանքի հայապահպանման ու հայակերտման մաքառումների հետքը իր տրոփիւններով ընթերցողին համակում է կենսանորոգ հաւատքով եւ յոյսով սփիւքեան Գոյամարտի յարափոփոխ իրադրութիւններում եւ դժուարին պայմաններում:

Պիտի արձանագրել անվերապահօրէն՝ սփիւքահայ կեանքի արտացոլման զարմանալի ընդգրկմամբ ու յորդութեամբ հեղինակը վաւերական ապացոյցներ է տուել իր գեղարուեստական ստեղծագործութեան հրայրքի ու ներշնչման, առանձնապէս Չեխովեան գրաչափանութեամբ: Գրական քանդակային կատարելութեան եւ տիպականացման առեւտուչեան է անշուշտ երգիծարան գրողի տաղանդի վաւերականութեան հետ սերտօրէն աղերսուած նաեւ հեղինակի ազգային-եկեղեցական-մշակութային կապերի ու յարաբերութիւնների բազմամեայ հարուստ կենսափորձը, որ հնարաւոր է դարձրել երբեմն ընդամէնը չորս-հինգ սեղմ էջերում պատմութեանը եւ ակնարկների՝ պարփակելու խտացում ճակատագրեր իրենց յաջողութիւններով ու տուայտանքներով, որոնք ճանաչողական կարեւոր նշանակութիւն ունեն առհասարակ սփիւքեան բազմակնճիւ եւ հետաքրքիր եռեւեփուն իրականութեան: Իբրեւ ճանաչում ազգային-հասարակական գործիչ եւ «Նոր կեանք» Շաբաթաթերթի հմուտ խմբագրապետ Շէնեանը նաեւ իր հրապարակախօսական բեղմնաւոր գրիչով լուրջ ներդրումն ունի լուսանջնջլուսահայ համայնքի եւ ինչու չէ՝ համասփիւքեան հոգեւոր-մշակութային կեանքի, նրա հայեացքների ու տեսակէտների ձեւաւորման եւ կազմակերպման գործընթացում:

Առաջին իսկ հպանցիկ ծանօթացմամբ գրախօսուող երկու հատորներին էլ՝ պարզում է, որ վերնագրերը երկերի («Կընիկս Ըսաւ Թէ...», «Ամուսինս Ըսաւ Թէ...» աղերսում եւ ակնարկում են ոչ թէ հեղինակի ... Տիկնոջը եւ անձամբ իրեն, այլ բացառապէս նշում հատորներում բնութագրում համապատասխան երգիծական միանգամայն յաջողուած պատմութեանը գլխաւոր հերոսներին, որոնք մինչեւ անգամ ազգութեամբ հայ էլ չեն...: Այս ժպտայարոյց վերնագրերը, իրականում, իրենց յղացքներով հենց հիմնորոշող Շէնեանին են՝ գուարթախոսական միտումով առաջադրուած, որ իսկոյն առիթնում են եւ տրամադրում ընթերցողին ըմբռնելու կեանքով յորդուն նրանցում պարփակուած բոլոր ծիծաղաշարժ եւ կոմիկական պատմութեան ու դրուագները, ընդամին՝ առանց բացթաւումների կամ հպանցիկ ոտտումների ու սոսկ թերթատումների նաեւ:

Այսպէս, առաջին հատորի վերնագրային մկրտութիւնը ստացել հետեւեալ իրական պատումից, որ հեղինակի կենսագործունէութեան հետ առնչութիւն ունի Բեյրութում իր ապրած ժամանակ. հերոսների գործելակերպը եւ աշխարհընկալման վերաբերմունքը առանձնաբար պայմանաւորուած է իւրաքանչիւրի հոգեբանական վերափոխումից, որ անշուշտ տնտեսական կարգավիճակով է կանխորոշուած:

«Պարթեւահասակ, ո՛չ գէր, ո՛չ ալ միհար, վայելչակազմ անձ մըն էր Թոնի, որ աւարտած էր Փարիզի համալսարանի առեւտրական եւ տնտեսական գիտութեանց բաժանմունքը, ստանալով դոկտորայի տիտղոս:

«Շնորհիւ իր կնոջ ազդեցիկ ազգականներուն, մէկ անգամէն դարձած էր դրամատան մը մէկ մասնաճիւղին տնօրէնը: Համեստ, ընկերասէր, անկաշառ, ծառայատէր, կծծի եւ բոլորին օգնելու պատրաստակամ պատուական անձ մը:

«Սքանչելի մարդ մը ահաւասիկ, որուն միակ թերութիւնն էր, ամէն ինչ կնոջ պատմել եւ անոր վճիռին ենթարկուիլ:

«Լիսա հանըմ (Լուիզա բուն անունով) նախակրթարանէն թերաւարտ, բարձրահասակ, բաւական նրբակազմ եւ քիչ մը չոփուր այտերով կին մըն էր: Կուտ տրամաբանող եւ չափազանց լեզուանի: Միրած կինը Մարիամ Աստուածածնի կը վերածէր, իսկ չսիրածը՝ ո՛հ ...»:

Ինչպէս ակնբախ է Մուրքի այս սեղմ տողերից, կերպարները ներկայացուած են հակապատկերային ընդգծուած տարբերութիւններով ու բարենասանութիւններով, իւրաքանչիւրի բնութագրման տիպական յատկանիշներով անհատականացուած, որ միանգամայն տպաւորիչ են յիշողութեան մէջ մտապահուող իրենց ամբողջականութեամբ, կեանքում հանդիպող:

Ապա յարում է հեղինակը՝ բացայայտելով երգիծական պատմի հիմնական զաղափարը՝ ուսեալ եւ վայելչակազմ, բայց նիւթականով խեղճ Թոնիի նկարագրային ինքնուրոյնութեան իսպառ չբացումը վարքագծի իր բոլոր դրսեւորումներում եւ անուս ու տգեղ, բայց մեծահարուստ կնոջ ամենագորութիւնը եւ իշխողականութիւնը նոյնիսկ ոչ միայն ընտանեկան՝ կենցաղային մանրութեան անգամ, այլեւ արտաքին՝ աշխատանքային մասնաւոր յարաբերութիւններում: Իր երգիծական պատմի հաւաստիութիւնը ակնարկելով՝ հեղինակը նաեւ կոմիկական իրադրութիւններում, իր երգիծական կերպարները, հերոսների ուրոյն հոգեբանութիւնը եւ բնատրութիւնների ամբողջացումը ներկայացնում է ծիծաղաշարժ բնութագրմամբ, որ միանգամայն բարեմիտ է. նրբանկատ եւ ... անվնաս:

«Բարեկամի մը միջոցով ծանօթացայ Թոնիին եւ հաշիւ բացի իր դրամատան մէջ ալ: Դրացի ըլլալուս առընթեր յաճախ կը հրախիւր մեզ ալ իր տան հաւաքներում:

«Ի՛նչ նիւթի եւ ի՛նչ դէպքի մասին ալ խօսէր, «տիկինս ըսաւ թէ» ... յանկերզով կը սկսէր: Սկիզբները շատեր չանդրադարձան, բայց հետզհետէ դրացիներն ու ծանօթները Թոնիին անունը մտցան եւ ան վերամկրտուեցաւ «տիկինս ըսաւ թէ» յորջորջումով»: Ահա այսպէս է ծնուել առաջին հատորի վերնագիրը..., որը սակայն ոչ մի ընդհանրութիւն չունի հատորում պարփակուած միւս երգիծական պատմութեան հետ՝ ո՛չ սիւժետային, ո՛չ էլ երգիծական ստեղծագործութեան առումներով:

Այդպիսին է նաեւ երկրորդ հատորի վերնագրային անուանումը, որը լոկ մի առանձին երգիծական պատմի խորագիրն է՝ առանց որեւէ առնչութիւն ունենալու հատորում ամփոփուած միւս երգիծական պատմութեան հետ. այստեղ էլ ուրուագծուած երգիծական կերպարների հերոսները դարձեալ օտար՝ ազգութեամբ արաբ բեյրութցի ամուսիններ են. երգիծական սիւժետը ամուսնական հաւատարմութեան մեղանչումներն են երեսպաշտ ամուսնու, որ կնոջը տարհամոզում է շրջապատում տարածում գտած իր սիրարկածների սուտ ու պատիւ լինելու մէջ. դրան նպաստում է հասարակութեան սանդղակում իր բարձրացումը մինչեւ երեսփոխանի դիրքի՝ քաղաքական ազդեցիկ մարդկանց հովանաւորութեամբ, յաւելեալ անխոցելիութեան եւ պարտակումի ապահով հովանի ձեռքբերելով իր սիրահետումները թաքցնելու համար. կինը՝ «Ֆաթմա սկսաւ գեղգեղել:

«- Երեսփոխան ամուսինս ըսաւ թէ ...»

Եւ կամ՝ «- Երեսփոխան ամուսինս ըսաւ թէ տարիներ պիտի տնէ եղեր պատերազմը, հարիւր հազարներով մեռեալ պիտի ըլլայ, աւերա կ, աւերա՛կ, աւերա՛կ, ապա Լիբանանցիները ուրիշ ճար պիտի չգտնեն, բայց եթէ մասկէշի (արաբ. բառ՝ «հաշտութեան» - Լ.Խ.) պիտի կապել այս բոլորը...»

«- Երեսփոխան ամուսինս ըսաւ թէ՛ ապրողը կը տեսնէ...»:

Առաջին հատորի երգիծական դրուագների բնութային առումով՝ հեղինակը ներկայացրել է այն երեք խմբավորումներով. ա. Պատմութեան, բ. Յուշեր եւ գ. Խճանկարներ, որոնք երգիծական՝ հիմնորհասական ստեղծագործութիւններ լինելով ընդհանրական են, նաեւ ոճային եւ արտայայտչական առանձնաշարժութիւններով, պիտի ասել, արդարացում են արուած դասակարգումները: Ամենաձաւալուն երգիծական պատմութեանը, որ նովելի համարժէք է, ըստ էութեան, ընդգրկում է 64 էջ ընդամենը, բայց եւ առանձին վերնագրերով եւ սկզբնաւէջերով է ներկայացուած, որ կարծում ենք, կառուցուածքային տեսակետից մէկ ընդհանուր խորագրով պէտք է մատուցուէր եւ համապատասխան ենթավերնագրերով, ինչպէս եւ քելադրում է առաջին դրուագը իր վերնագրով՝ «Օղաչու ժիրայր Գիլանեանի Շահատակութիւնները», որը իմաստային ընկալմամբ էլ ընդգրկում է միւս բոլոր դրուագները իբրեւ ենթավերնագրեր...: Իսկ սիւժետային մշակման եւ երգիծական հիմնորհասական յագեցումներով ու կատարելութեամբ, պիտի ասել, հեղինակի ամենայաջողութեամբ ծաւալուն կտաւի ստեղծագործութիւնն է, որ վկայում է նաեւ երգիծական մեծ կտաւի գործեր երկնելու իր անվիճելի կարողականութիւնը...:

Իր բնութային ընդգրկումներով երկրորդ հատորը նոյնպէս համահունչ է առաջինին, միայն թէ առանց որեւէ խմբավորումների, իբրեւ ընդհանուր՝ գուարթախեական խճանկարներ ներկայացուած:

Չգողականութեան զաղտնիքը քննարկուող այս երկու երգիծական հիմնորհասական հատորներում էլ՝ նրանումն է, մեր խորին համոզմամբ, որ տիպականացում են հերոսները տիպական հանգամանքներում իրաքանչիւր երգիծական պատմութեան, ակնարկում կամ յուշագրում:

Հեղինակը վարպետ է երգիծական ուրոյն կերպարներ կերտելու մէջ՝ իրաքանչիւր հերոսի հոգեկան աշխարհի երբեմն բարդ եւ բազմաշերտ առանձնակի բացայայտումներով նկարագրուող եւ փոփոխուող իրադրութիւնների հետ սերտ աղերսակցութեամբ՝ համապատասխանաբար: Եւ որ բնութագրական է երկու հատորների համար էլ հաւասարապէս՝ ոչ մի կերպար էլ մտացածին չէ, այլ՝ իր կեանքում հանդիպած, տեսած եւ առնչուած անհատներ են, որոնք լուսարձակի տակ ընկել հեղինակի քափանցող եւ վերծանող գեղագիտական հայեացքի տեսադաշտում՝ կենսագրական եւ դիպումական իրական ընկալումներում: Այդ իսկ պատճառով գրական կերպարների համայնապատկերում տողանցող հերոսները դառնում են նաեւ ընթերցողի հանդիպածները եւ ծանօթները, որոնք յամենում են եւ մտապահում նաեւ սեփական յուշերում...:

Հիմնորհասական ոճով եւ պատկերաւոր ու դիւրահաղորդ՝ անբռնագրօս եւ անսեթեւեթ լեզուով գրուած սփիւռքահայ իրականութեան գրական գեղարուեստական մատուցմամբ ներկայացուած դրուագները վկայում են անշուշտ հեղինակի հայերէն լեզուի խորիմացութեան մասին. նա համեմել է իր խօսքը արեւմտահայերէնի հարուստ բառ ու բանով: Անթիլիասի կաթողիկոսական Մայրանքում ձեռք

բերած հայերէնագիտական իր հմտութիւնը մեր լեզուի ակունքների իրագելութեան առումով՝ հայոց գրական բոլոր լեզուների, այն է՝ դասական գրաբարի, արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուների, միանգամայն ակնբայս է, որ հեղինակի երկերի գլխատըր արժանիքներից ենք համարում:

Համապատասխան մթնոլորտ եւ կոլորիտ ստեղծելուն հեղինակի երգիծական հիմնորհասական պատմութեանը թէն նպաստում է նաեւ արաբերէն, թուրքերէն, ֆրանսերէն եւ անգլերէն առանձին բառերի գործածութիւնը (առանձին դէպքերում արեւմտահայերէնի համարժէքները ներկայացնելով փակագծերում)՝ բայց երբեմն նաեւ անհարկի յաճախուածութեամբ նեղացնում եւ դժուարացնում է ընթերցողների շրջանակը, բնականաբար, որոնք անհաղորդ են այդ օտար լեզուներին:

Եզրակացնելով՝ նշենք. Գրական պատմաստմ այս շոնդայից մուտքը ողջունելով՝ հայ նորագոյն գրականութիւնը մեծ սպասելիքներ ունի ստեղծագործական եռուն շրջան ապրող երգիծաբան-հիմնորհաս Գրիգոր Շէնեանից: Իր բեղմնատըր գրչին նորանոր յաջողութիւններ ենք բարեմաղթում ...:

Լ.Յ.ԲԱԲԱՅԵԱՆ, «Դրուագներ
Հայաստանի Զարգացած Ֆեոդալիզմի
Դարաշրջանի Պատմագրութեան (IX-XIII
Դարեր)», Երեւան, 1981:

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐԱԶՆԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի պատմութեան ինստիտուտի մակնիշով վերջերս լոյս է տեսել բազմավաստակ հայագէտ, պատմական գիտութիւնների Դոկտոր, Հայ պատմագրութեան բաժնի վարիչ Փրոֆ. Լ.Յ. Բաբայեանի բազմահատոր աշխատութեան երկրորդ հատորը՝ վերը նշուած վերնագրով, բաղկացած 390 էջերից: Համարեա նոյնաձաւալ առաջին հատորը՝ «Դրուագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմութեան (V-VIII դարեր)» խորագրով, բաղկացած 410 տպագիր էջերից, գիտական շրջանառութեան մէջ էր դրուած դեռեւս 1977 թուականին՝ դարձեալ ակադեմիական հրատարակութեամբ:

Հեղինակը պատմագիտութեան բնագաւառում ունեցած բազմամեայ արդիւնաշատ եւ ներքուն վաստակով, իբրեւ հայ միջնադարագիտութեան ականատըր մասնագէտի, լայն ճանաչում ունի ոչ միայն Սովետական Հայաստանի հանրա-

պետութեան սահմաններում, այլև Միութեանական եւ արտասահմանեան գիտական հասարակայնութեան ոլորտներում՝ նրա մեծարժէք աշխատութիւնների նաեւ ռուսերէն քարգմանութիւնների շնորհիւ: Ակադեմիական մակարդակով ծանրակշիւ հրատարակութիւններ են նաեւ նրա նախորդ՝ «Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական պատմութիւնը XII-XIV դարերում» (Երեւան, 1964), «Ակնարկներ միջնադարեան Հայաստանի պատմութիւնից» (Երեւան, 1966), Հայաստանի ֆէոդալիզմի դարաշրջանի պատմութեան ուսումնասիրութիւնը սովետահայ պատմագրութեան մէջ» (Երեւան, 1970) եւ այլ աշխատութիւններ, որոնք գերազանցապէս հայ միջնադարագիտութեան տեսական պրոբլեմատիկ խնդիրներին են վերաբերում: Նրան է վստահուած, իբրեւ պատասխանատու խմբագրի, նաեւ ՍՍՀՄ-ի ակադեմիկոս Յակոբ Մանանդեանի աշխատութիւնների մի շարք հատորների գիտական հրատարակութիւնը:

Հարկ է արձանագրել, որ Փրոֆ. Լ.Յ. Բաբայեանը այն երախտաւոր պատմաբաններից է, որը հայ Միջնադարի պատմութիւնը գիտական հիմքերի վրայ դնելու համար համակողմանի ուսումնասիրութեան է ենթարկել, հայ եւ օտարալեզու սկզբնաղբիւրների հանգամանալից վերլուծմամբ, առաջին հերթին Հայաստանի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները, որոնց գիտական մեկնաբանմամբ միայն ըմբռնելի են դառնում ժամանակի քաղաքական պատմութիւնը, հոգեւոր մշակույթի զարգացման բնոյթն ու գաղափարախօսական բովանդակութիւնը, միտումներն ու հեռանկարները: Եթէ աւելացնենք ասուածին նաեւ հայկական սկզբնաղբիւրների գոհարային նշանակութիւնը ոչ միայն հայ ժողովրդի, այլև հարեւան երկրների ու ժողովուրդների պատմութեան, մանաւանդ համընդհանուր ցնցող իրադարձութիւնների արտացոլման իմաստով, ապա նման աշխատութիւնների առաջացրած ընդհանրական հետաքրքրութիւնն ու կարեւորութիւնը միանգամայն ակնբխալ կը լինեն: Այդ է պատճառը, որ *միջնադարագիտութեան տեսութեան հարցերով զբաղուող ոչ մի մասնագէտ չի կարող շրջանցել նշում աշխատութիւնները իր հետազօտական ուսումնասիրութիւններում, եթէ նա, իհարկէ, մտահոգուած է չլրիպել իր եզրակացութիւններում ու հետետութիւններում:*

Մատենախօսուող բազմահատորեակը առաջին եւ համարձակ, ընդ որում *յաջողուած* փորձն է հայ իրականութեան մէջ գիտական շարադրանքով ներկայացնելու հայ պատմիչների երկերի պատմագրութիւնը՝ բոլորովին նոր տեսանկիւնով ու արժէտորմամբ: Յայտնի է, որ հայ բանասիրութիւնն ու աղբիւրագիտութիւնը վերջին երկու հարիւրամեակի ընթացքում մեծ նուաճումներ են արձանագրել մատենագրական յուշարձանների, այդ թւում եւ պատմագրական երկերի, բնագրագիտական հարցերի ճշգրտման ու լուսաբանման խնդրում, սկզբնաղբիւրների աղբիւրակցութիւնները հաստատելու, յօրինուածքային առանձնայատկութիւնները բնութագրելու, հեղինակային պատկանելութեան ու՝ ժամանակագրութեան վիճարկումներն ու տարածայնութիւնները փարատելու եւ պատմա-բանասիրական բազմաթիւ այլ կնճռոտ ու մթին հանգամանքներ պարզաբանելու առումով, ընդ որում այս բոլորը՝ բանասիրական մտքի համեմատական քիւրեղացումներով ու յստակեցումներով ընթանալու վիթխարի ճիգերի գործադրմամբ: Բանասիրական-աղբիւրագիտական այս նուաճումները պատմագրութեան համար սոսկ նախադրեալներ են, ընդ որում՝ թէև մեկնակէտային նախադրեալներ, առանց որոնց հնարաւոր չէ առհասարակ ձեռնամուխ լինել մատենագրութիւն ունեցող որեւէ ժողովրդի պատմագրութիւնը ուրուագծելու:

Սակայն բոլորովին ա՛յլ են պատմագրութեան գիտական շարադրանքի խնդիրները, որոնք եւ արժարժուած են քննախօսուող հատորներում:

Պատմագրութիւնը, հետազօտողի ըմբռնմամբ, ոչ թէ պատմագիրների երկերի ամբողջութիւնն է, դրանց ընդհանուր բնութագրումը՝ ըստ ժամանակի, հեղինակի պատկանելութեան, դէպքերի ու իրադարձութիւնների ընդգրկման, ա՛յլ՝ *տուեալ ժողովրդի մատենագրութեան մէջ պատմական երեւոյթներն արձանագրող երկերում հասարակական ու պատմական գիտելիքների աստիճանական կուտակման ուսումնասիրումն է՝ դրանց պատմագիտութեան վերածման պրոցէսի (գործընթացի) ուրուագծումով:* Հետեւաբար՝ *պատմագրութիւնը իր քննարկման ծիրի մէջ է ընդգրկում այս կամ այն դարաշրջանի իւրաքանչիւր պատմիչի մատենագրական յուշարձանում արտացոլուած հասարակագիտական, պատմա-փիլիսոփայական ու կրօնա-դաւանաբանական ըմբռնումները, պատմութեան դերի ու նշանակութեան պատկերացումները, մեթոդական խնդիրները, պատմական բարդ իրադրութիւններում քաղաքական կողմնորոշումների բացայայտումը, բախտող պետութիւնների դիւանագիտական ու ռազմավարական ծրագրերի պարզաբանման աստիճանը, տուեալ հասարակարգը բաղկացնող դասակարգերի ու հասարակական խաւերի փոխարարբերութիւնների, նրանց շահերի եւ հակասութիւնների, ինչպէս եւ ընդհարումների ճշմարտացի բնութագրումները, ժողովրդի բարոյական արժէքների գնահատումներն ու ազատագրական ռոգորումների դրուագները. մի խօսքով՝ պատմագրութիւնը հետամտում է պատմիչների երկերի համակողմանի վերլուծմամբ բացայայտել այս կամ այն ժողովրդի վերապրած հասարակարգերի սոցիալ-տնտեսական-քաղաքական-կրթա-մշակութային ողջ կառուցուածքի մասին ածարժուած ըմբռնումների ու հայեացքների ամբողջութիւնը՝ արդի պատմագիտութեան գնահատմամբ:* Այդ իսկ պատճառով մատենախօսուող աշխատութիւնների հեղինակը իւրաքանչիւր պատմիչի երկը բնութագրելիս՝ ամենատարբեր հայեցակէտներով (ասպեկտներով) է քննում ու չափազանց բեղմնաւոր հետետութիւնների եւ ընդհանրացումների յանգում, որոնք անչափ հարստացնում են ընթերցողի հայեանագիտական ու հայկաբանական պատկերացումները մատենագրական մեծարժէք մեր յուշարձանների մասին: Բանն այն է, որ հայ պատմիչների երկերը, պարփակելով իրենց մէջ վաւերական հարուստ նիւթ պատմական Հայաստանի կեցութեան, վարչա-քաղաքական կառուցուածքի, արուեստների ու գիտութեան զարգացման եւ առաջընթացի վերաբերեալ, փաստօրէն հանրագիտարանային նշանակութիւն ունեն, որոնցով հնարաւոր է վերարտադրել, ամենայն ճշգրտութեամբ, հայ ժողովրդի վերապրած հասարակական կացութեաձեւերն իրենց գլխաւոր օրինաչափութիւններով ու հիմնական յատկանիշներով: Պատահական չէ, որ հայագիտութիւնը գերազանցապէս խարսխուած է մեր դասական պատմիչների մատենագրական երկերի ուսումնասիրման վրայ եւ մշտապէս, ինչպէս անսպառ աղբիւրից ու մտքի անպարագիծ շտեմարանից, սնում նրանցից:

Աւելին. մեր դասական պատմիչների երկերի աղբիւրագիտական լայնաշառախ նշանակութիւնը մանաւանդ ընդգծուած է նրանով, որ շատ առատ վկայութիւններ ու հաւաստի տեղեկութիւններ են հաղորդում նրանք ինչպէս հարեւան ժողովուրդների, այնպէս էլ երբեմնի աշխարհակալ պետութիւնների ու նաեւ պատմական ասպարէզից արդէն իսկ անհետացած ժողովուրդների վերաբերեալ՝ լրացնելով ու ամբողջացնելով կովկասագիտութիւնը, ասորագիտութիւնը, իրանագիտութիւնը, քիւզանդագիտութիւնը, արաբագիտութիւնը, մոնղոլագիտութիւնը, խաչակրագիտութիւնը եւ այլն: Կովկասում այսօր վաղնջական ժողովուրդներ կան, որոնք միայն մեր դարասկզբին են գիր ու գրականութիւն ձեռք բերել, ուստի եւ իրենց

անցեալի պատմութիւնը վերարտադրելու եւ գրառելու համար ուրիշ միջոց չունեն բացի նրանից, որ հարկադրաբար ու անհրաժեշտաբար դիմեն (եւ իրօք դիմում են) հայ դասական պատմիչների հաղորդումներին: Մովսէս Կաղանկատուացու պատմական երկը այսօր հաւասարագօր է արդէն իսկ պատմական ասպարէզից անհետացած հնամենի մի ամբողջ ժողովրդի կենսագրութեան, այն է՝ աղուանից ժողովրդի գոյութեան եւ կեցութեան վաերական տարեգրութեան: Իրանագիտութեան Պարթեւական եւ մանաւանդ Սասանեան դարաշրջանների համար հայ պատմիչների երկերը անփոխարինելի սկզբնաբիրներ են. մոռոյազիտութիւնը շատ բանով պարտական է իր զարգացման համար, մանաւանդ առաջին եւ հիմնական տեղեկութիւնների իմաստով, հայկական պատմական յուշարձանների: Հէնց այս միջազգային նշանակութիւնն է հայ դասական պատմիչների երկերի, որ եւրոպացի գիտնականներին մղել է փութաշնորհն թարգմանելու հայկական պատմագրական արքիւրները իրենց հիմնական մասով: Քննախօսուող բազմահատորեակի Առաջին եւ Երկրորդ գրքերի վաերական արժանիքներից մէկն էլ աղբիւրագիտական աղբսների ու նշանակութիւնների վերահանումն է իւրաքանչիւր դասական պատմիչի երկը վերլուծելիս, որը վկայում է, անտարակոյս, հեղինակի էրուդիցիայի եւ հայագիտական հմտութեան մասին:

Ուշագրաւ է մասնատրապէս այն դրոյթը, որ առաջադրել է Փրոֆ. Լ.Յ. Բաբայեանը իր պատմագիտական խուզարկումներում. «... պատմագրական երկերի ստեղծման անհրաժեշտութիւնը մեծ մասամբ պայմանաւորուել է Հայաստանի եւ հայ ժողովրդի կեանքում տեղի ունեցած մեծ երեւոյթների ու իրադարձութիւնների ծաւալմամբ, որոնք շրջադարձային նշանակութիւն են ունեցել: Նա համոզիչ փաստարկմամբ, իբրեւ հաստատումն այս կարեւոր ընդհանրացման, պնդում է նաեւ, որ «հայ պատմագրութեան սկզբնաւորման առաջին օրերից, նրա զարգացմանը խթանող գործօնները հիմնականում հանդիսացել են Հայաստանում տեղի ունեցած քաղաքական, հոգեւոր, մշակութային խոշոր իրադարձութիւնները: Յայտնի է, որ Կորինի երկը կեանքի է կոչուել Սահակ-Մեսրոպեան մեծ գործով, Ազարանգեղոսինը՝ հայոց դարձով, Եղիշէինը՝ Աւարայրով, Փաւստոս Բուզանդինը, Մովսէս Խորենացունը եւ Ղազար Փարպեցունը՝ քաղաքական ու հոգեւոր մարտումների անհրաժեշտութեամբ»:

Հետագօտելով դարերի ընթացքում պատմական երկերի բազմաբնոյթ նպատակադրումները՝ համապատասխան կոնկրետացումներով ու բնորոշումներով, հեղինակը խմբաւորում է դրանք ըստ համազգային, տոհմիկ եւ միջազգային նշանակութիւնների. պատմիչների սուրբիեկտիւ նկրտումների հաշտմամբ հանդերձ, պատմա-համեմատական մեթոդի կիրառմամբ պատմաբանը գիտական նժարի վրայ դնելով ամփոփում ու գնահատում է միեւնոյն պատմական փաստի իրական արժէքը՝ ընդհանուր յայտարարի յանգեցնելով նաեւ այլ աղբիւրների հետ, որը եւ միայն կարեւորութիւն ունի պատմագիտութեան համար: Սա չափազանց բեղմնաւոր հետազօտական եղանակ է (բայց եւ խիստ աշխատատար, ենթադրելով համադրական միտք եւ վերլուծական կարողութիւն), որը իրօք երաշխաւորում է քննարկուող իւրաքանչիւր մատենագրական երկի պատմագիտական արժէքը՝ առարկայական ճշգրտութեամբ. մի հանգամանք, որը իրաւամբ բարձրացնում է ուսումնասիրութեան գիտականութիւնը մի նոր մակարդակի:

Բացի դրանից. նման վերլուծականը հնարաւորութիւն է ընձեռում հեղինակին իւրաքանչիւր պատմական երկի ճանաչողական նշանակութիւնը բացայայտելու, որը, վերջին հաշուով, գլխաւոր արդիւնքն է, բնականաբար, այս կարգի հետագօ-

տութեան: Բանն այն է, որ *հէնց ամէն մի մատենագրական երկի ճանաչողական արժէքի կարեւորմամբ է գնահատում այս կամ այն յուշարձանի տեսակարար կշիռը մատենագրական գանձերի մեր ոսկէֆոնդում:*

Պատմաբանի խորաթափանց հայեացքով մտահարուստ հետեւութիւններ ու ընդհանրացումներ կատարելով իր իսկ առաջադրած, բայց քննարկուող երկերին առնչուող բազմաթիւ նորովի հարցադրումների շուրջ՝ հեղինակը բացայայտում է նաեւ դասական պատմիչների հիմնադրոյթները, որոնք վկայում են հայ պատմագիտութեան տեսական հիմունքների մշակման անկասկած բարձր մակարդակը, նրա սկզբունքների արժանահաւատութիւնն ու վեհութիւնը: Աշխատութեան նման մասշտաբայնութիւնը իր ինքնուրոյնութեամբ եւ ինքնատիպութեամբ, համարձակ կարող ենք ասել, Փրոֆ. Լ.Յ. Բաբայեանի անտարակուսելի ներդրումն է հայագիտութեան մէջ:

Այդ հիմնադրոյթներում առանձնապէս ակնբախ է անցեալի պատմութեան սերունդների համար ունեցած դերի ու նշանակութեան ըմբռնումը՝ հէնց մեր դասական պատմիչների կողմից, որը, ինչպէս համոզում է ընթերցողը, առաջատար գաղափարախօսութիւն է եղել նրանց երկասիրութիւններում: Մեր ժողովրդի պատմական անցեալի հերոսական դրուագների գրառմամբ հայ պատմիչները տուել են նրան ինքնաճանաչման ու ինքնութեան վկայական, ինչպէս նրբամտութեամբ հետեւցնում է Փրոֆ. Լ.Յ. Բաբայեանը, գոյապայքարի ու պետականութեան վերականգնումների անկասելի ձգտմամբ անշէջ բոցավառում է հայրորդիների սրտերը՝ հայրենասիրութեան տոգորումներով եւ ազգային արժանապատուութեան գիտակցութեամբ: Եւ այդ՝ չնայած արեւախորհրդի, անլուր գրկանքների, գերմարդկային լլկանքների ու տարապայման տառապանքների, որ վերապրել է հայ ժողովուրդը պատմութեան քառուղիներում, նաեւ ի հեճուկս իր ինքնութեանն սպառնացող անհամար թշնամական պետութիւնների ու աշխարհակալական բռնատիրութիւնների: Հայ պատմիչները *հիանալի ըմբռնել են գրաւոր պատմութեան գաղափարախօսական անգնահատելի հզօր գէնք հանդիսանալը ժողովրդի հոգեկան կոփոածութիւնը կերտելու ու դարբնելու գործում, նրա դաստիարակիչ դերն ու նշանակութիւնը՝ անցեալից քաղած դասերով, իմաստուն խորհուրդներով ու հետեւութիւններով յետագայ սերունդների յիշողութիւնը հարստացնելու մտասուեռումով:* Իրենց կոչումի սրբազան գիտակցութեամբ մեր դասական պատմիչները իմաստաւորել են հայ ժողովրդի տարեգրութիւնը՝ նրան ազգային ոգի ու նկարագիր հաղորդելու դիտումով, որպէսզի նա կարողանայ դիմակայել, նոյնիսկ իր պետականութեան կորստի պայմաններում եւ մինչեւ անգամ աշխարհասփիտ լինելու պարագային՝ ապրելու՝ եւ յարատեւելու՝ անընկճելի կորովով ու անդրդուելի վճռականութեամբ: Եւ իրօք նրանք այդ դերը կատարել են ...:

Թերթի սեղմ էջերը բնականաբար թոյլ չեն տալիս շարունակելու մեր քննութիւնը՝ մատենախօսուող աշխատութիւնների գիտական վաերական արժանիքները վերլուծման ու գնահատման, ինչպէս եւ տեսական առանձին վիճելի հարցադրումներ արձարծելու ու մասնակի թերութիւններ մատնանշելու համար, թողնելով դրանք հայագիտական հանդէսներում անդրադառնալու պատեհ առիթի:

Բայց կ'ուզենայինք վերջում ընդգծել, որ հրատարակելով հայ պատմագրութեան սխտեմատիկ շարադրանքին նուիրուած առաջին ամբողջական բազմահատորեակը, Գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտը, անտարակոյս, շնորհակալ գործ է արել, որպիսի անհրաժեշտութիւնը վաղուց հասունացած պահանջ էր հայագիտութեան զարգացման արդի փուլում:

«Նոր օր», 1982, Օգոստոս 27, «Մասիս», 1982, 27ը Օգոստոսի:

ԲԻԻԶԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ. «Մելնոկ-Թաքար-
Օսմանեան Թուրքերու Պատմութիւն
ԺԱ.-ԺԵ. դարեր», Անթիլիաս, 1989:

ԱՐԺԷՔԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ԹՐՔԱՅԵՂԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
(ԺԱ.-ԺԵ. դդ.)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Հրատարակչութեամբ 1989 թուականին լոյս տեսաւ վաստակաշատ պատմագէտ, բանասէր եւ մանկավարժ Բիւզանդ Եղիայեանի ուշագրտաւ աշխատութիւնը՝ վերը նշուած խորագրով, բաղկացած 380 մեծադիր էջերից, մեկենասութեամբ Շիրակոյից Ազգային Բարերար Մարք Մարգարեանի:

Մատենախօսուող աշխատութիւնը Անթիլիասի Դպրեվանքի արդիւնաշատ Ուսուցչապետի կարդացած դասընթացքի՝ «Ընդհանուր Ազգաց Պատմութեան» հինգ հատորեակի միայն չորրորդ հատորն է, որ հեղինակել է նա յընթացս իր բազմամեայ դասախօսութիւնների եւ պատմագիտական լուրջ հետազոտութիւնների: Այն իր արծարծած հարցադրումներով ու գիտական մշակման իր բնոյթով միանգամայն դուրս է գալիս երկրորդական վարժարանների դասընթացքային սահմաններից, ընդ որում արժեւորուած լինելով, ամտարակոյս, գիտական ուսումնասիրութեան մեծագրային սեւեռումով ու մակարդակով:

Հեղինակը ծրագրել է, ըստ երեւոյթին, տա՛յ ամբողջական ուրուագիծը, սկզբը՝ նաղբիւրների եւ ուսումնասիրութիւնների վկայակոչմամբ, սելճուց, քաթար, օսմանեան թուրքերի ծագումնաբանութիւնը, վաչկատուն այս ցեղերի քոչուորական կեցութիւնը, ռազմատենչութիւնը, անգուսպ ընչաքաղցութիւնը, քայանչիական եւ գաթողական հոգեբանութիւնը, սպառողական ու ջարդարարական նկարագիրը՝ նրանց «կրօնա-քարոյական» ըմբռնողութեամբ, ռազմացեղային միատրումներով ստեղծուած աշխարհակալութիւնների հիմնադրումը՝ երկիզումների, աւերածութիւնների, նուաճուած ժողովուրդների եղեռնական սրածութիւնների, հնամենի քաղաքակրթութիւնների ոչնչացումների բո՛ւք հակումներով ու սեւեռումներով:

Ուսուցչապետի բազմալեզուեան իմացութիւնը հնարատրութիւն է ընձեռել գիտական շրջանառութեան մէջ դնելու իր գրախօսուող աշխատութեան մէջ բազմաթիւ աղբիւրներ եւ ուսումնասիրութիւններ՝ թուրքերէն, արաբերէն, լատիներէն, յունարէն, հայերէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն լեզուներով գրուած: Յատկապէս տեսակարար կշիռ են կազմում հայկական սկզբնաղբիւրների վկայութիւնները, որոնք մեծապէս լուսարանում են քաթարա-թրքական ցեղերի պատմական բեմել

դուրս գալը ուշ Միջնադարում՝ Միջին Ասիայից ծաւալուելով հրոսակաբար դէպի Միջին Արեւելքի եւ Փոքր Ասիայի բարեբեր եւ արգասանող հողատարածութիւններն ու երկրները, բացայայտում նրանց զիշատչական-քաղաքական էութիւնն ու աւերիչ բնոյթը նուաճուած ժողովուրդների ստեղծած քաղաքակրթութեան եւ մշակոյթի: Այդ իսկ պատճառով քննարկուող աշխատութիւնը փաստաշատ եւ համակողմանի վերլուծական բնոյթ ունի, աղբիւրագիտական լայնախարիստ պատուանդանի վրայ բարձրացում:

Բնութագրականն այն է նաեւ, որ հեղինակը օժտուած է պատմագիտական հայեցողութեամբ եւ խորաքափանց համըմբռնումներով (conceptions), որոնք թոյլ են տալիս իրեն, իբրեւ հետազօտողի, իմաստատրելու եւ լայնաշառաւիղ ընդհանրացումներ կատարելու դէպքերի ու իրադարձութիւնների տրամաբանական եւ համադրուած օղակումներով:

Հարկ է արձանագրել, մանաւանդ, իբրեւ աշխատութեան ակնառու բարեմանութիւն, որ այն պատմական դէպքերի ու իրադարձութիւնների թուագրական չոր ու ցամաք շարայարումը չէ՛ ամենեւին, ա՛յլ՝ դրանց քննական-վերլուծական համադրուած շարադրանք է՝ պատմագիտական առիւթնող ոճով, ընդամին՝ խորաքափանց դիտողութիւններով ու համոզիչ եզրայանգումներով յագեցուած, որոնք հարստացնում են նոյնիսկ մասնագէտ ընթերցողի պատմահայեցողութիւնը տուեալ թեմայի շուրջ՝ ընդհանուր առմամբ:

Փաստաքննական նման աշխատութիւնները, իրենց բնոյթով, ճանաչողական ընդգրկում կարեւորմամբ, ինչպէս եւ շնորհիւ մտահարուստ եւ բազմակողմանի սոցիալ-տնտեսական-քաղաքական խորաքննի վերլուծութիւնների, իբրեւ արժեքատր պատմական աղբիւր են ծառայում պետութիւնների արտաքին նախարարութիւնների համար:

Պատահական չէ ամենեւին, որ հինգ հատորեակից ընթերցասէր հասարակայնութեանն է ներկայացուած այժմ «Հայ-թուրքական յարաբերութիւնները» շօշափող հէնց այս հատորը: Անյողողող մաքառումներով ստեղծուած Ազատ եւ Անկախ Հայաստանի երկրորդ հռչակմամբ պատմութիւնը, տարաբախտաբար, բայց եւ անխուսափելիօրէն, դարձեալ դէմ յանիման բերեց դասական հայ ժողովրդին թրքացեղ թափառաշրջիկ եւ աւազակաբարոյ ժողովուրդների ու պետութիւնների հետ: Նորից օրակարգի հարց դարձուեց նորանկախ հայ պետութեան համար աշխարհաքաղաքական յարաբերութիւնների ճշդումը տարածաշրջանում՝ անցեալի փորձի խստիւ հաշուառմամբ, ընդ որում այն էլ դարձեալ թրքացեղ պետութիւնների ռազմատենչ եւ եղեռնական մոլուցքի բոբրոքման եւ պանթուրանական ճիւղային ծրագրի իրականացման նկրտումների սրացման պայմաններում:

Թելադրական է, որ նաեւ գործնական միջոցներ ձեռք առնուեն այժմ միջազգային լեզու հանդիսացող անգլերէնով քարգմանուի եւ համաշխարհային հասարակայնութեանը ներկայացուի հեղինակի խնամքով աշխատուած եւ խստապահանջ գիտական հասարակայնութեան ակնկալիքներն անգամ բաւարարող այս աշխատութիւնը:

Ազգային մարմինները, ներկայ տագնապալի եւ խռովայոյզ ժամանակներում, պէտք է նաեւ գիտական-քաղաքական յարձակողականի անցնեն՝ արժանահատ գիտական հետազօտութիւններ հրատարակելով մասնատրապէս օտար լեզուներով, անյապա՛ղ. հայերս ուշացել ենք անգամ: Գրքերի շուկան, ցաւօք,

միայն թրքական ստապատիր հեքիաթներ հրամցնող աշխատություններով են հեղեղուել...

Մեր վերջին ցանկությունն է նաև, որ Ուսուցչապետ Բիզանդ Եղիայեանի անտիպ միս հատորները ես, որպիսիք չունի հայ պատմագիտական գրականությունը հենց այդ բնույթի գիտական համակարգում շարադրանքով, հրատարակության արժանանան, մանաւանդ հայ մշակույթի 92ամեայ ծերունագարդ այս Երախտատրի կենդանության օրօք:

«Նոր կեանք», ԺԴ տարի, Թ. 28, 1992,
«Փարոս», Յունիս 1, 1992:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ «ՀՈՒՄԿԼԱ» ՏԱՐԵԳԻՐԸ

ԵՐԿՈՒՄՆԱԿԱՆ

Իմացական բերկրանք ես ապրում ի տես այն գրական-մշակութային բացառիկ երևույթի, որ Ովկիանոսի այս ափերում, երբ ընդամենը մէկ տասնամեակ առաջ իսպառ չքանում էր հայախօսությունը՝ ձուլման հետքով բռնուած հայտղիների մինչև անգամ օտարանուն որդեգրումներով, վերջին երկու տարիներում, ահա, յաջորդաբար լոյս են ընծայում նոյնիսկ Հայագիտական Տարեգրքեր...: Դժուար է մինչև իսկ հաւատալ նման խիզախութեան, բայց եւ այնպէս դա արդէն հաւաստի փաստ է եւ միաժամանակ հայ մշակույթի պատմական ժառանգութեան տիրապետման ձգտումների փայլուն յաղթանակ...: Խոստովանենք՝ սա արդէն հասունացման ու գիտական ըմբռնողութեան նոր մակարդակ է, բոլորովին տարբեր բնույթի մտաւոր-մշակութային զարգացման իւրայատուկ որակ, որ պատիւ է բերում, անտարակոյս, Լոսանջելոսահայ ամբողջ գաղութին, երբ այնքան արդիւնաւետ եւ շնորհակալ աշխատանքներ են կատարում միաժամանակ եկեղեցիների կառուցմամբ, դպրոցների ցանցի ստեղծմամբ, լրագրերի, գրական ամսագրերի ու տպարանների յարաճուն գործունէութեան ծաւալմամբ, որոնք անգնահատելի դեր են կատարում ազգա-պահպանման սրբազան մեր մաքառումներում: Իրօք, ազգային-մշակութային վերածնունդ է ապրում զանգուածայնօրէն նորաստեղծ այս հայահոծ գաղութը իր հրաշագեղ դրսեւորումներով, որոնք վերահաստատում են բազմադարեան հարուստ քաղաքակրթութիւն ստեղծած հանճարեղ մեր ժողովրդի ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ նաև ամերիկեան կիսագնդի առաջ՝ ցայտուն ու միաժամանակ պերճախօս վկայութիւններով...: Անհերքելի ճշմարտութիւն է, որ ժողովուրդների ազգային ինքնագիտակցութեան եւ ինքնաճանաչման հզօրագոյն միջոցը ազգային մշակույթի արժէքների ուսումնասիրումն ու գիտական գնահատանքն է՝ ազգային ձգտումների ու հետանկարների տեսլականով ներշնչուած:

Նկատենք, որ պատմականօրէն մեծ նշանակութիւն է ունեցել բանասիրութեան դերը գրաւոր մշակույթ ձեռք բերած ժողովուրդների, այդ թում եւ հայ ժողովրդի ճակատագրում: Դեռես Անթուան Մեյէն, որը համաշխարհային ճանաչում

ունեցող հեղինակութիւն է հին քաղաքակրթութիւնների պատմութեան ուսումնասիրման եւ մանաւանդ հնդեւրոպական լեզուաբանութեան տեսութեան բնագաւառում, Փարիզում 1924 թուականին կայացած հայագիտական նստաշրջանում ունեցած իր ելոյթում ընդգծում էր հետեւեալ արժէքաւոր միտքը. «... Միայն ճշգրտօրէն իմանալով անցած իրադարձութիւնները՝ մենք կարող ենք մեր գործունէութիւնը դեկավարել իրականութեանը համապատասխան: Համեմատեցէ՛ք այն, ինչ պատահեց սլաւոնական ժողովուրդներին: Սլաւոնական ժողովուրդները բանասիրութեանը չեն պարտական իրենց փայլուն վերածննդի համար, որի հիացած վկաներն ենք մենք այսօր. սակայն եւ այնպէս այդ ժողովուրդներից իւրաքանչիւրի վերածնունդը նախապատրաստուած է եղել մտաւոր շարժումով, բանասիրական շարժումով, անցեալի հետազօտութեամբ: Բանասէրներն են եղել այն հիանալի ողջ զարգացման աղբիւրը, որ այսօր մեզ ներկայացնում է սլաւոնական ժողովուրդների վերածնունդը: ... Անցեալի ուսումնասիրութիւնը ներկան ճանաչելու միջոցն է» («Հայագիտական հետազօտութիւններ», Երեւան, 1978, էջ 29, ընդգծումները այստեղ եւ յետագայում՝ իմն են - Լ.Խ.):

Մասնաւորելով իր խօսքը բանասիրութեան անդրադարձ նշանակութեան մասին հայ ժողովրդի տարեգրութեան մէջ՝ մեծանուն գիտնականը իր մի այլ ելոյթում դեռես 1920 թուականին անում է հետեւեալ խիստ արժէքաւոր ընդհանրացումը, որ ուսանելի է մեզ համար. «... խաչակրութիւնների վերջնական անյաջողութիւնից ի վեր հայ ազգը պահպանուել է: Հայերը ոչ մի տեղ տրամադրութեան տակ չեն ունեցել իրենց պատկանող ոյժ, ոչ մի տեղ չեն ունեցել իրենց սեփական կառավարութիւնը, բայց իրենց համար ստեղծել են ազգային ողի. այն ապրում է նրանց յուշարձաններում, նրանց եկեղեցու մէջ, որը ոչ մի այլ եկեղեցու չի նմանում. այն ապրում է նրանց գրականութեան մէջ, որն ունի իր սեփական լեզուն, իր առանձնայատկութիւնները. եւ որտե՛ղ հայ պետականութեան բացակայութիւնը, ամէն մի սեփական իշխանութեան կորուստը երբեք չի կարողացել խախտել ազգային զգացումը, որն իր գոյութիւնը պահպանել է դարերի միջով: Վրայ են հասել բոլոր դժբախտութիւնները, իրենց զգալ են առել բոլոր հալածանքները, սակայն ազգը երբեք չի մոռացել, որ ինքը գոյութիւն ունի իրենով եւ ունի իր սեփական ողին» (անդ, էջ 534):

Թէ անցեալի մշակույթի գանձերի հրատարակումը եւ ուսումնասիրումը ինչպիսի՛ վիթխարի կարեւորութիւն է ունեցել ազգային գերագոյն պահանջների առաջադրման ու լուծման տեսակէտից՝ Մեյէն միաժամանակ հաւաստում է. «Հայերն աշխատեցին. բոլոր հին բնագրերը հրատարակուել են, ուսումնասիրուել. ազգային պատմութիւնը դրուել է աշխարհի առաջ, եւ Հայաստանը, որ երբեք չէր կորցրել իր գոյութեան խոր զգացումը, աշխարհի առաջ երեսն եկաւ իր բոլոր նախկին իրաւունքներով, որ նա խնամքով պահպանել էր, բաւական էր միայն դրանք ակնյայտ դարձնել» (անդ, էջ 534): Եւ որպէս այս բոլորի հետեւութիւն, մի այլ առիթով բազմավաստակ գիտնականը յանգում է տարողունակ եզրակացութեան. «Հայերը շատ մեծ ազգ չեն, բայց շատ հին ազգ են. մենք դա գիտենք պատմութիւնից. հայերի իրաւունքներն ունեցողը ճշմարտութիւնից բացի այլ բանի կարիք չունի...» (անդ, էջ 518):

Միւսուրում հրատարակուող մի շարք հայագիտական հանդէսներ («Բազմավէպ», Վենետիկ, 1843 թուականից, «Հանդէս Ամսօրեայ» - Վիեննա, 1887 թ., Մեծի Տանն Կիլիկիոյ «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս, 1948 թ., «Revue des Etudes Armeniennes» - Փարիզ, 1920 թ., Die Stimme Armeniens» - Շվեյցարիա, 1967

թ., «Armenian Digest» - Նիւ-Եորք, 1970 թ., «Annual of Armenian Linguistics» - Կիվլենդ, 1960թ. եւ ուրիշներ) անգնահատելի ծառայութիւն են մատուցել եւ շարունակում են մատուցել հայ ժողովրդի «քաղաքակրթական ինքնութիւնը» երուպացիներին եւ աշխարհին ծանօթացնելու շնորհակալ գործում: Այսօր հայագիտութիւնը միջազգային ճանաչում ունի ոչ միայն Եւրոպայի եւ Ամերիկայի բազմաթիւ համալսարաններում ստեղծուած հայագիտական ամբիոններով, այլեւ կազմակերպչական առումով իբրեւ «Միջազգային հայագիտական ուսումնասիրութիւնների ընկերակցութիւն» («Association internationale des Etudes Arméniennes»), որի մէջ ընդգրկուել են 120 օտարազգի հայագետներ որպէս իսկական անդամներ, իրենց պաշտօնական տեղեկատու օրգանով «Լրաբեր»ով:

Չենք տարակուսում, որ նորաստեղծ հայագիտական «Հռոմկլա» Տարեգիրքը եւ իր կարեւոր նպաստը կը բերի, առաջին հերթին, ինչպէս ազգապահպանման վճռական գոյամարտերում, այնպէս եւ հայ ժողովրդի «քաղաքակրթական ինքնութեան» ճանաչման ու տարածման համընդհանուր գործին:

Չափազանց յատկանշական է, որ մատենախօսուող հայագիտական Տարեգրքերը «Հռոմկլա» անուանումն ունեն` ի յաւերժացումն հոգեւոր-մշակութային այն խոշորագոյն կենտրոնի, որ տարագիր հայութեան Կիլիկիայում համախմբման ու պետականութեան վերականգնման հոգեւոր խարիխալը հանդիսացաւ` մաքառումների շուրջ 150-ամեայ իր գոյատեւմամբ: Հռոմկլան, հանդիսանալով կաթողիկոսական բազմամեայ նստավայրը Կիլիկիայում, միաժամանակ մշակութային-ուսումնագիտական խոշորագոյն կենտրոն էր, օժտուած հասարակական ներգործման մեծ ազդեցութեամբ ու համահայկական նշանակութեամբ: Այստեղ էին իրենց համազգային հռչակը ձեռք բերել Ներսէս Շնորհալին, Ներսէս Լամբրոնացին, Գրիգոր Տղան, Կոստանդին Ա. Բարձրբերդցին, Յակոբ Կոլայեցին, Թորոս Ռոսլինը, Մխիթար Հերացին եւ շատ ու շատ ուրիշներ:

Համանուն Տարեգրքերի մտայնացումն ու իրականացումը, պատմա-մշակութային եւ կրօնա-ժխական նիւթերի ընտրութեամբ ու բանասիրական-աղբիւրագիտական հարցերի արծարծմամբ` Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Եփրեմ եպիսկոպոս Թապազեանինն են:

Շքեղ հրատարակութիւններ են` գրքարուեստի բոլոր տեսակներով ու ձեռագրական մեր հին մշակոյթի մանրանկարչական ոճաւորումների համադրմամբ, խնամքով ու ճաշակով, գրաւիչ («Alco» Հրատարակչութիւն, Գլենդէյ): Ընդգրկուած յօդուածները մեծաւ մասամբ հայերէն են (արեւմտահայ եւ արեւելահայ գրական տարբերակներով), փոքր մասով էլ` անգլերէն: Բնութագրականն այն է, որ թէկուզեւ բոլորիկ համեմատութիւնը երկու հատորների բովանդակած նիւթերի` ակնբայի է դարձնում որակական տարբերութիւնը, անցումը մեծաւ մասամբ նկարագրականից դէպի քննական-վերլուծականը` բանասիրական-աղբիւրագիտական առաւել տարադունակ ու լուրջ հարցադրումների ընդլայնմամբ, որը վկայում է, անտարակոյս, հայագիտական նորածին «Հռոմկլա» հանդէսի յաջողութեան եւ առաջընթացի մասին: Բաւական է յիշատակել, տեղի սղութեան պատճառով, միայն արծարծուող թեմաները` իրենց պատմա-բանասիրական կարեւորութեամբ ու այժմէականութեամբ: «Հռոմկլա»ի Բ. Տարեգրքի բովանդակութեան. «Ս. Ծննդեան տօնախմբութիւններ պատմութեան ընթացքին» (Կ. Պետրոսեան), «Գրականութեան դաստիարակչական դերը» (Ս. Անդրէասեան), «Նախամերոպեան այրուրենի մը գոյութեան հարցին այժմէականութիւնը» (Ա. Տօնոյեան), «Ազաբանգեղոս, Հայաստանեայց առաքելական եկեղեցոյ Աւետարանիչը» (Է. Պետրոսեան),

«Անիէն Հռոմկլա» (Հ. Թրքիւեան), «Եզնիկ Կողբացի եւ իր եզակի գործը (Ռ. Որբերեան), «Ուսուցչապետ Մխիթար Գօշը եւ իր գլխաւորած վարդապետարանը» (Լ.Խաչերեան), «Նախաաւորիւնեան հիմնադիրներ Կիլիկեան քաղաքութեան» (Բ. Եղիայեան), «Ճշգրտումներ Ստեփանոս Միւնեցու կենսագրութեան մէջ» (Ե. Գալստեան), «The law of love» (R. Israelian), «The evolution of Eastern Armenian ashkharhabar along the history of the armenian language» (R. Peroomian), «Armenian-American contribution to America» (V. Oshakan): Ընդամէնը 207 էջ:

Արդէն զգացում է այս քննարկաւոր ժողովածուներին, որ «Հռոմկլա»ն հայ մշակոյթի նուիրեալների` մաշտոցագիր գրչեղբայրների հանդիպման սրբազան վայրն է, նրանց հայագիտական հետաքրքրութիւնների եւ ուսումնասիրութիւնների ծաւալման ջերմոցարանը, մեսրոպաշունչ պատգամների հաւատարմութեան ուխտատեղին, ուր ձեւաւորում ու խորացում է, յընթաց ժամանակի, բանասիրական-աղբիւրագիտական իրենց հմտութիւնը: Վստահաբար կը համարձակուենք հաւաստիացնել նաեւ, որ հրատարակուած յօդուածներին մի բանիսը, իրենց բանասիրական-աղբիւրագիտական հարցադրումներով ու շարադրանքի ճշգրտութեամբ կարող են անվերապահօրէն գետնորդել հայագիտական ամենատաջատար հանդէսներում:

Ասացինք, որ հայագիտական հանդէս հրատարակելը չափազանց պատասխանատու ու դժուարին գործ է, ուստիէ միաժամանակ մեծագոյն յանդգնութիւն` մանաւանդ Սփիւռքի նորաստեղծ գաղութի կազմաւորման շրջանում: Եւ դա ո՛չ այն պատճառով, որ պակասում են քիչ թէ շատ հայ մեծահարուստ մատենագրութեանը հաղորդակից եւ գիտակ մտաւորականներ, ո՛չ ամենեւին: Այլ մանաւանդ այն նկատառումով, որ հայագիտութիւնը իր զարգացման երկուհարիւրամեայ փառահեղ զարգացմամբ այժմ այնպիսի բարձունքի է հասել մասնաւորապէս Հայրենիքում` սկզբնաղբիւրների բնագրագիտական հրատարակմամբ ու հայագիտական բազմապիսի բարդ ու կնճռոտ տեսական հարցադրումների մեկնաբանմամբ, որ համընթաց է քայլում համաշխարհային բանասիրութեան հետ անգիջողաբար: Հետեւաբար` նման իրավիճակը մեծագոյն պարտաւորութիւն ու պատասխանատուութիւն է դնում ոչ միայն հեղինակների գրաւոր արտադրանքի, այլեւ մասնաւորապէս Գլխաւոր խմբագրի վրայ` հայագիտական հմտութեան, պատրաստութեան ու ձեռնհասութեան առումներով:

Բարեբախտութիւն է, որ «Հռոմկլա»յի Գլխաւոր խմբագիրը հէնց այդպիսին է, որ կայ: Եփրեմ սրբազան Թապազեանը հայագիտական իր ուսումնասիրութիւնը ձեռք է բերել առաջին հերթին, Անիիկիասի Դպրեվանքում: Աշխատակցել է «Գլխաւոր» գրական-բանասիրական ուսումնական հանդէսին եւ երկու տարի էլ խմբագրական մարմնի մաս է կազմել: Աստուածաբանական եւ հայագիտական ուսումնասիրութեան խորացման նպատակով Փարիզի համալսարանում երեք տարի աշակերտել է ֆրանսիացի հայագետ Շառլ Մերսիէին. վերջինս 25 տարի իր գիտական կեանքից նուիրաբերել է հայ դասականներից Ե. դարի խոշոր իմաստասէր Եզնիկ Կողբացու երկի` «Եղծ աղանդոց»ի գիտա-քննական բնագրի ուսումնասիրման եւ հրատարակման աշխատանքներին, որոնք երկու հատորով լոյս տեսան Փարիզում «Patrologiae» մատենաշարով, որպէս չգերազանցուած կոթողներ եզնիկագիտութեան: Մենք այն քննախօսել եւ Հայաստանի գիտական հասարակայնութեանը ներկայացրել ենք դեռեւս 1962 թուականին, «Պատմա-բանասիրական հանդէս»ի էջերում (տե՛ս Թ. 2): Լոյս է ընծայել նաեւ, Աստուածաշնչի հայերէն հրատարակութեան 300-ամեակի առթիւ` «Աւետարանի ճամբով» Քարոզ-

գիրքը: Հայոց դպրոցների աշակերտության համար, իր նախածեղծումներ, լոյս ընծայում է «Կանթեղ» հայերեն լեզուի դասագրքերի շարքը, ինչպես նաև «Հայոց պատմության» դասագրքերի մատենաշարը՝ ըստ յաջորդական դասարանների: Թարգ-մանել է նաև Լև Տոլստոյի «Բարոյակից պատմածքներ»ը, անգլերենից (330 մեծադիր էջեր), աշակերտների և ծնողների հայերեն ընթերցանության համար, կրկնակի տպագրություններով:

Ահա նման ենթահոդով բանիմացօրեն ու ձեռնհասությամբ նախածեղծել է Եփրեմ Սրբազանը «Հոռմկլա» հայագիտական Տարեգրքերի հրատարակման:

Ինչ խօսք, ամեն մի մշակութային ուշագրաւ նախածեղծումների կարեւորութիւնն ու այժմէականութիւնը բացայայտում են նրանցից իւրաքանչիւրի մղիչ դրդապատճառների ու նպատակադրումների հասարակական անհրաժեշտութեամբ ու նշանակութեամբ:

Բնորոշելով «Հոռմկլա» հայագիտական տարեգրքի հրատարակման առաքելութիւնը Կալիֆորնիահայ համայնքում, Գերշ. Եփրեմ Եպիսկոպոս Թապագեանը դեռես առաջին հատորում գետեղած իր Օրհնագրում հաւաստում է, որ այն «խնացական լոյս է սփռելու հայ ընթերցողներում» իբրև «Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնական և մշակութաբանութեան սրտային տրոփ», որ «անգոսնելով դաժանութիւնը դարերուն և մտայութիւնը մթնոլորտներուն, կը դառնայ բարբառ՝ մեր աղօթքներուն պէս վսեմ, կը դառնայ երգ՝ մեր շարականներուն նման հոգեպարար և վերջապէս պատմութիւն, գրականութիւն՝ մեր մատենագրութեան նման հոգեպիղծ և պատգամախօս» («Հոռմկլա» Տարեգիրք, Ա տարի, Լոսանճելլոս, 1982, էջ 11):

Հաւատամքի կարգախօսն է՝ հայապահպանում մշակութային-հոգեւոր գրա-հապատումով, ամրապէս կառչելով հայոց լեզուին ու հայաբարբառ դպրոցին, մատենագրութեանն ու իմացախոհական հարուստ ժառանգութեանը, կենսամի-թին՝ մեր ազգային հոգեւոր սնունդին: Գիպուկ է և խորիմաստ միաժամանակ բանաձեւումը «Հոռմկլա» տարեգրքի հետապնդած մայրուղու, երբ ազդարարում է.

«Երկնաւոր Վարդապետն է մեր գումարտակի ընդհանուր հրամանատարը, բայց հայութիւնն է ոգին մեր պատերազմին, ուժն է զէնքը մեր բանակներուն...» (անդ էջ 11-12):

Նաև.

«Աստուծոյ հետ, Աստուծոյ համար,
Հայութեան հետ, հայութեան համար» (անդ, էջ 12):

Սա ազգային հայ եկեղեցու գաղափարախօսութեան աւանդական գծի շարունակութեան նորովի հաւաստումն է, որ այնքան բեղմնաւոր ու, մենք կ'ասէինք՝ բախտորոշ հետեւանքներ ունեցաւ հազարամեակների տարեգրութիւն ունեցող հայ ժողովրդի լինելութեան համար նաև նրա մեծահարուստ և ինքնատիպ մշակոյթի ստեղծման ու յարաճուն զարգացման առումներով:

Սեկնաբանելով հայ ժողովրդի «հոգեւոր գոյութեան» գաղտնիքները պատմական տարապայման իրավիճակներում, նորաստեղծ «Հոռմկլա» Տարեգրքի

առաջադրանքները մատնանշելիս Գերշ. Եփրեմ Թապագեանը իրաւամբ յիշեցնում է.

«Գիր ու գրականութիւնը եղած է մեր յանրժացման խորհրդանիշը: Առաջին և միակ ազգն ենք, որ կայսերապաշտ արքաներու փոխարէն սրբացուցած և պաշտած ենք դպրութեան վաստակաւոր, ԲԱՆԻ ՄՇԱԿՆԵՐ, ԼՈՅՍԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՆԵՐ ԵՒ ՀՈԳԻԻ ԿԵՐՈՆՆԵՐ: Մշակութային բոլոր մարգերն ենք, մենք արձանագրած ենք անհամար նուիրագործումներ: Մեր նպատակը պիտի ըլլայ գրական, բանասիրական-պատմագրական և ուսումնասիրական գրութիւններու տեղ տալ, քաջալերել մեր մշակոյթով գրադուող մտաւորականները և այս հեռաւոր փեղեկուն մնալ հայ, ստեղծագործել հայերէնով, ապրիլ հայկականութիւնը և մերժել ամեն տեսակի նահանջողական տրամադրութիւն» (Բ. Տարի, էջ 10-11): Վսեմ ու պատուաբեր նպատակադրումներ, որոնք և նուիրումի վիթխարի ուժա-կանութեամբ, անշուշտ, կը լիցքաւորեն հայ գրչի սպասարկուներին իրենց ստեղծագործական ողջակիզումներում...:

«Հայակերտումը» դրօշ դարձրած բացում է իր էջերը «Հոռմկլա» հայագիտական տարեգիրքը, հանդիսաւորապէս յայտարարելով. «Մենք չենք հաւատար կիսամիջոցներու: Չկան կէս հայեր: Հայ ենք լրիւ, կան հայ չենք: Ու մենք պիտի ձգտինք լրիւ հայակերտման աշխատանքին: Իսկ հայ գրականութիւնը, սփիւռքա-հայ մեր հայապահպանման գործունէութեան մէջ կը հանդիսանայ մեկնակէտը ամեն տեսակ մշակութային յաջողութեան» (անդ, էջ 11): Խորապէս ըմբռնելով, որ հազարամեակների մեր «գոյութեան տիեզերքը» եղել է, առաջին հերթին, ոչ այլ բան, քան մեսրոպատաւ մեր մշակոյթը..., մի իմաստաւորում հայ ժողովրդի լինելութեան, որին հնարաւոր է յանգել միայն խորաքափանց ընդհանրացմամբ ու ընդգրկումն մտահորիզոնով, Եփրեմ Սրբազան Հայրը հաւաստում է միաժամանակ.

«Հայ մշակոյթը եղած է մեր բովանդակ գոյութեան տիեզերքը, ուր ամեն ար-շաւոյսին, վերագաղթումի հրաշալի արեգակի ճառագայթները կուգան լուսաւորելու և ջերմացնելու Արարատի կարօտով ցրտահար հայ հոգիները... (Ա. Տարի, էջ 48):

Խորը ճշմարտացիութեամբ է ըմբռնուած մեր «գոյութեան տիեզերքը» հանդիսացած մշակոյթի դերն ու նշանակութիւնը ինչպէս անցեալի օրհասական իրադրութիւններում՝ իբրև «հոգեւոր հաց» մեր «քաղցած կարաւաններուն», այնպէս էլ «փրկութեան օթեւան» սփիւռքի անստոյգ դեզերումներում «տապարահար» եղած հայ ժողովրդի համար, բայց և միաժամանակ շարունակում է իր «անվիճելի գոյութեան քայլերը»՝ իր հոգու շոյալութեան համանուագը հանդիսացողը մշակոյթը ... փողահարել աշխարհին: Ահա այս ընդհանրացնող գաղափարից, իբրև մեկնակէտից, «Հոռմկլա» հայագիտական տարեգիրքը իր երբն է շեփոքում, յուսալքութեան նվմվոցի առանց դոյզն ինչ նշոյլի, երբ իր ծննդեան վկայականի համար տրուած է պատմականութեան իր արմատների նաև հետեւեալ ճշմարտապատում բնութագիրը.

«Հայ մշակոյթի այս տիեզերքը իր հայ բնակիչներու շինարար ու զոհաբերուող ճիգերով, և անհամար ոգորումներով, այսօր արդէն հպարտութեամբ կանգնած է մարդոց յանդիման և իր անվիճելի գոյութեան քայլերը կը նուազէ: «Այո՛, ոտքի է տապարահար ժողովուրդը այսօր որովհետև հայ մշակոյթը, հայ լեզուն, հայ Այբուբենը՝ եղան կենսամիջոց մեր տառապակոծ սերունդներուն, եղան հացը քաղցած հայ կարաւաններուն և փրկութեան օթեւանը ամեն տեսակ վշտով ու

մամտությունը լեցուն հայություն: Եւ այս տխուր անցեալի մշուշէն պայծառացած հայ մշակոյթը այսօր կը կազմակերպէ իր փառատօնը» (անդ, էջ 48): Մա հետեորական պերճախօսութիւն չէ, ոչ էլ զգացական զեղում, այլ՝ գիտակցական համագրաւ համոզում եւ ստուգապատում ընդհանրացում:

Ամենայատկանշականը եւ միաժամանակ նշանակալին «Հոռմկլա» հայագիտական տարեգրքի մտայղացման եւ իրականացման՝ կենսահաստատ այն պայծառատեսութիւնն է հայ ժողովրդի ներկայ իրավիճակի եւ ապագայ հեռանկարների, որ «հայ երթի մետրոպէան կայարութեան» անպարտելիութեան նկատմամբ է տածում իրաւացիօրէն եւ արդարօրէն, ձեւակերպուած այսպիսի սեղմութեամբ. «Օրէ օր ծաղկող մեր հայրենիքի մէջ, այսօր կը հնչէ հայերէնը հորիզոնէ հորիզոն եւ կը ձգտի անցնիլ բռնաբարուած սահմանները մեր յատկանշական տարածուելու համար մեր հայ երթի մետրոպէան կայարութիւնը»:

«Մփիտեան աշխարհին մէջ հաւատոյ նոյն հանգանակը՝ անխտիր: Իսկ այստեղ՝ մեր փփրում, տեսէք յաղթանակը մեր լեզուին: Հայ մամուլի ամէնօրեայ ուռնացումը, քանակով եւ որակով, դարձեցնելու ցանցի ստուարացումը, ազգային, մշակութային կազմակերպութիւնների բարգաւաճումն ու վերջապէս հայ մշակոյթի քաղաքականացումը» (անդ):

Միանգամայն գիտականօրէն առողջ դիտումով պնդում է արում նաեւ, «Հոռմկլա»-ի հայագիտական գործունէութեան յաջողութեան գրաւական որպէս, Հայրենիքում ծառայուած մշակութային-գիտական նուաճումների հետ, որ արդէն իսկ միջազգային ճանաչում ու հեղինակութիւն ունեն, «պատուաստուելու»՝ հաղորդակից դառնալու անհրաժեշտութիւնը, ընդ որում ազգային արժանապատուութեան ու հպարտութեան իրապաշտ գնահատանքով միաժամանակ: Ուղեցոյցային այս հարցադրումը, որին հանդիպում ենք յընթացս «Հոռմկլա» հայագիտական տարեգրքի մեկնակէտային-սկզբունքային խնդիրների արծարծման, աներկմիտ որոշակիութեամբ, իբրեւ «հայագիտական տարեգրքի հաւատոյ հանգանակ», ձեւակերպուած է. «Հայաստանի իրականութիւնը եւս պէտք է դառնայ մեր ազգային մտորումներուն յաճախանքը: Մեր հայրենիքը իր հողային ամբողջական տարածութեան մէկ հինգերորդը կազմելով հանդերձ, անհիկա կը հանդիսանայ մեր ազգային լինելութեան միակ կոտանքը: Եւ այնտեղ, կ'արձանագրուին վերերկրներ, մշակութային եւ շինարարական մարզերէն ներս: Մեր պարտականութիւնը պիտի ըլլայ հայրենի բոլոր նուաճումներուն պատուաստել ընթերցողը, գիտական թէ գրական նուաճումներու հպարտութիւնը եւ կատարուած նորանոր պնդումներու լոյսով անդրադառնալ թէ ինչպիսի ժողովուրդի մը գաւակներն ենք» (Ա տարի, էջ 11): Նման առողջ հարցադրումը իր զգաստ գնահատականով, ի տարբերութիւն անկշռայնութեան մթնոլորտում թեւածող ոմանց անպատասխանատու յայտարարութիւնների, սքափ եւ իրապաշտ հայեացքի առկայութիւնն է միայն վկայում:

Մասնաւորելով խօսքը սփիտքի տարածքում հայ մշակոյթի պրոպագանդման եւ «Հոռմկլա» տարեգրքի դերի ունենալիք հնարատր անդրադարձների ու նշանակութեան մասին, հաւաստում է Առաջնորդ Սրբազան-Մտաւորականը միաժամանակ, որ որքան էլ անբարենպաստ պայմաններում ենք ապրում ազգային-հաւարական կեանքի տեսակէտից, բայց, այնուամենայնիւ, ոչ մի պատճառ չկայ յուսահատութեան կամ դամբանական ողբասացութիւնների սփիտքահայութեան ճակատագրի վերաբերմամբ: Ապացոյց էք ուզում. սքանչելիօրէն բերուած են, եւ տեղին, հենց հայ ժողովրդի լինելութեանը աղերսուող պատմական քախտորոշ

փաստեր՝ իրենց նորովի եւ հոյակապ իմաստաւորմամբ ու մեկնաբանմամբ, որ արժէ յիշեցնել ամէն անգամ մեր օրերի գրիչ շարժող իրաքանչիւր ողբասացի: Բանն այն է, որ նախանձախնդրութիւնն ու հոգածութիւնը մեր մշակութային հարուստ ժառանգութեան նկատմամբ, որ իբրեւ աւանդ եւ սրբազան կտակներ թողել են սերունդները մեզ, դրանց տէր կանգնելն ու ուսումնասիրելը, հայագիտական տարեգրքերի ու բնագրական գանձերի՝ սկզբնաղբիւրների լոյսըծայումը ոչ թէ ինքնանպատակ բնոյթ ունեն՝ «Մշակոյթ՝ յանուն մշակոյթի» սկզբունքով, այլ ծառայում են մեր ժողովրդի «քաղաքական գիտակցութեան» բարձրացմանը եւ «քաղաքական դաստիարակութեան» զարգացման խիստ կարեւոր եւ այժմեական խնդիրներին:

«Գրականութիւն, կրթութիւն, լեզու եւ ոգի,- կարդում ենք այնտեղ,- քաղաքակիրք աշխարհին մէջ կը ծառայեն քաղաքական դաստիարակութեան, քաղաքական պահանջներու ու քաղաքական կեանքի հաստատման:

«Հայ գրերու գիտն իսկ, Ոսկեդարն իսկ ծնունդն էր այդ հրամայականին, ծառայեց այդ հրամայականին եւ այդ անփոխարինելի ծառայութեան մէջ կայացաւ յատկութիւնը հայութեան:

«Աւելի դաժան չէ՞ հրամայականը այսօր: Աւելի դաժան է, այո, բայց ոչ յուսահատական: Ե. դարուն կար ենթահողը, բայց փրկութեան զէնքն էր պակասը: Այսօր կորսնցուցած ենք ենթահողը, բայց ունինք պայքարի զէնքը, ունինք հայ լեզուն որ չի ճանչնար նահանջ, չընդունիր պարտութիւն, լայնախոհ է բայց խոստապահանջ:

«Հայ լեզուն եղաւ առաջին խիզախ դրօշակը հայութեան դէմ շղթայազերծուած գրոհներուն եւ այսօր կը մնայ առաջին եւ միակ կարգախօսը ձուլման մէջ բարձրացող արդարացումի աղաղակներու:

«Հայերէնը կը բողբոլ տարագրութեան դէմ: Արքնութեան կը սղէ հայ զանգուածները համայն, անոնց հոգիներուն կը դողանջէ մէկ ու միակ ճշմարտութիւն՝ դառնալ քաղաքական ընկերութիւն, մշակել քաղաքական գիտակցութիւն...» (Ա տարի, էջ 48-49):

Մեզ մնում է միայն ջերմապէս ողջունել եւ բարի երթ մաղթել «Հոռմկլա» հայագիտական տարեգրքին՝ առաջադրած իր փետմ առաքելութեան իրականացման բարենադրութիւններով¹:

«Հանդէս ամսօրեայ», 1983,
Յուլիս-Դեկտեմբեր:

¹ Ցաօք, հայագիտական այս տարեգիրքը, հանգանանքների բերումով, այնպէս էլ Գ. հատորից յետոյ իր շարունակութիւնը չունեցաւ եւ դադարեց լոյս տեսնելուց առհասարակ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՐ, ՄԱՇՏՈՑԻ ԸՆՈՐՀԱԼԻ ԱՇԱԿԵՐՏ,
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԴԱՄԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆՈՎ
ՃԱՌԱԳՐԱԾ ԵՐԿԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԵՐԷՆՈՎ, ԵՓՐԵՄ
ԳԵՐԱՇՆՈՐՀ ԹԱՊԱԳԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Մեծի Տանն Կիլիկիոյ Մայրավանքի Տպարանից նոր լոյս տեսաւ, քրիստոնէութեան իբրեւ պետական կրօն հռչակման 1700ամեակի յորեինական մատենաշարով, Աբու Տապիի եւ Արաբական աշխրեքների հայութեան կաթողիկոսական տեղապահ Եփրեմ Գերաշնորի Արք.Թապագեանի Սորպոնի համալսարանում հայագիտական ուսումնառութեան ժամանակ պաշտպանած Դոկտորական Աւարաւանդը "Les Homélie du Catholico Hovhan Mandakouni" («Կաթողիկոս Յովհան Մանդակունու ճառերը») խորագրով, այն է՝ Հինգերորդ դարի հայ հեղինակի ոսկեդարեան հայերէնով գրուած մատենագրական Յուշարձանի ֆրանսերէն քարգմանութիւնը:

Որքան մեզ յայտնի է, Սոյն աշխատասիրութիւնը Հոգեւոր Հօր դոկտորական Աւարաւանդն է աստուածաբանութեան գծով, որ փայլուն պաշտպանել է Սորպոնի համալսարանում՝ հայագետ Շառլ Մերսիէի գիտական ղեկավարութեամբ, ղեռնա համալսարանական իր ուսումնառութեան ատարտին: Այդ մասին, հայ ճարտասանութեան՝ իբրեւ ուսումնակարգի ձեւաորման պատմականը ներկա-յացնելիս, մեր «Հայ Դպրութեան Պատմութիւնը՝ Զննական Տեսութեամբ» Եռահատոր Ուսումնասիրութեան Գ. հատորի 454-րդ էջում գրել էինք. «Բարձրաշնորհ Եփրեմ Արքեպիսկոպոս Թապագեանը հայագիտական իր ուսումնառութիւնը ձեռք բերելով, առաջին հերթին, Անթիլիասի դպրեվանքում, այնուհետեւ աստուածաբանական եւ հայագիտական ուսումնասիրութիւնների խորացման նպատակով՝ նաեւ Փարիզի Սորպոնի համալսարանում երեք տարի եւ աշակերտում է ֆրանսիացի հայագետ Շառլ Մերսիէին, որ միաժամանակ եզնիկագիտութեան անուանի ակադեմիական էր: Իր թէզի ատարտին՝ Աստուածաբանութեան Դոկտորի գիտական աստիճան է շնորհուում Եփրեմ Սրբազան Թապագեանին հայագիտական թեմայի փայլուն պաշտպանութեան համար՝ V դարի հեղինակ, Մաշտոցի աշակերտ Յովհան Մանդակունու ճառերի ուսումնասիրմանը նուիրում ֆրանսերէն լեզուով իր Դիսերտացիայի առնչութեամբ, 355 մեքենագիր էջից բաղկացած, որը ղեռնա, տարաբախտաբար, անտիպ է: Այս կապակցութեամբ Սորպոնի հայագիտական ամբիոնի այժմեան վարիչ եւ «Revue des Etudes Arméniennes» հայագիտական հեղինակաւոր տարեգրքի գլխատոր խմբագիր Փրոֆ. Ժան Պիեռ Մահէն մեզ յղած նամակում յայտնում է. «Եփրեմ եպիսկոպոսը կարող է յիշել հանգուցեալ ուսուցչիս՝ l'abbé Charles Mercier-ին, որին յաջորդեցի 1977թ.: *Դեռեւս կայ մեր համալսարանում այն Դիսերտացիան, որը Եփրեմ եպիսկոպոսը գրել է Mercier-ի ղեկավարութեամբ՝ Յովհաննէս Մանդակունու ճառերի մասին*» (տե՛ս մեր նշում աշխատութիւնը, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ, 2000թ., քրիստոնէութեան 1700ամեակի առթիւ Յորեինական հրատարակութիւն):

Մատենախօսուող աշխատասիրութիւնը բացում է Ամենայ. Նարեկ Ծայրագոյն Վարդապետ Ալեմեզեանի բնութագրող հակիրճ Յառաջարանով (էջ 7 - 10), որին յաջորդում է հեղինակի ներկայացրած ֆրանսերէն ընտիր Քարգմանութիւնը Մանդակունու ճառագրութիւնների (էջ 11-218), որոնք հիմնուած են, գերազանցապէս, վեներտիկեան 1860 թուականի հրատարակութեան վրայ:

Յովհան Մանդակունու մատենագրական վաստակը առհասարակ բնութագրում է հայ աղբիւրագիտութեան մէջ իբրեւ դասական հեղինակի ստեղծագործութիւն:

Ծնուել է շուրջ 420-422 թուականներին, Արշարունեաց Ծախնոտ գիւղում: Աշակերտել է Հայոց Դպրապետին՝ Մեսրոպ Մաշտոցին: Իբրեւ Բարձրատիճան հոգեւորական Յովհան Մանդակունին մասնակցել է 482 թուականին պարսիկների դէմ հայ ժողովրդի մղած ազատագրական զինուած պայքարին, որի մասին հաւաստում է իր ժամանակակից պատմիչը՝ Ղազար Փարպեցին, այն է՝ գործուն մասնակիցն է եղել Ներսէհապատի ճակատամարտին եւ մինչեւ անգամ վիրատուել ռազմի դաշտում: Խոստովանահայրն է եղել Հայոց մարգպան Վահան Մամիկոնեանի եւ նրա խորհուրդով ու աջակցութեամբ, ինչպէս եւ հոգեւոր դասի հաւանութեամբ Լուսատրչի գահին է բազմում առաջացած տարիքում 72 տարեկան հասակում, վեց տարի գահակալելուց յետոյ շուրջ 490 թուականին կնքում իր մահկանացուն:

Մեր մատենագիրները յիշատակութիւններ են բողել նաեւ Մանդակունու կեանքի ու գրական վաստակի մասին: Իրեն ժամանակակից Ղազար Փարպեցի պատմիչը դարձեալ վկայում է (այս եւ միւս աղբիւրների բաղադրեցները բերում են գրաբարից աշխարհաբար քարգմանութեամբ). «Շիրակի տէր Ներսէհն ու նրա եղբայր Հրահատը, եւ Գնունեաց տոհմից երկու մարդ՝ Գնունեաց իշխան Ատունն ու նրա եղբայր Առաստունը, ինչպէս նաեւ նրանց զօրքը, որ թուլ չորս հարիւր մարդ էր ընդամէնը, մտնելով եկեղեցի, երկրպագեցին Աստծուն... , *գորական մարդիկ ... երկրպագեցին նաեւ սուրբ կաթողիկոս Յովհանին, որը հոգեղէն սնունդ մատակարարելով նրանց պատերազմի ճամբեց իր ճշմարիտ ու արդար ոգու օրհնութեամբ*»:

ԺԱ դարի ժամանակագիր Ատողիկը, իր հերթին, հաղորդում է. «Երանելի Յովհան Մանդակունին հայ ժողովրդի հասարակական կեցութեան շեղումները բարեկարգեց. ճշգրտեց գիշերային եւ ցերեկային քարոզների բնոյքը, ինչպէս եւ մկրտութեան, սարկաւագի, քահանայի եւ եպիսկոպոսի աստիճանաորման կարգերը, եկեղեցին օրհնելու արարողութիւնը, հիմնովին բարեփոխեց Պատարագամատոյցը, որ ընդունուած է ասել՝ Աքանասի գրչին է պատկանում»: Նոյն ժամանակագիրը նաեւ յարում է. «Մանդակունին օժտուած է եղել նաեւ ամենայն իմացական հանճարով, եւ բարեկարգումներ մտծելով յօրինում էր սուրբ եկեղեցու աղօթքների ճշգրտմամբ մատենաներ, ժամակարգութիւններ. ինչպէս եւ զգուշացուցիչ ճառեր հէնց Հայոց կենցաղավարութեան դիտարկմամբ ստեղծուած, որով հոգիների փրկութիւնն էր երաշխատում»:

ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին նոյնպէս իր «Պատմութիւն Հայոց» աշխատութիւնում նշում է. «Մանդակունին ... եկեղեցու արարողակարգում մտծեց բազում կարգադրութիւններ, քարոզներ եւ աղօթքներ «աղոսիացի» վերաբերեալ, ... ինչպէս եւ (եկեղեցիների) հիմնարկէքի ու ժամհարի, սկիհի եւ զինու թասի (քնագրային՝ «մաղզմայի»), խաչօրհնէքի եւ պսակի մասին մատենաներ յօրինեց»:

Նաև ժԳ դարի մեր դպրության տեսարան եւ պատմիչ Վարդան Արեւելցին, իր հերթին բնութագրում է Յովհան Մանդակունու մատենագրական վաստակը հետեւեալ արժեքատր հաւաստումներով. «... իմաստասէր եւ լիովին Աստուծոյ նուիրում հեղինակութիւն էր, որ բարեկարգեց ձեռնադրութեան կարգը եւ յօրինեց խրատական ճառեր: Սա քարգմանեց Աստուածաշնչի Կորնթացոց երրորդ Թուղթը, Յովհաննու Յայտնութիւնը, եւ իր ամբողջ կեանքի ընթացքում բազում օգտակար գործեր կատարեց»: Հայ Առաքելական եկեղեցու Ծիսարանը, ամբողջութեամբ վերցրած, հանդիսանում է իր կազմած «Մաշտոց» մատենագրական Յուշարձանը, որ արժանապէս վերագրել է հայագիր դպրութեան հիմնադիր Սուրբ Մաշտոցին...:

Ամբողջացրել է շարականներից ու կանոնական աղօթքների ընդգրկմամբ Հայոց եկեղեցու «Ժամագիրք» կոչումով ձեռագրական մատենանը...: Այդ հոգեւոր երկերի շարքում յունարէնից քարգմանել եւ գետեղել է իր այս մատենագրական Յուշարձանում նաեւ «Լոյս Չուարք» օրհներգութիւնը...:

Ունի նաեւ տեսական-աստուածաբանական բնոյթի գրութիւն ընդդէմ Քրիստոսի էութեան երկբնութեան քաղկեդոնական հաւատամքի եւ ի պաշտպանութիւն Հայոց Առաքելական եկեղեցու դաւանանքի՝ Քրիստոսի «մի բնութեան» տեսութեան: Այն համանման ճառագրութեամբ հանդիպում է նաեւ «Գիրք Թղթոց» Նամականիում մեր հին մատենագիրների, որ ունի հետեւեալ վերնագիրը՝ «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի Ապացոյց յերկուց բնութեանց ասել գիրկիչն եւ կամ մի բնութիւն»:

Յովհան Մանդակունու թողած մատենագրական ժառանգութեան ամենակնառու երկը ճառագրութիւնն է, անշուշտ, որ բացի աստուածաբանական եւ խրատական բնոյթի լինելուց, նաեւ արտացոլում է ժամանակի հայ հասարակական կեանքը իր հոգեբանութեամբ ու բարոյական ընթրումներով՝ շարադրումով Հինգերորդ դարի Հայոց ոսկեդրոյի լեզուով: Իրենց առիւթնող բնոյթով Մանդակունու ճառերը շփոթուել եւ վերագրուել են Յովհ. Մայրագոմեցուն, իսկ մի քանիսը՝ նոյնիսկ Յովհան Ոսկեբերանին եւ Ֆիրեմ Ասորուն...:

Թարգմանական երկերի Ծրագրային իրականացումից պարզում է, որ Հայոց Դպրապետի նախատեսումներում կարեւոր տեղ են զբաղեցնում նաեւ Եկեղեցու ակադեմիայի հայրերի աստուածաբանական աշխատութիւնները՝ տեսական հիմնադրումներով ու ընդհանրացումներով, որոնք գլխատրաբար ուղղում են հերձուածողական աղանդների ու շարժումների գաղափարաբանութեան դէմ, խրատաբարոյական, հասարակագիտական-կեցութային բազմաթիւ ու բազմազան երեւոյթների առաջադրմամբ ու քննարկմամբ: Համաքրիստոնէական գրականութեան մէջ նման գրասեղը կոչւում է «Հայրախօսութիւն» (անգլ. *Patrology*), իսկ եկեղեցու հայրերի աշխատութիւնների բնոյթը՝ «Հայրաբանական» (լատ. *Patristic*): Սոյն մատենագրական աղբիւրները եւս իրաւամբ մտնում են «Մրբախօսական գրականութեան» յղացքի մէջ (լատ. *Hagiographa*):

Այս գրասեղի մէջ՝ ընդգրկուող երկերում լայնօրէն շքանատութեան մէջ են դրում աստուածաշնչային պատգամները՝ իրենց հիմնարար դրոյթներով, ժամանակի գաղափարաբանական-դաւանաբանական սուր ու հրատապ հիմնահարցերը քննում են տեսաբանական խորութեամբ եւ ընդհանրացումներով, հաղորդում նաեւ խրատաբարոյական առաջադրանքներում ճանաչողական-իմացական արժեք ներկայացնող գիտանքների հսկայական հոգեմտաւոր պաշար,

որոնք մեծապէս հարստացնում են ընթերցողին: Իսկ դա նշանակում է, հակադարձ կապով, որ եկեղեցու հեղինակաւոր հայրերը, որոնց գրչին են պատկանում այդ աշխատութիւնները, կանգնած են եղել իրենց ժամանակի գիտութեան եւ արուեստների տեսութեան բարձունքներում, խորագիտակ են եղել ո՛չ միայն քրիստոնէական աստուածաբանութեանը, այլեւ «արտաքին» կոչումով գիտութիւններին եւ նամանաւանդ անտիկ շրջանի փիլիսոփայական ու տրամաբանական («դիալեկտիկական») ողջ գրականութեանը: Այս իսկ առումով՝ կարելի է ասել, որ «Հայրախօսութիւն»ը մեծապէս նպաստել է քրիստոնէական աստուածաբանութեան ձեւաւորմանը իբրեւ բարձրագոյն «գիտակարգ» ամբողջ Միջնադարում:

Աշխատութիւնների այս գրասեղը՝ «Հայրախօսութիւն»ը օժտուած է նաեւ մի շատ կարեւոր առանձնայատկութեամբ եւս. այն գիտա-գեղարուեստական արձակի փայլուն ցուցանմուշ է, որով հոգեւորական մտաւորականների սերունդներ են իրենց մտածողութիւնը մարզել նրբամտութեամբ ու ճկունութեամբ, կարողանալով տեսաբանել ամենավերացական եւ ամենարարող գաղափարների ու հարցադրումների շուրջ:

Հայ եկեղեցու տեսաբան վարդապետների համար դարեր շարունակ ուսումնասիրման զանձարաններ են դիտուել համաքրիստոնէական հայրաբանական երկերը՝ բարձրացնելով իրենց տեսաբանական պատրաստութիւնը աստուածաբանութեան եւ դաւանաբանութեան ամենարարող եւ ամենախճուած հարցադրումներում, հայոց Առաքելական Եկեղեցու ինքնուրոյնութեան եւ անկախութեան ապահովման նկատառումներում՝ մանաւանդ ճիշդ դիրքորոշումներ ընդունելու ճակատագրական պահերին եւ սայթաքումներ թոյլ չտալու իրենց վճիռներում:

Ժամանակի ընթացքում այս գրասեղը եւս հիմք բռնեց հայ գրականութեան մէջ՝ նոյնաբնոյթ երկերի ստեղծմամբ հայ հոգեւոր հայրերի կողմից: Աներկբայօրէն զարգացումեց հայոց լեզուն հասարակագիտական եւ գեղարուեստական դրոյթների ու հարցադրումների լայնաշառաւիղ ընդգրկմամբ: Առաջացաւ հայրաբանական գրականութիւն՝ դաւանաբանական-աստուածաբանական խորաքննիչ վերլուծումներով բնութագրուող մտահարուստ բնագրային աղբիւրների հեղինակումով, ընդ որում նրանցում երբեմն նաեւ ազգային մտահոգութիւնների արտացոլմամբ:

Քննարկուող աշխատասիրութիւնը բնութագրական է նրանով, առաջին հերթին, որ Մանդակունու այս մատենագրական Յուշարձանը ամբողջական ծաւալով առաջին անգամ քարգմանուելով ֆրանսերէնի, երոպացի ընթերցողին է մատուցում դեռեւս Հինգերորդ դարում հեղինակուած հայ դպրութեան եւ մշակոյթի ականատր ներկայացուցիչներից մէկի մատենագրական ստեղծագործութիւնը: Հէնց վաղեմիութիւնը ինքնին մեծագոյն արժանիք է, ներկայ դէպքում, եթէ նկատի ունենանք, որ Երոպայում շատ ազգութիւններ դեռեւս նոյնիսկ չէին ձեւաւորուել, հետեւաբար եւ՝ չունէին իրենց գրական լեզուն եւ դպրութիւնը: Այս իրողութիւնից մեկնելով էլ պիտի ասել հաստատապէս, որ հայ մատենագրական յուշարձանների քարգմանութիւնները օտար լեզուներով՝ ինչ խօսք, չափազանց արժեքատր ներդրում է համաշխարհային մշակոյթի ու գիտութեան պատմութեան զանձարանում: Բարեբախտաբար պիտի արձանագրել իբրեւ վաւերական իրողութիւն, որ հայ մատենագրական Յուշարձանների քարգմանութիւնները օտար լեզուների՝ շատ մեծ վաղեմիութիւն ունեն իբրեւ հպարտաւոր խելամիտ աւանդոյք...: Բանն այն է, որ հայ մեծահարուստ մատենագրութիւնը իր թեմատիկայով հետաքրքրականութեան եւ կարեւորութեան այնպիսի բնոյթ եւ տարողութիւն ունեն, որ նոյնիսկ հէնց օտար

գիտնականների համար բարձրագույն գիտական աստիճանների ձեռք բերման նպատակով ծառայում են իբրև ուսումնասիրելի նիւթ եւ առարկայ...:

Հարկ է նկատել այս առթիւ, որ առանձնապէս ճարտասանութեան արուեստին վերաբերող երկերի թարգմանութիւնները խիստ դժուարին եւ պատասխանատու յանձնառութիւն է, որ ենթակայից պահանջում է ոչ միայն թարգմանող լեզուի նրբութիւնների հմտութիւն, մտածողութեան շեշտադրումների նրբերանգները ընկալելու կարողականութիւն, այլև թարգմանող լեզուի բացարձակ տիրապետում, որ համոզւարար տեսնում ենք քննախօսուող երկասիրութիւնում, այլապէս թափուած ջանքերը իզուր կը լինէին միանգամայն:

Հնարաւոր բոլոր ցուցանիշների նկատաւմամբ՝ բաւարար տպաւորութիւնն ունենք գնահատելու մատենախօսուող աշխատասիրութեան հեղինակի ե՛ր գրաբարագիտութիւնը, ե՛ր ֆրանսերէնագիտութիւնը իր հմտութեամբ. ճիշդ է, նշուած իրողութիւնները շատ ատելի ակներեւ կը դառնային բանասերի համար, եթէ մատուցուէին զուգընթաց ընթերցումներով ոչ միայն թարգմանութիւնը, այլև բնագիրը, որ նախամեծար է եւ յանձնարարելի նման դէպքերում, թէև ծաւալը, բնականաբար, կրկնապատկուելու անխուսափելիութիւնը կ'ունենար, բայց եւ հաւաստիութիւնը աւել աներկբայելի կը լինէր: Մասամբ անշուշտ ապահովում է մեզ աշխատասիրողի նախանձախնդրութիւնն ու մանաւանդ բժախնդրութիւնը, երբ բնագրային ընթերցումների տարտամութիւնների կամ անորոշութիւնների դէպքում դիմում է նաեւ ձեռագրական աղբիւրների վկայութիւններին՝ առաջադրելով երբեմն ձեռագրային թարգմանութիւնները փոխանակ տպագրականի, որ գնահատելի է անշուշտ, եւ պիտի ասել՝ միաժամանակ բանասիրական լուրջ աշխատանք է, որ տեսնում ենք քննախօսուող երկի տողատակի յիշեցումներով: Բոլոր հիմքերն ունենք հաւաստելու, որ այն նաեւ գիտական թարգմանութիւն է, երբ աշխատասիրողը ամենայն իրաւասութեամբ փակագծերում լեզուական լրացումներ է ներկայացնում ընթերցումների ճշգրտութեան համար...:

Վերջում՝ իբրև ցանկութիւն-առաջարկութիւն, սոյն աշխատասիրութեան վերահրատարակութեան դէպքում կ'ուզենայինք, որ հայագէտ աշխատասիրողը նաեւ իր Ներածական խօսքը ունենար եւ ընդհանուր բանասիրական քննութեամբ օժտել նման կարեւոր երկի թարգմանութիւնը, ըստ արժանւոյն իր դասականութեան:

«Նոր Կեանք», 22ր՝ Օգոստոսի, 2001թ.,

«Նոր Հայաստան», 26ր նոյն ամսի:

ՄՇԱԿՈՑԹԻ ՊԱՏՄ ՈՒԹԵԱՆ ԱՆՈՆՋ ՀԵՏԱԶՕՏՈՂԸ

Ականաւոր Եգիպտագէտ եւ հայագէտ Փրոֆ. Արրակ Մխիթարեանի 89-ամեայ Յորելեանի առթիւ

A. Mekhitarian, Author of the Text and Legends of the Album ABYDOS, Sacred Precinct of OSIRIS; 110 pages, 13x10 inches, year 1998, November. Ա. ՄԻՒԹԱՐԵԱՆ, Հեղինակ տեքստի եւ լեզնդների ԱԲԻԴՈՍ մեհենական պատկերագրող շքեղ արլումի, ՕՍԻՐԻՍ հեթանոսական աստուածութեան եգիպտական սրբազավայրի:

Մեղանիս վրայ է վաստակաշատ եւ մեծանուն եգիպտագէտ-հայագէտ Փրոֆ. Արրակ Մխիթարեանի 89ամեայ հասակում իսկ հրատարակած Ալբոմ-Ուսումնասիրութիւնը, մեր թուագրութիւնից 1.300 տարի առաջ Փարաւոնների Եգիպտոսում պաշտուած հեթանոսական աստուածութեան՝ Օսիրիսի մեհենանի մասին, համակողմանի հակիրճ քննութեամբ ու բնութագրմամբ, ընդ որում եռեակ լեզուներով՝ անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն, մեծադիր 110 էջերի տարածքում, տպագրական միջազգային չափանիշով:

Հարկ է նշել, Փրոֆ. Արրակ Մխիթարեանի երկարամեայ հետազոտութիւնների բնագաւառներն են եղել՝ հայագիտութիւնն ու եգիպտագիտութիւնը, հիմնականում, ընդ որում իր կարեւոր ներդրումն ունենալով ինչպէս հայ միջնադարեան հարուստ մանրանկարչութեան ուսումնասիրման, այնպէս եւ փարաւոնեան Եգիպտոսի արուեստի ու դիցաբանութեան, պատմութեան ու բանասիրութեան համակողմանի հետազոտման ոլորտներում: Երկար տարիներ դաստանողել է նա Բելգիայի համալսարաններում արաբերէն լեզուն եւ յատկապէս եգիպտական հնագոյն ժամանակների արուեստն ու եգիպտական փարաւոնեան քաղաքակրթութեան հնագիտական պեղումների պատմութիւնը, եղել է Էլիզաբեթ թագուհու հովանաւորութեամբ գործող Հաստատութեան Բելգիացի Եգիպտագէտների Միութեան երկարամեայ ղեկանն ու պատուոյ նախագահը, նաեւ հնագոյն անդամը Արեւելագիտական Ուսումնասիրութիւնների Բելգիական Ընկերակցութեան, սկսած՝ դեռես 1927 թուականից, ինչպէս եւ Բրիքսէլի համալսարանի վաստակաշատ դասախօսը արաբագիտութեան, մասնաւորապէս իսլամական կրօնի եւ քաղաքակրթութեան պատմութեան: Որպէս արեւելագէտ, եգիպտագէտ եւ հայագէտ՝ դասախօսութիւններ ու զեկուցումներ է կարդացել եւրոպական բազմաթիւ երկրներում, Միջին Արեւելքի երկրներում եւ հայկական հոգեւոր կենտրոններում, Կանադայում եւ Ամերիկայում:

Այժմ ծերունագրող Ուսուցչապետը եւ ներիւն գիտնականը, որի հետ շուրջ քառասուն տարիներ անձնական ծանօթութիւն եւ գիտական հաղորդակցութիւն

ունենալու բարեբախտութիւնն են ունեցել, *հայագիտութեան բնագաւառում* թողած իր վաստակով յատկանշում է մասնատրապէս Կիլիկիայի հայկական մանրանկարչութեան ուսումնասիրութիւններով: Ուշագրաւ է, առաջին հերթին, այն կարեւոր ներդրումը, որ ունեցել է Իսպահանի հոգեւոր կենտրոնի հայկական մանրանկարչութեան հաւաքածոյի ուսումնասիրման եւ հրատարակման շնորհակալ գործում. Փրոֆ. Արքակ Մխիթարեանը, հայ մանրանկարչութեան պատմութեան ակնաւոր հետազոտողներից Սիրարփի Տէր-Ներսէսեանի հեղինակակցութեամբ, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Վեհափառ կաթողիկոսի հմտալից Առաջարանով, 1987 թուականին լոյս ընծայեց միասնաբար «Իսպահանի Հայկական Մանրանկարները» խորագրով, շուրջ 220 մեծադիր էջերից բաղկացած, դարձեալ միջազգային անգլերէն լեզուով, Կիլիկիայի մանրանկարչական տարբեր դպրոցների մանրանկարների գիտական բնութագրմամբ ու գեղագիտական ցուցադրմամբ, ընդսմին՝ շքեղ եւ հիասքանչ տպագրութեամբ:

Գարեգին Բ. Վեհափառը վկայում է իր Առաջարանում, հեղինակակիցների միջնադարեան մանրանկարչութեան արուեստի պատմութեան փրոֆէսէօրներ ինչպէս Սիրարփի Տէր-Ներսէսեանի, այնպէս եւ Արքակ Մխիթարեանի կատարած ներդրումների մասին աշխատասիրութեան պատրաստման եւ հրատարակման գործում. «1971 թուականին, երբ ես կոչուեցի ծառայելու հայ համայնքին Պարսկաստանի հարսում, նստավայր ունենալով Ջուղայի Ամենափրկիչ հոգեւոր կենտրոնը, յափշտակուել էի յափրութեամբ ի տես այսպիսի բազմազան բնոյթի եւ ընդգրկումի մշակութային ժառանգութեան առկայութեան: Փորձեցի, Հոգեւոր Խորհրդի եւ Գալուստ Կիլիկիական Հիմնարկութեան օգնութեամբ, լուսագոյն պայմաններ ստեղծել ձեռագրերի եւ այլ արուեստի նմուշների պահպանման, ցուցադրման եւ ուսումնասիրման համար: Ես մեծապէս աջակցութիւն տեսայ յանձին նուիրեալ քարեկամի եւ փորձառու մասնագէտի՝ Փրոֆ. Արքակ Մխիթարեանի, որը Զարսուդարն էր միաժամանակ էլիզարեթ քաղախու հովանաւորութեամբ գործող Բելգիայի Եզիպտագէտների Ընկերակցութեան: Երկու անգամ Իսպահան ժամանեց նա, 1971 եւ 1972 թուականներին, եւ օգնեց մեզ նորակառոյց քանգարանի կազմակերպման, ինչպէս եւ Նոր Ջուղայի ձեռագրական հաւաքածոյի ուսումնասիրման համար սպիտակ եւ գունաւոր սլայդների պատրաստման գործում» (տե՛ս «Sirapie Der-Nersessian, Arpag Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, Preface and Introduction by H.H. Catholicos Karekin II», էջ 6):

Այս շարունակում է իր գնահատականը Վեհափառը. «Օրիորդ Սիրարփի Տէր-Ներսէսեանը, որ միջազգային առումով լաւ ճանաչում գտած եւ մեծապէս հռչակուած մասնագէտ է հայկական ձեռագրերի արուեստում, խորապէս հետաքրքրուած լինելով Նոր-Ջուղայի մանրանկարչական դպրոցի արուեստի նմուշներով, ջերմօրէն ընդառաջեց ուսումնասիրելու մանրանկարները, այն հարուստ նիւթերի հաւաքման եւ դատակարգման հիմքի վրայ, որ Փրոֆ. Արքակ Մխիթարեանի վաստակն էր: Վերջինս մի շարք հանդիպումներ եւ քննարկումներ ունեցաւ Փարիզում Օրիորդ Տէր-Ներսէսեանի հետ՝ ճշդելով ձեռագրերի եւ մանրանկարների մանրամասնութիւնները Ուսումնասիրութեան պատմագիտական, տեքստաբանական եւ արուեստագիտական առնչութիւնները» (անդ):

Նաեւ. «Ցաւում եմ, որ հրատարակութիւնը այս հատորի ուշացաւ հանգամանքների բերումով, որ իմ հսկողութիւնից դուրս էին, յարում է Վեհափառը: Երախտապարտ եմ Օրիորդ Սիրարփի Տէր-Ներսէսեանին եւ Փրոֆ. Արքակ

Մխիթարեանին իրենց համբերատարութեան եւ խելամիտ հետապնդման համար սոյն հատորի պատրաստման եւ հրատարակման ճիգերում» (անդ, էջ 7):

Փրոֆ. Արքակ Մխիթարեանի ձեռագրագիտական-հայագիտական հմտութեան մասին հաւաստում է նաեւ Սիրարփի Տէր-Ներսէսեանը. «... Պրն. Արքակ Մխիթարեանը հակիրճ նկարագրում է իւրաքանչիւր Ձեռագիրը (սոյն Ալբոմ-Ուսումնասիրութեան - Լ.Խ.) եւ լրացնում Յիշատակարաններից քաղած տեղեկութիւններով» (անդ, էջ 21-22):

Փրոֆ. Արքակ Մխիթարեանի նպատար *եզիպտական քաղաքակրթութեան փարաունեան դարաշրջանի դիցարանութեան պատմութեան ոլորտում՝ սերտօրէն կարեւորում է նաեւ իր նոր Ուսումնասիրութիւն-Ալբոմի լոյսընայմամբ*, որ գեղեցիկ նուէր է իր կարեւորմամբ՝ փարաունեան դարաշրջանի եզիպտագիտութեան հարստացմանը: Առաւել քան երեք հազարամեայ հնութիւն ունեցող հեթանոսական այս սրբավայրի նկարագրմանն է վերաբերում այն՝ մեհենական տաճարի համալիրային կառոյցների փլատակների վերայաւումով, հեթանոսական հարուստ որմնանկարների համադրական՝ կոմպոզիցիոն յղացքների իմաստաւորումներով ու բացատրութիւններով: «Մեր միակ մտադրութիւնն է՝ նայալ եւ առաջ հակիրճ նկարագրութիւն տալ ընթերցողին հեթանոսական տաճարի եւ Սեթոս Առաջին արքայի սրբավայրի, սպա Բամսէս Երկրորդի տաճարի մասին» (անդ, էջ 5): Միմեանցից ընդամենը 300 մետր հեռաւորութեամբ են գտնուում կառոյցային այս համալիրները, որոնց բնութագրմանն է նուիրում մասնատրապէս սոյն Ալբոմ-Ուսումնասիրութիւնը:

Արիդոս մեհենական տաճարի սրբավայրը գտնուելիս է եղել Նեղոսի արեւմտեան ափին, շուրջ 170 կիլոմետր դէպի հիւսիս երբեմնի Միջին եւ Նորագոյն եզիպտական կայսրութիւնների մայրաքաղաքը հանդիսացած Թեբէի: Այս սրբավայրը հետագայում եւ առ այսօր աշխարհի գրօսաշրջիկութեան ուշագրաւ վայրերից մէկն է համարում: «Մեհենական այս տաճարը, ընդուն է հեղինակը, կարեւոր տեղ է գրաւում փարաունեան Եզիպտոսի կրօնական պատմութեան մէջ» (անդ, էջ 7):

Ուսումնասիրութեան ծանրակշիռ մասը իր արժէտորմամբ՝ հանդիսանում է դիցարանական քարաքանդակների եւ որմնանկարների հեղինակային հակիրճ մեկնաբանութիւնները իւրաքանչիւրի առնչութեամբ, որ վկայում է անշուշտ Փրոֆ. Արքակ Մխիթարեանի խորաքննիչ ու լայնաշառախ հմտութիւնները եզիպտական փարաունեան դարաշրջանի քաղաքակրթութեան պատմութեան ոլորտում, ընդ որում մանրամասների բացայայտմամբ նոր լոյս է սփռում, անտարակոյս, հեռաւոր անցեալի տիրող մշակութային միզամածութեան պայմաններում...:

Ուրախալի է նշել, որ հայագիտութեան եւ մանաւանդ եզիպտագիտութեան այս երախտաւորի պատուին «Արեւելագիտական Ուսումնասիրութիւնների Բելգիայի Ընկերակցութիւնը» սոյն տարուայ Մայիսին առանձին հատորով «Acta Orientalia Belgica», (Tome XII), լոյս է ընծայել իր երախտընկալ եզիպտագէտ-արեւելագէտ աշակերտների կողմից պատրաստուած Ուսումնասիրութիւնների ժողովածուն՝ «Le Ciel dans les Civilisations Orientales» (ի. «Երկինքը՝ Արեւելեան քաղաքակրթութիւններում») խորագրով, 270 էջից բաղկացած:

Մեր սոյն ծանօթացնող գրութիւնը եւս թող յարգանքի առհաւատչեան լինի մշակոյթի երախտաւոր Յոթելեարին, մաղթելով իրեն քաջաողջութիւն, արեւշատութիւն եւ երջանկութիւն:

«Նոր Կեանք», Գեկտ. 16, 1999թ.:

ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ՝ «Վ Ե Ր Ա Գ Ա Ր Ձ»
Հեղինակություն՝ Բժշկապետ ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆԻ

Գրական-մշակութային եռուն կեանք ապրող Լուսնջերմասիայ գաղութում վերջերս լոյս տեսաւ «Վերադարձ» խորագրով քնարերգական Հատընտիրը, սփիւռքահայ գրականութիւնը հարստացնելով չափածոյ արուեստի ուշագրաւ եւ բազմերանգ ներդրումով: Այն ընթերցողին ներկայանում է քնարերգակ բանաստեղծի իմացախոհական մտորումներով եւ խորապէս զգայուն յուզաշխարհի համակող ապրումներով:

Քննախօսուող քնարերգական Հատընտիրը իրօք յայտնութիւն է, ամբողջական առումով, որովհետեւ նրա հեղինակը գերազանցապէս յայտնի է հանրութեանը եւ բժշկագիտական աշխարհին իր բազմաթիւ գիտա-հետազոտական ուսումնասիրութիւններով ամերիկեան եւ միջազգային սրաբանութեան մասնագիտական հանդէսներում իբրեւ ականատր եւ հանրաճանաչ Բժշկապետի, որը նաեւ պարբերաբար գումարուող միջազգային գիտաժողովներում, այլ հռչակաւոր Բժշկապետների փառանքի հետ միասին, ներկայացնում է ամերիկեան բժշկագիտութիւնը իր նորագոյն նուաճումներով: Իր սեփական Դարմանատունը այցելելիս անվերապահ հիացք եւ միաժամանակ ազգային հպարտութիւն են առթում տասնեակից արել իտալական եւ համաամերիկեան բժշկագիտական համալսարաններից ու ակադեմիաներից շնորհուած գիտական տիտղոսների եւ Վկայականների պերճախօս հաստատումները վաստակաշատ մեծանուն այս Բժշկապետի՝ Յակոբ Այնթապեանի բեղմնատր եւ արդիւնաւէտ բազմամեայ գործունէութեան:

Եւ յանկարծ անսպասելիօրէն ընթերցող հասարակայնութեանը ներկայացուած Հայոց պառնասին վերաբերող քերթուածների այս ծաղկեփունջը, հայ գրականութեան երախտաւորներից Բժիշկ Ռուբէն Մեակի օրինակի հետեւողութեամբ, իրօք որպէս յայտնութիւն է ընկալում:

Խորագիրը բոլորովին էլ պատահական չէ. բանաստեղծի իսկ խոստովանութեամբ՝ թէկուզեւ կեանքում ինչպիսի՛ յաջողութիւնների ու բարձունքների էլ հասնի («Եթէ աշխարհը դառնար պալատ եւ ես իշխան օտարական»), իր «ցեղի ծայնին» անսալով՝ մէկ է, վերադառնալու էր «Ազգային ինքնութեան» իր ակունքը, հայկական արմատները, հայ իրականութիւնը՝ իր բոլոր ստորոգելիներով ու առումներով - հայ քնարերգութիւն, հայ ժողովուրդ, Հայաստան, ձգտումների ու նուիրումների իր ընձեռած բոլոր նպաստներով ու ծառայութիւններով: Բնականաբար՝ բժշկագիտական դասինների հասած լինելով՝ նոր ճանաչումի կարիքը չունէր ամենեւին, եթէ խոհուն գիտնականի հետ համակեցութեամբ չլինէր նաեւ զգայուն բանաստեղծի ի վերջոյ հրապարակ գալու «ի վերուստ» թելադրուած հարկադրականութիւնը...:

Նաեւ խորապէս մարդասիրական իր մասնագիտութեան բերումով՝ մեծագոյն հմտութեամբ ի գործ ածելով սրտաբանութիւնը բազում տարիների ընթացքում եւ այժմ էլ շարունակում է կեանք պարգեւել տառապող հեզ հիւանդներին, բայց բանաստեղծի զգայուն սիրտը եւս, իր կարգին, պարգում է՝ ամոքուելու պահանջ եւ դրսեւորում է ունեցել, իր ապրումների հարուստ եւ բազմերանգ ներաշխարհը, իբրեւ բանաստեղծական վերապրումներ, հաղորդակից դարձնելու իր ժամանակակիցներին ու սերունդներին՝ պատմութեանը յանձնելու որպէս Հոգու Յիշատակարան: Այդպէս էլ ինքնախոստովանութեամբ յայտարարում է հեղինակը իր երկի Առաջաբան երկու խօսքում. «Որպէս սրտաբան բժիշկ յաճախ ականատես եղած եմ մարդ անհատի տառապանքին, իր ընտանիքի վշտին եւ որպէսզի այդ վիշտն ու տառապանքը մեզ չխորտակէ, չզգեսնէ, տարիներու ընթացքին կազմած ենք դիմակ մը մեր դէմքին, որ կը ծածկէ մեր ներաշխարհն ու տառապալից պահերը: Բանաստեղծութիւնը այս փունջին մէջ այդ դիմակագերծումն է»:

Նաեւ իւրօրինակ ու հոգեգրաւ խիզախութեամբ անկեղծօրէն յարում է բանաստեղծը.

«Իսկ իմ գրութիւններս ուրիշ բան չեն, եթէ ոչ ապրումներն ու խոհերը իմ ներաշխարհիս՝ գոյացած կեանքի ամենօրեայ արտաքին ազդեցութիւններու տակ»:

Քնարերգակ բանաստեղծ Յակոբ Այնթապեանը նաեւ սահմանում է բանաստեղծութեան իր ըմբռնումը.

«Բանաստեղծութիւնը ինձի համար սրտի գեղգեղանք է, հոգիի բռնիք է, մտքի ստատնում է դէպի անհունը, դէպի լոյսը անսահման, դէպի գեղեցկութիւնը»:

«Վերադարձ»ի իր խոկումներն ու խորհրդածութիւնները արտայայտել է նա մի շարք բանաստեղծութիւններով. խորագրաց հաւատամքով իրեն համարում է դեռեւս «Մտքը լեռնէն բխած բջիջ մը՝ Նոյի տապանին մասունքն անկորոյս», հետեւաբար՝ հնամենի բազմադարեան հայ դասական ժողովրդի արժանատր զուակի գիտակցութեամբ, բիրիւական Ազքանագեան ազգի յանրժութեան տարփողումն է երգում քնարերգակ բանաստեղծը, երբ «քրմապետ քերթողութեան» Յովհաննէս Շիրազի հետեւողութեամբ յիշեցնում է բնաշխարհի եւ աշխարհասփիւռ հայորդիներին՝ Արարատի փէշերին թէ Լոս Անջելոսում կամ այլուր հանգրուանած, որպէս անժամանցելի պատգամ՝ յորդորելով՝ փարուել «Դարերու դէմ պատուար անխախտ, Հայոց դրօշ՝ Արարատ»ին, ինչպէս եւ՝ «Որ Մեսրոպի շունչը կրող մատեաններուն կառչին յաւէտ» աստանդական հայորդիները Գոյամարտի իբրեւ յուսալի ապաւէն Ազգային Ինքնութեան յարատեւումի:

Հայրենասէր բանաստեղծը, սակայն, այլ կերպ չի պատկերացնում Հայրենիքը, քան Ազատութեան մէջ, որ նախապայմանն է նրա բարգաւաճումի եւ առաջընթացի: Իրովի իմաստաւորմամբ՝ Ազատատենչութիւնը եղել է «բազմաչարչար հայ ժողովրդի Ջահը մշտափառ, ոլորտը մարտի», «Ու դիցագներու երգը հրաբորբ», «Ու խոհուն մարդու իղձերու արքան»...:

Հայրենասիրութիւնը եւ հայասիրութիւնը այնպէս են ձուլուել, նոյնացուել իրար հետ քնարերգակ բանաստեղծի պատկերացումներում, որ իր խորին համոզմամբ՝ Հայրենիքը սիրել դեռեւս հայրենասիրութիւն չէ, այլ անպայման հայութիւնն էլ պէտք է սիրել, հայորդիներին առհասարակ, այլապէս վերացական եւ անորոշ հասկացութիւն է դառնում հայրենասիրութիւնը, անբովանդակ, անիմաստ, դատարկ հնչիւն: Սա նաեւ շատ արժէքաւոր գաղափարի առաջադրումն ու պաշտպանու-

քինն է պոեզիայի բնագաւառում: Միաժամանակ համագգային գիտակցութեան նոր որակ է, ճշգրտագոյն գաղափարաբանութեան՝ իր հրամայական կարեւորմամբ:

Քնարերգակ բանաստեղծը Հայաստանն այցելելու յաճախանքով տոչորում է եւ «Վերակնքուելո՛ւ ջուրով Մեւանի» իղձն է փայփայում՝ այն մեծագոյն գոհունակութիւնն ապրելով, որ հայութեանն իրեն նուիրելով՝ «նոյնամում» է Հայրենիքի հետ («Իմ սիրտս ձօն է ամէն մի Հայու, Որ ես նոյնամամ Քեզմով յաիտեան»):

Եւ ի վերջոյ, արդէն իսկ բանաստեղծը ականջաւոր է «մեծ այգաբացի անրու դողանջին», երբ այնուամենայնիւ յաղթանակելու է արդարութիւնը նաեւ տատապած, բայց եւ երբեք չընկճուած ու չփաստուած մարտնչող հայութեան համար: Հէնց այս մեծ այգաբացին է, «Երբ Հայեր կրկին կարտան կազմած՝ դառնան մեր երկիր, Երկիր Հայաստան, Ես կը հաւատամ...»:

Բանաստեղծի բազմալար քնարերգութեան մէջ տիրականը՝ Մէրն է անշուշտ, որ երփներանգում է իր ծիածանմամբ ոչ միայն Հայրենականի, այլեւ Մայրականի, Գեղեղիկ Մեռի, նամանաւանդ՝ Համամարդկայինի...: Յուզական հոգու ընդգրկումները համապարփակ են, անպարագիծ:

Ամբողջ իր կեանքի իմաստը եւ տեսլականը՝ Մէրն է եւ Երջանկութիւնը, որոնցով պայմանաւորուած է նաեւ իր քնարերգութիւնը: Հաւատոյ հանգանակի իր բանածնումն է.

«Եթէ մակոյկը դիրաբեկ կեանքիս,
Սրտիս նուիրման դեկին յանձնուէր՝
Մէրը կը դառնար վէմը էութեան,
Իսկ Երջանկութիւնը՝ փարոս գոյութեան»:

Կոչումով եւ առաքելութեամբ էլ՝ ճակատամարտ է մղում իւրաքանչիւր բացուող օր կեանքեր փրկելու եւ վատեալներին փրկութեան բալասան տալու («Դեռ ամէն առաւու ես կեանքին կ'երթամ նոր պայքարներով կեանքեր փրկելու»): Զգայուն հոգին մղձաւանջ վերապրելով իւրաքանչիւր մարդկային էակի կորստի առթիւ, մղկտում է դառնակսկիծ.

«Քանի՛ հոգի ես հողին յանձնած եմ,
Վաղահաս մահուան ճիրանին տուած,
Քանի՛ անգամ ես դագաղ իջած եմ,
Հոգին աւանդող հիւանդին ընկեր»:

Նաեւ՝ անսփռի տուայտանքի խոր վերապրումով.

«... Հոգին աւանդող
Հիւանդիս վերջին հայեացքին յառած՝
Դանդաղ անտրտունջ դագաղ եմ իջած,
Մահուան դառն վիշտը յամբողջ ըմպած...»:

Իրօք, չափազանց դժուարին առաքելութիւն է Բժշկապետ լինելով՝ միաժամանակ կրծքի տակ բարախող քնարերգակ բանաստեղծի սիրտ ունենալ...:

Գողտրիկ են Մօրը նուիրում բանաստեղծութիւնները նաեւ իրենց յուզականութեամբ՝ օրինեալ գաւակի երախտագիտական սիրով օժուն.

«Մօրս սիրաը սրտամորմոր ծով է անհուն,

Որ ամէն օր երջանկութեան կոհակները
կը վէտվէտին...,

Իր կեանքն անգին կը մատուցէ,

Որ օրերս ըլլան խնդուն ու արեւշատ»:

Բանաստեղծ քնարերգակը նաեւ իր հոգու ջերմութեամբ եւ իղձերի ու մաղթանքների շոյալութեամբ համամարդկային սիրոյ եւ երջանկութեան, մարդկային ազնուագոյն արժանիքների ջատագովն է ու դրուատողը միաժամանակ: Այս առումով յատկապէս բնութագրական է «Իղձ Ամանորի» բանաստեղծութիւնը.

«Կ'ուզէի ես աղաւնու պէս, ամանորին ամէն
երդիր կանգնիլ մեղմիկ,

Ամմեղ սիրոյ սերմեր ցանել ու մնչելով թռչիլ
անյայտ»:

Աշխարհայեացքը կենսահաստատ լատեսութիւնն է, որով բոլոր մարդիկ ես կը ցանկանար համակուէին.

«Կ'ուզէի ես ըլլալ կախարդ
Ամէն տան մէջ այգածագին սփռել անմար
Խնդրութեան լոյս, յոյս ու հաւատը»:

Նաեւ.

«Կ'ուզէի ես արտոյտ ըլլալ դարաբազեղ
հանդերուն մէջ,
Կորեկ կտցել ու դայալիլ երջանկութեան
երգը անշէջ»:

Եւ ահա «երջանկութեան» իր համապարփակ ըմբռնումը, որ մեծ հոգու վկայութիւնն է միաժամանակ.

«Կ'ուզէի, որ արար աշխարհի դառնար պալատ,
Եւ պսպղուն ու գունագեղ, բազմատարազ,
բազմալեզու,
Ամէն մէկ անձ ըլլար ուրախ ... շուրջպար
դառնար»:

Քնարերգակ բանաստեղծի կենսափիլիսոփայութիւնը ամբողջանում է «Աղօթք» բանաստեղծութեան արծարծումներով.

«Տո՛ւր ինձ արծիւի սլացքը անշեղ
Եւ Աղանիի ճախրանքը անհոգ...
Կարնաբոյր մանկան ժպիտը անեղծ,
Որ օրս խնկեմ սիրոյ բուրվառով»:

Դարձեալ ու կրկին անգամ «Սիրով» իր կեանքը բոլորելու մեծագոյն մաղթանքն է փայփայում.

Տո՛ւր ինձ ջինջ սիրոյ ակը անյատակ,
Եւ նուիրումի ջահը մշտապաատ,
Աղօթքը շուրթիս օրս ապրելու,
Եւ կեանքի գիրքս սիրով կնքելու...»:

Հոյակա՛պ է, ինքնարմտազրոյղ, հոգեգրա՛ւ միաժամանակ...:

Մեր այս գրադատությունը կ'ուզենայինք եզրափակել «Խօսք մը ...» վերնագիրը կրող քերթուածով, որ սիրող գոյգի յարաբերությունների դրամատիկ զարգացումը հոգեբանական վերլուծութեամբ ներկայացնելով՝ բանաստեղծական ձևի եւ բովանդակութեան կառարելութիւն ենք համարում միաժամանակ.

«Խօսք մը ըսիր, հրճուեցայ,
Խօսք մը ըսի, դուն ժպտեցար,
Խօսք մը ըսի, երջանկացար
Ու նոր խօսք մը ... ամուսնացանք:

Խօսք մը ըսիր, զիս խոցեցիր,
Խօսք մը ըսի, սիրող դաղեցի,
Խօսք մը ըսի ... քեզ զգուցի,

Ու նոր խօսքով համբուրուեցանք:

Խօսք մը ըսիր, ես զայրացայ,
Խօսք մը ըսի, դուն բարկացար,
Խօսք մը ըսիր, խռովեցանք,
Առանց խօսքի բաժնուեցանք...

Այնուհետեւ այլ ոչ մէկ խօսք,
Լուռ էիր դուն, լուռ էի ես,
Ակնարկներով մենք խօսեցանք,
Բայց ոչ մէկ բառ մենք չգտանք:

Խօսք մը ունիմ քեզ ըսելիք,
Խօսքեր ունիս դուն ինձ նաեւ,
Բայց խօսքերէն յաղթահարուած,
Մենք ծարաւ ենք խօսքի յարմար:

Ու զլիսկոր, յուսալքուած,
Օրեր անցան առանց խօսքի,
Մեր կոկորդին հանգոյց կապեց
Խօսքն զղջումի ու ներումի...:

Առանձնութեան սրտէն ծղլած,
Նոր խօսքեր կան մեր շրթներուն,
Ես խօսք ունիմ բիւր զղջումի,
Դուն խօսք ունիս, խօսք ներումի»:

Ողջունում ենք «Վերադարձ»ը հեղինակի սփիւռքահայ գրականութեան բանաստեղծական պառնասից ներս վաստակաշատ Բժշկապետ Յակոբ Այնբալպեանին՝ ջերմօրէն:

«Փարոս», Յունիս 15, 1993,
«Հայ կեանք», Յունիս 25, 1993թ.:

«Լ.Գ.ԽԱՉԵՐԵԱՆ, Բանասիրական
Գիտությունների Դոկտոր, Փրոֆէ-
ստօրի Պատասխանը, «Նտասար»ի
Կազմակերպած Լեզուական Հարցազրոյցին.

1. Լեզուաբանական գիտութեան տեսակետից՝ սխալ է հարցադրումն առհասարակ այն մասին, որ «Այսօր՝ սփիւռքեան իրականութեան - մասնաւորաբար Քալիֆորնիոյ մէջ - արեւելահայերու ստուար քիով ներկայութիւնը ստեղծած է սփիւռքահայերէն մը, արեւելահայերէնի աւանդութեամբ եւ հետետղականութեամբ: Արեւելահայերէնը կը վայելէ Հայաստանի պետական հովանաւորութիւնը, իսկ սփիւռքահայերէնը յանձնուած է գրողներուն եւ խմբագիրներուն խղճին, հասկացողութեան եւ ճաշակին»:

Նախ՝ տարբերենք ու մանաւանդ ճշդենք հասկացութիւնները խօսակցական լեզուի եւ գրական լեզուի վերաբերեալ, որ վերեւի հարցադրմամբ ակնյայտօրէն շփոթուած են:

Լեզուական-քերականական համակարգերի առումով՝ ներկայ դարաշրջանում հայ ժողովուրդը օգտուած է իր միասնական խօսակցական լեզուի երկու տարբերակներով, ընդ որում քերականական իրենց ուրոյն կառոյցներով՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն անուանումներով, որոնք բարձրացել են գրական լեզուների մակարդակին: «Սփիւռքահայերէն» գոյութիւն չունի բնութեան մէջ: Եթէ խօսքը վերաբերում է բառա-ոճական արտայայտութիւնների փոխառումներին մէկի կամ միւսի լեզուակառոյցում՝ ապա դա ոչ մի նշանակութիւն չունի (եւ ունենալ չի կարող) նրանց համակարգայնութեան (լեզուասիստեմի) փոփոխման համար, որովհետեւ, լեզուաբանական գիտութեան հաւաստմամբ՝ բառաոճական փոխազդեցութիւնները առնչուած են լեզուի արտայայտչական կողմին, եւ ոչ թէ քերականական կառոյցին, որը ամենակայունն է համեմատաբար՝ լեզուի մնացած բոլոր բաղադրիչներից (բառապաշար, ոճաբանութիւն, հնչաբանութիւն եւ այլն): Իսկ մերձեցումը որքան էլ սերտ լինի արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի միջեւ, բնաւ չի յանգի նրան, որ փոխառուեն մէկի կամ միւսի ձեւաբանական ձեւոյթները, հոլովական կամ բայական խոնարհման մասնիկները եւ այլն: Հետեաբար Կալիֆորնիայում հայերը (ըստ եկած վայրերի) խօսում են կամ արեւմտահայերէն, կամ արեւելահայերէն, բայց երբեք մտացածին «սփիւռքահայերէն», որը երկուսի «խառնուրդը» լինէր: Իսկ ընդհանրապէս ոչ մի կենդանի լեզուահամակարգ, առաւել եւս «սփիւռքահայերէն»ը յանձնուած չէ «գրողներուն եւ խմբագիրներուն խղճին, հասկացողութեան եւ ճաշակին»: Քերականական կառոյցը իր համակարգայնութեամբ երբ գործում է, գործում է իր սեփական օրէնքներով եւ օրինաչափութիւններով, ուստի եւ չի ենթարկուած ոչ մէկի ճաշակին: Եւ ինչ լա՛ւ է, որ այդ այդպէս է, այլապէս բոլորովին անհնարին կը լինէր մանաւանդ հայորդիներին միմեանց հասկանալը, փոխադարձ հաղորդակցումը, որը լեզուի իսկ կոչումն է՝ շնորհիւ իր օրէնքների եւ օրինաչափութիւնների մարդու կամքից ու ճաշակից ունեցած անկախութեան...:

Հայ լեզուաբանությունը վաղուց գիտականօրէն փաստարկել, հիմնադրել եւ ապացուցել է, որ մեր ժողովուրդը գրեթէ գիտից ի վեր մշակել է չորս գրական դրսեւորումներ իր իսկ միասնական խօսակցական կենդանի լեզուի, իբրեւ քանձրացական վկայություններ վերջինս յարաւորով գործածութեամբ կրած փոփոխությունների հարիւրամեակների եւ հազարամեակների ընթացքում: Բանն այն է, որ հայ ժողովրդի կենդանի խօսակցական լեզուն ՄԷԿ է եղել նոյնիսկ հազարամեակներ շարունակ, բայց եւ ամէն դարաշրջանի գրական լեզուն նրա զարգացման յարաբերականօրէն կայուն մի վիճակն է ներկայացրել իր համակարգայնութեամբ, ընդ որում արտացոլելով միաժամանակ այն փոփոխությունները իր կառուցուածքի ներսում, որոնց, իբրեւ բարեշրջություն, ենթարկուել է յաջորդաբար: Այդ իսկ պատճառով հայ մատենագրութեան յուշարձանները բնորոշում են կամ գրաբարով, կամ միջին հայերէնով, կամ էլ արեւմտահայ կամ արեւելահայ գրական լեզուներով, որոնք եւ կազմում են մեր ժողովրդի հոգեկան մեծագոյն եւ անկապտելի հարստությունները՝ իրենց մէջ ամբարած մտային վիթխարի գիտելիքներով, յուզաշխարհով եւ աշխարհընկալմամբ հանդերձ: Դրանց պատմա-մշակութային նշանակությունը ոչ միայն հայկական, այլեւ համընդհանուր է՝ բազմաթիւ ժողովուրդների եւ երկրների պատմութեան ու նրանց յարաբերությունների լուսաբանման համար, որ այլապէս անմեկնելի են առանց հայ մատենագրութեան ընձեռած հարուստ, եւ երբեմն՝ նաեւ եզակի տուեալների. ընդ որում՝ եւ սա այն դէպքում, երբ առանձին ժողովուրդներ իրենց ամբողջ պատմութեան ընթացքում չեն կարողացել նոյնիսկ մէկ գրական լեզու մշակել...:

Ուստի եւ գիտականօրէն անհիմն, իսկ քաղաքականօրէն վնասակար պէտք է համարել լուսանճելըսահայ մամուլում երբեմն-երբեմն բորբոքող անհիմաստ բանավէճը՝ արեւմտահայ եւ արեւելահայ գրական ճիւղերի համադրմամբ, մէկի գերադասմամբ կամ միւսի ստորադասմամբ, իբրեւ տխուր հետեւանք թերիմացութեան եւ, մանաւանդ, թերուսութեան: Մինչդեռ իրականում՝ երկու գրական ճիւղերն էլ, որոնցում ներդրուած են մեր մտաւորական սերունդների հարիւրամեակների ստեղծագործական շնորհակալ աշխատանքը դրանցից իւրաքանչիւրի ուղղութեամբ, իրենց պատմական դերը կատարել եւ այժմ էլ շարունակում են կատարել հիանալի կերպով: Միանգամայն պարզ պէտք է լինի, որ ունեցել ենք եւ ունենք մէկ միասնական խօսակցական կենդանի լեզու՝ Հայոց մայրենին, Հայերէնը իր գրական մշակման ենթարկուած երկու ճիւղերով, երկակի դրսեւորումներով՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն: Պնդել հակառակը՝ թէ երկու լեզուներ ունենք երկու գրական մշակումներով, նշանակում է ընդունել, որ «երկու ազգերից» է բաղկացած հայութիւնը համապատասխան գրական ուրոյն լեզուներով, որ անշուշտ անհեթեթ է, հակապատմական եւ քաղաքականօրէն կոպիտ սխալ:

Եթէ պատմական ճակատագիրը այնպէս է հարկադրել, որ մեր ժողովրդի մի ստուար հատուածի մեծագործացը փրկուելով ցեղասպանութեան մահասարսուռ ճիւղաններից ապաստան է գտել սփիւռքի ամբողջ տարածքով մէկ՝ արեւմտահայ գրական լեզուի գործածութեան ոլորտը սահմանափակելով գրական ստեղծագործություններում, մամուլում, դպրոցում եւ հասարակական կազմակերպություններում, ապա արեւելահայ գրական լեզուն դառնալով նաեւ պետական լեզու՝ գործածութեան այնպիսի ոլորտներ է նուաճել Մովսէսական Հայաստանում, որ առհասարակ նրա ամբողջ պատմութեան ընթացքում անձանօթ են եղել:

2. Իսկ այն հարցին, թէ «կարելի՞ է Հայ լեզուի ճիւղերում մերձեցումը գոնէ», կը պատասխանէինք. լեզուա-կառուցուածքային առումով՝ կտրականապէս՝ Ո՛Չ, իսկ

բառա-ոճական փոխառումների ընդհանրացման իմաստով՝ ԱՅՈ՛, որը ինքնին, իբրեւ անխուսափելիութիւն, արդէն իսկ տեղի է ունենում՝ բարերար շահեկանութեամբ նպաստելով Հայոց լեզուի գրական երկու ճիւղերի էլ անկաշկանդ զարգացմանն ու բարգաւաճմանը՝ ժամանակակից ամենատաաջատոր եւ ամենափարթամ լեզուների մակարդակի նուաճմամբ: Իսկ անցումներ կամ որդեգրումներ՝ միանգամայն հնարաւոր է. ապացո՞յց՝ հայրենադարձները, նաեւ տողերիս գրողը:

3. Կարծում եմ, որ «Նաուասարդ» գրական ամսագրի Խմբագրական մարմինը, Արմէն Տօնոյեանի գլխաւորութեամբ, որդեգրել է միանգամայն ճիշդ դիրքորոշում՝ ազգային-գրական շարժման աշխուժացման ու զարգացման համար նախադրեալներ ստեղծելու նպատակով ամէն կերպ նպաստելով գրական առողջ մթնոլորտի առաջացմանը: Բարձր կանգնելով ազգային-գրական շահերի պաշտպանութեան մատոյցներում, ձեռնամուխ է եղել գրական-ստեղծագործական կեանքի կազմակերպմանը, Գրական Խմբակի հետ միասին, լուսանճելըսահայ գաղութում. իր եւ Գրական Խմբակի ձեռներեցութեամբ հետաքրքրություն ստեղծում հայ հասարակութեան մէջ գրական նախաձեռնումների նկատմամբ, հայ գրի եւ մշակոյթի արժէքների հանդէպ, զգայուն կերպով արձագանգում լուսանճելըսահայ գաղութում գրական երեւոյթների յայտնարեքմանը եւ խրախուսմանը, կազմակերպում գրական ասուլիսներ նորագոյն հրատարակությունների առթիւ զինեձօնների ընծայմամբ եւ այլն: Եւ որ կարեւորն է՝ այս բոլորը հանգիստ ոճով, առանց յախտոնութեան եւ կրքերի բորբոքման, էժանագին հայրենասիրութեան, տուրք չտալով աղմկարարութեան եւ յաւակնոտ թմրկահարութեան, համագործակցելով բոլոր նրանց հետ, որոնք կարող են իրենց նպաստը բերել լուսանճելըսահայ գաղութի հոգեմտաւոր կեանքի առողջ զարգացմանը:

4. Կ'ուզենայի խմբագրական կազմի ուշադրութիւնը հրախրել յատկապէս այն աշխատանքների նկատմամբ, որոնք պէտք է տարուեն, մտածուած եւ ծրագրուած կերպով, հայ գրքի պրոպագանդման ուղղութեամբ գաղութում, ընդ որում բուն սէր արթնացնելով ոչ միայն գրականութեան եւ ընթերցանութեան, այլեւ հրատարակությունների կազմակերպման նկատմամբ: Հարկաւոր է սերտացնել կապը գրող-ընթերցող-մեկենաս-հրատարակիչ օղակների, որով պայմանաւորուած է հայ գրի ու գրականութեան ճակատագիրը նորաստեղծ, բայց եւ խոտոտմնալից հեռանկարով օժտուած լուսանճելըսահայ այս գաղութում: Պէտք է գիտակցութեանը հասցնել ում որ անկ է, որ մեր ժողովուրդը ապրել է ո՛չ միայն (եւ ո՛չ այնքան) «խացի», այլեւ մանաւանդ «քանիս»՝ ստեղծագործական հանճարով..., որը եւ նրա կենսունակութեան ու յարատեւութեան անյաղթահարելի ուժն է կազմում նրա գոյատեւման բոլոր ժամանակներում ու փորձություններում:

«Նաուասարդ» Գրական, Մշակութային
եւ Ազգային ամսագիր, Բ. տարի, Թիւ 19,
Փետրուար 1984:

... 1911 ...

... 1912 ...

... 1913 ...

... 1914 ...

... 1915 ...

... 1916 ...

... 1917 ...

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ

... 1918 ...

... 1919 ...

... 1920 ...

... 1921 ...

... 1922 ...

ԵՎԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Հայ Բնաբերգութեան Արքան

Հայրենիքում գիտական հանդիսատք նստաշրջաններով նշուեց Եղիշէ Չարենցի ծննդեան 90ամեակը եւ եղերական մահուան 50ամեակը, իսկ Սփիւռքում, մանաւանդ Միացեալ Նահանգների հայաշատ կենտրոններում, նոր են նշուելու հանդիսութիւնները Ամերիկահայ Միջազգային Կոլէջի տնօրինութեան եւ «Նաւասարդ»ի խմբագրութեան նախաձեռնութեամբ, բանաստեղծի շնորհալի դատեր՝ գրաքննադատ Անահիտ Չարենցի Լոս Անջելոս ժամանման առթիւ:

Հայ ժողովրդի տաղանդաշատ եւ մեծամուն բանաստեղծն է Եղիշէ Չարենցը, նորագոյն ժամանակների հայ բնաբերգութեան արքան, Յեղափոխութեան երգիչը եւ մարտնչող բաղաբացի-պոետը: Նրա ստեղծագործութիւնների պարթոր եւ վերափոխութիւնների խորագրաց ներշնչանքի բեղմնառատ հունձքը նշանատրում են մեր ժողովրդի վերապրած նորագոյն պատմութեան տարեգրութիւնը միաժամանակ, ազգային վերածննդի՝ հերոսական խոյանքների ու աննախընթաց նուաճումների, ինչպէս եւ ցաւագին տուայտանքների ու ընկրկումների իր ճշմարտացի արտացոլմամբ:

Նա հայ ժողովրդի ապագայի մեծագոյն հաւատաւորն էր՝ իր բազմալար քնարի կենսահաստատ շեշտադրումով ու լատենտական շեփոքումով...:

Հայ բնաբերգութեանը բերեց հասարակական լիցքայնութիւն եւ հնչեղութիւն, առնականութիւն եւ մարտնչողականութիւն, հոգեւոր յուզաշխարհի հարստացում եւ պայծառատեսութիւն:

Խորագիտակ լինելով հայ բնաբերգութեան աւանդներին՝ իր բանաստեղծական նորութիւններով զարգացրեց եւ նոր որակի ու բարձրութեան հասցրեց մեր չափաժոյ արուեստի ընդհանուր մակարդակը՝ համընթաց միջազգային բնաբերգութեան չափանիշներին: Թարգմանուելով բազմաթիւ օտարազգի լեզուների՝ հիացմունք առքեց (եւ շարունակում է առքել) նաեւ այլալեզու ժողովուրդների ընթերցասէր ընտրանքի մօտ, համահաւասար համաշխարհային գրականութեան մեծութիւնների շարքում:

Բայց եւ նրա քնարը եղերականօրէն վշրուեց իր ստեղծագործութեան ամենածաղկուն շրջանում՝ դեռեւս 40ամեայ հասակում... անսփռի վիշտ պատճառելով իրեն ծնող ժողովրդին:

Գարաշրջանի անգուզական պոետը ողբերգական վախճան ունեցաւ այն բանի համար, ըստ երեւոյթին, որ յանդգնեց սրբազան ընդվզումով հաւաստել ի լուր ամենքի:

«Չի՛ կարող լինել մեր ոգին գերի

Մերամ խօսքերի, կոտամ մտքերի,-
Թէ ապրում է նա ու շնչում դեռ՝
Չգտելու է նա անհաս ավերի,
Որքան էլ ահա դու այսօր պնդես,
Խօլ, անխոնջ ոգու անդուլ մաքառում,
Որ հասել ենք մենք «անդորրի» հիմա...»:

Նոյն բոցաշունչ պոետը, որ այնքան ինքնամոռաց խանդավառությամբ երգեց Յեղափոխությունը «խելագարում ամբոխների», բանտի խցում սեփական արիւնով այս տողերն էր գրում հարկադրաբար.

«Ես ներշնչում արեգակով
Տեղում էի այգաբացի.
Սակայն եղաւ նա մեզ համար
Միջնադարեան սրած կացին...»:

Հոգեցունց հիասթափութի՞ն Յեղափոխությունից, հաւատքի փլուզո՞ւմ՝ հոգու ողբերգական փլատակներով, թէ՞ խոտոտվանանք ու ապաշխարութիւն ահաւոր խարուածութեան ու դաւաճանութեան քստմենի եղերականութեան...: Յաւագօրէն պիտի արձանագրել՝ բո՛լորը միասին ու միաժամանակ: Այդ իսկ պատճառով Հայոց կալանատը Մեծ Պոետը հատաչում էր մահասարսուտ տուայտանքով՝ «դարը եղաւ յուղարկատը...» եւ «հորիզոնները մթնեցին...»՝ խաւարումով «դարի շնչով ապրող պայծառ արեւների»:

«Եւ գլուխները թռան պայծառ -
Կացնի զարկից այդ մահաբեր
... Դարի շնչով էք ապրում,
Դարն եղաւ ձեզ յուղարկատը
... Արեգակներ գլխատուեցին,
Արեւները, աւա դ, չկան,
Հորիզոնները մթնեցին»:

Դաւաճանում ու նենգափոխում Յեղափոխությունից եւ միջազգայնական կեղծ եղբայրութիւնից շրջադարձ կատարելով՝ սեփական դառը կենսափորձով իմաստնացած պատգամեց Հայոց երգի արքան իր ազգութեանը եւ ապագայ սերունդներին. «Հայ՝ ժողովուրդ, Բո փրկութիւնը հաւաքական Բո ուժի եւ միասնութեան մէջ է» ՅՈՐԴՈՐԱՆԸԻ հաւաստումով:

Նա աւելի շո՛ւտ հասկացաւ քան որեւէ մէկը, որ «ցարերի գահին նստած սարդի ճակատով հարճորդի կինտոն»՝ յանիրաւի եւ սարսափի հարկադրանքով «ժողովուրդների հայր» հռչակում Սաալիքը

«Լափո՛ւմ է որձակը մտքի,
Ջրկում մեզ հունդից ազգային»:

Մեր ազգային լինելութեանը այնպիսի սպառնալիք էր դարձել այս հրէշը իր հայատեաց եւ թուրքասէր վարքագծով դեռ էն զլխից, որ Հայոց Դիցազնավէպում յիշատակում «հայ ազգի հիմքը քանդել յաւակնող» Մարամելիքը ... հրեշտակ է քում սրա մօտ.

«Ձի բա՛ւ է արեւներ մորթի
Այս կինտոն սարդի ճակատով:
Օ՛, երբ Մըսրը եղել,
Մեր հիմքում նման հօր փորող,
Ո՛չ որ մեզ այսպէս չի նեղել,
Ինչպէս այս հարճորդի կինտոն,
Սեւ կառքի կառապան լկտի...»:

Ապա երկիւղ զգալով, որ «իջնում է ազգիս երեկոն», ցասումնալից ճիշտ արձակում Հայոց պոետը աշխարհին՝ ոգեկոչելով աստղերին ու արեւներին, քնդդէմ հայ ժողովրդի համար «չլսում մի նեղի»՝ աննախադէպ չարագործի եւ սուտանուն մեսիայի.

«Օ՛, ո՞ր էք, աստղեր, արեւներ,
Իջնում է ազգիս երեկոն,
Եղաւ մեզ չլսում մի նեղ,
Թիֆլիսցի նեղճակատ կինտոն»:

Սակայն եւ այնպէս՝ Հայոց խօսքի Արքան սաալիքեան Մեծ Տեռորի օրերին իր գլխով վճարեց ազատախոհական ոգորումների եւ ազգային ձգտումների փայփայման համար...:

Մեր դարաշրջանի նայիրեան մեծ պոետի հետ միասին, համատարած Մարսափի քստմենի իրադրութեան պայմաններում եւ Լուսինեան դաւադրութեան մեղսակցութեամբ, գլխատուեց նաեւ հայ մտաւորականութեան սերուցքը՝ թողնելով մեր ժողովրդի հոգում Եղեռնական Սզի մխացող մի մորմոք եւս ...:

Հրապարակայնութեան խոտոտվանութեամբ իսկ «աններելի յանցագործութիւնների» բացառութիւնը այնուամենայնիւ տրուելու է յանուն իր իսկ՝ խորհրդային հասարակարգի ինքնամաքման եւ պատմական ճշմարտութեան վերականգնման, նա՛մանաւանդ նման մղձաւանջային կրկնութիւններից խուսափումի համար մարդկութեան...:

Այն ժամանակ միայն գնահատանքի խօսքը եւ յարգանքի տուրքը մարտիրոսացում Իմացական Մեծութիւնների նկատմամբ երբեւէ իմաստ եւ արժէք կ'ունենայ:

«Նոր կեանք», Ժ. աարի, Թիւ 30,
Յուլիս 14, 1988 թ.:

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

Հայ քնարերգության նահապետը

Ամերիկահայ Միջազգային Գոլժըր գեղեցիկ եւ ողջունելի յղացումն է ունեցել նշելու հայ մշակոյթի երախտատրներին՝ ականաւոր բանաստեղծ, քառերագիր, վիպասան, հրապարակագիր եւ վաստակաշատ մանկավարժ-դասախօս ու գրականութեան դասագրքերի հեղինակ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ծննդեան 75ամեակը եւ ստեղծագործական գործունէութեան 50ամեայ Յորելեանը՝ շնորհելով այս առթիւ «Գրականութեան Պատուաւոր Գովտորի» տիտղոսը, որին նա միանգամայն արժանի է դեռ շատ վաղուց:

Սփիւռքահայ մեծաաղանդ բանաստեղծ Յորելեանը «իշխանական ներդրում» ունի, անտարակոյս, հայ գրականութեան անդաստանում իր մնայուն, արժէքաւոր եւ հաւաստի քնարերգութեամբ, մարդկային փոքրկուն յոյզերի ու պատկերների խորաբափանց եւ շռայլագին ընկալումներով, նրբին զգացումների ու ներքուն խոկումների խորասոյգ մտորումներով, կեանքի բազմակնճիւռ երեւոյթների ու յաւերժական հարցերի նորովի իմաստաւորումներով ու ընդհանրացումներով, մանաւանդ փիլիսոփայական մեկնաբանումներով, որոնք զգալապէս ընդլայնում ու հարստացնում են հայ քնարերգութեան բազմալար նուագայնութիւնը եւ մեղեդիականութիւնը:

Պատկանելի եւ ծանրակշիռ է առ այսօր սերունդներին թողած ստեղծագործութիւնների վաստակի ընդհանուր հաշուեկշիռը՝ շուրջ երկու տասնեակի հասնող հատորներ ... իրենց բազմաթեմատիկ բովանդակութեամբ:

Հապա «բանաւոր խօսքի վաստակը», որը նոյնքան կարեւոր է ամբողջական բնութագրման համար շուրջ կէս դար Փալանճեանի անուան ուսումնական բարձրագոյն ճեմարանում անընդմէջ եւ անխոնջ դասախօսած մանկավարժ-հայերէնագէտի: Սերունդներ է պատրաստել հայ գրականութեան, լեզուի եւ մշակոյթի պատմութեան խորագիտակ մանկավարժ-դասախօսը որպէս հայերէնագիտութեան ջահակիրների, որոնք Սփիւռքի տարածքում շարունակում են կատարել իրենց երախտընկալ Ուսուցչապետի նուիրական պատգամները մեր ժողովրդի հոգեւոր կեանքի ամենատարբեր բնագաւառներում:

Տարաբախտաբար, համազգային ճանաչման եւ գնահատականի արժանի Յորելեանը ինչպէս հարկն է բարոյական փոխհատուցման չի արժանացել՝ ինչ-ինչ նեղմիտ նկատառումներով, որոնք, ինչ խօսք, հայերէնագիտական անաչառ ու ճշմարտացի արժէչափերի հետ ոչ մի աղերս չունեն:

Համոզուած ենք, կը զան լայնախոհութեան առաւել բարենպաստ ժամանակներ, երբ անկախ չափանիշների ներկայ կաղապարից՝ ըստ արժանւոյն կը գնահատեն եւ կ'արժէտրեն Յորելեանի շօշափելի վաստակը եւ ներդրումը գրականութեան պատմութեան զանճարանում՝ նաեւ գրականագիտական առանձին խորաքնին ու համապարփակ մեկնաբանութիւններ եւ ուսումնասիրութիւններ նուիրելով Հայ Գրի եւ Մշակոյթի երախտաւոր մեր Յորելեանին:

Այն ժողովուրդը, որը զիսի մեծարել իր հոգեւոր արժէքներին ու մշակոյթի երախտատրներին, դրանով իսկ յարգում եւ մեծարում է նաեւ հէնց իրեն՝ ոգեշնչումների եւ արդարացի հպարտութեան առհասարակ որպէս...: Դեռ եւս մեզանից հազար տարի առաջ ապրած Մեծն Գրիգոր Պահլաւունի Մագիստրոսը արժարժում է նաեւ մանկավարժ-գիտնականի տեղն ու դերը հասարակութեան մէջ՝ գնահատման առումով: Նա պահանջում է խորին ակնածանք տաձել ժողովրդին լուսաւորող եւ գիտութիւն ջամբող մտաւորականների նկատմամբ: Իր մի նամակում վկայակոչում է Արիստոտէլին եւ Պլատոնին՝ բերելով նրանցից համապատասխան առանձին ասոյթներ այն մասին, որ հին գրութիւնները վերժանող բանասէր-գիտնականին եւ «խոկող ուսումնականին»՝ Վարդապետին ու Քերթողին պէտք է պատուել ճիշդ այնպէս, ինչպէս պատուում են դիւցազուններին, որ աշխարհի բոլոր ժողովուրդները պարտաւոր են յարգանք մատուցել իմաստասէրներին ու բանաստեղծներին. «... զխոկողս ուսումնականին՝ արժան է դիւցազանցն պատուասիրել...»:

Որովհետեւ իրաւ բանաստեղծները նաեւ խորհրդանշում են իրենց ազգի յաւերժական Ոգին, Խիղճը եւ Գիտակցութիւնը...:

Հայ քնարերգութեան Նահապետին, վաստակաշատ Յորելեանին, մաղթում են արեւշատութիւն, քաջատղջութիւն եւ ... անտիպ երկերի ու ստեղծագործութիւնների լոյսընծայում՝ ի փառս հայ գրականութեան:

«Ասպարէզ», 1 Յունիսի, 1988 թ.:

Գրող, բազմամեայ Մանկավարժ,
«Նաւասարդ» գրական ամսագրի
Խմբագիր եւ Հրատարակախօս
ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆԻ գրական-
հասարակական գործունէութեան
35-ամեայ Յորելեանի առթիւ:

Նշելով Արմէն Տօնոյեանի գրական-հրատարակախօսական բեղմնաւոր գործունէութեան 35-ամեակը, գրասէր եւ մշակութասէր հասարակայնութիւնը ըստ արժանւոյն գնահատած կը լինի հայ գրի ու գրականութեան երախտաւոր նուիրեալին, մշակոյթի անխոնջ գործչին, ազգային արժէքների արթուն պահակին, հայոց լեզուի անաղարտութեան ու յարաճուն զարգացման աննկուն ջատագովին՝ իր հաւասարապէս արեւմտահայ եւ արեւելահայ գրական ճիւղերի երկեակ դրսեւորումներով, հայ մեծահարուստ դպրութեան անխոնջ սպասաւորին:

Յորելեանը դեռեւս պատմելի վրայ կանգնած՝ Սփիւռքում այն սակաւաթիւ ընտրեալներից է արեւմտահայ գրականութեան, որ իր գրիչը ի սպաս է դրել գաղթաշխարհի Ազգային Ինքնութեան պահպանման տիրանական մաքառումներին, աստանդական հայի տառապալից Գոյամարտի յամառ ու անզիջում ոգորումների:

Արեւմտահայ գրականութեան եւ հրապարակախօսութեան մէջ իր ներդրումով Յորելեարը, անտարակոյս, պատուաւոր տեղ է գրաւում. նա իր ուրոյն տեղն ունի մի ամբողջ տասնամեակ բոլորած «Նաւասարդ» գրական-ազգային ամսագրով, որ խիզախ բացայայտումներով անդրադառնում է Սփիւքի եւ Բնաշխարհի ազգային ցաւոտ եւ սուր հարցերին:

Ցանկանում եմ սիրելի Յորելեարին՝ Արմէն Տօնոյեանին, քաջաողջութիւն, արեւշատութիւն եւ բեղմնաւոր ստեղծագործական գործունէութիւն ի փառս հայ գրականութեան եւ մշակոյթին:

Յորելեարի հանդիսութեանը
նուիրում գրքոյկ, 1992թ., էջ 21:

ՍԵՂԱ ԲԱԼԵԱՆ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

Հեղինակ՝ «Գարնանային Չեփիտներ
եւ Աշնանային Տերեւաբափ» արձակ
ծաւալուն երկի լոյսընծայման առթիւ:
Լոս Անճելէս, 1996 թ., 226 մեծադիր
էջից բաղկացած:

17-ը Յունուարի, 1996 թ., Կենդեյ:

Յարգելի Գրագիտուհի Սեղա եւ
Գրող Բարգէն, Բալեան Տեր-Յակոբեաններ,

Շնորհակարութեամբ ստացայ Ձեր վերջին հրատարակումները եւ որոշեցի պատասխանել ընդհանուր ծանօթացումից յետոյ, դրա համար էլ որոշ յապաղումով ստացուեց:

Պէտք է ասեմ՝ պարզապէս յայտնութիւն էր ինձ համար Գրագիտուհի Սեղայի նաեւ արձակագիր լինելու իրողութիւնը: Ես ծանօթ էի միայն յօդուածային բնոյթի նրա գրութիւններին լուսանշնչասահայ մամուլում լոյս տեսած: Ուստի, հաճելի անակնկալ էր յատկապէս «Կանայք՝ Երբորդ Աշխարհամասից» ծաւալուն կտաւի ստեղծագործութիւնը գրական-գեղարուեստական մատուցմամբ, որ անպայման գրական արտադրանքի նուաճում պիտի համարել: Գրական բազմաշնորհ հեղինակուհու հետ գործ ունի ընթերցողը, որը մի հարուստ ներաշխարհ է բացայայտում մարդկային ճակատագրերի՝ հոգեբանական վերլուծումներով, կերպարների հմուտ քանդակներով, Երբորդ Աշխարհամասի մարտնչող կամանց կենցաղային, սոցիալական եւ ազատագրական ոգորումներով, որոնք ճանաչողական-պատմական արժէք են ներկայացնում: Հայոց լեզուն իր արձակով եւ բանաս-

տեղծութեամբ հեղինակուհու գրչի տակ իր ամբողջ գեղեցկութեամբ ու հմայքով ճախարակում է, որ պարտաւորիչ է դարձնում գրքի ամբողջական ընթերցումը:

Ձեր վարձքը կատար:

Շնորհատրում է Ձեզ նաեւ Տիկինս՝ Ալիսան:

Յարգանքով՝

Փրոֆ.-Գոկա. Լ. Գ. Խաչերեան

Յ Ա Ն Կ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲԻՐՆԵՐԻ ԵՒ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ա. Չեռագիր աղբիւրներ

Մաշտոցի անուան Մատենադարան.

Չեռագրերի համարներ՝ 110, 169, 212, 380, 438, 500, 508, 530, 981, 1166, 1267, 1419, 1681, 2195, 2281, 2382, 2380, 2515, 2544, 2864, 2882, 3297, 3488, 3778, 4018, 4598, 4972, 5123, 5171, 5331, 5609, 6835, 6897, 7642, 7651, 7781, 775, 9150, 1057, 10579

Միկրոֆիլմ՝ համար 250:

Լենինգրադի Արեւելագիտական ինստիտուտի հայկական ձեռագրերի ֆոնդ, B - 129:

Արխիւային ֆոնդեր՝ Անհատական արխիւների ֆոնդ, համար՝ 219, Մատենադարանի ֆոնդ.

Ա. Երիցեանի ֆոնդ.

Կաթողիկոսական դիւան.

Լազարեանների արխիւ:

Վենետիկի Չեռագրատուն.

համար՝ 1237, 2685

բ. Տպագիր աղբյուրներ

Աբրահամ վրդ., Գիրք ընդդիմութեանց արարեալ ի սրբոյ Եզնակայ Կողբացոյ հայոց վարդապետ եւ յաշակերտէ մեծի թարգմանչին մերոյ սրբոյն Մեսրոպայ, յամի Հայոց 1211, յԻգմիր:

Աղոնց Ն., Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին Պետրոզրադ, 1915:

Աճառեան Հր., Արմատական բառարան, Երևան, հհ. Ա.-Է., 1971-1977:

«Բանբեր Մատենադարանի», Տարեգիրք, 1960, Թ. 5:

«Բանբեր Մատենադարանի», Տարեգիրք, 1962, Թ. 6, նաեւ 1967, Թ. 8:

«Բանբեր Երևանի Համալսարանի», Տարեգիրք, 1971, Թ. 1:

Բժշկեան Մ., Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց, Վենետիկ, 1850:

Գիւրբուղաղեան Ս., Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն, Երևան, 1977:

Գուլամիրեան Ա., Ընտիր պատմութիւն Դաւիթ բէկին եւ պատերազմաց Հայոցն Խափանու...», Վաղարշապատ, 1871:

Դաւիթ Անյաղք, Սահմանք իմաստասիրութեան, Համահաւաք քննական բնագիրը, թարգմանութիւնը գրաբարից ռուսերէն, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ս.Ս.Արեւշատեանի, Երևան, 1960:

Նորին Վարդանայ վարդապետի ասացեալ բան գովեստի պատմագրաբար վասն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց թարգմանչաց, աշխատասիրութիւն Փ. Անթարեանի, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1964, Թ. 7:

Սկիզբն եւ նախադրութիւն գրոցն, որ ասի ըստ Յունացն Պերիարմենիաս եւ հայերէն Յաղագս Մեկնութեան, արտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտելէ, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ, 1794:

Խաչերեան Լ., Դաւիթ Բէկ, Ընտիր պատմութիւն, Քննական բնագիրը եւ աշխարհաբար թարգմանութիւնը՝ Ներածական ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւններով հանդերձ, Լոս Անճելըս, 1988:

Խաչիկեան Լ., ԺԵ դարի հայերէն Յիշատակարաններ, Երևան, 1951:

»»», ԺԵ դարի հայերէն ձեռագրերի Յիշատակարաններ, Երևան, մասն Ա, 1953, մասն Բ, 1958:

Կարապետ եպ. Մասնեցի, Ներքողեան, Յաղագս վարուց եւ մահուան ս. Վարդապետին Մեսրոբայ, Վաղարշապատ, 1897:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961:

Կորին վարդապետի, Մամբրէի Վերծանողի, Դաւիթ Անյաղքի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

Վ. Հացունի, Երևանեան ուղղագրութեան դէմ, «Բազմավէպ», 1925:

Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք, բնագրի հրատարակութիւնը գրաբարով եւ ռուսերէն թարգմանութիւնը Ս. Արեւշատեանի, «Բանբեր Մատենադարանի», Թ. 3, 1956:

«Հոռմկլա» Տարեգիրք Ամերիկահայոց Արեւմտեան թեմի Ազգային Առաջնորդարանի, հհ. Ա-Գ, 1982-1984:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907:

Ղազիկեան Ա., Հայկական մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի..., Վենետիկ, 1909-1912:

Ղլտճեան Ար., Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1914:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հհ. Ա-Դ, 1944-1945:

Մաղաք-Թէոփիլեանց Մ., Կենսագրութիւն երեւելի արանց, Վենետիկ, հ. Բ., 1839:

Մատենադարանի «Գիտական նիւթերի ժողովածո», 1949, Թ. 2:

Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

Մարկուարտ Իոզ., Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի, թարգմ. Ա. Վարվդանեանի, Վիեննա, 1913:

Մխիթարեանց Ա., Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ, հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874:

Մովսիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Արեղեան(ի) եւ Ս. Յակոբեան(ի), Տիֆլիս, 1913:

Յակոբեան Վ., Մանր ժամանակագրութիւններ, XIII-XVIII դդ., Երևան, 1956:

- »» , ԺԷ դարի հայերեն ձեռագրերի Յիշատակարաններ, Երևան, հ. Բ, 1978:
- Յովսէփեան Գար. կաթ., Յիշատակարանը ձեռագրաց հայոց, Անթիլիաս, 1951:
- Ներսէս Շնորհալի, Թուրք Ընդհանրական, Երուսաղէմ, 1971, Վենետիկ, 1873:
- »» , Ողբ Եղեսիոյ, աշխատասիրութիւն Մ.Սկրտչեանի, Երևան, 1973:
- »» , Բանք չափաւ, Վենետիկ, 1830:
- »» , Վիպասանութիւնը, քննական քննազիրը պատրաստեց, ծանօթագրեց եւ առջաբանը գրեց՝ Մանիկ Սկրտչեան, Երևան, 1981:
- Նոր Բառզիրք Հայկազեան Լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքահօր, Հ. Գարրիլէի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Սկրտչի Աւգերեան, հ. Ա, Վենետիկ, 1836, հ. Բ, 1837: «Ոսկեփորիկ», հ. ԺԳ, Վենետիկ, 1854:
- Ջահուկեան Գ., Դարի քերականական աշխատութեան նորայայտ ամբողջական ձեռագիր տեքստը, «Բանբեր Մատենադարանի», 1956, Թ. 3:
- Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956: «Սովետական Արուեստ», Հայկական ՍՍՀ Կուլտուրայի եւ Հայկական կինեմատոգրաֆիայի Պետական կոմիտէի ամսագիր, 1971, Թ. 2:
- Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւարմունք ի գրոց պատմագրաց, հրատ. Արշակ Տէր Միքայէլեանի, Վաղարշապատ, 1893:
- Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:
- Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
- Սրուանձտեանց Գար., Թորոս Աղբար, հ. Ա, Յառաջաբան, Կ. Պոլիս, 1874:
- «Մեծին Վարդանայ Բարձրբերդոյ Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին», Մոսկվա, 1861:
- »» , Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պերպլեանի, Փարիզ, 1960:
- »» , Մեկնութիւն քերականի, աշխատասիրութեամբ Լ.Գ.Խաչերեանի, 1972:

- »» , Վարդանայ վարդապետի ասացեալ բան գովեստի պատմագրաբար վասն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ հայոց թարգմանչաց, աշխատասիրութիւն Փ. Անթարեանի, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1964, Թ. 7:
- Տաշեան Յ., Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895:
- Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալ, 1943, Թ. 2:
- Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914: Քէշիշեան Մ., Յուցակ հայերէն ձեռագրաց Չմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964:
- գ. Տպագիր ուսումնասիրութիւններ
- Արեղեան Մ., Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականութեան սկիզբը, «Սովետական գրականութիւն», ամսագիր, 1941:
- »» , Աշխարհաբարի շարահիւսութիւն, Վաղարշապատ, 1912:
- »» , Մեր Ուղղագրութեան մասին, «Արարատ», 1913:
- »» , Երկեր, Հատոր Ը:
- Արովեան Խ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1956:
- Արրահամեան Ա.Ա., Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրերի ստեղծման հանգամանքներն ու սկզբունքները, տե՛ս «Սովետական մանկավարժ» ամսագիրը, 1962, Թ. 5:
- »» , Հայերէնի դերբայները եւ նրանց ձեւաբանական նշանակութիւնը, Երևան, 1952, նաեւ Բ հրատարակութիւնը՝ 1958:
- »» , Բայը ժամանակակից հայերէնում, Երևան, Գիրք Ա, 1962:
- Արրահամեան Ա.Գ., Նախամեսրոպեան հայկական գրականութեան հարցը, ՀՍՍՀ Ժողկոմսովետին կից պետական ձեռագրատուն (Մատենադարան), գիտական նիւթերի ժողովածու, Թ. 1, 1943:
- »» , Դարիք բէկի պատմութեան «Նախագաղափար» քննազիրը, տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիւների», 1972, Թ. 3:

- »» , Սինիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1972, Թ. 4:
- Աբրահամեան Ռ., Կարնեցի Սերովբե վարդապետի նամակները Գրիմեցի Յովհաննես վարդապետին, տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1931, Թ. 1-2:
- Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:
- »» , Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1893:
- Աղայեան Է., Մեսրոպեան այբուբենը եւ ուղղագրութիւնը, «Մեսրոպ Մաշտոց», յօդուածների ժողովածու, Երեւան, 1963:
- »» , Գրաբարի քերականութիւն, հատոր I, Սինխրոնիա, Գիրք Ա, Հնչիւնաբանութիւն:
- Աղանեան Գ., Դիւան Հայոց պատմութեան, Թիֆլիս, 1893:
- Աճառեան Հ., Հայոց գրերը, Վիեննա, 1928, նաեւ Երեւան, 1984:
- »» , Հայոց լեզուի պատմութիւն, մասն Բ, Երեւան, 1951:
- Այնթապեան Յ., Վերադարձ, Քերթուածների Հատընտիր, Լոս Անճելոս, 1993:
- Այվազեան Ս., «Հայկական այբուբենի ծագման հարցի շուրջը» յօդուածը, տե՛ս «Գիտութիւն եւ տեխնիկայ», Երեւան, 1968, Թ. 4:
- Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
- Անբաբեան Փ., Նորին Վարդանայ վարդապետի ասացեալ բան գովեստի պատմագրաբար վասն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց քարգմանչաց», «Բանբեր Մատենադարանի», 1964, Թ. 7:
- »» , Արդեօ՞ք հայ առաջին համալսարանը Գլաձորն է, տե՛ս «Բանբեր Երեւանի համալսարանի», 1974, Թ. 2:
- Առաքելեան Վ., Հայերէնի շարահիւսութիւնը, Երեւան, հհ., 1-2, 1958-1964:
- Արամեան Ս., Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Դափանցոց, «Բազմավէպ», 1972, Թ. 2-3:
- »» , Պատմութիւն Դափանցոց, բնագրի հրատարակում, «Բազմավէպ», 1977, ԹԹ. 1-2, 3-4: Նաեւ նոյն քուականին առանձին գրքով հրատարակութիւնը:
- Բարայեան Լ., Դրուագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրութեան (IX-XIII դարեր), Երեւան, 1981:

- Բաստամեան Կ., Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880:
- Բարխուդարեան Ս., Դիւան հայ վիմագրութեան, պրակ 1-4, 1960-1973թթ., Երեւան:
- Գուրգէն Սեւակ, Մեսրոպ Մաշտոց, հայկական գրերի ու մատենագրութեան սկզբնաւորումը, Երեւան, 1962:
- »» , Թէ ինչ է արել Մաշտոցը Սամոսատում, Երեւանի պետական համալսարան, Ն.Մառի անուան կաթինետի աշխատութիւններ, 1947, Թ. 2:
- Եգանեան Օ., տե՛ս Առաջաբանը «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 1, Երեւան, 1965:
- Եղիայեան Բ., Սելճուկ-Թաթար-Օսմանեան Թուրքերու պատմութիւն ԺԱ-ԺԵ դարեր», Անթիլիաս, 1989:
- Երիցեան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Բ, 1895:
- Զարպիհանալեան Գար., Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883:
- Էնգելս Ֆ., Բնութեան դիալեկտիկայ, Երեւան, 1950:
- Թորոսեան Խ., Մխիթար Գօշ, Գիրք Դատաստանի, խմբագրութեամբ՝ ակադ. Լ.Խաչիկեանի եւ բանասիր. գիտ. քննաձու Պ. Խաչատրեանի, Երեւան, 1975:
- »» , Երկու խմբագրութիւն Մխիթար Գօշի, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1962, Թ. 6:
- Թումանեան Յար., Հայոց աշխարհաբար լեզուի համառօտ համաձայնութիւնը, 1911:
- Իշխանեան Ռ., Մեր ուղղագրութեան հիմնահարցը, «Ալիք» օրաթերք, 1983, Մայիսի 21, 22 եւ 23 համարներում:
- »» , Մահուան ճանապարհ եւ Կեանքի ճանապարհ, «Փարոս», Փետր. 15, 1990:
- Լեօ, Հայոց պատմութիւն, հատ. Գ., Երեւան, 1946:
- Խաչերեան Լ., Լեզուների առաջացման եւ գրի ու մատենագրութեան սոցիալական դերի ու նշանակութեան տեսութիւնը՝ ըստ Վարդան Արեւելցու, տե՛ս «Լրաբեր», ամսագիր ՀՍՍՀ ԳԱ Հասարակական բաժանմունքի, 1972, Թ. 12:
- »» , Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ (XIII-XIVդդ.), Երեւան, 1973:

- »» , Գլաձորի համալսարանական բնոյթը եւ ո՛չ թէ նրա առաջնեկութեան հարցը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1975, Թ. 3:
- »» , Փաստեր ակադեմիկոս եւ մաշտոցեան մրցանակի դափնեկիր Լ.Ս.Խաչիկեանի կողմից թոյլ տրուած գիտական բարոյականութեան ոտնահարման մասին, 1975:
- »» , Գրչութեան արուեստի լեզուական-քերականական տեսութիւնը Միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1962:
- »» , Մաշտոցեան միասնական ուղղագրական համակարգի վերականգնումը ազգային միասնութեան գրականն է, «Արմաշ» պարբերագիրք, Մոնթրէալ, 1990:
- »» , Հայ լեզուաբանութեան առաջացման պատմութիւնը եւ քերականագիտական Միտքը V-XVI դարերում, երկհատոր, 1992, հ. Բ:
- »» , Մանուկ Աբեղեանի Խոստովանութիւնները, որ գրաբար գեղեցիկ ոճով համագոր են՝ «Ի բերանէ քումմէ» արտայայտութեան..., «Նոր Կեանք», Հոկտեմբեր, 1999, «Նոր Հայաստան», Հոկտեմբեր, 16, 1999., «Նոր օր», Նոյեմբեր, 1999:
- »» , Աբեղեանական Ուղղագրութիւնը հրամանագրող «Լուսաւորութեան» կոմիսար Պօղոս Մակինցեանի ակտիսանքը եւ յետին նպատակը ...», «Նոր Կեանք», Հոկտեմբեր, 1999թ., «Նոր Հայաստան», Հոկտեմբեր, 16, 1999, «Նոր օր», 1999:
- »» , Հրաչեայ Աճառեանի գիտական ժառանգութեան հրատարակութեան պատմութիւնից, «Նոր Կեանք», Սեպտեմբեր, 1999, «Նոր Հայաստան», Հոկտեմբեր 2, 1999, «Նոր օր», Նոյեմբեր, 1999:
- »» , Ակադեմիկոս Ստեփանոս Մալխասեանցի զոջումները եւ խոստովանութիւնները, «Նոր Կեանք», Հոկտեմբեր, 1999, «Նոր Հայաստան», Հոկտեմբեր, 9, 1999, «Նոր Օր», 1999:
- »» , Հայագէտ Նիկողայոս Ադոնցի Պատասխանը 1926 բուականին կազմուած կառավարական Յանձնաժողովի ուղղագրական ռեֆորմը «բարեխաւերու» առնչութեամբ, «Նոր Կեանք», Սեպտեմբեր, 1999, «Նոր Հայաստան», Սեպտեմբեր 25 1999, «Նոր Օր», Հոկտեմբեր, 1999:

- տան, Սեպտեմբեր 25 1999, «Նոր Օր», Հոկտեմբեր, 1999:
- Խաչիկեան Լ., Նախամետրոպեան գրի հարցը եւ հմայագրերը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1963, Թ. 4:
- »» , Գլաձորի համալսարանը եւ նրա սաների ատենախօսութիւնները, Համալսարանի գիտ. աշխ. ժողովածու, 1946, հ. 23:
- Խնդիրեան Ա., Գործելաձեւ, Լոս Անջելըս, 1980:
- »» , Թովմաս Էֆենտիի վերջին արկածը, Լոս Անջելըս, 1980:
- »» , Փշածաղիկ, Լոս Անջելըս, 1981:
- »» , Վլվլուկ՝ Յիմարներու դրախտին մէջ, Լոս Անջելըս, 1988:
- »» , Ինչպէ՞ս տեսար «Մեր» Ամերիկան», Բ. տպագր., Լոս Անջելըս, 1996:
- »» , Մատեան խնդրութեան, Լոս Անջելըս, 1996:
- Կիլիսեան Բ., Ծովք, Վիեննա, 1904:
- »» , Իսլամը հայ մատենագրութեան մէջ, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1926, Թ. 5-6:
- Կոնիքեր Ֆր., Բնութիւնը գրոց Դաւիթ Անյաղթի կամ քարգմանութիւնը Արիստոտէլի, Վիեննա, 1893:
- «Հայ ժողովրդի պատմութիւն», ակադեմիական բազմահատորեակ, հ. 4, 1973, Երեւան:
- Ղաֆաղարեան Կ., Սանահինի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Երեւան, 1957:
- »» , Հաղբատ, Երեւան, 1963:
- Մալխասեան Ստ., Գրաբարի համաձայնութիւնը, 1892:
- Մակինցեան Պ., Լատինական այբուբենի մասին, «Մարտակոչ», 1925թ., Դեկտեմբեր:
- Մանանդեան Յ., Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ, Վաղարշապատ, 1904:
- »» , Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928:
- »» , Բնական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հատ. Գ, ԳԱ հրատ., Երեւան, 1951, նաեւ 1952, 1977 բուականների հրատարակութիւնները:

- »» , Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ., Երևան, 1951, նաև 1952 եւ 1977 թթ. հրատարակությունները:
- Մարկուարտ Իոզ., Հայոց այբուբենի ծագումը եւ Մ. Մաշտոցի կենսագրությունը, տե՛ս «Մեսրոպ Մաշտոց» յօդուածների ժողովածու, Երևան, 1962, նաև՝ «Պատմություն հայերէն նշանագրերու եւ վարուց ս. Մաշտոցի, քարգմ. Ա. Վարդանանի, Վիեննա, 1913:
- Կ. Մարքսը եւ Ֆ. Էնգելսը Արուեստի մասին, Երևան, հ. 1, 1963:
- Մելիք-Թանգեան Ն., Հայոց եկեղեցական իրաւունքը, Շուշի, 1903:
- Մեյլ Ա., Հայագիտական հետազօտություններ, Երևան, 1978:
- Միրզոյեան Ա., Մխիթար քէկի կողմից ռուսական կառավարութեանն ուղղուած ուղերձի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, Թ. 8:
- Յակոբեան Յով., Ուղեգրություններ, Երևան, 1934:
- Յակոբեան Վ., Կանոնագիրք Հայոց, Երևան, հ. Ա, 1964, հ. Բ, 1971:
- »» , Բնություն եւ քննադատություն Լ. Ս. Խաչիկեանի «ԺԷ դարի հայերէն ձեռագրերի Յիշատակարանների առաջին հատորը (քննություն եւ քննադատություն) անտիպ աշխատութեան», Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հասարակական բաժանմունք, Երևան, 1975:
- Յակոբեան Պ., Ն. Աղոնցի դիտողությունները հայերէնի ուղղագրութեան եւ տառերի վայելչութեան վերաբերեալ, «Պատմաբանասիրական հանդէս», 1967:
- Յարությունեան Իս, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892:
- Յովսէփեան Գար., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, մասն Բ, Երուսաղէմ, 1944:
- Շահագիզ Ե., Դիւան Խաչատուր Արովեանի, Երևան, 1960:
- Շէնեան Գր., Կրնիկս ըսաւ քէ..., Երևան, 1991:
- »» , Անուսինս ըսաւ քէ..., Լոս Անճելըս, 1993:
- Ոսկեան Հ., Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926:
- Չամչեանց Մ., Պատմություն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1781:
- Պալասանեան Ստ., Գործնական քերականություն հայերէն լեզուի, Թիֆլիս, 1906:
- Պալճեան Աղ., «Պատմություն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878:

- Պատկանեան Բ., Համառօտ տեսություն հայ պատմական գրականությունեան, «Փորձ», 1880:
- Ջահուկեան Գ., Քերականական եւ ուղղագրական աշխատությունները հին եւ միջնադարեան Հայաստանում, Երևան, 1954:
- Սամուէլեան Խ., Մխիթար Գօշի Դատաստանագիրքն ու Հայոց քաղաքացիական իրաւունքը, Վիեննա, 1911:
- »» , Հին հայ իրաւունքի պատմություն, հ. 1, 1939:
- Սարգիսեան Բ., Տեսություն տառադարձութեան խնդրոյն, «Բազմավէպ», 1889, Յուլիս:
- Սեդրակեան Ա., Յովհաննէս Շահխաթունեանցի կենսագրությունը, Պետերբուրգ, 1896:
- Սուրխատեան Ա., Մխիթար Գօշը եւ «Հայոց դատաստանագիրքը, Երևան, 1965:
- Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բ. տպագրություն, Թեհրան, 1982:
- Քէշիշեան Արամ Ա. կաթողիկոս, Ազգ. եկեղեցի, Հայրենիք, Անթիլիաս, 1999:
- Օրմանեան Մ., Ազգապատում, Կ. Պոլիս, 1914:
- Ֆեյդի Ֆր., Հերոսն Պետմիչ, «Ծաղիկ պատմութեանց աշխարհին», տե՛ս «Անահիտ» հայագիտական հանդէս, 1938, Թ. 4-5:

Դ. Օտար լեզուներով

- Адамян А., Эстетические воззрения средневековой Армении, Ереван, 1955г.
- Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie par Moïse de Khorene, Paris, 1993.
- Charles Dowsett, A neglected Passage in the History of the Caucasian Albanians, London 1957.
- " , The Albanian Chronicle of Mxitar Goš, London, 1958.
- " , Movses Erzingaci's "Advice on Confession", Le Museon, tome LXXIII.
- " , Stepanos I, Patriarch of Constantinople and His Accusers, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1961, Թ. 10-12:
- " , The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci, London, 1961.

- " , The Penitential of David of Ganjak, Louvain, 1961, volumes 3 and 4.
- Conybeare Fr., A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, 1913.
- Звегинцев В.А., Христоматия по истории языкознания XIX веков, Москва, 1956г.
- Зиновьев А., Историческ. очерк Лазаревского института восточных языков, 1863г., Москва.
- Иоаннисян А.Р., Присоединение Закавказья к России и Международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.
- Feydit Fr., Grammaire de la langue armenienne moderne, dialecte occidental (2e et 3e annee), 1935.
- " , Un passage énigmatique de Fauste de Byzance, (տն'ս «Բազմապէս», 1957, Թ. 11-12):
- " , Manuel de la langue Arménienne, Arménienne occidentale moderne, 1948.
- " , Les Articles en Arménien moderne occidental, տն'ս «Բազմապէս», 1952, Թ. 7-9:
- " , Considerations sur l'alphabet de saint Mérop, տն'ս «Հանդէս ամսօրեայ», 1962, Թ. 5-6:
- " , La haute signification de l'invention de l'alphabet arménien par saint Mérop, տն'ս «Բազմապէս», 1962, Թ. 9-12:
- " , Une mission a Dzabelvar, 1961.
- " , L'épopée populaire arménienne, տն'ս «Բազմապէս», 1957, Թ. 7-8, 9-10:
- Hübschmann H., Über die Stellung des Armenischen in Kreise der indogermanischen Sprachen, 1875.
- " , Zur Chronologie der Arme. Vocalgesetze, 1878.
- " , Armenische Grammatik, huu. 1, 1895, huu. 2, 1897, Leipzig.
- Jule Paroz, Histoire Universelle de la Pédagogie, Paris, 1883.
- Karst J., Historische Grammatik des Kilikisch-Armenische, Strassburg, 1901.
- Кусикян И.К., Очерки исторического синтаксиса армянского литературного языка, Изд. Академии Наук СССР, Москва, 1959.

- Mariès L., De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de "Contre les Sectes". Etudes des critique litteraire et textuelle, Paris, 1924.
- Mariès L. et Mércier Ch., Eznik de Kolb, De deo, Patrologia Orientalis tome XXVIII, Fascicules 3, 4. Edition critique du texte arménien et traduction française, notes et tables, Paris, 1959.
- Mekhitarian A. Author of the Text and Legends of the Album ABYDOS, Sacred Precinct of OSIRIS, 1998.
- Meillè A., La phrase nominale pure en arménien, Extrait des Mémoires de la Societé de Linguistique de Paris, t. XV.
- Меликсет-Бек Л., Об источниках древнеармянского права.
- Паповян А., Армянский Судьяник Мхитара Гоша, Ереван, 1954г.
- Тикранян С., Древне-Армянская книга Канонов. Очерки описания и исследования памятника, т. 1, Описательная часть. Петроград, 1918.
- Чалоян В., Анонимное толкование "Категорий" Аристотеля, Ереван, 1961г.
- Der-Nersessian Sirarpie, A Catalogue of the Armenian Manuscripts, the Chester Beatty Library, Dublin, 1958.
- " , The Date of the Initiale Miniatures of the Etchmiadzin Gospel, Art Bulletin, 1933, vol. XV, No 4.
- " , Manuscrits Arméniens Illustrés de pères Mekhitaristes de Venise, 2 vols, paris, 1937.
- " , Une Apologie des images de septième siècle. Reprinted from Byzantion vol. XVII, 1944-1945, U.S.A.,
- " , Armenia and the Byzantine Empire. Brief History of Armenian Art and Civilization, Cambridge, 1945.
- " , An Armenian Gospel of the Fifteenth Century. Reprinted From the January 1950 Issue of the Boston Public Library Quarterley.
- " , L'illustration du roman de Barlaam et Jovasaph, Paris, 1937.
- " , Two Slavonic Parallels of the Greek Tetraevangelia, Paris, 1927. Reprinted from the Art Association of America, Nyw York, 1917.
- Tabakian Archevêque Yeprem, Les Homélie du Catholicos Hovhan Mandakouni, Antelias, 2000.

Touryantz H., Search for a Homeland, New-York, 1987.
 Le Vallant de Florival, Refutation des differentes sectes de Païens, de
 la religion de Perses, de la religion des Sages de Grèce, de la
 secte de Marcion, par le Docteur Eznik, Paris, 1853.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՊԱՏԱՍՆՍՏԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏԱԶՕՏՈՒՄՆԵՐ	Էջ
Արուեստի ըմբռնումը հայ Միջնադարի տեսական մտածողութեանը	9
Հայ շարահիսապիտական մտքի վաղ շրջանի պատմությունից	21
Լեզուի եւ մտածողութեան փոխյարաբերութեան հարցադրումը վաղ շրջանի հայ դպրութեան մէջ	41
Լեզուների առաջացման ու զարգացման տեսքիւնը եւ գրի ու մատենագրութեան սոցիալական նշանակութիւնը ըստ Վարդան Արեւելցու	54
Վարդան Արեւելցիի հայերէն գրահամակարգի եւ դպրութեան տեսարան	66
Հայ-ֆրանսիական մշակութային վաղնջական առնչութիւնները ձեռագրական աղբիւրների վկայութեանը	94
Ծովքի եւ Հռոմկլայի Հայոց Կաթողիկոսութիւնը՝ իր պատմական խնդիրների իրականացմանը . . .	100
Մատենադարանը դարերի միջով	141
Չեռագրերի ստեղծման հոգեբանական մղումները Գրիչների եւ դրանց մեկնաբանումը իրենց ապ- րած դարաշրջանի իմաստաւորմանը	158
Ազգային արժէքներ կան, որ ամենեւին չեն վաճառում «Թարգմանչաց Տօն»ի մեծ խորհուրդը	173
Հայ ժողովրդի Չեռագրական գանձերը համաշխարհա- յին հասարակական կարծիքի գահատմանը . . .	181
Հայ Դպրութեան տեսութիւն	188

Նորին Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառին Դիմում - Օրակարգային Առաջարկություն Համազգային Մշակոյթի Հիմնահարցի Լուծման Անհրաժեշտությամբ Հայաստանում Քրիստոնեության Իբրեւ Պետական կրօն հռչակման 1700- ամեակի իսկ թելադրանքով 193

Մանուկ Աբեղեանի խոստովանությունները, որ գրաբար գեղեցիկ ոճով համագօր են՝ «ի բերանէ քումմէ» արտայայտութեան 197

Աբեղեանական խեղագրությունը հրամանագրող «Լուսաւորութեան կոմիտար» Պօղոս Մակինցեանի ավստասանքը եւ ... յետին նպատակը 206

Հայագէտ Նիկողայոս Աղոնցի Պատասխան-նամակը արեղեանական խեղագրութեան «բարելաման» անպտուղ ճիգերի առնչությամբ 215

Մեծանուն հայագէտ Հրաչեայ Աճառեանը եւ արեղեանական խեղագրությունը 233

Ակադեմիկոս Ստեփանոս Մալխասեանցի զոջումները եւ խոստովանությունները 236

Մէկ ազգ՝ մէկ ուղղագրություն. Մաշտոցեան միասնական ուղղագրութեան վերականգնումը՝ ազգային միասնութեան գրաւականն է 230

ԱՂԲԻՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՒ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Սերովբէ Կարնեցու Ուղեգրությունը ֆրանսերէն լեզուով 245

Դաւիթ Բէկի «Ընտիր Պատմութեան» «Նախագաղափար» օրինակի մասին 256

Գլաձորի համալսարանական բնոյթը եւ Ո՛չ թէ նրա առաջնեկութեան հարցը 276

Ինչպէս ՉՊԷ՝ՏՔ Է հրատարակել ցածրորակ տեքստային տարբերակներ՝ բնագրագիտական անձեռնհասությամբ, կամ Գօշի Դատաստանագրքի ձախողումը հրատարակությունը 295

Բացատրական Լ. Գ. Խաչերեանի «Դաւիթ Բէկ» աշխատասիրութեան մասին «Բազմավէպ»ում տպագրուած «Գրախօսութեան» առթիւ 373

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. Ի. Կուսիկեան. Ակնարկներ գրական հայերէն լեզուի պատմական շարահիստութեան (ռուս.) 407

Սիրարփի Տեր-Ներսէսեան. Հայկական Չեռագրերի Յուցակ՝ Չեռաղը Բետտիի անուան Գրադարանի (անգլ.) 417

Եզնիկ Կողբացի. Յաղագս Աստուծոյ, Հայերէն բնագրի բնական հրատարակություն եւ ֆրանսերէն քարգմանություն, ծանօթագրություններ եւ Յանկեր, Լուի Մարիէտի եւ Շ. Մերսիէի 424

Դոկտոր Չարլզ Դաուսթի հայագիտական աշխատությունները 432

Փրոֆէսոր Ֆրեդերիկ Ֆեյդիի հայագիտական աշխատությունները 437

Պատմահայր Մովսէս Խորենացու «Պատմություն Հայոց» մատենագրական Յուշարձանի գիտական քարգմանությունը ֆրանսերէնով 447

Բազմավաստակ Հայագետը (Հ. Ներսէս Ակինեանի վախճանման առթիւ) 450

Հին եւ Միջնադարեան իմաստասիրական երկերի ռուսերէն քարգմանությունը Մովսէսեանի Հայաստանում 452

Արժէքատր ներդրում սովետահայ լեզուաբանութեան մէջ 457

Լեզուաբանական նոր ուղիներով 461

«Կանոնագիրք Հայոց», Վ. Յակոբեանի աշխատասիրությամբ, Ա. եւ Բ. հատորներ 464

«Ազգ, Եկեղեցի, Հայրենիք», հեղինակությամբ՝ Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ 475

Եռամեծ Իմաստասէր Գրիգոր Տաթևացու «Սահմանադրություն դաստիարակութեան» երկն ամփոփող Չեռագրի տունդարձը Ովկիանոսի այս ավերից 483

«Հայ դրամագիտական ընկերութեան» արժէքատր հրատարակությունը 487

Երգիծաբանի փշոտ ուղիներով 491

Գրիգոր Շենեանի երգիծական՝ հիմնորիստական երկու հատորները՝ «Կրնիկս Ըսաւ Թէ...» եւ «Ամուսինս Ըսաւ Թէ...»	497
Պատմագիտական խորաքնին Ուսումնասիրութիւն... 501	501
Արժէքատր Ուսումնասիրութիւն թրքացեղերի պատմութեան (ԺԱ.-ԺԵ. դդ.)	506
Հայագիտական «Հռոմկլա» Տարեգիրքը երկու տարեկան	508
Հինգերորդ դարի մատենագիր, Մաշտոցի շնորհալի աշակերտ, կարողիկոս Յովհան Մանդակունու դասական հայերէնով ճառագրած երկերի թարգմանութիւնը ֆրանսերէնով, Եփրեմ Գերաշնորհ Թապազեանի աշխատասիրութեամբ	516
Մշակոյթի պատմութեան անխոնջ հետազոտողը. Փրոֆ. Արքայ Մխիթարեանի «Արիդոս» դիցարանական ալբոմի լոյսընծայումը	521
Քերթուածների հատընտիր՝ «Վերադարձ»	524
«Լ. Գ. Խաչերեան. բանասիրական գիտութիւնների Դոկտոր-Փրոֆէսորի Պատասխանը «Նաւասարդ»ի կազմակերպած լեզուական Հարցազրոյցին»	529

Գ Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ա Ն Ն Ե Ր
Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Եղիշէ Չարենց. Հայ Քնարերգութեան Արքան	535
Մուշեղ Իշխան. Հայ Քնարերգութեան Նահապետը	538
Գրող, բազմամեայ Մանկավարժ, «Նաւասարդ» գրական ամսագրի Խմբագիր եւ Հրապարակախօս Արմէն Տօնոյեանի գրական-հասարակական գործունէութեան 35-ամեայ Յորելեանի առթիւ	539
Սեղա Բալեան Տէր-Յակոբեան. իր «Գարնանային Ձեփիւռներ եւ Աշնանային Տերեւաթափ» արձակ ծաւալուն երկի լոյսընծայման առթիւ	540
ՅԱՆԿ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ	543

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Կ Ե Ն Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Հայագիտութեան Դոկտոր-Փրոֆէսոր Լեւոն Գէորգի Խաչերեանը ծնուել է Նիկողայում (Կիպրոս), 1924 թուականի Մարտի 18ին:
1925 թուականին ընտանեօք տեղափոխուել է Լաթաքիա (Սիրիա):
1933 - 1940 թթ. կայք է հաստատուել Բեյրութում:
1940 թուականին դարձեալ Կիպրոս, Նիկողիա մայրաքաղաքը վերադարձել, մինչեւ 1946 թուականը:

Ուսումնառութիւնը.
1932-1936թթ աւարտել է Էշրեֆիայի Հայ Աւետարանական Վարժարանը:
1940-1946 թուականների ընթացքում սովորել է Մելգոնեան թերի-բարձրագոյն Ուսումնարանում: Առեւտրական մասնաճիւղում է ուսումնառութիւնը շարունակել, երբ Հայրենիքի կանչին անսալով Բեյրութի ճանապարհով հայրենադարձութեան կարաւաններին է միացել հէնց 1946 թուականին:

Բարձրագոյն կրթութիւնը ձեռք է բերել Երեւանի Մանկավարժական Ինստիտուտի Հեռակայ բաժանմունքում՝ 1949-1954 թուականների ընթացքում, Հայոց լեզուի ու գրականութեան Ուսուցչի որակատրումով:

Հայագիտութեան մէջ խորանալու եւ մասնագիտական կրթութիւն ձեռք բերելու համար 1954-1958 թթ. ընդունուել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Հրաչեայ Աճառեանի անուան Լեզուի ինստիտուտում՝ իբրեւ դասական հայերէնի (գրաբար) գծով ասպիրանտ, որպէս «գերագանց» հետազոտողի՝ նշանակում մեծամուն հայագէտ ակադեմիկոս Ստեփանոս Մալխասեանցի անունական թոշակով:

1959 թուականին Գիտութիւնների Ակադեմիայի Լեզուի, Գրականութեան եւ Արտեստի ինստիտուտների միացեալ գիտական խորհրդի առաջ յաջողութեամբ պաշտպանել է Թեկնածուական Աւարտաճառը՝ Դասական հայերէնի շարահիսութեան բարդ կառուցումների մախադասութիւնների վերաբերեալ՝ «Պարագայ Երկրորդական Նախադասութիւնները Դասական հայերէնում» թեմայով, որի համար շնորհուել է նրան Բանասիրական Գիտութիւնների Թեկնածուի գիտական աստիճան:

1968 թուականին Երեւանի պետական Համալսարանի Բանասիրական Բաժանմունքի Գիտական Խորհրդի յատուկ նիստում փայլուն նպաշտպանել է, հրապարակային ունկնդրմամբ, Դոկտորական Աւարտաճառը՝ «Եսայի Նշեցին եւ Գլածորի համալսարանը (1280-1340 թթ.) թեմայով, որի համար շնորհուել է նրան Բանասիրական Գիտութիւնների Դոկտորի գիտական աստիճան, նոյն տարին վաւերացուելով Մոսկուայի Բարձրագոյն Կրթութեան Քննական Յանձնաժողովի (ՎԱԿ) կողմից:

1971 թուականին, դարձեալ Մոսկուայի Համամիութենական նոյն Քննական Յանձնաժողովի վաւերացմամբ, երկարամեայ դասախօսական եւ գիտահետազո-

տական ակնառու ծառայությունների համար՝ նաև Ուսուցչապետի (Professor) կոչում է շնոհուել հայոց լեզուի ու գրականության ամբիոնի գծով:

Հրատիրուել եւ ընդգրկուել է երեք Գիտական Խորհուրդների անդամ որպէս, ընդ որում Պետական Համալսարանի Բանասիրական Բաժանմունքինը՝ գիտական աստիճաններ շնորհելու իրաւասութեամբ:

Աշխատանքային գործունէութիւնը.

1946-1958 թթ. զուգընթացաբար աշխատել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայում, «գիտատեխնիկական» հաստիքով:

1959-1980 թթ. Մաշտոցի անուան Մատենադարանում, աւագ գիտաշխատողի պաշտօնով:

Համատեղութեան կարգով՝ 1968-1973 թթ., իբրև հրատիրեալ Պասախօս՝ Երեւանի Պետական Համալսարանում, Պատմութեան բաժանմունքում Յատուկ Դասընթացը կարդալու համար Հայ Մատենագրութեան Աղբիւրագիտութեան եւ Դպրութեան Տեսութեան թեմայով, որ ինքն է պատրաստել եւ շարադրել հայ բանասիրութեան մէջ հմտացող ուսանողների համար:

1968-1976 թթ., իբրև հրատիրեալ դասախօս՝ Կիրովականի Մանկավարժական Ինստիտուտում, Դասական հայերէնի (գրաբարի) ուսուցման բարձրագոյն կրթութեան ծրագրով, Բանասիրական Բաժանմունքի ուսանողների համար:

Հանդէս է եկել պաշտօնական ընդդիմախօսութիւններով՝ դիտերտացիաների պաշտպանութեան ժամանակ, գիտական աստիճաններ շնորհող Գիտական Խորհրդի առաջ:

Մասնակցել է, իբրև ճանաչում գտած հայագէտ, միջազգային երկու Համաժողովներին՝ 1961 թուականին Մոսկուայում կայացած Արեւելագէտների XXV Կոնգրէսին, 1973 թուականին Երեւանում կայացած Սոեվետա-ֆրանսիական պատմաբանների սինպոզիումին, «Հայ-ֆրանսիական մշակութային կապերի արտացոլումը հայկական հնագոյն Չեռագրերում» ֆրանսերէն լեզուով հանդէս եկած զեկուցմամբ:

Շարադրել է «Հայ ժողովրդի պատմութեան» բազմահատորեակի ակադեմիական հրատարակութեան Երրորդ հատորի մշակոյթի եւ դպրութեան առանձին բաժինները:

Առ այսօր հրատարակել է շուրջ քսաներկու հատորներ Հայագիտական ուսումնասիրութիւններ, Աղբիւրագիտական եւ Բնագրագիտական գիտա-քննական բնագրեր, որոնք իբրև դասագրքեր են ծառայել հայ Միջնադարի ուսումնագիտական կենտրոններում եւ համալսարաններում եւ աւելի քան 200 յօդուածներ հայագիտական մամուլում եւ թերթերում:

Ամուսնացած է Օր. Ալիս Մլիքարեանի հետ, ունեցել են չորս զուակներ բարձրագոյն կրթութեամբ եւ մասնագիտական որակաւորումներով գիտութեան տարբեր բնագաւառներում. Միովարդը՝ քիմիագիտութեան գծով Master's Degree-ով, Արփինէն՝ ֆրանսերէնի Ուսուցչուհու որակաւորումով, Գէորգը՝ ճարտարագէտ, հաշուողական գիտութիւնների գծով «Պսակատր Արուեստից» ("Bachelor of Science"), Արփինէն՝ մանկավարժութեան գծով «Պսակատր Արուեստից» եւ Սահակը՝ բնագիտութեան (Ֆիզիկայի) գիտութիւնների գծով՝ Դոկտոր, U.C.L.A.ի վկայմամբ, նաև՝ զրքի հեղինակ է:

Հանգանանքների բերումով՝ 1981թուականից կայք է հաստատել Լոս Անջելըսում, ուր եւ շարունակում է ծառայել հայ դպրութեանը եւ մշակոյթին անսակարկ ու

անձանձիւր նուիրումով՝ մեր ժողովրդի մշակութային արժէքներն ու զանձերը գիտական մշակմամբ վերադարձնելով իրեն եւ միջազգային հանրութեանը:

Իբրև արդիւնաշատ հայագէտ Դոկտոր-Փրոֆէսօրի, իր կենսագրութիւնը եւ վաստակը ներկայացում է Հայաստանի Հանրագիտարանի Համառօտ տարբերակում, "Who is who among Armenians in America" («Ով ի՞նչ է իրենից ներկայաց Ամերիկայում հայերի մէջ»), "Who is Who in the World" (հրատ. Մարքիզի, 2000թ.) եւ համաշխարհային ճանաչում ու հեղինակութիւն ունեցող անգլիական Կենքրիջ համալսարանի հրատարակութիւն՝ "Outstanding people of the 20th Century, in 2000 years" եւ "American Biographical Research Association"ի լոյս ընծայած Հատորներում: